



ՅՈՎՆԱՆՆԷՍ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ



ՍՈՒՏԵՐԷ ԵՒ ՄԻԱՆՆԵՐԷ ԱԶԱՏՈՒԱԾ
ՌՈՒԲԷՆ ՄԵՒԱԿԻ
ՆԵՐՈՍԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ
ԵՒ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆԻ
ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

ԵՐԵՒԱՆ - 2012



ՅՈՎՀԱՆՆԷՍ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ

**ՍՈՒՏԵՐԷ ԵՒ ՍԽԱԼՆԵՐԷ ԱԶԱՏՈՒԱԾ
ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ
ՀԵՐՈՍԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ ԵՒ
ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ**

ԵՐԵՒԱՆ
ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ
2012

ՀՏԴ 891.981.0 (046)
ԳՄԴ 83.3 Հց1
Ձ 556

*Կազմեց և խմբագրեց՝ պատմ. գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Վլադիմիր Պետրոսյանը*

Թովհաննես Զիլինկիրեան

Ձ 556 Սուտերե եւ սխալներե ազատուած Ռուբէն Սեւակի հերոսական կեանքի եւ գաղափարականի պատմութիւնը. - Եր.: Հեղ. հրատ., 2012.- 788 էջ:

Գրքում ամփոփված են «Նայիրի» թերթում (Բեյրութ) Հովհաննես Զիլինկիրեանի հոդվածները նվիրված ցեղասպանության զոհ դարձած, նշանավոր բանաստեղծ և փիլիսոփա Ռուբեն Սևակի հերոսական կյանքին ու գաղափարականին:

ՀՏԴ 891.981.0 (046)
ԳՄԴ 83.3 Հց1

ISBN 978-9939-0-0308-5

© Զիլինկիրեան Յ., 2012

ԽՄԲԱԳՐԻ ԿՈՂՄԻՑ

Ընթերցող հանրության ուշադրությանն է ներկայացվում Սփյուռքի նշանավոր ազգային-հասարակական գործիչ, հրապարակախոս և պատմաբան Հովհաննես Չիլինկիրյանի «Սուտերե եւ սխալներե գտուած Ռուբէն Սեւակի հերոսական կեանքի ու գաղափարականի պատմութիւնը» նոր աշխատությունը:

Մինչ այս աշխատությանն անդրադառնալը, կամենում եմ համառոտ ներկայացնել Հովհաննես Չիլինկիրյանի գործունեությունը:

Դժվար կյանքի ուղի է անցել Հովհաննես Չիլինկիրյանը: Եվ դա առաջին հերքին կապվում է Կ. Պոլսում ապրած տարիների հետ, որտեղ հոգու ամբողջ խորությամբ զգացել է բուրքական իրականության գարշ մթնոլորտը: Տարիներ շարունակ ապրելով Կ. Պոլսում, Հովհաննես Չիլինկիրյանը մոտիկից տեսել ու զգացել է բուրքական պետականության, ինչպես ինքն է իրավացի անվանում, ֆաշիստական բնույթն ու էությունը:

Հովհաննես Չիլինկիրյանը ծնվել է 1924 թ. սեպտեմբերի 20-ին Կ. Պոլսի մերձակայքում գտնվող Ֆլորիա գյուղում: Կարճ ժամանակ անց նրա ընտանիքը բնակություն է հաստատում Մաքրիգյուղում, որտեղ էլ նա ավարտել է Պեղազյան վարժարանը:

Այս վարժարանում սովորելու տարիների մասին Հ. Չիլինկիրյանը հիշում է հետևյալը. «Այս վարժարանը եկող բուրք քննիչ մը, մեզի հայերուն բուրք ըլլալը սորվեցուց:

«Թրքերէն <ER> քաջ ըսիլ է: <MEN> ալ մարդ ըսիլ է: <ERMEN>-ի իմաստը թրքերէն «քաջ մարդ» ըսիլ է: Ուրեմն հայերը բուր են» ըսաւ:

Այս ձաբոտութիւններուն այն ատենները հաւատացած էինք: Նոյնիսկ Մուսրաֆա Քեմալին մահացած օրը հեծկլտացով լացինք:

Թուրք ուսուցիչները, մանաւանդ հայկական դպրոցներուն մէջ, հայ աշակերտները՝ բուրք մը ըլլալով կը հասցնէին: Բայց կամաց-կամաց աչքս բացուիլ սկսած էր:

Տարիքս յառաջանալով, հայ ազգին ենթարկուած ցեղա-

սպանութիւնը աւելի հասկնալ սկսած էի»:

Այնուհետև Հ. Զիլինկիրյանը սովորում է Կ. Պոլսի Ավստրիական քոլեջում, որն ավարտում է 1944 թ.:

Հետևելով հորեղբայր Ռուբեն Սևակի օրինակին, Հ. Զիլինկիրյանը ցանկանում է բժիշկ դառնալ և ընդունվում է Կ. Պոլսի բժշկական համալսարան: Սակայն կարճ ժամանակ անց, ինչպես Հ. Զիլինկիրյանն է հիշում, «արիւն տեսած ատեն նեղութիւն կ'անցնէի»: Եվ այդ պատճառով նա հեռանում է բժշկական համալսարանից և աշխատանքի անցնում վաճառականներից մեկի մոտ որպես գրագիր:

1946 թ. բազմաթիվ պոլսահայեր ցանկություն են հայտնում ներգաղթել Հայաստան: Հ. Զիլինկիրյանը նույնպես գնում է սովետական հյուպատոսություն և ցուցակագրվում Հայաստան ներգաղթելու համար:

«Տուն վերադարձի ճամբուն վրայ,- հիշում է Հ. Զիլինկիրյանը,- նկատեցի, որ ետեւէս տեւաբար մէկը կուգար: Եւ մինչեւ որ տուն մտայ, մարդ մը ինձի հետապնդեց: Յետոյ թաղին պատասխանատու պաշտօնեայէն տեղեկացայ, թէ ինձի հետապնդողը ոստիկան մըն է եղեր, եւ թաղին պատասխանատուէն իմ մասին տեղեկութիւններ առեր է»:

Թուրքական ոստիկանության հետապնդումների, հարուցած արգելքների պատճառով պոլսահայերի թվում նաև Հ. Զիլինկիրյանին չի հաջողվում ներգաղթել Հայաստան և հարկադրված մնում է Կ. Պոլսում:

1955 թ. սեպտեմբերի 6-7-ին Հ. Զիլինկիրյանը ականատես է լինում հուլյների և հայերի նկատմամբ Կ. Պոլսում բուքական ոստիկանության աջակցությամբ գինված խուժանի ավերիչ գործողություններին:

«Մինչև այդ օրը,- գրել է Հ. Զիլինկիրյանը,- թուրքին ի՞նչ ըլլալը ընտանիքէս լսած եւ գիրքերէն կարդացած էի:

Բայց 6-7 սեպտեմբեր 1955-ի գիշերը աչքերովս տեսայ, թուրքերուն ի՞նչ գազան եւ վայրենի ըլլալնին:

Եւ այն օրը երդում ըրի, որ այլեւս այս երկիրը պիտի չ'ապրիմ»:

Հավատարիմ իր երդումին, Հ. Զիլինկիրյանն ընդմիշտ հեռանում է Կ. Պոլսից և 1970-ական թվականներից բնակություն հաստատում Ֆրանսիայի Նիս քաղաքում:

* * *

Այդ ժամանակից ի վեր, Հ. Զիլինկիրյանն ամբողջովին նվիրվել է Սփյուռքում հայապահպանության գործին, ձեռք է բերել ազգային-հասարակական գործչին վայել հսկայական հեղինակություն, իր պատմագիտական աշխատություններով վեոականորեն մերկացնում է թուրք և եվրպական կեղծարար հեղինակների հակահայկական նկրտումները:

Այժմ փորձեմ ընթերցողի ուշադրությանը ներկայացնել Հ. Զիլինկիրյանի աշխատությունների շատ համառոտ տեսությունը:

2003 և 2009 թթ. երևանում տպագրվել է Հովհաննես Զիլինկիրյանի «Թուրքերուն [իբր թե] չգիտցած իրականութիւնները» աշխատության առաջին և երկրորդ հատորները:

Այս աշխատությունը, որը տպագրվել է հայերեն, ռուսերեն, անգլերեն և ֆրանսերեն, արժանացել է ընթերցողների ուշադրությանը: Այդ մասին են վկայում Հայաստանի և Սփյուռքի մամուլում հրապարակված բազմաթիվ արձագանքները:

Հովհաննես Զիլինկիրյանն իր աշխատությունն անվանում է «Սարսափելի անիրաւութեան դեմ ընդվզումի աղաղակ»:

Հովհաննես Զիլինկիրյանն արդի հայ հրապարակախոսության մեջ (Հայաստանում և Սփյուռքում) այն միակ հեղինակն է, որ, 2001 թ. հունվարից սկսած մինչև օրս, բացառիկ ուշադրությամբ հետևում է Թուրքիայի պետական գործիչների ելույթներին և թուրքական մամուլի հրապարակումներին, որոնցում պատմության կեղծարարները փորձում են ոչ միայն ժխտել հայոց ցեղասպանությունը, այլև նենգափոխել հայ ժողովրդի պատմությունը:

Թուրք կեղծարարների փորձերը Հովհաննես Զիլինկիրյանը մերկացնում է օբյեկտիվ **պատմականության դիրքերից**: Ես հատկապես ընդգծում եմ օբյեկտիվ պատմականության հանգամանքը, որովհետև լինելով հայոց ցեղասպանության ամբողջ սարսափները տեսած ու ապրած բազում գերդաստաններից մեկի ժառանգը, որը մշտապես վառ է պահում իր հորեղբայր, նշանավոր բանաստեղծ ու փիլիսոփա Ռուբեն Սևակի անմահ հիշատակը, Հովհաննես Զիլինկիրյանը կարողանում է վեր կանգնել անձնական զգացումներից:

Ի պատիվ Հ. Զիլինկիրյանի, վստահաբար կարելի է ասել, որ նա իր աշխատություններով լուրջ ներդրում է կատարում հայ ժո-

դովրդի նորագույն ժամանակաշրջանի պատմագրության մեջ: Նա օբյեկտիվ պատմականության դիրքերից մերկացնում է ոչ միայն թուրք կեղծարարներին, որոնք ամեն կերպ փորձում են խուսափել Հայոց ցեղասպանությունը կազմակերպելու պատասխանատվությունից, այլև նրանց պաշտպանող արևմտյան հեղինակներին:

* * *

Հովհաննես Չիլինկիրյանի հաջորդ, կապիտալ աշխատությունը՝ «Սուտերու և երազներու գոհ...ազգ մը՝ հայերը» (780 էջ) լույս է տեսել 2004 թ. Բեյրութում նշանավոր ազգային-հասարակական գործիչ, հրապարակախոս Ժիրայր Նայիրիի խմբագրությամբ:

Այս աշխատության առաջին հատորում Հ. Չիլինկիրյանը քննարկում է հայ ժողովրդի պատմության տարբեր ժամանակաշրջաններում ծագած բազմաթիվ կնեոոտ խնդիրներ, հանախ դրանց տալով յուրովի, երբեմն էլ շատ խիստ, բայց նշմարիտ գնահատական:

«Սուտերու և երազներու գոհ...» աշխատությունը Հովհաննես Չիլինկիրյանը նվիրել է «Հայկական ցեղասպանութեան, Մեծ եղեռնի անմեղ գոհերուն և հայ դատի պայքարի դիւցազն նահատակներուն սրբալոյս յիշատակին...նաեւ ներկայ ու գալիք պահանջատէր և արիասիրտ նոր սերունդներուն, որ անվհատ ու հաւատալից կամքով շարունակեն իրենց նախնիներուն արդարատենչ մարտնչումը՝ մինչեւ ձեռք բերումը արդար հատուցման»:

«Սուտերու և երազներու գոհ...» աշխատությունում արտահայտված պրոբլեմներն ու խնդիրները վերաբերում են հայ ժողովրդի պատմության տարբեր ժամանակաշրջաններին և առաջին հայացքից թվում է, թե Հ. Չիլինկիրյանը շարադրում է ընթերցողին ծանոթ փաստեր և իրողություններ: Բայց դա այդպես է միայն առաջին հայացքից, որովհետև պատմաբան հեղինակը նշված փաստերն ու պրոբլեմները բացահայտում և մեկնաբանում է յուրովի, հանախ նաև բացառիկ, բայց և արդարացված անողոր սրափությամբ:

Հեղինակի Առաջաբանի հենց առաջին տողերից ընթերցողը հանդիպում է այդ անողորությունը:

«Հարգելի ընթերցող,- գրում է Հ. Չիլինկիրյանն Առաջաբանի

սկզբում,- պիտի խնդրենք, որ չկարդաք այս գիրքը»: Եվ անհ, հեղինակի ցանկությամբ այդ գիրքը չպետք է կարդան նրանք, ովքեր չունեն «ցավը Արեւմտեան Հայաստանին, մեր Մեծ Հայրենիքին կորուստին ցավը»:

Ինչո՞ւ: «Որովհետեւ, բացատրում է Հ. Զիլինկիրյանը, մեր գրածները ձեր սրտին ու մտքին պիտի չխոսին»:

Այնուհետև հեղինակը պահանջում է. «Մի կարդաք այս գիրքը...եթե դաշնակցութիւն կուսակցութեան կը պատկանիք...եթե աղանդաւոր դեկավարներու լոգունգներուն եւ անոնց սուտ պատմութիւններուն կը հաւատաք»:

«Այս գիրքը,- գրում է Հ. Զիլինկիրյանը հայ մեծ ազգը կործանումի մատնող, կեղծ ազգասէր հայ առաջնորդներուն դէմ՝ Անեծքագիր մըն է: Այս գիրքը հայ անարժան առաջնորդներուն կատարած դաւանանութիւններուն դէմ ընդվզումի աղաղակ մըն է»:

Հեղինակը պահանջում է նաև չկարդալ այս գիրքը, «եթե սիոնիզմ ըսուած հրեշիւն նիւդաւորումներէն մեկը եղող ֆարմասունութեան կը պատկանիք: Որովհետեւ սա կը նշանակէ, որ դուք հոգին ծախած եք ձեր ժողովուրդը ցեղասպանութեան ենթարկածներուն, ձեր պատմական հայրենիքի գողութեան մեղսակցածներուն: Կողմ եք ու հանդուրժող մարդկային ու ազգային անիրավութիւններուն: Ձեր հոգիին մէջ հայկականութեան նշույլ մը անգամ չի մնացած»:

Իսկապէս, այդ աշխատությանը ծանոթացող յուրաքանչյուր անաչառ ընթերցող կհամոզվի, որ Հ. Զիլինկիրյանը հավատարիմ մնալով իր դավանած սկզբունքին, պսակագերծ է անում բոլոր նրանց, ովքեր ազգասերի դիմակ հագած, գործել են հայ ժողովրդի դէմ, նրան պատնառել անչափելի կորուստներ:

Այս առումով Հ. Զիլինկիրյանը հանգամանորեն անդրադառնում է հատկապէս դաշնակցության գործելակերպին՝ երիտօրրքերի հետ համագործակցելուց մինչև Հիտլերին զինակցելն ու ԱՄՆ-ի շահերին ծառայելը: Այդ ամենին անդրադառնալիս Հ. Զիլինկիրյանը բերում է փաստեր, որոնցից շատերին անտեղյակ է մասսայական ընթերցողը:

Հ. Զիլինկիրյանն անտարբեր չի մնացել նաև ՀՀԾ-ի գործունեության նկատմամբ և հավաստի փաստերով մերկացնում է հեշական լիդերներին, որոնք գաղտնի բանակցությունների մեջ

էին մտել Թուրքիայի «Գորշ գայլերի» պարագլուխների հետ:

1990 թ. Հայաստանի անկախությունը դարձավ իրողություն: Թվում էր, որ իրականութուն է դառնում հայ ժողովրդի դարավոր երազանքը: Այդ անկախության հռչակումը գինովցրել էր շատ ու շատերի: Նրանք չէին գիտակցում, թե ինչ է կատարվում: Սպասումներին հակառակ տեղի ունեցավ անսպասելին: Իհարկե, մեղավորը դրանում անկախությունը չէր, այլ նրա սխալ ըմբռնումը, սխալ ու արատավոր ընթացքը: Մեղավոր են այդ սխալների ու արատավոր ընթացքի կրողները:

Հայաստանի անկախության հռչակման առաջ բերած աղմկալի փառաբանումների պայմաններում Հ. Զիլինկիրյանը հստակությամբ մատնացույց է արել այդ ոգևորության ճավալի արդյունքները:

«1991-ին, գրել է նա, - «Ղարաբաղ» կոմիտեն ազատութեան երազային խոստումներով խաբեց խելագարած ամբոխները... Խելագարած և խաբուած հայ ժողովուրդը այսօր ինքնագիտակցութեան գալու նշաններ ցոյց կու տայ...»

Բայց ի՞նչ օգուտ:

Աւերը գործուած է:

Այսօր Հայաստանի բնակչութեան գրեթէ կեսը, անգործութեան ու բշուռութեան պատճառաւ, լքած է իր հայրենիքը:

Եւ մնացեալ հայութիւնն ալ, չենք գիտեր, թե մինչև երբ պիտի կարենայ դիմանալ անօթութեան և անապահովութեան:

Ահա այս է «Ղարաբաղ» կոմիտեին ստեղծած «ազատ եւ անկախ Հայաստանին» այսօրուան վիճակին մէկ երեսը»:

Համաձայնելով Հ. Զիլինկիրյանի գնահատականին՝ ավելորդ չեմ համարում միաժամանակ ընթերցողին հիշեցնել այն հեղինակների մասին, որոնք Հայաստանում և Սփյուռքում շարունակում են քծնել, սիրաշահել ժողովրդին, որը նշանակում է խաբել նրան՝ փորձելով համոզել, որ այդպես էլ պետք է լիներ, որովհետև անկախությունը գոհեր ու զրկանքներ է պահանջում, որ դժվարությունները ժամանակավոր բնույթ են կրում, որ անցումնային շրջան է և այլն:

Իհարկե, այդ հեղինակները ստում են: Շատ օրինակներից բերեմ միայն մեկ-երկուսը:

Անցեք Հայաստանի բոլոր գյուղերով: Հանրային ոչ մի

շինություն կանգուն չի մնացել: Ամեն ինչ ավերվել է:

Մի թե անկախության պահանջը դրանց ավերումն էր:

Ավերվել է Հայաստանի հզոր արդյունաբերությունը:

Մի թե դրա ավերումը անկախության պահանջն էր:

Երկրի ընդերքը, եկամուտ բերող ձեռնարկությունները հանձնվեցին օտարներին:

Մի թե դա անկախության պահանջն էր:

Երկրի ունեցվածքը անգուսպ բալանվում է, «նոր հայերը» ինքնամոռաց խրախնանքի մեջ են, ժողովրդի մեծամասնությունը հայտնվել է աղքատության մեջ:

Մի թե դա անկախության պահանջն էր...

Իհարկե, Հ. Զիլինկիրյանը Հայաստանի անկախության ջերմ կողմնակիցն է, ինչպես ամեն մի ազնիվ հայ: Բայց նա վրդովվում է արդարացիորեն, որովհետև այսպիսի հայ ժողովրդի երազածը անկախությունը չէր: Հ. Զիլինկիրյանը կողմնակից է այն անկախությանը, որը բարձրացնում է ժողովրդի ազգային գիտակցությունը, նրան փրկում է աղքատության ու անապահովության հիբաններից և ստեղծում է արժանապատիվ ապրելու պայմաններ:

Ասեմ նաև, որ հեղինակն ուշադրությամբ հետևում է Հայաստանում զարգացող իրադարձություններին, որդիական ցավ է ապրում տեղ գտած բերությունների համար, անխնա, բայց ճիշտ դիրքերից քննադատում Հայաստանի իշխանության մեջ գտնվողներից նրանց, ովքեր չեն փսոսում Հայաստանը, ովքեր իրենց եսասիրական շահերի համար պատրաստ են Հայաստանը վերածել ավերակույտի:

«Այո,- գրում է Հ. Զիլինկիրյանը,- իսկական հայրենասեր հայու մը համար Հայաստանի ներկայ վիճակը տեսնելով չընդվզիլն ու չզայրանալը անկարելի է: Թոյլատրելի է խօսիլ շինիչ ոգով»: Որովհետև «անվերջ քննադատութիւններով մեր նստած ծառին ճիւղը կը կտրենք եւ կը խորտակենք մեր վերջին յոյսը եղող այսօրուան Հայաստանը»:

Հ. Զիլինկիրյանն իրավացի ու անխնա քննադատում է Հայաստանի այն մտավորականներին, որոնք չկարողացան հասկանալ «Սովետ. Հայաստանի շրջանին ապրած բարօր կեանքին արժեքը» եւ պատասխանատու են Հայաստանը «դժոխսային վիճակին մատնելու» համար: Այսպիսի մտավորականներին նկատի ունենալով Հ.

Զիլինկիրյանը գրում է. «Ռուբեն Սեւակին ըսածին պես՝ «Փրցնել նետել պետք է ձեզ պես անպետ մտաւորականներուն ուղեղները»:

Հայ ժողովրդի պատմութեան նորագույն շրջանը հատկապես Սովետական Հայաստանի ժամանակաշրջանը, դեռևս չի դարձել ուսումնասիրողների ու հետազոտողների ուշադրութեան առարկան: Ջգալի է նոր ժամանակաշրջանի վերաբերյալ անաչառ, անկողմնակալ քննարկման պակասը: Իհարկէ, այստեղ որոշակի դեր է խաղում նորագույն շրջանի պատմութեան նկատմամբ նեղ, կուսակցական կորպորատիվ մոտեցումը, երբ, դժբախտաբար, պատմութեան նորովի իմաստավորման անվան տակ թույլ են տրվում բազում կեղծիքներ, աղավաղվում պատմական փաստեր:

Սակայն, ի պատիվ Հ. Զիլինկիրյանի, վստահաբար կարելի է ասել, որ նա իր աշխատութեամբ լուրջ ներդրում է կատարում հայ ժողովրդի նորագույն ժամանակաշրջանի պատմագրութեան մեջ: Նա օբյեկտիվ պատմականութեան դիրքերից մերկացնում է ոչ միայն թուրք կեղծարարներին, որոնք ամեն կերպ փորձում են խուսափել Հայոց ցեղասպանութունը կազմակերպելու պատասխանատվութունից, այլև նրանց պաշտպանող արևմտյան հեղինակներին:

Վերջապես Հ. Զիլինկիրյանն անաչառ դիրքերից քննադատում է հայրենի այն հետազոտողներին, որոնք սեփական ժողովրդի նորագույն ժամանակաշրջանի պատմութեան շատ կարևոր պորթլեմներ քննարկելիս դրսևորում են, մեղմ ասած, անբարեխղճութուն, պատմական իրադարձութունները վերլուծում են ոչ թե օբյեկտիվորեն, այլև դրանց նայում իրենց զանգակատնից:

* * *

Հ. Զիլինկիրյանը հանդես է գալիս Ռուսաստանի հետ Հայաստանի սերտ բարեկամութունն ամրապնդելու դիրքերից: Հանգամանորեն վերլուծելով հայ-ռուսական հարաբերութունների ամբողջ պատմութունը, հեղինակը սուր քննադատութեան է ենթարկում հայ իրականութեան մեջ Ռուսաստանի դեմ հանդես եկողներին և նրանց հիշեցնում, որ այսօրվա Հայաստանը գոյութուն ունի Ռուսաստանի կազմի մեջ գտնվելու շնորհիվ, այդ «մոռացկոտներին» մատնացույց անելով արևմտահայութեան նակատագիրը:

Վերհիշելով Խաչատուր Աբովյանի անմոռաց խոսքերը՝ Հ. Զիլինկիրյանը գրում է. «Մօտիկ անցեալի հայրենի մտաւորականութիւնը հայ ժողովուրդին չի հասկցուցին այս պատգամին կարեւորութիւնը: Հայ ժողովուրդը չի հասկցաւ, որ Հայաստանի աշխարհագրական ու քաղաքական ներկայ պայմաններու մէջ, երեկ, այսօր եւ վաղը, մեր միակ նեցուկը եւ փրկարարը ոռւս ժողովուրդը կրնայ ըլլալ»:

Հ. Զիլինկիրյանը մատնանշում է, որ արևմտյան պետությունների միջոցներով գործող անձինք հասան նրան, որ «հայ ժողովուրդին մէջ ստեղծուեցաւ ոռւսերուն դէմ բշտամութիւն», ասելով, բե ոռւսը տանում է Հայաստանի ունեցվածքը:

«Տեղին չէ ըսելը,- գրում է Հ. Զիլինկիրյանը,- եղբայր, բու «քարերու երկիրդ» ինչ ուներ, որ ոռւսերը գայն պիտի գողնային: Որքան ալ շինարար ու տաղանդաւոր եղած ըլլաս դուն»:

Հ. Զիլինկիրյանն անդրադառնում է նրանց, ովքեր Հայաստանում ոռւսների նկատմամբ ատելություն են սերմանում: «Անոնք,- գրում է Հ. Զիլինկիրյանը,- որ տարիներով Հայաստանի մէջ անպարկեշտ միջոցներով հարստութիւն դիզեցին, ամենէն շատ ոռւսներուն դէմ լեզու երկարողները եղան»:

Հ. Զիլինկիրյանն անարգանքի սյունին է գամում բոլոր նրանց, ովքեր հանդես են գալիս Ռուսաստանի դէմ, «այն ոռւս ազգին դէմ,- ինչպես նշում է նա,- որ ազատագրել էր Արեւելեան Հայաստանը»: Նա համոզված ընդգծում է, որ «այն բոլոր հայերը, որոնք կ'ապրին այսօր Հայաստանի հողերուն վրայ, իրենց կեանքը ոռւսերուն կը պարտին»:

«Մենք խորապէս համոզուած ենք,- գրում է Հ. Զիլինկիրյանը,- որ Կովկասի եւ Հայաստանի մէջ ոռւսերուն ներկայութիւնը՝ Հայաստանի գոյութեան համար ամենամեծ երաշխիքն է», որ նաև «հայկական պետութեան գոյութիւնը, ոռւսերուն համար Կովկասի մէջ, մեծագոյն պատենշն է բուրքերուն յառաջացման դէմ»:

Հ. Զիլինկիրյանը Ռուսաստանին վերաբերվում է համակրանքով, անկախ նրանում եղած քաղաքական կարգերից, անկախ Ռուսաստանի գույնից: Նրա համար Ռուսաստանն այն երկիրն է, որը կկարողանա ի վերջո ոտքի կանգնել եւ վերականգնել աշխարհում խախտված ուժերի հավասարակշռությունը, որից անպայման կշահի նաև Հայաստանը:

Ցանկացած միջազգային պրոբլեմ Հ. Չիլինկիրյանը քննարկում է Հայաստանի շահերի տեսանկյունից, այն առումով, թե որքանով են այդ պրոբլեմները շոշափում Հայկական հարցը, որքանով են մեզ համար օգտակար և որքանով վնասաբեր:

Իմ կարծիքով, այսպիսի մոտեցումը արդարացված է պատմականորեն, որովհետև գլոբալիզացիայի պայմաններում ոչ մի երկիր չի կարող չեզոք մնալ, իրեն հեռու պահել դրա բերած վտանգներից:

* * *

Հեղինակը հանգամանորեն քննարկում է սիոնիզմի պրոբլեմը, բացահայտում նրա վնասակար դերն ինչպես հայ, այնպես էլ աշխարհի մյուս ժողովուրդների նակատագրում: Այս առումով նա մերկացնում է ԱՄՆ-ի վարչակարգի ամբողջ քաղաքականությունը:

Հովհաննես Չիլինկիրյանի հրապարակախոսության մեջ առանձնակի տեղ է զբաղեցնում Ամերիկյան իր պատմությամբ, ռազմաստրատեգիական քաղաքականությամբ ու գաղափարախոսությամբ:

Ամերիկայի նկատմամբ Հ. Չիլինկիրյանի վերաբերմունքը պատճառաբանված է: Նախ, նա ԱՄՆ-ին քննադատում է, նկատի ունենալով, որ այդ երկիրն աննահանջ կերպով պաշտպանում է Հայոց ցեղասպանությունն իրականացրած Թուրքիային: Եվ երկրորդ, որ ԱՄՆ-ը իր ռազմաստրատեգիական ու ագրեսիվ քաղաքականությունն ուղղել է իրենց ազգային անկախությունը պաշտպանող ժողովուրդների ու երկրների դեմ:

Հ. Չիլինկիրյանի աշխատության մեջ կարևոր տեղ է զբաղեցնում հայ-թուրքական առնչություններին վերաբերող հարցերի խումբը:

Հ. Չիլինկիրյանի ուշադրությունից ոչ մի հարց չի վրիպում: Նրա համար հայ-թուրքական առնչությունների մեջ փոքր կամ երկրորդական նշանակության խնդիրներ չկան: Այստեղ ամեն ինչ կարևոր է: Ամեն ինչ այժմեական է: Նա սուր քննադատության է ենթարկում Հայաստանի Հանրապետության հին ու նոր այն դեկավարներին, որոնք մակերեսային պատկերացում ունեն հայ ժողովրդի նկատմամբ թուրքական քաղաքականության մասին թե՛

անցյալում և թե՛ մեր ժամանակներում:

Անդրադառնալով 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի նախօրյակին ծավալված իրադարձություններին՝ Հ. Զիլինկիրյանը գրում է. «Ներսես Վարժապետեան եւ իր գործակիցները նախընտրեցին, որ Արեւմտեան Հայաստանը օսմանեան տիրապետութեան տակ մնայ, քան թէ ազատագրուի ռուսներուն կողմէ»: Ն. Վարժապետյանին նա իրավացիորեն գնահատում է որպէս «Արեւմտեան Հայաստանի ազատագրման արգելք եղող ամենամեծ պատասխանատու»:

«Երբ հայ պատրիարք մը,- գրում է Հ. Զիլինկիրյանը,- «օսմանեան երկիրը պաշտպանել՝ Հայաստան պաշտպանել է» կ'ըսէ, ալ ուրիշ պատճառ չփնտոենք մեր քայքայման»: Հենց այս պատճառով էր, որ մենք չկարողացանք օգտվել նպաստավոր առիթից, և Հ. Զիլինկիրյանի գնահատմամբ՝ «մենք հնազանդ, հաւատարիմ մնացինք թուրքին, շահեցանք «Միլլէթի սատրգայը երմինիյէ» մակդիրը»:

Հ. Զիլինկիրյանն անդուլ կերպով հանդես է գալիս Մայր Հայաստանի հետ Սփյուռքի կապերի ամրապնդման օգտին: Նա Սփյուռքի իդեալը համարում է «Ամէն բան Մայր Հայաստանի համար» սկզբունքը:

Այդ իդեալը ընդունող բոլոր հայկական կազմակերպությունները և Հայաստանյայց Առաքելական եկեղեցին պետք է միանան, շեշտում է Հ. Զիլինկիրյանը: «Հայաստան եւ Սփիւռք,-գրում է նա,- փոխադարձաբար իրարու գօրաւիգ ըլլալով պիտի կրնանք լուծել մեր բոլոր խնդիրները: Մեր ապրած երկիրներուն օրէնքներուն կարելիութեան սահմաններուն մէջ մնալով, ոչ մէկը արգելք չի կրնար ըլլալ, որ մենք մեր պարտականութիւնը կատարենք մեր Մայր Հայրենիքին հանդէպ»:

Եվ որպէսզի դա իրականանա, Հ. Զիլինկիրյանը դիմում է հայրենասէր մտավորականներին, գրողներին և կրոնական քարոզիչներին՝ նրանց կոչ անելով. «Վար առէք դիմակները կեղծ ազգասէր տօնքիշոտներու, որ մեզի 100 տարի երազներով օրօրեցին, եւ դեռ կը շարունակեն թունաւորել հայ պատանիներու մատղաշ ուղեղները կեղծ ազգասիրական լոգունգներով, նման այն աղանդներուն, որոնք իրենց հաւատացողներուն մտային կարողութիւնը կը մեռցնեն»:

Հ. Զիլինկիրյանը սրտի խոր ցավով է խոսում Հայաստանից չքուլացող արտագաղթի մասին: Նա, դրա հետևանքները նկատի ունենալով, դիմում է Հայաստանի իշխանություններին՝ կոչ անելով մտահոգվել ժողովրդի դրուքյունը լավացնելու միջոցով կասեցնել արտագաղթը:

Հակառակ դեպքում, ինչպես գրում է Հ. Զիլինկիրյանը, «Հայաստանի ամերիկյաներ իշխանություններ, ձեզի բան մը կը մնայ ընելիք՝ բուրքերուն նամակ մը կը գրեք եւ կ'ըսեք, քե՛ «բուրքեր՝ հայերը ջարդելու պէտք չունիք այլեւս: Հայաստանը պարպած է հայերէն: Եկեք եւ գրաւեցեք Հայաստանը»:

* * *

Տևական ընդմիջումից հետո, 2009 թ. մայիսի 5-ին, Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Երկրորդի հրավերով Հ. Զիլինկիրյանը Շվեյցարիայի հայկական գաղութի նշանավոր գործիչներից մեկի՝ իր փեսա Հակոբ Ավագյանի ուղեկցությամբ մի քանի օրով այցելեց Հայաստան: Հակոբ Ավագյանն անգնահատելի մասնակցություն է ունեցել Շվեյցարիայի պառլամենտում Հայոց ցեղասպանությունն ընդունելու և դատապարտելու գործում:

Հովհաննես Զիլինկիրյանի պատվին Թեքեյան մշակութային հիմնարկում կազմակերպվեց հանդիպում Երևանի մտավորականության ներկայացուցիչների հետ: Հ. Զիլինկիրյանը դասախոսությամբ հանդես եկավ Երևանի «Հրաչյա Անառյան» համալսարանի ուսանողների առջև և պատասխանեց նրանց բազմաթիվ հարցերին:

Ջերմ էր Հ. Զիլինկիրյանի հանդիպումը Երևանի Ռուբեն Սևակի անվան դպրոցի մանկավարժական կոլեկտիվի և աշակերտության հետ: Ուսուցիչներն իրենց խոր երախտագիտությունը հայտնեցին դպրոցը հովանավորելու համար: Նրանք խոստացան այսուհետև ևս իրենց ջանքերը չխնայել աշակերտներին հայեցի դատիարակելու, նրանց կայուն գիտելիքներ մատուցելու և Հայրենիքին պիտանի քաղաքացիներ դարձնելու համար:

Հ. Զիլինկիրյանն այցելեց նաև Մեծ եղեռնի հուշահամալիր և իր հարգանքը մատուցեց անմեղ զոհերի հիշատակին:

Մայր Հայաստան կատարած այցելության ժամանակ իր ստացած տպավորությունների մասին Հ. Զիլինկիրյանը 2011 թ. Երևանում հրատարակել է «Վերադարձ Հայաստան» գիրքը:

«Միայն,- գրել է Հ. Զիլինկիրյանը,- Մայր հայրենիքին հողն է իրականը և յաւիտենականը:

...Հայաստան և Սփիւռք, փոխադարձաբար իրարու գորավիզ ըլլալով լոկ, պիտի կրնանք լուծել մեր բոլոր խնդիրները:

Մեր ապրած երկիրներուն օրէնքներուն (կարելիութեան սահմաններուն մէջ) հնազանդ մնալով հանդերձ՝ ոչ մէկը արգելք կրնայ ըլլալ որ մենք, մեր պարտականութիւնը չկատարենք մեր Մայր Հայրենիքին հանդէպ:

Այսօրուան Հայաստանը՝ մեր վերջին յոյսն է... Եթէ հիմա չօգնենք մեր Մայր Հայրենիքին՝ յետոյ շատ ուշ պիտի ըլլայ»:

* * *

Ահա շատ ընդհանուր գծերով ու համառոտ խոհերն ու մտքերն այն մարդու, որն իր առջև խնդիր է դրել ոչ միայն պահպանել Ռուբեն Սևակի հիշատակը, այլև, զարգացնել ու տարածել մեծ բանաստեղծ-մտածողի գաղափարները: Հենց այս նպատակին է ուղղված «Սուտերէ եւ սխալներէ գտուած Ռուբեն Սևակի հերոսական կեանքի ու գաղափարականի պատմութիւնը» նոր գիրքը:

Գրքի առաջին հատվածում ընդգրկված են նրա հեղինակած. «Ռուբեն Սևակ եւ «Փրցուելիք ուղեղները»» (1985 թ.) և «Ռուբեն Սևակի գաղափարականը» (1985 թ.) աշխատութիւնները, որոնք լույս են տեսել Ֆրանսիայում:

Գրքի երկրորդ հատվածում ընդգրկված են Բեյրութում Ժիրայր Նայիրիի խմբագրութեամբ լույս տեսնող «Նայիրի» թերթում հրատարակված հոդվածները:

Նախ, ուզում եմ նշել, որ Հ. Զիլինկիրյանի նոր աշխատութեանը ծանոթանալիս, ընթերցողն անպայման կհամոզվի, թէ հեղինակն ինչու է այդպիսի վերնագիր ընտրել:

Գրքի առաջին էջից մինչև վերջին էջը Հ. Զիլինկիրյանը նորահայտ փաստերի հիման վրա բացահայտում է Ռուբեն Սևակի կյանքն ու գործունեութիւնը: Նա մեկ առ մեկ քննարկում է Ռուբեն Սևակի մասին տարբեր հեղինակների արտահայտած սուրբ-յեկտիվ, իրականութիւնից շատ հեռու տեսակետները, բացահայտում է իսկական նշմարտութիւնը՝ ընդգծելով այդ հեղինակների նպատակը՝ նսեմացնել նահատակ բանաստեղծի ունեցած դերը:

Առանձնակի հետաքրքրութիւն է ներկայացնում հետևյալ

փաստը: Հանրահայտ է, որ 1915 թ. հայոց ցեղասպանության զոհ դարձան բազմաթիվ նշանավոր հայ մտավորականներ: Նրանցից ոչ մեկի մասին, բացի Ռուբեն Սևակից, երիտթուրքական իշխանությունները բացահայտորեն չեն արտահայտել իրենց վերաբերմունքը, ընդգծելով, որ «Ռուբեն Սևակը մահվան է դատապարտվել ժողովրդի մոտ ունեցած մեծ հեղինակության պատճառով»:

Իր նոր գրքում բերելով այս կարևոր վկայությունը, Հ. Զիլինկիրյանն ընթերցողին ծանոթացնում է դեռևս 1917 թ. երիտթուրքերի կողմից թուրքերեն և ֆրանսերեն հրատարակված <BERCEUSE> գրքի հետ: Այս գրքում թուրքերը հայկական կոտորածներն արդարացնելու համար որպես «հայկական հեղափոխական գաղափարախոսության» ապացույց, բերում են միայն Ռուբեն Սևակի «Վերջին օրօր» բանաստեղծությունը, որտեղ հայ մայրը իր որդուն կոչ է անում վրեժ լուծել զոհված հոր համար:

Ահա այդ բանաստեղծության վերջին տողերը.

«Ահա կիյնամ... Հայաստանը մա՛յր քեզի:

Կտակ կու տամ այս կոտորած սուրն երկսայրի,

Ուր հայրիկիդ դեռ տաք արիւնը կ'այրի...

Օրօր ըսեմ քնանաս»:

* * *

Հ. Զիլինկիրյանի գրքին ծանոթացող յուրաքանչյուր ազնիվ մարդ կհամոզվի, որ Ռուբեն Սևակը եղել է այն եզակի հայրենասեր գործիչներից մեկը, որը չի ընկրկել երիտթուրքական պարագլուխների առջև, իր համար «թրքանալը նուաստանալ» է համարել և բարձր է պահել հավատարմությունն իր ազգային ինքնությանը, մայրենի լեզվին:

Միաժամանակ Ռուբեն Սևակը իր ողբերգական մահով եղավ ընտանիքի սրբությանը նվիրվելու անձնագոհության մի իսկական հայ տղամարդու տիպարը:

Ռուբեն Սևակն այն հեռատես ու զգոն գործիչն էր, որ զգաստության կոչ էր անում բոլոր նրանց, ովքեր «գինովցած», փարվել էին երիտթուրքերին և կուրորեն ծառայում էին նրանց շահերին: Այդ «գինովցածներին» Ռուբեն Սևակը զգուշացնում էր. «Ստոյգ կ'ըսեմ ձեզի, վտանգը մեծ է, շատ մեծ, աւելի մեծ, քան կրնանք ենթադրել»:

Հակառակ «գինովցածների» ստորաքարշուքյան, Ռուբեն Սևակը կոչ էր անում հրաժարվել երիտթուրքերի հետ կապված պատրանքներից և մտածել ինքնապաշտպանության մասին: «Ժամանակ է հակազդելու, հակազդենք», - կոչ էր անում հայրենասեր Ռուբեն Սևակը և մատնացույց էր անում երիտթուրքերի կողմից սպառնացող վտանգը:

Անաչառ ընթերցողը նաև կհամոզվի, թե ինչ նպատակով են որոշ հեղինակներ շարունակաբար Ռուբեն Սևակին ներկայացրել (նաև այժմ) որպես սկսնակ բանաստեղծ, որը ավարտին չի հասցրել իր, որպես բանաստեղծի, ձևավորումը:

Ընթերցողը կհամոզվի, որ Ռուբեն Սևակը չի ընտրել տրոբված նանապարհ: Նա, ի տարբերություն իր շատ ժամանակակից նշանավոր գործիչների ու գրողների, ոչ միայն չկրկնեց ուրիշներին, այլև դրսևորեց իսկական հայրենասերին հատուկ կամք, ընդգծելով, որ վաղուց տրոբված նանապարհը արևմտահայությանը տանում է դեպի երիտթուրքերի խարդախությամբ սարքած փակուղի:

Բայց ավաղ, երիտթուրքական խոստումներից «գինովցած» ու գլխապտույտի մեջ ընկած շատ «խելոք» ու «շրջահայաց» գործիչներ, որոնք իրենց ձեռքն էին գցել հայ ժողովրդի գործերի տնօրինությունը, մնացին խուլ, կորցրին կողմնորոշվելու զգացողությունը:

Ճակատագրի բերումով Ռուբեն Սևակն այդ «գինովցած» գործիչների հետ միասին արժանացավ նույն ողբերգական վախճանին: Այո, մահը հավասարեցնում է բոլորին: Բայց ավելի լայն առումով մնում են պատասխանատվության չափն ու բաժինը, որոնք ժամանակի ու պատմության կամքով ընկնում են, թեև զոհի վիճակում, որոշակի մարդկանց վրա:

Ռուբեն Սևակը զոհվեց, քանի որ նրա զգուշացումները չէին հասնում «գինովցածների» խլացած ականջներին: Մյուսներն էլ զոհվեցին, քանի որ «գինովցած» էին և շատ ուշ սթափվեցին ու այլևս անկարող էին որևէ վճռական քայլ կատարել:

Իմ համոզմամբ միանգամայն արդարացի է Սփյուռքի նշանավոր ազգային-հասարակական գործիչ Անդրանիկ Մառուկյանի հետևյալ գնահատականը:

Նւ եթէ ինծի վիճակուէր, որ մեր նահատակ գրագէտներէն

մէկուն յիշատակին [բոլորն ալ յարգելի են, բոլորն ալ հաւասար են] արձան մը կանգնենք, ինչպէս անծանօթ գինուորի արձանները կան, մենք ալ մէկ արձան մը ընտրենք՝ հայ նահատակ մտաւորականները, հայ նահատակ գրագետները, խորհրդանշող՝ ես պիտի ուզէի Ռուբէն Սեւակին արձանը բարձրացնել, իբրեւ ամբողջական մարդ, իբրեւ ամբողջական գրագետ և ամբողջական ազգային գործիչ:

Հովհաննէս Չիլինկիրյանի աշխատութիւնների սույն համառոտ տեսութիւնն ուզում եմ ավարտել Սփյուռքի նշանավոր ազգային-հասարակական գործիչ Հարութիւն Հելվենյանի հետեւյալ գնահատականով, որը հրատարակվել է 2003 թ. ապրիլի 8-ին «Նայիրի» թերթում:

«Քաղաքական բոլոր յոռի երեւոյթները արդարօրէն խարագանող, ձաղկող եւ նշմարիտին եւ արդարին հոգի, շունչ եւ աւիւն սպառող գրչիդ ինչպէ՞ս չխոնարհինք սիրելի Յ. Չիլինկիրեան, երբ քու յօդուածներէդ մեր ազգը միայն ու միայն օգուտ պիտի քաղէ, չիյնալու համար միջազգային սաղրանքներուն, խաղերուն եւ վնասներուն մէջ:

Կարդալով ձեր յօդուածները որոնք այնքան տրամաբանական, համոզիչ եւ դաստիարակիչ են միեւնոյն ժամանակ, ու սրտի մօտ՝ մասնաւորաբար, կը գնահատեմ ձեր մտածելաձեւը ու կը ձայնակցիմ ձեր բոլոր քաղաքական տեսութիւններուն, Լաւին ու Բարիին ձգտելու ձեր ջանքին եւ պայքարին: Ձեր համամարդկային զգացողութիւնները նաեւ կը գնահատեմ: Ձեր գրչէն հոսող թանաքը միշտ ըլլայ անսպառ եւ արդարութեան աղաղակող ձայնը: Երբ կ'աշխատիք տիղմէն հեռու պահել անիրաւուածները եւ խեղները մանաւանդ, ձեր կարկիւնը բարեբախտաբար լայն կը բանաք ու ձեր արքուն եւ բարի աչերէն չի վրիպիր ոչ մէկ միջազգային երեւոյթ ու ձեր յօդուածներուն ընդմէջէն մեզի կը հասնի ձեր ջինջ, զուլալ, յստակ եւ արդար ձայնը: Հայ մարդու անկեղծ խօսքը եւ առողջ տրամաբանութիւնը:

- Թող ձեր գրիչը արդար ու անասան մնայ, որպէսզի անարդարին երբեք չհանդուրժէք, այլ՝ ձեր խիզախ կեցուածքներով Ձարը հարուածող գրիչ-սուրը դառնաք:

- Թող ձեր անկեղծ եւ զգուշաւոր խօսքը հասնի ամէն մէկ հայու՝ Հայաստանէն մինչեւ Սփիւռք:

- Թող ձեր գրիչը տապալե մարդկութեան վնաս բերող ամեն չարիք. եւ այն ատեն, վստահ եմ, ձեր արդար վարձքը պիտի ստանաք ու ձեր հոգին պիտի ցնծայ ի տես մարդկութեան բարօր եւ հանգիստ ու խաղաղ կեանքին:

- Թող ձեր գրիչը վար չդրուի մինչեւ խուլ արդարութիւնը լսէ ձեր բողոքը, լսէ ձեր արդար պահանջքը ի շահ մեր ազգին եւ, ինչու չէ՝ նաեւ միւս բոլոր անիրաւուած եւ պահանջատէր ժողովուրդներուն: Վարձքդ կատար՝ սիրելի Պրն. Չիլինկիրեան»:

* * *

Հովհաննես Չիլինկիրյանի գործունեության կարևոր ուղղություններից մեկն էլ վերաբերում է Ռուբեն Սևակից մնացած փաստաթղթերի, անտիպ երկերի, նամակների հավաքմանը: Թե այդ գործում Հ. Չիլինկիրյանը ինչ դժվարություններ է հաղթահարել, կհամոզվի ընթերցողը՝ ծանոթանալով նրա աշխատությանը:

Հսկայական ջանքերի գնով Հովհաննես Չիլինկիրյանը ստեղծել է «Ռուբեն Սևակ Մշակութային հիմնարկը», որն իր կարևոր գործն է համարում բանաստեղծի գրական-հասարակական ու հեղափոխական գործունեության լուսաբանումն ու նրա գաղափարների տարածումը:

Հիմնարկի նախաձեռնությամբ ու նրա միջոցներով, ստեղծման օրից մինչև այժմ, հրատարակվել է երեքտասնյակից ավելի արժեքավոր աշխատություն, որոնք նվիրված են հայագիտության, հայ ժողովրդի պատմության կարևոր պրոբլեմներին:

Գրքերի հրատարակությունից բացի, հիմնարկը ստեղծել է մրցանակային ֆոնդ, որով յուրաքանչյուր տարի պարգևատրվում են Ռուբեն Սևակի գաղափարները ներկայացնող լավագույն գործերը:

Դեռևս 1985 թ. Հովհաննես Չիլինկիրյանն իր միջոցների հաշվին ստեղծել է Ռուբեն Սևակի անվան հիշատակի տուն-թանգարան, որտեղ ամփոփված են բանաստեղծի ձեռագրերը, նամակները, անձնական իրերը, այն ամենը, ինչ նրան հաջողվել է փրկել բուրքական ջարդարարներից: Այդ թանգարանում ստեղծվել է նաև մի հոյակապ պատկերասրահ, որտեղ պահվում են բացառապես հայ ծովանկարիչների գործերը, 200-ից ավելի կտավ: Պատկերասրահում ցուցադրվում են նաև Հ. Այվազովսկու կտավներից երեքը:

Հովհաննես Չիլինկիրյանը ժամանակին մի քանի անգամ դիմել է Սփյուռքի հետ մշակութային կապերի կոմիտեին՝ առաջարկելով իր միջոցներով Երևանում ստեղծել «Ռուբեն Սևակի անվան հիշատակի տուն» և այնտեղ տեղափոխել վերևում հիշատակված բոլոր նյութերն ու կտավները:

Ցավոք, Հովհաննես Չիլինկիրյանի առաջարկությունը մնացել է անհետևանք...

«Ռուբեն Սևակ մշակութային հիմնարկը» իր ուշադրության կենտրոնում է պահում Երևան քաղաքում գտնվող Ռուբեն Սևակի անվան դպրոցը՝ նրան ցույց տալով զգալի նյութական ու ֆինանսական օգնություն: Հիմնարկը դպրոցում ստեղծել է Ռուբեն Սևակի թանգարան:

Ցուրաքանչյուր տարվա ապրիլ ամսվա վերջին դպրոցը, տնօրեն Ջուլյա Ղազարյանի ղեկավարությամբ, կազմակերպում է Ռուբեն Սևակին նվիրված օրեր, որոնց ակտիվ մասնակցում են նաև մյուս դպրոցների աշակերտները: Այդ օրերին առանձնակի հանդիսություն է հաղորդում իր ներկայությամբ մեծ բանաստեղծի դուստր Շամիրամ Սևակը, որը, չնայած բազում դժվարություններին, ամեն տարի հեռավոր Ֆրանսիայից պարտադիր այցելում է Երևան:

* * *

Պարտքս եմ համարում ընթերցողին ներկայացնել նաև Հովհաննես Չիլինկիրյանի բազմաթեղուն գործունեության մեկ այլ, նունպես կարևոր ասպարեզ:

Հովհաննես Չիլինկիրյանի ազգային-հասարակական գործունեությունը առնչվում է նաև Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակի (ASALLA) այն մարտիկներին, որոնք մատնության կամ էլ դավանանության հետևանքով ձերբակալվել ու դատապարտվել էին եվրոպական տարբեր երկրներում:

Հայ բողոքական քահանա Հարություն Հելվենյանի, Շվեյցարիայի հայկական համայնքի նշանավոր ազգային գործիչ, հայտնի հրապարակախոս Նազարեթ Սրմաքեշյանի հետ միասին, Հ. Չիլինկիրյանը դարձավ հայ քաղաքական բանտարկյալների օգնության կենտրոնական հանձնախմբի ստեղծողներից մեկը:

Այդ հանձնախումբը, որի կանոնադրությունը գրանցվել էր

Փարիզի նահանգապետարանում, իր առջև նպատակ էր դրել «ամեն գնով օգնել հայ քաղաքական բանտարկեալներուն եւ անոնց արգելափակեալ կեանքը տանելի դարձնել գէթ մասամբ, զանոնք քաջալերել հոգեւորապէս, բարոյապէս ու նիւթապէս՝ մինչեւ անոնց ազատագրուիլը»:

Հայ քաղաքական բանտարկյալների օգնության կենտրոնական հանձնախմբի ստեղծումը արձագանք գտավ Սփյուռքի համայնքներում և կարճ ժամանակում ձեռք բերեց լայն աջակցություն ու հեղինակություն:

Հանձնախմբի անդամները այցելել են Ֆրասիայի, Շվեյցարիայի և այլ երկրների կալանավայրեր, տեսակցել բանտարկված Գաղտնի բանակի մարտիկներին, հնարավորության սահմաններում նրանց ցույց տվել բարոյական ու նյութական աջակցություն:

* * *

Ներկայացնելով Հովհաննես Չիլիկկիրյանի պատմագիտական և ազգային-հասարակական բազմաբովանդակ գործունեությունը, պարտքս եմ համարում նշել նրա կյանքի հավատարիմ ուղեկից Տիկին Իրմային, որը իր հոգատարությամբ ամեն ինչ անում է նրա համար աշխատելու և գործելու պայմաններ ստեղծելու գործում:

Վերջերս Հովհաննես Չիլիկկիրյանը ենթարկվել է վիրաբուժական գործողության: Նրան հոգատարությամբ են շրջապատել հարազատները և առաջին հերթին դուստրերը՝ Շամիրը, Անին և Արփին:

Իմ և Հայաստանում նրան նանաչողների կողմից Սփյուռքի նշանավոր ազգային-հասարակական գործիչ, հմուտ հրապարակախոս և տաղանդավոր գիտնական Հովհաննես Չիլիկկիրյանին մաղթում եմ շուտափույթ ապաքինում և ամուր առողջություն:

Համոզված եմ, որ մեր մեծ բարեկամը նույն եռանդով և հաջողությամբ կշարունակի մերկացնել հայ ժողովրդի պատմության կեղծարարներին, կպաշտպանի Հայկական հարցը նրանց ոտնձգություններին, իր ջանքերը, ինչպես միշտ, կուղղի Սփյուռքի հայ երիտասարդությանը հայրենասիրության, Մայր Հայաստանին նվիրվածության ոգով դաստիարակելու գործին:

ՎԱԿԻՄԻՐ ՊԵՏՐՈՍԵԱՆ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ

ՆԱՀԱՏԱԿ ԲԱՆԱՍՏԵՂԾ
ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿ
ԾՆՆԴԵԱՆ 100-ԱՄԵԱԿԻՆ
ԱՌԹԻԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿ ԵՒ

«ՓՐՑՈՒԵԼԻՔ ՈՒՂԵՂՆԵՐ»

ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿ
1885-1915

Այս գիրքը կը ձօնենք՝ անունով հայ, այն կեղծ ազգասեր
առաջնորդներուն, որոնց սխալ քաղաքականութիւնը՝
24 Ապրիլ 1915-ի յանգեցաւ:

Այս գիրքը կը ձօնենք՝ անունով հայ,
Սփիւռքի այն կեղծ ազգասեր
առաջնորդներուն, որոնց սխալ քաղաքականութիւնը՝
նոր 24 Ապրիլներու կրնայ յանգիլ:

Յովհաննէս ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ

* * *

«Այլասերում»

1911

Ռուբեն Սեփ-Ակ»

«Բժիշկին գիրքեն փրցուած էջեր»ու շարքեն:

... Աշխարհիս բոլոր մարդասպաններն ու բոլոր չարագործները ձեռք ձեռքի տուած՝ պիտի չկրնային այնքա՛ն երիտասարդ, այնքա՛ն խոստումնալի, այնքա՛ն ընտրուած հոգիներ սպանել, քան Շօփենհաուեր մը, Նիցչէ մը, Պայրըն մը...

Այլասերած մանուկներու օրօրոցներուն մէջ պէտք է փնտռել անձնասպանութեան քարոզիչները, յոռետեսութեան առաքեալները, ապականութեան մարգարէները:

Անոնք կը ջլատեն գործունէութեան ամէն տենչ, երջանկութեան ամէն յոյս, սրբութեան ամէն հաւատք:

Անոնք չեն յառաջդիմեր, այլ կ'ոստնուն, չեն երագեր, այլ կը գառանցեն, չեն օրհներ, այլ կը նզովեն, չեն սիրեր, այլ կը տոփան:

Իրենց երգը հայհոյանքի մը պէս ամբարտաւան է, իրենց ժպիտը հեզնութեան մը պէս վիրաւորիչ:

Օրինակ կ'ուզե՞ք: Բայց ամէն ազգերէ աւելի հա՛յ մտաւորականութիւնը կը վիտայ այս **բացասական հանճարներով**: (.....)

Կէս-հանճարներ շա՛տ: Բայց երբ ցեղի մը մտաւորական բանակը տաղանդաւոր փոքրիկ վիժուկներով միայն կը լեցայ՝ անհանդուրժելի, գայթակղեցուցիչ, դատապարտուած ցեղ մը կ'ըլլայ այն: (.....)

... Ու մենք փոխանակ արմատախիլ ընելու, տգիտօրէն կ'ընտրենք էն ախտավարակ ծիւերը ու զիրենք միայն կը մշակենք:

Այն բոլոր առոյգ, պայքարող, գուարթ ու աչքաբաց երիտասարդութիւնը, որ կը լեցնէ մեր վարժարանները. կ'առնենք օր առաջ **գործի** տալու համար...

Իսկ այն քանի մը հղնիմ, տժգոյն ու տխուր տղաքները, այն պատանի ծերունիները, որ արեւէն ու պայքարէն խուսափելով՝ դպրոցի մուտք անկիւններուն մէջ բուրդ կը մրոտեն, անոնք դպրոցէ դպրոց, երկիրէ երկիր, համալսարանէ համալսարան կը դրկենք:

Խեղճե՛րը...: Անոնք կը լեցնեն պանդուխտ ուսանողի գերեզմանները, անոնք կը լեցնեն հարուստի նախասենեակները ու վաճառականի գրասենեակները. հիւանդանոցի խշտեակները անո՛նք կը լեցնեն...

Ու կը պատահի մեզ ա՛յն, ինչ որ ո՛չ մէկ քաղաքակիրք ազգի չէ պատահած:

Մեր գիւղացի ու շուկայի դասակարգը աւելի մտացի է, քան ա՛յն, որ *մտավորական* կը կոչուի. ընթերցողը աւելի ողջամիտ է, քան գրողը, *առաջնորդուողը ավելի հեռատես է քան առաջնորդողը*, ուրիշ խօսքով՝ մարմինը աւելի խելացի է, քան ուղեղը...: (...): Բնախօսական օրէնք մըն է, որ մարմինը իր մէջէն քիչ-քիչ կը չեզոքացնէ, կ'անջատէ, կը վտարէ այլասերած մասերը:

Նոյն օրէնքով միայն կարելի է բացատրել՝ թէ ինչո՞ւ մեր մտաւորականութեան ու մեր հասարակութեան միջեւ գտնուող կապը քիչ-քիչ կը բարկանայ:

Ցեղը կը մնայ առաւել քան երբե՛ք առո՛ղջը, ու իր մէջէն կը չեզոքացնէ, կ'անջատէ, կը վտարէ օտարացած ու այլասերած տարրերը:

Գլուխը մարմնին կապող նիհար պարանոցը երթալով կը բարակնայ: Ու հեռու չէ գուցէ այն օրը, երբոր վիզը փրթելով՝ մեր մտաւորականութիւնը անմարմին գլուխ մը պիտի ըլլայ միայն, եւ մեր ցեղը՝ անգլուխ մարմին մը...:

Զե՞ք տեսներ արդե՛ն, թէ ի՛նչպէս շատ մը գրագէտներ լիրք քաջութիւնը ունին յայտարարելու՝ թէ իրենք ժողովուրդին համար չէ՛ որ կը գրեն:

Ո՛չ, հօտին ու հովիւներուն միջեւ անհասկացողութիւնը երբեք այսքան մեծ չէր եղած:

Գառնուկի պէս անգէն ցեղ մը ամէն օր, ամէ՛ն օր կը յօշոտուի: Իսկ մեր գամբոնները խելօքցեր, փիլիսոփայացեր, քաղաքակրթուեր են, տիեզերական եղբայրակցութեան մը խօսքերը կ'ընեն մեզի, ու կ'երագեն ակն հեռաւոր օրուան՝ ուր գայլ ու գառնուկ մէկտեղ կ'արածուին...:

Մանուկի պէս տգետ ցեղ մը ուսման կաթին է կարօտ, այն բարի

ու անարատ ու սպիտակ կաթին, որ հիւանդներն իսկ կարենային մարսել:

Իսկ մեր համալսարանականները, որ մեր մտաւոր ստնտու մայրերը պիտի ըլլային, դեռ կերածնին չմարսած կուգան մեր առջեւ փսխելու...:

Որբուկի պէս անտէր ցեղ մը հուժկու, ու լուսեղ ու սիրտբուխ բարբառի մըն է ծարաւ. իսկ մեր գրագէտները հանելուկային, առեղծուածային, խաւարակուռ բաներ կ'ըսեն իրեն, ու մեր քերթողները՝ գրիչնին հայ արեան մէջ քաթխելէ վերջ՝ չինարէն տաղեր կը գրեն, որպէսզի մա՛րդ չհասկանայ...: (.....)

Հեռո՛ւ մենէ՛ ախտագի՛ն մտաւորականներ: Դուք ցեղին ուղեղն էք. բայց երբ այդ ուղեղը ուրիշ կերպ չի կրնար խորհիլ քան յուսահատեցնելով մեր կենսունակութիւնը, մենք պիտի փրցնենք ու նետենք այդ ուղեղը:

Մենք նոր միտքեր, նոր սրտեր, նոր հոգիներ պիտի դարբնենք:

Մեզի կարմիր ու մսուտ շուրքներով, ուժեղ ու ժպտուն գրականութիւն մը պէտք է:

Մեզի առողջ ու երիտասարդ մտաւորականներ պէտք են: Չուկն իր գլխուէն կը հոտի, ազգն՝ իր մտաւորականներէն: Անոնք են ցեղի մը գլուխը: Կրնայ մարմինը շատ ուժեղ ու շատ գործունեայ ըլլալ, բայց երբ ուղեղը խաթարուած է՝ այդ մարմնին շարժումը պիտի ըլլայ միա՛յն յիմարական գործունէութիւն եւ անպտուղ յօգնութիւն:

Ահա թէ ինչո՞ւ իրական վտանգները թողլով՝ հովերուն դէմ, ու մենք մեզ դէմ կը պայքարինք:

Ահա թէ ինչո՞ւ փոխանակ յառաջադիմելու՝ խենթերու պէս կեցած տեղերնուս վրայ կը ցատկենք, երկու հազար տարիէ ի վեր...:

Այո, մեր ցեղը տարօրինակապէս կենսունակ ու աշխատող ցեղ մըն է: Այո՛, մեր հնամենի նաւը դեռ ջուրերուն վրայ կը ծփայ, դեռ չընկղմեցաւ: Բայց ի՞նչ է պատճառը, որ երէկուան նաւակները մեզ արդէն անցան, ու մենք Ուրուական Նաւին պէս կը ծածանինք դեռ, անխորասուզելի, բայց եւ հաստատ ցամաքի մը հասնելու անկարող...:

Ասոր պատճառները շատ բարդ են անշուշտ: Բայց գլխաւոր պատճառներէն մէկն ալ ա՛յն է, որ ղեկին գլուխը կը նստեցնենք մեր է՛ն ախտագին, է՛ն այլասերած, է՛ն անպէ՛տ ծնունդները:

Սակայն ստո՛յգ, ստո՛յգ կըսեմ ձեզի, վտանգը մեծ է, շա՛տ մեծ.
աւելի մեծ, քան կրնանք ենթադրել:

Ժամանա՛կն է հակազդելու, հակազդե՛նք: Մեզի նոր ոսկեդար
մը պէտք է, նոր ոսկեդա՛ր մը: Այլասերո՞ւմ, ո՛չ, վերածնո՛ւնդ...:

1911 - Լոզան

Ռուբէն ՍեփԱկ

ՅԱՌԱՋԱԲԱՆ

«Գառնուկի պէս անգէն ցեղ մը ամէ՛ն օր, ամէն օր կը յօշոտւի: Իսկ մեր գամբոնները խելօքցեր, փիլիսոփայացեր, քաղաքակրթուեր են, տիեզերական եղբայրակցութեան մը խօսքերը կ'ընեն մեզի ու կ'երագեն այն հեռաւոր օրուան՝ ուր գայլ ու գառնուկ մէկտեղ կ'արածուին...»

1911 - Ռուբէն Սեփօկ «ԱՅԼԱՍԵՐՈՒՄ»

«Բժիշկին գիրքէն փրցուած էջերու շարքէն»:

Երբ կը կարդանք հերոս-նահատակ, բանաստեղծ Ռուբէն Սեփօկի վերի տողերը, իր մարգարեական նախատեսութիւնը մեր այն ատենուան առաջնորդներուն, թուրք եւ հայ եղբայրութեան վրայ յենող, սխալ քաղաքականութեան մասին, մեր սրտի ցաւը կը կրկնապատուի:

Ռուբէն Սեփօկի ծննդեան 100-ամյակի այս օրերուն մենք կ'ողբանք անոր կանխահաս կորուստը:

Մենք կ'ողբանք Ռուբէն Սեփօկի նահատակութեամբ, հայ ազգին կրած մեծ կորուստը:

70 տարիներ անցան այն սոսկալի թուականէն, որ Եղեռն կը կոչենք:

24 Ապրիլ 1915-ը միլիոնաւոր հայերու նահատակութեան տարեդարձն է, բայց միեւնոյն ատեն պատմութեան գիտցւած թուականներէն ի վեր հայրենի հողերուն վրայ ապրող հայուն հայրենիքին մեծ մասին գողցուելուն տարեդարձն է:

Արեւմտեան պետութիւններու աղուէսային քաղաքականութեամբ արդիւնքն է վայրենի թուրքին 100 տարուան պատրաստութեան արդիւնքն է 24 Ապրիլ 1915-ը: Եւ մենք տեւական կուլանք, որ թուրքերը մեզի ջարդած են:

Բայց մենք ինչ ըրած ենք այն 100 տարուան ընթացքին, որ չջարդուինք եւ մեր հայրենի հողերուն վրայ ազգ ըլլալով կարենանք ապրիլ:

Ամեն ազգ իր նակատագիրը իր ձեռքերովը կը կերտե, իր առաջնորդներուն ձեռքերովը:

24 Ապրիլ 1915-ը տանող վերջին 100 տարուան ընթացքին, Արեւմտեան Հայաստանի մեր առաջնորդները, մեծամասնութեամբ, ազգասիրութեան կեղծ դիմակին տակ, միայն եւ միայն, ծառայեցին բուրքին, եւ բուրքին ուժ տուող Արեւմտեան պետութիւններուն շահերուն:

Այս կեղծ ազգասերներու շարքը կ'սկսի՝ Պեգնեան եւ Տատեաններու նման ամիրաներով, եւ աւելի ետք, իբր թէ Եւրոպայի ազատութեան գաղափարներով մէջտեղ ելլող Գրիգոր Օտեաններու խմբակով, շարունակելով Ներսէս Վարժապետեան եւ Օրմանեան պատրիարքներով, իր գագաթնակէտին կը հասնի Գրիգոր Զոհրապի եւ նմաններուն ջատագոված բուրքին հետ եղբայրութեան քաղաքականութեամբ:

Այս բոլոր անձնաւորութիւններն ալ, երեւոյթուպէս, մեծ հայրենասերներ էին եւ ազգին շահուն կը ծառայէին: Բայց բոլորն ալ հասարակաց գիծ մը ունէին՝ **«Գործակցիլ բուրքին հետ»**. **«Մտառայել բուրքին»**, մոռանալով որ բուրքը գրաւող ուժն էր, որ գրաւած էր հայուն հայրենիքը:

Ինչպէս որ օսմանցի բուրքը ամէն կողմ թալանելով, մինչեւ Վիեննայի դռները գացած էր, եւ հոն ժողովուրդներու միացեալ պայքարի ուժովը ետ մղուած, ու անկէ ետք քայլ առ քայլ վոնտուած մինչեւ Պոլսոյ դռները, այնպէս ալ, Պոլսէն, Անաթոլիայէն, եւ Հայաստանէն վոնտուիլը պետք էր վայրենի բուրքին, մինչեւ իրեն որչը, 7 դարեր առաջ իրեն եկած տեղը, Միջին Ասիոյ խորերը: Եւ բուրքը իր հոգեւարքի այն տարիներուն, իրեն գործակից հայ գուիզլիները, հայ լավալներ, հայ բեթէններ գտաւ: Եւ մենք այս հայ գուիզլիները, հայ լավալները, հայ բեթէնները մինչեւ այսօր Սփիւռքի մէջ հայրենասերներ կը կոչենք:

Այս հայ առաջնորդները՝ հայ եւ բուրք եղբայրութիւն կը քարոզէին:

Բնական է ամէնէն դիւրին համբան էր, առաջնորդի մը համար, գործակցիլ գրաւող ուժ եղող բուրքին հետ, եւ անոր արտօսութեամբ եւ անոր թոյլատրած չափով հայրենասիրութիւն խաղալ, առանց գոհողութեան, առանց պայքարի, առանց արիւնի, ընդհակառակը անձնական փառասիրութեան եւ անձնական շահերու

առաւելագոյնը վայելելով՝ ամիրա ըլլալով, փաշա ըլլալով, վարչապետի խորհրդական ըլլալով, մեպուս ըլլալով, նախարար ըլլալով:

Այս կեղծ ազգասիրութեամբ, այս ինքնախաբեութեամբ մեր առաջնորդները հասան 24 Ապրիլ 1915-ի:

Միայն **«Թուրքը մեզի ջարդեց»** ըսելով լալը օգուտ չունի: **«Ինչու ջարդուեցանք»**՝ անիկա հասկանալ պետք է: Հիւանդութեան մը մինչեւ որ ախտանանաչումը չըլլայ, դարմանը չգտնուիր: Եթէ հասկանանք՝ **«անցեալը»**, **«ապագան»** շահած կ'ըլլանք: Քաղաքականութեան առաջին պայմանը՝ թշնամին եւ բարեկամը ճանչնալու մեջ կը կայանայ:

«Ո՞վ էր հայուն թշնամին»: **«Ո՞վ էր հայուն բարեկամը»:**

Դարերով ո՞վ չարչարեց հայ, յոյն եւ Պալքանեան քրիստոնեայ ժողովուրդները: Եւ ո՞վ ազատեց Արեւելեան Հայաստանը, Յունաստանը եւ Պալքանեան քրիստոնեայ ժողովուրդները:

Այս պարզ իրականութիւնը տեսնելու համար մեծ քաղաքագետ, մեծ դիւանագետ ըլլալու պետք չըկար:

Բայց այս պարզ իրականութիւնը տեսնելու համար շատ կարելոր յատկանիշ մը պետք էր, **«պատւաւոր ըլլալ»**, **«նոգին թշնամիին չծախած ըլլալ»:** Առաջնորդ մը՝ հայրենասէր, թե՛ հայրենադաւ, այս է հարցը:

Այս գիրքին մէջ պիտի գտնէք երկու հայու տիպարներ: Մեկը Պատրիարք, միւսը բանաստեղծ: Պատրիարքը՝ թուրքին կողմէ մեռցուելու վախէն հոգին կը ծախէ թուրքին: Բանաստեղծը՝ հոգին չծախելու համար թուրքին, ուզելով մեռնելու կ'երթայ:

Այս գիրքը՝ կեղծ ազգասէր առաջնորդներուն պատճառ եղած մեծ աղէտին սրտի ցաւով է գրուած:

Այս գիրքը՝ Սփիւռքի կեղծ ազգասէր առաջնորդներուն Մայր Հայրենիքի պատճառելիք վտանգներու մտահոգութեամբ է գրուած:

Մաղբենք որ **«պատմութիւնը կրկնութիւն է»**, ըսուած կարգախօսը հայ ազգին համար չիրականանայ:

Ալ կը բաւէ՝ հայ ազգին քաշած տառապանքը:

Յովնաննէս ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ

**Ռուբէն Սեւակ
եւ «Փրցուելիք Ուղեղներ»**

Ա. մաս

«... Ձուկն իր գլուխէն կը հոտի, ազգն՝ իր մտաւորականներէն:
Անոնք են ցեղի մը գլուխը:

Կրնայ մարմինը շատ ուժեղ ու շատ գործունեայ ըլլալ, բայց երբ
ուղեղը խաթարուած է՝ այդ մարմնին շարժումը պիտի ըլլայ միայն
յիմարական գործունէութիւն եւ անպտուղ յոգնութիւն:

Ահա թե ինչն է իրական վտանգները թողլով՝ հովերուն դէմ ու
մենք մեզ դէմ կը պայքարինք:

Ահա թե ինչն է փոխանակ յառաջադիմելու՝ խենթերու պէս
կեցած տեղերնուս վրայ կը ցատկենք երկու հագար տարիէ ի
վեր...»:

1911 Ռուբէն Սեւակ «ԱՅԼԱՍԵՐՈՒՄ»

«Բժիշկին գիրքէն փրցուած էջերու շարքէն»:

* * *

**Ներսէս Պատրիարք Վարժապետեան
ՀԱՅՐԵՆԱՍԷՐ ԹԷ ՀԱՅՐԵՆԱԴԱԿ
ԵՐԿՈՒ ՊԱՏՐԻԱՐՔ,
ԵՒ ԵՐԿՈՒ ԿԵՑՈՒԱԾՔ
Առաջին պատրիարք
Պոլսոյ յունաց տիեզերական պատրիարքը
Կրեկորիոս
Տարի 1821**

Յունաստանի մէջ ժողովուրդը ապստամբած է օսմանցիներուն դէմ, վերջ տալու համար դարերու գերութեան:

Օսմանցի թուրքը ամէն տեսակ վայրագութեան կը դիմէ զսպելու համար ապստամբութիւնը, բայց չի յաջողիր:

Այն ատեն կը դիմէ ուրիշ սատանայական միջոցի մը: Պոլսոյ Յունաց պատրիարքին, իբրեւ օրթոտոքսներու տիեզերական պետը, կ'ստիպէ պատրիարքը Յունաստանի ժողովուրդին հրահանգել վերջ տալու ապստամբութեան:

Յունաց պատրիարքը քաջաբար կը մերժէ այդ դաւանանութիւնը:

Եւ թուրքերը այս հերոս պատրիարքը եւ Սինոսի մետրոպոլիտները կը կախեն Պոլսոյ Ֆէնէրի յունաց պատրիարքարանի մայր դռան առջեւ, իբրեւ մեղսակից ապստամբութեան: Պատրիարքին նահատակութեան լուրը կը տարածուի ամէն կողմ: Յոյն յեղափոխականներուն պայքարի ուժը աւելի կը գօրանայ:

Այդ դեպքը պատճառ կ'լլայ ու յոյներուն կրօնակից ռուսերը պատերազմ յայտարարեն օսմանցիներուն դէմ:

Ռուս բանակը կը ջախջախէ թուրքերը:

Տարի 1829: Էտիբնէի համաձայնագրով ռուսերը կ'ստիպեն թուրքերը, որ նանչնան Յունաստանի անկախութիւնը:

Յունաստան փրկուած է:

* * *

**Երկրորդ Պատրիարք
Պոլսոյ Հայոց Պատրիարք
Ներսէս Վարժապետեան**

Թուրքերը, Պալքաններու մէջ շարունակուող ոռումէն, սերպ-պուլկար ազատագրական շարժումները արիւնի մէջ խեղդել կը փորձեն:

Այդ ջարդերը ոռումէն, սերպ-պուլկար ժողովուրդներու պատմութեան ամենասարսափելի էջերն են:

Տարի 1876

Ռուս պետութիւնը կրկին Պալքանեան ազգերուն օգնութեան կը հասնի: Պատերազմ կը յայտարարէ թուրքերուն, Պալքաններու մէջ եւ Կովկասի նակատին վրայ:

Ազատութեան նոր յոյս մը կը ծագի ոռումէններուն, սերպերուն, պուլկարներուն, ինչպէս նաեւ հայերուն համար:

Կովկասի մէջ պատերազմող ոռուսական բանակին մէջ մեծ թիւով հայեր կան: Հայ զինուորները, հայ սպաներ եւ հայ զօրավարներ:

Հայ ժողովուրդին ազատութեան ժամը հնչած է: Դարերու գերութիւնը պիտի վերնայ: Ջարդերը վերջ պիտի գտնեն: Արեւմտեան Հայաստանի մայր հողը իր ժողովուրդին պիտի վերադարձուի:

Օսմանեան կայսրութիւնը միանգամ ընդմիշտ պիտի խորտակուի, եւ մոնկոլ-թուրան աւազակներուն դարաւոր տիրապետութեան վերջ տրուելով, աշխարհի առաջին քաղաքակրթութեան բնօրրան Անաթոլիան պիտի յանձնուի իր բնիկ ժողովուրդներուն:

Այդ պատերազմին վերջաւորութեան՝ ոռումէնները, սերպերը, պուլկարները, յույներուն նման իրենց ազատութեան տիրացան ոռուսերին շնորհիւ:

Բայց, բայց հայ ազգին համար այս յոյսը չիրականացաւ: Աւստրիական եւ անգլիական կայսրութիւնները հակառակ էին Պոլսոյ եւ Անաթոլիայի ազատագրման: Իրենց ապագայի սատանայական ծրագիրները ունէին: Որոշած էին Պոլսոյ եւ Անաթոլիայի մէջ

պահել եւ գօրացնել թուրքերը, արգելք ըլլալու համար ռուսերուն Միջերկրական իջնելուն:

Քրիստոնեայ եւ ռուսերու բարեկամ Հայաստանի մը տեղ, կ'ուգէին մոլեռանդ իսլամներով բնակուած, Անաթոլիայէն մինչեւ Հնդկաստան երկարող շրջան մը ստեղծել, որ բնական բշնամին պիտի ըլլար ռուսներուն:

Այս քաղաքականութիւնը կը շարունակուի մինչեւ այսօր անփոփոխ:

Անգլիական, աւստրիական եւ օսմանեան խմբակը այս ծրագրին իրականացման համար աշխատեցաւ, դիմեց ամէն միջոցի եւ նաեւ օգտուեցաւ Պոլսոյ հայ աւագանիէն:

Որովհետեւ դաւանանքներ կային Պոլիս, հայ անուկով:

Պոլիս: Հայութեան այս սուտ դրախտը իրականութեան մէջ մեր բոլոր դժբախտութիւններուն աղբիւրը եղավ:

Թուրքերը Անաթոլիա խուժած ատեննին, օգտուեցան հայերուն եւ յոյներուն միջեւ դարերէ ի վեր տեւող բշնամութեան, եւ հայերը գործածեցին յոյներուն դէմ իբր հակակշռիչ ուժ:

Եւ մենք ինկանք այդ ծուղակը:

Թուրքերուն դէպի Կոստանդնուպոլիս յառաջացման շրջաններուն հետեւեցանք անոնց, երբեմն բռնի, շատ անգամ մեր կամքովը: Պարպեցինք Հայաստանի մայր հողը, կազմելու համար նոր գաղութներ, թուրքերու կողմէ գրաւուած Արեւմտեան Անաթոլիայի հողերուն վրայ, նման այն թռչուններուն, որոնք գիշատիչ կենդանիներուն կը հետեւին եւ անոնց մնացորդներովը կը սնանին:

Երբ 1453-ին, թուրքերը Պոլիսը գրաւելով Բիւզանդական կայսրութեան վերջ տուին, Փաթին սուլթան Մեհմէտ Պրուսայէն Պոլիս բերել տուաւ Յովակիմ Եպիսկոպոսը եւ զանիկա Հայոց Պատրիարք հռչակեց, Յունաց Պատրիարքութեան դէմ իբր հակակշռիչ աբո:

Այս Յովակիմ Եպիսկոպոսն է առաջին դաւանանքը հայութեան, Հայաստանի պարպումին առաջին պաշտօնական պատասխանատուն:

Այդ օրէն ետք կամաց-կամաց Հայաստանը ամայացուցինք եւ մեր ուժերը ժողուեցինք Պոլիս, օգտուելու համար Օսմանեան կայսրութեան կեդրոնին ընծայած նիւթական առաւելութիւններէն:

Այս ձեւով կազմուեցաւ Պոլսոյ հայոց սուտ դրախտը:

Աշխատեցանք դարերով Պոլսոյ մէջ օսմանցի թուրքին ի

նպաստ, ծախելով մեր հոգին, շահելու համար մեր ստամոքսը: Այս ձեռով Պոլսոյ մէջ մէջտեղ եկաւ հայ հարուստներու դասակարգ մը, որ ո՛չ մէկ կապ ունէր Հայաստանի հետ, ո՛չ մէկ մտահոգութիւն ունէր հայութեան ապագային եւ Հայաստանի ժողովուրդին համար:

Տարի 1876

Օսմանեան կողոպուտի կայսրութեան հավատարիմ պոլսահայ հարուստներուն մէջ կան ամիրաներ, վաճառականներ, սեղանաւորներ, մտաւորականներ, կղերականներ եւ ամէնուն գլուխը՝ Պատրիարք մը, Ներսէս Վարժապետեան:

Արեւմտեան Հայաստանի հողերուն վրայ ռուս բանակին յառաջացման ընթացքին հայ ժողովուրդին ապստամբելուն արգելք ըլլալու օսմանեան բարձրագոյն դուռը Պոլսոյ Հայոց Պատրիարքին կը դիմէ, օգտուելու համար հայ ժողովուրդին վրայ անոր ունեցած ազդեցութենէն՝ իբր հոգեւոր պետ: Եւ կը յաջողի:

Պատրիարքը կը հետեւի թելադրութեանը իր շուրջի խորհրդականներուն, որոնք գիտակից կամ անգիտակից գործակալներն էին անգլիական քաղաքականութեան, եւ կը հրատարակէ շրջաբերական կոնդակ մը, կարդացուելու համար Պոլսոյ, Անաթոլիայի, Արեւմտեան Հայաստանի բոլոր հայ եկեղեցիներուն մէջ:

Ահա այդ կոնդակը

«Այն օրէն իվեր, որ հայոց ազգին ամենամեծ մասն օսմանեան հզօր տերութեան հպատակասէր քաղցր հովանւոյն ներքոյ մտալ, իր հինգ դարուց պատմութիւնը կը ցուցնէ, թէ ի՛նչ մեծամեծ շնորհներ իրեն պարգեւած է այս մեծագօր տերութիւնը»:

(...) «Արդ հայ ազգը, որու նակատագիրն այսչափ դարերէ իվեր նուիրագործեալ կապերով միացած օսմանեան նակատագիրին հետ, չի կրնար անտարբեր մնալ օսմանեան տերութեան գտնուած արդի ծանրակշիռ պարագայից մէջ, այլ պարտաւոր է, ինչպէս ամէն ժամանակ, նոյնպէս եւ առաւել եւս ներկայ ժամանակիս մէջ անկեղծ օժանդակութիւն մատուցանել:

Օսմանեան երկիրը պաշտպանել՝ Հայաստանը պաշտպանել ըսել է, նոյնիսկ հայուն կրօնը, դպրոցը, ինչքը, տունը, ընտանիքը, պատիւն ու կեանքը պաշտպանել ըսել է:

Ուստի խորհրդակցութեամբ խառն ժողովոյ Ազգային վարչութեան, նուիրական պարտք կը համարեմ այսու շրջաբերական կոնդակով յորդոր կարգալ բոլոր հայ ժողովուրդեան, որ ամէն ոք իր կարողութեան սահմանին մէջ, հայրենեաց պաշտպանութեան համար, պէտք եղած օգտակարութիւններն ընել փութայ նաեւ աղօթելով (...) այն ամէն ազգէ կամաւորելոց համար, որոնք հայրենասիրական եռանդով վառուած զէնք կ'առնուն հայրենեաց թշնամիներուն դէմ: Երկրորդ, ըստ կարողութեան իւրաքանչիւր ուրուք եւ ըստ յօժարութեան կամաց օգնելով թէ՛ նիւթական, թէ՛ անձնական ծառայութեամբ»:

(«Մասիս» - 25 Յուլիս 1876 - թիւ 1853)

* * *

Երբ հայ Պատրիարք մը **«Օսմանեան երկիրը պաշտպանել՝ Հայաստանը պաշտպանել է»** կ'ըսէ, ալ ուրիշ պատեալ չփնտոնեք մեր քայքայման:

Ներսէս Վարժապետեան եւ իր գործակիցները նախընտրեցին, որ Արեւմտեան Հայաստանը օսմանեան տիրապետութեան տակ մնայ, քան թէ ազատագրուի ռուսերուն կողմէ:

Այս էր պատեալը, որ չկրցանք օգտուիլ առիթէն: Հակառակ որ ռուսերը մինչեւ Պոլսոյ Այաստեֆանոսի դռները հասած էին, Հայաստանի ազատութիւն ընդունող Այաստեֆանոսի համաձայնութիւնը ստորագրուած էր, եւ Օսմանեան կայսրութեան վերջը եկած կը թուէր, չկրցանք օգտուիլ, ինչպէս օգտուեցան օսմանեան գրաւման տակ գտնուող բոլոր քրիստոնեայ ազգերը, ապստամբելով թուրքին դէմ:

Մենք հնազանդ, հավատարիմ մնացիք թուրքին, շահեցանք **«միլլէթի սատրգայը երմէնիյէ»** մակդիրը:

Պերլինի վեհաժողովը կատակերգութիւն մըն էր մեզի համար:

Ապտիւլ Համիտ ի հաւանութեամբ եւ թելադրութեամբ, Ներսէս Վարժապետեան Պոլսէն պատուիրակութիւն մը դրկեց Պերլին, հայուն իրավունքը աղաչելու: Բայց ինչպէս որ կ'ըսեն,

«Իրաւունքը չի՛ տրուիր, կ'առնուի»:

Գինը սուղ է ազատութեան իրաւունքին: Կ'առնուի զոհողութեամբ, կեանքի գինով, զէնքով ու արիւնով: Խրիմեան Հայրիկ տեսաւ այս իրականութիւնը, բայց շատ ուշ էր:

Պերլինի մէջ մեզի բարեկարգութեան խոստումներ տրուեցան:

Այդ խոստումներուն իրագործման համար սպասեցինք տարիներ, հլու հնազանդ ոչխարներու պէս, մինչեւ որ 1915-ին թուրքերը մեր այս հնազանդ ազգին «իրաւունքը» տան, ջարդելով ոչխարներու պէս:

* * *

Ներսէս Պատրիարք Վարժապետեան:

Դո՛ւն Արեւմտեան Հայաստանի ազատագրման արգելք եղող ամենամեծ պատասխանատու:

Այսօր Արեւմտեան Հայաստանի հողերուն վրայ հայ անունով հայ չկայ, հայութեան վկայ յուշարձան չկայ:

Իսկ Պոլսոյ մէջ, քուկին եւ քեզի պէսներուն պաշտպանած Պոլսոյ հայու սուտ դրախտէն, ի՞նչ մնաց:

Պոլսոյ մէջ, ջարդի մնացորդ քանի մը հազար հոգիանոց պատանդ հայ համայնքը, հին բարքերու մնացորդ եկեղեցիները եւ դպրոցները իրենց հոգեվարքը կ'ապրին, իբր վկայ քու եւ նմաններուդ սխալ քաղաքականութեան:

Դժբախտաբար, այսօր նոյնիսկ, Սփիւռքի մէջ կան Ներսէս Վարժապետեանի նման, աշխարհական եւ կրօնական, պատեհապաշտ, անհեռատես, հայրենավնաս առաջնորդներ:

* * *

Պոլսոյ ներկայ Պատրիարքը, որ «քաջ հովիւ»ի համբաւ ուներ, վերջին շրջաններուն բրբական ննշումներու տակ, խամանիկի վերածուած Ներսէս Վարժապետեանանման պատգամ կը դըրկէր Փարիզի չորս հայ տղոց դատավարութեան, ձայնակցելով պոլսեցի պատանդ վկայ Տիգրան Գեորգեանին: Անդին Զուիցերիա ապաստանած, նախկին պոլսեցի ազգային գործիչ մը մայր հայրենիքի մէջ Սփիւռքի ներկայացուցիչի համբավ ունի, վերջերս բրբական բերքերու մէջ օրերով ինքըզինքը ներկայացուց իբր թուրքին ամենամեծ բարեկամը եւ Թուրքիոյ կարօտով ապրող հայ մը: Եւ անդին, Միւնիխի մէջ, վարձկան հայրենադաւ մը, ամէն օր իր

տիրոջը ձայնով կը կաղկանձէ մայր հայրենիքին դէմ, շփոթելով
հայուն ջարդարար քշնամին եւ ազատարար ազգը:

* * *

Հայ աշխարհական եւ մանավանդ կրօնական գործիչներ:

Ձեր անձնական-հատուածական շահերը մի շփոթէք մայր հայ-
րենիքի շահերուն հետ: Հայ ժողովուրդը Սփիւռքի մէջ Կրեկորիոս
պատրիարքի նման, հայրենիքի համար զոհուող առաջնորդներու
պէտք ունի: Եւ ո՛չ Վարժապետեաններու:

* * *

Ռուբէն Սեւակ
եւ «Փրցուելիք Ուղեղներ»

Բ. մաս

«Բայց երբ այդ ախտագին մտաւորականներու ուղեղները ուրիշ կերպ չեն կրնար խորհիլ, մենք պիտի փրցնենք ու նետենք այդ ուղեղները»:

Ռուբէն Սեւակ «ԱՅԼԱՍԵՐՈՒՄ»

«Բժիշկին գիրքէն փրցուած էջերու շարքէն»:

Ո՞վ է գրողը, ո՞վ է բանաստեղծը եւ ո՞վ է արուեստագետը: Գրող մը կրնա յանտարբեր ըլլալ իր ժողովուրդին, իր հայրենիքին ցավերուն հանդէպ:

Ազգի վտանգի տակ եղած միջոցին, գրողը փղոսկրէ աշտարակը քաշուած, կրնա յ գրել միայն վերացական նիւթերու վրայ. իրավունք ունի՝ այս բանը ընելու:

Այս տեսակետով գրողը, արուեստագետը հայելին է իր ժողովուրդին եւ իր ապրած միջավայրին: Երբ ազգ մը գերութեան մէջ է, հոգւով ու մարմնով, բնական է, որ կ'ելլեն անտարբերներ, անզգացներ, վարձկան գործակալներ եւ դաւաճաններ, կ'ելլեն գրողներ, թարգմանը կ'ըլլան ստրկացած ազգի մը ոգիին, կը գրեն այնպիսի բաներ, որոնք միայն իրենց անձնասիրութիւնը փառաբանելու կը ծառայեն:

Բայց ստրուկ եւ գերի ժողովուրդներու մէջէն քիչ ըլլալով հանդերձ կ'ելլեն գրողներ ալ, որոնք ազգին սպառնացող վտանգը տեսնելով՝ կը պայքարին եւ իրենց ներշնչման արտայայտութիւններով փրկութեան համբան կը ցուցնեն:

Ժան Ժաք Ռուսոն առաջնորդը եղավ Յրանսիական յեղափոխութեան եւ Լէոն Թոլստոյը Ռուսական յեղափոխութեան:

Պատմութեան վերջին շրջաններուն, հայ ժողովուրդին մեծ մասը, դարերով օսմանեան լուծին տակ ապրելով՝ դժբախտաբար կորսնցուց իր շատ մը ազգային արժանիքները:

Այս գերութեան դարերուն, հայուն մինչեւ քրոմոզոններուն մէջը մտաւ անձնասիրութիւնը ու վախկոտութիւնը:

Հալածանքներու հետեւանքով, տեւական փախչիլ սորվեցաւ, պարպեց հայրենի հողերը - հաստատուեցաւ աւելի ապահով եւ շահաբեր տեղեր, մանավանդ Պոլիս եւ շրջակայքը:

Այս ձեւով կորսնցուց իր հողին վրայ, միասնաբար, ազգովին ապրելու առաւելութիւնը, եւ վերածուեցավ հոս հոն տարածուած եւ իրարու հետ կապ չունեցող պզտիկ գաղութներու:

Հայը՝ օսմանեան գրաւման շրջանին, Արեւմտեան Հայաստանի հողերուն վրայ, իսկական իմաստով՝ մէկ հատ հայ քաղաք չկրցաւ հիմնել, Անի քաղաք մը չկրցաւ վերստեղծել: Որովհետեւ հաւաքաբար ապրելու, իրարու զօրավիթ ըլլալու եւ բշնամիին դէմ պայքարելու կարողութիւնը չունէր:

Այս էր պատճառը, որ Արեւմտեան Հայաստանը 500 տարի իսկական իմաստով ո՛չ հայկական կառոյց ունեցաւ, ո՛չ գրականութիւն, ո՛չ ալ գրող...

Ունեցաւ թերեւս միայն կրօնական կառոյց մը, որուն առաջնորդները քրիստոնեական վարդապետութեան մեյլամադձոտ գաղափարներով լեցուցին հայ ժողովուրդին արդէն խաթարված միտքերը:

Այս ուղղութեամբ, ամէն հայու բարձին տակ գտնուող Նարեկացիի շողշողուն տաղերը, յավիտենական աշխարհի տիրանալու ցանկութեամբ, ամէնէն զօրաւոր բմբեցուցիչը եղան հայ ժողովուրդին:

Անոնք, այս ձեւով, Ռուբէն Սեւակին ըսածին պէս, **«Հլու հնագանդ, մինակ մեռնիլ սորվեցան, քայց ոչ ըմբոստանալ եւ մարդկայնօրէն կատղիլ բռնակալ թուրքին դէմ»:**

Երբ Օսմանեան կայսրութիւնը քայքայուիլ սկսաւ եւ բոլոր գերի ազգերը ապստամբելով թուրքին դէմ, ազատութեան նամբան ընտրեցին, Պոլսոյ մէջ ապրող կրօնական եւ համայնքային պետերը, իրենց անձնական շահերուն պատճառաւ, նախընտրեցին օսմանեան տիրապետութեան տակ մնալ:

Ռուսերուն կողմէ ազատագրուած Արեւելեան Հայաստանի մէջ Խաչատուր Աբովեան առաջին մեսիան եղավ հայ ժողովուրդին, առաջին հայ ազգային Աւետարանիչը:

Այն էր, որ տեսավ հիւանդութիւնը եւ իր **«Վերք Հայաստանի»** գիրքով, փրկութեան նամբան ցոյց տուաւ, թուրքին լուծին տակ ննշուող հայութեան:

Եւ աւելի ետք՝ անոր հետեւորդը Րաֆֆի արքեպիսկոպոստի հայտնութեան մէջ քննարկող ազգային զգացումները:

Բայց Պոլսոյ առաջնորդները ականջին գոցեցին Արովեանի եւ Րաֆֆիի պատգամներուն դէմ: Պոլսոյ մէջ մտաւորական դասակարգը, ազգին իսկական շահերուն հետ բնաւ կապ չունեցող ճիւղերու վրայ գրելով՝ ատեն կ'անցներ: Եւ այս այլասերած կեդրոնին մէջ Պոլսոյ հայ առաջնորդները, հայկական պատմութեան ամենամեծ սխալը գործեցին:

«Ազգային Սահմանադրութիւն» ըսուած սխալն էր ան: Երբ բոլոր քրիստոնեայ ազգերը անկախութեան տիրանալու նամբուն մէջ էին, եւ կարգը հայերուն եկած էր, ասկէ վախցող օսմանեան վարիչները Արեւմտեան պետութիւններու կարգադրութեամբ, հայերը օրօրելու ու ատեն շահելու համար, Ազգային Սահմանադրութեան ծուղակը ստեղծեցին: Ազգային Սահմանադրութիւնը իբր թէ հայոց կարգ մը վարչական իրաւունքներ կուտար, բայց իրականութեան մէջ բուն նպատակը Հայոց Արեւմտեան Հայաստանի հողերուն վրայ վարչական կեդրոն մը, եւ այս նամբով ապագայ Հայաստան մը ստեղծուելուն արգելք ըլլալ, եւ հայերը Պոլսոյ մէջ սուլթանին եւ օսմանեան կառավարութեան հակակշիռին տակ պահել էր:

1862-ին Պոլսոյ օսմանեան բարձրագոյն դուռին մատուցուած Ազգային Սահմանադրութեան 9-րդ հատուածը հետեւեալը կ'ըսէ:

«Ազգային վարչութեան առաջին պարտականութիւնն էր, հայ ազգը օսմանեան կայսերական պետութեան հաւատարիմ հպատակութեան մէջ պահել»:

Այս ձեւով Արեւմտեան Հայաստանի վարչական կեդրոնը պաշտօնապէս Պոլսոյ մէջ հիմնուած եղաւ:

Հայոց տրուած կարգ մը վարչական եւ մշակութային ազատութիւնները, բացուած դպրոցները հայերուն աչքերը շլացուցին: Իրականութեան մէջ **«Թրովաթային ձին»** էր ան հայութեան համար:

Օսմանեան կայսրութեան հպատակ քրիստոնեայ ազգերուն ոչ մէկը իրենց վարչական կեդրոնը Պոլիս փոխադրել մտածեց: Անոնք իրենց հողին վրայ մնացին եւ ազատութեան տիրացան:

Բայց հայերը հակառակը ըրին:

Այս ձեւով Արեւմտեան Հայաստանի նակատագիրը Պոլսոյ մէջ

կապուեցավ Օսմանեան կայսրութան:

Այս էր պատճառը, որ Պոլսոյ Պատրիարք Ներսէս Վարժապետեան, 1876-ին հայկական պատմութեան ամէնէն հակատագրական օրերուն, երբ ուսական բանակը Պոլսոյ դռներուն առջեւն էր, համարձակեցաւ ըսելու՝ թէ՛ **«օսմանեան պետութիւնը պաշտպանել, Հայաստանը պաշտպանել ըսել է»:**

Ազգային Սահմանադրութիւնը ընդունուած օրը, Արեւմտեան Հայաստանի գերեզմանը փորուած օրն էր, որուն յաջորդեցին պաղ իրականութիւնը, Ապտիւլ Համիտ, Թալաաթ եւ Մուսթաֆա Բեմալ:

* * *

Այդ թուականէն ի վեր դար մը անցած է, եւ դժբախտաբար դեռ կան կարգ մը հայեր, որ այս **«Ազգային Սահմանադրութիւն»** ըսուած ողբերգութիւնը չեն հասկցած:

Եւ դեռ կան կարգ մը հայեր, որոնք այդ շրջանի ամենամեծ պատասխանատու Ներսէս Վարժապետեան Պատրիարքի 100-ամեակը տօնել կ'ուզեն Փարիզի մէջ: Եւ մէկը կ'ելլէ, ընդվզելով այս երեւոյթէն՝ Ներսէս Վարժապետեանի հայրենիքի շահերուն վնասակար դերը կը բացատրէ յօդուածով մը, Փարիզի թերթերուն կը դրկէ, բայց այդ թերթերուն վարիչները համարձակութիւնը չեն ունենար գայն հրատարակելու:

Որովհետեւ բարեկամներն են այն Փարիզի հաստատուող նախկին կեդրոնականացիներուն, որոնք ինքզինքնին դեռ Պոլիս կը կարծեն: Ասոնց փառաբանած Ներսէս Վարժապետեանը Պոլիս կեդրոնական վարժարան մը հիմնել մտածած էր: Բայց նոյն Ներսէս Վարժապետեան Պատրիարքն էր, որ թուրքերուն ծախեց Արեւմտեան Հայաստանը: Բարեբախտաբար հայ ժողովուրդը եւ պատեհապաշտներէ աւելի, քաջեր եւ հայրենասէրներ ունի:

Ներսէս Վարժապետեան Պատրիարքի իրական դիմակը մէջտեղ հանող յօդուածը հրատարակուեցաւ Պէյրութի **«Արարատ»** թերթին մէջ, եւ աւելի վերջ Լոս Անճելէսի **«Նոր սերունդ»**-ի մէջ: Եւ ուրիշ նորութիւն մը մեզ համար, որ Ներսէս Վարժապետեանի յօդուածը գրելէ շատ ետք տեղեկացանք, բանասէր ընկերոջ մը պրպըտումներուն շնորհիւ:

Մեծն Բաֆֆի 1878-ին, Թիֆլիսի «Մշակ» թերթին 22 թիւին մէջ

գրած յօդուածով սապէս կ'արտայայտուէր Ներսէս Վարժապետեան Պատրիարքի մասին:

«... Կ. Պոլիսի Հայոց Պատրիարքը շողոքորթում է, կեղծաւորում է... Պատրիարքը ստիպուած է այսպէս վարուել մտածումէն կարճատեսները: Դիցուք թէ նա այնքան անձնագոհութիւն չունի որ իր ժողովուրդի իրաւունքները պաշտպանելու համար Յունաց Պատրիարք Գրիգորի նման իր պատրիարքարանի դռանը կախաղան հանուի... Բայց ոչ, սուլթանի մի ժպիտը պատրիարքին մոռանալ տուեց հայ ժողովուրդի արտասուքը եւ արիւնը...»:

Եւ 1985-ին Փարիզի մէջ, իբր թէ գաղափարներու ազատութեան քաղաքին մէջ, մեր մամուլի վարիչները Րաֆֆիի գաղափարներու նմանները հրատարակելու պիտի վախճային:

120 տարիներ Ազգային Սահմանադրութիւնէն ետք, **«Արեւմուտքի նակատին վրայ»** փոխուած բան մը չկայ:

Հին Պոլիսը կարծէք թէ Սփիւռք փոխադրուած է: Միեւնոյն յետադիմական կեցուածքը, միեւնոյն պատեհապաշտ քաղաքականութիւնը, առանց հայուն հայրենիքին իսկական շահերը նկատի առնելու:

Սփիւռք մը՝ Պոլսոյ մտայնութեամբ, բայց առանց թուրքի: Աւելի ճիշդ թուրքին զինակիցները եղող Արեւմտեան պետութիւններու շահերուն կապուած Սփիւռք մը:

«Փրցնել ու նետել պէտք է այս ախտագին մտաւորականներու ուղեղները»:

* * *

Ռուբէն Սեւակ
եւ «Փրցուելիք Ուղեղներ»
Գ. մաս

20-րդ դարու սկիզբը Եւրոպա ուսանող հայ երիտասարդները նոր դարաշրջան մը բացին հայ գրականութեան մէջ:

Այս ուսանող մտաւորականներուն առաջնորդներն էին Դանիէլ Վարուժան, Սիամանթօ եւ Ռուբէն Սեւակ:

Իրենց գրութիւններուն տեսակետով՝

Դանիէլ Վարուժան պերնիմաստ արտայայտութիւններով եւ բռներու հարստութեամբ ամենէն ազնուականը: Սիամանթօն հայրենասիրական պոռթկումներով ամենէն ասպետականը: Բայց Ռուբէն Սեւակ՝ իբր հայ եւ իբր մարդ, ամենէն զգայուն եւ իրապաշտ ընկերվարականն է:

Ռուբէն Սեւակ միակն է այդ շրջանի բանաստեղծներէն, որ Եւրոպա 6 տարի գիտութիւն ուսանած եւ բժիշկ եղած է:

«Բանաստեղծ եւ բժիշկ Ռուբէն Սեւակ»:

Այս միաւորումը Ռուբէն Սեւակի ամենէն յատկանշական կողմն է: Այս միաւորումով է, որ Ռուբէն Սեւակ բոլորովին տարբեր շունչ մը բերաւ Եւրոպայէն իր գրութիւններով եւ իր գաղափարներով:

Այս է թերեւս պատճառը կարգ մը քննադատ-մտաւորականներու բռնած անիրավ կեցուածքին, Ռուբէն Սեւակի հանդէպ: Իրենց գիւղին մէջ ինքնաշխատութեամբ զարգացած գրողները, բնական է, չպիտի կրնային հասկանալ եւ հանդուրժել բժիշկ-բանաստեղծ Ռուբէն Սեւակին:

Ռուբէն Սեւակի գրութիւններուն մէջ բանաստեղծը եւ գիտութեան մարդը քով-քովի են:

Այսինքն՝ զգացումը եւ տրամաբանութիւնը. շատ պարզ, շատ հասկնալի, ժողովրդական լեզուով գրուած իր բանաստեղծութիւններուն ամէն մէկը իրական կեանքի տպաւորութիւններ են: Առանց բռներու մթերքի, առանց պոռոտախօսութեան, առանց շինծու զգացականութեան:

Ռուբէն Սեւակը իբր մարդ եւ իբր հայ, իր ծնունդին, իր անկեղծ խառնուածքին պատճառաւ չէր կրնար մարդկային եւ ազգային ցավերէն հեռու մնալ:

Տառապեցաւ մարդկային անհաւասարութեան եւ անարդարութեան ցաւերով:

Իբր բանաստեղծ եւ գիտութեան մարդ՝ տեսաւ թէ ուր էր ցաւին արմատը եւ անոր համար կրցաւ գրել հայ գրականութեան ընկերային հարցերու ամէնէն խիզախ եւ ամէնէն տպաւորիչ բանաստեղծութիւնները: Եւ հայրենիքէն հեռու, անկէ եկած արիւնով լեցուն լուրերու ազդեցութեան տակ, իր պոռթկումը եւ ցաւը թափեց **«Կարմիր գիրք»**-ի բանաստեղծութիւններուն մէջ:

Այս հայրենասիրական բանաստեղծութիւնները, իրենց պարզութեան մէջ, պիտի մնան հայ դիւցազներգութեան ամէնէն հարագատ եւ ամէնէն զգայուն էջերը:

Ռուբէն Սեւակի գրականութեան սկզբունքը **«միայն ժողովուրդին օգտին համար գրելու»** գաղափարն էր:

«Բժիշկին գիրքէն փրցուած էջեր» ու շարքէն **«Այլասերում»**-ի մէջ տեսէք թէ Ռուբէն Սեւակ ինչպէս կը հարուածէ այն գրողները, որոնք ազգին ցաւերուն կոնակ դարձուցած էին: **«Զե՞ք տեսներ արդէն, թէ ինչպէս շատ մը գրագէտներ, լիրք քաջութիւնը ունին յայտարարելու, թէ՛ իրենք ժողովուրդին համար չէ որ կը գրեն: ... Որքուկի պէս անտէր ցեղ մը հուժկու, ու լուսեղ ու սիրտուխ բարբառի մըն է ծարաւ: Իսկ մեր գրագէտները հանելուկային առեղծուածային, խաւարակուռ բաներ կ'ըսեն իրեն ու մեր քերթողները՝ գրիչնին հայ արեան մէջ թաթխելէ վերջ՝ չինարէն տաղեր կը գրեն, որպէսզի մա՛րդ չհասկնայ...:**

Հեռո՛ւ մեն է՝ ախտագին մտաւորականներ: Դուք ցեղին ուղեղն էք: Բայց երբ այդ ուղեղը ուրիշ կերպ չի կրնար խորնիլ, քան յուսահատեցնելով մեր կենսունակութիւնը, մենք պիտի փրցենք ու նետենք այդ ուղեղը:

Մենք նոր միտքեր, նոր սիրտեր, նոր հոգիներ պիտի դարբենք: Մեզի կարմիր ու մսուտ շուրթներով, ուժեղ ու ժպտուն գրականութիւն մը պէտք է:

Մեզի առողջ ու երիտասարդ մտաւորականներ պէտք են: Զուկն իր գլուխէն կը հոտի, ազգն՝ իր մտաւորականներէն: Անոնք են ցեղի

մը գլուխը... Մեզի նոր ոսկեդար մը պետք է, նոր ոսկեդար՝ մը: Այլասերո՞ւմ, ո՛չ, Վերածնո՛ւնդ...»:

«Ռուբեն Սեւակ»

Դժբախտաբար Ռուբեն Սեւակի մատնանշած ախտագին մտաւորականները հայ ժողովուրդին կրած մեծ աղետէն ետքն ալ, ազգին եւ հայրենիքին ցաւերուն կոնակ դարձուցած իրենց փղոսկրէ աշտարակին մէջ *«Արուեստը արուեստին համար»*-ի յանկերգը հոլովելու կը շարունակեն:

Եղեռնէն իսլամանալով ազատած Երուանդ Օտեանի խղմմտանքին ձայնը սապէս կ'ըսէր. *«Հայ գրականութիւնը այս մեծ աղետէն ետք շատ արիւնտ պիտի ըլլայ»*՝ Երուանդ Օտեան սխալած էր:

Յետ Եղեռնի Սփիւռքի հայ գրականութիւնը քիչ բացառութիւններով, կարծես քէ բան չեղածի պէս շարունակեց ամենամեծ անտարբերութեամբ *«Ապրիմ-մեռնիմ-ծաղիկ-թիթեռնիկ-ես-դուն, եւ մանաւանդ ես-եսի հոլովոյթով ինքզինքը օրօրել»*:

Չորս տարի առաջ, նահատակ Ռուբեն Զարդարեանին տղուն, ծանօթ գրագէտ Հրաչ Զարդարեանին այցելեցինք, Ռուբեն Սեւակի մասին իր յիշատակները արձանագրելու համար: Հրաչ Զարդարեան մեզի 2 ժամուան խօսակցութեան ընթացքին իր յուշերը պատմեց եւ կարգ մը մերկացումներ ըրաւ:

Անոր զգայացունց մերկացումը, որ երիզի վրայ արձանագրեցինք, շատ սարսափեցուցիչ է:

«Նղեռնէ ետք մէջտեղ ելլող մտաւորականները ներքնապէս շատ ուրախ եւ գոհ էին, որ մեծ գրողները անհետացած են: Որովհետեւ գրական հրապարակը իրենց մնացած էր»:

Ահաւատալի ըլլալով հանդերձ, իրականութեան մեծ բաժին մը կայ այս ապստամբութեան մէջ: Որովհետեւ ուրիշ տեսակ բացատրել կարելի չէ, յետ Եղեռնի գրողներուն ցուցադրած անտարբերութիւնը Եղեռնի եւ նահատակ մտաւորականներու հանդէպ:

Վերապրող գրողներէն գրեթէ ոչ մէկը Եղեռնը եւ նահատակ մտաւորականներուն կեանքը եւ վախճանը նիւթ առնելով բան մը գրած է:

Մինչդեռ Երուանդ Օտեանին ըսածին պէս, հայ գրողները այս մեծ աղետէն ետք, իրենց գրութիւններով Եղեռնը եւ նահատակ մտաւորականները խորհրդանշելով, երկինքը քնդացրնելին պէտք էր:

Եթե այդպէս ըրած ըլլային անիրաւուած Հայ Դատը 50 տարիներ մոռացութեան չէր ենթարկուեր:

Օրինակ՝ Հրանդ Նազարեանցը՝

Ռուբէն Սեւակին ամենամօտ բարեկամը եւ ընկերն էր, եւ Սեւակի նահատակութիւնը ամէնէն շատ իրեն ցաւ եւ ընդվզում պատճառելու էր:

Սեւակի կորուստէն ետք Հրանդ Նազարեանցէ կ'սպասուէր իր գրելու տաղանդով անմահացներ, պանծացներ Ռուբէն Սեւակի կեանքը եւ հերոսային վախճանը: Բայց այսպէս չեղաւ:

Հրանդ Նազարեանց Իտալիոյ Պարի քաղաքը քաշուած, գրեց իտալերէն լեզուով գրութիւններ եւ իտալացի սիրուհիին հետ իզուր սպասեց, որ իրեն Նոպելի մրցանակը տրուի:

* * *

Յակոբ Օշական եւ իր հետեւորդները ամենամեծ պատասխանատուներն են յետ Եղեռնի գրականութեան այլասերման: Յակոբ Օշական ստորագնահատեց բոլոր գրողները, իր քննադատութիւններուն սուրով մեռցուց բոլոր արժէքները, եւ ինք բարձրացաւ անոնց դիակներուն վրայ, իբր միակ վաւերական գրողը եւ քննադատը:

Անոնց **«Վաւերական գրողը»**-ի յանկերգը, քանդիչ, քննադատութիւնները, շատ մը գրողները հեռու պահեց ազգին, հայրենիքին ցաւերով զբաղելէ: Անոնք ստեղծեցին մտաւորականներու դասակարգ մը, հին ազնուական դասակարգերու նման, եւ արհամարհեցին ժողովուրդը:

Կարծէք թէ հայ ժողովուրդը բոլոր խնդիրները լուծած, անգլիացիներու եւ ֆրանսիացիներու նման հարուստ ազգ մըն էր, որ պիտի ուզէր ունենալ ամէնէն բիրեղացած գրականութիւնը:

Անպատի մեջ կորսուած ծարավ մարդուն ջուր պէտք էր, ի՞նչ ըներ ան աղամանդը, զմրուխտը:

Ջարդուած եւ անիրաւուած ազգ մը, պահանջքը ուներ պարզ, ժողովրդական գրականութեան մը: Գրականութիւն մը, որ հայուն կամքի ուժը ամրապնդէր, անոր յոյսի նանքայ մը ցուցներ եւ պայքարելու կորովը տար անիրաւութեան դէմ:

Բոլոր մտաւորականներուն հոգեկան զօրաշարժի ընթացքին պերնիմաստ գրականութեան տեղ չկար: Մեզի հայրենասեր

մտաւորական գիւտարներ պէտք էին, որոնց գէնքը իրենց գրիչը պիտի ըլլար:

* * *

Թուրք դահիճները երբ 24 Ապրիլ 1915-ին հայ մտաւորականները արտօրեցին, անոնց մէկ մասը չմեռցուցին:

Օրինակ՝ Բիւզանդ Քէչեանը ետ դրկեցին: Պահպանողական Քէչեանը հակառակ էր յեղափոխականներուն, անկէ թուրքերուն վնաս չէր գար: Նախընտրելի էր, որ ան ետ դառնար եւ շարունակէր գրել յեղափոխականներուն դէմ:

Նրուանդ Օտեանը չմեռցուցին: Ինչո՞ւ: Որովհետեւ **«Ընկեր փանջունի»**-ն գրած էր, յեղափոխական տիպարը հտպիտի մը վերածելով:

Անկէ գատ թուրքերը իրենց տեսակետով **«անվնաս»** շատ մը հայ գրողներ չաքտրեցին:

Եւ վերապրող կարգ մը գրողներ, երբ Պոլիսէն հեռացան, պատմեցին, թէ ազատած են պահուրտելով առաստաղի մէջ եւ կամ փախած են ոստիկանտունէն: Ինքնախարութեան եւ մեծամոլութեան զոհ խեղները, թուրքը, երբ ուզէր ձեզի սատանային ծակին մէջ ալ կը գտնէր: Երբ հաւատար, որ վնասակար էր իրեն: Բայց ան գիտէր, թէ դուք ձեր հիւանդագին մտային կառոյցով, ձեր գրութիւններով շատ աւելի օգտակար պիտի ըլլայիք թուրքին, հայ միտքերը խարարելու եւ աշխատելու տեսակետով:

* * *

Ռուբէն Սեւակի կեանքի վերջին օրերը՝ իր բանաստեղծութիւններուն մէջ երգած գաղափարներուն պէս եղան, այսինքն՝ խիզախ ու հերոսական: Նայեցեք՝ ինչ կը գրէ Գուրգէն Մխիթարեան 1946-ին Գահիրէ հրատարակուած իր **«Քառորդ դար գրականութիւն»** հատորին մէջ:

«Ռուբէն Սեւակի մահէն ետք գեղեցկացավ գրական իր հռչակը, դարձաւ իր դէմքը ճեքիաթային ու հերոսական նոյնիսկ, երբ պատմութեամբ թէ երիտասարդ հիւանդ թրքունիի մը սնարին վերել, կրցած էր պահել ան իր հաւատարակչութիւնը, իր ազգային, ընտանեկան ու հոգեկան հաւատարմութիւնը, մերժելով քաջութեամբ կախարդական հրաւերը՝ ուրանալու ինքզինքը, ի գին իր

կեանքին ու իր ձեռքով բժշկուած գեղունիին... (...)

Սրտառուչ, խորունկ վեպ մը կրնար դառնալ իր պարագան, եթե մէկը սիրտ ունենար արիւնի մէջ խեղդուած բանաստեղծին կեանքը գրական օգտագործումի մը առարկայ դարձնել: Արդար այս խղճահարութիւնը, որ հեռու կը պահէ մեր գրողները այդ օգտագործումէն, ինչ որ սրբապղծութեան հաւասար բան մը պիտի ըլլար: Ժամանակը բերելս, տայ իր բոյլտուութիւնը օր մը, ոչ թէ արուեստի գործ մը հանելու համար անպատեհ տեղերերգութենէն, այլ պանծացնելու համար երիտասարդ բանաստեղծին վեճն ու հզօր կեցուածքը»:

Դժբախտաբար, մինչեւ հիմա Գուրգէն Մխիթարեանի ենթադրութիւնը Ռուբէն Սեւակի համար չիրականացաւ:

Ոչ մէկը պէտք եղած ձեւով հետաքրքրուեցաւ Ռուբէն Սեւակի հերոսական կեանքով:

Ի բացառեալ Գեղամ Սեւանէ, որ 1967-ին Երեւան հրատարակուած **«Բանաստեղծին գողգոթան»** անունով պատմածքով վերապրեցուց Ռուբէն Սեւակի յիշատակը, եւ 1984-ին Պերն Զէյթունեանց Երեւանի մէջ ներկայացուց «Մեծ լուրիւն» անունով, Դանիէլ Վարուժանի եւ Ռուբէն Սեւակի տրամը:

* * *

Ռուբէն Սեւակ

Դ. մաս

Ռուբէն Սեւակ նահատակուեցաւ 26 Օգոստոսի 1915-ին, թուրք մարդասպաններու ձեռքով՝ Չանկըրըի մէջ:

* * *

Ազգ մը իր հերոսներով կ'ապրի:

Ազգ մը, որ իր հերոսներ չունի, ապրելու իրաւունք չունի:

Ազգ մը, որ իր հերոսները կը մոռնայ, ինքն ալ մեռնելու դատապարտուած է:

* * *

Ռուբէն Սեւակ նահատակուեցաւ հերոսաբար, մերժելով թրքացալու առաջարկը: Մեռաւ չփոխելու համար իր անունը: Ուզելով գնաց մահուան, որ հայ ազգը ապրի:

Թե՞ ինչպէս:

Ահա իր կեանքին վերջին օրերու պատմութիւնը:

Ռուբէն Սեւակ 1905-էն մինչեւ 1914 Ջուիցերիա ապրեցաւ, հոն ուսանեցաւ, բժիշկ եղաւ, իր գրական ստեղծագործութիւններուն մեծ մասը հոն գրուեցաւ, հոն ամուսնացաւ, Լոզանի Գեղարուեստի վարժարանի ուսանողուհի՝ գերմանացի ժաննի Աբելի հետ: Իր առաջին գաւակը հոն ծնաւ: Մինչեւ 1914 Յունիս ամիսը իբր բժիշկ աշխատեցաւ Լոզանի հիւանդանոցներուն մէջ, եւ առաջին համաշխարհային պատերազմին հռչակուելէն հազիւ երկու ամիս առաջ, Ջուիցերեայէն Պոլիս վերադարձաւ ընտանիօք:

Երկու ամսուան տարբերութիւն, եթէ երկու ամիս ուշանար վերադարձը, Ռ. Սեւակ ազատած էր դժոխքէն:

Ինչու վերադարձաւ: Որովհետեւ իր ամէնէն սիրած եղբայրը մահացած էր, եւ որովհետեւ իր մտքին մէջ կար արդէն օր մը ծննդավայրը վերադառնալ՝ ծառայելու համար իր ժողովուրդին:

Պոլիս վերադարձած օրը Սեւակի կիները նախագգացած էր դժբախ-

տութիւնը: Սոսկացած էր մարդոց վայրենի երեսներէն եւ ետ դառնալ առաջարկած ամուսինին:

Պոլիս: Փոքորիկի նախօրեակին այդ օրերուն անսովոր հանդարտութիւն մը կար:

Սեւակ սկսած էր աշխատիլ իբր բժիշկ եւ մեծ յաջողութիւն գտած:

Կը մասնակցէր գրական հաւաքոյթներու, բանախօսութիւններ կուտար բժշկական նիւթերու վրայ, որոնց խումբերամբ բազմութիւնը մը կը հետեւէր, եւ իբր նարտար բանախօս՝ ձեռքէ ձեռք կը խլուէր: Իր բանաստեղծութիւնները եւ գրութիւնները թերթերուն մէջ կը շարունակուէր հրատարակուիլ: Սեւակի համբաւը գագաթնակէտին հասած էր:

Թեոդիկ, Ամէնուն Տարեցոյցի հեղինակը իր հիացումը հետեւեալ տողերով կը յայտնէր Սեւակին համար:

«Աթէնա իմաստութեան շիթը դրած է անոր ուղեղին մէջ, Սսկիւլապ բժշկութեան խորհուրդը. Հերմէս ալ կայծը պերճախօսութեան»:

Քանի մը ամիսներ ետք Առաջին համաշխարհային պատերազմը կ'սկսի. դժոխքին դուռը բացուած է: Ռուբէն Սեւակ պաշտօնի կը կոչուի օսմանեան բանակին մէջ, իբր բժիշկ հարիւրապետ:

* * *

Պոլսոյ Հարպիյէ թաղին մէջ, Հարպիյէ գօրանոցին գունդերը, շաբբու վերջերը մեծ հանդիսութեամբ կը տողանցէին մայր պողոտային վրայ: Ռուբէն Սեւակն ալ ներմակ ձի մը նստած՝ իր գինուորներով կը մասնակցէր այս տողանցքին:

Շաբբու վերջ մը, այն պողոտային դիմացի կողմը բնակող Մկրտիչ Յակոբովիչ ընտանիքը կը հրաւիրէ, իրենց ազգական, Սեւակի քրոջ աղջիկը՝ Ատրիէնը, ու դիտէ հարիւրապետ Սեւակը տողանցքի ատեն:

Ատրիէն Սիլիվրիէն ուսանելու եկած է Տամ տը Սիոն վարժարանը իբր գիշերօթիկ աշակերտ: Ատրիէնը եւ տան տէրերը պատշգամին մէջ նստած անհամբեր կ'սպասեն Սեւակին անցնելուն: Տողանցքը կ'սկսի. գինուորները կ'անցնին, «**աճա**» կ'ըսեն տանտէրերը, «**ճիմա կուգան Սեւակը եւ իր գինուորները**», «**բայց այն ի՞նչ է, գինուորներուն առջեւէն գացող ձիուն վրայ Սեւակը չկայ**»:

Զին առանց Սեւակի կ'անցնի՝ քովը քալող զինուորի մը կողմէ առաջնորդուած:

* * *

24 Ապրիլ 1914-ի յաջորդող դժոխային օրերն էին: Սեւակ Զանկըրը աքսորուած էր, Կոմիտաս վարդապետի, Դանիէլ Վարուժանի, Բիւզանդ Քէչեանի, Տիրան Գէլէկեանի, եւ բոլոր անոնց հետ, որոնք հայ ազգին ուղեղներն էին:

Սեւակ Զանկըրը հերոսական կեանքին մասին այդ դժոխքէն ազատած հինգ հայ մտաւորականներու վկայութիւնը կայ.-

- 1) Բիւզանքիոնի խմբագիր Բիւզանդ Քէչեան - Ամէնուն Տարեցոյցը, 1922:
- 2) Գրիգոր Պալաքեան Արգետիսկոպոս - Հայ գողգոթան, Ա. հատոր:
- 3) Միգայէլ Շամտանըեան - Յուշարձան Ապրիլ 24-ի, 1919:
- 4) Արամ Անտոնեան:
- 5) Յովհան Ծ. Վրդ. Կարապետեան - 1.5. 1957 - Զուարթնոց - Փարիզ:

Ռուբէն Սեւակ Զանկըրը մէջ ապրեցաւ հերոսի մը պէս: Երբեք չկորսնցուց իր արիութիւնը, եղաւ այն Սեւակը, ինչ որ գրած էր իր բանաստեղծութիւններուն մէջ: Որովհետեւ իր գրածները իր ապրած կեանքն էր, իր ձայնն էր հոգիին, իր հաւատացած գաղափարներն էին միայն: Ո՛չ մէկ շինծու բան չկար իր գրածներու մէջ: Եւ շատ մը մեծեր, որոնք փղոսկրէ աշտարակներ հիմնած էին Պոլիս՝ իրենց գրութիւններով, Զանկըրը մէջ շշմած, մարած, սմբած էին:

Նոյնիսկ այն մեծերէն մէկը, որ իր բանաստեղծութիւններով հայ հոգիներու կրակը կը վառէր, աքսորավայրէն Պոլիս գրած մէկ նամակին մէջ, կ'ըսէր թէ՝ **«Ինք բնաւ չէ գրադած քաղաքականութեամբ»**: Ճիշդ է, կեանքը փրկելու բնագոյը, ամէնէն զօրաւոր բնագոյն է մարդուն: Բայց այս կեցուածքը միեւնոյն ատեն, մարդուն արիութեան չափանիշն է՝ իր գրածներուն, իրեն հաւատալուն չափանիշը, եւ անկեղծ ըլլալու չափանիշը:

Աքսորի մէջ՝ Սեւակ բոլոր այն տկարած հոգիները սրտապնդեց, իր խօսքերով ուժ տուաւ իրենց եւ զատ-զատ երդումը ընել տուաւ ամէն անոնց, որոնց հոգիի ուժին վրայ կասկած ուներ - թէ չպիտի տկարանան թուրքին դէմ:

Սեւակ Չանկըրըի մէջ իբր բժիշկ կ'աշխատէր նաեւ դարմանել բուրք հիւանդներ ալ: Եւ իբր Եւրոպա ուսանած բժիշկ շատ կը փնտռուէր:

Օր մը Սեւակ Չանկըրըի մէջ երեւելի բուրքերէն մէկուն աղջիկը դարմանելու կը կանչուի: Եւ այս սկզբնաւորութիւնը կ'ըլլայ հայ պատմութեան ամենէն տխուր դիւցազներգութիւններէն մէկուն:

Ռուբէն Սեւակ գեղադէմ, համակրելի երիտասարդ մըն էր՝ սեւ, տպաւորիչ աչքերով, սեւ մազերով, վայելուչ կեցւածքով եւ շարժուձեւերով:

Բժիշկ Սեւակ իր բոլոր կարելիութիւններով կ'աշխատի մահուան նիրաններէն ազատելու համար այս բուրք երեւելիէն աղջիկը: Ամէն օր կ'երթայ, կը խնամէ, կը խրախուսէ աղջիկը: Սեւակի ջանքերը յաջողութեամբ կը պսակուին: Թուրքին աղջիկը ազատած է: Օրէ օր աւելի կը բարւոքի: Հայրը շատ ուրախ է, բժիշկ Սեւակին ինչպէս շնորհակալութիւն յայտնելը չգիտէր, բայց բան մը կը նշմարէ: Աղջիկը որ դարմանուած, ապաքինած է, բայց ուրախ չէ, չժպտիր:

Հայրը առանձին մնացած ատեննին կը հարցնէ տրտմութեան պատճառը: Աղջիկը կը խոստովանի: Սիրահարուած է Սեւակին եւ ամուսնանալ կ'ուզէ հետը, կ'աղաչէ իր հօրը, որ իրականացնէ իր փափաքը. եթէ ոչ, այս աշխարհը ապրիլը իրեն համար իմաստ չունի: Հայրը կը շուարի, բայց իր քար սիրտը աղջկան աղաչանքներուն չի դիմանար, կը խոստանայ ձեռքէն եկածը ընելու:

Կը կանչէ Սեւակը իր քովը խօսելու համար: *«Տօքթոր, կ'ըսէ. Դուք բոլորդ ալ մեռնելու դատապարտուած եք, եւ ոչ մէկը չի կրնար ազատել ձեզի: Բայց եթէ դուն ուզես, ես քեզի կրնամ փրկել: Ես երախտապարտ եմ քեզ, որ աղջիկս մահէն ազատեցիր, եւ աղջիկս շատ ուրախ է քեզի պէս բժիշկ մը ճանչնալու համար, եւ քեզի սիրահարուած է, հետդ ամուսնանալ կ'ուզէ: Եթէ ընդունիս իսլամանալ, եւ ամուսնանալ աղջկանս հետ, կ'ազատեմ քեզի, անոր սիրոյն համար, եթէ ոչ, ազատում չկայ ձեզի»:*

Սեւակ կը սարսափի առաջարկէն, կ'ըսէ, թէ արդէն ամուսնացած է եւ գաւակներու տէր է: *«Վնաս չունի» կ'ըսէ մարդը, «մեր կրօնքին համար ամուսնացած ըլլալը անպատեհութիւն մը չէ»... «Եթէ կ'ուզես այսօր մտածէ, եթէ ընդունիս, վաղը կուտաս պատասխանը»:*

Սեւակը ընկերներուն քով կը վերադառնայ եւ կը պատմէ եղելութիւնը: Բոլորն ալ առանց բացառութեան կը յանձնարարեն ընդունիլ առաջարկը. «*զի ամէն բանէ առաջ իր կեանքը պէտք է*», «*իր հանճարը մեռնելու չէ*», «*ինք մէկ հատիկ է*», «*ճամակերպէ առժամաբար, մինչեւ որ փոքորիկը անցնի*»: Բայց Սեւակ կը մերժէ: «*Թրքանալը նուաստանալ է*» կ'ըսէ:

* * *

«*Թրքանալը նուաստանալ է, մենք որ ժողովուրդին առջնորդներն ենք, եթէ մենք դաւանանք մեր դատին, ժողովուրդը պիտի կորսնցնէ իր հաւատքը պայքարի: Մենք օրինակ պիտի ըլլանք անոնց: Մենք պիտի մեռնինք, որ հայ ազգը ապրի*»: Այս եղավ վերջին պատգամը Ռուբէն Սեւակի:

* * *

26 Օգոստոս 1915-ի օրը, առտուն կանուխ ձիու կառքով ու գինուորներու հսկողութեան տակ Չանկըրըէն դէպի Այաշ նամբայ կը հանուին Ռուբէն Սեւակ, Դանիէլ Վարուժան եւ իրենց երեք ընկերները:

Գալենիգի մօտ՝ Թիւնէյ գիւղի շրջակայքը, Իբքիհատի Չանկըրըի վարիչ Ճեմալ Օղուզի առաջնորդութեամբ չէրէները նամբան կը կտրեն կառքին, գինուորները դիմադրել կ'ուզեն, բայց անոնց պետը եղող սելանիկցի՝ ենթասպան արգելք կ'ըլլայ դիմադրութեան, մէկ կողմ կը քաշուին եւ կը դիտեն: Չէրէները ամենածանր չարչարանքներով մորթատելով կը մեռցնեն Ռուբէն Սեւակը, Դանիէլ Վարուժանը եւ իրենց երեք ընկերները: Այս մարդասպան չէրէներուն մէջն է նաեւ Սեւակի դարմանած եւ մահէն ազատած աղջկան հայրը՝ Արապանիպաշը Իսմայիլը:

* * *

*«Ո՛չ, ո՛չ արշալույսն իրենց պիտի գայ,
ու եթե չգայ առաւօտն ապագայ
Պիտի կոուին, մինչեւ երբ, մինչե՛ւ յաւիտեան:
Ու երբ դեռ երկրի վրայ ազատութեան համար
մեռնին ափ մը մարդեր ջնջին.
Անոնք պիտի ըլլան մարդկութեան վերջին,
վերջի՛ն հայերը:*

Ռուբէն Սեփ-Ակ»

* * *

Պոլիս Սեւակին կինը՝ Ժաննի Սեւակ, խելագարած, ամուսինին աքսորուելէն ետքը կը դիմէ բոլոր անոնց, որոնցմէ յոյս ունէր, թէ պիտի կարենային օգնել ամուսինը ազատելու համար: Կը դիմէ բուրք երեւելիներուն եւ մանավանդ Գերմանական դեսպանատան, նկատելով, որ տիկին Սեւակ Էրֆուրդի ծանոթ գերմանացի մէկ ընտանիքին կը պատկանէր: Կը դիմէ նաեւ Հալիտէ Էտիպին, որ այն շրջանին իր գրութիւններով եւ հառերով մեծ ազդեցութիւն ունէր բուրք երիտասարդական շարժումներուն վրայ: Կը դիմէ Հալիտէ Էտիպին, կարծելով որ իբր կին՝ պիտի կարենայ իր աղաչանքներովը գուրք արթնեցնել կնոջ մը.- *«Կաղաչեմ»,* կ'ըսէ Հալիտէ Էտիպին *«Ազատեցե՛ք ամուսինս, ինքը ոչ մէկուն գէշութիւն չէ ըրած, հարցուցէք այն բուրք փաշաներուն եւ երեւելիներուն, որոնց՝ ըլլա՛յ Ջուիցերիա, ըլլա՛յ Պոլիս՝ իբր բժիշկ եւ իբր մարդ ձեռքէն եկածը ըրած է. ամէնն ալ Աստուծոյ պէս կը պաշտեն տոքթ. Ռուբէնը: Երկու գաւալ ունիմ եւ շատ կը սիրեմ ամուսինս, ձեր մէկ խօսքով կրնաք ազատել գինքը»:*

Հալիտէ Էտիպ՝ *«Կը հաւատամ ձեզի տիկին Սեւակ»* կ'ըսէ *«Բայց տօքթ. Սեւակը ուրիշ մեծ յանցանք մը ունի, այն ալ, շատ լաւ գրելու եւ խօսելու կարողութիւն ունենալն է: Ան մեծ ազդեցութիւն ունի հայ ժողովուրդին վրայ, իր խօսքերովը եւ իր գրութիւններովը կրնայ հայ ժողովուրդը ոտքի հանել: Այս է յանցանքը»:*

Խեղճ տիկին Սեւակ չէր գիտեր, թէ Հալիտէ Էտիպ ըսուած կինը իսլամացած հրեայ ռաբունապետի մը աղջիկն էր, որ կատաղի, ազգայնամոլ հառերով բուրք գանգուածները կը գրգռէր քրիստոնեաներուն դէմ: Տիկին Սեւակ չէր գիտեր, թէ Հալիտէ Էտիպ մաս կը

կազմեր սելանիկցի հրեայ դաւանփոխ - տեօնմեներու խումբին, որոնք *«Ճրիտասարդ քուրքեր»*-ու շարժումը ստեղծեցին Սելանիկի մէջ: Անոնք առաջնորդներն էին Իքթիհատի այն վարիչներուն, որոնք 1915-ին հայ ազգին ամբողջական բնաջնջման որոշումը տուին:

* * *

Պոլսոյ ոստիկանապետը Պետրի պէյ, որուն տիկին Սելակ լուր առնելու կ'երթար իր ամուսինէն, շատ զգոյշ կը վարուէր տիկին Սելակի հետ, նկատելով որ ան գերմանացի էր, եւ նկատելով որ Պետրի պէյը գերմանացիներուն հրամանին տակն էր, ամբողջ Օսմանեան պետութեան նման: Պետրի Պէյը կը խաբէր տիկին Սելակը զանազան խօստումներով, քէ՛ *«Տօքք. Սելակը Գերմանիա պիտի դրկեն»*, քէ *«Տօքք. Սելակը մօտ ատենէն ազատ պիտի արձակուի»*: Օրերով տիկին Սելակ գնաց-եկաւ ոստիկանապետին գրասենեակը յոյսերով լեցուն: Եւ օր մըն ալ յուսալքուած, ատելավառ աչքերով պոռաց երեսին. - *«Կը խաբես զիս, կը խաբես զիս»*:

Բայց տիկին Սելակ ամենէն անելի յոյս ունէր Գերման դեսպանատունէն ու Գերման դեսպան Վանկէնհայմէն:

Առտու կանուխ կ'երթար դեսպանատուն, կ'սպասէր մինչեւ գիշեր, կը բացատրէր իր վիճակը գերմանացի իր ազգակիցներուն: Քանի անգամներ, որ ուզեց դեսպան Վանկէնհայմը տեսնել, ամէն անգամ ալ *«գրադած է»* ըսելով իր փոխանորդները կ'ընդունէին տիկին Սելակը, կ'արձանագրէին տիկին Սելակին միջամտութեան խնդրանքը՝ ազատելու համար իր ամուսինը: Եւ վերջապէս Օգոստոս ամսուն մէջ Վանկէնհայմ կ'ընդունի տիկին Սելակը:

Տիկին Սելակը բոլոր իր սրտին ցաւովը կը բացատրէ իր վիճակը Վանկէնհայմին, կը խընդրէ, կը պաղատի, որ ազատէ իր ամուսինը: Վանկէնհայմ *«Դուն բշուառական գերմանացի»* կ'ըսէ տիկին Սելակին *«լքեցիր ազգդ, ամուսնացար այս Հայուն հետ ու հիմա կուգաս խնդրելու, ու ազատեմ զինքը: Ան ետ չպիտի գայ մէյ մըն ալ: Անոնք մեռնելու գացին»*:

Տիկին Սելակ սարսափած Վանկէնհայմին անմարդկային պատասխանէն, ձեռքը սուրի մը պէս կը մօտեցնէ դեսպանին երեսին *«Մանչ գաւակ մը ունիմ»* կ'ըսէ, *«Անիկա պիտի մեծցնեմ, այնպէս, որ օր մը պիտի գայ իր հօրը վրեժը պիտի առնի գերմանացիներէն»*:

* * *

Միջոց մը ետքը տիկին Սեւակ իր երկու զաւակներով Ջուիցերիա վերադարձաւ եւ պատերազմէն ետքն ալ վերջնականապէս Ֆրանսա հաստատացաւ: Մերժեց գերմանական հպատակութիւնը, եւ իբր հայ նանսենեան հպատակ ապրեցաւ:

* * *

- Տիկին Սեւակ մինչեւ իր կեանքին վերջը Գերմանիա ոտք չկոխեց:

- Տիկին Սեւակ մինչեւ իր կեանքին վերջը գերմաներէն բառ մը չխօսեցաւ:

- Տիկին Սեւակ իր զաւակներուն՝ Լեւոնին եւ Շամիրամին մէկ բառ գերմաներէն չսորվեցուց:

- Սեւակին տղան 1939-1945 պատերազմին՝ իբր ֆրանսացի զինուոր պատերազմեցաւ գերմանացիներուն դէմ:

* * *

- Տիկին Սեւակ մինչեւ վերջ Սեւակի սիրով ապրեցաւ, գրեց բանաստեղծութիւններու չորս հատորներ՝ Սեւակի սերով լեցուն:

Զմեռած կտակեց իր զաւակներուն, ու հայ եկեղեցական ծեսով քաղուի: Մեռաւ 28.12.1967-ին Հայաստանեաց եկեղեցիին մէջ:

Յուդարկաւորութեան արարողութիւնը կատարուեցաւ Նիս՝ 30.12.1967-ին Հայաստանեաց Առաքելական Սուրբ Աստուածածին եկեղեցիին մէջ:

* * *

Գերմանացի տիկին Սեւակ, մեր խելացի, գրագետ, պատմագետ եւ դիւանագետներէն շատ աւելի լաւ հասկացած էր իրականութիւնը, քէ հայ ազգին բնաշնչման բուն պատասխանատուները գերմանացիներն են:

* * *

Ռուբեն Սեւակ եւ «Փրցուելիք Ուղեղներ»

Ծ. մաս

Մեր մեջէն շատերը Եոհաննէս Լէբսիուսի անունը իմացած են իբր հայերու պաշտպան գերմանացի պատուելի... Լէբսիուսի գերմանական արխիվներէն 1914-1918-ի հայերու վերաբերեալ փաստաթուղթերը հաւաքելով գիրք մը հրատարակած էր: Այս գրքին մէջ շատ կարեւոր վաւերաթուղթ մը կայ Ռուբեն Սեւակի սպանութեան վերաբերեալ: Այս վաւերաթուղթը սոյն գրքին 163-րդ էջին մէջ, Պոլսոյ Գերմանական դեսպանատունէն Պերլին վարչապետարան ղրկուած նամակ մըն է...

Այս նամակը ստորագրուած է «Freiherr Von Neurath»-ի կողմէ, որ յետագային «Adolf Hitler»-ի կառավարութեան մէջ կարեւոր նախարարներէն մէկը եղաւ եւ 1945-ին Նիւրնպէրկի մէջ դատապարտուեցաւ:

Նամակին ամենէն կարեւոր առաջին կէտը հետեւեալն է.- Ռուբեն Սեւակի կինը իբր գերմանացի, Պոլիս Գերմանական դեսպանատուն կը դիմէ ազատելու համար իր ամուսինը:

Թուրքերը կը մերժեն, սա պատնառաբանութեամբ.- «Ռուբեն Սեւակ կը նկատուի իբրեւ մէկը այն մտաւորականներէն, որուն զանգուածներու վրայ ունեցած ազդեցութենէն կը վախցուի»:

Այստեղ բացայայտօրէն յայտնի կ'ըլլայ, թե՛ թուրքերուն համար, հայ մտաւորականը վտանգաւոր է: Մեր գրողներէն ո՞ր մէկը, Սեւակին՝ զանգուածներու վրայ ունեցած ազդեցութիւնը նիւթ ըրած է իր գրութիւններուն մէջ: Թուրքերը Ռուբեն Սեւակին արժէքը մեզմէ շատ աւելի լավ հասկացած էին:

Այս նամակին երկրորդ կարեւոր կէտը հետեւեալն է. Լէբսիուս նամակին ամբողջութիւնը չէ հրատարակած իր գիրքին մէջ: Այս պարագան մեր ուշադրութիւնը գրաւեց, պատմագէտ Վահագն Տատրեանի Գերմանիոյ մայրաքաղաք Պոնի պետական արխիւին մէջ գտած, Ռուբեն Սեւակի վերաբերեալ, նամակին բուն պատենը մեզի ղրկելուն շնորհիւ:

Երբ բախտատեցի՞նք Լեբսիուսի գիրքը եւ Պոնէն եկած բուն պատճենը, տեսանք որ Լեբսիուս, նամակը տեղ մը կտրած եւ ներքեւը Neurath-ի ստորագրութիւնը դրած էր, կարծել տալու համար որ նամակը այդչափ է: Մինչդեռ բուն նամակը մէկ էջ աւելի է, եւ ամէնէն կարեւոր տեղը հոս է նամակին: Լեբսիուսին չհրատարակած նամակին այդ մասին մէջ Ռուբէն Սեւակի գերմանացի կնոջ մայրը գերման իշխանութիւնները կամբաստանէ, որ չեն ուզած ազատել Ռուբէն Սեւակը:

Այս կարեւոր փաստաթուղթին գերմաներէն պատճենները **«Լեբսիուսի գիրքինը եւ Պոնի բուն պատճենը»**, եւ Վահագն Տատրեանի քարգմանութեամբ հայերէն պատճենները կը հրատարակենք իբր պատմական կարեւոր փաստ գերմանական պատասխանատուութեան Հայկական ցեղասպանութեան մէջ:

Այս խնդրին մէջ Լեբսիուսին բռնած դիրքը ի՞նչ է: Ի՞նչու չէ հրատարակած բուն պատճենը:

Սեւակի գերմանացի կնոջ մօր Գերման իշխանութիւնները ամբաստանելը պահելով Լեբսիուս ուզած է յանցանքը միայն բուրքերուն վրայ ձգել: Իր հրատարակած գիրքին բուն նպատակը գերմանական պատասխանատուութիւնը քողարկել է:

* * *

Այս տարի Ռուբէն Սեւակի ծննդեան 100-ամեակը եւ նահատակութեան 70-ամեակն է:

Ռուբէն Սեւակ նահատակուեցաւ իր անունը չփոխելու համար: Իրեն ներկայացուած իսլամանալու նամբով փրկուելու առաջարկը հերոսաբար մերժեց: Ուզեց, որ իր մահով հայ ազգին յարութեան նամբան բացուի: Աւա՛ղ, իր մահէն 70 տարիներ ետք, կարելի չէ չյիշել այսօր Դուրեանի տողերը.

«Եւ յիշատակս ալ քառամի, Ան այն ատեն ես կը մեռնիմ»:

Հայ գրականութեան պատմութեան մէջ Ռուբէն Սեւակն է, որ առաջին անգամ 1908-ին Ռուբէն Սեւակ անունը իբր գրչանուն գործածեց եւ «Ռուբէն Սեւակ» անունով համբաւի տիրացաւ:

Այսօր միջազգային (C) Copyright-ի օրէնքով եւ մարդկային պարկեշտութեան օրէնքով, Սեւակ անունը ոչ մէկը չկրնար գործածել եւ շահագործել:

Ռուբէն Սեւակի սեփականութիւնը եղող Սեւակ անունը դժբախ-

տաբար 1955-ի շուրջ անիրաւաբար եւ անօրինաբար գործածուիլ սկսաւ բանաստեղծի մը կողմէ:

Այսօր ամենէն զարգացած հայերը անգամ շփոթութեան կը մատնուին, Ռուբէն Սեւակը եւ կեղծ «Սեւակը» իրարմէ չզանազանելով:

Քանի մը տարի առաջ Փարիզի Հրանդ Սամուէլեանի գրատունը զացած էինք հայերէն գրքեր գնելու:

Հրանդ Սամուէլեանի դուստրը՝ Ալիս Սամուէլեանին հարցուցինք, թէ Ռուբէն Սեւակէն զիրքեր ունի՞: «Այո» ըսաւ «*նոր եկան*» եւ մեզի բերաւ կեղծ «Սեւակը»-ին զիրքերէն:

«*Դուք ալ Պրիւդիւս*» ըսինք եւ զայրոյթով հեռացանք գրատունէն:

Վերջերս այս սրբապղծութիւնը այն աստիճանի հասած է, որ կարգ մը գրողներ կեղծ «Սեւակը»-ին անունը կը գործածեն առանց փոքր անունը տալու, այսինքն՝ միայն «Սեւակ»:

Ռուբէն Սեւակի դէմ գործուած այս սրբապղծութիւնը ամենէն մեծ անիրաւութիւնն է իր անունը չփոխելու սիրոյն նահատակուած Ռուբէն Սեւակի յիշատակին համար:

Ամօթ այս սրբապղծութիւնը կատարողներուն:

Ամօթ անոնց, որոնք այս սրբապղծութեան պատճառ եղան:

Ամօթ ամէն անոնց, որոք այս սրբապղծութիւնը տեսնելով հանդերձ, ձայն չհանեցին, չընդվզեցան եւ չբողոքեցին:

* * *

Ռուբէն Սեւակ նահատակուեցաւ 26 Օգոստոս 1915-ին թուրք մարդասպաններու ձեռքով Չանկըրըի մէջ:

Ռուբէն Սեւակ մեռավ չփոխելու համար իր անունը, բայց հայերը ամէն օր կը մեռցնեն Ռուբէն Սեւակը, փոխելով անոր անունը:

Ազգ մը իր հերոսներով կ'ապրի:

Ազգ մը որ հերոսներ չունի, ապրելու իրաւունք չունի:

Ազգ մը, որ իր հերոսները կը մոռնայ, ինքն ալ մեռնելու դատապարտուած է:

* * *

**Գերմաներենի թարգմանութիւնը
Վահագն Տատրեանի կողմէ.**

Առ Կայսերական Վարչապետ

ԱՅ 1521 (Մուքքի թիւ՝ նախարարութեան)

111Ը. (Ելքի թիւ՝ դեսպանատան)

Գերման Կայսերական Դեսպանատան

Բերա, 5 Հոկտ. 1915

Բժիշկ Ռուբէն Զիլինկիրեան, որ այստեղի հայ շրջաններու մէջ ծանօթ անձնաւորութիւն մըն է, ուրիշ շատ մը հայերու հետ Ապրիլ 24-ին ձերբակալուեցաւ Անատոլու քստրելու նպատակաւ: Նախապէս որոշուած էր որ ան Անքարայի մօտ՝ Այաշ քստրուի, տեղ մը ուր կը պահուին եւ մասամբ ոստիկանական հսկողութեան տակ կը գտնուին աւելի ծանր կերպով մեղադրուողները: Դեսպանատան միջամտութեան շնորհիւ, ան Զանկըրըի (Անքարա) մէջ արգելակուեցաւ, ուր արգելակեալները կրնան ազատ կերպով ման գալ եւ իրենց արհեստները կիրարկել:

Տիկին տօքթ. Զիլինկիրեան եւ մայրը՝ տիկ. Աբէլ այնուհետեւ աշխատեցան ենթակայի վերադարձը՝ եւ ապա Գերմանիա հաստատուիլը ապահովիլը թուրք կառավարական պաշտօնեաները երկու առաջարկներն ալ մերժեցին, սակայն այն առարկութեամբ որ ինչպէս կը հետեւի խնդրոյ առարկայ պաշտօնեաներու արտայայտութիւններէն - տօքթ. Զիլինկիրեան կը նկատուի իբրեւ մէկը այն մտաւորականներէն, որոնք զանգուածներու վրայ ունեցած ազդեցութենէն կը վախցուի: Տիկ. Աբէլ դեսպանատան մէջ պնդեց, որ ոստիկանական ընդհանուր տնօրէն Պէտրի Պէյ ըսած էր, որ ապահով պայմաններու տակ Գերմանիա նամբորդելու արտօնութիւն կրնար տրուիլ տօքթէօրին: Երբ կայսերական դեսպանատունէն պաշտօնեայ մը Պէտրիի հարցուց սակայն թէ՛ իրա՞ն էր ասիկա, ան բացարձակ կերպով հերքեց այդպիսի արտայայտութիւն մը ունեցած ըլլալը:

Վերջապէս երկու տիկինները փորձ մըն ալ ըրին տօքթ. Զիլինկիրեանի Անքարա մնալու արտօնութիւն ձեռք ձգելու ուղղու-

բեամբ՝ այն պահուն երբ իրմէ Օգոստոս 26-ին, հեռագիր մը ստացան որ կը ծանուցանէր թէ՝ զինքը նոյն օրը Այաշ պիտի փոխադրէին:

Դեսպանատան գրաւոր դիմումին վրայ՝ Ներքին Գործոց նախարարութիւնը հեռագրով հրահանգ տուաւ, որ վերոյիշեալը Չանղըրըի մէջ թողուն եւ եթէ նամբայ հանուած է զինքը հող վերադարձնեն:

Այս հեռագրին ի պատասխան Օգոստոս 30-ին Չանկըրըի կառավարիչը կը ծանուցանէր թէ տ. Չիլինկիրեանը ամսոյն 26-ին Չանղըրէն մեկնած, Գալէհիքի մօտերը ասպատակներու կողմէ յարձակումի ենթարկուած եւ սպաննուած էր եւ թէ 12 ասպատակներէն 4-ը իշխանութիւններու կողմէ ձերբակալուած էին*։ Ասոր վրայ, Կայսերական դեսպանատան ընծայած օգնութեամբ, որուն համար Կայսերական դեսպանատանը ընդհանուր հիւպատոսարանի հետ շփման մէջ մտած էր, տիկին Չիլինկիրեանը, իր մօրը տիկ. Աբէլի եւ երկու զաւակներուն հետ նախորդ ամսու 16-ին առանց թուրք իշխանութիւններէն նեղութիւն կրելու Գերմանիա մեկնեցան:

Դեսպանատան դիմումին վրայ Ներքին Գործոց նախարարութիւնը հրահանգ ուղարկեց ստուգելու համար մեռեալի մօտ գտնուած արժեքաւոր իրերը եւ առարկաները, եւ այրիին վերադարձնելու նպատակաւ ձեռք ձգել:

Երբ տիկ. Աբէլ իր ամուսնոյն դրկած տեղեկութիւններուն մէջ՝ կ'ակնարկէ որ դեսպանատունը «որոշ չափով» որով ըստ իր ըմբռնումին, ոչ գոհացուցիչ կերպով օգնութիւն ընծայած է իրեն եւ դստեր, ան՝ աննկատ կը թողու այն պարագան, դեսպանատունը իր դստեր եւ փեսային համար միայն անպաշտօն սահմանափակումներով կրնար դիմումներ ընել թուրք կառավարութեան մօտ, քանի որ երկուքն ալ թրքահպատակ էին: Այս ուղղութեամբ դեսպանատունը ոչ մէկ բան զանց առած է եւ միևչեւ իրենց մեկնումը, տիկ. Աբէլ եւ իր դստերը, իրենց բոլոր գործառնութեան մէջ թէ խորհուրդով եւ թէ գործով օգնութիւն ստացած են:

Փոխանորդարար՝ Ֆրայնէր Ֆօն ՆոթրԱթ

Պետլին, 27 Հոկտ. 1915

* Լէքսիուսի հրատարակած մասը՝ սկիզբէն մինչեւ աստղանիշ:

Լոգանի կայսերական հիւպատոսին ի գիտութիւն, կը խնդրուի նաեւ, որ հանգստեան կոչուած՝ թոշակաւոր Ֆրանց Արէլին, որ անցեալ ամսոյն 9-ին մեզի դիմած էր եւ ներփակեալը ուղարկած ու ասոր վերադարձուիլը խնդրած էր, տեղեակ պահէք իր ազգականներուն ի նպաստ Պոլսոյ Կայսերական դեսպանատան առած քայլերէն, եւ եթէ հնարաւոր է, արդիւնքը իրեն բերանացի հաղորդէք:

Կայս. Վարչ. Յանձնարարութեամբ՝ ՇՄԻԹ-ՏԱՐԿԻՑ

Յ. Գ. - Յարգելի Պարոն Զիլինկիրեան

Եթէ այս վաւերագիրը իրրեւ գիտական աղբիւր պիտի գործածէք, ու եթէ որեւէ մէկը ուզէ ասոր վաւերականութիւնը ստուգել անձամբ՝ գործածուելի ցուցանիշը հետեւեալն է:

Turkei 183. Band 39. A 31521. von Neurath to (կամ) à Reichskanzler, Oct. 5-1915 (Bonn, Auswartiges Amt. Politisches Archiv).

Լաւագոյն մաղթանքներով՝ Վահագն ՏԱՏՐԵԱՆ

DEUTSCHLAND UND ARMENIEN 1914 - 1918

SAMMLUNG
DIPLOMATISCHER
AKTENSTÜCKE

HERAUSGEGEBEN UND EINGELEITET
VON
Dr. JOHANNES LEPSIUS



DER TEMPEL VERLAG IN POTSDAM
1919

Pera, den 5. Oktober 1915.

Der Dr. med. Roupen Tschilinguirian, eine in den hiesigen armenischen Kreisen bekannte Persönlichkeit, wurde mit vielen anderen Armeniern am 24. April d. J. verhaftet, um nach Anatolien verbannt zu werden. Ursprünglich sollte er nach Ajasch bei Angora verschickt werden, wo die schwerer belasteten Persönlichkeiten untergebracht und zum Teil in Polizeihaft gehalten wurden. Auf diesseitige Verwendung wurde er in Tschangri (Kiangri) interniert, wo sich die Verbannten frei bewegen und ihren Beurfen nachgehen konnten.

Frau Dr. Tschilinguirian¹ und ihre Mutter, Frau Apell, haben dann Schritte unternommen, um für den Genannten die Erlaubnis zur Rückkehr hierher und zur Obersiedelung nach Deutschland zu erwirken. Die türkischen Behörden lehnten indes beides ab, weil sie -wie aus den Äußerungen der betreffenden Beamten hervorging - den Dr. T. für einen jener "Intellektuellen" hielten, deren Einfluß auf die Massen sie fürchteten. Wie Frau Apell huer angab hatte zwar der Polizeipräfekt Bedri Bey. geäußert, daß dem Dr. T. unter genügender Garantie für sein Wohlverhalt die Reise nach Deutschland gestattet werden könnte, doch hat Bedri Bey, als er von einem Beamten der Kaiserlichen Botschaft darbiir befragt wurde, jede dahingehende Äußerung in Abrede gestellt.

Schließlich versuchten noch die beiden Damen für den Dr. T. die Erlaubnis zu erwirken, seinen Aufenthalt in Angora zu nehmen, als hier am 26. August ein Telegramm von ihm einging, daß er denselben Tag nach Ajasch überführt werden sollte. Das Ministerium des Innern gab auf die diesseitigen Schreiben hin sofort telegraphische Anweisung, den Genannten in Tschangri zu belassen bzw. ihn dorthin zurückzubefördern. In Beantwortung dieses Telegramms meldete dann der Gouverneur von Tschangri unter dem 30. August, daß der Dr. T., nachdem er am 26. desselben Monats Tschangri verlassen hatte, in der Nähe von Kaledjik von Wege-
lagerern angefallen und umgebracht worden war, sowie daß 4 von der aus 12 Individuen bestehenden Bande durch die Behörden festgenommen waren.

In Vertretung
Freiherr von Neurath.

An den Herrn Reichskanzler.

¹ Eine Deutsche. M.

Ռուբեն Սեւակ
Եւ «Փրցուելիք Ուղեղներ»
Զ. մաս

Արեւմտահայը շատ մը արժանիքներ ունի. բայց ան, այս արժանիքները ընդհանրապէս իրեն անձնական շահերուն համար կը գործածէ:

Այնպէս որ, սա խօսքը՝ քիչ բացառութիւններով, դժբախտաբար, իրականութիւն է:

Մէկ հայ շատ բան կ'արժէ.

Երկու հայ ոչինչ կ'արժէ:

Հայը կը վախճայ իրականութիւններէ. իր հանգիստը խոռովել չուզէր:

Հայը կարճատես է, իր անձնական շահերը եւ ազգային շահերը իրար կը խառնէ: Հոգին՝ շատ անուշ է, նոյնիսկ թող աշխարհը փլի, բայց միայն ինքը ապրի:

Եղեռնէն ազատած սերունդը Սփիւռքի տարածքին վրայ կրցաւ ապրիլ, առանց դոյզն իսկ անհանգիստ ըլլալու, առանց ըմբոստանալու իրենց ազգակիցներուն դէմ կատարած ցեղասպանութեան:

Ապրեցաւ միայն գոյութիւնը պահելու բնագոյով, ինքզինքը ազատելու, վերապրելու համար, ցիրուցան եղած ոչխարներու պէս, հոս հոն քշուեցաւ առանց հովիւի:

Բայց բուն յանցաւորները հովիւներն են, որոնք չժողւեցին իրենց ոչխարները: Այդ հովիւները՝ հայ կրօնական եւ համայնքային առաջնորդներն են, եւ մանաւանդ հայ գրողները: Անոնք չհասկացան իրենց ազգային պատասխանատուութիւնը:

Հայ գրողները քիչ բացառութիւններով, Ռուբեն Սեւակին ըսածին պէս, **«գրիչնին կը քաթխեն հայ ազգին արիւնին մէջ»** եւ հայ տառերով բաներ կը գրեն, որոնք հայկականութեան հետ բնաւ կապ չունին, եւ կը ծառայեն հայուն, աւելի շուտ օտարանալուն եւ կորսուելուն, Սփիւռքը ըսուած խառնարանին մէջ:

Բացէք, տեսէք Սփիւռքի հայկական թերթերը, սկսելով փարիզա-

հայ մամուլէն, շատերուն մէջ կը փայլին Պոլսոյ թերթի մը խմբագրին, արտատպուած յօդուածները:

Ինչ կը շահի Սփիւռքի հայ ժողովուրդը պոլսեցի այս գերի հայուն **«օդէն, ջուրէն»** նիւթերով համեմուած գրութիւններէն:

Միտքերը ամլացնելէ գատ՝ ի՞նչի կը ծառայեն այս գրութիւնները, երբ Սփիւռքահայութեան բոլոր խնդիրները անլոյծ կեցած են:

Այս խմբագիրն էր, որ 1980-ին Պոլսոյ մէջ անդամակցեցաւ Պատրիարքին շուրջ կազմուած խորհրդակցական մարմնին, եւ այս մարմին էր, որ Պատրիարքին պարտադրեց յայտարարել, թէ **«Թուրքիոյ մէջ ապրող հայերը շատ ապահով եւ հանգիստ պայմաններու մէջ կ'ապրին»**:

Այս յայտարարութեան հետեւանքով այդ բուականէն ետք, Արեւմտեան պետութիւնները Թուրքիայէն եկող հայերուն **«ապաստանեալ»**-ի **«րեֆիւժիէ»**-ի հանգամանքը չընդունեցին: Եւ ետքը 1983-ին այս պոլսեցի խմբագիրը Լոզան եկավ՝ հետեւելու Հայկական համագումարին:

Ինքը ճանչցող հայէն խնդրեց, որ գինքը տեսնելը մէկու չըսէ: Որո՞ւ չըսէ. թուրքերո՞ւն: Թուրք լրագրողները հոն էին եւ գինքը լաւ կը ճանչնային: Ուրեմն որո՞ւ չըսէր: Հայերո՞ւն չըսէր:

Հասկցուեցաւ: Ինքը թուրքերուն կողմէ զրկուած էր, հայերէն լեզուով խօսակցութիւնները իրենց տեղեկացնելու համար: Եւ այս թուրքին ծառայ պոլսեցի հայուն գրութիւնները պիտի ողողեն Սփիւռքի հայ թերթերը...

Հայ մտաւորականները եւ մամլոյ վարիչները հայրենասիրութեան **«սյրութեն»**-ը սորվելնին պետք է:

Պոլսոյ Պատրիարք Ներսէս Վարժապետեանը կը փառաբանեն, որ թուրքերուն ծառան էր: Պոլսահայ խմբագրին գրութիւնները կ'արտատպեն, որ թուրքին ծառան է: Այլ կը բաւէ հայ ազգին քաշած պոլսեցու հայու մտայնութենէն: Պոլսեցու հայու մտայնութիւնը պատճառ եղաւ, որ կորսնցնենք Արեւմտեան Հայաստանը եւ միեւնոյն պոլսեցի հայու մտայնութիւնը իր աւերը կը գործէ Սփիւռքի մէջ:

Սփիւռքը Պոլիս չէ, որ թուրքերէն վախենալով լռէ. եւ Սփիւռքը իր պատմական պարտականութիւնը ունի:

Սփիւռքը մէջտեղ եկաւ Եղեռնով: Ամէն հայ ընտանիք իր հարագատներուն, թուրքերուն կողմէ մեռցուելուն ցաւը ունի իր սրտին

մէջ: Եւ այս ցաւը հայերը իրար միացնող ամէնէն մեծ ուժն է հայ մնալու համար:

Եւ այս ցաւով տառապող ամէն հայ, Սփիւռքի մէջ իր տեսակէտը ունի՝ անիրաւուած Հայ Դատին լուծման համար:

Ոմանք ամէն օր անէծք կարդալով թուրքին, կը հաւատան, որ Աստուած անոնց պատիժը պիտի տայ:

Ոմանք Հայ եկեղեցիին նամբին փրկութեան կը հաւատան, որ մեզ 17 դարեր հայ պահեց:

Ոմանց համար ալ հայ մշակոյթը, հայ լեզուն, հայ դպրոցը միակ ազատարար միջոցներն են փրկութեան համար:

Եւ երիտասարդ սերունդը այս բոլորը անբաւարար կը համարէ եւ միակ փրկութեան նամբան կը նկատէ բոնի ուժը, զինեալ պայքարը:

Բնական է, ամէն տեսակէտ իր իրականութեան բաժինը ունի: Տուն մը շինելու համար ամէն տեսակ նախանիւթ պետք է: Օրինակ՝ երկաթ, կրաղիւս, ատաղձ:

Բայց այս նիւթերուն մէջ ամէնէն կարեւոր բանը մոռցուած է:

Հողը, որուն վրայ տուն պիտի կառուցուի:

Փառք, հազար փառք, որ հազար տարիներ ետք մեր հայրենի ազատ հողը ունինք, Հայաստան մը, պետութիւն մը ունինք: Եւ մենք մեր բոլոր խնդիրները միայն ու միայն Հայրենիքի շուրջ միանալով կրնանք լուծել:

Հրեաներու, Իսրայէլի համար ունեցած միասնական ոգին, օրինակ ըլլալու է մեզի: Անոնք սիրենք կամ չսիրենք, իրենցմէ սորվելիք շատ բաներ ունինք:

Դարերով հրեայ կրօնապետները իրենց աղօթատեղներուն բեմէն **«Գալ տարի Սրուսաղեմի մէջ»**-ի իտեալով հասցուցին սերունդները. այսինքն հայրենի հողի մը իտեալով ապրեցան:

19-րդ դարի վերջերը, Թեոտոր Հերցլ յաջողեցաւ բոլոր հրեական կազմակերպութիւնները նպատակի մը շուրջ միացնել: Անոնք իրենց դրամի, կամքի, խելքի ու միութեան ուժովը 2000 տարի ետք իրենց իտեալը իրականացուցին, հայրենիք մը ունեցան, Իսրայէլը կազմեցին:

Եւ այսօր Իսրայէլի մէջ 3 միլիոն հրեայ 100 միլիոն արապի դեմ կը դնէ, իրենց գէնքի ուժովը: Բայց ամէնէն աւելի աշխարհի մէջ տարածուած հրեաներու ուժովը, Սփիւռքի Հրեայ միութեան ուժովը:

Աշխարհի տարածքին վրայ գտունող ամեն մեկ հրեայ իր հայրենիքին համար մեյվեկ զինուոր է, եւ ամեն տեսակ զոհողութիւն եւ օգնութիւն կ'ընէ: Սփիւռքի Հրեայ կազմակերպութիւնները, կրօնականներու առաջնորդութեամբ, միացած են կեդրոնական ուժի մը մէջ, որոնց նշանաբանն է. **«Ամեն բան Իսրայէլի հայրենիքին համար»:**

Մենք ալ մեր հայ Սփիւռքը ունինք: Բայց մենք ի՞նչ կ'ընենք Սփիւռքի մէջ մեր հայրենիքին համար, քանի մը յարգելի անձնաւորութիւններէն, եւ քանի մը հայրենասիրական կազմակերպութիւններէն զատ: Սփիւռքը մեծ ուժն է հայուն. եթէ միանանք նպատակի շուրջ մը եւ գիտնանք զայն գործածել Հայ Դատին լուծման համար:

Մեր առաւելութիւնը այն է հրեաներէն, որ արդէն Հայաստան մը ունինք, մաս կը կազմէ միութեան մը, որ աշխարհի ամենագօր պետութիւններէն մեկն է, եւ այս պետութեան պաշտպանութիւնը եւ հովանաւորութիւնը կը վայելէ:

Բայց ի փոխարեն, հայ Սփիւռքը, հրեաներուն Սփիւռքին պէս միացած չէ:

Այսօր գնչուները անգամ միացած են կեդրոնական կազմակերպութեան շուրջ, բայց ոչ հայերը: Ինչո՞ւ: Որովհետեւ Արեւմտեան պետութիւնները չեն ուզեր, որ հայերը միանան, եւ ամեն բան կ'ընեն իրենց գործակալներուն միջոցաւ, այս միութեան հաստատելուն արգելք ըլլալու համար:

Որովհետեւ հայերու միութիւնը՝ Հայ Դատին յաջողութիւնը ըսել է: Եւ այս Արեւմտեան պետութիւններուն զինակիցը եւ բարեկամը եղող բուրքերուն քայքայման պատճառ կ'ըլլայ:

Գրեթէ 170 տարիէ, Արեւմտեան պետութիւնները իրենց քաղաքականութեան հիմնակետը ըրին՝ **«բուրքերը պաշտպանել ոռւսերուն դէմ»:**

Եւրոպացի պետութիւններն էին, որ 19-րդ դարուն սկիզբը, Օսմանեան պետութեան փլուզման արգելք ըլլալու համար, արդիականացնել սկսան օսմանեան բանակը. ենիչերներու տեղ Եւրոպական օրինական **«նիզամը նէտիդ»** ըսուած նոր զինուորական կազմակերպութիւնը ստեղծեցին:

Եւրոպացի պետութիւններն էին, որ 1850-ին օսմանցիներուն հետ միասին յարձակեցան Խրիմի վրայ՝ յուսալով խորտակել Ռուսաստանը:

Եւրոպացի պետութիւններն էին, որ Կիպրոսի կղզիին փոխարէն, ծախեցին Հայկական Դատը, եւ արգելք եղան ռուսերուն Արեւմտեան Հայաստանը ազատելուն:

Եւրոպացի պետութիւններէն մէկը կամ միւսըն էր, որ տեւական ուժ տուին թուրքերուն, ռուսերուն դէմ:

1919-ին Անաթօլիոյ մէջ ստեղծեցին **«Մուսթաֆա Քեմալի»** շարժումը՝ մէկ կողմէ հայերուն բարեկամը երեւալով, միւս կողմէն կոնակէն զարկին հայերուն եւ Հայկական Դատը թաղեցին 1923-ին Լոզանի մէջ:

1945-ին, Հէնրի Թրումանն էր, որ արգելք եղավ Կարսի եւ Արտահանի՝ թուրքերէն ետ առնելուն. **«Մեր սահմանները Կարսէն կ'սկսի»** ըսողը՝ Ամերիկայի նախագահ Թրումանն էր:

Եւ այսօր Արարատ լեռան վրայ կուտակուած եւ դէպի Հայաստանի հողերը ուղղուած աթոմական հրթիռները թուրքերու զինակից Արեւմտեան պետութիւններուն կողմէ գետեղուած են:

Արեւմտեան պետութիւնները Հայաստան մը հիմնելը երբեք չեն մտածած: Խօսքեր, խոստումներ շատ տուած են մեզի իրենց կողմը հակելու, մեզ օրօրելու, մեզ թուրքին դէմ շահագործելու համար: Մեզի **«խօսք»**-եր տուին, եւ թուրքին **«գէնք»**: Եւ միշտ խոստումներէն խաբուող հայեր եւ հայ կազմակերպութիւնները գտած են իրենց իբր գործակից, դժբախտաբար:

Մեր պատմութեան վերջին շրջաններուն, այս հայ կազմակերպութիւնները գործակցեցան թուրքին հետ, գործակցեցան մեր թշնամիին բարեկամներուն հետ, եւ մեր հայրենիքին մեծ մասը կորսնցնելու պատճառ եղան:

Այս մեծ աղէտը անոնց դաս չէ եղած տակաւին: Եւ դեռ այսօր այս կազմակերպութիւնները, Արեւմտեան պետութիւններուն ձեռքը գործիք ըլլալով, ազգասիրութեան կեղծ դիմակին տակ, կը շարունակեն Հայաստանին եւ անոր կառավարութեան դէմ իրենց թոյնը թափել:

Սփիւռքի հրեաներուն մէջ, հրեայ տեսա՞ծ էք, որ Իսրայէլի դէմ խօսի և անոր դէմ պայքարի: Վերջին շրջաններուն, Լիբանանի մէջ հրեաներուն կատարած անմարդկային արարքներու դէմ, Սփիւռքի մէջ մէկ հատ հրեայ բողոքի ձայն հանե՞ց: Ընդհակառակը, այս անիրաւութեան չհանդուրժող օտարներուն ձայնն ալ խեղդեց իր ուժովը:

Այս հայ կազմակերպութիւնները միութեան խօսքեր կ'ընեն: Բայց իրենց համար «միութիւն», ըսելը, ամէն հայուն, կուրօրէն իրենց հպատակիլը ըսել է: Այսինքն՝ միանալ մայր հայրենիքին քշնամիներուն հետ:

Այս կազմակերպութիւններն են պատճառը, որ մինչեւ այսօր Սփիւռքի մէջ միութիւն մը չկրցանք ստեղծել: Եվ հայ Սփիւռքը յաւիտենական չէ: Այս օրուան քաղաքակրթութեան պայմանները, փոքրամասնութիւնները շատ շուտ կը մաշեցնեն եւ կը ձուլեն:

Միջին Արեւելքի հայ գաղութներուն քայքայումով գօրացած, Արեւմտեան աշխարհի հայ գաղութները մեզ բող չխաբեն:

Այս մեծ խառնարաններուն մէջ հայերը, Միջին Արեւելքի երկիրներէն շատ աւելի շուտ ձուլման վտանգին ենթակայ են: Ժամանակը ի նպաստ Սփիւռքի հայութեան չաշխատիր դժբախտաբար:

Իտեալ մը պետք է Սփիւռքի հայութեան: Իրապաշտ իտեալ մը, որ իրականացնելու կարելութիւն ունենայ:

Իտեալ մը առանց դրախտային սուտ խոստումներու: Այս իտեալը **«ամէն բան Մայր Հայաստանի համար»**-ի իտեալն է:

Այս իտեալը ընդունող բոլոր հայ կազմակերպութիւններէ բաղկացած եւ Հայաստանեաց Առաքելական եկեղեցիին առաջնորդութեամբ, Սփիւռքի չափով կեդրոնական միութիւն մը ստեղծել պետք է:

Հաւատացեալ ըլլանք կամ ոչ, կարոյիք կամ բողոքական, Հայաստանեաց Առաքելական եկեղեցին, կեդրոնը ունենալով էջմիածինը, բոլորիս համար Սփիւռքի մէջ հայութիւնը, Հայաստանը եւ մայր հայրենիքը կը ներկայացնէ:

Հայկական եկեղեցին, Սփիւռքի տարածքին վրայ, բոլոր հայկական համայնքներուն մէջ, ունի իր թաղական խորհուրդները, որոնք ժողովուրդին կողմէ ընտրուած են:

Ուրեմն մենք ունինք արդէն Սփիւռքի Հայկական միութեան ամենակարեւոր կորիզը:

Ամէն երկրի մէջ, այս թաղական խորհուրդներու պատգամաւորներէ կազմուած կեդրոնական խորհուրդ մը հիմնելէ վերջ, Սփիւռքի բոլոր երկրներու կեդրոնական խորհուրդներու համագումարով **«Սփիւռքահայ կեդրոնական վարչութիւն»** հիմնել կարելի է:

Այս է ամենակարն նամբան Սփիւռքի Հայկական միութեան:

Հայրենիքի դեմ եղողները, այս միութեան մէջ չեն մտներ. ինքզինքնին չխաբենք:

Անոնք մինչեւ այսօր հայրենիքին դեմ աշխատեցան. Սփիւռքը երկուքի բաժնեցին, 1700 տարուան Հայ եկեղեցին երկուքի բաժնեցին, եւ ասկէ ետքն ալ Արեւմտեան պետութիւններուն շահերուն պահանջքով, այս նամբայէն երբալու պիտի շարունակեն:

Անոնց նպատակը՝ երկու Հայաստան, երկու եկեղեցի է:

Մեր հաւատքը՝ մէկ Հայաստան մը կայ, այն ալ՝ մեր ապագայի յոյսերով լեցուն, այսօրուան Հայաստանն է: Մէկ եկեղեցի մը ունինք, այն ալ էջմիածինն է: «Ո՛չ» ըսէք կեղծ ազգասէրներուն, եւ իրապաշտ հայրենասիրութեան դրօշակին տակ միացէք: Մայր հայրենիքի հետ ձեռք ձեռքի տալով միայն մենք պիտի կրնանք շահիլ մեր անիրաւուած Դատը:

Հայաստան եւ Սփիւռք, փոխադարձաբար իրար գօրաւիզ ըլլալով պիտի կրնանք լուծել մեր բոլոր խնդիրները: Մեր ապրած երկիրներուն օրէնքներուն կարելիութեան սահմաններուն մէջ մնալով, ոչ մէկը արգելք չի կրնար ըլլալ, որ մենք, մեր պարտականութիւնը կատարենք մայր հայրենիքին հանդէպ:

Այս իտեալին իրականագործման պարտականութիւնը՝ հայրենասէր մտաւորականներու, գրողներու եւ կրօնական քարոզիչներու կ'իյնայ:

Վար առեք դիմակները կեղծ ազգասէր տօնքիշոտներու, որ մեզի 100 տարի երազներով օրօրեցին, եւ դեռ կը շարունակեն թունաւորել հայ պատանիներու մատղաշ ուղեղները, կեղծ ազգասիրական լոգունգներով, նման այն աղանդներուն, որոնք իրենց հաւատացողներուն մտային կարողութիւնը կը մեռցնեն:

Հայ մամուլի վարիչներ, գրողներ, մտաւորականներ եւ մանաւանդ կրօնական քարոզիչներ, դուք ուղեղներն էք հայ ժողովուրդին: Յուցուցէք խելքի, տրամաբանութեան նամբան հայ Սփիւռքին:

Ձեռքերներդ խիղներնուդ վրայ դրէք, եւ ոտքերնիդ՝ հողին վրայ, հայրենի հողին վրայ:

Միայն մայր հայրենիքի հողն է իրականը եւ յաւիտեանը:

Դուք պիտի ըլլաք վաղուան հայութեան ստեղծիչը: Ռուբէն Սեւակին ըսածին պէս՝

«Մեզի առողջ եւ երիտասարդ մտաւորականներ պէտք են: Մեզի

կարմիր ու մսուտ շրթներով ուժեղ գրականութիւն մը պէտք է:
Դուք ցեղին ուղեղն եք: Բայց երբ այս ուղեղը ուրիշ կերպ չի կրնար
խորճիլ, քան յուսահատեցնելով մեր կենսունակութիւնը՝ Մենք
պիտի փրցնենք ու նետենք այդ ուղեղը»:

15 Ապրիլ 1985

Յովհաննէս Չիլինկիրեան




Պոլիս 1905-ի Պերպերեան վարժարանի շրջանաւարտներ:
Առաջին կարգ, աջէն երրորդը՝ Ռուբեն Սեւակն է:

ՊՈԼՍՈՅ ՊԷՐՊԷՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ
1905-Ի ՇՐՋԱՆԱԻԱՐՏՆԵՐՈՒ ՑԱՆԿԸ
1 9 0 5


| | | |
|----------------------|------------|-----------------------------------|
| Ռուրեն Զիլինկիրեան | Լօզան | բժշկական ուսանող |
| Թորոս Սոֆեան | Կեյվե | շերմարոյժ. առեւտրական |
| Աշոտ Իսիւնեան | Կ. Պօլիս | առեւտրական |
| Մինաս Միքայելեան | Ֆիլիպե | առեւտրական |
| Եզնիկ Քաշունի | Կ. Պօլիս | ուսանող իրաւագիտութեան |
| Շնորհք Տէյիրմէնեան | Կեյվե | վանառական |
| Արամ Զարֆեան | Կ. Պօլիս | առեւտրական |
| Լեւոն Եավրուեան | Կ. Պօլիս | վանառական |
| Պետրոս Մալխասեան | Կ. Պօլիս | առեւտրական |
| Յարութիւն Հմայեան | Էսկի-Շեհիր | ուսուցիչ |
| Գեղամ Գավաֆեան | Փարիզ | վկայեալ Բօնգ'է Շօսէ վարժարանէն |
| Մատարիա Տ. Մարկոսեան | Զենկիլեր | յանձնակատար-վանառական |
| Մանուկ Պասմանեան | Կ. Պօլիս | առեւտրական |
| Հրանտ Փանոսեան | զօնկուլտաք | վանառական |
| Յակոբ Յակոբեան | Կ. Պօլիս | առեւտրական |
| Յակոբ Զպուքեան | Կ. Պօլիս | |



Ռուբեն Սեւակ 1905-ին.
Պերպերեան վարժարանի շրջանաւարտ-
ներու խմբանկարէն առնուած



Պոլիս 1904-ին, Պերպերեան վարժարանի
աշակերտ Ռուբեն Սեւակի ձեռամբ
գծագրուած Վիքթոր Հիւկոյի դիմանկարը



Պոլիս 1904-ին., Պերպերեան վարժարանի
աշակերտ Ռուբեն Սեւակի ձեռամբ
գծագրուած Պերճովենի դիմանկարը



**Ռուբեն Սեւակին 15 Յուլիս 1915-ին,
Չանկըրըէն դրկած քարտին բրբերէնէ թարգմանութիւնը:**

**Պոլիս Բանկալթի Նալպանտ փողոց բնակող
բժիշկ Ջիլինկիրեանի կնոջ. դրկողը՝ բժիշկ Ջիլինկիրեան
-Չանկըրը-15.7.1331-(28.7.1915)**

Սիրելի կինս

Երէկ ապահովագրուած նամակնիդ առի: Այսօր ալ Բեթիի միջոցաւ 11 Յուլիսին, ձեր դրկած երեք ոսկին ալ առի: (...)

Կալաթայի վարժարանէն (Կեդրոնական) ամառուան արձակուրդի երկու ամսուան

ամսաթոշակս եղող ինը ոսկին գանձելով ինծի դրկեցէք: (...) Այստեղ օգերը շատ տաք են: Առատուունէ մինչեւ գիշեր հիււանդներուն ետեւէն կը վազեմ: Առողջութեան մասին բնաւ մի մտահոգուիք. հանգիստ եմ: Չեզի ամէն շաբաթ 3 քարտ կը գրեմ: Դուք ալ գոնէ շաբաթը երկու նամակ դրկեցէք: Վարուժանը ընտանիքէն նամակ չստանար եղեր. ինծի տեղացուցէք:

سرلیلی زوجه ام، سرلیلی
 دو سه نفره که من و دو تن دیگریم
 اورا برهنه ده کوزه بیه اولدی که او چو لایه دروازه قوت
 بیده که لایه این...
 اورا لایه آمادیم...
 در...
 آملر...
 سه نفره که من و دو تن دیگریم
 سرلیلی...
 دو سه نفره که من و دو تن دیگریم
 اورا برهنه ده کوزه بیه اولدی که او چو لایه دروازه قوت
 بیده که لایه این...
 اورا لایه آمادیم...
 در...
 آملر...
 سه نفره که من و دو تن دیگریم
 سرلیلی...
 دو سه نفره که من و دو تن دیگریم
 اورا برهنه ده کوزه بیه اولدی که او چو لایه دروازه قوت
 بیده که لایه این...
 اورا لایه آمادیم...
 در...
 آملر...

Ամուսինդ՝ Ռուբեն

*Ռուբեն Սեւակին մեռցուելէ օր մը առաջ ղրկած
վերջին հեռագիրը. բրքերէնէ թարգմանութիւնը*

* * *

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր

*Թիւ՝ 1781
Թուական՝ 12 Օգոստոս 1331
(25 Օգոստոս 1915)
Ժամը՝ 8,25 - առտու
Չանկըրը.*

Պոլիս Բանկալթի Նալպանտ փողոցը բնակող՝ տիկին Զիլինկի-
րեանին:

Վարուժանին հետ Այաշ պիտի երթանք. նամակնիդ հոն
ղրկեցէք:

Ռուբեն



Mon très cher Roy, je n'ai de nouveau une
 semaine sans nouvelle de toi. J'espère
 que tu te portes bien cependant. Si tu
 reste un de moi encore & moi, je se-
 rai portuaire tant je suis fatigué
 leon est très bien; il peut être sans
 sans bas, parle le turc & l'allemand
 très bien maintenant et il est si fort
 qu'il batte Chayirans d'Alp. Elle est
 est très entêté mais très folle. Indes
 est les yeux vides. On s'est amuser
 mes manuscrits. Tu es écrit à l'été
regard? Première & dernière...
 tous l'honneur des tentes vides! -
 J'écris de très belles lettres et je re-
 grets tant que tu te puisse pro-
 duire. Les enfants sont toujours
 au jardin. Ça se comme si comme
 cela. J'espère de te voir une fois
 nous faire cette grâce! Et s'il n'est
 toujours, tout ainsi. Ta Yours

Տիկին Սեւակին քարտին ֆրանսերէնէ բարգմանութիւնը:

* * *

21.8.1915

**Տիկին Սեւակին Չանկըրը իր ամուսնին դրկած վերջին քարտը
ես եկած է սա վերտառութեամբ. «Մեկնած է առանց հասցէ ձգե-
լու», (Parti sans laisser d'adresse).**

Շատ սիրելի Ռուբէնս,

Ահա կրկին շաբաթ մը եւս քեզմէ առանց լուրի: Յուսամ թէ հանգիստ ես սակայն: Եթէ երկու ամիս եւս հեռու մնաս ինձմէ, բոքախտ պիտի ըլլամ, այնքան որ յոգնած եմ: Լեւոնը շատ լաւ է, սանտալներ կը հագնի առանց գուլպայի, թուրքերէնը եւ գերմաներէնը շատ լաւ կը խօսի հիմա եւ այնքան ուժեղ է, որ Շամիրամը կը շալկէ արդէն: Այս վերջինը շատ յամառ է բայց շատ գեղեցիկ: Իրենց երկուքն ալ քու աղւոր աչքերդ ունին: Մավրօբուլոսին հետ կարգադրեցինք: Դուն գրեցի՞ր Կեդրոնականին: Մայրս կը համբուրէ քեզ. մենք բոլորս ջերմ համբոյրներ կը դրկենք քեզի:

Շատ գեղեցիկ բանաստեղծութիւններ կը գրեմ եւ այնքան կը ցաւիմ, որ չես կրնար բարգմանել:

Պզտիկները միշտ պարտէզն են: Կ'ապրինք այսպէս ու այնպէս: Կը յուսամ քեզ վերստին տեսնել. թող Աստուած այդ շնորհը ընէ՛ մեզի: Միշտ պիտի սիրեմ քեզ, Աստուած ալ:

Քու ժաննդ



*1919-ին Պոլիս, Ռուբեն Մեւակի յիշատակին կատարուած սգանանդեսին
բաշխուած Յիշատակ-նկարը*



*Տիկին Սևակ և երկու որբերը՝ Լևոն և Շամիրամ:
1925-ին Փարիզ:*



1925-ին Պոլիս
Ռուբեն Սեւակի մայրը՝ Արմաւենի Զիլինկիրեան
(1854-1938)

Իր երեսին վրայ կը նշմարուի հոգիին խոր տառապանքը, կարծեք թէ իր թողան մէջ տեսնել կ'ուզէ «ՎՐԷԺԻՆ ՍԵՐՄՆԱՑԱՆԸ»:

ՎՐԷՃԻՆ ՍԵՐՄՆԱՑԱՆԸ

Քե՛զ, ցասումի՛ վայրագ հեղեղ գահավեժ,
Արդարութեան փայփայելի մո՛ւթ հըրէշ,
Խաւարներու ահե՛ղ ծընունդըդ, վը՛րէժ,
Ողջո՛յն, տաղե՛րըս քեզի՛...:

Մոխրի՛ն կուտամ սրտիս վերքերն ախտագին...:
Ամենո՛ւն վերքն, անսահմա՛ն վերքը ազգին,
Արդարութեան ծարաւը, մա՛հն հաւատքին,
Երգեն տաղե՛րըս քեզի՛...:

Սանձերնին լա՛յն արիվարներ ասպագէն,
Ալիք ալիք թօթուելով սեզ բաշն ուսէն,
Թող հայրենի աշխարհիս կուրծքն ակօսե՛ն,
Սուրա՛ն տաղե՛րըս քեզի՛...:

Ու ես կուգա՛մ, - մո՛ւթ շանթերու սերմնացան -
Այդ ակօսէն, ուր արիւններ լնացա՛ն,
Գիշերներով, շար հովիտով, ցիրուցա՛ն,
Ցանել՝ տաղե՛րըս քեզի՛...:

Բաբէ՛, եթե այս բազուկս կարեվե՛ր
Ձը սորվեցաւ զարնել ... գոնէ անվեհեր
Ցանքես մահու առաքեալնե՛ր, հսկաներ
Կը ծնին՝ տաղե՛րըս քեզի՛...:

ՋԱՐԴԻ ԽԵՆԹԸ

- «Վարդե՛րը մեռան,
Վարդե՛րը մեռան
Իրենց բիւր-բիւրան,
Ցօղիկիին վըրան
Վարդե՛րը մեռան,
Վարդե՛րը մեռան:

«Արիւնոտ, մանրիկ,
Ոտներըս բոսիկ
Դիակներու վրան
Դողդո՛ջ կ'երերան:
Վարդե՛րը մեռան,
Վարդե՛րը մեռան:

«Գրա ինձ, Աստուա՛ծ,
Մագերըս ցրուա՛ծ
Կերբամ տարածամ,
Կերբամ ու կու լամ.
«Ո՛ւր է իմ վարդը
«Ո՛ւր է իմ վարդը»:

«Կուգե՛ի գլխուն
Տակ դնել անհո՛ւն
Գեհենը կուրծքիս:
Թող այսպէս հոգիս,
Մենե՛կ՛ր գուրգուրանքո՛վ,
Իր դիակիին քո՛ վ...»:

ՀԱՅՈՒ ՈՐՐԻԿ

Ա՛յ հայու որբիկ, ա՛յ անտեր որբիկ,
Մանրի՛կ, արիւնո՛տ ոտքերըդ բոսիկ,
Ո՞ւր կը քաշկոտես այսպէս մոլորուն...:
- Չա՛ր քամիներուն...:

Ա՛յ որբիկ, բոցեր գիւղե՛րը հասան,
Անտառներու մէջ մայրերնիդ կ'որսան:
Անպաշտա՛ն ու մերկ, ո՞ւր այսպէս որբիկ նան,
- Մո՞ւթն ինձ պատմունան...:

Քեզ համար մարդերը գո՛ւթ, հա՛ց չունին,
Ա՛յ որբիկ, շի՛ւղ. իսկ չկայ թռչունին.
Ծերեր սովահար կ'իյնան ժամե ժամ...
- Արիւն կ'որոնամ...:

Հայրըդ պատռտուա՛ծ նետե՛ր են սարին.
Եղնիկներու պէս քոյրերըդ՝ տարի՛ն.
Աստուա՛ծդ իսկ մատրան մէջն է խողխողուած...
- Վըրէ՛ ժդ ինձ Աստուած...:

Դե՛հ, գնա՛ մեծցիր ահեղ որբն Հայուն.
Սընի՛ր արիւնով, ու փսխէ արիւն
Մարդկութեան նակտին, ու սարսափ ու հուր...
- Այդ՝ պարտս է տըխուր...

ՎԵՐՋԻՆ ՕՐՕՐ

Օրօ՛ր, օրօ՛ր...: Օրօ՛ր ըսեմ քնանաս,
Վիրաւոր Հօ՛րըդ նիչերն ա՛լ չ'իմանաս:
Ծիծէս ծըծա ծըդ թոյն է, կաթ չի գիտնաս...
Օրօ՛ր ըսեմ քնանաս:

Արի՛ւն-հեղեղ հորդեց այս սուրբ ձորերէ,
Բայց չի փախի՛ս, փարէ՛ երկրիդ, գայն սիրէ՛,
Հողիդ վըրայ գերի մի՛ ըլլար, այլ տիրէ՛...:
Օրօ՛ր ըսեմ քնանաս:

Հօ՛րըդ վըրայ երե անշո՛ւնչ չի նկայ ես,
Ջի ուխտե՛ցի Հըռոմի է՛գ գայլին պէս,
Նոր Ռոմուլոս մը դիեցնել ստինքէս...:
Օրօ՛ր ըսեմ քնանաս:

Բազուկներու՝ պարա՛ն, ոտքիս ալ՝ կացի՛ն,
Ստինքիս գո՛յգ պտուկներն, ա՛ն կտրեցին:
Վերքէս՝ արիւնըս ծծէ, որդեակ միածին...:
Օրօ՛ր ըսեմ քնանաս:

Անա կ'իյնամ...: Հայաստանը մա՛յր քեզի:
Կտակ կուտամ այս կոտորած Սուրն երկասյրի՛
Ուր հայրիկիդ դեռ տաք արիւնը կ'այրի...:
Օրօ՛ր ըսեմ քնանաս:

ՀԱՅԱՍՏԱՆ

Ո՞վ կուլայ այսպէս խշտեակիս շեմքին.
- Քո՛յր, դարիպն է, բա՛ց...

Կմա՞ իսք մը կ'անցնի դուրսէն լալագին.
- Սովն է, դուռդ բա՛ց...

Տապա՞ ղն է ջախջախ դրանըս կրծքին.
- Ջարդն է, դո՛ւռդ բաց...

ԻՆՉՊԷՍ ԵՐԲԵՄՆ

Քերթո՛ղ, պատմե՛ մեզ հայրենի յուշքերեդ.
Երգե՛ մեզ հին օրերու երգ մը անհետ,-
Թափառական բրուպատուրի երգ մը զո՛վ,
Արբշիռ ու զով մեր Գողթանի ողկոյզով:

Մենելի չեմ երգ մը հանե թորերեդ.
Հին, կոսպաշտ ա՛յն երգերեն որոնց հետ՝
Մեր ասպագէն քաջերն արոյր թափօրով,
Սաղաւարտին շողացնելով, ջաներո՛վ:

Արքայական հանդեսներու, վայրա՛գ, վե՛ս՝
Կը պարեին, աստուածներու պարի՛ն պես...
Երգե մեզի հին օրերու հի՛ն յուշեր:

Մենք դարաւոր մեր մահացումն այս գիշեր
Պիտի պարենք, եղեռնօրե՛ն, չե՛ն, խելա՛ն...
- Քերթողը, ծե՛ր, չը խօսեցաւ: Ան կուլա՛ր...

ՋԱՆԳԱԿՆԵՐ, ՋԱՆԳԱԿՆԵՐ

Ջանգակնե՛ր, բարի՛, բարի՛ զանգակներ,
Ի՞նչ բան կասեցուց ձեր գուժկան լեզուն,
Խօսք ելլել կ'ուզէ արիւնը վազուն...
Կը լոն՛ք, բարի՛, բարի՛ զանգակներ:

Արդեօք ձեր միստիք հագագն արոյրե,
Ուր կեղե՛ւ կապեց աղօթքի փոշին,
Եւ ուր կ'երագե՛ր խունկի գոլորշին,
Յեղակարծ ցաւէն՝ անգօ՛ր, կը լոնե՞:

Ո՛չ: Ձեր դարաւոր հոգին պղնձի
- Որ շատ, շատ յանախ տեսեր է Քարին
Յաղբըւած Չարէն - այժմ իր բարբառին
Ու իր Աստուծոյն վրայ կը կասկածի...

Արդ, ո՛ւր էք չքնադ խոստումներ խաչին,
Եղբայրութեան զո՛ւր բարբառներ, ո՛ւր եք:
Կըրակ կը փսխէ հողն ամենուրեք...
Գետերն արիւնո՛վ, դիակո՛վ կ'ուռչին...

Ու կ'իյնան այն որ կը ծնկէ վախով.
Ջիթուրն աւելի արդար է Խաչէն.
Ջի կեանքն անոնց է միայն որ քաջ են.
Անո՛նց որ կ'ապրին ուրիշի մահով:

Լո՛ւռ եք, զանգակնե՛ր: Աստուածն է մեներ:
Գո՛յժ տուէք վաղուան. իր հա՛սկը մեռաւ:
Գո՛յժ տուէք Հայուն, զի ա՛զգը մեռաւ:
Չանգակնե՛ր, ծերո՛ւկ, բարի՛ զանգակներ...

Ինչպե՛ս կ'ուզէի ձերին պարանին
Կախուիլ ու ցնցել երկա՛ք բազուկով:
Անո՛նք որ ինկան բիւրո՛վ, քովէ քով,
Չեր դողանջին հետ, լալու պետք ունին..

Հոգիիս հազա՛ր խուլ դողանջներով
Գոռացե՛ք, զա՛նգեր. ու կատաղօրէն

Գահավիժեցէք. ձեր երկաք բառէն,
Ուրկէ միայն լալ գիտցաք դարերով...

Օ՛, դողանջեցե՛ք, Աստուածն է մեներ:

Ո՛վ ԻՄ ՀԱՅՐԵՆԻՔՍ ...

Կիլիկիոյ արիւնին

Ցայգն ի՛նչ անոյշ է, ցայգը ի՛նչ գինով:
Ցաւերէս տարուած կը քալեմ երկա՛ք
Լեմանի ափին՝ խոր տրտմութիւնով:
Ի՛նչ խաղաղութիւն, ի՛նչ անճառ չըկար,
Ու ցայգն ի՛նչ անոյշ է, ցայգը ի՛նչ գինով:

Հեռուէն թեւնակի շառաչներ դողդոջ
Երգը կ'օրօրեն սիրող գոյգերու.
Ջուրին մէջ աստղեր ինկեր են բողբոջ.
Ու տարփոտ մութին մէջ հեռուէ հեռու
Թեւնակներու թա՛ց համբոյրն է դողդոջ:

Լուսնակն ալ ահա՛ շքեղ կը ծարի
Առասպելներու լոյս - դշխոյին պէս՝
Ալպեաններու ձիւն - հրաշքէն արծաթի,
Նոր հովուերգութեանց հի՛ն հանդիսատես՝
Տգոյն տարփաւորն ահա կը ծարի:

Ի՛նչ անհունութիւն, ի՛նչ երազ, ի՛նչ շունչ...:
Լռին լեռներու կողէն սատափի
Մինչե՛ւ սխրացած անտառն անշշունչ,
Ու մինչեւ դաշտերն ուր Ռօն կը թափի,
Ի՛նչ անհունութիւն, ի՛նչ երազ, ի՛նչ շունչ...:

* * *

Ու դո՛ւն, ո՛վ դժբախտ երկիր հայրենի,
Որ արիւնի տա՛ք շամանդադի մէջ,
Ջոհ՝ գազաններու խաղին վայրենի,
Ու համայնասպա՛ն բոցերու անշէջ,
Կը մխա՛ս, դժբա՛խտ երկիր հայրենի...:

Ո՛վ իմ հայրենի՛քըս...: Ու դո՛ւք հեռաւո՛ր,
Եփրատ ու Արաքս ու Վանայ Մովակ,
Ո՞ւր են կարապնե՛րը սիրախտաւոր
Որ իրենց երա՛զ թեւերով ներմակ
Ճեղքէին կարմիր ձեր կո՛ւրծքն ախտաւոր:

Հովուերգութիւններդ ո՞ւր են սխրալի,
Ո՛վ Արարատեան ձիւնափառ հսկան.
Ու դո՛ւն, միամիտ Դրախտն առասպելի,
Ինչո՞ւ ալսքան մո՛ւր է քո լուսնկան,
Հովուերգութիւններեդ ո՞ւր են սխրալի:

Լեռանոյշ կուսանքըղ Հայաստանի,
Ո՞ւր են ձեր սիրոյ երգերն անհամար
Որ հովը դեմի բլուրը տանի,
Ուր սրինգ մը խեղճ կու լայ ձեզ համար...:
Ո՞վ յաւերժահարսը կոյսը Հայաստանի:

Բարե՛: Վայի՛ւննե՛ր են որ կը լսեմ,
Հեաքերնին ցրուած, փախչող խելայեղ,
Ընդդիմադրումի մը պահուն վսեմ,
Պիղծ եաթաղանով ընդկիսուած ահեղ՝
Կոյսերու վայի՛ւնն է որ կը լսեմ...:

«Հո՛ւ, մենք ենք, մեղք ենք, եղբայրնե՛ր, քոյրե՛ր...:
«Մե՛նք ենք, լափլիզուած բոցերէ անշէջ...
«Մերկ սուսերնեքով հալածուած կոյրեր...
«Մե՛նք ենք, կը վազենք Մուրի՛ն, Մահուա՛ն մէջ.
«Հո՛ւ, մե՛նք ենք, մե՛րկ ենք, եղբայրնե՛ր, քոյրե՛ր...:

«Մե՛նք ենք, դիւահար ծնո՛ւնդ արիւնի,
«Հի՛ն, շքե՛ղ ցեղի գաւակներ յետին.
«Բոպիկ երախա՛յ, դողդոջ ծերունի՛,
«Մե՛նք ենք, ո՛ղջ գանկերն որ կ'իյնան գետին...
«Մե՛աք ենք, դիւահար ծնո՛ւնդ արիւնի...:

«Հո՛ւ, Նզո՛վք, Նզո՛վք: Մեր վերքին փրփրուն
«Շողին խաւարե՛ր ձեր աչքերը, ա՛հ.
«Մեր արիւնը ձեր գաւակաց գլխուն.
Թո՛յն շնչէիք դուք, ու ըմպէիք Մա՛հ...
«Հո՛ւ, Նզո՛վք, Նզո՛վք ձեր սերունդներուն...»

* * *

Ցայգն ի՛նչ անոյշ է, ցայգը ի՛նչ գիւնով:
Երգեցէք սիրոյ համբոյրներ գուարթ,
Ու դուք երգեցէք երանութիւնով,
Դո՛ւք երազ ափեր, ալեակներ լազուարթ,
Ձեր ցայգն ի՛նչ անոյշ է, ցայգը ի՛նչ գիւնով...:

Կը քալե՛մ: Քալե՛, յիմա՛ր տարագիր,
Ժպիտ մը շուրթիդ՝ կարապի՛ն համար,
Նե՛րքնապէս լալով՝ միտքդ դե՛պ երկիր,
Շեղչուած մահերու վրայէն անհամար,
Քալե՛, դուն քալե, յիմա՛ր տարագիր:

Քնարի գառամա՛ծ քելի մը փարած,
Թալա՛նե, բո՛ցե հեռո՛ւ, ա՛հ, հեռո՛ւ
Քալե՛, դուն, քերթող հայրենահալած,
Հո՛ւր, արի՛ւն երգէ ազատ լեռներու,
Քնարի գառամա՛ծ քելի մը փարած...:

Քալե՛: Մինչեւ ե՞րբ...: Քա՛լե կարօտեն,
Քալե՛ մինչեւ որ Արեւն հրակէզ
Իր մարը մտնէ նորէն ու նորէն՝
Ու օ՛ր մը ալլելը՛ս չի ծաղի քեզ...:
Բա՛քե...: Կես՛նքն է այս... Քա՛լե կուրօրէն...:

ՈՒԽՏԻՆ ԹԱՓՕՐԸ

Անուրջիս մեջեն հի՛ն քաղաքներուն
Հի՛ն քերդերն ահա կը տեսնեմ հեռուն.
Կը տեսնեմ կապար օդին մէջ տըխուր
Զանգակատուններ յաւերժօրեն լուռ:

Կը տեսնեմ հարի՛ւր սարեր մոխրապատ,
Անձայն ու անտեր իբրեւ անապատ.
Ու աշտարակներ անդունդներու քով՝
Ժամանակին դեմ գոցուած փականքով:

Կը տեսնեմ մեր հին տապանաքարեր
Հազար ցեղերե կոխուած անվեհեր.
Ու քառուղիներ՝ կը տեսնեմ, Աստուա՛ծ,
Աստ հանգ չիներով սալաշատակուած...:

Բայց ահա հաճիւր գանգերն համօրեն
Երկիւղածօրեն ու գիտակցօրեն,
Մութ գիշերին դեմ ամենքը մեկանց
Փոշոտ լեզունին շարժեցին յանկարծ:

Քառուղիներու տապաններն անձայն
Խորհուրդներու պես լըռին բացուեցան:
Քուրմեր, ասպետներ ելան անբարբառ
Ահա ցայգին մէջ կ'երթան վեհափառ:

Կը տեսնեմ, կու լամ...: Թափօրն է Ուխտին,
Ուխտին որ կ'ապրի դեռ մահեն անդին,
Ուխտին որ ահա հեռուէ հեռու
Փականքը բացաւ սարի բերդերու:

Ահա իշխաններ կ'ելլան անխըռով,
Քայլերնին ծանր եւ եօթը դարերով,
Վահաննին ժանգոտ, բայց աչքերնին վես,
Ոտքերնուն շղթան կ'երգէ ջուրի պես:

Այն որ բափօրին կ'երթայ առջեւեն,
Խոնջ է՝ լայն բենեզ մը արքայական,
Կարմիր ծիրանի՞ն է արքայական,
Թե ցեղին արիւնն... չեմ տեսներ այնքան:

Ու բափօրին հետ, ու բափօրէն վեր,
Թռչուն մ'օղին մեջ կը խարխափի՝ ծեր...
Այդ միքե՞ արծիվն է արքայական
Թե սել բախտին բուն... չեմ տեսներ այնքան:

Լա՛յն կարկառեցի ձեռքերս արիւնոտ.
«Առե՛ք, գոչեցի, տարե՛ք զիս ձեզ մօտ,
«Կ'ուզեի այսպէս դիմել յաւիտեան
«Ցեղի մը Ուխտին անդրշիրիմեան...»:

Բայց ահա ծարեց լոյսն արշալոյսին.
Քուրմերն, իշխաններն իջան միասին
Բաց տապաններուն քար սանդուխներէն,
Ու ամեն, ամեն բան կորաւ նորէն...:

Բերա, 1914

ԱՆՈՆՔ ՈՐ ԿՈՒԳԱՆ

- «Ահա մենք կու գանք - կ'ըսեն անո՛նք որ
Կու գան, չէ՞ք լսեր տրոփիլնն ահաւոր -
Մութը շնչեկէն աչքերնիս կուրցած
Ու արեան հոտէն ոնգունդնիս լայն բաց:

«Ահա ենք կու գանք, ուսով հրելով
Մեր Ցաւին Անիւր դարահովով,
Երկրագունդիս վրայ, խաւարին մէջէն,
Բոլո՛ր անոնց վրայ որ դեռ կը շնչեն...:

«Ահա մենք կու գանք, ահեղակորով
Մեր Յոյսին կռանիք գարշապարներով
Խօսեցընելու անանո՛ւն կորած
Գերեզմանոցներն համայնատարա՛ծ...:

«Ահա մենք կու գանք ու մենք նզովքն ենք,
Ու խաւարին մէջ մ'իտուած տեգը նենգ.
Վրէժներու հիդրան ենք փայփայելի,
Մե՛նք, սարսափահա՛ր ու սարսափելի...

«Մենք՝ հին ուխտերու նո՛ր ուխտագընաց
Մենք՝ Սուսերը բիրտ ու Գիրքն օրինաց.
Մենք՝ Ցասման ջրվէ՛ժը սարի կողէն.
Մե՛նք, Աղջամուղջի ծընունդ լուսեղէն...

«Ձեզի՛ որ քերծուած մեր մորթերէն ձի՛գ
Հարսնիքի, Մեղքի վրաններ կառուցիր...
Ու Ձե՛զ՝ եւրոպեան դիք որ շնագին
Սակարկեցինք մեր արեան լոռւբեան գին...:

«Ձեր սրտին դոնե՛րը փակեցեք խուլ,
Սուրե՛ր սըրեցէք, սըրեցէք զանխո՛ւլ,
Սրեցէ՛ք ձեր խղճին վրայ քարացած,
Ու ատամներուն վրայ ձեր զաւակաց...:

«Ահա մենք կու գա՛նք. հովերուն մէջէն
Ձե՛ք լսեր ոսկրեր որ կը չշնչեն...:
Ամէնքս ալ զագիր դիակ, խոռոչ գանկ,
Ահա մենք կու գանք, ահա մենք կու գանք...»:

ՎԵՐՋԻՆ ՀԱՅԵՐԸ
(ՀԱՏՈՒԱԾՆԵՐ)

«Եարիեան՛ն, հա՛յ, հօ՛յ, հա՛յ, Աստուած չիկայ,
«Եարիեան՛ն, հա՛յ, հե՛յ, Հայուքիւն չիկայ,
«Հեռուի եարերուն սրտիկը խօսի...»:
- Շրջանակ կազմած բոլորն ուս ուսի՛,
Հա՛յ, հե՛յ, սիրտ սրտի կը պարե՛ն, կ'երգե՛ն,
Ծերունի՛, տղա՛յ, հա՛յ, հե՛յ, իրենք են,
Պանդո՛ւխտ Հայերը...:

Ո՛չ մարդ, ո՛չ բանւոր, հասարակ գրա՛ստ,
Կը նօնեն մարմինն, ու մուեակնին հաստ
Կը ծեծէ օտար երկրին հողը տար:
«Ափ մը հայրենի, հող ո՞վ պիտի տար,
«Հա՛յ, հօ՛յ, Հայաստան, քու հողդ է հալա՛լ...»,
Կ'երգեն պարելով, բայց կ'ուզէին լա՛լ
Թշուա՛ն Հայերը...:

Հարս ունինք, մեզի հարսնելոր չիկայ...:
Սուգ ունինք, մեզի սգաւոր չիկայ...:
Ո՞ր մեղքին համար, ո՞վ է անիծեր
Հինգ հազար տարուան այս խե՛ղն ազգը ծեր...:
Չո՛րս միլիոնին մէ՛կ ապաստան չիկայ...:
«Եարիեան, հայ կայ՝ Հայուքիւն չիկայ...:
Կ'երգեն Հայերը...

Թագն առին, դագաղ մը տուին հայուն,
Մեր փառքն անցաւոր. մեր Մա՛հն է կայուն...:
Արշա՛կ մեծ, որու բանակն ահագին՝
Տէգով կը ծածկէր փառքըն արեգին՝
Ոտնակոխ կորած գերեզմանէդ դուն
Գլո՛ւխդ վերցնէիր, տեսնէի՛ր անտուն,
Անտէ՛ր Հայերը...:

Տեսա՞ր դուն մեռած գիւղերն անխոով,
Հիւղերը փլած՝ կարմի՛ր պատերով,
Հողմադացքներ լո՛ւռ բեւերով կոտրած,
Ծերուկ դիակներ սարին վրայ կորա՛ծ,
Մատուռներին ան՛ր, զրկուած խունկէ...
Ա՛խ, հո՛ն է, հո՛ն, մեր հայրենիքն, հոնկէ՛
Կուգան Հայերը...:

Օտա՛ր, տեսա՞ր դուն աղբիւրները զո՛վ,
Գեղջուկ ալգիները գա՛ղջ ողկոյզով...
Դե՛ռ կը միայ ջած տանիքն հայրենի,
Դեռ կը ծաղկի՛ հոն թուփը վարդենի.
Դեռ կ'երգէ՞ այդ հի՛ն պլպուլը ցայգին...:
Հո՛ն, հո՛ն կ'երագեն, կուլան տխրագին
Աքսո՛ր Հայերը...:

Մի՛ դպիր անոնց հոգւոյն փուռն՛ւն,
Անոնք կ'անցնին լո՛ւռ գաղտնիքով լեցո՛ւն,
Անոնք գիտեն բի՛ւր պատմութիւններ մութ
Անո՛նց որ կորան արեան մէջ տղմո՛ւտ,
Կախադաններու քաջե՛ր համօրէն...:
- Հազար մահով ծանր՝ Կենդանի-Մա՛հն են
Ապրող Հայերը...:

Ո՛չ, ո՛չ: Արշալոյսն իրենց պիտի գայ...:
Ու եթե՛ չի գայ աւօտն ապագայ՝
Պի՛տ կուտին: Մինչ ե՞րբ... Մինչեւ յաւիտեա՛ն:
Ու երբ դեռ երկրի վրայ Ազատութեան
Համար մեռնին ա՛փ մը մարդեր չնչի՛ն,
Անոնք պիտ՛ ըլլան Մարդկութեան վերջի՛ն,
Վերջի՛ն Հայերը...:

ԻՆՉՈՒ

Ինչո՞ւ, ինչո՞ւ, գիս սիրեցիր,
Փոքրի՛կ աղջիկ, քեզի մե՛ղք էր.
Փոքրիկ ծոցիդ քիթե՛ն պետք էր,
Դուն ծե՛ր արծիւ մը բանտեցիր:

Կապոյտ աչւիղ երբոր բացիր,
Կապո՛յտ աղջիկ՝ պլպլուն երգե՛ր.
Քե՛զ ալ սիրոյ մըմունջ պետք էր,
Դուն գուժկան մոռ՛ւնչըս ընտրեցիր...

Ես կ'երթամ մի՛շտ, անծայրածի՛ր,
Դամբաններ են ոտքիս հետքե՛ր.
Քեզ սիրոյ մեղմ սի՛ւք մը պետք էր,
Դուն փոքորկի՛ն կուրծքըդ բացիր...

Կ'այրի՛ն աչերըդ սեւածիր,
Պիտի մեննիս, այդպէս մ'ե՛րգեր.
Քեզի փոքրիկ սեր մը պետք էր,
Դուն Սե՛ր-Աստուածը սիրեցիր...

ԵՐԹԱԼ

Երբա՛լ, երբա՛լ, երբա՛լ անձայն, անհանդէս.
Երբա՛լ առուի՛ն պէս՝ մարգերու տակ անտես
Կապոյտին մէջ՝ հե՛զ, հողմավար ամպին պէս...:

Երբա՛լ՝ առա՛նց գիտնալու թէ դեպի ո՞ւր,
Երբա՛լ՝ հեռո՛ւ ոստաններէն այս տխուր.
Երբա՛լ՝ խաւար գիշերին մէջ թաքթաքուր...:

Երբա՛լ, երբա՛լ, երբա՛լ առանց երագի.
Երբա՛լ՝ առա՛նց սուգի, լացի, փափաքի.
Երբա՛լ՝ առա՛նց սովի, առա՛նց պապակի...:

Երբա՛լ՝ մարդոց կոյտին մէջէն լռելեայն.
Օտար մընալ իրենց Ցաւին, Գիտութեան,
Երբա՛լ տգե՛տ, խո՛ւլ, յ'ամբըր, կո՛յր յաւիտեան...:

Աննիւքանա՛լ, անրջանա՛լ, վըսեմ՛, վե՛ս.
Երթալ անցա՛յգ, երթա՛լ վերջապէս.
Աչքերը գոց՝ ցայգաշրջիկ խեղճին պէս...:

Ձը գիտնա՛լ որ հոս իտեալը չիկա՛յ...:
Ուխտագնա՛ց երթալ ասիերն հեռակայ,
Գեպի ուղին երջանկութեան մշտակայ...:

Երթա՛լ, երթա՛լ, չը նանչնալ Մա՛րդ ու Աստուա՛ծ,
Ջո՛յգ երթա՛լ՝ ձեռքըդ քո՛յր ձեռքի մէջ դրբած
Անրջանքի՛ն ու Սիրոյն պէս - Աքսորուա՛ծ...:

Հ Ի Ն Ե Ղ Ա Ն Ա Կ

Այս գիշեր երգ մը հոգեցունց
Հովին մէջէն՝ հեռուէն հեռու՝
Ձիւնոտ տրտում նամբաներու
Խոր անրջանքը արթնցուց:

Ես մենաւոր ու տրտմունակ,
Քեզ կ'ունկնդրեմ պատուհանէս
Որ աղօթքի մ'ոլորքին պէս
Կ'արձագանգես, հի՛ն եղանակ:

Արուեստ չունիս, իմաստ չունիս,
Կը կրկնուիս դուն անդադրում,
Ու ձիւնին հետ դանդա՛ղ, տրտո՛ւմ,
Գուն տարութեր կը տատանիս...:

Շնչադ մարմնիդ կը դողդոջէ.
Վանկերուն մէջ տժգոյն, վտիտ,
Ու յանկերգիդ մէջ միամիտ
Ապրելուն խուլ մահերգը չէ...:

Կը կրկնէ հովն աննպատակ
Աղաղակներդ ծառին, սարին,
Ի՛նչ կը պատմես դուն գիշերին
Որ կու լայ մայրը հեւքիդ տակ:

Այս իրիկուն, ձիւն իրիկուն,
Հին եղանակ մը հոգեցունց,
Ծոյլ երազանքը արթնցուց
Մութ ամայի ճամբաներուն:

Երգը մեռա՛ւ հեռու անհետ.
Բայց ա՛յդ չափով, այդ յանկերգով,
Պատուհանիս գիշերին քով,
Հոգիս կու լայ դեռ երգին հետ...

ԿԱՐԱՊՆԵՐԸ

*Il est d'étranges soirs, où les fleurs
ont une âme. Albert SAMAIN*

Գիշեր է լուռ, հանդարտ գիշեր ամառուան,
Մութը պատեր է երկինքը համօրէն.
Հեռուներէն քանի մը լոյսեր միայն,
Իրենց ձիւնը վար կը կաթեն յուօրէն:

Ո՛չ մէկ շշուկ: Լոռութիւնը կը բրթոյ
Անծի՛ր, անծա՛յր լայնութեան մէջ օդերուն.
Ու բացխփուող աչքերու պէս, ափին վրայ,
Քաղաքներու կը պլպլայ լոյսն հեռուն:

Բարձրը, մութին ալքերուն մէջ, հեռակայ
Ժիւրաներու ստուերը լուռ կը մրափէ.
Աւելի՛ վեր, արհամարհոտ ու հսկայ,
Ալպեաններու սեգ ճակատն է սատափէ:

Զոյգ ալեփառ շղթաներու դարաւոր
Օրրանին մէջ ընկողմանած հոլանի՛,
Լեռներու վեհ հուրիններուն պէս աղուոր
Կը քնանայ կապոյտ հողին Լեմանի:

* * *

Գիշերն է լուռ, լինը տրտում: Հեռուէն,
ձանանչներու, փրփուրներու պէս աղուոր,
Քնացող ջուրին երեսին վրայ մեղմօրէն
Երկու կարապ կը սահին լուռ մենաւոր,

Իրենց մարմինը քնքոյշ է, գեղեցիկ,
Իրենց թւերն արծաթակերտ, ձիւնագէտ:
Ու մարմարի իրենց վիզը սլացիկ՝
Երագային տանարներու սիւնին պէս:

Կը մօտենան անոնք իրար մեղմովին,
Ու կտուցնին իրար կու տան ուղղակի,
Ա՛յնպէս ինչպէս ո՛չ մէկ շրթունք տակաւին
Ա՛յնքան սիրով չէ՛ մօտեցած շրթունքի:

* * *

Ու ձիւնափառ իրենց թւերն կ'առնեն վեր,
Կը գալարեն իրենց վիզը երկնասլաց,
Ա՛յնպէս ինչպէս երկու բազուկ անձնուէր
Ա՛յդքա՛ն սիրով իրարու չեն գալարած:

Գիւղերուն լո՛յսը կը ցոլայ հեռուէ՛ն.
Վերը շո՛ւքը ժիւրաներուն հեռակայ.
Աւելի՛ վեր Ալպեանները համօրէն.
Աւելի՛ վեր, Երկինք կանգներ է վրկայ...:

Վա՛րը, քնացող ջուրին վրայ տրտմաբար,
Վե՛ն պարտքի մը գիտակցութեա՛մբը լեցուած,
Բերան բերնի, վիզը վիզին, անբարբա՛ն,
Կարապները կը մնան լո՛ւռ, քարացա՛ծ...

ԲՈՅՐԸ

Կը բարձրանայ բո՛յր մը աղուոր,
Գաղջ բոյր կո՛յս մարմինիդ,
Բո՛յրը՝ խունկի պէս միամիտ
Ու մեղքի պէս՝ մեղաւոր...:

Ուսկե՞՞ կուգայ բոյրը մարմնիդ
Բի՛ւր տենչերով բեղմնաւոր,
Դաւադրութեան պէս՝ ահաւոր,
Աղօթքի պէս՝ միամի՛տ...:

Կը բարձրանայ բո՛յր մը աղուոր
Գինովցընող ու բարի.
Միսքիք ա՛մպ մ՛է որ կը փարի
Քեզ՝ քաղցրօրե՛ն մեղաւոր...:

Գիտե՛մ, կ'գգա՛մ, բոյրըդ գինով՝
Ծա՛լ ծա՛լ ցրուած ծամերէն,
Մատիդ ծիրա՛ն, ծի՛ւր ծայրերէն
Կը ծորի բո՛յրըդ գինով...:

Բայց ուսկե՞՞ ց բոյրըդ ահեղ.
Սեւ աչե՞՞ն՝ սեւ վարդի պէս,
Սեւ քարքիչե՞՞ն՝ սեւ կարքի պէս,
Մութ յօնքերուդ տակ աղեղ...:

Ուսկե՞՞ կուգայ բոյրըդ բարի
Որ կը բուրե՛ մարմինէդ,
Կարմիր, դողդոջ, նուրբ շրթունքե՞՞դ
Որ համբոյրին կ'երկարի...:

Ուսկե՞՞ ց է բոյրըդ ալ մեղաւոր,
Լա՛յն վարդի պէս կուրծքե՞՞դ բաց,
Ուր կը կարմրի հետքը դեռ քա՛ց,
Համբոյրի մը բեղմնաւոր...:

Չար ու բարի, գինո՛վ ու կոյս,
Կը շնչեմ այդ բոյրըդ խա՛նն.
Մի՛ գըլանար համբոյրըդ դառն
Սիրակարօ՛տ իմ՝ հոգւոյս...:

Կեցի՛ր, կեցի՛ր, ա՛խ, ո՞ւր կ'երթաս,
Շրթներբն քեզ կը հեւան.
Ըսէ՛, Սիրո՞յ, Մեղքի՞, Մահուա՞ն
Ինձ հրաւեր կը կարդա՞ս...

Կը բարձրանայ բոյր մը աղուոր
Իմ հոգւոյս մէջ. բա՛ց ինձ, բա՛ց
Կարմիր շրթներդ՝ վարդի պէս թաց
Ու մեղքի՛ պէս մեղաւոր...:

Լոզան-1912

ԵՐՆԷ՛Կ, ՋՈՒՐ

Ո՛վ պիտի երգէ քու անփառունակ
Կեանքիդ միամիտ տաղը, մատա՛ղ ջուր,
Որ լո՛յժ դալլալի մը պէս շարունակ
Կը փոփրիս, կ'երթաս դաշտերուն մէջ ուր
Դարե՛ր դարերով ե՛րգդ է գոհունակ:

Ո՛վ պիտի պատմէ վազքերդ մշտուոր
Վալրի վարդերու երազանքն ի վար.
Ո՛վ պիտի ցոյց տայ փրփուրներուդ խոր
Հեւ ի հեւ կեանքիդ սերերն հոգեվար,
Տարփոտ սէգերու շոյանքն ալ բոլոր:

Լուռ անըջանքի պահուն ցայգային,
Ո՛վ պիտի պատմէ խիներուդ լեզուն,
Ու հեքեարունակ սերն ուռենիին
Երբ մութ գիշերով իրեն ազագուն
Ոստերը փախչող հոգւոյդ կը հայի՛ն:

Միամի՛տ վտակ, դարերէ ի դար
Դուն մամոռտ նամբէդ կ'երթաս անմոլոր,
Ու երբ կը մեռնին շուրջդ անմխիբար՝
Գարնայնի գոյն-գոյն ծաղիկներդ բոլոր,
Երկու քարի մէջ կ'երգե՛ս անդադար:

Երնէ՛կ քեզ, վտա՛կ, մեռնիլ չունիս դուն.
Արցունքէ մարմնիդ կը վարես անվերջ,
Գիշերներու մէջ միայնակ արթուն,
Անսկի՛ գբն, անվե՛րջ, վտիտ փոսիդ մէջ
Կ'երգես. երնէ՛կ ջո՛ւր, վախճան չունիս դուն...:

Ու երբ այս տողերն մրոտող նիհար
Ձեռքես օր մը լո՛կ պուտ մը հող ապրի,
Ուրիշ քերթող մ'ալ ինծի չափ յիմար՝
Պիտի գայ հարկաւ երգերըդ վայրի,
Յանգի, չափի տակ առնելու համար:

Մինչ յաւերժօրէն կեանքո՛տ, գուարթո՛ւն,
Պիտի կարկաչէ ջուրդ մշտաշարժ՝
Հեզնելով արուեստն ու կեանքը մարդուն...:
Ո՛վ անմահութեան ստուե՛ր գետնաքարշ.
Վտա՛կ, երնէ՛կ քեզ, մեռնիլ չունիս դուն:

ՏՐՏՈ՛ՒՄ ՈԳԻ...

(Սիրերգ)

Թափառամոլ նամբուս վըրայ քերթողի,
Տրտո՛ւմ Ոգի, ահա դարձեալ գըտայ քեզ,
Հո՛ն ուր քեզի օր մը մինա՛կ ես թողի,
Քարին վրայ, աղբիւրին մօտ, կը յիշե՛ս:

Մեր հրաժեշտի օրէն ի վեր դուն այսպե՛ւ
Հեռուն յառած մութ աչքերըդ սեւածիր՝
Սպասեցիր նամբուս վրայ տրտմապէս,
Ու արցունքիդ լո՛կկ ե՛րգը միշտ լացիր:

Ես հեռացա՛յ տարտամին մէջ խօլաբար,
Իմ երագիս նամբաներէն անդադրում,
Գիշերներու հովին նման խօլաբար,
Վերջալոյսի՛ թռչուններուն պէս տրտում:

Ու վագեցի - անուրջներու ուխտաւոր -
Թաւշին վրայ կեանքի ծիծղուն մարմանդին.
Ու վերքերուս ծաղիկները ախտաւոր
Տարի մինչեւ հորիզոնները մութին:

Ես խոյացայ նուիրումէ՛ս տենդահար՝
Հո՛ն ուր նիհար նառագայթ մը կայ լոյսի,
Հո՛ն ուր սիրոյ վըտիտ երգ մը կը դողար,
Հո՛ն ուր դողդոջ ծիածան մը կար յոյսի...:

Ու թելաբեկ անա քեզի կը դառնամ
Երջանկութեան նամբաներէն յետադարձ,
Տրտո՛ւմ Ոգի, հոգւույս միակ բարեկամ,
Դուն իրակա՛ն, դուն նշմարի՛տ, դուն անդա՛րձ:

Ձեռքերուս մէ՛ջ դիր ձեռքերըդ մահաբոյր,
Ու հողեղէն շրթունքները՛դ շրթունքիս,
Երակներուս մէ՛ջ՝ քու շունչըդ տրտմաբոյր,
Արցունքներուդ բիւրեղին մէ՛ջ՝ իմ հոգիս...:

Տրտո՛ւմ Ոգի, թելըդ թելիս դալարո՛ւն,
Համբոյրի մը անհունին մէ՛ջ սրգաւետ,
Մեր ցաւերուն, արցունքներուն, վերքերուն
Պատարագը պիտի տօնենք քեզի հետ...:

ՍԻՐՈՅ ՈՒ ՄԱՀՈՒԱՆ ԵՐԳԸ

Իմ կեանքըս թող աղաչաւոր երգ մ'ըլլայ,
Եղերական ու միամիտ, սե՛ւ ողբերգ,
Հսկայական ու տխրօրէն քաղցը՛ր վէ՛րք,
Իմ սիրտըս թող անհունին մէ՛ջ վէ՛րք մ'ըլլայ,
Իմ կեանքըս թող աղաչաւոր երգ մ'ըլլայ:

Ես կը սիրեմ՝ իմ տրտմութիւնս դիւրական,
Իմ տրտմութիւնս Աստուածներո՛ւ, ցաւին պէս,
Քո՛յր, սրտիս մէ՛ջ ի՛նչ խաւարներ, վիհեր կան,
Ջոր նայուածքովդ կ'ոսկեզօծես ու կ'օրհնես,
Ես կը սիրեմ՝ իմ տրտմութիւնս դիւրական:

Եկո՛ւր ինձի, լուսնակին պէս գեղեցիկ,
Եկուր ինձի, լո՛յս ու ցնծում հեւալով
Քու արծաթի շողերուդ մէ՛ջ սլացիկ
Լուսաւորէ՛ աւերակնե՛րըս լալո՛վ.
Ես Մահն եմ, ե՛կ ինձ կեանքին պէս գեղեցիկ...:

Իմ կեանքս թող առուին երգին պես ըլլայ,
Ու երգս անուանդ կրկնումն ըլլայ թող յաւե՛րժ,
Իմ կեանքս թող մո՛ւթ ջրվեժին պես ըլլայ,
Ու դեպի քեզ անկում մ'ըլլայ գահավե՛ժ...:
Իմ կեանքս թող առուին երգին պես ըլլայ...:

Ես կը սիրեմ՝ երկու աչերդ վիհի՛ պէս,
Ուր խաւարներ կը փոթորկին մոլեգի՛ն,
Երկու աչերդ՝ աստուածներու սկիհին պէս,
Տո՛ւր ինձ անոնց մէջ սրբացնել իմ հոգին,
Ե՛ս կը սիրեմ՝ երկու աչերդ վիհի պէս...

Եկո՛ւր ինձի, քեզ կ'ըղձայ շունչըս անգօր.
Եկո՛ւր, ես մո՛ւթ բաներ պիտի քեզ ըսեմ,
Սիրոյ պէս քաղցըր ու Մահուան պէս հզօր.
Գերեզմանիս լացող սիւքին պէս նըսեմ՝
Եկո՛ւր ինձի, քեզ կ'ըղձայ շունչըս անգօր...:

Իմ կեանքըս թող կորած նաւուն պէս ըլլայ,
Շունչդ ուռեցնէ ծեր առագաստըս անա՛հ,
Մի՛, մի՛ լսեր յոգնած հոգիս որ կու լայ,
Տա՛ր զիս Սիրոյ կղզիներէն դեպի Մահ,
Իմ կեանքըս թող կորած նաւուն պէս ըլլայ...

ՅՆԾՈՒՆ ՄԱՀ

- Քերթողն ըսավ. - «Անո՛ւշ վըտակ,
Շիւղերու տակ, նիւղերու տակ
Ո՞ւր կը վազես աննըպատակ...

«Վարդեր կու լան ջուրիդ վերել,
Սեզեր կու տան քեզ բիւր բարել,
Քե՛զ կը կանչեն ծաղիկ, տերել...

«Լուսնակի ցոլքը ծոցդ առած,
Դաշտերու մէջ լայնատարած
Ո՞ւր կը վազես դուն շուարած...

«Կեանքդ արդէն կարն է, ա՛յ վըտակ,
Մի՛, մի՛ վազեր, ծովն անյատակ
Պիտի թաղէ քեզ ալեաց տակ...»:

Վտակն հծծեց. - «Թող անդադրում
վազեն ջուրերս. մի՛, մի՛ տրտում
Արցունք կաթեր անոնց սրտում:

Թո՛ղ, որ երգեմ լուսն ու մութին.
Ի՛նչ փոյր բե մահն է քայլ մ'անդին,
Ես սիրահար եմ մարմանդին...»:

Ու մինչ քերթողը կ'երագեր
Լալո՛վ, վտակը եռուզեռ
Երգով իր մահը կը վագեր...

ՄԱՀԱԶԳԱՑՈՒՄ

Այսպե՛ս, այսպե՛ս ... անուշ, անուշ սիրական
Մօտեցուր մանր մատներդ մանկական
Տաք կոպերո՛ւս, տաք կոպերո՛ւս դժոխքին,
Զգո՛յշ, գգո՛յշ, ա՛խ չըլլայ որ բորբոքին:

Կուրծքի՛ս հակե փոքրիկ գլուխդ յաղթական,
Լսե՛, դեռ հոն հոնդիւններ, ողբեր կա՞ն,
Լսե՛, անուշդ իմ սիրական: Ո՛հ, անգին
Արբանք մ'ե այս որ կը խնկե իմ հոգին:

Մեռնի՛լ, մեռնի՛լ ... Անմահանալ մահուան մեջ.
Մեռնի՛լ ... գրկիդ գոգն, ա՛յսպես մեր սերն անշեջ՝
Անհունին մեջ ծառացընել տիրական...:

Մեռնի՛լ ... կու լա՞ս ... կը խորհեի սիրական,
Թեւերուդ մեջ քարանալու հանոյքին,
Քո՛յր, մահանո՛ւշ քոյր, մահագօր, մահագին...

ԳԻՇԵՐԻՆ ՄԷՋ

(Հայկ եղբորս յիշատակին)

Կը լայննայ երկինքը անծա՛յր ու ջի՛նջ,
Գիւղին վրայ քիչ քիչ մութը կը կոխէ,
Ամէն բան իրեն գոյնը կը փոխէ,
Հանդա՛րտ ամէն կողմ, մո՛ւթ է ամէն ինչ:

Վարդն իր աչքերը կը գոցէ մութին.
Ծառերն են կեցեր լո՛ւռ, բազկատարա՛ծ.
Նոնին իր գլուխն է վեր կարկառած.
Լոյսեր կ'արիւնին ծառերէն անդին:

Ահա կը քնանայ բնութիւնն համակ.
Կեանքը դադրեցաւ. թռչուն մը մինակ,
Միս մինակ - ինչո՞ւ - կ'երգէ տրտմունակ:

Գիշերային այս լուսեան մէջ խորին,
Իր սիրտբուղիս երգերն սրտէս կը թռին,
Ու մինակ - մինակ՝ - ես կու լամ լոխն...:

ԳԻՇԵՐՆ ԻՋԱԻ

Գիշերն իջաւ անամպ, անհուն,
Բիւր բիւրեղէ ի՛նչ նուրբ անուն
Տալ անուրջի այս սուրբ պահուն:
- Ա՛խ, ապրելո՛ւ երջանկութիւն...:

Կ'անեանայ նաւն հեռակայ.
Լինն երազ մ'է, կայ ու չըկայ.
Ջուրի շշուէնն է լոկ վըկայ,
- Շշնջելո՛ւ երջանկութիւն...:

Վերն հազար աստղ, վարն հազար լոյս,
Կիսաստուերին մէջ հոգեյոյզ
Կը խօսակցին քար, վըտակ, բոյս.
- Ա՛խ իրերո՛ւ երջանկութիւն...:

Ու կը ձայնէ մ'ատուռն յստակ:
- Սա ծերունի ծառերուն տակ,
Այս քաղցրութեան մէջ բովանդակ
Քարանալո՛ւ երջանկութիւն...

ԹՐՈՒՊԱՏՈՒՐՆԵՐԸ

Բանաստեղծ ընկերներուս

Թրուպատուրներն են. տեսէ՛ք, իրեն՛ք են.
Եռանդո՛ւն, անփո՛յթ, գո՛հ կը նուագեն
Հրակեզ արեւուն տակ հրապարակին:
Կիսխուփ փեղկերէ տարեց, տըղայ, կին
Կ'երեւան քիչ քիչ: Կես-օրի տապէն
Շա՛տ քիչերն են որ տեսնել կը շտապեն
Թրուպատուրները:

Տարօրէ՛ն դեմքեր: Ամէ՛նքն, է՛գ, արո՛ւ,
Բախտէն կատաղի հալածուողներու
Անտուն ընտանիք մը քայլամոլոր...
Փողոցի ըստո՛յգ հանճարներ բոլոր,
Նուագելու համար պէտք չունինն ոօթի,
Կ'ապրին երգելով, կը մեռնինն ոօթի
Թրուպատուրները:

Բախտը, տառապանքն, յարափո՛յս հովեր,
Իրենց դեմքին մո՛ւրթ ժրպիտ մ'են տուեր,
Կեանքը նանչցողի ալեկո՛ծ ժրպիտ:
Ու իրենց բռնի՛ ձեռն մեջ հտափտ,
Խոխ մագերնուն ներքեւ ալեւոր,
Աշխարհքն հեզնելու հո՛վ մ'ունինն աղուոր,
Թրուպատուրները:

Անոնք երգելո՛վ անցան համօրէն
Բօյի գինեզուարն այգեստաններէն
Մինչեւ Նեղոսի աւագուտը շէկ,
Մինչեւ Ուրալներն, մինչեւ հըրաշէկ
Ափերը դերբուկ Հրոյ-Երկիրին:
Քանի՛ ընկերներ նամբան հող դրին
Թրուպատուրները:

Մեքենայութեան այս դարը երկա՛թ
Չընկնե՛ց դեռ իրենց հոգին խանդակաթ
Ու ոստաններու միջեւ դրամապաշտ՝
Թշուառութեան հետ գլո՛ւխ գլխի հաշտ
Կ'ապրին նախնական կենցաղով ազատ,
Ազա՛տ Բընութեան որբե՛րն հարազատ
Թրուպատուրները:

- Առէ՛ք ինձ ձե՛զ հետ, երկիրէ երկիր
Տարէք այս թշուա՛ն սիրտըս սրգակիր,
Ապրի՛նք հեզնելով, ողբանք երգելով,
Ու երկրագունդին հետ մշտահուով
Մեր մորթն անօգուտ քըշե՛նք մշտերեր.
Մշտընջենական մո՛ւթ ու խտաւորներ,
Թրուպատուրները:

Զի մե՛նք ենք, մե՛նք ենք, բանաստե՛ղծ պոետ,
Մե՛նք, պատառատուն բեհեզով վե՛տ վե՛տ
Երգի իշխաննե՛ր՝ իսպառ հալածուած.
Մե՛նք, նօթի՛, հպա՛րտ, երբեմնի աստուա՛ծ.
Մե՛նք, չըհասկցուա՛ծ, մե՛նք, եղերակա՛ն,
Մե՛նք, բանաստեղծնե՛ր, մե՛նք ենք իրական
Թրուպատուրները:

Մե՛նք՝ որ մեր վերքէն երգե՛ր կը շինենք.
Մե՛նք, գրկըւածնե՛ր նակատագրէն նենգ:
Ու մինչ ուրիշներ առատ կը ջամբեն
Խինդի՛ սեղանէն, մուսային նամբէ՛ն
Մե՛նք կ'երթանք ըստո՛յգ Մահուան անտա՛ղ.
Մե՛նք, հի՛ն Մարդկութեան ո՛ւշ ծընած - աւա՛ղ -
Թրուպատուրները:

Բայց ի՛նչ փոյթ: Մե՛նք ենք հոգիով հարուստ.
Մե՛րն է ներշնչումն որ կուգայ վերուստ.
Մե՛րն է մարգը քա՛ց, վերջալոյսն անխօ՛ւ,
Փըթիթը վարդի՛ն, առուն մշտահո՛ւ.
Մե՛րն է մըթին սի՛ւքը գերեզմանին.
Հի՛ն աստուածներու ցեղին կը նմանին
Թրուպատուրները:

Մե՛նք ենք որ անփո՛յթ գրչով կը հեզնենք
Այս նենգ աշխարհին պըսակները նենգ:
Քնար մը ձեռքերնիս, անտո՛ւն, մահագի՛ն,
Զե՛նք ցանկար ստրո՛ւկ - պետի դղեակին:
Ազատ բարբառի ասպետներ անա՛հ,
Կ'ապրին մեռնելո՛վ, կը մեռնին անմա՛հ
Թրուպատուրները:

Մարդկութեան հտպի՞տ պէտք է անպատճառ,
Մե՛ր սրտե՛րը մենք հաներ ենք վաճառ.
Մեր վիշտէն, սուգէն, խաբուած սերէն նենգ՝
Ռամիկին համար երգե՛ր կը շինենք:
Ո՞վ ըսաւ «Մահը մի է». ամէ՛ն օր
Կը մեննինք մե՛նք, հի՛ն տիեզերքին նո՛ր
Թրուպատուրները:

Սակայն մեզ ի՛նչ փոյթ ծիծաղն ամենուն,
Լըքումը ստո՛ր, քաղցր անանձն.
Մենք՝ գառանց Հովուին պէս սիրագորով՝
Հաւա՛ տքն ունինք մեր սըրինգին ծայրով
Առաջնորդելու Մարդկութիւնն ամբո՛ղջ.
Մեռած Արուեստին մե՛նք տակաւին ո՞ղջ
Թրուպատուրները:

Այս ի՛նչ դարերու հասեր ենք, Աստուած.
Փշրեցի՛ն ի՛նչ որ կար վըսեմ կերտուած.
Թէ դեռ սի՛րտ ունիք՝ քաղելու տարէք.
Ոսկիին նենգ ծա՛յնն է ամենուրեք:
Մի միայն մե՛նք ենք որ դեռ անարգել
Սիրե՛լ կ'երագենք. ո՞վ կ'ուզէ սիրե՛լ
Թրուպատուրները:

Մեռա՛ր, հընաւանդ Արուեստ սրբանուէր,
Երբ դեռ կեանքն երգո՛վ կ'ապրէր, կ'օրօրուէ՛ր,
Ու երբ երջանի՛կ, քափառի՛կ, գինո՛վ,
Իրենց ծիրանի լա՛յն կրկնոցներով
Դղեակէ դղեա՛կ, փայտի երկնային
Տաւիղին թրթոտ լմը կը տանէին
Թրուպատուրները:

Ե՛ս կ'երագեմ հայր թրուպատուրն Հոմեր,
Որ աստուածներու ակէն կը խմէր,
Ու իր հսկանե՛րը քարծրաղաղա՛կ
Կ'երգէր տաւղին վրայ, քաղաքէ քաղաք:
Ու թրուպատուրնե՛րը բիւր՝ որ կ'երթա՛ն,
Դարերու մէջէն. կ'երագեմ Գողթան
Թրուպատուրները:

Կ'երագե՛մ գիրենք. ու լո՛ւն, շուարո՛ւն
Կը նայիմ փեղկէս ա՛յս թշուառներուն
Որ բռնի կերպով կ'երգեն, կը խաղան:
- Վա՛խ, արծաթն՝ Արուեստն հանեց կախաղան,
Հի՛ն աստուածաբընա՛կ դարերը մեռան,
Ու հիմա պետք է խնդացնե՛ն, մո՛ւրան
Թրուպատուրները:

Հրատապ արեւուն տակ հրապարակին,
Ահա՛ կ'երգեն դեռ. ու մինչ տըղա՛յ, կի՛ն.
Կը հասնին քիչ-քիչ նեղ նամբաներէ,
Գլխարկն անցորդին լո՛ւն կը կարկառէ
Իրենց նահապետ երգիչն ալեւոր:
- Տուէ՛ք, իրե՛նք են, Նոր Մարդկութեան Նո՛ր
Թրուպատուրները:

ՄԵ՛ԾԴ ԱՍՏՈՒԱԾ

Ահա ջուրերդ: Աղւոր լինե՛րըդ ահա,
Սեւ ծովերդ, ովկէաննե՛րըդ մըթին
Որոնց վըրայ շունչը կեանքոտ կը խաղայ
Փայփայելով հսկանե՛րն այն անդունդին:

Խոտերուն մէջ սահուն հեզիկ առուակէդ
Մինչեւ ջուրե՛րը դարաւոր Նեղոսի
Մինչեւ հո՛ն ուր Նիակարան փրփրաւէտ
Գահավէժին մէջ գոռալով կը հոսի:

Ահա հողերդ: Լուռ անտառներդ մթաստուեր
Ուր քո հոգիդ մենաւորիկ կ'երագէ,
Ու բոցավառ արեւուն տակ կենսաւեր
Տոչորող լա՛յն անապատներդ ավագէ.

Կանաչաւէտ քու դաշտերէդ լայնածիր
Մինչեւ ձորերդ ու անդունդներդ ահաւոր,
Մինչեւ լեռներդ որ դուն ձեռքո՛վդ կանգնեցիր,
Ալպեաններէն՝ Հիմալայան ալեւոր:

Ահա՛ երկինքդ: Երազամոլ, կապտագե՛ղ,
Անծիր, անծա՛յր տարածութի՛ւնը անհուն.
Լոյս մատներեդ վառուած աստղերդ շըքե՛ղ՝
Խորհրդաստուեր կամարիդ վրայ պլպլուն.

Ու արեւուդ բոցափայլ գունդը կրակի,
Ու լուսնակիդ սիրախտաւոր դեմքն աղուոր,
Ու տրտմանո՛յշ վերջնալոյսնե՛րդ ոսկի,
Ու կենսալիք արշալոյսներդ փառաւոր:

Ահա՛ մարդերդ: Ահա՛ մարդերդ ալ, Աստուա՛ծ,
Տխուր հիւրերն այս հրաշագեղ աշխարհին.
Թափառական, վաղորդայնե՛ն ընկնուած,
Ճղնիմ, բշուառ, հողին կառչած, ախտագի՛ն.

Ճակատագրին մտրակին տակ խելայե՛ղ,
Անոնք կու լան ու կը վագեն մտացի՛ր,
- Իրենց նակտին վրայ մահուան գիրն ահեղ -
Անոնք գոր Դուն պատկերիդ վրայ ձեւեցիր...:

Ահա՛ Մարդերդ, ահա՛ Մարդերդ, Մեծդ Աստուած:

ՀԱՅՐԸ

«Հայր մեր որ յերկինս...»

Աստանդական մ'ալեհեր, ցուրտ գիշերով, բուք-բորան,
Մրին փողոց մը, քարի նստարանի մը վըրան,
Իրեն խարխուլ կողին վրայ ընկողմանած էր արթուն,
Երբ ապաստան փնտոեց հոն նիհար տըղայ մը անտուն:

Խաւարին մէջ նայուածքներն իրա՛ր զարկին, շաչեցան...
Մերը հեռու քաշկոտեց հիւանդ մարմինն իր անծա՛յն.
Ճանչցե՛ր էր. բայց չի կրցաւ ըսել՝ «Որդեա՛կ մոլորուն,
Ջաւա՛կս ես գոր լքեցի անօրութեանս օրերուն...»:

Թշուառութեան հիւրընկալ նստարանին վրայ քարի,
Կեանքի խաւար գիշերով, Մարդն ու Աստուածը բարի,
Պատահաբար, կող կողի, երբոր գիրար տեսնային,

Եհովան իր լուսեղէն պըսակին մէջ երկնային
Չէ՛ր ամչնար ըսելու բշուա՛ռ, անտէ՛ր, խե՛ղն Մարդուն.
«Ես եմ՝ քու հայր Արարիչդ, ամենակալ, մշտարթուն...»:

ԱՐԵՎԵԼՔԸ

Սկիւտարի ծովահայեաց կէտերէն
Մէկուն վըրայ խորասուզուած տխրօրէ՛ն,
Քաղցըր թոյնի մը պէս կ'ըմպեմ արեւուն
Խենթեցընող վերջին ցուրե՛րը անհուն:

Ուղի՛ղ դէմը՛ս, բըլուրին վրայ, քայլ մ'անդին,
Էշ մը ծերուկ, թողած ծի՛լը մարմանդին,
Կոշկոռած վի՛զը կ'երկարէ գալարո՛ւն
Մարմարայի իրիկնանո յշ բոցերուն...

Կը նայիմ՝ նուրբ ստուերներուն գեղեցիկ,
Վոսփորին վրայ բիւր կայմերու սլացիկ,
Հեռուի հրաշէկ երկինքներուն բոցահալ.
Կը նայիմ՝ ինձ ու կը նայիմ՝ իրեն ալ...

Այդ է՛շը որ կեանքը կ'ըմպէ հոն հըլո՛ւ,
Որ կը լռէ, բայց շատ վարժ էր գոալո՛ւ
- Ի՛նչ շնորհապարտ եմ ես իրեն այս մասին -
Որուն համար փիլիսոփայ ալ ըսին...

Այդ է՛շը, այդ ծումոած նի՛տը համեստ
Մտրակուելէ թուլցած մորթին հաստաբեստ,
Դերասանի այդ կեցուածքը բլրին վրայ,
Ինքնասուզուա՛ծ պոչն որ հագի՛ւ կ'երերայ...

Այդ է՛շն ահա, այդ պարզ որդին բընութեան,
Հորիզոնուա՛ծ, շրջանակուած յաւիտեա՛ն,
Անվե՛րջ, անհո՛ւն վերջալոյսով մը միայն,
- Արեւելքի պատմութիւնն է լռելեայն...:

ՊՈԼՍՈՅ ՈՐՈՎԱՅՆԻՆ ՄԷՋ

Մեր քոյրերուն

Առանց ուզելու, կարծես բնագոյորէն,
Քայլերըս ծերուկ տարին զիս նորէն
Այս գիշեր, Մեղքի քառուղիներէն:

Անցայ այն տեղէն, ուր աչքէ գաղտնի
Քսան տարիքիս արյան ծիրանի
Ապերախտ փրփուրը կը ցանէի:

Նո՛ւյն երգերն էին, նույն թա՛ղը անքուն,
Նո՛ւյն բուրումը գարշ՝ մեղքերու բաքուն.
Նո՛ւյն սյունը մըսի՝ սեմին վրայ կանգուն:

Նայեցա. իրենք ալ ինձ նայեցան:
Խորշոմ մորթիս վարդ թելեր քսվեցան,
- Միայն ծեր հոգիս կարտասովեր անձայն:

Յաւիտենական ով մեղքի Քաղաք...:
Ի՞նչ կրնեք Կյանքըն, որոնք կուլ կուտա՛ք...
- Ո՛վ ինկած քոյրեր այժմ հողերու տակ:

Տոփա՛լ, ինչո՞ւ չէ, բայց աչքէ հեռու,
Քուրջի մը նըման վաճառվիլ հըլու՛՛
Այն ապուշին որ դրամ ունի տալու...

Վա՛խ, քոյրե՛ր, քոյրե՛ր; Մեր պիղծ, յեղյեղուկ...
Կյանքեն զրկրված ծաղիկներն էք դուք...
Մարդկության փրած թուքին նետուած թո՛ւք...

Անգին Սուրբ բիւր կյանքեր թող հնձէ,
Թող Սովը հազար քաղաքներ ցնցե,
Վաղը Մարդկության վախճանն է գուցէ...

Ի՛նչ փոյր... Հոս պիտի երգէ «Լաքեռնան»,
Հոս տրտում գոյգեր պիտի արբենան...
Հոս պիտի ծախվին Օլկան, Մառիքան:

Ո՛վ արյան ծաղիկ՝ բացուա՛ծ խոլական՝
Ավերակներու վրայ բիւզանդական...
Մշտնջեայ Մեղքի մշտնջեայ Ական...

Ո՛վ խավարակուռ մսեղէն գաւաթ
Ուրկէ մարդկութիւնը բերահաւատ
Կը ստիպուի ըմպել գինիդ յուսահատ...

Սողոմէն բերած ընծա մահագին՝
Որ ծեր Արեւմուտքը Արեւելքին
Կ'երէրէ ժպտուն Վոսփորի կողքին...:

Ո՛վ մահաժըպիտ գա՛րշ արիւնալի,
Հակադարձ երեսը այն «մետալ»-ի
Ուր Մարդ ոսկետառ անուն կը փայլի...

1909 թ.

ԱՐԳԱՍԱԻՈՐՈՒՄ

Քեողիկին

Մառախուղի առաւօտով, ծեր ձիերը կը քաշեն.
Դանդա՛ղ, անիւր չի նոար ձիւնին վըրայ: Միայն շէ՛ն,
Խարագանն է որ կը խօսի թաց օդերու մոռյլ սուգին:
Ու կ'երկարի՛ նամբան, մինա՛կ, անհորիզոն, ահագին:

Ինքնասուզու՛ծ, նախատիպար այդ կառքին մէջ գիւղաշէն,
Ես կը դիտեմ սառած ձիւնը կախուած իրենց լա՛յն բաշէն:
Մե՛ր, կը քաշեն: Խեղճ ամուր: Աջն արուն է, ձախն՝ էգին
Խորշոմ՝ Մաղիկը կ'երեւայ, պոչին շարժքէն, ցաւագին...

Հալածու՛ծ գոյգ: Ու կը խորհիմ՝ թէ այդ երկո՛ւքը միայն,
Մշտնջական Տառապանքն է՝ զոր կը տանին լոնելայն,
Եւ թէ մէ՛կը միւսին բաւ է՝ խեղճ բընագդի մը հըլու՛
Տառապագին սերունդի մը ամբողջ սերմը դնելու...

Այսպէս, թշուառ, արքայափառ մտրակի մը ներքեւ շէ՛ն,
Յաւիտեանին Անէ՛ծքն իրենց Արգանդին մէջ ախտաշէն,
Մառախուղի առաւօտով, ծե՛ր, ձիերը կը քաշեն...

1 հոկտեմբեր 1908

ՊՈՌՆԻԿԸ

Գ. Զօհրապին

Կես-գիշերե վերջ մըն էր, խոնաւ գիշեր մ'անձրելի,
Լապտերին քաց լոյսին տակ կանգներ էի տրտմովի.
Ջուրը կ'երգէր մայրին վրայ, հոս-հոն վազքն էր կառքերուն.
Կը սպասէի ր դուն այդ ա'փ մը հողիդ շուրջ դեգերուն:

Բռնի ժըպիտ մը կու լար աչերուդ խո'րը ծաւի,
Ներկուած լիրբ շրթներուդ վրայ պրկումը կար ցաւի,
Ու անառակ չըփակիդ գոյգ սահանքին տակ սիրուն՝
Ցայտքը չիկար այդ գիշեր ցայգազըւարն կիրքերուն:

Կը սպասէիր դուն պատրա'ստ ու համակե'րպ ու հըլո'ւ,
Առանց սիրոյ, ընտրութեան, նուիրուելու համար կո'յր
Այն բարեհաս Արուին որ հաց ունէր քեզ տալու...:

Գուրի, կիրքի պէս տարտամ խոց մ'զ գացի սրտէս ներս,
Ու թերե'ւ ըս այդ գիշեր նուիրէի քեզի, Քո'յր,
Եթէ կաթիլ մը արցունք չը սառեցնէր իմ այտերս...
Կես-գիշերե վերջ մըն էր, խոնաւ գիշեր մ'անձրելի...:

ՇԱՆ ՀՈԳԻ

Այս իրիկուն Բըթի-Շանի կեղծ-գուարթ
Սրնարանի շարքերուն մէջ, ես հանդա'րտ
Օղիի ո'ւմպըս կ'ըմպէի քիչ առ քիչ,
Վերջալոյսի նանանչներուն դեմ մոգիչ:

Ներսը, թուղթե նոխ բեմի մը վրայ սո'ւր.
Կղմնտրագոյն Հունգրունի մը մ'սո'ւտ,
Շոյուած հագար թուրք աչերէ մարդակեր՝
Իր գոյգ թոքերը պատռելու չափ կ'երգէր:

Գուրսը՝ վազող հոսանքին մէջ եռուզեռ,
Պոլսոյ խեղճուկ մ'եր շուններուն դասը ծե'ր,
Սալայատակ զառիվերին վրայ, անշա'րժ,
Կը գինովնար, - ո'վ տեսարան սրտաշարժ...:

Կը խորհեի իրենց մորթին աննշան,
Կը խորհեի Լամարթինէ պաշտուած շան՝
Ջոր հոչակեց Վինեի՝ ծախուած վատ մը նենգ...
Կը խորհեի ա՛յն շուներուն որ մե՛նք ենք...

Յանկարծ սլացին անոնք շանթի մը հանգոյն,
Ու տեսայ որ բարակ իշխան մը տժգոյն
Եւրոպայէ բերած շունն իր դեռատի
Հաներ էր քիչ մը իրիկուան պտոյտի...:

Ու մինչ ամենքս հիացումո՛վ, նախանձո՛վ,
Կը դիտեիք իշխանն աչքո՛վ, ակնոցո՛վ,
Մեր ծեր շուներն՝ իր ազնիւ շունը գեղերփ
Յօշոտելու կը ջանային ամեն կերպ:

- Ես որքան լաւ հասկըցայ քեզ, Շա՛ն Հոգի...
Մինչ մենք կոտրել կը ջանայինք երկուքի
Բարեւելու այդ մակաբոյծը շըքեղ,
Դուն քու ակռաղ ցոյց կուտայիր խելայե՛ղ:

Ա՛խ, Շա՛ն Հոգի, դուն չես գիտեր որ մարդիկ,
Աշխարհ կուգան ազնուական կամ ոամիկ,
Եւ թէ ազնիւ ժառանգութիւն մը որքան
Կրնայ տեւել աւելի քան յաւիտեան...:

Միա՛յն գիտես դուն խեղճութիւնդ անանուն,
Գիտես հոգւոյդ ատելութիւնը անհո՛ւն,
Գիտես քա՛ղցը, ձիւնը, ծե՛ծը վայրենի,
Եօթագաւակ յղութիւնդ ալ մայրենի...

Ու չե՛ս կրնար դուն հանդուրժել որ քեզ պէս
Պոչաւոր շո՛ւն մը խրոխտա՛ր քովէդ վե՛ս,
Ու աւելի լաւ ապրէր քան միամիտ,
Ո՛նէ խեղճ քաղաքացի մը թաղէդ...

Սիլիվրի, 15 օգոստոս 1909

ԴՐԱՄԻՆ ԱՂՕԹՔԸ

Խեղճերուն

Հողագունտիս կեղեւին վրայ տրտմածին
Թափառայած իմ ոտքերըս քալեցին
Եղբայրութեան տաքուկ շունչը փնտռելէն,
Ու ամէն տեղ իմ հեգ աչերըս լալէ՛ն
Տեսան փարթամ մեծատունին դըրան քով,
Աղքատ մայր մը որ կ'սպասէր արցունքով:

Ո՞վ էս ուրեմն, բշուառութեա՛ն դու գործի,
Դըրա՛մ, որուն լուռ ցոլքին մէջ կ'արծարծի
Ճակատագի՛րը տառապող մարդկութեան:
Ըսէ՛, քու կամքդ պիտի իշխե՛ յաւիտեան.
Ու պատմե՛ ինձ, պիտի ըլլա՛ն, միշտ, աւա՛ղ,
Զքե՛զ լալով մեռնողները անսրւա՛ղ:

Մա՛րդն, առաջին այն մարդը որ տենչավա՛ր
Պեղեց խուզեց հողին արգա՛նդը խաւար.
Ու չարանեց թաքըստոցէդ դարաւոր՝
Խըլեց քեզի, յղկեց մաքրեց փառաւո՛ր,
Այդ մարդը, վա՛խ, ժանտ ցոլքերուդ մէջ ժպտուն
Զը նշմարեց տխո՛ւր անկո՛ւմը Մարդուն:

Տառապանքի, անյուսութեան որբեր խո՛ւլ
Կը խեղդուին քար պատերու տակ խարխուլ.
Սովալըլուկ բի՛ւր բշուառներ տրամօրէն
Իրենց նիւար ձեռքերը քե՛զ կ'երակրեն.
Ու տենդահա՛ր փողոցին վրայ, ամէն դի,
Քանի՛ փոքրեր կան մայրագո՛ւրկ, անօթի՛:

Իջի՛ր, իջի՛ր, խոնարհօրէն, մեղմօրէն,
Իջի՛ր ոսկի սանդուխներուդ մատներէն՝
Թշուառութեան խշտեակներու մէջ խոնաւ
Ուր քու ցոլքե՛րըդ նըշուլած չեն բընա՛ւ
Յամբած շիւղեր, բոլորը քե՛զ կը դառնան.
Իջի՛ր, իջի՛ր, անձրեւներու պէս գարնան...:

ԿԱՐՄԻՐ ԴՐՕՇԱԿԸ

«- Անօթինե՛ր, անգործներու կո՛ւռ բանակ,
«Փոս աչքերնիդ դեպի երկինք զո՛ւր բանաք:
«Տառապանքի՛ ոստայնանկներ, ի կըռի՛ւ...:
«Ի գե՛ն՝ կի ներ, ի գե՛ն՝ ծերե՛ր արեխոխու...

Դուրսը ձմրան սոյլին մեջէն կը լսուէր
Բողոքի ձայն մը գալարուող կարեվէր,
Ընդհատուած խո՛ւլ հըռնդիւնով կատաղա՛ծ,
Որ արձագանգ կուտար երկար. «Հա՛ց, հա՛ց, հա՛ց...»:

Ի՞նչ կար: Կուրծքիս տակ, ուժգին, սիրտըս դողաց:
Զիւն-ձմեռո՛վ, այսպէս գիշեր ատեն՝ հա՛ց...:
Գաղջ անկողնէս վար նետուեցայ մրափուած,
Պատուհաններս բացի փութով, ու, Աստուա՛ծ...:

Միքե՞...: Ամէն բան հասկցայ, ու լացի...:
Բոլոր վայրագ պայքարողները հացի,
Հագարներո՛վ, հո՛ն, վա՛րն էին, խեղճ ու վե՛ս,
Կուտուա՛ծ, կատղա՛ծ, մըջիւններու շեղջի պէս...:

Ցո՛ւրտ, իրենց վրայ դանդա՛ղ կ'իջներ ձիւնն համակ
Անյուսութեան ծաղիկներու պէս ներմակ:
Ցո՛ւրտ, կը պատէր գիրենք գիշերն անսահման,
Թ՛շուառութեան մըթին դաւի մը նման:

Իրենց մե՛ջտեղ, խեղճ կառքի մը վրայ խարխուլ,
Հագարներու հըռնդիւնին մեջէն խուլ,
Աշխատանքի նօթի ստրուկ մ'ալեփառ,
Կանգնա՛ծ, դողդո՛ջ, կը բողոքէր, կը պոռկար:

Ու իր խօսքերը կ'իյնային փրփրադէզ,
Անիծապարտ սեւ ւ ամբոխին վրայ ա՛յնպէս՝
Ինչպէս ժայռեր ովկէանին մեջ կատղած...:
Ու ովկէանը կը նողփար. «Հա՛ց, հա՛ց, հա՛ց...»:

«- Ինչո՞ւ ոմանք սնդուսներով օրօրուն,
 «Ոմանց գլուխը՝ մայրին ձիւնոտ քարերուն...:
 «Ինչո՞ւ մէկը՝ ձեղուններու տակ ոսկի,
 «Միւսը՝ խոնաւ խշտեակի մէջ սողոսկի...:

«Մեկուն դիակին վրայ դամբա՛ն, վա՛րդ, մարմա՛ր.
 «Ողջը չունի բարձ մ՛ուր հանգչի՛լ կարենար...:
 «Բոյն-ընտանիք ունի բոչունն օղաչու,
 «Ան է՛րգ ունի. իսկ մենք՝ Անեծք միայն. ինչո՞ւ:

«Ինչո՞ւ հազար պերն տանարներ հրաշակայ,
 «Աստուծոյ մը հոգւո՛յն համար որ չի կայ...:
 «Մեր որբերը կը հալածուին՝ տեղ չի կայ...:
 «Մեր խեղճ կիներն են հոգեվար՝ դեղ չի կայ...:

«Ինչո՞ւ, ինչո՞ւ, միևնչեւ է՞րբ, սեպհական,
 «Մե՛ր քրտինքով պիտի շաղուին պատուական
 «Համադամներ մեծատունի՛ն, իր շունի՛ն,
 «Մինչ աշխատող բազուկներ չո՛ր հաց չունին»:

Մերը դողդոջ իջաւ կառքէն այն խարխուլ.
 Ու կատաղի գոռիւններու մէջէն խո՛ւլ,
 Կառքին գեղջուկ բեմին վրայ՝ հիւծահա՛լ
 Խեղներ ելան խօսք առնելու, կիներ՛ր ալ...:

Կը խօսէին - անո՛ւս դեմքեր ապաքէն -
 Ի՛նչ որ պոռթկար իրենց նօթի աղիքէն,
 «Իրաւունք»ի կոպիտ բառեր ինքնաբեր,
 Ջոր կապուտցած իրենց շրթունքը կափեր:

Խո՛ւլ աղաղակը կ'ընդհատուէր պահ մը. «Հա՛ց».
 Ու ամբոխը լուռ կ'ունկնդրէր ծարաւա՛ծ
 Արդարութեան չքնա՛ղ ձայնին այդ տըկար,
 Արդարութեա՛ն՝ որ երբեք պիտի չըզար...:

Վայրա՛գ գոռիւն մը գիշերին մէջ քնդա՛ց.
 Ջիւնոտ ցայգին անբա՛ւ սուգին մէջէն քաց,
 Բոցերու պէս շրքեղ, տեգի՛ պէս հըպարտ,
 «Կարմիր Դրօշա՛կ»ը բարձրացաւ անհանդարտ...:

Ու ամենքը խլրտեցան, շարժեցան,
Թափօրի մը պէս ահաւոր ու անձայն,
Կոսպա՛ շտօրէն լծուած - սուգի սել հանդէ՛ս -
Խարխուլ կառքին՝ Արդարութեան բեմին պէս...:

Ու ես տրտո՛ւմ, ու նմ՛լու՛ծ անբարբա՛ն,
Կը դիտէի որ կ'երթային տրտմաբար.
Ձիւնի՛ն մէջէն, մուրթին մէջէն անսահմա՛ն,
Գրաստներու սել բանակի մը նման...:

Ո՞ւր, դէպի ո՞ւր... Քաղցած կեանքեր համօրէ՛ն,
Իսպառ լքուած աստուածներէ՛ն, մարդերէ՛ն,
Լո՛ւն, կ'երթային, խո՛ւլ բնագոյի մը հլո՛ւ,
Նո՛ր Օրէնքի նո՛ր նժար մը կերտելու...:

Ու ինձ այնպէ՛ս բուեցաւ թէ լոելեա՛յն
Ճակատագրին թելը կ'իշխէ՛ր իրենց վրան...
Բայց կ'երթային անոնք, Ի Զէ՛ն, Ի ՊԱՅՔԱ՛Ր,
Արդարութեա՛ն կը դիմէին խո՛նջ, տըկա՛ր,

Արդարութեա՛ն որ ա՛յս կերպով պիտի գար...:

Լօզան, 1909

ՓՈՂՈՅ ԱԻԼՈՂԸ

Սիկառ մը բերնիս, բաց պատուհանես՝
Խոռոչ մը թագչած ծեր բուռի մը պէս՝
Կը դիտեմ փողոցը ամառի՛, լա՛յն,
Անտեր - ծառի գուգ շարքը երկայն,
Հալած ձյունի ծուլ անձրեւը բա՛րակ,
Գոցված հագվադեպ կառքերը արա՛գ,
Ու ծառերուն վրա, դողդո՛ջ ցըրտահա՛ր
Որոնք աչքերես արցունք կը բերեն...
Ա՛խ, մարդերն ի՛նչ նուրբ կենդանիներ են:

Ճիշտ տանըս դիմաց, այս ցուրտ օրերո՛ւն
Հին համագգեստով ծեր մը երերուն,
Այս անձրեւի տակ, ավել մը ձեռքին,
Մինչեւ իրիկուն լո՛ւն, դանդաղագի՛ն,
Երկուքի կոտրած հասակն ալեւոր,

Կը մաքրե մայրին ցեխը՝ այնպես որ
Չաղտոտի կօշիկն ազնիվ անցորդին...:
Ինչպե՛ս թույլ կու տանք այս բուքին, ցուրտին,
Որ ծերերն այսքա՛ն կըռնակնին ծըռեն...
Մարդերն ի՛նչ անգուժ կենդանիներ են:

Գըլուխն է կըքած թաց գըլխարկին տակ.
Լա՛յն առատ մորուք մ՛ունի ըսպիտակ,
Թագավորի հին դեմք մ՛ըլլար կարծես.
Բայց ձեռքը կըմախք կը խըրտչեցնե ձեգ:
Աչքերը թաց են. արցո՞ւնք մ՛ե՛ ծերի,
Անձրեւն է, հակատեն վար կը կաթկըթի:
Բայց գոհ է, նույն իսկ երգ կը մըրթմըրթայ,
Որովհետեւ տուն գիշերն երբ երթայ՝
Որք թոռներուն հաց պիտի տայ նորեն...:
Ա՛խ, մարդերն ի՛նչ սուրբ կենդանիներ են:

Տերն ինչո՞ւ կերտեց Մարդը ոչինչէն.
Ա՛յս կյանքի համար...: Իրեն համար չե՛ն
Երկինքն աստղազարդ, պըլպուլը ցայգին,
Ջեփյունն առտըվան, գինեբեր այգին,
Կապոյտ երակները՝ թոնիրին մոտ,
Իր ծեր հասակին՝ ձեռներ խընամոտ...
Բաթէ, կյա՞նք է այս. աշխատիլ սովա՛ծ,
Ուտելու համար գիշերը սոխ-հաց...:
Մենիլը լավ չէ՞՞ այսպես ապրելեն...
Մարդերն ի՛նչ անհագ կենդանիներ են...:

Մինչեւ ներմկցան իր մորուքն ու մագ,
Կեանքէն սորվեցավ բան մը հագի՛ւ հագ,-
Ճակատագրական ուժը Արգանդին:
Իր խելքը չ՛անցնիր այդ կէտէն անդին:
Աշխատությունեն ահա դարձաւ ծեր,
Բայց իր հացը չոր շո՛ւն մը չի կրծեր.
Մինչ անդին ոմանք ծնած վայրկյանին
Իշխան են արդէն, կամ ոսկի ունին,
Ու աղքատին բաղդ կը տնօրինեն...:
Մարդերն ի՛նչ քոսոտ կենդանիներ են...:

Վաղը եթե քաղցը կամ ցուրտ քամին
Յանկարծ մեռցնէ որք բռուններէն մին,
Ամբողջ ունեցած դրամը միասին
Չը պիտի բաւեն մահուան հանդեսին...;
Բայց ի՛նչ փոյր, կեցցէ՛ կառավարութիւն,
Ի՛րն է անտունին դիակն անարին,
Նախ կըսպաննէ, բայց կը թաղէ ձրի...
Ծուռ խոսողին թող բերանը ծոխ.
Արքան խեղներուն տէ՛րն է համօրէն.
Մարդերն ի՛նչ գրոտ կենդանիներ են...:

Կառավարութի՛ւն ... ինչ բարի՛, բարի՛...:
Աղքատին դպրոց բացեր է ձրի,
Որ հոն սորվեցնէ կարդալ ու գրել,
Օրենքի առջեւ կոնակը ծոխ...
Գիտնալ որոշել չարը ու բարին,
Սեփական փողէն տուրք տալ կեսարին...
Ըլլալ հնազանդ մէկ կարճատու կով,
Զօրք գրվիլ, մեռնի՛լ արքային կամքով...
Յարգել հարուստին վաստակն անօրէն...
Մարդերն ի՛նչ խելոք կենդանիներ են...:

Աւլէ՛, ծե՛ր, աւլէ՛, աշխատէ տքուն,
Զմեռուան ցուրտին, ամառուան տաքուն,
Աւլէ՛ մարդկութեան աղտը ցնցոտի,
Ու գիտցի՛ր, որ մի՛շտ պիտի աղտոտի...
Գիտցիր որ հա՛ցդ է աւելի մաքուր,
Քան ջոջին կարմիր հացը թաքթաքուր:
Գիտցիր դուն բաւե՛լ՝ քեզի որպէսզի
Օգնեն. ըսելով, չի խեղդեն քեզի...
Գիտցի՛ր, որ ինչ ալ ըլլան կամ ընեն,
Մարդերը զագիր կենդանիներ են...:

Ու սորվե՛ ատե՛լ նողկանքով անհուն.
Անոնք որ «փրկչի» կը կրեն անուն
Ու նոխ խոսքերով տունըդ կը քանդեն.
Սորվեցուր տղոցդ ատել արգանդէն՝
Քաղաքագէտնե՛րը ամէն գոյնի,
Որոնք կսպաննեն՝ քեզ առանց թոյնի:
Սորվեցուր իրենց խօսքը հետագայ՝

«Աղքատին համար բարեկամ չի՛ կայ».
Փոքրերն անվրեպ մեծերուն կեր են.
Մարդերը կատղած կենդանիներ են...:

Աղքատասէր սիրտ մ'ունիմ ես ի՛նքս ալ.
Թե անկեղծ է այդ՝ քաղցր է ինձ յուսալ.
Այդ ծերն եղբայրս է, գրա՛ծըս վկայ.
Մեկ տարբերութիւն միայն եթէ կայ,
Մինչ ես կը գրեմ տողեր խնամոտ,
Սիկառ մը բերնիս, վառարանիս մօտ,
Ու բիւր հանդերու մէջ քաղցրահնչիւն
Կը փնտռեմ կյանքի «փնչպէսն ու ինչուն»
Ծերը այս ցուրտին կ'աւլէ խեղճօրէն...
Մարդերն ի՛նչ անեղ կենդանիներ են...:

Ի՛նչ ատեններու հասեր ենք, Աստուա՛ծ,
Փըշրեցիճք ինչ որ կար վըսեմ կերտուած:
Կրօնքը բառ մ'է, իսկ հոգի չի կայ,
Ով դեռ կը հաւտայ, խենք մ'է անիկա.
Իսկ Յիսուս ապուշ մըն է յետնագոյն
Զունի ծրագիր, քաղաքական գոյն...
Գուրն զգացմունք մ'է գրեթէ մանկական,
Պէտք է դաւանանք մը ընկերական,
Այսպիսով կ'երբայ աշխարհք ինքնիրեն...
Մարդերը չէ՞ որ կենդանիներ են...

Ո՛վ փողոց աւլող, ո՛վ եղբայր, ո՛վ ծեր.
Քու պարզ ներսիդիդ դժողք են դարձուցեր:
Ու դուն կը խորնիս. ինչո՞ւ է այս կեանքը.
Լաւ չէ՞, որ շուտով մեռնիճք, հող դառնանք.
Թե վարձատրութիւն չիկայ աղքատին
Ոչ մահէն ասդին, ոչ մահէն անդին,
Թե պատիժ չիկայ հարուստ անգութին
Ոչ մահէն ասդին, ոչ մահէն անդին,
Ապա թող ամէնքն իրար յօշոտեն...
Մարդերն ի՛նչ երկչոտ կենդանիներ են:

Թե Արդարութիւն, թե միտք գերբնական,
Թե սուրբ իտեալ, թե Աստուած՝ չի՛կան,
Ապա ո՞ր ուժով ո՞ր օրենքով, ո՞ր
Արդարութեամբ, ո՞ր կամքով անաւոր
Կըրնան արգիլել քեզ ձերուկ բարի,
Որ օր մ՛ երբ վընիտ հոգիդ փըրփըրի,
Թե արժան չէիր դուն այս վատ կեանքին,
Օր մը քու դողդոջ ձեռներդ մոլեգին
Անխիղն մեծերուդ աղիքը պատռեն...:
Մարդեր պատռելիք կենդանիներ են...:

Սակայն ո՛չ, ո՛չ, ո՛չ: Ձիւնին, ցուրտին մէջ
Աւլէ՛ մարդկութեան ցեխն ու կեղտն անվերջ,
Աւլէ՛ ու գիտցիր որ միշտ կ'աղտոտի...:
Մի՛ խորհիր. Միտքը զարդ մ'է սնոտի...
Աւլէ՛, որբիկներդ հացիդ կը սպասեն:
Աւլէ՛, սուրբէ պարտքն, ինչ որ ալ ըսեն:
Աւլէ՛, որպէս զի իրիկուան երբ տան
Նիհար սակագին քու ըստրկութեան՝
Նըզովես այդ ձեռքը սըրտիդ խորէն...
Մարդերն անիծած կենդանիներ են...:

Ու ես գիտեմ որ, ցած խլեաշկիդ մեջ
Ձըմեռ գիշերներ գետնին վրա գէջ
Լուռ մըտմըտանքով երբ որ կը դիտես
Որբերը քնած հըրեշտակներու պէս
Որ կը հասուննան վաղուան գերութեան
Ու անվաղորդյան անխմաստ Մահուան,
Կը փղձկի ձեր սիրտը սուգով լեցուն՝
Ձեր միակ պաշտպան բարի Աստծուն...:
Որ մեռցուցին քու մէջդ անգթօրէն...
Մարդիկ ինչո՞ւ վատ կենդանիներ են...:

1911 թ.

ԱՅՍ ԴԱՆԱԿԸ

Մարդը կը ռթնեցաւ իր կնոջ ուսին.
Այսպէս երկուքն ալ լացին միասին:
Գետնափոր, տեսակ մը նկուղ էր լայն,
- Գետնափոր, աւաղ, խըլուրդներ միայն,
Ձե՛ որ կ'ապրին քաց նըկուղներու տակ... -
Գետնի վրայ՝ յարդի տեսակ մ'ալլանդակ
Անկողնի վըրայ, լո՛ւռ, հրեշտակա՛յին,
Երեք փոքրիկներ կը քնանային.
Յարդին վրայ, պզտիկ քոյրն ալ իրենց քով
Կը ննջէր մահուան ներմակ պատանքով...:

Ո՞վ ըսեր է որ կեանքը երազ մ'է,
Ուր սէրն իր կապոյտ բոյնը կը կազմէ:
Ո՞վ ըսեր է որ Այն որ կուտայ բոյր
Խոպան դաշտերու ծաղկին սխրաթոյր,
Ա՛յն որ ճըմեռին մէջ սըգամըռունջ
Ապաստան կուտայ գայլին անտերունջ,
Այն որ հունտ կուտայ նօթի թռչունին՝
Ա՛յն ըստեղծեր է՝ անոնց որ չունին՝
Երէներն առատ, հասկերը բեղուն,
Արփաւէ՛տ գինին, մեղրաւէ՛տ մեղուն...:

Աւա՛ղ այն ամէն բաներն ապաքէն
Որ շընորհուեցան մեզի երկինքէն՝
Մարդկային օրէնքն արգիլեց մարդուն...:
Ու մարդն անօթի՛, ծարաւա՛ծ, արթո՛ւն,
Երջանկութեան յո՛րդ գետին քով՝ հըլո՛ւ
Կը մեռնի առանց ումպ մը ըմպելո՛ւ...:
Մի քանիներո՛ւ համար են միայն
Ոսկեգեղ հասկի ծո՛ւփ ծովերը լայն,
Լեռներու երէն, անտառի թռչունն՝
Դե՛ռ իսկ չի ծընած...: Ո՞վ գիտե ինչո՞ւն:

Դուրսը ցուրտ գիշերը կը կողկողի:
Թաց նըկուղին տակ, լամբար մը հողի
Կը լուսաւորէ առաստաղը ցած:
Վրտանգին առջեւ՝ սեղմուած, քարացա՛ծ,
Ամոլը ձերուկ կ'արտասուէ դողդոջ,
Իրենց դեռ ծաղի կ'զաւակին բողբոջ,

Այսպէս անսուաղ, ցրտահար, սառած,
Մահը դիտելէ վերջ բազկատարած,
Առանց կարենալ բան մը ընելու.
Ի՛նչ լաւ է այսպէս լալ՝ բաղտին հըրլու...:

- Մահ...: Ի՛նչ տարբեր մահը հարուստ տըղուն;
Ան երազ մ'է լո՛ւն ցնծումով բեղուն,
Ան կեանքէն միայն հանչցաւ նրբագոյն
Բեհեզները վա՛ն ժանեակը գո՛յն-գոյն,
Մանեակներն ոսկի, ընծաներն առատ,
Թոյլ իրանին նո՛ւրբ շըղարշ անարատ...:
Զը գիտցաւ որ բանկ քարերը վըզին
Հազար խեղներու մահով կը դիզուին...:
Ու մեռաւ շա՛տ քաղցըր երգի մը պէս,
Հծծելով միայն՝ «Ինչ լաւ էր այսպէս»:

Մինչդեռ այս փոքրիկ մեռելն աղքատին
Ճանչցաւ կեանքն իր խո՛ւլ ցաւին մէջ յետին.
Ո՛չ ծաղիկ, ո՛չ խինդ, ո՛չ ժըպիտ, ո՛չ երգ.
Կեանքը վի՛շտ կարծեց, աշխարհքը՝ մի վէ՛րք...:
- Ա՛յ յիմար փոքրիկ, կեանքը խօլական
Հանդէս է. քանի՛ երջանիկներ կա՛ն...:
Սակայն դուն մեռար, ու հիմա հանգչէ:
Պատանք մը ներմակ՝ երկու ափ քուրջէ՛
Քու նինար մարմնիդ համար շա՛տ է լայն.
- Ողջունեցէ՛ք, նոր-վաղուան սերմն է այն...:

Գլխուն քով, կարմիր կանրեղը հողէ՛
Պատանքն իր աղքատ լոյսով կ'ողողէ:
Ճերմա՛կ մահն է այդ, մա՛հը անսուա՛ղ...:
Նոյն յարդին վրայ են միւսներն ալ խաղա՛ղ.
Ծանրը քունն իրենց աչքը կը գոցէ.
Կ'երագե՛ն. ու ա՛լ չ'արբննան գուցէ...:
Դուրսը ուժգնօրէն ոռնացող քամին
Դուռը կը գարնէ. գաւակներէն մին
Կ'աղերսէ՛ք ընա՛ծ շրթներով կիսբաց՝
«Հայրիկըս բերա՛ւ պատահիկ մը հա՛ց...»

Հա՛ց...: Ո՛վ ողորմուկ երեխայ սոված,
Հաց չըկա՛յ, այսպե՛ս է տընօրինուած...:
Դու դեռ շատ փոքր ես, դեռ չես հասկընար
Որ հարուստն ունի իրաւունք, հընար
Քեզ մեռցընելու ծանրածանր մահով,
Օրէնքն է իրեն պաշտպան ապահով...:
Միայն փոքր ուղեղդ կ'գգայ շուարուն
Թէ ինք իրաւունք ունէր արեւուն
Տակ բողբոջելու, քերե՛ւս ու կատղա՛ծ,
Կը փղձկի վընիդ հոգիդ. «Մայրի՛կ, հա՛ց...»:

Հա՛ց...: Աշխատելէն հայրըդ դարձաւ ծեր,
Հացի խնդիրն ինքն ալ չէ՛ հասկըցեր:
Ինչո՞ւ ոմանք տէր են, ոմանք գերի...:
Թէ բաղդը կո՛յր մ'է որ կը դեգերի
Ինչո՞ւ օր մ'իրենց դուռին չի գարկաւ...:
Թէ մարդը կաւ մ'է, այս ի՞նչ շունչ, ի՛նչ կաւ...:
Թէ աշխարհ անծիր երկիր մ'է անհուն՝
Ինչո՞ւ ոմանք քա՛ր մը չունին գլուխուն...:
Թէ ամէն տարի հունձքը կ'ողողի՝
Ինչո՞ւ իրենց հա՛ց մը չիկայ հողի...:

Գործարաններու դուռները փա՛կ են.
Ամի՛ս մ'է արդէն: Հագարը մէկէն
Բանուորներն ամբողջ նետեր են փողոց,
Ամէնքն ալ հայրեր, մի քանի տըղոց:
- Մատուցումը շա՛տ, խնդրանքներ չիկան,
Կ'ըսեն, ապրանքով լեցուեր է շուկան.
Գործի մե՛ծ օրէնքն է տնտեսավար. -
Այդ լա՛ւ, բայց նօթի մեռնիլն է դժուար:
Թէ բանուորն այնքա՛ն արտադրեր է շատ,
Ինչո՞ւ հաց ունի բանուորն անաշխատ...:

Մարդկուրի՛ւն, պատի՛ւ... քմբուկներ հնչո՛ւն,
Աչքըդ գոց հաւտա, մի փնտոներ ինչո՛ւն:
Մուրալն ամօթ է, գողնալը ոնիր,
Իսկ թէ խելօք ես՝ ո՛չ ոք չի հանիր
Հաւտալ որ տղադ մեռաւ անօթի,
Կը խնդայ վըրադ առանց ամօթի...:

- Մերը կը ըսենք է իր կը ընոջ ուսին.
Աչքի արցունքներն անդո՞ւլ կը հոսին.
Կը մ'ընա՛յ քիչ քիչ ներսի մաքո՛ւր,
Պարզ հոգին ինչե՛ր կը ծնի բաքբաքուր...:

Բայց ահա տըղան նորէն լացաւ «Հա՛ց...»:
Հա՛ց...: Մայրը ոտքի նետուեցաւ կատղած,
Հին դանակ մ'երկան տուաւ այլայլուա՛ծ,
«Հա՛ց նարէ, ըսաւ. հետդ ըլլայ Աստուած...»:

- Էրիկը գնաց, գոռուցքը հովուն
Կարծես հարց կուտար իրեն խրոտվուն՝
«Մի՞թէ ոներագո՞րծ ... մի՞թէ բարերա՞ր...»:
Դանակը ձեռքին գարնելու կ'երթար,
Փրկելու համար անօթի տըղան...:
- Բանուո՞ր, այդ նամբան կ'երթայ կախաղան...:

- Ի՞նչ կ'ընէ երբ ազգ մ'ը մընայ նօթի.
Ձեռքէն բահ ու բրիչ կը նետէ մ'էկդի,
Կ'երթայ հաղորդուիլ մատուռ մ'անխրոտվ,
Կը գինուի տէգով, կը գինուի սուրով,
Ու կ'երթայ ամէն միջոցներով վատ
Ազգի կը կըռիւ մըղել յուսահատ...:
Թէ յաղթուեցաւ՝ աւա՛ղ է իրեն,
Իսկ եթէ յաղթեց՝ աշխարհ համօրէն
Գովեստի երգեր կ'երգէ ամէն օր,
Պատմութիւնն ոսկի է՛ջ կուտայ անոր...:

* * *

Քամին կը գոռայ, ձիւներ կը բռնին
Բանուորը կանգնած շէնքի մը առջին
Երգը կ'ունկընդրէ - ցուրտէն երերուն -
Գործարաններու բոլոր տէրերուն...:
Մատուցումը շա՛տ. իսկ խնդրանքը քիչ...:
Որո՞ւ փոյթ. կ'ուտեն կ'արձակեն քրքիջ...:
Երբ դուրսը ձիւն է, գինույ շոգիով
Ի՛նչ լաւ է ուրի՛ք քանի մ'հոգիով...;
Գործ չիկա՛յ. ինչ փոյթ. դաս մ'է անխընայ
Որ բանուորը քիչ մը խելօք մընայ...:

Բանուորը կուլայ. կը գոռայ քամին:
Ահա՛ դուրս ելաւ այդ տերերէն մին.
Աստուած՝ իր պե՛տն է...: Ձեռքը քարացած,
Աչերը կարմիր, բանուորը գոռաց՝
- Գըբուրի՛ն, պարոն, ընտանեաց հա՛յր եմ.
Ջգոյ՛ջ մերժելու, ձեր հոգին կ'այրե՛մ...»:
Հարուստը նետեց ինչ որ կար իր վրան,
Ժամացոյց, շղթայ, դըրամ, քղթարան:
Երեկ՝ տէր, հիմա՛ ըստրուկ դողդոջուն,
Կը փախէր ինչպէս բուէ մը՝ թռչո՛ւն...:

Բանուորը ապշա՛ծ նայեցաւ հեռուն,
Իր հարուստ տիրոջ վագրին շուարուն.
Նայեցաւ բարի ձեռքերուն ծերուկ,
Նայեցաւ հացի դանակին մանրուկ,
Նայեցաւ ոսկւոյն, նայեցաւ իրեն,
Փղձկեցաւ հոգին, յուսահատօրէ՛ն
Ձայնը երկարեց ցայգին մէջ տըխուր՝
«Ո՛վ հարո՛ւստ, հարո՛ւստ, եկո՛ւր, ա՛ն, եկուր»:
Բայց տերն աւելի արագ կ'երթար լուռ.
Ու կը կրկնէր ձերը, «եկո՛ւր, եկո՛ւր...»:

Ո՛վ բարի բանուոր, ծե՛ր բարի բանուոր,
Թէ այնքան անպէտ ես մարդկութեան որ
Ճարելու համար ապրուստ մը յետին...
Կ'ապաւինիս վատ դանակիդ ետին...
Թէ սեպական կեանքըդ՝ իժի մը պէս՝
Ուրիշի մահով պի՛տ ապահովես...
Թէ պիտի դաւես մուրթին մէջ լոնլեայն՝
Հոգ չէ՛՝ թէ զաւկիդ համար ըլլայ այն...
Դէ՛ն, գնա՛, մեռիր, - մեռեր ես արդէն,
Մարդկութեան ի՛նչ խեր մարդասպան մարդէն:

Թէ չե՛ս ուզեր որ քու դանդաղ մահով
Տերդ իրեն գանձեր դիզէ ապահով...
Թէ անպէ՛տ, թէ վա՛տ, թէ խեղճ, ցաւագին,
Դուն դեռ տե՛րն ես քու սեպական կեանքին...
Թէ զաւակներուդ չը կրցար ցոյց տալ
Ապրիլ ատելո՛վ, կեանքին դէմ կուրծք տալ...

Դանակդ աղիքիդ խոթե՛ ու դարձո՛ւր.
Իրենց քաջաբար մեռնիլ սորվեցուր.
Մեռնի՛լ անտեսուած, աննիչ, մըրթին, վե՛ս...:
- Աչքերը գոցեց...: Ու ըրաւ այնպէս:

Տարինե՛ր անցան. հիմայ կը դիտեմ
Լուռ սենեակիս մէջ առկախուած իմ դեմ
Այս համեստ դանակն արդէն ժանգոտած
Որ ձըմեռ առտու մը, արիւնով քաց,
Ես գըտեր էի անհուն գուրգուրանքով,
Զինին մէջ, մեռա՛ծ գործաւորին քով...:
Քարացայ այդտեղ, պոռկկաց իմ հոգիս,
Ու դողդըղայով տարի շրթունքիս
Խորհրդանի՛շն այդ՝ մութին մէջ լռելեայն
Տառապո՛ղ, մեռնո՛ղ, այլ քաջ մարդկութեան...:

Ու քանի անգամ քու առջիդ լացի,
Ո՛վ բարի՛, ժանգոտ դանակըդ հացի.
Դո՛ւն, վերջին պաշտպան գրկըւած մարդուն.
Դո՛ւն, յաւե՛տ լըռիկ այլ յաւետ արթուն.
Դո՛ւն, այնքան համեստ ու այնքան խելօք.
Եւ որ կրնայիր շարժումով մը լոկ
Արեա ն վրայ հիմնել Օրէնքդ ապագայ,
Բայց կը սպասես որ խաղաղութեամբ գայ,
Արդարութեա՛մբ գայ, գա՛յ տարուէ տարի,
Զրկուած մարդկութեան երազը բարի...:

Լօզան, 1909

ՄԱՐԴԵՐԳՈՒԹԻՒՆ

ԳԻՒՂԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՒՆ ՄԷՋ
ԾՆՈՒՆԴԸ

Ա.

Անցեալ տարի էր: Յոգնած ապաքեն,
Շատ քաղաքակիրք այս Արեւմուտքէն՝
Ուր խիղեր բառ մ'է, մարդը՝ մեքենայ.
Աշխարհ գործարան մ'անխոնջ, անխրնայ.
Սերը հաշիւ մ'է. կրօնքը դրամ.
Երջանկութիւնը՝ ճանճրալի մի տոսամ.
Մահն՝ անմտութիւն. կեանքն՝ անհաշտ մի կռիւ.
Ուր ժամանակն իսկ վատ մ'է ալխոսիւ,
Որ ամէն բոպէն իր մանրակրկիտ
Մուրնի հարուածով կը զարնէ մտքիդ...
Այսպէ՛ս. հեւ ի հե՛ւ, յոգնա՛ծ, յուսահա՛տ,
Անմի՛տ այս վագրէն անդո՛ւլ, անընդհա՛տ,
Կարօտն ունեցայ հին-հին դարերու.
Եւ հիւանդ հոգիս տարի՛ես հեռո՛ւ,
Հեռո՛ւ, խմկաւէ՛տ, լո՛ւն, մշտնջե՛նի.
Արեւելքի իմ գիւղըս հայրենի...:

Բ.

Կիրակի մըն էր. քայլերս ուղղեցի
Իմ ալեւոր մօրս հետ եկեղեցի:
- Պիտի ծիծաղի՞ք, կարծրացած սրտեր.
Կարդացիք Լիւքրէս, Եպիկուր, Վօլքեր,
Մի քանի ուրիշ մութ գիրքեր ալ դեռ,
Բայց անհաւատի այդ տժգոյն բուղբեր
Իրաւունք չե՛ն տար որ ամբարտաւան
Ձեր բոյնը փչէք՝ կըրօնադաւան
Հոգւոյն ալեւոր մօր մը ծերունի
Որ ապրելու դեռ հագիւ օր մ'ունի,
Որ ծովուն վրայ՝ շիւղի մը նման,
Մէկ ոտքը մատուռ, միւսը գերեզման,
Գերագոյն, անհաս, անսկիզբ, բարի,
Մթին Աստծոյ մ'անուան կը փարի.
Ու անիրաւուա՛ծ, տառապա՛ծ, հուսա՛,
Մեծ Արդարութեան վնոխն կը յուսայ...:

Գ.

Ու դո՛ւք, ո՛վ Հօրաս, Ջենոն ու Վօլքեր,
 Ի՛նչ որ ալ ըլլաք՝ երեկինն էք դեռ.
 Մինչ յիսուն հազար այս տարի է որ
 Անդուլ կը դառնայ աշխարհին ալեւոր՝
 Հաւատացեր են մարդերը բոլոր:
 - Բարե՛, հակառակ հաւատքիս մոլոր,
 Ծաղրել չի գիտցա՛ւ բնաւ իմ հոգին
 Տանա՛ր մ՛ըլլայ այն հերանոս բագին,
 Քար-քար աւերակ սիւներ Քառնաքին,
 Հըրապաշտ Պարսիկ բըլուր բոցագին,
 Բոցը Սիպիլի, Հնդիկ էլլօրան,
 Ասորեան հարիւր-գոհեան հին խորան,
 Կամ քրիստոնեայ պէտք եկեղեցին...
 Հոն մարդերը Մեծ-Յոյսը դարբնեցին...
 Ու հո՛ն - գլխարկնիդ բացէք վեհերուն -
 Գերեզմաննոցն է կենդանիներուն...

Դ.

Եկեղեցւոյն մէջ մտայ լռելեայն:
 Ծէնքը փոքրիկ էր, բայց բաւական լա՛յն՝
 Աստուածն ու դարե՛րը ամփոփելու...:
 Քար քարի վրա, ծներ էր, հըլո՛ւ,
 Առանց արուեստի, առանց մէծ ոնի,
 Պարզ, ինչպէս ծառ մը որ հողէն կ'անի.
 Ու քար ու բագմոց, ու կերոն ու խաչ,
 Հոն, հին դարերու բոյրն ունէին գաղջ...
 Ու առաստաղի աղքատ ջահերէն
 Կախուած՝ ժամանա՛կը մեռելօրէն
 Կը ննջեր անշա՛րժ, դարե՛ր բնեած,
 Քշոցին ձայնէն երբեմըն շոյուած...
 Հոն ո՛չ հեւք, ո՛չ վագք, ո՛չ ժամ, ո՛չ վայրկեան.
 Անսահմա՛ն, անխոռ՛վ, անծա՛լ, յաւիտեա՛ն,
 Չո՛րս պատերու մէջ՝ Անհո՛ւն մը խորին,
 Ուր ծեր գեղջուկներ մեռնի՛լ կը սորվին...:

Ե.

Բայց բացառիկ սօն մ'եր այդ կիրակին,
 Կնո ընքն էր ջոջի նորեկ որդեակին,
 Ինչ որ գիւղին նոյնքան է կարեւոր,
 Որքան Մնունդի սօ նը դարաւոր
 Նազարէթի հին քաղաքացին:
 Ուստի ծեր, մանուկ, հաւաքուած էին:
 Ու քահանան այդ մե՛ծ օրուան համար,
 Պատրաստեր էր փոքր քարոզ մը յարմար:
 Պերն խօսքի տաղանդ չունէր բնածին,
 Բայց գայն ընտրեր էր հովիւ՝ գիւղացին,
 Զի հասակով բարձր էր, վարքով արդար,
 Հայերէն գիտէր, նո՛յն իսկ կը կարդար:
 Կեանքի պայքարէն յոգնած հիւսն մը հեզ,
 - Կոյս Մարիամին կո՛յս նշանածին պէս -
 Այնքան վայլեր էր մ'օրուքն ու շուրջառ,
 Որ կարծես ան ա՛յնպէս ծնած ըլլար...:

Զ.

Զոյգ կերոնի մէջ՝ կը խօսէր բեմէն,
 Ու կ'ունկնդրէին գեղջուկներն ամէն,
 Խոր երանութեամբ սուգուա՛ծ անհրնար.
 - Թեեւ հայերէն մա՛րդ չի հասկնար...
 Հին Անեցարուքն առած բնաբան,
 Կը գտնէր Տէր-Հայրը շա՛տ բնական
 Որ տղերք աշխարհ գան անհամար - լուրջ -
 Ինչպէս բիւր շիւղեր ձիթենիին շուրջ:
 Յանկարծ շլացին աչերս քնեա՛ծ,
 Նաթօլեոնին անո՛ւնն էր տուած:
 Նաթօլեոն... Ի՛նչ քառս անյատակ՝
 Աշխարհքէն քաշուած այդ մատուռին տակ:
 Զե՞ որ ըսեր է այդ մարդն ահագին,
 «Մայրե՛ր, գաւակնե՛ր շինեցէք ազգին...»:
 - Ա՛խ, գօրք պետք էր այդ ամբարտաւանին՝
 Որ թնդանօթներ գիւղէ՛ գիւղ տանին...:

Է.

Պատարագէն վերջ, քով քովի անձայն,
 Երկու թափօրներ իրար քսուեցան:
 Ան չէր դասական հանդիպումը հին՝
 Կնունքի թափօրն՝ Մահուան թափօրին. -
 Մէկ կողմ՝ ծնունդ, խինդ. միւս կողմ՝ մահն ու լալ.
 Ու եկեղեցին կ'օրհնէ երկուքն ալ...:
 Ո՛չ: Երկու թափօր, երկու լքն ալ ժպտուն.
 Մէկը, նորածին որդին մեծատուն,
 Մի՛ւսը աղքատի ծնունդը անտուն
 Մէկը բեհեզով քնած, միւսն արթուն.
 Առաջնոյն ոսկի, ժանեակ բիւր տեսակ,
 Երկրորդին ճակտին փուշի սեւ պսակ.
 Մէկը Տե՛ր արդէն, միւսը Գրա՛ստ:
 Ճակատագի՛ր, վա՛խ, տղաքները փաստ...:

Ը.

Բայց այս ի՛նչ արդար օրէնք մ'է խորին
 Որ յղփացա՛ծ, նո՛խ Մեծերը երկրին
 Իրե՛նց արգանդի մէջ կը հարուածէ:
 Հաւասարութեան խո՛ւլ պէտք մ'է գուցէ
 Ու վիժածընունդ սերմերը Մեծին
 Ի՛ր որովայնին իսկ գո՛գը հիւժին,
 Ու հաշիւներէ վերջ, երբ ի հարկէ
 Ոսկի՛ն ալ պատրաստ է, հա՛յրը գրկէ
 Խանձարուրներու մէջ մետաքս գեղերփ,
 Անժպի՛տ, տժգո՛յն հրէշ մը մարդակերպ...:
 Մի՛նչ քանի՛ թշուառ խեղներ է՛գ, արո՛ւ,
 Ու յեղակարծ սէր մ'ունին իրարու,
 Կայծակներու պէս իրարո՛ւ և կու գան,
 Առանց հաշուելու վաղն ու ապագան,
 Ու կ'երկնեն - խորշի մը մէջ անձանօթ -
 Ի՛նչ հսկայ կեանքեր, անէծքի անօթ...:

Ապշա՛ծ, սարսափա՛ծ խորհեցայ անխօս,
 Սպարթական հի՛ն բարքին բարբարոս,
 Որ խեղդելէ վերջ կը յանձնէր գետին՝
 Մարդկային տժգոյն տգրուկներն յետին...:
 Բայց քառսուն դարեր անցեր են արդէն,
 Ու սորվեցանք որ հրէշներն ալ մարդ են.
 Անո՛նք ալ ունին զգացո՛ւմ, հոգի՛,
 Անոնք ալ ունին իրաւունք կեանքի,
 - Հոգ չէ բէ ապրին բիւրավոր մահով.
 Օրէ՛նքը՝ իրենց վահան ապահով...:
 Չե՛մ համարձակիր վերցնել մէկդի
 Կարմիր-վարդագոյն որ Օրէնք կ'ըսուի
 Դիտելու ըմբոստ այն կեանքե՛րն հսկայ,
 Որ բանտերու մէջ, կառափնատի վրայ,
 Կախադաններո՛վ մեռան անհամար,
 «Կեանքի Իրավո՛ւնք» ... պողալնուն համար:

Ժ.

Երկուքն ալ երկա՛ր, երկա՛ր դիտեցի:
 Այլեւս բնա՛ւ, մի խօսիք ինձի
 Արժանիքին վրայ, ու տարբերութեան,
 Ու ազնուական զարմին վրայ արեան:
 Ահա երկո՛ւքն ալ. անկերսլ բզէզներ,
 Շիւղ մը իսկ գիրենք պիտի մեռցնէր:
 Կ'ուզեն անուն տալ. ի՛նչ պէտք անունի...
 Իւրաքանչիւրն ալ իր անունն ունի.
 Մին Ո՛յժն է անգութ, միւսն Ստրկութի՛ւն:
 Ոյժ չունի կ'ըսէք խլէզն անարիւն.
 Ի՛նչ պէտք արիւնի. - անյագ բորենի՛,
 Հացի մը փոխան, կարմիր, ծիրանի,
 Ան պիտի ծըծէ Արիւնը միւսին,
 Ու պիտի մըլխէ ժանիքն իր միսին.
 - Օրէ՛նքը՝ իրեն անքոյք օթեւան:
 Ողջունեցէ՛ք զայն, Իշխանն է վաղուան...:

ԺԱ.

Մերադրած դողդոջ, աչքերըս ձեռքիս,
Կուրծքիս տակ գապել կ'ուզեի հոգիս:
Հազա՛ր նկարներ կ'անցնեին մտքես:
Արեան շոգւոյն պէս, նոնիներու պէս
Բի՛ւր կախադաններ անգուր մեծերու...
Ու հըրդեհներու մէջ հեռու է հեռու,
Ստրուկներու կո՛ւն, բարբարո՛ւ գունդեր,
Որ տանա՛ր, Աստուա՛ծ, կո՛ւնք, իշխա՛ն ու տե՛ր
Տապալելով վար, կ'երթային հեռո՛ւ
Հաւասարութեան սե՛րմը ցանելու,
Ու լա՛յն բաշխելու Արդարութի՛ւն, Հա՛ց...:
Այտիս վրայ հրաշեկ արցունք մը դողաց.
Աչքերըս բացի, տեսիլք էր միայն.
Ամէնքն ալ գացա՛ծ, ժամն էր լոնլեայն...:
Ու ե՛ս ալ գացի՝ իմ սուգիս դարման՝
Հաւասարութեան դա՛տը - գերեզման...:

ԳԻՒՂԱԿԱՆ ՃԱՄՐՈՒՆ ՎՐԱՅ
Ա.

Եկեղեցիէն մինչեւ գերեզման
Տանող ճամբուն վրայ, քարի մը վրան
Նստեցայ տրտում, ու լո՛ւն դիտեցի
- Հոգւոյս ծարաւո՛վը արեւելքցի -
Հեռուներն հանդա՛րտ, հեռուները լա՛յն,
Հեռուները ջի՛նջ, միսքի՛ք, լոնլեա՛յն:
Հո՛ն, երկինքներու տակ յաւետ ծաւի՛.
Առա՛նց ժպիտի ու առա՛նց ցաւի,
Կ'ապրէին մարդե՛ր, մրջիւննե՛ր, բոյսե՛ր...:
Հոն չէին հանչնար ո՛չ կոխ, ո՛չ սեր:
Հոն Անշարժութեան օրէնքին հըլու,
Առա՛նց անելու, առա՛նց նուազելու,
Հազար դարերու ու անհուններու
Մտերմութեան մէջ կ'ապրէին,- հեռո՛ւ
Սե՛գ Արեւմուտքէն ու հեզնելով զա՛յն...:
Հեռուները ջի՛նջ, միսքի՛ք, լոնլեա՛յն...:

Բ.

Ու հո՛ն, անուրջի մը մէջ անսահման,
 Երկիրը իբրեւ անհո՛ւն խնկաման,
 Իր ճանճրոյթը - լայն աղօթքի մը պէս -
 Անշտա պ, անխոռ վ կը մխար կարծես...:
 Ու հո՛ն, հեռաւոր հորիզոններու
 Անծալ երկինքնե՛րը հեռուէ հեռու,
 Կը տեղային վար՝ օրհնութեան մը պէս՝
 Ոսկեփոշի լայն անձրեւ մը կարծես...:
 Ու հոն արեւուն գունդին մէջ անշէջ,
 Ու ծածա՛ն-ծածա՛ն ցորեններու մէջ,
 Ու խրեիթներու բոյնին մէջ համակ,
 Աւերակներու սուգին մէջ ներմակ,
 Բա՛ն մը կար Կեանքէն անջատ, Կեանքէն վե՛ր,
 Բա՛ն մը որ Կեանքէն բնա՛ւ չէր ազդուեր,
 Որ կը նամակեր Երէկին, Վաղուան...
 Այդ՝ Մահուա՛ն իսկ մէջ ժխտումն էր Մահուան...:

Գ.

Ասոր համար երբ միտքն Արեւմուտքին՝
 Կեանք բառին առջե՛ւը զարմացագին
 Հարցական նշան մը կը դնէ նենգ...
 Մենք կախման երեք կէտեր կը դնենք...:
 Ու երբ կը վազէն անոնք տենդագին,
 Թուանըշաններով կը լուծեն հոգին,
 Կը քննեն երկինքն ու Աստուածը, մենք
 Մեր կախման երեք կէտը կ'երագենք...:
 Ու երբ կը խրոխտան անոնք, մենք կու լանք,
 Ա՛խ, որովհետեւ ի՛նչ որ ալ ըլլանք,
 Գլուխնիս երկինք, ոտքերնուս տակ հող,
 Այգին ու ցայգին միջեւ տատանող
 Օրօրոցներ ենք...: Ու ինչ որ անշէ՛ջ
 է, պիտի շիջի շիրմին մուրիկն մէջ...:
 - Լացը վերյիշում՝ մըն է լոնլեայն,
 Թէ ի՛նչ ալ ըլլանք, մարդեր ենք մի՛այն...:

Այսպէս ապրեցան, ու այսպէս կ'ապրին
Բոլո՛ր որդիինե՛րը Արեւելքին:
Խունկի՛, կնդրուկի՛ ծոցը լուսկեաց,
Իրենց հոգիին անծանօթ մընաց
Պոռոտ Գիտութեանց շեփորը սոփեստ,
Ու սուտ Փառքերու ծածկոյթն հաստաբեստ...:
Անոնք ստացան, առա՛նց ուզելու...:
Ու Կեանքէն անցան՝ առա՛նց յուզելու
Անոր մութ յատակը աչքէ անտես,
- Մոլուկ վրայ սահող լո՛ւր թեւհակին պէս...:
Անոնք գինովցան, առանց քննելու...:
Ու լացի՛ն՝ սրտի պէտքի մը հլո՛ւ...:
Անոնք խոկացին Եղեմն ու ծնան
Անէութեան մեծ հսկան - Նիրվանան,
Ու երազատես Նագովրեցիին հեզ...
- Ու Երկունքը հեշտ էր Մահուան մը պէս...

Ե.

Անոնք նայեցան հեռուէ՛ն՝ մարդկային
Յառաջդիմութեան կուռ մեքենային,
Ինչպէս անտառին ծո՛ցը ամայի,
Մերունի եղնիկն հանդա՛րտ կը նայի
Տքացո՞ղ, շաչո՞ղ սեւ շոգեկառքին՝
Լա՛յն «ինչո՛ւ համար» մը զարմացագին
Թարթելով աչքին մէջ երազահալ...:
- Ինչո՛ւ շտապել. չէ՛ որ ամէ՛նքս ալ,
Ոմանք հեւ ի հեւ, ու ոմանք դանդաղ,
Անվրի՛ պօրէն պիտի հասնինք Մահ...
Կեանքն է այս. միշտ սուտ սուտի ետեւէ.
Մէկը՝ հազի՛ւ թէ միւսին չափ տեւէ...;
Շառաչող ծովուն ալիքներուն պէս,
Կը ծնինք ամէնքս, կը բարձրանանք վէս,
Բայց հազի՛ւ ատեն մը կայ փրփրելո՛ւ...
Պէտք է կորսուիլ. կորսուի՛նք հըլո՛ւ...

Զ.

Ու այսպէ՛ս պիտի կորչի ամէն բան...;
 - Ժայռին վրայ նստած՝ դիտեցի նամբան,
 Դեղին Փռչիի յուսահա՛տ նամբան,
 Խո՛ւլ «Երեկ»ներու պատմի՛չը անբան...:
 Ա՛խ, այդ գալարուո՛ղ, չի հատնո՛ղ, խոպա՛ն,
 Արեւուն ծագէն ի մո՛ւտքն՝ անխափա՛ն
 Երկարող վտի՛տ, բարեկամ նամբան,
 Ծընող մարդկութեան առաջին օրրա՛ն
 Որուն ապալեր իրանին վըրան,
 Հիմալայայի սարէն մինչ Իրան,
 Ու Արարատէն մինչե՛ւ Վոսփորոս,
 Մինչե՛ւ Դանուբի ակերն մշտահո՛ւս,
 Ու մինչե՛ւ չորս ծագը Արեւմտեան,
 Գացին Առաջին հայրերն Մարդկութեան,
 Այրող Արեւուն գունդին տակ, խաղա՛ղ,
 Ճոացընելո՛վ կառքերնին դանդա՛ղ...:

Է.

Առաջին անգամ ըլլալով հառա՛չ
 Մը արձակեցի այդ նամբուն առաջ...:
 Սոսկա՛ցի իրմէն. ու ափ մը փռչի
 Առի, մարդու մը նըման որ կ'ապշի...
 Բա՛յց ինչ կիկլոպներ, իրբեւ թէ անշե՛ջ
 Ի՛նչ ազգեր, կեանքե՛ր այդ փռչիին մէջ:
 Ի՛նչ արեան լիներ, քանի՛ ոսկորներ
 Դարերու մէջ հոն փռչի են դարձեր...:
 - Դիտեցի ուշով, զի՛ս նանչցայ հոն շուտ. -
 Նախ քարայրներու բնակիչ մագուտ,
 Յետոյ ասպագէն նետածիգ մը սեգ,
 Յետոյ թագաւոր մը - եթէ կ'ուզէք,
 Յետոյ ածիլուած գլխով մէկ գերի,
 Յետոյ թրուպատուր մ'որ կը դեգերի...
 Ու հիմա տժգոյն խե՛ղն մը դող ի դող,
 Ո՛չ մարդ, ո՛չ Աստուած, ու ո՛չ իսկ քերթող...:

Ը.

Հոն նանչցայ նաեւ ծեր Սողոմոնին
 Հալւէ բեռցուած կարաւաններն հին...
 Գանգէսէն բոյրի, թանկագին քարի,
 Ու Կարմիր Ծովէն ալ ամէն տարի
 Ուղտերով կրուա՛ծ պերճանքները բուստ,
 Դամասկի մետաքս բեհեզն ալ հագուստ,
 Արքաներու ձօն՝ Քլեօբարային...:
 Ու վերապրեցայ հոն եղեմային
 Ու գինովցընող հըրաշքը չքնաղ
 Շամիրամի պերն պարտէզին առկախ...
 Հո՛ն. այդ փոշիին մէջ խօսեցուցի
 Տարաբախտ Անդուանն Հոովմայեցի
 Որ վահանն իրեն ծախեց Տոփանքին...
 Հո՛ն, խօսեցուցի նաեւ տխրագին
 Ժողովուրդներ որ մեռա՛ն անհամար:
 Չեմ գիտեր ո՞ր մէկ Արքային համար...

Թ.

... Յանկարծ ծանր՝ թեւ մը զարկաւ ուսիս:
 Հին երազներէն արթնցաւ հոգիս.
 Ու տեսաւ տարեց մշակ մը տժգոյն:
 - «Ո՞վ ես դու»: - «Անունս է Աշխատութիւն...»;
 - «Ի՞նչ կ'ընես այսպէս»: - «Կը մուրամ...» հծծեց.
 Ու լո՛ւն հեռացաւ, մինչ ես դառնահեծ
 Գացի ետեւէն մինչեւ իրեն տուն...:
 Գետնի անկողնի մը վըրայ, արթո՛ւն,
 Երկարած նիհա՛ր իր կիներն հոգեւար,
 Ծեծուած անասնի մը պէս կը հեւար...
 Ո՛ւ մինչ գնաց հինգ խլէզներէն մին,
 Աթոռի պէս բա՛ն մը նարեւու հին,
 - «Հաց չի կայ, կ'ըսէր հայրիկը ինծի,
 «Մի քանի օր է չեմ երթար գործի,
 «Կը տեսնես, վերջին օրերն են գուցէ...
 «Առանց ինձ, աչերն ո՞վ պիտի գոցէ...»:

Ժ.

Ու կիներ բարի կը նայեր իրեն,
Ինչպէս կը նայի մարդ անա՛սնօրէն
Իրեն Աստուծուն...: Ախ, որովհետեւ
Իր կենակցութեան ժամը կարճատեւ
Սիրալի՛ր եղաւ. կոխ չունեցան
Ո՛չ դրամօժիտի, ո՛չ ժառանգութեան...:
Ժըրաջան տիկին, միշտ իր յարկին տակ...
Թանը առատ էր, անկողինը տաք...
Ու քիչ օրէն երբ Տիրոջ հրամանով,
Հողին տակ պիտի բաղուէ՛ր ապահով,
Կը խրատեր երկան՝ առնել գիւղակին
Այսի՛նչ ժրաջան աղջիկն իբրեւ կին,
Որովհետեւ խեղճ կիներ կը յուսար
Թէ ան կը նայեր աչքով հաւասար
Թէ՛ իր ամուսնոյն, քէ՛ իր խորթերուն
Եւ քէ՛ գոմի իր փոքրիկ հորթերուն...:

ԺԱ.

Դուրս ելայ տունէն, մարմինս փուշ փուշ.
Խորհեցայ կեանքին իմաստին ապո՛ւշ,
Թէ ինչպէ՛ս ստրուկ կիրքերու հըլո՛ւ,
Մարդըս աւելի՛ վարժ է մուրալու,
Քան պապենական օրհնած դանակով,
Քի՛չ մը վախցնել - գոնէ՛ կատակով... -
Մեր ոսկեճոյլ նո՛ր Աստուածները կո՛վ...:
Խորհեցայ քէ Դրամ միապետին քով՝
Ի՛նչ տժգոյն ըմբիշ մ'է Աշխատութիւն...;
Խորհեցայ անգա՛մ մըն ալ անարիւն
Այն բո՛ւն մը «Նորին Վսեմութեանց» վըրա՛յ
Որոնց շնորհիւ երկիր կը դառնայ...:
Խորհեցայ Ոյժին վրայ մըտովի,
Ու ա՛յն հտպիտին որ Օրէնք կ'ըսուի...:
Ու գացի ես լուռ, իմ սուգիս դարմա՛ն,
Հաւասարութեան դաշտը - Գերեզման...:

ԳԻՒՂԱԿԱՆ ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆ ՄԷՋ
Ա.

Սկեպտիկ ժպտով մը դանդաղագին
Երբ մարդ ըմպած է մրո՛ւրը կեանքին,
Երբ ծառայած է կամքով կորովի՝
Այն մեծ վարպետին որ Վիշտ կը կոչուի.
Ճանչած է դողդոջ դշխոյն որ Սէրն է.
Ազգաց, անհատին Պատմութեան դժնէ
Նայած է անգամ մը միւս երեսին,
Ճանչցած է մարդուն Գիտութիւնը սին,
Արուեստն յաւակնոտ, սիրտն ամբարտաւան,
Սո՛ւզը Երեկին, երկիւղը Վաղուան...
Ու նշմարտութեան հոգին ծարա՛ւի
Զննած է երկնից պարապը ծաւի
- Հի՛ն աստուածներու վիհն այն մշտակա՛յ,-
Ա՛յն մարդուն համար ուրիշ վայր չի կա՛յ
Աւելի՛ քաղցրիկ հեշտանքով յըղի,
Քան գերեզմաննոց մ'աղքատիկ գիւղի...:

Բ.

Լո՛ւռ նստած քարի մը վըրայ տապան,
Դիտեցի լո՛ի՛ն այդ վայրը խոպան,
Ու զո՛ւր խորհեցայ թէ այս այն վա՛յրն է
Ուր վանառական Աստուած մը դժնէ
Զարը կը պատժէ անսահման վախով,
Բարւոյն շնորհելով դրախտ մ'ապահով...;
Ընկղմած ծոցն այդ Մահուան Քաղաքին,
Զուր խորհեցայ թէ անմա՛հ էր հոգին...:
Անմա՛հ. բայց չէ՞ որ երկնից մէջ գարնան
Բիւր գիսաւորներ մոխիր կը դառնան.
Աստղեր կը վառի, աստղեր կը սառչին.
Կը լո՛ւ գայգին պլպուլը վերջին,
Բոյս ու կենդանի կ'իյնան անկեանդա՛ն.
Ամէն, ամէ՛ն բան մահուան զոհ կ'երթան...:
Ու երկնքին հիւր՝ լոկ մա՛րդն է տըխուր...;
Անհա՛մ, մի՛նչեւ ե՞րբ, ինչպէ՞ս, եւ ո՞ւր...:

Գ.

Բայց ուսկե՞նչ կու գայ այն Յոյսը մարդուն,
 Որ մեծ-ցայգին մեջ միայնակ արթուն
 Կուգե հսկել՝ երբ իր ոսկորոտին
 Երկու ափ հողի ներքե կ'անհետին:
 Ու ինչպե՞ս դիակը փտելէ վերջ,
 Մարդ յամառօրէն, Մահուան ծոցին մէջ,
 Անմահութեան Յոյսն մըն է դիուցեր...:
 - Անշո՛ւշտ սարերու երբ եղնիկը ծեր
 Կը նայի անդունդն ի վար անյատակ...
 Երբ գայլը փոքրիկ՝ մացառներու տակ՝
 Կը դիտէ մահն իր գնդակահար հօր...
 Երբ ովկիանին վրայ անդնդախոր՝
 Ծնագայլն հսկա՛յ կը թաւալի լո՛ւն...
 Վերջալոյսին դեմ Առիւծը տխուր՝
 Երբ կը մոնչէ դաշտին մէջ խոպան...
 - Անմահութեան վրայ չէ՛ որ կը խոկան...:

Դ.

Նո՛յն իսկ Մարդուն մո՛ւր նախահայրն Ադամ,
 Անգե՛ն, անպաշտպա՛ն այդ խեղեն հաշմանդամ,
 Նետուած ուժերո՛ւ միջեւ ահագին,
 Ծա՛տ քիչ հաշիւի կ'առնէր իր հոգին,
 Երբ պտո՛ւղի մը համար, անվեհե՛ր,
 Անմահութենէն կը հրաժարէր...:
 Բայց ահա անբա՛ւ միջոց մ'է անցեր
 Յիսուն ծանրածանր դարով՝ Մարդը ծե՛ր,
 Որ իր ուղեղին դրրդումին հըլու,
 Հասեր է ամե՛ն ինչ գըրաւելու,
 Ստրուկներ գտեր է անասնոց մէջ,
 Մնացածը զարկեր, հալածեր անվե՛րջ,
 Աստուածնե՛ր շիներ է նախ անհամար,
 Յետոյ ամենքն ալ այրելու համար...
 Տիրե՛ր է Բնութեան Ուժին ահագին,
 Կը տենչայ իշխել այդ ժամանակին...

Ե.

Ա՛խ, անմա՛ն ըլլալ...: Ապրի՛լ յաւիտեան.
Իսպա՛ն չունենալ ո՛չ դար, ո՛չ վայրկեան.
Ժամանակի՛ն պէս, ժամանակի մէջ,
Տքա՛լ, տառապի՛լ, բայց ապրի՛լ անվերջ...;
Սիրտը արիւնոտ, մարմինը հիւանդ,
Յոգնաբե՛կ, ի՛նչ փոյթ, ապրիլ մանաւանդ...;
Շիւղ մ՛ըլլալ մարգի, ի՛ր մը լոնլեայն,
Բայց յաւիտենին մէջ ապրի՛լ միա՛յն...;
Քար մ՛ըլլալ անարգ, ապառաժ մ՛անխօս,
Գէթ նիհար առուակ մ՛ըլլալ մշտահոս,
Ծառ մը դարաւոր, մետաղ մը միայն
Անմի՛տ, անզգա՛յ. չի մեռնիլ սակա՛յն...:
- Աստուածացեալդ Մա՛րդ, ամօք քեզ, ամօք,
Մուք ամբարտաւան խրոխտութեանց անօ՛ք,
Դեռ ամէ՛ն գինով կը կառչիս հողին...:
Նայէիր աշնան տերեւին դեղին...:

Զ.

Ու երբ ըսեն, թէ գիտութիւնը նոր
Այրե՛ց հի՛ն, փոշո՛տ, գիրքերը բոլոր,
Թէ Նիւթ կայ միայն, Հոգին չէ՛ անման,
Հոգին չի կա՛յ իսկ. - Մի հաւատաք, ա՛հ;
Վեիտ մոմեաներն հին եգիպտոսին,
Դարերու գաղտնի՛քը թող ձեզ խօսին...:
Նայուածք մ՛ուղղեցէր դեպի Պարթեւոն,
Նոր Անմա՛հնեբն են որ կը խրոխտան հո՛ն:
Ու է՛ն չոր գիտունն իսկ կրօնքին օտար
Քարէ արձանի մը հոգին կու տար...;
Ա՛խ, կեանքի, մահուան կոխն անզգամ...
- Ու անշուշտ՝ մէնէ է՛ն խելօքն անզամ...
Երբ տեսնէր Մահն որ պաշտօնին հըլո՛ւ
Կու գար սիրելին մենէ խլելու,
Թէ Աստուա՛ծ ըլլար ան, թէ Սատանայ,
Շան մը պէս պիտի խեղդէր անխընայ...:

Է.

Շահն մը պէս... ա՛խ, շատ չի պիտի ըլլար...:
- Բարե՛կ, կը յիշեմ՝ թէ ինչպէ՛ս կու լար,
Ինչպէ՛ս կը խածնէր սնար ու սաւան,
Ինչպէ՛ս կը կանչէր արե՛ւը վաղուան
Որ ա՛լ չի պիտի գար երբեք իրեն.
Ու ինչպէ՛ս կ՛ուզէր խելայեղօրէն
Մարմինն անկողնէն քաշել անհընա՛ր,
Ու ինչպէ՛ս պատէն մագլիլ կը ջանա՛ր,
Սարսափած աչքերն ուղղելով ինծի...
- «Ես եմ, բարեկա՛մդ, աւա՛ղ...» գոչեցի,
Բայց ան աչքերու խրեց իր մատներ,
Զի ես կապրէի, մինչ ինք կը մեռնէր...:
- Հասկըցա՛յ, ընկեր. լեզուդ վերջնագոյն:
Բայց մահէն փախչող վատ մ՛էի տժգոյն,
Զի Սէրն իսկ սո՛ւտ է, մարդերը մա՛րդ են...
Ու մեր երկուքին մէջ մա՛հն էր արդէն...:

Ը.

Ինչպէս նետահար թռչուն մ՛որ յետին
Ճիգերն իր կ՛ընէ կառչելու օդին...
Ծովամոյնն ինչպէս կը փարի վէտ վէ՛տ
Խլեակի մը որ կ՛ընկղմի իր հետ...
Ինչպէս սարի հեզ արծիւն հոգեվար
Կը կառչի ժայռին որ չի սահի վա՛ր...
Այնպէս մատներուն նիզովը յետին
Կ՛ուզէր բռնուիլ սնարին պատին...:
Անկողին գամուած, փտիլ, ցաւիլ. լալ,
Դարերով, ի՛նչ լաւ...: Բայց մեռնի՛լ, չըլլա՛ր...:
Ահե՛ղ կը մըղէր պայքարն անիրաւ
Երբ բերնէն արեան ուղիս մը գայն տարաւ...:
Այդ շքեղ սրտէն, կեանքէն ի՛նչ մընաց. -
- «ԵՍ» կ՛ըսէ անհունն,- «ԵՍ» կ՛ըսէ Աստուած:
Ու ե՛ս, իր գեղջուկ քարին վրայ կու գամ
Յանգի զարնելու տաղերս անզգամ...:

Դիտեցի գողտրիկ այդ վայրը բողբոջ,
 Ու ես ակամայ խորհեցայ դողդոջ
 Մերուկ Տանթէյի անեղ դժոխքին,
 Ուր յիմար վագրի մը մէջ մոլեգին,
 Այրող խաւարին, փրփրող արեան մէջ,
 Երախնին բացած, անբարբա՛ն, անվէ՛րջ,
 Տժգոյն հերոսներ պար կը դառնային...:
 Խորհեցայ նաեւ սեգ Սատանային,
 Ջոր Միլրօն, աչքով կոյր, հոգւով արթուն,
 Իշխա՛ն հոչակեց յաղթուած Մարդուն.
 Որ երեքժանի ցուպով կ'գրօսներ
 Անհանգիստ ընել դատարկ գլուխներ...:
 Չը մոռցայ նաեւ մտածել անեղ
 Օրուան՝ երբ փողին ձայնէն խելայեղ,
 Կմախքներ երկի՛նք կը թռչին արդէն...:
 - Ինչ որ քիչ մը շատ խնդրել է մարդէն...:

Մարդուն տանջըւած խղմտանքը վա՛տ
 Ի՛նչ մղձաւանջներ երկնեց յուսահատ,
 Ի՛նչ սաղայելեան ցաւեր անհամար,
 Ի՛նչ եղեմ՝ մեր գարշ դիակին համար...:
 - Հո՛ն, ոչի՛նչ կայ մութ, ոչի՛նչ կայ դժնէ:
 Ան դանդա՛ղ խմուած պարապ գաւարն է,
 Առա՛նց քանդակի, առա՛նց սուտ գարդի,
 Առա՛նց նորագիւտ հնարքներու արդի,
 Ու տիտղոս, տարիք կ'անմահացրնեն...
 Վարդի թուփ մը հոն կ'իյնայ ծարաւէն...:
 Ու եթէ երբեմն ողբեր կ'ողկողեն
 Քարի մը տակէն. - Մե՛ր բուն է գիւղին...:
 Թէ արշալոյսին ստուեր մը յածի. -
 Իմաստասէր կո՛վ մ'է որ կ'արածի...:
 Ու թէ շիրիմներ պեղուին անընդհատ. -
 Բորենի մըն է, կամ քերթող մը վատ...:

... Ինկայ ու մտիկ ըրի սգահար,
 Չայնի մ' որ քարին ներքեւ կը դողար. -
 - Ե՛ս եմ, Ե՛ս եմ, Ե՛ս քեզ եղբա՛յր, քեզ քո՛յր,
 Ե՛ս տիեզերքին հսկայ ա՛ջքը կո՛յր.
 Ե՛ս սկիզբ եւ վերջ, երա՛խ ու արգանդ.
 Ե՛ս վի՛հ անյատակ ու ծոց արգաւանդ.
 Ե՛ս այն եմ որ քեզ ծընաւ, նաեւ ա՛յն
 Ջոր պիտի ծընիս: Ես ճա՛յն լռելեայն:
 Ե՛ս օրհնութիւնն եմ, բարիքը վերջին,
 Ե՛ս այն եմ որմէ ամէնք կը փախչին
 Եւ որմէ փախչիլ չի կա՛յ: Հաւասա՛ր
 Ներո՛ւմն եմ անոր որ ինձ կը յուսար,
 Անո՛ր որ հեզնեց գիս առանց խղնի:
 Ամէնո՛ւն ալ վրայ իմ մարդըս կ'անի...:
 Մանգադս ո՞վ պիտի համբուրէր անա՛հ...:
 - Ինձ ԱՍՏՈՒԱՄ ըսին, իմ անունս է ՄԱ՛Հ...:

1909, Լօզան

ՌՈՒՐԷՆ ՍԵՒԱԿԻ ԱՆՈՒԱՆ
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿԻ
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԶԻՎԻՆԿԻՐԵԱՆ

Թիւ 9

ՌՈՒՐԷՆ ՍԵՒԱԿԻ ԱՆՈՒԱՆ
ՅԻՇԱՏԱԿԻ ՏՈՒՆ

•

ՌՈՒՐԷՆ ՍԵՒԱԿԻ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆԸ

•

ՌՈՒՐԷՆ ՍԵՒԱԿԻ ԱՆՈՒԱՆ
ԳՐԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿ

Փաբիզ - 1989

Ազգ մը իր հերոսներով կ'ապրի:

Ազգ մը, որ հերոսներ չունի, ապրելու իրաւունք չունի:

Ազգ մը, որ իր հերոսները կը մոռնայ,

ինքն ալ մեռնելու դատապարտուած է:

* * *

Ազգ մը իր առաջնորդներով միայն արժանի կ'լլայ

ազգ մը ըլլալու...

ՅՈՎՀԱՆ ՆԷՍ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ

**ԴԻՄՈՒՄ ԽՆԴՐԱՆՔ
ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՄԷՋ...**

**ՌՈՒՔԷՆ ՍԵՒԱԿԻ ԱՆՈՒԱՆ
ՅԻՇԱՏԱԿԻ ՏՈՒՆ**

Մեծ Եղեռնի զոհերեն՝ մեծատաղանդ բանաստեղծ-գրագետ ու մտաւորական Ռուբեն Սեւակի նիսարնակ (Ֆրանսա) հարագատնե-րեն Յովհաննէս Ջիլինկիրեան, Սփիւռքի հետ մշակութային Կապի կոմիտէի նախագահութեան ուղղուած նամակով մը կ'առաջարկէ, որ տարաբախտ գրողի անունով Տուն-թանգարան մը ստեղծուի Երեւանի մէջ:

Ռուբեն Սեւակի եղբորորդին իր եւ Սեւակի բոլոր մերձաւոր-ներուն անունով տրամադրութիւն կը յայտնէ աջակցելու այդ Տուն-թանգարանի ստեղծման, հայթայթելով նահատակ գրողին արխիւը, անձնական իրերը, իր եւ զանազան նկարիչներու կողմէ գծուած իւղաներկ պաստառներ, գրողին ու իր կնոջ միջեւ փոխանակուած նամակներ եւ դեռ ուրիշ «հարիւրաւոր մասունքներ, որոնց միակ արժանի տեղը Մայր Հայրենիքն է», շեշտուած է նամակին մէջ:

Ռուբեն Սեւակի անունով Տուն-թանգարանի մը ստեղծման գա-ղափարը անկեղծ ու բարեմիտ սրտացաւութենէ կը բխի:

Տաղանդաւոր բանաստեղծի, հայու եւ մարդասէրի հարագատ-ները կը կարծեն, թէ «գոյգ Սեւակներ»-ու գոյութիւնը հայ գրակա-նութեան մէջ շփոթի ու թիրիմացութեան դուռ բացած է եւ կը շա-րունակէ տեղի տալ: Ռուբենը Պարոյրի վերածելով ոչ թէ իր գրեթէ գարունին մէջ շիջած կեանքի մը նոր շունչ ու կենսունակութիւն հաղորդած է, այլ՝ ստուեր ձգած նոյնիսկ վաղամեռ տաղանդի մը յիշատակին վրայ:

Պէտք է ըսել, որ չափով մը արդարացի է այս դիտողութիւնը:

Միւս կողմէ ալ հարկ է շեշտել, ամէն թիւը մեկնաբանութիւն կանխելով, որ այս նկատողութեան մէջ արժեքի ու վաստակի թերա-գնահատման կամ գերագնահատումի միտում չկայ ամենեւին:

Բոլորիս հարազատ 2 Սեւակներուն բնածին տաղանդ եւ հայկական քերթողութեան աստղահոյլին մաս կազմելուն ոչ ոք կրնայ դոյզն կասկած ունենալ: Ինչ որ պատահած է՝ զայն ակամայ ու անստալի վրէպ կարելի է սեպել, եւ այս մէկն ալ դարմանելու համար կ'առաջարկուի Ռուբէն Սևակի Տուն-թանգարան հիմնել Մայր Հայրենիքի մէջ: Նախաձեռնութիւն մը, որ այլապէս ալ, գնահատելի է: Առաջին Սեւակի յիշատակին վերարծարծուիլը որեւէ ձեւով երկրորդի արժեքին ուրացումը եւ ոչ իսկ, դոյզն չափով, նսեմացումը պիտի ըլլայ: Ինչպէս որ, իսկութեան մէջ, երկրորդ եւ ոչ նուազ տարաբախտ ինքնաշարժի վթարի գոն - Սեւակը, իր անուանակցութեամբ, ինքնութիւններու միջեւ որոշ - բայց ամէն պարագային ակամայ - շփոթ ստեղծելով հանդերձ, առաջինի մեծութենէն ու հմայքէն բան չէ պակասեցուցած:

Ստորեւ կը հրատարակեն մասեր Սփիւռքի Կոմիտէի նախագահութեան հասցեագրուած նամակէն:

Դժուար է կասկածիլ անոր անկեղծութեան եւ հոն պարփակուած տրամադրութիւններուն բարի կամեցողութեան հետեւանք ըլլալուն: Ու կը խորհիմք, որ Տուն-թանգարանի մը ստեղծման գաղափարին ընդառաջելու համար ոչ մէկ անպատեհութիւն կայ: Ընդհակառակը, շատ աւելի լաւ է, որ արդէ՛ն իսկ Մայր Հայրենիքի մէջ բարձր գնահատուած մեծ բանաստեղծին թափառական ու ցանուցիր արխիւ-մասունքները ամփոփուին հարազատ հողի վրայ, իրենց յաւիտեական հանգիստը գտնելով այնտեղ, գուրգուրոտ ձեռքերուն մէջ: Ռուբէնի երազանքներէն մէկն ալ այդ եղած չէ՞ր:

«ԱՐԱՐԱՏ» ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԷ

6 Դեկտեմբեր 1985, Պէյրութ

* * *

Կոմիտէի նախագահութեան հասցեագրուած դիմում-խնդրանքին գլխաւոր մասերը: Նամակը 16 Սեպտեմբեր, 1985 թուականը կը կրէ:

Սփիւռքահայութեան հետ

Մշակութային Կապի Կոմիտէի նախագահին

Յարգելի նախագահ,

«Այս նամակը ձեզի կ'ուղարկենք Ռուբէն Սեւակի հարազատներ-

րուն եւ մօտիկ ազգականներուն անունով:

Ինչպէս որ գիտէք այս տարի նահատակ բանաստեղծ՝ Ռուբէն Սեւակի ծննդեան 100-ամեակն է:

Հայրենիքի մէջ այս տարեդարձը յիշատակուեցաւ 19 Մարտ 1985-ին Երեւանի Գրողների միութեան մեծ դահլիճին մէջ:

Այս առթիւ խորին շնորհակալութիւնները կը յայտնենք մեր սիրելի Խորհրդային Հայաստանի պետութեան, Գրողներու Միութեան նախագահութեան եւ գրողներուն, ու բոլոր անոնց, որոնք այս յիշատակի օրը իրականացուցին:

13 Հոկտեմբեր 1985-ին ալ Փրանսայի Նիս քաղաքին մէջ, մեծ հանդիսութեամբ պիտի յիշատակուի Ռուբէն Սեւակի ծննդեան 100-ամեակը, իր երկու գաւակներուն ներկայութեամբ:

Այս առթիւ ձեզմէ կրկին կը խնդրենք, որ հայրենիքն ալ իր ներկայացուցիչը ունենալ եւ մասնակցութիւնը բերէ, հերոս նահատակ բանաստեղծ՝ Ռուբէն Սեւակի յիշատակին կատարուելիք հանդիսութեան, եւ Նիս ուղարկէ իր յարմար տեսած անձնաւորութիւնը:

Ռուբէն Սեւակ՝ իսկական մարդասէր եւ ընկերվարական բանաստեղծն է, որ իր կեանքին մինչեւ վերջը այս իտեալին հաւատարիմ է մնացած, վկայ՝ իր բանաստեղծութիւնները, իր պատմութեանը, եւ վկայ՝ իր հերոսային վախճանը:

Ռուբէն Սեւակ դեռ այն ատենէն տեսած է Դաշնակ կուսակցութեան բուրք իրօքիհատականներու եղբայրութեան վրայ յենող սխալ քաղաքականութեան վտանգները, եւ իր գրութիւններով հակառակած է այս քաղաքականութեան:

1920-էն սկսեալ, Մայր Հայրենիքը եւ հայրենի ժողովուրդը, գիտցած է գնահատել Ռուբէն Սեւակը: Յառաջադիմասէր լայն գանգուածներու սրտին խօսող բանաստեղծութիւնները եւ պատմութեանը, միշտ հրատարակուած են Մայր Հայրենիքի մէջ: Ռուբէն Սեւակի մասին հայրենիքի մէջ հրատարակուած գիրքերը բազմաթիւ են. օրինակ՝

1955 - Երեւան, Եղիշէ Պետրոսեան - **Ռուբէն Սեւակ, Երկեր:**

1959 - Երեւան, Գեորգ Հատիտեան, **Ռուբէն Սեւակ:**

1965 - Երեւան, Էդուարդ Զրբաշեան, **Ռուբէն Սեւակ:**

1972 - Երեւան, Վ. Ա. Կիրակոսեան, **Ռուբէն Սեւակ:**

1985 - Երեւան, հրատարակութեան կը պատրաստուի Ալեքսանտր

Թուփչեանի՝ Ռուբէն Սեւակի ամբողջական գործերը:

Այս երկար ցանկը ապացոյցն է Մայր Հայրենիքին եւ հայրենի ժողովուրդին գնահատանքին, Ռուբէն Սեւակի համար, եւ մենք, մեր խորին շնորհակալութիւնը եւ երախտագիտութիւնը կը յայտնենք Հայաստանի պետութեան, Հայաստանի մտաւորականներուն եւ Հայաստանի ժողովուրդին:

Այս առթիւ մեզի թոյլատրեցէք, որ ակնարկութիւն մը ընենք երեւոյթի մը մասին:

Մենք անկեղծ հաւատքը ունինք, որ Ռուբէն Սեւակի հանդէպ անիրաւութիւն մը կատարուած է, Սեւակ անունը ուրիշ բանաստեղծի մը տալով: Թերեւս առանց ուզելու, առանց հետեւանքները նկատի առնուելու, թերեւս բարի նպատակաւ, ինչպէս որ յարգելի պարոն Զարեանը մեզի ուղղած պատասխան նամակին մէջ մատնանշած է:

Պարոն Ռուբէն Զարեան՝ Աւետիք Իսահակեանի պատմած՝ Ռուբէն Սեւակի «Չանկըրըի»ի մէջ ցուցաբերած հերոսական կեցուածքին տպաւորութեան տակ մնալով, ուզած է Ռուբէն Սեւակի յիշատակը յաւերժացնել, ուրիշ Սեւակ մը ստեղծելով, Պարոյր Ղազարեանէ, Պարոյր Սեւակ մը ստեղծելով:

Բայց արդիւնքը ի՞նչ եղած է:

Պարոյր Սեւակ անունը՝ ձեւով մը մոռցնել տուած է Ռուբէն Սեւակը:

Ռուբէն Սեւակի հանդէպ կատարուած այս անիրաւութեան մասին մեր ունեցած խոր համոզումով, վերջերս Պէյրութի «Արարատ» թերթին մէջ, յօդուածաշարք մը հրատարակեցինք: Այս թերթերէն մէկ-մէկ օրինակ ձեզի կ'ուղարկենք առ ի գիտութիւն:

Շատ մօտ ատենէն, այս յօդուածաշարքը, գիրք ըլլալով պիտի հրատարակուի Փարիզի մէջ, աւելի ընդլայնուած եւ Ռուբէն Սեւակի բանաստեղծութիւններով հարստացած:

Դժբախտաբար այսօր, ինչ որ ալ ընենք այս սխալը սրբագրել կարելի չէ: Ինչպէս որ Ռուբէն Զարեան իր նամակին մէջ կ'ըսէ. «Նղածը եղել է»:

Բայց, բայց դարմանել կարելի է. Ռուբէն Սեւակի եղբօրորդին ըլլալու պատիւը եւ հպարտութիւնը ունենալով, Չեզմէ կը խնդրենք, որ մեր սիրելի հայրենիքը Ռուբէն Սեւակի հանդէպ եղածը դարմա-

ներ, Ռուբէն Սեւակի անունին յիշատակ Տուն-բանգարան մը ստեղծելով:

Չեզ կրնանք վստահեցնել, որ Ռուբէն Սեւակի ազգականները պատրաստ են իրենց կարելիութեան չափով, ամէն տեսակ օժանդակութիւն ընել այս ծրագիրին իրականացման համար: Մենք պատրաստ ենք այս Տուն-բանգարանին նուիրելու 100ի մօտ հայ նկարիչներու պատառներ: Անոնցմէ զատ մենք մեր քով ունինք Ռուբէն Սեւակի արխիւին մէկ մասը, որ կրցանք փրկել Պոլսոյ դժոխքէն:

Ասոնց մէկ մասը նշենք՝

1.- Ռուբէն Սեւակի ձեռամբ գծագրուած նկարներ:

2.- Ռուբէն Սեւակի ձեռամբ «Չանկըրըի»ի քստրավայրէն իր կնոջ գրուած քսան հատ բացիկ-նամակներ, որոնց արժէքը, պատմական արժէքը՝ շատ մեծ է:

3.- Ռուբէն Սեւակի կողմէ իր կնոջ եւ այլ անձերու գրուած հարիւրաւոր նամակներ:

4.- Ռուբէն Սեւակի կողմէ իր կնոջ եւ այլ անձերու գրուած հարիւրաւոր բացիկ-նամակներ:

5.- Իր անձնական իրերէն մէկ մասը:

6.- Ռուբէն Սեւակի կողմէ քաշուած մեծ թիւով նկարներ:

7.- Ռուբէն Սեւակի պատկանող մեծ թիւով նկարներ:

8.- Ռուբէն Սեւակի պատկանող գիրքեր, թերթեր, եւ այլն:

Կարն խօսքով, Ռուբէն Սեւակի պատկանող հարիւրաւոր մասունքներ, որոնց միակ արժանի տեղը՝ Մայր Հայրենիքն է:

Յարգելի նախագահ,

Ռուբէն Սեւակի իտեալն էր՝ Արդարութեան, Հաւասարութեան վրայ հիմնուած աշխարհ մը, եւ հայու վայել հայրենիք մը:

Այսօր Ռուբէն Սեւակի իտեալը իրականացած է, իր վերածնած հայրենիքով:

Եւ մենք, մեր վերածնած հայրենիքէն կը խնդրենք, որ հայրենիքի սիրոյն, նահատակուած Ռուբէն Սեւակի անունը, հայրենիքի մէջ յաւերժանայ, Ռուբէն Սեւակի անունին՝ Տուն-բանգարանով մը:

Խորին շնորհակալութիւններով,
Ի դիմաց Ռուբէն Սեւակի հարազատներուն
եւ մօտիկ ազգականներուն՝
Ռուբէն Սեւակի եղբօրորդին՝
ՅՈՎՀԱՆՆԷՍ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ

**ՍՓԻԻՌՔԱՀԱՅՈՒԹԵԱՆ ՀԵՏ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ԿԱՊԻ ԿՈՄԻՏԷ**

Երեւան՝ 20-12-1985

Պր. ՅՈՎՀԱՆ ՆԷՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ - ՆԻս

Յարգարժան բարեկամ,

16-ը Սեպտեմբերի բուսկիր նամակը, ներփակուած նիւթերի հետ միասին, Դեկտեմբերի կէսերին միայն անցաւ մեր ձեռքը: Խնդրում ենք ներել պատասխանն ակամայ ուշացնելու համար:

Սփիւռքահայ մամուլից տեղեակ էինք արդէն, որ Հոկտեմբերի 13-ին Նիսում մեծ հանդիսութեամբ նշուել է Ռուբէն Սեւակի ծննդեան 100-ամեակը:

Ինչպէս գիտէք, Մարտ ամսին հայրենիքում նոյնպէս հանդիսութիւններ էին կազմակերպուել անուանի բանաստեղծի յորելեանի առթիւ:

Հայրենի կառավարութեան եւ ժողովրդի բարձր գնահատանքի ապացոյցն է նաեւ այն, որ 1955 բուսկանից սկսած, մի քանի անգամ հրատարակուել են Ռ. Սեւակի գործերը, եւ այժմ էլ հրատարակութեան է պատրաստ նրա ամբողջական գործերի հաւաքածուն:

Մեզ համար հասկանալի է, անշուշտ, Ռուբէն Սեւակի անունը հայրենիքում յաւերժացած տեսնելու Ձեր՝ բանաստեղծի հարազատներին ջերմ փափագը: Հաւանաբար տեղեակ չէք, սակայն, որ Եղիշէ Չարենցի անուան Գրականութեան եւ արուեստի թանգարանում մեր բոլոր անուանի գրողների, այդ թւում նաեւ Ռուբէն Սեւակի, անուններով յատուկ բաժիններ կան:

Ձեր նամակում բուսրկուած իրերն ու նիւթերը, եթէ, անշուշտ, յարմար նկատէք նուիրել, կը յանձնուեն թանգարանին՝ ապահովարար պահելու եւ ցուցադրելու նպատակով:

Մենք նոյնպէս կարծում ենք, որ Ռուբէն Սեւակին, եւ ոչ միայն նրան, այլ նաեւ մեր միւս անուանի մտաւորականներին պատկանող թանկագին մասունքների միակ արժանի տեղը Մայր Հայրենիքն է:

Ընդունեցէք Նոր Տարուայ մեր ջերմ շնորհաւորանքներն ու քաջառողջութեան լաւագոյն մաղթանքները:

Յարգանքներով՝ ԿՈՄԻՏԷԻ ՆԱԽԱԳԱՀ՝
Կ. ԴԱԼԼԱՔԵԱՆ

Ինչպէս կը տեսնէք, մեր գրած 15 Սեպտեմբեր 1985 բուսկիր

նամակին երեք ամիս ետք պատասխանուած է պրն. Կ. Դալլաքեանի կողմէ:

«Կ'ըսեն թէ քաղաքականութիւնը՝ շատ բան ըսելով, ոչ մէկ բան չըսելու նարակութիւնն է»:

Յարգելի պրն. Դալլաքեան մեր նամակին մէջ հարց տուած նիւթերէն ոչ մէկուն պատասխան կուտայ:

Յաւելուած՝ պրն. Կ. Դալլաքեան մեր ըսածները մեզի կը կրկնէ, եւ մեր գիտցածները մեզի կը սորվեցնէ:

* * *

Այս վիճակին մէջ, մեզի կը մնար, մեր կարելիութիւններով Նիսի մէջ Ռուբէն Սեւակի անուան Յիշատակի Տուն մը ստեղծել:

* * *

Եւ այդպէս ալ եղավ:

**ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ ԱՆՈՒԱՆ
ՅԻՇԱՏԱԿԻ ՏՈՒՆ ԵՒ ՊԱՏԿԵՐԱՍՐԱՀ**

13-8-1986-ին Côte d'Azur / Cagnes-sur-Mer-ի մէջ, Ռուբէն Սեւակի՝ անուան Յիշատակի Տուն եւ պատկերասրահին բացումը կատարուեցավ՝ Նիսէն, Մարսէլէն, Լիոնէն, Փարիզէն եւ Սփիւռքի գանազան քաղաքներէն եկող հայրենակիցներու ներկայութեամբ:

Ռուբէն Սեւակի Յիշատակի Տան մէջ կը ցուցադրուին Ռուբէն Սեւակի պատկանող մասունքները՝ «իր անձնական արխիւը, նամակները, իր կողմէ գծագրուած պատկերները, գիրքերը, եւայլն»:

Ռուբէն Սեւակի անուան Պատկերասրահին մէջ կը ցուցադրուին 1856-էն մինչև մեր օրերու հայ նկարիչներու պատկանող երկու հարիւրէ աւելի պաստառներ:

(Aivazovski / A. Gurdjian / M. Givanian / W. Mahokian / E. Chahine / A. Chabanian / J. Alhazian / Heraut (H. Tekeyan) / S. Katchadourian / Ch. Atamian / Ariel Adjemian / M. Gulbenkian / L. Aznavourian / K. Bedikian / P. Topalian / Carzou / Z. Moutafian / J. Palamoudian / A. Berberian / Khoubetzian / Elibekian / Hounanian / H. Hagopian / R. Jeranian / Papaz / J. Ihmalian / S. Salerian / P. Ganatchian / Tcherkezian / V. Hazirian / Antoyan).

* * *

Այն հայրենակիցները, որոնք իրենց Côte d'Azur գտնուած շրջանին, կը փափաքին Ռուբէն Սեւակի անուան Յիշատակի Տուն եւ պատկերասրահը այցելել, կրնան ժամադրուիլ հեռաձայնելով հետեւեալ թիւին՝

HOVHANNÈS CILINGIRYAN

Domaine du Loup, LE VERDON - B

06800 Cagnes-sur-Mer / Côte d'Azur / FRANCE

Tél.: (33)93201729

**ՀԱՐՑԱԶՐՈՅՑ՝ ՌՈՒՐԷՆ ՍԵՒԱԿԻ ԵՂԲՕՐՈՐԴԻՈՅՆ՝
ՅՈՎՀԱՆՆԷՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆՆԻ ՀԵՏ**

**ՌՈՒՐԷՆ ՍԵՒԱԿԻ
ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆԸ**

**ՌՈՒՐԷՆ ՍԵՒԱԿԻ ՀԵՐՈՍՍԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՆ,
ԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆԻՆ, ՀԱՅ ՍՓԻՒՌԻ ԱԽՏԻՆ
ՈՒ ՋԱՅՆ ԴԱՐՄԱՆ ԵԼՈՒ ՄԻՋՈՑԻ ՄԱՍԻՆ**

Նիւ Ճըրզիի (Մ. Նահանգներ) Հայկական ռատիոյի տնօրէն՝ Վարդան Ապտօ, Օգոստոս 1988-ին այցելելով Նիւ, ունեցած է հարցազրոյց՝ Ռուբէն Սեւակի եղբորորդւոյն՝ Յովհաննէս Ջիլինկիրեանի հետ, որ այս առթիւ յուզած է ժամանակակից ու հայութիւնը տագնապեցնող կենսական խնդիրները, կատարելով ճշգրիտ ու խորաթափանց խօսակցում եւ առաջադրելով նոյնքան ճիշդ ու ազդու դարման:

Կը հրատարակենք սոյն շանեկան եւ ուսանելի հարցազրոյցը՝ զայն յանձնելով մեր ընթերցողներու մասնաւոր ուշադրութեան, գնահատելով անկեղծութիւնը հեղինակին, որուն ջղուտ դիտողութեանց մէջ չկայ որեւէ մէկը վիրաւորելու միտում, այլեւ՝ հոն պէտք է տեսնել սրտացաւ հայու մը դառնութիւնը միայն, փստսանքը:

Աւելցնենք, որ հոն արտահայտուած հիմնական մտքերը լիովին կը զուգորդուին ու կը նոյնանան մեր օրկանի սկզբունքներուն հետ եւ կը կազմեն Հայկական Դատի հետապնդման միակ ճիշդ, գործնական ու օգտաբեր գաղափարախօսութիւնը, լուծումի ուղին:

Խմբ. «ԱՐԱՐԱՏ»ի

Պէյրուք

Հարցում.- Պրն. Ջիլինկիրեան, ուրախ ենք որ երկարատեւ ծրագրուած այս հանդիպում-զրոյցը, հայ գրականութեան պատկանելի դէմքերէն՝ Ռուբէն Սեւակի ու հայ Սփիւռքի ներկայ

խնդիրներուն շուրջ, իրականացած է:

Մեր գրոյցին մէջ խորանալէ առաջ, կրնա՞ք մեզի պարզել, բռուցիկ ակնարկով մը, նախանշոններն շրջանի կացութիւնն ու Ռուբէն Սեւակի ծննդավայրի պայմանները:

Պատասխան.- Ա. համաշխարհային պատերազմը պատեն առիք եղաւ, որ փանթուրքիստները գործադրութեան դնեն իրենց հայաջինջ ծրագիրը: Աքսոր ու ջարդ սկսան հայկական բնաշխարհի բովանդակ տարածքին: Միայն որոշ, հագուագիւտ վայրեր «խնայուեցան»: Այս ալ իր պատճառը ունէր անշուշտ:

Սիլիվրի այս վերջիններու շարքին էր: Սիլիվրիի նահանգը ջարդ չկազմակերպուեցաւ: Գիտէք որ Սիլիվրին մեր նախնիքներուն, Ռուբէն Սեւակի ընտանիքին ապրելատեղն է: Շրջանը կը գրավէ Պոլիսը: Յաւելուաց ուրիշ նահանգ մը կայ՝ Իզմիրը: Այս երկու տեղերը աքսոր չեղան: Եւրոպացիներուն աչքին տակն է ըսելով: Ուրեմն Սիլիվրի մաս կը կազմէր Իսթանպուլի, 70 քմ. հեռաւորութեամբ, Թրակիոյ կողմը, եւրոպական մասին վրայ:

Թրքական «ճարպիկութեամբ», շրջանի նահանգապետը - քրքական բնորոշումով՝ քայմաքամ - օգտուեցաւ առիթէն: Ան չյայտնեց շրջանի հայ բնակիչներուն, որ իրենք աքսորէն փրկուած են: Ընդհակառակը, կարգ մը հարուստներու միջոցաւ լուր դրկեց, թէ տեղացիները եթէ աքսոր երթալ չեն ուզեր, «ինծի երկու հագար հնչուն ոսկեղրամ պիտի տան»: Եւ այս դրամը կը ժողվուի ու կը բերուի որ չերթան: Մինչդեռ, բոլորովին անտեղի կանխագուշուութիւն էր ասիկա, որովհետեւ Սիլիվրին արդէն աքսոր պիտի չերթար, քանի որ Պոլսոյ մօտ էր:

Իսկապէս ալ հայութիւնը չաքսորուեցաւ այդ տեղէն:

Սեւակի պարագան տարբեր էր: Քանի որ Սեւակ, այդ շրջանին Պոլիս կը գտնուէր, հոն հաստատուած եւ Ապրիլ 24-ին ձերբակալուած մտաւորականներուն մաս կազմելով, դրկուեցաւ Չանղըրի:

Հիմա հարցը սա է, որ այս մեր ձեռքը մնացած «թափունները», այսինքն կալուածատիրական բուրքերը Սեւակի ընտանիքին, ի՞նչ արժէք կը ներկայացնեն...

Թուրքերը վերստին գրաւեցին Թրակիան և եկան իրենց նախկին տեղերը: Յոյները փախան Ղեպի Յունաստան: Թուրքերը վերագրաւեցին Սիլիվրին եւ Պոլիսը: Այս շրջանին հայ ընտանիքները, Սիլիվրիի մէջ եղողները, որոնք՝ ինչպէս ըսինք՝ չէին ենթարկուած

աքսորի, ամէնքն ալ փախան վախերնէն, Պոլիսը աւելի ապահով նկատելով: Որով այնտեղ լքուած բոլոր կալուածներն ու գոյքերը փախստական հայերուն, ինչպէս նաեւ Անատոլիայի մէջ հայոց բոլոր ունեցածները, բրքական օրէնքի համաձայն, մէկ-երկու տարի ետք «լքուած գոյք» նկատուելով պետականացուեցան եւ յետոյ ալ առանձին բուրքերուն տրուեցան: Եւ մեր ձեռքը մնացին միայն այս փաստաթուղթերը, որոնցմէ շատ կան հայերուն ձեռքը եւ որոնք, այսօր, միայն պատմական արժէք ունին մեզի համար, այլեւ որեւէ արժէք, իրական արժէք չեն ներկայացներ այսօրուան Թուրքիոյ օրէնքներուն պատճառով: Այս փաստաթուղթերէն բոլոր հայերը ունին: Ոմանք կը շարունակեն պահել: Ուրիշներ իրենց ունեցածը նետած են զգուելով, խորհելով որ անոնք բանի պիտի չծառայեն այլեւս, զիրենք որեւէ տեղ պիտի չհասցնեն:

Մենք պահած ենք մեր ունեցածները, նկատելով որ՝ անոնք Սեւակի ընտանիքին ժառանգին մաս կը կազմեն եւ ապագային, քերես մէկը օգտագործել ուզէ այս բաները, Սեւակի ընտանիքին ունեցածները դասաւորելու համար: Չեմ գիտեր...

Հ.- Պրն. Զիլինկիրեան, ասիկա գոնէ ինձի համար առիթ մըն է, քանի որ ես, անձամբ, այս պտոյտիս ընթացքին, մօտէն ծանօթացայ Ռուբէն Սեւակին, որ ձեր հօրեղբայրն է: Մեզմէ շատեր չեն իմացած Սեւակի կեանքի մասին, իր ընտանիքին մասին, փորձառութիւններուն մասին, գրութիւններուն մասին: Ես այս առթիւ կ'ուզէի լսել ձեզմէ՝ ձեր մեծ հօր մասին: Ի՞նչ կը յիշէք անոր մասին: Ի՞նչ կրնաք ըսել մեզի... այդ տեղէն սկսինք:

Պ.- Բնական է ես, նկատելով որ 1924-ի Սեպտեմբերին ծնած եմ, տուեալներ չունիմ, «տիրէքք» տուեալներ: Մինչեւ որ մարդ իր հասունութիւնը գտնայ, բնական է որ, գոնէ նուազագոյնը՝ քսան տարի մը անցնելու է: 1944-ին երբ արդէն գիտակից եղանք այս բաներուն, շատ ուշ էր: Մնացողները այդ շրջանէն շատ քիչ էին: Սեւակի հայրն ու մայրը մահացած էին: Հայրը՝ 1920, իսկ մայրը՝ 1935-ական բուականներուն մահացան:

Հ.- Ի՞նչ գործ կ'ընէր եւ քանի՞ զաւակ ունէր:

Պ.- Երկաթագործ էր: Վեց զաւակներէն մէկն էր Ռուբէն Սեւակը: Չորս մանչ եւ երկու աղջիկ էին անոնք, որոնցմէ ոչ մէկը ողջ է այսօր: Ամէնքն ալ մահացած են:

Հ.- Սեւակ ո՞ր դպրոցը յաճախեց եւ ի՞նչպէս կրցաւ Լոզան

անցնիլ այդ օրերուն, երբ բաւական դժուար էին պայմանները:

Պ.- Այո, պայմանները դժուար էին... բայց նկատելով որ ինք, սկզբնական շրջանին Սիլիվրիի Ազգանագեան վարժարանը յանախեց, ատկէ ետքը հայրը գինք դրկեց շատ ծանօթ դպրոց մը եղող Պարտիզակի՝ Պոլսոյ շրջակայքը գտնուող անուանի ամերիկեան վարժարանը: Մէկ քանի տարի հոն յանախելէ ետք, վերադարձաւ ւաւելի բարձր ուսում առնելու համար: Որովհետեւ Պարտիզակի դպրոցը ամբողջական գոլէն մը չէր, նախակրթարան մըն էր միայն, ուստի ան անցաւ Ռեթէոս Պերպերեանի հիմնած՝ «Պերպերեան գոլէնը», Սկիւտարի հռչակաւոր գոլէնը, որ ամբողջ հայութեան տուաւ նոր սերունդ մը, տարբեր կեցածքով, որ այսօրուան մեր մտաւորականները ստեղծեց ձեւով մը: Ռուբէն Սեւակ, մինչեւ 1905-ը մնաց հոն ու աւարտեց այդ դպրոցը: Վկայականաբաշխման հանդէսի ատեն, ինք եղաւ աւարտական դասարանի անունով արտասանողը «հուսկ բանք»ի մը, որ տաղաչափեալ կտոր մըն էր գրեթէ եւ որ ուղղուած էր բոլորին, տպաւորելով ունկնդիրները:

Անոնց առաջինը, ինքը՝ Ռեթէոս Պերպերեանն էր, որ շատ կը գնահատէր Ռուբէն Սեւակը եւ ուզեց գինք դրկել Եւրոպա, որ ւաւելի զարգանայ, արժեւորուի ու ւաւելի օգտակար ըլլայ հայութեան: Եւ ատոր համար ալ, այդ շրջանի Պատրիարքին՝ Ամեն. Օրմանեանի օգնութեամբ, Սեւակ Լոզան դրկուեցաւ: Անշուշտ, այս մեկնումին համար՝ կանխաւ առնուած պէտք էր ըլլար Սեւակի հօր հաւանութիւնը: Եւ հայրը իր համամտութիւնը տուաւ: Դուք իմացաք անոր՝ Սեւակի քրոջ վկայութիւնները հաստատող, որ հայրը դժուարութեամբ իր հաւանութիւնը տուած է: Ան գիտէր հարկաւ, որ Եւրոպա գացող տղայ մը, շատ դժուար կրնար իր արմատներուն վերադառնալ, եւ կրնար կորսուիլ ալ այդտեղ, պայմաններու բերմամբ: Այո, Սեւակ այնտեղ չկորսուեցաւ, Եւրոպայի մէջ, բայց խորքին մէջ, իր հօր համար ան կորսուած մըն էր՝ սկսած այդ օրերէն՝ նուիրուած ըլլալով ազգին: Նուիրում՝ որ յանգեցաւ 1915-ի եղբրական վախճանին: Հայրը իրաւունք ունէր...:

Եւ Սեւակ այդ շրջանին՝ 1905-ին գնաց Զուիցերիա եւ գրեթէ մինչեւ 1914, տասը տարի, ապրեցաւ հոն, այնտեղ անցուց՝ կարելի է ըսել՝ իր բուն կեանքը, որովհետեւ «էվոլիւսիոն»ի շրջանը հոն ունեցաւ՝ 1905-ին, Եւրոպա գացած ատեն, ըսել է՝ երբ 19-20 տարեկան էր հազիւ: Մինչեւ 29 տարեկանը հոն ապրեցաւ: Այդտեղ

է որ խմորուեցաւ, աշդտեղ իր գրական-ստեղծագործական բեղուն շրջանը բոլորեց, մշակութային գործունէութիւն տարաւ, հոն գրեց իր առաջին գիրքը՝ որ հրատարակուեցաւ 1910-ին, Պոլիս:

Հ.- Հետաքրքրական է այստեղ յիշել, թէ ինք բժիշկ էր, բայց նոյնքան եւ անլի՛ բանաստեղծ: Թե՛ եւ կան այս մէկը չգիտցողներ...

Պ.- Հարցը սա էր՝ թէ Ռուբէն Սեւակ բանաստեղծ էր, բնական է, բայց բանաստեղծ ըլլալէ անլի, ինծի համար ան մտածող մըն էր խորքին մէջ, մտածող մը: Բանաստեղծներ շատ ունինք, բայց մտածողներ՝ քիչ, իսկական իմաստով եւ մանաւանդ՝ շատ քիչ ունինք թէ՛ բանաստեղծ եւ թէ՛ գիտութեան մարդ: Գիտենք, թէ բժշկական ուսումը թեթեւ գործ մը չէ եւ մանաւանդ եօթ երկար տարիներու ուսումնառութիւն պահանջող բան մըն է... Եօթ տարի... այն ալ Լոզանի մէջ մանաւանդ, եւ վերջապէս՝ ֆրանսերէնը իր մայրենի լեզուն չէր եւ բնական է, որ եւրոպական լեզուի մը տիրանալ պէտք էր, բժիշկ ըլլալու համար: Անկէ ետք ալ՝ գիտութեան լեզուն սորվիլ պէտք էր: Վերջապէս, այս եօթ տարիներու կեանքը, որ ինք հոն ապրեցաւ, պարզ մահականացուի մը համար միայն իր գիտութեան, իր դասերուն տրամադրելի շրջան մը պէտք էր ըլլար: Սեւակի բնածին կարողութիւնները առիթ տուին իրեն, որ ինք, միաժամանակ, թէ՛ բժշկական ուսման եւ թէ՛ գրականութեան հետեւի, լեզու մշակէ, ծառայէ արուեստին՝ իր տաղանդովը: Յաւելուած ուրիշ բան մը կայ Ռուբէն Սեւակի կեանքին մէջ, որ այնտեղ, ան հանդիպեցաւ գերմանացի աղջկայ մը, որ ուսանելու եկած էր տեղւոյն գեղարուեստից - Պօզար - վարժարանը: Վերջապէս՝ սերը կոյր է միշտ, ըսենք՝ ընդհանրապէս բան չի նանչնար: Եւ սակայն Սեւակ, շատ հայրենասէր եւ ազգասէր անձնաւորութիւն մը ըլլալով, այս պարագան պարտ էր չմոռնալ, հայ կողակից մը պէտք էր ընտրէր իրեն համար: Սակայն, ինք սիրահարուեցաւ այս աղջկան եւ անոր հետ ունեցած սիրաբանութիւնները, սիրահարութեան շրջանը շատ երկար տեւեցին:

Աղջկան գերմանացի հայրը երբ իմացաւ այս մասին, իր աղջիկը հայու մը հետ կը սիրաբանի, սիրահարած էր հայու մը, անմիջապէս աղջիկը իրենց մօտ՝ գերմանական էրֆուրտ քաղաքը կանչեցին, ուր կը բնակէին իրենք: Եւ այս պատճառաւ շատ դժուար օրեր սկսան Սեւակի համար՝ հեռու իր սիրահարէն, եւ աղջիկն ալ նմանապէս՝ հեռու իր սիրածէն: Տագնապալից շրջան մը անցուցին եր-

կուքն ալ: Վիճակը տառապալից եղաւ քե՛ւ աղջկան եւ քե՛ Սեւակի համար եւ ասոնց միջեւ փոխանակուած մեծ բիւով նամակներ ու բացիկներ, որոնք մեր մօտն են այսօր, կը կազմեն ապացոյց անոնց անցուցած ծանր, դժուար օրերուն, Սեւակին ու իր սիրածին համար:

Հ.- Պրն. Զիլինկիրեան՝ գիտե՞նք որ Վահան Թեքեան ջարդէն ազատուած էր, որովհետեւ Երուսաղէմ կ'այցելեր այդ օրերուն: Հետաքրքրական է որ Ռուբէն Սեւակ, պատերազմը չսկսած երկու ամիս առաջ վերադարձաւ Պոլիս: Ինչո՞ւ վերադարձաւ Պոլիս այդ օրերուն:

Պ.- Երկու ամիս առաջ վերադարձաւ, որովհետեւ ինք՝ հակառակ որ գերմանացիի մը հետ ամուսնացած էր, երբեք երկրէն դուրս ապրելու, հայ ժողովուրդէն հեռու մնալու մտայնութիւնը չուներ: Հակառակ որ հոն՝ Ջուիցերիոյ մէջ, իբր բժիշկ հաստատուելու եւ աւելի լաւ պայմաններով ապրելու կարելիութիւնը ուներ Սեւակ:

Հ.- Երբ ինք երկիր վերադարձաւ, ունէ՞ր երկու գաւակները:

Պ.- Ոչ. մէկ գաւակը՝ Լեւոնը Լոզան ծնած էր եւ անկէ ետք, երկրորդ գաւակը՝ Շամիրամը Պոլիս ծնաւ, իրենց վերադարձէն ետք: Այսպէս է իրականութիւնը, որովհետեւ տիկին Սեւակ Շամիրամով յղի էր, երբ Սեւակ ամուլը վերադարձաւ Պոլիս: Եւ ասկէ ամիս մը ետք ծնաւ երկրորդը: Դժուար համբորդութիւն մը եղած պէտք է ըլլայ: Եօթ-ութ ամսու յղի կիին մը Պոլիս վերադառնալ այդ օրերուն չնգեճաւով կամ գնացքով, ճշգրիտ չեմ գիտեր, բայց կը կարծեմ շոգեճաւով վերադարձած են, եւ այս՝ դիւրին չէր:

Հ.- Ռուբէն Սեւակ նահատակուեցաւ 26 Օգոստոս 1915-ին, տարի մը կամ պակաս Պոլիս փոխադրուելէ ետք: Այդ ժամանակաշրջանին մէջ ի՞նչ փորձառութիւններ ունեցաւ ան, որ պէտք է յիշուի:

Պ.- Շրջանի փորձառութիւններու մասին ըսեմ այն, որ Պոլիս վերադառնալուն պէս, ինք հայ համայնքներուն մէջ, հայ գրական շրջանակներու մէջ մտաւ: Իր տունը, բնակած տունը, որ Բանկալ-քիի շրջանը կը գտնուէր, բոլոր մտաւորականներու հաւաքման կեդրոն դարձաւ: Հոն կը մէկտեղուէին Դ. Վարուժան եւ ուրիշներ: Յակոբ Օշականի վկայութիւնը կայ այս մասին, քէ ինչպէս անցած են այդ օրերը, հաւաքոյթները: Ասկէ դուրս՝ ինք ծառայած է իբր բանախօս-դասախօս շատ մը դպրոցներու մէջ: Շատ հետաքրքրական է այստեղ նշել մանրամասնութիւն մը: Հոս՝ Ֆրանսա, ծանօթացայ տիկ. Համբիկեանի: 80-ը անց, մեծ տարիք ունեցող տիկին

մըն է, որ ներկայ եղած է 1914-ի Էսայեան վարժարանի մէջ Սեւակի մէկ բանախօսութեան: Ան կը վկայէ որ աղջիկներ, երիտասարդուհիներ մեծ սէր ունեցած են Սեւակին հանդէպ, ոչ միայն իր մտաւորական կարողութեանց, այլեւ իր գեղադեմ տեսքին, շարժումներուն եւ շատ հրապուրիչ լեզուին հանդէպ:

Ինչպէս ըսի՝ այս տիկինը ներկայ եղած է բանախօսութիւններէն մէկուն եւ այդ տպաւորութիւններու տակ, ինք մեզի անգիր արտասանեց, այդ օրերու յիշողութեանց վրայ յենելով, իր միտքը պահած մէկ բանաստեղծութիւնը Սեւակին, շատ տպաւորիչ ձեւով, որուն խորագիրը բանաստեղծութեան՝ *«Պատասխանը»* է:

Ես ալ, իմ կարգին, արձանագրեցի իր արտասանութիւնը: Պատկերացուցէք՝ 85 տարեկան կին մը կ'արտասանէ անգիր, առանց «քեքսքի», իր մտքին, յիշողութեան մէջ արմատացած Սեւակի մէկ բանաստեղծութիւնը, գոր ինք լսած եւ մտքին մէջ դրոշմած է Էսայեան վարժարանի մէջ, Սեւակի ըրած մէկ բանախօսութենէն, անկէ անջնջելի տպաւորութիւններ քաղելով:

Թեոդիկ ալ հիացական կը վկայէ Սեւակի կարողութիւնները, գրելով՝ իրմէ մէջբերում մըն է ասիկա, քաղուած՝ «Ամենուն Տարեցոյցը»էն. *«Աթենա իմաստութեան շիթը դրած էր անոր ուղեղին մէջ, Էսկիւլպայ՝ բժշկութեան խորհուրդը, Հերմէս ալ՝ կայծը պերճախօսութեան...»*:

Այո, այժմ հարց տանք, թէ ինչն ու Ռուբէն Սեւակ վերադարձած էր Պոլիս: Ինչպէս ըսի՝ միշտ իր մտքին մէջ կար՝ վերադառնալ եւ ծառայել ժողովուրդին: Եվ այդ վերադարձէն ետք, իրապէս ալ, ինք շատ մեծ ժողովրդականութիւն գտաւ, եւ իր խօսելու կարողութեամբ, իր բանաստեղծութիւններուն համար: Ինչպէս որ առջի օր լսեցիք՝ իր քոյրն ալ կը վկայէ, թէ ո՛ր աստիճան սիրուած էր Սեւակ, Պոլսոյ դպրոցական եւ մտաւորական շրջանակներուն մէջ:

Հ.- Պրն. Զիլինկիրեան՝ Ռուբէն Սեւակ իրրեւ հայ մտաւորական նահատակուեցաւ, չփոխելու համար իր անունը: Եւ կարեւոր է այստեղ շեշտել, որ ինք առիթ ունէր ազատուելու այդ նակատագրէն: Կրնա՞ք մեզի տալ պատմութիւնը իր կեանքին մէկ կարեւոր մանրամասը կազմող դրուագին, որ գինք կ'առնէ թուրք ընտանիքի մը, որուն աղջիկը բուժած էր ինք:

Պ.- Նախ կատարեմ նշում մը, որ բնաւ անտեղի չէ: Սեւակի մասին այստեղ ըսուածները ենթադրական խօսքեր չեն, նկատելով

որ իր մասին վկայութիւններ եղած են նախ՝ Գրիգորիս Պալաքեան Արքեպս.ի կողմէ, որ իր «Հայ Գողգոթայ»ի Ա. հատորին մէջ մատնանշած է այս պարագան: Երկրորդը՝ այս մասին կը վկայէ Միքայէլ Շամտաննեանը, իր «Յուշարձան Ապրիլ 24-ի» հրատարակութեան մէջ, լոյս տեսած 1919-ին՝ Պոլիս, որով ան կուտայ այդ շրջանի պատմութիւնը: Արամ Անտոնեանը նմանապէս կ'վկայէ Ռուբէն Սեւակի, Գանիէլ Վարուժանի եւ այլոց մասին: Յավելյուած չորրորդ մը կայ, որ կարեւոր է, Յովհան Ծ. Վրդ. Կարապետեան, «Ջուարթնոց» քերթին մէջ՝ 1957-ին, Սեւակի հետ ունեցած արտոբավայրի պատմութիւնը կուտայ: Այս բոլոր պատումներուն հասարակաց գիծը այն է, որ Սեւակ չէ ենթարկուած յուսախաբութեան: Ընդհակառակն, իր եւ ընկերներուն հոգեկան կորովը բարձր պահելու համար, ինք ամէն ջանք թափած է, եւ իր բոլոր բախտակիցներուն երդում ընել տուած է, որ պիտի չընկնուին: Յատկապէս անոնց՝ որոնք հոգեվիճակի տկարութիւնը կասկած կուտար իրեն: Անոնց ինք երդուիլ տուաւ, որ պիտի չտկարանան թուրքին դէմ, տեղի պիտի չտան անոնց ննշումներուն առջեւ: Այդ տեսակետով՝ իր կեանքը այստեղ, շատ հերոսային կեանք մը եղած է ձեւով մը, նկատելով, որ իր ապրած շրջանին, ուզած են օգտուիլ իրմէ, քանի որ, կերպով մը, Երոպացի բժիշկ կը նկատուէր ինք: Ռ. Սեւակ այնտեղ, հիւանդները խնամելու կոչուած է: Այդ հիւանդներէն մէկը եղած է շրջանի երեսելիներէն մէկուն աղջիկը, որ կարծեմ «քիֆոյէ» տառապած է: Սեւակ իր բուժական հմտութեամբ, բուժած է զինք: Բայց, այդ դարմանման ընթացքին, աղջիկը կը սիրահարի Ռուբէն Սեւակին, եւ աղջկան թախանձանքին վրայ, հայրը կը ներկայանայ Սեւակին, ըսելու՝ որ աղջիկս քեզի սիրահարուած է եւ կ'ուզէ ամուսնանալ հետդ: Ձեր դրութիւնը անյուսալի է, եւ նկատելով որ դուք բոլորդ ալ մահուան դատապարտուած էք, եւ ոչ մէկը չի կրնար ազատել ձեզ, եթէ իսլամութիւն ընդունիս եւ ամուսնանաս աղջկանս հետ՝ քեզ կը փրկեմ...:

Սեւակ մերժած է այդ առաջարկութիւնը սա պատճառաբանութեամբ, թէ ինք ամուսնացած է արդէն, ընտանիք ունի: Բայց, մարդը դեռ փորձած է տարհամոզել զինք, քանի իսլամական կրօնը չարգիլէր, որ մարդ երկրորդ կին մըն ալ ունենայ առաջինի կողքին, օրինաւոր կերպով: Այս մէկը անպատեհ չէ իրենց համար: Բայց՝ անօգուտ:

Սեւակ վերադարձած է իր ընկերներուն քով եւ անոնց բացատրած այս պարագան: Բոլորն ալ ուզած են զինք համոզել, խորհուրդ տալ, որ ընդունի այդ առաջարկը եւ իսլամանայ, որ գէթ, այս կերպով կեանքը փրկէ: Սեւակ մերժած է այն խորհուն պատճառաբանութեամբ, որ եթէ «մենք իսլամանանք կամ ընդունինք բուրքին ըսածները, մենք մեր Դատին դաւանանած կ'ըլլանք: Մենք առաջնորդներն ենք հայ ժողովուրդին: Թրքանալը նուաստանալ է», կ'ըսէ ան, շարունակելով. «Եթէ մենք դաւանանենք մեր Դատին, ժողովուրդը պիտի կորսնցնէ իր հաւատքը պայքարի: Մենք օրինակ պիտի ըլլանք անոնց: Մենք պիտի մեռնինք, որ Հայ Ազգը ապրի՛»: Այս ձեւով ինք արտայայտուած է, եւ բոլորն ալ կը վկայեն այս պատմուածի հարազատութեան՝ որով ան մերժած է բրքանալ եւ իսլամանալ, եւ 26 Օգոստոս 1915-ին, Դանիէլ Վարուժանի եւ երեք հայերու հետ միասին, Չանղըրըիէն դէպի Այաշ կը տարուին: Նոյն օրը, Գալէնիկի համբուն մօտերը, կը սպաննուին Չանղըրըիի վարիչ՝ ձեմալ Օղուզի գլխաւորութեամբ գործող «չէթէ»ներու կողմէ: Այստեղ ցաւալի է նշելը, որ ոճրագործներուն խումբին մաս կազմած է նաեւ այն մարդը՝ որուն աղջիկը դարմանուած է Ռուբէն Սեւակին կողմէ:

Հ.- Պրն. Զիլինկիրեան՝ դուք այս գիրքը ե՞րբ հրատարակեցիք:

Պ.- 1985-ին, Ռուբէն Սեւակի ծննդեան 100-ամեակին առթիւ:

Հ.- Մենք այստեղ նստած ենք «Ռուբէն Սեւակ Թանգարան»ին մէջ, եւ կ'ուզէի գիտնալ թէ ի՞նչ է նպատակը այս Թանգարանին:

Պ.- Այս Թանգարանին հիմնական նպատակը եղած է՝ Սփիւռքի մէջ, հայ մշակոյթի կեդրոն մը ստեղծել, **Ռուբէն Սեւակի անուան յիշատակի տուն եւ պատկերասրահ:** Մեր բուն նպատակը ասանկ տուն մը հաստատել էր Հայաստանի մէջ, նկատելով որ բուն տեղը Ռ. Սեւակի, իբր Ապրիլ 24-ի հերոս-նահատակ, հո՛ն ըլլալը պէտք էր, եւ այդ տեսակետով մենք դիմեցինք ուր որ պէտք է: Առաջարկեցինք Սեւակի պատկանող բոլոր իրերը, գիրքերը, պատկերները, իւղաներկ գեղանկարները եւ ձեռագիրները նուիրել Հայաստանին: Մեր մօտ կան իւղաներկ նկարներ, 150-է աւելի, ստեղծելու համար Ռ. Սեւակի անուան յիշատակի տուն մը: Այդ շրջանին Վ. Համագասպեանը կար, Սփիւռքի հետ Մշակութային Կապի Կոմիտէի նախագահ: Իրմէ գրեթէ ժխտական նամակ ստանալէս յետոյ, միջոց մը ետք իր տեղը եկաւ Կ. Գալլաքեան, որուն պատասխանը աւելի

մերժողական եղաւ: Խորքին մէջ, ասոր հակառակ պէտք է ըլլար իրենց հակազդեցութիւնը: Ինք բոլորովին տարբեր կեցուածք ցոյց տուաւ: Չհասկցայ մերժումին նպատակը: Որով, մենք որոշեցինք այստեղ հաստատել այս տունը, նկատելով որ Սփիւռքի համար ալ պէտք են հայ կեդրոններ, որոնք ծառայեն այստեղի հայ մտքի լուսաւորման:

Այժմ, այս տան մէջ կը գտնուին Ռ. Սեւակէն մեզի թողուած ամբողջ ժառանգը, նաեւ իր անձնական արխիւը, որ մեզի համար շատ մեծ արժէք ունի եւ յաւելուած՝ կայ հարիւր-յիսունէ պելի հայ նկարիչներու զանազան շրջաններուն նկարած գործերէն, Այվազովաքիէն սկսեալ մինչեւ օրերս ապրող նկարիչներու 150-է աւելի պաստառներ: Ասոնք կը ցուցադրուին փափաքողներուն, անոնք որ այցի կուգան հոս:

Հ.- Նաեւ դուք մրցանակ մը ունիք. Ռուբէն Սեւակի անուան մրցանակ:

Պ.- Այո, Ռ. Սեւակի անուան գրական մրցանակ մը հաստատուած է, որ 1985-էն ի վեր, Սեւակի ծննդեան 100-ամեակէն ի վեր, կը յատկացուի այն գրողներուն, մտածողներուն կամ արուեստագետ-արուեստագիտուհիներուն, որոնք առանձին գործերով կը պատկերացնեն Սեւակի կեանքը, կ'արտացոլացնեն իր գործը, մտածումները, ոգին ու ազգային գաղափարականը:

1985-ին Ա. մրցանակը յատկացուած է Ռ. Սեւակի վերջին օրերը պատկերացնող թատրերկի մը, որ կը կոչուի «**Ռուբէն Սեւակի վերջին օրերը**», հեղինակը՝ բեմադրիչ-թատրագետ Գեորգ Գապառանեան: 1986-ին՝ մրցանակ յատկացուեցաւ հայրենի գրականագետ Ալեքսանտր Թոփչեանին, Հայաստանի մէջ լոյս տեսած 1985-ին, եւ Ռուբէն Սեւակի ամբողջական գործերը պարփակող հատորին, «Նրկեր» ընդհանուր խորագիրով, մեծածաւալ, իր տեսակին մէջ առաջին մեծղի հրատարակութիւնն էր: Հայաստանի մէջ, մինչ այդ, հրատարակուած են անշուշտ Ռուբէն Սեւակի գործերէն: Նշենք այստեղ որ անոնցմէ առաջինը լոյս տեսած է 1955-ին՝ Ն. Պետրոսեանի կողմէ: Անկէ ետք, դարձեալ Ռուբէն Սեւակի մասին գործերով հանդէս եկած են Գ. Հատիտեան, Ն. Ջրբաշեան, Վլ. Կիրակոսեան, իսկ 1985-ին, ինչպէս ըսինք՝ Ա. Թոփչեան իր «Նրկեր»-ով, որ Սեւակի ամբողջական գործը կը բովանդակէ:

Այո, ասկէ ետք, այսինքն 1985-ի մրցանակէն ետք, 1986-ի մրցա-

նակը տուեցաւ Ալեքսանտր Թոփչեանին, իսկ 1987-ինը՝ տիկ. Անահիտ Թոփչեանին, որ ներկայացուց Ռուբէն Սեւակը Երեւանի հեռուստատեսիլէն, 5 Յուլիս 1987-ին, ասմունքով մը ներկայացնելով Ռ. Սեւակի կեանքն ու բանաստեղծութիւնը, իր ամուսնին՝ Ալեքսանտր Թոփչեանի մենագրութեամբ ու բեմադրումով: Տիկ. Անահիտ Թոփչեան հիանալի կերպով մեկնաբանած է Ռ. Սեւակի բանաստեղծութիւնները, նահատակ գրողի կեանքը: Ասոր «վիտեօ»ն դիտելու առիթը ունեցանք:

Հ.- Հիանալի գործ է:

Պ.- Այո: Եւ այդ պատճառաւ ալ, 87-ի մրցանակը «Ռուբէն Սեւակ հիմնարկին» յատկացուեցաւ տիկ. Անահիտ Թոփչեանի:

1988-ի մրցանակը յատկացուեցաւ Անդրանիկ Մառուկեանի մէկ վեպին, որ կը ներկայացներ Ռ. Սեւակի կեանքին վերջին շրջանները:

Հ.- Այս մրցանակը արդեօ՞ք բաց է նաեւ ամերիկահայերուն:

Պ.- Մրցանակը բաց է բոլորին, անոնց որոնց կը հետաքրքրէ Ռուբէն Սեւակը: Բնական է, որ այդ մրցանակը կը յատկացուի այն արժեքներուն, որոնք կը զբաղին Ռ. Սեւակի գործերով, կեանքով, իր գաղափարներով - ասոնք շատագովելով ու տարածելով: Որով, չկայ ոչ մէկ սահմանափակում: Նկատելով որ, 1987-ի մրցանակը յատկացուեցաւ ասմունքող արուեստագիտուհի մը պարզապէս: Բայց չմոռնանք, որ այսօր հեռատեսիլք, շատ կարեւոր ազդակ է ծանօթացումի եւ քարոզչութեան: Անահիտ Թոփչեան արժանի էր այդ մրցանակը ստանալու, հարիւրաւոր գրքերէ աւելի կարեւոր գործ տեսաւ ան, Ռուբէն Սեւակի գործերը ծանօթացնելով հայ ժողովուրդի լայն զանգուածներուն: Դիտողները զայն գնահատեցին անպայման:

Մենք շնորհակալութիւն կը յայտնենք բոլոր մրցանակակիրներուն, մանաւանդ Ալեքսանտր Թոփչեանի եւ Անահիտ Թոփչեանի, Գ. Գապառանեանին եւ Ա. Մառուկեանին, որ նահատակ գրողի մը վերածնունդին նպաստեցին իրենց գրութիւններով, թատրերգութեան կամ վեպի վերածելով Ռ. Սեւակի կեանքը:

Հ.- Ռուբէն Սեւակի գրութիւնները քարգմանուած են ուրիշ լեզուներու:

Պ.- Սեւակի գրութիւնները քարգմանուած են ֆրանսերէնի, բայց աւելի շատ՝ ռուսերէնի: Չանոնք կարելի է կարդալ հոս՝ թանգա-

րանի գրադարանը դրուած որոշ գիրքերու մէջ: Կան երկու գիրքեր, ոուսերէն, որոնք «անթուղոժիներ» են ոուսերէն լեզուի, որոնց մէջ դրուած են նաեւ Սեւակի բանաստեղծութիւններէն:

Հ.- Ռուբէն Սեւակի գործերէն անգլիերէնի թարգմանուած կա՞ն:

Պ.- Սեւակի գործերէն անգլիերէն թարգմանութիւն մը ես տեսայ ամերիկահայ թերթի մը մէջ: «Բժիշկի մը գիրքէն փրցուած էջեր» ու մէկ պատմութիւնն էր ան:

Հ.- Պրն. Զիլինկիրեան՝ ձեր այս գիրքին մէջ որ մօտս է ու ես կը բերթատեմ զայն, գրած էք, որ Ռուբէն Սեւակ մեռաւ չփոխելու համար իր անունը: Բայց հայերը ամէն օր կը մեռցնեն Ռուբէն Սեւակը, փոխելով անոր անունը: Գրած էք նաեւ, որ ազգ մը իր հերոսներով կ'ապրի, ազգ մը որ հերոսներ չունի, ապրելու իրաւունք չունի, ազգ մը որ իր հերոսները կը մոռնայ, ինքն ալ մեռնելու դատապարտուած է: Ասոնք բաւական ծանր խօսքեր են: Ի՞նչ է, վերջապէս, ձեր ըսել ուզածը:

Պ.- Այո, բնական է մենք ունինք այն հիասքափութիւնը, որ Ռուբէն Սեւակ մեռաւ, իր անունը չփոխելու համար, իր ազգին համար, իր մահով տեսակ մը վերածնունդ տուաւ: Վարդանի ոգին է, որ արտայայտեց ան կերպով մը: Այս տեսակետով կը հաւատանք, որ Սեւակի այս կեցուածքը շարունակութիւնն էր Վարդանանց ոգիին, վարքագծին: Ռ. Սեւակ մահացաւ այս նպատակով, որուն համար նահատակուեցան Վարդանանք:

Հ.- Ի՞նչ ըսել կ'ուզեք գրելով. «Բայց հայեր ամէն օր կը մեռցնեն Ռուբէն Սեւակը»:

Պ.- Այո, մեզի հիասքափութիւն կը պատնառէ Զարեանի նամակը գոր թիչ առաջ ցոյց տուի: Ինչն՞ է ինք Սեւակ անունը տուած է անոր, որուն անունը Սեւակ չէր, այլ՝ Ղազարեան: Զեմ ըսեր որ այս վերջինը արժէք չէ: Կրնայ մեծ արժէք ունենալ, բայց ան ինքզինքին բոլորարած է նուաստ ընթացք մը ունենալ նահատակ-հերոս բանաստեղծի մը անունը իւրացնելով: Կը խորհիմ, բէ պատմութիւնը իր վնիռը պիտի տայ ասոր մասին: Ոչ որ իրաւունք ունի նահատակ հերոսի մը անունին տէր կենալու: Ի՞նչ է եղած նպատակը Ռ. Զարեանի:

Հ.- Յստակացնելով ձեր խօսքը՝ Պարոյր Սեւակի մասին է որ կը խօսիք:

Պ.- Այո, մեզի համար ցաւալի է անոր անունը յիշել այստեղ,

նկատելով որ ինք ալ արժեքաւոր բանաստեղծ մըն է: Հայ ժողովուրդին կողմէ սիրուած: Բայց պէտք չունէր Ռուբէն Սեւակի անունը գործածելու: Ռուբէն գայն կրած է 1907-էն սկսեալ: Այդ բուականէն առաջ ոչ ոք, բացի իրմէ, այդ անունով ինքզինք կոչած է: Ռուբէնն է այս անուանակոչումին մեծաշնորհը ունեցողը: Վերյիշեցինք որ Սեւակ՝ անունը ուրանալ չուզելուն համար մահացեր է: Այս «տիլէմ»-ը, «քրաժետի»ն դժբախտաբար հայ ժողովուրդը աւելի ծանրացուցած է իր անունը ուրիշի մը տալով: Երբեք Պարոյր Ղազարեանի Ռուբէն Սեւակին անունը առնելը Ռուբէնի յաւերժացման կամ վերյառնումին չէ ծառայած: Ընդհակառակը, Պ. Սեւակին ծառայած է միայն, փոխարէն նսեմացնելով Ռ. Սեւակը, տկարացնելով եւ մոռցնելով անոր անունը: Այսօր, նոյնիսկ ծանօթ գրողներ կամ մտաւորականներ, որոնք քիչ թէ շատ ծանօթ են հայ գրականութեան պատմութեան, մեքենաբար ու թիւրիմացաբար Ռուբէնը կը վերածեն Պարոյրի: Ինծի շատ մօտ բարեկամներ եւս, որոնք ծանօթ են Ռուբէնի կեանքին, յանախ նոյն սխալին մէջ կ'իյնան:

Նամակով մը դիմեցինք Ռուբէն Ջարեանին եւ խնդրեցինք իրմէ, որ մեզ լուսաբանէ այս ցաւալի երեւոյթին շուրջ: Հարց տուինք իրեն, թէ ինչ հանգամանքներու մէջ գործուած է պատմական այս սխալը: Ջարեան պատասխանեց մեզի: Իր նամակէն կը յայտնուի որ գիշեր մը, Աւետիք Իսահակեան, Ջարեանի եւ ընկերներուն պատմած է այն մասին, թէ ինչ պայմաններու մէջ Ռ. Սեւակ նահատակուած է, մերժած ըլլալով թրքանալ ու անուն փոխել. (այս ալ ուրիշ ողբերգութիւն, որ հայրենի գրողները, մինչ այդ, տեղեակ չեն եղած մեր նահատակ գրողներու պատմութեան: Յուսանք որ, գէթ այսուհետեւ, իմացած կ'ըլլան Ռուբէն Սեւակի ողբերգական կեանքը):

Ռուբէն Ջարեան մեծապէս տպաւորուած է լսելով Իսահակեանը, եւ յաջորդ օր, Պարոյր Ղազարեան երբ իր մօտ կուգայ պատահմամբ, որպէս թէ Ռուբէն Սեւակի անունը յաւերժացնելու համար, զինք Պարոյր Սեւակ կը մկրտէ, կերպով մը վերակենդանացնելու համար Ռուբէն Սեւակը:

Եւ այս բոլորովին տարբեր նակատագիր սահմանած է Ռուբէն Սեւակի վերյիշումին համար: Պարոյր Սեւակ հայրենի գրող եղած է: Լեզուական տեսակետով աւելի մատչելի է հայրենի ժողովուր-

դին, որ գինք աւելի շատ կը կարգայ ու կը հասկանայ, քան իրեն համար գրեթէ երկրորդական լեզուով մը՝ արեւմտահայերէնով արտայայտուած Ռուբէն Սեւակը:

Այս իրողութիւնը Ռ. Զարեանի պէս մէկը պարտ էր լաւ գիտնալ եւ չգործել սխալ մը, որ ներելի չէ, սխալ մը, որ ամէն օր կը մեռցնէ Ռուբէն Սեւակը: Եւ մեր գրքին մէջ խօսքը ըսած ենք այս մասին, տալով ամօթանք այս մէկը ընողին, անունը կրողին եւ նոյն ձեւով շարունակողներուն:

Կրկենք՝ մեզի համար ներելի չէ գործուածը, ինչ ալ եղած ըլլայ անոր շարժառիթը, որքան ալ Զարեան ըսէ, թէ՝ «եղածը եղած է»: Սա մեծագոյն անիրաւութիւնն ու գեշութիւնն է, թուրքերէն ետք, հայ մտաւորականի մը (Ռ. Զ.) կողմէ գործուած նահատակ Ռուբէն Սեւակի դէմ, Սեւակին անունը տալով Պարոյր Ղազարեանին: Մարդ իր անունով կ'ապրի, եւ երբ իր անունը փոխելով ուրիշի մը անունը կ'իւրացնէ, կը նշանակէ, թէ հայ մտաւորականի մը վայել նկարագիր չունի: Երբ հայ մտաւորականը իր ժողովուրդին ըսելիք բան մը ունի, ամէն բանէ առաջ, իր հոգեկան բարձրութիւնը պարտի վկայել հանրութեան առջեւ: Ըլլա՛ւ Զարեան, ըլլա՛ւ Պարոյր՝ երկուքն ալ դատապարտելի են, եւ կը յուսանք որ պատմութիւնը իր վնիւրը պիտի ուղղէ անոնց դէմ օր մը:

Հ.- Ռուբէն Սեւակ ձեր հօրեղբայրն է, եւ անշուշտ, իր բուն անունը Ռուբէն Զիլինկիրեան է: Քիչ առաջ յիշեցի՞նք, թէ ան իր անունը փոխած է Սեւակի: Արդեօք գիտե՞ք, թէ ինչու Սեւակ անունը ընտրած է:

Պ. Որովհետեւ Ռուբէն Սեւակ թխադէմ էր, ունէր սեւ աչքեր: Այդ աչքերուն պատճառով Ռուբէն Սեւակ անունը առած է: Սեւակ՝ սեւ աչք ըսել է: Այդ է բուն իմաստը Սեւակին, որ հարազատ էր Ռուբէնին: Ամէն մտաւորական իրաւունք ունի գրչանուն մը կրելու:

Ուրիշ պատճառ մը ունի անոր Սեւակ անուանակոչումը: Զիլինկիրեան անունը, վերջապէս, թրքական ծագում ունի: Հաւանաբար այս նկատումով եւ մտահոգութեամբ ալ, Ռուբէն փոխած է իր անունը եւ ստացած Սեւակ գրչանունը, որ լքէ իր թրքաբոյր բուն անունը:

Հ.- Պրն. Զիլինկիրեան, դուք այստեղ (ձեր գրքին պիտի անցնի՞մ անգամ մը եւս), այստեղ նախարան կամ բացման խօսք մը ունիք.

կ'ուզէի՞ք կարդալ եւ մեզի բացատրել, թէ ինչ ըսել կ'ուզէք այս գրութեամբ:

Պ.- Ասիկա քիչ մը շատ հետուն կը տանի մեզ նկատելով, որ մենք, բոլոր հայերուն նման, ցաւ ունինք մեր սրտին մէջ - Մեծ Եղեռնին, Արեւմտեան Հայաստանի կորուստին ցաւն է այս, որ դարմանուած չէ դեռ: Ասոր պատասխանատուն եղող ցեղասպան բուրքերը չեն պատժուած. վախ ունինք, մեր կեանքի սա վերջին տարիներուն, որ այս ցաւով ալ կը մեռնինք: Այս պատճառով ալ ասոնք գրի առած ենք ընդգծելով. **«Այս գիրքը կը ձօնենք Արեւմտեան Հայաստանի այս կեղծ առաջնորդներուն, որոնց սխալ քաղաքականութիւնը 24 Ապրիլ 1915-ին յանգեցաւ»:**

«Այս գիրքը կը ձօնենք, միեւնոյն ատեն, Սփիւռքի՝ այն կեղծ առաջնորդներուն, որոնց սխալ քաղաքականութիւնը նոր 24 Ապրիլներու կրնայ յանգիլ»: **«Այս գիրքը Սփիւռքի կեղծ ազգասէր առաջնորդներուն Մայր Հայրենիքին պատճառելիք վտանգներու մտահոգութեամբ է գրուած»:**

«Մաղթենք որ՝ «Պատմութիւնը կրկնութիւն է» ըսուած կարգախօսը հայ ազգին համար չիրականանայ... Ալ կը բաւէ Հայ Ազգին քաշած տառապանքը»:

15/4/85-ին, մեր գրքի այս մասին մէջ ըսածները այսօրուան Հայաստանի վիճակին նախատեսութիւնն է. նկատի ունենալով սա վերջին շրջաններուն, աւելի ճիշդ՝ անցեալ Փետրուար 1988-էն սկսեալ հայ ժողովուրդին ապրած տաժանելի, տառապալի օրերը Հայաստանի եւ Սփիւռքի մէջ: Կը տեսնենք ցաւով, որ մեր ժողովուրդը սխալ քաղաքականութեամբ կ'առաջնորդուի, դէպի արկածախնդրութիւն կ'երթայ: Գրքի այս մասին մէջ եղած նախատեսութիւնը, թէ նոր 24 Ապրիլներ կրնան պատահիլ, կերպով մը իրականացած է Սումկայիթի մէջ: Նոր Ապրիլ 24-ի մը նախերգանքը չէ՞ ասիկա: Մեր որոշ առաջնորդներու սխալ ցուցմունքները հայ ժողովուրդը նոր Եղեռներու կը տանին, նոր ցաւերու, մեզ շատ կը մտահոգէ այս պարագան:

Մեր տեսակետն է, որ Ղարաբաղի հարցին մէջ, մեր ժողովուրդը սխալ նամբայ ընտրեց: Ղարաբաղը համեմատաբար երկրորդական ցաւ է: Բուն ցաւը Արեւմտեան Հայաստանի կորուստի ցաւն է: Այն ժողովուրդին զոր այսօր Սփիւռք կը կոչենք, անոր պատկանող Արեւմտեան Հայաստանին կորուստին ցաւն է: Առաջին քայլը

պէտք էր ըլլար պահանջել Սովետական Միութենէն, որ 1915-ի ցեղասպանութիւնը պաշտօնապէս ընդունի, նկատի առնելով որ մեր պատկանած Միութիւնը եղող Սով. Միութիւնը 1915-ի ցեղասպանութիւնը յուշարձանին վրայ ցեղասպան թուրքին անունը մինչեւ հիմա չէ արձանագրուած: Այս նանաչումով էր որ պիտի կարենայինք երթալ Միացեալ Ազգերու ժողովին, պահանջելով ցեղասպան Թուրքիոյ դատապարտուիլը եւ Արեւմտեան Հայաստանի հողերուն մեզի ետ վերադարձուիլը: Երբ ցեղասպան Թուրքիան չէ դատապարտուած եւ չէ պատժուած ցեղասպանութեան յանցանքով, ցեղասպան թուրքին եղբայրները եղող ազերի թուրքերը ինչո՞ւ վախնային Սումկայիթներ կատարելու: **Նախ ցեղասպան Թուրքիոյ պատժուիլը պէտք էր:** Եւ այստեղ վերյիշել, որ հրեաները Բ. Համաշխարհային պատերազմի յանցաւորներուն ամենաչինչ անձը անգամ վանքերու խորերէն դուրս կը հանեն պատժելու համար: Այս նամբուն վրայ պիտի աշխատէինք՝ Հայաստան եւ Սփիւռք միացեալ նակատով: Այս արդար դատին՝ բոլոր հայերը անխտիր եւ բոլոր քաղաքակրթուած պետութիւնները թիկունք պիտի կանգնէին: Ասոր վրայ պիտի կեդրոնանար մեր աշխատանքը: Առիթ մը փախցուցինք: Յայտնի բան էր որ Ղարաբաղի ցոյցերով, ազերիներու դէմ կատարուած ցոյցերով, այս ժողովուրդը ի վերջոյ պիտի դառնար Խ. Միութեան դէմ, եւ շարժումը մեզ պիտի տանէր դէպի այն սխալ արարքներուն, որոնք կատարուեցան «Ջուարբնոց» օղակայանին մէջ: Այդ սխալ արարքները, զորս կատարեցին խելառեղած մամբոյները, նախատեսելի էին: Երբ ժողովուրդը սխալ առաջնորդուի, արդիւնքը տարբեր չի կրնար ըլլալ: Երբ Ղարաբաղ կ'ըսենք, ասոր կը հետեւի Նախիջեւանը: Երկուքն ալ, անտարակոյս, մեծ կորուստներ են մեզի համար: Բայց այդ մեծ կորուստները ունեցանք այն մեծ սխալներուն պատճառաւ, որոնք ծնունդ առին 1918-20-ի հայկական պետութեան կողմէ, որ բացի թշնամութենէն, ոչ մէկ մոտիկութիւն ցոյց տուաւ այդ շրջանի Խ. Միութեան դէմ, եւ այս պատճառով է, որ կորսնցուցինք Արեւմտեան Հայաստանի մէկ կարեւոր մասը եւ ասոր հետ՝ Ղարաբաղն ու Նախիջեւանը:

Այս պատասխանատուութիւնը կրող կուսակցութեան վարիչները, այսօր կրկին այդ մեծ սխալը կը գործեն Սփիւռքի մէջ, եւ ուրախութեան ցոյցեր կ'ընեն, երբ Ղարաբաղը պահանջելու նպատակով

ոտքի հանուած իրենց հետեւորդները, ի վերջոյ, կը հակադրեն հայ ժողովուրդի միակ յենարանը հանդիսացող ռուս ժողովուրդին՝ անոր դէմ հրահրելով բշնամութիւն: Այս է մեծագոյն վտանգը: Կը մաղթեմ, որ յառաջիկայ օրերն ու ամիսները իրաւունք չտան մեզի, մեր կանխատեսութեան, իսկ հայ ժողովուրդը, դարեր շարունակ, միակ բշնամի մը ունեցած է, ունի, ան ալ՝ Թուրքիան է եւ իր դաշնակից-գիւնակիցները:

Հ.- Սեւակի անուան յիշատակի տան եւ պատկերասրահին մէջ ամենակարեւոր տեղը կը գրաւէ Այվազովսկիի այս հոյակապ պաստառը: Ի՞նչ կը ներկայացնէ ան:

Պ.- Այվազովսկի, 1855-ական տարիներու Խրիմի պատերազմի խոր ազդեցութեան տակ, նկարած է այս բացառիկ պաստառը, որ ունի մեծ նշանակութիւն հայոց պատմութեան համար: 1854-ին օսմանեան բուրքերը եւ անոնց դաշնակից-գիւնակիցները եղող անգլիացիներն ու ֆրանսացիները, որոնք մինչեւ հիմա բուրքին դաշնակիցներն ու գիւնակիցներն են, կը յարձակին Սեփաստաբոլի վրայ, խորտակելու համար Ռուսաստանը:

Այս շրջանին, Այվազովսկին շատ լաւ տեսաւ իրականութիւնը, քէ ո՛վ է հայուն բշնամին, եւ նկարեց այս հոյակապ պաստառը, բշնամի նաւատորմի խորտակուիլը Սեւաստաբոլի ժայռերուն վրայ: Կը տեսնենք այստեղ անգլիական եւ ֆրանսական դրօշակները, որոնք կերպով մը կը կազմեն շարունակութիւնը թրքականին, որոնք եկած են խորտակելու ռուսական ժայռին վրայ, որ հայութեան պաշտպան ժայռն է նոյն ատեն: Այվազովսկին այս խորհուրդն է որ նկարած է: Մեր բուն բշնամին ծանօթ էր իրեն: Բայց, մեր ազգին կարծեցեալ որոշ առաջնորդները չտեսան իրականութիւնը: Ասոնք գացին սուտ մարգարէներու ետեւէն, որոնք մեր բշնամիներն էին իսկութեան մէջ, մեզ սիրել կը ձեւացնէին: Մենք հաւատացինք իրենց եւ տուժեցինք: Կը շարունակենք տուժել, քանի որ հայ Սփիւռքը դեռ որոշ կարծեցեալ ազգասեր առաջնորդներու, դեռ սուտ մարգարէներու ետեւէն կ'երթայ: Ասոնք կը փոխեն հայուն նիշդ նամբան, ուրկէ երթալով միայն փրկութեան ու յաջողութեան կարելի է հասնիլ:

Հ.- Պրն. Զիլինկիրեան, պահ մը գանք Նիս քաղաքին կամ Հարաւային Ֆրանսայի հայկական գաղութին: Ի՞նչ կը պատմէք մեզի անոր մասին:

Պ.- Հայուրիւնը այս շրջանը գալ սկսած է 1900-ական թուականներէն սկսեալ: Անոնք ընդհանրապէս ունեւորներ եղած են: Այստեղը հարուստի քաղաք եղած է: Տեղւոյս հայկական գաղութը նկատելի դեր մը չունի հայկական պատմութեան մէջ: Յիշատակելի միակ բանը այն է, որ Գայսէրլեան անունով պոլսոբնակ հայ մը հաստատուած է հոս, բնակելով տուն մը որ յիշարժան կը մնայ, քանի որ 1910-ական թուականներուն Գրիգոր Զօհրապ եւ ուրիշներ այցելած են Նիս եւ նկարուած այդ ապարանքին մէջ: Նկարները կը պահուին որպէս փաստաթուղթ: Ասկէ ուրիշ պատմական արժէք չունի Նիսը, ոչ ալ յիշատակելի կը մնայ հայ պատմութեան մէջ: Կարծեմ 1920-էն ետք հայեր աւելի մեծ թիւով եկած են հոս, գալով Մարսէլէն, իբր գործաւոր, աշխատելու համար շինարարութեան մէջ: Հայերը աչքի կը զարնեն իբր լաւ շինարար գործաւորներ: Այդ շրջանին, Ֆրանսա քաջալերած է հայ բանուորական ուժի ներածումը իր երկիրը, ոչ թէ մեր սեւ աչքերուն համար, այլ մեր կառուցող ձեռքերէն օգտուելու համար: Այս ձեւով գաղթական մեր բեկորներէն մաս մը տեղաւորուած է Ֆրանսա: 1927-28 տարիներուն, այստեղ հայկական փոքր մատուռ մը կառուցած են:

Հ.- Դպրոց, ակումբ ունի՞ք:

Պ.- Խիստ փոքրաթիւ գաղութ մը կ'ընէ իր կարելին: Այստեղ կայ մշակութային միութիւն մը որ ունի ակումբ, կը գործէ, երբեմն լաւ բաներ կ'ընէ երբեմն ալ անպէտք բաներու ետեւէ կ'երթայ:

Տասը տարի առաջ, մեր այստեղ գալու սկիզբի տարիներուն, ունէինք համոզում մը որ մեր ժողովուրդը, արդէն իսկ **եկոյիւսիոն** մը բոլորած ըլլալով, ստեղծած է կլիմայ մը ազգային, որմէ ներս կարելի է գէթ նուազագոյն գործակցութիւն ստեղծել տարբեր հատուածներու յարած անձերու միջեւ, յօգուտ հայութեան: Կը յուսայինք գործակցիլ, օրինակի համար՝ դաշնակցական մտայնութեամբ անձերու հետ: Կազմեցինք մարմին մը, բաղկացած երկուերեք դաշնակներէ, երկու երեք անկուսակցականներէ ու տարբեր խաւերու մաս կազմող անձերէ: Տեսակ մը **քոալիսիոն** մարմին մը ստեղծել էր մեր նպատակը: Կը խորհէինք, թէ ասով մեր ժողովուրդին լաւ ծառայած կ'ըլլանք: Բայց, շուտով ալ յուսախաբութեան մատնուեցանք, երբ տեսանք մեր որոշ կուսակցութեան մը յարող գործակիցներուն սխալ ընթացքը: Պատահեցաւ դէպք մը. աւելորդ է մանրամասնելը: Առ ի տեղեկութիւն միայն յայտնեմ, որ մեր մօտ

ծխական թերթ մը կը հրատարակուի, տեղւոյս հոգեւոր հովիւին խմբագրութեամբ: Լիբանանեան թերթերէ արտատպումներ կ'ըլլան անոր մէջ ստեպ, այլազան նիւթերու շուրջ: Ասկէ եօթ-ութ տարի առաջ էր: Չեմ գիտեր ինչ ազդեցութեան տակ, թելադրանքով, հոն տեղ գտած էր արտատպեալ նիւթ մը: Ֆրանսացի մը տուած էր ուրուագիծը հայոց պատմութեան, սկիզբէն մինչեւ մեր օրերը: Չայն ընթերցելով, անոր մէջ նկատեցինք պատմական լուրջ, վրդովեցնող վերագրում մը, որ իբր թէ՝ 1905-ին եւ աւելի ուշ, Պաքուի ու Անդրկովկասի տարբեր մասերէ ներս, հայեր ոչ թէ ազերի-թուրքերու կողմէ չարդուած են, այլ՝ «ռուսերու»: Նոյնիսկ մեծ եղեռնի պատասխանատուութիւնը կերպով մը ռուսերուն կը վերագրուէր, արդարացնելով Թուրքիան: Ոչ բոլորովին անշուշտ: Քանի այս մէկը անկարելի է: Այդ ֆրանսացի գրողը, իր յօդուածի վերջաբանին մէջ ըսել կ'ուզէր, որ հայկական չարդերուն պատասխանատուները ռուսերն ու թուրքերն են միաժամանակ:

Բնական է, որ այս վրդովեցուցիչ յօդուածը կարդալով, այդ մասին խօսք ընէինք բաղական խորհուրդի ժողովին մէջ, այդ յօդուածին մեր թերթին մէջ լոյս տեսնելը անտեղի ու վնասակար սեպելով: Ի վերջոյ, մերը ծխական հայ թերթ մըն էր, Մայր Աթոռի թեմին ենթակայ եկեղեցիի մը հրատարակութիւնը:

Դիտողութեան հակազդեց ժողովակից մը, որ անդամ էր ծանօթ կուսակցութեան: Կարծես իր գործին չեկաւ ըսածս, եւ չափի ու կշիռի սահմանը անցնելով երեսիս տուաւ թէ՝ «դուն պոլշեիկէն ալ **պէթէր** ես»: Այսպէս են դժբախտաբար այս մարդիկը: Իրենց տհաճ բան մը ըսի՞ր, եթէ նոյնիսկ բացարձակ նշմարտութիւն ըլլայ ան, կը փորձեն քեզ գրպարտել ըսելով՝ «դուն կոմունիստ ես, պոլշեիկ ես»: Եւ այս մակդիրները կը գործածէին ատեն մը, երբ կոմունիստները բացէն կը հալուածէին երկրին մէջ: Հիմա անշուշտ, տարբեր է կացութիւնը: Բայց այն ատեն, նման ամբաստանութիւններու հետեւանքը ծանր կրնար ըլլալ հոս ապրող հայրենու համար, որոնք դեռ հպատակ չէին երկրին եւ ուստի, չունէին իրաւունք քաղաքականութեամբ գբաղելու: Այս գրպարտութիւնը, շանտաժը գիրենք երկրէն դուրս դրուելու վտանգին կը մատուէր: Ես ալ իմ բաժինս առի անկէ... Այս բոլորը կ'ըսեմ հետեւցնելու համար, որ իմ կարծիքով, այսպիսիներուն հետ քուլիսիոն ընելուն չեմ հաւատար:

Դժբախտաբար մեր մէջ կան բարեմիտներ ու միամիտներ,

որոնք կը կրկնեն՝ անոնք ալ հայ ժողովուրդին մաս կը կազմեն, հայ մշակույթին կը ծառայեն, անոնք ալ ազգասիրութիւն կը քարոզեն, անոնք ալ... անոնք ալ... Ասպէս ըսողները չեն տեսներ սակայն, որ մեր բարեմտութիւնը միակողմանի է, ապերախտութեամբ կը վարձատրուի դիմացիներուն կողմէ: Անոնց ազգասիրութիւնը կեղծ եղած է յաճախ, հայ ժողովուրդի օգտին չէ եղած գործնականին մէջ: Այս պատճառով ալ տուժած ենք, հարիւր տարուան պատմութեան իրենց սխալներուն պատճառաւ:

Հ.- Պրն. Զիլինկիրեան, ես ձեր մօտ տեսայ ժապաւեններ Հայաստանի վրայ: Բաւական ժապաւեններ ունիք: Յիշեցիք նաեւ, թէ կանոնաւոր ձեզի կը դրկուին թերթեր Հայաստանէն: Ինչպէ՞ս կը գնահատէք ռատիոյի եւ թելեվիզիոնի դերը:

Պ.- Ասկէ տասը տարի առաջ սկսայ ստանալ, մէկ ընկերոջ միջնորդութեամբ, թերթեր հայրենիքէն, մէկը՝ «Սովետական Հայաստան» ամսաթերթ, իսկ միւսը՝ «Հայրենիքի ձայն» շաբաթաթերթը: Մինչեւ այսօր կը ստանամ զանոնք անվճար: Դրկողներուն շնորհակալութիւն կը յայտնեմ Սփիւռքի հետ Մշակութային Կապի Կոմիտէի հրատարակութիւններն են ասոնք, որոնք իբր նուէր կը դրկուին: Անտարակոյս, որ անոնք կը նպաստեն սփիւռքահայութեան, որ ան մշակութային կապ ունենայ Հայաստանի հետ: Զեմ ժխտեր, որ օգտակար գործ է: Բայց ինչ չափով կը ծառայէ իր նպատակին՝ սա ուրիշ հարց է: Հաշուի առնելիք հարց է մանաւանդ գործածուած լեզուն, որ մերը չէ դժբախտաբար: Սխալ չը հասկցուինք: Զսի լաւ լեզու չէ: Ան մեր հայրենիքին լեզուն է: Ասոր կասկած չկայ: Բայց իրականութիւն է նաեւ, որ մենք հոս, հայերէն լեզուի մէկ տարբերակով կ'արտայայտուինք, յաւելուած ուղղագրութեան տարբերութիւն ալ կայ, որով պէտք եղածին չափ չենք օգտուիր այդ դրկուած հրատարակութիւններէն: Ըսել չեմ ուզեր որ անոնք մեր՝ արեւմտահայերէնով հրատարակուին: Ժամանակը ինք կը լուծէ լեզուական հարցը: Անոնք ալ «եվոլիւսիոն» պիտի բոլորեն: Այս օրուայ մեր պետական լեզուն արեւմտահայերէնն է: Եթէ արեւմտահայերէնը պիտի կրնայ տոկալ՝ թո՛ղ տոկայ: Բայց պետական լեզուն է, որ պիտի ապրի ու տիրէ: Ուրիշ հարց է, թէ արեւմտահայերէնը պէտք է շարունակենք գործածել թէ ոչ: Ասիկա մեր ձեռքը չէ: Որքան ալ հարուստ, մաքուր եւ սքանչելի լեզու մը ըլլայ արեւմտահայերէնը, այսօրուան պայմաններով չեմ կարծեր, որ

շատ երկար տեւէ: Լեզու մը չապրիր առանց պետութեան: Գալով քերքի հարցին՝ անոնց միջոցաւ հայրենիքը իր պարտականութիւնը լրիւ կատարած ըլլալու յաւակնութիւնը պէտք չէ ունենայ: Սփիւռքի հետ Կապի Կոմիտէն, Սփիւռքի պայմաններուն աւելի շատ «ատաբէ» պէտք է ըլլայ, հաղորդակցումի ժամանակակից պայմաններով ու միջոցներով պէտք է կազմակերպուի Հայրենիք-Սփիւռք յարաբերութիւնը: Թելեվիզիոնը առաջնակարգ դեր ունի, պէտք է ունենայ ալտեղ: Գրեթէ ամէն հաղորդում իր միջոցաւ կ'ըլլայ: Գիրք կարդացողներուն թիւը, հինին հետ բաղդատած, ամէն օր կը նուազի: Սփիւռք-Կոմիտէն կամ համապատասխան մարմիններ Հայաստանի մէջ, պէտք է ջանան աւելի շատ օգտուիլ հեռատեսիլի ընձեռած հնարաւորութիւններէն: Այս գծով օգտակար դեր կը կատարէ Պէյրութի «Շիրազ» հաստատութիւնը, որուն պատրաստած «վիտէօ-քասէթ»ները եւ այս կարգի ժապաւէններ կամուրջ են Հայաստանի եւ Սփիւռքի միջեւ, փոխադարձ ծանօթացումի ու մերձեցման սատարող: Հեռատեսիլի դերին կարելորութեան գիտակցած ըլլալու է Կոմիտէն, եթէ ոչ, սա պարտագանցութիւն պէտք է նկատել, որ իր յարաբերութեանց ու կապի հաստատման միջոցները չէ յարմարցուցած օրուան պայմաններուն: Կը ցանկամ, որ այդ «վիտէօ-քասէթ»ները աւելի մեծ քանակով Սփիւռքի ծառայութեան յատկացուին, տրամադրուին: Ամէն կողմ ունինք մշակութային միութիւններ: Նոյնիսկ հայրենիքի կողքին եղող մշակութային միութիւնները այս տեսակ «վիտէօ-քասէթ»ներու յատուկ դարան ու ցուցադրութեան մեթոտ չունին: Իրենց մտքէն չէ անցած հաստատել նման դրութիւն: Յուսամ, որ գալիք ժամանակը կը դարմանէ այս բացը: Ասոր միջոցաւ սփիւռքահայութիւնը աւելի մօտէն ու ամբողջական պատկերացում կ'ունենայ հայրենիքի առօրեային ու պայմաններուն շուրջ, իրագեկ կը դառնայ տեղի անցուդարձերուն, հայրենիքի կարելիութեանց ու նաեւ, հոգեկան ու ֆիզիքական այդ կապի ու հաղորդի միջոցաւ, իր գոյութիւնը տեւականացնելու Սփիւռքի մէջ: Հայրենիքի հետ հոգեկան կապ ունենալու լաւագոյն միջոցը, անշուշտ թէ հայրենիքը սեփական աչքերով տեսնելն է, հոն երթալով: Իսկ անոնք, որ այս կամ այն պատճառով չեն կրնար երթալ, իրենց պակտողը կրնան ստանալ, տեսնել ու ըմբռնիլ «վիտէօ-քասէթ»ի միջոցաւ: Ինքս մեծ գոհացում ստացած եմ դիտելով:

Հ.- Պրն. Չիլինկիրեան, դուք հաստատուած էք Նիս վերջին տասը տարիներուն ընթացքին: Նախնայէս եղած էք, ապրած Թուրքիա, հոն մեծցած...

Պ.- Թուրքիա չըսէք: Այդ հողը Թուրքիոյ չէ: Այդ հողը գրաւուած հող է բուրքերու կողմէ...

Հ.- Ճիշդ այդ պատճառաւ է, որ ուզեցի ձեր տեսակէտը ունենալ այնտեղի հայ գաղութի ներկայ վիճակին ու ապագային մասին:

Պ.- Այս մասին յանախ արտայայտուած եմ: Ջանացեր եմ վիճակ մը պարզել սփիւոքահայութեան: Մեր շատ դժուարութիւններուն պատասխանատուութիւնը կը ծանրանայ Պոլսոյ գաղութին վրայ: Եթէ չըլլար այս գաղութը՝ հաւանաբար Արեւմտահայաստանի գլխուն չգային այս ցաւերը: Դժբախտաբար մենք մեր հողերուն վրայ մնալու կարողութիւնը չենք ունեցած: Երկու տեղ կեդրոնացած եւ անոնց ուժ տուած ենք. Թիֆլիս ու Պոլիս: Այս երկուքն ալ մեզի հարազատ հող նկատած ենք: Կարծած ենք, որ Թիֆլիս հայկական է, Պոլիս հայկական է: Մինչդեռ կարծիք, ինքնախաբեութիւն էր մեր ըրածը: Այդ կեղծ, արուեստական դղեակները շուտ փլան: Աւագի վրայ հիմնուած պալատներ էին անոնք դժբախտաբար: Պզտիկ ցնցումով մը գացին: Արեւմտեան Հայաստանի մէջ մենք մէկ հատ իսկ իսկական իմաստով քաղաք չկրցինք հիմնել Անիի կործանումէն ետք: Ինչո՞ւ: Որովհետեւ այդ կարողութիւնը չունէինք: Չկրցինք փարիլ հողին: Այս մեծ սխալը գործեցինք: Այսօրուան Պոլսոյ մեր գաղութը, փոքր, խիստ նօսրացած համայնք մըն է: Թուրքերը լաւ կը հասկնան դրութիւնը: Կ'ուզեն պահել գայն իբր պատանդ: Ի վնաս մեզի անշուշտ: Այդ գաղութը օգուտէ աւելի վնաս կը պատճառէ մեզի: Սփիւոքի մէջ շատեր որոնք կապ ունին այդ գաղութին հետ, ինքզինքնին ակամայ զգաստ ու մեկուսի կը պահեն, որ հոն եղողները չվնասուին: Կարծես մեծ, շատ մեծ օգուտ մը ունեցած ըլլար այդ գաղութը մեզի համար: Նոյնիսկ տեղւոյն մեր պատրիարքութիւնը աւանդական, պատմականօրէն հալածին, հայամարտ պատրիարքութիւն մը չէ: 1453 թուին, Պոլիսը յոյներէն գրաւելէ ետք, Փաթիհ սուլթան Մեհմէտ կոչուած կայսրը հոն բերել տուաւ Եպիսկոպոս մը Պրուսայէն եւ, Սամաթիոյ յոյներէն Եկեղեցի մը առնելով, գողնալով մեզի տուաւ: Մեր շահո՞ւն, մեզ շատ սիրելո՞ւն համար: Հարցումն իսկ ծիծաղ կը շարժէ: Սուլթանը

ուներ ետին միտք: Մենք, հայերս, առնելու չէինք զայն: Պետք չէր հաստատուելնք Պոլիս: Ինչո՞ւ սուլթանը Պատրիարքութիւն հաստատեց հոն, Պոլսոյ մէջ: Օսմանցիին մեզ ինչո՞ւ չբերաւ հոն: Մեզ յոյներուն հակադրելու համար: Գիտեր որ մեր եւ յոյներուն միջեւ կար այլամերժութիւն, հակառակութիւն մը դարերէն եկող: «Սուլթանին նպատակն էր մեր եւ անոնց, քրիստոնեայ դաւանութեանց պատկանողներուն» միջեւ հակասութիւն հրահրել, որ ինք կարենայ միահեծան իշխել:

Դարեր մնացինք այնտեղ: Ծառայեցինք օսմանցիին որ մեզ հանգիստ ձգեց: Մեր ուժը տուինք Պոլիսին, իսկ Անատոլուն, պատմական Հայաստանը ձգեցինք գրեթէ անտեր, լքուած, յետամնաց: Չկրցինք զարգացնել մեր բնաշխարհը: Այդպէս ալ մնաց վիճակը մինչեւ 1915 Պոլսոյ մէջ, ուր հաստատուած էին մեր կուսակցութեանց կեդրոնները մինչեւ իսկ: Չանդրադարձանք որ մեր կարծեցեալ ազատութիւնը Պոլսոյ մէջ, իսկական բանտարկութիւն էր: Եւ երբ ժամը հնչեց, թուրքը հաւաքեց բոլորս ակնքարքի մէջ: Իր գործը դիւրին եղաւ: Այս մէկը ինք առաջուրնէ գիտեր: Մենք հայկական դրախտ կարծեցինք Պոլիսը, որ թուրքին ոյժի մեծագոյն կեդրոնն էր: Այս ձեւով, մեր բոլոր յոյսերը կորսուեցան: Արեւմտեան Հայաստանի ժողովուրդն ալ, հողն ալ, ամէն բանն կորսուեցան: Հիմա ալ ունինք պատրիարքութիւն մը հոն: Արեւմտահայաստանի երբեմնի մեր կրօնական կեդրոնն է: Ինչ թիւ կը կազմէ գաղութը, քսան, երեսուն հազար: Չեմ գիտեր: Մէկ մասը տեղի հայերուն, նորերս Արեւմտահայաստանի խորերէն եկած հայ բեկորներ են, ջարդերէն ճողովորած, վերապրած հայերու մնացորդներ: Անոնց հաւաքեցին ու բերին Պոլիս: Թրքախօս հայեր են մեծ մասամբ: Համայնքը կը մնայ ուղղակի ենթակայ թուրքերուն, անոնց ազդեցութեան տակ: Մեծ մասը, մանաւանդ երիտասարդները թուրքերէն կը խօսին տուներու, դպրոցներու եւ հասարակական վայրերու մէջ: Շրջանաւարտները աւելի շատ թրքախօս կ'ըլլան: Կը գտնուին անշուշտ բացառութիւններ իրենց մէջ, լաւ հայերէն խօսող: Բացառութիւնը օրէնք չէ սակայն: Ծնողներ, կեանքի պայմաններու ստիպումով, իրենք կը քաջալերեն իրենց զաւակներուն թրքախօսութիւնը, որ անոնք տիրապետեն թուրքերէնին, որ ընկերութեան մէջ դիրք ու բարեկեցութիւն կարենան ապահովել: Այս պատճառով ալ, հայերէնին կարելորութիւն չի տրուիր: Հայերէն գիտես թէ չես

գիտեր՝ կարելոր չէ: Բնական է՝ եթէ հայերէնէ դասական չմնաս, հայերէն չես սորվիր: Առաջ, Պոլսոյ մէջ մայրենի լեզուով կը դասաւանդէին գիտութիւն, ֆիզիք, ուսողութիւն, աշխարհագրութիւն, եւայլն... Այսօր, այս բոլորը բրքերէնով կը տրուին: Հայերէնն ալ կ'աւանդուի իբր օտար լեզու: Դժբախտաբար, նոր սերունդն ու մանաւանդ ծնողները կարելորութիւն չեն տար հայագիտութեան, պէտք եղած բժախնդրութիւնը ցոյց չի տրուիր հայ լեզուի ուսուցման հանդէպ, նկատելով որ «կարելորութիւն չունի»: Ինչ կարելի է ընել, քանի պայման չէ հայերէն գիտնալը դասարան անցնելու համար: Այս պատճառով, հայերէն լեզուն երթալով կը տկարանայ:

Հ.- Խօսքը խօսք կը բերէ... Խառն ամուսնութեան մասին ի՞նչ է ձեր կարծիքը:

Պ.- Խառն ամուսնութիւնը ոչ մէկը չի փափաքիր: Բայց այսօրուան «ռեալիթէն», իրականութիւնը հասկանալ պէտք է: Խառն ամուսնութեան ոչ մէկ ձեւով արգելք ըլլալ կարելի է: Պիտի շարունակուին խառն ամուսնութիւնները դժբախտաբար: Լեզուն պիտի շարունակէ կորսուիլ Սփիւռքի մէջ: Երկու-երեք տասնամեակէ աւելի տոկա՞լ արդեօք...

Հ.- Ի՞նչ կրնանք ընել դարմանելու համար այս վիճակը: Ի՞նչ է մեր աշխատանքին կարելոր մէկ մասը...

Պ.- Բեկում պէտք է յառաջացնենք կացութեան մէջ, գոյացնենք անկիւնադարձ: Բայց, հայութիւնը չունի այդ ոյժն ու կամքը: Թուլամորթ ենք դժբախտաբար: Յաւելուած ուրիշ բան մը կայ - այսօրուան Հայաստանի ռեժիմը Արեւմտեան տէրութեանց հանելի չէ: Ասկէ օգտուելով որոշ կազմակերպութիւններ, այստեղ բշտամութիւն կը ստեղծեն հայ ժողովուրդին մէջ, կը պառակտեն հայ ժողովուրդը: Այս ձեւով հայ ժողովուրդը կ'ապրի Սփիւռքի մէջ առանց նպատակի, իսկ նպատակ չունեցող ժողովուրդին ուզածիդ չափ ջանայ հայերէն սորվեցնել մշակոյթի համբով: Տեղ չես կրնար հասցնել զինք մէկ քանի հանդէսներով ու տարեվերջի նաշկերոյքներով: Թոյլ տուէք ըսելու, որ ասոնք տեսակ մը ինքնախաբէութիւն են ինծի համար: Ընկեր մը ունէի այստեղ, որ Նիսի Մշակութային Միութեան համբով կ'աշխատէր բաներ մը ընել առանց նպատակի, առանց «բրոկրամ»ի: Մեր ցաւը կը կայանայ հոն, որ իւրաքանչիւր համայնք ինքզինք ամբողջ հայ Սփիւռքի գլխաւորն ու առաջատար

րը կը սեպէ, եւ կը կարծէ թէ ամբողջ հայութիւնը իրազեկ է իր կատարածին, գայն կ'իմանայ: Մինչդեռ ասոր հակառակն է իրողութիւնը: Նիւ Եորքի մէջ միայն դուք ձեզ գիտէք, հոս՝ մենք մեզ: Մեկս միւսէն լուր չունինք: Կ'աշխատինք առանց ունենալու ընդհանուր ծրագիր, յայտագիր: Չունինք հասարակաց նպատակակետ: Ինչ որ խելքերնիս փչէ այն կ'ընենք: Ահա թէ ինչու ես յոյս չունիմ, որ կրնանք բան մը ընել: Լաւ տեղ հասնիլ: Մենք, մեր երկու երեք հազար տարւան հայկական պատմութեան, մշակոյթին ժառանգը կը գործածենք, կը մսխենք հիմա: Անոր հարստահարիչները դարձեր ենք: Կը դիմենք յառաջ առանց նպատակի: Թոյլ տուէք որ յանձնարարեմ ձեզ կարգալ այս գրքին Ա. էջին մէջ գտնուող Ռուբէն Սեւակի «Այլասերում» յօդուածը: Կը խնդրեմ գայն լաւ կարգալ: Անոր ամէն մէկ տողը այսօրուան Սփիւռքին, տիրող կացութեան փայլն կը կազմէ, իմ համեստ կարծիքով:

Ամէն բիւրիմացութիւն կանխած ըլլալու համար ըսեմ, որ իմ դիտողութիւնները սփիւռքահայ բոլոր կազմակերպութիւններուն չի վերաբերիր:

Հ.- Դուք կրնա՞ք կարգալ:

Պ.- Այս յօդուածը, որ մաս կը կազմէ «**Բժիշկին գիրքէն փրցուած էջեր**»ուն, խորագիր ունի «**Այլասերում**»ը: Այլասերումը Ռուբէն Սեւակի գաղափարական դրսեւորումն է, որ կուտայ իր մտածումները: Ես այն համոզումը ունիմ, որ Ռուբէն շատ մեծ հեռատեսութիւն ունեցած է այս յօդուածին մէջ, մեր ներկան եւ ապագան նախատեսած է, ուրեմն միայն շրջանի մը յատուկ բան մը չէ այս նախադասութիւնը, եւ դժբախտաբար իր գրածները իրականութիւն ելան, դարձան գրի առնուելէ 70 տարիներ ետք: Ուրեմն՝ «**Այլասերում**» (գրուած 1911-ին՝ Ռուբէն Սեւակի կողմէ):

«ԱՅԼԱՍԵՐՈՒՄ»

ՌՈՒՔԷՆ ՍԵՒԱԿ

«ՔԺԻՇԿԻՆ ԳԻՐՔԷՆ ՓՐՑՈՒԱԾ ԷՋԵՐ» ՈՒ ՇԱՐՔԷՆ

...Աշխարհիս բոլոր մարդասպաններն ու բոլոր չարագործները ձեռք ձեռքի տուած՝ պիտի չկրնային այնքան երիտասարդ, այնքան խոստմնալի, այնքան ընտրուած հոգիներ սպաննել, քան Շոփէն-հաուէր մը, Նիցշէ մը, Պայրըն մը...

Այլասերած մանուկներու օրօրոցներուն մէջ պէտք է փնտռել անձնասպանութեան քարոզիչները, յոռետեսութեան առաքեալները, ապականութեան մարգարէները:

Անոնք կը ջլատեն գործունէութեան ամէն տենչ, երջանկութեան ամէն յոյս, սրբութեան ամէն հաւատք:

Անոնք չեն յառաջդիմեր այլ կ'ուստնուն, չեն երագեր՝ կը գառանցեն, չեն օրհներ՝ այլ կը նզովեն, չեն սիրեր՝ այլ կը տոփան:

Իրենց երգը հայհոյանքի մը պէս ամբարտաւան է, իրենց ժպիտը հեզութեան մը պէս վիրաւորիչ:

Օրինակ կուզե՞ք: Բայց ամէն ազգերէ աւելի հայ մտաւորականութիւնը կը վիստայ այս ԲԱՑԱՍԱԿԱՆ ՀԱՆՃԱՐՆԵՐՈՎ...

Կէս հանճարներ շա՛տ: Բայց երբ ցեղի մը մտաւորական բանակը տաղանդաւոր փոքրիկ վիժուկներով միայն կը լեցայ՝ անհանդուրժելի, գայթակղեցուցիչ, դատապարտուած ցեղ մը կ'ըլլայ այն(...)

... Ու մենք փոխանակ արմատախիլ ընելու, տգիտօրէն կ'ընտրենք էն ախտավարակ ծիլերը ու զիրենք միայն կը մշակենք:

Այն բոլոր առոյգ, պայքարող, զուարթ ու աչքաբաց երիտասարդութիւնը, որ կը լեցնէ մեր վարժարանները, կ'առնենք օր առաջ ԳՈՐԾԻ տալու համար:

Իսկ այն քանի մը նդնիմ, տժգոյն ու տխուր տղաքները, այն պատանի ծերունիները, որ արեւէն ու պայքարէն խուսափելով՝ դպրոցի մութ անկիւններուն մէջ թուղթ կը մրոտեն, անոնք դպրոցէ դպրոց, երկիրէ երկիր, համալսարանէ համալսարան կը դրկենք:

Խեղները...: Անոնք կը լեցնեն պանդուխտ ուսանողի գերեզման-

ները, անոնք կը լեցնեն հարուստի նախասենեակները ու վաճառականի գրասենեակները. հիւանդանոցի խշտեակները անոնք կը լեցնեն...:

Ու կը պատահի մեզ ա՛յն ինչ որ մեկ քաղաքակիրթ ազգի է պատահած:

Մեր գիւղացի ու շուկայի դասակարգը աւելի մտացի է քան այն, որ ՄՏԱՒՈՐԱԿԱՆ կը կոչուի, ընթերցողը աւելի ողջամիտ է քան գրողը, ԱՌԱՋՆՈՐԴՈՒՈՂԸ ԱԻԵԼԻ ՀԵՌԱՏԵՍ է ՔԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԸ, ուրիշ խօսքով՝ մարմինը աւելի խելացի է քան ուղեղը...:

Բնախօսական օրէնք մըն է, որ մարմինը իր մեջէն քիչ քիչ կը չէզոքացնէ, կ'անջատէ, կը վտարէ այլասերած մասերը:

Նոյն օրէնքով միայն կարելի է բացատրել՝ թէ ինչո՞ւ մեր մտաւորականութեան ու մեր հասարակութեան միջեւ գտնուող կապը քիչ-քիչ կը բարակնայ:

Ցեղը կը մնայ առաւել քան երբեք առողջ, ու իր մեջէն կը չէզոքացնէ, կ'անջատէ, կը վտարէ օտարացած ու այլասերած տարրերը:

Գլուխը մարմինին կապող նիհար պարանոցը երթալով կը բարակնայ: Ու հետո՞ւ չէ գուցէ այն օրը, երբոր վիզը փրփելով՝ մեր մտաւորականութիւնը անմարմին գլուխ մը պիտի ըլլայ միայն, եւ մեր ցեղը՝ անգլուխ մարմին մը...

Չէ՞ք տեսներ արդէն, թէ ինչպէս շատ մը գրագետներ լիրք քաջութիւնը ունին յայտարարելու՝ թէ իրենք ժողովուրդին համար չէ որ կը գրեն:

Ոչ, հօտին ու հովիւներուն միջեւ անհասկացողութիւնը երբեք այսքան մեծ չէր եղած:

Գառնուկի պէս անգէն ցեղ մը ամէն օր, ամէն օր կը յօշոտուի: Իսկ մեր գամբռները խելօքցեր, փիլիսոփայացեր, քաղաքակրթուեր են, տիեզերական եղբայրակցութեան մը խօսքեր կ'ընեն մեզի, ու կ'երագեն այն հեռուոր օրուան՝ ուր գայլ ու գառնուկ մեկտեղ կ'արածուին...:

Մանուկի պէս տգէտ ցեղ մը ուսման կաթին, որ հիւանդներն իսկ կարենային մարսել:

Իսկ մեր համալսարանականները, որ մեր մտաւոր ստնտու մայրերը պիտի ըլլային, դեռ կերածնին չմարսած կուգան մեր առջեւ փսխելու...:

Որքուկի պէս անտէր ցեղ մը հուժկու, ու լուսեղ ու սիրտբուխ բարբառի մըն է ծարաւ, իսկ մեր գրագէտները հանելուկային, առեղծուածային, խաւարակուռ բաներ կ'ըսեն իրեն, ու մեր քերթողները՝ գրիչնին հայ-արեան մէջ թաթխելէ վերջ՝ չինարէն տաղեր կը գրեն, որպէսզի մարդ չհասկնայ...:

Հեռո՛ւ մենե՛՜ ախտագի՛ն մտաւորականներ: Դուք ցեղին ուղեղն էք, բայց երբ ուղեղը ուրիշ կերպ չի կրնար խորհիլ քան յուսահատեցնելով մեր կենսունակութիւնը, մենք պիտի փրցնենք ու նետենք այդ ուղեղը:

Մենք նոր մտքեր, նոր սրտեր, նոր հոգիներ պիտի դարբնենք:

Մեզի, կարմիր ու մսուտ շուրթերով, ուժեղ ու ժպտուն գրականութիւն մը պէտք է:

Մեզի առողջ ու երիտասարդ մտաւորականներ պէտք են: Չուկն իր գլուխէն կը հոտի, ազգն՝ իր մտաւորականներէն: Անոնք են ցեղի մը գլուխը: Կրնայ մարմինը շատ ուժեղ ու շատ գործունեայ ըլլալ, բայց երբ ուղեղը խաբարուած է՝ այդ մարմնին շարժումը պիտի ըլլայ միա՛յն յիմարական գործունեութիւն եւ անպտուղ յոգնութիւն:

Ահա թէ ինչո՞ւ իրական վտանգները թողլու՝ հովերուն դէմ, ու մենք մեզ դէմ կը պայքարինք:

Ահա թէ ինչո՞ւ փոխանակ յառաջդիմելու՝ խենթերու պէս կեցած տեղերնուս վրայ կը ցատկենք, երկու հազար տարիէ ի վեր...:

Այո՛, մեր ցեղը տարօրինակապէս կենսունակ ու աշխատող ցեղ մըն է: Այո՛, մեր հնամենի նաւը դեռ ջուրերուն վրայ կը ծփայ, դեռ չընկղմեցաւ: Բայց ի՞նչ է պատճառը, որ երեկուան նաւակները մեզ արդէն անցան, ու մենք Ուրուական նաւին պէս կը ծածանինք դեռ, անխորասուզելի, բայց եւ հաստատ ցամաքի մը հասնելու անկարող...:

Ասոր պատճառները շատ բարդ են անշուշտ: Բայց գլխաւոր պատճառներէն մէկն այն է, որ ղեկին գլուխը կը նստացնենք մեր է՛ն ախտագին, է՛ն ալլասերած, է՛ն անպէտ ծնունդները:

Սակայն ստո՛յգ, ստո՛յգ կ'ըսեմ՝ ձեզի, վտանգը մեծ է, շա՛տ մեծ. աւելի մեծ քան կրնանք ենթադրել:

Ժամանակն է հակազդելու, հակազդե՛նք: Մեզի նոր Ոսկեդար մը պէտք է, նոր Ոսկեդա՛ր մը: Այլասերո՞ւմ, ո՛չ, վերածնո՛ւնդ...:

ԴՈՒԲԷՆ ՍԵՒԱԿ

1911 - Լոզան

Հ.- Հետաքրքրական է որ այդ տողերը գրուած են 1911-ին եւ թուրքերը լաւ հասկացած են Ռուբէն Սեւակի կարողութիւնը եւ այդ պատճառաւ ալ, զինք դատապարտուած են մահուան:

Պ.- Այո, ճիշդ է այդ: Յովհաննէս Լեփսիուսի կողմէ գերմանական արխիւէն հանուած նամակ մը, որ գրուած է գերման դեսպանատան պատասխանատուի մը կողմէ եւ ուղղուած՝ Ռուբէն Սեւակի կնոջ, տեղ կը գրաւէ այս գիրքին մէջ: Գերման դեսպանատան պատասխանատուն կը բացատրէ, թէ՛ ինչո՞ւ թուրքերը պիտի չուզէին կենդանի թողուլ Ռուբէն Սեւակը:

Ինչպէս ըսի՝ այդ նամակին թարգմանութիւնը ամփոփուած է այս գիրքին մէջ: Հոն կը նկարագրուի թէ ինչպէս, տիկ. տօքթ. Զիլինկիրեան եւ մայրը՝ տիկ. Աբել, այնուհետեւ աշխատեցան ենթակային վերադարձը եւ ապա Գերմանիա հաստատուիլը ապահովիլ: Թուրք կառավարական պաշտօնեաները մերժեցին, սակայն, այն առարկութեամբ որ, ինչպէս կը հետեւի խնդրոյ առարկայ պաշտօնեաներու արտայայտութիւններէն, տօքթ. Զիլինկիրեան կը նկատուի իբրեւ մէկը այն մտաւորականներէն, որոնց զանգուածներուն վրայ ունեցած ազդեցութենէն կը վախցուի: Այս է ամենակարեւորը:

Հ.- Հետաքրքրական է նաեւ այն պատմութիւնը, որ տիկ. Սեւակ գերմանուհի էր, երբ գնաց գերմանական դեսպանատուն, կամ դեսպանին մօտ, խնդրելու իր ամուսինին ազատումը... Ի՞նչ էր այդ պատմութիւնը:

Պ.- Ասիկա, իսկապէս ալ կարեւորագոյն էջերէն մէկն է Ռ. Սեւակի կենսագրին, նկատելով որ Ռ. Սեւակի կինը գերմանացի էր, բավական ծանօթ ընտանիքէ, զինուորական բարձրաստիճան անձնաւորութիւններ տուած գերդաստանէ մը սերած, Աբել ազգանունով:

Երբ Ռուբէն Սեւակ կ'աքսորուի Զանդըրըի, կինը կը դիմէ գերման իշխանութիւններուն, որոնք տիրող ոյժ էին այն ատեն Թուրքիոյ մէջ, անոր գինակից-դաշնակիցը: Փաստօրէն, իրե՞նք կը վարէին զինուորական բոլոր աշխատանքները: Առ այդ՝ տիկ. Սեւակ կ'ուզէ տեսնուիլ Պոլսոյ գերման դեսպան Վանկենհայմի հետ: Դեսպանը կը խուսափի ընդունելէ զինք, զանազան պատրուակներ առաջ քաշելով: Տիկնոջ յամառութեան վրայ՝ ընթացք կը տրուի իրեն: Սեւակի կինը կը խնդրէ դեսպանին միջամտութիւնը, յիշեցնելով որ Գերմանիա ամենագօր է թրքական իշխանութեանց մօտ: Իր մէկ խօսքը երկու չըլլար: Եւ սակայն, Վանկենհայմ կ'ըսէ.

«Ռուն քշուառական գերմանուհի, որ ամուսնացար այս հայուն հետ եւ ձգեցիր քու ազգդ ու եկար հոս, եւ հիմա կ'ուզես որ ազատիմ զինքը: Անոնք մեռնելու գացին եւ ա՛լ, ետ պիտի չգան»: Ասոր վրայ տիկ. Սեւակ կը գոչէ. «Երկու զաւակ ունիմ, ես զանոնք պիտի մեծցնեմ իբր հայ, եւ անոնք պիտի առնեն իրենց հօր վրէժը. քեզմէ եւ թուրք ու գերման ազգերէն»:

Աւելացնեմ, որ Սեւակի մանչը Ֆրանսա հաստատուեցաւ իր մօրը ցանկութեամբ: Ան գերմաներէն չի խօսիր, ինչպէս իր աղջիկը՝ մէկ բառ չի գիտեր գերմաներէն: Մանչը Բ. Աշխարհամարտին զինուորագրուեցաւ ֆրանսական բանակին եւ կռուեցաւ գերմանացիներուն դէմ: Ասիկա «սեմպոլիկ», խորհրդանշական կեցուածք մըն է բնականաբար: Ինք չզգետնեց մէկը, ինչպէս Թեհլիրեան սպաննեց Թալաթը:

Հ.- Այստեղ կը տեսնենք Պեթհովէնի եւ Վիքթոր Հիւկոյի նկարները: Ո՞վ գծած է զանոնք:

Պ.- Սեւակն է գծած: Նկարչութիւն սերտած է 1904-ին՝ Պերպերեան վարժարանին մէջ: Իր ստորագրութիւնը կը կրեն նկարները:

Հ.- Իսկ այս ի՞նչ է:

Պ.- Հեռագիրն է Սեւակի վերջին գրութեան, զոր ինք ղրկած է իրեններուն Չանդըրըիէն, 25 Օգոստոս 1915-ին, որուն մէջ կը նշէ, բնական է թրքերէնով, նկատելով որ հայերէն հեռագիր քաշել կարելի չէր այն ատեն, թրքական գրաքննութեան պատճառաւ: Կարդամ թարգմանաբար. «Ռ. Վարուժանի հետ Այաշ պիտի երթանք. նամակնիդ հոն ղրկեցէք. Ռուբէն»:

Այդպէս ալ եղած է: Ինք 1915-ի Օգոստոս 26-ին, Ռ. Վարուժանի եւ երեք ուրիշ աքսորեալ հայերու հետ նամբայ կը հանուին Չանդըրըիէն դէպի Այաշ: Քիչ ետք, Խալէնիք գիւղի մօտերը, կը սպաննուին թուրք «չէթէ»ներու կողմէ: Ասոնք առաջնորդուած էին ձեմալ Օղուզի կողմէ: Յիշեցնեմ, թէ հայրը այն աղջկան, որուն կեանքը փրկած էր Սեւակ զինք դարմանելով, գտնուած է այդ մարդասպան «չէթէ»ներու մէջ:

Հ.- Այս բոլորը փաստաբուղթերուն, որոնք տեղ գտած են գրքին մէջ, «օրիժինալ»ները կա՞ն ձեր մօտ:

Պ.- Այո, «օրիժինալ»ը մեր մօտն է:

Հ.- Պրն. Զիլինկիրեան, հիմա կը թուի ինձի, որ մենք հասած ենք այս հետաքրքրական հարցազրոյցի աւարտին, դուք որ ներշնչուած էք Սեւակեան ազգային գաղափարներով, քաղաքական ի՞նչ ուղի,

մտայնութիւն եւ հեռանկար կը մաղթեք սփիւռքահայութեան:

Պ.- Տրամաբանութեան համբան մ'էկ է: Երկու անգամ երկու կ'ընէ չորս: Մենք, այս «քոմբիւթըր»ի, այս յառաջադիմութեան դարուն, կ'աշխատինք երկու հազար տարի առաջուան սկզբունքներով դժբախտաբար: Որովհետեւ չենք հաւատար տրամաբանութեան, իրականութեան, եւ մենք միայն մեր երազածը ընելու կը ջանանք եւ ասոնք ալ ցնորական երազներ կ'ըլլան յանախ: Այս է մեր դժբախտութիւնը: Ես կ'ուզէի վերյիշեցնել ձեզի, թէ 1985-ին՝ Ռուբէն Սեւակի 100-ամեակին առթիւ հրատարակուած գրքին մէջ, հոն, ուր Ռ. Սեւակ կը խօսի «ուղեղներ»ու մասին, ես այնտեղ ջանացեր եմ լաւագոյնս բացատրել այն, թէ ինչ պէտք է ըներ Սփիւռքը եւ ինչ պարտի ընել ան ասկէ ետք, կարելի բոլոր միջոցներով: Իսկ նոյն գրքին 50-րդ էջին վրայ, ասոր վերջին մասին մէջ որ մինչեւ 57-րդ էջ կ'երթայ, բացատրուած են այն գաղափարները, զորս ուզած ենք լաւապէս իւրացուցած տեսնել սփիւռքահայութեան կողմէ եւ որոնք հայ Սփիւռքի ապագային ու տանելիք աշխատանքներուն կը վերաբերին: Ա՛յն Սփիւռքին, որ մինչեւ հիմա աննպատակ մարդու պէս, Ռ. Սեւակի մատնանշածին պէս՝ հովերուն դեմ եւ ինքզինքին դեմ կը պայքարի առանց նպատակի: Խօսքս մասնաւորներու չի վերաբերիր: Բացառութիւնները միշտ յարգելի են:

Այս գիրքին վերջին մասին մէջ, կարեւորագոյն կէտը կարծեմ սա է - Կեանքի մէջ ամէն բան նպատակով կ'ըլլայ: Ամէն մարդ, ամէն հաստատութիւն, ամէն կազմակերպութիւն, ամէն կուսակցութիւն, ամէն պետութիւն նպատակ մը ունենալու է, «բրոկրամ» մը ունենալու է: Եւ այս դարուս մանաւանդ, «քոմբիւթըր»ի դարուս, յառաջադիմութեան այս դարուս, կարելի չէ որեւէ տեղ հասնիլ առանց ծրագրումի:

Այս տեսակետով, այս Կարմիր գիրքին (այսպէս կրնանք որակել իր բովանդակութեան, նիւթերուն պատճառաւ) մէջ ընդգծուած կարեւորագոյն կէտը այն է, որ հայութիւնը, իր ամբողջութեան մէջ, իր նպատակակէտը պարտի ճշդել. ասիկա անհրաժեշտութիւն է, ստիպողական, անյետաձգելի: Մենք կը գործենք առանց որոշ ու ընդհանուր նպատակի: Մեր բոլոր անյաջողութեանց պատճառը մեր անջատ-անջատ, ինքնագլուխ ու առանց «բրոկրամ»ի գործելն է: Ինչ պէտք է եղած ըլլալ այդ նպատակը հայութեան, եթէ ոչ՝ **«Ամէն բան մեր Մայր Հայրենիքին համար»** սկզբունքը: Այս սկզբունքով է միայն, մենք կրնանք ունենալ հասարակաց գիծ:

«Միայն ու միայն հայրենիքին համար» սկզբունքով է, որ մենք պիտի կարողանանք, պիտի յաջողինք մեր երիտասարդ սերունդին յոյս մը տալ, ծրագիր տալ, որ ան գործէ ու յաջողի իր ապագայ կեանքին մէջ:

Առանց այդ յոյսին, առանց այդ նպատակին, մենք համոզում չունինք որ տեղ կրնան հասնիլ: Ուրեմն կրկնենք, որ մայր հայրենիքի ծառայութեան նամբով է, որ տեղ կը հասնինք, կը յաջողինք: Միայն տրամաբանութեան օրէնքներուն հպատակելով եւ անոնց քելադրութեամբ գործելով է, որ կրնանք յաջողութիւն արձանագրել: Անիրագործելի երազներուն ետեւէն երթալով, ինչպէս ըրած ենք ցարդ, հովերուն դէմ պայքարելով, ինչպէս տոնքիշոքները կ'ընեն, ըրին մինչեւ հիմա, մեր մեծ տոնքիշոքները, որոնք այսօր առաջնորդ կը նկատուին՝ մենք երագախար կ'ըլլանք, եւ այս կարգի առաջնորդները եւ կ'որակեմ կեղծ առաջնորդներ, կեղծ ազգասերներ, որոնք մեր ժողովուրդին աւելի վնաս հասցուցին քան շահ, հայրենիքն ու ազգը շատ տուժեց ասոնցմէ: Այսօր ցաւալի է մատնանշել, որ գրեթէ հարիւրամեայ այս կուսակցութիւնը այսօր իր հակապատկերին վերածուած է: Իր հայրենասէր հիմնադիր ղեկավարները թող տեսնեն այս վիճակը, իրենց հիմնած կուսակցութիւնը, որ կը գործէ աւելի շատ հայրենիքին ի վնաս, գործնապէս բան չընէր յօգուտ անոր:

Այսօր շատ ցաւալի է տեսնել այս իրականութիւնը: Բայց իրենք, այս իրականութիւնը տեսնելու կարողութիւնը չունին, չեն ուզեր տեսնել իրականութիւնը: Այսօրուան հայրենիքին համար որեւէ օգտակար բան չեն ըրած: Կը խօսին միայն: Կը խօսին անոր իրաւունքներուն մասին միայն թաքուն, յետին նպատակներ ունենալով: Հայրենիքէն ներս խլրտումներ ստեղծել է իրենց նպատակը, նաեւ վնասել այն միութեան, որուն կապուած է հայրենիքը: Այս կարգի ղեկավարներ ժողովուրդը նոր 24 Ապրիլներու պիտի տանին, նոր թշնամանքներու եւ նոր աղէտներու: Ուրեմն՝ կ'ուզենք այս մասին վերջին խօսք մը ըսել, թէ՛ մէկ բան կայ հայութեան համար: Սփիւռքի հայութեան համար կարենալ գոյատեւելու: Ասիկա հայրենիքին կապուիլն ու անոր զօրացումին համար աշխատիլն է: Ապա թէ ոչ, մէկ քանի տասնամեակներ ետք, պիտի հասնինք այն նակատագրին, զոր ունեցան Հնդկաստանի հայերը, Լեհաստանի հայերը, Վենետիկի, Ամսթերտամի հին գաղութները հայկական: Պիտի ունենանք նիշդ այն նակատագիրը, որ Ֆրանսայի ու Ամե-

րիկայի այսօրուան սերունդներունն է: Այսօրուրնէ իսկ զանոնք կրնանք որակել կորսուած սերունդներ հայ Սփիւռքին համար: Բացառութիւններ կրնան ըլլալ մէկ քանի հատ: Այսպիսիները տեսնելով մենք կը միտիքարուինք, երազներու անձնատուր կ'ըլլանք: Մոռնալով որ քանի մը բացառութիւն, մաքեմաքիքական արժէքով բան չեն ներկայացներ: Եւ դեռ կը յենինք այդ մատի վրայ համարուող բացառութիւններուն վրայ, երազներ կը հիւսենք անոնց վրայ: Շատեր գիտեն այս դառն իրականութիւնը, այս վիճակին բուն պատասխանատուները մանաւանդ, գիտեն, համոզուած են որ այսօրուան Սփիւռքը, ներկայ ընթացքով, ոչ մէկ տեղ կրնայ հասնիլ: Հակառակ անոր չունին քաջութիւնը իրականութիւնը խոստովանելու, նշմարութիւնը խօսելու, եւ անոնք, կարծեցեալ առաջնորդները մանաւանդ, մեզ կ'օրօրեն երազներու թելերուն վրայ, տոնքիչոքական կեցուածքներով ժամանակ ու աոիք կորսնցնել կուտան, որ միայն մեզ քնացնելու կը ծառայէ եւ ոչ մէկ լաւ տեղ չի հասցներ: Այս թմրեցուցիչները ամէն օր կը լսենք, կը կարդանք, կը հետեւինք այդ թմրեցուցիչ խօսքերուն, կը լծուինք աշխատանքի վասն ոչինչի, քանի որ զարտուղի կատարուող այդ աշխատանքները որեւէ հասարակաց գիծ ու նպատակ չունին, համադրութիւն չկայ անոնց միջեւ, ասոր համար ալ դատապարտուած աշխատանքներ են ի յառաջագունէ: Մինչդեռ, եթէ ընդհանուր ծրագրի հիման վրայ տարուէին ասոնք, կրնան իրապէս լաւ արդիւնքի հասնիլ:

Դժբախտաբար, 1920ի վարիչներէն՝ Քաջագնունին խօսքերը ստիպուած ենք դեռ ականջի օղ ունենալ: Այն Քաջագնունին, որ 1923-ին համարձակեցաւ ըսել որ՝ **Դաշնակցութիւնը ալ անելիք չունի**: Անիկա վարչապետն էր Հայաստանի 1918-20 բուականներուն: Յենած իր քաղաքական կեանքի փորձառութեան վրայ, կատարեց այս խոստովանութիւնը, ընելով ինքնաքննադատութիւնը իր կազմակերպութեան, որ տասնեակ ու տասնեակ տարիներ վնասաբէր գործունեութիւն ունենալէ ետք, դեռ կը շարունակէ իր վնասակար վարքագիծը: Այս դեկավարներուն ազդեցութիւնը կը տեսնենք ժողովուրդին վրայ: Կը ցաւինք այս տխմար վիճակին: Չենք գիտեր թէ ինչու պիտի ստեղծուէր նման վիճակ: Հաւատալ չենք ուզեր, որ հայ ժողովուրդը այս աստիճան կրնայ մեղանչել տրամաբանութեան, տեսնելէ, հաւատալէ ետք այդ սխալը, դեռ հետեւի ու հաւատալ անոնց, արանք դեռ պատնէշի վրայ են: Բոլոր պետութիւնները, բոլոր ազգերը դժուար եւ անհանդուրժելի օր ու

տարիներ ունեցած են, բայց գիտցած են նաեւ իրենց պարտութեանց պատասխանատուներէն հաշիւ ուզել, դատել զանոնք, որ գործուած սխալները չկրկնուին ուրիշներու կողմէ:

Մենք բացառութիւն կը կազմենք: Մեր պատասխանատուները չեն պատժուած: Եւ միայն ու միայն այդ անձնաւորութիւններու, այդ կազմակերպութիւններու անպատիժ մնալուն պատճառաւ է, որ նման վիճակներ կը ստեղծուին ու կը վերստեղծուին Սփիւռքի հայութեան քառսին մէջ: Ուրեմն նանչնանք մեր բարեկամը, նանչնանք մեր թշնամին: Միայն այս ձեւով մենք պիտի կրնանք մեր ուղին ընտրել, մեր ազգին ու հայրենիքին ծառայութեան հասարակաց աշխատանքներուն մէջ:

Դարերով՝ միայն ու միայն բուրանական ցեղերն են, որ մեզի՝ վնաս հասցուցին, չարչարեցին և այդ բուրանական ցեղերու շարունակութիւնը եղող օսմանեան կայսրութիւնը եւ այսօրուան թրքական կառավարութիւնները օգտուեցան ռուսական եւ Արեւմտեան պետութիւններու մրցակցութեան, եւ այսօր, շնորհիւ անոնց, այսինքն՝ օր մը Գերմանիոյ, օր մը Ֆրանսայի, օր մը Անգլիայի եւ օր մըն ալ Ամերիկայի ու ասոնց միջեւ միացման հասարակաց գիծ եղող *սիռնիստ*ներու համբով է, որ այսօրուան Թուրքիան կանգուն կը մնայ, եւ միշտ ունի այն հեռաւոր երազը, որ օր մը թրքական ցեղերը, Պոլիսէն մինչեւ Կեդրոնական Ասիա երկարող, կը միացնէ Թուրանի մականին տակ: Ի վնաս հայութեան կ'իրականացնէ իր երազը, որ մեր վերջնական մահը պիտի նշանակէ:

Դժբախտութիւն է այսօր, որ մենք շատ առիթներ փախցուցինք, 19-րդ դարէն մինչեւ հիմա: Այսօր ալ, պատմութիւնը, ժամանակը ի նպաստ հայութեան չաշխատիր: Կրնա՞յ փոխուիլ պատմութեան անիւին թաւալման ուղղութիւնը: Դժբախտաբար հաւատք չունիմ: Մեր այս վիճակով, այս մտածումներով, այս կեցուածքով, որ հայ ժողովուրդինն է այսօր, մենք չենք կրնար իսկապէս օգտակար գործ կատարել ազգին ու հայրենիքին համար: Քանի որ հայութիւնը որպէս ընդհանրութիւն, աւելի շատ հատուածական ու անձնական շահերու լոյսի տակ կ'որոշէ իր աշխատանքները:

Այս խօսքերով մենք չենք ուզեր յոռետեսութիւն քարոզել, յոռետեսութեան քարոզիչ նկատուիլ: Ուզեցինք միայն ու միայն անցեալի դժբախտութեանց ախտահանաչումը ընել, մեր ձախողութեան պատճառը տեսնել մեր այն աշխատանքներուն մէջ, որոնք այս վիճակը ստեղծեցին: Հիւանդութեան ախտը գտնելէ ետք միայն

մենք պիտի գտնենք դարմանումի միջոցները: Առանց ախտահանաչումի, առանց մեր ձախորդութեան պատճառները գտնելու տեղ չենք կրնար հասնիլ:

Ախտը թմրեցնելով ու քնացնելով զինք չենք կրնար բուժել: Դարմանումի այս սխալ կերպը հիւանդը մահուան կը դատապարտէ: Եթէ շարունակենք ներկայի մեր անփոյթ ընթացքը պահել, պիտի հասնինք բոլորովին անյուսալի վիճակի: Փրկութիւնը անհնարին պիտի ըլլայ անկէ ետք: Բայց եթէ ունենանք քաջութիւնն ու խորաթափանցութիւնը տեսնելու եւ ընդունելու մեր սխալները, թերեւս յայտնուի լոյս մը հայութեան համար, նոր վերածնունդ մը բոլորելու: Այս մէկը կարելի է ունենալ եւ իրականացնել կապուելով մեր այսօրուան հայրենիքին ի գին ամէն բանի, առանց նկատի առնելու անոնց կառոյցը, վարչաձեւը: Ասոնք յաւիտենական չեն: Կրնանք այսօր այս ըլլալ, վաղը՝ ուրիշ բան ըլլալ: Հայրենիքն ու ազգն են յաւերժականը:

Քաղաքական ու ընկերային նկատումներ շարժառիթ կը ծառայեն, դժբախտաբար, որոշ հայերու, որ հայրենիքին դէմ աշխատին: Բնաւ ներելի չէ մեզի աշխատիլ, գաղափարական ու կուսակցական նկատումներով՝ Մայր Հայրենիքին դէմ: Քիչ առաջ ըսինք արդէն, որ այս մտայնութեամբ գործողները վնասակար դեր կատարած են մինչեւ այսօր:

Ուրեմն, տանք հայ երիտասարդներուն, հայ պատանիներուն միայն ու միայն հայրենիքի սէր, ի գին ամէն բանի: Եւ միայն այս աշխատանքն է որ մեզ յաջողութեան պիտի տանի, մեզ պիտի հասցնէ մեր համազգային վառ տենչերու իրականացման:

Ուրեմն՝ հայրենիք, հայրենիք ու միշտ հայրենիք: Առանց հայրենիքի, առանց հողի որեւէ բան շինել կարելի չէ: Մենք ի սպառ կը կորսուինք սկսած այն պահէն, երբ կը խզուինք հայրենիքէն, կը կտրուինք մայրական պորտէն: Մենք լոկ զանգուած մըն ենք, ինքնին որեւէ արժէք չունեցող զանգուած մը: Հայրենիքն է որ մեզի յոյս կուտայ: Ան է որ ապրեցնելու ուժ կրնայ տալ մեզի մեր ներկայի ու ապագայի աշխատանքներուն մէջ: Ներկայ անել կացութենէն դուրս գալու միակ միջոցն ուրեմն, փարիլն է Մայր Հայրենիքին, ի գին ամէն բանի, ամէն դժուարութեան, որովհետեւ միայն հայրենիքն է իրականը, միայն հայրենիքն է յաւիտենականը:

Թո՛ղ կեցցէ մեր Մայր Հայրենիքը, կեցցէ՛ հայուն հայրենիքը. Կեցցէ՛ հայուն իրաւունքները:

Նիս, Օգոստոս 1988

**Նահատակ բանաստեղծ՝
ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ անուան
գրական մրցանակ**

Հաղորդագրութիւն

Ռուբէն Սեւակի գաղափարականը

«ԱՅԼԱՍԵՐՈՒՄ»

«Բժիշկին գիրքէն փրցուած էջեր»-ու շարքէն հատուած

.....
Ձուկն իր գլուխէն կը հոտի, ազգն՝ իր մտաւորականներէն: Անոնք են ցեղի մը գլուխը: Կրնայ մարմինը շատ ուժեղ ու շատ գործունեայ ըլլալ, բայց երբ ուղեղը խաթարուած է՝ այդ մարմնին շարժումը պիտի ըլլայ միայն յիմարական գործունեութիւն եւ անպտուղ յոգնութիւն:

Ահա թէ ինչո՞ւ իրական վանգները թողլու՝ հովերուն դեմ, ու մենք մեզ դեմ կը պայքարինք:

Ահա թէ ինչո՞ւ փոխանակ յառաջդիմելու՝ խենթերու պէս կեցած տեղերնուս վրայ կը ցատկենք, երկու հազար տարիէ ի վեր...:

Այո՛, մեր ցեղը տարօրինակապէս կենսունակ ու աշխատող ցեղ մըն է: Այո՛, մեր հնամենի նաւը դեռ ջուրերուն վրայ կը ծփայ, դեռ չընկղմեցաւ: Բայց ի՞նչ է պատճառը, որ երեկուան նաւակները մեզ արդէն անցան, ու մենք ուրուական նաւին պէս կը ծածանինք դեռ, անխորասուզելի, բայց եւ հաստատ ցամաքի մը հասնելու անկարող...:

Ասոր պատճառները շատ բարդ են անշուշտ: Բայց գլխաւոր պատճառներէն մէկն այն է, որ դեկիւն գլուխը կը նստացնենք մեր է՛ն ախտագին, է՛ն ալլասերած, է՛ն անպէտ ծնունդները:

Սակայն ստո՛յգ, ստո՛յգ կ'ըսեմ ձեզի, վտանգը մեծ է, շա՛տ մեծ, աւելի մեծ քան կրնանք ենթադրել:

Ժամանակն է հակազդելու, հակազդե՛նք: Մեզի նոր ոսկեդար մը պետք է, նոր ոսկեդա՛ր մը: Այլասերո՞ւմ, ո՛չ, վերածնո՛ւնդ...:

1911-Լոզան

ՌՌԻԲԷՆ ՍԵՒԱԿ

* * *

1911-ին Մեծ Եղեռնի նախօրեակին, Ռուբեն Սեւակի կողմէ գրուած մարգարեանման այս տողերը՝ դաս չեղան, այն տարիներուն, Պոլսոյ մէջ թուրքերու հետ գործակցող հայ առաջնորդներուն:

Եւ թուրքերը 1915-ին, Առաջին համաշխարհային պատերազմէն օգտուելով բնաջնջեցին հայ ազգը, մէջը ըլլալով իրենց հետ գործակցող հայ առաջնորդները, գողնալով անոր բոլոր սրբութիւններն ու հինգ հազար տարուան հայրենիքը:

Եւ այս հայրենիքէն փրկուեցաւ փոքրիկ մաս մը միայն, շնորհիւ 1920-ին մեզի օգնութեան հասնող եւ ամբողջական բնաջնջումէ ազատող ռուս ազգին:

Այս փրկուած փոքր Հայաստանը, այս «ժայռերու եւ քարերու երկիր Հայաստանը» հայրենուն վերջին յոյսն էր:

Անարդարութեան դեմ պայքարի ճամբուն վրայ՝ հայուն վերջին յենարանը:

Տրամաբանութեան ճամբուն մեզի կը ստիպէր որ, Արեւմտեան Հայաստանի ջարդի մնացորդ Սփիւռքի հայութիւնը միանար փոքր հայրենիքին հետ, պայքարելու համար ցեղասպան թուրքին դեմ:

Բայց Սփիւռքի հայութեան մէկ հատուածի կեղծ առաջնորդները ծախուած ըլլալով աշխարհակալ մութ ուժերուն - փոխանակ պայքարելու թուրքին դեմ, պայքարեցան փոքր հայրենիքին դեմ, պատրուակելով անոր ենթարկուած վարչաձեւը, մոռնալով որ վարչաձեւերը անցողակի են, եւ հայրենիքն է յաւիտեանը:

Կ'ուզենք այստեղ յիշել 1987-ին՝ **Ռուբեն Սեւակի Յիշատակի Տունը** այցելող Վարդգէս Պետրոսեանի ըսածները:

Վրաստանի Գրողների միութեան նախագահը օր մը սապե՛ս կ'արտայայտուի Վարդգէս Պետրոսեանին.

«Եթէ մենք, վրացիներս, ունենայինք հայրենուն ունեցած Սփիւռքը, մենք այսօր Սովետական Միութեան ամենամեծ ուժը կ'ըլլայինք»:

Սփիւռքը՝ այն մեծ ուժը, որ ունեին հայերը, երբեք չկարողացան

գործածել ցեղասպան բուրքին դեմ: Երբեք չկարողացան գործածել՝ հայուն գողցուած հայրենիքը ետ առնելու համար. իրենց կեղծ առաջնորդներուն պատճառաւ:

Ոչխարներու նման անտարբեր մնացին նահատակներու արիւնիին եւ հայրենի հողերուն կորուստին:

Ռուբէն Սեւակ, 1909-ի Կիլիկիոյ աղետէն ետք անտարբեր մնացող հայերը նկատի առնելով սապէս կըսէր.

«Հայ ժողովուրդը ե՞րբ պիտի սորվի մարդկօրէն կատղիլ»:

1915-ի մեծ աղետէն ետք հայ Սփիւռքը երբեք կատղիլ չգիտցաւ: Հայ Սփիւռքի պատմութիւնը լեցուն է պատեհապաշտութեան, անձնասիրութեան եւ դաւանանութեան օրինակներով:

Ինչպէ՞ս չհիանալ եւ չնախանձիլ պաղեստինեան երիտասարդներուն, որոնք քարերով կը պայքարին ու կը մեռնին իրենց հայրենիքին համար:

Եւ մտաբերել Սփիւռքի առաջնորդներուն կեցուածքը:

25 ունուար, 1984-ին, Փարիզի մէջ հայ մարտիկներու դատավարութեան օրը, Պոլսոյ ներկայ Պատրիարքը Անգարա կ'այցելէ եւ Թուրքիոյ վարչապետին պաշտօնատան մէջ ուղերձ մը կը կարդայ, խոր սուգի մատնելով Արեւմտեան Հայաստանի հայրենիքին համար պայքարող բոլոր հայրենասէր հայերը.

«Թուրքիոյ հայերը, Թուրքիոյ հողերուն ամբողջականութեան համար իրենց կեանքը սիրով զոհելու պատրաստ են»: (Տե՛ս Պոլսոյ Պատրիարքական գեկոյց՝ «Մարմարա», 28 Յունուար, 1984):

Ազգ մը իր առաջնորդներով միայն արժանի կ'ըլլայ ազգ մը ըլլալու:

Ռուբէն Սեւակ 1911-ին սապէս կ'ըսէր.

«Գառնուկի պէս անգէն ցեղ մը ամէն օր, ամէն օր կը յօշոտուի, իսկ մեր քերթողները, գրիչնին հայ արեան մէջ թաթխելէ վերջ չիմարէն տաղեր կը գրեն, որպէսզի մարդ չհասկնայ»:

1915-ի Եղեռնէն ետք հայ գրողները - քիչ բացառութիւններով - փոխանակ նահատակներու արիւնին ու գողցուած հայրենիքին համար ժողովուրդին մէջ պայքարի ոգին զօրացնելու՝ ծաղիկը, թիթեռնիկը, եւ իրենց «ԾՍ»ը երգեցին եւ ժողովուրդը քնացնելու նամբան ընտրեցին:

Այս ձեւով «Թալաթ»ի՝ «Հայը միայն թանգարանին մէջ տեսնել»ու որոշումը հայերու ձեռքով կամաց-կամաց կ'իրականանար:

Պոլսահայ ոգիով սնանոդ գրողներ, որոնք Արեւմտեան Հայաստանի հին բարքերու ժառանգորդները, հարստահարիչները եւ մակաբոյծներն էին, իրենց պայքարէ հեռու, անտարբեր ոգին փոխանցեցին Սփիւռքի հայութեան. օրօրելով, թմրեցնելով հայ ոգին: Սփիւռքահայութիւնը իր մահաքունին մէջ կը մօտենար դէպի անդունդ: Կը մնար վերջին յոյսը հայութեան՝ «փոքրիկ հայրենիքը». եւ հայուն թշնամիները օգտուեցան 1986-ին Սովետական Միութեան մէջ «փերեսքոյքա» կոչուող ազատութեան շունչէն:

Տարիներէ ի վեր Սովետական Միութիւնը խորտակելու միտող աշխարհակալ մութ ուժերը ստեղծեցին «Ղարաբաղի հարցը», շատ լաւ գիտնալով, որ Սովետական Միութիւնը չէր կրնար հայերուն տալ Ղարաբաղը, նկատի առնելով Սովետական Միութեան մէջ 100 միլիոնի հասնող իսլամ զանգուածներու ըմբոստութեան վտանգը: «Ղարաբաղի հարցը» մէջտեղ նետելով, հայերը կայծահանի դեր կատարեցին, Սովետական Միութեան մէջ գտնուող իսլամները հրահրելու համար:

Այս խաղը աշխարհակալ մութ ուժերու կողմէ կարգադրուած խաղ մըն էր, Սովետական Միութիւնը խորտակելու համար, որ կը սկսէր 1979-ին՝ Սովետական Միութեան սահմաններուն մօտ, Պարսկաստանի մէջ, Խոմէյնիի մոլեռանդ իսլամական շարժումով: Եւ մենք ինկանք այս ծուղակը:

Այսօր Հայաստանի հայութիւնը այլեւս չի խօսիր Կարսի, Վանի, Մուշի մասին, չի խօսիր Էրզրումի, Սասունի մասին, չի խօսիր ցեղասպան թուրքին մասին, ի մեծ ուրախութիւն անոնց: Մոռցուած է Թուրքիոյ կողմէ գողցուած Արեւմտեան Հայաստանը, եւ կը խօսուի միայն Ղարաբաղի մասին:

Ռուսերու դէմ թշնամական զգացումները կը տարածուին հայութեան մէջ, յանցաւոր նկատելով ռուսերը, որ Ղարաբաղը հայերուն չեն տար, մոռնալով որ Ղարաբաղի հարցին լուծումը Մոսկուայէն չանցնիր, այլ կ'անցնի Անգարայէն:

Անգարան էր, 1920-ին, այն թուականներուն շատ դժուար վիճակի մէջ գտնուող Սովետական Միութեան ստիպեց, որ Ղարաբաղը եւ Նախիջեւանը ազերիներուն տրուի:

Եւ այսօր, Արեւմտեան պետութիւններուն գինակիցը եղող ցեղասպան թուրքը մինչեւ հիմա անպատիժ կը մնայ, օրինակ ըլլալով իրեն ցեղակից ազերիներուն:

Երբ ցեղասպան թուրքը տակաւին չէ պատժուած, ինչն՝ ազերի թուրքերը միեւնոյն ցեղասպանութեան արարքները չընեն հայերուն դէմ:

Այսօր, Մեծ Եղեռնէն 75 տարիներ ետք, մեր փոքրիկ հայրենի հողը, հայութեան վերջին յոյսը՝ կեղծ առաջնորդներու ձեռքով վտանգի ենթարկուած է:

Կը մոռնանք, որ Հայաստանը կը գտնուի կոկորդիլոսի մը բերանին մէջ: Նայեցէք այսօրուան Հայաստանի քարտէսը. երեք կողմէ շրջապատուած է թուրքերով. Արեւմուտքէն՝ ցեղասպան թուրքերով, Արեւելքէն՝ ազերի թուրքերով, Հարաւէն՝ Պարսկաստանի ազերի թուրքերով. եւ այս կոկորդիլոսին բերանը օր մը կրնայ գոցուիլ, նզմելով բոլոր հայութիւնը, եթէ (Աստուած պահէ), ռուսական բանակը հեռանայ:

1985-ին Ռուբէն Սեւակի 100-ամեակի առթիւ հրատարակած՝ *«Ռուբէն Սեւակ եւ Փրցուելիք Ուղեղներ»* գիրքին յառաջաբանին մէջ սապէս կը գրէինք.

«Այս գիրքը կը ձօնենք Սփիւռքի այն կեղծ առաջնորդներուն, որոնց սխալ քաղաքականութիւնը նոր 24 Ապրիլներու կրնայ յանգիլ:

Մաղթենք որ պատմութիւնը կրկնութիւն է ըսուած կարգախօսը հայ ազգին համար չիրականանայ:

Ալ կը բաւէ հայ ազգին կրած տառապանքը»:

Մենք այս հաղորդագրութեամբ կ'ուզենք՝ Ռուբէն Սեւակի գաղափարականով հայ ժողովուրդը խելքի եւ տրամաբանութեան նամբան հրաւիրել: Մաղթենք որ հայ ազգը ինքնագիտակցութեան գայ, եւ նանչնայ իր բարեկամը, որ միայն ռուս ժողովուրդն է, եւ նանչնայ իր թշնամին՝ որ ցեղասպան թուրքն է: Ե՛ւ Հայաստան, ե՛ւ Սփիւռք միանայ ցեղասպան թուրքին դէմ, ի սեր միլիոնաւոր նահատակներու արիւնիին, ի սեր հայուն գողցուած Արեւմտեան Հայաստանի հողերուն. եւ այն ատեն է որ միայն կրնանք պահանջատէր ըլլալ Ղարաբաղի եւ Նախիջեւանի մեր իրաւունքներուն:

* * *

Ռուբէն Սեւակի գաղափարականը հայ ժողովուրդին մէջ տարածելու նպատակաւ, բանաստեղծին 100 ամեակին առթիւ, 1985-ին

ստեղծուած էր Ռուբէն Սեւակի անուան գրական մրցանակ մը:

1985-ի մրցանակը յատկացուած էր Գեորգ Գապառանեանի՝ **«Ռուբէն Սեւակի վերջին օրերը»** քատրերգութեան համար:

1986-ի մրցանակը յատկացուած էր հայրենի գրականագէտ՝ Ալեքսանտր Թոփչեանի՝ **«Ռուբէն Սեւակ - երկեր»** հատորին համար:

1987-ի մրցանակը յատկացուած էր հայրենի վաստակաւոր դերասանուհի՝ Անահիտ Թոփչեանին, 1987-ին Երեւանի հեռուստատեսիլի հաղորդման մէջ՝ **«Ռուբէն Սեւակի ստեղծագործութեան բարձրարուեստ մարմնաւորման»** համար:

1988-ի մրցանակը յատկացուած էր հայրենասէր տաղանդաւոր գրականագէտ՝ Անդրանիկ Մառուկեանին՝ **«Ռուբէն Սեւակ - Սերը Եղեռնին մէջ»** վէպին համար:

1989-ի Ռուբէն Սեւակի անուան գրական մրցանակը, բացառաբար երեք առաջին մրցանակ ըլլալով, հետեւեալ հայ մշակոյթի արժանաւոր ներկայացուցիչներուն յատկացուած է.

ա. - 1989-ի Ռուբէն Սեւակի անուան գրական առաջին մրցանակը յատկացուած է՝ 1984-էն սկսեալ Ռուբէն Սեւակի վերածնունդին ամենէն շատ ծառայող, Պէյրութի «Արարատ» օրաքերթի խմբագրապետ՝ **Ժիրայր Նայիրի**-ին:

բ. - 1989-ի Ռուբէն Սեւակի անուան գրական առաջին մրցանակը յատկացուած է՝ **Անթիլիասի Հայաստանեայց Եկեղեցւոյ Համալսարանական Ուսանողներու Միութեան**, 1986-ին Պէյրութ հրատարակուած՝ **«Ռուբէն Սեւակ - Երկեր»** հատորին համար:

գ. - 1989-ի Ռուբէն Սեւակի անուան գրական առաջին մրցանակը յատկացուած է Միացեալ Նահանգներու մէջ՝ 1988-էն սկսեալ Նիւ-Ճըրզիի Հայկական ռատիոկայանէն Ռուբէն Սեւակը ամենալաւ ձեւով ծանօթացնող ռատիոկայանի հիմնադիր-տնօրէն՝ **Վարդան Ապտօ**-ին:

Մեր երախտագիտութեան զգացումները կը յայտնենք Ռուբէն Սեւակի գաղափարականը տարածելու նամբով հայութեան ծառայող հայ մշակոյթի արժանավոր ներկայացուցիչներուն:

**«ՌՈՒՐԷՆ ՍԵՒԱԿԻ անուան
մշակութային հիմնարկ»**

Քաներ-սիւր-Մեր - Քօթ տ'Ազիւր - Ֆրանսա

Նոյեմբեր 1989

«Արարատ», 1, 2, 3 ապրիլ 1994
ՌՈՒՐԷՆ ՍԵՒԱԿ
... ԵՒ ՀԱՄԱՆՈՒՆ ԳՐՈՂԻ ՄԸ
ԻՆՔՆՈՒԹԵԱՆՑ ՇՓՈՒԹԵՆԷՆ
ՄՆԱՄ TRAGI-COMEDIE-Ի
ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ
ԱՐԱՐ ԱՌԱՋԻՆ

Պոլսոյ հայկական եւ քրքական շրջանակներուն մէջ շատ ծանօթ անձնաւորութիւն մ'եղող բանասէր, պատմագէտ, փրօֆ. Բարսեղ Թուղլանեան Պոլսոյ պատմական հայկական կեանքի եւ անձերու վերաբերեալ, քրքերէն եւ անգլերէն լեզուներով, շատ արժեքաւոր գիրքեր հրատարակած էր:

Վերջերս, Բարսեղ Թուղլանեան լոյս ընծայեց, կրկին Պոլսոյ մէջ, եւ քրքերէն լեզուով՝ «Հայ գրականութեան հատընտիրներ», (Ermeni edebita tından seçti kiler) անունով, իր տեսակին մէջ եզակի եւ շատ հետաքրքրական anthologie մը: Այս ծաւալուն գիրքին մէջ, հայ գիրի եւ գրականութեան պատմութիւնը կը տրուի, եւ յատկապէս՝ պատմական հնագոյն շրջաններէն մինչեւ մեր օրերու հայ գրողներու կեանքը, գաղափարականը, գործերը եւ իրենց ստեղծագործութիւններէն նմոյշներ՝ շատ յաջող քարգմանութեամբ:

Գիրքին մէջ ներկայացուող հայ բանաստեղծներէն մէկն է Ռուբէն Սեւակը: Մէկ էջի վրայ տրուած է Ռուբէն Սեւակի կեանքը, գործերը եւ մանաւանդ՝ գաղափարականը, շատ ճշգրիտ մեկնաբանութեամբ: Իսկ ասոր հետևող էջին վրայ տրուած է Ռուբէն Սեւակէ (որպէս թէ) բանաստեղծութիւն մը. բնական է՝ քրքերէնի քարգմանուած, իսկ բանաստեղծութեան անունը՝ «deliriyorum» - «Պիտի խենթանամ»:

Ընդամենը մէկ էջնոց քերթուած մըն է ան, որուն վերջաւորութեան կայ բանաստեղծին անունը՝ «Ռուբէն Սեւակ»:

Ուշադրութեամբ կարդացիւք բանաստեղծութիւնը եւ նկատեցիւք, որ Ռուբէն Սեւակի այս բանաստեղծութիւնը մեզի ծանօթ էր: Թերեւս կը սխալիւք կամ չե՛նք յիշեր ըսելով՝ Ռուբէն Սեւակի

բոլոր գիրքերը պրպտեցինք: Արդի՞ւնքը՝ այս բանաստեղծութիւնը անոնցմէ ոչ մէկուն մէջ չի գտանք:

Այն ատեն Պոլիս՝ Բարսեղ Թուղլանեանին հեռաձայնելով խնդիրը պարզեցինք իրեն ըսելով, որ Ռուբէն Սեւակի այս քերթուածը մեզի ծանօթ չէր. արդեօք ուրկե՞ր գտած էր ինք այս կտորը, եւ խնդրեցինք լուսաբանութիւն:

Բարսեղ Թուղլանեան մեզի այսպէս բացատրեց. «Հայրս, - ըսավ ան,- Թորոս Ազատեանին շատ մօտիկ բարեկամն էր: Անկէ շատ մը ձեռագիրներ առած էր, քերեւս անոնցմէ մէկն է», եւ ւաւելցուց. «Ինձի շաբաթ մը ետք հեռաձայնեցէք. ես, մինչ այդ, կը պրպտեմ եւ ձեզի կը պատասխանեմ»:

Բարսեղ Թուղլանեանի այս խօսքը, մեր առջեւ մեծ յոյսի մը նամբան բացաւ: Թորոս Ազատեանը ատենին. Պոլսոյ մէջ, նահատակ Ռուբէն Սեւակի ձեռագիրները հաւաքած էր: Եւ բարեբախտաբար, Թ. Ազատեան կտակ էր ըրած, որ իր մահէն ետք այս ձեռագիրները Հայաստան դրկուին, եւ իր մեծահոգի տիկինը, իր ամուսնոյն ցանկութիւնը կատարելու ջանքով, այդ բոլոր ձեռագիրները Հայաստան դրկած էր: Նշենք այստեղ, որ անոնց շնորհիւ է որ 1985ին, Հայաստանի մէջ, Ալեքսանդր Թոփչեան Ռուբէն Սեւակի ամբողջական գործերը կրցաւ հրատարակել:

Հարց մը, երկար ատեն, յուզեց մեզ ու չարչրկեց միտքը - արդեօք Թորոս Ազատեան, այս անտիպ ձեռագիրներէն մաս մը, Բարսեղ Թուղլանեանի հօրը տուած կրնար ըլլալ: Այս հարցումին տրուած դրական պատասխան մը իրաւունք պիտի տար մեզի յուսալու, որ Ռուբէն Սեւակէ ուրիշ եւ նոր գրութիւններ ալ կրնային գտնուիլ իր մօտ:

ԱՐԱՐ ԵՐԿՐՈՐԴ

Անձկալից շաբաթ մը անցուցինք: Այդ միջոցին, Ռուբէն Սեւակէ նոր անտիպներ գտնելու յոյսը ւաւելի հրահրուեցաւ մեր մէջ:

Չէ՞ որ քանի մը տարի առաջ, հրաշալի դիպուածով մը, տեղեկացած էինք թէ, Գանատա՝ Թորոնթօ քաղաքը բնակող Պետրոս Զոպեանի ընտանիքին մօտ Ռուբէն Սեւակէն երկու անտիպ ձեռագիր տետրակներ կը գտնուէին. եւ պատահած էր հրաշքի համազօր եղելութիւն մը - Ռուբէն Սեւակի երկու ձեռագիր անտիպ տետրակները Գօթ Տ'Ազիւրի «Ռուբէն Սեւակի յիշատակի տուն»ի մէջ ամ-

փոփոխեցան: Ասոր շնորհիւ է որ, կրկին Ալեքսանդր Թոփչեանի ջանքերով, 1992ին Երեւանի մէջ, այս նոր անտիպներու գիրքը հրատարակուեցաւ:

Երբ շաբաթ մը ետք, կրկին Պոլիս՝ Բարսեղ Թուղլանեանին հեռաձայնեցինք, անոր տուած պատասխանը մեր այս յոյսի երազը փնացուց:

Բարսեղ Թուղլանեան ըսաւ մեզի. «Գրութիւնները տպագրելէ ետք, բոլորն ալ Հայաստան՝ թանգարան դըրկեցի. այդ պատճառաւ քան մը չկրցայ գտնել իմ մօտ»:

Հարցը մնաց առեղծուած մեզի համար: Մեր միտքը չարչրկողը սակայն, միշտ նոյն հարցումն էր թէ՛ Ռուբէն Սեւակի այս «Պիտի խենթանամ» բանաստեղծութեան աղբիւրը ի՞նչ էր. ուրկէ՞ եկած էր ան:

Առեծուածը լուծուեցաւ ասկէ շաբաթ մը առաջ, Ա. Թոփչեանի շնորհիւ:

Առջի շաբաթ ժընեւ, հայրենի մտաւորականին հետ ժամադրուած էինք: Ինք Հայաստանէն եկած էր հոն, գուիցեքիացիներու հրաւերով:

Տեսակցութեան ընթացքին յարգելի գրականագետին ցոյց տուինք Բարսեղ Թուղլանեանի գիրքը եւ յատկապէս՝ Ռուբէն Սեւակի վերաբերեալ մասը:

Նախ՝ Ռուբէն Սեւակի կեանքին, գործերուն եւ գաղափարականին մասին գրածը բրքերէնէ հայերէնի թարգմանեցինք. յետոյ ալ «Պիտի խենթանամ» անունը կրող բանաստեղծութիւնը բառացիօրէն սկսանք թարգմանել:

Բանաստեղծութեան ընթերցումը դեռ իր աւարտին չէր հասած, երբ Ա. Թոփչեան միջամտեց. «Նայեցէք,- ըսաւ,- հիմա այսպիսի նախադասութիւն մը պիտի գայ»: Եւ արտասանեց՝ «Եւ բառերն ալ առանց խենթանալու երգ չեն ըլլար»: Եվ, իրապէս ալ, այդպէս էր հետեւող նախադասութիւնը:

«Սիրելի Չիլինկիրեան,- ըսաւ Ա. Թոփչեան.- այս բանաստեղծութիւնը Ռուբէն Սեւակինը չէ, այլ՝ Պարոյր Սեւակինն է: 1963ին Երեւան հրատարակուած Պարոյր Սեւակի «Մարդը ափի մէջ» գիրքէն վերցուած բանաստեղծութիւն մըն է»:

Իրապէս ալ այդպէս էր: Պարոյր Սեւակին 1963ին Երեւան հրատարակուած «Մարդը ափի մէջ» գիրքին 105րդ էջի վրայ գտնուող «Գժուում եմ», այսինքն՝ «Պիտի խենթանամ» քերթուածն էր այդ:

ԱՐԱՐ ԵՐՐՈՐԴ

Լա՞նք թե խնդանք:

Ո՛չ լանք, ո՛չ ալ խնդանք:

Տարիներ շարունակ բողոքեցինք Ռուբեն Սեւակի գրչանունին, ոչ - բուն Սեւակի կողմէ գործածուելուն դեմ, բացատրեցինք ասոր անպատեհութիւնները եւ անկէ գալիք վնասները: Եւ այս վերջինը՝ Բարսեղ Թուղլանեանի Anthologie-ին մէջ կատարուած մեծ սխալը, մեր տեսակետը ապացուցանող մեծագոյն փաստն է:

Բայց Բարսեղ Թուղլանեան յանցաւոր չէ գործուած այս սխալին համար: Բարսեղ Թուղլանեան ինկած է այն ծուղակին մէջ գոր լա-րած է նուիրականութիւն մը մրոտելով՝ Պարոյր Ղազարեանին Սեւակ անունը տուած Ռուբեն Զարեանը, Սեւակ գրչանունի ըստեղծիչ ու բացարձակ սեփականատէրը եղող նահատակ բանաստեղծ Ռուբեն Սեւակին գրչանունը իւրացուցած, զայն գործածող Պարոյր Ղազարեանը դարձնելով (կամայ-ակամայ) մեղսակից:

Մեր այս մեղադրականէն վրդովողներ եղան անցեալին: Այսօր ալ կրնան դժգոհներ գտնուիլ: Անարդարօրէն սրդողածներուն հետեւեալը կ'ուզենք ըսել.

Անիրաւաբար Սեւակ գրչանունը իւրացուցած, երկրորդ եւ ոչ հարագատ Սեւակին գրական արժանիքին մասին բան մը չունինք ըսելիք: Արժանիք ու տաղանդ խնդրոյ առարկայ չեն այստեղ: Գրական շնորհի հարցը մեզ չի շահագրգռեր այս պարագային: Մեր նիւթը, մեր խնդիրը Ռուբեն Սեւակի ստեղծած գրչանունին ուրիշի մը կողմէ առանց իրաւունք ունենալու սեփականացուիլն է:

Ոչ միամիտ պէտք է ձեւանալ եւ ոչ ալ, սխալ ելակէտէ մեկնելով, արժանապատուութեան հարց ստեղծել անտեղի կերպով: Իբր թէ արժէք մը ստուերոտելու միտո՞ւմ կայ մեր մօտ: Ամենեւին: Բայց կարելի՞ է հերքել, որ Սեւակ գրչանունը 1907ին, առաջին անգամ, Ռուբեն Սեւակը ստեղծած եւ գործածած է:

Մինչեւ 1907 թ. Սեւակ անունը ո՛չ իբրեւ հասարակ անուն, ո՛չ ալ որպէս յատուկ անուն հայ ժողովուրդէն ներս չէ գործածուած:

Պարոյր Ղազարեանի կողմէ Ռուբեն Սեւակի պատկանող գրչանունին գործածուած ըլլալը, առանց հետեւանքները հաշուելու, անպատասխանատու ընթացք մըն է, որ չ'արդարանար:

Ռուբեն Սեւակ «Բարիին, գեղեցիկին եւ նշմարիտին» հաւատա-ցող սերունդին ներկայացուցիչն էր: Այս հաւատքով ապրեցաւ ան:

Այս հաւատքին պատճառաւ նահատակուեցաւ: Իրաւ գրողը, բանաստեղծը իր կեցուածքովն ու իր ըմբռնումովը, իր գործնական կեանքովը, անհատին տիպարովը օրինակ պէտք է ըլլայ ժողովուրդին:

Իրաւ բանաստեղծը, գրողը ժողովուրդին հայելին է: Ժողովուրդն ալ բանաստեղծին հայելին է ու պարտի ըլլալ, անոր ջամբած դաստիարակութեան, գաղափարականին արտայայտիչը: Ռուբէն Սեւակին ըսածին պէս՝ գրողը, բանաստեղծը իսկական ուղեղն է, առաջնորդն է ժողովուրդին:

ՌՈՒՐԷՆ ՍԵՒԱԿ
... ԵՒ ՀԱՄԱՆՈՒՆ ԳՐՈՂԻ ՄԸ
ԻՆՔՆՈՒԹԵԱՆՆՑ ՇՓՈԹՈՒԹԵՆԷՆ
ԾՆԱԾ TRAGI-COMEDIE-Ի
ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

ԱՐԱՐ ԶՈՐՐՈՐԴ

Անհարազատ մտաւորական-առաջնորդներ ի՞նչ տեսակ ժողովուրդ մը պատրաստեցին: Անոնք եւ նմանները իրենց անպատասխանատու կենցաղով եւ արեւելումներով չէին կրնար տալ բարիին, գեղեցիկին եւ նշմարիտին հաւատքը ժողովուրդին:

Այդպիսիներուն ստեղծած ժողովուրդը բարին չարէն, իրականը սուտէն, արդարը անիրաւէն զանազանելու կարողութիւնը չունեցաւ:

Այս մասին շատ պատշաճ օրինակ մը տանք. յիշենք Խաչատուր Աբովեանի հրաշալի պատգամը: «Երբ ռուս մը տեսնէք, խաչակնքեցէք»: Կամ՝ «Օրհնուի այն պահը երբ ռուսին ոտքը հայկական հողին դպաւ»:

Մօտիկ անցեալի հայրենի մտաւորականութիւնը հայ ժողովուրդին չի հասկցուցին այս պատգամին կարեւորութիւնը: Մատի վրայ համրուող, իրենց կոչումին գիտակից մտաւորականները յարգելի են:

Հայ ժողովուրդը չի հասկցաւ որ Հայաստանի աշխարհագրական ու քաղաքական ներկայ պայմաններու մէջ, երէկ, այսօր եւ վաղը, մեր միակ նեցուկը եւ փրկարարը ռուս ժողովուրդը կրնայ ըլլալ: Ընդհակառակը, Արեւմտեան պետութիւններու հաշտոյն գործողներու աշխատանքով հայ ժողովուրդին մէջ ստեղծուեցաւ ռուսերուն

դեմ թշնամութիւն՝ «ոուսը մեզ կը հարստահարէ, մեր ունեցածը կ'առնէ...»:

Տեղին չէ՞ ըսելը. «Եղբայր, քու «քարերու երկիր»դ ինչ ունէր որ ոուսերը զայն պիտի գողնային: Որքան ալ շինարար ու տաղանդաւոր եղած ըլլաս դուն»:

Քիչ մը հաշուել գիտցողը տեղեակ է որ, «քարերու երկիր» Հայաստանը իր այդ կացութեան մէջ, իր բնակչութեան միայն մէկ փոքր տոկոսը կրնար կշտացնել:

1920էն ի վեր, եւ մինչեւ այսօր ով տուաւ եւ կու տայ այդ մնացեալը: Ամերիկացի՞ն, անգլիացի՞ն, ֆրանսացի՞ն: Ի՞նչ խաբկանք: Ասոնք թուրքին գինակիցները չէ՞ն:

Ռուս ժողովուրդը մինչեւ իսկ իր հացէն կտրեց ու հայերուն տուաւ. չմոռնանք այս մէկն ալ: Ինքն ալ իր հաշիւներն ունէր: Գուցէ: Բայց, այսպէս ըլլալով հանդերձ, մեր ըսածը իրականութիւն ըլլալէ չի դադրիր: Անոնք որ տարիներով Հայաստանի մէջ անպարկեշտ միջոցներով հարստութիւն դիզեցին, ամէնէն շատ ոուսերուն դեմ լեզու երկարողները եղան: Չարաշահութեամբ հարստութիւն դիզածներ լեցուցին Քալիֆորնիոյ քաղաքները եւ իրենց պատճառաւ Քալիֆորնիոյ սիւբերմարշէներուն դռներուն վրայ ինչե՛ր գրուեցան «... եւ հայեր հոս չեն կրնար մտնել»: Այս ըսել չէ անշուշտ, որ ամէն արտագաղթող այպանելի է:

Հայ ժողովուրդէն շատեր հաւատացին Միւնիխէն հայկական պետութեան վրայ թոյն ժայթքեցնող այսպէս կոչուած «Ազատութեան ռատիօ»ներու ծառայութեան լծուածներու քարոզչութեան:

Եվ Միւնիխի ռատիօն նորեկ վարորդ Պարոյր Ղազարեանի արկածով մահը վերածեց ոուսերուն կողմէ սարքուած դաւի, երբ բոլոր խղճամիտ հայերը գիտէին անոր ցաւալի արկածի մը հետեւանք ըլլալը:

Հայ ժողովուրդէն զանգուածներ հաւատացին Միւնիխի վարձկաններուն ոուսատեաց վերագրումին, որովհետեւ ժողովուրդը իր ուղեղին մէջ չունէր նշմարիտը՝ սնուտէն, գողը՝ պարկեշտէն, բարեկամը՝ թշնամիէն զանազանելու կարողութիւնը:

* * *

Յիշենք Ռուբէն Սեւակի նահատակուելէ առաջ ընկերներուն տուած պատգամը,

Թրքանալը նուաստանալ է:
Մենք պիտի պահենք մեր հայութիւնը:
Մենք օրինակ պիտի ըլլանք հայ ժողովուրդին:
Մենք պիտի մեռնինք որ Հայ ժողովուրդը ապրի:

Իցի՛ւ, քէ Պարոյր Ղազարեան ունենար քաջութիւնը, մերժելու Ռուբէն Ջարեանի իրեն տուած, նահատակի մը գրչանունը եղող «Սեւակ» անունը: Այս մէկը կրնար ըլլալ մեծագոյն ազդակը հայ ժողովուրդին համար, արդարը եւ անիրաւը, բարին ու չարը, բարեկամը եւ բշտամին ճանչնալու ճամբուն մէջ, եւ մեր ժողովուրդը կրնար այսօրուան կացութեան չմատնուիլ:

* * *

Եւ հիմա՝ նոր լուր մը: Կը լսենք որ Հայաստանի պետութիւնը, յառաջիկայ օրերուն, նոր օրէնք մը պիտի ընդունի: Այս օրէնքով Հայաստանի մէջ, իւրաքանչիւր գրչանուն իր տիրոջ սեփականութիւնը պիտի ըլլայ: Գրողը բացարձակ տէրը պիտի ըլլայ իր գրչանունին: Եւ ոչ մէկը պիտի չկարենայ գործածել գրողի մը գրչանունը՝ անիրաւաբար:

Այսինքն նոր Պարոյր Ղազարեան մը պիտի չկրնայ գործածել, նոր Ռուբէն Սեւակի մը պատկանող գրչանունը:

Աւա՛ղ, որ նոր օրէնքը յետադարձ ազդեցութիւն չի կրնար ունենալ:

* * *

Ռուբէն Սեւակ նահատակուեցաւ 26 օգոստոս, 1915ին, թուրք մարդասպաններու կողմէ, որովհետեւ ան մերժեց անուն փոխելով թրքանալու անոնց առաջարկը: Բայց հայեր, պիտի շարունակեն ամէն օր նահատակել Ռուբէն Սեւակը, փոխելով անոր անունը կամ ստեղծելով անուններու եւ քերթուածներու շփոթ. նորագոյն եւ ամենէն շառաչուն օրինակը Բ. Թուղլանեանի գիրքն է:

14 Մարտ 1994

ԳԱՅՆ ՍԻՒՐ ՄԷՐ

«Արարատ», 20, 21 ապրիլ 1994

ՀԱՐՑԱԶՐՈՅՑ՝

«ՌՌԻԲԷՆ ՍԵՒԱԿ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿ»Ի ՀԻՄՆԱԴԻՐ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆԻ ՀԵՏ

Պէյրուքի Սահակեան-Լեւոն Մկրտիչեան գոլէնէն ներս, հերոս-նահատակ գրող-բանաստեղծ, ազգային գործիչ ու ազգային նշմարիտ գաղափարականի ոգեշնչող Ռուբէն Սեւակի անուան մատենադարանի հանդիսաւոր բացման նախօրէին, ունեցանք հարցազրոյց տարաբախտ մտաւորական-բժիշկի եղբօրորդի Յովահաննէս Զիլինկիրեանի (նիսաբնակ-Ֆրանսա) հետ, որ հանրածանօթ անձնաւորութիւն է Սփիւռքի տարածքին ու Հայաստանի մէջ, իր ազգային մշակութանուէր գործունէութեամբ եւ ներհուն մտաւորականի արժանիքներով: Հիմնադիրն է նաեւ «Ռուբէն Սեւակ» մշակութային վաստակաւոր հիմնարկին:

Ստորեւ՝ «Արարատ»ի ունեցած շահեկան հարցազրոյցը յարգելի ազգայինին հետ:

Հարցում.- Ի՞նչ է նպատակը «Ռուբէն Սեւակ» մշակութային հիմնարկին, որուն հիմնադիրն էք դուք: Կրնա՞ք ուրուագիծը տալ իր ցարդ ունեցած գործունէութեան:

Պատասխան.- «Ազգը իր հերոսներով կ'ապրի: Ազգ մը, որ հերոսներ չունի, ապրելու իրաւունք չունի: Ազգ մը, որ իր հերոսները կը մոռնայ, ինքն ալ մեռնելու դատապարտուած է»:

Վերի տողերը, Ռուբէն Սեւակի 100-ամեակի առթիւ, 1985ին մեր հրատարակած «Ռուբէն Սեւակ և փրցուելիք ուղեղներ» անունով գիրքին բնաբանն է:

Ճիշդ այս տողերուն մէջ խտացած է մեր Ռ. Սեւակեան գաղափարականը:

1985ին, այս գաղափարականին հիման վրայ ուզեցինք Ռուբէն Սեւակի անուան յիշատակի տուն մը ստեղծել:

Եւ այդ պատճառաւ ալ նամակով մը դիմեցինք, Հայաստանի Սփիւռքի հետ Մշակութային կապի կոմիտէի նախագահներ նախ՝

Վարդգես Համազասպեանին եւ յետոյ ալ Կարլէն Դալլաքեանին, եւ Ռուբէն Սեւակի հարազատներուն անունով խնդրանք ներկայացուցինք, որ Հայաստանի մէջ մեր ծախսերով «Ռուբէն Սեւակի անուան յիշատակի տուն» մը հիմնուի:

Այս յիշատակի տունը պիտի ծառայէր հայ ժողովուրդին միտքին մէջ ներմուծելու Ռուբէն Սեւակի գաղափարականը, եւ Ռուբէն Սեւակի հոգեբանական ոգին, որ ձեւով մը Վարդանանցի, ազգին համար զոհուելու ոգիին շարունակութիւնն էր:

Բայց ըլլայ Վ. Համազասպեան, եւ ըլլայ Կ. Դալլաքեան չի հասկցան մեր նպատակը, եւ մերժեցին Ռուբէն Սեւակի անուան, Հայաստանի մէջ յիշատակի տուն մը հիմնելու մեր առաջարկը:

Եւ այս պատճառաւ ալ մենք ստիպուեցանք մեր կարելիութիւններով, Nice Cote d'Azurի մէջ Ռուբէն Սեւակի անուան յիշատակի տուն մը ստեղծել:

Այս յիշատակի տան մէջ կը գտնուի Ռուբէն Սեւակի մասունքները՝ ձեռագիրները, նամակները, իրեն պատկանող ամէն տեսակ գիրք եւ գրութիւն, մէկ խօսքով, Ռուբէն Սեւակի պատկանող ամէն ինչ, որ կրցանք փրկել Պոլսոյ բրքական եաթաղանէն:

Յաւելուած՝ Ռուբէն Սեւակի անուան յիշատակի տան մէջ, կայ պատկերասրահ մը, միայն եւ միայն հայ նկարիչներու գործերէն բաղկացած:

Երկու հարիւրի մօտ պաստառներ պարփակող այս պատկերասրահին մէջ, կը ցուցադրուին Այվազովսքիէ սկսեալ մինչեւ մեր օրերու հայ նկարիչներու պաստառները:

Ռուբէն Սեւակի հիմնարկը նպատակ ունեցաւ նաեւ հրատարակել գիրքեր, որոնք պիտի ծառայէին Ռուբէն Սեւակի գաղափարներու տարածման:

Նշենք այս հրատարակութիւններուն անունները.

1.- «Հաւաքածոյ արեւմտահայ գրողներու» չորս հատոր, Վերժին Տեօշեմեհեան - Պոլիս, 1971:

2.- «Հայ ժողովուրդի ողբերգական անցեալը եւ խրախուսիչ ներկան», Կարօ Մեհեան - Ս. Ղազար - Վեներտիկ, 1982:

3.- «Որպէս երազ անկրկնելի» Բ. հատոր, «Պատմուածքներ», Կարօ Մեհեան - Անթիլիաս, 1984:

4.- «Ռուբէն Սեւակ եւ փրցուելիք ուղեղներ», Յովհաննէս

Զիլինկիրեան - Փարիզ, 1985:

5.- «Ռուբեն Սեւակի վերջին օրերը» թատերախաղ 5 պատկերներով, Գեորգ Գապառանեան - Պէյրուք, 1986:

6.- «Ս. Գ. Հնչակեան կուսակցութեան հարիւր ամեակը», Ժիրայր Նայիրի - Պէյրուք, 1987:

7.- «Մատենագիտութիւն հայտատու օտար լեզուով տպագիր գիրքերու», Արտաշէս Հ. Գարտաշեան - Փարիզ, 1987:

8.- «Ովքեր են ի վերջոյ արիացիները», Ալեքսանտր Վարպետեան - Մարսէլ, 1988:

9.- «Ռուբեն Սեւակի անւան յիշատակի տուն», Յովհաննէս Զիլինկիրեան - Փարիզ, 1989:

10.- «Թրքական համաթուրանկանութիւնը վարագոյրով չի ծածկուիր», Թորոս Թորանեան - Պէյրուք, 1990:

Ասկէ զատ Ռուբեն Սեւակի անւան հիմնարկը ստեղծեց մրցանակ մը, որ կը յատկացուէր, Ռուբեն Սեւակին գաղափարականը եւ անոր զոհաբերական ոգին ամենալաւ ձեւով ներկայացնող ստեղծագործութիւններուն:

1985ին Ռուբեն Սեւակի անւան մրցանակը յատկացուեցաւ Գեորգ Գապառանեանին՝ «Ռուբեն Սեւակի վերջին օրերը» թատերգութեան համար:

1986ին Ռուբեն Սեւակի անւան մրցանակը յատկացուեցաւ հայրենի գրականագէտ Ալեքսանտր Թոփչեանին «Ռուբեն Սեւակ - Երկեր» հատորին համար:

1987ին Ռուբեն Սեւակի անւան մրցանակը յատկացուեցաւ հայրենի վաստակաւոր դերասանուհի՝ Անահիտ Թոփչեանին, 1987ին Երեւանի հեռուստատեսիլի հաղորդման մէջ՝ «Ռուբեն Սեւակի ստեղծագործութեան բարձրարուեստ մարմնաւորման» համար:

1988ին Ռուբեն Սեւակի անւան մրցանակը յատկացուեցաւ հայրենասէր տաղանդաւոր գրագէտ՝ Անդրանիկ Մառուկեանին «Ռուբեն Սեւակ - Սէրը Եղեռնին մէջ» վեպին համար:

1989ին Ռուբեն Սեւակի անւան մրցանակը յատկացուեցաւ, բացառաբար երեք առաջին մրցանակ ըլլալով, հետեւեալ հայ մշակոյթի արժանաւոր ներկայացուցիչներուն՝

Ա.- 1989ին Ռուբեն Սեւակի անւան մրցանակը յատկացուեցաւ՝ 1984էն սկսեալ Ռուբեն Սեւակի վերածնունդին ամենէն շատ ծա-

ռայոյ, Պէյրուքի «Արարատ» օրաթերթի խմբագրապետ՝ Ժիրայր Նայիրիին:

Բ.- 1989ին Ռուբէն Սեւակի անան մրցանակը յատկացուեցաւ՝ «Անթիլիասի Հայաստանեայց Եկեղեցւոյ Համալսարանական Ուսանողների Միութեան» 1986ին Պէյրուքի մէջ հրատարակուած «Ռուբէն Սեւակ - Երկեր» հատորին համար:

Գ.- 1989ին Ռուբէն Սեւակի անան մրցանակը յատկացուեցաւ՝ Միացեալ Նահանգներու մէջ 1988էն սկսեալ Նիւ-Ճըրզիի հայկական ռատիոկայանէն Ռուբէն Սեւակը լաւագոյնս ծանօթացնող ռատիոկայանի հիմնադիր տնօրէն՝ Վարդան Ապտօին:

Հարցում.- Հանդիպելով կ'իմանանք, որ Ռուբէն Սեւակի հարազատներուն մեկեանսութեամբ կեանքի կը կոչուի «Ռուբէն Սեւակ Մատենադարան»ը Սահակեան Լ. Մկրտիչեան գոլէնի մէջ, Լիբանան:

Կը հանի՞ք ծանօթութիւններ տալ թէ ինչ պայմաններու մէջ, նպատակով եւ ակնկալութեամբ այս ծրագիրը իրականացաւ:

Պատասխան.- Լիբանանի մէջ շարունակուող եղբայրասպան պատերազմը՝ հայերուն ողնայարը փշրեց - Ռաուֆ Տէնքքաշ»: Կիպրոսի մէջ թուրքերուն կողմէ գրաւուած մասերուն «նախագահ»ը եղող Ռաուֆ Տէնքքաշի ըսած այս խօսքերը կ'ապացուցանեն, թէ թուրքերը որ աստիճան գիտակից էին Լիբանանի մէջ հայկական կառոյցին ներկայացուցած ուժին:

Եւ այդ պատճառաւ ալ Լիբանանի այն տարիներուն գտնուած քառասյին վիճակը, Ռաուֆ Տէնքքաշի ուրախութեան նիչեր արձակելուն պատճառ կ'ըլլար, յուսալով որ այս պատերազմին մէջ Լիբանանի հայերուն ողնայարի սիւնը պիտի կոտրէր:

1915ի եղեռնին ջարդուած հայ ժողովուրդին բեկորները եղող Լիբանանի հայութիւնը, Լիբանանի արաբ ժողովուրդին հիւրասեր հովանիին տակ, կրցեր էր մոխիրներուն մէջէն կրկին կեանքի վերադառնալ, եւ իր ցեղային առաւելութիւններուն շնորհիւ անհաւատալի վերելք մը կատարել:

Եւ այդ պատճառաւ ալ Լիբանանի հայութիւնը, «Պատիկ Հայաստան» կոչուելու արժանի եղած էր:

Վերջին՝ Լիբանանեան եղբայրասպան պատերազմին հայ ժողովուրդը շատ տառապեցաւ: Բայց իր խելացի կեցուածքովը կրցաւ վերապրիլ:

Այսօր Լիբանանի հայութիւնը իր խաղաղութիւնը վերագտած՝ վերականգնումի նամբուն մէջ է:

Եւ Ռուբէն Սեւակի հարազատները ուզեցին այս վերածնունդին իրենք ալ մասնակից դառնալ, եւ Սահակեան Լ. Մկրտիչեան գոլէնին մէջ, Ռուբէն Սեւակի անուան մատենադարանի մը ստեղծման նպաստել:

Այս օրերուս Ռուբէն Սեւակի անուան մատենադարանին բացումը պիտի կատարուի:

Այս առթիւ, մենք կ'ուզենք Ռուբէն Սեւակի հարազատներուն անունով մեր շնորհակալութիւնը յայտնել Սահակեան Լ. Մկրտիչեան գոլէնին, վարչութեան, խնամակալ մարմնին, բոլոր ուսուցիչներուն, եւ մանաւանդ գոլէնին տնօրէն Պր.Պեպօ Սիմոնեանին, որոնք առաջին անգամ ըլլալով Հայաստան եւ ի Սփիւռք՝ Ռուբէն Սեւակի անուան մատենադարան մը ստեղծուելուն սատարեցին:

Յաւելուած Ռուբէն Սեւակի 100 ամեակին առթիւ, 1984էն սկսեալ «Արարատ» օրաթերթին արժանաւոր խմբագրապետ պր. Ժիրայր Նալբախի եւ իր ընկերներուն կատարած դերը, Ռուբէն Սեւակի վերածնունդին համար անմոռանալի է, որուն համար, մեր խորին շնորհակալութիւնները կը յայտնենք. նոյնպէս անմոռանալի է Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Կաթողիկոսի հոգածութեամբ 1980ին Անթիլիասի մէջ հրատարակումը Ռուբէն Սեւակի ամբողջական երկերը պարփակող գիրքին, որ այս մարզի մէջ հրատարակուած ամենակատարեալ հատորն է:

Այս բոլորը մեզի կու տան այն խոր համոզումը, որ Ռուբէն Սեւակի անուան մատենադարանը պիտի ծառայէ Պէյրութի մէջ, եւ Պէյրութէն ալ անդին, ամէն կողմ, Ռուբէն Սեւակի գաղափարականի եւ հայ մշակոյթի տարածման, ի շահ հայկական բարձր իտեալներուն:

Հարցում. - Դուք ոչ միայն եղբօրորդին էք մեծատաղանդ գրող, մտաւորական ու ազգային գործիչ Ռուբէն Սեւակի, այլեւ իր գաղափարականին մերօրեայ արտայայտիչն ու գործի շարունակողը:

Ի՞նչ է ձեր Ռուբէն Սեւակեան պատգամը ուղղուած ներկայ հայ նոր սերունդին:

Պատասխան. - Ամէն բանէ առաջ, մենք պիտի ուզէինք հայ երիտասարդներուն յանձնարարել՝ «արդար» ըլլալ: Հայ ազգը, գրեթէ

մէկ դարէ ի վեր, արդարութեան կը սպասէ:

Արդարութեան սպասողը նախ ինքը արդար ըլլալու է:

Երիտասարդ մը նախ ինքզինքին հանդէպ պարտի արդար ըլլալ:

Արդար ըլլալու համար՝ տրամաբանութեամբ շարժիլը պէտք է:

Պէտք է տրամաբանութեամբ գանազանէ՝

Արդարը եւ անիրարը,

Բարին եւ չարը,

Բարեկամը եւ թշնամին,

Ազգին բարեկամը եւ ազգին թշնամին,

Անձնական շահը եւ անձնական վնասը,

Ազգային շահը եւ ազգային վնասը:

Ձեր խիղըն ձեր դատաւորն է, ձեր խիղըն կը ցուցնէ ձեզի արդարութեան նամբան, եւ ամէն հայ իր խղնի նամբով կրնայ գտնալ արդարութեան նամբան, որովհետեւ՝ հայ ցեղը աշխարհի ամէնէն կատարեալ ցեղն է, հայ ցեղը, աշխարհին ամէնէն տաղանդաւոր ցեղն է: Հայ ցեղը աշխարհի հնագոյն ցեղն է:

«Քիչ ենք, բայց հայ ենք»:

Ռուբէն Սեւակի անունը անիրաւաբար գործածող այս հայ բանաստեղծին խօսքերը իր անգիտակցութեան ապացոյցն է:

Մենք հայերս քիչ չէինք. եւ քիչ չենք. մենք, մեր քիչ ըլլալը ընդունած վայրկեանէն իսկ տկարութեան, ստորադասութեան զգացումը մեր հոգիներուն վրայ իշխած կ'ըլլայ արդէն:

Մենք Մեծն Տիգրանին շրջանին երեք միլիոն էինք. այն շրջանին այս թիւէն աւելի եղող ազգերը, մատի վրայ կը համրւէին:

Եթէ մենք վերջին շրջանի մեր առաջնորդներուն սխալ քաղաքականութեան գոհը չըլլայինք, այսօր միացեալ Մեծն Հայաստանով նուազագոյնը երեսուն միլիոննոց ազգ մը պիտի ըլլայինք:

Հոռմ գացողները գիտեն - «Coloseum»էն դէպի «Forum Romana» տանող պատմական նամբուն վրայ, մարմարէ հսկայ քարտեսներ կան, որոնք Հռովմէական կայսրութեան ստեղծման շրջանէն, մինչեւ վերջին շրջանի ծաւալման պատմութիւնը կը ցուցաբերեն:

Առաջին քարտեսին վրայ պատկ կէտ մը կազմող «Ռոմուս Ռոմուլուս»ի հիմնած Հռոմ քաղաքէն սկսեալ Հռովմէական կայսրութիւնը, տարիներու ընթացքին կը տարածուի ամբողջ Եւրոպայի մէջ, հասնելով Հիւսիսային Ափրիկէ, Միջին Արեւելք եւ մինչեւ Փոքր Ասիա: Եւրոպայի քարտեսին վրայ ոչ Ֆրանսային անունը

կայ, ո՛չ ալ այսօրուան ուրիշ եւրոպական պետութիւններուն անունները: Որովհետեւ ասոնք գոյութիւն չունէին: Միայն Յունաստանը կայ, եւ կարգ մը ուրիշ հին երկիրներու անունները:

Եւ Փոքր Ասիոյ Արեւելքի հողերուն ամբողջութեան վրայ տարածուած պետութիւն մը: Անունը՝

«Armenia»

Քով քովի դրուած մեծ մարմար քարտեսներու վրայ, Հռովմեական կայսրութեան ստեղծման առաջին շրջանի քարտեսներէն սկսեալ «Armenia»-ն միշտ գոյութիւն ունի, միայն Հռովմեական կայսրութեան ծաւալման վերջին շրջանին է, որ Հռովմեական կայսրութեան կ'ենթարկուի - բայց միշտ կմնայ Հայաստանի մեծ թագաւորութիւն:

Երբ առաջին անգամ Հռոմի մէջ այս մարմար քարտեսներու վրայ, «Armenia» անունը տեսանք հպարտութեամբ լեցուեցաւ մեր կուրծքը, եւ աւելի հաւատացինք հայ ազգին մեծութեան:

Ջուիցերիոյ մէջ տարածուած համոզմ մը կայ՝ «Ամէն մէկ հրեայ երեք զուիցերիացի կ'արժէ» «Եւ ամէն մէկ հայ ալ երեք հրեայի փոխարժէք է» «Այո, հայ ազգը մեծ ազգ է»: «Հայ ազգը ամէնէն տաղանդաւոր ազգն է» «Եւ ամէն մէկ հայ մեյ մէկ տաղանդ է»:

Այս պէտք է ըլլայ, ամէն մէկ հայ երիտասարդի հաւատքը, հպարտ ըլլայ իր հայութեամբ, արժանի ըլլայ իր հայութեան եւ իր նախնիքներէն ժառանգած այս բնածին հարստութիւնը փոխանցէ, անաղարտ ձեւով, իր ապագայ սերունդներուն:

ՆԱՀԱՏԱԿ ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ ԵՂԲՕՐՈՐԴԻՆ
ՅՈՎՀԱՆՆԷՍ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆԻ ՈՒՂԵՐԶԸ
Ռ. ՍԵՒԱԿ ԴՊՐՈՑԻ ԲԱՑՄԱՆ ԱՌԹԻԻ

Սիրելի հայրենակիցներ

Մեզի համար բացառիկ ուրախութիւն է Հայրենիքի մէջ դպրոցի մը Ռուբէն Սեւակի անունով մկրտուելու լուրը առնելը, որուն համար մեր խորին շնորհակալութիւնները կը յայտնենք Հայաստանի պետութեան, այս որոշումը առնող պետութեան պատասխանատուներուն, դպրոցի վարչութեան, դպրոցի ուսուցչական կազմին, և մանաւանդ՝ տնօրէնուհի տիկին Ճուլիէտա Ղազարեանին:

1985-ին Ռուբէն Սեւակի ծննդեան հարիւր ամեակին առթիւ, մեր հրատարակած գիրքին մէջ սապէս կ'ըսէինք.

«Ազգ մը իր հերոսներով կ'ապրի. ազգ մը, որ հերոսներ չունի, ապրելու իրաւունք չունի, ազգ մը, որ իր հերոսները կը մոռնայ, ինքն ալ մեռնելու դատապարտուած է»:

Այսօր, վերջապէս հայրենիքը և հայրենի պետութիւնը, մեր տարիներէ ի վեր սպասած, հերոս նահատակ բանաստեղծ Ռուբէն Սեւակը մոռացութիւնէ փրկելու որոշումը առաւ, այս սքանչելի դպրոցը Ռուբէն Սեւակի անունով մկրտելով:

Այն Ռուբէն Սեւակը՝ որ 1915-ին Դանիէլ Վարուժանի հետ միասին, Անատոլիայի մէջ, Զանդըրքի նամբուն վրայ, մորթատուելով մեռցուած էր թուրքերուն կողմէ:

Այն Ռուբէն Սեւակը՝ որ 1915-ի մտաւրական նահատակներէն միակն էր, որ թրքանալու նամբով փրկուելու առաջարկը մերժած էր, և նախընտրած էր մեռնիլ քան թէ թրքանալ:

Ժողովուրդները յաւիտեան ապրեցնողները, իրենց դիւցազներն են:

Հայ ժողովուրդին կողմէ, 1500 տարիներէ ի վեր պանծացուող Վարդանանցի անձնագոհութեան պատերազմը, հայ ազգը ողջ պահող ամենակարեւոր ազդակն է:

1915-ի Եղեռնը, մեր երկրորդ Վարդանանցն է, և Ռուբէն Սեւակի

հերոսական նահատակութիւնը 1915-ի Եղեռնի խորհրդանիշն է, Վարդանանցի նման, անձնագոհութեան խորհրդանիշը:

Եւ մենք վստահ ենք, որ Ռուբէն Սեւակի անունով մկրտուող այս դպրոցին աշակերտութիւնը, Ռուբէն Սեւակի հայրենասիրութեան և անձնագոհութեան ոգիին տարածման մեծագոյն ազդակը պիտի ըլլայ:

Ռուբէն Սեւակի կեանքին բոլոր մանրամասնութիւններուն և գաղափարականին տեղեակ ըլլալով, աւելի լաւ պիտի հասկնայ 1915-ի Եղեռնին պատճառը, հայ ազգին կրած տառապանքը:

Արեւելեան հայու և արեւմտեան հայու տարբերութիւնը մէջտեղէն վերցնելով, պիտի հասկնայ թէ 1915-ի Եղեռնը, միայն մէկուկէս միլիոն հայերու նահատակութեան տարեդարձը չէ, այլ Հայաստանի հողերուն հարիւրէն ութսունին թուրքերուն կողմէ գողցուելուն տարեդարձն է:

Հայ երիտասարդը պէտք է լաւ գիտնայ հայ ազգին ենթարկուած չարիքներուն իրական պատմութիւնը և իջնայ մինչեւ չարիքին ակունքները և հասկնայ, թէ ո՞վ է հայուն բարեկամը, և ո՞վ է հայուն թշնամին:

Ան պէտք է գիտնայ, թէ ո՞վ ազատեց Արեւելեան Հայաստանը, և ո՞վ արգելք եղաւ թուրքերուն ձեռքը գտնուող Արեւմտեան Հայաստանին ազատագրման, և չ'երթայ կեղծ փրկիչներուն ետեւէն, որոնք մինչեւ հիմա թուրքերուն գինակիցներն են: Եւ միայն այն ատեն է, որ հայ երիտասարդութիւնը կրնայ մտածել, մինչեւ այսօր գետինը մնացած նահատակներուն արիւն-դրօշը գետնէն վերցնելու և թուրքերուն կողմէ գողցուած հայրենիքը ետ առնելու մասին:

Մենք կը հաւատանք, թէ այս դպրոցին ամէն մէկ աշակերտը, Ռուբէն Սեւակին անձնագոհութեան ոգիով պիտի մկրտուի, և պիտի ընթանայ այն նամբէն, որ Ռուբէն Սեւակի գաղափարականին բացած լուսաւոր նամբան է:

Յարգանք, սէր և հազար շնորհակալութիւն՝ մեր սիրելի հայրենի ժողովուրդին:

22 Մարտ 1995

**Ֆրանսա - Թօթ տ'Ազիւրի մէջ
Ռուբէն Սեւակի անուն
Յիշատակի Տան հիմնադիր
Յովհաննէս Զիլինկիրեան**

ԵՂԵՌՆԻ 80-ԱՄԵԱԿԻ ՏԱՐԻՆ...

ԽՌՊՈՏ ՉԱՅՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ

Թուրքերուն կողմէ հայ ազգին դէմ կատարուած 24 Ապրիլ 1915-ի ցեղասպանութեան 80-ամեակի այս օրերուն, Ռուբէն Սեւակի հիմնարկի անունով, կուգանք մեր սրտի ցաւով լեցուն բողոքի ձայն բարձրացնելու հայրենիքի մէջ եղած անհաւատալի ելոյթներուն դէմ:

Պաշտօնական անձնաւորութիւններ կը յայտարարեն, թէ «Հայաստանի դպրոցներուն մէջ վերցնել պէտք է Եղեռնի դասաւանդութիւնը»: Եւ աւելի վերջ, շատ բարձր իշխանութեան մը լսեցիքնոյն շունչով արտայայտութիւններ:

Մենք նման խօսքեր լսելու վարժ էինք, արեւմտեան աշխարհի պատասխանատուներէ: Օրինակ՝ Հռովմի Պապէն, որ հայերու կը յանձնարարէր՝ «ներել թուրքերը եւ հաշտուիլ թուրքերուն հետ»:

Սրբազան քահանայապետը լաւ կը ճանչնանք: Կ'ըսուի, թէ իր ելոյթներու ներգործութեան տակ է, որ կաթողիկէ եուկոսլաւները անկախութիւն հռչակեցին, որուն հետեւանքով Եուկոսլաւիա մխրնուած է այսօր եղբայրասպան, արիւնահեղ պատերազմի մէջ:

Բայց մեր մտքին ծայրէն իսկ չէր անցներ, որ Հայաստանի պատասխանատուներէն այս տեսակ խռպոտ ձայներ պիտի իմանայինք:

Այս տեսակ ելոյթներուն ետեւը պահուրտած անտեսանելի, մութ ուժերուն նպատակն է՝ մեզի մոռցնել տալ «24 Ապրիլ 1915»ի Եղեռնը:

Մոռնա՞լ Եղեռնը. Ինչո՞ւ:

Արդեօք, Եղեռնի հետեւանքով թուրքերու կողմէ գողցուած Հայաստանի հողերուն ուրսուն առ հարիւրէն մէկ թիզ հող ետ առնուած է:

Արդեօք այս գաղափարները յայտնող ծանօթ պատասխանատու-

ները առիթ ունեցա՞ծ են դիտելու երոպական եւ ամերիկեան հե-
ռատեսիլները, որոնց մէջ գերմանացիներուն կողմէ, 1943-ին,
հրեաներուն դէմ կատարուած սպանդը, ամէն օր, այո, ամէն օր կը
յիշատակուի, զանազան պատրուակով, արցունքով եւ արիւնով
լեցուն պատկերներով:

Այս սպանդին գերմանացի պատասխանատուները պատժուե-
ցան, եւ պահոււրտողներն ալ կը յայտնաբերուին եւ կը շարունա-
կուին պատժուիլ:

Այս սպանդին պատասխանատու գերմանական պետութիւնը,
հրեաներուն եւ հրեայ պետութեան մինչեւ այսօր կը վնարէ անե-
րեակայելի գումարներ, որպէս հատուցում:

Եւ հրեաները իբրեւ հետեւանք 1943-ի սպանդին, յաջողեցան
վերատեղծել 2500 տարի առաջ իրենց Սուրբ Գիրքին մէջ յիշատա-
կուած հայրենիքը:

Իսկ մենք հայերս ի՞նչ ըրած ենք եւ ինչ կ'ընենք մինչեւ այսօր:

Ամէն տարի մէկ անգամ կը վերյիշենք 24 Ապրիլ 1915ի Եղեռնը:
Յետոյ ամբողջ տարին, 365 օր շարունակ, կը մոռնանք այս մեծ
ցաւը:

Եւ հեռու չէ կարծես այն օրը, երբ 24 Ապրիլ 1915-ը պիտի
վերածուի «Վարդանանց»ի նման, տարիներու պատմութեան
փոշիներուն մէջ մխրճուած յիշատակի օրի մը:

15 Ապրիլ 1995

**ԹՈՒՐԳԵՐԸ ՇԱՏ ԱԻՆԼԻ ԼԱԻ ՀԱՍԿՑԱՄ ԷՆՆ ԱՐԺԷՔԸ
ՌՈՒՔԷՆ ՍԵՒԱԿԻ**

*Զօն՝ մեծապատիւ քարգմանիչին, որ
Ռուբէն Սեւակի նամակները սրբապղծեց*

Ա.

Ռուբէն Սեւակ նահատակուեցաւ թուրքերու կողմէ, 26 Օգոստոս 1915ին, Զանդըբը-ի մէջ:

Այս նահատակութեան մանրամասնութիւնները կարդալ և չսարսափիլ, կարելի չէ:

Այս զարհուրելի սպանդին մասին շատ մը գրողներ արտայայտուած են:

Բայց պարագայ մը կայ որ մեզի, տարիներէ ի վեր, մտածել կուտայ, և մեր միտքը կը չարչարէ, այն ալ՝ Ռուբէն Սեւակի երեք ընկերներուն պարագան է:

Հրանտ Նազարեանց, Շահան Պերպերեան և Թեոդիկ՝ Ռուբէն Սեւակի ամէնէն մօտիկ ընկերներն էին, որոնք ազատած էին Եղեռնէն: Բայց այս երեք քսոտակիցները, Եղեռնէն ետք, Ռուբէն Սեւակի մասին քար լուծիւն պահեցին, չ'արտայայտուեցան, իրենց ընկերոջ՝ նահատակ հերոս-բանաստեղծ Ռուբէն Սեւակի մասին բան մը չգրեցին:

1.- Ռուբէն Սեւակի այս երեք ընկերներէն առաջինը՝ Հրանտ Նազարեանցը, Եղեռնի օրերուն, Եւրոպա էր, և այդ պատճառաւ ալ ազատեցաւ բրքական գուլումէն: Եղեռնէն ետք, Հրանտ Նազարեանց Իտալիա հաստատուեցաւ, լքեց հայ լեզուն և հայ գրականութիւնը, յարեցաւ իտալական լեզուին և գրականութեան, և ի գուր սպասեց, որ իրեն «Nobel»ի մրցանակը տրուի:

Ան իր ամենամօտիկ ընկերը եղող Ռուբէն Սեւակի անունը բերանը չառաւ, որեւէ բան չգրեց Ռուբէն Սեւակի մասին:

Հրանտ Նազարեանցի հետ Պառի քաղաքին մէջ, 1950-ական

թուականներուն հանդիպում մը ունեցած Անդրանիկ Մառուկեանի վկայութեամբ, Հրանտ Նազարեանց, հոգեպէս անհաւասարակչիո վիճակի մէջ էր, և շուրջինները զինքը խենդի տեղ կը դնէին:

Հրանտ Նազարեանց ապրեցաւ մինչեւ 1962 և դժուար եւ թշուառ կեանք մը ունեցաւ:

2.- Երկրորդ ընկերը Ռուբէն Սեւակի՝ Շահան Պերպերեան՝ Եղեռնի օրերուն Պոլիս կը գտնուէր իբր զինուոր. բայց թուրք դահիճները Շահան Պերպերեանը վնասակար չնկատեցին և չաքտրեցին:

Շահան Պերպերեանի մասին, Ռուբէն Սեւակի քրոջը վկայութիւնը կայ. ան ըսած է.

1919ին Պոլիս, «Petit Champ»ի թատրոնին մէջ, Ռուբէն Սեւակի յիշատակին սգահանդէս մը կը կազմակերպուի: Այս սգահանդէսին առաջնակարգ բանախօսը, Ռուբէն Սեւակի շատ մօտիկ ընկերը Շահան Պերպերեանն էր, Պերպերեան վարժարանի հիմնադիր Ռեթէոս Պերպերեանի զաւակը, և վերաբացուած Պերպերեան վարժարանի տնօրէնը՝ Շահան Պերպերեանը:

Երբ խօսելու կարգը Շահան Պերպերեանին կուգայ, բոլոր ներկաները երկիւղածութեամբ կը սպասեն ճարտար բանախօս Շահան Պերպերեանի ելոյթին:

Բեմին վրայ Շահան Պերպերեան կարծես կը պապանձի: Կը թուի թէ լեզուն բռնուած է:

Երկար ընդմեջ կ'անցնին այդպէս, և յետոյ՝ Շահան Պերպերեանի հեծկտութի ձայնը կը լսուի: Արտասուաթոր ու սարսուլից աչքերով կուլայ, և առանց բառ մը կարենալ արտասանելու կը հեռանայ բեմէն:

Շահան Պերպերեան անկէ ետք, բաւական տարիներ, Եգիպտոս և Լիբանան ապրեցաւ, բայց Ռուբէն Սեւակի մասին, անոր հերոսական նահատակութեան մասին ո՛չ մէկ տող գրեց:

3.- Երրորդ ընկերը Ռուբէն Սեւակի, Թեոդիկն էր, որ քաջալերած է Ռուբէն Սեւակը սկզբնական շրջանին. Թեոդիկն է որ Ռուբէն Սեւակին տաղանդը աստուածացուցած է հետեւեալ խօսքերով:

«Աթենա իմաստութեան շիրք դրած է անոր ուղեղին մէջ, Եսկիւլայ՝ բժշկութեան խորհուրդը, Հերմէս ալ՝ կայծը պերճախօսութեան»: Թեոդիկին նակատագիրը, Հրանտ Նազարեանցի և Շահան Պերպերեանի պէս չեղաւ:

Թուրքերը արսորեցին Թեոդիկը, բայց զինք չսպանեցին: Աքսորի նամբաներուն վրայ շատ տառապեցաւ, բայց բախտը ունեցաւ վերապրելու, ծպտուելով և անունը փոխելով:

Այնուհետեւ Թեոդիկ տասնեակ մը տարիներ եւս ապրեցաւ, իր անձնական արքորի պատմութիւնը գրեց, Եղեռնի մասին շատ արժեքաւոր վկայութիւններ, մանրամասնութիւններ, տեղեկութիւններ հրատարակեց, Եղեռնին նահատակուած կրօնականներուն պատմութիւնը գրեց, նահատակներէն Ջօհրապիւն և Վարդգէսին մասին գրեց, բայց, ոչ մէկ խօսք ըրաւ իր աստուածացուցած Ռուբէն Սեւակի մասին. Ոչինչ գրեց:

Մենք երկար մտածեցին այս մասին: Ինչպէ՞ս կ'ըլլայ, հարց տուինք մենք մեզի, որ իր ամէնէն մօտիկ ընկերները, Ռուբէն Սեւակին նահատակութենէն ետք, անոր անունը իրենց բերանը չեն առներ, անոր նահատակութեան մասին չեն խօսիր:

Եւ այն եզրակացութեան յանգեցանք, որ Ռուբէն Սեւակի ընկերները, Եղեռնէն ետք, իրենց ենթագիտակցութեան մէջ, կարծես ամօթի, նուաստութեան և նախանձի զգացումներով համակուած էին: Կը գտնուէին այդ զգացումներու տիրապետութեան տակ:

Հրանտ Նազարեանց, Շահան Պերպերեան և Թեոդիկ, Ռուբէն Սեւակի հերոս նահատակի դափնին չունեցան, թէեւ ապրեցան քանի-քանի տարիներ, բայց անոնք 24 Ապրիլ 1915էն ի վեր, հոգեպէս հիւանդ, ողջ մեռելներ կը թուէին արդէն:

9-4-1995

Cagnes Sur Mer

A.

24 Ապրիլ 1915ի օրը, թուրքերուն ձերբակալած հայ մտաւորականներուն մէջ Ռուբէն Սեւակը չկար, ինչպէս որ Գրիգոր Ջօհրապիւն Վարդգէսն ալ չձերբակալեցին այդ օրը:

Ռուբէն Սեւակի, Ջօհրապի և Վարդգէսի ձերբակալումը, շատ մեծ հակազդեցութիւն կրնար ստեղծել օտարներուն մօտ:

Այնպէս որ թուրքերը Ջօհրապի և Վարդգէսի ձերբակալութիւնը աւելի ետքի ձգեցին. սպասեցին որ 24 Ապրիլ 1915ի արձագանգներուն տարողութիւնը չափեն:

Ամերիկան կրնար հակազդել, օրինակի համար, հակառակ որ ամերիկեան դեսպանին՝ հրեայ Morgenthau-ին իրենց մարդը ըլլալը

գիտեին, բայց նորեն ալ վախ ունեին Ամերիկայէն, և այդ պատճառաւ զգոյշ էին:

Եւ հրեայ Morgenthau-ն իր պաշտօնը կատարեց: Ոչ մէկ ազդեցիկ միջամտութիւն չեկաւ Ամերիկայի կողմէն, 24 Ապրիլ 1915 Եղեռնին արգելք ըլլալու համար:

Նոյն մտահոգութիւններով է, որ թուրքերը Ռուբէն Սեւակը 24 Ապրիլ 1915ի օրը չձերբակալեցին: Ռուբէն Սեւակ 24 Ապրիլ 1915-ին թրքական բանակին մէջ կը պաշտօնավարէր, բժիշկ հարիւրապետի աստիճանով:

Ռուբէն Սեւակի սպայ հարիւրապետ ըլլալը թուրքերուն մտածել կուտար: Այս առթիւ կ'ուզենք մատնանշել, որ Ռուբէն Սեւակ միակ հայ հարիւրապետ-բժիշկ-սպան էր, որ թուրքերը սպաննեցին:

Յաւելուած՝ Ռուբէն Սեւակի կինը գերմանուհի էր, ազդեցիկ բրուսկան զինուորական ընտանիքի մը դուստրը: Թուրքերը չէին գիտեր, թէ Ռուբէն Սեւակի գերմանացի կնոջ ընտանիքը ի՞նչ ազդեցութիւն կրնար գործել, եւ թուրքերը վախցան, որ Ռուբէն Սեւակի ձերբակալումով, իրենց 24 Ապրիլ 1915ի ամբողջ ծրագիրը կրնար խանգարուիլ. այս պատճառաւ է, որ ձերբակալութիւնը աւելի ետքի ձգեցին:

Եւ հոս պիտի նշենք Ռուբէն Սեւակի անձնագոհութեան և հայրենասիրական ոգիին բարձրութիւնը ապացուցանող ու շատ քիչերուն ծանօթ վկայութիւն մը:

Ռուբէն Սեւակի ընկերներէն, Եղեռնէն վերապրող Զիթունիի վկայութիւնն է ան:

24 Ապրիլ 1915-ի յաջորդող սեւ օրերն են: Զիթունի, Պոլսոյ կեդրոնի թաղամասերէն Պահչէքաբի-ի անկիւնը կը հանդիպի Ռուբէն Սեւակի, և Ռուբէն Սեւակ Զիթունիին սա շատ պատմական խօսքը կ'ընէ: «Մեզի ամօք չէ՞, որ մենք դեռ հոս ենք»:

Քանի մը շաբաթ ետք, Ռուբէն Սեւակ կը ձերբակալուի և կ'աքսորուի Զանդըրը, իր մտաւորական ընկերներուն մօտ, Դանիէլ Վարուժանի, Տիրան Քէլէկեանի քով:

Եւ Զանդըրըի մէջ, որ կը սկսի և երկու ամիս յետոյ՝ 26 Օգոստոս 1915-ին կը վերջանայ Ռուբէն Սեւակի աքսորի հերոսական կեանքը, Դանիէլ Վարուժանի հետ մորթատուելով, նահատակութեա՛մբ:

Ռուբէն Սեւակի կեանքին վերջին օրերը, հայկական դիւցազներգութեան ամենէն տխուր էջերէն են:

Այսօր Ռուբէն Սեւակ մեր հոգիներուն մէջ կ'ապրի իր գլխուն կրելով հերոս նահատակի դափնին:

Եւ այս հերոս նահատակի դափնին կը լուսաւորէ մեր հոգիները և ցոյց կուտայ մեզի անձնագոհութեան և հայրենասիրութեան լուսաւոր ուղին:

* * *

Ռուբէն Սեւակ նահատակուեցաւ, բուրքերուն կողմէ, 26 Օգոստոս 1915-ին:

Բայց կարգ մը հայեր դեռ կը մեռցնեն Ռուբէն Սեւակը:

Նախ՝ Ռուբէն Սեւակին անունը փորձեցին սրբապղծել: Այն Ռուբէն Սեւակին՝ որ անունը չփոխելու համար նահատակուած էր:

Մեծ տիտղոսներ ունեցող, բայց այս պարագային անգիտակից և անպատասխանատու անձնաւորութիւն մը, որ Ռուբէն Ջարեան կը կոչուէր, Սեւակի անունը կու տայ նոր բանաստեղծի մը, որ իբրեւ թէ անոր մէջ Ռուբէն Սեւակը յարութիւն պիտի առնէր:

Սեւակի անունով նոր բանաստեղծ մը, որ բոլորովին հակապատկերն էր Ռուբէն Սեւակի, մարմնով, կենցաղով և կեանքի գիծով:

Ռուբէն Սեւակ՝ գեղեցկութեան տիպարն էր: Միւսը՝ իր հակապատկերը:

Ճանչցողները կրնան վկայել:

Ռուբէն Սեւակ՝ մէկը սիրեց, լաւը սիրեց մէկ մը սիրեց: Այդ սիրով ալ նահատակուեցաւ: Միւսը իր հակապատկերն էր:

Ճանչցողները կրնան վկայել:

Ռուբէն Սեւակ նահատակուեցաւ, գիտակցաբար, հերոսաբար, ուզելով գնաց դէպի մահ, չբրքանալու համար: Միւսը՝ իր վարորդական անփորձութեան զոհը եղաւ, մահացաւ արկածով:

Ճանչցողները կրնան վկայել:

Բայց ամէնէն կարեւոր կէտը, միւսին ապերախտութիւնն է:

Ռուբէն Սեւակի անունը տրուած էր նոր բանաստեղծին, որ Ռուբէն Սեւակը իբր թէ նորին մէջ յարութիւն պիտի առնէր:

Բայց, նորը, Ռուբէն Սեւակին անունը բերանը չառաւ, Ռուբէն Սեւակի մասին տող մ'իսկ չգրեց:

Ամէնէն նախնական բարոյական օրէնքն է՝ որ ժառանգորդ մը իր ժառանգաբար կրած անունին տիրոջ, անձնաւորութեան հանդէպ երախտագիտութեան արտայայտութիւններ ունենայ: Օրինակ՝ Ֆրանսական կանառին մէջ, նորեկ կանառի անդամը ժամերով

գովասանքը կ'ընէ մահացած կանառի անդամին, որուն տեղը կը գրաւէ ինք:

Նայեցէք, նոր Սեւակին գրութիւններուն: Անոնց մէջ Ռուբէն Սեւակի մասին մէկ տող չէք կրնար գտնել:

Անձ մը, որ հայ է և բանաստեղծ է, և ժառանգած է անունը հերոս նահատակ բանաստեղծի մը, երախտագիտական ոչ մէկ բառ կ'ունենայ իր նախորդին հանդէպ, տող մ'անգամ չի գրեր: Ահա, քէ ինչու, այս նոր բանաստեղծին գրութիւններուն, մարդասիրական և հայրենասիրական արտայայտութիւններուն անկեղծութեանը կասկածիլ պէտք է:

* * *

Ուրիշ ցաւալի երեւոյթ մըն ալ՝ Ռուբէն Սեւակի իբր գրող և իբր բանաստեղծ տրուած մեկնաբանութիւնն է:

Գրող և բանաստեղծ Ռուբէն Սեւակ նախ, մարդ մըն էր, և հայ մըն էր, մարմնով և հոգիով:

1.- Ե՛ւ իբր մարդ ե՛ւ իբր հայ՝ սիրեց իր բոլոր սրտովը:

2.- Իբր մարդ և իբր հայ տառապեցաւ մարդկային անարդարութեան ցաւերով:

3.- Իբր մարդ և իբր հայ պայքարեցաւ հայ ազգին հանդէպ կատարուած անիրաւութիւններուն դէմ:

Սէր, մարդասիրութիւն և ազգասիրութիւն - այս երրորդութիւնը, Ռուբէն Սեւակ մարդուն և հայուն մէջ, գրութիւններուն մէջ, ամէնէն գեղեցիկ և ամէնէն ուժեղ ձեւով կը ցոլանան:

Այնպէս որ, Ռուբէն Սեւակը կարելի չէ մեկնաբանել այս երրորդութիւնը բաժնելով:

Սիրոյ, մարդասիրութեան և ազգասիրութեան միացումով է, որ Ռուբէն Սեւակի իսկական կերպարը կը կազմուի և կը յայտնուի:

Բայց պատահեցան դէպքեր ուր, անձեր, իրենց անձնական շահերէն մղուած, ուզեցին Ռուբէն Սեւակի այս «Երրորդութիւն»ը խորտակել:

Առաջին դէպքը, երեսուն տարիներ առաջ՝ 1965-ին Պոլսոյ մէջ պատահեցաւ, Պոլսոյ մէջ: Հրաշքի պէս բան մըն էր պատահածը:

Երիտասարդ մը ճանչցանք, որ Ռուբէն Սեւակը պաշտելու աստիճան սիրած էր: Ռուբէն Սեւակի գիրքը, տեւական, սիրտի կողմի գրպանին մէջն էր: Եւ այս երիտասարդը Պոլսոյ համար

անկարելի բան մը ըրաւ, Ռուբէն Սեւակի մասին բանախօսութիւն մը տուաւ:

Յետոյ, այս երիտասարդը, ուսանելու համար, Եւրոպա մեկնեցաւ և Եւրոպական համալսարաններէն մեկուն մէջ, իբր աւարտանա՝ տոքթորայի թեզ ընտրեց Ռուբէն Սեւակի գրականութիւնը: Այս These-ը լայնածաւալ ուսումնասիրութիւն մըն էր, Ռուբէն Սեւակի գրականութեան մասին:

Մենք, հիացումով հետեւեցանք այս երիտասարդին յաջողութիւններուն:

Յետոյ իմացանք, որ այս երիտասարդը ամուսնացեր, ընտանիք կազմեր ու Եւրոպա հաստատուեր է:

Ասոր վրայէն տարիներ անցան և մեր կապը խզուեցաւ այս երիտասարդին հետ: Մինչ այդ՝ մենք ալ վերջնականապէս հեռացանք Պոլիսէն և հաստատուեցանք Ֆրանսա:

1985-ին Ռուբէն Սեւակի ծննդեան հարիւրամեակը յիշատակեցինք Նիսի՝ մէջ:

Այս հանդիսութիւնը շատ մեծ յաջողութիւն ունեցաւ, իբր բացառիկ հայրենասիրական ներկայացում:

Բայց, անսպասելի հակազդեցութեան մը հետ դեմ յանդիման գտնուեցանք: Որմէ՞, գիտե՞ք:

Մեր այն բարեկամէն, որ Ռուբէն Սեւակի մասին Doctorat՝ ի These-ն էր պատրաստած: Ան մեզ կ'ամբաստանէր, որ սիրոյ երգերու բանաստեղծ Ռուբէն Սեւակը, մենք իր հարիւրամեակի հանդիսութեան օրը, յեղափոխական բանաստեղծի մը վերածած ենք:

Այս ինչ մեծ փոփոխութեան ենթարկուած էր մեր նախկին բարեկամը:

Տարիներ առաջ Պոլսոյ մէջ, Ռուբէն Սեւակի մասին մեծ քաջութեամբ բանախօսութիւն տուողը, կարծէք, թէ այդ երիտասարդը չէր:

Շատ զարմացանք. բայց յետոյ, գաղտնիքը լուծուեցաւ: Մեր բարեկամին այս անհաւատալի փոփոխութեան պատճառը հասկցանք: Ինք դեռ վերջնականապէս չէր կրցած հեռանալ Պոլիսէն:

Ընտանիքէն ժառանգած տուն-տեղ ունէր Պոլսոյ մէջ, և ամէն տարի ընտանեօք Պոլիս կերթար պտոյտի:

Բնական է, թուրքերը եթէ գիտնային, որ Ռուբէն Սեւակ

յեղափոխականին մասին ինք տոքթորայի թեզ գրած է, Պոլսոյ մէջ կրնար վտանգի ենթարկուիլ թէ՛ ինք և թէ՛ Պոլսոյ մէջ իր ունեցած կալածները:

Այնպէս որ Ռուբէն Սեւակին անվնաս, միայն սիրոյ բանաստեղծ մը ըլլալու պատկերացումը պէտք էր ենթակային, իր անճանական շահերուն համար:

Մենք կը հաւատանք, որ շատ դժուար է գոհել «ստամոքս»ը և նախընտրել «հաւատք»ը:

Այս կարողութիւնը միայն հերոսներու կը պատկանի:

Երկրորդ դէպքը պատահեցաւ 1990ին, Փարիզի մէջ «Արարատ» թերթի վաստակաշատ խմբագրապետ Ժիրայր Նայիրիին՝ Ռուբէն Սեւակի մրցանակի տուչութեան հանդիսութեան արձագանգին առթիւ: Այդ օրը Ժիրայր Նայիրի և մենք, Ռուբէն Սեւակին հերոս նահատակի, ազգային գործիչի և յեղափոխականի կերպարին վրայ կեդրոնացուցած էինք մեր ելոյթները:

Այս արտայայտութիւններուն արձագանգը ըլլալով, Սփիւռքի հայկական թերթի մը մէջ, հրատարակուեցաւ մեզի դեմ գրութիւն մը հայ գրողի մը կողմէ, որ վերջերս Մոսկուայէն հեռանալով Պէյրութ հաստատուած էր:

Այս հայ գրողը մեզ կ'ամբաստանէր, անպարկեշտ բառերով, որ մենք Ռուբէն Սեւակի, սիրոյ բանաստեղծի կերպարը փոխած ենք, և Ռուբէն Սեւակը վերածած ենք յեղափոխական առաջնորդի մը:

Ատենին, Ժիրայր Նայիրի և մենք, այս հայ գրողին պատշան պատասխաններ տուինք, իրականութիւնները մատնանշելով և հիմնաւորելով մեր տեսակետը:

Աւելին՝ նոյն գրողը այս գրութենէն միջոց մը առաջ, Պէյրութի մէջ տուած բանախօսութեամբ մը, Ռուբէն Սեւակը անիրաւօրէն արատաւորել ուզած էր: Ռուբէն Սեւակի 1910-թ.ին իր կնոջը գրած շատ մտերիմ նամակներէն մեկուն մէջ անոր Պոլսոյ կեանքը գոված ըլլալը հիմ ունենալով, Ռուբէն Սեւակին վերագրած էր «Քաղաքական Խակութիւն»:

Գրականութեան պատմութեան համար, մենք մեզ պարտաւոր կը գգանք, հետեւեալ բացատրութիւնները տալու:

1983-ին, Geneve-ի մէջ, հանդիպեցանք Ալեքանտր Թոփչեանին: Ծանօթանալով գրականագետի կարողութիւններուն, իրմէ խնդրեցինք, որ Ռուբէն Սեւակի ամբողջական գործերը մեկտեղէ և հրա-

տարակելու աշխատանքը յանձն առնե: Ընդունեց մեր առաջարկը, մեզի խոստանալով, որ Ռուբեն Սեւակի ծննդեան հարիւր ամեակին՝ 1985-ին հրատարակել անոր ամբողջական գործը:

Մինչ այդ՝ Ռուբեն Սեւակի կողմէ իր ապագայ կնոջ գրուած ֆրանսերէն սիրային նամակներուն թարգմանութեան հարցը կար: Մենք շատ համամիտ չէինք այդ սիրային նամակներու հրատարակութեան, նկատելով, որ Ռուբեն Սեւակ իր այս մտերիմ, սիրային նամակներուն օր մը հրատարակուիլը միտքէն անցուցած չէր կրնար ըլլալ: Պատմական տեսակետով ալ, դեռ շատ կանուխ էր, այս նամակներու հրատարակուիլը: Նկատելով որ իր զաւակները դեռ ողջ էին: Այս նամակներու բնագիրները մեր քովն էին: Այս նամակները, երեսուն տարի առաջ՝ 1965-ին, Պոլսոյ մէջ մեզի յանձնած էր Ռուբեն Սեւակի քրոջ աղջիկը՝ Քրիստին Սալերի: Քրիստին Սալերիին ալ այս նամակները տուած էր իր քոյրը՝ Ատրինէ Յակոբովիչ: Ուստի Ատրինէն է որ, Պոլսոյ մէջ փրկած էր այս նամակները, հաւանական մէկ կորուստէ: Եղեռնէն ետք, Ռուբեն Սեւակի Պոլսոյ մէջ անտէր մնացած բնակարանէն, Ռուբենի եղբայրը՝ Քերովբէ Չիլինկիրեան, ինչ որ մնացած էր հոն, բարեբախտաբար հաւաքած և իր տունը բերած էր. և այսօր, ինչ որ մնացած է Ռուբեն Սեւակէն, իր եղբօրը՝ Քերովբէ Չիլինկիրեանին կը պարտինք: Ատրինէ Յակոբովիչ, իր մօրեղբօր՝ Քերովբէ Չիլինկիրեանին մօտ Ռուբեն Սեւակի թողօններուն մէջ տեսնելով այս նամակները, զանոնք կ'առնէ և ապահով տեղ մը կը պահէ: Այս ձեւով փրկուած կ'ըլլան Ռուբեն Սեւակի կողմէ իր կնոջը հասցեագրուած հարիւրաւոր նամակները: Իսկ 1945-ին, մեր հօրեղբօր՝ Քերովբէ Չիլինկիրեանին մահէն ետք, անոր քովէն հաւաքեցինք Ռուբեն Սեւակի թողօններէն ինչ որ մնացած էր, մինչեւ իսկ՝ ամենապզտիկ թուղթի կտորը, և այս մասունքները, թրքական լուծէն ազատուած՝ ամփոփեցինք Ֆրանսա՝ մեր Cagnes sur Mer հաստատած «Ռուբեն Սեւակի անւան Յիշատակի Տուն»ի մէջ:

Մեզ համար պատմական պարտականութիւն եղող այս բացատրութիւնը տալէ ետք, կ'ուզենք վերադառնալ Ռուբեն Սեւակի սիրային նամակներու հարցին:

Ռուբեն Սեւակի քրոջ աղջիկը՝ Քրիստին Սալերի, Ռուբեն Սեւակի սիրային նամակները մեզի դեռ չյանձնած, առ ի զգուշութիւն, բոլորը պատճենահանած էր, և յետոյ՝ այս պատճենները տուած էր

Gulbenkian - Fondationի հայկական բաժնին՝ այն ատենուան պատասխանատու Վահրամ Մավեանին իրմէ խնդրելով, որ զանոնք Երեւանի Եղիշէ Զարեանցի անուան Գրականութեան պատմութեան թանգարանին յանձնէ:

Այնպէս որ, Ռուբէն Սեւակի նամակներուն բնագիրները թեւ մեր մօտն էին, բայց պատեհները կը գտնուէին Հայաստան, թանգարանին մէջ, ամենուն մատչելի: Այդ պատճառաւ ալ, մենք արգելք չէինք կրնար ըլլալ նամակներու հրատարակութեան:

Ալեքսանտր Թոփչեան մեզի տեղեկացուց, որ նամակներուն ֆրանսերէնէ հայերէնի թարգմանութեան աշխատութիւնը պիտի յանձնէ մոսկուաբնակ Աբրահամ Ալիքեանին, որ արեւմտահայ մըն է և ֆրանսերէն լեզուին քաջածանօթ:

Այս ձեւով առաջին անգամ իմացանք այս թարգմանիչին անունը:

Ալեքսանտր Թոփչեանին յայտնեցինք մեր մտահոգութիւնը՝ նամակներուն թարգմանաբար հրատարակութեան առընչութեամբ. «Ռուբէն Սեւակի նամակներուն մէջ խօսքեր կան, որոնք կրնան սխալ մեկնաբանուիլ յետին նպատակ ունեցողներու կողմէ: Այս տեսակետով՝ մենք ձեզմէ պիտի խնդրենք որ թարգմանիչին ըսէք, որ խղճմտանքով մօտենայ նամակներուն թարգմանութեան և սխալ մեկնաբանութեան տեղի չտայ»:

Եւ տարիներ ետք տեսանք, որ մենք իրաւունք ունէինք մտահոգուելու:

Այս մեծապատիւ թարգմանիչը, մտնելէ ետք Ռուբէն Սեւակի սիրային նամակներուն մտերմութեան մէջ, խղճմտանքով թարգմանելու տեղ, սրբապղծած էր զանոնք.

Եւ այս նամակներուն մէջ, Ռուբէն Սեւակին գրած կարգ մը խօսքերուն վրայ յենելով, Ռուբէն Սեւակին կը վերագրէր «քաղաքական խակութիւն»:

Այս անիրաւ և անխիղճ վերագրումին դէմ, մեր ընդվզումը կը յայտնենք:

Ռուբէն Սեւակ առաջին օրէն որոշած էր, ի գին ամէն բանի, ընտանիքով Զուիցերիայէն Պոլիս վերադառնալ. ինքը հետու չէր կրնար մնալ իր ազգակիցներուն նակատագիրէն:

Բայց՝ վախ ունէր իր կնոջը ընդդիմութենէն:

Իր կինը թերթերուն մէջ կը կարդար Թուրքիոյ մէջ կատարուած վայրագութիւնները և համամիտ չէր Պոլիս հաստատուելու:

Կնոջը այս ընդդիմութիւնը, Ռուբէն Սեւակի ապագայի ծրագիրներուն համար, մեծ արգելք մըն էր: Այնպէս որ, իր նամակներով, ան իր կնոջը մտահոգութիւնը թեթեւցնել կը ջանար:

Եւ ինչ էր վերջապէս, Ռուբէն Սեւակի ըսած խօսքերը, որ մեծապատիւ թարգմանիչը գինք «քաղաքական խակութեամբ» կ'ամբաստանէր: «Հակառակ ամէն բանին, նորէն մեզի համար ապրելու ամենալաւ տեղը Պոլիսն է»:

Ռուբէն Սեւակ իր կինը համոզելու համար գրած մտերմական նամակին մէջ ըսած խօսքերը նշելով Ռուբէնը «քաղաքական խակութեամբ» ամբաստանելը, նուազագոյնը անխղճութիւն է, և մեծապատիւ թարգմանիչին թաքուն նպատակ մ'ունենալուն ապացոյցն կը կազմէ:

Մեծապատիւ թարգմանիչը չէ՞ր գիտեր, թէ այդ շրջանին Արեւմտեան Հայաստանին կեդրոնը Պոլիսն էր. մեր բոլոր կուսակցութիւններուն կեդրոնը Պոլիսն էր:

Եւ Ռուբէն Սեւակ գիտակցաբար գնաց Պոլիս, տեսնելով հանդերձ ապագայի դժոխքը, ինչպէս որ Ռուբէն Սեւակ գրած էր այդ մասին իր նամակներուն մէջ:

Հերոսները չեն հեռանար պատերազմի դաշտէն:

Տարիներ անցան, և մենք շատ լաւ կը հասկնանք մեծապատիւ թարգմանիչին անիրաւ կեցւածքին դրդապատճառը:

Մեծապատիւ թարգմանիչը չէր կրնար հանդուրժել հերոս հայրենասէր Ռուբէն Սեւակին, որովհետեւ ինք անոր նկարագիրը չունէր:

Տարիներ առաջ Միջին Արեւելքէն ներգաղթած էր Հայաստան, և հոն, հայրենիքին առաւելութիւններէն օգտուելով բարձրագոյն ուսում ստացած էր: Յետոյ ալ, իր ուսումը կատարելագործելու համար, Հայաստանէն Մոսկուա անցած էր:

Մոսկուայի մէջ իր ուսումը աւարտելէ ետք, փոխանակ հայրենասէր ոեւէ հայուն ըրածին պէս, հայրենիքին ծառայելու համար Հայաստան վերադառնալու՝ Մոսկուա մնացած էր, այս մեծ քաղաքին առաւելութիւններէն օգտուելու համար: Ապա՝ երկարատեան Մոսկուայի մէջ առանձնաշնորհեալի կեանք ապրելէ ետք, Խ. Միութեան քայքայումին առաջին օրերուն, Սփիւռքի հայկական շրջանակներէն եկած փայլուն առաջարկներէն հմայուելով, լքած էր Միութիւնը և Պէյրութ հաստատած... ճիշդ ընկղմող նաւը լքող... մուկի մը նման:

Եւ Պէյրութի մէջ է, որ փորձած էր սրբապղծել Ռուբէն Սեւակը...:

Եւ բաւական էտք, օրին մէկն ալ, հայկական թերթերուն մէջ կարդացիք օգնութիւն հայցող կոչ-գրութիւն մը՝ Պէյրութի մէջ «լքուած ու անտեսուած», թշուառ վիճակի մատնուած այս թարգմանիչին համար:

Եւ ցաւ զգացիք, հայ գրողի մը վիճակուած այս թշուառ վիճակին համար:

Բայց մենք, ինչ որ ալ ըլլայ, պիտի չկրնանք ներել այս թարգմանիչը, հերոս նահատակ բանաստեղծ Ռուբէն Սեւակը սրբապղծած ըլլալուն համար:

9.

Նախորդ էջերով մենք ջանացինք, ստոյգ եղելութիւններու վրայ յենելով, Ռուբէն Սեւակի դէմ գործուած անիրաւութիւններուն մասին բացատրութիւններ տալ:

Նոյնպէս՝ 1985ին, Ռուբէն Սեւակի ծննդեան հարիւր ամեակին առթիւ մեր հրատարակած «Ռուբէն Սեւակ և Փրցնելիք Ուղեղներ» գիրքին մէջ ալ, հայ գրող և գրականագետներուն Ռուբէն Սեւակի հանդէպ ունեցած անիրաւ կեցուածքին մասին աւելի սպառիչ ձեւով արտայայտուած էինք:

Երբեմն կը մտածենք, թէ ինչու, մենք՝ հայերս, ընդհանուր առմամբ, մեր արժեքները գնահատել չենք գիտեր:

Ինչո՞ւ իրարու հանդէպ նախանձէ մղուած կեցուածք մը ունինք:

Ինչո՞ւ միաբան չենք ընդհանրապէս:

Արդեօ՞ք մեր ազգին նկարագիրն է ասիկա:

Եւ ցաւով ըսենք, որ մեր ազգային անյաջողութիւններուն պատճառը մենք գտած ենք մեր արժեքները չգնահատելուն, մեր անմիաբանութեան և նախանձէ դրդուելով իրարու հանդէպ հակադիր ու նսեմացուցիչ կեցուածք ունենալուն մէջ:

Բայց ուրիշ ազգ մը կայ, որ շատ աւելի լաւ հասկցած էր Ռուբէն Սեւակին արժեքը:

Ով էր. գիտե՞ք... թուրքերը:

Այո... թուրքերը:

Մեր «Ռուբէն Սեւակ և Փրցուելիք Ուղեղներ» գիրքին մէջ, հայերուն շատ ծանօթ, գերմանացի պատուելի Johannes Lepsius-ի

1919ին հրատարակած «Deutschland Und Armenien sammlung 1914-1918 - Diplomatischer Aktenstocke» գիրքէն շատ կարեւոր մէկ վաւերաթուղթ մը հրապարակած էինք:

Johannes Lepsius-ի գիրքին 163-րդ էջին մէջի այս վաւերագիրը, Ռուբէն Սեւակի նահատակութեան վերաբերեալ, բացառիկ կարեւորութիւն ունեցող փաստաթուղթ մըն էր:

5-10-1915ին Պոլսոյ Գերմանական դեսպանատունէն, Պերլին, Գերմանիոյ վարչապետին ուղղուած այս նամակի հեղինակը, Գերմանական դեսպանատան պատասխանատուներէն Baron K. Von Neurath-ն էր, որ հետագային, Adolf Hitler-ի կառավարութեան կարեւոր նախարարներէն մէկը եղած էր և 1945ին Nurenberg-ի մէջ, իբր պատերազմական ռերագործ, դատապարտուեցաւ:

Հայկական ցեղասպանութեան համար բացառիկ կարեւորութիւն ունեցող այս նամակին մէջ, Baron K. Von Neurath, Ռուբէն Սեւակի ձերբակալութենէն մինչեւ անոր նահատակութիւնը եղած եղելութիւններուն շուրջ, մանրամասնութիւններ կուտայ:

Բայց ամէնէն կարեւոր կէտը Baron K. Von Neurath-ի նամակին, հետեւեալն է.

Ռուբէն Սեւակի կնոջ կողմէ իր ամուսինը ազատելու համար ըրած դիմումներուն կապակցութեամբ թուրք իշխանութիւնները, գերմանացիներուն տուած իրենց պատասխանին մէջ, Ռուբէն Սեւակի ազատ արձակումը կը մերժեն, սա պատճառաբանութեամբ՝

«Ռուբէն Սեւակ կը նկատուի իբրեւ մէկը այն մտաւորականներէն, որուն զանգուածներու վրայ ունեցած ազդեցութենէն կը վախցուի»:

Այս նամակը կը հրատարակենք փրօֆ. Վահագն Տատրեանի կողմէ գերմաներէնէ հայերէնի թարգմանութեամբ, իբր բացառիկ մէկ վաւերագիր Հայկական ցեղասպանութեան պատմութեան:

Առ կայսերական վարչապետ

Առ 1521 [մուտքի թիւ՝ նախարարութեան]

111ը. [Ելքի թիւ՝ դեսպանատան]

Գերման Կայսերական Դեսպանատան

Բերա, 5 Հոկտ. 1915

Բժիշկ Ռուբեն Չիլինկիրեան, որ այստեղի հայ շրջանակներու մէջ ծանօթ անձնաւորութիւն մըն է, ուրիշ շատ մը հայերու հետ Ապրիլ 24-ին ձերբակալուեցաւ Անատօլու արքայապետի նպատակաւ: Նախապէս որոշուած էր որ ան Անքարայի մօտ՝ Այաշ արքայապետի, տեղ մը ուր կը պահուին և մասամբ ոստիկանական հսկողութեան տակ կը գտնուին աւելի ծանր կերպով մեղադրուողները: Դեսպանատան միջամտութեան շնորհիւ, ան Չանդըրըի [Անքարա] մէջ արգելակուեցաւ, ուր արգելակեալները կրնան ազատ կերպով ման գալ և իրենց արհեստները կիրարկել:

Տիկին տօքթ. Չիլինկիրեան և մայրը՝ տիկ. Աբէլ այնուհետեւ աշխատեցան Ենթակայի վերադարձը՝ և ապա իր Գերմանիա հաստատուիլը ապահովել: Թուրք կառավարական պաշտօնեաները երկու առաջարկներն ալ մերժեցին, սակայն այն առարկութեամբ որ - ինչպէս կը հետեւի խնդրոյ առարկայ պաշտօնեաներու արտայայտութիւններէն - տօքթ. Չիլինկիրեան կը նկատուի իբրեւ մէկը այն մտաւորականներէն, որուն զանգուածներու վրայ ունեցած ազդեցութենէն կը վախցուի: Տիկ. Աբէլ դեսպանատան մէջ պնդեց, որ ոստիկանական ընդհանուր տնօրէն Պետրի պէյ ըսած էր, որ ապահով պայմաններու տակ Գերմանիա նամբորդելու արտօնութիւն կրնար տրուիլ տօքթ. Եօրին: Երբ Կայսերական դեսպանատանէն պաշտօնեայ մը Պետրիի հարցուց սակայն թէ՛ իրա՞ւ էր ասիկա, ան բացարձակ կերպով հերքեց այդպիսի արտայայտութիւն մը ունեցած ըլլալը:

Վերջապէս երկու տիկինները փորձ մըն ալ ըրին տօքթ. Չիլինկիրեանի Անքարա մնալու արտօնութիւն ձեռք ձգելու ուղղութեամբ՝ այն պահուն երբ իրմէ Օգոստոս 26-ին, հեռագիր մը ստացան որ կը ծանուցանէր թէ՛ զինքը նոյն օրը Այաշ պիտի փոխադրէին:

Դեսպանատան գրաւոր դիմումին վրայ՝ Ներքին գործոց նախարարութիւնը հեռագիրով հրահանգ տուաւ, որ վերոյիշեալը Չանդըրըի մէջ բողոս և եթէ նամբայ հանուած է՝ զինքը հոդ վերադարձնեն:

Այս հեռագրին ի պատասխան Օգոստոս 30-ին Չանդըրըի կառավարիչը կը ծանուցանէր թէ տօքթ. Չիլինկիրեանը ամսոյն 26-ին Չանդըրըէն մեկնած, Գալէնիքի մօտերը ասպատակներու կողմէ յարձակումի ենթարկուած և սպաննուած էր և թէ 12 ասպատակներէն 4-ը իշխանութիւններու կողմէ ձերբակալուած էին: [x] Ասոր

վրայ, Կայսերական դեսպանատան ընծայած օգնութեամբ, որուն համար Կայսերական դեսպանատունը ընդհանուր հիւպատոսարանի հետ շփման մէջ մտած էր, տիկին Ջիլինկիրեանը իր մօր՝ տիկ. Աբէլի և երկու գաւակներուն հետ նախորդ ամսու 16-ին, առանց բուրք իշխանութիւններէն նեղութիւն կրելու, Գերմանիա մեկնեցան:

Դեսպանատան դիմումին վրայ Ներքին գործոց նախարարութիւնը հրահանգ ուղարկեց ստուգելու համար մեռեալի մօտ գտնուած արժէքաւոր իրերը և առարկաները, և այրիին վերադարձնելու նպատակաւ «հոս դրկելու» ինչ որ կարելի կ'ըլլար տակաւ ձեռք ձգել:

Երբ տիկ. Աբէլ իր ամուսնոյն ղրկած տեղեկութիւններուն մէջ՝ կ'ակնարկէ որ դեսպանատունը «որոշ չափով» որով ըստ իր ըմբռնումին, ոչ գոհացուցիչ կերպով օգնութիւն ընծայած է իրեն և դստեր, ան՝ աննկատ կը թողու այն պարագան, որ դեսպանատունը իր դստեր և փեսային համար միայն անպաշտօն սահմանափակումներով կրնար դիմումներ ընել թուրք կառավարութեան մօտ, քանի որ երկուքն ալ թրքահպատակ էին: Այս ուղղութեամբ դեսպանատունը ոչ մէկ բան զանց առած է և մինչեւ իրենց մեկնումը, տիկ. Աբէլ և իր դուստրը, իրենց բոլոր գործառնութեանց մէջ թէ խորհուրդով և թէ գործով օգնութիւն ստացած են:

Փոխանորդաբար՝ Ֆրայհեր ֆօն Նոյրաթ

[X] Ֆրայհեր ֆօն Նոյրաթի նամակ-տեղեկագրին մինչեւ այս կէտը եղող մասը տեղ գտած է Լեփսիուսի գիրքին մէջ, իսկ անկէ անդին երկարող մասը, ուր տիկ. Ջիլինկիրեան կ'ամբաստանէ գերման իշխանութիւնները որ պէտք եղած միջամտութիւնը չեն ըրած [չեն ուզած ընել] իր ամուսինը ազատելու համար, պահուած է ծածուկ Lepsius-ի կողմէ: Չէ հրատարակուած:

Baron K. Von Neurath-ի ձեռամբ գրուած այս նամակին մէջ, թուրք կառավարութեան Ռուբէն Սեւակի մասին ըսածները, անժխտելի ապացոյց կը կազմեն, որ թուրքերը Ռուբէն Սեւակի արժէքը հայերէն շատ աւելի լաւ հասկցած էին:

Այն մեծապատիւ բարգմանիչը և նմանները, որոնք մեզ ամբաստանեցին ըսելով, որ իբր թէ մենք քնքոյշ երգերու բանաստեղծ Ռուբէն Սեւակը յեղափոխական առաջնորդի մը վերածած ենք, թրքական այս հաստատումով շռաջուն ապտակ մը ստացած պէտք է ըլլան, իրենց կատարած անիրաւութեան փոխան:

Շարունակենք մեր ամբաստանութիւնները՝ Ռուբէն Սեւակի դէմ կատարուած անիրաւութիւններուն կապակցութեամբ:

1.- Johannes Lepsius-ի 1919ին հրատարակած վաւերաթուղթերու գիրքին մէջի Ռուբէն Սեւակի վերաբերեալ նամակին մասին, 1919էն մինչեւ 1985, ոչ մէկ հայ գրող, ոչ մէկ հայ պատմագէտ, ոչ մէկ հայ առաջնորդ չէ արտայայտուած:

2.- Johannes Lepsius-ի վաւերաթուղթերու գիրքին մէջի Ռուբէն Սեւակի վերաբերեալ նամակին մեր կողմէ 1985ին հրատարակուելէն ետքն ալ, ոչ մէկ հայ գրող, ոչ մէկ հայ պատմագէտ, ոչ մէկ հայ առաջնորդ այս բացառիկ վաւերագրին մասին ոչ մէկ տող չէ գրած, ոչ մէկ ձեւով չէ արտայայտուած: Ի բացառեալ Ալեքսանտր Թոփչեանէ, որ 5-7-1987ին Երեւանի հեռատեսիլէն կատարած ելոյթով, լայնօրէն արտայայտուեցաւ այս նամակին մասին:

3.- Եւ աւելին՝ Johannes Lepsius-ի գիրքին մէջ հրատարակուած գերմանական վաւերագրին Ռուբէն Սեւակի մասին ամբողջութեամբ հրատարակուած չըլլալը փաստերով ապացուցանած էինք մեր գիրքին մէջ:

Այս նամակին ամբողջութեամբ հրատարակուած չըլլալուն պատճառը այն էր, որ նոյն նամակին մէջ, Ռուբէն Սեւակի գերմանացի կիներ գերմանացիները կ'ամբաստանէր, որ իր ամուսինը չեն ուզած ազատել:

Հայկական ցեղասպանութեան մէջ գերմանական պատասխանատուութիւնն ու մեղսակցութիւնը մէջտեղ հանող այս կարեւոր փաստաթուղթին մասին ալ, 1985էն մինչեւ այսօր, ոչ մէկ հայ գրող, ոչ մէկ հայ պատմագէտ, ոչ մէկ հայ առաջնորդ, տող մը չէ գրած, որեւէ ձեւով չէ արտայայտուած անոր շուրջ:

Արդեօք մեր գրողներուն, մեր պատմագէտներուն, մեր առաջնորդներուն, Հայկական ցեղասպանութեան մէջ քրքրական պատասխանատուութենէն ալ անդին՝ գերմանական և մանաւանդ հրեայ սիոնիստ-ֆարմասոնական պատասխանատուութեան ակունքները տանող, 1985ին հրատարակած մեր գիրքին մէջի փաստերով և ամբաստանութիւններով չզբաղելուն պատճառը իրենց տգիտութիւնն է, թէ՞ իրենց վախկոտութիւնը:

Ռուբէն Սեւակի դէմ կատարուած այս անիրաւութիւններուն համար, մենք մէկ խօսք ունինք ըսելիք.

Ռուբեն Սեւակի ըսածին պէս՝
«Փրցնել և նետել պէտք է այս կարգի առաջնորդներուն ուղեղները»:

* * *

ՎԵՐՋԱՐԱՆ

Եւ հիմա կ'ուզենք, իբր վերջաբան, լոյս ընծայել բացառիկ վաւերագիր մը, որ կը կարծենք, թէ մինչեւ հիմա ոչ մէկուն կողմէ չէ հրապարակուած:

Այս վաւերագիրը, Ռուբեն Սեւակին իբր հայ, իբր յեղափոխական բանաստեղծ, իբր յեղափոխական առաջնորդ, մեծուքիւնը փաստող թրքական վաւերագիր մըն է, որ մեզի տրամադրուեցաւ Ալեքսանտր Թոփչեանի միջոցաւ Փարիզի Հայկական Վաւերաբուհիներու Կեդրոն-ի [G.R.D.A.] տնօրէն Ժիրայր Պետրոսեանի կողմէ:

Թուրքերը 24 Ապրիլ 1915ին, հայերուն դէմ կատարած ցեղասպանութեան հետեւանքէն մտահոգ՝ վրդոված, պաշտպանողական գիրք մը հրատարակած են: 1916-ին՝ նախ թրքերէն լեզուով, և 1917ին՝ ֆրանսերէն:

Փաստաբուհիներու գիրք մը՝ ապացուցանելու համար որ հայերը, իբր թէ երկար ժամանակներէ ի վեր, յեղափոխութեան կը պատրաստուէին:

562 էջնոց այս մեծածաւալ գիրքին մէջ, հայ կուսակցութիւններուն, հայ կազմակերպութիւններուն և Հայ եկեղեցիին իբր թէ յեղափոխա-դաւադրական միտումներուն գործադրութեան նախապատրաստութեանց պատմութիւնը կը տրուի մինչեւ յետին մանրամասնութիւններով, պատճեններով ու պատկերներով:

Նմանապէս այնտեղ ներկայացուած են հայ ֆէտայիներու պատկերներ՝ իրենց գէնքերով: Այնտեղ կը տեսնէք իբր թէ հայոց կողմէ մեղցուած թուրքերու դիակներու պատկերներ. իբր թէ հայոց կողմէ քանդուած մզկիթներու նկարներ: Եւ դեռ՝ հայկական վաւերաբուհիներ, հայկական յեղափոխական քայլերգներ և, վերջապէս, մէկ խօսքով՝ 562 էջ լեցուն գրութիւն, փաստելու համար, որ հայերն են, որ թուրքերը ջարդած են, և ոչ թէ թուրքերը հայերը ջարդած են:

Եւ այս ամբողջ 562 էջնոց հատորին մէջ, մէկ հատիկ հայերէն

բանաստեղծութիւն մը դուած է, իբր նմոյշ «շատ վտանգաւոր» ու «դաւադրամիտ» բանաստեղծութեան մը, որ հայ երիտասարդութիւնը յեղափոխութեան կը մղէ:

Այս հայերէն բանաստեղծութիւնը, հայոց կողմէ փառաբանուած բանաստեղծներու, ինչպէս՝ Դանիէլ Վարուժանի, Սիամանթոյի և ասոնց նման բանաստեղծներունը չէ, այլ՝ հայոց կողմէ արժեքը բաւարար չգնահատուած հերոս նահատակ բանաստեղծ Ռուբէն Սեւակի՝ «Վերջին օրօր» բանաստեղծութիւնն է: Ահաւասիկ այդ բանաստեղծութիւնը [Ֆրանսերէնով], որ ուղղակի վերցուած է բրքական հրատարակութեան:

ՎԵՐՋԻՆ ՕՐՕՐ

*Օրօր, օրօր...: Օրօր ըսեմ քնանաս,
Վիրաւոր հօրըդ նիչերն ալ չ'իմանաս,
Միծէս ծըծածըդ թոյն է, կաթ չի գիտնաս...
Օրօ՛ր ըսեմ քնանաս:*

*Արիւն-հեղեղ յորդեց այս սուրբ ձորերէ,
Բայց չի փախիս, փարէ երկրիդ, գայն սիրէ՛,
Հողիդ վըրայ գերի մի՛ ըլլար, այլ տիրէ...:
Օրօ՛ր ըսեմ քնանաս:*

*Հօրըդ վըրայ եթէ անշունչ չ'ինկայ ես,
Զի ուխտեցի Հըռոմի էգ գայլին պէս,
Նոր Ռոմուլոս մը դիեցնել ստինքէս...:
Օրօ՛ր ըսեմ քնանաս:*

*Բազուկներուս՝ պարա՛ն, ոտքիս ալ՝ կացի՛ն,
Ստինքիս զո՛յգ պտուկներն, ահ կտրեցին:
Վերքէս արիւնս ծծէ, որդեակ միածին...:
Օրօ՛ր ըսեմ քնանաս:*

*Ահա կ'իյնամ...: Հայաստանը մայր քեզի:
Կտակ կուտամ այս կոտորած Սուրն երկսայրի
Ուր հայրիկիդ դեռ տաք արիւնը կ'այրի...:
Օրօ՛ր ըսեմ քնանաս:*

ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿ

BERCEUSE

*“Dors mon enfant, dors,
Et n'entends pas gémir ton pauvre père blessé
Un déluge de sang a inondé ces lieux bénis,
Mais garde-toi bien de les quitter.
Aime toujours ton pays
Et adore ta patrie
Mais n'y vis jamais en esclave;
Commande, domines !*

*Si je ne suis pas aussi
Tombée inanimée à côté de ton père,
C'était, comme la louve de Rome,
Pour élever un nouveau Romulus.
Mes bras ont été liés, mes pieds ont été hachés,
Et à la fin hélas ! on me coupa les seins !
Le lait que tu as sucé n'était que du poison,
Suce maintenant le sang de ma plaie, ô
mon unique enfant !
Je meurs ! ... que l'Arménie soit ta mère:
Que cette épée brisée,
Sentant encore le sang tout chaud de ton père,
Soit pour toi mon souvenir !*

(Extrait des “Massacres d'Arménie”)

Եւ հիմա կրնանք պոռալ մեր ճայնին ամբողջ ուժգնութեամբ, բոլոր անոնց երեսին, որ Ռուբէն Սեւակին համար Յեղափոխական բանաստեղծ չէ, Յեղափոխական առաջնորդ չէ ըսած էին.-

ԹՈՒՐԲԵՐԸ ՁԵՆՋ ԵԱՏ ԱԻԵԼԻ ԼԱԻ ՀԱՍԿՑԱԾ ԷԻՆ ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻՆ ԻԲԸ ԹԵՂԱՓՈՒՅԱԿԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾ, ԻԲԸ ԹԵՂԱՓՈՒՅԱԿԱՆ ԱՌԱՋԵՆՈՐԴ ԵՆԸԿԱԹԱՑՈՒՑԱԾ ԱՐԺԷՔԸ, ԵՒ ԹՈՒՐԲԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ ԵՆԸԿԱԹԱՑՈՒՑԱԾ ՎՏԱՆԳԸ:

**ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ ԴՈՒՍՏՐ՝ ՇԱՄԻՐԱՄ ՍԵՒԱԿԻ ՀԱՅԵՐԷՆ
ԶԿԱՐԵՆԱԼ ԽՕՍԵԼՈՒՆ ՊԱՏՃԱՌԸ**

Փարիզի «Յառաջ» օրաթերթը, այս օրերուն, կը տօնէ իր 70-րդ տարեկիցը:

1925էն սկսեալ Փարիզի մէջ հրատարակուող այս թերթը, իր հիմնադիրին՝ Շաւարշ Միսաքեանի մահանալէն [1957ին] ետք, շարունակուեցաւ լոյս ընծայուիլ սեփականատիրոջ դստեր՝ Արփիկ Միսաքեանի կողմէ, որ բացառիկ հմտութեամբ և կարողութեամբ կրցաւ գլուխ հանել «Յառաջ»ի հրատարակութեան դժուարին գործը և գայն հասցնել 1995 տարեթիւ:

Այս տեսակետով, Արփիկ Միսաքեան արժանի է ամէն գովասանքի և շնորհաւորութեան:

Անկախաբար այս հանգամանքէն՝ մենք այժմ պիտի անդրադառնանք վաստակաւոր սոյն թերթի հետ առընչուած եղելութեան մը, որուն հրապարակումը պատմական ստիպողութիւն և խղճի պարտք նկատեցինք:

1985ին Ռուբէն Սեւակի ծննդեան հարիւրամեակը յիշատակուեցաւ Նիսի մէջ, Անդրանիկ Մառուկեանի նախագահութեամբ և բացառիկ հանդիսութեամբ մը:

Օրուան ամենակարեւոր եղելութիւնը, Ռուբէն Սեւակի դստեր՝ Շամիրամ Սեւակի հանդիսութեան աւարտին բեմէն կատարած ելոյթն էր:

Այդ օր, Շամիրամ Սեւակ, արտասանեց իր գրած երկու բանաստեղծութիւնները և ներկայ հասարակութեան մօտ ստեղծեց ոգեւորութիւն և համակրանք: Բացառիկ ցոյցերու և ծափահարութիւններու արժանացաւ, ապացուցած ըլլալով, որ ինք արժանի գաւակն էր Ռուբէն Սեւակի:

Շամիրամ Սեւակ 1986ին Փարիզ կ'երթայ, այցելելու համար իր բարեկամները, նաեւ կը հանդիպի «Յառաջ» թերթի խմբագրատունը:

Արփիկ Միսաքեան սիրալիր ընդունելութեան մը կ'արժանացնէ Շամիրամ Սեւակը և սապէս կ'ըսէ.

«Այս ինչ գուգադիպութիւն է: Այսօր Պէյրութէն հասաւ Գարեգին Բ. Կաթողիկոսի հրատարակած «Ռուբէն Սեւակ - Երկեր» գիրքը, և զայն թղթատած միջոցին դուք ներս մտաք: Հրաշքի պէս բան մ'ըն է ասիկա»: Եւ իր գոհունակութիւնը կը յայտնէ Շամիրամի այցելութեան համար:

Բայց, քիչ ետք, Արփիկ Միսաքեան կը նկատէ, թէ Շամիրամ Սեւակ հայերէն չի գիտեր: Եւ իր զարմանքը չծածկելով կ'ըսէ. «Ռուբէն Սեւակի աղջիկը հայերէն գիտնալու է: Ինչո՞ւ չի սորվեցաք»:

Շամիրամ Սեւակ ինքզինք կը պաշտպանէ պատասխանելով. «Գիտէք, թէ մայրս գերմանացի էր և 1920էն սկսեալ, երկար տարիներ, Փարիզ ապրեցանք: Ոչ մէկ հայ մեզմով չհետաքրքրուեցաւ: Հակառակ որ մայրս մեզ միշտ Jean Goujon-ի եկեղեցին կը տանէր և կը ջանար կապ պահել հայերուն հետ: Ոչ մէկը մեզի մօտենալ ուզեց: Այս վիճակով, ինչպէ՞ս կ'ուզէք, որ ես հայերէն կարենայի սորվիլ»:

Շամիրամ Սեւակ, Փարիզէն Նիս վերադարձին, պատմեց մեզի այս եղելութիւնը, շատ նեղուած էր և ազդուած:

Յաւելուած՝ Շամիրամ Սեւակ իր գրած բանաստեղծութիւնները Արփիկ Միսաքեանի ներկայացուցած էր, բայց կը թուի, թէ ան կարելորութիւն չէ տւած անոնց:

Այս դէպքին վրայէն ցարդ անցեր են գրեթէ տասը տարիներ, բայց զգացած ցաւը մեր սրտին վրայ է դեռ:

Շուարշ Միսաքեան, դեռ Պոլիսէն, Ռուբէն Սեւակի բարեկամն էր: Եւ նոյնիսկ Պոլիս, կարճ միջոց մը, միասին թերթ ալ հրատարակած էին:

Եղեռնէն ետք, Շուարշ Միսաքեան Փարիզ հաստատուեցաւ: Ռուբէն Սեւակի կինը՝ Ժաննի Սեւակն ալ Փարիզ էր, իր երկու որբ զաւակներով:

Եւ Շուարշ Միսաքեան օր մ'իսկ չհետաքրքրուեցաւ իր ընկերոջ՝ Ռուբէն Սեւակի կնոջը և երկու որբ զաւակներով:

Արդեօ՞ք Շամիրամ Սեւակ յանցաւոր էր հայերէն չկարենալ սորվելուն համար: Եւ միթէ՞ Շուարշ Միսաքեան և նմաններ չունին պատասխանատուութեան բաժին, քանի իրենց նահատակ ընկերոջ՝ Ռուբէն Սեւակի ընտանիքին հանդէպ նուազագոյն մարդկային հետաքրքրութիւն ցոյց չեն տուած:



*Արդէն որբւայրի ժաննի Սեւակ իր երկու որբերուն՝
Լեւոնի (նկարի աջին) եւ Շամիրամի հետ
Լոզան նկարուած, 1919-ին*

Այս առթիւ կը հրապարակենք բացառիկ, անտիպ վաւերագիր մը, ապացուցանող, թէ Ռուբէն Սեւակի կինը՝ ժաննի Սեւակ ամէն ջանք թափած էր, որ իր երկու զաւակները հայեցի դաստիարակութիւն ստանան, բայց չէր յաջողած, ոչ թէ իր, այլ մեղքովը իր նահատակ ամուսնոյն ազգակիցներուն:

Ահաւասիկ ապացոյցը՝ 27-10-1919 թուակիր: Հայաստանի Հանրապետութեան խորհրդարանի երբեմնի նախագահ, Ազգ. Պատուիրակութեան պետ [և Սեւրի դաշնագիրը ստորագրողը] Աւետիս Ահարոնեանի պատասխան նամակն է ան, ուղղուած տիկին ժաննի Սեւակին և վերաբերող նահատակի զաւակներուն՝ Շամիրամի և Լեւոնի հայեցի դաստիարակութիւն ստանալու խնդրին, որուն բարեյաջող լուծումը ցանկաց հեգ այրին:

Գալով Շամիրամ Սեւակի բանաստեղծութիւններուն, որոնց յարգելի տիկ. Արփիկ Միսաքեան կարեւորութիւն չէր տուած, 23 Ապրիլ 1994ին Պէյրութի մէջ, Ռուբէն Սեւակի անուան մատենադարանի բացման օրը, հանդիսութեան հովանաւոր Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Կաթողիկոս, իր պատգամը տւած միջոցին, անձամբ արտասանեց Շամիրամ Սեւակի այդ երկու բանաստեղծութիւն-

ները, խորապէս տպաւորելով ներկաները, որուն համար մենք կրկին մեր խորին երախտագիտութիւնը կը յայտնենք [այժմ արդէն] Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսին:

Ստորեւ՝ վաւերաբուղբ-նամակին ֆրանսերէն բնագիրը և անոր քարգմանութիւնը:

RÉPUBLIQUE ARMÉNIENNE

27, Avenue Marceau

*Délégation
à la Conférence de la Paix.*

Paris, le 27 Octobre 1919

LE PRÉSIDENT

Chère Madame

J'ai bien reçu votre dernière lettre et j'ai lu avec grand intérêt tous les détails que vous me donnez.

Le petit Leon est en effet trop jeune pour entrer à l'école de Venise. Pour le moment, je crois que le mieux serait de la placer dans une école de Genève ou de Lausanne. Ensuite, on pourra songer à le mettre dans une Ecole Supérieure Arménienne.

Vous voudrez bien me faire connaître le nom de l'école où le petit Léon sera placé, afin que je puisse vous faire parvenir les frais nécessaires pour les études, nourritures, vêtements, etc.,.

Quant à la petite Chamiram, je suppose que vous la garderez sans doute avec vous, et que vous vous occuperez de son éducation jusqu'à l'âge scolaire.

Je vous remercie de tous les bons et nobles sentiments que vous exprimez dans votre lettre, et je ne doute pas qu'avec une mère telle que vous, vos deux enfants deviendront de vrais Arméniens et qu'ils seront dignes du nom qu'ils portent.

Veuillez agréer, Chère Madame, l'assurance de nos sentiments les meilleurs.

Le Président

Փարիզ, 27 Հոկտեմբեր 1919

Սիրելի տիկին,

Ստացած եմ ձեր վերջին նամակը և մեծ հետաքրքրութեամբ ընթերցած անով ինձի հաղորդուած բոլոր մանրամասնութիւնները:

Պզտիկ Լեւոնը արդարեւ, շատ փոքր է Վենետիկի դպրոցը մտնելու համար: Առ այժմ, կը կարծեմ, որ նախընտրելի պիտի ըլլար զինք ժընեւի կամ Լոզանի վարժարաններէն մէկը տեղաւորելը: Յետոյ, կարելի է խորհիլ զինք հայկական բարձրագոյն դպրոց մը դնելու մասին:

Բարի եղէք տալու ինձի անունը դպրոցին ուր փոքրիկ Լեւոնը պիտի աշակերտէ, որ կարենամ ձեզի հասցնել հարկ եղած բոշակը իր ուսման, սնունդի, զգեստի և այլ պէտքերուն համար:

Շնորհակալութիւն կը յայտնեմ ձեզի ձեր նամակով արտայայտած ազնիւ զգացումներուն համար, և չեմ կասկածիր որ ձեզի պէս մայրով մը ձեր երկու զաւակները իրաւ հայեր պիտի դառնան ու պիտի ըլլան արժանի անունին զոր կը կրեն:

Հանեցէք ընդունիլ, սիրելի տիկին, մեր լաւագոյն զգացումներուն հաւաստիքը:

Ա. Ահարոնեան

**ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ ԱՆՈՒԱՆ ՅԻՇԱՏԱԿԻ ՏԱՆ ՀԻՄՆԱԴԻՐ
ՅՈՎՀԱՆՆԷՍ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆԻ ՌԻՂԵՐԶԸ՝
ՊՐՆ. ՊԷՊՕ ՍԻՄՈՆԵԱՆԻՆ ՄՐՑԱՆԱԿԻ ՅԱՆԶՆՄԱՆ ԱՌԻԹՈՎ**

Յարգելի եւ սիրելի ներկայացուցիչներ

Այսօր սրտի խոր գոհունակութիւնը ունինք, Ռուբէն Սեւակի անուան 1995-ի «Վերածնունդ»-ի մրցանակը բանաստեղծ-մտաւորական Պարոն Պեպօ Սիմոնեանին յանձնելու պատեհութեամբ:

Ռուբէն Սեւակ, 1911-ին, իր մարգարեական գրութեամբը, «Այլասերում» խորագիրը կրող, հայ մտաւորականութեան մասին այսպէս կ'արտայայտուէր, ակնարկելով Երիտասարդ թուրքեր-հայուրիւն գործակցութեան մը կարելիութիւնը շատագովողներուն:

«Գառնուկի պէս անգէն ցեղ մը ամէն օր, ամէն օր կը յօշոտուի: Իսկ մեր մտաւորականները խելօքցեր, փիլիսոփայացեր, քաղաքակրթուեր են, տիեզերական եղբայրակցութեան մը խօսքերը կ'ընեն մեզի, ու կ'երագեն այն հեռաւոր օրուան՝ ուր գայլ ու գառնուկ մէկտեղ կ'արածին...»:

Հեռու մենե՛ք՝ ախտագին մտաւորականներ: Դուք ցեղին ուղեղն էք, բայց երբ այդ ուղեղը ուրիշ կերպ չի կրնար խորհիլ քան յուսահատեցնելով մեր կենսունակութիւնը, մենք պիտի փրցնենք ու նետենք այդ ուղեղը:

Մենք նոր միտքեր, նոր սրտեր, նոր հոգիներ պիտի դարբնենք:

Մեզի կարմիր ու մսուտ շուրթներով, ուժեղ ու ժպտուն գրականութիւն մը պէտք է:

Մեզի առողջ ու երիտասարդ մտաւորականներ պէտք են, ձուկն իր գլուխէն կը հոտի, ազգն իր մտաւորականներէն: Անոնք են ցեղի մը գլուխը: Կրնայ մարմինը շատ ուժեղ ու շատ գործունեայ ըլլալ, բայց երբ ուղեղը խաթարուած է՝ այդ մարմնին շարժումը պիտի ըլլայ միայն յիմարական գործունեութիւն և անպտուղ յոգնութիւն:



*Յանուս «Ռուբեն Սեւակ» Մշակք. Հիմնարկի և հիմնադիր
Յովհաննէս Զիլինկիրեանի, Ժիրայր Նայիրի «Վերածնունդ»
մրցանակը կը յանձնէ Պեպօ Սիմոնեանին:*

Ահա քե ինչն՝ իրական վտանգները բողոքով՝ հովերուն դեմ, ու մենք մեզի դեմ կը պայքարինք:

Ահա քե ինչն՝ և փոխանակ յառաջդիմելու՝ խենթերու պէս կեցած տեղերնուս վրայ կը ցատկենք, երկու հազար տարիէ ի վեր...

Սակայն ստո՛յգ, ստո՛յգ կ'ըսեմ՝ ձեզի, վանգը մեծ է, շատ մեծ, աւելի մեծ քան կրնանք ենթադրել:

Ժամանակն է հակազդելու, հակազդենք: Մեզի Նոր Ոսկեդար մը պէտք է, Նոր Ոսկեդար մը:

Այլասերո՞ւմ, ո՛չ.

Վերածնունդ...»:

Դժբախտաբար, մինչեւ 1915, մեծամասնութիւնը հայ մտաւորականութեան, չտեսաւ Ռուբեն Սեւակին մատնանշած մեծ վտանգը: Եւ անխուսափելին պատահեցաւ՝ 24 Ապրիլ 1915-ի ողբերգութիւնը:

Դժբախտաբար, նոյնպէս, 1915-էն մինչեւ այսօր, Հայրենի և Սփիւռքի մտաւորականութեանը մեծ մասը, դեռ չէ արթնցած իր

մահաբուճեան, հակառակ քանի մը բացառութիւն կազմող մտա-
ւորականներու ջանքերուն:

Եւ Ռուբէն Սեւակին ըսածին պէս՝ մեր մտաւորականները շա-
րունակեցին հանելուկային, առեղծածային, խաւարակուլ բաներ
ըսել, և գրիչնին հայ արեան մէջ թաթխելէ վերջ՝ չինարէն տաղեր
գրել, որպէսզի մարդ չհասկնայ...:

Եւ շարունակեցին՝ իրական վտանգները թողլով, հովերուն դէմ
և իրարու դէմ պայքարիլ:

Այսօրուան Հայաստանի և Սփիւռքի ժողովուրդին, ազգային
տեսակետով անմիաբան, քառասային հոգեվիճակը, Ռուբէն Սեւակի
մատնանշած՝ ախտագին մտաւորականներուն յանցանքին ար-
դիւնքն է:

Այս մտաւորականներուն մէջէն սակաւաթիւ փոքրամասնութիւն
մը, արժանի Ռուբէն Սեւակին մատնանշած իրական մտաւորականի
հանգամանքին, ջանացին ձերբազատուիլ «Այլասերում»է, և
ջանացին ու նիզ կ'ընեն ստեղծելու «Վերածնունդ»ը:

Այս քիչ բացառութիւններէն մէկն է՝ երբեմնի Սահակեան-
Լեւոն Մկրտիչեան գոլէճի վաստակաւոր տնօրէն, բանաստեղծ,
ներհուն մտաւորական, պրն. Պէպօ Սիմոնեանը:

Պրն. Պէպօ Սիմոնեանի կեանքին պատմութիւնը՝ Ռուբէն
Սեւակի «Վերածնունդ»ի գաղափարականին մէկ արտացոլումն է:

Վկայ իր վաստակը:

Վկայ իր հասցուցած բիւրաւոր հայահոգի աշակերտները:

Եւ վկայ, իր վերջին նախաձեռնութիւնը՝ Սահակեան-
Լեւոն Մկրտիչեան գոլէճին մէջի, Ռուբէն Սեւակի անուան Մատենադա-
րանի հաստատումը:

Մենք, երախտագիտութեամբ և շնորհակալութեամբ կը խո-
նարհիք սիրելի պրն. Պէպօ Սիմոնեանի վաստակին առջեւ:

ՌՌԻԲԷՆ ՍԵՒԱԿԻ ԱՆՈՒԱՆ ՅԻՇԱՏԱԿԻ ՏԱՆ ՀԻՄՆԱԴԻՐ՝
ՅՈՎՀԱՆՆԷՍ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ

**ԶՐՈՅՑ ԻՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԵՏ «ԹԱՓԱՌԱԿԱՆ ՀՐԵԱՆ»
ԻՆԶՊԷՍ «ԱՇԽԱՐՀԱԿԱԼ ՀՐԵԱՅԻ» ՎԵՐԱԾՈՒԵՑԱԻ**

**1.
ԲԱՑԱՏՐԱԿԱՆ**

«Նայիրի»ի մեջ, Ապրիլ 1995-ի առաջին թիւերէն սկսեալ, կը ջանանք մեր հաւատացած «իրականութիւնները» բացատրել այնպէս, ինչպէս համոզուած ենք:

Այս գրութիւններով՝ մենք ո՛չ պատմաբան ըլլալու յաւակնութիւնը ունինք, ո՛չ ալ «գրականութիւն ընելու» մեծամոլութիւն:

Մենք, պարզապէս, սրտցաւ հայ մը ըլլալով, բոլոր անկեղծ ու խղճամիտ հայերուն նման, կ'ողբանք 1850-ական թուականներէն սկսեալ, մինչեւ օրս «ղեկավար» կոչուած կրօնական և կուսակցական որոշ վարիչներու «տխմարութեան» պատճառաւ, «մեծ հայ ազգին», քայլ առ քայլ, ամէն օր քիչ մ'աւելի, դէպի անդունդ առաջնորդուելուն:

Այստեղ ինչպէ՞ս չիշենք Ռուբէն Սեւակին բերնով՝ «ղեկին գլուխը կը նստեցնենք մեր էն ախտագին, էն այլասերած, էն անպէտ ծնունդները»:

«Պատմաբան ըլլալու յաւակնութիւնը չունինք» ըսինք.

**ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ ԽԵՂԱԹԻՒՐՈՂ
ՀԱՅ ՊԱՏՄԱՐԱՆՆԵՐ ԿԱՆ...**

Այո, կը նախընտրենք պարզ, խղճամիտ հայ մ'ըլլալ, քան թէ՛ տիտղոսներով պննուած, «մեծապատիւ» պատմագետ, հոգին սիոնիստներուն ծախած, որ գիտնալով հանդերձ սիոնիստներուն խաղացած դերը հայկական ցեղասպանութեան մեջ, հայկական եղեռնի պատմութիւնը կը խեղաթիւրէ և, այս ձեւով, կը քողարկէ

սիոնիստներուն պատասխանատուութիւնը:

Եւ մտածել, որ այս պատմաբանը բացառութիւն մը չէ, մեր հայ պատմաբաններու հոյլին մէջ, որոնք համարձակութիւնը չունեցան իրականութիւնները ըսելու, իրենց պորտերէն գանազան սիոնիստ կազմակերպութիւններուն կապուած ըլլալուն պատճառաւ:

Մենք, այս գրոյցներով, երբեք «գրականութիւն ընելու մեծամոլութիւնը չունինք» ըսինք:

Այս գործը, սքանչելի ձեւով ըրին և կ'ընեն արդէն, Արեւմտեան գրականութիւնը ընդօրինակելու «արհեստ»ին մէջ հմտացած շատ տաղանդաւոր հայ գրողներ, որոնք հայ ազգին ենթարկուած ողբերգութեան կոնակ դարձուցած, շարունակեն թմբիրի մէջ պահել հայ ժողովուրդը:

**... ԵՒ ՄԵՐԿ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՏԵՍՆԵԼ ԶՈՒԶՈՂ...
ԶԱԹԼԱՄՆԵՐ**

Բայց հայերուն մէջ, կան նաեւ, շատ հայրենասէր, սիոնիստներէն շահու ազնկալութիւն չունեցող անձնաւորութիւններ, որոնց մտածելակերպը բոլորովին տարբեր է.

«Ի՞նչ շահ ունինք հրեաներուն թշնամութիւնը մեր վրայ հրաւիրելու մէջ:

Թուրքը ունինք արդէն, որպէս թշնամի, մեր դէմ:

Սիոնիստներուն շատ երկար թելերը ունեցող կազմակերպութիւնները, մեզի մեծ վնասներ կրնան պատճառել»:

Այս պատեհապաշտ դատողութիւնը բնորոշ ու յատուկ է ջայլամին, որ գլուխը աւազին մէջ խրած, դուրսը եղածները տեսնել և իմանալ չ'ուզեր:

Եղբայր՝ սիոնիստները մեզի ընելիքնին ըրեր են արդէն, և հիմա կը պատրաստուին հայուն վերջին յոյսը՝ այսօրուան փոքր Հայաստանը քանդելու ազերիներուն, թուրքերուն և ամերիկացիներուն միջոցաւ - չե՞ս ըսեր:

Այս իրականութիւնը չտեսնելու համար, իրապէս ալ, ջայլամի մման, մարդ իր գլուխը աւազի մէջ խրած ըլլալու է:

Այս վիճակը ստեղծուեցաւ Հայաստանի երկրաշարժի աղէտէն յետոյ, և մանաւանդ՝ «ազատութիւն» կոչուած «դժբախտութիւն»ի լոգունգով Հայաստանը վարակելէ ետք:


Այսօր, Հայաստանը լքելով Ամերիկա և այլուր արտագաղթող հայերուն թիւը, մէկ միլիոնի կը հասնի:

Եւ այս մէկ միլիոն ամերիկահայերուն աչքերուն առջեւ, ԱՄՆ-ի նախագահ Clinton, մեր փոքր Հայաստանին մահուան վնիռը կը ստորագրէ Ալիեւին հետ:

Եւ Ամերիկայի մէկ միլիոն հայերը, գրեթէ լուռ կը մնան ջալամի պէս, գլուխնին աւազին մէջ խրած:

Այո՛... Ամէն ազգ իր նակատագիրը իր ձեռքերովը կը կերտէ, իր «առաջնորդներուն» ցուցմունքներովը:

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ ՄԸ ՏԵՐԱՅՈՒՇ ԼՈՉԱՆ ՔԱՂԱՔԻՆ



Ասկէ տասը տարիներ առաջ էր. Շամիրամ Սեւակի հետ, Զուիցերիոյ Լոզան քաղաքը գացեր էինք:

Ռուբէն Սեւակի ապրած և բժշկութիւն ուսանած քաղաքը՝ Լոզան մեր երթալը, մեզի համար տեսակ մը «ուխտագնացութիւն» էր:

Նախ այցելեցինք, քաղաքին կեդրոնը գտնուող, Լոզանի համալսարանի պատմական շէնքը:

Այս համալսարանի շէնքին մէջ է, որ Ռուբէն Սեւակ, 1905-էն մինչեւ 1911, բժշկութիւն ուսանած և վկայուած էր: Երկիւղածութեամբ պտտեցանք համալսարանին սրահները, որոնց մէջ, Ռուբէն Սեւակ, ամբողջ վեց տարի աշխատած էր, իբր բժշկական ուսանող:

Յետոյ անցանք համալսարանի մատենադարանի մասը և հոն, «computer»-ներու վրայ, փնտռեցինք Ռուբէն Սեւակի 1911-ին, իբր բժիշկ ներկայացուցած These-ը, և մեծ ուրախութեամբ գայն գտանք՝ «Roupen Tchilinguirian - Teratomes Sacraux - 1911» արձանագրութիւնը:

Եւ գիրքին անունն ու թիւը ներկայացուցինք մատենադարանի պաշտօնեային և ան, քիչ ետք, բերաւ մեր անհամբերութեամբ սպասած գիրքը, որ կը պահպանուէր 1911-էն ի վեր, ամբողջ դար մը մօտաւորապէս, Լոզանի համալսարանի մատենադարանին մէջ:

Մասունքի նման ձեռքերնուս առինք գիրքը:

Մանաւանդ՝ Շամիրամը շատ զգացուած էր:

Գիրքին առաջին էջերը դարձուցինք: Զօնագրութիւն մը կար, Ռուբէն Սեւակի կողմէ՝

«A Mes Chers Parents M. Et Mme. F. Apell Erfurt»

Գիրքը ձօնուած էր, Ռուբէն Սեւակի կողմէ, իր կնոջ հօր և մօր: Յարգանքի պարզ արտայայտութիւն մըն էր այս արձանագրութիւնը:

Բայց մենք գիտէինք, այս նախադասութեան Ռուբէն Սեւակի համար ներկայացուցած կարեւորութիւնը:

Ռուբէն Սեւակ, իր ապագայ կնոջ հանդիպած էր 1907-ին, Լոզանի մէջ:

Գերմանիոյ Էրֆուրդ քաղաքէն ժաննի Աբէլ, 17 տարեկան, Լոզանի գեղարուեստի վարժարանին մէջ, ուսանողուհի էր:

Երկու կողմէ կայծակնահար սիրահարութենէ միջոց մը ետք, ժաննիի ընտանիքը տեղեակ կ'ըլլայ եղելութեան, և իրենց աղջիկը ետ կը կանչեն՝ Գերմանիա:


Եւ այս կ'ըլլայ սկզբնաւորութիւնը, թէ՛ Ռուբէն Սեւակի և թէ՛ ժաննիի համար, իրարմէ հեռու ապրուած ու տառապալից կեանքի մը, որ տեւած էր մինչեւ 1911:

Մինչ այդ՝ Ռուբէն Սեւակ ժաննիի ծնողքին հաւաստիք կու տայ, ըսելով, թէ իր «նպատակը լուրջ է, և իրենցմէ կը խնդրէ իրաւախոհութիւն, որ իրենք համամիտ ըլլան իր ամուսնութեանը ժաննիի հետ այն օրը, երբ... ինք իր բժշկական վկայականը իրենց ներկայացնէ»:

Գիրքին վրայի «ձօն»ը՝ այս խոստումին իրականացման ապացոյցն էր:

Ռուբէն Սեւակի և ժաննիի 1907-էն մինչեւ 1915՝ ութը տարի տեւող սիրահարութեան, ամուսնութեան և 1915-ին, Պոլսոյ մէջ, ողբերգութեամբ աւարտած իրենց կեանքի պատմութիւնը, ամենէն «քար սիրտերն» անգամ թրթռացնող իրական վեպ մըն է, որուն շատ մը մասերը դեռ չեն հրապարակուած:

Յուսանք, որ ապագային, այս մասին ալ մանրամասնօրէն գրելու առիթը պիտի ունենանք:



Լոզան-Ուշի - տխրաճոշակ գոյգ դղեակ-պանդակներ

ԿԱՐԾԵՍ ԳԵՐԵԶՄԱՆ ԱՏԱՆ ՄԸ ԱՌՋԻՒՆ Կ'ԱՆՑՆԷՆՔ...

Այս բաւական զգայական տողերէն յետոյ, շարունակենք նկարագրել Շամիրամ Սեւակի հետ մեր կատարած պտոյտը, Լոզան քաղաքին մէջ:

Համալսարանէն յետոյ, իջանք Լեման լիճին եզերքը գտնուող «Ouchy» կոչուած գիւղաքաղաքը, որ Լոզանի գեղեցկագոյն և էն տեսարժան վայրն է:

Բայց «Ouchy»ի մէջ, մեր աչքերը բնութեան գեղեցկութիւնը չէին տեսներ: Մեր նայուածքը կը մնար սեւեռուն միայն երկու պալատանման պանդակներու վրայ, որոնց մէջ, 24-7-1923-ին կնքուած Լոզանի Դաշնագրով, Հայկական դատին ու ազգին մահուան վճիռը տրուած էր:

Hotel Beau Rivage և Le Chateau D'ouchy կոչուող այս պանդակներուն առջեւէն Շամիրամի հետ մեր անցած միջոցին,

գերեզմանի մը սեմէն անցնելու տպաւորութիւնը ունեինք:

Կարդացիք, պժգանքով, պանդոկներու մուտքին վրայի արձանագրութիւնները:

Լոզանի Դաշնագրի կնքումին իբր յիշատակ՝ հոն արձանագրուած էին մասնակցող պետութեանց անունները, որոնց մէջ Հայաստանի անունը չկար:

Ինչո՞ւ գրուէր մեռած ազգի մը անունը:

«ԼՈՒՄԱՄ» ԷՒՆ ՀԱՅՈՑ ԽՆԴԻՐԸ ՋԻՐԵՆՔ ԲՆԱԶՆՁԵԼՈՎ

1923ին՝ Լոզանի բանակցութիւններուն ընթացքին, պատուիրակներէն մէկը կ'առաջարկէ թուրք պետութեան ներկայացուցիչ Իսմէթ Ինօնիւ [İsmet İnönü] կոչուած հրեշիւն, որ հայկական խնդիրը սեղանի վրայ բերուի:

Իսմէթ Ինօնիւ ըսուած դահիւնը սապէս կը պատասխանէ.

«Մեզի համար հայկական խնդիր մը գոյութիւն չունի: Եթէ դուք կ'ուզէք խօսիլ այս խնդրին շուրջ՝ իրարու հետ գրուցեցէք, ես դուրս կ'ելլեմ: Իսկ երբ այս մասին ձեր խօսակցութիւնը աւարտի՝ կը վերադառնամ»:

Այսքան ամբարտաւան և ինքնավստահ էր թուրքը:

Որովհետև իրենք հայկական խնդիրը «լուծած» էին...

Հայերը՝ բնաջնջելով...



Շատ տխուր և ընկճուած հոգեվիճակով հեռացանք այս պանդոկներուն, այս գերեզմաննոցին առջեւէն, և գացինք Լեման լիւնին եզերքը, քիչ մը «շունչ» առնելու և մեր տրամադրութիւնը փոխելու:

Լինէն փչող հով մը, մեզ քիչ մը կազդուրեց:

2.

Լոզան այցելողները գիտեն, որ Լեման լիւնին զուիցերիական եզերքէն՝ Ուշիէն դէպի դիմաց՝ ֆրանսական եզերքը, Էվիան [Evian] գացող շոգենաւի սպասարկութիւն մը կայ:

«ԱՍԻԿԱ ԱՇԽԱՐՀԸ ԾԱԾԿԵԼ ԿԸ ՆՇԱՆԱԿԷ...»



Եւ այս շոգեմաւերը, իրենց հարիւր տարի առաջուան դասական կերպարը պահած ու լինին հարթ մակերեսը ակօսելով, իրապէս ալ կարապանման գեղեցկութիւն մը կը ցուցադրեն:

Քարափին վրայէն յառաջացանք, որ աւելի լաւ դիտենք հեգասան երթեւեկող շոգեմաւերը:

Եւ ահա, այդ պահուն նշմարեցինք, քարափին նիշդ ծայրը, ամբողջ շրջակայքին վրայ իշխող դիրքով կանգնեցուած փայլուն յուշարձան մը:

Յուշարձանին մօտեցանք, մինչեւ քովիկը. և ապշութեամբ, գայրոյթով և պժգանքի զգացումներով համակուած, հասկցանք այդ յուշակոթողին ինչ ըլլալը:

Փայլուն ու ներմակ մետաղէ շինուած, հինգ մետր բարձրութեամբ, հրեական վեցանկիւն՝ «Դաւիթեան աստղեր»ու ընդելուզումով սարքուած՝ պոռոտ գանգուած մըն էր:

Մեծ թիւով «Դաւիթեան աստղեր», քով-քովի ու մէջ-մէջի հիւսուած, երկրագունդի մը ձեւ ստացած էին:

Եւ ո՛ր կողմէն ալ նայուէր անոնց, քիչ մը ուշադիր դիտորդը կրնար նշմարել այդ «Դաւիթեան աստղեր»ը:

Այսինքն՝ վեցանկիւն «Դաւիթեան Աստղեր»ով աշխարհ մը շինած էին:

Եւ յուշարձանին պատուանդանին վրայ ալ սա արձանագրութիւնը դրուած էր՝ «Ouverture Au Monde - A. Duarte, Sculpteur - 1973. Don Du Rotary Club De Suisse, A La Ville De Lausanne».

Այս յուշարձանը նուեր տրուած էր, Զուիցերիոյ Rotary club-ին կողմէ, Լոզան քաղաքին:

Շամիրամ Սեւակ ուշադրութեամբ դիտեց այս յուշարձանը և, յետոյ, Ռուբէն Սեւակեան յատակատեսութեամբ սապէս ըսաւ՝

«Ce N'est Pas Overture Au Monde». C'est Couverture Du Monde»

«Ասիկա՝ աշխարհին բացուիլ չէ, ասիկա՝ աշխարհը ծածկել է»:

Սիոնականներուն նպատակներուն մասին՝ Շամիրամ Սեւակի այս մէկ տողին մէջ՝ ամփոփուած հոյակապ «ախտանանաչումը», մեր շատ մը գրագէտ, պատմագէտ և դիւանագէտներուն սքանչելի դաս ծառայելու է...

Լոզանի Դաշնագրին ստորագրութեան պանդոկներէն [մեզի համար՝ հայուն գերեզմանոցէն] հագիւ երկու հարիւր մէթր հեռաւորութեան վրայ գտնուող այս հրէական «Յաղթանակի յուշարձանին» հոն հաստատուիլը, դիպուած էր արդեօք:

Մենք՝ դիպուած ըլլալուն չենք հաւատար:

Մեր բացատրականը կ'աւարտի այստեղ:

Հարցում.՝ Կ'ուզէինք ակնարկութիւն մը ընել, ձեր վերջին գրոյցներուն մասին:

Ձեր վերջին գրոյցին նիւթը՝ ամերիկեան կայսրութեան ներքին ծալքերուն պատմութիւնն էր:

Այսօրուանն ալ՝ թափառական հրեային ինչպէ՞ս աշխարհակալ հրեայի վերածուելուն մասին է:

Ձե՞ք կարծեր, որ հայերուն համար, աւելի այժմեական և աւելի կարեւոր է, Հայաստանին այսօրուան կացութեան, Հայաստանի ներկայ դժուար պայմաններուն, Հայաստանի մէջ պատահած կարեւոր դէպքերուն մասին արտայայտուիլը, քան հրեաներուն և ամերիկացիներուն շուրջ խօսիլը:

Պատասխան.՝ Հայաստանի ներկայ անհանդուրժելի կացութիւնը արդիւնքն է սիոնիստներուն երկար տարիներէ ի վեր նիւթած հակահայ դաւերուն, ինչպէս նաեւ Բ. Աշխարհամարտէն վերջ, ամերիկացիներուն՝ սիոնիստներուն ազդեցութեամբ վարած քաղաքականութեան:

Եւ այս պատճառաւ, մենք կը ջանանք՝ «Չարութեան ակունքները» իջնել և սիոնիստներուն և ամերիկացիներուն սատանայական դիմակները վար առնել ու անոնց իսկական դէմքերը ցոյց տալ:

Մենք կը հաւատանք, որ Հայաստանի ներկայ վիճակը շարունակ

քննադատելով, տեղ չենք հասներ:

Ընդհակառակն, սիոնիստներուն ուզածը ըրած կ'ըլլանք, գիրենք կ'ուրախացնենք:

Անվերջ քննադատութիւններով մեր նստած ծառին նիւղը կը կտրենք և կը խորտակենք մեր վերջին յոյսը եղող այսօրուան Հայաստանը:

Այո, իսկական հայրենասէր հայու մը համար, Հայաստանի ներկայ վիճակը տեսնելով չընդվզիլն ու չզայրանալը անկարելի է: Թոյլատրելի է խօսիլ շինիչ ոգիով:

Բայց, զայրանալը, մեզ տեղ չի հասցներ:

Գիտակից հայրենասիրութիւնը, նախ և առաջ, իր «քշնամին» նանչնալու մէջ կը կայանայ:

Առանց քշնամին նանչնալու, առանց քշնամիին կարողութիւնները և տկարութիւնները գիտնալու, անոր դէմ պայքարիլ և յաջողիլ անկարելի է:

Եւ մենք, այս պատճառաւ է, որ հայ ազգին քշնամիները եղող ամերիկացիներուն և հրաներուն մասին տեղեկութիւններ տալու ջանացինք:

Ինչպէս որ ըսինք՝ մերօրեայ Հայաստանը տեւական քննադատելով, մեր նստած նիւղը կը կտրենք և, մանաւանդ, այս քննադատութիւններով, դաշնակցականներուն լարած ծուղակը ինկած կ'ըլլանք:

Ինչպէ՞ս. բացատրելու ջանանք:

Այս կազմակերպութեան վարիչները տարիներով Խորհրդային Հայաստանի ժողովուրդը գրգռեցին և «ոստիօ»ներով տեւական «ազատութիւն» քարոզեցին անոնց:

Անոնք C.I.A.ին հետ գործակցելով, այլազգիներու կարգին, Խ. Միութիւնը և Խ. Հայաստանը քանդելու համար, երեւակայելի և աներեւակայելի բոլոր միջոցներու դիմեցին: Եւ 1990ին C.I.A.-ն յաջողեցաւ կործանել Խորհրդային Միութիւնը և Խորհրդային Հայաստանը:

Ասիկա ի՞նչ ըսել է, գիտե՞ք:

Կրնա՞ք երեւակայել՝ 70 տարիներ ամբողջ, «Համայնավար» ռեժիմին մէջ ապրելու վարժուած ժողովուրդներուն, մէկ օրուան մէջ «ազատութեան ռեժիմին» անցնիլը:

Ասիկա՝ «chaos» է,

Ասիկա՝ իսկական դժոխք է,

Ասիկա՝ բոլոր արժեքներուն վերիվայրումն է:

Այս էր պատահածը՝ Խորհրդային Միութեան «bloc»-ին պատկանող երկիրներուն մէջ:

Այս էր պատահածը՝ Ռուսիոյ մէջ: Եւ այս էր պատահածը՝ շատ աւելի ծանր ձեւով, Հայաստանի մէջ: Իր գրեթէ ամէն բանը Ռուսաստանէն ստացող Հայաստանը, միջոց մը ետք, քառսի վերածուեցաւ:

Երբ, Ամերիկայի առաջնորդութեամբ, «չարութեան ուժերը» Խ. Միութեան և Խ. Հայաստանի մէջ «ազատութեան» ռեժիմ հաստատեցին, սկիզբը Հ.Յ.Գ.ի մարդոց ուրախութիւնը չափ ու սահման չունէր:

Բայց երբ Հայաստանի մէջ, «ազատութեան հիւանդութիւնը» սկսաւ, անոնք լռեցին:

Սպասեցին, որ «ազատութեան» հիւանդութիւնը իր ազդեցութիւնը գործէ:

Բայց, միջոց մը ետք, տեսնուիլ սկսան վարակին հետեւանքները՝ անգործութիւնը, կաշառակերութիւնը, ցոփութիւնը և, ինչ որ ամէնէն վնասակարն ու ցաւալին էր՝ ժողովուրդի կենսապայմանները սաստիկ վատթարացան ու Հայաստանը սկսաւ պարպուիլ: Ահա այս եղաւ «ազատութեան քարոզչութիւնով», հայ ազգին իրենց տուած թունաւոր նուէրը:

* * *

Եւ հիմա, իրենք որ C.I.A.ի սայլին լծուելով մասնակիցն եղան Հայաստանի այսօրուան անտանելի պայմաններու ստեղծուելուն, դարձեր են այդ վիճակի ամենաբուռն ու անխնայ քննադատողները:

Սփիւռքի իրենց հրատարակութիւններով այսօրուան Հայաստանի դէմ յարձակումներու սկսան, ինչպէս որ կ'ընէին Խորհրդային Հայաստանին շրջանին:

«Համազարկ»ը՝ տարբեր ձեւերով, բայց նոյն ուժգնութեամբ կրկնուեցաւ:

Դժբախտաբար, շատ մը հայրենասէր հայեր ալ, բաղդատելով այսօրուան Հայաստանին դժուար կացութիւնը Խորհրդային Հայաստանի շրջանի փայլուն վիճակին հետ, կը քննադատեն

այսօրուան Հայաստանի կառավարութիւնը և անգիտակցաբար կը ձայնակցին Հ.Յ.Դ.ին և ասոր լարած ծուղակը կ'իյնան:

Այս ձեռով կը կացինահարեն Սփիւռքի հայրենասէր հայերուն՝ իրենց հայրենիքին օգնելու պատրաստակամութիւնը, և արգելք կ'ըլլան, իրենց տարածած անտեղի խժրժանքներով, Սփիւռքի հայութեան միաձույլ կերպով հայրենիքին բիկունք կանգնելուն:

Եւ մտածել, որ այսօրուան Հայաստանը, ինչ որ ալ ըլլան տեղւոյն ներկայ պայմանները, վերջին յոյսն է Հայ ազգին:

Եւ եթէ Սփիւռքի հայութիւնը շարունակէ վնասակար այս քարոզչութեան անսալ, ինքնագիտակցութեան չգայ և չօգնէ Հայաստանին, այսօրուան պայմանները բարելաւելու համար, Սփիւռքի հայութիւնը պիտի ըլլայ «Հայ ազգին, վերջին «ցեղասպանը»:

* * *

Այսօր, ցաւը և հայ ըլլալով՝ «ամօք»ի զգացումը մեր սրտին վրայ, կը հրատարակենք 9 Յուլիս 1952 թուակիր վաւերագիր մը, որ կ'ապացուցանէ, թէ ծանօթ կուսակցութեան վարիչները ինչպէս կը հպատակէին Ամերիկայի 1950թ.ներու նախագահ, այդ օրերէն սկսեալ շղթայազերծուած անեղ պաղ պատերազմին հեղինակն եղող Harry S. Truman-ին հրահանգներուն, և կուրօրէն կը յարձակէին, Երկրորդ աշխարհամարտէն թէեւ յաղթական, բայց քսան միլիոն զոհ տուած ըլլալով մարդուժով և տնտեսութեամբ տկարացած, վիրաւոր Սովետական Միութեան և Սովետական Հայաստանին վրայ:

Այս վաւերագիրը, 9 Յուլիս 1952-ին Փարիզի «Յառաջ» թերթին մէջ լոյս տեսած, «Մայիս 28»ի հանդիսութիւններուն տեղեկագրութիւնն է:

Այս հանդիսութեան ընթացքին, օրուան Հ.Յ.Դ.ի բանախօսին ըսածները, հայոց պատմութեան հայրենասիրական փայլուն էջերուն վրայ անջնջելի մուր պիտի մնայ:

Ահա՛ այդ խօսքերը.

«Մենք բոլորս պիտի ըլլանք այն ուժերուն հետ, որոնք կը կռուին սովետական կեղծ ազատութեան եւ անկախութեան դէմ, մինչեւ անոր վերջնական խորտակումը»:

Եւ իրապէս ալ, այս կուսակցութեան վարիչները յարգեցին իրենց խոստումը, և պայքարեցան Սովետական Միութեան և

Սովետական Հայաստանի դեմ, գործակցելով C.I.A.ի հետ, խօսափող ունենալով Միւնիխի «Radio Liberty»ին, և ամէն տեղ գործակցելով վտարանդիներուն, ազերիներուն և թուրքերուն հետ մինչեւ 1990, մինչեւ Սովետական Միութեան և Սովետական Հայաստանի «վերջնական խորտակման օրը»:

* * *

9 Յուլիս 1952ին, այս տեղեկագրութիւնը հրատարակած Փարիզի «Յառաջ» թերթը, 45 տարի յետոյ, ըսել է՝ մինչեւ այսօր, մեծ յաջողութեամբ կը պահէ իր գոյութիւնը, և կը շարունակէ հրատարակել գրութիւններ Հայաստանի մասին: Բնական է՝ ոչ 9 Յուլիս 1952ի շունչով: Որովհետև այսօր Սովետական Միութիւն և Սովետական Հայաստան գոյութիւն չունին:

Բայց նոյն թերթը, 1991ի «ազատութեան» սկզբնական շրջաններու Հայաստանի հանդէպ իր ունեցած բարեացակամ կեցուածքը այսօր փոխած է, և լայն սիւնակներ կը յատկացնէ՝ «Ազատ Անկախ Հայաստան»ին ներքին խռովութիւններուն:

Եւ թերթին նոր «օգնականուհին», սկիզբի շրջանի իր շատ հայրենասիրական շունչով գրութիւններէն ետք, այսօր Հայաստանի դեմ գրած իր քննադատական յօդուածներով կը կարծենք, որ ապագային, Հայաստանի *փրկարարունին* դառնալու նպատակն ունի:

**ՍՈՒՏԵՐՈՒ, ԵՐԱԶՆԵՐՈՒ ԵՒ
ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ
ԳԻՏԱԿՑԱԲԱՐ ԱՆՏԵՍՈՒԱԾ ՍՈՒՐԲ ՀԵՐՈՍՆԵՐ**

1.

Մեր վերջին գրութեան մէջ նշած էինք, թուրքին հետ եղբայրութեան գաղափարականին «ռահվիրա»ն եղող Պոլսոյ Պատրիարք Ներսէս Վարժապետեանին 1876ին տուած կոնդակին ամէնէն կարեւոր մասը.

«Օսմանեան պետութիւնը պաշտպանել, Հայաստանը պաշտպանել ըսել է»:

Ձեր ուշադրութիւնը պիտի հրաւիրենք այս տխրահռչակ նախադասութեամբ արտայայտուող մտայնութեան՝ Ներսէս Վարժապետեանէն յետոյ եկած հայ առաջնորդներուն մօտ ձգած ազդեցութեան վրայ:

Վերստին մէջբերենք այստեղ, Ներսէս Վարժապետեան Պատրիարքին թրքասեր քաղաքականութեան «արժանավայել» հետեւորդը եղող Գրիգոր Զօհրապին, Կիլիկիոյ ջարդերը մոռցնելու համար 1910ին ըսած խօսքը.

«Ո՞ր ատեն տեսնուած է, որ հայերուն սպանութեան պատճառաւ, թուրքեր կախաղան հանուին»:

Նոյն Գրիգոր Զօհրապը, իր յուշերուն մէջ [20-10-1914-ին] կը նշէ, թէ՛ 1915 Եղեռնի նախընթաց այդ օրերուն, Պոլսոյ Պատրիարքարանին մէջ, Ներսէս Վարժապետեանին 1876ի կոնդակը կը փնտոեն և կը գտնեն, որ կարենան նոյնիմաստ կոնդակ մը ուղարկել գաւառները:

[Տես՝ «Նայիրի»ի Մայիս 1975ի բացառիկ թիւը, էջ 5 - նուիրուած Գրիգոր Զօհրապի]:

Թերեւս կերպով մը կ'ըմբռնենք՝ 1914ի այդ դժնդակ օրերուն, Պոլսոյ Պատրիարքին, իր ժողովուրդը վտանգներէ գերծ պահելու մտահոգութեամբ, թուրքերուն հանդէպ բժնանքով լեցուն այս

տեսակ կոնդակ մը ուղարկելուն շարժառիթը:

1914ի պատերազմի սկիզբներուն հայերը ոչ ուսերէն, ոչ ալ Արեւմտեան պետութիւններէն փրկութեան յոյս մը կրնային սպասել:

Հայերը իսկական ծուղակի մը մէջ էին բռնուած:

Բայց ի՞նչ ըսենք 1876ին, այդ դաւանանական կոնդակը հրատարակող Ներսէս Վարժապետեան Պատրիարքին:

1876ի այդ օրերուն, Օսմանեան կայսրութեան մէջ ապրող հայերուն ոչ մէկ վտանգ կը սպառնար:

Ընդհակառակն, այդ տարիներուն ուսերը, Արեւելքի մէջ, Արեւելեան Հայաստանին կարելոր մէկ մասը ազատագրած էին, և Արեւմուտքի մէջ ալ՝ մինչեւ Պոլսոյ դռները հասած:

Եւ Օսմանեան կայսրութիւնը իր վերջին օրերը կ'ապրէր:

Եւ հայերուն վերջնական ազատութեան ժամը հնչած էր: Եւ նիշդ, հայոց յոյսի այս օրերուն է, որ Ներսէս Վարժապետեան Պատրիարք իր տխրահռչակ կոնդակը հրատարակեց:

Որովհետեւ Ներսէս Վարժապետեան, իբր Պոլսոյ Պատրիարք, իր ենթագիտակցութեան մէջ, մեծ վախ մ'ունէր:

1821ին, Յունաստանի ապստամբութեան պատճառաւ, բուրքերը, իբր վրէժխնդրութիւն, յունաց տիեզերական Պատրիարք Կրէկորիոսը, Պոլսոյ մէջ, կախաղան հանած էին:

Եւ Կրէկորիոս Պատրիարքին տխուր ճակատագիրը, միշտ Ներսէս Վարժապետեանին աչքին առջեւ էր:

Եւ Ներսէս Վարժապետեան, իր խօսքերուն մէջ, միշտ կը յիշատակէր՝ Կրէկորիոս Պատրիարքին կախաղան հանուիլը:

Եւ միայն կախաղան հանուելու այս վախով կը բացատրուի Ներսէս Վարժապետեանին փոփոխամիտ, երկդիմի, վախկոտ և դաւանանական քաղաքականութիւնը:

* * *

Դաշնակ կուսակցութեան պետ Ակնունին 1910ին, Ջօրավար Անդրանիկին օսմանեան ժողովին մէջ երեսփոխան ըլլալ առաջարկելը, Ներսէս Վարժապետեան Պատրիարքին օսմանեան պետութիւնը և Հայաստանը նոյնացնող մտայնութեան շարունակութիւնն է:

Երբ Ակնունի կը ձերբակալուէր 24 Ապրիլ 1915ին, ան դեռ չէր

հասկցած իրականութիւնը:

Եւ կ'ըսէ թէ՝ «Անպայման սխալմունք մը կայ. քիչ առաջ Թալաթին ճաշի էի. ինծի բան մը չըսաւ:

«Հիմա, Վարդգէսը Թալաթին կ'երթայ և ամէն բան կը շտկուի»:
Օրեր կ'անցնին՝ բայց Ակնունին դեռ ձերբակալուած վիճակի մէջ է:

Եւ զարմանքով իր ընկերներուն կը հարցնէ՝

«Ինչո՞ւ արդեօք, Թալաթ չի պատասխաներ իմ հեռագիրներուս:

«Ես էի, 31 Մարտ 1909ին՝ Պոլսոյ մէջ, մոլլաներուն ազատամբութեան օրը, Թալաթը իմ տունս պահելով, զինքը իսկական մահէ ազատողը»:

Անկէ ետք միայն, Պոլսէն մինչև Տիգրանակերտ տարուող Ակնունի, վերջապէս կը հասկնայ իրականութիւնը:

Եւ սա տխուր խօսքերով կը յայտնէ իր դառնութիւնը՝

«Չեմ գաւիր մահուան վրայ, զի օր մը անպայման պիտի գար մահը և մեզ գտներ, այլ միայն կը գաւիմ, որ մենք այս թուրք սրիկաներէն խարուեցանք»:

Գալով, Դանիէլ Վարուժանին 17 Յունիս 1912ին, Թոքատէն Պելնիքա՝ իր ընկերոջ գրած նամակին մէջ ըսածներուն, թէ՝

«Մենք հիմա, համերաշխ կ'ապրինք թուրքերուն հետ, իսկ Թուրքիոյ մասնատումը, ադէտաւոր կ'ըլլայ Հայաստանին ապագային համար. մենք համոզուած ենք անոր», Դանիէլ Վարուժանին 1912ին գրած սա տողերը, անհաւատալիօրէն կը նմանին 1876ին, Պոլսոյ Պատրիարք Ներսէս Վարժապետեանին ունեցած սա գարշելի արտայայտութեան.

«Օսմանեան երկիրը պաշտպանել՝ Հայաստանը պաշտպանել ըսել է»:

* * *

13 Հոկտեմբեր 1985 թուականը, մեզի համար, անմոռանալի օր մըն է:

Այդ օր, Նիսի մէջ, բացառիկ հանդիսութիւններով յիշատակուեցաւ Ռուբէն Սեւակի ծննդեան 100-ամեակը, ի ներկայութեան Ռուբէն Սեւակի գաւակներուն՝ Լեւոնին և Շամիրամին:

Օրուան նախագահը և բանախօսը մեծ հայրենասէր, բանաստեղծ և գրագէտ Անդրանիկ Ծառուկեանն էր:

Մենք միշտ, խոր երախտագիտութեամբ պիտի յիշենք՝ հակառակ

իր առողջական ծանր վիճակին, Անդրանիկ Մառուկեանին այս հանդիսութեան ներկայութիւնը:

Մենք երախտապարտ ենք նաև, տիկին Սօնա Մառուկեանին, որուն հոգածութեամբ կարելի եղաւ պրն. Անդրանիկ Մառուկեանի դէպի Նիս նամբորդութիւնը:

Ռուբէն Սեւակի Յիշատակի օրը, Նիսի հայկական եկեղեցիին մէջ, Ռուբէն Սեւակի հոգւոյն մատուցուած հոգեհանգստեան պաշտօնով սկսաւ: Ա՛յն եկեղեցիին մէջ, ուր, 1967ին, Ռուբէն Սեւակի աշրիին՝ գերմանացի տիկին Ժաննի Սեւակի յուղարկաւորութիւնը կատարուած էր:

Յետոյ, Vieux Nice-ի քատրոնին մէջ, հանդիսութիւնը վերսկսաւ, օրուան նախագահ Անդրանիկ Մառուկեանի բանախօսութեամբ:

Այս բանախօսութեան մէջ, Անդրանիկ Մառուկեան՝ Ռուբէն Սեւակը ներկայացուց, իր իսկական կերպարով, նահատակ, հերոսաբանաստեղծի կերպարով.

Այն Սեւակը, որ մոռցուած էր.

Այն Սեւակը, որ անտեսուած էր:

[Անդրանիկ Մառուկեանի այս սքանչելի բանախօսութեան մասին, աւելի վերջ պիտի արտայայտուինք]:

Յետոյ, Ռուբէն Սեւակի կեանքին պատմութիւնը, քատրերգութեամբ մը ներկայացուեցաւ, Գեորգ Գապառանեանի հեղինակութեամբ և բեմադրութեամբ:

Ելոյթ ունեցաւ նաեւ, Մարսէլի Սահակ-Մեսրոպ երգչախումբը, իր հիմնադիր՝ Խաչիկ Եղլմագեանի ղեկավարութեամբ:

Ելոյթ ունեցան նաեւ, հին և նոր տաղանդներ, ներկայացնելով Ռուբէն Սեւակի բանաստեղծութիւնները:

Հանդիսասրահին մէջ, ժողովուրդին ոգեւորութիւնը գագաթնակէտին հասաւ, երբ Ռուբէն Սեւակի գաւակները՝ Լեւոն և Շամիրամ բեմ հրաւիրուեցան:

Լեւոն Սեւակ շնորհաւորեց դերակատարները, մինչ Շամիրամ Սեւակ, Ռուբէն Սեւակեան շունչով, արտասանեց իր գրած հայրենասիրական երկու բանաստեղծութիւնները:

Բոլոր ներկաները յոտնկայս, յուզումով, արցունքոտ աչքերով կը ծափահարէին Ռուբէն Սեւակի որդին ու դուստրը՝ Լեւոնն ու Շամիրամը, դերակատարները, ելոյթ ունեցողները, երգչախումբի անդամները:

Միայն այս պատմական հանդիսութեան ներկայ եղողները կրնան բացատրել, այդ օրուան ոգեւորութեան տարողութիւնը, մեծութիւնը:

Հանդիսութիւնը շարունակուեցաւ Nice-ի Plaza պանդոկի սրահներուն մէջ, ընդունելութեամբ մը:

Այս ընդունելութիւնն ալ բացառիկ ժողովրդային հանդեսի մը վերածուեցաւ, շնորհիւ տաղանդաւոր արուեստագէտներուն և, մասնաւորապէս, նոյնիւնքն՝ ժողովուրդին միաձայն մասնակցութեան:

Այս պատմական օրուան տպաւորութիւնները, օրերով Սփիւռքի քերթերէն արձագանգեցին:

Այս հանդիսութեան մասին ըսուածներուն մէջ, մեզ ամենէն շատ տպաւորողը, տիկին Սօնա Ծառուկեանի ըսածները եղած են՝

«Ես, աշխարհի ամէն կողմը, շատ մը հայկական հանդիսութիւններուն ներկայ եղած եմ:

Բայց, այսօրուան հանդիսութեան չափանիշով և տարողութեամբ, հայկականութեամբ լեցուն հանդես մը, ոչ մէկ տեղ, նոյնիսկ Պէյրութի մէջ, չեմ տեսած»:

* * *

Անդրանիկ Ծառուկեանի ըսածները իր բանախօսութեան մէջ, Ռուբէն Սեւակի մասին, շատերուն համար բոլորովին նորութիւն էին:

Այստեղ, յապաւումներով, կը մէջբերենք, այդ բացառիկ բանախօսութեան մեզի համար ամենակարեւոր մասերը՝

«Մեր բոլոր նահատակ մտաւորականներուն համար՝ **«Ուհատակուեցան»** կ'ըսենք, և այդպէս կը վերջանայ:

Արդեօք ոճրագործները ինչ ձեւով խոշտանգած են նահատակները:

Այս մասին զանազան վկայութիւններ, զանազան գրութիւններ կան, քիչ մը սուտ, քիչ մը իրաւ: Անոնք նուիրագործուած են:

Մեզի համար պարզ է. նահատակուեցան, բոլորն ալ սուրբեր դարձան:

Բայց, բարեբախտաբար, Ռուբէն Սեւակի կեանքին մէջ, դրուագ մըն ալ կայ, մինչեւ իր մահուան սեմը:

Ուրիշ նահատակ մտաւորականներուն մասին չկայ այս բանը,
Դ. Վարուժանի կամ Սիամանթօյի և կամ Ռուբէն Զարդարեանի
մասին չկայ:

Բայց Ռուբէն Սեւակի մասին իրական պատմութիւն մը կայ:
Չանդըրը-ի մէջ մեծատունի մը, ազդեցիկ մարդու մը աղջիկը
հիւանդ է. և Ռուբէն Սեւակ կը բժշկէ այդ աղջիկը:

Բայց աղջիկը կը սիրահարուի Ռուբէն Սեւակին:

Եւ աղջկան հայրը Ռուբէն Սեւակին կ'ըսէ.

**«Ձեր ճակատագիրը ճշդուած է. ձեզ սպաննելու պիտի տանին:
Եկուր թրքացիք. աղջիկիս հետ ալ ամուսնացիր: Այս պարա-
գային քեզ կրնամ ազատել»:**

Հակառակ, որ Ռուբէն Սեւակի մտաւորական ընկերները, բանտի
ընկերները, իրեն կը թելադրեն, կը պնդեն և կը փորձեն համոզել
զինք ամէն գնով, ըսելով`

«Հոգ չէ վնաս չունի այլեւս.

Թրքացիք, կին մըն ալ առ. Ի՞նչ կ'ըլլայ»:

Բայց Ռուբէն Սեւակ կը մերժէ.

«Թրքանալը վատութիւն է» կ'ըսէ:

Իր մահէն անմիջապէս յետոյ, Ռուբէն Սեւակի անունը երրոր-
դութեան մը հետ կապուեցաւ` Դանիէլ Վարուժան, Սիամանթօ,
Ռուբէն Սեւակ:

Այս երեքն ալ մեծ բանաստեղծներ են:

Բայց, Ռուբէն Սեւակ, ուրիշ առաւելութիւն մը ունէր:

Ինքը պարզ բանաստեղծ մը չէր:

Ռուբէն Սեւակ ազգային գործիչ մըն էր. բայց ոչ կուսակցական.

Ռ. Սեւակ կուսակցական չէ եղած: Իրեն կոչում մը, առաքելութիւն
մը, նուիրական պարտականութիւն մը սեպած էր` ազգային ցաւե-
րով զբաղիլը:

Ռուբէն Սեւակ, իր առօրեայ կեանքին մէջ եղաւ` իրական գործիչ
մը:

Ազգային բոլոր ցաւերով հետաքրքրուելու, ազգային բոլոր
ցաւերուն օգնութեան հասնելու իր ներքին աւիւնը` շատ աւելի
զօրաւոր էր, շատ աւելի ուժգին էր, քան թէ սովորական մարդոց
ունեցած, սրտի կամ մտքի կարողութիւնը:

Անոր համար, ես կը պատկերացնեմ Ռուբէն Սեւակը աչքիս

առջեւ, և ինծի այնպէս կու գայ, որ միայն, բանաստեղծ մը չէ, որ մեռաւ:

Միայն, բժիշկ մը չէ, որ մեռաւ:

Այլ, ազգային դրամագլուխ մը, շատ մեծնալու, շատ կարեւոր դերեր ստանձնելու, շատ ազգային ցաւեր բուժելու ընդունակ և կարող անձնաւորութիւն մը:

Եւ եթէ ինծի վիճակուէր, որ մեր նահատակ գրագետներէն մէկուն յիշատակին [բոլորն ալ յարգելի են, բոլորն ալ հաւասար են] արձան մը կանգնենք, ինչպէս անծանօթ գիւնուորի արձանները կան, մենք ալ մէկ արձան մը ընտրենք՝ հայ նահատակ մտաւորականները, հայ նահատակ գրագետները, խորհրդանշող՝ ես պիտի ուզէի Ռուբէն Սեւակին արձանը բարձրացնել, իբրեւ ամբողջական մարդ, իբրեւ ամբողջական գրագետ և ամբողջական ազգային գործիչ:

Եւ այս մտածումիս մասին, դեռ ամիս մը առաջ, Երեւանի մէջ կը խօսէինք, Հրանդ Թամրազեանին հետ:

Թամրազեանը՝ Երեւանի համալսարանին գրականութեան ամպիոնին վարիչն է:

Ինծի, շատ ուրախութիւն պատճառեց, երբ Թամրազեանն ալ ընդունեց, որ այդպէս պէտք է ըլլայ:

Ռուբէն Սեւակ ամբողջական է:

Այստեղ տաղանդի հարց մը չկայ: Որակի հարց մըն է:

Միւսները մեծ բանաստեղծներ են, բայց միայն բանաստեղծ են:

Ռուբէն Սեւակ ամբողջական բանաստեղծ մըն է:

Բայց նոյն ատեն՝ ամբողջական մարդ մը: Ամբողջական ազգային գործիչ մը: Ամբողջական գրագետ մը, մտաւորական մը:

Եւ այնքան կանուխ սկսած, և աւա՛ղ, դժբախտաբար՝ այնքան երիտասարդ նահատակուած»:

2.

Այստեղ պիտի կրկնենք, 13-10-1985-էն՝ Ռուբէն Սեւակի ծննդեան 100-ամեակի հանդիսութեան, Անդրանիկ Մառուկեանի ըսածները:

«Եթէ ինծի վիճակուէր՝ մեր նահատակ գրագետներէն մէկուն յիշատակին արձան մը կանգնել, ինչպէս անծանօթ գիւնուորի

արձանները կան, և մենք ալ արձան մը ընտրենք, հայ նահատակ գրագետները խորհրդանշող, ես պիտի ուզեի Ռուբէն Սեւակին արձանը բարձրացնել»:

Մենք, խոր յարգանքով կը խոնարհինք, մեծ Վարպետին՝ Անդրանիկ Մառուկեանի այս գնահատանքի արտայայտութեան առջև:

Վերջին քսան տարիներու ընթացքին, մեր կեանքին նպատակը ըրինք՝ անիրաւուած և գիտակցաբար անտեսուած հերոս-նահատակ Ռուբէն Սեւակի յիշատակը մոռացութեան փոշիներէն դուրս, լոյս աշխարհ հանել և հայ ժողովուրդին ծանօթացնել Ռուբէն Սեւակը, իր իսկական կերպարով՝ հերոս նահատակ գրագետի կերպարով:

Բայց ինչո՞ւ, Ռուբէն Սեւակը, մոռացութեան ենթարկուեցաւ:

Ի՞նչ էր պատճառը:

Այս մասին, մեր համոզումով, ամենէն ճշգրիտ պատասխանը, կրկին՝ Անդանիկ Մառուկեանը տուած է:

Ան մեզի, մտերմիկ խօսակցութեան մը ընթացքին, սապէս բացատրեց.

«Ռուբէն Սեւակ, կուսակցական չըլլալուն պատճառաւ, անտեսուեցաւ:

Եթէ, Դանիէլ Վարուժանին պէս, Սիամանթօյին պէս, դաշնակցական գործիչ մը ըլլար, անոնց պէս կը փառաբանուէր»:

Յաւալի է, բայց իրականութիւն՝ այս ախտանանաչումը:

Իրապէս ալ, դիպուած է, որ Սփիւռքի մէջ, դաշնակցական մշակութային հանդիսութիւններուն, ընդհանրապէս Դանիէլ Վարուժան և Սիամանթօ կը յիշատակուին:

Եւ նաեւ դիպուած է, որ Ռամկավար կուսակցութեան հրատարակութիւններուն մէջ, տեւական ռամկավար գործիչ՝ Վահան Թեքեան կը փառաբանուի:

Ահա կրկին, կուսակցութիւններուն՝ հայ ժողովուրդը շերտաւորելու, հայկական բարձրագոյն շահերը անտեսելու և միայն իրենց քմբուկը զարնելու ծառայող ափսոսալի ունակութիւններէն մէկը:

* * *

Ինչպէս որ, մեր վերջին գրութեան մէջ, նշած էինք՝ 13-10-1985-ին Nice-ի մէջ կատարուած, Ռուբէն Սեւակի ծննդեան 100-ամեակի հանդիսութեան, Անդրանիկ Մառուկեան, Ռուբէն Սեւակի Չանդըրը-ի մէջ անցուցած օրերու հերոսական դրուագին պատմութիւնը տուած էր:

Եւ իր բանախօսութեան վերջաւորութեան, հայ ժողովուրդին սա առաջարկը ըրաւ.

«Եթէ ինձի վիճակուէր, հայ նահատակ մտաւորականները խորհրդանշող արձան մը ընտրել, ես պիտի ուզէի Ռուբէն Սեւակին արձանը բարձրացնել»:

Մենք, այս արդար ընտրութեան համար, յաւէտ երախտապարտ ենք Անդրանիկ Մառուկեանին:

Եւ 1915ի նահատակ մտաւորականներուն իբր խորհրդանիշ՝ Ռուբէն Սեւակի արձանը ընտրելու որոշումին ի՛նչ աստիճան արդար, խորիմաստ և պատշաճ որոշում մը ըլլալը փաստելու համար, Չանդըրը-ի մէջ, Ռուբէն Սեւակի հետ աքսորուած իր մտաւորական ընկերներուն ականատեսի վկայութիւնները, շարժանկարի ողբերգական ժապաւենի մը պէս, քով-քովի բերելով, պիտի հրապարակենք:

Եւ յաւակնութիւնը ունինք ըսելու, որ այս՝ հայ գրականութեան պատմութեան և իր տեսակին մէջ առաջինը պիտի ըլլայ:

* * *

ԱՌԱՋԻՆ ՎԿԱՅՈՒԹԻՒՆ
ՅՈՎՀԱՆ Մ. ՎԱՐԴԱՊԵՏ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ՝
«ԷՋ ՄԸ ԱՔՍՈՐԱԿԱՆ ՅԻՇԱՏԱԿՆԵՐԷՍ»
[Ապրիլ 1915 - նոյեմբեր 1918]

ՉՕՆՈՒԱԾ՝ «ՍԵՒԱԿ»Ի ԱՆՄԱՀ ՅԻՇԱՏԱԿԻՆ
[Հրատարակուած «Հայաստանի Կոչնակ» հանդէսի
7 Յունուար 1922 և 21 Յունուար 1922 թիւերուն մէջ]

Չանդըրը-ի հովիտը ոռոգող գետակին եզերքը, բարտիներու գծաւոր ստուերին տակ՝ կը նեմէինք Յուլիսի առաւօտ մը - տօքք. Ռուբէն Զիլինկիրեան [Սեւակ] ու ես, ըմբռնելով անզուգական վայելքները գաղափարային ընկերակցութեան: Խօսակիցս կը վերլուծէր անհրաժեշտ պայմանները ազգային վերածնունդի:

Աքսորական կեանքի ննշող մթնոլորտը, իր բոլոր սպառնական երեւոյթներով, փայփայած չէր մեր լաւատեսութիւնը: Հակառակ Իբրիհատի հայաչինջ քաղաքականութեան արհաւիրալից կիրարկումին՝ որու սկսեք էինք տակաւ վերահասու ըլլալ շրջող գրոյցներու և քաղաքական ուրիշ ցուցմունքներու հիման վրայ, երկուքս ալ անխախտ կը պահէինք հաւատքը հայ ապագայի լուսազարդումին...

Մեր խօսակցութիւնը հասած էր այս կէտին, երբ Տօքքօրը յանկարծ լռեց:

Հոգեկան խռովք մը նշմարեցի իր ընդհանուր արտայայտութեանը մէջ:

Կը դիտէի որ կոկորդին մսանները կուլ տալու ծանօթ պրկումները կը կրկնէին ջղայնաբար: Ի՞նչ էր այն մտածումը, գոր կը վարանէր արտայայտել:

Հարցուցի իր յուզման պատճառը:

«Հայր-սուրբ», ըսաւ մեղմ ու խեղդուկ ձայնով, **«ինձ այնպէս կը բռնի, թէ մահը հեռու չէ բնաւ մեզմէ»:**

Նախագգացո՞ւմ մըն էր արդեօք, որ կ'ունենար: Անմիջապէս կոչում ըրի իր քիչ առաջուան խանդավառ գգացումներուն և ըսի, թէ իրաւունք չունէր յուսահատ ըլլալու:

Մասնաւորաբար ծանրացայ սա տրամաբանութեան վրայ, թէ քանի որ շուրջ քսան տարիներ պատրաստուէր էինք ծառայելու

ազգին կամ եկեղեցիին, պետք էր թոյլատրուիլ մեզ գոնե քսան ամիս գործել:

Մահուան հանդեպ ունեցած պաղարիւնս առաւելապէս արդիւնք ըլլալով տեսական հայեցողութեան ու հոգեկան տրամադրութեան՝ դժբաղդաբար չէր արդարանար այնքան, մեզ շրջապատող իրերարարձութեանց տեսակետէն: Ամիսի մը չափ առաջ, մեր բաղդակիցներէն յիսուն երկու հոգի, նամբայ հանուած էին դէպի Տէր Զօր, չափազանց տխուր պարագաներու տակ, և արդէն տարածայնութիւնները կը բազմանային իրենց Գաղատիայէ քիչ անդին խժողովի կոտորման: Ո՞վ կրնար երաշխաւորել, թէ յաջորդ առաւօտուն իսկ, նոր ցանկ մը պիտի չծանուցանէր Տէր Զօր դրկուելիքներու, որոնց մէջ գտնուէինք նաեւ երկուքս կամ ուրիշ բաղդակիցներ:

Ասկէ գատ, քաղաքին ինքնաբնակչութեան մտայնութիւնը հետզհետէ կը լարուէր հայերուն դէմ, տեղի տալով անարգական նորանոր արտայայտութեանց:

Տարակոյս չկար, թէ մահուան ու կեանքի միջեւ օրօրուելու շրջանն էր այս:

Տօթօրը կացութեան ծանրութիւնը լրջօրէն ըմբռնած՝ չէր ուզեր բաժնուիլ մահուան տեսիլէն:

- ԹՇՈՒԱՌԱԿԱՆՆԵՐԸ ՄԵՋ ՊԻՏԻ ՍՊԱՆՆԵՆ, ԲԱՅՑ ՄԵՆՔ ՊԻՏԻ ՉՄԵՌՆԻՆՔ. ՔԱՆՋԻ ՄԵՐ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆՆԵՐԸ ՄԻՆՉՅԻ ՎԵՐՋԸ ՊԻՏԻ ԱՊՐԻՆ: ԿԱՐԵԼԻ ԶԷ ՋՆՋԵԼ ԱՅՆ ՈԳԻՆ, ՈՐ ՄՂԵՑ ՄԵՋ, ԱՄԵՐԻԿԱՅԻ ԿԱՄ ՋՈՒԻՑԵՐԻՈՅ ՀԱՆԳԻՍՏԷՆ ՀՐԱԺԱՐԵԼՈՎ ԳԱԼ ՈՒ ՕԳՆԵԼ ՄԵՐ ՍԻՐԵՑԵԱԼ ԱԶԳԻՆ:

ԵՍ ԿԸ ՀԱՒԱՏԱՄ, ԹԷ ԱՆՄԱՀՈՒԹԻՒՆ Է ԾՐԱՐՈՒԱԾ ՋՈ- ՀԱՐԵՐ ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ՄԷՋ»:

Այս բառերը արտասանուեցան ասպետական այնպիսի շեշտով մը, որ յատկանշական էր Սեւակի մշտավառ կորովին:

Գաղափարապաշտութիւնը նոր յաղթանակ մը կը տանէր այդ պահուն:

Յուզիչ էր մեր տեսակցութեան արդիւնքը: Մահ կամ կեանք - որոշած էինք հաւատարիմ մնալ մեր կոչման:

Հանդարտութեամբ պիտի սպասէինք անակնկալներու յայտնու- րեան:

Աքսորական կեանքը փորձաքար մըն էր արժանիքներու:

Ամէն անձ ի յայտ կու գար իսկական իր գոյնով: Ոմանց համբաւին պատուանդանը կը գայթէր անդարձ: Մինչ ուրիշներ նոր կը կերտէին կոթողները առինքնող հիացման:

Փոխադարձ գնահատումի այս առիթը կ'առաջնորդէր կազմութեանը բարեկամութեանց լաւագոյններուն:

Տառապանքով նուիրագործուած այս եղբայրակցութիւնները տանարներ էին միխիթարութեան, ուր հաւատք, յոյս և սէր կը բոցավառէին լուսանահանչ՝ կարծես իբր հակապատկերներ մթնոլորտը պատող անարդարութեան խաւարին:

Քաղցր էր արդարեւ ցորեկը բոլորուիլ ծառերու հովանիին տակ և խրախուսել զիրար՝ մինչ գիշերը անքուն ժամեր կ'օգտագործուէին կացութեան մասին աւելի լուրջ վերլուծումներով:

Անգամ մը՝ հագիւ շաբաթ մը ետք այն տեսակցութենէս որու անդրադարձայ՝ երբ նստած էի Չանդըրը-ի հանդիպակաց բլրակներուն բացւող պատուհանիս առջեւ, ու կը մտածէի զիս կախելու այն սպառնալիքին վրայ, որ նոյն առտուն՝ ներկայութեան պարտաւորիչ արձանագրութեան համար ոստիկանատուն գացած միջոցիս ըրած էին շուկային մէջ, երկու անգուսպ թուրքեր, յանկարծ սենեակ մտաւ տօքք. Զիլինկիիբեան:

Սովորականէն աւելի մոռայլ էր կերպարանքը: **«Առաջարկ մը ունիմ ընելիք»** յայտարարեց առանց յառաջընթաց խօսքերու: **«ԿԸ ԼՍԵՄ, ԹԷ ԳԱՂԱՏԻՈՅ ԿՈՂՄԵՐԸ ԻՍԼԱՄԱՑԱՄ ԵՆ ԿԱՐԳ ՄԸ ՀԱՅԵՐ: ՉԵՄ ՈՒՋԵՐ, ՈՐ ՄԵՐ ԸՆԿԵՐՆԵՐԷՆ ՈՅԻԷ ՄԷԿԸ, ԱՅԴՊԻՄԻ ՏԿԱՐԱՑՈՒՄ ՈՒՆԵՆԱՅ ԱՊԱԳԱՅ ՀԱԻԱՆԱԿԱՆ ՃՆՇՈՒՄՆԵՐՈՒ ԱՌՋԵԻ, ՈՒՍՏԻ ԿԸ ԹԵԼԱԴՐԵՄ, ՈՐ ԴՈՒՆ, ԻՐՐ ՀՈԳԵԻՈՐԱԿԱՆ, ԿԱՆՉԵՍ ՀՈՍ ԳՏՆՈՒՈՂՆԵՐԸ ԵԻ ԵՐԴՈՒՄ ԱՌՆԵՍ ԻՐԱՔԱՆՉԻԻԷՆ, ԹԷ ՀԱՍՏԱՏ ՊԻՏԻ ՊԱՀԵՆ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՀԱԻԱՏՔՆԻՆ»:**

Ջանացի հանդարտեցնել Տօքքօրը և բացատրեցի անպատեհութիւնները որ կային այդօրինակ արարողութեան մէջ, նկատի ունենալով մանաւանդ ժամանակին փափկութիւնը և մեր ընկերները անհարկի յուզման չմատնելու անհրաժեշտութիւնը:

Համակերպեցաւ չպնդել իր տեսակետին վրայ, սակայն այդ

միջադեպը կարծես կանխաձայնութիւն մըն էր մօտալուտ սարսափներու:

Շատ չանցած՝ կացութիւնը ստացաւ ամենասուր հանգամանք, փողոցի թուրք տղաքը լաւագոյն ջերմաչափն էին հայահալած մոլեգնութեան: Լուտանքի սովորական տեղատարափը հիմա կը փոխուէր բիրտ քարկոծման:

Կոտորածի նախապատրաստութեան գրոյցներն կը սկսէին ազատօրէն շրջիլ:

Գիշեր մը, ինքնապաշտպանութեան միջոցներու մասին խորհրդակցելու վրայ էի, պ. Տիրան Քէլեկեանի հետ, երբ տօքթ. Զիլինկիրեան անակնկալ այցելութիւն մը տալով, յայտնեց, թէ եկած էր ծանրակշիռ յայտնութիւններ ընելու:

Փոքրիկ կանթեղին լոյսը իր տժգունած դեմքին աւելի ամպոտ մէկ կիսասուտերը կը շրջագծէր պատին վրայ:

Պահ մը լռութիւն տիրեց սենեակին մէջ: Իրարու նայեցանք հոգեկան խոր ներքնաթափանցումներով:

Վերջապէս լսեցինք դաւադրութեան մը զարհուրելի նկարագրութիւնը:

Տօքթօրին յուզեալ շեշտը դեռ կը հնչէ ականջիս, փղձկեցուցիչ հակազդեցութեամբ:

Զանդըրը-ի մէջ կառապան մը կար, որ ծանօթ էր իբր հեղինակ սանձարձակ արարքներու: Իթթիհատական ոճրապարտ խմբակը յանձին իրեն գտած էր հլու գործիք մը, գոր կը շոյէր ու կը շփացներ մեծ հեռատեսութեամբ:

Կառապան Իսմայիլի մէկ աղջիկը վիրաբուժական յաջող գործողութեան մը ենթարկուած էր տօքթ. Բարսեղ Տինանեանի ձեռքով, ու վերջինին Պոլիս դառնալէն ետք, հիւանդը փոխանորդաբար կը դարմանուէր տօքթ. Զիլինկիրեանի կողմէ:

Արդ, ըստ վերջինին պատմութեան, նոյն օրը երբ գացած էր հիւանդին այցելելու, կառապանը յանդգներ էր բանտարկել զինք տան խաւարամած գետնաշարկը պահանջելով, որ իսկոյն իսլամանայ:

«Ինձի նայէ» պոռացեր էր նիւաղը Տօքթօրին երեսն ի վեր - «Զեզ ամէնքդ թիւնէյի մէջ պիտի սպաննենք: Քեզ սիրելուս համար կ'ուզեմ կեանքդ փրկել: Հագգ տինը ընդունէ. հակառակ պարագային, աղէկ գիտցիր, որ կտոր-կտոր պիտի ըլլաս»:

Տօքթօրը, հաւատարիմ իր առջի օրուան ուխտին, արիաբար դիմադրեր էր տրամաբանութեան ուժով:

Կառապանին յամառ պնդումը, իր առաջարկին անմիջական գործադրութեան մասին, մաքառումը երկարեր էր երկու ժամէն աւելի:

Ճգնաժամային այս դրութենէն նողոպելու համար, Տօքթօրը գաղափարը յղացեր էր առաջարկելու կառապանին, որ թոյլ տայ իրեն քաղաքի զինուորական հրամանատարին հետ տեսակցիլ նոյն ուղղութեամբ:

Օձիքը ազատելու այս հնարքը յաջողութեամբ պսակուած՝ ահա՛ եկեր էր ամենուս հակատագրին հետ սերտօրէն կապակցեալ նոր կացութեան վրայ խորհրդակցելու:

Ո՞վ կրնար այլեւս անգիտանալ վայրկեանին վնռականութիւնը:

Կ'զգայինք, թէ գոյութեան ճժարը դէպի գերեզման կը հակեր, աւելի քան երբեք:

Ջիրար սրտապնդող մէկ քանի բառերէ ետք, պ. Քէլէկեան յիշեցուց, թէ յաջորդ օրը Ռամազանի Պայրամ ըլլալով, պատշան էր շնորհաւորական այցելութիւն տալ զինուորական հրամանատարին, և թելադրեց, որ տօքթօրն ալ ընկերանայ, որպէսզի կառապան Իսմայիլ գէթ պատրանքը ունենայ իր բաղձանքին իրագործման:

Անդրադարձանք նաեւ Չանդըրը-է փախուստ տալու կարելիութեանց. բայց չյաջողեցանք եզրակացութեան մը յանգիլ:

Կար կէտ մը սակայն, որու շուրջ կատարեալ համաձայնութիւն կը տիրէր, և այդ ալ վեր բռնել էր, ամէն գնով, դրօշը քրիստոնէական հաւատքին:

Քէլէկեան խաչակնքեց երկիւղածութեամբ, իսկ Սեւակ իր բռունցքը ցցեց այն **մի՞նարէին** ուղղութեամբ, որու պատշգամէն խոպոտ ձայն մը կը բարձրանար նոյն պահուն, դէպի ավանհն թուրքին:

Յաջորդ կիրակի առաւօտուն, Չանդըրը-ի հայոց փոքրիկ մատուռին հնադարեան կոչնակը, աղօթքի իր հրաւերովը մէկտեղ, կարծես ահագանգը կը հնչեցնէր մահուան անխուսափելիութեան:

Տեղական փոքրաբիւ հայութիւնը, որ ականատես էր եղած, Պոլսէն խլուած աքսորական խումբին օրէ օր կոտորակուելուն, կը շարունակէր ջերմեռանդօրէն աղօթել, մնացեալներուս փրկութեանը համար:

Քաղաքին օժապտոյտ ու նեղ փողոցներէն լուռ և անշշուկ քալուածքով, նոյնպէս դէպի մատուռ կ'ուղղուէինք բաղդակից երեսուն և հինգ ընկերներ - վերջին ներկայացուցիչներս Այաշ ու Չանդըրը բշուած երկու հարիւր իննիսունի մօտ մտաւորական ու եռանդուն հայութեան:

Արհաւիրքը կրօնական եռանդ էր արծարծած ամէն սրտի մէջ:

Աւելի հիմնական պատճառը սակայն, հրահրուող արթնութեան՝ ազգային բոլոր խաւերու և հոսանքներու մէջ տիրող նշմարիտ եղբայրակցութիւնն էր:

Հասարակաց բշնամիին դժոխային դաւերը, ջնջած էին ներքին ամէն խտրականութիւն:

Միասիրտ ու միակամ ինքնապաշտպանութիւն փորձող մեր խումբը բնական կը գտներ իր ներշնչումը քաղել այն եկեղեցիէն, որ խորհրդանշած է միշտ ազգային միութիւնն ու գաղափարապաշտութիւնը:

Չանդըրը-ի գօրանոցին գետնայարկի մէկ սրահը աղօթավայրի վերածուած էր բանտարկութեան շրջանին:

Հոն, ամէն իրիկուն, հանգստեան ժամանակ, «Եկեացէ»ի պաշտաման կարգը կը կատարուէր ու «Տեր ողորմեա՛» կ'երգուէր անօրինակ ջերմեռանդութեամբ:

Իսկ աւելի ետքը, քաղաքին անշուք այլ հնաբոյր մատուռը դարձեր էր կիրակնօրեայ հաւաքավայրը իրենց հեռաւոր սիրելիներուն կարօտովը տոչորող ու նահատակութեան սեմին վրայ անյողողող կանգնող նոյն վտարանդի խումբին:

Վերոյիշեալ կիրակին՝ Ս. Պատարագի մատուցումը արցունք կը խլէր ամէն աչքերէ: Մթնոլորտը ելեքտրականացած՝ դէպի սպանդանոց առաջնորդուած մեր պատուական ընկերներուն սուգովը:

Կարծես քրիստոնէական հալածանքի առաջին դարերուն մէջ կ'ապրէինք:

Մատուռը, իր ցած ձեղունով ու խորհրդաւոր լուսամուտով, գետնադամբանի [Catacomb] տպաւորութիւնը կը թողուր իսկապէս:

Մատուռին յառաջակողմը՝ դասին առջեւ, ասպետական դիրքով, կանգնած էր նոյնիւնքն տօքթ. Չիլինկիրեան:

Կ'զգայի, թէ ինք, այդ վայրկեանին, կը մարմնացներ մեր ցեղին հաւատքի դիւցազնութիւնը:

Երկիւղի նշոյլ անգամ չկար իր առնական դեմքին արտայայտութեան մէջ:

Երբ Խորանին վարագոյրը երկրորդ անգամ բացուեցաւ ու սարկաւագը «Երկիւղի և հաւատով յառաջ մատի՛ք և սրբութեամբ հաղորդեցառութեք»ը եղանակեց, Սեւակ առաջինը եղաւ Ս. Հաղորդութիւնը նաշակողը:

Չեմ կրնար պահ մը իսկ մտքէս հեռացնել իր այդ օրուան գրաւիչ վեհութիւնը:

Կը նմանէր ինք այն յաղթական կաղնիին, որու բունը տապալել կը պատրաստուէին փայտահատներ:

Բայց ինք անվրդով կը դիտէր ապագան, քանզի իր արմատներուն խորունկութիւնը՝ զուլալ աղբիւրներէ ոռոգուած՝ երաշխիքը կու տար վերստին բողբոջման: Այսպէս ալ Սեւակ վախ չունէր իր դահիճներէն: **Անոնք կրնային իր մարմինը անշնչացնել, բայց իր հոգին յաւիտեանական պատգամներ պիտի ունենար հայութեան ականջին ճնչեցնելիք:**

3.

Յովհան Մ. Վարդապետ Կարապետեան «Չանդըրը»ի իր յուշերուն մէջ, 24 Ապրիլ 1915ի արստրեալներուն ականատեսի իսկական պատմութիւնը իր ամբողջ զարհուրելի մանրամասնութիւններով, անհաւատալի իրատեսութեամբ և սրտառուչ այնպիսի՝ մեկնաբանութեամբ ներկայացուցած է, որ իր ներսիդին քիչ մը հայ հոգի ունեցողը, օրեր շարունակ, չի կրնար ձերբազատուիլ անոր ազդեցութենէն:

Բայց Չանդըրը-ի դժոխքին մասին Յովհան Վարդապետին ականատեսի այս բացառիկ վկայութեան, հայ աշխարհի մէջ քանի՞ հոգի տեղեակ էին:

Բաց խօսիմք: 24 Ապրիլ 1915ի մտաւորական նահատակներուն մասին, ո՞ր հայը, մշուշոտ և անկատար պատմութենէ մը աւելին գիտէ:

Մենք աւելի յառաջ պիտի երթանք:

1915ի Եղեռնին իսկական պատմութիւնը, 84 տարիներէ ի վեր, մինչեւ այսօր, վաւերական ու քիչ թէ շատ ամբողջական ձեւով, իր բոլոր մանրամասնութիւններովը, չէ գրուած, և մանաւանդ՝

վերապրողներուն բոլոր վկայութիւնները չեն արձանագրուած: Եւ աւելին՝ մենք պիտի ըսենք, թէ՛ գիտակցաբար չէ գրուած: Եղեոնը մոռացութեան մատնել ուզող մութ ուժերը, նման աշխատանքներու տարուելուն արգելք եղած են:

Դուք գիտե՞ք արդեօք, թէ Բ. Աշխարհամարտին Գերմանիոյ մէջ **մահացած ամէն մէկ հրեային համար**, այսօրուան Իսրայէլի հողերուն վրայ, մեծղի հաստատութեան մը մէջ, մասնաւոր արխիւային բաժին մը ստեղծուած է:

Եւ մեռած իւրաքանչիւր հրեային պատմութիւնը, իր բոլոր մանրամասնութիւններով և ամենէն արդիական մէթոտներով, այնտեղ արձանագրուած է:

Այսպէս ըսուած՝ «Հրեական ցեղասպանութեան» գոհերուն համար Իսրայէլի մէջ, ա՛յն աստիճան վիթխարի արխիւային և պատմագիտական աշխատանք կատարուած է, որ թղթածրարներուն և հատորներուն ծաւալը լեռներու բարձրութեան կը հասնի:

Գալով հայ ժողովուրդի Եղեոնի պատմութեան՝ այդ մասին գիտական ի՞նչ աշխատանք կատարուած է: Քանի՞ պատմագիտական արժէք ունեցող գիրք հրատարակուած է:

Ճշմարտութիւնը ըսելու համար՝ գրեթէ ոչի՛նչ:

Քանի մը լալկան վիպական գրութիւններէ, մէկ քանի հայրենասիրական ընկերակցութիւններու կողմէ հրատարակուած ոչ գիտական, աւելի շատ՝ զգացական հրատարակութիւններէ ու ինքնագովութիւն կազմող քանի մը հատորներէ [օրինակ՝ Պալաքեան Սրբազանին հրատարակած «Հայ Գողգոթան»] գատ, ոչ մէկ բան:

Ընդհանրապէս՝ ունայնութիւն և խաւար:

* * *

Քանի մը օր առաջ, այս մասին աւելի վաւերական պատասխան մը առնելու համար, դիմեցինք Հայ Բարեգործական Միութեան Փարիզի Նուպարեան մատենադարանի տնօրէն, պատմաբան՝ Յարութիւն {Raymono} Գեորգեանին և հարցուցինք իրեն, քէ «1915-ի Եղեռնին մէջ հայ ժողովուրդին իսկական պատմութեան մասին ի՞նչ գիրքեր հրատարակուած են մինչեւ այսօր»:

Պատմագետ Յ. Գեորգեանի պատասխանը սա եղաւ՝

«Դեռ նոր հրատարակելու սկսանք: Այս մասին աշխատանք կը տանինք ներկայիս»:

Կրնա՞ք երեւակայել 84 տարուան պարապութիւն մը:

Աւելի ճիշդ՝ 84 տարիներէ ի վեր անտեսուած կամ գիտակցաբար մոռացութեան ենթարկուած ողբերգութիւն մը: Ինչո՞ւ: Որպէսզի, անցնող իւրաքանչիւր օրուան հետ, Եղեռնին հետքերը քիչ մ'աւելի կորսուին ու անհետանան, և ներկայիս բուրքերուն ծառաները եղող՝ Bernard Lewis-ի, Gilles Venstein-ի նման հրեաներ ելլեն և «Հայկական ցեղասպանութիւն չէ եղած» ըսելու համարձակութիւնը ունենան:

* * *

Հայկական Եղեռնի մասին մեր խորհրդածութիւնները, 24 Ապրիլ 1915-ի արքորեալ մտաւորականներուն ականատեսի վկայութիւնները հրապարակելէ յետոյ, պիտի ջանանք տալ:

Բայց, մինչ այդ, ձեր ուշադրութիւնը պիտի հրաւիրենք Յովհան Ծ. Վարդապետ Կարապետեանին սա ցնցիչ վկայութիւն - տողերուն վրայ.-

«Աքսորական կեանքը փորձաքար մըն էր արժանիքներու:

Ամէն անձ ի յայտ կու գար իսկական իր գոյնով:

Ոմանց համբաւին պատուանդանը կը գայթէր անդարձ:

Մինչ ուրիշներ նոր կը կերտէին կոթողները հիացման»:

Յովհան Վարդապետին մատնանշած անձերը ովքեր էի՞ն, որոնց համբաւին պատուանդանը կը գայթէր անդարձ:

Յովհան Վարդապետ Կարապետեան այս մասին մանրամասնութիւն և անուն չէ տուած, խնայելով այդ «համբաւաւոր»ները:

Նաեւ անունները չէ տուած այն անձերուն, որոնց Ռուբէն Սեւակ երդուեցնել տալ ուզած էր, թէ՛ պիտի չուրանան իրենց պապե-
նական կրօնը:

Այս մասին, Ռուբէն Սեւակի արտոբեալ մէկ ուրիշ ընկերը՝ Մի-
քայէլ Շամտաննեանը, իր ականատեսի վկայութեան մէջ, աւելի
մանրամասնութիւններ տուած է գրելով.

«Ռուբէն Սեւակ, ամբողջ երկու օր աշխատեցաւ, համոզելու
համար տկար հոգիները, որ մահը՝ քրքանալէ աւելի աղէկ է: Եւ
զատ-զատ երդում ընել տուաւ ամէն անունց, որոնց հոգիի ուժին
վրայ կասկած ունէր, թէ հաւատարիմ պիտի մնան իրենց լոյս
հաւատքին»:

Բայց, Միքայէլ Շամտաննեանն ալ, «տկարացող հոգիներուն»
անունները չէ տուած, նոյնպէս խնայելով այս «համբաւաւորնե-
րուն»:

Այս յատկանշական մէջբերումներէն յետոյ, պիտի շա-
րունակենք հրապարակել՝ Յովհան Ծ. Վարդապետ Կարապետեանի
Զանդըրը-ի դժոխքէն վերապրող արքորական ականատեսի
բացառիկ կարեւորութիւն ներկայացնող վկայութեան երկրորդ և
վերջին մասը:

ԷՋ ՄԸ ԱՔՍՈՐԱԿԱՆ ՅԻՇԱՏԱԿՆԵՐԷՍ

[Ապրիլ 1915 - նոյեմբեր 1918]

ՍՅԻԱԿԻ ԱՆՄԱՀ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Նոյն գիշեր պ. Տիրան Քէլէկեան ծալապատիկ նստած էր այն սե-
նեակը, ուր վեց ամիս միասին ապրեցանք սիրալիր մտերմու-
թեամբ: Առջի շաբթուն յաշողեր էր գաղտնաբար լուր դրկել Պոլիս,
որ եթէ մինչեւ տասը օր կարելի չըլլար Զանդըրը մնացողներու
կեանքը փրկել, մահը անխուսափելի պիտի ըլլար:

Ծերունագարդ հայրիկս՝ խորապէս վրդոված հրաժեշտի այս
նամակէս՝ անշուշտ նորանոր դիմումներ էր կատարած դեսպանա-
տանց մօտ: Ի՞նչ արդիւնք ձեռք բերուած էր արդեօք: Այս էր նիւթը,
որուն մասին կը խօսակցէիք:

Քէլէկեան չէր ծածկեր իր յոռետեսութիւնը: Դեռ բարձր էր իր
մտքին մէջ այն գաղտնի տեսակցութիւնը զոր, մէկ քանի օր առաջ,
ունեցեր էր Պասքեմունիի նահանգին պաշտօնանկ կուսակալ
Բեշիտ փաշայի հետ, որ, իբր ազատ որմնադրական ընկեր, անվե-

րապահօրէն յայտներ էր երիտասարդ թուրքերու հայ ազգի բնաջնջման ծրագրին մանրամասնութիւնները: Պարզ էր այլևս, թէ իւրաքանչիւր քաղաքէ առաջին անգամ քստորուած աչքառու դէմքերը, մահուան դատապարտեալ էին մասնաւոր տոմարով:

Ասոնք պէտք էին բնաջնջուիլ կառավարական խիստ հակակշռի տակ, իսկ մնացեալ խումբերը դէպի մահ առաջնորդուելու էին ընդհանուր սարսափներով:

Եթէ մեր խումբէն մէկ քանիներ սկիզբը վերադարձուեր էին Պոլիս՝ այդ շնորհը արդիւնք էր մայրաքաղաքի օտար շրջանակներէ ի գործ դրուած բացառիկ ննշումներու և կարգ մը անձնական կապակցութեանց: Թէ ի՞նչ փրկութիւն կրնար տակաւին յուսացուիլ մեզ համար, հայաջինջ քաղաքականութեան այնքա՛ն յառաջացած ու բորբոքեալ այդ վայրկեանին՝ դժուար էր գուշակել:

Կէս գիշերուան մօտ, փողոցի դռան մեղմօրէն բաղխուիլը լսեցինք: Տան մուտքը հաստ գերանով մը ամրացուցած էինք իբր կանխագգուշութիւն: Կը խորհէինք, թէ կոտորածի պարագային, երբ յարձակում գործուէր, կրնայինք, մինչև դռան բռնաբարուիլը, մէկ երկու վայրկեան շահիլ, տանը ետեւի կողմէն փախչելու համար:

Անձայն քայլերով իջանք վար, ու հարցութորձէ ետք, ներս ընդունեցինք տեղական հայերէն պատուական բարեկամ մը:

«Ողջո՛յն, խեր ըլլայ» բառերով դիմաւորեցի զինք: - «Աստուած օգնական» պատախանեց: - «Աստուած պահապան» յարեցի:

Եկեղեցականի ու աշխարհականի միջև բարեւելու հնադարեան այդ ոճը երբեք այնքան նշանակալից չէր թուած ինձ, որքան՝ արհաւիրքի այդ երեկոն:

Սովորական ժամանակ կուսակրօն եկեղեցականին ուղղուած «Աստուած օգնական»ը իմաստը ունի գօրութիւն հայցելու, որպէսզի կարելը ըլլայ ստանձնուած լուծը համբերութեամբ տարուիլ:

Այդ իրիկուան նոյն մաղթանքը կը թուէր, մէկ կողմէ՝ կոչը ըլլալ գերբնական միջամտութեան և միւս կողմէ՝ ծաղրը կարծես անել մեր դրութեան:

Բարեկամնիս եկած էր իմացնելու, թէ քաղած ստոյգ տեղեկութեան համաձայն, քաղաքին ոստիկանապետը ծածկագիր հեռագիր մը ստացեր էր Պոլսէն՝ քստորականներուս վերաբերմամբ:

Այդ տեսակ հեռագիրներ շատ էին հասած անցեալին մէջ, կորգե-

լու համար մեր խումբէն ընտրելագոյն տարրեր և առաջնորդելու
զանոնք դեպի սպանդանոց: Ի՞նչ անակընկալ կ'սպասեր մեզ
արդեօք առաւօտուն: Անկարելի էր չվրդովիլ: Անքուն գիշերներու
շարքին վրայ հատ մըն ալ կու գար աւելնալ:

Յուզումը լուսեան կը դատապարտէր զմեզ: Խոհեմութիւն կը
սեպէինք նրազն ալ մարել:

Մութին մէջ կը նստէինք անշարժ ու տեսակ մը ֆիզիքական
անեացումով ազատագոյն թռիչք կը պարգեւուէր մեր հոգեկան
վերացումներուն:

Բոլորովին լքուած չէինք զգար սակայն ինքզինքնիս
մանաւանդ երբ կարեկցութեամբ թրթուռն մէկ քանի աստղեր
իրենց շողը կը կաթեցնէին մեր պատուհանէ ներս:

* * *

Երկուշաբթի առաւօտ, ոստիկաններ շրջանը կ'ընէին աքտրա-
կաններէս բնակուած տուներուն՝ իւրաքանչիւրս կառավարչատուն
հրաւիրելու համար:

Պոլսէն յատկապէս դրկուած նիւաղներ էին ասոնք, Չանդըրը-ի
մթնոլորտը թունաւորող:

Հայոց դէմ կը հայհոյէին շարունակ որպէս դաւանաններու և
պատճառ կը դառնային անվերջ գրգռութեանց: Այդ օրը սակայն,
երեսնին ժպտուն էր աւելի: Զրոյց մը կը շրջէր, թէ ազատութիւն
պարգեւուած էր մեր աքտրի կաշկանդումէն:

Ոստիկաններու զուարթութիւնը չէր կրնար անշուշտ ատկէ
պատճառուած ըլլալ:

Ի՞նչ նոր դաւադրութիւն թաքնուած էր արդեօք իրենց
գոհունակութեան ետեւ:

Վերջապէս ուղղուեցանք դեպի կառավարչատուն, ուր ոստիկա-
նապետը Պոլսէն հեռագրուած անուանացանկ մը կարդալէ ետք,
հանդիսաւորապէս ծանոյց, թէ բարեխնամ կառավարութիւնը նե-
րում շնորհած է այդ անձերուն արտօնելով, որ Պոլսէն գատ
Թուրքիոյ ուզած քաղաքնին երբան ու բնակին: Աւանդական
«ալլահ էօմիւտլեր վերսին»ը ստիպուած էինք արտասանել՝ մտովի
գայն վերածելով անշուշտ՝ «ալլահ էօլիւմլեր վերսին»ի:

Կարդացուած անունները՝ հոն գտնուողներուս համեմատ՝
երեսուն և հինգ էին թիւով, բայց հինգ անունի սխալով մը կը

յիշատակուէին նախապէս Պոլիս վերադարձուած ընկերներ՝ մինչ մեր մէջէն բացը կը մնային Գանիէլ Վարուժան, տօքթ. Ռուբէն Զիլինկիրեան [Սեւակ], Վահան Քէհեայեան, Օննիկ Մաղազանեան և Յարութիւն անուն հացագործ մը:

Իսկոյն խնդրեցինք ոստիկանապետէն, որպէսզի բարեհաճի թիւրխմացութիւնը հարթել, հարկ եղածը Պոլիս տեղեկագրելով:

Վստահ էինք, թէ վերոյիշեալ հինգն ալ պիտի կարենային ազատիլ մեզի հետ:

Բայց չարասիրտ պաշտօնեան, որ լաւ գիտէր շնորհուած ներումին իսկական իմաստը, ստիպուած կ'զգար տարբեր ընթացքի հետեւիլ:

Հոս, միջանկեալ ըլլալով պետք է յիշել, թէ հօրս դիմումներուն վրայ, դեսպան Մորկընքաւ փութացեր էր Թալէադի մօտ և պնդելով, թէ Չանդըրը անմեղ հայեր կան գթութեան արժանի, պահանջեր էր ազատ արձակել զանոնք:

Ջարդարար գազանը մերժեր էր Պոլիս վերադարձնել մեր խումբը, բայց խաբեպատիր գիշողութիւնն էր ըրեր արտօնելու՝ Թուրքիոյ մէջ մեր բնակավայրը ընտրել այլուր:

Առերեւոյթ բարեացակամութիւն ցոլացնող այս թոյլտուութիւնը, դիւային միջոց մըն էր մեր բնաջնջումը փութացնելու:

Հրոսակներ պատրաստ էին ամէն նամբու վրայ:

Ո՛ր հայը կրնար որեւէ միջոց կտրել այդ օրերուն, առանց դէպի մահ խիզախելու:

Արդ, Չանդըրը-ի ոստիկանապետը ստոյգ կը նկատէր ներման արժանացողներու մահացումը: Կը խորհէր, թէ մենք տեղւոյն ննշիչ մթնոլորտէն զզուած, պիտի անապարէինք հեռանալ դէպի երկաթուղւոյ գիծը կամ ծովեզերք:

Իր արբանեակներէն շատեր, կը մօտենային մեզի ու կը թելադրէին, որ մեկնինք:

Գալով այն հինգին, որ ստիպուած կ'ըլլային Չանդըրը մնալ ու այդպէսով թերեւս փրկուիլ, հարկ էր զանոնք ալ տեղափոխելու նարը գտնել:

Ոստիկանապետը իր դաւը լարեց ու յաջողեցաւ Պոլսէն նոր հրահանգ մը բերել տալ Սեւակի և ընկերներուն իբր բանտարկեալ Այաշ փոխադրումը հրամայող:

Նոյն օրը, ես ալ, խիստ նշանակալից նամակ մը ստացայ հօրմէս,

որ ըստ ժամանակի պահանջին՝ թուրքերէն գրուած էր ու հակառակ գրաքննուած ըլլալուն զինուորական իշխանութեան կողմէ՝ կը պարունակէր հետեւեալ պարբերութիւնը.- «Զմիւռնիա երթալու մասին **ճամբան Ապահովեան Էֆէնտիի** հետ տեսակցիլդ կը յանձնարարեմ. եթէ յիշեալ պարոնը պատշան նկատէ՝ կրնաս մեկնիլ»:- Այս հաղորդագրութիւնը կը փորձէր վնասապէս հասկցնել կեղծ ներումէն չօգտուելու անհրաժեշտութիւնը:

Երեսուն ընկերներ կրնայինք թերեւս հիւանդութիւն պատճառաբանելով ատեն մըն ալ հոն մնալ, կամ նոյն իսկ, Զանդըրը-ն բնակավայր ընտրել շնորհւած արտօնութենէն օգտուելով:

Բայց Սեւակի, Վարուժանի և միւս երեքին պարագան հիմա կը տարբերէր: Մեկնումը ստիպողական էր հռչակուած:

Դժուարաւ յաջողեցանք մեկուկէս օրուան յետածգում ձեռք բերել:

Քաղաքային կառավարչի տեղապահը իր զինուորական պատիւին վրայ կ'երդնուր ճամբաներու ապահովութիւնը: Կը պատահէր, որ այս հաւաստումէն միամտաբար քաջալերուէին ուրբ ազատ ընկերներ և, իրենք ալ, վարձէին երկու կառք, ընկերանալու համար մինչեւ Գաղատիա՝ Սեւակի խումբին:

Մեկնումի պատրաստութիւնները մինչ կը տեսնուէին, Սեւակ կու գար խնդրել ինձմէ, որ Աստուածաշունչ Մատեան մը հայթայթեմ իրեն համար: Անմահութեան ծարաւի իր հոգին կը փափաքէր աստուածային նշմարտութեանց լոյսին մէջ թեւածել:

Միակ նմոյշը որ քովս ունէի, յանձնեցի իրեն:

Յայտնեց, թէ ծայրէ ծայր պիտի կարդար գայն:

1915 Օգոստոս 13-ը, որ հինգշաբթիի կը գուգադիպէր, չարաստիկ ու եղերական շունչով էր տոգորուած:

Առջի գիշերը յատկանշուեցաւ ահագոյեցիկ երազներով, որոնք խոռվեցին շատերուս քունը և քանիցս արքնցուցին գմեզ ընդոստ: Կէս գիշերին՝ մեր տան աքաղաղը երեք անգամ իր ձայնը հնչեցուց չարագուշակ ոգիի դերը կատարելով կարծես:

Արշալոյսը կը յամենար խաւարը փարատել:

Արդեօք կ'ամչնա՞ր լոյսով ողողել ոճրաբեմը, ուր հանճարներ պիտի խողխողուէին ու նահատակութեան հսկայ կոթող մը պիտի բարձրանար իբր յաւիտենական բողոք ընդդէմ թուրք բարբարոսութեան:

Մութնուլուսուն արդէն հաւաքուած էինք Չանդըրը-ի կամուրջին գլուխը, ողջերթ մաղթելու համար մեր տարաբաղդ ընկերներուն:

Կառավարութիւնը երկու կառք պատրաստած էր Սեւակի խումբին համար ու մէյ մէկ ալ պահակ նշանակած:

Միւս ութը ընկերները յուսախաբ եղան իրենց վարձած կառքերուն մէկուն չերեւնալովը ու, վերջին պահուն, ստիպուեցան նամբորդութիւննին յետաձգել:

Դժուար կ'ըլլար սակայն, Այաշ մեկնող հինգ ընկերներէն բաժնուիլ:

Ողջագուրուեցանք կրկնակի համբոյրներով: Ոստիկանները վերջապէս հրամայեցին մէկդի քաշուիլ: Կառքերը անցան նակատագրային կամուրջէն, ուղղուելու համար դէպի Թիւնէյ...:

Մահուան արշաւանքն էր այս:

* * *

Օրը տարաժամած էր արդէն ու բուեր կ'սկսէին երդիքներու վրայ թառիլ ու մերթ մթնոլորտը վրդովել մահերգակ շեշտերով, երբ երկու ծանօթ կառքեր մուտք կը գործէին Չանդըրը-ի շուկան... իրենց առաւօտեան նամբորդներէն պարպուած:

Այաշի երեք օրուան համբան ինչպէ՞ս եօթը ժամուան էր վերածուած:

Ո՞ւր էին հայ հանճարի, ազգասիրութեան և հաւատքի մարմնացումները, որոնց նակտին մեր դրոշմած համբոյրները դեռ կորուսած ըլլալու չէին իրենց ջերմութիւնը:

Սարսուռը, որ կ'անցնէր իւրաքանչիւրիս մարմինէն, բաւական էր կաթուածահար ընելու ամէնքս:

Կառապաններէն մէկը կը յանդգնէր ահաւոր գաղտնիքը յայտնել նկարագրելով, թէ ինչպէս, Թիւնէյ հասած էին անվտանգ, ու տեղւոյն պահականոցը նաշելէ ետք, կրկին նամբայ ելած: Հինգ վայրկեան ետք, Թէքէ Պուրնույի բարձունքին վրայ, դիմաւորուած էին դաշոյններով միայն գինուած տասը հոգինոց հրոսախումբէ:

Կառապանները ձիերը մտրակեր ու սպառնացող վտանգէ ազատիլ էին փորձեր, յաջողութեան ամէն յոյսով:

Տարագրուող մեր ընկերներու ապահովութեան պատասխանատու ոստիկանը բռնութեամբ կեցուցեր էր կառքերուն սլացքը:

Երբ միւս պահակը ուզեր էր գէնքի դիմելով կացուքիւնը փրկել, առաջին սրիկան արգիլեր էր գայն խստիւ:

Յետոյ, վար էր իջեր կառքէն ու պահանջեր, որ դրամնին յանձնեն:

Եօթանասուն հնչիւն ոսկի գրպանելէ ետք **«գաթլընըզա ֆէրման վար»** [չարդուելնուդ հրովարտակը ելած է] ըսելով հրամայեր էր դահիճներուն, որ մօտակայ ձորակը իջեցնեն հինգ ընկերները ու մահացնեն զանոնք...:

Նոյն գիշերն իսկ՝ այս ամէնը պատմող կառապանը սաստկապէս կը ծեծուէր ոստիկաններո՞ւ կողմէ, իր անգաղտնապահութեան համար:

Բայց եղեռնին մանրամասնութիւնները շուտով կը տարածայնուէին, մատնելով զմեզ հոգեկան աննկարագրելի կսկիծի:

Թիւնէյի պահականոցը նոյն միջոցին գործող Յակոբ անուն ծեփարարի մը գաղտնի վկայութեամբ, ռհիրէն օր մը առաջ, կառապան Իսմայիլ Թիւնէյ ժամաներ էր Չանդըրը-ի ոստիկան գինուորներու վատահամբաւ հրամանատարին, Իթթիհատի շնական ներկայացուցչին [Cemal Ogguz] և տիրահոլչակ ոստիկանապետին կողմէ ու մօտակայ գիւղ մը երթալով հաւաքեր էր տասը հրոսակ:

Ասոնց գլխաւորն էր Ալօ անուն աւագակապետը: Ասոնք նստեր էին մարգագետնին վրայ ու ծրագրեր ամբողջ սպանող: Յետոյ գացեր էին ընտրել բուն վայրը, ուր ռհիրը պիտի գործադրուէր:

Սպանութեան օրը Իսմայիլ հանդիսատես էր եղեր նախնիրին՝ Սելակի նախապէս ըրած սպառնալիքը գործադրած ըլլալու գոհունակութեամբ:

Նոյն կէսօրէն ետք, ոստիկան-գինուորներու **«քէմիք գըրան»** [ոսկոր կտրող], մականունեալ հրամանատարը **«ինըրաթ վուզու պուլտո՞ւ մը»** [գործադրուեցա՞ւ] հեռաձայներ էր Թիւնէյի պահականոցը:

Ասկէ գատ ապացոյցը կար, թէ չորս կառքերու Թիւնէյէ անցնելիքը տեղեկացուած էր հրոսակներուն: Քանզի առաջին երկուքին հաշիւը մաքրելէ ետք, սպասեր էին ուրիշ երկու կառքի եւս, որոնք նոյն օրը ճամբորդել մտադրող բայց գրեթէ հրաշքով ետ մնացող մեր ութը ընկերները պիտի բերէին:

Անոնց չգալովը՝ հրոսակները սխալմամբ յարձակեր էին նոյն ճամբէն անցնող երկու բոլորովին ուրիշ կառքերու վրայ, ուր վեց

յոյն ու երկու հայ նորագիր գիւնորներ կային, և խողխողեր զանոնք:

* * *

Սարսափը զոր ապրեցանք՝ չարաչար հիւժեց մեր մարմինը:

Ինչպէ՞ս կարելի էր մարսել Վարուժանի և Սեւակի պէս տաղանդներու այնքան անարժան և ստոր թուրքերու կողմէ վատաբար բնաջնջուելուն զաղափարը: Բոլոր նահատակուողները տիպարներ էին հայ արժանիքի:

Սուգը կ'ընկնէր մեզ ծայր աստիճան, և արդար ընդվզումը վրէժ կը գոռար մեր ներսիդին:

Մինչեւ ե՞րբ քաղաքակիրթ աշխարհը պիտի հանդուրժէր թուրք բարբարոսութեան անզուսպ պոռթկումին:

Գործուած նախնիքները բաւական էին քարերն իսկ ցնցելու:

Ոնիրին գիշերը, երկրաշարժի ցնցում մը զգացուեցաւ, և յաջորդ օրը զրոյցը լսեցինք, թէ *«լոյս էր իջեր»* նահատակուողներուն վրայ:

Աստուածային ցասումի և օրհնութեան այս կրկնակ *«նշան»*ները պահ մը խուճապի մատնեցին Չանդըրը-ի մոլեռանդ թուրքերը: Արդիւնքը այն եղաւ, որ խստութիւնները քիչ մը մեղմացուին:

Բայց շատ չանցած՝ Գաղատիոյ հայակեր կուսակալի փոխանորդը, Աթըֆը Գասթեմունի կը փոխադրուէր պաշտօնի բարձրացումով, իբր լիազօր կուսակալ:

Քէլէկեան կը քշուէր դէպի Սեբաստիա:

Կ'սկսէինք երկու սուրի մեջտեղ տուայտիլ: Ճամբորդելը՝ վտանգաւոր, հոն մնալը՝ աղէտալի:

Վարուժանի և Սեւակի նահատակութենէն երկուքուկէս ամիս ետք, ստիպուեցայ նամբորդել դէպի Գաղատիա:

Անցայ Թիւնէյէն ու Թէքէ Պուրնուէն:

Իջայ ձորակը որու մէկ կողմը սեզեր կ'անէին, իսկ միւս կողմը փոքրիկ աւազան մըն էր գոյացած:

Տեսայ քիչ անդին կիսաթաղ ոսկորները մեր *հերոսներուն*:

Գլխաբաց կանգնեցայ անոնց առջեւ և արտասանեցի *«Հոգւոց»* աղոթքը: Յօշոտուած մարմիններ էին ատոնք:

Կը թուէր, թէ վայրագ գագանները յաջողեր էին մահացանել Սեւակն ու Վարուժանը:

Բայց այսօր, անոնք և ընկերները, կ'ապրին տակաւին իրենց արտադրութիւններով ու թողուած անջինջ տպաւորութիւններով:

Հայու ոգին յաւիտենապէս պիտի ներշնչուի իրենց գաղափարականներով ու դիւցազնական օրինակով:

Հայաստանեայց եկեղեցին, այս նոր մարտիրոսներուն խանդովը հրդեհուած, պիտի անշուշտ չուշանայ իր վերածնունդը ունենալ:

Ն^օրբ արդեօք, կարելի պիտի ըլլայ, այդ նահատակներուն նուիրական նշխարները փոխադրել Հայաստան ու անոնց վրայ կանգնել անար մը, ուրկէ մշտատեւօրէն նառագայթեն այն լուսաւոր սկզբունքները, որոնց համար իրենք զոհուեցան:

**«Հայաստանի Կռչնակ» - Յովնան Մ. Վրդ. Կարապետեան
[21, Յունուար 1922]**

ՀԱՐՑԱԶՐՈՅՑ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆԻ ՀԵՏ
Վարեց՝ ՊԷՊՕ ՍԻՄՈՆԵԱՆ

Նիսի Ռուբեն Սեւակի յիշատակին տան մէջ, դեմ յանդիման բանաստեղծին և մեծ հայրենասերի եղբորորդիին՝ Յովհաննէս Զիլինկիրեանին հետ, ունեցանք հետեւեալ հարցազրոյցը, որուն սիրով ընդառաջեց պատասխանել ան:

Արդարեւ, Յովհաննէս Զիլինկիրեան ծանօթ անուն մըն է Հայրենիքի և Սփիւռքի մէջ: Ան յատկապէս Իսթանպուլէն դուրս գալէ ետք, նուիրուեցաւ, առաջին հերթին, իր 1915-ի Մեծ Եղեռնի նահատակ գրագէտ հօրեղբոր յիշատակի վերածննդեան: Նիւթական և բարոյական մեծ գոհողութիւններու յանձնառու ըլլալով վերականգնեց Մեծ Նահատակին գրական հասարակական և բարոյական կերպարը՝ յիշատակը յաւերժացնող ձեռնարկներով: Անոր յիշատակին վրայ ձգուած ստուերը անհետացնելու նախանձախնդրութեամբ:

Բաց աստի, Յովհաննէս Զիլինկիրեան ասպարէզ եկաւ նաեւ իբր հրապարակագիր, և Ռուբեն Սեւակի ազգային մտածողութեան հետքերով հակաթուրք պայքարի ձեռնարկեց 1915-ի հայոց դեմ գործադրուած ցեղասպանութիւնը վերագրելով սիոնիստական-բանբուրքիստական ցեղապաշտական ծրագիրի մը գործադրութեան: Զխնայելով նաեւ անոր հետ մօտաւոր և հեռաւոր առնչութիւն և մեղսակցութիւն ունեցող շրջանակներուն և դեմքերուն...: Այդ լուսարձակին տակ համոզուած գիծ մը կարելի է նկատել Յովհաննէս Զիլինկիրեանի մտածողութեան, որ կ'արտայայտուի իր հրապարագրական էջերէն, ժամանակակից ազգային և միջազգային իրադարձութիւնները դատելու յախուռն ոնը և հայ ժողովուրդի և Հայաստանի արեւելումին մէջ ռուսամէտ քաղաքականութեան պաշտպանութիւնն ու ջատագովումը:

Հեղինակ է «Ռուբեն Սեւակ և Փրցուելիք Ուղեղներ» գիրքին:

Քանի մը ստուար հատորներ կրնան կազմել իր ստորագրած յօդուածները:

Ինչպէս իր յօդուածներուն մէջ, իր հետ մեր վարած հարցազրոյցին տուած իր պատասխաններն ալ, կը յատկանշուին խիստ և անխնայ դատումներով:

Պ. Ս

Ա. ՀԱՐՑՈՒՄ.- Նիսի հայկական գաղութի մէջ Ռուբէն Սեւակի անուան յիշատակի թանգարանը, որ Ձեր ձեռակերտն է, ներշնչող ներկայութիւն մըն է Նիսի տեսարժան վայրերուն առընթեր: Ինչպիսի աշխատանքներ կը շարունակուին հոն: Անձնապէս գոհ եք արդիւնքէն՝ յատկապէս այցելուներու տպաւորութիւններու ընդմէջէն: Կ'ուզէի՞ք կարգ մը նշանաւոր այցելուներու անուններ բուել՝ Հայրենիքէն և Սփիւռքէն:

ՊԱՏԱՍԽԱՆ.- Ձեր այս հարցումին պիտի պատասխանեք, 1985-ին հրատարակուած «Ռուբէն Սեւակ և Փրցուելիք Ուղեղներ» անունը կրող գիրքէն նախադասութեամբ մը՝ «Ազգ մը, որ իր հերոսները կը մոռնայ, ինքն ալ մեռնելու դատապարտուած է»:

Երբ այսօր հայ ազգը, ընդհանուր առմամբ «Եղեռնը» և «Արեւմտեան Հայաստան»ը մոռցած է, մենք չենք զարմանար, որ Նիսի հայութիւնը և Սփիւռքի հայութեան մեծամասնութիւնը՝ Ռուբէն Սեւակին ո՞վ ըլլալը չի գիտեր և Cote D'Azur-ի մէջ «Ռուբէն Սեւակի անուան Յիշատակի Տուն»ին գոյութենէն լուր չ'ունենար, և լուր ունեցողներն ալ անտարբեր կը մնան:

Հակառակ հայ ժողովուրդին մեծամասնութեան՝ իր պատմութեան, իր հերոսներուն և իր նահատակներուն հանդէպ ցուցաբերած աններելի անտարբերութեան, գիտակից փոքրամասնութիւն մը՝ երկիւղածութեամբ կ'այցելէ Ռուբէն Սեւակի յիշատակին յատկացուած այս տունը:

Այստեղ, նախ կ'ուզենք նշել, վերջերս Ռուբէն Սեւակի տունը այցելած անձի մը անունը, որ մեզի համար անմոռանալի պիտի մնայ:

Զօրավար Դրոյին քարտուղարը եղած, դաշնակցական երեւելիներէն՝ մեծ հայրենասէր Յովիկ Էթեանն է ան:

1990-ին, Ամերիկայէն մեզի գրած մէկ նամակին մէջ, Երուանդ Ազատեանին թելադրանքին ընդառաջելով, ան փափաք կը յայտնէր, այցելել Ռուբէն Սեւակի Յիշատակի Տունը:

Բայց, Յովիկ էքեանին համար իր այս փափաքը կարելի եղաւ իրականացնել՝ միայն ինը տարիներ վերջ, 25 Յուլիս 1999-ին, երբ ան 86 տարեկան էր արդէն:

Եւ Յովիկ էքեան, իր գարմիկին՝ Էտմոն Ղազարեանին առաջնորդութեամբ Քօթ Տ'Ազիւր եկաւ և նախ իր փափաքովը Նիսի Հայկական եկեղեցիին մէջ Ռուբէն Սեւակի յիշատակին հոգեհանգիստ մը կատարել տալէ յետոյ, այցելեց Ռուբէն Սեւակի Յիշատակի Տունը:

Եւ մեկնելէ առաջ, հետեւեալ տողերը արձանագրեց այցելուներու յատուկ յիշատակի մատեանին մէջ:

«ՄԵԾԱԳՈՅՆ ՀԱՃՈՅՔՈՎ ԵՒ ԵՐԱԽՏԱԳԻՏԱԿԱՆ ՋԳԱՑՈՒՄՆԵՐՈՎ ԱՅՑԵԼԵՑԻ ՄԵՐ ՄԵԾԱՆՈՒՆ ԲԱՆԱՍՏԵՂԾ ԵՒ ԱՆԳԵՐԱԶԱՆՑԵԼԻ ՀԱՅՐԵՆԱՍԷՐ ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ ՅԻՇԱՏԱԿԻ ՏՈՒՆԸ: ԵՒ ԻԲՐ ՀԱՅ ԻՆՔՁԻՆՔՍ ՇԱՏ ՀՊԱՐՏ ՋԳԱՑԻ:

Յուլիս 25, 1999, ՅՈՎԻԿ ԷՔԵԱՆ»:

Եւ Յովիկ էքեան, Ամերիկա վերադառնալէ յետոյ, մեզի ուղարկեց շնորհակալութեան նամակ մը և Ռուբէն Սեւակի տունը այցելած օրը, իր լուսանկարչական գործիքով նկարահանուած պատկերները:

Եւ քանի մը օր ետք, մենք ալ, մեր կողմէ, Յովիկ էքեանին շնորհակալութիւն յայտնելու համար, Ամերիկա՝ Ֆրեզնօ իր բնակարանը հեռաձայնեցինք: Բայց իր դուստրը խօսեցաւ ընկալուչէն: Եւ ան մեզի հետեւեալ ցաւալի լուրը հաղորդեց.

«Մեր հայրը երէկ հողին յանձնեցինք»:

Մենք կը հաւատանք, որ Յովիկ էքեան՝ տեսակ մը «ուխտագնացութեան» եկած էր իր շատ սիրած բանաստեղծին՝ Ռուբէն Սեւակի Յիշատակի Տունը:

Եւ պարտականութիւնը կատարած ըլլալու գոհունակութեամբ, վերադարձած էր Ամերիկա, իր բնակավայրը: Եւ հոն մահացած:

* * *

Պրն. Սիմոնեան, ձեր փափաքին ընդառաջելով Ռուբէն Սեւակի Յիշատակի Տունը այցելած, երեւելի անձնաւորութիւններէն մէկ մասին անունները տալու ջանանք: Վարդգէս Պետրոսեան [Ս. Հ. Գրողներու Միութեան Քարտուղար]: Շահէն Խաչատուրեան [Հ. Հ. Ազգային բանգարանի տնօրէն]: Վլատիմիր Մովսէսեան [Ս. Հա-

յաստանի Կ. Կ. Քարտուղար, յետոյ՝ Հ. Հ.-ի նախարար]: Վահագն Տատրեան [Պատմագետ], Երուանդ Ազատեան [Ա. Մանուկեան հիմնարկին նախագահ]: Պերն Սեդրակեան [Հ. Բ. Ը. Մ.-ի փոխ նախագահ]: Ջօրավար Արամ Գարամանուկեան [Ամերիկա]: Յովհաննէս Չեքիեան [Հ. Հ. choral-ի վարիչ]: Carzou [Գառնիկ Զուլեմեան գեղանկարիչ Ֆրանսա]: Տարօն Եպիս. Ճերէնեան [Առաջնորդ Հարաւային Ֆրանսայի հայոց]: Գնէլ Արքեպս. Ճերէնեան [Առաջնորդ Դամասկոսի]: Գարեգին Արքեպս. Պէքնեան [Առաջնորդ Գերմանիոյ]: Տիրայր Արքեպս. Մարտիկեան [Առաջնորդ Պուլկարիոյ և Ռումանիոյ]: Պարգեւ Արքեպս. Մարտիրոսեան [Առաջնորդ Արցախի] Թորգոմ Արքեպս. Մանուկեան [Պատրիարք Երուսաղէմի]: Գարեգին Բ. [Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ]:

Հ.- Իբրև Հայկական Դատին անխոնջ ծառայող ազգային և հրապարակագիր, ինչպէ՞ս կը գնահատէք Հայկական ցեղասպանութեան նանաչման ուղղութեամբ ցարդ տարուած աշխատանքները: Այս հանգրուանին ի՞նչ դեր կը վերապահէք հայրենի անկախ պետականութեան և Սփիւռքի քաղաքական հոսանքներուն: Համագործակցութիւն մը անհրաժեշտ է հայրենիքի և Սփիւռքի միջեւ:

Պ.- Այս մասին, «ՆԱՅԻՐԻ»ի մէջ, հինգ տարիներէ ի վեր, տեւական կ'արտայայտուինք մեր գրութիւններով:

Այստեղ կուզենք հետեւեալ տողերը աւելցնել.

Սովետական Հայաստանը կործանող Լեւոն Տէր Պետրոսեանը՝ ամերիկացիներուն ննշումով, գրեթէ ուրբ տարիներու ընթացքին, իր քաղաքականութեան նպատակը ըրած էր՝ թուրքերուն հետ բարեկամական կապեր հաստատել:

Եւ թուրք-հայ բարեկամութեան ստեղծման «արգելք» մը վերցնելու մտքով, Լեւոն Տէր Պետրոսեանը Հայաստանի մէջ, ուրբ տարիներ շարունակ ջանաց «Եղեռն»ը մոռցնել տալ հայ ժողովուրդին:

Եւ այս նպատակին հասնելու համար, Հայաստանի դպրոցներուն մէջ, Եղեռնի մասին գրութիւնները և ասոնց դասաւանդումը ուզեց վերցնել իր կրթական նախարարին՝ Աշոտ Բլէեանի մեղսակցութեամբ:

Մենք կը հաւատանք, որ Լեւոն Տէր Պետրոսեանը, [անկախաբար իր գործած բազմաթիւ յանցանքներէն] ուրբ տարիներու ընթացքին «Եղեռն» մոռցնել տալու իր յանցագործութեան համար միայն, իբր «Ազգադաւ» դատուելու արժանի է:

Միայն այս պարագային է, որ կրկին հայ ժողովուրդին մէջ «Եղեռն»ի գիտակցութիւնը կրնանք վերստեղծել: Եւ միայն այն ատեն է, որ «Եղեռն»ի հանաչման համբան կրնայ բացուիլ:

Հ.- Ի՞նչպէս կը պատկերացնէք այսօրուան անկախ Հայաստանի արտաքին քաղաքականութիւնը իր անմիջական դրացիներուն և մեծապետական երկիրներուն հետ: Այդ շրջագիծէն ներս՝ տնտեսական բարելաւում և ազգային հարցերու լուծման [հիմնականին մէջ Արցախի կարգադրութիւն] հնարաւորութիւններ կը գտնէ՞ք:

Պ.- Այսօրուան Հայաստանի պետութեան քաղաքականութիւնը ջանանք բացատրել Ռուբէն Սեւակի դեռ 1911-ին գրած մէկ նախադասութեան մէջ քերումով:

«... Ու մենք Ուրուական Նաւին պէս ԿԸ ԾԱԾԱՆԻՆՔ ԴԵՌ, անխորասուզելի, բայց և հաստատ ցամաքի մը հասնելու անկարող»:

Եւ Հայաստանի պետութիւնը այսօր, Ամերիկային կը քծնի և կ'ընդունի անոր բոլոր պայմանները, անկէ պարտքով դրամ կարենալ առնելու յոյսով: Եւ ուրը տարիներու տեսողութեամբ Լեւոն Տէր Պետրոսեանին գործադրած երկդիմի և շողոքորթ քաղաքականութիւնը կը շարունակէ, շատ քիչ տարբերութիւններով:

Հայաստան իր այս տարտամ քաղաքականութիւնը մինչեւ ե՞րբ պիտի շարունակէ- չենք գիտեր:

Բայց գիտենք, թէ թուրքերը իրենց հայատեաց քաղաքականութենէն մէկ սանդիմեքը չեն շեղած:

Ընդհակառակը, թուրքերը օրէ օր քիչ մ'աւելի կը սաստկացնեն իրենց «փրփականտ»ը, թէ հայերը ջարդած են թուրքերը:

Եւ այս նպատակով վերջերս Իգտիբի մէջ, 60 մեքր բարձրութեամբ յուշարձան մը կանգնեցին հայերուն թուրք ջարդած ըլլալը խորհրդանշող:

Եւ այս յուշարձանը Հայաստանի սահմանին մօտ, բարձունքի մը վրայ բարձրացուցին, որ Հայաստանի հայերը տեսնեն և հասկնան «ԻՐԱԿԱՆ ՈՒԹԻՒՆԸ»:

Այսօր Պոլսոյ մէջ ապրող հայ երիտասարդ սերունդը, տարուելով թրքական քարոզչութենէն, կը հաւատայ, որ հայերն են ջարդարարները:

Եւ շատ հեռու չէ այն օրը, երբ թուրքերը, ամբողջ աշխարհի պիտի հաւատացնեն, թէ հայերն են «ՅԵՂԱՍՊԱՆ ՆԵՐԸ»:

Մեզի պէս, իր մեծամասնութեամբը՝ «անգգայ» ազգ մը, արժանի է նման անուանարկումի:

Գալով Արցախի հարցին՝ Ամերիկայի Արտաքին գործերու նախարար հրեայ Մատլէն Օլպրայթ, վերջերս բուրքերուն և ազերիներուն միջեւ Պոլսոյ մէջ հանդիպում մը պատրաստելու վրայ է:

Տեսնենք, թէ հրեայ վիուկը ի՛նչ խաղեր, ի՛նչ դաւեր կը պատրաստէ հայ ազգի գլխուն:

Հ.- Ծանօթ է Ձեզի, թէ «ՆԱՅԻՐԻ»-ի մէջ ստորագրած Ձեր հերթական կանոնաւորութեամբ յօդուածները, որոնք սրտցաւ հայու և հասարակական գիտակցութեան տէր մտաւորականի մտորումներն ու հայեացքները կ'արտայայտեն, ընթերցողներու դրական և ժխտական հակազդեցութիւններուն կ'արժանանան: Թիրախը՝ Ձեր անձնական պրպտումներուն և տպաւորութիւններուն իբր արդիւնք՝ Ձեր հետեւցուցած ճշմարտութեան հայ ընթերցողը հաղորդակից դարձնելն է: Կը խորհի՞ք, յատկապէս ի՛նչ կը վերաբերի ազգային-մշակութային ՆՈՒԻՐԱԳՈՐԾՈՒԱԾ արժեքներու մասին՝ յիշելու համար մի քանին, [Միխիթար Աբբահայր, Միքայէլ Նալպանտեան, Շնորհք Պատրիարք և այլն] ճշմարտութիւնները ըսելը օգտակար է:

Ձի՞ վնասեր մեր նոր սերունդի ազգային դաստիարակութեան:

Ձեր չափանիշով, վերջին հարիւր տարուան մեր պատմութեան մէջ, որո՞նք կը նկատէք այն մեծ հայերը, որոնք հայ ժողովուրդի պատմութեան իրենց նպաստը բերած են:

Պ.- Կը ներքէ՛ք՝ բայց մեզի համար անընդունելի է այս հարցումը՝ երբ կ'ըսէք, թէ Միխիթար Սեբաստացին, Միքայէլ Նալպանդեանը, Շնորհք Պատրիարք Գալուստեանը նուիրագործուած անձնաւորութիւններ են:

15 տարիներէ ի վեր մեր գրութիւններով այս կարգի անիրաւաբար «նուիրագործուած» անձնաւորութիւններուն իսկական դիմակները վար առնելու և անոնց հայ ազգին պատճառած վնասները բացատրելու կը ջանանք:

Աշխարհի վրայ, հայերէն գատ ուրիշ ազգ մը գոյութիւն չունի, որ իր կործանման կամ կրած կորուստներուն պատճառ եղող անձնաւորութիւնները կը փառաբանէ:

Այս անխաւաք փառաբանող անձնաւորութիւններուն մէջն են նաեւ՝ Ներսէս Վարժապետեան Պատրիարքը, Մաղաքիա

Օրմանեան Պատրիարքը և Գրիգոր Զօհրապը:

Ինչո՞ւ կը փառաբանուին մեր կարծիքով այս ազգավնաս անձնաւորութիւնները, որոնց բերած օգուտը, համեմատած իրենց հայ ազգին պատճառած վնասներուն՝ չնչին է:

Եւ մենք ինչո՞ւ պիտի փառաբանենք այս անձնաւորութիւնները, որոնք հայ ազգը խեղդաման ընող, մահասփիւռ շղթային օղակները եղած են:

Պիտի խնդրենք, կրկին մտածեցէք՝

«Մովէ ծով Հայաստան»էն ո՞ւր հասանք:

Ամէն ազգ իրեն վնաս հասցնող դաւանանքները կը դատէ և կը պատժէ:

Հայ ազգը ընդհակառակը, իր կործանման պատճառ եղող դաւանանքները կը փառաբանէ:

* * *

Կը հարցնէք, թէ՛ «մեր չափանիշով վերջին հարիւր տարուան մեր պատմութեան մէջ, որո՞նք կը նկատենք այն մեծ հայերը, որոնք հայ ժողովուրդին պատմութեան իրենց նպաստը բերած են»:

Թոյլատրեցէք, որ այս հարցումին պատասխանենք - Մեկ դարէ քիչ մը աւելի՝ հին շրջաններու մէջ ապրած ազգասէր կարգ մը հայերուն անունները նշելով:

1.- Այստեղ, նախ և առաջ, խոր երախտագիտութեամբ կ'ուզենք յիշել՝ «ՆԵՐՍԷՍ ԱՇՏԱՐԱԿԵՑԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ» որ 1800-թ. ներքէն սկսեալ Հայաստան մտնող ռուսական բանակները իբր հայ ազգին և Հայաստանին ազատարար դիմաւորած էր:

2.- ԻՄՐԱՅԷԼ ՕՐԻՆ՝ որ տեսնելով Արեւմտեան պետութիւններուն նենգութիւնները, Ռուսաստան երթալով Հայաստանը ազատագրելու ծրագիրներ մշակած էր:

3.- ԽԱԶԱՏՈՒՐ ԱԲՈՎԵԱՆԸ՝ որ մեզ համար ամենէն իրատես բանաստեղծ-գրող ու գործիչն է: Արովեանն է՝ իր մէջ մեծ իմաստութիւն պարփակող հետեւեալ խօսքերը ըսողը՝

«ԵԹԷ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՈՂԵՐՈՒՆ ՎՐԱՅ ՌՈՒՍ ԶԻՆՈՒՈՐ ՄԸ ՏԵՍՆԵՍ, ԽԱԶԱԿՆՔԷ»

4.- ՄԿՐՏԻԶ ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ մեր համոզումով՝ ամենէն աւելի քաղաքական հմտութիւն ունեցող անձնաւորութիւնն է: Մկրտիչ Փորթուգալեանն է՝ Արեւմտեան Հայաստանի հողերուն

վրայ Վանի մէջ առաջին հայկական քաղաքական կազմակերպութիւնը՝ «Արմենական»ը հիմնողը, երբ ուրիշներ ժընեւ կ'երթային կուսակցութիւն հիմնելու համար:

5.- ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆՆ՝ որ հայ գրողներուն մէջ ամենէն իմաստունն է: Ան է ընդդիմացողը՝ Հնչակեան կուսակցութեան մէկ թւին Ռուսիոյ մէջ հակացարական պայքար մղելուն: Ան արգելք ըլլալ ուզած է, որ հայ ազգը, ռուսերը թշնամացնելով, իր նստած նիւղը չկտրէր:

Եզրակացնենք՝

Մեզի համար անձի մը «հայկականութեան» չափանիշը՝ զանազան մարգերու մէջ իր կարողութիւնները չեն: Այլ՝ այս անձին հայ ազգին և Հայաստանին իսկական օգտին համար կատարած ծառայութիւնները:

Այս տեսակետով՝ մենք ամենէն աննշան, բայց իսկական հայրենասէր հայը աւելի օգտակար կը նկատենք բարձր կարողութիւններ ունեցող բայց, իսկութեան մէջ, հայ ազգին վնասակար եղող և մեծ անուն կրող անձնաւորութենէ մը:

ՀԵՌՈՒ ՄԵՆԷ ԱԽՏԱԳԻՆ ՄՏԱՒՈՐԱԿԱՆ ՆԵՐ...

... Դուք ցեղին ուղեղն էք: Բայց երբ այդ ուղեղը ուրիշ կերպ չի կրնար խորհիլ քան յուսահատեցնելով մեր կենսունակութիւնը, մենք պիտի փրցնենք ու նետենք այդ ուղեղը:

Հոգան 1911 - Ռուբէն Սեւակ

Զօն՝ 24 Ապրիլ 1915-ի անմահ նահատակներուն

Բայց Ռուբէն Սեւակ չկրցաւ փրցնել այդ ախտագին մտաւորականներուն ուղեղները:

Որովհետեւ թուրքերը տեսան հայկական վերածնունդին իրենց համար ներկայացուցած վտանգը:

Եւ թուրքերը աւելի շուտ շարժեցան: Եւ սիոնիստ իթթիհատականները 24 Ապրիլ 1915-ին փրցուցին Ռուբէն Սեւակի գլուխը և «նահատակեցին» հայ ազգին վերածնունդի յոյսերը: Եւ հայ ազգին նակատագիրը մնաց, մեծ մասամբ, այդ ախտագին մտաւորականներուն ձեռքը:

Մինչեւ 24 Ապրիլ 1915 և անկէ մինչեւ մեր օրերը, Ռուբէն Սեւակին մատնանշած այս նեխած ուղեղներով մտաւորականներուն՝ հայ ազգին որքա՛ն չարիք պատճառած ըլլալը հասկնալու համար, մեծ հմտութիւն ունենալու պէտք չկայ:

Իր սրտին մէջ քիչ մը հայկական «ջիղ» ունեցող մէկը գիտէ, թէ ուրկէ ո՛ր հասած է այսօր հայութիւնը:

* * *

Եղեռնէն յետոյ, Արեւմտեան Հայաստանի խլեակներով կազմուած հայկական Սփիւռքը, դժբախտաբար բաւական մեծ չափով ենթարկուեցաւ Դաշնակ կուսակցութեան գաղափարականին մաս կազմող այս ախտագին մտաւորականներուն ազդեցութեան:

Մեզի համար, այս ախտագին մտաւորականներուն մէջ, իբր

ազդեցիկ «գրիչ», առաջնակարգ տեղը կը գրաւէ Յակոբ Օշական:

Վերլուծելու և քննադատելու տաղանդ ունեցող, բայց մեծամոլութեան և ինքնահաւանութեան ախտով վարակուած այս քննադատը՝ Սփիւռքի և նաեւ Հայաստանի մտաւորականներուն վրայ շատ քանդիչ և վարակիչ ազդեցութիւն գործած է:

Եւ մինչեւ այսօր, մանաւանդ Հայաստանի մտաւորականները, որոնք սովետական շրջանին, արտասահմանի մտածողութեան մասին իսկական գաղափար մը չունէին, «Հեռուին սուրբը գօրաւոր է» կարգախօսին մտայնութեամբ, Յակոբ Օշականի վերլուծելու և քննադատելու կարողութեան ազդեցութեան ենթարկուելով, անոր գրածներուն իբր «Աւետարան» հաւատացին և մինչեւ հիմա ալ կը շարունակեն հաւատալ: Բայց, իրականութեան մէջ, ո՞վ էր Յակոբ Օշական:

«Narcissisme»ի հիւանդութենէ վարակուած այս մտաւորականը՝ ինքզինքը այնքան մեծ կը տեսներ, որ կ'ուզէր Սուրբ Մեսրոպ Մաշտոցի քովը, Օշականի մէջ, իր դամբարանը ունենալ:

Նայեցէք իր գրութիւններուն: Հայ ժողովուրդին ենթարկուած մեծ աղէտին մասին քանի՞ տող պիտի գտնէք:

24 Ապրիլ 1915-ը, հայ մտաւորականութեան նահատակման խորհրդանիշն է: Բայց ինչո՞ւ Յակոբ Օշականը իր վերլուծելու կարողութիւնը չէ գործածած՝ որ մտաւորական նահատակներուն իսկական և ամբողջական ողբերգութեան պատմութիւնը գրէ:

Ռուբէն Սեւակ, այս ախտագին մտաւորականներուն մասին, սապէս ըսած է. «Որբուկի պէս անտէր ցեղ մը հուժկու, ու լուսեղ ու սիրտբուխ բարբառի մըն է ծարաւ, իսկ մեր գրագէտները հանելուկային, առեղծուածային խաւարակուռ բաներ կ'ըսեն իրեն, ու մեր քերթողները գրիչնին հայ արեան մէջ թաթխելէ վերջ՝ չինարեն տաղեր կը գրեն որպէսզի մարդ չհասկնայ...»:

Եւ Յակոբ Օշական, իր «վաւերական գրող»ի լոգունքով, շատ մը գրողներ հեռացուց հայութեան ազգային ցաւերով և նպատակներով գրադելէ: Եւ զիրենք դարձուց դէպի իրենց ներքին աշխարհը, և հեռացուց իրականութիւններէ, և մանաւանդ՝ հեռացուց հայկականութենէ:

Նայեցէք Յ. Օշականին ձեռով մը «հոգեգաւակ» եղող բանաստեղծ Նիկողոս Սարաֆեանի գրութիւններուն [1902-1972]: Այս բանաստեղծը իսկական ներկայացուցիչն է **«արուեստը արուեստին**

համար» Յ. Օշականեան մտայնութեան:

Միջոց մը մեծ համբաւ շահած [չենք գիտեր ինչո՞ւ] Նիկողոս Սարաֆեանին գրութիւնները, այսօր ո՞վ կարդալու համբերութիւնը ունի, որ վերլուծումն է իրականութենէ հեռու՝ երեւակայական աշխարհի մը:

Թերեւս զանոնք «մեծատաղանդ» Գրիգոր Պըլտեանը կը կարդայ, որ Նիկողոս Սարաֆեանին մտերիմը և հետեւողը եղած էր:

Յակոբ Օշականին և իր հետեւորդներուն գրականութեան ըմբռնումին քանդիչ ազդեցութիւններուն պատճառաւ, հայկականութեան և հայկական պահանջատիրութեան կրած վնասները, մեր համոզումով, անհամար և անդարմանելի են:

Հայ ազգը այս «եսասեր» մտաւորականներուն պատճառաւ 1920-էն մինչեւ այսօր, 80 տարիներու տեւողութեամբ, շատ բան կորսնցուց և ասկէ ետք ալ պիտի շարունակէ կորսնցնել:

Հայրենի մտաւորականութիւնը, համայնավար վարչածելի շրջանին, Սփիւռքի մասին, Սփիւռքի մտայնութեան և կեանքին մասին իսկական գաղափար մը չունէին: Եւ մանաւանդ՝ ճշգրիտ տեղեկութիւն չունէին հայկական պատմութեան մասին, 1915-ի եղեռնին շուրջ: Եւ 1991-ին՝ այդ վարչածելի քանդուելէ ետք, շատ մը տկար հոգիներ, թերեւս ալ նիւթական դժուարութիւններու պատճառաւ, վարակուեցան դաշնակցական ցաղափարականէն, առանց գիտնալու, թէ իրականութեան մէջ ի՞նչ է այս կուսակցութիւնը և ինչ ըրած է հայութեան համար:

Հ.Յ.Դ.ի գաղափարականին յարած այս մտաւորականներէն մեզի համար ամենէն կարեւոր անձնաւորութիւններէն մէկը՝ Երեւանի համալսարանի հայ գրականութեան ամպիոնի վարիչ Հրանդ Թամրազեանն է: Մենք իր գրութիւններուն կը հետեւինք Սփիւռքի դաշնակցական մամուլին մէջ: Ան, հարիւրին հարիւր համեմատութեամբ Յ. Օշականի դպրոցին հաւատարիմ իբր աշակերտ, «Օշականեան ոգի»ով կը բնութագրէ հին և նոր հայ գրողները:

Բայց վերջերս [9-12-1999-ին], Հրանդ Թամրազեանի Փարիզի Հ.Յ.Դ.ի բանբեր «Կամք» օրաթերթին մէջ հրատարակուած յօդուածաշարքը, իսկական «գլուխ գործոց» մըն է:

Անդրանիկ Ծառուկեանին վերաբերող այս գրութեան մէջ, Երեւանի համալսարանի գրականութեան ամպիոնի վարիչը նայեցէք, թէ ինչ գրած է.

«Մեծ Եղեռնի նահատակների՝ Սիամանթոյի, Ռ. Սեւակի, Վարուժանի, Մեծարենցի վաստակը...»:

1908-ին Պոլսոյ մէջ, թորախտէն մահացած Միսաք Մեծարենցը ինչպէ՞ս կարելի է Եղեռնի նահատակներուն մէջ դասել:

Եթէ այս սխալը ընողը սկսնակ գրականագէտ մը ըլլար, թերեւս կրնայինք ըսել, թէ՛ նորեկ է: Բայց Երեւանի համալսարանին գրականութեան ամբիոնի վաստակաւոր վարիչ Հ. Թամրազեանին համար՝ իր գործած սխալը աններելի ամօք է:

Ա՛յ, կրնա՛ք երեւակայել, թէ այս գրականագէտին հասցուցած հազարաւոր համալսարանականները, հայկական պատմութեան այս ամենէն կարեւոր շրջանին՝ 1915-ի Եղեռնին մասին, ո՛ր աստիճանն ճշգրիտ գաղափար մը կազմած են:

* * *

Շատ անգամ ըսած ենք, թէ Սփիւռքը և մանաւանդ հայրենի մտաւորականութիւնը, 24 Ապրիլ 1915-ի Եղեռնին մասին, հարագատ ու ամբողջական գաղափար մը չունին:

24 Ապրիլ 1915-ը Պոլսոյ մէջ, հայ մտաւորականութեան թուրքերուն կողմէ ձերբակալման թուականն է: Բայց 24 Ապրիլ 1915-էն յետոյ, այս ձերբակալուած մտաւորականները ի՞նչ եղած են, ինչպէ՞ս նահատակուած են:

Սփիւռքի մէջ շատ շատեր և մանաւանդ Հայաստանի հայերը, շատ բան չեն գիտեր այս մասին: Այն աստիճան՝ որ «Սովետական Գրականութիւն» ամսագրի խմբագրապետ Ռուբէն Զարեանի պէս մտաւորական մ'անգամ, այդ տարիներուն, 24 Ապրիլ 1915-ի մասին լրիւ գաղափար մը չէ ունեցած:

Եւ այդ օրերուն, Աւետիք Իսահակեանը, իր գրոյցներէն մէկուն մէջ, իրենց կը պատմէ Ռուբէն Սեւակի ողբերգական պատմութիւնը: Եւ Ռուբէն Զարեան, այդ ամբողջ գիշերը, այս պատմութեան ազդեցութեան տակ կը մնայ:

Եւ հետեւեալ օրը, Ռուբէն Զարեան, գրականութեան պատմութեան մեծագոյն սխալներէն մէկը կը գործէ. իրեն ներկայացող երիտասարդ բանաստեղծ Պարոյր Ղազարեանին «Սեւակ» անունը տալով:

Ռուբէն Զարեան իր այս մասին մեզի գրած նամակին մէջ, հետեւեալ բացատրութիւնը կու տայ. «... եւ մտածեցի, թէ լաւ կը լինի, եթէ Պարոյրին կոչեմ Սեւակ, որպէսզի ողբերգականօրէն կեանքից

հեռացած մի Սեւակին շարունակի մի ուրիշ Սեւակ»:

Բոլորս ալ գիտենք, թե Ռուբէն Զարեանին բարի նպատակով կատարած այս ահաւոր սխալը, ո՛ր աստիճան շփոթութիւններու տեղի տուած է, և ո՛ր աստիճան ... անմոռանալի Ռուբէն Սեւակը մոռացութեան ենթարկած է:

Եւ մենք, մեր կեանքին նպատակը ըրինք, այս ահաւոր սխալին հետեւանքով, անիրաւօրէն ստուերի մէջ մնացած Ռուբէն Սեւակին իսկական ու ամբողջական կերպարը մէջտեղ հանել, որ հայ ժողովուրդը նանչնայ իր հերոս նահատակ բանաստեղծը:

* * *

21 Ապրիլ 2000-ին, Ուրբաթ օր, ժամը 15-ին, Երեւանի Գրողներու Միութեան դահլիճին մէջ յիշատակուեցաւ Ռուբէն Սեւակի ծննդեան 115 ամեակը:

Այս յուշահանդէսը կազմակերպուած էր Երեւանի Ռուբէն Սեւակի անուան դպրոցի տնօրէնուհի՝ Սեւակեան շունչով համակուած տիկին Ճուլիեթա Ղազարեանի և իր գործակիցներուն ու Հ.Հ. Գրողներու Միութեան վարչութեան կողմէ:

Հանդիսութիւնը կը հովանաւորէր Երեւանի քաղաքապետութիւնը, ի ներկայութեամբ փոխ-քաղաքապետ Կամօ Արեւանի և քաղաքապետութեան կրթութեան վարչութեան պետ՝ տիկին Սիլվա Խրիմեանի, որոնց կատարած ելոյթները կ'ապացուցանէին, թե Ռուբէն Սեւակի յիշատակը վառ է հայ ժողովուրդին մէջ:

Գրողներու Միութեան վարչութիւնը ջանք չէր խնայած, որ յուշահանդէսը յաջողութեամբ պսակուի:

Հանդիսութեան բացառիկ կարեւոր երեւոյթը, հոն ներկայութիւնն էր Ռուբէն Սեւակի դստեր՝ Տամիրամ Սեւակի, որ ժամանած էր Ֆրանսայէն, իր հօր յուշահանդէսին ներկայ գտնուելու համար:

Եւ վերջապէս՝ մեզի համար այս հանդիսութեան ամենէն տպաւորիչ մասը, հոռտոր-մտաւորական ժիրայր Նայիրիին կատարած ելոյթն էր, որ Ռուբէն Սեւակին իսկական կերպարը, իսկական առաջնորդի, հերոս նահատակի կերպարը ծանօթացուց հանդիսականներուն բացառիկ պերճախօսութեամբ:

Տարիներ առաջ՝ 1970-թ.ներուն Աթէնքի մէջ, մեր հօրաքոյր՝ Ռուբէն Սեւակի քրոջը Հայկանոյշ Չեւիկեան-Չիլիկիբեանին յուշերը արձանագրեցինք ձայներիզի վրայ: Մեր հօրաքոյրը պատմեց մեզի ինչ որ կը յիշէր իր եղբօր՝ Ռուբէն Սեւակէն:

Երկու ժամ տեւող այս ձայներիզները, քե՛ր Ռուբէն Սեւակի կեանքին և քե՛ր հայ պատմութեան համար շատ կարեւոր կը նկատենք:

Մեր հօրաքոյրը, շատ մը եղելութիւններու շարքին, պատմեց նաև Ռուբէն Սեւակին քրքանալու գծով ազատիլ առաջարկող ընկերներուն տուած մերժողական պատասխանին մասին: Անձնագոհ մտաւորականին կտրուկ հակադարձութիւնը եղած է՝

«Անունիս պէս պիտի չսեւցնեմ իմ հոգիս քրքանալով»:

Մեր հօրաքրոջ այս նախադասութեան աղբիւրը՝ քսան տարիներ շարունակ փնտոեցինք, բայց չկրցանք գտնել:

Վերջապէս 1990-թ.ներուն, հրաշքի պէս բան մը պատահեցաւ:

Պատմագետ Վահագն Տատրեան, Նիւ Եորքէն մեզի ուղարկեց, 1920-ին Պոլսոյ մէջ հրատարակուած «Հայ Բուժակ» պարբերաթերթէն պատնէնահանուած երկու էջ, որոնց մէջ Ռուբէն Սեւակի Չանղըրը-ի աքսորավայրի բախտակից ընկերներէն բժիշկ Վահան Ալթունեանին (Չանղըրը-էն հրաշքով փրկուելէ յետոյ) գրի առած յուշերը հրատարակուած էին:

Եւ մենք մեծ ուրախութեամբ, բժիշկ Վահան Ալթունեանի յուշագրութեան մէջ կարդացինք, մեր հօրաքրոջ վկայութիւնը Ռուբէն Սեւակի Չանղըրը-ի մէջ ըսած հերոսական խօսքերուն:

«Անունիս պէս պիտի չսեւցնեմ իմ հոգիս քրքանալով»:

Բժիշկին Չանղըրը-ի աքսորավայրին վերաբերեալ այս յուշերը, պատմական բացառիկ կարեւորութիւն ունին, քե՛ր 24 Ապրիլ 1915-ի Եղեռնի պատմութեան և քե՛ր, մանաւանդ, Ռուբէն Սեւակի գերմարդկային կեցուածքը կրկին ապացուցանելու տեսակետով: Այս վկայութիւնը կրկին կը հաստատէ Ռուբէն Սեւակին միւս բախտակից ընկերներուն վկայութիւնները քե՛ր Ռուբէն Սեւակ, իր անունը, իր ազգութիւնը և իր կրօնը չփոխելու համար, մերժած էր բուրքերուն ներկայացուցած մահէն փրկուելու առաջարկը:

Եւ ճիշդ Վարդանանցի հերոս նահատակներուն նման, նախընտրած էր նահատակուիլ՝ վասն կրօնի և վասն հայրենիքի:

Բժիշկ Վ. Ալթունեանի այս վկայութիւնը կու գայ կրկին հաստատելու, քէ Հայ Եկեղեցին շատ անարդար գտնուած է Ռուբէն Սեւակին հանդէպ, անոր մինչև այսօր «Սրբութեան» աստիճան տուած չըլլալուն համար:

Մենք, անհուն հոգեկան գոհունակութիւնը ունինք, «Նայիրի»ի մէջ հրապարակելով, ութսուն տարիներ անյայտ մնացած բժիշկ Վահան Ալթունեանին Չանդըրը-ի իր արտօրական կեանքին դաժան և ցնցիչ յուշերը:

Այստեղ կ'ուզենք, մեր խորին շնորհակալութիւնը յայտնել նաև, այս վաւերագրերը մեզի ուղարկած պատմագէտ Վահագն Տատրեանին:

ՅԻՇԱՏԱԿՆԵՐ Ռ. ՍՆԻԱԿԻ ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԷՆ

«Փօսթայի օր» - այսպես սիրած էինք կոչել շաբթուան այն երկու օրերը, ուր մենք՝ Չանդըրը-ի արտոբանակներս, տարբեր տրամադրութիւններով արթնցած, արշալոյսին իսկ նամակատուն կը վազէինք, Պոլսէն եկած նամակները վայրկեան մը առաջ լափելու համար: Կ'արժէր տեսնել այդ վայրկեանը, ամենքս ալ նոյն թղթատարով երկտող մը, յուսադրիչ բառ մը պարունակող գրութիւն մը ունենալ կը յուսայինք, բառեր որոնք կրնային անգութ գրաքննիչին աչքէն վրիպած ըլլալ: Խիստ մեծ կ'ըլլար մեր յուսախաբութիւնը, երբ ցրուիչին ձեռքին մէջ հագիւ 10 նամակ կը տեսնէինք: Նամակները ստանալէ վերջ, գունդագունդ կ'երթայինք Հանի Պապային գետեզրեայ և ծառախիտ սրճարանը՝ արտոբանակներու փօսթի օրուան մեծ ժամադրավայրը, եկած նամակներու վերլուծումներէն յուսադրուելու համար:

Փօսթայի օր մըն էր. ըստ սովորութեան գետեզրը հաւաքուած էինք: Ոմանք թերթ կը կարդային, ուրիշներ նարտով զբաղած էին, իսկ մենք, Վարուժանին շուրջը հաւաքուած, թուրք բանաստեղծութեան մասին իր քննադատութիւններուն կ'ունկնդրէինք. յանկարծ արտոբանակներու մէջ ուրախութեան ճիչ մը փրթաւ «Սեւա՛կը, Սեւա՛կը» կը պոռային: Ընդ առաջ վազեցինք, դէմքերը կը ճառագայթէին, ինքն ալ գուարթ էր: Շատ տարօրինակ բան էր մեր ուրախութիւնը, որովհետեւ լուրջ պատճառ մը չունէինք հրճուելու: Բայց ներքին բնագոյ մը մեզ գուարթ ըլլալու կը մղէր, թերեւս Սեւակէն բարի լուրեր առնելու մեծ յոյսն էր իրապէս այդ պատճառը:

Հարցումներու տեղատարափը ատոր ապացոյցն էր: Ու Սեւակ կը սկսի մանրամասնօրէն պատմել իր ձերբակալման ուշանալուն պատճառը, մատնութեամբ միայն ձեռք անցուիլը, Միւտիքիյէ-ի մէջ քաշածները, զինուորական հագուստներուն բզբտուելու

պարագան և այլն: Ամենէն՝ տխուր դէպքերն իսկ անփութօրէն և գուարթութեամբ կը նկարագրէր. ասիկա Ջիլինկիրեանին բնատուր յատկութիւնն էր: Իր համոզումը այն էր, որ մինչև պատերազմի վերջաւորութիւնը մեզ համար Պոլիս դառնալ անկարելի էր, բայց կեանքերն իս վտանգի տակ չէր կրնար ըլլալ, քանի որ գործին մէջ գերմանները կային:

Սեւակի շէնշող և ընկերական ազնիւ բնաւորութիւնը պատճառ եղած էր, որ մենք ալ չբարոյալքուէինք, որով իր իսկ թելադրութեամբ գետեգերյա պարտեզներու մէջ փոքր պտոյտներ կը կազմակերպէինք. հոն հեքիաքներու մրցումը կը սկսէր և բնականաբար առաջնութիւնը ինքը կը խլէր միշտ: Գալով չանդըրըցի թուրքերուն, քիչ առ քիչ սկսած էին Սեւակը աստուածացնել, այնքան շատցած էին հրաշքները, իր բժշկական բարձր կարողութիւնները ի սպաս դրած, անդուլ անդադար կ'աշխատէր. դրամը կարելորութիւն չունէր. «Պէտք է այս մարդիկը երախտապարտ թողունք, որպէսզի չկարենան մեզի չարիք հասցնել» կ'ըսէր. թերեւս իրաւունք ունէր:

Պոլիս վերադարձողներու կծիկը քակուիլ սկսած էր, և ատիկա բարերար նշան մըն էր թէ՛ մեր կեանքերուն պիտի խնայուէին. առաջին խումբին բաժանումը մեր յոյսերը ցնդեցուցած էր, այդ բաժանումը ամենէն յուզիչը և յուսահատեցուցիչը եղաւ. յիսուն երկու ընկերները դէպի Տիարպէքիւր և Տէր Զօր դրկուելու համար մեզմէ կը բաժնէին և այս բնականաբար լաւ նշան մը չէր, մնացեալներս սկսած էինք ահաբեկիլ: Զանազան մեկնութիւններ կու տայինք Տէր Զօր դրկուողներու մասին, որոնք պարզ ենթադրութիւններ էին, քանի որ հրամանը ուղղակի կեդրոնէն կու գար: Այդ միջոցներուն Սեւակ սկսած էր տխուր և մտածկոտ ըլլալ, իր գգայուն հոգին ճշող գաղտնիք մը կորցած էր. իր շէնշող բնաւորութիւնը մեղամաղձոտ ըրած էր զինքը, գաղտնապահ էր, որով չէինք կրնար հոգիին թափանցել:

1915 Օգոստոսի կիսուն էր, 25 հոգիւնոց ցանկ մը եկած էր, չորսերնիս Պոլիս պիտի վերադառնայինք, իսկ մնացեալները Տիարպէքիւր պիտի երթային: Յաջորդ առաւօտ խմբովին մեկնիլ ստիպուած էինք, ուստի սկսանք պատրաստուիլ: Նոյն գիշերը Ջիլինկիրեան զիս տեսնելու եկած էր, կ'ուզէր գաղտնի տեսակցութիւն մը ունենալ. հետաքրքրութեամբ կ'ընդունիմ առաջարկը. ուստի դուրս կ'ելլենք բացօթեայ տեղ մը երթալու համար: «Լաւ

մտիկ ըրէ Վահան,- կ'ըսէ ինձ թրքունն ձայնով մը,- ես մահուան դատապարտուած եմ, ասով հանդերձ կեանքս քու նարպիկութենէդ կախում ունի, աշխատե՛ որպէսզի ժամ առաջ ազատուիմ...»: Կը սարսուամ, և կակազելով, հագիւ «Ի՞նչ կ'ըսես, Տօթթորս» միայն կրնամ ըսել: «Այո՛,- կը շարունակէ Սեւակ,- կա մ' պետք է որ գրական անուանս պէս հոգիս ալ սեւցնեմ և կամ մեռնիմ: Ուխտած եմ,- կը կրկնէ,- մեռնիլ, բայց երբեք հոգիս չսեւցնել»: «Բան մը չեմ հասկնար»- կը մրմնջեմ ապշահար: «Այո՛, Վահանս,- կը շարունակէ նա,- բառ ա՛ն բառ միտքդ պահէ որպէսզի լաւ հասկցնես: Հոս, Իթքիհատական Չէթէ Բէիսի Արապանը Պաշը ըսուած արարածին աղջիկը անյոյս վիճակի մէջ հիւանդ էր, խնամելու համար զիս կանչեցին, լաւ առիթ մըն էր, այդ կարգի գազան մը ձեռք ձգելու, ուստի ամէն ճիգ ու ջանք ի գործ դրի աղջիկը ստոյգ մահուալնէ մը փրկելու. յաջողութիւնս կատարեալ եղաւ. աղջիկը բուժուած էր: Ժամանակ մը վերջ այդ մարդակերպ անասունը զիս տուն հրաւիրեց, սենեակին մէջ առանձին էինք, սկսաւ շնորհակալ ըլլալ, և խօսքը շարունակեց՝ «Աղջկանս կեանքը ինձ շնորհած ըլլալուդ յաւիտեան երախտապարտ եմ, ուստի կը փափաքիմ որ, ես ալ փոխարինեմ, ահա առիթը ներկայացած է: Պոլսոյ կեդրոնը մահուանդ վնիւր արձակած է և գործադրութիւնը հոս հրամայուած է: Բայց դուն անհոգ եղիր, քանի որ դուն աղջիկս ազատեցիր, ես քեզ պիտի ազատեմ, միայն մէկ պայմանաւ, այսինքն պետք է անմիջապէս իսլամանաս, և աղջիկս կնութեան առնես: Արդէն մեղք չե՞, որ քեզի պէս գեղեցիկ և ֆիտան մէկը ԿԵԱՎՈՒՐ մնայ»: «Բայց պէ՛յ,- ըսի,- ես արդէն ամուսնացած եմ, կինս գերմանուհի է, Ֆօն Տէր Կօլց փաշայի թիկնապահներէն գերման սպայի մը քոյրն է, էրկու զաւկի ալ հայր եմ, այդ ի՞նչպէս կարելի է»: «Էհ, լաւ,- պատասխանեց անայլայլօրէն,- շատ մեղք պիտի ըլլայ երիտասարդութեանդ, որովհետեւ վստահ եղիր եթէ նոյնիսկ յաջողիս Պոլիս երթալու հրաման առնել, քաղաքէդ դուրս ելլելուդ անպայման պիտի սպաննուիս, ուրեմն 15 օր միջոց կու տամ, լաւ խորհէ»: Ալ պատասխանել անօգուտ էր. «Շատ լաւ» ըսի ու մեկնեցայ»: Խորհուրդ տուի որ առժամապէս համակերպի. Սեւակ ընկնուած էր, բարկացած և սրտնեղած ըլլալը որոշ էր, ինձմէ այդ տեսակ խորհուրդ մը չէր սպասեր: Քանի մը օր առաջ, Տիրան Քէլէկեանին ալ խորհուրդ հարցուցեր էր, ան ալ կեանքը

ագատելու նպատակաւ իսլամանալու միջոցը միայն ցոյց տուած էր: Սակայն ես, ըմբռնելով ձախող դերիս ծանրութիւնը՝ «Իրաւունք ունիս տօքթօրս,- ըսի,- քու զգացումիդ գործը չէ այդ, փակենք այդ խնդիրը և գանք մեր ընելիքին, ըսէ տեսնեմ, ես ի՞նչ պիտի կարենամ քեզի օգտակար ըլլալ»: Սեւակ հանդարտած էր: «Տղայութիւն պէտք չէ,- ըսաւ,- Պոլիս երթալուդ առաջին գործդ պիտի ըլլայ Բերա ելլել Կոմիտաս վարդապետը առնելով մեզի երթալ, հոն տիկնոջս պատմել ամէն բան, նա գիտէ, թէ ուր պիտի դիմէ, ինծի ապահով կերպով ուրիշ տեղ մը փոխադրելու նարը գտնելու, հոգ չէ թէ բանտարկուած և շղթայուած ըլլամ, բաւ է որ սա ննչիչ մթնոլորտէն ազատիմ»: Իր խնդիրքը առանց յապաղելու կէտ առ կէտ գործադրելու խոստումով կը համբուրուինք և կը բաժնուինք:

Երկու օրուան նամբորդութենէ վերջ կը հասնինք Էնկիւրիւ, ուր փոխանակ կայարան առաջնորդուելու, կը բանտարկուինք: Օրեր կ'անցնին տակաւին Էնկիւրիւ ենք. յոռի նախագգացումներ գիս կը պաշարեն, Սեւակի դէմքը աչքիս առջեւէն չի հեռանար, կարծես «խոստմնագանց» ըսել կ'ուզէ. բանտի կեանքը կը սկսի տակաւնտանելի դառնալ, ոճրագործ բանտարկեալները, որոնք թուրքեր են, անպատկառօրէն կը պատմեն թէ ի՞նչպէս սպաննած են այն հարիւրաւոր Հայերը, որոնք այս բանտէն նամբայ հանուած էին, և կ'առաջարկէին մեր դրամները իրենց տալ. որպէսզի առանց չարչարուելու մէկ հարուածով սպաննեն...: Վերջապէս Օգոստոս 30-ի այն չարաշուք օրը. կէսգիշերին, մեր ձեռքերը կապուած նամբայ հանուեցանք դէպի անծանօթ ուղղութեամբ. մեզի կը հետեւէին ոստիկան զինուորներ և մեր սպաննութեան յատուկ զէնքեր կրող արհաւիրալից կառքեր, մօտաւորապէս 750 հոգի էին. 18 ժամուան նամբորդութենէ մը վերջ հասանք Գարա-Կէտիկ ըսուած գիւղը, ուր Սեւակի սպանման տխուր գոյժին տեղեկացայ:

Ձանդըրըէն Օգոստոս 26-ին Էնկիւրիւ՝ մեզ հետ Գարա-Կէտիկ գտնուող սափրիչն էր որ մանրամասն կը պատմէր Սեւակի, Վարուժանի և իր երեք ընկերներուն սպանման պարագաները:

Չէթէ Րէիսին իր երախտագիտութիւնը յայտնած էր խժողժօրէն սպաննել տալով Սեւակն ու ընկերները:

Ահա այսպէս Սեւակ զոհուելով, իր ուխտը կը կատարէր չսեւցնելու համար իր հոգին:

Յարգանք իր անբիծ հոգիին...:

[[Հայ Բուժակ]-1920] ԲԺ. ՎԱՀԱՆ ԱԼԹՈՒՆԵԱՆ

ՌՈՒՐԷՆ ՍԵՒԱԿԷՆ ՆՇԽԱՐՆԵՐ

**ԴՐԱՄԻՆ ԱՂՕԹՔԸ
(Հատուած)**

Ո՛վ ես ուրեմն, թշուառութեան դու գործի
Դրա՛մ, որուն լուռ ցոլքին մէջ կ'արծարծի
Ճակատագիրը տառապող մարդկութեան
Ըսէ՛, քու կամքդ պիտի իշխե՞՞յալիտեան:
«Արեւելեան մամուլ - 1907» Ռ. ՍԵՒԱԿ

**ԿԱՐՄԻՐ ԴՐՕՇԱԿԸ
[Հատուածներ]**

Անօթիներ, անգործներու կուռ բանակ,
Փոս աչերնիդ դէպի երկինք զուր բանաք:
Տառապանքի՛ ռոտայնանկներ, ի կըռիւ...:
Ի գէն կիներ, ի գէն ծերեր ալեխոխ...:

Ինչո՞ւ, ինչո՞ւ, ու մինչեւ ե՞րբ, սեփական
Մե՛ք քրտինքով պիտի շաղուին պատուական
Համադամներ մեծատունին, իր շունին,
Մինչ աշխատող բազուկներ չոր հաց չունին:

Վայրա՛գ գոռիւն մը գիշերին մէջ թնդա՛ց.
Զիւնոտ ցայգին անբա՛ւ, սուգին մէջէն թաց,
Բոցերու պէս շրքեղ, տեգի պէս հըպարտ,
«Կարմիր դրօշակ»ը բարձրացաւ անհանդարտ...

Ո՞ւր, դէպի ո՞ւր...: Քաղցած կեանքեր համօրե՛ն,
Ի սպառ լքուած աստուածներէն, մարդերե՛ն,
Լուռ կ'երբային, խուլ բնագոյի մը հլո՛ւ,
Նոր օրէնքի նո՛ր նժար մը կերտելու...:

Ու ինձ այնպե՛ս բուեցաւ թէ լռելեա՛յն
Ճակատագրին թելը կ'իշխեր իրենց վրան...
Բայց կ'երթային անոնք, ի Ջէն, ի Պայքա՛ր,
Արդարութեան կը դիմէին խո՛նջ, տըկար,
Արդարութեա՛ն որ ա՛յս կերպով պիտի գար...
«Ազդակ - 1909» Ռ. ՍԵՒԱԿ

ԱՅՍ ԴԱՆԱԿԸ
[Հատուածներ]

Աւա՛ղ այն ամէն բաներն ապաքէն
Որ շնորհուեցան մեզի երկինքէն՝
Մարդկային օրէնքն արգիլեց մարդուն...:

Գործարաններու դռները փա՛կ են.
Ամիս մ'է արդէն: Հազարը մէկէն
Բանուորներն ամբողջ նետեր են փողոց
Ամէնքն ալ հայրեր, մի քանի տըղոց:
- Մատուցումը շա՛տ, խնդրանքներ չիկան,
Կ'ըսեն, ապրանքով լեցուեր է շուկան.
Գործի մեծ օրէնքն է տնտեսավար.-
Այդ լա՛ւ: Բայց նօթի մեռնիլն է դժուար:
Թէ բանուորն այնքան արտադրեր է շատ,
Ինչո՞ւ հաց չունի բանուորն անաշխատ...:

Մարդկութի՛ւն, պատի՛ւ... Բմբուկներ հնչուն.
Աչքըդ գոց հաւատա, մի փնտոներ ինչո՛ւն:
Մուրալն ամօթ է, գողնալը ոնիր,
Իսկ թէ խելօք ես՝ ոչ որ չի հանիր
Հաւատալ որ տղադ մեռաւ անօթի:

Քամին կը գոռայ, ձիւներ կը բռչին
Բանուորը կանգնած շէնքի մը առջին
Երգը կ'ունկնդրէ - ցուրտէն երբրուն -
Գործարաններու բոլոր տէրերուն...:
Մատուցումը շա՛տ, իսկ խնդրանքը քիչ...:
Որո՞ւ փոյթ, կ'ուտեն կ'արձակեն քրքիչ...:
Գործ չիկա՛յ, ինչ փոյթ, դաս մ'է անխրնայ

Որ բանուորը քի՛չ մը խելօք մնայ...:
Բանուորը կու լայ, կը գոռայ քամիկն.
Ահա՛ դուրս ելաւ աշդ տերերէն միկն.
Աստուած իր պետն է...: Ձեռքը քարացած,
Աչերը կարմիր, բանուորը գոռաց՝
«Գըքուքի՛ն, պարոն, ընտանեաց հայր եմ.
Ջգոյշ մերժելու, ձեր հոգիկն կ'այրեմ...»:
Հարուստը նետեց ինչ որ կար իր վրան,
Ժամացոյց՝ շղթայ, դըրամ, քղթարան:
Երէկ՝ տէր, հիմայ՝ ըստրուկ դողդոջուն,
Կը փախէր ինչպէս բուէ մը քոչուն...»:

Բանուորը ապշած նայեցաւ հեռուն,
Իր հարուստ տիրոջ վագքիկն շուարուն.
Նայեցաւ բարի ձեռքերուն ծերուկ
Նայեցաւ հացի դանակիկն մանրուկ
Նայեցաւ ոսկւոյն, նայեցաւ իրեն,
Փղձկեցաւ հոգիկն, յուսահատօրէ՛ն
Ձայնը երկարեց ցայգիկն մէջ տըխուր՝
«Ո՛վ հարուստ, հարո՛ւստ, եկո՛ւր ա՛ն եկո՛ւր»:
Բայց տէրն աւելի արագ կ'երթար լուռ.
Ու կը կրկնէր ծե՛րը. «Եկո՛ւր, եկո՛ւր...»:

«Ո՛վ բարի բանուոր, ծե՛ր բարի բանուոր,
Թե՛ այնքա՛ն անպէտ էս մարդկութեան որ
Ճարելու համար ապրուստ մը յետիկ
Կ'ապաւինիս վատ դանակիդ ետիկ...
Թե՛ սեփական կեանքըդ՝ իժի մը պէս՝
Ուրիշի մահով պիտ' ապահովես...
Թե՛ պիտի դաւես մութիկն մէջ լոնլեայն՝
Հոգ չե՛րէ՛ զաւկիդ համար ըլլայ այն...
Դե՛հ գնա՛ մեռիր,- մեռե՛ր էս արդէն,
Մարդկութեան ի՛նչ խեր մարդասպան մարդէն:

Թե՛ չե՛ս ուզեր որ քու դանդաղ մահով
Տէրդ իրեն գանձեր դիզէ ապահով...
Թե՛ անպէ՛տ, թէ՛ վա՛տ, թէ՛ խե՛ղճ, ցաւագիկն,
Դուն դեռ տե՛րն էս քու սեփական կեանքիկն...
Թե՛ զաւակներուդ չը կրցար ցոյց տալ

Ապրիլ ատելո՛ւմ, կեանքին դեմ կուրծք տալ...
Դանակդ աղիքիդ խոթե՛ ու դարձուր.
Իրենց քաջաբար մեռնի՛լ սորվեցուր
Մեռնի՛լ անտեսուած, աննիջ, մըքին, վե՛ս...
Աչքերը գոցեց...: Ու ըրաւ այնպէս:

Տարիներ անցան, հիմա կը դիտեմ
Լուռ սենեակիս մէջ առկախուած իմ դեմ
Այս համեստ դանակն արդէն ժանգոտած
Որ ձմեռ առտու մը արիւնով թաց
Ես գըտեր էի անհուն գուրգուրանքով,
Զիւնին մէջ, մեռա՛ծ գործաւորին քով...:
Քարացած այդտեղ, պոռթկաց իմ հոգիս,
Ու դողդողալով տարի շրթունքիս
Խորհրդանիշն այդ՝ մութին մէջ լոնլեայն
Տառապո՛ղ, մեռնող, այլ քա՛ջ մարդկութեան...:

Ու քանի՛ անգամ քու առջիդ լացի,
Ո՛վ բարի, ժանգո՛տ դանակըդ հացի.
Դո՛ւն, վերջին պաշտպան գրկուած մարդուն
Դո՛ւն, յաւետ լոխկ այլ յաւետ արթուն.
Դո՛ւն, այնքա՛ն համեստ ու ա՛յնքան խելօք,
Եւ որ կրնայիր շարժումն՛վ մը լոկ
Արեան վրայ հիմնել օրէնքդ ապագայ,
Բայց կը սպասես որ խաղաղութեա՛մբ գայ,
Արդարութեա՛մբ գայ, գա՛յ տարուէ տարի,
Զրկուած մարդկութեան երազը բարի...:
«Գեղունի - Վենետիկ - 1909»

Ռ. Սեւակ

Ռուբէն Սեւակին, Զուիցերիոյ Լոզան քաղաքին մէջ, 1905-էն մինչև 1914 բժշկական աշակերտ ուսանած և յետոյ իբր բժիշկ աշխատած տարիները՝ քաղաքական շատ բարդ և ալեկոծ խմորումներու տարիներն էին:

Ռուբէն Սեւակ Լոզանի մէջ այս փոքորկոտ տարիներուն ինքն ալ ենթարկուեցաւ իբր աշակերտ նիւրապական շատ ծանր դժուարութիւններու և իր մորթին վրայ զգաց՝ «դրամ»ին չարիքներուն հետեւանքով տառապող մարդկութեան ցաւերը:

Դրամին աղօթքը - 1907, Կարմիր դրօշակը - 1909, այս դանակը - 1909

Ռուբեն Սեւակին մասնաւորապէս այս երեք բանաստեղծութիւնները՝ ընկերային անարդարութիւններուն դէպի ակունքները իջնող մեկնաբանութիւններ են:

Եւ մենք կը հաւատանք, որ այս երեք բանաստեղծութիւնները իրենց այժմեականութիւնը չեն կորսնցուցած՝

1.- **«Դրամին աղօթքը»** բանաստեղծութիւնը, իսկական «մարգարէութիւն» մըն է՝ դրամին մասին իր ախտաճանաչումով, ուր Ռ. Սեւակ իր վախը և մտահոգութիւնը կը յայտնէ՝ **«Դրամ՝ ըսէ՛, կամքդ պիտի ի շխե յաւիտեան»:**

Երբ կը մտածենք, թէ Ռուբեն Սեւակէն հարիւր տարիներ յետոյ, մինչև այսօր, դրամն է ամենամեծ **«Կուռք Աստուած»**ը, որուն անգութ, անարդար և ոխակալ կամքը՝ կ'իշխէ մարդկութեան վրայ:

* * *

2.- **«Կարմիր դրօշակը»** բանաստեղծութիւնը, ընկերային անարդարութիւններուն ստեղծած տառապանքներուն դէմ բողոքի և պայքարի շարժումն է, «կարմիր յեղափոխութիւն»ն է:

Մեր, երիտասարդ, կին, բոլորը կը դիմեն՝ ի գէն, ի կոխ, իրենց գլխուն վրայ ծածանող կարմիր դրօշակով, «նոր օրէնք» մը կերտելու:

Եւ կը հաւատան, որ արդարութիւնը այս ձեւով պիտի գայ:

Կարմիր դրօշակը՝ մինչև այսօր, արդարութեան և հաւասարութեան խորհրդանիշն է:

Եւ. Ռուբեն Սեւակէն ետք, հարիւր տարիներէ ի վեր «կարմիր դրօշակը», անբիւ, անհամար ժողովուրդները առաջնորդեց՝ դէպի այն **«արիւնոտ արդարութեան երազին»:**

* * *

3.- **«Այս դանակը»** բանաստեղծութիւնը, մեր համոզումով, Ռուբեն Սեւակին ընկերային հարցերը վերլուծող բանաստեղծութիւններուն մէջ ամէնէն կարեւորն է:

Ռուբեն Սեւակ՝ **«Դրամին աղօթքը»** բանաստեղծութեան մէջ, անարդարութեան ակունքները նշդելէ ետք, **«Կարմիր դրօշակով»** անարդարութեան դէմ բնագոյրաբար պայքարի դիմող զան-

գուածներուն հոգեվիճակը մեկնաբանած է:

Ռուբէն Սեւակ *«Այս դանակը»* բանաստեղծութեան մէջ, իբր բժիշկ և գիտութեան մարդ, այս «ցաւ»ին ախտահանաչումը կատարել է ետք, զգայականութիւնէ հեռու լուծում մը փնտելու կը շանայ:

Նայեցէք այս բանաստեղծութեան մէջ «անարդարութեան ցաւ»ին՝ հիանալի ախտահանաչումին, որ այսօրւան «ազատ շուկայական տնտեսութեան» «mondialisation» ըսուած հրեական աշխարհակալ կայսրութեան օրէնքն է:

*«Մատուցումը շա՛տ, խնդրանքներ չիկան,
Կ'ըսեն ապրանքով լեցուեր է շուկան,
Գործի մեծ օրէնքն է տնտեսվար»:*

Արդեօք, մեծամիտ և ինքնահաւան Յակոբ Օշականին փառաբանած այն մեծ «վաւերական» բանաստեղծներուն մէջէն ո՞ր մէկը մարդկութեան ընկերային ցաւերը վերլուծելու կարողութիւնը ունեցած է:

Բայց Յակոբ Օշականին՝ այս տեսակ «ցածութիւն»ները, այս տեսակ հասարակ նիւթերը չի շահագրգռեր:

Ան՝ գլուխնին ամպերուն մէջ սաւառնող, ոտքերնին հողին վրայ դնելու կարողութիւն չունեցող վաւերական գրողներով զբաղած է:

Մանաւանդ Միսաք Մեծարեւոցով:

Մեծարեւոցին՝

«Տո՛ւր ինձի, Տէր. ուրախութիւնն անանձնական» բանաստեղծութիւնը, Յակոբ Օշականին համար հիանալի «բարձրութիւն» մըն է:

Ի՛նչ մեծ խաբկանք:

Ունայնութիւն ունայնութեանց:

Հայ ազգը՝ ազգին ցաւերուն հետ կապ չունեցող այս անտարբեր մտաւորականներուն պատճառաւ, այսօրւան վիճակին ենթարկուեցաւ:

* * *

Մեր համոզումով՝ *«Այս դանակը»* բանաստեղծութեան ամենէն կարեւոր մասերէն մէկը՝ անօրի գաւկին համար հաց ճարելու գացող անգործ բանուորին, իր հարուստ տիրոջ հանդէպ վերաբերումն է՝

*«Քե սեփական կեանքըդ իժի պես՝
Ուրիշի մանով պիտ՝ ապահովես...
Հոգ չէ՝ քե գաւկիդ համար ըլլայ այն...
Գե՛ն, գնա՛ մեռիր, - մեռն՛ր ես արդէն,
Մարդկութեան ի՛նչ խեր՝ մարդասպան մարդէն»*

Այստեղ է ամենէն կարեւոր կէտը՝
Անարդարութիւնը՝ արիւնով, մարդասպանութեամբ կարգադրելու դէմ իր կեցուածքն է:

Ռուբէն Սեւակ, անարդարութիւնը՝ անարդարութեամբ լուծելու դէմ էր:

Չմոռնանք բնաւ, որ Ռուբէն Սեւակ, մեծ մանկավարժ Ռէթեոս Պերպերեանին բարձր ու վեհիտ գաղափարներով՝ **«քարիին, գեղեցիկին, ճշմարիտին»** հաւատքով դաստիարակուած և այս գաղափարներուն հաւատարիմ մնացած բանաստեղծ մըն է:

«Այս դանակը» բանաստեղծութեան վերջին տողերը՝ այս գաղափարներուն արտայայտութիւններն են:

*«Եւ որ կրնայիր շարժումն՝ վ մը լոկ
Արեան՝ վրայ հիմնել օրէնքդ ապագայ,
Բայց կը սպասես որ, խաղաղութեա՛մբ գայ,
Արդարութեա՛մբ գայ, գա՛յ տարուէ տարի,
Զրկուած մարդկութեան երազը բարի...:»*

* * *

Ռ. Սեւակին կեանքին մէջ, շատ յատկանշական պարագայ մը կայ: Իր յայտնած գաղափարները և կեանքին գիծը իրարու բոլորովին զուգահեռ ընթացած են:

Բայց կան գրողներ, որոնց յայտնած գաղափարները և իրենց ապրած կեանքը բոլորովին հակապատկեր են իրարու:

Արդէն բոլորիս ծանօթ կարգախօս է՝ «մարդուն ըսածին չէ, ըրածին նայեցէք»:

Գալով Ռուբէն Սեւակին՝ ան, իր գրութիւններուն մէջ յայտնած գաղափարներուն՝ իր կեանքին մէջ ալ բոլորովին հաւատարիմ մնաց:

Եւ ամենէն վերջ, թուրքերուն իսլամանալու ճամբով ազատելու կարելիութիւնը մերժեց:

Անարդարութիւնը՝ ուրիշ մէկ անարդարութեամբ չլուծելու համար:

Վեհանճնութիւնը ամէն մահկանացուի յատուկ առաքինութիւն չէ:

Իր գրչի ընկերներէն մէկը, որ իր գրութիւններով, հայութեան մէջ ազգայնականութեան հուրը կը բոցավառէր, 1915-ին արտրավայրէն գրած մէկ նամակին մէջ կ'ըսէր, թէ՝

«Ինք երբեք քաղաքականութեամբ չէ գրադած»:

Կրկին՝ ուրիշ բանաստեղծ ընկերներէն մէկը, որ հայութեան մէջ «մեծ բանաստեղծ»ի համբաւ ունէր՝ արտրավայրին մէջ թրքական գրականութեան ուսուցումով կը գրադէր:

Գրականութեան տաղանդ ունենալը, և հերոսութիւնը՝ իրարմէ բոլորովին տարբեր՝ Աստուածային շնորհներ են:

* * *

*«Եւ որ կրնայիր շարժումով մը լռկ
Արեւն վրայ հիմնել օրէնքդ ապագայ,
Բայց կը սպասես որ խաղաղութեամբ գայ
Արդարութեամբ գայ, գայ տարուէ տարի,
Զրկուած մարդկութեան երազը բարի...»:*

Ռուբէն Սեւակ՝ «Այս դանակը» բանաստեղծութեան վերի տողերուն մէջ, աշխարհի ընկերային անարդարութիւնը՝ յեղափոխութեամբ և արիւնով լուծելու գաղափարին դէմ ելած էր:

Եւ կ'ուզէր, որ արդարութիւնը՝ խաղաղութեամբ գայ:

Ռուբէն Սեւակ, կրկին իր մարգարէական հեռատեսութեամբ, արդե՞օք իրաւունք չունէր այսպէս մտածելու, եթէ նկատի առնենք, թէ իր նահատակութենէն երկու տարի յետոյ՝ 1917-ին Ռուսիոյ մէջ կատարուած յեղափոխութիւնը, միլիոնաւոր անմեղներու ալ մահուան պատճառ ըլլալէ ետք, 1991-ին կրկին իր մեկնակէտին վերադարձաւ:

Թէև, շփացած ֆրանսացի յատուկ կարգախօս կ'ըսէ թէ՝

«Մեղրալուսինը, bon-filet-էն [մսաշերտը] և յեղափոխութիւնը՝ առանց արիւնի չ'ըլլար»:

Պատմական հին շրջաններէն սկսեալ, աշխարհի վրայ արդար վարչածելի մը հեռանկարը՝ շատ մը կրօնական և քաղաքական դեկավարներուն երազը եղած է:

Եւ նաեւ՝ մեծ թիւով քաղաքական առաջնորդներ, արդարութիւն
բերելու խոստումներով նամբայ ելլալէ ետք, իշխանութեան տիրա-
նալէ յետոյ, իրենք՝ ամենամեծ արիւնարբու բռնակալները եղած
են:

1789-ի ֆրանսական յեղափոխութեան ստեղծած «Terreur»ը և
1917-ի յեղափոխութեան սարսափելի մանրամասնութիւնները
բոլորին ծանօթ են:

Եւ նաև առածի տեղ անցած են Madame Roland-ին 1793-ին
Փարիզի մէջ, կառափնատ տարուած միջոցին ըսածները՝

«Ո՛վ արդարութիւն՝ քու անունով ի՞նչ ոճիրներ կը գործուին»:

Ռուբէն Սեւակ աշխարհի վրայ արդարութեան ստեղծման
առաջնակարգ ազդակը՝ «զարգացումը» կը նկատէր:

Ան՝ յոյս ունէր, որ զարգացման յառաջացումով, աւելի արդար
աշխարհ մը պիտի ստեղծուէր:

Բայց, այն տարիներուն, Ռուբէն Սեւակի նման բարեմիտ «ideal-
iste»-ները՝ հրեաներուն յունա-քրիստոնէական քաղաքակրթու-
թիւնը և ներմակ ցեղը մէջտեղէն վերցնելու համար տարած սա-
ղայկական աշխատանքներէն լուր չունէին:

Եւ շատ-շատեր այս թափառական ազգին [իբր թէ] ենթարկուած
հալածանքները իմանալով ցաւ կը զգային:

Բայց, 1945-ին Գերմանիոյ պարտութենէն յետոյ, մինչև այդ
օրերը գաղտնի մնացած հրեական աշխարհակալ կայսրութեան
խսկական երեսը մէջտեղ ելլել սկսաւ:

Եւ այդ թափառական և «հալածուած» ազգը, այսօր աշխարհի
միահեծան տերը գրեթէ դարձած է:

Եւ հրեաները՝ մարդկային իրաւունքներու սուտ և շինծու լո-
գունգներով, «խառնածիններու» նոր արեւմտեան աշխարհ մը
ստեղծելու նամբուն մէջն են:



Այստեղ կը հրատարակենք նկար մը, որուն մէջ կը տեսնուին՝

1.- Եւրոպացի դեղին աղջիկ մը,

2.- Ափրիկեցի խափշիկ տղայ մը: Ճակատը ճակատի միացած:

Այս նկարին մէջ տեսնուող դեղին աղջիկը և խափշիկ տղան՝ բնութեան օրէնքներուն բոլորովին հակառակ ըլլալով ստեղծուելիք Արեւմտեան աշխարհին, նոր խառնածին ցեղին տիպարներն են:

Այս նկարը՝

Քանի մը տասնեակ տարիներ առաջ, աշխարհի ամենէն քաղաքակիրք երկիրը եղող, բայց այսօր հրեական աշխարհակալ կայսրու-

քեան խամանիկին վերածուած Զուիցերիոյ մէջ, «Swissair» ընկերութեան կողմէ աշխարհի ամէն կողմերը կը բաշխուի՝ իբր ապագայ «հանդիպում»ներու խորհրդանիշ:

ՌՌԻԲԷՆ ՍԵՒԱԿԻ ԱՆՌԻԱՆ ՄՐՑՈՅԹԻՆ ԱՌԹԻԻ ԽՈՐՀՐԴԱՄՈՒԹԻՒՆՆԵՐ

21 Ապրիլ 2000 թուականին, Երեւանի Գրողներու Միութեան տան մէջ, Ռուբէն Սեւակի նուիրուած հանդիսութեան օրը, Ռուբէն Սեւակի գաղափարականը և նահատակութեան պատմութիւնը հայ ժողովուրդին մէջ տարածելու նպատակով, միայն հայրենի գրողներու սահմանուած մրցոյթ մը յայտարարուած էր:

Այս մրցոյթին արդիւնքը պիտի ծանուցուի՝ Ռուբէն Սեւակի ծննդեան տարեդարձը եղող 15 Փետրուար 2001 թուականին, Երեւանի Ռուբէն Սեւակի անուան դպրոցին հանդիսասրահին մէջ կատարուելիք յուշահանդէսի ընթացքին:

Բայց, նախ և առաջ, այս մրցոյթին առթիւ կ'ուզենք նշել մեր կարգ մը նկատողութիւնները գորս այժմեական և կարելոր կը նկատենք:

Այս մրցոյթը՝ միայն Հայաստանի գրողներուն սահմանուած էր:

Բայց Հայաստանի Գրողներու միութեան մաս կազմող գրեթէ ոչ մէկ գրող Ռուբէն Սեւակի անուան այս մրցոյթին մասնակցած է:

Այս անբնական երեւոյթը մեզ չի զարմացներ:

Մինչեւ 1988-թ.ները, մեծամասնութեամբ համայնավարութեան «հաւատամք»ին ջատագովները եղող Հայաստանի գրողներուն մէկ կարեւոր մասը, մենք ապշութեամբ նկատեցինք, որ քանի մը տարիներ յետոյ, Լեւոն Տէր Պետրոսեանին ներկայացուցած ամերիկեան գովառոյտական և մաֆիական բարձր «քաղաքակրթութեան» ամենամեծ պաշտպանները եղան:

Բնական է, որ Ռուբէն Սեւակին իւրացուցած Վարդանանցի հերոսներուն ազգային անձնագոհութեան իտեալներէն զուրկ եղող Հայաստանի այսօրուան գրողներու որոշ հատուածը, պիտի տարուէր այն հոսանքէն, որ կը կոչուի՝ «պատեհապաշտութիւն»:

... Եւ Ռուբէն Սեւակին ըսածին պէս, այս տեսակ մտաւորականներուն ուղեղները՝ *«փրցնել ու նետել»* պէտք է:

Եւ ամէն անցնող օր քիչ մը աւելի, Ռուբէն Սեւակին այս ախտագին մտաւորականներուն համար ըսածներուն մէջ, ո՛ր աստիճան իրաւունք ունենալը կը հաստատենք:

Այս տեսակ խաբարուած ուղեղներով մտաւորականներուն պատեհառու է նաեւ, որ հայ ժողովուրդը այսօրուան դժբախտութիւններուն ենթարկուեցաւ:

Բարեբախտաբար վերջին շրջաններուն հայ մտաւորականութեան մէջ, որոշ զարթօնք մը, ազգային և հայրենասիրական սկզբունքներու վերադարձի հոսանք մը սկսած է:

Եւ նաեւ Ռուբէն Սեւակի մրցոյթին մասնակցողներուն յայտնած գաղափարներուն մէջ ալ, շատ յստակօրէն կրնանք տեսնել այս փոփոխութիւնը:

Սրտանց կը շնորհաւորենք Ռուբէն Սեւակի անուան մրցոյթին մասնակցելու համար՝ ուսումնասիրութիւն ներկայացողները անխտիր:

Մենք, շնորհակալութեան պարտք ունինք հանդէպ բոլոր անոնց, որոնք, այս ուսումնասիրութիւններով, պիտի ծառայեն, Ռուբէն Սեւակի անձնագոհութեան ոգին հայ ժողովուրդին մէջ տարածելուն:

Դժբախտաբար, Հայաստանի ժողովուրդը շատ մը իրակաւութիւններու տեղեակ չէ:

Կը կարծենք, որ Հայաստանի ժողովուրդէն շատեր, «Պարոյր Սեւակի» անունին իսկական պատմութիւնը չեն գիտեր:

Եւ թերեւս ալ կարծողներ կան, որ Պարոյր Սեւակի անունը, առաջին օրէն իր սեփական անունը եղած է:

Ո՛չ:

Պարոյրին ազգանունը, մինչեւ 1944-թ.ները, իր երիտասարդութեան տարիները՝ «Ղազարեան» էր:

Եւ այն տարիներուն, «Սովետական գրականութիւն» ամսագրին խմագիր Ռուբէն Զարեանն Պարոյրին տուաւ «Սեւակ» անունը:

Որովհետեւ, Ռուբէն Զարեանի նման հայրենասէր մտաւորականներուն համար, «Սեւակ» անունը հերոսութեան, մարտիրոսութեան խորհրդանիշն էր:

Եւ այս պատճառաւ Ռուբէն Զարեան, Պարոյր Ղազարեանին տուաւ «Սեւակ» անունը, որ անոր մէջ վերածնի Ռուբէն Սեւակը՝ հերոս նահատակ բանաստեղծը:

Եւ ձենէ պիտի խնդրենք, որ Հայաստանի այս ողբերգական օրերուն, կարգաք և իւրացնէք Ռուբէն Սեւակին հերոսական կեանքին պատմութիւնը:

Այն ատեն, դուք հոգեպէս աւելի պիտի գօրանաք Ռուբէն Սեւակին անձնագոհութեան գաղափարներով և Հայաստանի այսօրուան նզնաժամային պայմանները բարելաւելու ուժը պիտի գտնէք ձեր մէջ:

Այստեղ կ'ուզենք նաեւ, մեր խորին շնորհակալութիւնները յայտնել Ռուբէն Սեւակի անուան վարժարանին անխոնջ տնօրէնունի՝ տիկին Ճուլիա Ղազարեանին և իր ժրաջան գործակիցներուն, որոնք Ռուբէն Սեւակին գաղափարները նոր սերունդներուն փոխանցելու համար բացառիկ և գիտակից աշխատանք կը տանին:

**ՄԵՐ ՆՈՐ ՏԱՐՈՒԱՅ ՄԱՂԹԱՆՔԸ՝
«ԱՍՏՈՒԱԾ ԽԵԼՔ ՏԱՅ ՀԱՅ ԱԶԳԻՆ»
ՍՓԻԻՌԻԻ ՀԱՅՐԵՆԱՍԷՐ ՀԱՅԵՐ՝ ԴՈՒՔ, ԻՆՉՈ՞Ւ ԿԸ ԼՈՒՔ
ԵՒ ՉԷՔ ՀԱԿԱԶԴԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ ԿԱՏԱՐՈՒԱԾ
ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ ՆՆՐՈՒՆ**

Սփիւռքահայեր՝

70 տարիներ շարունակ կեցաք կողքին ձեր վերածնած ազգային պետութեան, որ կը կոչուէր՝ Սովետական Հայաստան, և արեւմտեան պետութիւններուն շեփոքահարներուն և անոնցմէ մէկը եղող Հ.Յ.Դ.ին չհետեւեցաք:

Դիմադրեցիք անոնց սպառնալիքներուն և դեմ դրիք անոնց յարձակումներուն, շատ անգամ՝ ձեր կեանքի գնով: Շատ գոհեր տուիք, շատ տառապեցաք, բայց չվհատեցաք, և հաւատարիմ մնացիք Մայր Հայաստանին և Սուրբ Էջմիածնին:

1991-ին Արեւմտեան պետութիւնները, իրենց հայ գործակալներուն միջոցաւ, քանդեցին մեր լուսաւոր և բարգաւառ Հայաստանը: Եւ ստեղծեցին իբր թէ ազատ և անկախ Հայաստան մը:

Այսօր, տասը տարիներ յետոյ, բոլորս ալ գիտենք, թէ Հայաստանը ի՞նչ վիճակի ենթարկուած է:

Իրականութեան մէջ ներկայ Հայաստանը, 1918-1920-ի Ա. հանրապետութեան գրեթէ նոյն պայմաններուն և վիճակին մէջ է:

1918-1920-ին, Դաշնակցութիւնը, Արեւմտեան պետութիւններուն դրդումով, քշնամացած էին սովետներուն հետ: Ամբողջ յոյսերին Արեւմտեան պետութիւններուն վրայ դրած էին:

... Անոնց այդ շրջանի ղեկավարները խաբուեցան, և հայ ժողովուրդի մէկ հատուածն ալ մոլորեցուցին Արեւմտեան պետութիւններուն «Մովէ ծով Հայաստան»ի խոստումով:

Մանաւանդ՝ Ամերիկայի նախագահ Վիլսոնին Մեծ Հայաստանի քարտէսը ցուցնող նկարը, հայերը ուրախութենէ խենթացուցած էր:

Ի՛նչ խաբկանք:

Եւ այս յոյսով և հաւատքով, այդ ուղեկորոյս ղեկավարները, մինչև վերջին վայրկեանը, պայքարեցան սովետներուն դէմ: Եւ անոնք, 17 Փետրուար 1921-ի ապստամբութեամբ ալ ապացուցեցին, թէ ո՛ր աստիճան կոյր, ո՛ր աստիճան իրականութիւնները չտեսնող և հայ ազգը դէպի անդունդ առաջնորդող անպատասխանատուներ էին:

Եւ այսօր, ի՞նչ է վիճակը Հայաստանի մէջ:

Արեւմտեան պետութիւնները, իրենց դահիճներուն ձեռքերով, կատարել տուին 27 Հոկտեմբեր 1999-ի ողբերգութիւնը:

Եւ այս թուականէն յետոյ պետական Հայաստանը, 1918-1920-ի Ա. Հանրապետութեան նման, գրեթէ բոլորովին ինկած է Արեւմտեան պետութիւններուն գիրկը:

Եւ դուք, Սփիւռքի հայրենասէր հայեր, ինչո՞ւ կը լռեք և չէք հակազդեր հոն կատարուած ու շարունակուող ողբերգութիւններուն:

* * *

27 Հոկտեմբեր 1999-ի ողբերգութենէն քանի մը շաբաթներ յետոյ, երբ տեսանք, թէ Հայաստանի «Ազգային հեռատեսիլ»ը վերածուած է **գովպոյական** և **կանկսդերական** ամերիկեան բարձր «քաղաքակրթութեան» խօսափողի մը, այլեւս հանդուրժողութիւնը չունեցանք դիտելու այս օտարացած հեռատեսիլը:

... Բայց, քանի մը օր առաջ տեղեկացանք, թէ 15 Փետրուար 2001-ի Հինգշաբթի օրը, պիտի սկսի 27 Հոկտեմբեր 1999-ի ողբերգութեան դահիճներուն դատաւարութիւնը:

Եւ ուզեցինք գիտնալ, թէ ի՞նչ պիտի ըսէ այս օտարին ծառայող Հայկական Ազգային «հեռուստատեսիլ»ը, սկսող դատաւարութեան մասին:

Եւ Հինգշաբթի օրը, ժամը 17-ին, Երեւանէն տրուած լուրերը դիտեցինք:

Եւ դիտելէ յետոյ, կրկին համոզուեցանք, որ մենք չէինք սխալած այս օտարացած հեռատեսիլին մասին մեր ախտանախ չումին մէջ:

Նախ, խօսնակը 27 Հոկտեմբեր 1999-ի ողբերգութիւնը անուանեց՝ «27 Հոկտեմբերի գործին դատաւարութիւնը»:

Արդէն, խօսնակին առաջին նախադասութենէն յայտնի եղաւ, որ այս դատաւարութիւնը իսկական խեղկատակութիւն մըն էր:

Եւ անկէ յետոյ, քանի մը վայրկեան, ցուցադրեցին դատավարութեան սրահը, և այս կարն միջոցին նուազագոյնը տասն անգամ տուին դահին Յունանեանին անունը:

Այս դատավարութեան մասին տրուած լուրերուն մէջ, մեզի համար ամենէն կարեւորը հետեւեալ բացատրութիւնն էր.- Նահատակ Վազգէն Սարգսեանին ընտանիքը դատավարութեան չէին եկած, և ըսած էին թէ՝ **«մենք մարդասպաններուն հետ նոյն սրահը չենք ուզեր գտնուիլ»:**

Եթէ մտածենք, պիտի տեսնենք, որ այս խօսքին իմաստը շատ խորն է...:

Բայց՝ հասկցողին համար:

* * *

Եւ դատավարութեան բացումի լուրէն անմիջապէս ետք, իբր կարեւոր եղելութիւն ցոյց տուին Պարոյր Հայրիկեանը. եւ ան խօսեցաւ շատ երկար...: Զինք մտիկ ընելէ ետք, մենք կրկին ու կրկին համոզուեցանք, թէ 27 Հոկտեմբեր 1999-ի ողբերգութեան բուն պատասխանատուները, Արեւմտեան պետութիւններուն սայլին լծուած ներկայ Հայաստանի որոշ իշխանաւորներն են:

Աչքերնուս չէինք հաւատար, երբ 27 Հոկտեմբեր 1999-ի դատավարութեան լուրերէն անմիջապէս ետք, հեռատեսիլէն երեւցաւ սիոնիզմի մունետիկ Պարոյր Հայրիկեանը:

Եւ ինչե՛ր ըսաւ:

Իրապէս ալ ըսածները՝ հնչ ազգին թշնամին միայն կրնար ըսել.

Իբր թէ «Դիմում կատարած են չեղեալ համարել տալու համար 1921-ին, Լենինի և Աթաթիւրքի միջև ստորագրուած համաձայնութիւնը, որ Կարսը թուրքերուն կու տար»:

Սուտ, շատ մեծ սուտ:

Կարսը թուրքերուն տուող համաձայնագիրը, 2 Դեկտեմբեր 1920-ին, Ալեքսանդր Խատիսեանն էր որ Ալեքսանդրապոլի մէջ ստորագրեց, հայ ազգին երեսը մրոտող և նուաստացուցիչ այս դաշնագիրը, այդ օրուան վարչապետ Սիմոն Վրացեանի հրահանգով: Եւ նիշդ՝ Հայաստանին խորհրդայնացման օրը:

Դաշնակցական Կարօ Սասունի այս մասին հետեւեալը գրած է՝ **«Հայաստանի կառավարութիւնը և Հ. Յ. Դաշնակցութիւնը բոլոր ննարաւորութիւնները ունեին խուսափելու այս դաշնագիրը**

ստորագրելու պարտաւորութենէն»:

Բայց Պարոյր Հայրիկեանի սուտերը այսքանով ալ չաւարտեցան:

Ան շարունակեց գրպարտել. «18 Փետրուար 1921-ին, Հ. Յ. Դաշնակցութիւնը ազատագրեց Հայաստանը պոլշեւիկներէն և Հայաստանին ազատութիւնը հռչակեց»:

Խօսքը կը վերաբերէր այն ցաւալի ապստամբութեան, որ հազարաւոր հայերուն մահուան պատճառ եղաւ:

Ծանօթ է որ, իբր թէ ծայրայեղ ազգայնական, բայց իրականութեան մէջ հայկական ազգային բարձրագոյն շահերուն ինչ ըլլալէն անտեղեակ մտաւորական և պերճախօս Նժդեհի ղեկավարութեամբ Հայաստանի մէջ կատարուած այս ապստամբութեան օրերուն, մեծ թիւով հայեր, «համայնավար է» ըսելով՝ Նժդեհին զինեալներուն կողմէ, թրքավայել վայրագութեամբ ժայռերէն վար նետուելով սպաննուեցան:

Հայ ազգին շատ սուղ արժած այս տօնքիշողական ապստամբութեան օրերուն, դաշնակ ղեկավարները նոյնիսկ թուրքերուն դիմեցին և անոնցմէ օգնութիւն խնդրեցին, որ կարենան համայնավարներուն դէմ պայքարիլ:

... Բնական է՝ միջոց մը ետք, Հայաստանի նոր իշխանութիւնները յաջողեցան չէզոքացնել այս խռովարարները:

Եւ դաւադիր ղեկավարները, Հայաստանի պետական գանձն ալ միասին առնելով, Զանգեզուրէն դէպի Պարսկաստան փախուստ տուին:

* * *

Կատաղի հակահամայնավար մը եղող Պարոյր Հայրիկեանը, 15 Փետրուար 2001-ի Հինգշաբթի օրը հեռատեսիլէն կատարած ելոյթին ընթացքին, իր խօսքերովը ինքզինքը դիմակագերծեց:

Ան, մէկ կողմէն Փետրուար 1921-ի ապստամբութեամբ, հակասովետական պայքարին փառաբանութիւնը ըրաւ, նոյն ատեն ալ Լենինին Աթաթուրքին հետ համաձայնութիւն կնքելուն դէմ արտայայտուեցաւ:

Արդեօք, աշխարհի մէջ, որևէ ուրիշ կառավարութիւն ի՞նչ պիտի ընէր, եթէ 1918-1920 Հայաստանի կառավարութեան սովետներուն դէմ տարած պայքարին նման, ուրիշ պետութիւն մը իրեն դէմ

բշնամական վերաբերում ցուցաբերի:

1918-թ.ներուն սովետական ամենաբարձր ղեկավարութեան շարքերուն մէջ, Լենինին շատ մօտ եղող և անոր վրայ մեծ ազդեցութիւն ունեցող ազգասէր հայ համայնավար ղեկավարներ կային:

Ասոնք տեսնելով Հ.Յ.Դ.ի կառավարութեան ցուցաբերած անտրամաբանական հակասովետ կեցուածքը, դիմած էին անոնց ու քելադրած, որ հայկական ազգային շահերուն շատ վնասակար եղող իրենց հակասովետ բշնամութեան վերջ տան:

Բայց այն ատենուան հայ ղեկավարներուն և չքերը Արեւմտեան պետութիւններուն խոստումներով այն աստիճան շլացած էին [աւելի նիշդը՝ դարձեր էին վարձկանները արեւմտեան պետութիւններուն] որ անոնք շարունակեցին իրենց հակասովետ պայքարը:

Ուստի բնական է, որ այս պայմաններուն մէջ սովետները, ինքզինքնին համայնավար, Արեւմուտքին բշնամի ձեւացնող և սովետներուն շատ ջերմ բարեկամական արտայայտութիւններ շուրջ թուրքերուն պիտի մօտենային: Մանաւանդ որ այդ տարիներուն, Արեւմտեան 14 տերութիւններ յարձակումի անցած էին նորաստեղծ սովետական կարգերուն դէմ, ցարական զօրքին մնացուկներն ալ իրենց հետ ունէնալով, որ տապալեն սովետներու վարչակարգը:

Եւ այդպէս ալ եղաւ: Սովետները, ի տես հայերուն բշնամութեան և Արեւմուտքին յարելուն, սովետ. այն ատենուան շահերուն ստիպողութեան տակ, ժամանակաւոր գործակցութիւն հաստատեցին բեմալական թուրքերուն հետ:

Եւ դաշնակցական իշխանութիւններուն կոյրզկուրայն Արեւմտեան պետութիւններուն ծառայութեան լծուած ըլլալուն պատճառաւ, ոչ միայն կորսնցուցինք Կարսը, այլեւ՝ գրեթէ ամբողջ Արեւմտեան Հայաստանը:

Հ.Յ.Դ.ի այդ շրջանի ղեկավարները, Պարոյր Հայրիկեանի նման սիոնականատիպ - ամերիկացի դաւադիրի մը ձաբոտութիւնները, իրենց պատմական պատասխանատուութենէն չեն կրնար խուսափիլ:

Պ. Հ.ին լեզունագարութիւնները այսքանով ալ չաւարտեցան: Իրականութեան մէջ, անոր մինչև այդ վայրկեանը ըսածները, նախարան մըն էին միայն:

Անոր բուն նպատակը՝ այս առիթէն օգտուելով, Կարէն Տեմիրճեանին և Վազգէն Սարգսեանին վրայ յարձակիլ էր:

Եւ ան ըսաւ թէ՝

«Կարէն Տեմիրճեանը հեռացաւ համայնավարութենէն»:

Վազգէն Սարգսեանն ալ հեռացաւ կոմսոմոլէն» - ի՛նչ մեծ յանցանք:

Եւ յետոյ, ան, Կարէն Տեմիրճեանը ամբաստանեց, և սապէս ըսաւ՝

«Կարէն Տեմիրճեանը 1988-ին ըսած է, թէ Պարոյր Հայրիկեանը Հայաստանի ազատութիւնը ուզելուն համար գինք մեռցնել պէտք է»:

Այս ամբաստանութիւնը, պարզապէս, թրքավայել զրպարտութիւն է:

Բայց այսօր, իրականութիւն մը կայ.- Պարոյր Հայրիկեանը այսօր ողջ է, և իր յայտարարութիւններով կը շարունակէ դաւել նշմարտութեան և մեր ազգային շահերուն դէմ:

Բայց Կարէն Տեմիրճեանը՝ Պարոյր Հայրիկեանին խնկարկած Արեւմուտքին հետախուզութեան գործակալներուն ձեռամբ նահատակուած է:

Հայաստանի օտարացած Ազգային հեռատեսիլին 27 Հոկտեմբեր 1999-ի ողբերգութեան դատավարութեան լուրերը տալէ անմիջապէս յետոյ, Պարոյր Հայրիկեանը երկար ու բարակ խօսեցնելուն նպատակն էր.- Այս դատավարութեան պատճառաւ, ժողովուրդին մէջ, Կարէն Տեմիրճեանին և Վազգէն Սարգսեանին ի նպաստ ստեղծուելիք վերոյիշումներուն արգելք ըլլալ, և Պ. Հ.ի ձաբըռուքներով ալ, այս նահատակներուն յիշատակը մրոտել:

Օտարացած, «ազգային» կոչուելու անարժան հեռատեսիլին կատարածը՝ թրքավայել ռազմավարութիւն մըն է:

Թուրքերն ալ, այս օրերուն, իրենց թերթերով և հեռատեսիլներով, նոյն ռազմավարութիւնը կ'օգտագործեն:

Ֆրանսական պետութեան Հայկական ցեղասպանութիւնը պաշտօնապէս ընդունելէն յետոյ, թուրքերը ամէն տեսակի սուտերով և

գրպարտութիւններով ապացուցանել կը ջանան, թէ թուրքերը՝ հայերը ցեղասպանութեան չեն ենթարկած, այլ ընդհակառակը՝ հայերը սպանդի ենթարկած են թուրքերը:

Եւ թրքական «թելեվիզիոն»ները, իրենց այս ձաբընտուքները, շատ յանախ, Պոլսոյ մէջ ապրող հայերուն բերնովը կրկնել կու տան:

Շատ ցաւալի է տեսնել՝ ցեղասպանութեան ենթարկուած ազգի մը Պոլսոյ մէջ մնացած իլեակներուն, մարդկութենէ հեռու և գրեթէ ստրկացած կերպարը:

Այս հայերը, թուրքերուն իրենց սորվեցուցած սուտերը և գրպարտութիւնները, թրքական «թելեվիզիոն»էն իրար ետեւէ թութակի պէս կը կրկնեն:

Մէկ տարբերութեամբ՝ որ Պոլսոյ մէջ այս դաւանանական խօսքերը ընող հայերը, իսկական պատանդներ են:

Մինչդեռ Հայաստանի մէջ, Ազգային հեռատեսիլէն տարբեր սուտեր ըսողն և տարբեր գրպարտութիւններ կատարողը՝ սինիստական համաշխարհային կազմակերպութեան մէկ հնարքը եղող՝ «մարդկային իրաւանց կազմակերպութեան» Հայաստանի մասնանիւղին ղեկավար Պարոյր Հայրիկեանն է:

**ՌՌԻԲԷՆ ՍԵՒԱԿԻ ԾՆՆԴԵԱՆ 116-ԱՄԵԱԿԻ ՆՇՄԱՆ
ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ, ԵՐԵՒԱՆԻ ՄԷՋ...
ՅՈՎՀԱՆՆԷՍ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆԻ
ՄՐՏԻ ԽՕՍՔԸ**

Ծ. Խ.- Երեւանի «Ռուբէն Սեւակ»ի անուան դպրոցի մէջ, հանդիսաւորապէս նշուեցաւ նահատակ-հերոս գրողի ծննդեան 116-րդ տարեյիցը, Հայաստանի Կրթական նախարարութեան ներկայացուցիչին, մտաւորական ընտրանիին ու հոծ հասարակութեան ներկայութեան:

Ստորեւ կը ներկայացնենք Ֆրանսայի Նիս քաղաքի մէջ Ռուբէն Սեւակի անուան Յիշատակի Տան հիմնադիր, կորովի և բազմաշնորհ հրապարակագիր Յովհաննէս Զիլինկիրեանի սրտի խօսքը, որ փոխանցուած է հանդիսութեան մասնակիցներուն և հայրենարնակ մեր ժողովուրդին ընդհանրապէս, հայրենի մտաւորականի մը կողմէ:

**ՍԻՐԵԼԻ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐ,
ԵՂՐԱՍՅՐՆԵՐ ԵՎ ՔՈՅՐԵՐ.**

Երեւանի Ռուբէն Սեւակի անուան վարժարանին մէջ, այսօր կը յիշատակուի բանաստեղծ Ռուբէն Սեւակի ծննդեան հարիւր տասնվեցերորդ տարեդարձը:

Այս պատճառաւ, Ռուբէն Սեւակի հարազատներուն անունով, սրտանց շնորհակալութիւն կը յայտնենք ձեր ներկայութեան և նաեւ հանդիսութեան կազմակերպիչներուն:

Այսօրուան հանդիսութեան՝ պիտի ծանուցուի նաեւ, Ռուբէն Սեւակին գաղափարականը և նահատակութեան պատմութիւնը հայ ժողովուրդին մէջ տարածելու նպատակով, Ապրիլ 2000 թուականին յայտարարուած մրցոյթին արդիւնքները:

Բայց, այստեղ, հարցում մը կը ծնի մեր մէջ:

Իրականութեան մէջ, ինչի՞ կը ծառայէ երկու հազարամեայ և փառապանծ հայկական մշակոյթը:

Արդեօ՞ք, հայկական մշակոյթը կը ծառայէ միայն, այս մշակոյթէն օգտուող կարգ մը գրագէտ և բանաստեղծներուն

անձնական փառաբանութեան:

Եւ կամ թէ այս մշակոյթը ծառայելու է միայն և միայն, այս մշակոյթին իսկական տէրը եղող հայ ազգին բարգաւաճման և յաւերժացման:

Մանաւանդ, երբ նկատի առնենք, թէ հայ ազգը 150 տարիներէ ի վեր և նոյնիսկ մինչեւ այսօր, ամէն օր քիչ մը աւելի, քայքայման նամբուն մէջ է:

Եւ մենք կը հաւատանք, թէ հայ ազգին ենթարկուած դժբախտութիւններուն առաջնակարգ պատճառներէն մէկը՝ հայ մտաւորականութեան մեծամասնութեան հայ ազգին ցաւերուն հանդէպ ցուցաբերած անտարբերութիւնն է:

Հայ մտաւորականութեան կարեւոր մէկ հատուածը, հայ մշակոյթը գործածած է իր անձնական իղձերը, իր ներքին մղումները գոհացնելու համար:

Անոնք, այս ձեւով եղած են՝ հայ ազգին, հայկական մշակոյթին հարստահարիչները, և հայ ազգային մշակութային ժառանգութիւնը մսխողները:

Ռուբէն Սեւակին, ասկէ գրեթէ 90 տարիներ առաջ գրածները կարդալ և իբր սրտցաւ հայ անոր իրաւունք չտալ՝ անկարելի է:

Նայեցէք, թէ ի՛նչ կ'ըսէ Ռուբէն Սեւակ, «Այլասերում» անունը կրող իր գրութեան մէջ.

«Զէ՞ք տեսներ արդէն, թէ ինչպէս շատ մը գրագէտներ, լիբր քաջութիւնը ունին յայտարարելու՝ թէ իրենք ժողովուրդին համար չէ, որ կը գրեն:

Որքուկի պէս անտէր ցեղ մը հուժկու, ու լուսեղ ու սիրաբուխ բարբառի մըն է ծարաւ, իսկ մեր գրագէտները հանելուկային, առեղծուածային, խաւարակուռ բաներ կ'ըսեն իրեն, ու մեր քերթողները՝ գրիչնին հայ արեան մէջ թաթխելէ վերջ՝ չինարէն տաղեր կը գրեն որպէսզի մարդ չհասկնայ»:

1910-թ.ներուն արդէն, Ռուբէն Սեւակին մտասէւեռումն էր գրել.

«Միայն հայ ժողովուրդին օգտին համար, և մանաւանդ՝ անոր հասկցած ձեւով»:

Եւ այս նպատակին համար ալ, ան նախատեսած էր.

«Հայ մտաւորականութեան վերածնունդը»:

Դժբախտաբար, թուրք դահիճները արգելք եղան այս վերածնունդին...:

* * *

Ռուբեն Սեւակի անուան մշակութային հիմնարկը, 1985-էն ի վեր, իր կարելիութեան սահմաններուն մէջ կ'աշխատի՝ վառ պահելու համար Ռուբեն Սեւակին յիշատակը և անոր գաղափարները:

Այս նպատակով է, որ 1986-ին, Ֆրանսայի Նիս քաղաքին մէջ, ստեղծուեցաւ **Ռուբեն Սեւակի Յիշատակի Տունը**:

1994-ին, Կիլիկիոյ Կաթողիկոս Գարեգին Բ.ի հովանաւորութեամբ, Պէյրութի մէջ բացումը կատարուեցաւ Ռուբեն Սեւակի անուան մատենադարանին:

Եւ 1995-էն ի վեր ալ, Ռուբեն Սեւակի հարազատները, հովանաւորելու կը ջանան՝ Երեւանի Ռուբեն Սեւակի անուան դպրոց-վարժարանը:

Ռուբեն Սեւակի գաղափարները տարածելու աշխատանքներուն մաս կազմած է նաեւ, 1985-ին ստեղծուած Ռուբեն Սեւակի անուան մրցանակը:

Այս մրցանակը յատկացուեցաւ՝ Ռուբեն Սեւակը ծանօթացնելու և անոր գաղափարները տարածելու աշխատող հայ մշակոյթի վաստակաւոր ներկայացուցիչներուն: Որոնց մաս կը կազմեն՝ Անդրանիկ Մառուկեանը, Ալեքսանտր Թոփչեանը, Անահիտ Թոփչեանը, Գեորգ Գապառանեանը, Ժիրայր Նայիրին, Պէպօ Սիմոնեանը, Վարդան Ապտօն, Ճուլիա Ղազարեանը, Վահան Նաւասարդեանը և Հայաստանեայց եկեղեցւոյ համալսարանական ուսանողներու միութիւնը [ՀԵՀՈՄ-Անթիլիաս]:

* * *

Ապրիլ 2000-թ.ին յայտարարուած մրցոյթին՝ մինչեւ 26 Օգոստոս 2000 թուականը եղող ժամանակամիջոցը շատ կարճ ըլլալուն պատճառաւ է թերեւս, որ ներկայացուած աշխատասիրութիւններուն մէջ, մրցոյթին պայման ըլլալով պահանջուած «Ռուբեն Սեւակի գաղափարականը և նահատակութեան պատմութիւնը» իբր առաջնակարգ բնաբան [Thema] չեն առնուած:

Այս տեսակետով այս մրցոյթին առաջին, երկրորդ և երրորդ մրցանակները վերապահուած են՝ մինչեւ 31-12-2001 թուականը ներկայացուելիք և միայն Ռուբեն Սեւակին գաղափարականը և նահատակութեան պատմութիւնը իբր բնաբան առնող բանիմաց և

լայնածաւալ աշխատասիրութիւններուն:

Այս մրցոյթին արդիւնքները պիտի ծանուցուին 24 Ապրիլ 2002-ին, Եղեռնի տարեդարձին օրը:

Ուրեմն այստեղ, ծանուցանելու հաճոյքը ունինք, 2000 թուականի Ռուբէն Սեւակի անուան մրցոյթին դափնեկիրները՝

4.- Զորրորդ մրցանակ- Սերգէյ Գալոյեան- **«Ռուբէն Սեւակ Տրուբադորը»:**

5.- Հինգերորդ մրցանակ- Հռիփսիմէ Պետրոսեան- **«Հայ քնարերգութեան ներմակ ձիււորը»:**

6.- Վեցերորդ մրցանակ- Արմենուհի Բուրմանեան- **«Ռուբէն Սեւակ»:**

Այս մրցանակակիրներէն գատ, հետեւեալ աշխատասիրութիւնները յիշատակութեան արժանի նկատուած են.

- Յասմիկ Յովհաննիսեան՝ **«Ու ինքնայրումն այդ անմահութեան խորհուրդն ունի»**, Գայանէ Աթանեսեան՝ **«Ռուբէն Սեւակ»**, Արաքսիա Յովհաննիսեան՝ **«Ջրոյց ժամանակի մէջ»**, Վարդուկ Դպրուհի՝ **«Հայ տրուբադորը»**, Շուշանիկ Ոսկանեան՝ **«Ռուբէն Սեւակ»**, Էմմա Յարութիւնեան՝ **«Մահ չիմացեալ մահ է, մահ իմացեալ անմահութիւն է»**, և նաեւ Ռուբէն Սեւակին գաղափարականը շատ տարբեր ձեւով մեկնաբանող ուսումնասիրութիւն մը՝ Արամ Ալեքսանեան - **«Ռուբէն Սեւակի գրական ժողովրդական իմացաբանութիւնը»:**

* * *

Սրտանց կը շնորհաւորենք Ռուբէն Սեւակի անուան մրցոյթին մրցանակակիրները, և նաեւ յիշատակութեան արժանի նկատուած ուսումնասիրութիւններուն հեղինակները:

Մենք, շնորհակալութեան պարտք ունինք, հանդէպ բոլոր անոնց, որոնց հեղինակած ուսումնասիրութիւնները՝ պիտի ծառայեն Ռուբէն Սեւակի կեանքը, գործը և նաեւ անոր անձնագոհութեան ոգին հայ ժողովուրդին մէջ տարածելուն:

Այստեղ կ'ուզենք, խորին յարգանքով խոնարհիլ, սովետական շրջանի հայ մշակոյթի ներկայացուցիչներուն առջեւ, որոնք, 1920-էն սկսեալ, Ռուբէն Սեւակը Հայաստանի մէջ ծանօթացնելու նպատակով ուսումնասիրութիւններ և նաեւ գիրքեր հրատարակած են:

Այս հրատարակութիւններէն, մենք մեր քով ունինք միայն հետեւեալ գիրքերը՝

1.- 1955-ին, Երեւանի մէջ, Եղիշէ Պետրոսեանի հեղինակութեամբ հրատարակուած՝ **«Ռուբէն Սեւակ - Երկեր»** վերտառութեամբ գիրքը:

2.- 1959-ին, Երեւանի մէջ, Գեորգ Հատիտեանի հեղինակութեամբ հրատարակուած՝ **«Ռուբէն Սեւակ»** վերտառութեամբ գիրքը:

3.- 1965-ին, Երեւանի մէջ, Եղուարդ Ջրբաշեանի հեղինակութեամբ հրատարակուած՝ **«Ռուբէն Սեւակ»** վերտառութեամբ գիրքը:

4.- 1972-ին, Երեւանի մէջ, Վլատիմիր Կիրակոսեանի հեղինակութեամբ հրատարակուած՝ **«Ռուբէն Սեւակ - Կեանքը և ստեղծագործութիւնը»** վերտառութեամբ գիրքը:

Մենք, այս հեղինակներէն միայն, 1978-ին, Երեւանի մէջ, Վլատիմիր Կիրակոսեանը ճանչնալու հաճոյքը ունեցանք:

Եւ եթէ, Վլատիմիր Կիրակոսեանը այսօր, այս սրահին մէջ է, կրկին մեր շնորհակալութիւնները կը յայտնենք իրեն:

Եւ այս առթիւ հաճոյքը ունինք ծանուցանելու, թէ Վլատիմիր Կիրակոսեանը, Ռուբէն Սեւակի անուան մշակութային հիմնարկի կողմէ՝ «Վերածնունդ»ի մրցանակով պարգեւատրուած է:

Այստեղ կ'ուզենք նաեւ, մեր խոր գնահատանքը յայտնել, Երեւանի Ռուբէն Սեւակի անուան վարժարանի անխոնջ տնօրէնութիւնի՝ տիկին Ճուլիա Ղազարեանին, և իր ժրաջան գործակիցներուն որոնք, Ռուբէն Սեւակին գաղափարները նոր սերունդներուն փոխանցելու համար, բացառիկ և գիտակից աշխատանք կը տանին:

**«ՄԵՐ ԱՆՅԱԶՈՂՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ՊԱՏ-
ՃԱՌԸ ԱԾՆ Է, ՈՐ ՂԵԿԻՆ ԳԼՈՒԽ ԿԸ ՆՍՏԵՑՆԵՆՔ ՄԵՐ ԷՆ
ԱԽՏԱԳԻՆ, ԷՆ ԱԶԼԱՍԵՐԱԾ, ԷՆ ԱՆՊԷՏ ԾՆՈՒՆԴՆԵՐԸ:
ՍԱԿԱՅՆ ՍՏՈ՛ԹԳ ԿՐԸՍԵՄ ԶԵԶԻ, ՎՏԱՆԳԸ ՄԵԾ Է, ԾԱ՛Տ ՄԵԾ,
ԱԻԵԼԻ ՄԵԾ ՔԱՆ ԿՐՆԱՆՔ ԵՆԹԱԴՐԵԼ»**

ԶՕՆ՝ 24 ԱՊՐԻԼ 1915-Ի ԱՆՄԵՂ ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒՆ

Մեր բոլոր դժբախտութիւններուն և նոյնիսկ Հայաստանի այսօրուան քաոսային վիճակին նախատեսութիւնը և անհաւատալիօրէն նշգրիտ ախտահանաչումը եղող վերի այս տողերն գրողը մենք չենք, ոչ ալ մեր շրջանը ապրած ուրիշ գրող մը:

Իննսուն տարիներ առաջ յայտնուած այս գաղափարներուն հեղինակը՝ «24 Ապրիլ 1915»-ին նահատակուած բանաստեղծ-գրագետ մըն է:

Այս նահատակ բանաստեղծը, դեռ 1911-ին զգուշացուցած էր հայ մտաւորականութեան ըսելով՝

«Հեռո՛ւ մենէ ախտագին մտաւորականներ: Դուք ցեղին ուղեղն էք: Բայց երբ այդ ուղեղը ուրիշ կերպ չի կրնար խորճիլ քան յուսահատեցնելով մեր կենսունակութիւնը, մենք պիտի փրցնենք ու նետենք այդ ուղեղը»:

Բայց բանաստեղծ-գրողին մարգարեական այս խօսքերը, Պոլսոյ հայկական սուտ դրախտին մէջ օրօրուող հայ մտաւորականութեան կողմէ բնաւ նկատի չառնուեցան:

Եւ անխուսափելին պատահեցաւ: Եւ բանաստեղծ-գրողին նախատեսած «մեծ վտանգը», 24 Ապրիլ 1915-ին դժբախտաբար իրականացաւ:

Եւ հայ մտաւորականութեան Պոլսոյ սուտ դրախտը, 24 Ապրիլ 1915-ին, Չանդըրբի և Այաշի մէջ իսկական դժոխքի վերածուեցաւ:

Պոլսոյ մէջ, Տօն Քիչոքներու նման մութին մէջ սուր շարժող և յոխորտացող «մեծ բանաստեղծները», Չանդըրբի և Այաշի մէջ

«գառնուկ»ի, աւելի նիշդ՝ «մուկ»ի վերածուած էին՝ վախերնէն:

Այդ յոխորտացող մեծ բանաստեղծներէն մէկը՝ Այաշէն Պոլիս գրած մէկ բացիկին մէջ կ'ըսէր, թէ՝ **«Ինք բնաւ քաղաքականութեամբ չէ գրադած»:**

Ուրիշ «մեծ» բանաստեղծ-Տօնքիշոք մը, Չանդըրըի մէջ, թրքական գրականութեան մասին բանախօսութիւններ կու տար իր ընկերներուն:

Այդ օրերուն Չանդըրըի թուրք պատասխանատուները, հայ արտօրեալ մտաւորականութեան մէջ գրոյցներ տարածեցին, թէ՝ «Եթէ իսլամութիւնը ընդունին՝ պիտի փրկուին մահէն»:

Մեր այս գրութեան վերտառութեան հեղինակը եղող բանաստեղծ-գրողը, Չանդըրըի մէջ օրերով աշխատեցաւ, հոգիով տկարացած իր մտաւորական ընկերները համոզելու համար, որ պիտի չտարուին թրքական խոստումներէն և իսլամութիւնը պիտի չընդունին:

Եւ ամէն մէկուն Աւետարանի վրայ երդում ընել տուաւ, թէ պիտի չլքեն իրենց Սուրբ հաւատքը:

Բայց, նակատագրի ի՛նչ դիպուած, որ իր մտաւորական ընկերները իսլամութիւնը չընդունելու համար համոզել աշխատող բանաստեղծը, այս անգամ ինք ենթարկուեցաւ իսկական փորձութեան...:

Այս բանաստեղծը, նոյն ատեն բժիշկ էր: Եւ Չանդըրըի մէջ այդ օրերուն թուրք երեսելիի մը աղջիկը դարմանած և մահէ ազատած էր:

Եւ թուրք աղջիկը սիրահարած էր հայ բժիշկին:

Աղջկան հայրը բժիշկին առաջարկեց, որ իսլամութիւնը ընդունի և ամուսնանայ իր աղջկան հետ: Միայն այս պարագային ինքը կրնար փրկել բժիշկին կեանքը: Սակայն բանաստեղծ-բժիշկը մերժեց թուրքին փրկութեան առաջարկը: Եւ 26 Օգոստոս 1915-ին Չանդըրըն Այաշ փոխադրուած օրը, Գալեհիկ գիւղաքաղաքին մօտերը, նահատակուեցաւ թուրք Իթթիհատ կուսակցութեան Չանդըրըի պատասխանատու ձեմալ Օղուզի կարգադրութեամբ:

Բանաստեղծ բժիշկը սպաննող թուրք դահիճներուն մէջն էր նաեւ, իր դարմանած աղջկան հայրը:

* * *

Բանաստեղծ-բժիշկին այս նահատակութեան պատմութիւնը 1918-ին, զինադադարէն յետոյ, Պոլսոյ ժողովուրդին մէջ իբր «ղիւցագներգութիւն» տարածուեցաւ:

1919-ին Պոլսոյ մէջ, իբր հերոս նահատակ, մասնաւորապէս իրեն համար սգահանդէսներ կատարուեցան:

Այն տարիներուն իր մասին եղած փառաբանական արտայայտութիւններէն մեզ ամենէն շատ տպաւորողը, «Ամենուն Տարեցոյցը»ի հեղինակ Թեոդիկի ըսածներն են.

«Աբէնա իմաստութեան շիրք դրած է անոր ուղեղին մէջ, Եսկիւլայ՝ բժշկական խորհուրդը. Հերմէս ալ՝ կայծը պերճախօսութեան»:

Բայց, ամենէն կարեւորը՝ թուրքերուն այս բժիշկ-բանաստեղծին մասին ըսածներն են: 1919-ին հրատարակուած Johannes Lepsius-ի գերմանական արխիւներուն մէջ, հայերու վերաբերեալ վաւերագրերու գիրքին 163-րդ էջին մէջ, թուրք իշխանութիւնները անոր մասին սապէս արտայայտուած են.

«Ան կը նկատուի, իբրեւ մէկը այն հայ մտաւորականներէն, որուն զանգւածներուն վրայ ունեցած ազդեցութենէն կը վախցուի»:

* * *

Բայց 1919-էն յետոյ, անցնող տարիներու ընթացքին շատ բան փոխուեցաւ: Եւ ուղեղները փրցուելիք առաջնորդներու «շնորհիւ», նոյնիսկ 1915-ի Հայկական Եղեռնը մեծ չափով մոռցուեցաւ:

Եւ մոռացութեան նամբուն մէջ մտան նաեւ հայ նահատակները:

Եւ չենք գիտեր, քէ ի՞նչ պատճառաւ, գիտակցաբար մոռացութեան ենթարկուեցաւ հերոս-նահատակ բժիշկ բանաստեղծը:

Եւ միայն շատ սեղմ շրջանակի մէջ կը յիշատակուէր անոր անունը:

Եւ 1945-թ.ներուն, պատմութեան մէջ նմանը չեղող, ոնիրի համազօր արարք մը կատարուեցաւ:

Թուրքերուն կողմէ անոր նահատակուելէն 30 տարիներ յետոյ, ան կրկին նահատակուեցաւ: Այս անգամ հայերուն կողմէ: 1915-ին թուրքերը, անոր միայն մարմինը սպաննած էին: Իսկ 1945-թ.ներուն Հայաստանի մէջ, անոր հոգին ալ սպաննեցին, նահատակին անունը ուրիշ բանաստեղծի մը տալով:

Այս, երկու անգամ՝ նախ թուրքերուն ու ապա հայերուն կողմէ

նահատակուող բժիշկ-բանաստեղծին, իր հայ անունն ու հաւատքը չփոխելու համար մեռնիլը նախընտրող հերոսին անունը **Ռուբէն Սեւակ էր:**

* * *

Ռուբէն Զարեան անունով հայրենի գրականագէտ մը 1945-թ.ներուն, Աւետիք Իսահակեանին Ռուբէն Սեւակի ողբերգական կեանքին պատմութեան մասին իրեն ըսածներուն ազդեցութեան տակ, հետեւեալ առաւօտ իրեն ներկայացող երիտասարդ Պարոյր Ղազարեանին՝ «Սեւակ» գրչանունը կու տայ:

Ռ. Զարեանին միամտօրէն, բայց տգիտօրէն կատարած այս «սրբապղծութեան» հետեւանքները, Ռուբէն Սեւակի յիշատակին համար «մահացու» եղած են:

Հայ գրականութեան ծանօթ եղողները, շատ լաւ գիտեն, թէ այս անուններու նմանութիւնը ի՞նչ աստիճան ցաւալի սխալներու և շփոթութիւններու պատճառ եղած է. և կը շարունակէ ըլլալ:

Ռ. Զարեան 1982-ին, իր մեզի գրած պատասխան նամակին մէջ, այս մասին սապէս կ'ըսէր.

«Պարոյրին իր սրտով չի եղել, մի ուրիշ ազգանունով հանդէս գալը, բայց շատ երիտասարդ լինելով, չի համարձակուել հակադրուիլ, և համակերպուել է»:

Այս մասին պիտի ներկայացնենք ուրիշ գրութիւն մը, որուն մէջ նոյնիմբն՝ Պարոյր «Սեւակ» բոլորովին տարբեր ձեւով արտայայտուած է:

Այս գրութեան հեղինակը՝ Հ.Յ.Դ.ի ծանօթ դեկավարներէն, բայց չերմ հայրենասէր Կարօ Մեհեանն է:

Այստեղ կու տանք Աթէնքի «Ազատ օր» օրաթերթին մէջ, 15 Մարտ 1978-ին հրատարակուած Կարօ Մեհեանին «Գրչանուն» վերտառութեամբ յօդուածէն հատուած մը.-

«Ունինք նաեւ ծածկանուն բառը, որ թարգմանութիւնն է, յունարէն «պստոսոնիս» բառին, «պստոնօ», իսբող, կեղծ, «օնումա» անուն:

Անշուշտ մեր «գրչանունը» ոչ միայն աւելի արտայայտիչ է, այլեւ... պարկեշտ: Ոչ կեղծել և ոչ ալ ծածկուիլ:

Գրչանունը կամաւոր հրաժարումն է, գրական մարզէն ներս ընտանեկան անունէն կամ մականունէն, անձնական նախասիրութեամբ մը մէկ կամ մէկէ աւելի բառերու, որոնք կրնան գոյական կամ ածական ըլլալ:

Ան յատուկ է և յատուկ պետք է մնայ միայն անոր, որ սեփականացուցած է զայն՝ իբրև իր գրչանունը:

Այս յատակ և անվիճելի մեկնաբանութեամբ ալ գրչանունը, կը խորհիմ, ժառանգական չէ, ինչպէս է ընտանեկան անունը կամ մականունը:

Մեր մէջ, մանաւանդ վերջերս, այս օրինականութենէն շեղումներ եղած են:

Ռուբէն Սեւակ, ընտանեկան անունով Զիլինկիրեան, իր սկզբնական շրջանէն իսկ, մեր գրական անդաստանէն ներս մուտք գործած է ա յդ գրչանունով: Իր ընտանեկան անունը կը յիշուի միայն կենսագրականներուն մէջ: Նոյնն է պարագան բոլոր գրագէտներուն, որոնք գրչանուն մը ունին:

Այսուհանդերձ Հայաստանի մէջ «Սեւակ» գրչանունը իւրացնողներ եղան.- Գուրգէն Սեւակէն ետք, Պարոյր Սեւակ: Գրչանունները անձեռնմխելի և անվիճելի սեփականութիւններ են, որոնք ո՛չ կ'իւրացուին և ո՛չ ալ կը ժառանգուին: Երբ Պարոյր Սեւակ Փարիզ այցելեց, մեր խօսակցութեան ընթացքին մեղմ ձեւով յիշեցուցի այդ պարագան: «Ես Ռուբէն Սեւակը կը գնահատեմ իբրև բանաստեղծ եւ իբրև արձակագիր, իսկ իր գրչանունը շատ հանելիքուած է ինձի» ըսաւ:

Իր բացատրութիւնը ո՛չ համոզիչ էր և ո՛չ ալ արդարանալի: Ենթադրենք, թէ մենք ունենանք գրագէտ կամ բանաստեղծ Սիամանթօներ, Վարուժաններ, Սիպիլներ, Համաստեղներ, Ինտրաներ, Օշականներ, Նարդուհիներ, Շանթեր միայն անձնանուններու տարբերութիւններով...

Գրչանուն մը զինք ընտրող գրագէտինը կամ բանաստեղծինն է՝ նոյնացած անոր հետ:

Որակում մը, որով կը բնորոշուի գրողը, - իր գրականութիւնը - և ոչ թէ իր անձը:

Գրչանունը գրագէտին կամ բանաստեղծին «պատմունանը» կամ «շուջառն» է, որով հանդերձեալ է «պատարագելու» գրական տանարէն ներս:

Կամ «գարդարեալ ի գգեստ անկողոպտելի» «Ի տեղուջն փառարանութեան»:

ԿԱՐՕ ՄԵՀԵԱՆ

* * *

ԱՅՍԻՄՆԱՆ ՍՐԲԱՊՂԾՈՒԹԻՒՆԸ ԱՅԼԵՒՍ ԱՆՀԱՆԴՈՒՐԺԵԼԻ Է

Մենք, մինչեւ հիմա, խուսափած էինք՝ Ռուբեն Սեւակին 1907-էն ի վեր սեփականութիւնը եղող «Սեւակ» անունը տասնամեակներ տեւողութեամբ շահագործող «Պարոյր Ղազարեան»ին և անոր պարագաներուն դէմ միջազգային կազմակերպութիւններու ցամբով դատ բանալէ:

Մեր հայկական «անիմաստ» խղճմտութիւնը՝ արգելք եղած էր Հայաստանի կազմակերպութիւններուն դէմ այս քայլին դիմելու:

Բայց, 12 Մարտ 2001-թ.ին, Փարիզի «Կամք» օրաթերթին մէջ հրատարակուած «Արմէնփրես»ի լուրը կարդալէ ետք, որոշեցինք, Ռուբեն Սեւակի դէմ շարունակուող այս սրբապղծութեան արգելք ըլլալու համար, մեր բոլոր կարելիութիւններով, միջազգային դատարաններու դիմել:

Պարոյր Ղազարեանին մահուան 30-րդ տարեդարձը նշելու ծրագիրը տուող «Արմէնփրես»ին լուր-յայտարարութեան մէջ, Պարոյր Ղազարեանին անունը նշուած է վեց անգամ, առանց Պարոյր ըսելու, այսինքն՝ միայն «Սեւակ»:

* * *

Պարոյր Ղազարեանի մասին «Արմէնփրես»ի գծով տարածուած այս լուրին հեղինակը՝ անոր 30-ամեակի ծրագիրը պատրաստող Հայաստանի Գրողներու Միութիւնն է: Այսինքն՝ այս միութիւնն է, Ռուբեն Սեւակի դէմ կատարուած սրբապղծութեան աղբիւրը:

Ռուբեն Սեւակ որքա՛ն իրաւունք ունէր, անգիտակից և «հայկականութեան ոգի» չունեցող մտաւորականներուն համար երբ կ'ըսէր. **«Մենք պիտի փրցնենք ու նետենք այս ախտագին մտաւորականներուն ուղեղները»:**

Մեր խօսքը անարժան «մտաւորական»ներուն ուղղելով կ'ըսենք. - Դուք, այսօրուան Հայաստանի «հայկական ոգի»է գուրկ մտաւորականներ՝ Ռուբեն Սեւակին ըսածին պէս՝ դուք էիք ցեղին ուղեղը: Դուք կը դասուիք Հայաստանի այսօրուան քառսային վիճակին առաջնակարգ պատասխանատուներէն:

Դուք էիք Լեւոն ըսուած Արեւմուտքի կամակատարին ետեւէն հլու հնագանդ, ոչխարներու պէս քալողները: Նաև դուք էիք, անոր հրամանով բարգաւան Սովետական Հայաստանը փլցնողները: Դուք, հայկականութեան տեսակետով այնքա՛ն անգիտակից էիք, որ Հայաստանի Ազատագրութեան Հայ Գաղտնի Բանակը ներսէն քանդող ամերիկացի Մոնթէ Մելքոնեանը Հայաստանի մէջ հերոսի վերածեցիք:

Եւ մինչև հիմա ալ, այս դրուժանին Երեւանի մէջ կանգնեցուած արձանին առջեւէն երկրպագելով կ'անցնիք:

Եւ դուք էք՝ Լ. Տ. Պ.ի հրաժարումէն ետք, զինք պաշտպանողը և անոր թիկունք կանգնողը:

Եւ մանաւանդ՝ դուք էք, 27 Հոկտեմբեր 1999-ի ողբերգութեան պատասխանատու, Հայաստանի ներկայ իշխանաւորները եղող դարաբաղցի ծանօթ աւատապետներուն դեմ լռողներն և անոնց առջև գլուխ ծոողները:

Պատմութիւնը երբե՛ք պիտի չներէ ձեզի՝ «Ախտագի՛ն մտաւորականներ»:

**«ՄԵՌՆՈՂԻՆ ԻՐԱՒՈՒՆՔԸ՝ ՄԵՌՑՆՈՂԷՆ ՀԱՐՑՆԵԼԸ,
ԵՂԵՐԱԿԱՆ ԱՆՄՏՈՒԹԻՒՆ ՄԸՆ Է»**

Լոզան, 10. Օգոստ. 1910 - Ռուբեն Սեւակ

ՇԻՄՈՆ ՓԵՐԷՋ ԿՊԻՐԱՆԱՅ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ

10 Ապրիլ 2001 թուականին, հրեաներուն առաջնակարգ եղբայրակից-դաշնակիցը և զինակիցը եղող թուրքերուն մայրաքաղաք Անգարայի մէջ, Իսրայէլի նորընտիր Ա. Գ. նախարար Շիմոն Փերեզ, որ շատ մը մեծապատիւ հայերու կողմէ սոցիալիստ և մարդասէր կը կարծէր՝ հետեւեալ յայտարարութիւնը կատարած է՝ **«Մեզի համար մերժելի է ողջակիզումին [Holocauste] և ցեղասպանութեան հայկական պնդումներուն միջեւ նմանութիւն ստեղծելու ամէն միտում: Հայերուն ապրածը ողբերգութիւն մըն էր: Բայց երբեք ցեղասպանութիւն մը չէր»:**

Մեզի համար նորութիւն չեղող, հրեայի մը այս խօսքերը՝ շատ մը երեւելի և մեծ տիտղոսներ ունեցող ամերիկահայերու, ֆրանսահայերու կողմէ ապշուրեամբ դիմաւորուեցան:

Զէին ուզեր հաւատալ, որ [իբր թէ] մարդասէր և խաղաղասէր, «խաղաղութեան Նոպէլի մրցանակակիր» Շիմոն Փերեզ, այս տեսակ արտայայտութիւն մը կրնար կատարել:

Այս միամիտ և անմիտ հայ երեւելիները չէին գիտեր, թէ թուրքերը և հրեաները նոյն մտային կառոյցը ունին:

Ինչպէս որ, ասկէ առաջ ալ, ըսած էինք՝ **թուրքը ինչ որ ալ ըլլայ, էճէվիտի պէս՝ սոցիալիստ, կամ Ալքասլան Թիւրքէշի պէս՝ ֆաշիստ, և կամ Հայտար Ալիեւի պէս՝ կոմունիստ-թուրքը միշտ նոյնն է՝ վայրագ և մարդասպան:**

Նոյնպէս են հրեաներն ալ: Բացառութիւն մը օրէնք չի կազմեր:

Հրեան ըլլա՛յ Արիէլ Շարոնի պէս ֆաշիստ և կամ Շիմոն Փերեզի պէս սոցիալիստ, հրեան միշտ «հրեայ» կը մնայ, անգուր և մարդասպան:

Արթնցէ՛ք, հրեական «Բմբեցուցիչներով» հարբեցած հայ երեւելի և մեծապատիւ անձնաւորութիւններ: Մենք, շատ լաւ տեղեակ ենք, որ ձեր մէջէն շատերուն յաջողութեան պատճառը՝ հրեական և մասոնական բիկունքն է: Անոնք՝ ձեզ «յառաջ» տարին, որ իրենց ուզած կողմը ուղղեն և իրենց ծիրին մէջ պահեն: Եւ այլեւս, ձեր կեանքի վերջին տարիներուն, քաջութիւնը ունեցէք իրականութիւնները ըսելու, քե՛՛ Հայկական ցեղասպանութեան բուն պատասխանատուները, ցեղասպանութիւնը ծրագրողները և թուրքերուն գործադրել տուողները՝ **սիռնիստներն են:**

Դուք, հրեաներուն մանկկլաւիկները՝ դուք մինչեւ այսօր հրեաներուն Բմբուկը զարկիք ըսելով, որ հրեաները՝ հայ ազգին նոյն նակատագիրը ունեցած են:

Դուք, ո՞ր նակատագրէն կը խօսիք: Հրեաները այսօր, "Holocauste"ին «շնորհիւ», աշխարհին տէրը դարձան:

Մինչդեռ հայերը, 1915-ի ցեղասպանութեան պատճառով, այսօր բոլորովին անէանալու նամբուն մէջ են:

* * *

Այսօր աշխարհի շատ մը երկիրներուն մէջ, մանաւանդ արեւմտեան երկիրներուն մէջ, Holocauste-ի մասին կասկած յայտնելը և Holocauste-ը ժխտելը [Negationisme], պատժական օրէնքներով արգիլուած է:

Բայց, 26 Ապրիլ 2001 թուականին, ֆրանսական "Le Monde" քերթին 4-րդ էջին մէջ, շատ բացառիկ գրութիւն մը հրատարակուեցաւ:

«Իրանի նախագահը կը մերժէ Holocauste»ը վերտառութեամբ այս գրութեան մէջ, Ali Khamenei սապէս արտայայտուած էր՝ **«Փաստեր կան ապացուցանող, որ սիռնիստները շատ մտերիմ կապեր ունեցած են Nazi-գերմանացիներուն հետ:**

Եւ "Statistique"ները, հրեաներուն ենթարկուած կոտորածին մասին՝ չափազանցուած են:

Հրեաներուն ենթարկուած ջարդերուն մասին ներկայացուած այս չափազանցուած Statique-ներուն նպատակը՝ այս նամբով միջազգային հասարակութեան գուրը շարժել և դիւրացնել էր Պաղեստինին հրեաներուն կողմէ գրաւումը, և արդարացնել էր սիռնիստներուն կատարած ռեիքները...»:

Վերջին տարիներուն, ոչ մէկ բարձրաստիճան պետական անձնաւորութիւն՝ Պարսկաստանի նախագահ Ali Khamenei քաջութիւնը չէր ունեցած հրեաներուն մասին այս իրականութիւնները յայտարարելու համար:

* * *

1995-էն ի վեր, «Նայիրի»ի մէջ մեր գրութիւններուն հետեւողները գիտեն, հրեաներուն մասին մեր տեսակետը:

22 Ապրիլ 1995-ին, «Նայիրի»ի առաջին թիւին մէջ, հրեաներուն մասին սապէս արտայայտուած էինք՝

«Աշխարհակալ սիոնիստական կայսրութեան կողմէ ստեղծուած իրավիճակ մը կայ այսօր: Իսկութեան մէջ երեք իսրայելական պետութիւն կայ՝ առաջինը՝ խորհրդանշական «Իսրայել»ն է. հրեաներուն սիրտը, իրենց կրօնական կեդրոնը՝ Երուսաղէմով: Երկրորդը՝ միջին Իսրայելն է, որուն անունը «Թուրքիա» է. խորհրդանշական Իսրայելի մեծագոյն պաշտպանը: Արաբներուն կոնակին դրուած դաշոյն, հիմնուած սելանիկցի հրեայ ֆարմասոններուն կողմէ, շնորհիւ հայ ազգին բնաջնջման: Իթթիհատ և Թերագգի կոչուած կուսակցութեան սկսած գործը ամբողջացուց, սելանիկցի հրեայ Մուսրաֆա Քեմալ Աքաթիրքը, որ Թալաթին չափ հայասպանութեան պատասխանատուութիւնը կը կրէ: Երրորդը՝ մեծն Իսրայելն է, որ կը կոչուի՝ **Ամերիկայի Միացեալ Նահանգներ:**

Շնորհիւ իր առանձնաշնորհեալ աշխարհակալ դիրքին, շնորհիւ իր հողերուն անսահման մեծութեան և բնական հարստութեան և շնորհիւ իր ազգութիւն չունեցող, խառնածին կաթսայ մը եղող սոցիալ կառոյցին, այս տերութիւնը մեծագոյն ուժն է հրեաներուն, որոնց շնորհիւ սիոնիստները յաջողեցան իրենց աշխարհակալ կայսրութեան անխախտելի հիմերը դնել»:

Հայ ազգը, հարիւր տարիներէ ի վեր, նոյնիսկ մինչեւ այսօր, իր կարգ մը «ծախւած» ղեկավարներուն պատճառաւ չկրցաւ տեսնել այս իրականութիւնները:

Դեռ 1900-թ.ներուն, սիոնիստներուն սադայելական սադրանքներուն հաւատացող դաշնակցական որոշ ղեկավարներ՝ կուրօրէն հետեւեցան հրեածին Իթթիհատ կուսակցութեան և բուրքերուն հետ եղբայրութիւն ստեղծեցին:

1909-ի Կիլիկեան աղետն անգամ, այս կոյր ղեկավարներուն աչքերը չկրցան բանալ:

Այն տարիներուն, 1910-ին, մեծ տաղանդ, մեծ հոփտոր և մեծ ֆարմասոն, բայց հայկական բարձրագոյն շահերը տեսնելու անկարող խեղճ մը եղող Գրիգոր Զօհրապը, մինչեւ իր կեանքին վերջին վայրկեանը հաւատաց բրքական եղբայրութեան և հաւատաց հայ ազգին ջարդարարը եղող Թալաթին:

Եւ Գրիգոր Զօհրահին թուրքերուն վերաբերեալ ու տխմարութեան հասնող այս տգիտութիւնը, 1915-ին հայ ազգին «գլուխը կերաւ»:

Եւ նոյնպէս, այս տգիտութեան հետեւանքով 1915-ին, Կիլիկիոյ շրջակայքը, Չերքեզ Ահմէտին կողմէ, Գրիգոր Զօհրապին ալ գլուխը ջախջախուեցաւ:

Մինչեւ այսօր, մեր անգիտակից և «ծախուած» պատմագէտ և մտաւորականներուն կողմէ, Գրիգոր Զօհրապը կը փառաբանուի:

Ինչո՞ւ համար: Ի՞նչ ըրած է Գ. Զօհրապ, հայ ազգին համար, իր անգիտակից քաղաքականութեամբ, հայ ազգը, 1915-ին, Գողգոթա առաջնորդելէ գատ:

Միայն հայ ազգին յատուկ կարողութիւն է, հայերուն խորտակման պատճառ եղող ղեկավարներ փառաբանելը:

Նայեցէք. Գ. Զօհրապ 1910-ին, Սկիւտարի մէջ, հայ հոծ բազմութեան և թուրք իրօքիհատական երեւելիներուն ներկայութեան, ի՛նչպէս կը պաշտպանէ 1909-ի Կիլիկիոյ աղէտին պատասխանատու իրօքիհատ և Թերագգի կուսակցութիւնը՝

«Ն՞րք տեսնուած է, որ քրիստոնէական ջարդի մը առթիւ, 100-ի մօտ մահմետականներ կախաղան հանուին և 1000-ի մօտ մահմետական եղեռնագործներ շղթայակիր բանտարկութեան դատապարտուին:

Սահմանադրական [իրօքիհատական] կառավարութիւնը այս արիութիւնը ցոյց տուաւ, և ամէն արդարասէր հայու պարտքն է նանչնալ գայն և ըստ այնմ վերաբերիլ Օսմանեան [իրօքիհատական] կառավարութեան հանդէպ»:

Մենք կը հաւատանք, որ Գրիգոր Զօհրապին 1910-ին թուրքերուն հետ եղբայրութեան մասին յայտնած այս գաղափարները, Պոլսոյ հայ ղեկավարներուն 1915-թ.ի եղեռնին մէջ ունեցած մեծ պատասխանատուութիւնը ապացուցանող ամենէն ցնցիչ արտայայտութիւններն են:

Մինչդեռ ուրիշ հայ մտաւորական մը, Ռուբէն Սեւակ, Կիլիկեան ջարդերու օրերուն, 27 Մայիս 1909-թ.ին Լոզանէն, «Գրիգոր Զօհրապին թուրքերուն հետ եղբայրանալու գաղափարներուն բոլորովին հակառակ» ու հայ պատմական դիւցազնութեան վայել ձեւով իր ընդվզումը կը յայտնէր, թուրքերուն կողմէ կատարուած ջարդերուն դէմ:

«Սեւ օրեր կ'ապրինք նորէն. սարսափի օրեր. հեռագիրները ամէն ժամ նոր գոյժ մը կը բերեն: Զարդ, ու եթէ ջարդ չէ՛ հրդեհ, ու եթէ հրդեհ չէ՛ սո՛վ, ու ինչ որ ամէնէն սարսափելին է՛ համանարակ...: Եւ ամէնէն ցաւալին՝ այն յուսահատեցուցիչ «խելօքութիւնն» է, որ հայերը կ'ողջունեն այս ջարդերը:

Ե՞րբ հայ ժողովուրդը պիտի սորուի՝ «մարդկօրէն կատողիլ»:

Սարսափահար, քարացած Պոլսոյ հայ թուրքերուն կը սպասենք, աւելի ընդարձակ տեղեկութիւններու համար, կամ գոնէ հուժկո՛ւ բողոքի մը ընթերցումով ամոքուելու համար...:

Թերթերը կու գան: Յաւիտենական ոսկեգօծ ունայնութիւնը, որ կը յատկանշէ պոլսական մտաւորականութիւնը:

Օտար մամուլը և մասնաւորապէս զուիցերիական օրաթերթերը, ամէն օր կ'արձանագրեն հայ կոտորածներուն համար եղած նուիրատուութեանց ցանկը: Ո՞ւր են մերինները:

Այն հայ թերթերը, որոնք այսինչ կամ այնինչ մեծապատիւի մը մահուան առթիւ փոխան ծաղկեպսակի՝ նուիրատուութեանց անհատնում ցանկեր կը շարեին, այն միեւնոյն թերթերը՝ հազարաւոր հայերու մահուան առթիւ, փոխան ծաղկեպսակի ոչի՛նչ գրած են:

Պէտք չէր, որ անվերջանալի նուէրներու շարքերով ներկայանային այս եօթն անգամ նահատակուած ժողովուրդին... Գաւառը, սոված, բազմաչարչար գաւառը, իր լուման տուաւ: Ե՞րբ պիտի դորդի ինքնագիտակցութեան զգացումը մայրաքաղաքացիին հոգւոյն մէջ: Ե՞րբ գո՛ւթը: Ու ե՞րբ, մանաւանդ, մարդկօրէն կատողիլը...»:

ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿ

* * *

Ռուբեն Սեւակ Գրիգոր Զօհրապի առաջնորդութեամբ, Պոլսոյ հայ մտաւորականութեան 1909-ի Կիլիկիոյ աղետին հանդէպ ցուցաբերած կենդանական անտարբերութեան դէմ ընդվզելով, Լոզանէն, 10 Օգոստոս 1910-ին Պոլիս, տիկ. Արշակունհի Թեոդիկին նամակ մը կը գրէ:

Ռուբեն Սեւակի Կիլիկիոյ շարդերուն իսկական նկարագրութիւնը կազմող տիկ. Արշակունհի Թեոդիկին հրատարակած գիրքին մասին իբր գնահատանք գրած այս նամակը՝ մենք կը հաւատանք, որ հերոս-գնահատակի պայքարի և վրէժի գաղափարներուն ամբողջական ցոլացումն է: Ահա այս նամակը՝

Լոզան 10 Օգոստ. 1910

Սարսալով կարդացի «Ամիս մը ի Կիլիկիա»ն: Առանց շաղակրատ հառաջանքի, առանց փքոցուռոյց երեմիակներու, առանց բանաստեղծութեան այդ գիրքը սրտիս մեխուեցաւ տեգի պէս:

Ցաւին գիրքն է այդ, աւելի նիշդ՝ Զայրոյթին գիրքը: Ու ես միտի-թարուեցայ հոն գտնելով այն էական միտքը, զոր ջանացեր էի դնել «Կարմիր գիրք»իս մէջ: Այո՛, յարգելի հեղինակունհի, հացը աշխատողինը չէ՛, հացը գողցողինն է, ու մեռնողին իրաւունքը մեռցնողէն հարցնելը եղբրական անմտութիւն մըն է:

Սակայն թշուառակա՛ն, ու անզայրո՛յթ, ու անիմա՛ստ ու անվրէժխնդի՛ր հայութեան մը հազարներով շարդուիլը նկարագրելէ վերջ, ինչպէ՛ս քաջալերեցուցիչ է ա՛յի մը Տէօրդ-Յուլցի հայ քաջերուն Աստուածային ու հռչակապ դիւցազնութիւնը որ գիրքը կը վսեմացնէ, կ'աւարտէ ու կը պսակէ գայն հոմերական հերոսներու վայրագ ու արիւնոտ պսակով...:

ՌՈՒՐԷՆ ՍԵՒԱԿ

* * *

Ռուբեն Սեւակի 90 տարիներ առաջ գրած նամակին մէջ, հայութեան մասին ըրած ախտանանչումը՝ «թշուառական, անզայրոյթ, անիմաստ և անվրէժխնդիր» հայութիւնը՝ 1915-էն մինչեւ այսօր, հակառակ որ իր հայրենիքին հարիւրին ութսունը թուրքերուն կողմէ գողցուած է, և հայ ազգին մեծամասնութիւնը թուրքերուն կողմէ ցեղասպանութեան ենթարկուած է՝ գրեթէ կը շարունակէ իր կենդանական անզգայ և անտարբեր կեանքը նոյնութեամբ:

Բայց բուն յանցաւորները՝ ցեղասպանութեան ենթարկուած Արեւմտեան Հայաստանի ժողովուրդին բեկորները եղող Սփիւռքի հայ ժողովուրդին ծանօթ այն առաջնորդներն են որոնք, «ծախուած» ըլլալով արեւմտեան պետութիւններուն, 80 տարիներ շարունակ քնացուցին Հայկական եղեռնը:

Եւ 1991-ին ալ, արեւմտեան պետութիւնները, իրենց մանկաւիկներուն ձեռքով, յաջողեցան քանդել Սովետական Հայաստանը:

Դժբախտաբար այսօր, Հայաստանը, ափ մը աւատապետներու ձեռքը անցած է:

Այս աւատապետները, Սփիւռքի դաշնակ կարգ մը առաջնորդներուն նման, կը սնանին արեւմտեան պետութիւններուն տուած դրամներով:

Թշուառութեան մէջ չարչարուող Հայաստանի ժողովուրդին այսօրուան իշխանաւորները կը գտնուին վիճակի մը մէջ ուր, դրամի համար, ամէն տեսակի «գոհողութիւն»ներ ընելու պատրաստ են:

Այս վիճակին տեղեակ եղող արեւմտեան պետութիւնները, ամէն տեսակ սադրանքներով կ'աշխատին Հայաստանը ռուսական ազդեցութիւնէն հեռացնել, որ Հայաստանը բոլորովին իյնայ իրենց գիրկը:

Արդէն, արեւմտեան պետութիւնները, Սովետական Հայաստանի փլուզումէն ետք, ամէն ջանք բափեցին, որ Հայաստանը թուրքերուն մօտենայ և բարեկամանայ:

Իրենց գործակատարը եղող Լեւոն Տէր Պետրոսեանը այս նպատակով, հայու մը համար անվայել ամէն տեսակի պնակալէզութիւններ ըրաւ թուրքերուն:

Այսօր արեւմտեան պետութիւնները, Հայաստանի տնտեսական նեղութիւններէն օգտուելով, շատ աւելի ննշում կը բանեցնեն հայ դեկավարներուն վրայ, որ թուրքերուն հետ բարեկամանան:

Արեւմտեան պետութիւններուն ըսածը հետեւեալն է.

«Թուրքերուն հետ ձեր անհամաձայնութիւնները՝ բանակցութիւններով հարթեցէք»:

Հայերը ի՞նչ ունին թուրքերուն հետ բանակցելիք:

Հայուն դիմացը՝ ցեղասպան թուրք մը կայ, հայուն հայրենիքը յափշտակող թուրք մը կայ: Այս թուրքը, մինչեւ այսօր, Հայկական ցեղասպանութիւնը կ'ուրանայ:

Եւ ընդհակառակը՝ անոնք հայերը կ'ամբաստանեն ըսելով, որ թուրքեր չարդած են:

Այս պայմաններու մէջ հայերը, ի՞նչ ընելու համար, պիտի բանակցին թուրքերուն հետ:

Հայերը հարիւրյիսուն տարիներէ ի վեր, լաւ հանչցած են արեւմտեան պետութիւններուն «մարդասիրութիւնը» և «հայասիրութիւնը»:

Եւ այսօր, քանի մը աւատապետ դեկավարներու ձեռքով, կրկին պիտի իյնանք արեւմտեան պետութիւններուն ծուղակը:

Արեւմտեան պետութիւններուն դրամներով սնուող այսօրուան Հայաստանի իշխանաւորներ՝ մի՛ կարծէք, որ հայ ազգը ձեր «Patron»ներուն ուզածին պէս. թրքական բարեկամութեան ծուղակը պիտի կարենաք առաջնորդել:

Հայ ազգը շատ լաւ գիտէ, թէ՛ *«մեռնողին իրաւունքը՝ մեռցնողէն հարցնելը, եղերական անմտութիւն մըն է»:*

**ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ ԴԷՊԻ ՅՈՒՆԱԿԱՆ «CHIOS» ԿՂԶԻՆ
ԵՒ «THESSALONIQUE» ՔԱՂԱՔԸ
«ԹՇՆԱՄԻԻՍ ԹՇՆԱՄԻՆ՝ ԻՄ ԲԱՐԵԿԱՄՍ Է»**

Խոռվայոյզ գիշեր մը անցուցինք Չիոս կղզիի մեր իջեւանած պանդոկին մէջ, հայ և յունական եղեռնի տեսարաններու պատկերացումով:

Յաջորդ առաւօտ կանուխ, ինչպէս մտադրած էինք, նախ այցելեցինք Chios-ի հին քաղաքին մէջ գտնուող բերդը՝ “Kastro”ն:

Բերդին մէջ տեսանք այն սրահը, ուր 1822-ին թուրքերը, ընդհանուր ջարդերը կատարելէ առաջ, “Chios”ի երեւելիները, առաջնորդները՝ 70 հոգի ձերբակալած և բոլորը միասին բանտարկած էին այդ սրահին մէջ:

Այս երեւելիները, հետեւեալ առաւօտ, բոլորն ալ, կախաղան կը հանուին:

Եւ յետոյ կը սկսի “Chios” կղզիի յոյն ժողովուրդին ընդհանուր ջարդը:

Սարսափով յիշեցինք մեր՝ 24 Ապրիլ 1915-ին կատարուած ողբերգութիւնը:

Եւ մտածեցինք, թէ թուրքերը 24 Ապրիլ 1915-էն դար մը առաջ՝ 1822-ին նոյն «սիսթեմ»ը գործադրած էին Chios-ի մէջ:

Նախ՝ ժողովուրդին առաջնորդներուն գլուխները կը կտրէին, որ ժողովուրդը առանց «գլուխ»ի մնայ:

Եւ յետոյ՝ ժողովուրդը բնաջնջելը, պարզ խնդիր մըն էր թուրքերուն համար:



*Eugène Delacroix. Scènes des massacres de Scio. 1824. Huile sur toile. 419 x 354 cm.
Paris. Musée du Louvre.*

* * *


Զբօսաշրջական գիրքերուն մէջ, "Chios"ի ամենէն կարելոր պատմական վայրը որպէս նշուած էր, 11-րդ դարուն կառուցուած բիւզանդական "Nea Moni" վանքը:

Հետեւեցանք տրուած տեղեկութիւններուն և "Chios" քաղաքէն 10 քմ. հեռու, ծառաշատ բարձունքներու վրայ գտնուող "Nea Moni" վանքը հասանք: Տեսարանը շատ գեղեցիկ էր, և անտառին ծառերուն մէջէն ներքեւի ծովը կը տեսնուէր:

Nea Moni վանքը, այնտեղ կատարուած հրաշքներուն պատճառաւ, "Chios"ի ժողովուրդին ուխտատեղին էր նոյն ատեն:

Մայր եկեղեցին, բիւզանդական եկեղեցիներէն շատ տարբեր նարտարապետական ոճ մը ունէր, որ մեզի մեր հայկական եկեղեցիները կը յիշեցնէր:

Մայր եկեղեցիին ներքին մասին մէջ, բոլոր կամարները և գմբեքը՝ Mosaique-ներով [խճանկարներով] զարդարուած էին, որոնք կը ներկայացնէին սուրբերու նկարները:



Ս. Խաչ եկեղեցին, ուր ցուցադրուած են բրբազեան բարբարոսութեան նմոյշները:

Կին և Երախայ և 600 վանականները՝ թուրքերուն կողմէ անխնայ կը սպաննուին:

Եւ ջարդէն վերջ թուրքերը, վանքը կրակի կու տան:

Շատ տարիներ յետոյ, երբ վանքը կը վերանորոգուի, հոն նահատակուած զոհերուն ոսկորներուն և գանկերուն մէկ մասը կը հաւաքուին և այս՝ Սուրբ Խաչ եկեղեցիին մէջ, ցուցափեղկերու ներքեւ կը պահպանուին իբր նուիրական մասունքներ:

Մենք, այս սուրբ մասունքներուն առջեւ, խոնարհեցանք, և նոյն ատեն յիշեցինք Արեւմտեան Հայաստանի և Անաթոլիոյ բիւրաւոր եկեղեցիներուն մէջ, թուրքերուն կողմէ հրկիզուելով նահատակուած անթիւ ու անհամար հայ անմեղ զոհերը:


Այստեղ կ'ուզենք նոյնութեամբ նշել՝ «Նեա Մոնի» վանքին Ս. Խաչ եկեղեցիին մէջ, այդ մասունքները ամփոփող ցուցափեղկերու կողքին, յունարէն և անգլերէն լեզուներով տրուած «Զիոս կղզիին ողբերգութեան» պատմութիւնը՝

Բայց, բիւզանդական այս պատմական վանքին մէջ, մեզի ամէնէն շատ տպաւորած մասը, վանքին մայր մուտքին քով գտնուող Սուրբ Խաչ եկեղեցիին էր: Եւ մենք, մեծ զարմանքով ու սրտադողով տեսանք, բրբազեան բարբարոսութեան սարսափելի վկայութիւնները:

1822-ին թուրքերուն Chios-ի մէջ յոյն ժողովուրդի ջարդի սկսման օրերուն, Chios-ի բնակչութենէն 3500 կին և երախայ Nea Moni վանքը կ'ապաստանին, փրկուելու յոյսով բրբազեան վայրագութենէն:

Բայց թուրք ջարդարարները վանքն ալ կը խուժեն:

Եւ վանքին մէջ գտնուող 3500



U. Թաշ եկեղեցիին մէջ պահ դրուած մասունքները...

THE MASSACRE OF CHIOS - 1822

Before the massacre, Chios had a population of 118,000 souls.

The terrible massacre left only 1800 people in the southern part of Chios to take care of the production of mastic.

It has been calculated that at least 23,000 people were slaughtered. About 47,000 people were taken to the slave markets of Cairo and Smyrna. And the rest escaped to other Islands.

In the Monastery of Nea Moni, the local massacre took place on 9 [non legible] Friday of 1822.

There were 600 monks and 3500 women and children who had come to seek refuge in the Monastery.

They were all slaughtered by the Ottomans.

Part of the bones of slaughtered monks and people are kept in this chapel of the Holy Cross.

ԱՆԳԼԵՐԷՆ ԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՅԵՐԷՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆԸ

«Ջարդերէն առաջ, Chios-ի բնակչութիւնը 118,000 հոգի էր: Սարսափելի ջարդէն յետոյ, միայն 1800 հոգի մնացին Չիոսի-ի հարաւային մասը՝ Mastic-ի արտադրութիւնը հաւաքելու համար: Հաշուած է, որ նուազագոյն 23,000 հոգի սպաննուած է: Շուրջ 47,000 հոգի Գահիրէի և Իզմիրի գերիներու շուկաները տարուած են, և մնացեալներն ալ ապաստանած են միւս կղզիները: Nea Moni-ի վանքին մէջ, ջարդերը սկսած են 9 [անընթեռնելի] Ուրբաթ 1822-ին:

Այս վանքին մէջ ապաստանած էին՝ 600 վանական և 3500 կին և երախտայ:

Բոլորն ալ սպաննուեցան օսմանցիներու կողմէ:

Սպաննուած վանականներուն և ժողովուրդին ոսկորներէն մաս մը պահպանուած են այս Սուրբ Խաչ եկեղեցիին մէջ»:

Այստեղ կ'ուզենք նաեւ նշել, «Նայիրի»ի աշխատակից "The Traveler"ին, "chios"-ցիներու մասին ըրած զգայացունց յայտնութիւնները.- "Chios"ցիները այնքան կապած էին իրենց կրօնքին և ազգութեան, որ թուրքերուն իսլամանալու ճամբով ազատելու առաջարկը կը մերժէին: Եւ կը նախընտրէին թուրքերուն կողմէ սպաննուիլը:

Տանք մեր հայասէր ու անգլիագիր բարեկամին վկայութեան բնագիրը:

A SMALL NOTE ON THE MASSACRE OF CHIOS

The Greeks make fun of the people of Chios.

They claim that the people of Chios, called "Chiotis" in Greek, were so stupid that they said to the Turks during the time of the Massacre.

"SFAXENE AGA MOU N'AGIASO", meaning "Slaughter me, my Lord, so that I go to paradise".

In reality, the situation was much different. When a Non-Moslem was to be executed, the Turks would give the victim a last chance to escape death and become a Moslem. If accepted, the condemned would change his religion and go free.

The people of Chios, the Chiotis, never accepted such an offer. Instead of denouncing their religion, they preferred death and said:

"TOTES, SFAXEME AGA MOU N'AGIASO"

Which means: **"THEN, my Lord, slaughter me, so that I go to paradise"**.

THE TRAVELER

(ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆԸ)

ՀԱԿԻՐՃ ՆՕԹԵՐ ՉԻՈՍԻ ՋԱՐԴԻՆ ՄԱՍԻՆ

Յոյները կը հեզանեն Չիոսի բնակիչներուն որոնց յունարէն «չիոթիս» կը կոչեն: Անոնք որպէս թէ այնքան տխմար էին, որ կ'ըսէին թուրքերուն, շարդերու ատեն.- «SFAXEME AGA MOU N'AGIOSO», որ կը թարգմանուի.- «Մորթէ զիս Տէր, որ դրախտ երթամ»: Իրականութեան մէջ վիճակը բոլորովին ուրիշ էր:

Երբոր ոչ-իսլամ մը պիտի սպաննուի, թուրքերը վերջին առիթ մը կու տային զոնին՝ որ մահէ փրկուելու համար, կրօնափոխ ըլլալով իսլամանայ: Մահապարտը եթէ ընդունէր իր կրօնը փոխել՝ կ'ազատուէր:

Չիոսի բնակիչները, չիոթիսները, երբեք չընդունեցին այսպիսի առաջարկ մը: Կրօնափոխ ըլլալու տեղ նախընտրեցին մահը և ըսին. «Եթէ այդպէս է՝ ուրեմն մորթէ զիս Տէր, որ դրախտ երթամ»:

ՃԱՄԲՈՐԴ

* * *

Յունաստան մեր այցելութեամբ, մենք հոգեկան պարտականութիւն մըն ալ կ'ունենանք կատարելիք, զոր կ'ընծայենք, ամէն տարի, երթալով ուխտագնացութեան, Սելանիկի հայկական գերեզմանատունը:

Սելանիկի հայկական գերեզմանատան մէջ կը գտնուի դամբարանը մեր մեծ մօր, Արմաւենի Չիլինկիթեանի, որ նոյն ատեն մայրն է Ռուբէն Սեւակի:



*Յովն. Զիլինկիրեանի «ուխտագնացութիւնը» իր մեծ մօր դամբանին:
Մտերիմ հոգեցութեան եւ գրոյցի պահ...:*

Արմաւենի Զիլինկիրեանի դամբարանին վրայ կը տեսնենք հետեւեալ արձանագրութիւնը՝

«ԱՍՏ ՀԱՆ ԳԶԻ ԱՐՄԱԻԵՆԻ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ -
ՍԻԼԻՎՐԻ - 1854-1934»:

... Մայրը, ապրիլեան հայաջինջ եղեռնի նահատակներէն, անշիրիմ բանաստեղծ ու հերոս մտաւորական տօքթ. Ռուբէն Սեւակի:

Եւ մենք ամէն տարի կը խոնարհինք այս դամբանին առջեւ և յուզումով կը կարդանք վերի արձանագրութիւնը՝ որ ինքնին իր մէջ կը պարփակէ ամբողջ հայ ազգին ողբերգութիւնը:

Բայց, մեզի համար ցաւալի է նշել այն տխուր իրականութիւնը, այն մեծ անտարբերութիւնը, զոր Սելանիկի համայնքային պատասխանատուները կը ցուցաբերեն նահատակ-բանաստեղծին խորհրդանիշը եղող անոր մօր դամբարանին հանդէպ:

Սելանիկի մէջ Արմաւենի Զիլինկիրեանի դամբարանէն գատ, ուրիշ՝ 24 ապրիլեան նահատակի մը հետ կապ ունեցող դամբարան գոյութիւն չունի:

Սելանիկի մէջ, քաղական խորհուրդ կայ, թեմական խորհուրդ կայ, և կան նաեւ բաւական մեծ թիւով հայկական միութիւններ:

Ասոնցմէ ո՛չ մէկուն միտքէն կ'անցնի, 24 Ապրիլի նահատակ բանաստեղծի մը մօրը դամբարանին յարգանքի այցելութիւն մը կատարել 24 Ապրիլի օրերուն:

Բայց անոնք, ամէն 24 Ապրիլին ոսկեզօծ խօսքերով իբր թէ կը փառաբանեն 24 Ապրիլի նահատակները:

Բայց, իրականութեան մէջ, այս սին խօսքերով անոնք, ձեւով մը, կրկին ու կրկին «կը ջարդեն» 24 Ապրիլի սուրբ նահատակները:

Ազգ մը, իր հերոսներով կ'ապրի:

Ազգ մը, որ իր հերոսները չունի, ապրելու իրաւունք չունի:

Ազգ մը, որ իր հերոսները կը մոռնայ, ինքն ալ մեռնելու դատապարտուած է:

ՌՈՒՐԷՆ ՍԵՒԱԿԻ ՄԱՍԻՆ ՆՈՐ ՅԱՅՏՆՈՒԹԻԻՆՆԵՐ

Մեր թրքերեն գրութիւններուն մէջ ջանացինք բացատրել, թէ ինչպէ՞ս բարբարոս թուրքերը, դարերու ընթացքին և մինչեւ վերջերս, հայկական պատմական յուշարձանները և եկեղեցիները, հայերէն հետք չմնայ ըսելով, ուժանակով քանդած են: Բայց այս բարբարոսութիւններուն ենթարկուողները միայն հայերը չեն:

Նոյնպէս՝ հնադարեան (Antique) յունական և բիւզանդական յուշարձանները և եկեղեցիները զոհ գացած են թրքական բարբարոսութիւններուն: Այս թրքական քանդումին զոհ գացող վայրերէն մէկն է «Մարմարա» ծովուն վրայ Սիլիվրի բերդաքաղաքը, որ կը գտնուի Պոլսէն 65 քմ. դէպի արեւմուտք՝ Էրուպական Թրակիոյ հողամասին վրայ:

Նոյն ատեն Ռուբէն Սեւակի ծննդավայրը եղող Սիլիվրի բերդաքաղաքը, բուն անունով Սիլեմբրիա, հին բիւզանդական պատմական քաղաք մը եղած է:

Սիլիվրիի բիւզանդական եկեղեցիները այնքան համբաւ ունին եղեր, որ մեր հօրեղբայրը՝ Քերովրէ Զիլինկիրեանին մեզի պատմածին համաձայն, մինչեւ 1914 թուականը Անգլիայէն բիւզանդագետներ մասնաւորապէս Սիլիվրի եկած են, որ Սիլիվրիի բիւզանդական եկեղեցիներուն խնանկարները ուսումնասիրեն:

Այսօր, պատմական Սիլիվրի բերդաքաղաքէն ոչ մէկ բան մնացած է: Ոչ բերդ, ոչ յունական յուշարձան, ոչ բիւզանդական եկեղեցի և ոչ ալ բիւզանդական խնանկար:

Թուրքերը ամէն բան քանդած են: Եւ Սիլիվրին այսօր, անհոռնի, «պէթոն» կառոյցներով լեցուած, թրքական քաղաքի մը վերածուած է, և միացած է Պոլսոյ:

Սիլիվրի բերդաքաղաքը, որ մեր նախնիներուն բնակավայրը եղած է, մինչեւ 1921-թ.ները, մեծ մասամբ բնակուած է յոյներէ և հայերէ: Իսկ թուրքերը, Սիլիվրիի մէջ բերդաքաղաքէն դուրս՝

«Վարի թաղամասը» (Asagi mahalle) ըսուած շրջանը կը բնակին եղեր, գոյացնելով քանի մը տասնեակ թուրք ընտանիքներէ բաղկացած աննշան փոքրամասնութիւն մը:

Սիլիվրիին այն աստիճան յունական քաղաք մը եղած է, որ հոն բնակող հայերը եղած են լաւ յունախօս, ինչպէս որ մեր հայրը և մայրը սահուն յունարէն կը խօսէին:

Եւ այդ շրջանին Սիլիվրիի մէջ, նախակրթարան մը եղող «Ասքանագեան» վարժարանէն զատ ու աւելի բարձր հայկական վարժարան մը չըլլալուն, Ռուբէն Սեւակ կը դրկուի Պարտիզակի ամերիկեան գոլէճը և յետոյ՝ Պոլսոյ Պերպերեան վարժարանը, և 1905-ին ալ կը մեկնի Զուիցերիոյ Լոզան քաղաքը, ուսանելու տեղւոյն բժշկական համալսարանը:

Մինչդեռ Ռուբէն Սեւակին քրոջ աղջիկը՝ Ատրինէ Յակոբովիչ, Սիլիվրիի հայկական վարժարանը աւարտելէ յետոյ, դեռ աղջնակ մ'ըլլալուն, Պոլսոյ մէկ հայկական վարժարանը չդրկուիր, և Սիլիվրիի յունական միջնակարգ վարժարանը կ'արձանագրուի:

Եւ Ատրինէ յունական վարժարանին մէջ, շատ լաւ յունարէն գրել և կարդալ սորված ըլլալու ուրախութեամբ, իր մօրեղբօր՝ Ռուբէն Սեւակին 1910-ին, Լոզան, յունարէն լեզուով նամակ մը կ'ուղարկէ...

Եւ Ատրինէն միջոց մը յետոյ, Ռուբէն Սեւակէն պատասխան նամակ մը կը ստանայ:

Այստեղ կը հրատարակենք Ռուբէն Սեւակի քրոջ աղջկան՝ Ատրինէին գրած նամակը, որ մինչեւ այսօր անտիպ մնացած է [այս նամակին պատճենը, 1980-թ. ներուն, Կիպրոսի մէջ, մեզի յանձնուեցաւ Ատրինէին քրոջ՝ Սիրվարդ Գլընեանի կողմէ, որուն բարի յիշատակին առջեւ յարգանքով կը խոնարհինք]:

Ահա այդ մտերմիկ ու փափկանկատ, բայց խրատական նամակ... բանաստեղծութիւնը:


Տեղին է նկատելը, որ Ս. Կապուտիկեանի «Խօսք իմ որդւոյս»-էն 50 տարի առաջ Ռ. Սեւակի կողմէ գրուած այս նամակ, հայապաշտ նահատակ բանաստեղծին ներաշխարհը արտացոլող, մենք կը հաւատանք, որ նախաեղեռնեան հայ լուսամիտ մտաւորականութեան ազգային հոգեբանութիւնը վկայող և պատմական արժէք ունեցող գրութիւն մըն է:

Իմ սիրելի փոքր Ատրինե,
 Ինձմե՛ք բարձր ես Յունարեցե՛.
 Բայց հօրդ, մօրդ քնքուշ լեզուն
 Մի մոռնար որ հայերեն է:

Եթե միջոցդ ներե՛
 Մեծ դպրոցներ գնա՛ Ատրինե.
 Բայց մայրենի անուշ լեզուդ
 Մի մոռնար որ հայերեն է:

Մոյլ մի ըլլար, ծոյլը անօրեն է.
 Դուն շատ գիտուն եղիր մեզմե՛.
 Բայց մայրենի և Սուրբ լեզուդ
 Մի մոռնար որ հայերեն է:

Լոզան 1910 ՌՌԻԲԷՆ ՍԵՒԱԿ



Ռ. Սեւակի իւղաներկ նկարը գծուած իր մտերիմ ընկերոջ՝ գեղանկարիչ Լեւոն Ազնաւուրեանի կողմէ, 1911-ին, Լոզանի մէջ: Եղերարախտ գրողը կը տեսնուի բժիշկի համազգեստով: Այս նկարը այժմ կը գտնուի Երեւանի Գրականութեան եւ Արուեստի Բանգա-րանին մէջ. «նկուղային մեկուսացումէ» ետք. վերանորոգուած վիճակով:



Ռուրէն Սեւակի իւղաներկ պաստառին (ճարագատ) ընդօրինակութիւնը: Հարագատը կը գտնուի Երեւանի Գրականութեան եւ Արուեստի Բանգարանը: Ան գծուած է 1911-ին Լոզանի մէջ (ուր Ռուրէն բժշկութիւն ուսանած էր): Ռ. Սեւակի նկարիչ ընկերոջ՝ Լեւոն Ազնաւուրեանի կողմէ: Վերարտադրութիւնը կատարուած է 1967-ին, Ռ. Սեւակի բրոջ աղջկան գեղանկարիչ Քրիսթին Սայերիի կողմէ: Այս օրինակը ներկայիս կը գտնուի Ռ. Սեւակի Յիշատակի Տան մէջ, Նիս (GAGNES SUR MER):

Ատրինէ Յակոբովիչը, քանի մը տարի յետոյ, յունական վարժարանը աւարտելէ ետք, Ռուբէն Սեւակին յանձնարարութեամբ, Պոլսոյ հանրաժանօթ ֆրանսական՝ "Notre Dame De Sion" վարժարանը կ'ուղարկուի:

Մենք, մեր երիտասարդ տարիքէ սկսեալ, շատ տպաւորուած ենք Ատրինէ Յակոբովիչին անձնաւորութենէն:

Բացառիկ տաղանդ մըն էր, բարձր մտաւորական ձիրքերով օժտուած:

Իր մասին շատ անգամ արտայայտուած ենք մեր գրութիւններուն մէջ: Մանաւանդ՝ Ատրինէին Ապրիլ 1915-ի օրերուն, Ռուբէն Սեւակի մասին պատմածները շատ զգայացունց են:

1985-ին հրատարակուած «Ռուբէն Սեւակ և փրցուելիք ուղեղներ» մեր գիրքին մէջ, այս մասին գրած էինք: Այստեղ կ'ուզենք կրկին նշել այս շատ տխուր եղելութիւնը. «Պոլսոյ Հարպիյէ թաղին մէջ, Հարպիյէ գօրանոցին գունդերը, շաբթու վերջը, մեծ հանդիսութեամբ, կը տողանցէին մայր պողոտային վրայ: Ռուբէն Սեւակ ալ իբր բժիշկ-հարիւրապետ, ներմակ ձի մը նստած, իր զինուորներով կը մասնակցէր այս տողանցքին:

Շաբթու վերջ մը, նոյն պողոտային դիմացի կողմը բնակող Մկրտիչ Յակոբովիչ ընտանիքը՝ կը հրաւիրէ, իրենց ազգական Սեւակի քրոջ աղջիկը՝ Ատրինէն, որ դիտէ իր մօրեղբայր-հարիւրապետ Ռ. Սեւակը տողանցքի ատեն:

Ատրինէն Սիլիվրիէն Պոլիս ուսանելու եկած է «Նօթր Ծամ Տը Սիոն» վարժարանը, իբր գիշերօթիկ աշակերտ:

Ատրինէ և տանտէրերը պատշգամը նստած, անհամբեր կը սպասեն Ռ. Սեւակին անցնելուն: Տողանցքը կը սկսի, զինուորները կ'անցնին. «Ահա» կ'ըսեն, տանտէրերը. «Հիմա կու գան՝ Սեւակը և իր զինուորները», «Բայց այդ ի՞նչ է, զինուորներուն առջեւէն գացող ձիուն վրայ Սեւակը չկայ»: Չին՝ առանց Սեւակի կ'անցնի, քովը քալող զինուորի մը կողմէ առաջնորդուած»:

Եւ քանի մը օր յետոյ կ'իմանան, թէ Ռ. Սեւակ աքսորուած է Չանդըրը:

Առաջին անգամ՝ 1985-ին մեր գիրքին մէջ հրատարակուած Ռուբէն Սեւակի վերաբերեալ այս ողիսական եղելութիւնը արտագրուեցաւ հայրենի ծանօթ գրող Պերն Զէյթունցեանի 1989-

ին Երեւանի մէջ հրատարակուած «Վերջին արեւագալը» անունը կրող ստուար գիրքին 213-րդ էջին մէջ:

Նոյն գիրքին մէջ կարդացինք ուրիշ տողեր ալ, կրկին արտագրուած 1985-ի մեր գիրքէն: Բայց, ըստ «Հայկական սովորութեան», մեծապատիւ Պերն Զէյթունցեանը, այս տողերուն ուրկէ արտագրուած ըլլալուն մասին, ոչ մէկ բան գրած էր:

Անջատաբար այս մեր նկատողութիւններէն՝ մենք երախտապարտ ենք Պերն Զէյթունցեանին, որ 1985-ին Երեւանի մէջ հրատարակուած իր «Մեծ լուսին» թատերգութեան մէջ, առաջին անգամ ըլլալով, Ռուբէն Սեւակին և Դանիէլ Վարուժանին Եղեռնի ողբերգութիւնը ներկայացուցած է:

Այն տարիներուն, շատ մեծ յանդգնութիւն էր, այս մասին գրելը: Բայց Պերն Զէյթունցեանը, ի՞նչ պէտք ունէր, իր այս թատերգութեան մէջ, այս աստիճան իրականութեան հետ կապ չունեցող բաներ գրելու:

«Մեծ լուսին» թատերգութեան մէջի Ռուբէն Սեւակի տիպարը, որեւէ կապ չունէր Չանդըրըի մէջ անոր ցուցաբերած հերոսական կեցուածքներուն հետ:

Մանաւանդ՝ ի՞նչ պէտք ունէր, Պերն Զէյթունցեանը, այս թատերգութեան մէջ ստեղծելու՝ «Երեւում» անունով տիպար մը, որ իրականութեան հետ կապ չունեցող խեղկատակութիւն մըն է:

Հայկական եղեռնի պատմութիւնը, մանաւանդ Ռուբէն Սեւակի Չանդըրըի մէջ ցուցաբերած հերոսական կեանքին իրական պատմութիւնը, իր բոլոր մանրամասնութիւններով, իսկական ողբերգադիւցազներգութիւն մըն է:

Եւ այս մասին գրուած, իրականութեան չհամապատասխանող ամէն մէկ տող՝ սրբապղծութեան համագօր է:

* * *

Ռուբէն Սեւակի 1915-ին նահատակութենէն յետոյ, իր կինը՝ Ժաննի, սարսափի մատնուած երկու զաւակներուն՝ Լեւոնին և Շամիրամին հետ, հապնեպով Պոլսէն Ջուիցերիա մեկնած էր:

Եւ Ռուբէն Սեւակի Պոլսոյ Սուրբ Յակոբ թաղամասին մէջ գտնուող բնակարանը բաւական առնուած անտէր մնաց:

Երկար միջոցէ ետք է, որ Ռուբէնի երէց եղբայրը՝ Քերովբէ Զիլինկիրեան, կարողացաւ փրկել Ռուբէն Սեւակին անձնական իրերուն մէկ մասը:

Ատրիկե Յակոբովիչն ալ, Նահատակին արխիւին մէկ մասին փրկութեան մէջ մեծ դեր ունեցած է:

Ան, Ռուբէն Սեւակին բանաստեղծութիւններուն բնագիրները [արտագրելէ ետք] Փարիզ՝ Ժաննի Սեւակին ուղարկած է:

Ժաննին ալ, իր կարգին, այս բնագիրները Փարիզ՝ «Նահատակ Գրողներու Բարեկամներ» հրատարակչութեան յանձնած է, որուն շնորհիւ, 1946-ին հրատարակուեցաւ եղերաբախտ մտաւորականի գրութիւններուն մէկ մասը պարփակող գիրքը:

Մինչ այդ, Ատրիկե Յակոբովիչին արտագրած ձեռագիրները, մենք ալ 1946-ին, մեր կարգին արտագրեցինք և Ռուբէն Սեւակին այս ձեռագիրներուն պատեհները 1983-ին յանձնեցինք Ալեքսանտր Թոփչեանին, որ ինքն ալ, այս ձեռագիրներով, ամբողջացուց Երեւանի մէջ Ռուբէն Սեւակի գրութիւնները, և 1985-ին յաջողեցաւ հրատարակել՝ «Ռուբէն Սեւակ - Երկեր» անուն հատորով նահատակ բանաստեղծին ամբողջական գործերը:

* * *

Ատրիկե Յակոբովիչ իր մօտ պահած էր, իբր մասունք-յիշատակ՝ Ռուբէն Սեւակին իւղաներկ մէկ դիմանկարը:

Ռուբէն Սեւակին այս դիմանկարը գծուած էր 1911-ին, իր ընկերոջ՝ շնորհալի նկարիչ Լեւոն Ազնաւուրեանի կողմէ, որ եգիպտահայ ընտանիքի մը գաւակն էր, Լոզան եկած, Գեղարուեստի վարժարանը ուսանելու: Եւ Լոզանի մէջ է, որ ծանօթացած էր Ռուբէն Սեւակին: Եւ երկուքը շատ մտերիմ բարեկամներ եղած են:

Ռ. Սեւակի բժիշկի տիտղոս ստանալէն ետք, Լ. Ազնաւուրեան նկարած էր իր մտերիմը բժշկական շապիկ հագած երեւոյթով և նուիրած գայն իր սիրելի ընկերոջ, իբր «յաւերժական նուէր»:

Եւ Ռուբէն Սեւակ այս դիմանկարը 1914-ին, ընտանեօք Պոլիս վերադարձին, հետը բերած էր: Ատրիկե Յակոբովիչ, Ռուբէնի նահատակութենէն յետոյ, մեծ գուրգուրանքով պահպանեց իր մօրեղբօր դիմանկարը... Եւ մահանալէ առաջ կտակեց, որ Ռուբէն Սեւակի այս դիմանկարը Հայաստանի թանգարանը իբր նուէր ուղարկուի:

Մինչ այդ Ատրիկեին քոյրը, որ Պոլսոյ մէջ շատ ծանօթ նկարչուհի մըն է՝ Քրիստին Սալերի անունով, կը մտածէ, թէ առ ի գուշութիւն լաւ կ'ըլլայ, եթէ ընդօրինակէ այս պաստառը: Եւ իրապէս ալ, 1967-ին, շատ հարազատ ձեւով, կ'ընդօրինակէ: Եւ Ռուբէն

Սեւակին բուն պաստառը 1970-ին, Հայաստանի հետ կապեր ունեցող բարեկամի մը կը յանձնուի, որ գայն Հայաստան դրկէ:

1977-ին Քրիստին Սալերին Հայաստան կ'այցելէ և Երեւանի մէջ, Սփիւռքի հետ Մշակութային կապի կոմիտէի նախագահ Վարդգէս Համազասպեանին կը ներկայանայ և կ'ըսէ. «Քանի մը տարի առաջ Ռուբէն Սեւակին իւղաներկ մէկ դիմանկարը, իբր նուէր, Հայաստանի թանգարանին ուղարկեցինք: Կուզէի գիտնալ, թէ ի՞նչ եղած է այս դիմանկարը»:

Համազասպեան աչ ու ձախ կը հարցնէ: Եւ իրեն կ'ըսեն, թէ այդպիսի նկարի գոյութենէն տեղեակ չեն: Բայց, Քրիստին Սալերին շատ կը պնդէ, և բաւական փնտոտութե վերջ, Գրականութեան և Արուեստի թանգարանին մէկ նկուղին մէջ կը գտնեն ծրար մը, որուն վրայ գրուած է. **«Ռուբէն Սեւակի իւղաներկ դիմանկարը»:** Համազասպեանի և Քրիստին Սալերիի ներկայութեան ծրարը կը բանան, և ի՞նչ տեսնեն՝ իւղաներկ նկարը, տարիներէ ի վեր ուրուած-մնացած ըլլալուն պատճառաւ, նաթոտած է և իւղաներկերը կտոր, կտոր տարածուած են ծրարին մէջ:

Քրիստին Սալերին շատ կը նեղուի, և կը բացատրէ, թէ Ռուբէն Սեւակին այս դիմանկարը պատմական թանկագին նկար մըն է, և հոգեկան բացառիկ արժէք ունի մանաւա՛նդ Ռուբէն Սեւակի հարագատներուն համար:

Վարդգէս Համազասպեան շատ սրտնեղած՝ թանգարանի պատասխանատուներուն անհոգութեան պատճառաւ ստեղծուած այս կացութենէն, Քրիստին Սալերին կ'ըսէ.

«Յառաջիկայ տարի, եթէ Հայաստան կրկին այցելէք, ձեզի կը խոստանամ, որ այս պաստառը բոլորովին վերանորոգուած պիտի տեսնէք»:

Տարի մը ետք, Քրիստին Սալերին չկրցաւ այցելել Հայաստան:

Բայց 1978-ին, մենք այցելեցինք Հայաստան և տեսանք, Եղիշէ Չարենցի անուան Գրականութեան և Արուեստի թանգարանին մէջ, վերանորոգուած Ռուբէն Սեւակի իւղաներկ պաստառը:

Բայց, նկարին վրայ, կ'երեւէին՝ նաթոտութներուն գիծերը:

Եւ մանաւա՛նդ այս պաստառը, շատ բան կորսնցուցած էր, Ռուբէն Սեւակի դիմանկարը ըլլալու հանգամանքէն:

Այդ օր, մեր ընկերը մեզ նկարեց թանգարանի սրահին մէջ, Ռ. Սեւակի վերանորոգուած դիմանկարին առջեւ: Եւ նաեւ առանձին

նկարեց՝ «Ռուբեն Սեւակի դիմանկարը»:

Այս դիմանկարին լուսանկարը մեծցուցինք և կախեցինք Ռուբեն Սեւակի Յիշատակի տան մէջ:

1990-ներուն էր, մեր հօրաքրոջ աղջիկը՝ Քրիստին Սալերին Նիս եկաւ մեզի այցելութեան: Եւ Ռուբենի Յիշատակի տան իբր նուէր բերաւ Ռուբեն Սեւակի իւղաներկ դիմանկարը, որ 1967-ին ինք ընդօրինակած էր բուն դիմանկարէն:

Եւ այսօր, Լեւոն Ազնաւուրեանի 1911-ին Լոզանի մէջ նկարած Ռուբեն Սեւակի իւղաներկ դիմանկարին օրինակը կը գտնուի Նիսի Ռուբեն Սեւակի Յիշատակի տան մէջ: Իսկ բուն դիմանկարը՝ Երեւանի Գրականութեան և Արուեստի թանգարանը:

Բայց այսօր, այս պաստառներէն ո՞րը աւելի իրական է. բո՞ւն պաստառը. թէ՞ ընդօրինակուած պաստառը:

Մենք կը հաւատանք, որ Քրիստին Սալերին ընդօրինակած պաստառը՝ շատ աւելի հարազատ է, քան Երեւանի թանգարանին մէջ գտնուող վերանորոգուած դիմանկարը:

* * *

25 Օգոստոս 2001-թ.ին, Շամիրամ Սեւակի հետ միասին, հանոյքն ունեցանք Ռուբեն Սեւակի Յիշատակի տան մէջ ընդունելու Երեւանի Գրականութեան և Արուեստի թանգարանի տնօրէն՝ Հենրիկ Բախչինեանը:

Շատ գիտակից և հմուտ մտաւորական մըն էր, որ Յիշատակի տետրակին մէջ շատ դրուատալից տողեր գրեց՝ Ռուբեն Սեւակի և Նահատակի Յիշատակի տան մասին:

Շամիրամ Սեւակ քանի մը օր յետոյ Երեւան պիտի մեկնէր, ներկայ գտնուելու համար, 1 Սեպտեմբերին, Ռ. Սեւակի անուան դպրոցի վերամուտի հանդիսութիւններուն:

Եւ Շամիրամ Սեւակ, Հենրիկ Բախչինեանին հետ պայմանաւորուեցաւ, 12 Սեպտեմբեր 2001-թ.ին Երեւանի Գրականութեան և Արուեստի թանգարանը այցելելու ծրագրով:

Եւ 87 տարեկան բայց միշտ երիտասարդ ոգիով Շամիրամ Սեւակ, 30 Օգոստոսին մեկնեցաւ Երեւան: Եւ 14 Սեպտեմբերին վերադարձաւ հոգեկան շատ մեծ գոհունակութեամբ:

Շամիրամը մեզի պատմեց իր Երեւան այցելութեան տպաւորութիւնները: 31 Օգոստոսին Ռ. Սեւակի անուան դպրոցին վերամուտի հանդիսութիւններուն ներկայ եղած էր: Խոր գոհունակութեամբ

արտայայտուեցաւ դպրոցին, տնօրէնութեան և ուսուցիչներուն մասին: Եւ մանաւանդ՝ խօսեցաւ աշակերտներուն բարւոյք վիճակին մասին:

1 Սեպտեմբերին Երեւանի կրթական վերամուտի հանդիսութիւնները կատարուեր են Մատենադարանին առջեւ, առ ի երախտագիտութիւն Սուրբ Մեսրոպ Մաշտոցին:

Եւ այս տարուան հանդիսութիւններուն, Երեւանի կրթական ընդհանուր հաստատութիւնները ներկայացուցեր է Ռուբէն Սեւակի անուան դպրոցը, իր երգչախումբով և իր աշակերտներով:

Շամիրամ ըսաւ, թէ այս ներկայացուցչութիւնը մեծ պատիւ մըն էր Ռուբէն Սեւակի դպրոցին համար: Շամիրամ 12 Սեպտեմբերին այցելել է Գրականութեան և Արուեստի քանգարանը:

Թանգարանի տնօրէն Հենրիկ Բախչիներեանը շատ սիրալիր ընդունելութիւն մը ցոյց տուած է Շամիրամին: Անձամբ կը պտտցնէ քանգարանը և նոր սարքուած երկու սրահները, որոնց մէջ ցուցադրուած են եղեր հայ մշակոյթի «մեծերուն» - Զօհրապի, Վարուժանի և Սիամանթոյի և *անոնց պէս մեծ նկատուածներուն* նկարները: Շամիրամ Սեւակ կը նշմարէ, թէ Ռուբէն Սեւակի նկարը դրուած է շատ աննշան տեղ մը, ան ալ՝ ուրիշներուն կողքին, նեղ շրջանակի մը մէջ, Carte-Postale-ի մեծութեամբ նկար մը:

* * *

Շամիրամ Սեւակ կը հարցնէ Հ. Բախչիներեանին, թէ ինչն^օւ Ռուբէն Սեւակէն բան մը չեն ցուցադրած:

Բախչիներեան կը պատասխանէ. *«Շատ բան չունինք Ռուբէն Սեւակէն ցուցադրելիք»*: Այս պատասխանին վրայ, Շամիրամ Հենրիկ Բախչիներեանին սա հարցումը կ'ուղղէ. «Բայց դուք ունիք Ռուբէն Սեւակի իւղաներկ մէկ դիմանկարը: Այդ մէկը ինչն^օւ չէք ցուցադրած:

Այն ատեն Հենրիկ Բախչիներեան սա պատասխանը կու տայ. «Պատերուն վրայ ցուցադրելու տեղ չունինք»:

Շամիրամ Սեւակ գինք ոգեպնդած դպրոցական հանդիսութիւններէն յետոյ, Գրականութեան քանգարանին մէջի այս երեւոյթէն մեծապէս ցաւ զգացեր է: Որովհետեւ ան ապշութեամբ նկատած էր, որ Ռուբէն Սեւակին իւղաներկ դիմանկարը՝ քանգարանին, մթերանոցներուն մէկուն մէջ, «անկարելորդ» լուսանկարներուն հետ միասին, իրարու վրայ դիզուած էին:

* * *

Իրապէս ալ, մեզի համար անհասկնալի է, Գրականութեան և Արուեստի թանգարանի յարգելի տնօրէնին վերաբերումը:

Ռուբէն Սեւակի Յիշատակի տան մէջ այնքա՛ն հիացական տողեր արձանագրող մէկը ինչպէ՞ս Գրականութեան թանգարանին մէջ, Սեւակին հանդէպ նոյն գնահատականը չէ ցուցաբերած:

Բայց, մեզի համար աւելի անբացատրելի է այն պարագան, որ Հ. Բախչիներեանի պէս հմուտ և գիտակից անձնաւորութիւն մը, Հայաստանի թանգարանին նուիրուած Ռուբէն Սեւակի իւղաներկ դիմանկարին ազգային ու պատմաբարոյական արժէքը չէ գնահատած:

1915-ի Եղեռնի Նահատակ բանաստեղծներէն ոչ մէկը, իր ապրած շրջանին, վաւերական նկարիչի մը կողմէ գծուած իւղաներկ դիմանկար ունի:

Այս տեսակէտով՝ Ռ. Սեւակին իր նկարիչ ընկերոջ՝ Լեւոն Ազնաւուրեանի կողմէ 1911-ին Լոզանի մէջ գծուած իւղաներկ դիմանկարը բացառիկ պատահա՞մըն է՝ Հայկական Եղեռնի պատմութեան համար:

* * *

Երեւանի Պատմութեան և Արուեստի թանգարանի պատասխանատուներ՝ դուք Ռուբէն Սեւակին դիմանկարին ներկայացուցած արժէքը ձեզի ուղարկուած առաջին օրէն մինչեւ այսօր գնահատել չգիտցաք:

Այդ պատճառաւ ձեռնէ պիտի խնդրենք, որ Ռուբէն Սեւակի հարգատներուն կողմէ Հայաստանի թանգարանին նուիրուած ու սրբապատկերի համագօր իւղաներկ դիմանկարը՝ Նահատակի հարգատներուն վերադարձնէք:

Անոնք և նաեւ բիւրաւոր հայեր, շատ լաւ գնահատել գիտեն, հերոսատիպ գրողի դիմանկարին արժէքը: Թէ գեղագիտական և թէ պատմաբարոյական իմաստով:

ԱՐԴԵՕ՞Ք ՌՈՒՔԷՆ ՍԵՒԱԿ, ՋՈՒՐ ՏԵՂ ՆԱՀԱՏԱԿՈՒԹԵԱՆ ԳՆԱՑ

ՌՈՒՔԷՆ ՍԵՒԱԿ, ԹՐԳԱՆԱԼՈՒ ՃԱՄԲՈՎ ՓՐԿՈՒԵԼՈՒ ԱՌԱՋԱՐԿԸ ՄԵՐԺԵՑ. «ԹՐԳԱՆԱԼԸ ՆՈՒԱՍՏԱՆԱԼ Է» ԸՍԱԻ:

ԵՒ ԳԻՏԱԿՑԱԲԱՐ ՆԱՀԱՏԱԿՈՒԵՑԱԻ:

ԱՆ ԿԱՐԾԵՑ, ՈՐ ԻՐ ՆԱՀԱՏԱԿՈՒԹԵԱՄԲ, ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ՄԷՋ, ՋՈՀԱԲԵՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՋԳԱՍԻՐՈՒԹԵԱՆ ՈԳԻՆ ՊԻՏԻ ՋՕՐԱՆԱՅ:

ՌՈՒՔԷՆ ՍԵՒԱԿԻՆ ԻՐ ՆԱՀԱՏԱԿՈՒԹԵԱՄԲ ՏՐՈՒԱԾ ՊԱՏԳԱՄԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ՀԱՍԿՑԱ՞Ի:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՌՄԱՄԲ՝ Ո՛Չ:

ՈՐՈՎՀԵՏԵԻ ՀԱՅ ԱՋԳԻ ՄԷՋ ՄԵԾ ԹԻՒ ԿԸ ԿԱՋՄԵՆ ԵՍԱՍԷՐԸ, ԱՊԵՐԱԽՏԸ ԵՒ ԱՊԱՋԳԱՅԻՆԸ:

ԹՈՒՐԳԵՐԸ, 24 ԱՊՐԻԼ 1915-ԻՆ, ՌՈՒՔԷՆ ՍԵՒԱԿԸ ԳՈՂԳՈԹԱՅ ԲԱՐՁՐԱՑՈՒՑԻՆ: ԲԱՅՑ ՇԱՏ ՈՒ ՇԱՏ ՀԱՅԵՐ, 1915-ԷՆ ՄԻՆՉԵԻ ԱՅՍՕՐ, ՏԵՒԱԿԱՆ ԳՈՂԳՈԹԱՅ ԿԸ ԲԱՐՁՐԱՑՆԵՆ ՌՈՒՔԷՆ ՍԵՒԱԿԸ:

ՌՈՒՔԷՆ ՍԵՒԱԿԻ այրի կնոջ՝ Ժաննի ՍԵՒԱԿԻՆ և երկու որդի գաւակնեբուն՝ ԼԵՆՆԻՆ և ՇԱՄԻՐԱՄԻՆ հետ, Բ. Աշխարհամարտէն յետոյ միայն կրցանք կապ հաստատել:

ԼԵՆՆԸ ՊՈԼԻՍ ԵԿԱՆ 1960-ԻՆ, ՇԱՄԻՐԱՄԻՆ ալ՝ 1963-ԻՆ:

ՊՈԼԻՍ ԵԿԱՆ իրենց հօր ծննդավայրը, կրկին տեսնելու [նկատելով, որ ԼԵՆՆԸ, 1912-ԻՆ, Լոզան ծնելէ յետոյ, 1914-ԻՆ ՊՈԼԻՍ ԵԿԱԾ ԷՐ իր հօր և մօր հետ: ՇԱՄԻՐԱՄԻՆ ալ՝ 1914-ԻՆ, ՊՈԼԻՍ ծնած էր]:

1915-ԻՆ, իրենց հօր նահատակութենէն յետոյ, Ջուիցերիա վերադարձան:

Եւ զինադադարէն յետոյ՝ 1919-ԻՆ, ՌՈՒՔԷՆ ՍԵՒԱԿԻ հօր և մօր փափաքով, երկուքը ՊՈԼԻՍ ԵԿԱՆ 1919-ԻՆ, և մինչեւ 1922 ՊՈԼԻՍ մնացին, մինչեւ Քեմալին գալը:

1960-ին Պոլսոյ մէջ, Լեւոնն և Շամիրամը իրենց հօր ծննդավայրը եղող Սիլիվրի գիւղաքաղաքը տարինք, և իրենց մանկութեան բնակած մեծ հօր տունը կրկին տեսան:

Սիլիվրի-ի Ռուբէն Սեւակի հօրենական տունը, այդ տարիներուն, դեռ կանգուն մնացած էր, բայց թուրք գաղթականներու կողմէ գրաւուած:

Լեւոն և Շամիրամ շատ զուարթ բնաւորութիւն ունէին:

Բայց երբեմն, մտերմիկ խօսակցութեանց ընթացքին կը զգայինք, թէ ցաւ մը ունին իրենց սրտին վրայ:

Մանաւանդ Շամիրամ, տխրութեամբ կը հարցնէր երբեմն. **«Ինչո՞ւ մեր հայրը մեր մասին չմտածեց և ազգին համար զոհուեցաւ, և մեզ որք ձգեց»:**

Այդ բուականներէն մինչեւ այսօր, գրեթէ 40 տարիներ անցան:

Եւ երբեմն կը մտածենք, թէ Լեւոն և Շամիրամ, տեղ մը իրաւունք չունէի՞ն արդեօք վշտանալու, որ իրենց հօր ազգին համար զոհուելուն պատճառաւ, իրենք որք մնացին և, երկար տարիներ, տառապեցան: Եւ մանաւանդ երբ մտածենք, թէ հայ ազգը, ընդհանուր առմամբ, Ռուբէն Սեւակի կատարած զոհողութիւնը չէ գնահատած, և մեծ մասամբ ապերախտ գտնուած է անոր հանդէպ:

Եւ ձեռով մըն ալ մոռացութեան ենթարկած է նահատակ բանաստեղծ Ռ. Սեւակը, «Սեւակ» անունը տալով բոլորովին տարբեր նկարագիր ունեցող ապերախտ բանաստեղծի մը:

Եւ այսօր, անհերքելի իրականութիւն մը կայ: Այս երկու «Սեւակ»ներուն ստեղծած շփոթութիւնները՝ ցաւալի և զգուելի թիրիմացութիւններու պատճառ կ'ըլլան:

Եւ այս ձեռով, Ռուբէն Սեւակի հոգին, կրկին ու կրկին կը խաչուի... Եւ դեռ տեսապէս պիտի խաչուի: Այն Սեւակը, որ 1915-ին, Չանդըրը-ի մէջ, թրքանալու առաջարկը՝

«Անունիս պէս հոգիս ալ պիտի չսեւացնեմ» ըսելով մերժած էր:

* * *

Դիպուածները, կեանքի մէջ, պատահարներ են պարզապէս:

Ճակատագրին հաւատացողը չենք: Բայց երբեմն դիպուածներ կը պատահին. և կը սկսինք մտածել, թէ արդեօ՞ք նակատագիր ըսուած բան մը գոյութիւն ունի:

Պոլսոյ մէջ, մեր երիտասարդութեան տարիներուն, գործի

կեանքի մէջ, սննդեղէնի արտադրութեան հաստատութիւն մը առաջ բերինք: Որուն մեր տուած անունը, ժամանակի ընթացքին, շատ ծանօթ անուն մը եղաւ:

Բայց միջոց մը յետոյ տեսանք, որ մեր արտադրութեան “Marque Déposée” եղած անունը, շատ մը հաստատութիւններ սկսան կեղծել, որ օրէնքով արգիւուած էր:

Ստիպուած եղանք, մեր անունը շահագործող բոլոր հիմնարկներուն դէմ դատ բանալ:

Եւ այս դատավարութիւնները քանի մը տարի տեւեցին: Բայց, ի վերջոյ, շահեցանք:

Եւ մեր անունը գործածողները ստիպուած եղան հատուցում տալու և իրենց անունը փոխելու:

Եւ մեր դատը շահած օրերուն էր, որ առաջին անգամ ըլլալով լսեցինք, թէ Հայաստանի մէջ նոր «Սեւակ» անունով բանաստեղծ մը մէջտեղ ելած է, և Հայաստանի մէջ շատ համբաւ շահած է այդ անունով:

Սկիզբը հաւատալ չուզեցինք:

Ինչպէ՞ս կարելի էր նահատակ բանաստեղծի մը անունը Հայաստանի մէջ շահագործել: Ասիկա սրբապղծութեան հաւասար արարք մըն էր, մեր համոզումով:

Հայաստանի մտաւորական շրջանակները այս աստիճան անպատասխանատու և անգիտակից էին, որ նման անցեցիլի և անդարմանելի սխալ մը կը գործէին:

Ահռելի վրդոված էինք:

Մանաւանդ որ, մեր առեւտրական անունը շահագործողներուն դէմ բացած դատը, նոր աւարտած էր այդ օրերուն:

Այդ հոգեվիճակի մէջ փորձեցինք Հայաստանի պետական իշխանութիւններուն դիմել, կատարուած անօրէնութեան արգելք ըլլալու համար:

Մեր բարեկամները մեզի տեղեկացուցին, թէ Սովետ Միութեան մէջ, միջազգային հեղինակի իրաւունքի օրէնքը դեռ չէ ընդունուած:

Այս պատճառաւ, մեր բողոքը և ընդվզումը մնացին, որոշ շրջանակի մը մէջ միայն:

Բայց, այդ օրէն սկսեալ, մեր կեանքին նպատակը ըրինք, հայութեան կողմէ անիրաւուած և գրեթէ անտեսուած նահատակ բա-

նաստեղծ Ռուբեն Սեւակին իսկական մտաւորականի, հայրենա-
ւերի կերպարը հայ ժողովուրդին ծանօթացնել:

Այստեղ պատմելու պիտի ջանանք, Ռուբեն Սեւակին յիշատակը
վառ պահելու համար, 1976-թ.ներէն սկսեալ մեր տարած աշխա-
տանքներուն դէմ յանդիման գտնուած, զանազան և զարմանազան,
տեղ-տեղ զաւելտական, բայց շատ անգամ լալիք պատահարները,
ապացուցանելու համար, թէ հայութեան մէջ որքա՛ն մեծ թիւ կը
կազմեն անգիտակից, ապերախտ ու ապագային հաւաքականու-
թիւնները:

* * *

1976-ին էր: Պոլսէն նոր հեռացած էինք վերջնականապէս:

Զուիցերիոյ Լոզան քաղաքը, նախկին պոլսահայ երեսփոխան
Մկրտիչ Շէլէֆեանին բնակարանը հիւրաբար կը գտնուէինք: Ուրիշ
հայ հիւրերու կողքին, ներկայ էր նաեւ Հայաստանէն նոր
Զուիցերիա ժամանած, Հայաստանի Սփիւռքի հետ կապի կոմիտէի
փոխ-նախագահ Ա. Մարտիրոսեանը:

Մ. Շէլէֆեան մեզ Մարտիրոսեանին ծանօթացուց և անոր բա-
ցատրեց, թէ՛ բանաստեղծ Ռուբեն Սեւակի եղբորորդին ենք, և աշ-
խատանք կը տանինք նահատակ բանաստեղծին յիշատակը վառ
պահելու համար:

Մենք, այս պատեհ առիթէն օգտուելով, Մարտիրոսեանին
պատմեցինք երկու բանաստեղծ «Սեւակներուն» ստեղծած կննիորը:
Եւ իրեն ըսինք, թէ միջազգային օրէնքներով բանաստեղծ Ռուբեն
Սեւակին անունին՝ ուրիշ մէկ բանաստեղծի մը կողմէ Հայաստանի
մէջ շահագործումը անարդարութիւն է:

Եւ իրեն ջանացինք բացատրել երկու «Սեւակ»ներուն պատճա-
ռաւ գոյացած անվերջանալի շփոթութիւնները: Մանաւանդ շեշտե-
ցինք, թէ՛ նահատակ բանաստեղծ Ռուբեն Սեւակին դէմ կատա-
րուած այս անարդարութիւնը, պատուաբեր չէ Հայաստանին:

**Մարտիրոսեան մեզ շատ հանդարտութեամբ մտիկ ըրաւ և
քաղաքագէտի վայել սա պատասխանը տուաւ. «Էլի, այս երկու
արժէքաւոր բանաստեղծները, հիմա մահացած են: Հանգիստ ձգենք
զանոնք, իրենց գերեզմաններուն մէջ»:**

Մարտիրոսեանի պէս պատասխանատու անձի մը այս անպա-
տասխանատու և միամիտ յայտարարութիւնն ալ կ'ապացուցանէր,

որ ինք, նահատակ Ռուբեն Սեւակին գերեզման չունենալուն անգամ տեղեակ չէր:

Եւ նաեւ ան, շատ և շատ հայաստանցի և Սփիւռքի հայերուն նման, Ռուբեն Սեւակին ով ըլլալուն մասին գաղափար չունէր:

Քրիստին Սալերին [Սալերեան] Ռուբեն Սեւակի քրոջ աղջիկներէն մէկն է:

Եւ դժբախտաբար [իբր Ռուբեն Սեւակի քրոջ աղջիկը] Պոլիս կ'ապրի:

Քրիստին Սալերի միջազգային չափանիշով ծանօթ գեղանկարիչ մըն է: Եւ մանաւանդ՝ բրքական չափանիշով Թուրքիոյ առաջնակարգ նկարիչներէն մէկն է:

Քրիստին Սալերին 1977-ին Հայաստան կ'այցելէ: Ան Հայաստան հրաւիրուած է Երեւանի մէջ այդ օրերուն սարքուած իր նկարչական ցուցահանդէսին ներկայ ըլլալու համար:

Եւ ցուցահանդէսը շատ մեծ յաջողութիւն կը գտնէ՝ իբր "Avant-Garde" նկարիչ:

Եւ գեղանկարչունին շատ մը ծանօթ մտաւորականներու և արուեստագէտներու կողմէ կը հիւրասիրուի:

Քրիստին Սալերին հիւրասիրող հայաստանցի մտաւորականներէն մէկն է՝ Շահէն Թաթիկեանը և իր կինը՝ նախկին պոլսեցի գրագիտուհի Շաքէ Վարսեանը:

Շահէն Թաթիկեանը իր անձնական մեքենայով կը պտտցնէ Քրիստին Սալերին, Հայաստանի տեսարժան և պատմական վայրերը:

Եւ Կիրակի օր մըն ալ, Շ. Թաթիկեան Սալերիին կ'ըսէ. «Քրիստին ջան, այսօր քեզի պիտի տանինք գիւղ մը, ուր մեզի պիտի հիւրասիրեն խորովածով:

Եւ Շահէն Թաթիկեան, իր կինը՝ Շաքէ Վարսեան և Քրիստին Սալերի նամբայ կ'ելլեն մեքենայով դէպի այդ գիւղը:

Ճամբու ընթացքին, Ռուբեն Սեւակի մասին կը խօսին:

Եւ այն ատեն Քրիստին, Պարոյր Ղազարեանի մասին կ'արտայայտուի և կ'ըսէ, թէ «Ռուբեն Սեւակի անունը շահագործող Պարոյր Ղազարեանի ըրածը, պարզապէս անպարկեշտութիւն է»:

Եւ կ'աւելցնէ՝ «Վերջերս Ֆրանսա հաստատուած զարմիկս՝ Յովհաննէս Զիլինկիրեանն ալ ինծի պէս կը մտածէ, և շատ հակառակ է Պարոյր Ղազարեանին կատարած անիրաւ և անբարոյ կեցուածքին:

Եւ Պարոյրին Ռուբէն Սեւակին անունը գործածելը անարգանք կը նկատէ նահատակ գրողին համար»:

Խեղճ Քրիստին Սալերին տեղեակ չէր, որ Շահէն Թաթիկեանը Պարոյր Ղազարեանին շատ մօտ մէկ բարեկամը եղած էր: Եւ Սալերինն այս յանդուգն արտայայտութեան վրայ, Թաթիկեան հինոն էի կը բորբոքի, և մեքենան կը կեցնէ ու Երեւան կը դառնայ, և շատ ջղային ձայնով մը, գրեթէ կը պոռայ Քրիստինի երեսին. **«Այլեւս գիւղ, խորոված, մորոված չկայ քեզի»:**

Եւ իբր թէ, այս ձեւով պատժած կ'ըլլայ, Հայաստանի մէջ Ռուբէն Սեւակի դէմ գործուած անարդարութիւնը համարձակօրէն ըսող անուանի գեղանկարչուհիին:

* * *

Շ. Թաթիկեան այն անձն է, որ Ապրիլ 1989-ին, Երեւանի «Գրական թերթին» մէջ, բաց նամակ մը հրատարակած էր մեզի դէմ, իբր պատասխան՝ Պէյրութի «Արարատ» օրաթերթին մէջ 8 Փետրուար 1989-ին հրատարակուած Պարոյր Ղազարեանի մասին մեր արտայայտութիւններուն:

Այս պատասխան գրութեան մէջ, իր երկար ձառքոտութիւնները կը վերջացնէր հետեւեալ տողերով:

«Այսպէսով, մենք կ'արդարացնենք բոլոր ժամանակներու տուած մեր բազում թանկագին կորուստները, կը յաւերժացնենք յիշատակը մեր սուրբ նահատակների, այդ թւում Ռուբէն և Պարոյր Սեւակների...» - «Գրական թերթ», Շահէն Թաթիկեան, Ապրիլ 1989 - Երեւան:

Այս տողերը, մեր համոզումով, անգիտակից, անարդար և միամիտ Թաթիկեանի կողմէ ուղղուած ամենածանր անարգանքն էին Ռուբէն Սեւակի դէմ: Ուր ան, հերոս նահատակ Ռուբէն Սեւակի անունին քով կը դնէր Պարոյր Ղազարեանի անունը:

Բոլորին ծանօթ է, դժբախտ պատահարը, որ Պարոյրի կեանքը արժեց:

Դեռ հագիւ շաբաթ մը առաջ վարորդական իր արտօնատետրը ստացած գրողը, սեփական ինքնաշարժի դեկին նստած, իր ծննդավայր գիւղէն նամբայ կ'ելլէ դէպի Թիֆլիս: Իրեն կը յանձնարարեն, որ այս խենթութիւնը չընէ, որովհետեւ իր անփորձութեան պատճառաւ կրնար արկածի հանդիպիլ: Բայց պնդագլուխ Պարոյր,

մտիկ չընեն եղած թելադրանքները, և ճամբան, փոսի մէջ տա-
պալելով, արկածահար կը մահանայ 1971-ին:

Եւ ամերիկեան Ս.Ի.Ա.ի ծառաները եղող կարգ մը դաշնակ-
ցականի պիտակ կրող գործակալներ, իբր «պաղ պատերազմ»ի
զէնք, Հայաստանի դէմ շահագործեցին Պարոյր Ղազարեանին
արկածով մահանալը: Եւ «ոուսերուն կողմէ սպաննուած է» ըսելով,
նահատակի պիտակ փակցուցին արկածով մահացած Պարոյրին:

Միւնիխի Ս.Ի.Ա.ի ոստիոկայանը, տարիներով այս սուտերը
տարածեց Հայաստանի ժողովուրդին մէջ:

Մենք այսօր, շատ կը ցաւինք, բայց չենք զարմանար տեսնելով
այսօրուան խղճալի վիճակը Հայաստանի, որ «ագերի-ամերիկեան-
դաշնակ» ներշնչումի խառնուրդ մը եղող Ռ. Քոչարեանին ձեռքը
փոքր արատապետութեան մը վերածուած է՝ շուրջ չորս միլիոնէն
իջնելով գրեթէ մէկուկէս միլիոն բնակչութեան:

Այս մնացած մէկուկէս միլիոնին մեծամասնութեան ալ «վա-
լիզ»ները պատրաստ են, Հայաստանէն մեկնելու համար, յարմար
առիթով:

Ա՛յս է Հայաստանի այսօրուան իրական խղճալի վիճակը, որ
պատրաստուեցաւ Պարոյր Ղազարեանի, Շահէն Թաքիկեանի և
իրենց գաղափարակիցները եղող, քառակուսի գլուխով Տօն
Քիշոտներու և մանաւանդ՝ շատ տասնամեակներէ ի վեր ծանօթ
կուսակցութեան յարող և Արեւմուտքի ծառայութեան լծուած
գործակալներու կողմէ:

ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ ԴԷՊԻ ՅՈՒՆԱՍՏԱՆ

- THESSALONIQUE -

ԱՅՆ ՔԱՂԱՔԸ, ՈՒՐ ՀԱՅ ԱԶԳԸ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԵՆԹԱՐԿՈՂ ԱՆԻՄԵԱԼ «ԻԹԹԻՀԱՏ ԵՒ ԹԵՐԱՔՔԻ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԿԱԶՄՈՒԵՑԱԻ:

ԱՅՆ ՔԱՂԱՔԸ, ՈՒՐ ԱՆԱԹՈԼԻՈՅ ԵՒ ՊՈՆՏՈՍԻ ՅՈՅՆԵՐԸ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԵՆԹԱՐԿՈՂ ԵՒ 1915-Ի ԵՂԵՌՆԻ ՎԵՐՋԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԵԿՈՐՆԵՐԸ ԲՆԱԶՆՁՈՂ ՍԱԴԱՅԼԱԿԱՆ ՄՈՒՍՏԱՑԱ ՔԵՄԱԼԸ ԾՆԱԻ:

“Thessalonique”ը, Աթենքէն յետոյ, Յունաստանի Երկրորդ մեծ քաղաքն է և նախահանգիստն է: Ամէն տեսակետով շատ պատմական քաղաք մը եղած է:

Ք.Ա. 315-թ.ին, մակեդոնացի զօրավար “Chassandre”ը, այս քաղաքը հիմնելով զայն կը կոչէ Թդեսալոնիկէ, անունովը իր կնոջ, որ Մեծն Ադեքսանդրին քոյրն էր նոյն ատեն:

Հոմէական իշխանութեան շրջանին, շուտ և շատ ծաղկող Թդեսալոնիկէ քաղաքը, Արեւմուտքը Արեւելքին կապող մեծագոյն կեդրոնը եղաւ:

Հոմէն սկսող Via Appia-ին շարունակութիւնը եղող Via Egnatia-ն, Ատրիականէն անցնելով Թդեսալոնիկէ կը հասնէր, և անկէ կ'երթար Բիւզանդիոն, և ապա՝ կը շարունակէր ճամբան դէպի Կիլիկիա և Միջին Արեւելք:

Թդեսալոնիկէ քաղաքը, Աւետարանին մէջ ալ շատ կարեւոր տեղ կը գրաւէ:

Ք. Յ. 50-թ.ներուն, Երուսաղէմի մէջ, քրիստոնէաները հալածող և չարչարող հրեայ Սաուղը՝ մէկ օրէն միւսը [իբր թէ, Քրիստոսին տեսիլքով] քրիստոնէայ կը դառնայ և Պօղոս անունով կը մկրտուի: Եւ իբր քրիստոնէական կրօնին քարոզիչ, այն ատենուան աշխար-

հին գլխաւոր քաղաքները կ'այցելէ, և նաեւ, երկու անգամ ալ կ'երթայ Թղեսալոնիկէ:

Այս քաղաքին մէջ, հրեայ Սաւուղին [նոր անունով՝ Սուրբ Պօղոս] տուած քարոզները, Սուրբ Գիրքին ամենակարեւոր մասերը կը կազմեն:

Մեր համոզումով՝ Թղեսալոնիկէ քաղաքին մէջ կը գտնուի պատմական Հայաստանի մասին յիշատակութիւններ կրող ամենահռչակաւոր յուշարձանը:

Այս քաղաքին գլխաւոր կեդրոնը գրաւող և 1700 տարիներ առաջ կառուցուած հռոմէական յուշարձանը, հռոմեացի կայսր Galerius-ին Ք. Յ. 300-թ.ներուն Հայաստանի, Պարսկաստանի և Միջագետքի մէջ տարած յաղթանակները փառաբանող կամարածեւ կոթող մըն է:

Այստեղ կը հրատարակենք, Թղեսալոնիկէ քաղաքին հռոմէական «Յաղթանակի յուշարձան»ին մասին եւրոպական գիրքերուն մէջ, 2001 թուականին հրատարակուած ծանօթութիւնները:

Apsida Galeriu - Cet arc triomphal faisait partie d'un ensemble édifié au 4 s. au principal carrefour de la cité romaine pour honorer l'empereur Galère. Ses piliers de brique revêtus de pierre furent décorés de bas-reliefs exaltant les victoires de cet empereur sur les nations de Perse, de Mésopotamie et d'Arménie.

Le pilier Sud est le mieux conservé. Remarquer sur la face extérieure et de bas en haut: scène de guerre avec éléphants et lion; sacrifice avec Galère à droite et son beau-père Dioclétien à gauche; triomphe de Galère; Galère faisait une proclamation à ses soldats. Sur la face intérieure, voir surtout; en bas la Mésopotamie et l'Arménie, figurées par deux femmes faisant leur soumission; au-dessus. Galère combattant.

Դժբախտաբար, հայերէն պատմագրական գիրքերուն և նոյնիսկ Հայկական համայնագիտարանին մէջ, Թղեսալոնիկէի մասին տրուած տեղեկութիւններուն շարքին, այս 1700 տարուան յուշարձանին վերաբերող ոչ իսկ ակնարկութիւն մը կրցանք գտնել:

Արդեօք այս զանցառումը տգիտութեան արդիւնք էր, թէ՞ անտարբերութեան: Չենք գիտեր:

Քաղաքը, հռոմեացիներեն յետոյ, մինչև 1430-թ.ը, Բիւզանդական կայսրութեան իշխանութեան ենթարկուած կը մնայ:

Բայց, դժբախտաբար, այս սքանչելի քաղաքը, 1430 թուականին կը գրաւուի օսմանցի բարբարոս սուլթան Մուրատ Բ.ի կողմէ:

Մենք կը հաւատանք, որ այդ թուականներէն յետոյ նետուած են սաղմերը՝ 1915-ի Հայկական ցեղասպանութեան:

Որովհետեւ 1492-ին, Իզապէլ Թագուհին կողմէ Սպանիայէն վոնտուող հրեաները, սիրայօժար կ'ընդունուին օսմանեան սուլթան Պայեզիտ Բ.ի կողմէ:

Եւ այս հրեաները կը տեղաւորուին Սելանիկ քաղաքը, և նաև՝ օսմանեան գրաւման տակ գտնուող վայրերը:

Մենք, տարիներէ ի վեր, հրեաներուն աշխարհին տիրապետելու ծրագիրներուն մասին կ'արտայայտուինք:

Ինչպէս նշեցինք՝ հրեաները 1492-ին, Սպանիայէն Իզապէլ Թագուհին կողմէ վոնտուեցան: Որովհետեւ, այդ տարիներուն հրեաները Սպանիոյ մէջ, արաբներուն հետ գործակցաբար, իշխանութիւնը ձեռք անցնելու և քրիստոնէութիւնը կործանելու կ'աշխատէին:

Հրեաները միշտ կը գանգատին և կ'ողբան, որ Սպանիայէն վոնտուած են: Բայց երբեք չեն ըսեր, թէ ինչո՞ւ վոնտուած են:

Հրեաները, ուր որ ալ ըլլան, ինչ անուն ալ կրեն, միշտ Աստուծոյ իբր թէ իրենց շնորհած՝ «Աստուծոյ ընտրեալ ժողովուրդը» ըլլալու իրաւունքով, աշխարհին տիրապետելու իրենց ծրագիրները կը գործադրեն: Նոյնը ըրին Սելանիկի մէջ ալ:

Հրեաները օսմանցիներուն հակաքրիստոնեայ մտայնութենէն ալ օգտուելով, Սելանիկը իրենց ծրագիրներուն գործադրութեան կեդրոնի վերածեցին:

Եւ 1900-թ.ներուն, Սելանիկ քաղաքին բնակչութեան կեսէն աւելին՝ վաթսուն հազար հրեայ և դաւանափոխ հրեաներէ կը բաղկանար:

Եւ այդ տարիներուն, Theodor Herzl-ին առաջնորդութեամբ, իրենց սիոնիստական ծրագիրները գործադրել սկսան:

Այդ նպատակով էր, որ 1900-թ.ներուն Սելանիկի մէջ, հրեաները հիմնեցին Իթթիհատ և Թերաքքի կուսակցութիւնը:

Եւ այս հրեաժին կուսակցութիւնը 1908-ին, Պոլսոյ մէջ, իշխանութիւնը ձեռք անցուց:

Եւ անկէ յետոյ, ամէն բան, ժամացոյցի նշգրտութեամբ ընթացաւ:

Իբրքինատ և Թերաքքի կուսակցութիւնը, Ա. Աշխարհամարտէն օգտուելով, 24 Ապրիլ 1915-ին, հայ ազգը ցեղասպանութեան ենթարկեց:

1918-էն յետոյ, Սելանիկ ծնած և ծագումով [մեծ հաւանականութեամբ] հրեայ, իսկական ֆարմասոն մը եղող Մուստաֆա Քեմալը մէջտեղ ելաւ:

19 Մայիս 1919-ին, Սամսոն ոտք կոխող Մուստաֆա Քեմալ, իսկական սատանայ մը եւ քամելիոն մըն էր: Անաթոլիոյ մէջ մոլեռանդ իսլամներուն՝ ինքզինքը մոլեռանդ իսլամ ձեւացնող Մուստաֆա Քեմալ, Լենինին՝ իր համայնավար մը ըլլալը հաւատացուց. և սովետներուն խաբեց: Եւ այս «բատրոնը»՝ հայերուն համար ծանր հետեւանքներ ունեցաւ: Մասամբ ալ՝ մեղքովը Երեւանի դաշնակ իշխանաւորներուն, որոնք անուղղայ արեւմտամէտներ էին:

Մուստաֆա Քեմալ՝ Թալաթէն յետոյ, մեծագոյն ջարդարարն է:

Ան է՝ 1915-ի Եղեռնի հայկական վերջին բեկորները բնաջնջողը:

Ան է՝ Անաթոլիոյ բնիկ յոյն ժողովուրդը «մաքրագործող»ը:

Մուստաֆա Քեմալն է՝ Սեւ ծովի շրջաններու Պոնտոսի կայսրութեան բնակչութեան մնացորդը եղող պոնտոսցի յոյները ցեղասպանութեան ենթարկողը:

Անցեալ Յուլիս 2002-ին, Յունաստանի Հանրապետութեան նախագահ Սփիֆանօբուլոսը, պաշտօնապէս հետեւեալ յայտարարութիւնը կատարեց՝

«Մենք երբեք պիտի չմոռնանք՝ 1920-ին Անաթոլիոյ մէջ կատարուած Պոնտոսի ժողովուրդին ցեղասպանութիւնը»:

* * *

25 Մայիս 2002-ին, Սամոս կղզիէն օդանաւ առինք և, Աթէնքի նամբով, Սելանիկ մեկնեցանք:

Սելանիկի տրուած այցելութեան առաջին պարտականութիւնը եղաւ՝ այցելել մեր մեծ մօր՝ Արմաւենի Զիլինկիրեանի գերեզմանը:

1934-ին Արմաւենի Զիլինկիրեան, Գավալա բնակող իր աղջկան՝ Հայկանուշ [Զիլինկիրեան] Չեխիբեանին այցի երթալու համար, Պոլիսէն գնացքով Սելանիկ մեկնած էր:

Վերադարձին՝ Սելանիկէն Պոլիս մեկնող շոգեմաւ մը կը նստի:

Բայց դեռ շոգեմաւը համբայ չելած, սրտի տագնապով կը մահանայ:

Եթէ շոգեմաւին համբայ ելլելէն յետոյ մահանար, այն ատենուան կանոնով՝ մարմինը ծով պիտի նետուէր:

Եւ այն ատեն իր գաւկիսն՝ Ռուբէն Սեւակին պէս անշիրիմ՝ նակատագիր մը ունեցած պիտի ըլլար:

Բարեբախտաբար իր հարազատները շոգեմաւէն կը հանեն Արմաւենի Զիլինկիրեանին մարմինը և, պատշան եկեղեցական արարողութեամբ, Սելանիկի հայկական ազգային գերեզմանատունը կը թաղեն:

1970-թ.ներուն մեր Սելանիկ այցելութեան օրերուն, մեր ազգականներէն՝ սելանիկաբնակ ծանօթ ազգային մը եղող Սահակ Գլընեանէն խնդրեցինք, որ մեր մեծ մօր համար մարմարէ դամբանի մը շինութեան հսկողութիւնը յանձն առնէ:

Հետեւեալ տարին, մեր Սելանիկ այցելութեան օրերուն, Սահակ Գլընեան մեզ տարաւ ազգային գերեզմանատուն:

Եւ մենք տեսանք, սրտի մեծ գոհունակութեամբ, մեր մեծ մօր նորակերտ դամբարանը, իբր Ռուբէն Սեւակի մայր՝ Արմաւենի Զիլինկիրեանի յիշատակը յաւերժացնող արձանագրութեամբ:

Այս նուիրական պարտականութիւնը կատարած Սահակ Գլընեանին բարի յիշատակին առջև յարգանքով կը խոնարհինք:

Սելանիկի մէջ, Ռուբէն Սեւակի մօր դամբարանին հոն գտնուելէն անկախ, նահատակ հերոս բանաստեղծի հետ առնչուող ուրիշ պարագայ մը կայ:

Եղեռնէն յետոյ, Ռուբէն Սեւակի առաջին գիրքը, 1925-ին Սելանիկի «Գողթան» գրատան նախածեռնութեամբ և «Ալիք» տպարանին կողմէ լոյս ընծայուած էր «Բժիշկին գիրքէն փրցուած էջեր» վերտառութեամբ:

Մեզի ծանօթ չէր այս գիրքին յառաջաբանը գրող հրատարակիչը:

Նսե՛ւ, չէինք գիտեր, թէ ովքե՞ր էին այս գիրքին հրատարակութիւնը յանձն առնող «Գողթան» գրատան պատասխանատուները:

Յաւելուած՝ Ռուբէն Սեւակի «Բժիշկին գիրքէն փրցուած էջեր» անունը կրող գրութիւնները 1913-1914-ին Պոլսոյ «Ազատամարտ» օրաթերթին մէջ հրատարակուելէն յետոյ, առաջին անգամ 1925-ին, Սելանիկի մէջ, որպէս առանձին հատոր լոյս տեսած էր:

Բախտը, կամ եթէ ուզէք՝ ըսենք դիպածները, կեանքի մէջ շատ բան կը փոխեն:

Բախտով կամ դիպուածաւ՝ Ռուբէն Սեւակին Սելանիկ հրատարակուած գիրքին մասին մասնակի տեղեկութիւններ առինք մեր հարազատներէն՝ Վերոնիքա Մահտեսեանէն, 5 Մայիս 2002-ին, Վենետիկի մէջ կատարուած հարսանիքի օրը:

Նորապսակ փեսային հայրը՝ Սելանիկի ծանօթ ազգայիններէն՝ պրն. Կարապետ Գալֆայեան, մեզի հետեւեալ տեղեկութիւնները տուաւ.

«Այս գիրքը հրատարակողները Ռուբէն Սեւակի Պոլսոյ Կեդրոնական վարժարանին աշակերտներէն և Ռուբէն Սեւակի համակիրներէն կարգ մը անձներ էին որոնք, Պոլսէն հեռանալով, Սելանիկ հաստատուած էին:

Անոնք էին, որ յանձն առին, այս գիրքին հրատարակութիւնը»:

Պրն. Կարապետ Գալֆայեան ինքն ալ, շատ տպաւորուած էր, Ռուբէն Սեւակի «Բժիշկին գիրքէն փրցուած էջեր»ու գրութիւններէն:

Եւ ան, մեզի արտասանեց, մինչև հիմա իր յիշողութեան մէջ մնացած Ռուբէն Սեւակի «Կես խենթը» պատմուածքէն հատուած մը.

«Սիրելի սիրեցեալք.

«Գրութիւննիդ ստանալով ստանալուս պէս ստացայ ու պատասխանը գրելնիքէն կը գրեմ...»:

Մենք շնորհապարտ ենք պրն. Կարապետ Գալֆայեանին, մեզի փոխանցած այս տեղեկութիւններուն համար:

Ինչպէս նշեցինք՝ այս գիրքին յառաջաբանը գրած և իբր «հրատարակիչը» ստորագրած յարգելի անձնաւորութեան ո՛վ ըլլալը, մինչև այսօր, մեզի ծանօթ չէ:

Եւ մենք, առ ի երախտագիտութիւն իրեն, կը հրատարակենք այս անծանօթ «հրատարակիչ»ին յառաջաբանը.-

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Փոշիներու մէջէն դուրս կը հանենք ու ներկայ հատորին մէջ կ'ամփոփենք տարաբախտ սօքք. Ռուբէն Չիլինկիրեանի՝ «Բժիշկին գիրքէն փրցուած էջեր» ընդհանուր խորագրին տակ գրած այն գեղեցիկ պատմուածքները որոնք տասներկու տարիներ առաջ, 1913-1914 թուականներուն, առաջին անգամ լոյս տեսան «Ազատամարտ»ի մէջ և այնքան մեծ հանոյքով կարդացուեցան ընթերցողներու կողմէ:

Տօքք. Ռուբէն Չիլինկիրեան, հայ բժշկական պատմութեան մէջ, միակն է եղած, որ այնքան սիրուն, իւրայատուկ և ժողովրդական ոնով մը գրի առած է բժիշկի իր էջերը: Եւ առոր մէջ փնտռելու է գաղտնիքը այն հետաքրքրութեան, զոր ողբացեալ գրագետին պատմուածքները արբնցուցին հասարակութեան բոլոր խաւերուն մէջ անխտիր:

Ջինադադարէն ասդին, շատ մը սպառած ու հոս-հոն ցրուած երկեր հրատարակութեան արժանացան, բայց ոչ մէկ հրատարակիչ մտքէն անցուց, հատորի մը մէջ ամփոփել այս թանկարժէք էջերը, որոնք այլապէս կորսուելու պիտի դատապարտուէին:

Այժմ, ձեռնարկելով այս գրքի հրատարակութեան, կ'ուզենք նախ կորուստէ փրկել հանճարեղ բժիշկին ու գրագետին գրչի այս արտադրութիւնները, և յետոյ, կը կարծենք թէ, այսօրուան ու վաղուան մեր պատանի ու երիտասարդ սերունդը աւելի քան պէտք ունի այս գրքին, իբր լաւագոյն խորհրդատու մը, շողշողուն խայծերով ու փորձութիւններով լեցուն այս կեանքին մէջ:

Հրատարակիչը



**ՄԵՐ ԱՅՍ ԳՐՈՒԹԻՒՆԸ ԿԸ ԶՕՆԵՆՔ ՀԱՅ
ԱԶԳԱՅՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՆՈՒՒՐԵԱԼՆԵՐՈՒՆ**

ՌՈՒՐԷՆ ՍԵՒԱԿԻ ԲԱՑԱՌԻԿ ՆԱԽԱՏԵՍՈՒԹԻՒՆԸ

Ռուբեն Սեւակ 1902-1905 տարիներուն, Պերպերեան վարժարանի աշակերտութեան շրջանին գրած բանաստեղծութիւններն եւ ուսումնասիրութիւնները, «Չայներ» խորագրով տետրակի մը մէջ կ'ամփոփէ...



... Եւ այս տետրակին առաջին էջին վրայ հետեւեալ տողերը կ'արձանագրէ՝

Խօսք մը

«Չայներ»ը փոքրիկ մէկ հաւաքածոյն է արձակ եւ ոտանաւոր այն մի քանի փորձերուն զորս արտադրած եմ աշակերտի շրջանիս: Գրական առաջին թոթովումներ եմ ասոնք, զո՛ւրկ որեւէ արժանիքէ... Թերեւս սակայն, փնտռուին օր մը...

1905 Հոկտեմբեր

Ռուբեն Յ. Չիլինկիրեան



Այս ի՛նչ անհաւատալի նախատեսութիւն էր:

Որովհետեւ, 84 տարիներ յետոյ՝ 1989-ին, հեռաւոր Գանատայի Թորոնթօ քաղաքին մէջ, փնտոեցիմք և գտանք Ռուբէն Սեւակի այս անտիպ բանաստեղծութիւններու և ուսումնասիրութիւններու երկու տետրակները և ամփոփեցիմք զանոնք Նիսի Ռ. Սեւակի Յիշատակի Տան մէջ:

Հրաշքի նման դիպուածները, և եթէ կ'ուզէք ըսենք՝ անհաւատալի դիպուածները, երբեմն կեանքի ընթացքը կը փոխեն:

1986-թ.ներուն էր: Նիսի մէջ, մեզի դրացի նախկին պոլսեցի տիկին մը և իր ամուսինը, Թորոնթօ այցելութեան կ'երթան, իրենց մէկ ազգականին՝ նկարիչ Եիւզպաշեանին: Եւ անոնց տան մէջ կը ծանօթանան, կրկին նախկին պոլսեցի Սեդա և Պետրոս Զօպեաններուն:

Մեր դրացի տիկինը բաւական խօսուն կին մըն էր: Ան, Զօպեաններուն կը պատմէ, Նիսի հայկական կեանքէն դրուագներ. և նաեւ կ'ըսէ, թէ *«Նիսի մէջ, անցեալ տարի, Դանիէլ Վարուժանի յիշատակին հանդէս մը կազմակերպեցիմք: Հոկտեմբեր 1985-ին ալ՝ Ռուբէն Սեւակի ծննդեան 100-ամեակը տօնեցիմք մեծ հանդիսութեամբ»*:

Երբ Ռուբէն Սեւակի մասին խօսք կ'անցնի, տիկ. Սեդա Զօպեան, որ պոլսահայ ծանօթ հրապարակագիր և «Մարմարա» թերթի հիմնադիր-խմբագրապետ Սուրէն Շամլեանին դուստրն է, մեր դրացի տիկնոջ կ'ըսէ, թէ՝ *«Մենք, Ռուբէն Սեւակի անտիպ ձեռագիր բանաստեղծութիւններու տետրակները ունինք: Այս ձեռագիրները 1939-ին, Պոլսոյ մէջ, հայրս՝ Սուրէն Շամլեան գնած է Ռուբէն Սեւակի եղբօրորդիէն»*:

Մեր դրացի տիկինը, այս խօսքերուն վրայ, կ'այլալլի և *«Անկարելի է տիկին Զօպեան»* կ'ըսէ, աւելցնելով. *«Ռուբէն Սեւակի եղբօրորդին մեր դրացին է Նիսի մէջ, և ան, ո՛չ թէ Ռուբէն Սեւակի ձեռագիրները կը ծախէ, այլ, ընդհակառակը, Ռուբէն Սեւակի մասին ինչ որ կայ, կը հաւաքէ: Եւ Նիսի մէջ, Ռուբէն Սեւակի յիշատակին տուն-բանգարան մը մէջտեղ բերած է»*:

«Նայեցէք, - կ'ըսէ տիկ. Զօպեան, - ես վաղը, Ռուբէն Սեւակի ձեռագիրներէն քանի մը էջ պատճենահանեմ և ձեզի տամ: Եւ զանոնք ցոյց տուէք ձեր դրացին եղող Ռուբէն Սեւակի եղբօրորդիին»:


Թորոնթոյէն վերադառնալէ յետոյ, մեր դրացի տիկինը, շատ արտնէղ հոգեվիճակով մը մեզի պատմեց Թորոնթոյի մէջ, տիկ. Սեդա Զօպեանին ըսածները, և տուաւ պատեհեհաճանուած երկու էջ, Ռուբէն Սեւակի ձեռագիրներէն:

Ապշուրեամբ և յուզումով նայեցանք պատեհեհեբուն: Այո՛, այո՛, Ռուբէն Սեւակի ձեռագիրներն էին: Ռուբէն Սեւակի «Չայններ» խորագրով քերթուածներու և ուսումնասիրութիւններու անտիպ տետրակին առաջին էջերուն պատեհեհեբուն էին:

Եւ առաջին էջին վերի կողմը, շատ յստակ ձեւով, հետեւեալ արձանագրութիւնը կար՝ «Այս տետրակը գնած եմ Ռ. Զիլինկի-րեանի եղբորորդիէն

11-1-1939-ին «Ժամանակ»ի խմբագրատան մէջ

Սուրէն Շամլեան»



Քիչ մը հանդարտելէ և ամփոփուելէ յետոյ, մեր դրացի տիկնոջ հետեւեալ բացատրութիւնը տալու ջանացինք.

«Նայեցէք, տիկին, դուք շատ իրաւունք ունիք նեղուելու տիկին Սեդա Զօպեանին ըսածներէն կարծելով, որ Ռուբէն Սեւակի ձեռագիրները իրենց հօրը ծախող «Եղբորորդին», որուն կ'ակնարկուի, մենք ենք:

Որովհետեւ դուք չէիք գիտեր, թէ Ռուբէն Սեւակ ուրիշ եղբայր և ուրիշ եղբորորդի մը ունէր:

Իրագուստ, Սուրէն Շամլեան՝ Ռուբէն Սեւակին անտիպ ձեռագիրներու տետրակները Ռուբէն Սեւակի եղբորորդիէն գնած է: Բայց, այստեղ մատնանշուած եղբորորդին, մենք չենք, այլ՝ Ռուբէն Սեւակի մեծ եղբորը՝ Քերովրէ Զիլինկի-րեանին միակ զաւակը եղող Արամ Զիլինկի-րեանն է:

Որովհետեւ, Ռուբէն Սեւակի նահատակութեան յետոյ, անոր Պոլսոյ տան մէջ ինչ որ մնացած էր, իր եղբայրը՝ Քերովրէ Զիլին-

կիրեանը գանոնք փրկած էր կորուստէ և փոխադրած, բոլորն ալ, Բանկալթիի իր բնակարանը»:

* * *

Այստեղ ստիպուած կ'ըլլանք, Քերովբէ Չիլինկիրեանի ընտանիքին վերաբերեալ կարգ մը անձնական խնդիրներուն և ասոնց ներքին ծալքերուն մասին [ակամայ և ցաւով] տեղեկութիւններ տալ, որպէս պատմական ճշմարտութիւն:

Որովհետեւ Քերովբէ Չիլինկիրեանի մանչ գաւալը եղող Արամ Չիլինկիրեանին անունը՝ շատ մօտէն կապուած է Ռուբէն Սեւակի ձեռագիրներուն և արխիւին հետ: Եւ որովհետեւ Արամ Չիլինկիրեանը՝ Չիլինկիրեան ընտանիքին «անառակ որդին» եղած է:

Ռուբէն Սեւակի 26 Օգոստոս 1915-ին, Չանղըրը-ի մէջ նահատակուելէն յետոյ, իր գերմանացի տիկինը՝ Ժաննի Սեւակ, Պոլսոյ Գերմանական դեսպանատունէն իր ամուսնին սպաննուելուն լուրը կ'առնէ և, խելագարուած հոգեվիճակով մը, ամէն բան, իր տան մէջ, եղածին պէս կը ձգէ և, իր մօր և երկու գաւալներուն հետ, Պոլսէն շոգեկառքով Ջուիցերիա կը մեկնի:

Եւ Ռուբէն Սեւակի ընտանիքին Պոլսոյ Բանկալթը թաղամասի Նալպանտ փողոցը գտնուող բնակարանը, երկարատե՛ն անտէր կը մնայ:

Այդ պատերազմի տարիներուն, Չիլինկիրեան ընտանիքէն՝ Պոլսոյ մէջ բնակող մէկը չկար: Չիլինկիրեան ընտանիքը՝ բոլորն ալ, Պոլսէն 70 քլմ. դեպի արեւմուտք, Թրակիոյ մէջ գտնուող Սիլիվրի գիւղաքաղաքը կը բնակէին: Եւ քանի որ, պատերազմի տարիներուն, ճամբաները փակ էին, ոչ մէկը կրնար Պոլիս երթալ:

Միջոց մը ետք, Ռուբէն Սեւակի մեծ եղբայրը եղող Քերովբէ Չիլինկիրեանը, կը յաջողի, իր ընտանիքով, Սիլիվրիէն Պոլիս երթալ: Եւ Բանկալթը թաղամասը՝ Օհանեաններուն պատկանող շէնքին մէջ, յարկաբաժին մը կը վարձէ և ընտանեօք հոն կը հաստատուին:

Եւ իբր Ռուբէն Սեւակի եղբայրը, իր բնակարանէն շատ հեռու չգտնուող Ռ. Սեւակին անտէր տունին մէջ ինչ որ մնացած է, կը հաւաքէ և իր տունը կը փոխադրէ:

Այս ձեւով կը փրկուին նաեւ, Ռուբէն Սեւակի արխիւէն մաս մը և ձեռագիր գրութիւններ:

Քերովբէ Չիլինկիրեան ամուսնացած էր Սիլվրի-ի մէջ, Ջապէլ անունով հայ կնոջ մը հետ՝ գեղեցկադէմ, բայց նիհարակազմ և հիւանդկախ: Եւ Ջապէլին ծննդաբերած բոլոր զաւակները, ծնելէն քիչ յետոյ, կը մեռնէին:

Եւ վերջապէս տարիներ յետոյ՝ 1910-ին ծնած մանչ զաւակ մը չի մահանար, կ'ապրի: Այս զաւակը Արամ Չիլինկիրեանն է: Ընտանիքին միակ զաւակը: Հայրը և մայրը կը գուրգուրան Արամին վրայ և զինք կը շփացնեն: Մանաւանդ՝ մայրը: Զէ՞ որ, իր միակ վերապրող զաւակն է Արամ:

Պատերազմը 1918-ին կ'աւարտի: Եւ Արամ, արդէն 8 տարեկան, գեղեցկադէմ մանչ մըն է: Բայց շատ, շատ անառակ: Հրեշտակաման դէմք մը ունի, բայց՝ չար հոգի մը:

Մայր, իր հօրմէն կը պահէ Արամին կատարած չար արարքները, որովհետեւ հայրը շատ խիստ կը պատժէր: Եւ Ջապէլին սիրտը չէր դիմանար Արամին թափած արցունքներուն...:

Թերեւս ալ, Ջապէլին այս շատ փափուկ մայրական սիրտը, յանցանքի բաժին մը ունի: Արամին չարութիւնները հօրմէն պահելով, զինք աւելի ազատ ձգեց իր արարքներուն մէջ:

Մինչ այդ՝ 1922-ին, քեմալական ուժերը Մարմարա ծովուն շուրջ կը հասնին: Եւ Սիլվրի-ի քրիստոնեայ ժողովուրդը կ'սկսի փախչիլ: Մէկ մասը՝ դէպի Յունաստան և Պուլկարիա, իսկ միւս մասն ալ, աւելի ապահով կարծելով՝ դէպի Պոլիս: Նոյնպէս՝ Չիլինկիրեաններու ընտանիքն ալ, Սիլվրի-էն խոյս տալով, Պոլիս կ'երթայ:

Սեւակին քոյրը՝ Էֆթիկ, իր զաւակներուն և ամուսնին՝ Օննիկ Յակոբովիչին հետ Պոլիս, Օսմանպէյի մէջ, յարկաբաժին մը կը վարձեն:

Եւ այս ձեւով Արամ, Պոլիս հաստատուող ազգականներուն գուրգուրանքը կը վայելէ:

Մանաւանդ՝ իր հօրաքրոջ մեծ աղջիկը՝ Ատրինէ Յակոբովիչ, շատ կը հետաքրքրուի Արամով:

Ատրինէն, իբր զարգացած և մտաւորական օրիորդ մը, հոգեբոյժի մը պէս կը զբաղի Արամով յուսալից, որ պիտի յղկէ և բարեփոխէ Արամին նկարագիրը:

Երբ Արամ, չար արարք մը կը գործէ, Ատրինէ իր քով կը կանչէ

Արամը, կը խրատէ զինք հանդարտութեամբ, անուշ լեզուով կը խօսի անոր հետ և կը հասկցնէ, թէ ըրածը գէշ բան մըն է:

Արամ ներողութիւն կը խնդրէ, և արտասուելով կը խոստանայ, որ անգամ մըն ալ նոյն ընթացքը պիտի չունենայ:

Բայց, Ատրինէ ապշութեամբ կը տեսնէ, որ Արամ, նոյն յանցանքը, քանի մը ժամ յետոյ, կրկնած է:

Ատրինէ, վերջին յոյսով մը, Արամը հոգեբոյժ բժիշկի մը կը տանի: Եւ բժիշկը, Արամը քննելէ յետոյ, իր ախտահանաչումը կը յայտնէ Ատրինէին՝ **«Այս տղան հոգեկան հիւանդ մըն է: Զի՛րութուիր»:**

* * *

Արամ 1928-ին, 18 տարեկան երիտասարդ մըն է և Բանկալթը-ի Մխիթարեաններուն վարժարանը կը յաճախէ:

Այդ օրերու Մխիթարեան վարժարանի ուսուցիչներէն՝ Հայր Գրիգորիս Մանեան, Ատրինէ Յակոբովիչը դպրոց կը կանչէ և անոր կ'ըսէ, թէ՝ **«Բանկալթը-ի Մխիթարեան վարժարանի աշակերտներուն ձեռքը, Ռուբէն Սեւակի 1908-թ.ներուն Լոզանէն Գերմանիա՝ իր ապագայ կնոջ՝ Ժաննիին գրած բացիկները տեսնը:**

Աշակերտները ըսին, թէ այս բացիկները իրենց ծախած է Արամ Զիլիկկիրեանը: Կը խնդրենք՝ արգելք եղէք»:

Ինչպէ՞ս արգելք կրնային ըլլալ այս psuychopathe-ին, այս հոգեկան հիւանդին:

Միջոց մը ետք, այս «գլխէն հիւանդ» Արամը, իրենց տունէն ապրանքներ դուրս կը հանէ և կը ծախէ: Նոյնիսկ, իր մօր կարի մեքենան ալ, օր մը կը վաճառէ:

Մայրը շատ կը ցաւի իր տղուն այս վիճակները տեսնելով: Արդէն տկարակազմ է և թոքատապէ կը տառապի: Եւ տարի մը յետոյ, երիտասարդ տարիքին կը մահանայ:

Արամ, այդ տարիներուն, 25 տարեկան է, և ոչ մէկ դպրոց աւարտած:

Քանի մը տարի Robert College գացած է միայն, և ոչ մէկ վկայական ունի:

Բայց, իբր թէ Ռուպէրթ Գոլենէն շրջանաւարտ ճարտարագէտ՝ իր անունով այցետոմսեր տպել կու տայ: Եւ ինքզինք ճարտարագէտ ներկայացնելով՝ անօրէն շատ գործեր կը կատարէ: Եւ յետոյ՝

կ'սկսի իր հօրը ստորագրութիւնը կեղծել և անոր անունով դրամ-
ներ գանձել: Եւ, ի վերջոյ, կը ձեռնարկէ ուրիշ խարդախութեան մը՝
հօրը անունով մուրհակներ կ'ստորագրէ:

Արամին այս կեղծարարութիւնները, քանի մը տարի ետք, իր հօր
սնանկանալուն պատճառ կ'ըլլան: Եւ 1946-ին, այս ցաւով, հայրն
ալ կը մահանայ:

Արամին մասին մեր գիտցած վերջին «սխրագործութիւնը»
հետեւեալն է.- Շիշլի-ի հայկական գերեզմանատան մէջ գտնուող
իր մօր և հօր գերեզմաններն ալ կը ծախէ:

* * *

Արամ Չիլինկիրեան՝ մեր ընտանիքին «անառակ որդի»ն էր:

Եւ Չիլինկիրեան ընտանիքը, երբ տեղեակ եղաւ Արամին կեղծա-
րարութիւններուն՝ անոր հետ իր բոլոր կապերը խզեց: Մեր ընտա-
նիքի անդամներէն ոչ մէկը Արամին հետ կը տեսնուէր: Ձեւով մը
ան, մեր կողմէ, նզովուած էր: Արամն ալ արդէն, երես չունէր մեզի
մօտենալու: Բայց տեղեկացանք, թէ երբեմն կը խօսի եղբր իր
հօրաբորջ աղջիկը եղող Քրիստին Սալերի-ին հետ: Նկատելով, որ
Քրիստին Սալերին, Արամին հետ, մանկութեան տարիներուն, շատ
մօտ ընկեր-ընկերուհիներ եղած էին:

Քրիստին Սալերին օր մը կը հարցնէ Արամին.

**«Ըսէ, Արամ, դուն բնաւ խիղճ չունի՞ս: Ինչպէ՞ս կրցար ծախել
հօրդ և մօրդ գերեզմանները»:**

Եւ Արամ, սա անխիղճ պատասխանը կու այ.- **«Ձգե՛նք հիմա
մեռելները: Ողջերուն նայինք»:**

* * *

Մենք, Ռուբէն Սեւակէն մնացած մասունքները հաւաքել սկսանք
Պոլսոյ մէջ, 1945-ին:

Եւ միայն այդ տարիներուն տեղեակ եղանք, որ Արամ Չիլինկի-
րեան, իրենց տան մէջ գտնուող Ռուբէն Սեւակի ձեռագիրներուն
մեծ մասը ծախած է Պոլսոյ ծանօթ մտաւորականներէն Թորոս
Ազատեանին:

Թ. Ազատեան կը կտակէ իր կնոջ, որ յետ մահու, իր ունեցած
բոլոր ձեռագիրները, Հայաստան ուղարկուին:

Եւ 1955-ին, Թորոս Ազատեանի Պոլսոյ մէջ մահանալէն յետոյ,

իր ազնիւ տիկինը ամուսնին կտակը կը կատարէ, և բոլոր ձեռագիրները Երեւանի Եղիշէ Զարենցի անուան Գրականութեան և Արուեստի թանգարանը կ'ուղարկէ:

Մինչեւ 1986, մենք տեղեակ չէինք, որ Ռուբէն Սեւակի ուսանողութեան տարիներուն գրած բանաստեղծութիւններու և ուսումնասիրութիւններու երկու տետրակներ գոյութիւն ունեցած են:

Երբ, հրաշալի դիպուածով մը տեղեկացանք, որ Թորոնթօյի Զօպեան ընտանիքին քով Ռուբէն Սեւակի երկու անտիպ ձեռագիր տետրակները կը գտնուին, անմիջապէս Պետրոս Զօպեանին հետ հաղորդակցութեան մտանք՝ այս երկու տետրակները Ռուբէն Սեւակի յիշատակի տան մէջ ամփոփելու համար:

Երկար թղթակցութիւններէ ու հեռաձայնային խօսակցութիւններէ յետոյ, վերջապէս, պրն. Պետրոս Զօպեանին հետ համաձայնութեան մը յանգեցանք:

Եւ 14 Դեկտեմբեր 1989-ին, ժընեւէն օդանաւ նստելով մեկնեցանք դէպի Ամերիկա: Հակառակ, որ երդում ըրած էինք, ամերիկեան հող ոտք չդնել: Որովհետեւ համոզուած էինք [եւ մինչեւ հիմա ալ կը հաւատանք], որ **Ամերիկան Հայաստանի թշնամի եւ Թուրքիոյ բարեկամ ու զինակից երկիր մըն է:**

Բայց, Ռուբէն Սեւակի ձեռագիրները առնելու սիրոյն՝ մեր երդումը դրժեցինք և գացինք՝ Ամերիկա, յետոյ՝ Թորոնթօ և վերջապէս՝ Զօպեաններուն բնակարանը հասանք:

Տէր և տիկին Սեդա և Պետրոս Զօպեան մեզ շատ սիրալիք ընդունեցին: Մենք ալ իրենց շնորհակալութիւն յայտնեցինք, որ ճիշդ 50 տարիներու տեւողութեամբ, Սուրէն Շամլեան և Պետրոս Զօպեան ընտանիքները մեծ գուրգուրանքով պահպանած էին Ռուբէն Սեւակին երկու ձեռագիր տետրակները:

Եւ Պետրոս Զօպեանի հետ համաձայնագիր մը ստորագրեցինք:

Ըստ այս համաձայնագրին՝ պրն. Զօպեան մեզի յանձնեց Ռուբէն Սեւակի երկու ձեռագիր տետրակները:

Եւ նաեւ, դարձեալ ըստ այս պայմանագրութեան, պրն. Պ. Զօպեան, Ռուբէն Սեւակի ձեռագիր երկու տետրակներէն հինգ հարագատ օրինակներ պատրաստած էր: Այս օրինակներուն Ա.ը մնաց պրն. Պետրոս Զօպեանի գրադարանին մէջ, Բ.ը ուղարկուեցաւ Երեւան՝ Եղիշէ Զարենցի անուան Գրականութեան և Արուեստի թանգարանին, Գ.ը ուղարկուեցաւ Անթիլիասի Կաթողիկոսութեան

մատենադարանը, Դ.ն և Ե.ն ալ յանձնուեցան մեզի:

Պրն. Պետրոս Զօպեան, 2 Յունիս 1990-թ.ին, Պոլսոյ «Մարմարա» օրաթերթին մէջ շատ հետաքրքրական գրութիւն մը հրատարակեց, որուն մէջ ան, Ռուբէն Սեւակի երկու ձեռագիր տետրակներուն հարագատ պատմութիւնը կու տար: Մէջբերենք զայն:

ՊԵՏՐՈՍ ԶՕՊԵԱՆ ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ ՏԵՏՐԱԿՆԵՐԸ ՅԱՆՁ- ՆԵՑ ԳԱՐԵԳԻՆ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Օգտուելով Մեծի Տանն Կիլիկիոյ Վեհափառ Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ.ի Թորոնթօ ներկայութենէն, ուզեցիք հանդիպում մը ունենալ Նորին Վեհափառութեան հետ:

Իրենց Թորոնթօ այցելութեան առաջին իսկ օրէն, սկսած էինք մեր դիմումներուն որպէսզի կարենայինք գոնէ կէս ժամուան տեսակցութիւն մը ապահովել Վեհափառին հետ: Ինծի ապահովութիւն տուեր էին, որ եկեղեցիին օծումէն յետոյ, Վեհափառը 3-4 օր եւս պիտի մնար Թորոնթօ, հետեւաբար կարելի պիտի ըլլար կարգադրել մեր հանդիպումը: Օրեր սաներ-անցեր էին: Երեքշաբթի օրն ալ երեկոյին էր հասած, բայց տակաւին անկարելի եղած էր կապ հաստատել Վեհափառին հետ: Օրուան ժամերուն պանդոկը չէր Ան, իսկ ես, մինչեւ այդ օրը, չէի ուզած անհանգիստ ընել Նորին Վեհափառութիւնը հեռաձայնելով օրուան ուշ կամ կանուխ ժամերուն:

Չորեքշաբթին վերջին յոյսն էր ինծի համար, գիտէի, որ հինգշաբթի ալիւս շատ ուշ պիտի ըլլար: Մէկ կողմ դնելով փափկանկատութեան օրէնքները, առաւօտեան հեռաձայնեցի պանդոկ: Այս անգամ բախտաւոր էի, երբ Վեհափառին յայտնեցի փափաքս, սկսաւ մտածել. այդ օրը պիտի հանդիպէր Օնթարիոյ վարչապետին՝ դարձեալ խնդրուած օր մը: «Երեկոյեան ժամը 6:30-ին պանդոկ եղիր, կը տեսնուինք» ըսաւ Վեհափառը:

* * *

Որոշեալ ժամուն պանդոկն ենք արդէն: Վեհափառը սիրով կ'ընդունի մեզ, կը հետաքրքրուի մեր որպիսութեամբ: Գիտենք, որ սահմանափակ ժամանակը շատ սուղ է, հետեւաբար կ'ուզենք

անմիջապես նիւթի մէջ մտնել:

Ն. Ս. Օձուրեան կը յայտնենք, թէ մեր այս այցելութիւնը ունէր քանի մը նպատակներ: Նախ կ'ուզէինք մեր յարգանքը մատուցանել Նորին Վեհափառութեան, կ'ուզէինք նաեւ բարի վայելում մաղթել Իրենց նորակերտ եկեղեցիի օծման առիթով և երրորդը՝ կ'ուզէինք անձնապէս Նորին Վեհափառութեան յանձնել հարազատ օրինակները ողբացեալ գրագէտ Ռ. Սեւակի ձեռագիր տետրակներուն, որոնք մեր գրադարանին մաս կը կազմէին աւելի քան քառասուն տարիներէ ի վեր:

«Մարմարա»ի հիմնադիրը՝ Ս. Շամլեան, այդ տետրակները գնած էր Ռուրէն Սեւակի եղբորորդի Արամ Զիլինկիրեանէն:

Վերջին տարիներուն բարեկամէ մը պատահմամբ իմացեր էինք, որ Նիսի մէջ կ'ապրէր Ռ. Սեւակի եղբորորդի Յովհաննէս Զիլինկիրեան, որ Ռ. Սեւակի անուան քանգարանի մը մէջ հաւաքած էր ողբ. գրագէտի մասունքները:

Աւելի յետոյ, առիթ ունեցանք ծանօթանալու պրն. Յովհաննէս Զիլինկիրեանի և 1989 Դեկտեմբերի 26-ին, հետեւեալ համաձայնագրով իրենց յանձնեցինք ձեռագիր տետրակներու բնագիրները:

Հ Ա Մ Ա Չ Ա Յ Ն Ա Գ Ի Ր

Մեծանուն գրագէտ Ռուրէն Սեւակի երկու ձեռագիր տետրակները որոնք ողբ. Սուրէն Շամլեանի կողմէ 1939 թուականի գնուած էին Ռ. Սեւակի եղբոր որդի Արամ Զիլինկիրեանէն, յիսուն տարիներէ ի վեր խնամքով պահուած կը մնային մեր գրադարանին մէջ:

Ողբ. գրագէտի երկերուն նուիրուած երկու հրատարակութիւններ - մին Երեւանէն և միւսը Անթիլիասէն - կը մատնանշէին գրագէտի անյայտ մնացած երկու տետրակները: Երբ համոզում գոյացուցինք, թէ ակնարկուած այդ տետրակները մեր քով գտնուող ձեռագիր տետրակներն էին, մտածեցինք որ հայ գրականութեան հաշուոյն շատ աւելի նպատակաշարմար պիտի ըլլար, եթէ անոնք լոյս աշխարհ բերուէին և միանային Ռուրէն Սեւակի այն մասունքներուն, որոնք ի մի հաւաքուած էին ողբ. գրագէտի ուրիշ մէկ եղբոր որդուոյն՝ պրն. Յովհ. Զիլինկիրեանի ջանքերով, Նիսի մէջ:

Այսօր, այս համաձայնագրով, մենք պրն. Չիլիևկիրեանին յանձնեցինք վերոյիշեալ երկու ձեռագիր տետրակները, Թորոնթօյի մեր բնակարանին մէջ:

Պրն. Չիլիևկիրեան համաձայն գտնուեցաւ մեզի հետ, որպէսզի այդ երկու տետրակներէն առնուած հարագատ օրինակներ պատրաստուին մեր կողմէ և ուղարկուին Երեւանի ու Անթիլիասի մատենադարաններուն: Այդ նպատակաւ, մենք պատրաստեցինք երկու տետրակներէն հինգական օրինակ, իւրաքանչիւրը թուագրուած 1-էն 5: Այդ օրինակներէն թիւ 1 թուագրուածը պիտի մնայ մեր մօտ, մեր գրադարանին մէջ: Թիւ 2 թուագրուած օրինակները պիտի ուղարկուին Երեւան, Ե. Չարենցի անուան Գրականութեան և Արուեստի թանգարանին, թիւ 3 թուագրուածները պիտի ուղարկուին Անթիլիասի մատենադարանին, իսկ թիւ 4 և թիւ 5 օրինակները պիտի տրամադրուին պրն. Չիլիևկիրեանին:

Այս համաձայնագիրը պատրաստուեցաւ և ստորագրուեցաւ 26 Դեկտ. 1989-ին Թորոնթօյի մէջ:

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԶԼԼԻՆԿԻՐԵԱՆ

ՊԵՏՐՈՍ ԶՕՊԵԱՆ

Ինչպէս յիշուած է համաձայնագրին մէջ՝ մենք պատրաստած էինք ձեռագիր երկու տետրակներու հարագատ օրինակները, բայց մինչեւ այսօր չկարողացանք զանոնք Հայաստան կամ Անթիլիաս ուղարկել պարզապէս անոր համար, որ չէինք կրցած վստահիլ փոսթին:

Հետեւաբար, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ.ի Թորոնթօ այցելութիւնը բացառիկ առիթը կ'ընծայէր մեզի որպէսզի իրականացնենք մեր փափաքը:

Վեհափառը նախ աչքէ կ'անցընէ համաձայնագրին պարունակութիւնը և կ'արտայայտէ իր գոհունակութիւնը, որով լռյս աշխարհ կը բերուէին Ռ. Սեւակի երկու տետրակները:

Մենք տակաւին կը սպասենք այն բարեբաստիկ օրուան, երբ տետրակներուն միւս օրինակները պիտի երթան Հայաստան, իրենց տեղը գրաւելու համար, Եղիշէ Չարենցի անուան Գրականութեան և Արուեստի թանգարանին մէջ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Արամ Զիլինկիրեանին Պոլսոյ մէջ, Ռուբէն Սեւակի ձեռագիրներուն Թորոս Ազատեանին և Սուրէն Շամլեանին ծախած թուականներէն [1939] ի վեր մինչեւ այսօր, 63 տարիներ անցած են: Եւ հիմա մենք, Արամ Զիլինկիրեանին կատարած արարքները, հոգեկան դատաստանէ մը անցընել կ'ուզենք: Երբեք չենք կրնար ներել Արամին, իր հօր և մօր կատարած չարիքները: Մանաւանդ՝ իր պատճառած հոգեկան տառապանքները իր բարի և հիւանդ մօր, որ իր տղուն սայթաքումները տեսնելով օրէ օր հիւժեցաւ:

Արամին կեանքի պատմութիւնը, իսկական սրտայոյզ թատերագութիւն մըն է, զանազան արարներէ բաղկացած:

Այստեղ ջանանք կեդրոնանալ, մեզի համար կարեւոր արարներէն մէկուն՝ Ռուբէն Սեւակի ձեռագիրներու վաճառքին վրայ:

Կասկած չկայ, թէ Արամ, այս ձեռագիրները ծախած էր, դրամ ապահովելու նպատակով:

Ժողովրդական առածը կ'ըսէ. **«Բոլոր չարիքներէն, բարիք մը կը ծնի»:**

Արամ որո՞ւ ծախեց այս ձեռագիրները. Պոլսոյ ամենէն ծանօթ երկու մտաւորականներէն՝ Թորոս Ազատեանին և Սուրէն Շամլեանին: Ինչպէ՞ս գտաւ Արամ այս անձնաւորութիւնները: Մանրամասնութիւնները մեզի ծանօթ չեն. բայց՝ գտաւ: Եւ անո՞նց ծախեց: Բայց, նոյն առեւն, ձեւով մը փրկեց այս ձեռագիրները հաւանական կորուստէ:

Մտածենք պահ մը՝ եթէ Արամ այս ձեռագիրները ծախած չըլլար, և անոնք մնային այդ տան մէջ, հիւանդ պատսպարող և տառապանքի այդ տունին մէջ, երկու պարզ տետրակներ, թուղթի կտորներու նման կրնային զամբիւղ նետուիլ: Եւ յախտեան կրնային կորսուիլ այս մասունքները: Ինչպէս որ կորսուեցաւ Ռուբէն Սեւակի արխիւին կարեւոր մէկ մասը:

Եւ հիմա, ջանանք նշել, Արամ Զիլինկիրեանի կողմէ Ռուբէն Սեւակի ձեռագիրներուն Թորոս Ազատեանին և Սուրէն Շամլեանին ծախուելուն «բարիքները»: Տարօրինակ՝ բայց իրաւ:

Մեծ մասամբ, ձեռագիրներուն Արամի կողմէ ծախուելուն շնորհիւ, հրատարակուեցան՝

1.- Երեւանի մէջ 1965-ին, փրօֆ. Եղուարդ Զրբաշեանի «Ռուբէն

Սեւակ - Ստեղծագործութեան համառօտ ակնարկ» գիրքը,

2.- Երեւանի մէջ, 1972-ին, Վլատիմիր Կիրակոսեանին «Ռուբէն Սեւակ - Կեանքը և ստեղծագործութիւնը» գիրքը,

3.- Երեւանի մէջ, 1985-ին, Ալեքսանտր Թոփչեանի «Ռուբէն Սեւակ - Երկեր» հատորը,

4.- Անքիլիասի մէջ, 1986-ին, պրն. Խաչիկ Տէտեանի գլխաւորութեամբ, Հայց. Եկեղեցւոյ Համալսարանական Ուսանողներու Միութեան [Հ.Ե.Հ.Ո.Մ.] «Ռուբէն Սեւակ - Երկեր» հատորը,

5.- Երեւանի մէջ, 1992-ին, Ալեքսանտր Թոփչեանի «Ռուբէն Սեւակ, Անտիպ էջեր - աշակերտական տետրակից» գիրքը,

6.- Երեւանի մէջ, 1995-ին, Ալեքսանտր Թոփչեանի «Ռուբէն Սեւակ - Անտիպ էջեր» գիրքը:

Եւ հիմա, ջանանք խորհրդածել ու հարց տալ.- Արդեօ՞ք կրնանք, գոնէ քիչ մը ներել, Արամ Չիլինկիրեանին կատարած չարիքները - ձեռագիրներուն անոր կողմէ ծախուելուն շնորհիւ կատարուած «բարիքներուն» պատճառաւ:

* * *

ՎԵՐՋԻՆ ԱՐԱՐ

Արամ, իր գործած չարիքներուն հետեւանքով, ձեւով մը իր հօր՝ Քերովբէ Չիլինկիրեանին -մահուան պատճառ եղած էր: Բայց Արամ, նոր Քերովբէ Չիլինկիրեան մը մէջտեղ բերաւ:

Կը կարծուէր, քէ Արամ, մեռելներուն կարելորութիւն չիտար: Սխալ էր:

Արամ, իր առաջին ամուսնութենէն, մանչ գաւակ մը ունեցաւ: Եւ անոր անունը «Քերովբէ դրաւ»:

Արամ, իր հօր՝ Քերովբէ Չիլինկիրեանին սնանկութեան պատճառ եղած էր:

Բայց, Արամին մանչ գաւակը՝ նոր Քերովբէ Չիլինկիրեանը, այսօր Թուրքիոյ ամենէն հարուստ անձնաւորութիւններէն մէկն է:

Աշխարհն անվերջ քատրոն մըն է: Յաճախ՝ անհասկնալի:

**ՄԵՐ ԱՅՍ ԳՐՈՒԹԻՒՆԸ ԿԸ ԶՕՆԵՆՔ՝ ՀԱՅ ԱԶԳԱՅՆԱԿԱՆ
ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՆՈՒԻՐԵԱԼ ՆԵՐՈՒՆ**

**... ՇԱՏ ՔԱՂԱՔԱԿԻՐԹ ԱՅՍ ԱՐԵՒՄՈՒՏՔԷՆ՝ ՈՒՐ ԽԻՂՃԸ
ԲԱՌ Մ՚Է, ՄԱՐԳԸ՝ ՄԵՔԵՆԱՅ. ԱՇԽԱՐՀ ԳՈՐԾԱՐԱՆ
Մ՚ԱՆԽՈՆՋ, ԱՆԽՆԱՅ. ՍԷՐԸ ՀԱՇԻԻ Մ՚Է. ԿՐՕՆՔԸ՝ ԴՐԱՄ.
ՄԱՀՆ՝ ԱՆՄՏՈՒԹԻՒՆ, ԿԵԱՆՔՆ՝ ԱՆՀԱՇՏ ՄԸ ԿՌԻԻ...**

**«Մարդերգութիւն» - 1909, Ռուբէն Սեւակ
(Ռուբէն Սեւակ - Երկեր - Անթիլիաս - էջ 141)**

Այստեղ կը հրատարակենք ֆրանսական 3 թերթերու մէջ քանի
մը օր առաջ լոյս տեսած Իրաքի ողբերգութեան մասին գրութիւն-
ներուն վերնագիրները՝

«Ապօրինի յարձակում...»

Բոլորին դէմ միանալ»

«Աղտոտ պատերազմ - կեցցէ Իրաքը»

**«Պուշ չնախատեսեց՝ իրաքցիներուն իրենց հայրենիքը պաշտ-
պանելը»**

Այս երեք վերնագիրներուն մէջ կը ցոլանայ՝ Իրաքի դէմ ամերի-
կացիներուն կատարած անիրաւ եւ անմարդկային պատերազմին
ամբողջ պատմութիւնը:

Եւ նաեւ պիտի խնդրենք, որ ուշադրութեամբ կարդաք վերը
նշուած Ռուբէն Սեւակի «Մարդերգութիւն» բանաստեղծութեան
մէջ, գրեթէ հարիւր տարի առաջ «Արեւմուտք»ի մասին գրուած-
ները:

Այս բանաստեղծութեան ամէն մէկ տողին մէջ ախտանա-
չումը կատարուած է՝ այսօրուան «Արեւմուտքի մտայնութեան»:

Այն Արեւմուտքի մտայնութիւնը, որ իր միայն «դրամ»ի վրայ
հիմնուած կեանքի կառոյցով՝ ոչ արդարութիւն կը ճանչնայ, ոչ ալ
մարդկութիւն:

Եւ այս «դրամի մեքենան» ապրելու համար, տեւական տկար եւ հարուստ երկիրներուն «արիւն»ին պէտք ունի:

Նայեցեք 1789-էն ի վեր՝ Ֆրանսայի մէջ ֆարմասոններու կողմէ կատարուած յեղափոխութիւնով սկսող պատմութեան էջերուն:

Այն օրերէն ի վեր այս «դրամի մեքենան», իր ծրագիրները կը գործադրէ ամբողջ աշխարհի վրայ, իր իշխանութիւնը տարածելու եւ տեւականացնելու համար:

Եւ միշտ, իրեն հլու-հպատակ դեկավարներ կը գտնէ...:

* * *

Ամերիկացիները 1945-ին՝ Բ. Աշխարհամարտի վերջին օրերուն, Գերմանիոյ վրայ իրենց կատարած անխիղճ ուժակոծումներուն եւ ձաբոնի վրայ աթոմական դժոխային ռումբերու արձակման համար, թերեւս կրնան պատրուակել ու ինքնարդարացում փորձել ըսելով, որ պատերազմը սկսողները գերմանացիներն եւ ճաբոնացիներն էին:

Բայց այսօր, Իրաքի վրայ կատարուած գազանային յարձակումները, ոչ մէկ արդարանալի եւ տրամաբանական պատճառ ունին:

Եւ իսլամ ժողովուրդները եւ արաբ ազգը երբեք չեն կրնար մոռնալ գործուող այս անարդարութիւնը եւ անիրաւութիւնը: Եւ, մեզի համար, մեծագոյն վտանգը՝ սա հարցն է:

Դժբախտաբար, շատ իսլամներու համար, այս անիրաւ յարձակումները կատարողները՝ քրիստոնեաներն են: Հակառակ անոր, որ բուն յանցաւորները ամերիկացիներն են, իսլամները բոլոր քրիստոնեաները յանցաւոր պիտի նկատեն:

Եւ այս անիրաւ «Իրաքի պատերազմը», արդէն գոյութիւն ունեցող խրամատը քրիստոնեաներուն եւ իսլամներուն միջեւ, շատ աւելի՝ անդամանելի դարձնելու աստիճան պիտի խորացնէ:

Եւ ասկէ տուժողները՝ ամէնէն աւելի Եւրոպայի եւ Ասիոյ քրիստոնեաները պիտի ըլլան, մանավանդ՝ հայ ժողովուրդը:

Իսկ բուն յանցաւորները՝ հեռաւոր, կղզիացած եւ պատսպարուած երկրի մը մէջ ապրող ամերիկացիները պիտի փրկուին:

Եւ հրեաներուն բուն ուզածն ալ այս է արդէն: Իրենց դարաւոր ծրագիրն է՝ քրիստոնեաները, իսլամներուն ձեռքով, բնաջնջել:

Հրեաները, պաղեստինեան հարցը «լուծելէ» յետոյ, հրեայ-արաբական եղբայրութիւն ստեղծելու աշխատանքին պիտի լծուին:

Զմոռնանք, որ հրեաները եւ արաբները նոյն ցեղին կը պատկանին:

Նոյն *սեմական* ցեղն են: Եւ իրենց կրօններն ալ շատ մօտ են իրարու:

Ասկէ տասը տարիներ առաջ, Յորդանանի Հիւսէյն Քազաւորին ըսածները յիշենք՝

«Արրահամին թռուները՝ հրեաները եւ արաբները, ասկէ յետոյ իրարու հետ պիտի չպատերազմին»:

* * *

Հրեաները իրենց սահայեւական այս ծրագիրները, երկար դարերէ ի վեր, ժամացոյցի մը նշգրտութեամբ կը գործադրեն:

Դժբախտաբար, քրիստոնեաները բնաջնջելու հրեական ծրագրին առաջին զոհը եղաւ, 1915-ին՝ հայ ազգը:

Շատ ցաւալի է, որ 24 Ապրիլ 1915-ի Հայկական ցեղասպանութեան մէջ հրեական անուրանալի պատասխանատուութիւնը, ծախուած հայ կուսակցական որոշ ղեկավարներու եւ հայ պատմաբաններու պատճառաւ, միշտ մութին մէջ մնացած է:

Մանաւանդ՝ 24 Ապրիլ 1915-ի զոհերուն ողբերգական իսկական պատմութիւնը առանձին հատորի մը մէջ եւ ամբողջութեամբ չէ ամփոփուած: Վերապրող մտաւորականներուն վկայութիւնները՝ գիրքի մը մէջ եւ քով քովի տեղադրելով, մինչեւ այսօր չէ հրատարակուած:

Մենք, այս պատճառաւ, մանաւանդ Յունուար 2003-էն ի վեր, «Նալիբի»ի մէջ, 24 Ապրիլ 1915-ի վերապրող աքսորեալներուն վկայութիւնները տալու ջանացինք:

«Նալիբի»ի վերջին երկու թիւերուն մէջ տուինք Գրիգորիս Մ. Վրդ. Պալաքեանին եւ բժիշկ Ս. Զարեւանդին Ռուբէն Սեւակի եւ Դանիէլ Վարուժանի սպանութեան մասին նոյն թուրք կառապանին իրար հակասող վկայութիւնները:

«Նալիբի»ի այս թիւով ալ կու տանք 1919-ին, Պոլսոյ «Նոր կեանք» թերթին մէջ հրատարակուած նոյն թուրք կառապանին վկայութիւնը: Այս վկայութեան մէջ, Պալաքեանին եւ Զարեւանդին նշած՝ Ռուբէն Սեւակի եւ Դանիէլ Վարուժանի նահատակութեան միջոցին ցուցաբերած ընդդիմութեան մասին ոչ մէկ ակնարկութիւն կայ:

Ահա՛, թուրք կառապանին վկայութիւնը: Կը մէջբերենք
նոյնութեամբ:

Վերջին ժամ

Ջարդերու ականատես վկայի մը պատմութիւնը

Ի՞նչպէս սպաննուեցան Սեւակն ու Վարուժանը

Փարիզի Հայկական Տեղեկատու Դիւանը հետեւեալը կը
հաղորդէ մեզ, զոր կ'արտատպենք յուզումով.-

Հետեւեալ պատմութիւնը եղած է չանդըրըջի կառապան
Հասանի կողմէ հայ վարդապետի մը, ի ներկայութեան էնկիւրիէն,
քննական ուղեւորութենէ մը դարձող օտար պատւիրակութեան մը:
Հասան արդէն իսկ երկու անգամ վկայութիւն տուած է էնկիւրիի
պատերազմական ատեանին առջեւ:

Հրոսախումբին պետը, որ կը յիշուի պատմութեան մէջ, կը
կոչուի Ալի: Հինգ զոհերէն մէկն էր բանաստեղծ Դանիէլ Վարու-
ժան եւ միւսը տօքթ. Ռ. Չիլինկիրեան: Միւս երեքներուն ինքնու-
թիւնը չկրցաւ հաստատուիլ: Անոնց ոսկորները կը հանգչին հիմա
այնտեղ ուր գործուեցաւ ռեիբը, Թունէյ գիւղին մօտ:

Ես արհեստով կառապան մըն եմ: Կը կոչուիմ Հասան: Երկար
ատեն գասթեմունիցի Մահիր էֆ.ի կառապանապետն էի, որ
կառքեր կը բանեցնէր: Հայոց տարագրութեան միջոցին, կը
գտնուէի Չանդըրը ուր, ինչպես գիտէք, արսորուած էին Պուլսէն
բազմաթիւ ականաւոր հայեր:

Իրիկուն մը, սիկառո կը խմէի, նստած ախոռիս առջեւ, երբ տե-
սայ անծանօթ մը, ձիու վրայ հեծած որ դէպի ինձ կ'ուղղուէր: Ախո-
ռին մօտեցած էր, վար ցատկեց եւ առանց մինչեւ իսկ սպասելու որ
հիւրասիրեմ գինքը, բռնեց ձիուն սանձէն եւ մտնելով ախոռին մէջ
իմ ձիերուս քովը կապեց իրը: Այս ընթացքը ինծի տարօրինակ
թուեցաւ: Սակայն եւ այնպէս ձայն չէի հաներ, ըսելով ինքնիրենս
թէ՛ կ'երեւի որ նամփոքորութեան ելած բարձրաստիճան պաշտօնա-
տար մըն է:

Չէի սխալեր, որովհետեւ հեռանալով, յանձնարարեց ինծի հրա-
մայական շեշտով մը խնամել իր ձին եւ գայն պատրաստել
հետեւեալ օրուան համար, շատ կանուխ, եւ յետոյ հեռացաւ: Կաս-
կածելով, հեռուէն հետեւեցայ իրեն: Մտաւ մեծ իթթիհատական-
ներէն մէկուն տունը, որուն մօտ՝ քանի օրերէ ի վեր տեղի

կ'ունենային յաճախակի ժողովներ:

Յաջորդ առտու, արշալույսէն առաջ, ուրիշ մէկն էր որ եկաւ փնտոել ձին: Այս մարդը հաղորդեց միեւնոյն ստե՛ն ինձի, թէ իմ կառքովս պարտաւոր էի քաղաքէն քառորդ ժամ հեռու տեղ մը մեկնիլ եւ հոն ինքզինքս տրամադրել ոստիկանութեան: Ասիկա հրաման մըն էր, գոր ինքը կը հաղորդէր ինձի: Ստիպուեցայ հնազանդիլ: Մեր ժամադրութեան տեղը ուրիշ կառք մը կանգ առած էր: Ոստիկան մը ոստիկան-գիւնուորի մը հետ հոն կը գտնուէր Պոլսէն Չանդըրը արքայութեան եֆէնտիներէն հինգին հետ: Մէկը սեւ մօրուք էր, խիստ երիտասարդ ու վառվռուն աչքերով: (Խեղճ Սեւակը - Մ. Խ.): Ամէնքն ալ լաւ հագուած էին, այնպէս, ինչպէս կը հագուին քաղաքի մը պէյերը: Շատ մտահոգ էին եւ ընկճուած երեւոյթ մը ունէին: Ձեռքերնին կապուած էր: Ոստիկանը զանոնք իմ կառքս նստեցուց եւ ինք միւսին մէջ նստաւ ոստիկան-գիւնուորին հետ: Հրաման տրուեցաւ մեզի ուղղուիլ դէպի Թիւնէյ, Չանդըրըն վեց ժամ հեռու կը գտնուի:

Արդէն իսկ ժամ մը եղած էր մեր քայելը, երբ ճամբուն մէկ կողմէն դէմս ելաւ առջի գիշերւան տեսած գիւնուորականս: Ասիկա մեր առջեւէն սկսաւ քայել առանց բառ արտասանելու:

Թիւնէյէն կէս ժամ ասդին էինք, երբ յանկարծ, միեւնոյն անձնաւորութիւնը դարձեալ մեզի դարձաւ: Ուղղակի ուղղուեցաւ իմ կառքիս եւ ձիէն իջնելով բռնեց իր ձիուն սանձը, եւ ուզեց տանիլ կառքը ճամբէն դուրս այն խորունկ ձորի մէջ որ կը բացուէր բլուրին ստորոտը: Գետին ցատկեցի, ոստիկան-գիւնուորն ալ նոյնը ըրաւ: Կը կարծէինք թէ աւագակներու կողմէ յարձակում կը կրէինք եւ կը պաշտպանէինք ինքզինքնիս, բայց ոստիկանը միջամտելով հրամայեց քաշուիլ: Ողջունեց միեւնոյն ստե՛ն անձանօթը մեծ յարգանքով: Այս պահուն մեր առջեւ ելան ոտքերնէն մինչեւ գլուխնին գինեալ չորս անձեր: Անձանօթը որ կը թուէր իրենց պետը ըլլալ, նշան մը ըրաւ: Այս մարդիկ բռնեցին մեզ, միւս կառապանը եւ գիս եւ ձեռքերնիս կապեցին, յետոյ կառքէն իջեցուցին հինգ տարագիրները: Հրամայեցին ասոնց յանձնել իրենց քովի դրամները: Որովհետեւ ձեռքերնին կապուած էր, ոստիկանն ու ոստիկան-գիւնուորը խուզարկեցին անոնց գրպանները: Ամէն ինչ կողոպտեցին, դրամ, զանազան առարկաներ, սիկառնիկ, թղթապանակ եւ այլն: Ոստիկանը քանի մը բառ փսփսաց հրոսախումբին հրամայող

անձնաւորութեան ականջին, առաջարկած էր անոր, կ'երեւի իրեն
եւ յանտարմային համար վար դնել կողոպտուած դրամը: Անգամ
մը որ այս գործողութիւնը վերջացաւ, ռստիկանն ու ժանտարման
իմ արհեստակցիս կառքը ելան եւ գացին: Չեռքերս քակեցին ու
հրամայեցին որ դառնամ քաղաք: Գալով տարագիրներուն, չորս
աւագակները, իրենց պետին առաջնորդութեամբ հրամայեցին
անոնց իրենց հետեւիլ:

Հեռուէն կը հետեւէի անոնց: Հետաքրքրութիւնը զիս կ'ուտեր:
Ո՞ւր կ'առաջնորդէին էֆէնտիները: Ջինեալ անձերը, իրենց պետին
խորհրդաւոր ընթացքը խիստ կասկած կը ներշնչէին ինծի: Թողուցի
կառքս ու հեռուէն հետեւեցայ անոնց, որոնք ձորէն անցնելով
գացին միւս եզերքը: Հոն մտան պզտիկ անտառի մը մէջ եւ յառա-
ջանալով, անոնց պետը ըսաւ քանի մը բառեր զորս չլսեցի, որով-
հետեւ բավական հեռու էի իրենցմէ: Հոն աւագակները խոյացան
էֆէնտիներուն վրայ, մերկացուցին զանոնք իրենց զգեստներէն,
եւ բռնաբռնեցին մերկ վիճակի մէջ դրին: Չեմ կրնար նկարագրել այն
տեսարանը որուն ներկայ գտնուեցայ: Այս խեղճ զոհերը մէկիկ
մէկիկ կապուեցան ծառերուն: Չէին կրնար իրենք գիրենք պաշտ-
պանել, ձեռքերնին կապուած էր:

Յետոյ, մեծ ու պզտիկ աւագակները հանեցին իրենց դաշոյնները
եւ սկսան հարուածներով ծակծկել, յամրաբար եւ զօրաւոր կերպով:
Դատապարտեալներուն աղաղակները եւ իրենց անկարող կատա-
ղութիւնը կը յուզէին սիրտս: Այո, ես ալ մարդ մը սպաննած եմ, եւ
այդ պատճառաւ 15 տարուան տաժանակիր աշխատութեան դա-
տապարտուած, բայց այս մարդասպաններուն պէս վատ մը չեմ
եղած: Իմ զոհս զիս նախատած էր. գայրոյթը կը կատողեցնէր զիս,
ատրճանակս ուղղեցի եւ գնդակով սպաննեցի հակառակորդս: Կը
ցաւիմ զինքը սպաննած ըլլալուս: Վերջապէս այս մարդը զիս
նախատած եւ սպառնացած էր, մինչդեռ խեղճ հինգ էֆէնտիները
ռչինչ ըրած էին այս աւագակներուն, չէին իսկ ճանչնար զանոնք.
հակառակ ասոր, հանդարտօրէն ու վայրագաբար կտոր կտոր կը
դարձուէին անոնց կողմէ»:

«Նոր կեանք» Լրագիր - 17 Յուլիս 1919 - Ա. Տարի - Թիւ 245 - 3-
րդ էջ

Թերթին տէր եւ տնօրէն՝ Եր. Տ. Անդրեասեան - Կ. Պոլիս

«Նայիրի»ի յառաջիկայ թիւին մէջ տալու պիտի ջանանք, Պոլսոյ Գերմանական դեսպանատունէն Ռուբէն Սեւակի այրիին՝ Ժաննի Սեւակին ուղարկած ծանուցագիրը, որուն մէջ ան, Ռուբէն Սեւակի սպանութեան պարագաները բոլորովին տարբեր ձեւով կը ներկայացնէ:

ՄԵՐ ԱՅՍ ԳՐՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՁՕՆԵՆՔ՝ ՀԱՅ ԱԶԳԱՅՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՆՈՒԻՐԵԱԼՆԵՐՈՒՆ

Ի՞նչ է ՌՈՒՐԷՆ ՍԵՒԱԿԻ ԵՒ ԴԱՆԻԷԼ ՎԱՐՈՒԺԱՆԻ ՆԱՀԱՏԱԿՈՒԹԵԱՆ ԻՍԿԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

ՌՈՒՐԷՆ ՍԵՒԱԿ, ԴԱՆԻԷԼ ՎԱՐՈՒԺԱՆ ԵՒ ԻՐԵՆՑ ԵՐԵՔ ԸՆԿԵՐՆԵՐԸ ՆԱՀԱՏԱԿՈՒԵՑԱՆ 26 ՕԳՈՍՏՈՍ 1915-ԻՆ, ՉԱՆՂԸՐԸ-ԷՆ ԱՅԱՇ ԳԱՑՈՂ ՃԱՄԲՈՒՆ ՎՐԱՅ, ԻԹԹԻՀԱՏԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՃԵՄԱԼ ՕՂՈՒՋԻ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԵԱՄԲ, ԹՈՒՐՔ ԴԱՀԻՃՆԵՐՈՒ ԿՈՂՄԷ:

ՌՈՒՐԷՆ ՍԵՒԱԿԻ ԵՒ ԴԱՆԻԷԼ ՎԱՐՈՒԺԱՆԻ ՆԱՀԱՏԱԿՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ՝ ԴԱՇՆԱԿ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՂԱՆԴԱԽՈՐՆԵՐԸ, ԸՍՏ ԻՐԵՆՑ ՍՈՎՈՐՈՒԹԵԱՆ, ԽԵՂԱԹԻՐԵՑԻՆ ԵՒ ԻՐԵՆՑ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԱՍ ԿԱԶՄՈՂ ԴԱՆԻԷԼ ՎԱՐՈՒԺԱՆԸ ՀԵՐՈՍԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ, ԱՌԱՍՊԵԼ ՄԸ ՅՕՐԻՆԵՑԻՆ. ԵՒ ԱՅՍ ԱՌԱՍՊԵԼԸ ԱՅՍ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԹՈՒԹԱԿՆԵՐԸ ՏԱՐԱԾԵՑԻՆ ԱՄԷՆ ԿՈՂՄ, ԻՐՐ ԻՐԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ:

ՄԵՆՔ ԱՅՍ ԳՐՈՒԹԵԱՄԲ, ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ԱՌԱՍՊԷԼԻՆ ՄԷՋ, ՌՈՒՐԷՆ ՍԵՒԱԿԻՆ ԴԷՄ ԿԱՏԱՐՈՒԱԾ ԱՆԻՐԱԽՈՒԹԵՆԷՆ ԱՅԼԵԻՍ ԸՆԴՎՋԵԼՈՎ, ՊԻՏԻ ՋԱՆԱՆՔ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՄԷՋՏԵՂ ՀԱՆԵԼ՝ ՄԻՆՉԵՒ ՀԻՄԱ ՉՀՐԱՊԱՐԱԿՈՒԱԾ ԵՒ ՇԱՏԵՐՈՒՆ ԱՆԾԱՆՕԹ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԵՐՈՎ, ԾԱՆՈՒՆ ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ:

ՄԵՐ ԽԱՄՈՂՈՒՄՈՎ, 24 ԱՍՐԻԼ 1915-Ի ԵՂԵՆՈՒ ԺՈՒՆԻՍԻՅԱՆԵՐՈՒՆ ԸՆԿՈՒՄԻՏԵՍԻ ՎԱՄՈՒՐԵՍԻՅԱՆ ԺՈՒՍԻՆ, ԱՄԵՆԱՆԶԳՐԻՍ ԺԵԼՈՒՄԻՆԻՍԻՅԱՆԻՆԸ ԿԱՄԱՐԱԾ Է՝ ՄԵԾ ԽԱՅՐԵՆԱՍԵՐ, ԲԱՆԱՍՏԵՂԾ Լ ԳՐԱԳԷՍ ԱՆՂՐԱՆԻԼ ՄԱՌՈՒԿԵԱՆԸ:

13 Հոկտեմբեր 1985-ին, Նիսի մէջ, Ռուբէն Սեւակի ծննդեան 100-ամեակի հանդիսութեան նախագահն և բանախօսը եղող Անդրանիկ Մառուկեան այդ օր, ի միջի այլոց, հետեւեալ բացատրութիւնները տուաւ.

«Մեր բոլոր նահատակ մտաւորականներուն համար **«Նահատակուեցան»** կ'ըսենք, և այդպէս կը վերջանայ:

Արդեօք ոճրագործները ի՞նչ ձեւով խոշտանգած են նահատակները:

Այս մասին զանազան վկայութիւններ, զանազան գրութիւններ կան, քիչ մը սուտ, քիչ մը իրաւ: Անոնք նուիրագործուած են:

Մեզի համար պարզ է. նահատակուեցան բոլորն ալ և սուրբեր դարձան:

Բայց, բարեբախտաբար, Ռուբէն Սեւակի կեանքին մէջ, դրուագ մըն ալ կայ, մինչեւ իր մահուան սեմը:

Ուրիշ նահատակ մտաւորականներուն մասին չկայ այս բանը, Դ. Վարուժանի կամ Սիամանթոյի և կամ Ռուբէն Զարդարեանի մասին չկայ:

Բայց, Ռուբէն Սեւակի մասին, իրական պատմութիւն մը կայ:

Զանդըրը-ի մէջ մեծատունի մը, ազդեցիկ մարդու մը աղջիկը հիւանդ է, և Ռուբէն Սեւակ կը բժշկէ այդ աղջիկը:

Բայց աղջիկը կը սիրահարուի Ռուբէն Սեւակին:

Եւ աղջկան հայրը Ռուբէն Սեւակին կ'ըսէ՝ «Ձեր նակատագիրը նշոյում է. ձեզ սպաննելու պիտի տանին: Եկ՛ուր քրքացիր, աղջկանս հետ ալ ամուսնացիր: Այս պարագային քեզ կրնամ ազատել»:

Հակառակ, որ Ռուբէն Սեւակի մտաւորական ընկերները, բանտի ընկերները, իրեն կը թելադրեն, կը պնդեն և կը փորձեն համոզել զինք ամէն գնով, ըսելով՝ «հոգ չէ. վնաս չունի այլեւս. քրքացիր, կին մըն ալ առ. ի՞նչ կ'ըլլայ»: Բայց Ռ. Սեւակ կը մերժէ: «Թրքանալը վատութիւն է» կ'ըսէ:

Իր մահէն անմիջապէս յետոյ, Ռուբէն Սեւակի անունը երրորդութեան մը հետ կապուեցաւ՝ Դանիէլ Վարուժան, Սիամանթօ, Ռուբէն Սեւակ»:

Անդրանիկ Մառուկեանի 24 Ապրիլ 1915-ի մտաւորական նահատակներու մասին այս շատ իրատես մեկնաբանութենէն յետոյ, պիտի ջանանք նշել՝ Ռուբէն Սեւակի նահատակութեան մասին, Զանդըրը-ի մէջ անոր աքսորեալ բախտակից ընկերներուն վկայու-

թիւնները, կարգ մը յապաւումներով [պահելով բնագրին հարագատու թիւնը]

**ՉԱՆՂԸՐԸ ԱՔՍՈՐՈՒԱԾ ԵՒ ՎԵՐԱՊՐՈՂ ՄՏԱՒՈՐԱԿԱՆ
ՄԻՔԱՅԷԼ ՇԱՄՏԱՆՃԵԱՆԻ ՎԿԱՅՈՒԹԻՒՆԸ**
ՉԱՆՂԸՐԸԷՆ ՎԵՐՅԻՇՈՒՄՆԵՐ

«Այն երեք գոհերը, որոնց հետ անձնական շատ մը յիշատակներով կապուած եմ, և որոնց եղերական վախճանը միշտ սրտիս մէջ կ'արիւնհի, եղած են Դանիէլ Վարուժան, Տիրան Քէլէկեան և Ռուբէն Սեւակ:

1915 Յունիսի վերջերը, առաջին կարաւանին մեկնելէն և տասն և ինը հոգիներու ալ Պոլիս վերադարձը արտօնուելէ յետոյ, մեկուկէս ամիսի չափ, միասին ապրեցայ Սեւակին հետ:

Ես, ուրիշ վեց հոգիներու հետ, միասին կ'ապրէի: Բոլոր ընկերներս ալ, առանց բացառութեան, մաս կը կազմէին Պոլիս վերադառնալու արտօնուածներուն. Սեւակ ալ, այդ օրերուն, նոր հասած էր Չանղըրը, ուրեմն, անմիջապէս որոշեցինք մեր կենակցութիւնը:

Պոլսէն ծանօթ էր ինձի իր դիւրահաղորդ և զուարթ հոգին: Տօնական զուարթսիրտութեամբը լեցուած էր տուններնիս: Այդ ատեններուն [Յուլիս սկիզբները] տակաւին չէինք գիտեր առաջին կարաւանին վիճակուած բախտը, և անտեղեակ էինք տակաւին թուրքին եղեռնի կամբին:

Իսլամին ծոմապահութիւնը սկսած էր արդէն, և ծայր տուած եղեռնի ապերասանութիւնը:

Ջարդերու չարաշուք գրոյցներ սկսած էին մեր ականջը հասնիլ: Այդ միջոցներուն էր, որ օր մը, մեծ իրարանցումի մը մէջ տեսայ զինքը:

Այն տեսակ խօսք մը տարածուած էր արքայականներուս մէջ, թէ մահմետականութիւնը ընդունողը ազատ պիտի արձակուէր:

Այդ ատենները, առաջին կարաւանը մեկնած էր արդէն և եօթանասուն հոգիի չափ մնացած էինք: Ամբողջ երկու օր, խեղճը աշխատեցաւ, համոզելու համար տկար հոգիները, որ մահը մահմետականացումէն աւելի աղէկ է, և զատ-զատ երդում ընել տուաւ ամէն անոնց, որոնց հոգիի ուժին վրայ կասկած ունէր, թէ հաւատարիմ պիտի մնան իրենց լոյս-հաւատքին:

Երբ մեր կարաւանը Չանղըրը հասաւ, մեր մէջը ութը բժիշկներ

կային, իսկ Չանդրըրի մէջ բժիշկ չկար բնաւ: Մեր բժիշկ ընկերները իրենց արուեստը, տեղւոյն բնակիչներուն բարւոյն ի գործ դրին:

Պոլիս մեկնումներէ յետոյ, երեք բժիշկներ մնացած էին: Այդ երեքէն ամենէն աւելի փնտռուածն էր Սեւակ: Քաղաքին մէջ կանոնաւորապէս բժշկութեամբ կը զբաղէր:

Տօքթ. Տինանեան, Պոլիս վերադառնալուն առիթով, Սեւակին յանձնած էր վերադարձանութիւնը թուրք աղջկան մը, որուն վրայ ինքը վիրաբուժական գործողութիւն մը կատարած էր: Այդ աղջկան հայրն էր Չեթէնի Արապանը Իսմայիլ:

Տօքթ. Տինանեանի մեկնումէն յետոյ, Սեւակ կանոնաւոր կերպով կը շարունակէր իր բժշկական այցելութիւնները այդ աղջկան:

Օր մը, կէսօրէն բաւական վերջը, տակաւին նաշի չէր եկած: Ճիշդ կէսօրին նաշի համար տունը կը գտնուէինք, իրարու չսպասելու համար: Տրուած ըլլալով իր նշդապահութիւնը՝ արտասովոր բան մըն էր եղածը: Ես, գրեթէ մտահոգ, իրեն կը սպասէի, նաշասեղանին գլուխը:

Վերջապէս եկաւ, բոլորովին անսովոր կերպով իրեն համար. անխօս էր: Տքնութիւնէ դեռ նոր դուրս եկողի մը յոգնածութիւնը ունէր դեմքին արտայայտութիւնը: Յայտնապէս չարչարուած էր: Սեղանի վրայ բան մը չխօսեցաւ: Երրորդ մը կար մեզի սեղանակից: Երրորդին մեկնելէն յետոյ, երբ առանձին մնացինք, խոստովանելու պիտքէն ննջուած մեկու երկչոտութեամբ սկսաւ պատմել ինձի, թէ ինչպէս դարձանուող թուրք աղջկան հօրը կողմէ տուն կանչուելով երկու ժամ վար դրուած էր: Ապերախտը նկարագրած էր, թէ ինչպէս հայկական շարդերը մոլուցքով մը կատարուելու վրայ էին, թէ ամէն օր նմանօրինակ հրամաններու կը սպասուէր Չանդրըրի հայերուն համար, հետեւաբար իր խանդաղատանքի զգացումները պարզելով տօքթէօրին, կը համոզէր զինքը, ընդունիլ մահմետականութիւնը, քանի ուշ չէր: Պտտցուցած էր զինքը իր տան բոլոր մութ անկիւնները և խորհրդաւոր նկուղները. շատուկ մօրը՝ տօքթէօրին նակատը համբուրել տուած էր, և յետոյ, գրեթէ արտօնած զինքը որ մեկնի, հրաւիրելով որ մինչեւ 24 ժամ զինուորագրութեան ճիւղի նախագահին դիմէ, իր կրօնափոխ եղած ըլլալը յայտնելու համար:

Հետեւեալ օրը պայրամ էր: Սեւակ, նակտի պարկեշտ քրտինքով մը պատմեց ինձի, թէ ինչպէս ոգորած էր, համոզելու համար այդ

անողորմ, թէ այդպիսի պահանջում մը չներկայացուի իրեն, թէ ինքը որքան կը սիրէր կեանքը՝ իր գաւակներուն համար, ուստի չէր ուզեր մեռնիլ: Մեկնած ատենը, հեթանոսը նորէն շեշտած էր, թէ սպասուած հրամանը կրնար նոյնիսկ քսանն չորս ժամէն առաջ հասնի, հետեւաբար պէտք էր անապարել, պաշտօնական դիմումը ընելու համար գինուորագրութեան նիւղի պետին:

Սպանալիքին դէմ կարելի չէր անտարբեր մնալ, որովհետեւ տեղեակ էինք եղեռնին համատարած բաւալումին, որուն երեք-չորս օր առաջ, էնկիւրի իր երկու հազարէ աւելի լաւագոյն այրերը զոհ տուած էր: Մենք որոշումը տալու համար չմտածեցինք իսկ, որովհետեւ մէկ հատիկ էր ան:

Սեւակ, երբեք իրմէ սպասուած դիմումը չըրաւ գինուորականութեան նիւղի պետին:

Մեր ընկերները խուճապի չմատնելու համար, գաղտնի պահեցինք միջադէպը, մեզի գաղտնակից առնելով միայն Տիրան Քէլէկեանը:

Բայց մեր հոգիները, սկսած էին արդէն, տաժանութեան մթնոլորտին մէջ թեւածող մահուան սարսափը ծծել: Մեր տունը քաղաքին եզրն էր, գրեթէ դուրսը: Որոշեցինք քաղաքին մէջ փոխադրուիլ, և գացինք տեղաւորուիլ մեր դժբախտ մեկնող ընկերներէն թափուր մնացած տուն մը:

Չանդըրըի Իթքիհատի պատասխանատու քարտուղարին ջանքերով, տեղւոյն միւթէսարըֆը, Ասաֆ պէյ ուրիշ տեղ փոխադրուեցաւ, որովհետեւ յայտնապէս հայերու հանդէպ բարեացակամ վարմունք մը ցոյց կու տար:

Ասաֆէն վերջ, փոխանորդաբար Չանդըրըի միւթէսարըֆութեան պաշտօնը կը վարէր, Քասթեմունիի վիլայէթին ոստիկան գինուորներուն ընդհանուր հրամանատարը:

Սեւակ, միւթէսարըֆի փոխանորդին հետ շատ մտերիմ յարաբերութեան մէջ էր:

Երկրորդ կարաւանն ալ տուինք մենէ, անօրէնութեան համբաններուն, և անոր յուղարկ երթալէ մեր վերադարձին, կառավարչատուն հրաւիրուեցանք գեկոյցի մը տեղեկանալու համար: Երեսուննէ եօթը հոգի մնացած էինք, մեր մէջ հաշուելով Սեւակը, Վարուժանն ու Քէլէկեանը:

Երեսուն և եօթը հոգիներու ցանկ մը եկած էր: Ասոնք ազատ

պիտի ձգուէին և Պոլսէ գատ ուզած տեղերնին երթալու ազատ պիտի ըլլային: Այս ցանկին անուններէն հինգին տերերը կամ Պոլիս վերադարձած էին, կամ թէ մենէ մեկնող կարաւաններէն մեկին կամ միւսին մաս կազմած: Ասոր փոխարէն, մեր ընկերներէն հինգին անունները կը պակսէին ցանկին մէջ:

Այդ հինգ մեր սիրելիներուն մէջ էին նաեւ մեր սիրելագոյն Վարուժանն ու Սեւակը:

Ասոնք՝ Պոլիս, թէ իրենց ընտանիքներուն և թէ՛ ներքին գործոց նախարարութեան դիմում ըրին հեռագրով, որպէս զի իրենք ալ մեզի պէս նկատուին:

Մինչ այն, Իթքիհատի պատասխանատու քարտուղարին ջանքերով, որոշուեցաւ որ այդ հինգը մեր Այաշի ընկերներուն քով փոխադրուին: Որոշում կայացած էր, Չանդըրի մէջ հայ աքսորական չթողուլ:

Քաղաքային և զինուորական գերիներ սկսած էին հասնիլ քաղաք:

Շատ նշանակալից պարագայ մըն է վերջին տեղեկացածս թէ, մեր հինգ ընկերները Այաշ փոխադրելու որոշումը տրուած բուականին, Այաշի մեր ընկերները ա՛լ չկային յաւիտեանպէս:

Սեւակ օգտուելով կառավարչի փոխանորդին հետ ունեցած իր մտերմական յարաբերութիւններէն, իրենց մեկնումի օրը, երկու երեք անգամ յետաձգել տուաւ, եղած դիմումներու վրայ Պոլսէն գալիք պատասխանի մը սպասելով: Ոչ մէկ պատասխան:

Վերջապէս Օգոստոս 13/26 1915, Հինգշաբթի առաւոտ մը, նախորդ գիշերը Սեւակ հրաժեշտ առած էր կառավարչի փոխանորդէն, հինգ հոգին երկու կառքով նամբայ ելաւ, մէկ հեծեալ ոստիկան-զինուորով և մէկ ոստիկանով: Միւթեսարըֆի փոխանորդը ամէն բարեացակամ կարգադրութիւն ըրած էր, Սեւակը և իր ընկերները ողջամբ Այաշ հասցնելու համար: Կառապանը եկած էր արդէն, շատ ժամանակ չունէինք խորհելու, և նամբայ ելանք, մեկնողներու ժամադրավայրը, քաղաքին կամուրջը փութալու: Անլուսին օգոստոսեան պայծառ երկնքի մը տակ, դեռ չնեղքուած մութին յանձնեցինք մեր ընկերները:

Նոյն իրիկունը, ժամը 12-ին, անոնց սպանման լուրը, Թիւնէյէն հեռաձայնով եկեր էր Չանդըրը: Տեղւոյն ոստիկան զինուորներու հրամանատար Նուրէտտին և Իթքիհատի պատասխանատու-

քարտուղարը՝ Օղուզ, հեռաձայնի տեղը գտնուելով, քրքիջով ընդունեի էին գոյժը:

Գիշերը՝ կառավարչի փոխանորդը, եղեռնէն կատղած, մանաւանդ իր սիրական բարեկամին սպանութենէն ալլալլած, ներկայութեանը կը կանչէ Նուրետտինը և իր ծանր կասկածները կը յայտնէ: Այդ միջոցին Ռեշիտ փաշա տակաւին կը շարունակէր կուսակալ մնալ վիլայէթին, և ձեւական հետապնդումներ կատարուելով, իբր սպանիչ տասնևմէկ խեղճուկ գիւղացիներ բերուեցան Չանղըրըի բանտը:

Հետեւեալ օրը, Ուրբաթ, կառավարչի փոխանորդին մօտ մեր դիմումին, տեղեկացանք այս մանրամասնութիւններուն, ու տեղեկացանք նաեւ, մահէն դառնագոյն իրողութեան, այն թէ առտուն իսկ, հինգ գոհերուն մեկնելէն 24 ժամ վերջ, Պոլսէն հեռագիր մը եկած էր, արտօնող որ այդ հինգն ալ միւս 32-ին պէս նկատուին: Տրուած չէ երբեք մարդուն, չարաբախտութեան անողոք անիւր կասեցնել:

Յետոյ, ստուգապէս տեղեկացայ, որ չէթէ Արապանի Իսրայիլ, մեր հինգ ընկերներուն ժամանելէն երկու ժամ առաջ, երեւցած է Թիւնէյ, գիւղացիները գլուխը հաւաքած, բանի մը համոզելու աշխատելով, ու յետոյ իր նամբան շարունակած է դէպի Էնկիւրի:

ՄԻՔԱԹԷԼ ՇԱՄՏԱՆՃԵԱՆ

**ՅՈՒՇԱՐՉԱՆ ԱՊՐԻԼ
ՏԱՍՆԸՄԷԿԻ
ՊԱՏՐԱՍՏՈՒԱԾ
«ԱՊՐԻԼ ՏԱՍՆԸՄԷԿԻ
ՍԳԱՀԱՆԴԷՍԻ
ԹԱՆՉՆԱԽՈՒՄԲ»ԻՆ ԿՈՂՄԷ
ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 1919**



* * *

ԶԱՆՂԸՐԸ ԱՔՍՈՐՈՒԱԾ ԵՒ ՎԵՐԱՊՐՈՂ ՄՏԱՒՈՐԱԿԱՆ ԱՐԱՄ ԱՆՏՈՆԵԱՆԻ ՎԿԱՅՈՒԹԻՒՆԸ

Ո՛Վ ԿԱԶՄԱԿԵՐՊԵՑ ՍՊԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Պարագաները այնպես բերին, որ ամենագարհուրելի պայմաններու մէջ գործուած այս ոնիրը անպատիժ չմնայ: Թուրք սպայ մը, Մէհմէտ Իզզէթ պէյ, զինուորական հրամանատար Չանղըրըի, իրեն համար պատուոյ խնդիր մը դարձուց ոչ միայն ոնրագործներուն, այլեւ անոնց ընկերներուն բնաջնջումը և այս գործը գլուխ հանեց անողորմաբար, հետապնդելով և սպաննելով բոլորն ալ, անոնց պետէն մինչեւ յետինը մեղսակիցներուն, և ասիկա տաքը տաքին, շատ կարն ատենուան մը մէջ:

Այս ոնրագործները սակայն պարզ գործիքներ էին: Բուն յանցաւորն էր Իթթիհատի Չանղըրըի պատասխանատու քարտուղար [Քեաթիպի Մէսուլ] ձեմալ Օղուզ պէյ, որ անձամբ կազմակերպած էր Վարուժանի և ընկերներուն սպանութեան գործը և որուն ձեռքը, Քիւրտ Ալօ ու իր ընկերները գործակատարի մը դերը միայն ունեցած էին: Թէեւ, 1918-ի զինադադարէն ետք ձերբակալուելով Պոլսոյ մէջ, դատուեցաւ պատերազմական ատեանի մը առջեւ, բայց ձեւական պատիժի մը ենթարկուեցաւ և գէթ, ինձի յայտնի չէ, թէ ինչ վախճան ունեցաւ:

Կատարուած դատավարութիւնը պարզ գայթակղութիւն մըն էր ինքնին և անոր ամենէն ընդվզեցուցիչ դրուագներէն մէկը եղաւ այն անհաւատալի պարագան, որ մեզի հետ Չանղըրը արքորուած հայ սեղանաւոր մը, Յովհաննէս Թերլեմէզեան դատարանին առջեւ բարի վկայութիւն տուաւ ի նպաստ այդ մեծ ոնրագործին, ինչպէս արդար զգուանքով մը արձանագրեցին Պոլսոյ այն ատենուան հայերէն թերթերը:

* * *

Վարուժանի և տօքթ. Ռ. Զիլինկիրեան-Սեւակի խումբը նահատակուելու համար նամբայ չհանուած, Մէհմէտ Իզզէթ պէյ պատուոյ խօսք տուած էր տօքթ. Ռուբէն Զիլինկիրեանին, թէ ողջ-առողջ պիտի հասնի Պոլիս և թէ որեւէ վտանգ չկայ ոչ իրեն և ոչ ալ իր ընկերներուն համար: Ըսեմ, որ տօքթ. Ռ. Զիլինկիրեան շատ

յարգ կը վայելէր Չանդըրըի մէջ: Մեզի հետ գտնուող բժիշկները մեծ մասով զացեր էին: Ինքն ալ չափազանց համակրելի էր և ասկէ զատ՝ ՄիւթեսարըՖ Ասաֆ պէյը ազատեց բունաւորուած ատենը, որով ձեռքէ ձեռք կը խլէին զինքը:

Եւ սակայն, հակառակ Իզգէթ պէյի խոստումին, սպանութիւնները գործուեցան:

Իզգէթ պէյ, այս եղածը լսելուն պէս կատղած է: Յայտնաբար ամբաստանած է տեղւոյն իրօքիհատականները, որոնք իրմէ գէնք ուզեր էին և չկրնալով ստանալ, հաւաքեր էին քաղաքի բնակիչներէն:

Որովհետեւ, երբ ընդհանուր զինահաւաքութիւն եղաւ, հայոց գէնքերը վար դրին, նոյնիսկ յետին դաշոյնը, իսկ թուրքերուն գէնքերը, նոյնիսկ արգիլուածները, վերադարձուցին նոյնութեամբ: Բարկացած Իզգէթ պէյ անմիջապէս հեռագիր մը կը դրկէ Գասթեմունի Ռէշիտ փաշային, բողոքելով եղածին դէմ և աւելցնելով, որ «նամուսը ասքերիէմի փայմալ էթտիլեր» [զինուորական պատիւս ոտնակոխեցին]: Եթէ այս բողոքը չըլլար, ապահովաբար պիտի սպաննէին բոլոր միւս մնացածները:

Իզգէթ պէյ չբաւականացաւ բողոքի այս հեռագրով, այլ ինք անձամբ գնաց Թիւնէյ, քննութիւն կատարեց և քիւրտ Ալօյէն զատ միւսները, ինչպէս փոլիս Սիւլէյմանը ձերբակալելով դրկեց Էնկիւրի, այն ալ այն պատճառով, որ Պոլսոյ գերմանական դեսպանատունը պահանջած էր սպանիչներուն պատժուիլը:

Վարուժանէն և Ռ. Սեւակէն զատ, միեւնոյն խումբին միւս նահատակները եղան Օննիկ Մաղազանեան, երկաթագործ Վահան Քեհեայեան և Պոլսոյ Օրթագիւղէն հացագործ Արքին աղա:

* * *

1919 Դեկտեմբերին, Իրօքիհատի Չանդըրըի պատասխանատու քարտուղար Ճեմալ Օղուզ պէյ, որ Վարուժանի և ընկերներուն սպանութեան գործը կազմակերպած էր, և ասոր գործակիցը՝ Չանդըրըի ոստիկան-զինուորներու հրամանատար համբաւաւոր «Քեմիք Քըրան» ոսկոր կտրող Նուրէտտին պէյը հրապարակով դատաստանի ենթարկուեցան Էսատ փաշայի նախագահութեամբ գումարուած պատերազմական ատեանի մը առջեւ, Պոլսոյ մէջ:

Ճեմալ Օղուզ Պոլսոյ մէջ ձերբակալուեցաւ անգլ. ոստիկանու-

քեան կողմէ: Իր և իր Գասթեմունիի պաշտօնակցին՝ Հասան Ֆեհմիի ջանքերով, պաշտօնանկ եղած էր Գասթեմունիի կուսակալ Ռեշիտ փաշան, որ հակառակած էր հայոց տեղահանութեան: Չերբակալուած միջոցին Պոլսոյ բերքերը գրեցին, թէ կես միլիոն ոսկիի հարստութիւն մը ունէր: Չանդըրըի մէջ ընդհ. տնօրէն էր պետական գուլպայի գործարանին, որ գլխաւորաբար զինուորնե-րու յատուկ գուլպաներ կը պատրաստէր: Ամբողջ շրջանակին պարենաւորման գործերն ալ իր ձեռքէն կ'անցնէին:

Ամբաստանուած էր նաեւ մեծ գեղծումներու համար, իր իսկ բուրք ընկերներուն կողմէ:

Գտնուած է Ատանա 1909-ին, կոտորածի տարին:

Ահա այս հրեշն էր, որ պատժական ատեանին կողմէ դատապարտուեցաւ 5 տարի և 4 ամսուան թիապարտութեան, 9 Փետր. 1920-ին, իսկ Նուրէտօին՝ 6 տարի և 8 ամսուան, իր բացակայութեան դատուած ըլլալուն համար:

Այս դատաւարութեան ընթացքին վկայութիւն տուաւ Գասպար Չերազ, որ կը գտնուէր Չանդըրըի աքսորականներուն մէջ: Գ. Չերազ, Չանդըրըէն վերադարձին տեսած էր այն վայրը, ուր մորթոտուած էին 5 նահատակները, բլուրի մը ստորոտը: Տեսած էր տարբադադրուած դիակները նահատակներուն, որոնք շատ թեթեւ քաղուած էին և յորդառատ անձրեւները հողին մակերեսը հանած էին զանոնք: Ոնիրը գլուխ հանած էր չէթէնի ոստիկան Իսմայիլը, որուն հիւանդ աղջիկը մահէն ազատած էր տօքթ. Ռուբէն Չիլիկի-րեան:

Ջոհերը Պոլսէն հեռագրի կը սպասէին Պոլիս վերադարձուելու համար:

Հեռագիրը եկած էր զոհերը նամբայ չհանուած, բայց Օդուզ գաղտնի պահած էր զայն, որպէսզի գլուխ հանէ ոնիրը:

Նոյն ատեանին վկայութիւն տուած էր նաեւ Օհան [նախկին վարդապետ] Կարապետեան, Վարուժանի և ընկերներուն, ինչպէս նաեւ Տիրան Քելէկեանի սպանութեանց պարագաներուն մասին:

Ինչպէս ըսի, զինուորագրութեան Չանդըրըի նիւղին պետը՝ Իգ-գէթ պէյ, որ նախախնամութիւն մը եղած էր բոլոր աքսորական-ներուն համար, պատուոյ խնդիր դարձուց իրեն համար՝ գործուած ոնիրը և ամբողջովին բնաջինջ ըրաւ քիւրտ Ալօն և անոր հրաման-ներուն տակ գտնուող հրոսախումբը:

Դ. Վարուժանի, Ռ. Սեւակի և իրենց ընկերներուն սպանութեան մանրամասնութիւնները նշողուեցան 1918-ի զինադադարէն ետքը, երբ, իբրեւ ականատես խոստովանութիւններ ըրաւ՝ զանոնք դէպի սպանութեան վայրը փոխադրած թուրք կառապանը: Չոհեբը դաշունահար մորթուած էին Չանդըրըէն քանի մը ժամ հետու անտառակի մը մուտքին, բլուրի մը ստորոտը, 26 Օգոստոս 1915-ին:

ԱՐԱՄ ԱՆՏՈՆԵԱՆ

«Ամէնուն Տարեգիրքը» - 1959 Պէյրութ-Լիբանան

* * *

**ԶԱՆՂԸՐԸ ԱՔՍՈՐՈՒԱԾ ԵՒ ՎԵՐԱՊՐՈՂ,
ՊՈԼՍՈՅ «ԲԻՒԶԱՆԴԻՈՆ» ԹԵՐԹԻՆ ԽՄԲԱԳՐԱՊԵՏ
ԲԻՒԶԱՆԴ ՔԷԶԵԱՆԻ ՎԿԱՅՈՒԹԻՒՆԸ**

ԴԺՈՂՔԻՆ ՆԱԽԱԴՈՒՌԸ

Աքսորի վերջին ընկերնիս որուն աչքերը համբուրեցի՝ Վարուժանն էր. ան, որուն վիճակուած էր, Սեւակի հետ միատեղ, նահատակուիլ էնկիւրիի համբուն վրայ, տնօրէնութեամբ իբրքիհատական գործիչ ձեմալ Օղուզի, ինչպէս 1920-ին պարզուեցաւ նոյնիսկ Պոլսոյ պատերազմական տեսանին առջեւ: Թէեւ իր մասին անհաշտ, ուրիշներու համար թոյլատու էր: - Չանդըրըի Արապանի պաշըն պատիկ գիւղի մենձ աղան էր:

Անոր աղջիկը կը խնամէր տօքթ. Բ. Տինանեան, որու մեկնումէն ետքը, Սեւակ [տօքթ. Չիլինկիրեան] էր որ գլուխ հանեց դարմանումը:

Գեղեցկադէմ երիտասարդ մըն էր Սեւակ, և թրքուհին անոր սիրահարեցաւ:

Հայրը հասկցուց բժիշկին թէ իր ազգակիցները ջնջելու հրաման կայ, բայց եթէ իսլամութիւն ընդունի և կարգուի այն աղջկան հետ որուն կեանքը ազատած էր, ինք ալ կը խոստանար իր փեսան փրկել վերահաս աղէտէն:

Սեւակ խորհուրդ հարցուց ընկերներուն: Ամէնքն ալ Յունիս ամսուն հասնող գոյժերն զգածուած, զինք խրատեցին առժամայէս համակերպելու: Քէլէկեան ալ համամիտ գտնուեցաւ «զի ամէն

բանէ առաջ իր կեանքը պետք էր»:

Բայց Սեւակ «**Քրքանալը նուաստանալ է**» ըսելով մերժեց, մանաւանդ որ կարգուած էր և իր կինը աշխոյժ գերմանուհի մ'եր որ կ'աշխատէր իրեն համար, բայց տարաբախտ Սեւակ գուցէ չիմացաւ, թէ որպիսի ճիւղ մ'էր նոյնինքն Վանկէնհայմ, որ «չէր ուզեր երեսը տեսնել հայու մը կինը եղած գերմանուհիի մը»:

1921, Յուլիս - Կ. Պոլիս

ԲԻԻԶԱՆԴ ՔԷԶԵԱՆ

ԹԷՆՂԻԿ - «ԱՄԷՆՈՒՆ ՏԱՐԵՑՈՅԸ» 1922

* * *

«Նայիրի»ի յառաջիկայ թիւին մէջ պիտի ջանանք տալ, Չանդըրը արտրուած և վերապրողներէն՝ բժիշկ Վահան Ալթունեանին և Յովհան Ծայր. Վարդապետ Կարարպետեանին Ռուբէն Սեւակի Չանդըրըի մէջ ունեցած հերոսական կեանքին և նահատակութեան մասին վկայութիւնները:

Եւ նաեւ՝ Գրիգորիս Ծայր. Վարդապետ Պալաքեանին և բժիշկ Ս. Զարեանդին իրար հակասող վկայութիւնները՝ Ռուբէն Սեւակը և Դանիէլ Վարուժանը դէպի նահատակութեան վայրը առաջնորդող նոյն կառապանին յայտարարութիւններուն մասին:

Եւ վերջապէս՝ Պոլսոյ գերմանական դեսպանատան 8 Դեկտեմբեր 1915 թուակիր տեղեկագիրը, որ շատ տարբեր ձեւով կը ներկայացնէ Ռուբէն Սեւակի նահատակութեան պարագաները:

ՆԱԹԻՐԻ

ԹԻԻ 186, 28 ՅՈՒՆՈՒԱՐ 2003

ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿ, ՄԵՐԺԵԼՈՎ ԹՐՔԱՆԱԼՈՒ ԳՆՈՎ ԱԶԱՏՈՒԵԼՈՒ ԱՌԱՋԱՐԿԸ, ՆԱՀԱՏԱԿՈՒԵԾԱԻ 26 ՕԳՈՍՏՈՍ 1915-ԻՆ ԹՈՒՐԳԵՐՈՒՆ ԿՈՂՄԷ:

ԲԱՅՑ ՀԱՅԵՐԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԵՆ ԱՄԷՆ ՕՐ ՆԱՀԱՏԱԿԵԼ ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ ՀՈԳԻՆ՝ ԹՐՔԱՎԱՅԵԼ ԱՆԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՎ ԱՆՈՐ ԱՆՈՒՆԸ ԵՒ ՅԻՇԱՏԱԿԸ:

ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԸ ԵՒ ԴԱՆԻԷԼ ՎԱՐՈՒԺԱՆԸ ԴԷՊԻ ՆԱՀԱՏԱԿՈՒԹԵԱՆ ՎԱՅՐԸ ԱՌԱՋՆՈՐԴՈՂ ԹՈՒՐԳ ԿԱՌԱՊԱՆԻՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ԻՐԱՐ ՀԱԿԱՍՈՂ ՀԱՅԿԱԿԱՆ ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ:

ՆՈՅՆ ԿԱՌԱՊԱՆԻՆ ԸՍԱԾՆԵՐՈՒՆ ՄԱՍԻՆ, «ՀԱՅ ԳՈՂԳՈՒԹԱՆ» ԳԻՐԳԻՆ ՀԵՂԻՆԱԿ՝ ԳՐԻԳՈՐԻՍ Ծ. ՎԱՐԴԱՊԵՏ [ՅԵՏՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍ] ՊԱԼԱՔԵԱՆԻՆ ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐԸ [ԷՋ 199].- «... ԱՍՈՆՑՄԷ ՄԻԱՅՆ ՎԱՐՈՒԺԱՆ ԱՆՁՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ԿԸ ԴԻՄԷ, ԵՒ ԻՐՐ ՊԱՏԻԺ ՈՃՐԱԳՈՐԾԻՆ ԴԱՆԱԿՈՎ ԴՈՒՐՍ ԹԱՓԵԼԷ ՎԵՐՋ ՓՈՐՈՏԻՔԸ, ԿԸ ՓՈՐԵՆ ՆԱԵԻ ՀԱՅՐԵՆԱՍԷՐ ԲԱՆԱՍՏԵՂԾԻՆ ԱԶՔԵՐԸ...»:

ՆՈՅՆ ԹՈՒՐԳ ԿԱՌԱՊԱՆԻՆ ԸՍԱԾՆԵՐՈՒՆ ՄԱՍԻՆ «ԴԱՆԻԷԼ ՎԱՐՈՒԺԱՆԻ ԵՒ ՏՕՔԹ. Ռ. ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆԻ [ՍԵՒԱԿ] ԳԵՐԵՋՄԱՆՆԵՐԸ» ԳԻՐԳԻՆ ՀԵՂԻՆԱԿ՝ ԲԺԻՇԿՍ. ՋԱՐԵԻԱՆԴԻՆ ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐԸ [ԷՋ 59].- «...ԲՈՆԻ ՄԵՐԿԱՑՆԵԼՈՒ ՓՈՐՁԻ ՄԸ ԴԷՄ ՍԵՒԱԿ Կ՛Ը ՄԲՈՍՏԱՆԱՅ, ԻՍԿ ՎԱՐՈՒԺԱՆ, ՍՏՈՅԻԿԵԱՆ ԻՄԱՍՏՈՒՆԻ ՄԸ ՊԷՍ, ՀԱՄԱԿԵՐՊՈՂ ՈԳԻՈՎ ՄԸ ԿԸ ՀՆԱՋԱՆԴԻ...»

Քրիստոնեական կրօնիկն և մանաւանդ Քրիստոսի հանդէպ հայերուն ծայրայեղ ջերմեռանդութեամբ պաշտամունքի առաջնակարգ պատճառներէն մէկն ալ, մեր համոզումով, հետեւեալ իրականութիւնն է:

Որովհետեւ, Քրիստոսի նման, հայերն ալ տեւական չարչար-

րուեցան օտար բռնակալներու խժդժութիւններէն և մանաւանդ, 9 դարեր տելոդութեամբ, բրքական բարբարոսութիւններէն:

Եւ Քրիստոսի մէջ, հայերը տեսան, իրենց ապրած տառապալից կեանքը մշտնջենական:

Մենք պիտի ըսենք աւելին: Այո, հայերը ապրեցան՝ Քրիստոսի տառապալից կեանքը դարերով... բայց... բայց առանց Քրիստոսի Յարութեան:

Այո, Քրիստոս չարչարուեցաւ և խաչուեցաւ: Բայց Յարութիւն առաւ:

Եւ «Յարութիւն» առած թուականէն մինչեւ այսօր, շուրջ 2000 տարիներէ ի վեր Քրիստոս ամէն օր և ամէն միշտ տեղ կը փառաբանուի և կը պաշտուի:

Մինչդեռ հայ ազգը դարեր տելոդութեամբ, Քրիստոսի նման ամէն օր խաչուելէ յետոյ, մինչեւ այսօր «Յարութիւն» չէ առած, և արդարութիւն չէ տեսած:

Այն մեծ հայ ազգը, որ Քրիստոսէ 100 տարիներ առաջ՝ Մեծն Տիգրանի կայսրութեան շրջանին այն տեսնուան աշխարհին գրեթէ կէսին տերն էր, բայց դարերով թուրքերուն կողմէ խաչուելէ և 1915-ին ալ վերջին մահացու հարուածը ստանալով ցեղասպանութեան ենթարկուելէ յետոյ, այսօր, այդ մեծ ազգը, փոքր աւատապետութեան մը վերածուած է: Եւ հոգիով ու մարմնով իսկական հոգեվարքի կեանք մը կ'ապրի:

Եւ ամէնէն ցաւալին՝ հայ ազգին խաչելութիւնը և ցեղասպանութիւնը գրեթէ մոռցւած է:

Եւ ցեղասպան թուրքը [իբր թէ], քաղաքակիրթ կոչուած պետութիւններուն կողմէ, մինչեւ այսօր չէ պատժուած:

Ընդհակառակը, իբր մեծ զօրաւոր պետութիւն՝ յարգանք կը վայելէ:

Բայց ամէնէն անհաւատալին՝ խաչելութեան և եղեռնի ենթարկուած հայ ազգին վերապրողներուն ցուցաբերած անտարբերութիւնն է:

Հայ անհատին [քիչ բացառութիւններով] իր հայրենիքին կորուստին և իր ազգին ցեղասպանութեան ենթարկուելուն հանդէպ ցուցաբերած անտարբերութիւնը՝ իրապէս պժգալի է:

Մենք, այս գաղափարները շատ անգամ յայտնած ենք, և միշտ ալ պիտի շարունակենք յայտնել:

Եթէ դուք, ձեր մէջ, հայկականութեան հոգի մը ունիք, չէք կրնար անտարբեր մնալ, ձեր ազգին ենթարկուած տառապանքներուն և անարդարութիւններուն հանդէպ:

Մենք, այս պատճառաւ, այս գաղափարները պիտի կրկնենք ամէն օր, ամէն ժամ՝ իբր «աղօթք», իբր «հաւատամք»:

Պիտի ընդլզիք՝ անարդարութեան դէմ: Պիտի պախարակենք և պիտի դատապարտենք դաւանանքները:

Եւ պիտի պաշտպանենք հերոսները և հերոսներուն յիշատակները:

Եւ պիտի չթոյլատրենք, որ անոնց սուրբ յիշատակները սրբապղծուին հայ ազգին թշնամիներուն կողմէ:

Այս անիրաւուած հերոսներէն մէկը՝ Ռուբէն Սեւակն է:

Իր ապրած շրջանին, իր ընկերները կը փառաբանէին Ռուբէն Սեւակը:

Հետեւեալ տողերը այսօր ապացոյցն են՝ «Արքեա իմաստութեան շիրք դրած է անոր ուղեղին մէջ, Եսկիւլապ բժշկութեան խորհուրդը, Հէրմէս ալ կայծը պերնախօսութեան»:

Մանաւանդ Չանդըրը-ի մէջ, Ռուբէն Սեւակին ցուցաբերած հերոսական կեցուածքը, առասպելական պատմութեան մը պէս տարածուած էր 1918-էն յետոյ, զինադադարի տարիներուն, Պոլսոյ հայութեան մէջ:

1919-ին առանձնապէս Ռուբէն Սեւակի յիշատակին Պոլսոյ մէջ կատարուած յուշահանդէսը, ասոր ապացոյցն է:

Այդ տարիներուն Պոլսոյ հայկական թերթերը, Ռուբէն Սեւակին հերոսական պատմութիւններով լեցուն են:

Բայց յետոյ, տարիներ անցան: Եւ ժամանակը շատ, շատ բաներ փոխեց: Եւ Արեւմտեան պետութիւններուն գործակալները եղող այն տեսնուան հայ ղեկավարները «ծախեցին» հայուն հայրենիքը:

Այո, 1918-1920 տարիներուն, Հայաստանի արեւմտասէր դաշնակցական ղեկավարները իսկական իմաստով ծախեցին Հայաստանը:

1920-էն յետոյ, Եղեռնին պատճառաւ մէջտեղ ելած «Սփիւռք»ին պատմութիւնը, հայկական պատմութեան ամէնէն «սեւ» էջերն էին:

Այդ տարիներուն, Սփիւռքի մէջ բոլոր արժեքները իրենց իմաստը կորսնցուցին:

Ազգասիրութիւնը և դաւանանութիւնը գրեթէ նոյնացան:

Ո՞վ էր ազգասէրը, ո՞վ էր հայրենասէրը և ո՞վ էր դաւանանը:

Բոլորն ալ իրար խառնուած էին: Դաւանանը՝ ազգասէրի տեղ անցած էր: Եւ հայրենասէրը՝ դաւանան կը համարուէր:

Եւ այս խառնարանին մէջ հերոսներուն տեղ չկար: Եւ հերոսները մոռցուեցան: Մոռցուող հերոսներէն մէկն ալ Ռուբէն Սեւակն էր...

Եւ այս մեծ հերոսին անունը՝ դաշնակցական թերթերուն մէջ, իր քանի մը խորհրդապաշտ ու քնարական բանաստեղծութիւններով կը յիշատակուէր միայն:

* * *

Ռուբէն Սեւակի յիշատակին դեմ, անհաւատալի հարուած մըն ալ 1950-թ.ներուն, Սովետական Հայաստանի մէջ տրուեցաւ:

Անգիտակից գիտնական մը՝ Ռուբէն Զարեան անունով, երեւանի մէջ [հայ գրականութեան մէջ իր պատճառած վնասները կը մնան անջնջելի] սխալ մը գործեց և երիտասարդ բանաստեղծի մը «Սեւակ» անունը տուաւ: Եւ այս «Նոր Սեւակ»ը փառաբանեցին դաշնակցականները:

Մանաւանդ՝ «Նոր Սեւակ»ին արկածով մահանալէն յետոյ, այս կուսակցութիւնը Սովետական Միութեան դեմ պայքարի նոր պատրուակ մը գտած եղաւ, և իր անփորձութեան պատճառաւ մեքենայի արկածով մահացած «Նոր Սեւակ»ը «ոռւսերը սպաննեցին» ըսելով առասպել մը յօրինեցին և հերոսացուցին դժբախտ գրողը: Իսկական հերոս Ռուբէն Սեւակը գիտակցաբար մոռացութեան ենթարկելէ յետոյ, այս «նոր»ը անիրաւօրէն հերոսացնելին, իրենց շատ տարիներէ ի վեր շարունակուող հայավնաս, իբր թէ «ազգասիրական» քաղաքականութեան նմոյշներէն մէկն է:

Մենք, վերջնականապէս Պոլսէն հեռանալէ յետոյ՝ 1976-էն ի վեր, մեր կարողութեան չափերով աշխատեցանք մոռացութենէն փրկել Ռուբէն Սեւակին յիշատակը:

Եւ մանաւանդ՝ ջանացինք մէջտեղ հանել Ռուբէն Սեւակին՝ հերոս հայրենասէր բանաստեղծին իսկական կերպարը:

Այստեղ երախտագիտական պարտք կը նկատենք շնորհակալութիւն յայտնել՝ Ռ. Սեւակի յիշատակը վառ պահելու աշխատանքները:

րուն սատար հանդիսացողներուն: Մանաւանդ՝ մեր գաղափարակից եղբօր՝ հայրենասէր խմբագրապետ Ժիրայր Նայիրիին: Ռուբէն Սեւակի ծանօթացման աշխատանքներուն մէջ՝ իր կատարած դերը անմոռանալի է:

Կ'ուզենք այստեղ շնորհակալութիւն յայտնել նաեւ, Պէյրութի Սահակեան գոլէնի մէջ, Ռուբէն Սեւակի անուան մատենադարան մը մէջտեղ բերող հայրենասէր բանաստեղծ-մտաւորական պրն. Պէպօ Սիմոնեանին:

Երեւանի մէջ, Ռուբէն Սեւակի մասին հրատարակած բազմաթիւ գիրքերով և գանգաւան ելոյթներով բացառիկ աշխատանք տարած գրականագէտ պրն. Ալեքսանտր Թոփչեանին: Նաև իր ասմունքներով Ռուբէն Սեւակը վերապրեցնող վաստակաւոր արուեստագիտուհի՝ Անահիտ Թոփչեանին:

Նոյնպէս՝ Երեւանի մէջ, Ռուբէն Սեւակի անուան դպրոց մը մէջտեղ բերելու գաղափարը յղացող և ներկայի Ռուբէն Սեւակի անուան դպրոցին տնօրէնուհի տիկին Ճուլիա Ղազարեանին:

Եւ նաեւ՝ հայ մշակոյթի բոլոր այն նուիրեալներուն, որոնք նահատակ բանաստեղծ Ռուբէն Սեւակին յիշատակը պանծացուցին իրենց հրատարակած գիրքերով, ներկայացուցած թատերգութիւններով, յօդուածներով, ռատիոյէ և կամ հեռատեսիլէ ելոյթներով: Խորին յարգանք և շնորհակալութիւն իրենց:

Այստեղ պարտականութիւն կը նկատենք յիշատակել անձնաւորութիւն մը [առանց անունը տալու], որ 1965-թ.ներուն Պոլսոյ մէջ [այո, բրքական լուծին տակ գտնուող Պոլսոյ մէջ] առաջին անգամ ըլլալով, Ռուբէն Սեւակի մասին բանախօսութիւն մը կատարելու բացառիկ քաջութիւնը ցուցաբերած էր: Այս անձը, բառին իսկական իմաստով՝ կը պաշտէր Ռուբէն Սեւակը:

Եւ ան, մինչեւ այսօր ոչ մէկուն կատարած գործը գլուխ հանեց 1975-թ.ներուն, Փարիզի համալսարանին մէջ, հայագէտ փրօֆ. Ֆէյտի ուսուցման տարիներուն, իբր իր դոկտորականի թեզ ներկայացուց շատ լայնածաւալ ուսումնասիրութիւն մը, որուն նիւթն էր՝ «Ռուբէն Սեւակի գրական ստեղծագործութիւնը»:

Դժբախտաբար ըսենք, որ Ռուբէն Սեւակի մասին այս բացառիկ ուսումնասիրութիւնը, զանազան պատճառներով, մինչև օրս չէ հրատարակուած:

* * *

«Նալիբի»ի 1995-ի առաջին թիւերէն սկսեալ ջանացինք, Ռուբէն Սեւակի մասին, մասամբ ալ միայն գիտցած տեղեկութիւնները և եղելութիւնները հրատարակել:

«Նալիբի»ի 1 Յունուար 2003 թուակիր «Բացառիկ»էն սկսեալ ալ, կը ջանանք Ռուբէն Սեւակին կեանքին և նաև ստեղծագործութեան մասին, մինչև հիմա անյայտ մնացած և մեծ մասամբ շատերուն անծանօթ իրողութիւնները հրատարակել:

Այս հրատարակումներուն մէջ կան այնպիսի մանրամասնութիւններ և եղելութիւններ որոնք, իբր Ռուբէն Սեւակի ընտանիքին մաս կազմող մը, միայն մեզի ծանօթ էին:

Եւ հոգեկան մեծ գոհունակութիւն պիտի գգանք, եթէ յաջողինք, ամբողջութեամբ հրատարակել, Ռուբէն Սեւակի մասին ցարդ բոլորովին անծանօթ մնացած տեղեկութիւնները, մեր... անվերադարձ մեկնումէն առաջ:

* * *

«Նալիբի»ի նախորդ [185] հրատարակեցինք Ռ. Սեւակի Զանդըրը-ի քստրավայրին մէջ ապրած հերոսական կեանքի մասին, Միքայէլ Շամտաննեանի, Արամ Անտոնեանի և Բիւզանդ Քէչեանի տուած ականատեսի գարհուրելի, սրտայոյզ վկայութիւնները:

«Նալիբի»ի այս թիւին մէջ [186] ալ պիտի շարունակենք Զանդըրը-ի մէջ Ռուբէն Սեւակին բախտակից, քստրեալ, բայց վերապրող ընկերներուն ականատեսի վկայութիւնները:

ԶԱՆՂԸՐԸ ԱՔՍՈՐՈՒԱԾ ԵՒ ՎԵՐԱՊՐՈՂ ԲԺԻՇԿ ՎԱՀԱՆ ԱԼԹՈՒՆԵԱՆԻ ՎԿԱՅՈՒԹԻՒՆԸ

«ՅԻՇԱՏԱԿՆԵՐ Ռ. ՍԵՒԱԿԻ ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԷՆ»

«Փօսքայի օր» - այդպէս սիրած էինք կոչել շաբթուան այն երկու օրերը, ուր մենք Զանդըրը-ի քստրականներս, տարբեր տրամադրութիւններով արթնցած, արշալոյսին իսկ նամակատուն կը վագէինք, Պոլսէն եկած նամակները վայրկեան մը առաջ լափելու համար: Կ'արժէր տեսնել այդ վայրկեանը, ամէնքս ալ նոյն թղթատարով երկտող մը, յուսադրիչ բառ մը պարունակող գրութիւն մը ունենալ կը յուսայինք, բառեր՝ որոնք կրնային անգուր գրաքննիչին աչքէն վրիպած ըլլալ: Խիստ մեծ կ'ըլլար մեր յուսախաբու-

բիւնը, երբ ցրուիչին ձեռքին մէջ հագիւ 10 նամակ կը տեսնէինք: Նամակները ստանալէ վերջ գունդագունդ կ'երթայինք Հանի Պապային գետեգերեայ և ծառախիտ սրճարանը՝ աքտորեալներու **փօսքի օրուան** մեծ ժամադրավայրը, եկած նամակներու վերլուծումներէն յուսադրուելու համար:

Փօսքայի օր մըն էր. ըստ սովորութեան գետեգրը հաւաքուած էինք: Ոմանք թերթ կը կարդային, ուրիշներ նարտով զբաղած էին, **իսկ մենք, Վարուժանին շուրջը հաւաքուած, թուրք բանաստեղծութեան մասին իր քննադատութիւններուն կ'ունկնդրէինք**: Յանկարծ, աքտորականներու մէջ, ուրախութեան նիչ մը փրթաւ. «Սեւակը, Սեւակը» կը պոռային:

Ընդ առաջ վազեցինք, դեմքերը կը ճառագայթէին, ինքն ալ շատ գուարթ էր: Շատ տարօրինակ բան էր մեր ուրախութիւնը, որովհետեւ լուրջ պատճառ մը չունէինք հրճուելու: Բայց ներքին բնագոյ մը մեզ գուարթ ըլլալու կը մղէր, թերևս Սեւակէն բարի լուրեր առնելու մեծ յոյսն էր իրապէս այդ պատճառը:

Հարցումներու տեղատարափը ատոր ապացոյցն էր: Ու Սեւակ կը սկսի մանրամասնօրէն պատմել իր ձերբակալման ուշանալուն պատճառը, մատնութեամբ միայն ձեռք անցուիլը, Միւտիւրիյէթի մէջ քաշածները, զինուորական հագուստներուն բզքտուելու պարագան և այլն: Ամէնէն տխուր դէպքերն իսկ անփութօրէն և գուարթութեամբ կը նկարագրէր. ասիկա Ջիլիկկիրեանին բնատուր յատկութիւնն էր: Իր համոզումը այն էր, որ մինչև պատերազմին վերջաւորութիւնը մեզ համար Պոլիս դառնալ անկարելի էր, բայց կեանքերն իս վտանգի տակ չէր կրնար ըլլալ, քանի որ գործին մէջ գերմանները կային:

Սեւակի շէնշող և ընկերական ազնիւ բնաւորութիւնը պատճառ եղած էր, որ մենք ալ չբարոյալքուէինք, որով իր իսկ թելադրութեամբ գետեգերեայ պարտեզներու մէջ փոքր պտոյտներ կը կազմակերպէինք. հոն հեքիաթներու մրցումը կը սկսէր և բնականաբար առաջնութիւնը ինքը կը խլէր միշտ:

Գալով Չանդըրըցի թուրքերուն, քիչ առ քիչ սկսած էին Սեւակը աստուածացնել, այնքան շատցած էին հրաշքները, իր բժշկական բարձր կարողութիւնները ի սպաս դրած, անդու անդադար կ'աշխատէր: Դրամը կարեւորութիւն չունէր. «Պէտք է այս մարդիկը երախտապարտ թողունք, որպէսզի չկարենան մեզի չարիք հասց-

նել» կ'ըսէր: Թերեւս իրաւունք ունէր:

Պոլիս վերադարձողներու կծիկը քակուիլ սկսած էր, և ասիկա բարերար նշան մըն էր թէ՛ մեր կեանքերուն պիտի խնայուէին. առաջին խումբին բաժանումը մեր յոյսերը ցնդեցուցած էր. այդ բաժանումը ամենէն յուզիչը, յուսահատեցուցիչը եղաւ. յիսուն երկու ընկերները դէպի Տիարպէքիւր և Տէր Զօր դրկուելու համար մեզմէ կը բաժնէին և այս՝ բնականաբար լաւ նշան մը չէր, մնացեալներս սկսած էինք ահաբեկիլ:

Ջանազան մեկնութիւններ կու տայինք Տէր Զօր դրկուողներու մասին, որոնք պարզ ենթադրութիւններ էին, քանի որ հրամանը ուղղակի կեդրոնէն կու գար: Այդ միջոցներուն Սեւակ սկսած էր տխուր և մտածկոտ ըլլալ. իր զգայուն հոգին ննշող գաղտնիք մը կորցած էր իր շէնշող բնաւորութիւնը մեղամաղձոտ ըրած էր զինքը. գաղտնապահ էր, որով չէինք կրնար հոգիին թափանցել:

1915 Օգոստոսի կիսուն էր: 25 հոգիոց ցանկ մը եկած էր, չորսերնիս Պոլիս պիտի վերադառնայինք, իսկ մնացեալները Տիարպէքիւր պիտի երթային: Յաջորդ առաւօտ խմբովին մեկնիլ ստիպուած էինք, ուստի սկսանք պատրաստուիլ: Նոյն գիշերը Զիլինկիրեանը զիս տեսնելու եկած էր, կ'ուզէր գաղտնի տեսակցութիւն մը ունենալ. հետաքրքրութեամբ կ'ընդունիմ՝ առաջարկը, ուստի դուրս կ'ելլենք բացօդեայ տեղ մը երթալու համար:

- Լաւ մտիկ ըրէ Վահան, - կ'ըսէ ինձ թրթռուն ձայնով մը, - ես մահուան դատապարտուած եմ, ասով հանդերձ կեանքս քու նարպիկութենէդ կախում ունի. աշխատէ՛, որպէսզի ժամ առաջ ազատուիմ...»:

Կը սարսռամ և կակազելով, հազիւ «Ի՞նչ կ'ըսես, տօքթորս» միայն կրնամ ըսել: - Այո, - կը շարունակէ Սեւակ, - կա՛մ պէտք է որ գրական անուանս պէս հոգիս ալ սեւցնեմ և կամ՝ մեռնիմ: Ուխտած եմ, - կը կրկնէ, - մեռնիլ, բայց երբեք հոգիս չսեւցնել: - Բան մը չեմ հասկնար, կը մըմնջեմ ապշահար: «Այո, Վահանս, - կը շարունակէ նա, - բառ առ բառ միտքդ պահէ որպէսզի լաւ հասկցնես: «Հոս, իբրիհատական Չեթէ Բէիսի Արապանը Պաշը ըսուած արարածին աղջիկը անյոյս վիճակի մէջ հիւանդ էր, խնամելու համար զիս կանչեցին. լաւ առիթ մըն էր, այդ կարգի գազան մը ձեռք ձգելու, ուստի ամէն նիգ և ջանք ի գործ դրի աղջիկը ստոյգ մահուանէ մը փրկելու, յաջողութիւնս կատարեալ եղաւ, աղջիկը բուժուած էր:

Ժամանակ մը վերջ այդ մարդակերպ անասունը զիս տուն հրաւիրեց, սենեակին մէջ առանձին էինք. սկսաւ շնորհակալ ըլլալ, և խօսքը շարունակելով ըսաւ. «Աղջկանս կեանքը ինձ շնորհած ըլլալուդ յաւիտեան երախտապարտ եմ, ուստի կը փափաքիմ, որ ես ալ փոխարինեմ. ահա առիթը ներկայացած է: Պոլսոյ կեդրոնը մահուանդ վնիոր արձակած և գործադրութիւնը հոս հրամայուած է: Բայց դուն անհոգ եղիր, քանի որ դուն աղջիկս ազատեցիր, ես քեզ պիտի ազատեմ. միակ մէկ պայմանաւ. այսինքն պէտք է անմիջապէս իսլամանաւ և աղջիկս կնութեան առնես: Արդէն մեղք չէ՞ որ քեզի պէս գեղեցիկ և ֆիտան մէկը կեանք մնայ»: - Բայց պէյ, - ըսի, - ես արդէն ամուսնացած եմ, կինս գերմանուհի է, Ֆօն Տէր Կոլց փաշային թիկնապահներէն գերման սպայի մը քոյրն է, երկու զակի ալ հայր եմ, այդ ինչպէ՞ս կարելի է: - Էն, լաւ, - պատասխանեց անայլայլօրէն, - շատ մեղք պիտի ըլլայ երիտասարդութեանդ, որովհետեւ վստահ եղիր. եթէ նոյնիսկ յաջողիս Պոլիս երթալու հրաման առնել, քաղաքէն դուրս ելլելուդ անպայման պիտի սպաննուիս. ուրեմն, 15 օր միջոց կու տամ, լաւ խորհէ՞»:

Ալ պատասխանել անօգուտ էր. «Շատ լաւ» ըսի ու մեկնեցայ):

Խորհուրդ տուի, որ արժամապէս համակեպի:

Սեւակ ընկնուած էր, բարկացած և սրտնեղած ըլլալը որոշ էր, ինձմէ այդ տեսակ խորհուրդ չէր սպասեր:

Քանի մը օր առաջ, Տիրան Քէլէկեանին ալ խորհուրդ հարցուցած էր. ան ալ, կեանքը ազատելու նպատակաւ, իսլամանալու միջոցը միայն ցոյց տուած էր:

Սակայն ես, ըմբռնելով ձախող դերիս ծանրութիւնը՝ «Իրաւունք ունիս տօքթօրս, - ըսի, - քու զգացումիդ գործը չէ այդ, փակենք այդ խնդիրը և զանք մեր ընելիքին. ըսէ տեսնեմ. ինչպէ՞ս պիտի կարենամ քեզի օգտակար ըլլալ»: Սեւակ հանդարտած էր. «Տղայութիւն պէտք չէ, - ըսաւ: - Պոլիս երթալուդ առաջին գործդ պիտի ըլլայ Բերա ելլել ու Կոմիտաս Վարդապետը առնելով մեզի երթալ. հոն տիկնոջս պատմել ամէն բան, նա գիտէ թէ ուր պիտի դիմէ, ինձի ապահով կերպով ուրիշ տեղ մը փոխադրելու նարը գտնելու, հոգ չէ թէ բանտարկուած և շղթայուած ըլլամ, բաւ է որ սա ննջիչ մ'ընդունեն ազատիմ»:

Իր խնդիրքը առանց յապաղելու կէտ առ կէտ գործադրելու խոս-

տումով, կը համբուրուինք և կը բաժնուինք:

Երկու օրուան ճամբորդութենէ վերջ կը հասնինք Էնկիւրիւ, ուր փոխանակ կայարան առաջնորդուելու, կը բանտարկուինք: Օրեր կ'անցնին. տակաւին Էնկիւրիւ ենք. յոռի նախագագացումներ զիս կը պաշարեն: Սեւակի դէմքը աչքիս առջևէն չի հեռանար. կարծես «խոստմնագանց» ըսել կ'ուզէ. բանտի կեանքը կը սկսի տակաւնտանելի դառնալ. ոնրագործ բանտարկեալները, որոնք թուրքեր են, անպատկառօրէն կը պատմեն, թէ ինչպէս սպաննած են այն հարիւրաւոր հայերը, որոնք այս բանտէն ճամբայ հանուած էին, և կ'առաջարկէին մեր դրամները իրենց տալ, որպէսզի առանց չարչարելու մէկ հարուածով սպաննեն...: Վերջապէս՝ Օգոստոս 30-ի այն չարաշուք օրը, կէս գիշերին, մեր ձեռքերը կապուած հանուեցանք դէպի անձանօթ ուղղութեամբ, մեզի կը հետեւէին ոստիկան զինուորներ և մեր սպաննութեան յատուկ զէնքեր կրող արհաւիրալից կառքեր. մօտաւորապէս 750 հոգի էինք. 18 ժամուան ճամբորդութենէ մը վերջ, հասանք Գարա-Կէտիկ ըսուած գիւղը, ուր Սեւակի սպանման տխուր գոյժին տեղեկացանք:

Չանդըրը-էն Օգոստոս 26-ին Էնկիւրիւ՝ մեզ հետ Գարա-Կէտիկ գտնուող սափրիչն էր, որ մանրամասն կը պատմէր Սեւակի, Վարուժանի և երեք ընկերներուն սպանման պարագաները:

Չէթէ Րէխիսն իր երախտագիտութիւնը յայտնած էր խժոժօրէն սպաննել տալով Սեւակն ու ընկերները:

Ահա այսպէս Սեւակ զոհուելով, իր ուխտը կը կատարէր չսեւցընելու համար իր հոգին:

Յարգանք իր անբիծ հոգիին...»:

Բժիշկ Վահան Ալթունեան - «Հայ բուժակ» Կ. Պոլիս

Խմբագիր՝ բժիշկ Մ. Գարակեօզեան 4, տարի - թիւ 3-4 - Մարտ Ապրիլ 1920:

* * *

Չանդըրը-ի աքսորեալ և վերապրողներէն բժիշկ Վահան Ալթունեանին՝ Ռուբէն Սեւակի մասին ականատեսի այս բացառիկ վկայութիւնը կարդալէ յետոյ՝ չյուզուիլ և ցեղասպան թուրքին դէմ չընդվզիլը անկարելի է.....

«Նայիրի»ի յառաջիկայ թիւերուն մէջ պիտի շարունակենք հրապարակել Չանդըրը աքսորուած և վերապրող հայ մտաւորականներուն, Ռուբէն Սեւակի մասին ականատեսի վկայութիւնները:

ՆԱՀԱՏԱԿ ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿ

**ԵՒ ԻՐԵՆ ԲԱԽՏԱԿԻՑ, ԶԱՆՂԸՐԸ ԱՔՍՈՐՈՒԱԾ ԲԱՅՑ
ՎԵՐԱՊՐՈՂ ԵՐԵՔ ՎԱՐԴԱՊԵՏՆԵՐԸ՝**

- 1.- ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՍՈՂՈՄՈՆԵԱՆ
- 2.- ԳՐԻԳՈՐԻՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՊԱԼԱՔԵԱՆ
- 3.- ՅՈՎՀԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

**24 ԱՊՐԻԼԻ 1915-Ի ԱՔՍՈՐԵԱԼ ԵՐԵՔ ՎԱՐԴԱՊԵՏՆԵՐՈՒՆ
ՈՂԲԵՐԳԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ ԵՒ ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ ՄԱՍԻՆ
ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ**

**ԱՌԱՋԻՆ ԿՐՕՆԱԿԱՆԸ՝ ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՍՈՂՈ-
ՄՈՆԵԱՆ**

Ռուբէն Սեւակի և Կոմիտաս Վարդապետի առաջին հանդիպումը տեղի կ'ունենայ Յունիս 1907-ին, Զուիցերիոյ Լոզան քաղաքին մէջ:



Կը հրապարակենք այս հանդիպումը յաւերժացնող լուսանկարը: Մեծ հաւանականութեամբ՝ այս պատկերը նկարահանուած է Լոզանի պատմական Cathedrale-ին առջեւ, ուր կ'երեւան, ձախէն աջ՝ բժշկական ուսանող Ազատեան, բժշկական ուսանող Ռուբէն Սեւակ, բանաստեղծ Արշակ Զօպանեան, Կոմիտաս Վարդապետ Սողոմոնեան, բժիշկ Ղազարոսեան և դերասան Իբեքեան:

Այս՝ համեմատաբար աւելի խաղաղ օրերէն յետոյ, շատ տառապալից շրջան մը կ'ապրի հայ ազգը: Կու գան սեւ օրեր: Եւ քանի մը տարի յետոյ՝ 1914-ի պատերազմը կը սկսի և կը հասնի դժոխային օրը՝ 24 Ապրիլ 1915-ը:

Կոմիտաս առաջին աքսորեալներուն մէջ է: Կը դրկուի Չանղըրը: Բայց իր դիւրաբեկ մտային կառոյցը չի դիմանար այս չարչարանքի օրերուն:

Իր բարեկամները և համակիրները, Պոլսոյ մէջ կ'աշխատին Կոմիտաս Վարդապետը ազատելու այս դժոխքէն: Եւ Կոմիտաս՝ Մայիսի վերջաւորութեան, Չանղըրըէն ազատ արձակուելով, Պոլիս կը վերադառնայ: Բայց ան, այելեւս «Հին Կոմիտասը» չէ: Մտային խնկարումներու առաջին նշանները սկսած են արդէն:

Մինչ այդ, Ռուբէն Սեւակ ընտանեօք, Յունիս 1914-ի սկիզբները, Լոզանէն Պոլիս կը վերադառնայ: Եւ ի՛նչ չար բախտ՝ քանի մը օր յետոյ, Յունիս 1914-ի վերջաւորութեան, Առաջին Աշխարհամարտը կ'սկսի: Ռուբէն Սեւակ, ստիպողաբար կը գինուորագրուի օսմանեան բանակին մէջ, իբր բժիշկ-հարիւրապետ:

Բայց, 24 Ապրիլ 1915-ի առաջին ձերբակալուողներուն մէջ, Ռուբէն Սեւակը չկայ:

Իր կնոջ գերմանացի ըլլալը և իր օսմանեան բանակի հարիւրապետ-բժիշկ ըլլալը պատճառ եղած են հաւանաբար, իր ձերբակալման ուշացմանը:

Եւ այս յապաղումը Ռուբէն Սեւակ, իրեն համար նուաստացուցիչ պարագայ նկատած է:

Իր մտաւորական ընկերներէն Զիթունիին վկայութիւնը կայ այս մասին.- *«24 Ապրիլ 1915-ի յաջորդող օրերուն, Ռուբէն Սեւակին հանդիպեցայ, Պոլսոյ Պանչէ Գարըլը հրապարակը: Եւ ան ինծի սա խօսքերով իր ցաւը արտայայտեց:*

«Մեզի ամօք չէ՞, որ մենք դեռ հոս ենք»:

* * *

Այստեղ առաջին անգամ ըլլալով կը հրապարակենք, Ռուբէն Սեւակի զաւակներուն մկրտութեան վկայագիրները (տե՛ս էջ 514-իսմբ.):

Մկրտութիւնը կատարուած է Պոլսոյ այն շրջանին Բանկալքի կոչուած բաղամասը գտնուող Սուրբ Լուսաւորիչ եկեղերիին մէջ: [Այս եկեղեցին այսօր գոյութիւն չունի, որովհետեւ 1930-ներուն, բուրքերուն կողմէ, նամբայ բանալու պատրուակով, քանդուած է]:

Մկրտութիւնը կատարուած է 19 Յունիս 1915 թուականին:

Ուշադրութիւն ըրէք մկրտութեան թուականին՝ 24 Ապրիլ 1915-էն գրեթէ 2 ամիսներ յետոյ: Ռուբէն Սեւակ դեռ չէ ձերբակալուած: Եւ ո՞վքեր են կնքահայրները:

Շամիրամին կնքահայրը՝ օսմանեան պետութեան թղթատարութեան նախարար Ռսկան Մարտիկեանն է: Իսկ Լեւոնին կնքահայրը՝ Կոմիտաս Վարդապետ Գեորգեանը [Կոմիտասին հօր անունը Գեորգ էր]:


Կոմիտաս, Չանդըրը-ի դժոխքէն վերադառնալէն յետոյ, ներկայ գտնուած է իր բարեկամ՝ Ռուբէն Սեւակի զաւակներուն մկրտութեան և կնքահայրը եղած է Լեւոնին:

Եւ այդ թուականէն 3 օր ետք, 22 Յունիս 1915-ին, կես գիշերէն յետոյ, բուրք ոստիկանները Ռուբէն Սեւակին Պոլսոյ Բանկալքը նալպանտ փողոցը գտնուող բնակարանը կու գան և զինք կը տանին:

Եւ խելագարած ժաննի Սեւակ, իր ամուսնին տարուելէն անմիջապէս յետոյ՝ 23 Յունիս 1915-ի առաւօտեան ժամը 3:30-ին, Լոզան բնակող իր ընտանիքին ահագանգի հեռագիր մը կ'ուղարկէ.

«Անմիջապէս եկուր, մայրիկ»

ժաննի



Եւ Զուիցերիայէն՝ մայրը շուտով կը հասնի Պոլիս: Եւ իբր գերմանացի, դիմումներ կը կատարէ գերմանական դեսպանատունը, որ մահուրնէ ազատէ իր փեսային: Բայց քիչ ժամանակ յետոյ, կը հասկնայ իրականութիւնը, **գերմանացիները մեղսակից են թուրքերուն, հայերուն դէմ կատարուած ողբերգութիւններուն մէջ:**

Եւ Սեպտեմբեր 1915-ի կեսերուն, զարհուրելի և ահաւոր լուրը կը հասնի: Պոլսոյ գերմանական դեսպանատունը իրենց կը տեղեկացնէ, թէ՛ **«Ռուբէն Սեւակ 26 Օգոստոս 1915-ին, Զանդըրը-ի շուրջ, «աւազակներու» կողմէ սպաննուած է»:**

Եւ տիկին Ապէլ, իր աղջիկը՝ Ժաննին և թոռները՝ Լեւոնը և Շամիրամը առնելով, 16 Սեպտեմբեր 1915-ին Զուիցերիա կը վերադառնայ:

* * *

Մինչ այդ, Կոմիտաս Վարդապետին Պոլսոյ մէջ, մտային վիճակը օրէ օր աւելի կը վատթարանայ:

Եւ զինադադարէն յետոյ՝ 1919-ին Կոմիտաս Վարդապետը, բուժուելու համար, Փարիզ կը փոխադրեն: Եւ ան, Փարիզի հոգեբուժական հիւանդանոցներէն մէկուն մէջ կ'ապրի, աւելի ճիշտ՝ ամէն օր կը «մեռնի» մինչե՛ 1935... Եւ Ժաննի Սեւակն ալ, իր զաւակներուն՝ Լեւոնին և Շամիրամին հետ, մինչեւ 1919 թուականը Լոզան՝ իր ընտանիքին քով կը բնակին:

Յետոյ՝ 1919-ին Ժաննի, իր զաւակները առնելով, Փարիզ կը մեկնի:

Այստեղ պիտի նշենք, Շամիրամ Սեւակի Փարիզի մէջ իրենց ապրած կեանքէն մեզի պատմած շատ տխուր դրուագներէն մէկը. **«1925-թ.ներուն էր: Կիրակի օր մը, մայրս մեզ տարաւ Փարիզի Ժան Կուժոն փողոցը գտնուող հայկական եկեղեցին:**

Մայրս տեղեկացած էր, որ այն Կիրակին Կոմիտաս Վարդապետը եկեղեցի պիտի բերեն:

Պաշտօնեային ըսինք, թէ Կոմիտաս Վարդապետը տեսնել կ'ուզենք: Եւ առաջնորդուեցանք եկեղեցիին յարակից ճիւրասրահը:

Հոն՝ պաշտօնեան մեզ ներկայացուց Կոմիտաս Վարդապետին ըսելով՝ «Հայր Սուրբ, Ռուբէն Սեւակին այրին և երկու զաւակներն են՝ Շամիրամը և Լեւոնը: Լեւոնին ալ կնքահայրն էր եղեր»:

Կոմիտաս Վարդապետ պատասխան չտուաւ: Բան մը չկրցաւ ըսել: Միայն, իր աչքերը մեր վրայ յառած էր, տեսկան:

Այդ ձեւով բաւական երկար և լուռ վայրկեաններ անցան:

Բայց, միջոց մը ետք նկատեցի, որ Կոմիտասին աչքերէն արցունքներ կը հոսէին այտերուն վրայ:

Կոմիտաս Վարդապետին այն օրուան արցունքոտ աչքերը՝ յիշողութեանս մէջ քանդակուած կը մնան»:

* * *

ԵՐԿՐՈՐԴ ԿՐՕՆԱԿԱՆԸ

Ռուբէն Սեւակին բախտակից, Չանդըրը քստորուած, բայց վերապրող՝ Յովհան Մ. Վարդապետ Կարապետեանի վկայութիւնը:

Չանդըրը-ի մէջ Ռուբէն Սեւակի հերոսական [մեր համոզումով] կեանքին մասին, ամենէն իրապաշտ և խորաբափանց վկայութիւնը կատարած է՝ Յովհան Մ. Վրդ. Կարապետեանը:

Հայկականութեան խոր հաւատքով գրուած այս վկայութեան մէջ ան, Ռուբէն Սեւակի մասին, պաշտամունքի հասնող հիացումով կ'արտայայտուի: Եւ Ռուբէն Սեւակը կը նկատէ՝ «Մարմնացումը հայ ցեղին հաւատքի դիւցազնութեան»:

Այս խօսքերով Յ. Կարապետեան Վրդ.-ը, Ռ. Սեւակը կը նոյնացնէ՝ Վարդանանցի հերոսներուն հետ:

Ո՞վ է հայր Յովհան: 1888-ին Պրուսա ծնած, մտաւորական պատուելիի մը գաւակն է, որ Պարտիզակի Ամեր. գոլէնը և Պոլսոյ Ռուպերթ գոլէնը աւարտելէ յետոյ, Ամերիկա կը մեկնի և Գոլումպիայի համալսարանէն M.A. աստիճանով շրջանաւարտ կ'ըլլայ:

Ամերիկայի մէջ, հայ եկեղեցւոյ ծառայելու կոչում գգալով՝ յարանուանափոխ կ'ըլլայ, և 1914-ին էջմիածնի մէջ, Ամենայն Հայոց Կաթողիկոսին կողմէ Աբեղայ կը ձեռնադրուի և յետոյ ալ՝ Վարդապետ:

1914-ին, կը պաշտօնավարէ Պոլիս, իբր Պատրիարքին անձնական քարտուղար:

24 Ապրիլ 1915-ին, թուրք ոստիկանութեան կողմէ կը ձերբակալուի և կ'աքորուի Չանդըրը: Եւ հոն կ'ապրի Ռուբէն Սեւակի և միւս մտաւորականներուն հետ, Եղեռնի ամբողջ արհաւիրքը: Բարեբախտաբար, միջամտութիւններու շնորհիւ, կը փրկուի ստոյգ մահէ:

1918-ին Պոլիս է, և Պատրիարքարանին դիւանապետութեան պաշտօնին կը կոչուի, և յետոյ Իզմիրի առաջնորդական տեղապահի պաշտօնը կ'ստանձնէ:

Քայց բրքական հալածանքը և Եղեռնը կը շարունակուին: Եւ 1921-ին կը մեկնի Ամերիկա և Նիւ Եորքի Ս. Լուսաւորիչ մայր եկեղեցիին մէջ կը քարոզէ:

Աւելի ուշ, պարագաներու բերմամբ, կարգաթող կ'ըլլայ:

Համառօտ ձեւով այս է մեծ մտաւորականին, թունդ հայրենասէր Յովհաննէս Կարապետեանի տառապալից կեանքին պատմութիւնը:

Եւ հիմա կը հրապարակենք իր 21 Յունուար 1922-ին, Ամերիկայի «Հայաստանի կոչնակ»ի մէջ հրատարակուած Ռուբէն Սեւակի մասին վկայութիւնը:

«ԷՋ ՄՐ ԱՔՍՈՐԱԿԱՆԻ ՅԻՇԱՏԱԿՆԵՐԷՍ»

[1915 Ապրիլ - 1918 Նոյեմբեր] «Սեւակի անմահ յիշատակին»

Չանդըրըի հովիտը ոռոգող գետակին եզերքը՝ բարտիներու գծաւոր ստուերին տակ, կը նեմէինք Յուլիսի առաւօտ մը, տօքթ. Ռուբէն Զիլինկիրեան (Սեւակ) ու ես, ըմբոշխնելով անգուգական վայելքները գաղափարային ընկերակցութեան: Խօսակիցս կը վերլուծէր անհրաժեշտ պայմանները ազգային վերածնունդի:

Աքսորական կեանքի ննչող մթնոլորտը՝ իր բոլոր սպառնական երեւոյթներով փայփայած չէր մեր լաւատեսութիւնը: Հակառակ «Իբթիհատի» հայաջինջ քաղաքականութեան արհաւրալից կիրարկումին՝ որու սկսեր էինք տակաւ վերահասու ըլլալ շրջող գրոյցներու և քաղաքական ուրիշ ցուցմունքներու հիման վրայ, երկուքս ալ անխախտ կը պահէինք հաւատքը հայ ապագայի լուսագարդումին: Վայրկեան մը իսկ չէինք տարակուսիր, թէ տիրող նգնածամային կացութիւնը վերջապէս դէպի ազատութիւն պիտի առաջնորդէր ազգը: Կը մնար նոր արշալոյսը ողջունել նոր կենսունակութեամբ:

Քաղաքակիրթ ազգերու շարքին մէջ հայուն գրաւած անվինելի դիրքը աւելի եւս ամրապնդելու և միւս կողմէ դարաւոր բոնակալութեանց ազգային նկարագրին վրայ դրոշմած տխուր հետքերը ջնջելու համար, կ'զգայինք ամենալուրջ գործունէութեան մը պէտքը:

Կը մտածէինք, թէ հայ իրականութեան ամեն խաւերուն և շրջանակներուն մէջ ներարկուելու էր այլևս դարուս ոգին, որպէսզի արդիանար ազգային մտայնութիւնն ու գործելակերպը և միանգամ ընդմիջտ ջախջախուէին կապանքները կոյր աւանդամոլութեան:

Բարեկարգչական ու շինարար այս աշխատութեանց տեսիլը գմեզ կ'ոգեւորէր ծայր աստիճան: Չէ՞ որ, երկուքս ալ նուիրուածներ էինք, նոյն նպատակին ու պատրաստ՝ ամէն զոհողութեան: Ծառայութեան շրջանը անշուշտ պիտի չ'ուշանար: Հայութեան երկնակամարը մթագնող ամպերը պիտի փարատէին վերջապէս, ու զայն արիւնող շանթերն ալ յագուրդ տային իրենց կատաղութեան:

Իրերու բնականոն վիճակը երբ վերահաստատուէր, ասպարէզ պիտի իջնէինք անպայման:

Մեր խօսակցութիւնը հասած էր այս կէտին, երբ տօքթորը յանկարծ լռեց: Հոգեկան խռովք մը նշմարեցի իր ընդհանուր արտայայտութեանը մէջ: Կը դիտէի որ կոկորդին մսանները կուլ տալու ծանօթ պրկումները կը կրկնէին ջղայնաբար:

Ի՞նչ էր այն մտածումը զոր կը վարանէր արտայայտել: Հարցուցի իր յուզման պատճառը:

«Հայր Սուրբ», ըսաւ մեղմ ու խեղդուկ ձայնով. «Ինձ այնպէս կը բուռի, թէ մահը հեռու չէ՛ բնաւ մեզմէ»: Նախագգացո՞ւմ մըն էր արդեօք, որ կ'ունենար: Անմիջապէս կոչում ըրի իր քիչ առաջուան խանդավառ զգացումներուն և ըսի, թէ իրաւունք չունէր յուսահատ ըլլալու:

Մասնաւորապէս ծանրացայ սա տրամաբանութեան վրայ, թէ քանի որ շուրջ քսան տարի պատրաստուէր էինք ծառայելու համար ազգին կամ եկեղեցիին, պէտք էր թոյլատրուիլ մեզ գոնէ քսան ամիս գործել:

Մահուան հանդէպ ունեցած պաղ արիւնս առաւելապէս արդիւնք ըլլալով տեսական հայեցողութեան ու հոգեկան տրամադրութեան՝ դժբախտաբար չէր արդարանար. այնքան մեզ շրջապատող իրերադարձութեանց տեսակէտէն: Ամիսի մը չափ առաջ մեր բախտակիցներէն յիսուն երկու հոգի նամբայ հանուած էին դէպի Տէր Զօր, չափազանց տխուր պարագաներու տակ և արդէն տարածայնութիւնները կը բազմանային իրենց Գաղատիայէ քիչ անդին խժդժալի կոտորման: Ո՞վ կրնար երաշխաւորել թէ յաջորդ առաւօտուն իսկ, նոր ցանկ մը պիտի չի ծանուցանէր Տէր Զօր դրկուելիքներու, որոնց մէջ գտնուէինք նաև երկուքս կամ ուրիշ բախտակիցներ: Ասկէ գատ, քաղաքին թուրք բնակչութեան մտայնութիւնը հետզհետէ կը լարուէր հայերու դէմ, տեղի տալով անար-

գական նորանոր արտայայտութեանց: Տարակոյս չկար, թէ մահուան ու կեանքի մէջ օրօրուելու շրջանն էր այս:

Տօքթօրը կացութեան ծանրութիւնը լրջօրէն ըմբռնած՝ չէր ուզեր բաժնուիլ մահուան տեսիլէն:

- **«Թշուառականները մեզ պիտի սպանեն. բայց մենք պիտի չմեռնինք: Քանզի մեր գաղափարականները մինչեւ վերջը պիտի ապրին:**

Կարելի չէ ջնջել այն ոգին, որ մղեց մեզ Ամերիկայի կամ Զուիցերիոյ հանգիստէն հրաժարելով գալ ու օգնել մեր սիրեցեալ ազգին:

Ես կը հաւատամ, թէ անմահութիւն է ծրարուած զոհաբեր ծառայութեան մէջ»:

Այս բառերը արտասանուեցան ասպետական այնպիսի շեշտով մը, որ յատկանշական էր Սեւակի մշտավառ կորովին: Գաղափարապաշտութիւնը նոր յաղթանակ մը կը տանէր այդ պահուն: Յուզիչ էր մեր տեսակցութեան արդիւնքը:

Մահ կամ կեանք: Որոշած էինք հաւատարիմ մնալ մեր կոչման: Հանդարտութեամբ պիտի սպասէինք անակնկալներու յայտնութեան:

* * *

Աքսորական կեանքը փորձաքար մըն էր արժանիքներու: Ամէն անձ ի յայտ կու գար իսկական իր գոյնով:

Ոմանց համբաւին պատուանդանը կը գայթեր անդարձ, մինչ ուրիշներ նոր կը կերտէին կոթողները առինքնող հիացման: Փոխադարձ գնահատումի այս առիթը կ'առաջնորդէր կազմութեանը բարեկամութեանց լաւագոյններուն: Տառապանքով նուիրագործուած այս եղբայրակցութիւնները տանարներ էին մ'իսիբարութեան ուր հաւատք, յոյս և սէր կը բոցավառէին լուսանաճանչ՝ կարծես իբր հակապատկերներ մ'թնոլորտը պատող անարդարութեան խաւարին:

Քաղցր էր արդարեւ ցորեկը բոլորուիլ ծառերու հովանիին տակ և խրախուսել զիրար: Մինչ գիշերը անքուն ժամեր կ'օգտագործուէին կացութեան մասին անելի լուրջ վերլուծումներով:

Անգամ մը՝ հագիւ շաբաթ մը ետք այն տեսակցութիւնէ որու անդրադարձայ՝ երբ նստած էի Զանդըրըի հանդիպակած բլրակնե-

րուն բացուող պատուհանին առջեւ, ու կը մտածէի զիս կախելու այն սպառնալիքին վրայ որ նոյն առտուն՝ ներկայութեան պարտաւորիչ արձանագրութեան համար ոստիկանատուն գացած միջոցիս ըրած էին շուկային մէջ երկու անգուսպ բուրբեր, յանկարծ սենեակ մտաւ տօքք. Չիլինկիրեան:

Սովորականէն աւելի մոռալ էր կերպարանքը: **«Առաջարկ մը ունիմ ընելիք»** յայտարարեց առանց յառաջընթաց խօսքերու: **«Կը լսեմ, բէ Գաղատիոյ կողմերը իսլամացած են կարգ մը հայեր: Չեմ ուզեր որ մեր ընկերներէն ոեւէ մէկը այդպիսի տկարացում ունենայ ապագայ հաւանական ճնշումներու առջև, ուստի կը բելադրեմ որ դուն, իբր հոգեւորական, կանչես հոս գտնուողները և երդում առնես իւրաքանչիւրէն, բէ հաստատ պիտի պահեն քրիստոնէական հաւատքնին»:**

Ջանացի հանդարտեցնել տօքքօրը և բացատրեցի անպատեհութիւնները որ կային այդօրինակ արարողութեան մէջ, նկատի ունենալով մանաւանդ ժամանակին փափկութիւնը և մեր ընկերները անհարկի յուզման չմատնելու անհրաժեշտութիւնը: Համակերպեցաւ չպնդել իր տեսակետին վրայ. և սակայն, այդ միջադէպը կարծես կանխաձայնութիւն մըն էր մօտալուտ սարսափներու:

* * *

Շատ չանցած՝ կացութիւնը ստացաւ ամենասուր հանգամանք: Փողոցի բուրբ տղաքը լաւագոյն ջերմաչափն էին հայահալած մոլեգնութեան: Լուսանքի սովորական տեղատարափը հիմա կը փոխուէր բիրտ քարկոծման: Կոտորածի նախապատրաստութեան գրոյցներ կ'սկսէին աւելի ազատօրէն շրջիլ: Գիշեր մը, ինքնապաշտպանութեան միջոցներու մասին խորհրդակցելու վրայ էի պ. Տիրան Քէլեկեանի հետ, երբ տօքք. Չիլինկիրեան անակնկալ այցելութիւն մը տալով յայտնեց, բէ եկած էր ծանրակշիռ յայտնութիւններ ընելու: Փոքրիկ կանթեղին աղօտ լոյսը իր տժգունած դեմքին աւելի ամպոտ մէկ կիսաստուերը կը շրջագծէր պատին վրայ:

Պահ մը լռութիւն տիրեց սենեակին մէջ:

Իրարու նայեցանք հոգեկան խոր ներքնաբափանցումներով: Վերջապէս լսեցինք դաւադրութեան մը զարհուրելի նկարագրութիւնը:

Տօքքորին յուզեալ շեշտը դեռ կը հնչէ ականջիս փղձկեցուցիչ հակազդեցութեամբ:

Չանդըրըի մէջ կառապան մը կար, որ ծանօթ էր իբր հեղինակ սանձարձակ արարքներու: «Իթթիհատական» ոճրապարտ խմբակը յանձին իրեն՝ գտած էր հլու գործիք մը գոր կը շոյէր ու կը շփացներ մեծ հեռատեսուութեամբ:

Կառապան Իսմայիլի մէկ աղջիկը վիրաբուժական յաջող գործողութեան մը ենթարկուած էր տօքթ. Բարսեղ Տինանեանի ձեռքով ու վերջինին Պոլիս դառնալէն ետք, հիւանդը փոխանորդաբար կը դարմանուէր տօքթ. Չիլինկիրեանի կողմէ:

Այդ, ըստ վերջինին պատմութեան, նոյն օրը, երբ գացած էր հիւանդին այցելելու, կառապանը յանդգներ էր բանտարկել զինք տան խաւարամած գետնայարկը պահանջելով, որ իսկոյն իսլամանայ: «**Ինձի հայէ, -** պոռացեր է հիւանդը տօքթօրին երեսն ի վեր, - **ձեզ ամենքդ թիւնէյի մէջ պիտի սպաննենք: Քեզ սիրելուս համար կ'ուզեմ կեանքդ փրկել: «Հագգ Տինը» ընդունե՛: Հակառակ պարագային աղէկ գիտցիր, որ կտոր կտոր պիտի ըլլաս»:**

Տօքթօրը, հաւատարիմ իր առջի օրուան ուխտին, արիաբար դիմադրեր էր տրամաբանութեան ուժով: Կառապանին յամառ պնդումը իր աաջարկին անմիջական գործադրութեան մասին մաքառումը երկարեր էր երկու ժամէն աւելի: Ճգնաժամային այս դրութենէն նողոպելու համար, տօքթօրը գաղափարը յղացեր էր առաջարկելու կառապանին, որ թոյլ տայ իրեն քաղաքի զինուորական հրամանատարին հետ տեսակցիլ նոյն ուղղութեամբ: Օձիկը ազատելու այս հնարքը յաջողութեամբ պսակուած՝ ահա՛ եկեր էր ամենուս նակատագրին հետ սերտօրէն կապակցեալ նոր կացութեան վրայ խորհրդակցելու:

Ո՞վ կրնար այլևս անգիտանալ վայրկեանին վնոականութիւնը: Կ'զգայինք, թէ գոյութեան նժարը դէպի գերեզման կը հակեր աւելի քան երբեք:

Ձիրար սրտապնդող մէկ քանի բռների ետք պ. Քէլեկեան յիշեցուց, թէ յաջորդ օրը **Բամազանի Պայրամ** ըլլալով, պատշան էր շնորհաւորական այցելութիւն տալ զինուորական հրամանատարին, և թելադրեց որ տօքթօրն ալ ընկերանայ որպէսզի կառապան Իսմայիլ գէթ պատրանքը ունենայ իր բաղձանքին իրագործման:

Անդրադարձանք նաև Չանդըրըէ փախուստ տալու կարելիութեանց. բայց չյաջողեցանք եզրակացութեան մը յանգիլ: Կար կէտ մը սակայն, որու շուրջ կատարեալ համաձայնութիւն կը տիրէր. եւ

այդ ալ վեր բռնել էր ամէն գնով դրօշը քրիստոնեական հաւատքին: Քէլէկեան խաչակնքեց երկիրաձուքեամբ: **Իսկ Սեւակ իր բռունցքը ցցեց այն «մինարե»ին ուղղութեամբ, որու պատշգամէն խոպոտ ձայն մը կը բարձրանար նոյն պահուն դէպի ալլանն իսլամութեան:**

Յաջորդ Կիրակի առաւօտուն, Չանդըրըի Հայոց փոքրիկ մատուռին հնադարեան կոչնակը աղօթքի իր հրաւերովը մէկտեղ, կարծես ահագանգը կը հնչեցնէր մահուան անխուսափելիութեան: Տեղական փոքրաթիւ հայութիւնը որ ականատես էր եղած Պոլսէն խլուած աքսորական խումբին օրէ օր կոտորակուելուն, կը շարունակէր ջերմեռանդօրէն աղօթել մնացեալներուս փրկութեանը համար:

Քաղաքին օձապտոյտ ու նեղ փողոցներէն լուռ և անշշուկ քալուածքով նոյնպէս դէպի Մատուռ կ'ուղղէինք բախտակից երեսուն և հինգ ընկերներ - վերջին ներկայացուցիչներս Այաշ ու Չանդըրը քշուած երկու հարիւր իննսունի մօտ մտաւորական և եռանդուն հայութեան:

Արհաւիրքը կրօնական եռանդ էր արծարծած ամէն սրտի մէջ: Աւելի հիմնական պատճառը սակայն հրահրուող արթնութեան՝ ազգային բոլոր խաւերու և հոսանքներու մէջ տիրող նշմարիտ եղբայրակցութիւնն էր: Հասարակաց թշնամիին դժոխային դաւերը ջնջած էին ներքին ամէն խտրականութեան: Միասիրտ ու միակամ ինքնապաշտպանութիւն փորձող մեր խումբը բնական կը գտներ իր ներշնչումը քաղել այն եկեղեցիէն, որ խորհրդանշած է միշտ ազգային միութիւնն ու գաղափարապաշտութիւնը:

Չանդըրըի գօրանոցին գետնայարկի մէկ սրահը աղօթավայրի վերածուած էր բանտարկութեան շրջանին: Հոն, ամէն իրիկուն, հանգստեան ժամանակ, «Եկեացե՛»ի պաշտաման կարգը կը կատարուէր ու «Տէր ողորմեա՛» կ'երգուէր անօրինակ ջերմեռանդութեամբ: Իսկ աւելի ետքը քաղաքին անշուք այլ հնաբոյր մատուռը դարձեր էր կիրակնօրեայ հաւաքավայրը իրենց հեռաւոր սիրելիներուն կարօտովը տոչորող ու նահատակութեան սեմին վրայ անյողողող կանգնող նոյն վտարանդի խումբին:

Վերոյիշեալ Կիրակին, Ս. Պատարագի մատուցումը արցունք կը խլէր ամէն աչքերէ:

Մթնոլորտը ելեքտրականացած էր դէպի սպանդանոց առաջնորդուած մեր պատուական ընկերներուն սուգովը:

Կարծես քրիստոնեական հալածանքի առաջին դարերուն մեջ կ'ապրեինք:

Մատուռը իր ցած ձեղունով ու խորհրդաւոր լուսաւորումով գետնադամբանի (Catacombe) տպաւորութիւնը կը թողուր իսկապէս:

Մատուռին յառաջակողմը՝ դասին առջև ասպետական դիրքով կանգնած էր նոյն ինքն տօքթ. Զիլինկիրեան:

Կ'զգայի, թէ ինք, այդ վայրկեանին, կը մարմնացներ մեր ցեղին հաւատքի դիւցազնութիւնը: Երկիւղի նշոյլը անգամ չկար իր առնական դեմքին արտայայտութեանը մէջ: Երբ խորանին վարագոյրը երկրորդ անգամ բացուեցաւ ու սարկաւազը **«Երկիւղիւ և հաւատով յառաջ մատիք և սրբութեամբ հաղորդեցարուք»**ը եղանակեց, Սեւակ առաջինը եղաւ Ս. Հաղորդութիւնը նաշակող:

Զեմ կրնար պահ մը իսկ մտքէս հեռացնել իր այդ օրուան գրաւիչ վեհութիւնը: Կը նմանէր ինք այն յաղթական կաղնիին, որու բունը տապալել կը պատրաստուէին փայտահատներ:

Բայց ինք, անվրդով կը դիտէր ապագան. քանզի իր արմատներուն խորունկութիւնը զուլալ աղբիւրներէ ոռոգուած՝ երաշխիքը կու տար վերստին բողբոջման:

Այսպէս ալ՝ Սեւակ վախ չունէր իր դահիճներէն: Անոնք կրնային իր մարմինը անշնչացնել, բայց իր հոգին յաւիտենական պատգամներ պիտի ունենար հայութեան ականջին հնչեցնելիք:

Յովհան Ծ. Վրդ. Կարապետեան

7 Յունուար 1992, Ամերիկա «Հայաստանի կոչնակ»

[վերջ առաջին մասին]

* * *

Հայեր՝ Հայաստանի մէջ, կամ այլուր, հաւատացեալ կամ անհաւատ հայեր՝

Կրկին ու կրկին կարդացէք Յովհան Ծ. Վրդ. Կարապետեանին Ռուբէն Սեւակի Զանդըրըի աքսորավայրին մէջ հերոսական կեանքի մասին այս բացառիկ վկայութիւնը և նզովեցէք ու կրկին նզովեցէք նահատակ Ռուբէն Սեւակի հոգին սրբապղծող անգիտակից հայերը:

**Եթէ Քիջ ՄԸ «ԱԶԳԱՅԻՆ ՈԳԻ» ՈՒՆԻՔ - ՇԱՏ ԴԻԻՐՈՒ-
ԹԵԱՄԲ ԿԸ ՀԱՍԿՆԱՔ, ԹԷ ԵՐԿՈՒ ՀԱՐԻԻՐ ՏԱՐԻԷ Ի ՎԵՐ, ԵԻ
ՄԻՆՉԵԻ ԱՅՍՕՐ, ԱՆՏԵՍԱՆԵԼԻ ՈՒԺԵՐ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԵՆ,
ՀԱՅ ԱԶԳԻՆ ԳԼԽՈՒՆ, ԴԱԻԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՀԻԻՍԵԼ:**

...Մենք, այս գրութիւններով, կ'աշխատինք մոռացութեան փոշի-
ներուն մէջ մխրնուած հերոսներէն մէկուն՝ Ռուբէն Սեւակին
խակական կերպարը մէջտեղ հանել: «Նայիրի»ի թիւ 187-11 Փետ-
րուար 2003-ի էջերուն մէջ, հրապարակած էինք Յովհան Վարդա-
պետ Կարապետեանին Չանդըրը-ի աքտրականի կեանքին վերաբե-
րեալ բացառիկ յայտնութիւններուն առաջին մասը: Այստեղ կը
հրապարակենք այս զարհուրելի յիշատակութիւններուն վերջին
մասը՝

**«Էջ մը աքտրականի յիշատակներէս - Սեւակի անման յիշա-
տակին»**

Գրեց՝ Յովհան Մ. Վրդ. Կարապետեան

Նոյն գիշեր, պ. Տիրան Քէլեկեան ծալապատիկ նստած էր այն
սենեակը, ուր վեց ամիս միասին ապրեցանք սիրալիր մտերմու-
թեամբ: Առջի շաբթուն յաջողէր էի գաղտնաբար լուր դրկել Պոլիս,
որ եթէ մինչեւ տասը օր կարելի չըլլար Չանդըրը մնացողներու
կեանքը փրկել, մահը անխուսափելի պիտի ըլլար: Մերունագարդ
հայրիկս՝ խորապէս վրդոված հրաժեշտի այդ նամակէս՝ անշուշտ
նորանոր դիմումներ էր կատարած դեսպանատանց մօտ: Ի՞նչ
արդիւնք ձեռք բերուած էր արդեօք: Ա՛յս էր նիւթը, որու մասին կը
խօսակցէինք:

Քէլեկեան չէր ծածկեր իր յոռետեսութիւնը: Դեռ թարմ էր իր
մտքին մէջ այն գաղտնի տեսակցութիւնը գոր մէկ քանի օր առաջ
ունեցեր էր Գասպէմունիի նահանգին պաշտօնանկ կուսակալ
Րէշիտ փաշայի հետ որ իբր Ազատ Որմնադրական ընկեր անվերա-
պահօրէն յայտներ էր երիտասարդ թուրքերու հայ ազգի բնա-
ջնջման ծրագրին մանրամասնութիւնները: Պարզ էր այլեւս, թէ

իւրաքանչիւր քաղաքէ առաջին անգամ քսորուած աչքառու դէմ-
քերը, մահուան դահապարտեալ էին մասնաւոր տոմարով: Ասոնք
պէտք էին բնաջնջուիլ կառավարական խիստ հակակշռի տակ, իսկ
մնացեալ խումբերը դէպի մահ առաջնորդուելու էին ընդհանուր
սարսափներով: Եթէ մեր խումբէն մէկ քանիներ սկիզբը վերադար-
ձուեր էին Պոլիս՝ այդ շնորհը արդիւնք էր մայրաքաղաքի օտար
շրջանակներէ ի գործ դրուած բացառիկ ննշումներու և կարգ մը
անձնական կապակցութեանց: Թէ ի՞նչ փրկութիւն կրնար տակաւին
յուսացուիլ մեզ համար, հայաջինջ քաղաքականութեան ա՛յնքան
յառաջացած ու բորբոքեալ այդ վայրկեանին՝ դժուար էր գուշակել:

Կես գիշերուան մօտ փողոցի դրան մեղմօրէն բախուիլը լսե-
ցինք: Տան մուտքը հաստ գերանով մը ամրացուցած էինք իբր կան-
խագ գուշութիւն: Կը խորհէինք, թէ կոտորածի պարագային երբ
յարձակում գործուէր՝ կրնայինք մինչև դրան բռնաբարուիլը մէկ
երկու վայրկեան շահիլ ետեւի կողմէն փախչելու համար: Անձայն
քայլերով իջանք վար ու հարցուփորձէ ետք ներս ընդունեցինք տե-
ղական հայերէն պատուական բարեկամ մը: - «Ողջո՛յն, խե՛ր
ըլլայ» բառերով դիմաւորեցի զինք: - «Աստուած օգնական» պա-
տասխանեց: - «Աստուած պահապան» յարեցի: Եկեղեցականի ու
աշխարհականի միջև բարեւելու հնադարեան այդ ոճը երբեք
այնքան նշանակալից չէր թուած ինձ, որքան արհաւիրքի այդ երե-
կոն: Սովորական ժամանակ կուսակրօն եկեղեցականին ուղղուած
«Աստուած օգնական»ը իմաստը ունի գօրութիւն հայցելու, որպէս
զի կարելի ըլլայ ստանձնուած լուծը համբերութեամբ տարուիլ:
Այդ իրիկուան նոյն մաղթանքը կը թուէր մէկ կողմէ կոչը ըլլալ
գերբնական միջամտութեան և միւս կողմէ ծաղրը կարծես անել
մեր դրութեան:

Բարեկամնիս եկած էր իմացնելու, թէ քաղած ստոյգ տեղեկու-
թեան համաձայն, քաղաքին ոստիկանապետը ծածկագիր հեռագիր
մը ստացեր էր Պոլիսէն՝ քսորականներուս վերաբերմամբ: Այդ
տեսակ հեռագիրներ շատ էին հասած անցեալին մէջ, կորզելու
համար մեր խումբէն ընտրելագոյն տարրեր և առաջնորդելու
զանոնք դէպի սպանդանոց: Ի՞նչ անակնկալ կ'սպասէր մեզ արդեօք
առաւօտուն: Անկարելի էր չի վրդովուիլ: Անքուն գիշերներու
շարքին վրայ հատ մըն ալ կու գար աւելնալ: Յուզումը լուրթեան
կը դատապարտէր զմեզ: Խոհեմութիւն կը սեպէինք նրագն ալ

մարել: Մութին մէջ կը նստեինք անշարժ ու տեսակ մը ֆիզիքական անեացումով ազատագոյն թոխչք կը պարգեւուէր մեր հոգեկան վերացումներուն: Բոլորովին լքուած չէինք զգար սակայն ինքզինքնիս - մանաւանդ երբ կարեկցութեամբ թրթռուն մէկ քանի աստղեր իրենց շողը կը կաթեցնէին մեր պատուհանէ ներս:

* * *

Երկուշաբթի առաւօտ ոստիկաններ շրջանը կ'ընէին քստորականներէս բնակուած տուններուն՝ իւրաքանչիւր կառավարչատուն հրաւիրելու համար: Պոլսէն յատկապէս դրկուած ճիւղներ էին ասոնք, Չանղըրը-ի մթնոլորտը թունաւորող: Հայոց դէմ կը հայհոյէին շարունակ որպէս դաւաճաններու և պատճառ կը դառնային անվերջ գրգռութեանց: Այդ օրը սակայն, երեսնին ժպտուն էր աւելի: Ջրոյց մը կը շրջէր, թէ ազատութիւն պարգեւուած էր մեզ քստորի կաշկանդումէն: Ոստիկաններու զուարթութիւնը չէր կրնար անշուշտ ատկէ պատճառուած ըլլալ: Ի՞նչ նոր դաւադրութիւն թաքնուած էր արդեօք իրենց գոհունակութեան ետեւ: Վերջապէս ուղղութեանք դէպի կառավարչատուն ուր ոստիկանապետը Պոլսէն հեռագրուած անուանացանկ մը կարդալէ ետք հանդիսաւորապէս ծանոյց, թէ բարեխնամ (°) կառավարութիւնը ներում շնորհած է այդ անձներուն արտօնելով, որ Պոլսէն զատ Թուրքիոյ ուզած քաղաքնին երբան ու բնակին: Աւանդական «**ալլան Էօմիւրլէր վերսին**»ը ստիպուած էինք արտասանել՝ մտովի գայն վերածելով անշուշտ «**ալլան Էօլիւմէր վերսին**»ի:

Կարդացուած անունները՝ հոն գտնուողներուս համեմատ՝ երեսուն և հինգ էին թուով, բայց հինգ անունի սխալով մը կը յիշատակուէին նախապէս Պոլիս վերադարձուած ընկերներ՝ մինչ մեր մէջէն բացը կը մնային Դանիէլ Վարուժան, տօքթ. Ռուբէն Զիլինկիրեան, Վահան Քեհեաեան, Օննիկ Մաղազանեան և Յարութիւն անուն հացագործ մը: Իսկոյն խնդրեցինք ոստիկանապետէն, որպէս զի բարեհաճի թիւրիմացութիւնը հարթել, հարկ եղածը Պոլիս տեղեկագրելով: Վստահ էինք, թէ վերոյիշեալ հինգըն ալ պիտի կարենային ազատիլ մեզի հետ: Բայց չարասիրտ պաշտօնեան, որ լաւ գիտէր շնորհուած ներումին (°) իսկական իմաստը, ստիպուած կ'զգար տարբեր ընթացքի հետեւիլ:

Հոս, միջանկեալ ըլլալով պէտք է յիշել, թէ հօրս դիմումներուն

վրայ, դեսպան Մօրկընթաւ փութացեր էր Թալէադի մօտ և պնդելով թէ Չանդըրը անմեղ հայեր կան գթութեան արժանի՝ պահանջեր էր ազատ արձակել զանոնք: Ջարդարար գազանը մերժեր էր Պոլիս վերադարձնել մեր խումբը, բայց խաբեպատիր գիշողութիւնն էր ըրեր արտօնելու՝ Թուրքիոյ մէջ մեր բնակավայրը ընտրել **այլուր**: Առերեւոյթ բարեացակամութիւն ցոլացնող այս թոյլտուութիւնը դիւային միջոց մըն էր մեր բնաջնջումը փութացնելու: Հրոսակներ պատրաստ էին ամէն ճամբու վրայ:

Ո՞ր հայը կրնար որևէ միջոց կտրել այդ օրերուն, առանց դէպի մահ խիզախելու: Արդ, Չանդըրը-ի ոստիկանապետը ստոյգ կը նկատէր ներման արժանացողներու մահացումը: Կը խորհէր թէ մենք, տեղւոյն ննչիչ մթնոլորտէն զգուած պիտի անապարէինք հեռանալ դէպի երկաթուղւոյ գիծը կամ ծովեզերք: Իր արբանեակներէն շատեր կը մօտենային մեզի ու կը թելադրէին որ մեկնինք: Գալով այն հինգին որ ստիպուած կ'ըլլային Չանդըրը մնալ ու այդպէսով թերեւս փրկուիլ, հարկ էր զանոնք ալ տեղափոխելու նարը գտնել:

Ոստիկանապետը իր դաւը լարեց ու յաջողեցաւ Պոլսէն նոր հրահանգ մը բերել տալ Սեւակի և ընկերներուն իբր բանտարկեալ Այաշ փոխադրումը հրամայող: Նոյն օրը ես ալ խիստ նշանակալից նամակ մը ստացայ հօրմէս, որ ըստ ժամանակի պահանջին թուրքերէն գրուած էր ու հակառակ գրաքննուած ըլլալուն զինուորական իշխանութեան կողմէ՝ կը պարունակէր հետեւեալ պարբերութիւնը.- «Զմիւռնիա երթալու մասին **ճամբան Ապահովեան էֆենտի**ի հետ տեսակցիլդ կը յանձնարարեմ, եթէ յիշեալ պարոնը պատշան նկատէ կրնաս մեկնիլ»: Այս հաղորդագրութիւնը կը փորձէր վնասպէս հասկցնել կեղծ ներումէն չօգտուելու անհրաժեշտութիւնը: Երեսուն ընկերներ կրնային թերեւս հիւանդութիւն պատճառաբանելով ատեն մըն ալ հոն մնալ կամ նոյն իսկ Չանդըրըն բնակավայր ընտրել շնորհուած արտօնութենէն օգտուելով:

Բայց Սեւակի, Վարուժանի և միւս երեքին պարագան հիմա կը տարբերէր: Մեկնումը ստիպողական էր հռչակուած: Դժուարաւ յաջողեցանք մէկ ու կէս օրուան յետաձգում ձեռք բերել: Քաղաքային կառավարիչի տեղապահը իր զինուորական պատիւին վրայ կ'երդնուր ճամբաներու ապահովութիւնը: Կը պատահէր, որ այս հաւաստումէն միամտաբար քաջալերուէին ուրը ազատ ընկերներ և իրենք ալ վարձէին երկու կառք, ընկերանալու համար մինչև

Գաղատիա՝ Սեւակի խումբին: Մեկնումի պատրաստութիւնները մինչ կը տեսնուէին, Սեւակ կու գար խնդրել ինձմէ որ Աստուածաշունչ Մատեան մը հայթայթեմ իրեն համար: Անմահութեան ծարաւի իր հոգին կը փափաքէր աստուածային նշմարտութեանց լոյսին մէջ թեւածել: Միակ նմոյշը որ քովս ունէի յանձնեցի իրեն: Յայտնեց, թէ ծայրէ ծայր պիտի կարդար զայն:

* * *

1915, Օգոստոս 13-ը որ Հինգշաբթիի կը զուգադիպէր, չարաբաստիկ ու եղբրական շունչով էր տոգորուած: Առջի գիշերը յատկանշուեցաւ անազոյցիկ երազներով որոնք խռովեցին շատերուս քունը և քանիցս արթնցուցին զմեզ ընդոստ: Կէս գիշերին՝ մեր տան աքաղաղը երեք անգամ իր ձայնը հնչեցուց չարագուշակ ոգիի դերը կատարելով կարծես: Արշալոյսը կը յամենար խաւարը փարատել: Արդեօք կ'ամչնա՞ր լոյսով ողողել ոճրաբեմը ուր հաննաբներ պիտի խողխողուէին ու նահատակութեան հսկայ կոթող մը պիտի բարձրանայ իբր յաւիտենական բողոք ընդդէմ թուրք բարբարոսութեան:

Մութնալուսուն արդէն հաւաքուած էինք Չանդըրը-ի կամուրջին գլուխը ողջերք մաղթելու համար մեր տարաբաղդ ընկերներուն: Կառավարութիւնը երկու կառք պատրաստած էր Սեւակի խումբին համար ու մէկ մէկ ալ պահակ նշանակած: Միւս ութը ընկերները յունախաբ եղան իրենց վարձած կառքերէն մէկուն չերեւնալովը ու վերջին պահուն ստիպուեցան նամբորդութիւննին յետածգել: Դժուար կ'ըլլար սակայն Այաշ մեկնող հինգ ընկերներէն բաժնուիլ: Ողջագուրութեանց կրկնակի համբոյրներով: Ոստիկանները վերջապէս հրամայեցին մէկդի քաշուիլ: Կառքերը անցան նակատագրային կամուրջէն ուղղուելու համար դէպի Թիւնէյ... Մահուան արշաւանքն էր այս:

* * *

Օրը տարածամած էր արդէն ու բուեր կ'սկսէին երգիքներու վրայ թառիլ ու մերք մթնոլորտը վրդովել մահերգակ շեշտերով երբ երկու ծանօթ կառքեր մուտք կը գործին Չանդըրը-ի շուկան... իրենց առաւօտեան նամբորդներէն պարպուած: Ո՛ր էին հայ հաննարի, ազգասիրութեան և հաւատքի մարմնացումները որոնց

նակտին մեր դրոշմած համբոյրները դեռ կորուսած ըլլալու չէին իրենց ջերմութիւնը: Սարսուռը որ կ'անցնէր իւրաքանչիւրիս մարմինէն բաւական էր կաթուածահար ընելու ամէնքս:

Կառապաններէն մէկը կը յանդգներ ահաւոր գաղտնիքը յայտնել նկարագրելով, թէ ինչպէս Թիւնէյ հասած էին անվտանգ ու տեղւոյն պահականոցը նաշելէ ետք, կրկին նամբայ ելած: Հինգ վայրկեան ետք **Թէքէ Պուրնույի քարձունքին վրայ** դիմաւորուած էին դաշոյններով միայն գինուած տասը հոգինոց հրոսակախումբէ: Կառապանները ձիերը մտրակեր ու սպառնացող վտանգէ ազատիլ էին փորձեր յաջողութեան ամէն յոյսով: **Տարագրուող մեր ընկերներու ապահովութեան պատասխանատու ոստիկանը բռնութեամբ կեցուցեր էր կառքերուն սլացքը:** Երբ միւս պահակը ուզեր էր գէնքի դիմելով կացութիւնը փրկել, առաջին սրիկան արգիլեր էր զայն խստիւ: Յետոյ վար էր իջեր կառքէն ու պահանջեր՝ որ դրամնին յանձնեն: Եօթանասուն հնչիւն ոսկի գրպանելէ ետք **«Գաթլընըզա ֆերման վար»** [Ջարդուելնուդ հրովարտակը ելած է] ըսելով հրամայեր էր դահիճներուն որ մօտակայ ձորակը իջեցնեն հինգ ընկերները ու մահացնեն զանոնք...:

Նոյն գիշերն իսկ՝ այս ամէնը պատմող կառապանը սաստկապէս կը ծեծուէր ոստիկաններու կողմէ իր անգաղտնապահութեան համար: Բայց եղեռնին մանրամասնութիւնները շուտով կը տարածայնուէին. մատնելով զմեզ հոգեկան աննկարագրելի կսկիծի: **Թիւնէյի պահականոցը նոյն միջոցին գործող Յակոբ անուն ծեփարարի մը գաղտնի վկայութեամբ, ռեիդէն օր մը առաջ կառապան Իսմայիլ Թիւնէյ ժամաներ էր Չանդըրըի ոստիկան-գինուորներու վատահամբաւ հրամանատարին՝ Իթթիհատի շնական ներկայացուցչին և տիրահռչակ ոստիկանապետին կողմէ ու մօտակայ գիւղ մը երթալով հաւաքեր էր տասը հրոսակ:** Ասոնց գլխաւորն էր Ալօ անուն աւագակապետը: Ասոնք նստեր էին մարգագետնին վրայ ու ծրագրեր ամբողջ սպանողը: Յետոյ գացեր էին ընտրել բուն վայրը ուր ռեիդը պիտի գործադրուէր:

Սպանութեան օրը Իսմայիլ հանդիսատես էր եղեր նախնիրին՝ Սեւակի նախապէս ըրած սպառնալիքը գործադրած ըլլալու գոհունակութեամբ: Նոյն կէսօրէն ետք ոստիկան-գինուորներու **«Քէմիլ գըրան»** [ոսկոր կոտորող] մականուանեալ հրամանատարը **«իճրա՛ ար վուգու պուլտո՛ւ մը»** [գործադրուեցա՛ւ] հեռաձայներ

եր Թիւնէյի պահականոցը: Ասկէ գատ ապացոյցը կար **թէ չորս կառքերու Թիւնէյէ անցնելիքը տեղեկացուած էր հրոսակներուն.** քանզի առաջին երկուքին հաշիւը մաքրելէ ետք սպասեր էին ուրիշ երկու կառքի եւս որոնք նոյն օրը նամբորդել մտադրող բայց գրեթէ հրաշքով ետ մնացող մեր ութը ընկերները պիտի բերէին: Ասոնց չի գալովը **հրոսակները սխալմամբ յարձակեր էին նոյն նամբէն անցնող երկու բուրովին ուրիշ կառքերու վրայ, ուր վեց յոյն և երկու հայ նորագիր զինուորներ կային, և խողխողեր գանոնք:**

* * *

Սարսափը զոր ապրեցանք՝ չարաչար հիւծեց մեր մարմինը: Ի՞նչպէս կարելի էր մարսել Վարուժանի և Սեւակի պէս տաղանդներու այնքան անարժան և ստոր թուրքերու կողմէ վատաբար բնաջնջուելուն գաղափարը: Բոլոր նահատակուողները տիպարներ էին հայ արժանիքի: Սուգը կ'ընկներ մեզ ծայր աստիճան և արդար ընդվզումը վրէժ կը գոռար մեր ներսիդին: Մինչև ե՞րբ քաղաքակիրք (°) աշխարհը պիտի հանդուրժէր թուրք բարբարոսութեան անգուսպ պոռկուումին: Գործուած նախնիները բաւական էին քարերն իսկ ցնցելու:

Ոնիրին գիշերը երկրաշարժի ցնցում մը զգացուեցաւ և յաջորդ օրը զրոյցը լսեցինք, թէ «լոյս էր իջեր» նահատակուողներուն վրայ: Աստուածային ցասումի և օրհնութեան այս կրկնակ «նշան»ները պահ մը խուճապի մատնեցին Չանդըրը-ի մոլեռանդ իսլամները: Արդիւնքը այն եղաւ, որ խստութիւնները քիչ մը մեղմացուին: Բայց շատ չանցած՝ Գաղատիոյ **հայակեր կուսակալի փոխանորդ Աթըֆը Գասթէմունի կը փոխադրուէր** պաշտօնի բարձրացումով իբր լիազօր կուսակալ: Քեյէկեան կը քշուէր դէպի Սեբաստիա: Կ'սկսէինք երկու սուրի մէջտեղ տուայտիլ: Ճամբորդելը վտանգաւոր, հոն մնալը՝ աղէտալի:

Վարուժանի և Սեւակի նահատակութենէն երկուք ու կէս ամիս ետք. ստիպուեցայ նամբորդել դէպի Գաղատիա: Անցայ Թիւնէյէն ու Թէքէ Պուրնույէն: Իջայ ձորակը որու մէկ կողմը սեզեր կ'անէին և միւս կողմը փոքրիկ աւազան մըն էր գոյացած: Տեսայ քիչ անդին կիսաբաղ ոսկորները մեր հերոսներուն: Գլխաբաց կանգնեցայ անոնց առջև և արտասանեցի «Հոգւոց» աղօթքը: Յօշոտուած մարմիններ էին ատոնք: Կը թուէր. թէ վայրագ գազանները յաջողեր

էին մահացնել Սեւակն ու Վարուժանը: Բայց այսօր անոնք և ընկերները կ'ապրին տակաւին իրենց արտադրութիւններով ու բողուած անջինջ տպաւորութիւններով: Հայու հոգին յաւիտենապէս պիտի ներշնչուի իրենց գաղափարականներով ու դիւցազնական օրինակով: Հայաստանեայց եկեղեցին այս նոր մարտիրոսներու խանդովը հրդեհուած պիտի անշուշտ չուշանայ իր վերածնունդը ունենալ:

Ե՞րբ արդեօք կարելի պիտի ըլլայ. այդ նահատակներուն նուիրական նշխարները փոխադրել Հայաստան ու անոնց վրայ կանգնել տանար մը, ուրկէ մշտատեւօրէն ճառագայթեն այն լուսաւոր սկզբունքները որոնց համար իրենք զոհուեցան:

Յովհան Ծ. Վրդ. Կարապետեան
«Հայաստանի կոչնակ» քիւ 3 - 21 Յունուար 1922 ԱՄՆ

* * *

Այսպէս կ'աւարտի Յովհան Ծ. Վրդ. Կարապետեանին Չանդրըրի քսոտրավայրին մէջ, Ռուբէն Սեւակի հետ ապրած դժոխսային օրերուն պատմութիւնը:

Մենք, խոր երախտագիտութեամբ կը խոնարհինք, այս մեծահոգի և հայրենասէր հայուն յիշատակին առջև, որ այսքան ճշգրտութեամբ և նոյն ատեն զգայականութեամբ, պատմութեան էջերուն անցուցած է 24 Ապրիլի 1915-ի եղեռնը:

Հայ ժողովուրդը, Հայաստանի և Սփիւռքի մէջ, ամէն 24 Ապրիլին կը յիշատակէ այս զարհուրելի թուականը:

Բայց, հայ ժողովուրդին մեծամասնութիւնը, ի՞նչ գիտէ 24 Ապրիլ 1915-ի մասին:

24 Ապրիլ 1915-ը այլեւս աւանդութիւն դարձած սուգի օր մըն է. և՛ ա՛յդքան:

Քանի՞ հոգի տեղեակ է, 24 Ապրիլ 1915-ի մասին, Միքայել Շամտաննեանին, բժիշկ Վահան Ալթունեանին և մասնաւորապէս Յովհան Ծ. Վրդ. Կարապետեանին պատմածներուն: Քալով, Չանդրըրէ վերապրող վարդապետներէն՝ Գրիգորիս Վրդ. Պալաքեանին յուշերուն՝ շատ մը տեղեր անկատար և ինքնագովութեամբ լեցուն պատմութիւն մըն է անորը:

Զարմանալի է, որ հայ ժողովուրդին բաղդատաբար աւելի ծա-

նօթ են Պալաքեան Վարդապետին արտրականի յուշերը:

Ասոր պատճառները հետեւեալ ձեւով կրնանք բացատրել: Առաջինը՝ Պալաքեան Վարդապետին յուշերը գիրքի վերածուած են:

Երկրորդը և մեզի համար ամենէն կարեւոր պատճառը՝ Պալաքեան Վարդապետին դաշնակցականներուն համակիր կրօնական մը ըլլալն է...: Գ. Վրդ. Պալաքեանին Չանդըրը-ի յուշերը և անոր մասին մեր խորհրդածութիւնները՝ «Նայիրի»ի յառաջիկայ բիւերուն մէջ տալու պիտի ջանանք:

**ԴԸՐԱ՛Մ, ՈՐՈՒՆ ԼՈՒՌ ԾՈԼՔԻՆ ՄԷՋ Կ՛ԱՐԾԱՐԾԻ
ՃԱԿԱՏԱԳԻՐԸ ՏԱՌԱՊՈՂ ՄԱՐԴԿՈՒԹԵԱՆ, ԸՍԷ՛, ՔՈՒ
ԿԱՄՔԴ ՊԻՏԻ ԻՇԽԷ՞ ՅԱԻՏՅԱՆ.**

«ԴՐԱՄԻՆ ԱՂՕԹՔԸ», 1907 ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿ

... Ռուբէն Սեւակ դեռ 1907-ին, երբ 22 տարեկան էր, Ջուիցերիոյ Լոզան քաղաքին մէջ ուսանողութեան տարիներուն, շատ լաւ հասկցած էր դրամին աղէտալի դերը՝ մարդկութեան վրայ:

Անոր 1907-ին գրած **«Դրամին աղօթքը»** բանաստեղծութիւնը սառ ապացոյցն է:

... «Դըրա՛մ, որուն լուռ ցոլքին մէջ կ'արծարծի

Ճակատագիրը տառապող մարդկութեան

Ըսէ՛, քու կամքդ պիտի իշխէ՞ յաւիտեան»:

Ուրեմն մենք ալ, Ռուբէն Սեւակի հետեւողութեամբ հարցնենք.

**«Սիռնիստներ, «Ձեր դրամին» կատարած չարիքը մինչեւ ե՞րբ
պիտի տեսէ»:**

Ռուբէն Սեւակի բանաստեղծութիւններուն մէջ, մեզի համար բացառիկ կարեւորութիւն ունեցող ուրիշ մաս մըն ալ կայ, որ երբեք չի յիշատակուիր և այս մասը ընդհանրապէս զանց կ'առնուի. այն ալ Ռ. Սեւակին 1910-ին հրատարակուած «Կարմիր գիրք»ին **«Ջարդին խենթը»** մենախօսութիւնն է, որուն մէջ ան, հայկական ջարդերուն իբր պատասխանատու կ'ամբաստանէ՝ **Եւրոպացիները:**

«Ձեզի, որ քերծուած մեր մորթերէն ձի՛գ

Հարսնիքի, մեղքի վրաններ կառուցիք...

Ու ձեզ Եւրոպեան դիք որ շնագիւն

Սակարկեցիք մեր արեան լուրթեան գին...»:

Խե՛ղն Ռուբէն Սեւակ. դուն, բանաստեղծութիւններովդ, գրու-
թիւններովդ և «Իմացեալ նահատակութիւն»ովդ ապացուցանեցիր,

քե Վարդանանցի հերոսներուն շառաւիղն ես:

Բայց սիոնիստներուն ծառաները եղող հայ կուսակցութեան ղեկավարները քեզ մոռացութեան մէջ պահեցին:

Որովհետեւ 1915-ին, Պոլսոյ ոստիկանապետ Պետրի պէյին ըսածին պէս, սիոնիստներուն հայ ծառաներն ալ գիտէին քե՛՝ **«Դուն. քու գրութիւններովդ, քու գաղափարներովդ՝ ժողովուրդը կրնայիր ստքի հանել»:**

«Նայիրի»ի 2003-ի առաջին քիւերէն սկսեալ տալու ջանացիք 1915. Չանդըրը-ի դժոխքէն վերապրածներէն՝ մասնաւորապէս՝ Միքայել Շամտանեանին. բժիշկ Վահան Ալթունեանին և Յովհան Ծ. Վարդապետ Կարապետեանին ականատեսի վկայութիւնները, որոնք մանրամասնութիւններով կը պատմէին Ռուբէն Սեւակի Չանդըրը-ի հերոսական կեանքը:

Հիմա ալ տալու պիտի ջանանք, Չանդըրը-ի վերապրող աքսորեալներէն՝ Գրիգորիս Ծ. Վարդապետ Պալաքեանի ականատեսի վկայութիւնները:

Պալաքեան վարդապետ [յետոյ եպիսկոպոս] դաշնակցականներուն համակիր կրօնական մը եղած է: Եւ շատ զարմանալի է, որ Պալաքեան, իր յուշագրութեան մէջ. բնաւ չ'անդրադառնար Շամտանեանին. բժիշկ Ալթունեանին և Յովհան Վրդ. Կարապետեանին Ռուբէն Սեւակին Չանդըրը-ի մէջ ցուցաբերած հերոսական կեցուածքին մասին:

Ահա. Գրիգոր Վրդ. Պալաքեանին «Հայ Գողգոթան» գիրքին մէջ, Ռուբէն Սեւակի մասին վկայութիւնը. «... Հակառակ անոր՝ որ մեր կամքին ձգուած էր Չանդըրը մնալու կամ՝ Պոլսէն գատ մեր յարմար դատած գաւառական քաղաք մը երթալու պարագան. սակայն յուզումով կը տեսնէինք, որ մեզ Պոլսէն ընկերացող սելանիկցի ոստիկանապետն ու ոստիկաններ, կը ստիպէին մեզ որ մենք, ամէնքս ալ պատրաստուինք անպատնառ. 2 օրուան մէջ, մեկնելու Չանդըրը-էն:

Միւս կողմէն մեզ խուճապի մատնող մեկ պարագան ալ սա էր. որ մեր ընկերներէն 5 հոգի, և անոնց մէջ ըլլալով ողբացեալ Դանիէլ Վարուժան և տօքթ. Զիլինկիրեան [Սեւակ] կառավարական հրամանով բռնադատուած էին անմիջապէս մեկնելու Էնկիւրիի ճամբով՝ Այաշ: Այս դժբախտ հանգամանքն ալ մեզ կը տագնապեցներ. որովհետեւ ալ հասկցած էինք, քէ Այաշ դրկել ինչ ըսել էր...:

Ո՛հ, յաւետ անմոռանալի 1915 Օգոստոս 12-ի Հինգշաբթի, ան սեւ օրուան լուսնշաղիւն էր, որ Չանդըրըի մնացորդ քստրական 18 ընկերներ կը հաւաքուէինք գետափի սրճարանի կամուրջին մօտ սպասող երկու կառքերուն առջեւ: Այս այն կամուրջն էր, ուրկէ Չանդըրըի-էն էնկիւրի մեկնողներն անպատճառ պէտք է անցնէին. զի համբան ասկէ կ'երկարէր, Փալայնըքի վրայով դէպի էնկիւրի:

Չափազանց յուզուած էինք ամէնքս ալ, արիւն կը վազէր մեր սրտերէն, և հակառակ մեր ջանքերուն, անկարող էինք զսպելու մեր արցունքներն:

Մահուան սարսուռ մը կը պարուրէր մեզ. կը տանջէր մեր միտքն, կը լլկէր մեր արդէն տառապահիւժ հոգիները, քանի կը տեսնէինք ողբն ու կոծն մեր յաւետ ողբացեալ ընկերներուն՝ Վարուժանի, Սեւակի, Օննիկ Մաղազանեանի և 2 ընկերներուն:

Ոչ մէկ ատեն հանդիպած էի այսքան կենդանի բնագոյի... կ'ըսէին մեզի՝ **«Մնաք բարով... մենք մեռնելու կ'երթանք, հայրսուրբներ, աղօթեցէք մեզի համար...»** Եւ երբ, տարաբախտ Վարուժան և Սեւակ դառնալով կ'ըսէին մեզի թէ՝ **«Մեր որբերուն տէր եղէք և...»** և երբ, Վարուժան ի մասնաւորի կ'ըսէր, թէ **«Նոր զաւակ մը ունեցած եմ, թող անունը Վարուժան դնեն...»** ա՛լ մեր ամէնքին յուզումը չափ ու սահման չունէր և մեր միտքերը չէին գործէր, որ միտքարուրթեան երկու խօսք ըսէինք եղկելիներուն...:

Անգամ մըն ալ կ'ողջագուրուէինք մեր ողբացեալ հինգ ընկերներուն հետ, ու երկու կառքերը ընդ հսկողութեամբ սելանիկցի մէկ ոստիկանի և մէկ ոստիկան գինուորի՝ հուսկ ուրեմն կը հեռանային մեր տեսողութենէն: Լուսնշաղիւն դեռ փարատելի չկրցած մթութեան մէջէն՝ մինչ մեր ակնարկները դեռ չէին բաժնուեր իրարմէ, զի մեր ամէնքին հոգիներն կը վկայէին, թէ վերջին անգամ էր որ կը խաչածելէին մեր ակնարկներն...:

Յաջորդ օրը՝ 1915 Օգոստոս 13-ի օրին այցելութեան կուգային ինձ, վերապրող Յովհան վարդապետ և ողբացեալ Տիրան Քէլէկեան և մահնիս հանդիպակաց բազմոցի վրայ նստելով ոչինչ կ'ուզէին խօսիլ: Սակայն իրենց տժգոյն և թախծոտ կերպարանքն արդէն կը մատնէր իրենց ներքին մահաբոյր փոթորիկը, և վերջապէս անհամբեր շարժառիթը ժամ առաջ իմանալու բնական հետաքրքրութեամբ. հագիւ լուրիւնը խզած և հարց ուղղած՝ ահա, ումբի մը նման կը պայթէր իրենց բերնէն ակամայ թոած սա

բառերը. **«Աստուած Ձեզի օրեր տայ...»:**

Ո՛հ, մեր սուգը անբաւ էր և անբացատրելի, չէինք գիտեր ո՞ր մէկ սուգին վրայ ողբանք՝ նահատակներու ևն, որ արդէն մահուան տուին իրենց անխուսափելի բաժինը, քե՞ մեր վրայ ողբանք, որ մահուան կարգին կը սպասէինք, առանց գտնելու փրկութեան նամբայ մը:

Ահա մանրամասնութիւնները ահաւոր այս եղեւնին:

Չանդըր՝ Իթթիհատի Քլիւպի անդամներն ալ վաղուց կ'ուզէին մասնակից ըլլալ Ճիհատին և արժանանալ իսլամաց մարգարէին վարձատրութեան:

Ուստի, օգտուելով տօքթ. Չիլինկիրեանի և Վարուժանի ու երեք ընկերներուն էնկիւրի փոխադրուելէն, կանխաւ վեց ժամ հեռու Թիւնա կոչուած տեղը, Հալօ անունով քիւրտ ռերագործ մը մէկ քանի ընկերներով կը դրկեն որ սպասեն մեր ողբացեալ ընկերներուն անցքին:

Հինգշաբթի, Օգոստոս 12, երբ Չանդըրըրիէն կը մեկնէին մեր ընկերները, տեղույն Իթթիհատի քոմիդէի պատասխանատու քարտուղար Եօնուս կը հեռաձայնէ մեր ընկերներուն մեկնումը Չանդըրըրի - Գալայնըք նամբուն վրայ գտնուող ոստիկանական պահականոցները: Դարձեալ յաջորդ օրը՝ Ուրբաթ կը հեռաձայնէ Թիւնայի ոստիկանական պահականոցը հարցնելով. քե՞ **«արդէն եկողները սպաննուած են...»:** Բայց Ուրբաթ ըլլալուն, ոստիկան զինուորները պահականոցէն քիչ հեռու՝ ծառի մը ներքեւ կերուխումի մէջ կ'ըլլան և պահականոցը կը գտնուի հայ բանուոր մը, որ պահականոցի պատերը կրածեփելով զբաղած է եղեր նոյն պահուն, և հեռաձայնին հաղորդած այս ռերապարտ բառերը կ'իմանայ...:

Երբ մեր 5 ընկերներն երկու կառքով կը հասնին Թիւնայի գառիվերը, ուր կը սկսի Գալանըքի սարաւանդը, դեռ չբարձրացած գառիվերը, դարան սպասող 4 քիւրտերը կու գան դիմաւորել մեր 5 ընկերները:

Չորս քիւրտերը երբ յառաջանալով կու գան կեցնել առաջին կառքին ձիերը, ոստիկան զինուորը կը հրամայէ որ ռերագործները ազատ ձգեն ձիերը՝ սպառնալով կրակել: Սակայն կառքերուն ընկերացող սելանիկցի երիտասարդ ոստիկանը կը հրամայէ ոստիկան զինուորին որ ընդդիմութիւն չընէ...:

Ձի կանխաւ որչափ որ առ այս գաղտնօրէն հրահանգուած էր

նստիկանն, սակայն ուստիկան գինուորին չէին ուզած գործուելիք ոնիրին իրագեկ ընել, վախնալով որ անգիտակից անգաղտնապահութեամբ մը, կրնայ տգէտ ուստիկան գինուորը վիժեցնել արեան աս խրախնանքը...:

Ուստիկանին և ուստիկան գինուորին կրաւորական համակերպութեանը վրայ, քիւրտ Հալօ կը հրամայէ երկու կառքերուն մէջ գտնուողներուն որ անձնատուր ըլլալով կառքէն վար իջնան:

Հագիւ կառքերէն վար իջած, տօքթ. Չիլինկիրեան կը խնդրէ քախանձագին այս 4 քիւրտերէն, որ խնայեն իրենց կեանքին, և ինք կը խոստանայ իր ընկերներուն հետ տալ իրենց ամբողջ հարստութիւնը և գոյքերը:

Բայց ոնրագործներն իբր պատասխան մեր 5 ողբացեալ ընկերները, հակառակ ասոնց աղիողորմ պաղատանքներուն, կ'իջեցնեն մերձակայ ձորը՝ առուակի եզերքին, և գոհներուն զգեստները անվնաս պահելու նախ կը մերկացնեն: Ապա դաշոյնները քաշած կը յարձակին իրենց անգէն և անպաշտպան գոհներուն վրայ, և անխնայ կը սկսին ծակծկել և բզկտել դաշոյններով տարաբախտ մեր ընկերներուն մարմինները, և դանակով անդամահատել ասոնց ոտքերն ու բազուկները և այլ զգայարանքները...: Ասոնցմէ միայն Վարուժան անձնապաշտպանութեան կը դիմէ, և իբր պատիժ ոնրագործները դանակով դուրս թափելէ վերջ փորոտիքը, կը փորեն նաեւ հայրենասէր բանաստեղծին աչքերը...:

Ապա գողօնը բաժնելով իրենց մէջ և տօքթ. Չիլինկիրեանի ու Օննիկ Մաղազանեանի զգեստներուն երիզներուն մէջ կարուած աւելի քան 450 օսմանեան հնչուն ոսկին եւս առնելէ վերջ, բաժին կը հանեն նաեւ ուստիկանին և ուստիկան գինուորին: Կառքերու մէջ գտնուած բեռները եւս իրենց մէջ բաժնելէ վերջ, երկու թուրք կառապաններուն կը հրամայեն, որ առանց նամբանին շարունակելու անմիջապէս դառնան Չանդըրըի:

Թուրք կառապանները կը դառնան գլխիկոր Չանդըրըի, և մէկը որ հագիւ քսանամեայ թուրք երիտասարդ մըն էր և բաղնեպանի մը գաւակ, պատմեց ինծի այս բոլորը մանրամասնութեամբ ու արցունքով, աւելցնելով. **«Ասանկ արհեստը գետնին տակն անցնի, ինծի պէտք չէ ասանկ շահը... և կառքս և ձիերս այսօր վաղը պիտի ծախսեմ ու հեռանամ այս քաղաքէն...»:**

Այս թուրք կառապան երիտասարդին վրայ չափազանց խոր

ագդած էին ոճրին գործուած միջոցին տեղի ունեցած անլուր չար-
չարալից անգթութիւնները... պատմած ատենը ան կուլար: Միան-
գամայն պնդելով որ եթէ սելանիկցի ոստիկանը զինուորին արգելք
եղած չըլլար, կարելի էր դիւրաւ դիմադրել և առջեւը առնել ան-
գութ ոճիրի մը, և փրկել թշուառ 5 զոհերը...:

Ուրբաթ կէս օրին հագիւ երկու կառքերը պարապ վերադարձած՝
ոճրին տարածայնութիւնը արդէն սարսափեցուցած էր մնացորդ
աքսորականներու հետ, նաեւ Չանդըրըի յիսուն տուն հայութիւնը:

Մեր ողբացեալ հինգ ընկերները ողջամբ էնկիւրի հասցնելու
համար իր զաւակներուն վրայ երդում՝ ընող փոխ կառավարիչ և
Գասթեմունիի կուսակալութեան ոստիկան զինուորներու հրամա-
նատարը, ձի նստելով կ'անապարէր Թիւնա՝ մէկ քանի հարցաքննիչ
դատաւորներով և ոստիկաններով ոճրին վայրը:

Հոն կը գտնեն հինգ թշուառ զոհերը անհանաչելի վիճակի մէջ՝
ձորի մէջ նետուած...: Ասոնց մարմինները թաղել տալէ և ոճրագործ-
ները ձեռք անցընելէ վերջ, ոստիկանին ու ոստիկան զինուորին հետ
Ննկիւրի բանտը կը նետուէին պատերազմական ատեանի առջեւ
դատուելու համար:

Դատարանին մէջ 4 քիւրտերը բացայայտ կերպով յայտարարե-
ցին, թէ իրենք գործած են Չանդըրըի Իթթիհատի քոմիտէի հրամա-
նով և յանձնարարութեամբ... հետեւապէս իրենց հետ անոնք ալ
հարկ էր դատարան քաշել...:

Այս ոճրագործներուն պետը քիւրտ Հալօ, որուն հիւանդ աղջիկը
ստոյգ մահուանէ փրկած էր սօքք. Չիլինկիլիբեան, այս դէպքէն
ամիս մը առաջ, օր մը կ'ըսէ ողբացեալ Սելակին. **«Ես քեզ կը
մեղքնամ, ձեր գլխուն փորձանք պիտի գայ, և ոչ ոք ձեզմէ չպիտի
կրնայ ազատիլ. եկուր իսլամ եղիր, աղջիկս ալ քեզ տամ և
երիտասարդ կեանքդ փրկէ...: Ապա թէ ոչ՝ եթէ այս առաջարկս
մերժես, արդէն քեզ մեռցնել կ'ուզեն, այն ատեն ես անձամբ պիտի
կտոր-կտոր ընեմ քեզ...»:**

Ահա, բացայայտ ապացոյց մը եւս, ոճիրին կանխաւ պատրաս-
տուած ըլլալուն:

Տարաբախտ Սելակ պատմած էր իր կենդանութեան խոստովա-
նաբար մէկ քանի մտերիմ անձերու, և առ ի զգուշութիւն այգիէն
եւս քաղաք փոխադրած էր իր բնակութիւնը այս սպանուալիքէն
վերջ:

Այսպէս աննիտուող ազգը՝ կը կորսնցնէր աւա՛ղ, տաղանդաւոր երկու գրագէտներ ու բանաստեղծներ, և վաղուան հայ վերածնունդին կարող երկու առաքեալներ, ինչպէս և անչափահաս զաւակներու տէր հինգ որդեսէր հայրեր...:

Բայց դժբախտաբար, ժամանակ չունէինք երկար սգալու... գի օր նոր, նախնիր նոր, օր նոր, արեան հեղեղներ նոր...: Մինչ մահուան ուրուականը տակաւ կը մօտենար մեզի, և արդէն Հայաստանի և Փոքր Ասիոյ բոլոր քաղաքները ու գիւղերը շրջելէ վերջ, հուսկ ուրեմն հասած էր և մեզի կը սպասէր վեց ժամ հեռուն Թիւնայի առջեւ...:

«Հայ Գողգոթան»

1922 Մանչեստր Գրիգորիս Մ. Վարդ. Պալաքեան

* * *

Այստեղ կ'աւարտի Գրիգորիս Մ. Վարդ. Պալաքեանին. «Հայ Գողգոթան» գիրքին մէջ, Ռուբէն Սեւակի նահատակման մասին վկայութիւնները:

Ինչպէս որ դուք ալ նկատած էք՝ Գրիգորիս Մ. Վարդ. Պալաքեան այս յիշատակութիւններուն մէջ Միքայէլ Շամտաննեանին, բժիշկ Վահան Ալթունեանին և մանաւանդ Յովհան Վարդ. Կարապետեանին Ռուբէն Սեւակին Չանդըրը-ի հերոսական կեանքին մասին անոնց պատմածներուն շուրջ ոչ մէկ ակնարկութիւն կայ:

Յաւելուած՝ թուրք կռուականին վկայութիւնը նշելով, Գրիգորիս Մ. Վարդ. Պալաքեան կ'ըսէ, թէ նահատակման պահուն միայն Դանիէլ Վարուժանը ընդդիմացած է»:

«Նայիրի»ի յառաջիկայ թիւին մէջ տալու պիտի ջանանք՝ նոյն կռուականին վկայութեան մասին բժիշկ Ս. Զարեանդին գրածները, ուր կ'ըսուի թէ՝ «բռնի մերկացնելու փորձի մը դէմ Սեւակ կ'ըմբոստանայ, իսկ Վարուժան ստոյիկեան իմաստունի մը պէս, համակերպ ոգիով մը կը հնազանդի...»:

ՆԱԹԻՐԻ
ԹԻԻ 190, 25 ՄԱՐՏ 2003

**« ԱՅՍ Ի՛ՆՁ ԴԱՐԵՐՈՒ ՀԱՍԵՐ ԵՆՔ, ԱՍՏՈՒԱ՛Մ,
ՓՇՐԵՑԻ՛Ն ԻՆՁ ՈՐ ԿԱՐ ՎՍԵՄ ԿԵՐՏՈՒԱՄ,
ԹԷ ԴԵՌ ՍԻՐՏ ՈՒՆԻՔ՝ ԹԱՂԵԼՈՒ ՏԱՐԷՔ,
ՈՍԿԻԻՆ ՆԵՆԳ ՉԱՅՆՆ Է ԱՄԷՆՈՒՐԵՔ:
«Թրուպատուրները» 1910 Ռուբեն Սեւակ
[Ռուբեն Սեւակ - Երկեր [Անթիլիաս, էջ 229]**

... Մենք, մասնաւորապէս Յունուար 2003-էն սկսեալ, «Նայիրի»ի մէջ կը ջանանք, 24 Ապրիլ 1915-ի հայ մտաւորականներուն նահատակութեան վերաբերեալ մանրամասնութիւնները տալ, Չանդըրը-ի դժոխքէն վերապրած աքսորեալներուն վկայութիւնները նշելով:

Բայց, հայ ազգին նակատագրական մեծագոյն թուականը եղող 24 Ապրիլ 1915-ի մտաւորականներուն նահատակութեան պատմութեան մէջ, իրար հակասող վկայութիւններ կան:

11 Մարտ 2003 - թիւ 189 «Նայիրի»ի մէջ հրատարակեցինք Գրիգորիս Մ. Վարդ. Պալաքեանի գրութիւնը, որուն մէջ ան կը նշէր թուրք կառապանին վկայութիւնը, թէ՛ սպանութեան պահուն, միայն Դանիէլ Վարուժանն էր ընդդիմացողը:

Այստեղ պիտի հրապարակենք բժիշկ Ս. Ջարեւանդին գրածները, ուր կը նշուի նոյն թուրք կառապանին վկայութիւնը, թէ միայն Ռուբեն Սեւակը ընդդիմացած է սպանութեան պահուն:

Ահա, բժիշկ Ս. Ջարեւանդին, 1924-ին Նիւ Եորքի մէջ հրատարակուած «Անցորդի տպաւորութիւններ - Դանիէլ Վարուժանի և տոքթ. Ռ. Չիլինկիրեանի [Սեւակ] գերեզմանները» վերտառութեամբ գիրքին մէջ, Ռուբեն Սեւակի նահատակութեան մասին գրածները:

«... Պոլսէն շոգեկառքի արագ գնացքէ մը վերջը, Գաղատիայէն անցայ Չանդըրը տանող տաժանելի նամբան, որ անհամար լեռնաշղթաներու և ձորերու միացման գիծն է և մօտ երեք օրուան կառքի նամբորդութեան կը կարօտի:

Երբեմնի հայաշատ Գալէնիքը, որ իր բարձունքէն կը հսկէ ընդարձակ տարածութիւններու վրայ: Իր հեռաւոր կողերը եզերող ջուրի հոսանքին հետ Եէնի Խանէ կայանին մօտէն կը հոսեցնէ իր զաւակներուն կորստի դառնութեան լացը:

Դեռ հեռուէն նշմարեցի նամբան խաչածեւող այդ հոսանքը և արիւննոտ հոգիով հետեւեցայ անոր պղտոր ջուրերուն: Բնագրական մղումով մը երեւակայութիւնս տարուբեր անոր ալիքին հետ ու սեւ նակատագրին համակերպող հերոսներու հոգւոյն թռիչքը, տեսիլքով մը վրդովեց ծանրաբեռնուած միտքս:

Տակաւ ընդարձակ դաշտեր անցայ, յանախ անբերրի ու անձրեւին համբոյրին տակ տարածուող վայրի ծաղկանց բուրումը ոունգերս պրկեց, մտածումս շփոթած ցիրուցան, բնութեան ներդաշնակութիւնը խանգարող ոնիրներու նախատինքը մթագնեց անոր հորիզոնը:

... Լուռ խորհրդածութիւններն ու սարսափը արդէն զիս Չանդըրը հասցուցին զայն նեղքող գետեզրին ծառուղիէն:

Չանդըրը 30-35 տուն հայ բնակչութիւն ունէր. մեծաւ մասամբ խեղճ ու գրեթէ առհասարակ աշխատաւոր դասակարգ մը:

Բոլորին ալ ցաւը փնացումն էր, անիրաւ կողոպուտի պատմութիւնը և աւելի քան 50 ընտանիքներ անհետք ու անվերադարձ արքարուած էին գիւղէն:

ԱՆՑՈՐԴԻ ՏՊԱՌՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(Տնդահանութեամբ եւ բարդի արտոմեր)

(Պոլսէն դեպի Ենկիլիս և Չանդըրը)

ՊԵՆՏԷՆ ԱՄՐՈՒԺԱՆԻ

և

ՏՈՒՔ - Բ. ԶՐԼՈՒՆԿՈՐԵԱՆՈՒ (Սեւակ)

ԳԵՐԵՉՄԱՆՆԵՐԸ

Լեզիճակ

ԲՅԻՇԿ Ս. ԶԱՐԵՆԱՆԸ

1924

Ն.Է. ԾՅՔ

Գեղեցիկ դիպուածով մը, Գասփեմունիի թեմին առաջնորդ վարդապետին պատահեցայ, որ տարագրութեան արատները մաքրելու յոյսով անգլիական պատուիրակ և գործիչ սպայի մը հետ իր թեմի գիւղերուն շրջանը կ'ընէր և մխիթարութիւն կը բաժնէր:

Մօտեցայ իրեն ու ծանօթացանք: Վարդապետը քաղաքին ակա-նաւոր մնացորդներովը շրջապատուած էր ու զիս Համբարձման Կիրակիի առաջին պատարագին հրաւիրեց...:

* * *

... Հազիւ թէ շուրջովս ծանօթացած՝ պատարագը սկսաւ գիւղե-րու յատուկ աւանդական երաժշտութեամբ: Սրահին մթնոլորտը այնպէս ելեքտրականացած էր, որ չարտասուող աչքերը ուշադրու-թիւն կը գրաւէին...

... Սրահը լեցուած էր հաւատացեալներով: Յայտնի էր որ ամէն-քը մխիթարութեան այս առաջին աղօթքը լսելու եկած էին...

... Սուրբ արարողութեան ընթացքին մեղաներու, հեծձանքներու, գլխու և կուրծքերու ծեծի աղմուկը իբր ընդվզում, անիմաց ուժգնութիւնով մը կը լեցնէին խնկաբոյր մթնոլորտը...

... Այսպէս, նահատակներու յիշատակին մատուցած հոգե-հանգստի արարողութեան շնորհած բարիքը բաժնելով, ամէնքս հե-ռացանք խաչով մը կնքելով մեր յուզումը:

* * *

Եկեղեցիէն վերջը, յուզումս բաժնելու համար, խօսակից մը կը փնտռէի յանձին պատարագաւոր վարդապետին: Մօտեցայ իրեն, աչք համբուրեցի: Ան իր համակրելի ակնարկովը ըմբռնեց միտքս. կեսօրուան նաշի հրաւիրեց զիս իր իջեւանը: Սիրով ընկերացայ իրեն, միասին նաշեցինք: Երկար խօսակցութիւնով մը ամբողջ աքսորի պատմութիւնը թղթատեցինք:

Յաջորդ օրն իսկ, Գասփեմունի մեկնելու մտադրութիւն յայտնեց. միասին երթալ առաջարկեցի: Կարգադրութեան համար իր կառապանը տեսնել պէտք եղաւ. ուստի նոյն յետ այն լուր դրկեց կառապանին որ անմիջապէս եկաւ:

Հիմա, ահաւասիկ, կառապան Հասան՝ որ իր հսկայ հասակը կը ցցէր դռանը առջեւ, ներս մտաւ վարդապետին հրաւերովը, գետնա-հայեաց նայուածքով ու բազուկները կուրծքին վրայ ծալլելու

յարգալիր ձեռով յառաջանալով հիւրանոցին լաւագոյն անկիւնը բազմեցաւ ծալլապատիկ:

... Կը սուկայի իր ձեւերէն ու մանաւանդ նայուածքներէն որոնք մարդասպաններու յատուկ են:

Կը խորհէի, որ այս մարդուն պէտք էր յանձնել մեր կեանքը ճամբորդութեան մը համար, որուն միջոցին լեռան գագաթները երկնքին կը մօտենան և մերթ անձրեւի ամպերը անոնց կողերու վրայ կը պտտին:

«Այսպէս ուրեմն» յարեց վարդապետը կէս ծածկաբար, «այս այն կառապան Հասանն է, որուն Վարուժանն ու Սեւակը, ուրիշ երեք առեւտրական ընկերներու հետ, ստիպմամբ իրենց կեանքը յանձնեցին ու չի վերադարձան»: Սակայն քիչ մը անդրադառնալէ վերջ համոզուած շեշտով մը աւելցուց, թէ «Հասան պարկեշտ մարդ էր, իրեն հետ շատ մը գիւղերու շրջանը ըրած էր և թէ վստահաբար կրնայինք իր կառքովը ճամբորդել»: Վարդապետը կը պատմէր թէ ինչպէս անգամ մը անձնուիրաբար ճամբորդութեան մը ընթացքին, աւագակներու յարձակում մը անհետեւանք արգիլած էր:

Անշուշտ վարդապետին խօսքերուն չհաւատալու պատճառ մը չունէի... Սակայն հակառակ այս մեղմացուցիչ խորհրդածութիւններուն յուզուած էի ու չէի գիտեր, թէ ինչպէս պէտք էր հարցուփորձել այդ գագանը որ անկասկած մեղսակից էր եղեռնին:

Երեւակայեցէք, ինքզինքս կ'զգայի ոնիրին վայրը, նոյն րոպէն, ոնրագործին հետ դէմ դիմաց, սարսափ, ճիչ և արիւն. մահուան դէմ ընդվզող գոհերուն չարչարանքին ներկայ:

Ճիգ մըն ալ ըրի և խեղդեցի յուզումս, եղեռնին հետաքրքիր մանրամասնութիւնները գէ՛թ անգամ մը ոնրագործին բերնէն լսելու համար:

Առաջարկիս վրայ, հագար ու մ'էկ գիշերներու առասպելական պատմութիւններու նման խորհրդաւոր, սկսաւ պատմել կառապան Հասան, իր դեղին համրիչին հատիկներուն վրայ չղայնոտ մատներ պտտցնելով:

Պոլսէն Չանդըրը դրկուած աքսորականներէն Վարուժանը և եռանդուն Սեւակը. ուրիշ երեք ընկերներու հետ, ստացուած նոր հրահանգի մը համաձայն, անակնկալ կերպով Հասանի կառքը կ'առաջնորդուին Այաշ փոխադրուելու պատրուակով: Հինգ հեծեալ ոստիկաններ կ'ընկերանան կառքին, իբր պաշտպանութեան գի-

նուորներ, չէթէներու հաւանական յարձակումի մը դէմ, ինչպէս Հասան կը յայտնէր: Երբ ոստիկանները ռեիբիկ կանխորոշուած վայրը կը նշմարեն, Գալէնիկի գիւղի և Եարըմ խան կոչուած գիշերուան նամբորդներու կայանին միջեւ միացման բանուկ գիծէն տասը վայրկեան դէպի արեւմուտքի ուղղութեամբ յառաջանալէ վերջը, կառքը կը կասեցնեն:

Նախնական կողոպուտը հագիւ աւարտած, գարմանալի զուգադիպութիւնով մը, հինգ զինեալ ռերագործներ կը յարձակին կամովին մոլորած այս խումբին վրայ: Քիւրտ Ալօ, Թէքնէ Հասան, Իսմայիլ, այս վերջինը մասնաւոր հնարամիտ կազմակերպիչ կառապան Հասանի մօտէն ծանօթ և կառավարութեան և տեղւոյն չէթէներուն միջեւ իբր բարւոք յարաբերութեան պաշտօնեայ, և վերջապէս ուրիշ երեք հասարակ ռերագործներ խումբը կ'ամբողջացնեն:

Իսմայիլի նշանին վրայ իբր թէ Հասանը կը մեկուսացնեն ձեռնակապերով, իսկ զինեալ ոստիկանները իբր ընդունակ աշակերտներ իրենց կոչումին, առանց նուագագոյն ընդդիմութեան գէնքերու հանդիսաւոր յանձնումէն վերջը՝ անբնական և անյաջող թատերական ներկայացման մը չափ հանդարտ կը ձեռնակապուին:

Տասըմէկ մարդասպաններ հինգ անմեղ ու անգէն նամբորդներու դէմ: Ի՞նչ մեծ անվստահութիւն իրենց ռերագործի հեղինակութեան:

Քոնի մերկացնելու փորձի մը դէմ Սեւակ կ'ըմբռնուանայ իսկ Վարուժան, ստոյիկեան իմաստունի մը պէս համակերպող ոգիով մը կը հնազանդի:

Հինգն ալ հաւասար խողխողումներու կ'ենթարկուին, կ'անարգուին և ի վերջոյ մարդկային ըմբռնումի կարողութենէն շատ վեր, անլուր վայրագութիւններով կ'սպաննուին:

«Բժիշկին ընկերը, Վարուժանին կ'ակնարկէր, շատ դժուար հոգին աւանդեց, շատ տրտնջաց, շատ խօսեցաւ բայց չհասկցայ, թէ ի՞նչ կ'ըսէր» աւելցուց Հասան: Ա՛խ, այդ վերջին խօսքերը, ի՞նչպէս չի յուզուէի: Ակամայ արցունքի կաթիլներ կուլ տուի պաղարիւնութիւն կեղծելու համար:

Այդ վերջին խօսքերը ի՞նչ կրնային ըլլալ եթէ ոչ իր աստուածացած էութենէն բղխող յուսահատ համակերպութեան և կարօտի նուիրական աղօթքը, ուղղուած դէպի այն շնչող սերմը գոր ան

մեզի ժառանգ ձգեց իր գերագոյն գործին հետ՝ կենդանի յուշարձանը իր արգասաւորութեանը և լուսատու խորհրդանիշը ազատագրութեան նանապարհին:

Ի՞նչպէս չարիւնէր սիրտս ու չարտասուէի: Երեւակայութեանս առջեւ անոնց անշունչ և վիրաւոր դիակները կը լողային նետուած ջրոտ փոսին մէջ - ինչպէս ականատես գազանը կը նկարագրէր:

Հասանի աչքերուն մէջ ի՞ գուր կը փնտռէի եղեռնի պատկերին արիւնոտ ցոլքը: Աւաղ. անոնց անսովոր երակաւորումը և հոգիին սառնութիւնը, որ անշուշտ իր ներքին գոհունակութեան արդիւնքն էր, մթագնած էին աչքերուն սովորական փայլը: Ջարհուրելի քառսներու առջեւ կը գտնէի ինքզինքս: Մին գերեզմանն էր գոր անոնք առաքինագօր լիութեամբ մը լեցուցին, գրչի և գիտութեան եղբայրութեան այսպէս տառապանքի և անձնագոհութեան հետ յաւիտենական միացումը նուիրագործելով: Միւսները գոյգ մը իսկական քառսներ, որոնք խօսակից հրեշիւն դէմքը կը զարդարէին, քառսներ՝ որոնք իրենց մոռյլ ու անթափանց խորութիւնովը ուղղակի սարսափելի էին ու դեռ ո՛վ գիտէ որքան արիւնոտ պատմութիւններու աղբիւր:

Հասան յանկարծ շեշտը փոխեց մեզի սքափեցնելու և կարծես ըսելու համար, թէ խնդրոյն եական մասը նոր պիտի սկսէր պատմելու. աւելցուց. «Ոնիրը քննելու համար անբացատրելի արագութիւնով մը արդարութեան պաշտօնեաները հասան ոնիրին վայրը»: Այո՛, անոնք անշուշտ եկած էին կեդրոնի հրամանին ճշգրիտ գործադրութեան սիսթէմին վրայ հիանալու, չմոռնալով դիակները քննելու, կառապանը և ոստիկանները կրկին ձեռնակապելու պէս կարգ մը ձեւակերպութիւններ լրացնելու, որոնք ինչպէս ծանօթ է, ոնրագործներու փախուստէն վերջը, շատ անհրաժեշտ էին պատասխանատուութեան ապագայ վտանգը բաժնելու տեսակետով:

Յետ քննութեան դիակները կը թաղեն մակերեսային փոսի մը մէջ ու ոնիրը անհետք ձգելու անզուգական կանխագուշտութիւնով, վրան թեթեւ հողի խաւով մը կը ծածկեն ու թափորով կը հեռանան տօնախմբութենէ վերադարձողի վայել պշգալի քրքիջներով:

Հասան, առաջնորդ Հօր որոշման մը յանգելու հրաւերին իբր պատասխան, նիւաղային հասակը ցցեց թուրք գիւղացիի վայելող կրկնապատիկ և աւելորդ մեծարանքի ձեւերով հեռացաւ, յաջորդ արշալոյսին կառքը լծելու խոստումով:

Բարեբաղդաբար մեկ կողմէն անլոյս լամբարին խաւարը, միւս կողմէն ապուրին քանձր շոգին յարմարագոյն պայմանները կը կազմէին դեմքիս վրայ ցայտող յուզումի արտայայտութիւնը ծածկելու համար: Այս բոլոր պատմութիւններուն ուտելու զբաղած շատակերի մը պէս միայն գլխու շարժումներով կը պատասխանէի: Յանկարծ կառապանս Հասան աւելցուց. «Պէշ, եթէ կ'ուզէք վաղը, անցնելու ատեն Այաշ տարուող հինգ հայերուն մորթուած տեղը կը ցցենեմ ձեզի»:

Կը խորհէի, թէ անկասկած Վարուժանի և Սեւակի խումբին գերեզմանը տեսնելու պիտի արժանանայի: Թեեւ գոհ այդ նոր բարեացակամութենէն, բայց հետզհետէ սարսուռ մը կը պատէր հոգիս:

Ընթրիքը աւարտելուն, մին կլկլակը շրթունքին, միւսը խահուէին գաւաթը ձեռքը՝ նստած տեղերնին սկսան կծկտած խորդալ, իսկ ես, արշալոյսի աքաղաղին հետ անքուն, այդ թմրած արիւնոռուշտ գազաններու դիակներուն սեւեռած աչքերով դառն երեւակայութիւններու անձնատուր կը խոկայի:

Անքուն և ջղագրգիռ, շատ կանուխ արթնցուցի կառապանս: Երկու ժամուան արագ, գնացքէ մը վերջը բլրակի մը գագաթը հասանք, ուր Հասան կանգ առաւ. «Ահա, հոս է» ըսելով, ու զիս արահետէ մը առաջնորդեց երկու բլուրներու մէջտեղ խորունկ պեղուած ձորի մը մէջ: Խոնաւ, մերթ կաւոտ և աւագուտ ձորը ապառաժներով եզերուած էր ու աւելի խորը կը վերջանար ամենահսկայ սեւ ապառաժով մը որուն խորքին մէջ պեղուած խոռոչը կը նմանէր անօթի առիւծի մը բերնին, որ լայն բացած ահարկու տեսքով մը իր որսին վրայ կը յարձակի:

Չորս տարուան տեղատարափ անձրեւն ու ձիւնը բոլորովին աննշմար դարձուցած էին անոնց գերեզմանափոսը և շատ բնական կը գտնէի որ նոյն իսկ Հասանի նշգրիտ ցուցմունքին վրայ և առաջնորդ Հօր ընդարձակ պեղումներով անոնց ոսկորներէն որեւէ հետք գտնելը անկարելի եղած էր:

Չորը ինքնին օձապտոյտ գալարում մը ուներ և մեկ եզերքին վրայ այդ շրջանին մէջ հագուագիւտ և բացառիկ շնորհքով մատղաշ ուռենի մը կար աճած: Կարծես իր արմատները զոհերուն սրտէն կ'առնէին իրենց սնունդը: Ազգային նուիրական պատկանութեան կիսաւարտ լքման կսկծագին լացը կուլար ան կարծես իբր

ականատես վկայութեան կոթող այդ անլուր վայրագութիւններուն:

Ձորին ամբողջ երկայնքը սահմանող ապառաժներուն հագած մամուռէ կանաչ թաւշեայ գգեստները, գմբուխտի կանաչորակ գոյնով պարարտ, լայնատերեւ վայրենի խոտերը՝ հերոսներուն նոյն կենդանական բջիջներու բնախօսական քայքայումի մնացորդներովը լայն աճած, անոնց հոգին լեցնող չիրականացած իտեալներու լուռ խորհրդանիշերն էին:

Այս անհետք գերեզմանին վրայ, գուցէ հարիւրաւոր պատահական այցելուներէն մին, ես ալ դրի արցունքներու և հաւատամքիս ծաղկեփունջը և ափ մը հող: Ինչո՞ւ արդեօք երկինքը՝ անողոք հանդիսատես անլուր վայրագութիւններու, իր նախասահմանութեան հատու մանգաղը կը յանձնէ հեթանոս ձեռքերու որ անժամանակ հնձեն այսպէս անսգիւտ ոսկի հասկերը մարդկութեան:

Գլխիկոր, ամօթահար ու լլկուած, հագիւ մենաւոր ու ամայի արահետէն վեր բարձրացայ»:

Նիւ Եորք, 1924 - Բժ. Ս. Ջարեւանդ

Այստեղ կ'աւարտի, բժիշկ Ս. Ջարեւանդին, Ռուբէն Սեւակի նահատակութեան մասին գրածները:

**ՍԻՈՆԱԿԱՆ ԹՈՒՐԳԵՐՈՒՆ ԳՈՐԾԱԾ 24 ԱՊՐԻԼ 1915-Ի ՀԱՅ-
ԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆՆ Է՝
ՍԻՈՆԱԿԱՆ ԱՄԵՐԻԿԱՑԻՆԵՐՈՒՆ ԱՅՍ ՕՐԵՐՈՒՆ ՍԱՐՔԱԾ
ԻՐԱՔԻ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆԸ**

**ՈՒ ԿՒՅՆԱՅ ԱՅՆ, ՈՐ ԿԸ ԾՆԿԷ ՎԱԽՈՎ
ՋԻ ԹՈՒՐՆ ԱԻԵԼԻ ԱՐԴԱՐ Է ԽԱԶԷՆ
ՋԻ ԿԵԱՆՔՆ ԱՆՈՆՑ Է ՄԻԱՅՆ ՈՐ ՔԱ՛Ջ ԵՆ,
ԱՆՈՆՑ ՈՐ ԿԱՊՐԻՆ ՈՒՐԻՇԻՆ ՄԱՀՈՎ...:**

**«Ջանգակներ, զանգակներ» 1909, Ռուբէն Սեւակ
[Ռուբէն Սեւակ - Երկեր - Անթիլիաս - էջ 171]**

24 Ապրիլ 1915-ի ցեղասպանութեան հրաշքով վերապրող հայերը սրտանց կը հաւատային, թէ՛ **«Այս հրէշային ցեղասպանութիւնը կատարող թուրքերը անպայման պիտի պատժուէին և Մեծն Աստուած՝ անոնց պատիժը պիտի տար»:**

Եւ այսօր, 1915-ի ցեղասպանութեան 88 տարիներ յետոյ, թուրքերը ո՛չ թէ պատժուած, այլ՝ ընդհակառակը, յունական և հայկական հայրենի հողերուն վրայ 70 միլիոննոց թուրքիա մը մէջտեղ բերած են: Եւ «քաղաքակիրթ» կոչուող արեւմտեան պետութիւններուն զինակիցն են, և մինչեւ այսօր կը շարունակեն նորանոր ողբերգութիւններ գործել:

Խեղճ հայերը չէին գիտեր, թէ Ռուբէն Սեւակին ըսածին պէս՝ **«Թուրքն աւելի արդար է խաչէն»**

Եւ իրաւունքը միայն՝ զօրաւորինն է:

Եւ «արդարութիւն», «մարդկութիւն», «խիղճ» ըսուած բառերը, իրականութեան հետ կապ չունեցող երազային խօսքեր են:

Այս օրերուն, հրեաներուն կողմէ նահատակուած Յիսուսին խաչելութեան պատմութիւնը պիտի յիշատակուի քրիստոնէական բոլոր եկեղեցիներուն մէջ:

Եւ այս տարի, բացառաբար, Յիսուսի նահատակութիւնը և 24 Ապրիլ 1915-ի հայ ազգին նահատակութիւնը նոյն օրերուն պիտի ոգեկոչուին:

Շատ անգամ ըսած ենք՝ «Եթէ երեկուան, այսօրուան և վաղուան աշխարհի պատմութիւնը լաւ հասկնալ կ'ուզէք, կարդացէք և ուսումնասիրեցէք Յիսուսին խաչելութեան պատմութիւնը»:

Խնդիրը՝ «Հաւատացեալ ըլլալու կամ չըլլալու հարցը» չէ:

Այլ՝ կրօնական եղելութիւն մը մեկնաբանելու հարցն է:

Եւ մենք, Ռուբէն Սեւակի իր «Յիսուսի կեանքը» ուսումնասիրութեան մէջ ըսածին պէս՝ «Դուն մարդ էիր, Քեզի Աստուած ըրին» գաղափարին հետեւելով կը հաւատանք, թէ Յիսուս, հրեաներուն քով քիչ գտնուող առաքինութիւններով բարի և արդար «մարդ» մըն էր պարզապէս:

Եւ հրեաները, Յիսուսին գաղափարները վնասակար նկատեցին իրենց կրօնին, իրենց «դրամին» և իրենց ապագայի ծրագիրներուն համար: Եւ ամէն տեսակ սուտեր յօրինեցին, տեսակ տեսակ սադրանքներ կատարեցին և անհաւատալի ամբաստանութիւններ վերագրեցին Յիսուսին: Եւ այս սուտ ամբաստանութիւններով զինք դատարան յանձնեցին որ պատժեն:

Դատաւոր Պիղատոսը «յանցանք» մը չգտաւ Յիսուսին քով:

Բայց հրեաները, հակառակ Պիղատոսին «Յիսուսը անմեղ է» որոշումին, ամբոխավարութեամբ և վայրագութեամբ ստիպեցին, որ հրեայ կրօնապետները՝ իրենք դատաստան սարքեն որ մահուան դատապարտուի Յիսուս:

Եւ հրեաները խաչեցին Յիսուսը զինք ամենածանր անարգանքներու և չարչարանքներու ենթարկելով:

Կարդացէք Աւետարանի մէջ Յիսուսին դատաւարութեան և խաչելութեան մանրամասնութիւնները:

Եւ հոն պիտի տեսնէք Իրաքի ողբերգութեան սկիզբի օրէն մինչեւ այսօրուան գրեթէ նոյն սադրանքները, նոյն սուտերը և նոյն սուտ ամբաստանութիւնները...:

* * *

24 Ապրիլ 1915-ի Հայկական ցեղասպանութիւնը. խորքին մէջ, ի՞նչ տարբերութիւն ունի Յիսուսի խաչելութեան ոճրագործութենէն և նաեւ վերջնագոյնին՝ իրաքեան պատերազմի ողբերգութենէն:

Իրականութեան մէջ՝ երեք եղելութիւններուն մէջ ալ կը տեսնենք գրեթէ նոյն սուտերը, նոյն սաղարանքները:

Վերադառնանք Հայկական ցեղասպանութեան ողբերգութեան: Ի՞նչ էր պատրուակը 24 Ապրիլ 1915-ով, Օսմանեան կայսրութեան սահմաններուն մէջ սկսած հայերուն տեղահանութեան:

Թուրքերուն տուած անհեթեթ պատճառաբանութիւնը հետեւեալն է՝ **«Հայերը, պատերազմի շրջանին, ռուսերուն պիտի օգնէին եղեր»:**

Ենթադրենք, որ Ռուսիոյ սահմանամերձ քաղաքները՝ Էրզրումի և նման վայրերու մէջ հայերը կրնային օգնել ռուսերուն յառաջացումին: Բայց, անկէ դուրս՝ Անաթոլիոյ մէջ բնակող և մինչեւ Թրակիոյ արեւմտեան ծայրը գտնուող Էտիրնէի հայերը ինչպէ՞ս կրնային օգնել ռուսերուն:

Եւ թուրքերը, Վանէն մինչեւ Էտիրնէ՝ բոլոր հայերը տեղահանութեան և աքսորի ենթարկեցին, իրենց միակ և անժխտելի նպատակով՝ **ցեղասպանութեան ենթարկելու համար հայ ազգը:**

Եւ իրենց այս պատճառաբանութեան սուտ և անարդար ըլլալուն ամենէն համոզիչ ապացոյցը այն է որ, 24 Ապրիլ 1915-էն մինչեւ պատերազմին վերջը, Օսմանեան կայսրութեան մէջ հայերը գրեթէ ոչ մէկ ապստամբութիւն և նոյնիսկ ընդդիմութիւն կատարեցին:

Աւելի ցաւալի է ըսելը՝ թէ՛ ոչխարներու պէս, գրեթէ բոլորն ալ, վայրագ թուրքերուն զոհը եղան:

* * *

«Նայիրի»ի 1-1-2003 «Բացառիկ» թիւէն սկսեալ, կը ջանանք տալ Հայկական ցեղասպանութեան խորհրդանիշը եղող՝ հայ մտաւորականներուն 24 Ապրիլ 1915-ին նահատակութեան պատմութիւնը: Եւ մասնաւորապէս՝ Ռուբէն Սեւակի և ընկերներուն նահատակութեան ողբերգութիւնը:

Թուրքերը տեղահանուած հայ աքսորեալներուն համար, սուտ պատճառաբանութիւն մը առաջ քշելով կ'ըսեն, թէ հայերը. աքսորի

նամբուն վրայ, հիւանդութենէ մահացած են:

Նոյն սուտերը կը տեսնենք Ռուբէն Սեւակի և ընկերներուն նահատակութեան եղելութեան մէջ:

Ռուբէն Սեւակին կինը գերմանուհի ըլլալուն, իր մօր և հօրը հետ շատ մը դիմումներ կատարած են Պոլսոյ Գերմանական դեսպանատան մօտ իրենց փեսան՝ Ռուբէն Սեւակը աքսորէն ազատելու համար:

Այս պատճառաւ Պոլսոյ Գերմանական դեսպանատունը իր հերքին. շատ մը միջամտութիւններ կատարած է քրքական կառավարութեան մօտ նախ՝ [իբր բէ] աքսորէն ետ բերելու համար Ռուբէն Սեւակը, իսկ անոր նահատակութենէն յետոյ ալ՝ մահուան պարագաները ստուգելու համար:

«Ռուբէն Սեւակի անուան Յիշատակի Տուն»ին մէջ, նահատակին

Seilerstr.
E. Müller-Preislaß
K.Nr. 7105.

E. Müller
10/9

Paris, den 16. September 1915.

Seine Durchlaucht der Fürst zu Hohenlohe Langenburg beauftragt mich Ihnen für die mit Ihrem Schreiben vom 26.v.N. Übersandte Aufnahme des alten Gesangbuches aus der Kirche von Wendersleben seinen verbindlichsten Dank auszusprechen.

Was die Angelegenheit Ihres Schwiegervaters, des Dr. med. Technisinghrien anbetrifft, so dürfte Ihnen wohl schon durch Frau Apell bekannt geworden sein, dass genannter Ende August auf dem Wege von Kianghri nach Angora von Mörderhand gefallen ist. Die Kaiserliche Behörde bedauert lebhaft diesen traurigen Ausgang und hat in Verbindung mit dem Kaiserlichen Generalkonsulat Vorsorge getroffen, dass Frau Apell mit ihrer Tochter und ihren Enkelkindern ungefährdet nach Deutschland zurückkehren können. Ich möchte noch hinzufügen, dass nach Auskunft der hohen Pforte vier von den Mördern, deren Opfer Ihr Schwiegervater geworden ist, festgenommen sind und die Verfolgung der Übrigen fortgesetzt wird.

Meiner Hochachtung
in Franz. 2 p. 11 - 0 8 :
Mont d.L.A.D.

Meinck
Graf

L. A. M. S. P. A. S.

արխիւին մաս կը կազմեն 1915-ին, Պոլսոյ Գերմանական դեսպանատան կողմէ. Լոզան՝ Ռուբէն Սեւակի աներոջ և Ռ. Սեւակին կնոջ ուղարկուած երկու ծանուցագիր նամակներ:

Այս նամակներուն գերմաներէն բնագիրը և հայերէն թարգմանութիւնը կը հրապարակենք իբր պատմական փաստաթուղթ. առաջին անգամ ըլլալով. «Նայիրի»ի մէջ:

Պոլսոյ Գերմանական դեսպանատան կողմէ Բերա-էն 15 Սեպտեմբեր 1915-ին Լոզան՝ Ռուբէն Սեւակին աներոջ՝ Franz Apell-ին ուղարկուած գերմաներէն նամակին մէջի, և Ռուբէն Սեւակի վերաբերեալ մասին թարգմանութիւնը՝

Lausanne
Sveitsche Botschaft.

N. N. 10060. P. P. A. den 6. Dezember 1916.

Nach Angabe des Ministeriums des Innern ist ein Teil der Sachen, die Ihnen verstorbenen Ehemanne geraubt worden waren, aufgefunden und bei der Gerichtsbehörde hinterlegt worden. Behufs Wiedererlangung dieser Gegenstände, unter denen sich auch zwei Ringe und ein Knopf befinden, wird Ihnen anheingestellt eine hier anässige Passslichkeit mit Vollmacht zu ihrer Entgegennahme zu versehen, diese Vollmacht auf den zuständigen türkischen Konsulat beglaubigen und dazu durch dasselbe Konsulat bescheinigen zu lassen, dass Sie bzw. Ihre beiden unzüngigen Kinder sich als einzige rechtmässige Erben hinter den Verstorbenen ausgedrückt haben.

Wie das genannte Ministerium bei dieser Gelegenheit mitteilte, hat der Verberfall auf Ihren Mann und seine Reisegefährten am 16/20. August stattgefunden und ist der Tod Ihres Mannes durch eine Schusswunde herbeigeführt worden.

Der Kaiserliche Botschafter.

I. V.
Frau Helene Tschillinguirian Apell
Lausanne.



Գերման Կայսերական Դեսպանատուն՝

Բերա, 15 Սեպտեմբեր 1915.

Յարգարժան պարոն Ֆրանց Արեյ.

... Ինչ կը վերաբերի ձեր բժիշկ Ջիլինկիրեան կոչուող փեսին հարցին, անպայման տիկին Արեյի նամբով տեղեակ եղած էք, թե վերը անունը նշուող անձը, Օգոստոսի վերջաւորութեան, Չանդըրը-էն Անկորա գացող նամբուն վրայ, ռերագործներու ձեռքով սպաննուած է:

Գերման Կայսերական դեսպանատունը այս հարցին այս տեսակ տխուր վերջաւորութիւն մը ունեցած ըլլալուն համար, իր վշտակցութիւնը կը յայտնէ և Կայսերական հիւպատոսարանին հետ գործակցաբար, տիկին Արեյին, իր աղջկան և իր թոռնիկներուն հետ անվտանգ Գերմանիա վերադարձնին ապահոված է:

Կ'ուզեմ նաեւ աւելցնել, թէ բարձրագոյն դռնէն ստացուած տեղեկութեան համեմատ, ռերագործներուն չորսը, որոնց զոնը եղած էր ձեր փեսան, ձերբակալուած են և միւսներուն հետապնդումը կը շարունակուի:

Դեսպանատան պատասխանատու՝ [ստորագ.]

8-12-1915 թուակիր՝

Ռուբէն Սեւակին կնոջ ուղղուած գերմաներէն նամակը:

«Գերման Կայսերական դեսպանատուն թիւ 10860 Բերա, 8 Դեկտեմբեր 1915 տիկ. Հելէն [Ժաննի] Ջիլինկիրեան, Լոզան

[Թրքական] ներքին նախարարութեան տուած տեղեկութեան համաձայն, ձեր հանգուցեալ ամուսինին գողցուած, իրեղէններէն մէկ մասը վերագտնուած է և դատական իշխանութեան յանձնուած:

Այս իրեղէններուն մէջ կը գտնուին երկու մատանիներ և կոճակ մը:

Այս իրեղէնները հոս՝ Պոլիս բնակող և ձեր փոխանորդագիրը ունեցող անձնաւորութեան մը միջոցաւ, ձեզի պիտի յանձնուին:

Այս փոխանորդագիրը դուք կրնաք հայթայթել ձեր բնակած տեղւոյն հիւպատոսարանէն, վաւերացնելով նաեւ, նոյն հիւպատոսարանէն, որ հանգուցեալին ժառանգորդները դուք և ձեր երկու զաւակներն են:

Այս պատեհութեամբ [թրքական] ներքին Գ. նախարարութիւնը կը տեղեկացնէ, թէ ձեր ամուսինին և իր նամբու ընկերներուն վրայ

*յարձակումը կատարուած է 15 [28] Օգոստոս 1915 թուականին:
Սև ձեր ամուսինին մահը՝ փամփուշտի վերքի հետեւանքով
յառաջ եկած է:*

Կայսերական դեսպան [ստորագ.]

1.- Ռուբէն Սեւակին աներոջ ուղղուած նամակին մէջ կ'ըսուի, թէ՛ Ռուբէն Սեւակ, ոճրագործներու կողմէ սպաննուած է. որոնցմէ չորսը ձերբակալուած և միւսներուն հետապնդումը կը շարունակուի:

2.- Ռուբէն Սեւակին կնոջ ուղղուած նամակը մեզի համար շատ կարեւոր հանգամանք մ'ունի:

Այս նամակին մէջ կ'ըսուի, թէ Ռուբէն Սեւակին մահը հրացանի մը պատճառով վերքի հետեւանք է:

Ինչպէս որ դուք ալ նկատած էք, թէ՛ բոլոր հայկական վկայութիւններուն մէջ, Ռուբէն Սեւակին դաշոյններով սպաննուած ըլլալուն յիշատակութեան մասին ոչ մէկ ակնարկութիւն կայ:

Այստեղ, առաջին անգամ ըլլալով կը հրապարակենք նաեւ, 24 Ապրիլ 1915-ի տարեդարձին տխուր առթիւ, Ռուբէն Սեւակին Չանդըրը-ի աքսորավայրէն Պոլիս՝ իր կնոջը ուղարկած բացիկ-նամակները:

Ինչպէս որ կը տեսնէք՝ բացիկները արաբատառ թրքերէն լեզուով գրուած են՝ գրաքննութեան պատճառաւ:

Այս արաբատառ թրքերէնով գրուած բացիկները վերձանեց՝ բժիշկ Շապուն Կետիկը, որուն շնորհակալութիւն յայտնելը հոգեկան պարտք կը նկատենք:



0



Կնիք

Գրաքննուած է

Ձանդրըը

30-6-1915

Սիրելիս.

Այս Երեքշաբթի օրը KENGURU [Ձանդրըը] հասայ, վեց օր
նամբորդութիւն ընելէ յետոյ: Հանգիստ եմ: Տօքթ. Տիւանեանին հետ
նոյն շէնքին մէջ կը գտնուիմ:

Տունին առջեւը պարտեզ և անտառ կայ: Ինծի համար մի
մտահոգուիք:

Յուսամ որ, քիչ ժամանակ յետոյ, արդարութիւնը մէջտեղ կելլէ, և
իրար կը միանանք: Միշտ նամակ գրեցէք:

Հասցէս՝ KENGURU-ի մէջ՝ Տօքթ. Չիլինկիրեան:

Ձեր նամակները ֆրանսերէն կրնաք գրել: Միայն հասցէն բրբերէն
պէտք է գրուի:

Տղոցը աչքերէն կը համբուրեմ:

Ամուսինդ՝ ROUPEN



Հասցեն՝ DER SAADET [Պոլսոյ մէջ] PANGALTI քաղաքաւար NAL-
BANT փողոց:

Տօքթ. Չիլիսկիրեան ընտանիքին.

Կնիք

Գրաքննուած է

Չանդըրը

7-7-1915

KENGURU

Սիրելիս

Մէկ շաբաթ է ի վեր Չանդըրը կը գտնուիմ:

Հանգիստ եմ: Առողջութիւնս լաւ է:

Ձեզի, մինչև հիմա, հեռագիր մը և բացիկ մը ուղարկեցի: Դուք ալ շաբաթը երկու անգամ նամակ գրեցէք: Եթէ բոլորեան չէք կրնար գրել ֆրանսերէն գրեցէք:

Սիլիվրի-ի մէջ, անցեալ տարի, ամառուան հագուստ մը կարել տուած էի: Անիկա paquet - post-ով ուղարկեցէք: LEOFED-ը գործողութիւն եղա՞ւ:

Մայրդ Պոլիս եկա՞ւ: Քու առողջութիւնդ լա՞ւ է: Ասոնք անմիջապէս տեղեկացուր:

Քու և տղոցը աչքերէն կը համբուրեմ:

ROUPEN

Հասցես՝ KENGURU-ի մէջ Տօքթ. Չիլիսկիրեան



Կնիք

Գրաբնուած է

Ձանդրըրը

KENGURU, Երեքշաբթի

13-7-1915

Սիրելիս

Ուղարկած ապահովագրուած նամակդ երեկ ստացայ, բայց դրամները և [Հասանին] նամակը դեռ չառի:

Հիւմի փաշային ամենախոր յարգանքներս փոխանցեցէք: Ինծի հանդէպ ցուցաբերած բարեկամական կեցուածքին համար շատ երախտապարտ և շնորհակալ եմ:

DER SAADET [Պոլսոյ] երեսփոխան SALAH CIMCOZ BEY-ը տես: Ամենամօտ բարեկամս է:

Սիրտս, հոգիս և գաղափարներս շատ լաւ կը նանչնան:

Իրեն մասնաւոր յարգանքներ կը յայտնեմ:

Մայրիկիդ Պոլիս եկած ըլլալուն լուրը առնելով շատ գոհ մնացի: Այս լուրէն յետոյ մտահոգութիւններուս մեծ մասը անհետացաւ:

Հանգստութեանդ և առողջութեանդ համար կ'աղօթեմ և տղոց երկու աչքերէն կը համբուրեմ: Կարօտով ROUPEN



Կնիք

Գրաքննուած է

Ձանդրքը

Պոլիս. Բանկայրի. «Նալպանտ»

փողոց բնակող բժիշկ Չիլինկիրեանի
կնոջ. դրկողը՝ բժիշկ Չիլինկիրեան —
Սիրելիս

Ձանկըրը 28-7-1915

Երեկ ապահովագրուած նամակնիդ
առի: Այսօր ալ Բեժի միջոցաւ 24
Յուլիսին, ձեր դրկած երեք ոսկին ալ
առի: [...]

Կալկաթայի վարժարանէն [Կեդրո-
նական] ամառուան արձակուրդի երկու
ամսուան ամսաբոշակս եղող ինը
ոսկին գանձելով ինձի դրկեցէք: [...]
Այստեղ օդերը շատ տաք են: Առ-
տուունէ մինչև գիշեր հիւանդներուն
ետեւէն կը վազեմ: Առողջութեանս
մասին բնաւ մի մտահոգիք. հանգիստ
եմ: Ձեզի ամէն շաբաթ 3 քարտ կը
գրեմ: Դուք ալ գոնէ շաբաթը երկու
նամակ դրկեցէք:

Վարուժանը ընտանիքէն նամակ
չստանար եղեր. ինձի տեղեկացուցէք:
Ամուսինդ՝ Ռուբէն



Կնիք

Գրաքննուած է

Չանդըրը

Հասցէն՝ DER SAADET [Պոլսոյ մէջ] PANGALTI Սուրբ Յակոբ
բաղամասը /

Տօքթ. Զիլինկիրեան ընտանիքին

3-8-1915

Սիրելիս

Ձեր ուղարկած հեռագիրը ստացայ: Բայց, մինչև այս օրը, 3 ոսկին
չեմ ստացած: Դրամ ունիմ, շատ հանգիստ եմ:

Ինծի համար բացարձակ մի մտահոգւիք: Չանդըրը-էն Պէյօղլու
վերադարձող Տօքթ. Տինանեանին հետ ուղարկած նուէր Եւ նաև, իրեն
հետ, այժմ մորթ մը ուղարկեցի:


LEOFED BEY-ին գործողութիւնը ինչպէ՞ս անցաւ. մայրիկիս
ձեռքերէն կը համբուրեմ:

Ոսկան էֆէնտի-ին [Մարտիկեան] յարգանքներս կը յայտնեմ. շատ
բարեւներ:

Տղոցը աչքերէն կը համբուրեմ:

Մասնաւոր բարեւներս կը յայտնեմ.

ROUPEN



Կնիք

Գրաքննուած է

Չանդրրը

Սիրելի կինս.

6-8-1915

Յիսուն օր եղաւ քեզմէ բաժնուելս:

Քեզի շատ կարօտցայ. մայրիկիդ բարեւներս յայտնէ. ձեռքերէն կը համբուրեմ: Կը հաւատամ, թէ իմ գործիս համար ամէն տեսակ ձեռնարկները կատարած և բոլոր միջոցներուն դիմած է:

Քեզի շաբաթը անպայման 3 անգամ նամակ գրելովս հանդերձ, քեզմէ շաբաթը անգամ մը նոյնիսկ նամակ ստացած չըլլալս, ինծի ցաւ կը պատճառէ: Արդեօք պատճառը ի՞նչ է:

Արդեօք տղոցը հետ շատ զբաղած ես: Եւ կամ անհանգիստ ես: Անգամ մը Տօքթ. Թորգոմեանին քննելու գնայ և առողջութեանդ ուշադրութիւն ըրէ:

Ուղարկած POST-ի PAQUET-ը այսօր ստացայ և գոհ մնացի:

Այստեղ ցուրտերը սկսան: Հոն ինչպէ՞ս են օդերը: Յուսամ, որ Աստուծոյ օգնութեամբ, ձմեռ չեկած, կը տեսնուիմք:

ROUPEN

Տօքթ. Չիլինկիրեանի կողմէ



Կնիք

Գրաքննուած է

Չանդըբը

Հասցէն՝ DER SAADET [Պոլսոյ մէջ] PANGALTI, Sopp. Չիլիկկիրեան
ընտանիքին, պարզ ապահովագրուած:

[15-8-1915]

Սիրելի կինս.

Ձեր գտնուած յարկաբաժինէն մի ելլէք: Որովհետեւ ես, սպայ
ըլլալուս, տանտէրը ձեզի չի կրնար տունէն հանել:

Տունին վարձքն ալ մի աւելցնէք, և աւելի մի վնարէք:

Իմ ձեր և տղոց առողջութեան և կեցութեան համար պէտք եղած...

... իմ վերադարձս ապահովելու համար դիմեցէք: Անոնք իմ
բարեկամը՝ Շեհմուզ պէյը շատ մօտէն կը նանչնան. եւ իմ վերադարձս
համար երաշխաւոր կ'ըլլայ..... եւ ինձնի Պոլիս առնել տայ:

Մասնաւորապէս քու առողջութեանդ համար շատ մտահոգ եմ:

Արդէն իմ առողջութիւնս ալ խանգարուեցաւ: Գրեթէ հիւանդ վիճակի
մէջ եմ:

Այլեւս բարին ըլլայ.

ROUPEN



Կնիք

Գրաքննուած է

Չանդըրը

Հասցէն DER SAADET- [Պոլսոյ մէջ] BEYOGLU Բանըալքը.
Նալպանդ փողոց. Տօքթ. Չիլինկիրեան ընտանիքին:
[18-8-1915] KENGURU [Չանդըրը]

Սիրելի կինս.

Երեկ նամակդ ստացայ: Ես քեզի ամէն շաբաբ երկու երեք բացիկ կը գրեմ: Դուն անգամ ինծի համար չես աշխատիր: Քանի մը օրէ ի վեր անհանգիստ եմ:

Պոլիս վերադարձիս համար ինդրանք ներկայացուցէք: Յարկաբաժինէն մի ելլեր: Դրամ ալ մի տար, բացարձակ դրամ առնելիք չունի:

Ուրիշ յարկաբաժին ալ մի փնտռեր:

Ես սպայ ըլլալուս MAVROPOULOS-ի յարկաբաժինէն դուրս չի կրնար հանել:

Չեր ուղարկած 9 ոսկին ստացայ: Երկու աչքերեդ և տղոցը երկու աչքերէն կը համբուրեմ:

Մայրիկիդ ձեռքերէն կը համբուրեմ:

ROUPEN

ԹՐԲԱԿԱՆ ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՆԵՐՐ

Ամերիկացիները, բաւական ատենէ ի վեր, մանաւանդ ամերիկացիներուն գործակատար Լեւոն Տէր Պետրոսեանէն սկսեալ կը պարտադրեն հայերուն, որ բանակցին թուրքերուն հետ և հաշտուին:

Չենք գիտեր, թէ ի՞նչ կայ բանակցելիք թուրքերուն հետ:

Այսօր, 1915-ի Եղեռնէն 88 տարի յետոյ, մտածենք և ջանանք հասկնալ իրականութիւնները:

1.- Թրքական իրականութիւնը

Թուրքերը, պետութիւն ըլլալով, ամէն տարի քիչ մ'աւելի կը գորացնեն 1915-ի Եղեռնին դէմ իրենց ուրացումի կեցուածքը:

Հրեայ վարձկան պատմագէտ-գործակալներու և նաեւ դրուժան հայերու հետ գործակցաբար, հրատարակութիւններով և ամէն տեսակ ծանուցումներով թուրքերը կ'աշխատին «փաստել», որ 1915-ին կատարուածը ցեղասպանութիւն չէր, այլ՝ պատերազմի ընթացքին կատարուած շատ բնական, պետական «ինքնապաշտպանական» կարգադրութիւններ, «ապահովական միջոցառում»:

2.- Հայկական իրականութիւնը

Հայաստանի մէջ, 50 տարիներ տեւողութեամբ «մոռացուած» 1915-ի Եղեռնը, 1965-թ.էն ի վեր յիշատակուիլ սկսաւ: Բայց մենք կը հաւատանք, որ Հայաստանի ժողովուրդին այսքան տարիներու «մոռացում»էն յետոյ Եղեռնը վերյիշելը, հոգեկան խորք չունեցող, ձեւական պարտականութիւն է միայն:

1915-ի Եղեռնի բուն գոհները եղած Սփիւռքի հայ ժողովուրդին շառաւիղները, այսօր չորրորդ սերունդը կը կազմեն և որոնք, մեծ մասամբ, հայերէն չեն գիտեր և շատերն ալ օտարներու հետ ամուսնացած են:

Եւ Սփիւռքի հայութեան Եղեռնի հանդէպ կեցուածքը, որոշ

տարիներէ ասդին, «Վարդանանց»ի նման կրօնա-պատմական յիշատակի օրուան մը վերածուած է:

Մեր այս վարկածը հաստատելու համար, այստեղ պիտի նշենք այս տարուան 24 Ապրիլին, Փարիզի մէջ կատարուած հանդիսութեան կարգ մը դրուագներ, որոնց մասին մեր գաղափարները պիտի ջանանք տալ:

Փարիզի մէջ, Կոմիտասի արձանին բացման հանդիսութիւնը կատարուեցաւ, 24 Ապրիլ 1915-ի Եղեռնի յիշատակման նոյն օրը:

Շամիրամ Սեւակ ուզեց ներկայ գտնուիլ Կոմիտասի արձանին բացման հանդիսութեան նկատելով, որ Կոմիտասը իր հօր բարեկամը եղած էր:

Եւ նաեւ 19-6-1915-ին, Պոլսոյ մէջ, Կոմիտասը ներկայ եղած էր Շամիրամ Սեւակին մկրտութեան արարողութեան:

Եւ 24 Ապրիլ 2003-ի Հինգշաբթի օրը, ժամը 11:00-ին, Շամիրամ Սեւակ կը գտնուէր արդէն, ներմակ շղարշով մը ծածկուած Կոմիտասին արձանին առջև:

Եւ բարեբախտաբար, Շամիրամը նանչցող և գնահատող Ալեն Քեպապնեանի և Ալեքսիս Կեօվնեանին շնորհիւ, ան կ'առաջնորդուի պատուոյ ամպիոն:

Հոն ներկայ են, ծանօթ հայ և օտար անձնաւորութիւններ:

Եւ Շամիրամը կը նստեցնեն նկարիչ Ժանսեմ-ին քովը:

Քիչ ետք կը ժամանէ ֆրանսահայ մեծահամբաւ երգիչը որ, պատուոյ հիւրերուն առջեւէն անցած միջոցին, կը բարեւէ Ժանսեմին և կը ձեռնուի իր հետ: Եւ, առ ի քաղաքավարութիւն, անուանի նկարիչին քով նստած տիկնոջ՝ Շամիրամին ալ կը բարեւէ և անոր ձեռքը կը սեղմէ:

Շամիրամ կը ծանօթացնէ ինքզինքը.- «Ես, Շամիրամ Սեւակ՝ Ռուբէն Սեւակին աղջիկը» կ'ըսէ. Հայ երգիչը կը պատասխանէ՝ "Je ne connais pas" [չեմ՝ նանչնար]: Շամիրամ կ'ուզէ քիչ մը բացատրութիւն տալ՝ «Ռուբէն Սեւակը, 24 Ապրիլ 1915-ի նահատակներէն, բժիշկ-բանաստեղծ Ռուբէն Սեւակը»: Անուանի արուեստագէտը կրկին, նոյն ձեւով կը պատասխանէ՝ "Je ne connais pas" [չեմ՝ նանչնար]: Այս մեծահամբաւ հայուն, որ գալ տարի իր 80 տարիքը պիտի թեւակոխէ՝ հայրը և մայրը զարգացած հայեր էին: Երբ այսօր 80 տարեկան հայ անձնաւորութիւն մը չի՝ նանչնար 24 Ապրիլի նահատակներէն նշանաւոր Ռուբէն Սեւակը, ինչպէ՞ս դեռ կրնանք

յոյսեր դնել այսօրուան [Եղեռնէն ետք եկող] նոր սերունդին և մանաւանդ ապագայ սերունդներուն վրայ, որ անոնք հայ պիտի կրնան մնալ և պիտի գիտնան 24 Ապրիլ 1915-ի Եղեռնին պատմութիւնը ու 24 Ապրիլ 1915-ի հայ ազգին նակատագրին վրայ ունեցած մահացու դերը:

Սփիւռքի հայութեան վրայ յոյս դնող անձնաւորութիւնները՝ անիրատես, անհեռատես, երազատես մտային կառոյց ունեցողներ են, որոնք յարդի բոցերը, հեռուներէն դիտելով, արեւի շողեր կը կարծեն:

Սփիւռքի հայութիւնը՝ օտարասիրութեան հիւանդութեամբ վարակուած հոգեվարող հիւանդ մըն էր, որ իր հիւանդութեամբ կը վարակէ Հայաստանի հայութիւնը:

Միայն հայրենի հողն է՝ Հայկականը եւ «Յաւերժականը»:

* * *

ՄԵՐ ՅԱՊԱՂԱՄ ԾՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ ՊԱՐՏՔԸ

«Նայիրի»ի առաջին թիւերէն սկսեալ, մեր գաղափարներուն համակարծիք եղող հայրենակիցներէ քաջալերական գրութիւններ ստացանք՝ Սփիւռքի զանազան վայրերէն:

Այստեղ կ'ուզենք մեր խորին շնորհակալութիւնները յայտնել իրենց, մանաւանդ՝ Պրազիլէն՝ Ալպէո Քեօսեանին, Պէյրութէն՝ Մէլրիին, Փարիզէն՝ Գեորգ Պագըրնեանին, Երեւանէն՝ Վլատիմիր Պետրոսեանին և Ռոմէն Կոզմոյեանին, Պէյրութէն՝ Արտաշէս Գույումեանին, Ապու Տապիէն՝ Անդրանիկ Տաղլեանին, Պէյրութէն՝ Հայկ Փեշտիմալեանին, Պէյրութէն՝ Յովհաննէս Հելվանեանին, Պէյրութէն՝ Վազգէն Թիւթիւնեանին, Պէյրութէն՝ Մկրտիչ Արսլանեանին և Յակոբ Գույումեանին:

Հայրենասիրութեան գաղափարները՝ բուարանութեան օրէնքներուն նման, ամէն կողմ նոյնն են, բնաւ չեն փոխուիր:

Եւ մեզ իրարու կապողը՝ հայրենասիրութեան նոյն գաղափարներն են:

Շնորհակալութեամբ և լավագոյն մաղթանքներով՝

Յովհաննէս Զիլինկիրեան

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ՝

ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ ՆԱՀԱՏԱԿՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

«ՆԱՅԻՐԻ»-ի ՅՈՒՆՈՒԱՐ 2003-ի «ԲԱՑԱՌԻԿ»-էն ՍԿՍԵԱԼ, ՄԻՆԶԵՒ 15 ԱՊՐԻԼ 2003-ի «ՆԱՅԻՐԻ»-ի ԷԶԵՐՈՒՆ ՄԷՋ, ՏԱԼՈՒ ԶԱՆԱՑԻՆՔ ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ ՆԱՀԱՏԱԿՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ԶԱՆԱԶԱՆ ԱԿԱՆԱՏԵՍՆԵՐՈՒ ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐԸ:

«ՆԱՅԻՐԻ»-ի ԱՅՍ ԹԻՒԷՆ ՍԿՍԵԱԼ ԱԼ, ՏԱԼՈՒ ՊԻՏԻ ԶԱՆԱՆՔ, ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ ՆԱՀԱՏԱԿՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ԵՒ, ԸՆԴՀԱՆՐԱՊԷՍ ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ ՄԱՍԻՆ ՄԵՐ ՏԵՍԱԿԵՏՆԵՐԸ:

ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿ ԻՆՉՈՒ ՄՈՌԱՑՈՒԹԵԱՆ ԵՆԹԱՐԿՈՒԵՑԱԿ:

ՈՐՈՎՀԵՏԵՒ, ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿ ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ԶԷՐ:

ՌՈՒՔԵՆ ՍԵԼԱԿԻ դաշնակցական չըլլալը ապացուցանող երկու փաստաթուղթեր կը հրատարակենք՝

1.- Արսէն Կիտուրի 1962-ին Պէյրուք հրատարակուած «Պատմութիւն Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան» գիրքին առաջին էջը և 452 և 453 էջերէն մասեր, որոնց մէջ կ'ըսուի, թէ՛ **Սիամանթօ, Դանիէլ Վարուժան դաշնակցական են:** Իսկ ՌՈՒՔԵՆ ՍԵԼԱԿ՝ ո՛չ կուսակցական:

2.- Գրիգորիս Մ. Վրդ. Պալաքեանի «Հայ Գողգոթան» գիրքին առաջին էջը և 123 ու 140 էջերը, որոնց մէջ արձանագրուած է, թէ՛

Սիամանթօ դաշնակցական էր:

Դանիէլ Վարուժան՝ դաշնակցական էր:

Իսկ ՌՈՒՔԵՆ ՍԵԼԱԿ՝ ոչ կուսակցական:

Գրիգորիս Մ. Վարդ. Պալաքեան ինչո՞ւ Ռուբէն Սեւակի հանդէպ շատ անարդար գտնուեցաւ «Հայ Գողգոթան» գիրքին Ջանղըրը-է յիշատակութիւններուն մէջ: Որովհետեւ, Գրիգորիս Մայրգ. Վարդ. Պալաքեան՝ դաշնակցականներուն շատ համակիր կրօնական մըն էր:

1.- «Նայիրի»ի 11 Մարտ 2003 թիւ 189-ին մէջ, նշած էինք Գրիգորիս Մ. Վարդ. Պալաքեանին թուրք կառապանին վկայութեան վրայ յենելով 1922-ին գրածները թէ՛ «Միայն Դանիէլ Վարուժանը ինքնապաշտպանութեան դիմած է»:

2.- «Նայիրի»ի 25 Մարտ 2003 թիւ 190-ին մէջ ալ նշած էինք բժիշկ Ս. Զարեանդին 1924-ին, նոյն թուրք կառապանին վկայութեան վրայ յենելով գրածները թէ՛ «Միայն Ռուբէն Սեւակ ինքնապաշտպանութեան դիմած է»:

3.- Նոյնպէս՝ «Նայիրի»ի 8 Ապրիլ 2003 թիւ 191-ին մէջ նշեցինք՝ 1919-ին Պոլսոյ «Նոր կեանք» թերթին իբր «Վերջին ժամ»ուան հաղորդումը, որուն մէջ նոյն թուրք կառապանը կը վկայէր, թէ՛ «Խեղճ գոհները չէին կրնար իրենք զիրենք պաշտպանել, ձեռքերնին կապուած էր»:

4.- «Նայիրի»ի 15 Ապրիլ 2003 թիւ 192-ին մէջ ալ, առաջին անգամ ըլլալով, հրապարակեցինք Պոլսոյ Գերմանական դեսպանատան 8-12-1915 թուակիր գերմաններէն նամակը, Լոզան, Ռուբէն Սեւակի կնոջ ուղղուած, որուն մէջ կ'ըսուէր, թէ՛ Ռուբէն Սեւակին մահը՝ հրացանի մը պատնառած վերքի հետեւանք է:

Այս գերմանական վկայութիւնը, ուր կ'ըսուի, թէ Ռուբէն Սեւակը զէնքով սպաննուած է՝ բոլորովին տարբեր բացատրութիւն մըն է, հայկական յիշատակութիւններէն, որոնց բոլորին մէջ ալ, Ռուբէն Սեւակին և իր ընկերներուն նահատակութիւնը դաշունահարումով կատարուած ըլլալը կը պատմուի:

**ՉՈՐՄ ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ, ՈՐՈՆՔ [ՉՈՐՄՆ ԱԼ] ԻՐԱՐ
ԿԸ ՀԱԿԱՍԵՆ**

Բայց այստեղ, ձեր ուշադրութիւնը կը հրաւիրենք հետեւեալ իրականութեան վրայ:

Այս չորս վկայութիւններուն չորսին աղբիւրներն ալ թրքական են: [Այս սարսափելի սպանդէն ոչ մէկ հայ ազատած է, որ կարենայ վկայութիւն կատարել]:

Առաջին երեք վկայութիւնները՝ նոյն թուրք կառապանին վկայութիւններն են որոնք, հայերու կողմէ, տարբեր ձեւերով ներկայացուած են:

Չորրորդը, կրկին, թրքական է: Գերմանական դեսպանատան կողմէ Ռ. Սեւակին կնոջ դրկուած նամակին մէջ ըսուածները, բոլորն ալ, թրքական կառավարութեան կողմէ գերմանացիներուն տրուած շինծու տեղեկութիւններն են:

Բնական է, որ թուրք կառավարութիւնը, գերմանական դեսպանատան չէր կրնար ըսել, որ Ռուբէն Սեւակ դաշունահարուելով և բարբարոսաբար սպաննուած է:

Իսկ գալով Պալաքեանին նշած վկայութիւններուն՝ անոնց մասին հետեւեալը ըսել կ'ուզենք՝ Պալաքեան կ'ըսէ, թէ «Միայն Դանիէլ Վարուժանը ինքնապաշտպանութեան դիմած է»:

Այստեղ, սա հարցը կը ծնի մեր մէջ - Այս թուրք կառապանը ի՞նչ գիտէր, թէ հինգ հայերուն մէջէն ո՞րը Ռուբէն Սեւակն էր, և ո՞րը Դանիէլ Վարուժանը: Ո՞ւրկէ կը ճանչնար զանոնք, որ հեռուէն պիտի կրնար զանազանել ամէն մէկը:

Արդէն, 17 Յուլիս 1919-ին, Պոլսոյ «Նոր կեանք» թերթին մէջ հրատարակուած նոյն թուրք կառապանին բուն վկայութեան մէջ, ան սպաննուած հինգ հայերուն մասին ընդհանուր առմամբ կը խօսի: Եւ ոչ մէկուն համար առանձին տեղեկութիւն կու տայ՝

«Էֆէնտիներուն ձեռքերը կապեցին», «Էֆէնտիները չարչարանքներով սպաննեցին» կ'ըսէ:

Պալաքեանին կատարած այս շինծու վկայութիւնը՝ դաշնակցական **Դանիէլ Վարուժանը հերոսացնելու և բուն հերոսը՝ Ռուբէն Սեւակը նսեմացնելու համար հնարուած ցաւալի սուտ մըն է, դժբախտաբար:**

Պալաքեանին Ռուբէն Սեւակը նսեմացնելու համար կատարած սադրանքները, այսքանով չեն աւարտած:

Պալաքեան [իբր քէ] բուրք կառապանին հետեւեալ վկայութիւնը կը նշէ. **«Ապա գողօնը բաժնելով իրենց մէջ և սօքք. Զիլինկիրեանի ու Օննիկ Մաղազանեանի զգեստներուն երիզներուն մէջ կարուած աւելի քան 450 օսմանեան հնչուն ոսկին եւս առնելէ վերջ...»:**

Այս ի՛նչ գարշելի վիրաւորանք է, Ռուբէն Սեւակին սուրբ յիշատակին հասցւած:

Պալաքեանին վկայութեանն այնպէս կը կարծուի, քէ Ռուբէն Սեւակ իր վրայ հարիւրաւոր ոսկի ունէր:

Այն Ռուբէն Սեւակը որ, Զանդըրը-էն իր կնոջ գրած նամակին մէջ կ'ըսէր քէ՛ **[Պոլսոյ Կեդրոնական վաժարանի ուսուցիչ ըլլալու հանգամանքով] «ամառուան ամսաթոշակս եղող ինը ոսկին գանձելով ինծի դրկեցեք»:**

Եւ նաեւ, իր կնոջ գրած մէկ ուրիշ նամակին մէջ կ'ըսէր [Պոլսոյ իրենց բնակարանին վարձքը աւելցնել ուզող տանտէրին համար] քէ՛ «Վարձքը մ'աւելցնէք: Ես, սպայ ըլլալուս, ձեզի տունէն չեն կրնար հանել»:

Նիւթական դժուարութեան մէջ եղող Ռուբէն Սեւակին համար Պալաքեանին **«Ռ. Սեւակին վրայէն հարիւրաւոր ոսկի ելաւ»** ըսելը, **ոչ քէ կրօնականի, այլ նախանձայոյզ և անարդար խառնուածք ունեցող, եսակեդրոնի մը վայել կեցւածք է միայն:**

* * *

Բայց, Պալաքեանին Ռուբէն Սեւակին դէմ կատարած անարդարութիւնները, այսքանով ալ չեն աւարտիր:

«Նայիրի»ի Յունուար 2003-ի բիւերէն սկսեալ մինչեւ վերջիններուն մէջ նշեցինք, Զանդըրը-ի Ռուբէն Սեւակի արտօքալ, բայց վերապրող ընկերներուն իր՝ Սեւակի հերոսական կեանքին վերջին օրերուն մասին ըրած վկայութիւնները: Մանաւանդ՝ Միքայէլ Շամտանեանին, բժիշկ Վահան Ալբունեանին և Յովհան Վարդապետ Կարապետեանին ականատեսի վկայութիւնները՝ որոնց մէջ կը պատմէին բուրք «երեւելի»ին [իր աղջիկը մահուրնէ ազատած] Ռուբէն Սեւակին կատարած առաջարկը: Թուրք երեւելին, Ռուբէն Սեւակին կ'առաջարկէր՝ **«Զինքը ստոյգ մահէ ազատել՝ պայմանաւ, որ Ռուբէն իսլամանայ եւ իր աղջկան հետ ամուսնանայ»:**

Հակառակ, որ բոլոր ընկերները Ռուբեն Սեւակին կը յանձնարարէին, որ ընդունի իսլամանալու առաջարկը և կեանքը փրկէ», Ռուբեն Սեւակ կը մերժէ իսլամանալը: Եւ՝ **«Թրքանալը՝ նուաստանալ է»** կ'ըսէ:

Պալաքեանն ալ, իր յուշերուն մէջ կը նշէ, **«թուրքին, Ռուբեն Սեւակը մահէն ազատելու առաջարկը՝ պայմանաւ, որ իսլամանայ և իր աղջկան ճետ ամուսնանայ»...** Բայց, այսքան՝ միայն: Պալաքեան իր գիրքին մէջ՝ չէ գրած կարեւորագոյնը, թէ ինչն է **«Ռուբեն Սեւակ մերժած է իսլամանալու առաջարկը թուրքին: Ու նախընտրած է մեռնիլ, քան թէ թրքանալ»:**

Պալաքեան իր «Հայ Գողգոթան» գիրքին մէջ չէ նշած նաեւ Չանդըրը-ի հայ աքսորեալներուն կեանքին մէջ պատահած, հայուրեան համար շատ կարեւոր հետեւեալ եղելութիւնը...

Աղուէս թուրքերը Չանդըրը-ի մտաւորական աքսորեալներուն հետեւեալ ծուղակ-առաջարկը կ'ընեն: «Ա՛յն աքսորեալ հայը, որ իսլամութիւնը կ'ընդունի՝ պիտի ազատի մահէն»:

Հայ մտաւորական աքսորեալներուն մէջէն, կարգ մը տկար հոգիով անձեր, ենթարկուելով թուրքին նենգամիտ առաջարկին, կը պատրաստուին իսլամանալու, որ կարեւոր մահէն ազատիլ:

Երբ Ռուբեն Սեւակ ասոր տեղեակ կ'ըլլայ՝ հայուրեան համար այս նուաստացուցիչ կացութեան, խնդրոյ առարկայ տկարացած հոգիներուն քով կ'երթայ և օրերով կ'աշխատի համոզել գիրենք, որ չիսլամանան:

Եւ անոնց կ'ըսէ, թէ՝ **«Մահը անելի լաւ է իսլամանալէ»:**

Եւ, **«զատ-զատ երդում ընել կու տայ ամէ՛ն անոնց, որոնց հոգիի ուժին վրայ կասկած ունէր, թէ՛ հաւատարիմ պիտի մնան իրենց լռյս հաւատքին»:**

* * *

1.- Իբր կրօնական՝ Պալաքեանին համար անցերելի է Չանդըրը-ի մէջ, թուրքերուն ըրած ծուղակ առաջարկին և կարգ մը աքսորեալներուն իսլամանալու ճամբով ազատիլ ուզելուն մասին իր գիրքին մէջ գրած չըլլալը:

2.- Իբր կրօնական, Պալաքեանին **Ռուբեն Սեւակին իսլամանալով կեանքը ազատելու տեղ, մեռնի՛լը նախընտրելուն մասին իր գիրքին մէջ գրած չըլլալը, նոյնպէ՛ս, անցերելի է:**

Պալաքեան չի կրնար տեղեակ եղած չըլլալ, վերը նշուած և շահ տխորիմաստ եղելութիւններուն:

Իր պաշտօնակիցը՝ Յովհան Վարդ. Կարապետեան տեղեակ էր...:

Եւ Չանդըրը գտնուող գրեթէ բոլոր աքսորեալները տեղեակ էին այս եղելութիւններուն:

Պալաքեանին այս մասին արտայայտուած չըլլալը՝ դաշնակցականամիտ ըլլալով, այս կուսակցութեան ուղեգիծին ոտք յարմարցնել ուզելուն պատճառաւ է:

Ապացուցանելու համար մեր այն վարկածը, թէ Չանդըրը-ի գրեթէ բոլոր աքսորեալ հայերը տեղեակ էին Ռուբէն Սեւակի Չանդըրը-ի հերոսական կեանքին պատմութեան, «Նայիրի»ի յառաջիկայ թիւին մէջ պիտի հրատարակենք Չանդըրը աքսորուած բայց վերապրած պոլսեցի սեղանաւոր Յովհաննէս Թերլէմէզեանի վկայութիւնները:

**ՊԱԼԱՔԵԱՆԻՆ ՌՈՒՐԷՆ ՍԵՒԱԿԻ ՀԱՆԴԷՊ ԿԱՏԱՐԱՄ
ԱՆԱՐԴԱՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐԸ -**

ԴԻՊՈՒԱՄ ԹԷ՞ «ԱՍՏՈՒԱՄԱՅԻՆ ՊԱՏԻԺ»

**ՌՈՒՐԷՆ ՍԵՒԱԿԻ ԲԱԽՏԱԿԻՑ, ՉԱՆՂԸՐԸ ԱՔՍՈՐՈՒԱՄ
ԲԱՅՑ ՎԵՐԱՊՐԱՄ ՊՈԼՍԵՑԻ ՍԵՂԱՆԱՒՈՐ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹԷՐ-
ԼԷՄԷՋԵԱՆԻ ՎԿԱՅՈՒԹԻՒՆԸ**

**1952-ԻՆ ՓԱՐԻՋ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԱՄ «1915 - ԱՂԷՏ ԵՒ ՎԵՐԱ-
ՄՆՈՒՆԴ» ԳԻՐՔԷՆ ՀԱՏՈՒԱՄ - ՄՏԱՒՈՐԱԿԱՆՆԵՐՈՒ ՉՆԵՐ-
ԲԱԿԱԼՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՔՍՈՐԸ**

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹԷՐԼԷՄԷՋԵԱՆ

«1915 Ապրիլ 10-23-ի երեկոյեան, Պոլիս, խանութիս մէջ գրա-
դած էի, երբ ոստիկան մը գալով զիս պահականոց առաջնորդեց,
առանց թոյլ տալու մէկ վայրկեան, որ գոյքերս հաւաքեմ»:

Պահականոցին մէջ երկար սպասեցի: Հետզհետեւ ուրիշ ձերբա-
կալուածներ ալ եկան, և առանց հարցաքննութեան դրկուեցանք
կեդրոնական մեծ բանտը:

Այդ գիշեր և յաջորդ առտու, ձերբակալուեցան հայ կարեւոր
դեմքեր՝ մտաւորական, յեղափոխական գործիչ, բժիշկ ևլն, մօտա-
ւորապէս 200 անձ:

Յաջորդ գիշեր, Ապրիլ 11-24-ին, բանտէն քամիոններով
փոխադրուեցանք Սարայ-Պուռնու, ուր արդէն յատուկ շոգեհաւ մը
կը սպասէր:

Շատեր վախցան թէ՛ ծով թափելու համար շոգեհաւ կը դրուէին:
Բայց, Հայտար-փաշա տարուեցանք և, մասնաւոր գնացքով, մեզ
նամբայ հանեցին դէպի Էնկիւրիւ: Գնացքին մէջ **ԱԿՆՈՆԻՆ ԵՒ
ԸՆԿԵՐՆԵՐԸ Կ'ՐՍԷԻՆ ՔԷ՛ «ՈՂԻՆՅ, ՍԽԱՅՈՒՄԻՆ ՄՐ ԿԱՅ: ՎԱՂՐ
ՎԱՐՊԳԷՍՐ, ԹՎԱՅԻՆ ՊԻՄԵՆՈՎ, ՎԵՐԱՊԱՐՈՒԵԼՈՒ ԿՐԱՄԱՆ Կ'ԱՌՆԷ
ՄԵԳԻ ԿՐԱՄԱՐ»:**

Էնկիւրի հասնելէ առաջ, Այաշի կայարանին մէջ զատեցին աչքի ինկող յեղափոխականները և ղրկեցին Այաշի բանտը:

Անոնցմէ քիչեր միայն ազատեցան, իսկ մնացեալները, ի վերջոյ, չարաչար խողխողուած էին **[Ակնունի, Խաժակ, տօքթ. Տաղաւարեան, Ռ. Ջարդարեան, Հրանդ Կիւրնեան, Հրաչ Քիրեաքեան և այլն]**:

Այաշի կայարանէն Էնկիւրի տարուեցանք, ուր արտօնեցին, որ Պոլիս՝ մեր ընտանիքներուն հեռագրենք:

Վերջէն տեղեկացանք, թէ հեռագիրները չէին ղրկուած:

Էնկիւրիէն, բեռան կառքերով, մեզ ղրկեցին Չանղըրը: Երկրորդ իրիկունը Չանղըրը հասանք և մեզ բանտարկեցին քաղաքէն քիչ հեռու, հին զօրանոցի մը մէջ:

Յաջորդ օրը, բոլոր բանտարկեալներս հաւաքուեցանք և հսկում կատարեցինք:

Երեք վարդապետ - Կոմիտաս, Պալաքեան և Յովհան Կարապետեան - «Տէր ողորմեա՛» երգեցին: Ամէնքս ծունկի եկած էինք:

Կոմիտաս Վրդ. շատ յուզուած էր և կ'արտասուէր: Այդ «Տէր ողորմեա»ն անմոռանալի եղաւ բոլորիս համար:

8-10 օր ետք, արտօնուեցանք քաղաքին մէջ բնակելու, պայմանաւ, որ ամէն օր ներկայանանք ոստիկանատուն:

Կոմիտաս և Յովհան Վարդապետները, Տիրան Քելեկեան, Յակոբ Քարեան և ես, Չերքեզեան անուն հայու մը տունը վարձեցինք: Միւսներն ալ՝ ուրիշ տուներ:

Յաջորդ Կիրակի, Կոմիտաս Վրդ. պատարագեց: Անոնք, որ ներկայ եղած են իր պատարագին գիտեն, թէ ինչ հոգեզմայլ հանդէսի մը ներկայ կը գտնուէին: Բայց այդ օրը, Կոմիտաս գերազանցեց ինքզինքը:

Երբ յուզուած և սքանչացած կ'աղօթէինք, Կոմիտասի արձակման հեռագիրը հասաւ:

Առաջին քստրեալն էր, որ պիտի վերադառնար Պոլիս:

Իր ազատ արձակման հրամանը կը վերագրուի ամերիկեան դեսպանին և կամ գահաժառանգ Մէնիտ Էֆենտիի միջնորդութեան, որովհետեւ երկուքն ալ սիրահար էին գեղարուեստին:

Կոմիտասէն ետք, քանիներ եւս յաջողեցան հետզտետէ ազատիլ և վերադառնալ Պոլիս, իսկ մնացեալները՝ դէպի անապատ ճամբայ հանեցին և ամէնքն ալ անխնայ սպաննեցին:

Զանդըրը-ի իբթիհատականներուն պետին աղջիկը կը հիւանդանայ այդ օրերը և աքսորեալներէն տօքթ. Տինանեանը կը կանչուի գինքը դարմանելու: Այդ միջոցին կը հասնի տօքթ. Տիտանեանի ազատ արձակման հրամանն ալ, որով տօքթ. Սևակը կը յաջորդէ տօքթ. Տինանեանին, յիշեալ աղջիկը դարմանելու համար:

Աղջիկը կը սիրահարի տօքթ. Սևակին:

- Դուք, ամենքդ ալ, դատապարտուած էք մահուան,- կ'ըսէ աղջկան ճայրը տօքթ. Սևակին: - Կ'ուզեմ քեզ ազատել, պայմանաւ, որ իսլամանաս և ամուսնանաս աղջկանս հետ:

Տօքթ.ը մեր տունը եկաւ խորհուրդ հարցնելու:

Յովհան Վարդապետ, Քէլէկեան և ամէնքս խորհուրդ տուինք իրեն՝ իսլամութիւնը ընդունիլ և ամուսնանալ:

Ապագային, երբ պարագաները փոխուին, ըստ այնմ վարուիլ:

Ըսինք, թէ իր մահը ոչ մէկ օգուտ կը բերէ, ո՛չ ազգին, ո՛չ իր ընտանիքին:

- Չեմ կրնար ճամոզուիլ այն գաղափարին հետ,- ըսաւ տօքթ. Սևակ,- որ մահէն վախճալով ուրանամ ազգ եւ ընտանիք»: Եւ նախընտրեց մեռնիլ...»

Պոլսեցի սեղանաւոր Յովհաննէս Թերլեմէզեան

* * *

Պոլսեցի սեղանաւոր Յովհաննէս Թերլեմէզեան, իր այս գրութեան մէջ, շատ պարզ, բայց իրապաշտ լեզուով տուած է՝ զարհուրելի պատմութիւնը 24 Ապրիլ 1915-ին Այաշ և Զանդըրը աքսորուած հայ երեւելի անձնաւորութիւններուն:

Եւ մանաւանդ՝ Յովհաննէս Թերլեմէզեան այս յուշերուն մէջ, քանի մը տողերով բայց շատ խորիմաստ կրցած է տալ Զանդըրը-ի մէջ, Ռուբէն Սևակի հերոսական կեանքին պատմութիւնը, զոր Պալաքեանին... 800 էջնոց «Հայ Գողգոթան» գիրքին մէջ... կարելի չէ գտնել:

Դժբախտաբար, հայ ժողովուրդը, 24 Ապրիլ 1915-ի մտաւորական նահատակներուն մասին, միայն Պալաքեանին «Հայ Գողգոթան» գիրքը ունի իբր պատմութեան գիրք, իբր տեղեկութեան աղբիւր:

Բայց Պալաքեանին «Հայ Գողգոթան» գիրքը՝ սխալ վկայութիւններով. և, մանաւանդ, ինքնագովութիւններով լեցուն յուշա-

գրութիւն մըն է, որ վերջերս ֆրանսերէնի ալ քարգմանուեցաւ:

Եւ շատ մը գրողներ, առանց գիտնալու, կ'արտասպեն «Հայ Գողգոթան» գիրքին մէջ գրուած սխալ տեղեկութիւնները:

Այս սխալներուն «գոհը» եղաւ նաեւ 1982-ին, Մեծ Վարպետ՝ Անդրանիկ Ծառուկեանը: -

Տէր և տիկին Անդրանիկ Ծառուկեանները, 1981-ի ամրան, Նիսի մէջ, Ռուբէն Սեւակի [ապագայ] Յիշատակի տունը այցելեցին:

Եւ այդ օր մենք, Անդրանիկ Ծառուկեանին տուինք, Ռուբէն Սեւակի վերաբերեալ կարգ մը պատճեններ:

Եւ ուրախութեամբ ստացանք «Նայիրի»ի 15 Փետրուար 1982 թիւը որ, գրեթէ ամբողջութեամբ, Ռուբէն Սեւակի մասին գրութիւններու յատկացուած էր:

Բայց, նոյն թիւին 3-րդ էջին մէջ, արտասպուած էր նաեւ Պալաքեանին «Հայ Գողգոթան» գիրքէն հատուած մը, ուր կը նշուէր բուրբ կառապանին Ռուբէն Սեւակի նահատակութեան նկարագրութեան Պալաքեանի կողմէ խեղաթիւրուած, սխալ մեկնաբանութիւնը, հետեւեալ տողերով՝

«... Հազիւ կառքերէն վար իջած, տօքք. Զիլինկիրեան կը խնդրէ քախանձագին այս 4 քիւրտերէն, որ խնայեն իրենց կեանքին, և ինք կը խոստանայ իր ընկերներուն հետ տալ իրենց ամբողջ հարստութիւնը և գոյքերը»:

«Ասոնցմէ միայն Դանիէլ Վարուժան ինքնապաշտպանութեան կը դիմէ...» «... Ապա գողօնը բաժնելով իրենց մէջ և տօքք. Զիլինկիրեանի ու Օննիկ Մաղազանեանի զգեստներուն երիզներուն մէջ կարուած աւելի քան 450 օսմ. հնչուն ոսկին եւս առնելէ վերջ...»

«Հայ Գողգոթան» - Գրիգորիս Մ. Վրդ. Պալաքեան»

«Նայիրի» Պէյրութ 15 Փետրուար 1982

* * *

ՌՈՒՔԷՆ ՍԵՒԱԿԻ «ՀՈԳԻՆ» ՊԱՏԺԵՑ՝ ԻՐԵՆ ԴԷՄ ԱՆԻՐԱԿ ԵՒ ԱՆԱՐԴԱՐ ԳՏՆՈՒԱԾ ՊԱԼԱՔԵԱՆԸ ՄԱՐՍԻԼԻՈՅ ՄԷՋ

Դուք, նախախնամութեան կամ հակատագրին կը հաւատա՞ք:

Մենք ալ, բնաւ չենք հաւատար:

Բայց հիմա պիտի ջանանք պատմել եղելութիւն մը, որուն եզ-

րակացութիւն - որոշումը դուք տուէք: Ըսէ՛ք՝ թէ այս եղելութիւնը, դիպուածի արդիւնք է. կամ նակատագրի՞ն գիծն է, և կամ թէ՛ «աստուածային» պատի՛ժ մը:

Պալաքեան, իր յուշերը գրած է, «Հայ Գողգոթան» վերնագրով գիրքին մէջ, որ հրատարակուած է երկու հատորներով:

Պալաքեան այս գիրքին մէջ կու տայ 24 Ապրիլ 1915-ին սկսած և առաջին հանգրուան կազմող Չանդըրը-ի իր աքսորականի կեանքին պատմութիւնը, և կը շարունակէ՝ Չանդըրը-էն յետոյ դէպի Տէր-Զօր գացող իր շատ տառապալից և մահացու երբին նկարագրութիւնը:

Տարիներ տելող և եղեռնի արիւնոտ համբաներէն անցնող այս աքսորականի ողիսականէն հրաշքով ողջ կը մնայ Պալաքեան: Եւ, ի վերջոյ, 1918-ին կը յաջողի, Կիլիկիայէն իբր գերմանացի գինուոր, ծպտուած, գնացքով վերադառնալ Պոլիս:

Եւ, միջոց մը յետոյ՝ գինադադարը կը հասնի: Պալաքեան փրկուած է:

Եւ 4 Յունուար 1919-ին, անգլիական մարտանաւով մը, կը հեռանայ Պոլիսէն: Նախ՝ դէպի Մալքա կղզի, և յետոյ՝ Եւրոպա:

1922-ին, Մանչեստրի մէջ կը գրէ, իր «Հայ Գողգոթան» գիրքը, երկու հատորէ բաղկացած, որուն մէջ իր աքսորականի յուշերը կը պատմէ: Գրեթէ 800 էջնոց այս գիրքին կէսէն աւելին, իր անձնական՝ աքսորականի կեանքին մանրամասնութիւններն են:

Գիրքին առանցքը իր անձին շուրջ կը դառնայ: Միշտ ինք իրաւունք ունի: Միշտ իր մտածումները նիշտ են:

Իր գրութիւններուն մէջ յստակօրէն կ'երեւայ [շատ մը կրօնականներու յատուկ] պարտադրող ու ննշող ղեկավար-առաջնորդի նկարագիրը:

Բայց, մեզի համար, ամենէն կարեւորը՝ 20 Օգոստոս 1922-ին աւարտած իր «Հայ Գողգոթան» գիրքին մէջ, մէկ բառ, մէկ ակնարկութիւն մ'անգամ չկայ 1920-էն ասդին, գրեթէ երկու տարիներէ ի վեր գոյութիւն ունեցող Սովետական Հայաստանի մասին: Ոչ մէկ խօսք: Որովհետեւ, այս Հայաստանը, իր ուզած Հայաստանը չէ:

Եւ այս հոգեվիճակի տէր բոլոր դաշնակցականամիտներուն և անիրատես մտային կառոյց ունեցողներուն նման, «Հայ Գողգոթան»ի յառաջաբանին վերջաւորութեան, մեծ-մեծ տառերով իր «Յորդոր»ը կ'ուտայ՝

«Եւ մի կասկածիր որ քսանեւեհինգ տարի վերջ, Փոքր Ասիոյ և Կովկասի միջեւ, կենսունակ նոր Պուլկարիա մը պիտի ըլլաս ազատ ու անկախ, վերքերդ սպիացած, յարգուած դրացիներէդ և մեծ ու փոքր բոլոր պետութիւններէն»:

Եւ այս դաշնակցականամիտ, անիրատես և անհեռատես կրօնականը 1923-ին, Մարսելի գաղութին վրայ կաթողիկոսական պատուիրակ կը նշանակուի:

Պալաքեան, հակառակ իր երազատես գաղափարներուն, շինարար եկեղեցական մըն էր նոյն ատեն:

1900-թ.ներուն Գերմանիա՝ ուսանողական տարիներուն, աւարտած է համալսարանի Աստուածաբանական և նոյն ատեն Ճարտարագիտութեան ճիւղերը:

Եւ Մարսիլիոյ մէջ Պալաքեան, մեծ աշխատանք կը տանի եկեղեցաշինութեան մարզին մէջ: Եւ կը յաջողի 9 եկեղեցիներ կառուցանել, մասնաւորապէս՝ Մարսիլիոյ Մայր Տանարը և մինչեւ Նիսի եկեղեցին և ուրիշներ:

Բայց, Պալաքեանի շինարարի կարողութիւններու կողքին՝ համայնքային կեանքի մէջ իր ունեցած կեցուածքն ալ կարելոր է:

Դժբախտաբար, հայ ժողովուրդը, ամէն տեղ եղածին նման, բաժանուած էր երկուքի: Նոյնն է պարագան Մարսիլիոյ մէջ՝ դաշնակցական և հակադաշնակցական, Սովետական Հայաստանի համակիրներ, և Սովետական Հայաստանի դէմ եղողներ:

Եւ դժբախտաբար [կամ բարեբախտաբար] Մարսիլիոյ մէջ դիպուածը, կամ նակատագիրը և կամ նախախնամութիւնը Պալաքեանին դէմ կը հանէ՝ Մարսիլիոյ Թաղական Խորհուրդի ատենապետը եղող բունդ հայրենասէր, Սովետական Հայաստանի համակիր, պոլսեցի մտաւորական Ենովք Արմէնը:

Եւ ո՞վ է Ենովք Արմէն: Ռուբէն Սեւակի շատ մօտ ընկերներէն մէկը, որ իբր Պոլսոյ «Մասիս» թերթի խմբագիր, 1907-էն սկսեալ, Ռուբէն Սեւակին առաջին բանաստեղծութիւնները հրատարակող և գինքը քաջալերող մտաւորականը եղած է:

Ենովք Արմէն և Պալաքեան՝ երկու անձնաւորութիւններ էին նկարագրի հասարակաց գիծեր ունեցող-պարտադրող և ննշող: Բայց, իրարու հակադրուած՝ իրենց գաղափարներով:

Եւ շատ մը համայնքներուն մէջ եղածին նման՝ Թաղական Խորհուրդէն և եկեղեցական շրջանակէն ներս, հակամարտութիւնը

կ'սկսի: Եւ խնդիրը կը մեծնայ ու կը մեծնայ:

Եւ ի վերջոյ, Ենովք Արմէն կը յաջողի, իր Թաղական Խորհուրդին և իր համակիրներուն թիկունքով, Պալաքեանը մեկուսացնել և հեռացնել եկեղեցիէն:

Եւ Պալաքեան 1926-ին, ստիպուած կ'ըլլայ Մարսիլիոյ շուրջ գտնուող ամայի և հեռաւոր ագարակի նման վայրի մը մէջ, միայնակ և տխուր կեանք մը ապրիլ:

Եւ 1934-ին, Մարսիլիոյ մէջ, դժբախտաբար կանխահասօրէն՝ 55 տարեկանին կը մահանայ Գրիգորիս Եպս. Պալաքեանը:

ԿԵՂԾ ՀԵՐՈՍՆԵՐ ԵՒ ԻՍԿԱԿԱՆ ՀԵՐՈՍՆԵՐ

**Ո՞ՎՔԵՐ ԷՒՆ ԶԱՆՂԸՐԸ-Ի ԱՔՍՈՐԱԿԱՆՆԵՐՈՒՆ ՄԷՋ,
ՄԱՀՄԵՏԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԸՆԴՈՒՆԵԼՈՎ ՓՐԿՈՒԻԼ ՈՒՋՈՂ
«ՀԱՄԲԱՒԱԻՈՐ ՄԵԾԵՐԸ»**

... Այն տեսակ խօսք մը տարածուած էր աքսորականներու մէջ, թէ մահմետականութիւնը ընդունողը ազատ պիտի արձակուէր: ... Խեղճ Սեւակ, ամբողջ երկու օր աշխատեցաւ, համոզելու համար տկար հոգիները, որ մահը մահմետականացումէն աւելի աղէկ է, եւ զատ-զատ երդում ընել տուաւ ամէն անոնց, որոնց հոգիի ուժին վրայ կասկած ունէր, թէ՛ հաւատարիմ պիտի մնան իրենց լոյս-հաւատքին:

**Միքայել Շամտանեան
«Յուշարձան Ապրիլ 24-ի» - Կ. Պոլիս 1919**

Աքսորական կեանքը փորձաքար մըն էր արժանիքներու: Ամէն անձ ի յայտ կու գար իսկական իր գոյնով: Ոմանց՝ համբաւին պատուանդանը կը գայթէր անբարձ. մինչ ուրիշներ նոր կը կերտէին կոթողները առիւթնող հիացման:

**Յովհան Մ. Վրդ. Կարապետեան
«Էջ մը աքսորական յիշատակներէս»
«Հայաստանի կոչնակ» - 7 Յուլուար 1922 - Ա.Մ.Ն.**

Ո՞վքեր էին 1919-ին, Միքայել Շամտանեանին մատնանշած Չանդըրը-ի այն աքսորեալ մտաւորականները, որոնք մահմետականանալով կեանքերին ազատել ուզած էին:

Ո՞վքեր էին 1922-ին, Յովհան Վրդ. Կարապետեանին յիշատակած այն համբաւաւորները՝ «Որոնց համբաւին պատուանդանը կը գայթէր անդարձ»:

Միքայել Շամտաննեան խնայած էր այս տկարացած հոգիները՝ պատմութեան դատաստանին առջեւ, և չէր տուած անոնց անունները:

Յովհան Վրդ. Կարապետեանն ալ չէ տուած, այս տկարացած հոգիներուն անունները:

Բայց ան, իբր արանդապահ հայ կրօնական՝ իր ընդվզումը յայտնած է այս տկարացած հոգիներուն հանդէպ, որոնք համբաւաւորներ էին և սակայն, արքորականի փորձաքարին առջեւ, իրենց իսկական գոյնը մէջտեղ ելած էր, և համբաւի պատուանդանը «կը գայթէր անդարձ»:

Մենք այստեղ պիտի չուզէինք այս մասին արտայայտուիլ, քէ՛ արդեօք ո՞վքեր կրնային ըլլալ Չանդըրը-ի արքորեալներուն մէջէն այդ համբաւաւորները, որոնց համբաւը կը «գայթէր անդարձ»:

Բայց երբ տեսանք, քէ իսկական «ներոս և տաղանդ» Ռուբէն Սեւակը Սփիւռքի մէջ դաշնակցականներուն կողմէ անտեսուած և մոռացութեան ենթարկուած էր, և նաե՛ւ Հայաստանի մէջ ալ, նոյն կուսակցութեան ազդեցութեամբ, իր արժէքը նոյնպէս չէր գնահատուած, և տակաւին ուրիշ Սեւակ մը մէջտեղ բերուած էր, բոլորովին շուքի մէջ ձգելով իսկական Սեւակը՝ այն օրէն ի վեր որոշեցինք պաշտպանել Ռուբէն Սեւակին սուրբ յիշատակը և ջանացինք իրականութիւնները մէջտեղ հանել:

«Նայիրի»ի անցեալ բիւերուն մէջ, Ռ. Սեւակի հանդէպ շատ անիրաւ գտնուած Պալաքեանին մասին արտայայտուած էինք:

Այստեղ պիտի շարունակենք, կրկին Ռուբէն Սեւակի հանդէպ անիրաւ քննադատութիւններ կատարող ուրիշ դաշնակցականամիտ աղանդաւորի մը՝ Յակոբ Օշականի մասին խօսիլ:

Յակոբ Օշական, ինքնահաւանութեան գագաթնակէտին հասած, բայց իսկապէ՛ս վերլուծելու հմտութեան տէր քննադատ մըն էր:

Յակոբ Օշականի քննադատութիւնները՝ հայ գրողներու հանդէպ այնքան խիստ եղած են, որ անոր «մահացու հարուածներէն» հազիւ քանի մը հոգի փրկուած են:

Բնական է, բոլորէն «մեծ»ը ինքն է անկասկած, և թերեւս ալ, մեծերէն մէկը՝ Դանիէլ Վարուժանը:

Այս մեծամիտ քննադատը, նայեցէք, քէ ինչ կ'ըսէ Ռուբէն Սեւակի մասին:

«Այս աշխատանքէն առաջ, Սեւակի գործին [քերթողական] եօթը

ուրբերորդը ես կը նետեմ այն արդար փոսը մոռացութեան, ուր իջած են այնքան ուրիշ շքեղ անուններով պաշտպանուած կորանքներ...»:

Եւ կը շարունակէ.- **«Իր ժամանակին, ասոր ունայնամտութեան, դժբախտութեան կը բեռցնեմ Սեւակի գործին ձախողանքը...»:**

Յետոյ, կ'ընէ քանի մը գնահատական խօսքեր Ռ. Սեւակի մասին: Բայց մէկը սպաննելէ յետոյ, չէք կրնար գինք կեանքի բերել վերստին:

Յետ մահու, Յակոբ Օշականին «Արեւմտահայ գրականութեան համապատկեր» անունով ուսումնասիրութիւնը հրատարակուած է տասը հատորներով:

Վերջինը՝ տասներորդ և մեծածաւալ 850 էջնոց հատորը, յատկացուած է միայն «մեծատաղանդ գրագէտ Յակոբ Օշականին»:

Իր մեծամոլութեան չափանիշը աւելի լաւ բացատրելու համար, պիտի նշենք հետեւեալ եղելութիւնը:

«Օշական կտակ ըրած է, որ թաղուի Օշականի մէջ, Մեսոպ Մաշտոցի քովը»:

Բայց, մեզի համար, ի՞նչն է ամէնէն կարելորդ: Այս մեծապատիւ մեծամոլը իր տասը հատորնոց հայ գրականութեան պատմութեան գործին մէջ, հայ ազգին ամէնէն նակատագրական ողբերգութեան՝ 24 Ապրիլ 1915-ի Եղեռնին, քանի մը հպանցիկ տողերով կ'անդրադառնայ միայն: Բայց, Ռ. Սեւակի Չանդըրը-ի հերոսական կեանքին մասին, ոչ իսկ տող մը գրած է:

Բնական է՝ այս «արուեստը արուեստին համար» տիպար գաղափարականին հաւատացողը, այս տեսակի «հասարակ» նիւթերով չէր կրնար զբաղիլ:

Շատ յատկանշական է նաեւ, դաշնակցական Մինաս Թեօլեօլեանին «Դար մը գրականութիւն» գիրքը:

Երկրորդ Աշխարհամարտէն յետոյ, Պոլիսէն հեռացող և Ամերիկայի մէջ երկար տարիներ իր կուսակցութեան պաշտօնաբերքին՝ «Հայրենիք»ի խմբագրութիւնը վարած Մինաս Թեօլեօլեան, իր գիրքին մէջ 1920-ին, Ռուբէն Տէր Մինասեանի հետ Արեւմտեան Հայաստանին կորուստին գլխաւոր պատասխանատուներէն՝ դաշնակցական ղեկավար Լեւոն Շանթին 25 էջ յատկացուցած է, իսկ Ռուբէն Սեւակին՝ միայն 5 էջ:

Եւ ամէնէն հետաքրքրականը՝ աւելի շատ իր բանաստեղծու-

թիւններով ծանօթ Ռուբէն Սեւակէն, իբր նմոյշ իր գիրքին մէջ ոչ մէկ բանաստեղծութիւն մէջբերած է, այլ միայն՝ «Բժիշկի գիրքէն փրցուած էջեր»-ու շարքէն «Կոռունկը»:

* * *

Այստեղ կը հրատարակենք, նոյն ծանօթ կուսակցութեան մէկ ուրիշ պաշտօնաթերքէն՝ «Ազդակ»ի 1908-ին, Պոլիս հրատարակուած առաջին թիւին նկարը:



Եւ «Ազդակ»ի մէջ, թերթին գրեթէ առաջին թիւերէն՝ Մարտ 1909-էն սկսեալ, հրատարակուած են Ռուբէն Սեւակի բանաստեղծութիւնները. «Հայրը», «Վերջին արքան», «Պիտի մեռնի», «Իժը», «Կարմիր դրօշակը», «Ով իմ Հայրենիք», «Ինչպէս երբեմն», «Ջանգակներ, զանգակներ», «Աղջիկը», «Նեոփային արցունքը» և «Պոլսոյ որովայնին մէջ»:

Ռուբէն Սեւակի ամէնէն ծանօթ այս տասներմէկ բանաստեղծութիւններն հրատարակուած են «Ազդակ»ին մէջ, բոլորն ալ 1909 տարուան ընթացքին:

Եւ լա՛ւ ուշադրութիւն ըրէք, «Ազդակ»ի խմբագիրներուն անուններուն: Մէկուն անունն է՝ Շաւարշ Միսաքեան:

Նոյնիսկ Ռուբէն Սեւակ, նոյն տարիներուն, Պոլսոյ մէջ կարն

միջոց մը, Շաւարշ Միսաքեանին հետ, քերթ ալ հրատարակած էին:
1915-ի Եղեռնէն փրկուող [ինչպէ՞ս... չենք գիտեր] Շաւարշ
Միսաքեանը, 1925-էն սկսեալ, Փարիզի մէջ, «Յառաջ» օրաթերթը
հրատարակած է:

Այստեղ հարց կու տանք.- Ռուբէն Սեւակին գրիչի ընկերը եղած
Շաւարշ Միսաքեանը արդեօք, իր «Յառաջ» քերթին մէջ, ո՞ր աստի-
նան նահատակ-բանաստեղծ Ռուբէն Սեւակին մասին արտայայտ-
ւած է:

Մենք տեղեակ չենք:

* * *

1989-ին, Մոսկուայի մէջ անյայտացած [մեծ հաւանականու-
թեամբ ազերիներու կողմէ նահատակուած] ֆրանսահայ բանա-
ստեղծ և արուեստաբան Կարիկ Պասմանեան, Ապրիլ 1976-ին, Փա-
րիզի մէջ, շատ հետաքրքրական բանախօսութիւն մը կը կատարէ.
**«Նահատակ բանաստեղծներ՝ Սիամանթօ, Վարուժան, Ռուբէն
Սեւակ»** ընդհ. խորագրով:

Եւ Կարիկ Պասմանեան, Ռուբէն Սեւակի մասին բաւական
ծանօթութիւններ տալէ և անոր մասին շատ բարձր գնահատանքով
արտայայտուելէ յետոյ, սա շատ իրատես գաղափարը կը յայտնէ՝

**«Ռուբէն Սեւակ մեկուսացած անուն է շարժումի մեծերուն քով:
Գրականութիւնը նուազ կարելորութիւն տուած է անոր եւ
լոռութեան պատ մը կայ բանաստեղծին շուրջ»:**

Կարիկ Պասմանեան, շատ բացառիկ, խորաբափանց ախտանա-
նաչում մը կատարած է, Ռուբէն Սեւակի մոռացութեան ենթար-
կուելուն մասին:

Այո, լոռութեան պատ մը կայ, Ռուբէն Սեւակին շուրջ:

Այս պատը, մեծ հայրենասէր Ռուբէն Սեւակին դէմ՝ բոլոր իրաւ
հայրենասէրներուն քշնամի դաշնակցական աղանդաւորներուն
հիւսած լոռութեան պատն է:

1985-ին էր, որ առաջին անգամ տեսանք. հայրենի գեղանկարիչ՝ Գրիգոր Խաննեանի մեծածառալ **«Վարդանանց»** անունը կրող իւղաներկ պաստառը: Իսկապէս՝ շատ տպաւորիչ էր պաստառին երեւոյթը:

Վարդանանցի պատերազմը ներկայացնող այս պաստառին վրայ կը տեսնուէր Աւարայրի պատերազմին հերոսներուն տիպարները և նաեւ՝ 1915-ի Եղեռնի նահատակներէն ոմանց նկարները, ինչպէս՝ Սիամանթօ և Դանիէլ Վարուժան:

Պաստառին վրայ կար նաեւ՝ Եղիշէ Չարենցի նկարը:

Զհասկցանք, թէ Եղիշէ Չարենց կամ միւսները ի՞նչ տեսակ հերոսութիւն կատարած էին, որ արժանացած էին Վարդանանցի հերոսներուն շարքին դասուելու:

Մենք շատ փնտոնեցինք նաեւ, նահատակ Ռուբէն Սեւակին նկարը այս պաստառին վրայ, բայց՝ չգտանք:

Եւ այս անտեսումէն շատ զգացուած, Երեւան՝ Գրիգոր Խաննեանին նամակ մը գրեցինք: Եւ այս նամակին հետ իրեն ուղարկեցինք նաեւ, «Ռուբէն Սեւակ և փրցուելիք ուղեղներ» գիրքը, որ մեծ գեղանկարիչը ճանչնայ, թէ ո՞վ է Ռուբէն Սեւակ:

Նամակին մէջ, հետեւեալ տողերը գրեցինք.

«Ձեր Վարդանանց անունը կրող պաստառին մէջ, չտեսանք 1915-ի նահատակ հերոսներէն՝ Ռուբէն Սեւակին տիպարը:

Կը կարծենք, որ այս պակասը, պաստառին վաւերականութենէն շատ քան կորսնցնել պիտի տայ»:

Բնական է՝ ոչ մէկ պատասխան ստացանք, Գրիգոր Խաննեանէն:

Տարիներ անցան... Եւ 1990-թ.ներուն, լաւ հասկցանք Գրիգոր Խաննեանին ով ըլլալը:

Անկախաբար իր գեղանկարիչի տաղանդէն՝ ան իսկական պատեհապաշտ մըն էր թէ՛ արուեստի մարզին մէջ և թէ՛ իր քաղաքական կեանքին:

Եւ յիշենք որ 1988-ին, Սովետական Հայաստանը փլցնելու համար, Սիլվա Կապուտիկեանի հետ ձեռք-ձեռքի տուած, հեռատեսիլէն, պատեհապաշտ ելոյթներ կ'ունենային, մոռնալով որ, մինչ այդ, սրտանց և խանդավառութեամբ կը փառաբանէին սովետական վարչաձեւը:

Բայց ասոնք, ցաւալի է հաստատելը, որ հայոց առաջին և վերջին պատեհապաշտները չէին:

Եւ Սովետական Հաստատնը ուրացող Գրիգոր Խաննեանի պէս պատեհապաշտ մը, բնական է, որ կարողութիւնը պիտի չունենար նանչնալու, Վարդանանցի հերոսներուն շառաւիղ Ռուբէն Սեւակը:

* * *

Մենք, Ռուբէն Սեւակի սուրբ յիշատակին դէմ կատարուած անարդարութիւններէն ընդվզելով, կրկին պիտի վերադառնանք Չանդրըր-ի վերապրող աքսորեալներուն վկայութիւններուն՝

Միքայէլ Շամտաննեան կը վկայէր աքսորեալ մտաւորականներու մասին որոնք, մահմետականութիւն ընդունելով, կեանքերնին ազատել ուզած էին:

Յովհան Վրդ. Կարապետեան, աւելի յստակացուցած է իր վկայութիւնը ըսելով՝ **«Աքսորական կեանքը փորձաքար մըն էր արժանիքներու: Ամէն անձ ի յայտ կու գար իսկական իր գոյնով:**

Ոմանց համբաւին պատուանդանը, կը գայթէր անդարձ, մինչ ուրիշներ նոր կը կերտէին կոթողները առիքնող հիացման»:

Ռուբէն Սեւակի հանդէպ կատարուած անարդարութեան դէմ բողոքելով, կը հարցնենք՝

Ո՞վքեր էին Չանդրըր-ի այն համբաւաւորները, որոնց համբաւին պատուանդանը կը գայթէր անդարձ:

Մենք այստեղ, միայն և միայն, Ռուբէն Սեւակի յիշատակը կը պաշտպանենք և արդարութիւն կ'ուզենք Ռուբէն Սեւակին համար:

Եւ կը փնտռենք իրականութիւնը որ թերեւս, ժամանակի ընթացքին, Չանդրըր-ի մէջ, հոգիները տկարանալով մահմետականութիւնը ընդունելու պատրաստուած համբաւաւորներու մասին, մինչեւ հիմա անյայտ և գաղտնի մնացած վկայութիւնները լոյս աշխարհ կ'ելլեն:

Այո, մինչեւ հիմա, գաղտնի և անյայտ մնացած վկայութիւններուն և փաստերուն յայտնուիլը կամ հանուիլը քաջալերելու համար, պիտի նշենք կարգ մը գրութիւններ և վկայութիւններ՝ առանց մեկնաբանութեան:

Թերեւս, այս տուեալները, շաղկապը կ'ըլլան, նոր իրականութիւններու մէջտեղ ելլելուն:

* * *

«Դանիել Վարուժան - նամականի»

հրատարակչություն «Հայաստան», Երևան 1965, «Ֆրանսերեն քարգմանություն» 146. Բիեր Մաագ-ին 1912 Յունիս 17, Թոքաս

«Տրիբունի-ի պատերազմն ինձ չի հետաքրքրում, պայմանով, որ դա չի վերջանայ Թուրքիայի մասնատումով, որովհետև մենք հիմա, համերաշխ ենք ապրում մահմետականների հետ, իսկ Թուրքիայի մասնատումը ադետաւոր կը լինի Հայաստանի ապագայի համար: Մենք համոզուած ենք դրան:

Դանիել Վարուժան

* * *

ՅԻՇԱՏԱԿՆԵՐ ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԷՆ

Չանդըրը արտրուած և վերապրող բժիշկ Վահան Ալթունեանի վկայությունը.-

«Փօսթայի օր մըն էր: Ըստ սովորութեան՝ գետեզրը հաւաքուած էինք: Ոմանք, թերթ կը կարդային, ուրիշներ նարտով զբաղած էին, իսկ մենք, Վարուժանին շուրջը հաւաքուած, թուրք բանաստեղծութեան մասին իր քննադատութիւններուն կ'ունկնդրէինք»:

Բժիշկ՝ Վահան Ալթունեան
«Հայ բուժակ» 4. Պոլիս, Մարտ 1920

* * *

Հետեւեալ գրությունը Չանդըրը-ի արտրեալներունը չէ, այլ՝ Այաշ արտրուած Ատոմ Եարնանեանի [Սիամանթօ-ի] Այաշէն իր մօրը գրած բրբերէն բացիկին հայերէն քարգմանությունը:

Առ ի տեղեկություն կը հրատարակենք այս նամակը, որ թուրքերուն լուծին տակ «չարչարուող» հայ առաջնակարգ բանաստեղծներէն՝ Սիամանթօ-ին հոգեվիճակը կը մարմնացնէ և կը մատնէ:

**Արեւմտահայ գրողների նամականի -
Երեւանի համալսարանի հրատարակութիւն -
Երեւան 1972**

Նագեհի Եարեանեանին

«Սիրելի մայրիկս.

Այս օրուան բոթատարով մի դիմում ուղարկեցի Պոլսոյ պատգամաւոր Պետրոս Էֆենտի Հալանեանին:

Անմիջապէս տես եղբայրս և ուղարկիր այդ յարգելի անձնաւորութեան մօտ, թող կատարի հարկ եղած դիմումը և ինձ այստեղից ազատելու միջոցը գտնի, որովհետեւ **աշխարհ գիտի, որ ես ոչ մի առնչութիւն չեմ ունեցել քաղաքականութեան հետ եւ ուրիշ ոչ մի յանցանք առաջացնող արարքից էլ բացարձակապէս տեղեկութիւն չունեմ: Մի քիչ անհանգստացայ, շփոթութեան մի մատնուիր, միայն գնացեք Հալանեան Էֆենտի-ի մօտ, թող հետապնդի իմ դիմումը:**

Ճենազեան քեռուս

բարեւներ:

Բարեւներս ձեզ բոլորիդ:

Ատոմ Եարեանեան»

Պիտի ուզէինք նիշտ հասկցուիլ: Հայ բոլոր նահատակ մտաւորականները, թրքական բարբարոսութեան զոհ եղած, յարգելի են ու խնկելի մեզի համար:

Եւ սակայն, յանուն նշմարտութեան, պատմական եղելութիւններու անաչառ ներկայացումին ու նաև իւրաքանչիւր նահատակ իրեն յատուկ հոգեմտաւոր ձիրքերով արժեւորած ըլլալու համար, հարկ է որ անոնց եաթաղանի տակ ցուցաբերած վարքը. ամենայն հարագատութեամբ արձանագրուի պատմութեան կողմէ: Եւ իւրաքանչիւրին տրուի իրեն արժանի յարգ ու արժանիք:

Այս կարգի նախանձախնդրութենէ թելադրուած գրած էինք 1985-ին, Ռուբէն Սեւակի ծննդեան 100-ամեակին առթիւ լոյս տեսած մեր «Ռուբէն Սեւակ եւ փրցուելիք ուղեղներ» գիրքին մէջ.- **«Ռուբէն Սեւակ Չանդըրըի մէջ ապրեցաւ հերոսի մը պէս: Երբեք չկորսնցուց իր արիութիւնը, եղաւ այն Սեւակը, ինչ որ գրած էր իր բանաստեղծութիւններուն մէջ: Որովհետեւ իր գրածները իր ապրած կեանքն էր, իր ձայնն էր հոգիին, իր հաւատացած գաղափարներն էին միայն: Ո՛չ մէկ շինծու բան չկար իր գրածներու մէջ: Եւ շատ մը մեծեր, որոնք փղոսկրէ աշտարակներ հիմնած էին**

Պոլիս՝ իրենց գրութիւններով, Չանդըրըի մէջ, շշմած, մարած, սմքած էին:

Նոյնիսկ այն մեծերէն մէկը, որ իր բանաստեղծութիւններով Հայ հոգիներու կրակը կը վառէր, աքսորավայրէն Պոլիս գրած մէկ նամակին մէջ, կ'ըսէր թէ՛ «Ինք բնաւ չէ գրադած քաղաքականութեամբ»: Ճիշդ է, կեանքը փրկելու բնագոյր, ամենէն զօրաւոր բնագոյն է մարդուն: Բայց այս կեցուածքը միևնոյն ատեն, մարդուն արիութեան չափանիշն է՝ իր գրածներուն, իրեն հաւատալուն չափանիշը, և անկեղծ ըլլալու չափանիշը:

* * *

Մենք կը հաւատանք, որ, «թերեւս ոչ մօտ ժամանակներուն», բայց ապագային հայ խղճամիտ պատմագետները, պիտի քննեն և պիտի գտնեն այս և ուրիշ բոլոր վկայութիւնները, Հայ Եղեռնի պատմութեան մասին, մասնաւորապէս 24 Ապրիլ 1915-ի Եղեռնի աքսորեալ մտաւորական նահատակներուն մասին:

Եւ այն ատեն շատ աւելի ցայտուն և պերճափայլ պիտի երեւայ, հերոս նահատակ Ռուբէն Սեւակի սուրբ կերպարը:

ԳՆԱՀԱՏԱՆՔ՝ ՌՈՒՐԷՆ ՍՅԻԱԿԻ ԽՆԿԵԼԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

**ՌՈՒՐԷՆ ՍՅԻԱԿ - ՄԷԿԸ ԱՅՆ ԱՆՈՒՆՆԵՐԷՆ, ՈՐՈՆՅ ԳՐԱ-
ԿԱՆՈՒԹԻՒՆԸ, ԿԵԱՆՔԸ ԿԱՄՃԱԿԱՏԱԳԻՐԸ ԿԸ ԿԱԽԱՐԴԵՆ ՋԻՍ:
ԻՐ ԵՂԵՐԱԿԱՆ ՄԱՀԷՆ ԵՏՔ, ԳԵՂԵՑԿԱՑԱԻ ԳՐԱԿԱՆ ԻՐ
ՀՌԶԱԿԸ, ԳԱՐՉԱԻ ԻՐ ԴԷՄՔԸ ՀԷՔԻԱԹԱՅԻՆ ՈՒ ՀԵՐՈՍԱԿԱՆ
ՆՈՅՆԻՍԿ.....**

Գահիրե - 1946

Գուրգեն Մխիթարեան

«Քառորդ դար գրականութիւն»

3 Յունիս 2003 թուակիր «Նայիրի»ին մէջ նշած էինք, թէ Գրիգորիս Վրդ. Պալաքեան, իր 800 էջնոց Չանդըրը-էն դէպի Տեր Զօր՝ արտրականի յուշերը ամփոփող «Հայ Գողգոթան» գիրքին մէջ, չէր զիջանած մէկ տող մ'անգամ գրել Ռուբէն Սեւակի Չանդըրը-ի հերոսական կեցուածքի մասին:

Եւ բանաստեղծ Կարիկ Պասմանեանին ըսածին պէս՝ «Լուսեան պատ մը հիւսած էին դաշնակցական որոշ աղանդաւորներ, Ռուբէն Սեւակի շուրջ»:

Բայց գտնուեցան նոյն հատուածէն - գուցէ բացառիկ - «Արդարներ» ալ, որոնք նեղքեցին այս լուսեան պատը և գրեցին «Ռուբէն Սեւակի պատմութիւնը» և հիացումով արտայայտուեցան անոր «հերոսական դէմքին» մասին:

Այս «արդար»ներէն մէկն էր՝ գրականագետ Գուրգեն Մխիթարեանը:

Ան, 1946-ին, Գահիրե հրատարակուած «Քառորդ դար գրականութիւն» հատորին մէջ [մեզի համար անմոռանալի], սա տողերը գրած էր Ռուբէն Սեւակի մասին՝

«ՌՈՒՐԷՆ ՍՅԻԱԿ...

**Մէկը այն անուններէն, որոնց գրականութիւնը, կեանքը կամ
նակատագիրը կը կախարդեն զիս:**

Իր եղերական մանէն ետք, գեղեցկացաւ գրական իր հռչակը,

դարձաւ իր դէմքը հեքիաթային ու հերոսական նոյնիսկ, երբ պատմուեցաւ, թէ երիտասարդ հիւանդ թրքունիի մը սնարին վերեւ, կրցած էր պահել ան իր հաւասարակշռութիւնը, իր ազգային, ընտանեկան ու հոգեկան հաւատարմութիւնը, մերժելով քաջութեամբ կախարդական հրաւերը՝ ուրանալու ինքզինքը, ի գին իր կեանքին ու իր ձեռքով իսկ բժշկուած գեղունիին...

Սրտառուչ, խորունկ վեպ մը կրնար դառնալ իր պարագան, եթէ մէկը սիրտ ունենար արիւնի մէջ խեղդուած բանաստեղծին կեանքը գրական օգտագործումի մը առարկայ դարձնել:

Արդար այս խղճահարութիւնը, որ հեռու կը պահէ մեր գրողները այդ օգտագործումէն, ինչ որ սրբապղծութեան հաւասար բան մը պիտի ըլլար:

Ժամանակը, թերեւս, տայ իր թոյլտուութիւնը օր մը, ոչ թէ արուեստի գործ մը հանելու համար անպատեհո եղերերգութեանէն, այլ պանծացնելու համար երիտասարդ բանաստեղծին վեհ և հզոր կեցուածքը:

Գահիրէ - 1946 - ԳՈՒՐԳԵՆ ՄԽԻԹԱՐԵԱՆ

[Քառորդ Դար Գրականութիւն]

* * *

Գուրգէն Մխիթարեան, վերի գրութեան մէջ, շատ իրաւամբ կ'ըսէր՝

«Սրտառուչ, խորունկ վեպ մը կրնար դառնալ իր պարագան, եթէ մէկը սիրտ ունենար և գրի առներ արիւնի մէջ խեղդուած բանաստեղծին կեանքը»:

Շատ նիշդ է:

Եղեոնէն հրաշքով վերապրած հայերը, չէին ուզեր վերյիշել այդ դժոխային օրերը և չէին ուզեր արտայայտիլ այդ ահաւոր ողբերգութեան մասին:

Եւ կը ջանային բոլորովին մոռնալ ամէն բան՝ իրենց հոգիներուն խաղաղութեան համար:

* * *

Մերուժան Պարսամեան 23 նոյեմբեր 1918-ին, Պոլսոյ «Շանք» թերթին մէջ, «Մեր ազգային վերջին մեծ մարտիրոսները» վերտառութեամբ և Ռուբէն Սեւակին յիշատակը պանծացնող

աշխատասիրութիւն մը հրատարակած էր:

Իր այս գրութեան մէջ, Եղեռնի ոգեկոչումներուն պատճառած ցաւին մասին ան սապէս կ'արտայայտուի՝

«Մեր Բանթեռնը...:

Վերնագիրը իմս չէ. Հայ Բանթեռնը կազմողներէն մէկը՝ Ակնունի գործածեց զայն առաջին անգամ, Քրիստափոր Միքայելեանի առիթով:

Մեր Բանթեռնը մարմարէ սիւներու վրայ կառուցուած չէ, հողի, ժայռի և քարի անհուն կոյտ մըն է:

Մեր Բանթեռնը սահման չունի, ան իր մահաշուք ստուերը կը տարածէ Կարիկէն՝ Խարբերդ, Տիարպէքիլէն՝ Ենկիւրի, Գոնեայէն՝ Տէր Զօր:

Մեր Բանթեռնը ընդարձակ է աշխարհի մը չափ, իր սիւները մեր հառաչանքներէն կազմուած են, և իր վրայ իբրեւ գմբէթ կը կրէ մեր անպարփակ տառապանքը:

Օրերէ ի վեր միտքս կը պրկուի, այս էջին վրայ խորճելով:

Արցունքով և վիշտիս վրձինով պիտի յաջողիմ ուրուագծել դէմքերը այն մեծ մարտիրոսներուն, որոնք այլեւս յիշատակին սեփականութիւնն են:

Ընդարմացած, գլխուն զարնուած վիճակ մը ունի միտքս: Սպաննութեան և խռտանգումներու անաւոր հէքիաթները.- այո՛, հէքիաթներ, կարմիր հէքիաթներ.- որոնցմով օրաթերթերը շտապանած են վերջին օրերս. ու բոլոր այն անհնարին ու դժնդակ մանրամասնութիւնները, զորս մեզի կը ներկայացնեն ականատեսներ, սկսած են տեսակ մը անորակելի ազդեցութիւն գործել վրաս, որովհետեւ հիւանդագին անգիտակցութեան մը մէջէն կարծես կը քալէ մտածումս:

Այ բաւական է... ձգենք սա մանրամասնութիւնները, արդէն մեր կատաղի առելութիւնը, վրէժը, արճամարճանքը բաւականէն աւելի կը յորդին. իրենց հոսանքին տակ ճգմելու, խեղդելու համար եղեռնի իշխանները ու ոճիրի բարապանները:

Մեռցուցին հայերը, մեռցուցին մեր լաւագոյն մտաւորականները, ասիկա կը բաւէ. զիս այնքան չի շահագրգոյրէ թէ ինչպէ՞ս, ո՞ր օր, ի՞նչ ձեւով, որո՞ւ ձեռքով: Մեռցուցին, կը բաւէ այս չափը:

Ամբողջ Փոքր Ասիան ընդարձակ գերեզմանատունի մը վերածուած է. հայ գերեզմանատունի մը. պէտք չկայ այլեւս երթալու և

**մեկիկ մեկիկ մեր անճատական մասնաւոր փոսերը փնտռելու:
Ուխտի նամբորդը ի գուր հետքեր պիտի փնտռէ հոն:
Հայ անխններ ամէն տեղ, ամէն ապրող հայու հոգիին մէջ:
«Շանք» - Կ. Պոլիս - 1918 ՄԵՐՈՒԺԱՆ ՊԱՐՍԱՄԵԱՆ**

* * *

Այդ տարիներուն, խեղճ հայերը կը հաւատալին և կը յուսալին, որ քրիստոնեական խղճմտանք մը կայ, մարդկային արդարութեան դատաստան մը կայ, այս աշխարհի վրայ:

Եւ միամիտ հայերը այս յոյսով սպասեցին՝ տարիներ ու տարիներ, որ արդարութիւնը պիտի գար անպայման:

Եւ սպասեցին առանց տրտունջի և մանաւանդ առանց ընդվզումի:

Որովհետեւ, իրենց ցաւը այնքան մեծ էր և կատարուած ցեղասպանութիւնը այնքան՝ զարհուրելի:

Եւ կարծեցին, թէ քրիստոնեայ աշխարհը՝ իր արդարութիւն բռուցքը պիտի իջեցնէր բարբարոս բուրբին գլխուն... Բայց, բայց... երազ էր այս:

* * *

1946-ին Գուրգէն Միխարեանին նախատեսած այն «միտքը» թէ՛ «Սրտառուչ, խորունկ վեպ մը կրնար դառնալ Ռուբէն Սեւակին պարագան. եթէ մէկը սիրտ ունենար արիւնի մէջ խեղդուած անոր կեանքը գրի առնել՝ պանծացնելու համար բանաստեղծին վեհ ու հզօր կեցուածքը» - այս նախատեսութիւնը, առաջին անգամ ըլլալով, իրականացաւ 20 տարիներ յետոյ՝ 1967-ին Երեւանի մէջ, հրատարակուած հայրենի գրող Գեղամ Սեւանի կողմէ:

«Հայաստան» հրատարակչութեան կողմէ 1967-ին, Երեւանի մէջ Գեղամ Սեւանի «Հայոց թաղը» վերտառութեամբ պատմուածքներու գիրքին «Բանաստեղծի Գողգոթան» բաժնին մէջ, տրուած էր Ռուբէն Սեւակի կեանքի «Արիւնով խեղդուած» հերոսական պատմութիւնը:

Ո՞վ էր Գեղամ Սեւան:

1926-ին, Պոլիս ծնած էր ան, և 1945-էն սկսեալ, Պոլսոյ մէջ, մեր գաղափարի ընկերը եղած էր: Եւ խոր պաշտամունք ունէր Ռուբէն Սեւակի հանդէպ:

Միասին աշխատած էինք, Պոլիս՝ հայ վանառականի մը քովը, իբր «Գրասենեակի ծառայող» - (Gacron Du Bureau):

Միասին արձանագրուեցանք 1946-ին, Պոլսոյ սովետական հիւպատոսարանը, Հայաստան ներգաղթելու համար:

Մենք չյաջողեցանք, կամքէ անկախ, հայրենադարձուիլ Հայաստան: Բայց, Գեղամը յաջողեցաւ: Եւ ան, Հայաստանի մէջ, իր գրչին տաղանդովը, Հայաստանի շատ ծանօթ գրողներէն մէկը եղաւ:

1978-ին, մեր Հայաստան այցելած օրերուն, կրկին տեսնելու հանոյքը ունեցանք՝ գրագետ Գեղամ Սեւանը:

Եւ ան մեզի նուիրեց իր գիրքը՝ որուն մէջ, «Բանաստեղծին Գողգոթան» պատմութիւնով, տուած էր Ռուբէն Սեւակի ողբերգական կեանքը:

Այստեղ կ'ուզենք նշել իր գիրքին մէջի մակագրութիւնը, որ մեզի շատ տպաւորած և յուզած է՝

«Սիրելի Օննիկին [Փաղաքշական մակդիր՝ Գ. Սեւանի կողմէ իր մտերիմին՝ Յ. Ջի.ի տրուած - Խ. Մ.]

Ռուբէն Սեւակի խոր պաշտամունքով եւ ներողութեան խնդրանքով այդ պաշտամունքը «Բանաստեղծին Գողգոթան»ի մէջ աղաւաղած լինելուս համար:

16 Սեպտեմբեր 1978

Գեղամ Սեւան»

Պարտէ Անարի Խոր
պաշտամունքով և ներողութեան
խնդրանքով այդ պաշտամունքը
"Բանաստեղծին Գողգոթան"-ում
աղաւաղած լինելու համար:
16 Սեպ. 1978
Գեղամ Սեւան

Մենք ալ, խոր համոզումով, պատասխանենք, մեր այժմ արդէն հանգուցեալ բարեկամին.

Սիրելի Գեղամ.

«Բանաստեղծի Գողգոթան» պատմուածքիդ մէջ, դուն Ռուբէն Սեւակի քու պաշտամունքը չաղաւաղեցիր:

Այլ՝ ընդհակառակը՝ դուն պանծացուցիր Ռուբէն Սեւակի սուրբ յիշատակը:

* * *

Բայց, Ռուբէն Սեւակին **սուրբ յիշատակը** աղաւաղուեցաւ և նոյնիսկ **սրբապղծուեցաւ** Հայաստանի մէջ 1985-ին, ուրիշ հայ գրողի մը կողմէ:

Հայաստանի շատ ծանօթ գրողներէն Պերն Զէյթունցեանի կողմէ:

Անոր 1985-ին հրատարակուած «Մեծ լուսիւն» անունով թատրերգութեան մէջ, իբր թէ տուած է Ռուբէն Սեւակի Զանդըրը-ի մէջ ապրած ողբերգութեան եղերական պատմութիւնը:

Այս թատրերգութեան մէջ ներկայացուած Ռուբէն Սեւակի կերպարը՝ ոչ մէկ կապ ունի հարագատ Ռուբէն Սեւակին իրապէս հերոսական կեցուածքին հետ:

Այնտեղ, Ռուբէն Սեւակ ներկայացուած է իսկական հտպիտի մը կերպարով:

Թատրերգութեան մէջի դեպքերը, իբր թէ Ռուբէն Սեւակին վերագրուած գաղափարներն և խօսքերը, **ոչ մէկ կապ - առնչութիւն ունին իրականութեան հետ:**

Եւ Պերն Զէյթունցեանին ձաբոտութեան մէջ, շատ յայտնի է Յակոբ Օշականի մեծամիտ վերագրումներուն ազդեցութիւնը:

Պերն Զէյթունցեան 1989-ին, Երեւանի մէջ «Վերջին արեւագալը» վերտառութեամբ, պատմագրական վեպ մը հրատարակեց:

Այս գիրքը, մասնաւորապէս Գրիգոր Զօհրապի կեանքին և գաղափարներուն պատմութիւնն է, և նաեւ՝ 1915-ի ողբերգութեան պատմութիւնը:

Գրիգոր Զօհրապէն զատ, հոն նշուած են այդ շրջանին ծանօթ անձնաւորութիւնները, ինչպէս՝ Կոմիտաս, Դանիէլ Վարուժան, Սիամանթօ, Ռուբէն Սեւակ և ուրիշներ:

Բաղդատաբար «Մեծ լուսեան» հետ՝ Պերն Զէյթունցեան, իր

«Վերջին արեւագալը»ին մէջ, աւելի հաւատարիմ եղած է իրականութիւններուն:

Իր Ռուբէն Սեւակի յատկացուցած բաժնին մէջ ալ, շատ մը մէջբերումներ ըրած է՝ մեր ծանօթ **«Ռուբէն Սեւակ եւ փրցուելիք ուղեղներ»** գիրքէն:

Քանի մը տարի առաջ էր: Տեղեակ եղանք, որ Պերն Զէյթունցեանը, այցելութեան եկած էր Ֆրանսայի հարաւը բնակող իր բարեկամներուն, որոնք 1960-թ.ներուն, Հայաստանէն արտագաղթածներ էին:

Այս առիթէն օգտուելով, հեռաձայնեցիք իրեն և հարցուցիք՝ **«Պարոն Զէյթունցեան, եթէ դուք, այսօր, կրկին գրելու ըլլայիք ձեր «Մեծ լուսիւն» թատերգութիւնը, անոր մէջ ի՞նչ փոփոխութիւններ կը կատարէիք»:**

Զէյթունցեանը, առանց մտածելու, պատասխանեց.

«Ոչ մէկ փոփոխութիւն» ըսաւ:

... Յայտնի էր, որ Զէյթունցեանի մտայնութեան մէջ, ոչ մէկ փոփոխութիւն կատարուած էր այդ օրէն ասդին: Զէյթունցեանը «ինչ որ էր» մօտիկ անցեալին, մնացած էր նոյնը:

Բայց մենք ցաւ զգացիք, որ Հայաստանի ամէնէն ծանօթ գրողներէն մէկը այս աստիճան օտար կամ անծանօթ կը մնար իրականութիւններուն:

1988-ին, Հայաստանի մէջ, Համլէթ Մովսիսեանի կողմէ հրատարակուեցաւ՝ «ՓՈՐՁԱՔԱՐ» անունով վեպ մը, որ կրկին Ռուբէն Սեւակի կեանքի ողբերգութեան պատմութիւնը կը ներկայացներ: Եւ Համլէթ Մովսիսեանի վեպին մէջի Ռուբէն Սեւակին պատմութիւնը և կերպարը շատ աւելի հրագատ էին անոր հերոսական տիպարին, քան Պերն Զէյթունցեանի «Մեծ լուսիւն» անունով խեղկատակ զաւեշտին մէջ:

* * *

Կրկին Հայաստանի մէջ 1997-ին, Հայկազ Յակոբջանեանի կողմէ հրատարակուեցաւ՝ **«Սպիտակ եղելվեյսներ»** անունով վեպը: Հայկազ Յակոբջանեանի այս վեպը կրկին Ռուբէն Սեւակի ողիսականն է: Եւ ան, այս վեպին մէջ, Ռուբէն Սեւակի ամբողջ կեանքը տուած է, իրական տուեալներու վրայ յենելով: Եւ եկած է մինչեւ Զանդրըր-ի ողբերգութեան, որուն մէջ մեծ յուզումով կը կարդանք հերոս նահատակ Ռուբէն Սեւակի կեանքին վերջին օրերու պատմութիւնը:

* * *

Գեղամ Սեւան, Պերն Զէյբունցեան, Համլէթ Մովսիսեան և Հայկազ Յակոբջանեան, բոլորն ալ հայրենի գրողներ են, որոնք Հայաստանի մէջ, արժեւորելով հայ բանաստեղծ Ռուբէն Սեւակի հերոսական կեանքը՝ գիրքի վերածեցին:

Իսկ Սփիւռքի մէջ, այդ մասին միակ գրողն եղաւ, մեծ Վարպետ Անդրանիկ Ծառուկեանը, որ 1987-ին, Պէյրութ հրատարակուած իր «Սերը եղեռնին մէջ» ծանօթ վեպով, 1946-թ.ին, Գուրգէն Միսիբարեանի կատարած նախատեսութիւնը իրականացուց:

Մենք կը խոնարհինք՝ նահատակ բանաստեղծ Ռուբէն Սեւակի սիրալի կեանքը յաւերժացնող և հայոց Մեծ Եղեռնի պատմութեան հաւատարիմ մնացած հայ գրողներուն վաստակին առջեւ:

ՎԿԱՅՈՒԹԻՒՆ ՆԵՐ ՌՈՒՐԷՆ ՍԵՒԱԿԻ ՄԱՍԻՆ

Լոզան 29 Ապրիլ 1912

«Հրանտս [Նազարեանց]

... Եկուր տե՛ս, որ երիտասարդները չեն հասկնար այս բաները. Եւրոպա նետուիլ կ'ուզեն իսկոյն, մինչդեռ հոն 7 տարի ապրող մը միայն կրնայ գիտնալ, թէ ի՞նչ է քաղաքակրթութիւնը, «զարգացած կեանքը». ամէն բան սուտ ու կեղծիք, շպար ու ամօթ:

Ասիկա իմ համոզումս է:

Քոյդ՝ Ռուբէն»

Գարձեալ՝ նոյն թուակիր նամակին մէջ, Ռուբէն կը գրէ իր մտերիմին...

«... Ու այս բոլորին վրայ, աւելցուր նաեւ Պոլսոյ մղձաւանջը, այն հորիզոնը որ քանի մը տարիէն իմինս պիտի ըլլայ, և ուր հեռուէն կը տեսնեմ արդէն Սողոմի մուխն ու Գոմորի մեղքին բոցը(*):

Քոյդ՝ Ռուբէն»

(*) Իր եղբրական վախճանէն ճիշդ 3 տարի առաջ կատարուած մարգարեաշունչ յայտնատեսութիւն որ այսչափ կ'ըլլայ:

Մանօթութիւն Ամենուն Տարեցոյցի:

Պերպերեան վարժարանի դասընկերոջը Նամակ

Լոզան 12 Փետրուար 1907

«Մ... Հոգիս,

Եւ աւելի իրապաշտ եմ, ամէն բանէ առաջ իրականութիւնը գիս կը գրաւէ:

Ամեն իրականութիւնէ վեր մէկ իրականութիւն մը կը հանչնամ
ես՝ **ապրուած և զգացուած կեանքը և ոչ թէ երեւակայուած կեանքը...**

Ռ. Զիլինկիը»

Ռ. Սեւակ - Երկեր հատոր 2

Երեւան 1996

* * *

Բիւզանդ Քէչեանի վկայութիւնը Ռուբէն Սեւակի մասին
«Իսլամանալու ճամբով իր կեանքը ազատելու առաջարկը
մերժեց, և **«թրքանալը նուաստանալ է»** ըսաւ Ռուբէն Սեւակ:

Բիւզանդ Քէչեան»

«Թեոդիկ - Ամենուն Տարեցոյցը» - Կ. Պոլիս 1922

* * *

**Բժիշկ Վահան Ալթունեանի վկայութիւնը Ռուբէն Սեւակի
մասին**

«Կամ պէտք է որ գրական անուանս պէս հոգիս ալ սեւցնեմ և
կամ մեռնիմ:

Ուխտած եմ մեռնիլ, բայց երբեք հոգիս չսեւցնել» ըսաւ Ռուբէն
Սեւակ»:

«Հայ բուժակ» - Կ. Պոլիս - 1920

Բժիշկ Վահան Ալթունեան

* * *

**Յովհան Մ. Վրդ. Կարապետեանի վկայութիւնը Ռուբէն Սեւակի
մասին**

«Այսպէս ալ՝ Սեւակ վախ չունէր իր դահիճներէն: Անոնք
կրնային իր մարմինը անշնչացնել, բայց իր հոգին յաւիտենական
պատգամներ պիտի ունենար հայութեան ականջին հնչեցնելիք:

Յովհան Մ. Վրդ. Կարապետեան»

«Հայաստանի կոչնակ» - 1922, Ամերիկա

* * *

Ռուբէն Սեւակի քրոջ՝ Հայկանուշ Չեվիկեանի բերանացի վկայութիւնը... իր եղբօր՝ Ռուբէնին Չանդըրը-ի մէջ իսլամանալու նամբով կեանքը ազատել յանձնարարող իր ընկերներուն տուած պատասխանի մասին:

Ռուբէն, իր ընկերներուն սապէս կը պատասխանէ...

«Մենք պէտք է մեռնինք, որ մեր արեան գնով Հայաստանը վերականգնի, հայութիւնը վերջնականապէս ազատի:

Ամենքս ալ մեռնինք, հայութիւնը ազատենք»:

Չանդըրը, 1915 - *Ռուբէն Սեւակ:*

Ռուբէն Սեւակի քրոջ՝ Հայկանուշ Չեվիկեանի [ծնեալ Չիլինկի-րեան] բերանացի վկայութիւնը, որ ձայնաերկի վրայ արձանագրեցինք Փետրուար 1979-ին, Արէնքի իր տան մէջ:

* * *

Ազգ մը իր հերոսներով կ'ապրի: Ազգ մը, որ հերոսներ չունի, ապրելու իրաւունք չունի: Ազգ մը, որ իր հերոսները կը մոռնայ, ինքն ալ մեռնելու դատապարտուած է:

«Ռ. Սեւակ և փրցուելիք ուղեղներ» - Փարիզ 1985

Յ. Զ.

* * *

1992-թ.ներուն էր, գրագիտունի Ատրիէն Տատրեանին հետ այցելութեան գացեր էինք Մովսար Ջարդարեանի [Ռուբէն Ջարդարեանի կրտսեր գաւակը] Նիսի շրջակայքը գտնուող բնակարանը:

Այդ օր, Մովսար Ջարդարեան, իր հօրը մասին իր յիշատակները պատմեց, և այս առիւ խօսեցաւ Ռուբէն Սեւակի մասին ալ: *[Այս խօսակցութիւնը արձանագրեցինք տեսաերկի վրայ]:*

Մովսար Ջարդարեան, Ռուբէն Սեւակի «իսլամանալու նամբով կեանքը ազատելու առաջարկը» մերժելուն մասին, սա շատ սրտաբաց արտայայտութիւնը ունեցաւ.

«Պիտի խոստովանիմ, որ այդ քաջութիւնը ես պիտի չունենայի, եւ պիտի ընդունէի իսլամանալու առաջարկը»:

Ռուբէն Ջարդարեանի արժանաւոր գաւակին՝ Մովսար Ջարդարեանի այս անկեղծ խօսքերը, շատ տպաւորած են մեզի:

Շատ նիշդ է: Գիտակցաբար անմիջական և ստոյգ մահուան

կուրծք տալը՝ բոլոր մահկանացուներու յատուկ կարողութիւն մը չէ:

Ինչպէս որ, «Նայիրի»ի վերջին թիւերուն մէջ տեսանք արդէն, թէ՛ մեծագոյններ կարծուածները՝ Գանիէլ Վարուժան և Սիամանթօ, Չանդըրը-ի և Այաշի մէջ «տկարացած հոգիներու»ն մաս կը կազմէին:

Բայց Ռուբէն Սեւակ այն բացառիկ հերոսներէն էր, որ կուրծք տուաւ մահուան, և հերոսաբար գնաց դէպի «խմացեալ մահուան», բայց՝ հայ ժողովուրդը չգնահատեց, չհասկցաւ Ռուբէն Սեւակի «արժեքը»:

* * *

Ուրիշ ատեն ալ ըսած ենք... Հայ ժողովուրդին մեծագոյն թերութիւններէն մէկը իր «երազատես» ըլլալն է: Ան կը սիրէ երազել, և չ'ուզեր իրականութիւնները տեսնել:

Հայ ժողովուրդին այս թերութեան մէջ, որոշ դեր ունեցած է քրիստոնէական կրօնը, [իր դրական դերին հետ] քրիստոնէական «երազական պատմութիւնները»: Օրինակ՝ հայերը, մինչեւ այսօր, կը փառաբանեն Գրիգոր Նարեկացին: Այս մեծ երազատես հօր տաղանդը որ, իր գրութիւններով, բնաւ այս աշխարհի վրայ չէ ապրած կարծես, և միշտ 7 յարկ վեր՝ երկնային խաւերու մէջ, «Աստուծոյ» հետ եղած է, անվերջանալի, շողշողուն նախադասութիւններ ու նախադասութիւններ, հազարաւոր տիտղոսներ ուղղած է Աստուծոյն «... Մարդ Աստուծոյ, քիչ մըն ալ ոտքերդ հողին վրայ դիր և շուրջդ նայէ...» չե՞ս ըսեր:

Բայց, Գրիգոր Նարեկացի-ին երազը իրականացաւ՝

Թուրքերը իր ազգին պատկանող ամէն բան «օդը հանեցին»:

Այսօր, ո՛չ Նարեկացի-ին գերեզմանը գոյութիւն ունի, ոչ ալ այն սուրբ վանքերը ուր ինք ապաշխարած էր: Եւ Նարեկացի-ի հայրենիքը գրաւուած է թուրքերուն կողմէ: Եւ իր հայրենակիցներէն մէկ հոգի չկայ այդ հայկական հողերուն վրայ: Բոլորն ալ, թուրքերուն եաթաղանով... Երկինք ուղարկուեցան:

Նարեկացի-ի երազական, շողշողուն գրութիւնները մեծ ազդեցութիւն գործեցին հայ մտաւորականութեան վրայ:

Առաջին օրէն մինչեւ այսօր, հայ մտաւորականներէն շատերուն ստեղծագործութիւններուն մէջ, կը տեսնուին անոր անիրատես

«կաղապարները» և փայլուն բառերու մթերքը:

Եւ հայ գրականութեան մէջ, արուեստի չափանիշը՝ «բանաստեղծական թռիչք» ունենալն է:

Ի՞նչ է բանաստեղծական թռիչքը:

Նարեկացիի նման երազատե՞ս ըլլալ, և թռչիլ ու թռչի՞լ բառերու ամպերուն մէջ, և հեռանա՞լ իրականութիւններէ:

Այս հիւանդկախ մտայնութեան դէմ իր ընդվզումը կը յայտնէր Ռուբէն Սեւակ. դեռ 1907-ին, երբ 22 տարեկան էր:

Նայեցէք, թէ Ռ. Սեւակ ինչ կ'ըսէ Մերուժան Պարսամեանի նման երազատես բանաստեղծներուն համար, 12 Փետրուար 1907-ին, Լոզանէն՝ Պերպերեան վարժարանի իր դասընկերոջը գրած նամակին մէջ:

«Անհկա յաւէտ պիտի ըլլայ երեւակայտդ ու օդային բանաստեղծը:

Ես, աւելի իրապաշտ եմ, ամէն բանէ առաջ իրականութիւնը գիտ կը գրաւէ. ամէն իրականութենէ վեր մէկ իրականութիւն կը հանչնամ ես՝ **ապրուած զգացուած կեանքը եւ ոչ թէ երեւակայտուած կեանքը**»:

Մանաւանդ 1911-ին, Ռուբէն Սեւակի «Այլասերում» յօդուածին մէջ իր գրածները, իսկական ոռումբ մըն էին, պայթելու պատրաստ, հիւանդկախ մտային կառոյց ունեցող մտաւորականներուն գլխուն վրայ:

Եւ այս գրութիւնը, մինչեւ այսօր, իր այժմեականութիւնը բնաւ չէ կորսնցուցած:

Եւ մենք, մեծ գոհունակութեամբ, պիտի նետենք այս «ոռումբ-յօդուածէն» մասեր, այսօրուան այլասերած, գիտակցաբար թէ անգիտակցաբար հայուն թշնամիներուն ծառայութեան մէջ եղող, հայկական մշակոյթի ժառանգը մսխող ապագային մտաւորականներուն գլխուն.-

«ԱՅԼԱՍԵՐՈՒՄ

Որբուկի պէս անտէր ցեղ մը հուժկու, և լուսեղ ու սիրտբուխ բարբառի մըն է ծարաւ:

Իսկ մեր գրագէտները հանելուկային, առեղծուածային, խաւարակուռ բաներ կ'ըսեն իրեն, ու մեր քերթողները գրիչնին հայ արեան մէջ թաթխելէ վերջ՝ չինարէն տաղեր կը գրեն որպէսզի մա՛րդ չհասկնայ...»:

«Հեռու մենե՛ ախտագիւն մտաւորականներ: Դուք ցեղին ուղեղն էք, բայց երբ այդ ուղեղը ուրիշ կերպ չի կրնար խորհիլ քան յուսահատեցնելով մեր կենսունակութիւնը, մենք պիտի փրցնենք այդ ուղեղը»:

«Այո, մեր ցեղը տարօրինակապէս կենսունակ ու աշխատող ցեղ մըն է: Այո, մեր հնամենի նաւը դեռ ջուրերուն վրայ կը ծփայ, դեռ չընկղմեցաւ: Բայց ի՞նչ է պատճառը որ երեկուան նաւակները մեզ արդէն անցան, ու մենք ուրուական նաւին պէս կը ծածանինք դեռ, անխորասուզելի, բայց և հաստատ ցամաքի մը հասնելու անկարող:

Սակայն, ստո՛յգ, ստոյգ կ'ըսեմ՝ ձեզի, վտանգը մեծ է, շատ մեծ, աւելի մեծ, քան կրնանք ենթադրել:

Ժամանակն է հակազդելու, հակազդենք: Մեզի նոր ոսկեդար մը պէտք է, նոր ոսկեդա՛ր մը: Այլասերո՛ւմ, ոչ՝ վերածնունդ:

Լոզան 1911

Ռուբէն Սեւակ»

* * *

Մենք, այստեղ, յայտնութիւն մը պիտի ընենք: Ռուբէն Սեւակի մայրենի լեզուն բրբերէնն էր: Որովհետեւ, Ռուբէն Սեւակի ոչ մայրը ոչ ալ հայրը հայերէն խօսիլ գիտէին: Անոնք, պարզապէս, բրբախօս էին:

Եւ շատ հետաքրքրական երեւոյթ մը կայ, Ռուբէն Սեւակի ծննդավայրը եղած Սիլիվրի գիւղաքաղաքը՝ Եւրոպական ցամաքամասին մաս կազմող Թրակիոյ մէջ կը գտնուի:

Մինչեւ 1922-թ.ները, Թրակիոյ մէջ, մասնաւորապէս 5 հայաշատ աւաններ կային՝ Ռոտոսքօ, Էտիրնէ, Մալկարա, Չորլու և Սիլիվրի:

Այս աւաններէն՝ Ռոտոսքօ, Էտիրնէ և Մալկարա բնակող հայերը հայախօս էին:

Իսկ Պոլսոյ աւելի մօտ եղող գիւղաքաղաքներէն՝ Չորլու և Սիլիվրի բնակող հայերը՝ բրբախօս:

Այս տարբերութեան մասին, մասնագէտ անձերու կարծիքը հարցուցինք:

Մեզի սա տեղեկութիւնը տուին.

«Ռոտոսքոյի, Էտիրնէի, Մալկարայի հայութիւնը՝ Նախիջեւանէն հոն գաղթած հայախօս հայեր են:

Մինչդեռ Չորլու-ի և Սիլիվրի-ի հայերը միջին Անաթոլիայէն

գաղթած հայեր են, որոնք դարեր առաջ բուրք բարբարոսներու կողմէ լեզուները կտրուելու սպառնալիքով՝ քրթախօս եղած են»:

Այստեղ կը հրապարակենք պատմական նամակ մը: Ռուբէն Սեւակի հօր՝ Յովհաննէս Յակոբ Զիլինկիրեանի կողմէ Սիլիվրիէն 1 [14] Մարտ 1914-ին, իր գաւկիմ՝ տօքթ. Ռուբէն Զիլինկիրեանի Լոզանի հասցէին դրկուած նամակ մըն է այս մէկը:

1914 Մարտի 14 փետր

սեւակի

ԵՂՎԱՆՆԻ ՎԵՐՎԵՐ ԱՌՄԵՆԻ Կ. ՋԻԿԻՍՅԵԱՆ

Յարգելի և այս րոպէս զի կտրուած ենք հայերէն լեզուի
 բարձր երկրի կնիստի ստի գիտելիքով և քաղաքի միջին
 ետեւէ սուր ինչու աւելցան ինքնի կարծիքս անպիտան
 երեւիցէն այնքան իրականում ինչպէս իրականում
 իր իր սուր և սեւոր ետեւ ինքնի իրականում ինչպէս
 և ինքնի կնիստի սուր և ինքնի կնիստի սուր
 ինչպէս սուր և ինքնի կնիստի սուր և ինքնի կնիստի սուր
 ինչպէս սուր և ինքնի կնիստի սուր և ինքնի կնիստի սուր
 ինչպէս սուր և ինքնի կնիստի սուր և ինքնի կնիստի սուր
 ինչպէս սուր և ինքնի կնիստի սուր և ինքնի կնիստի սուր
 ինչպէս սուր և ինքնի կնիստի սուր և ինքնի կնիստի սուր
 ինչպէս սուր և ինքնի կնիստի սուր և ինքնի կնիստի սուր
 ինչպէս սուր և ինքնի կնիստի սուր և ինքնի կնիստի սուր
 ինչպէս սուր և ինքնի կնիստի սուր և ինքնի կնիստի սուր
 ինչպէս սուր և ինքնի կնիստի սուր և ինքնի կնիստի սուր
 ինչպէս սուր և ինքնի կնիստի սուր և ինքնի կնիստի սուր

Կ. ՋԻԿԻՍՅԵԱՆ

Ուշադրութիւն՝ այս նամակը գրուած է հայերէն տառերով, բայց՝ բրքերէն լեզուով:

Ռուբէն Սեւակի հայրը լաւ հայերէն չէր գիտեր, բայց լաւ հայերէն... գրել գիտէր:

Ռուբէն Սեւակի հայրը, իր յղած այս նամակով, հօր մը համար ամէնէն ծանր պարտականութիւնն է որ կը կատարէ:

Այս նամակը՝ սեւով շրջանակուած սուգի նամակ մըն է: Իր գաւկի՛ն՝ Հայկի՛ն մահուան և թաղման լուրը կու տայ՝ Լոզան գտնուող իր բժիշկ գաւկի՛ն՝ տօքթ. Ռուբէն Զիլինկիրեանին: Եւ, մխիթարուելու համար՝ Ռուբէնը իր մօտ կը կանչէ: Եւ այս հրաւերով հայրը, անգիտակցաբար անշուշտ, Ռուբէն Սեւակը Չանդըրը-ի դժոխքը առաջնորդած կ'ըլլայ:

Այստեղ, պիտի ջանանք թարգմանել, այդ նամակէն մէկ քանի տող:

1914, Մարտ 1 [14] Սիլիվրի

Սեւկիւլի եվլատըմ տօքթօր Ռուբէն Յ. Զիլինկիրեան:

Փետրուար 22 [7] դարիդլի մեգտուրլան Հայկըմըզըն թեսլիմի բուն էթտիդինի սանա պիլտիրմիշտիմ, բազար կիւնիւ նէնազէ ալայը ինրա օլունտու:

Հայերէն թարգմանութիւնը:

1914, Մարտ 1 [14] Սիլիվրի

«Սիրելի գաւակս՝ տօքթօր Ռուբէն Յ. Զիլինկիրեան:

Փետրուար 22 [7] թուակիր նամակով, մեր սիրելի Հայկին հոգին աւանդած ըլլալը քեզի տեղեկացուցած էի:

Կիրակի օրը, թաղման արարողութիւնը կատարուեցաւ...»:

* * *

Այս տխուր նամակին անդրադարձած է Ռուբէն Սեւակ, իր «Բժիշկին գիրքէն փրցուած էջեր»ու շարքէն՝ «Ահաւոր տարակոյսը» խորագրուած գրութեան մէջ, որ տարաբախտ իր եղբօր՝ Հայկ Զիլինկիրեանի կանխահաս մահուան եղերապատումն է [Տես՝ «Ռուբէն Սեւակ - Երկեր», Անթիլիաս, 1986, էջ 387]:

Ռուբէն Սեւակ այս տխուր եղելութեան մէջ, իր երիտասարդ եղբօր՝ Հայկին մահուան կսկիծը սրտին, «կեանք» ըսուած առեղծուածին հանդէպ իր ընդվզումը կը յայտնէ:

**ԵՐԿՈՒ ԹՐԳԱԽՕՍ ՀԱՅ ՊԱՏԱՆԻՆԵՐ...
ԿՈՄՄՆԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԵՒ ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿ ՈՐՈՆՔ ՅԵՏՈՅ
ՀԱՅ ԱԶԳԻՆ ՌԱՀՎԻՐԱՆԵՐԸ ԵՂԱՆ**

15 Յուլիս 2003 թուակիր «Նայիրի»ի մէջ յայտնած էինք, թէ Ռուբէն Սեւակի մայրենի լեզուն հայերէնը չէր, այլ՝ թրքերէնը:

Ռուբէն Սեւակի հայրն և մայրը թրքախօս ըլլալնուն պատճառաւ, Ռուբէն, բնականաբար, հայերէնը իր մօրմէն չէր կրցած սորվիլ:

Հաւանաբար, դպրոցական տարիներուն, Սիլիվրի-ի Ազգանագեան նախակրթարանին մէջ սկսած էր տիրանալ հայերէն լեզուին:

Ասկէ առաջ ալ ըսինք, որ Սիլիվրի-ի հայ ժողովուրդը թրքախօս էր: Անոնք, միջին Անաթոլիայէն գաղթած հայեր էին, որոնք Կեսարիոյ, Եոզղաթ և Գոնիայի ու շրջակայ աւաններուն մէջ գտնուող հայ ժողովուրդին նման, թրքական բարբարոսութեամբ, լեզուները կտրուելու սպառնալիքով, թրքախօս եղած էին:

Բայց, Հայ Եկեղեցիին և, մանաւանդ, աւանդապաշտ հայ եկեղեցականներուն շնորհիւ, շատ մը հայեր [հակառակ որ հայերէն լաւ խօսիլ չէին գիտեր] հայերէն այրուբէնը սորված էին, Աւետարանը կը կարդային և, բնականաբար՝ առանց շատ բան հասկնալու, Աւետարանը «գոց» սորված էին, և եկեղեցական արարողութիւններն ու աղօթքները շատ լաւ գիտէին:

Ասոր շնորհիւ է, որ Ռուբէն Սեւակին հայրը [հակառակ, որ լաւ հայերէն չէր գիտեր] շատ լաւ հայերէն գրել գիտէր, և մեր հօրեղբօր՝ Քերովբէ Զիլինկիրեանին վկայութեամբ՝ իր հայրը Աւետարանը հայերէն կը կարդար և եկեղեցական արարողութիւնները և Պատարագը, կրօնականի մը չափ, լաւ գիտէր: Նոյնիսկ՝ անոնց սխալները, արարողութեան ընթացքին, բարձրաձայն նշողիւ աւստիճան:

Ռուբէն Սեւակի հայրը՝ Յովհաննէս Յակոբ Զիլինկիրեան, 1880-

ներուն Երուսաղեմ ալ գացած էր և հոն «Մահտեսի» եղած և «Հանի» մակդիրը ստացած: [Մահտեսի՝ արաբերէն մուկտիսի=գուտսի=սրբավայր=Երուսաղեմի աղաւաղուած ձեւն է]:

Եւ Երուսաղեմէն վերադառնալէն յետոյ, Սիլիվրի-ի մէջ, գինք «Հանի Յովհաննէս» կը կոչէին:

* * *

Ռուբէն Սեւակի նման, Կոմիտաս վարդապետն ալ, արեւմտեան Անաթոլիոյ [Էսկիշէհիրի շրջակայքը գտնուող] Կուտինա [բրքերէնով՝ Քիւթահիա] քաղաքը 1869-ին ծնած, բրքախօս հայ ընտանիքի մը գաւակն էր:

Եւ Կոմիտաս [մկրտուքեան անունով Սողոմոն], հակառակ որ հայերէն չէր գիտեր, շատ լաւ հայերէն կրնար կարդալ, և իբր դպիր կը ծառայէր Քիւթահիոյ իրենց թաղին եկեղեցիին մէջ:

Եւ 1881-ին Կոմիտաս, իբր լաւ ձայն ունեցող պատանի, Քիւթահիոյ առաջնորդին կողմէ էջմիածին կը տարուի:

Եւ հոն Կոմիտաս՝ իր բրքերէն խօսակցութեամբը, նախ կը յուսահատեցնէ Գեորգ Դ. Կաթողիկոսը, բայց քիչ յետոյ, իր գմայլելի ձայնովը, կը հմայէ գայն:

Եւ տասնեակ մը տարիներ յետոյ, էջմիածնի մէջ, Սողոմոն կը վերածուի՝ Հայ երաժշտութեան Տիտան Կոմիտաս Վարդապետի:

Կոմիտաս Վարդապետի և Ռուբէն Սեւակի առաջին հանդիպումը տեղի կ'ունենայ 1907-ին՝ Լոզանի մէջ:

Եւ այս հանդիպումը կը յաւերժանայ Լոզանի կեդրոնական վայրերէն մէկուն մէջ հանուած լուսանկարով մը:

Յետոյ, Կոմիտաս Վարդապետին և Ռուբէն Սեւակին համբաւները, իրարմէ կը բաժնուին:

Բայց, 1914-1915-ի չարաշուք տարիներուն, անոնք կրկին կը միանան Պոլսոյ մէջ:

Շատ հաւանական է, որ երկուքն ալ, իբր հասարակական գործիչներ, այդ տարիներուն Պոլսոյ մէջ, իրարու հետ սերտ կապեր հաստատած ըլլան:

Բայց, 24 Ապրիլ 1915-ը, իրենց բոլոր երազներուն վերջ կու տայ: Կոմիտաս Վարդապետ առաջին աքսորեալներուն մէջ է՝ Չանդըրը դրկուած:

Բայց Ռուբէն Սեւակ, 24 Ապրիլ 1915-ին, դեռ չէ ձերբակալուած:

Եւ Կոմիտաս Վարդապետ՝ միջամտութիւններու շնորհիւ, 1915-ի Մայիսի վերջերը, Պոլիս կը վերադարձուի:

19 Յունիս 1915-ի օրն է: Այդ օր, Կոմիտաս Վարդապետ, ներկայ կ'ըլլայ Պոլսոյ այն տեսն Բանկալթի կոչուող քաղաքացիական գտնուող Սուրբ Լուսաւորիչ եկեղեցին, իբր կնքահայր Ռուբէն Սեւակի գաւակներուն՝ Լեւոնի և Շամիրամի մկրտութեան:

Լեւոնին կնքահայրն է՝ Կոմիտաս Վարդապետ: Իսկ Շամիրամին կնքահայրը՝ օսմանեան պետութեան թղթատարութեան նախարար՝ Ոսկան Մարտիկեան:

Անհերքելի իրականութիւն է, որ Կոմիտաս Վարդապետին Չանդըրը-ի դժոխք արքայութիւնը, մեծագոյն ազդակը եղած է անոր մտային կառոյցին խանգարման:

Բայց Կոմիտասին անհանգստութիւնը, Մայիսի վերջաւորութեան, Չանդըրը-էն վերադառնալէն յետոյ, առաջին ամիսներուն մանաւանդ, այնքան ալ ակներեւ չէր եղած, որ նոյնիսկ Ռուբէն Սեւակ, իբր բժիշկ, Կոմիտասի մտային կառոյցին մէջ որեւէ անբնական վիճակ մը չէր նկատած, և Կոմիտաս Վարդապետը իբր կնքահայր, 1915-ի Յունիսին, իր գաւակներուն մկրտութեան հրաւիրած էր:

Նոյնիսկ աւելի յետոյ, Չանդըրը-ի մէջ, 1915-ի Օգոստոսի կեսերուն, Ռուբէն Սեւակ իր արքայութեան ընկերներէն՝ բժիշկ Վահան Ալթունեանին, որուն Պոլիս վերադառնալու արտօնագիր եկած էր, անոր սա խնդրանքը կը ներկայացներ՝

«Պոլիս երթալուդ՝ առաջին գործդ պիտի ըլլայ Բերա ելլել ու Կոմիտաս Վարդապետը առնելով մեզի երթալ: Հոն՝ տիկնոջս պատմել ամէն բան: Նա գիտէ, թէ ուր պիտի դիմէ»... [Բժիշկ Վահան Ալթունեան - Հայ բուժակ - Կ. Պոլիս - 1920]:

* * *

1976-ին, Պոլսէն վերջնականապէս մեր հեռանալէն յետոյ է, որ Նիս-ի մէջ, Շամիրամ Սեւակէն տեղեկացանք, թէ Լեւոնին և իր կնքահայրը եղած է Կոմիտաս Վարդապետը:

Եւ այն օրէն յետոյ, Պոլսոյ մեր հարազատներէն և բարեկամներէն խնդրեցինք, որ Պոլսոյ Պատրիարքարանէն, 1915-ին մկրտուած Լեւոնին և Շամիրամին մկրտութեան վկայագիրները առնելու ջանան:

Երկար տարիներու սպասումներէ յետոյ, վերջապէս՝ 1990-ին, մեր հարազատները յաջողեցան, Լեւոնին և Շամիրամին մկրտութեան վկայագիրները Պոլսոյ Պատրիարքարանէն ստանալէ ետք, գանձոյ մեզի ուղարկել:

| ՎԱՅԱԳԻՐ | | ՄԵՐՏՈՒԹԵԱՐ | |
|---------------------------------|-------------------|------------------------------------|--|
| ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆ | | ՀԱՅՈՅ ԹՈՒՐԻՒՆՅՈՅ | |
| Անձն Արտագիր | Լեւոն ՉԼԿՆՅԱՐԾՅԱՆ | Տարեկ Յովհաննէս ՉԼԿՆՅԱՐԾՅԱՆ | |
| Նայր | | Ժաննի Քրոն | |
| Սնայր | | 19-7-1918 Ոսթոնգուլ | |
| Մայր Քեթի-Լայր | | 19-6-1915 | |
| Քեթի Արքայան | | Ս. Լուսուարիչ Լայր. Օկոզնի Քոնկուր | |
| Նայր Արքայ | | Ս. Ստեփ Ժեյ. Բաղչեան | |
| Սնայր | | Ս. Նաթանա Կոյ. Գրոզեան | |
| Կրթական | | | |
| Քր. Պատրիարքարանի Սնայր անձագիր | | 2-6205 | |
| Քր. Օկոզնոյ անձագիր | | 203-107 | |

Կը հաստատուի որ վերոյիշեալ անձը, Արքայան և ըստ որիքի եւ որպէս չափս Նայր Օկոզնոյի:

15 ՕՐԱՄՍՈՒ 1990

Գրքար Քեյ. Յովհաննէս
Պատրիարք

| ՎԱՅԱԳԻՐ | | ՄԵՐՏՈՒԹԵԱՐ | |
|---------------------------------|--------------------|------------------------------------|--|
| ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆ | | ՀԱՅՈՅ ԹՈՒՐԻՒՆՅՈՅ | |
| Անձն Արտագիր | Տաթևալ ՉԼԿՆՅԱՐԾՅԱՆ | Տարեկ Յովհաննէս ՉԼԿՆՅԱՐԾՅԱՆ | |
| Նայր | | Ժաննի Քրոն | |
| Սնայր | | 27-6-1914 Ոսթոնգուլ | |
| Մայր Քեթի-Լայր | | 19-6-1915 | |
| Քեթի Արքայան | | Ս. Լուսուարիչ Լայր. Օկոզնի Քոնկուր | |
| Նայր Արքայ | | Ս. Ստեփ Ժեյ. Բաղչեան | |
| Սնայր | | Ոսթոն ՍՄՏՅԱԿՅԱՆ | |
| Կրթական | | | |
| Քր. Պատրիարքարանի Սնայր անձագիր | | 2-6205 | |
| Քր. Օկոզնոյ անձագիր | | 1915-203-105 | |

Կը հաստատուի որ վերոյիշեալ անձը, Արքայան և ըստ որիքի եւ որպէս չափս Նայր Օկոզնոյի:

15 ՕՐԱՄՍՈՒ 1990

Գրքար Քեյ. Յովհաննէս
Պատրիարք

Այստեղ կրկին կը հրատարակենք, այս մկրտութեան վկայագիրները, այս անգամ աւելի մեծ և ընթեռնելի ձեւով:

Ինչպէս որ կը տեսնէք՝ Շամիրամին կնքահայրն է՝ քղթատարութեան նախարար Ոսկան Մարտիկեանը:

Իսկ Լեւոնին կնքահայրը՝ Կոմիտաս Վարդապետ:

Բայց այս մկրտութեան վկայագիրներուն մէջ, մեզի համար անհասկանալի կէտ մը կար - Լեւոնին կնքահայր ըլլալով արձանագրուած էր՝ **Կոմիտաս Վարդապետ Գեորգեան:**

Մինչդեռ բոլորին ծանօթ էր, որ Կոմիտաս Վարդապետին մականունը՝ **Սողոմոնեան էր:**

Նոյնիմքն՝ Կոմիտաս Վարդապետ 1908-ին, իր ինքնակենսագրութեան մէջ, իր ընտանիքին ազգանունը Սողոմոնեան նշած էր:

Նոյնպէս՝ Գրիգորիս վարդապետ Պալաքեան, իր «Հայ Գողգոթան» գիրքին Չանդըրը արտօրեալներու ցանկին մէջ, Կոմիտասին անունը տուած էր՝ **Կոմիտաս Վրդ. Սողոմոնեան:**

Եւ Կոմիտասի մասին, մեր ունեցած բոլոր գիրքերը քղթատեցինք: Բոլորին մէջ ալ Կոմիտասին ազգանունը Սողոմոնեան գրուած էր:

Եւ վերջապէս, մեզի համար, ամենէն կարեւոր և հաստատ «աղբիւր» ըլլալով՝ Հայկական Սովետական Հանրագիտարանը նայեցանք: Հոն ալ, Կոմիտասին ազգանունը, Սողոմոնեան էր:

Բայց ինչո՞ւ ուրեմն, 19 Յունիս 1915-ին Կոմիտաս, Ռուբէն Սեւակի զաւակներուն մկրտութեան օրը, Կոմիտաս Վարդապետ Գեորգեան անունը գործածած էր: Ի՞նչ էր այս առեղծուածը:

Մենք վստահ էինք, որ Ռուբէն Սեւակի զաւակին՝ Լեւոնին կնքահայրը՝ Կոմիտաս Վարդապետ Սողոմոնեանն էր, որ 19 Յունիս 1915-ին, իբր կնքահայր, իր անունը Կոմիտաս Վարդապետ Գեորգեան արձանագրել տուած էր Պոլսոյ Բանկալթի-ի Սուրբ Լուսաւորիչ եկեղեցիին մկրտութեան տոմարին մէջ:

Վերջին շրջաններու հայկական պատմութեան ամենէն հռչակաւոր և ամենէն հանրածանօթ անձնաւորութիւններէն եղող Կոմիտաս Վարդապետին [որուն գործին և կեանքին շուրջ մեծ թիւով հատորներ գրուած են] ազգանունն այս տարբերակին մասին ինչո՞ւ, ոչ մէկտեղ ստոյգ և մանրամասն արձանագրութիւն մը գտնել կարելի չէր:

Ինչո՞ւ Կոմիտասի այս գոյգ ազգանուններուն մասին, ոչ մէկ

տեղ ակնարկութիւն մը, բացատրութիւն մ'անգամ չկար: Գուցէ, մե'նք չկրցանք գտնել: Արդեօ՞ք ուրիշ Կոմիտաս Վարդապետի մը մասին է խօսքը, մեզի անծանօթ:

Մեզի համար շատ զարմանալի և անհասկնալի երեւոյթ է այս պարագան:

Եւ այս առեղծուածը լուսաբանելու համար, 1990-էն սկսեալ, մեր հարազատներէն և բարեկամներէն կրկին խնդրեցինք, որ Պոլսոյ Պատրիարքարանի արխիւներէն Ռուբէն Սեւակի գաւակներուն մկրտութեան բնագիր արձանագրութիւնները նկարահանեն և մեզի ուղարկեն, որ կարենանք զանոնք բաղդատել մեր ունեցած պատե՛նէնահանուած վկայագիրներուն հետ:

Բայց բնաւ չէինք մտածած, թէ այս արձանագրութիւնները նկարահանելը այսքան դժուար պիտի ըլլար և այսքան երկար տարիներ պիտի տեւէր:

Նախ՝ Պոլսոյ Պատրիարքարանի արխիւներու վայրին մէջ կատարուող դասաւորման աշխատանքներու պատճառաւ, արխիւի սրահը փակ է ըսին [որ շատ երկար տեւեց]:

Յետոյ՝ Պատրիարքարանի շէնքին վերանորոգութեան աշխատանքները սկսան, որոնց աւարտը երկար տարիներ առաւ:

Աւելի ուշ՝ ըսին, թէ ներկայ Պատրիարքը, 1915-ի վերաբերեալ արխիւային ճիւղերուն համար, արգելք դրած է, և այդ չարադէտ բուսականի արխիւներուն վրայ ուսումնասիրութիւն կատարել կարելի չէ:

Եւ այս ձեւով, անցան տարիներ ու տարիներ, առանց արդիւնքի:

Եւ վերջապէս՝ Մայիս 2003-ին, Պոլսոյ մէջ «Հայկական ոգի» ունեցող մեր մէկ բարեկամը յաջողեցաւ, Ռուբէն Սեւակի գաւակներուն՝ Լեւոնին և Շամիրամին մկրտութեան բնագիր արձանագրութիւնները նկարահանել և պատճենները մեզի ուղարկել:

Թէ ինչպէ՞ս - պատմելու ջանանք:

Այս հայու ոգի ունեցող պոլսեցին, [որուն անունը, հասկնալի պատճառներով, պիտի չկրնանք տալ] կը ներկայանայ Պոլսոյ Պատրիարքին և կը ցուցնէ անոր Լեւոնին և Շամիրամին մկրտութեան պատճենահանուած վկայագիրները և կ'ըսէ, թէ՝ **«Այս մկրտութեան վկայագիրներուն՝ տոմարներուն մէջի բնագիր արձանագրութիւնները նկարահանելու արտօնութիւն տալերնիդ պիտի խնդրեմ»:**

Պատրիարքը կը նայի վկայագիրներուն և կ'ըսէ, թէ՝ **«Ռուբէն**

Սեւակի գաւակներուն վկայագիրներն են ասոնք»: Եւ արխիւի պատասխանատու տիկինը կը կանչէ և այս վկայագիրներուն բնագիր տոմարները կ'ուզէ որ բերեն:

Տիկինը, միջոց մը յետոյ կը վերադառնայ և կ'ըսէ, թէ՝ **«Այս վկայագիրներուն տոմարները չկրցայ գտնել»:**

Պատրիարքը, կրկին կը նայի վկայագիրներուն և «Այո, իրաւունք ունիք. այս վկայագիրներուն բնագիրները՝ Բանկալթի-ի քանդուած Սուրբ Լուսաւորիչ եկեղեցիին տոմարներուն մէջ են, և այդ եկեղեցիին ամբողջ արխիւը՝ Բերայի [ներկայի Պէյօղլու] Սուրբ Երրորդութիւն եկեղեցիին մէջ կը պահուի»:

Եւ կը հեռաձայնէ Սուրբ Երրորդութիւն եկեղեցիին պատասխանատուին և կ'ըսէ, թէ՝ **«Սուրբ Լուսաւորիչ եկեղեցիին արխիւներուն մէջ, մկրտութեան արձանագրութիւն մը նկարահանելու համար, պարոն... ը պիտի ներկայանայ ձեզի: Խնդրեմ, իրեն դիւրութիւն տուէք»:**

Եւ Պատրիարքին այս արտօնութեան շնորհիւ. մեր բարեկամը. վերջապէս. կը յաջողի պատնէնահանել Սուրբ Լուսաւորիչ եկեղեցիին տոմարներուն մէջ գտնուող Լեւոնին և Շամիրամին մկրտութեան բնագիր արձանագրութիւնները:

Եւ, միջոց մը ետք, մեզի հասան այս պատմական արձանագրութիւններուն նկարները: Այստեղ մեր սրտագին շնորհակալութիւնները կը յայտնենք՝ հայու ոգի ունեցող պուսեցի մեր բարեկամին:

Շատ յուզիչ է տեսնել, Ռուբէն Սեւակին ձերբակալութենէն 3 օր առաջ կատարուած այս մկրտութեան արձանագրութեան բնագիրներուն նկարները:

Այստեղ կը հրատարակենք, թուրքերուն կողմէ 1939-ին փլցուած Պոլսոյ Բանկալթի-ի Սուրբ Լուսաւորիչ եկեղեցիին տոմարին մէջ, Ռուբէն Սեւակին գաւակներուն՝ Լեւոնին և Շամիրամին 19 Յունիս 1915-ին կատարուած մկրտութեան արձանագրութիւններուն երեք մասերէ բաղկացած նկարները՝

Այստուրթիակ.

| Վրի | Թուական | Երթից | Մկրտող Էպիսկոպոս | ԿԳԿախար | Տեղ |
|-----|---------|--------|---------------------|--------------------|-----|
| 196 | " 19 | Բրախլա | Մ. Առաք. Մարտիրոս | Մոխր Կարմիր | |
| 197 | " 19 | Երևան | Մ. Առաք. " " | Մ. Սարգս. Մարտիրոս | |

Ծնունդ.

| Ցերեկի Իրիւնք | Միտ | Թուական | Բնակարան | Մ. Առաք. | Հարգանք |
|------------------|------|-----------|----------|----------|-------------------|
| | 1910 | մայիս 16 | Բրախլա | | |
| | 1914 | հունիս 27 | Բրախլա | | Մ. Առաք. Մարտիրոս |
| | 1922 | հունիս 19 | | | |

Ծնոյնք

| Մականուն | Արձեւտ | Մայրական | Մականուն | Հայրենիք |
|----------|--------|----------|----------|----------|
| Ս. ՆՆՆ | | | | |
| Ս. ՆՆՆ | Բրախլա | Բրախլա | Բրախլա | Բրախլա |
| " | " | " | " | " |

Սյս նկարներուն մէջ շատ յստակ կ'երեւան. քե՛ Շամիրամ Զիլինկիրեան մկրտուած է կնքահայրութեամբ՝ Ոսկան Մարտիկեանի, իսկ Լեւոն Զիլինկիրեան մկրտուած է կնքահայրութեամբ՝ **Կոմիտաս Վարդապետ Գեորգեանի**: Եւ այս Կոմիտաս Վարդապետ Գեորգեանը՝ Մեծն Կոմիտասն է. **Կոմիտաս Վարդապետ Սողոմոնեանն է**.

Ի՞նչ է Կոմիտասի այս երկու տարբեր ազգանուններ ունենալուն պատճառը:

Մենք կը կարծենք, որ քե՛ս Կոմիտաս, 24 Յունիս 1908 թուակիր իր ինքնակենսագրութեան մէջ, իր հօր ազգանունը՝ Սողոմոնեան ըլլալով նշած է, բայց այս նոյն ինքնակենսագրութեան մէջ, իր անունը Կոմիտաս Սողոմոնեան ըլլալով չէ գրած, այլ միայն Կոմիտաս Վարդապետ Կուտինացի:

Թերեւս Կոմիտաս՝ ուզած է մնալ մեր՝ հայկական աւանդական անուններու գործածութեան ձեւին մէջ, ուր հայ կրօնականները կը կոչուէին, իրենց մկրտութեան անունին կողքին, իրենց ծնած վայրին անունով:

Բայց մենք, աւելի շատ կը հաւատանք, որ Կոմիտաս ի՛նք չէ սիրած «Սողոմոնեան» անունը: Այդ պատճառաւ գործածած է միշտ՝ **Կոմիտաս Վարդապետ** անունը և ստորագրութիւնը:

Եւ եթէ պէտք եղած է՝ ազգանունն ալ գրել, ինչպէս Ռուբէն Սեւակին գաւակներուն մկրտութեան օրը՝ տոմարին մէջ արձանագրելու համար, գրած է՝ Կոմիտաս Վարդապետ Գեորգեան:

Թերեւս, իր հօր անուան Գեորգ ըլլալուն և կամ Գեորգեան նեմարանին իր պատկանելիութեան պատճառաւ Կոմիտաս գործածեց՝ **Գեորգեան մականունը** - չենք գիտեր:

Ամէն պարագայի Կոմիտաս իրաւունք ուներ՝ իր արուեստի ու արուեստագետի կեանքին մէջ, իր նախընտրած անունը գործածելու:

Ինչպէս որ Ռուբէն Զիլինկիրեան «Սեւակ» անունը ընտրած էր իբր գրչանուն:

Այստեղ հարց մը կը ծնի - Կոմիտասի անցագրին մէջ ի՞նչ էր իր ազգանունը:

Մեծ հաւանականութեամբ՝ հօրը գծով՝ «**Սողոմոնեան**» պէտք է եղած ըլլայ:

Թերեւս այս է պատճառը, որ Կոմիտաս-ի ազգանունը, ամէն

տեղ՝ **Սողոմոնեան** ըլլալով ծանօթ է:

Արդեօ՞ք, այս երկու ազգանուններուն մասին, իր ապրած տարիներուն՝ պատճառը իրեն հարցուցած են: Այս մասին մենք, որեւէ տեղեկութիւն չունինք:

Կոմիտասի մասին անյայտ մնացած կէտեր լուսաբանելը՝ հայ մտաւորականութեան պարտականութիւնն է:

Հայկական երաժշտութիւնը մութէն լոյս աշխարհ հանող հանճարեղ Կոմիտասին կեանքին ամէն մէկ մանրամասնութիւնը, լոյսի պէս պայծառ և յստակ պէտք է ըլլայ:

* * *

Մեր այս գրութեան նպատակն էր, մատնանշել այն սքանչելի ապացոյցը, որ երկու բրքախօս պատանիներ՝ Կոմիտաս Վարդապետ և Ռուբէն Սեւակ որոնց մայրենի լեզուն հայերէնը չէր, բայց իրենց ծին-երուն (gen) մէջ գտնուող հայկականութեան տաղանդին շնորհիւ, անոնք հայ ազգին ռահվիրաները եղան:

Մենք կը հաւատանք հայկականութեան տաղանդին:

Սիրելի հայ երիտասարդներ՝ ձեր ամէն մէկուն մէջ, հայկականութեան տաղանդը կայ: Գիտցե՛ք այս տաղանդին արժէքը և լաւ օգտագործեցէք այս տաղանդը:

Կոմիտաս վարդապետ և Ռուբէն Սեւակ՝ օրինակ ըլլան ձեզի:

Յ. Գ. Մեր այս գրութիւնը պատրաստելէ յետոյ, նկատեցինք, թէ դուկտ. Արեւի քահանայ Մանուկեանին 1994-ին հրատարակուած «Կոմիտաս»ի մասին շատ արժեքաւոր աշխատասիրութեան մէջ, Կոմիտաս Վարդապետին ազգանունը քանի մը տեղ նշուած է՝ Գեորգեան:

Դուկտ. Արեւի քահանայ Մանուկեան, այս մասին հետեւեալ հակիրճ տեղեկութիւնը տուած է՝ «Սողոմոնեան մականունին առընթեր՝ Կոմիտաս Վրդ. ծանօթ եղած է նաև Գեորգեան մականունով»: **Յ. Զ.**

**ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ ՔՐՈՋ՝ ՀԱՅԿԱՆՈՒՇ ՋԷՎԻԿԵԱՆԻ
[ԾՆԵԱԼ՝ ՋԻԼԻՆԿԻՐԵԱՆ] ԱԿԱՆԱՏԵՍԻ ՎԿԱՅՈՒԹԻՒՆԸ**

**ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ ԿՐՏՍԵՐ ՔՈՅՐԸ՝ ՀԱՅԿԱՆՈՒՇ ԿԸ ԽՕՄԻ
ԻՐ ԵՂԲՕՐ՝ ՌՈՒԲԷՆԻ ՄԱՍԻՆ:**

**ՄԵՐ ՀՕՐԱՔՐՈՋ՝ ՀԱՅԿԱՆՈՒՇ ՋԷՎԻԿԵԱՆԻ ՌՈՒԲԷՆ
ՍԵՒԱԿԻ ՄԱՍԻՆ ՎԿԱՅՈՒԹԻՒՆԸ ՁԱՅՆԱԵՐԻՋԻ ՎՐԱՅ
ԱՐՁԱՆԱԳՐԵԾԻՆՔ ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ 1966-ԻՆ, ՊՈԼՍՈՅ ՄԷՋ:
ՅԵՏՈՅ՝ 1979-ԻՆ, ԱԹԷՆՔ:**

Ռուբեն Սեւակին կրտսեր քոյրը՝ Հայկանուշ ծնած 1895-ին,
Սիլիվրի:

Ան, զանազան դպրոցներու դասընթացքներուն հետեւելով
տիրացած է հայերէն լեզուին և նաեւ, որոշ չափով՝ ֆրանսերէնի
ալ: Յետագայ տարիներուն, մտերմիկ կապեր հաստատած է
Հայկանուշ, Ռուբեն Սեւակի այրիին՝ Ժաննիի հետ, ֆրանսերէն
նամակագրութեամբ: Եւ Ժաննիի, այս նամակներուն մէջ, «Իմ
հարազատ քոյրս Հայկանուշ» որակած է զինք:

1920-ք.ներուն Հայկանուշ կը նշանուի Ռոտոսքոցի Սարգիս Ջե-
վիկեանի հետ և 1922-ք.ներուն, Պոլսէն հարս կ'երթայ Յունաստան՝
Cavala քաղաքը և կ'ամուսնանայ Ս. Ջեվիկեանի հետ:

Այս ամուսնութեանէն երկու աղջիկ գաւակներ կ'ունենայ: 1939-
1945-ի՝ Բ. Աշխարհամարտէն յետոյ, Գավալայէն Աթէնք կը հաս-
տատուի ընտանեօք:

Հայկանուշ 1960-ին և 1966-ին՝ երկու անգամ Պոլիս եկած էր, իր
եղբայրը՝ Գրաբոս Ջիլինկիրեանը տեսնելու: 1966-ին էր որ, առա-
ջին անգամ, Պոլսոյ մեր տան մէջ, ձայնաերիզի վրայ արձանա-
գրեցինք մեր հօրաքրոջ՝ Հայկանուշին յուշերը իր եղբօր՝ Ռուբենի
մասին:



Նկարը վերցուած է 1922 թ.ներուն Պոլսոյ մէջ: Կը տեսնուին՝ կեդրոնը՝ Հայկանուշ Չիլինկիրեան-Չեվիկեան (Ռուբէնի կրտսեր քայրը): Նկարի ձախին՝ Շամիրամ Սեւակ, աջ ծայրը՝ Լեւոն Սեւակ: Կեդրոնը՝ Արամ Չիլինկիրեան:

Եւ աւելի վերջ՝ 1979-ին, Արքեւքի մէջ, այս անգամ աւելի յաջող ձայնագրութեան պայմաններով, արձանագրեցինք Հայկանուշ Չեվիկեանի պատմածները: Եւ շատ հետաքրքրական է որ Հայկանուշ, 1966-ին Պոլսոյ մէջ իր պատմածները, 13 տարիներ յետոյ՝ 1979-ին Արքեւքի մէջ, գրեթէ նոյն բառերով կրկնեց, իր եղբօր՝ Ռուբէն Սեւակի մասին ըսածները: Այս տեսակետով մենք այստեղ պիտի ջանանք, ամփոփ ներկայացնել Հայկանուշ Չեվիկեանի 1966-ին և 1979-ին պատմածները:

* * *

1979-թ.ի Փետրուարին, Հայկանուշ Չեվիկեանի հետ, մեր խօսակցութիւնը կատարեցինք Ռուբէն Սեւակի մեծ քրոջ՝ Էֆթիկ Յակոբովիչի աղջկան՝ Սիրվարդ Գլընեանի Արքեւքի տան մէջ:

Այստեղ պիտի ջանանք տալ այս խօսակցութիւնները, կարելի հարազատութեամբ:

Հարցում. - Հօրաք, Ռուբէնի մանկութեան տարիներէն ի՞նչ յիշատակներ ունիս: Ձեր միասին խաղցած շրջաններէն բան մը կը յիշե՞ս:

Պատասխան.— Անոնք բնաւ չեմ յիշեր: Շատ կանուխ Պերպերեան գացած է ան»:

Այս միջոցին Սիրվարդ Գլընեան միջամտեց և հետեւեալ տեղեկութիւնները տուաւ.— Անցեալ օր Ա.թէնք՝ «Ազատ Օր»ի խմբագրատունը գացած էի, խմբագրապետ Յովսէփ Պարագեանը ինծի գրութիւն մը ցուցուց և ըսաւ թէ՝ «Ռ. Սեւակի մասին գրութիւն մըն է այս: Զեգի համար գրեցի: Որովհետեւ հոս, ան շատ ծանօթ չէ: Երիտասարդները Ռուբէն Սեւակը չեն ճանչնար: Շատ ցաւալի է երիտասարդութեան այս տգիտութիւնը»: Եւ ան, Ռուբէն Սեւակի մասին իր գրած գրութիւնը կարդաց: Իրապէս ալ, շատ լաւ պատրաստուած գրութիւն մըն էր՝ Ռ. Սեւակի մասին...

Ռուբէն Սեւակը շատ մեծ գրագէտ մըն էր: Շատ խորունկ մտածող՝ մեծ գրագէտ մը»:

Յետոյ, մեր խօսակցութիւնը շարունակեցինք Հայկանուշ Զեվիկեանի հետ: Ան, իր նախորդ ըսածներուն վրայ աւելցուց.— Ռուբէնին, Պերպերեան վարժարանէն շրջանաւարտ եղած օրը, պապաս ինծի ալ տարաւ Պոլիս՝ Ռուբէնին «Diplome»ի հանդիսութեան: Եւ այդ հանդիսութեան օրը, իբր շրջանաւարտներուն ներկայացուցիչը՝ Ռուբէն կարդաց «Վերջին հրաժեշտը»:

Յետոյ, Ռեթէոս Պերպերեան խօսեցաւ մեծ գնահատանքներով Ռուբէնի մասին: Այդ միջոցին ամեն մարդ պապայիս կը նայեր... Այն օր Ռուբէնը՝ իբր դպրոցին ամենայաջող աշակերտը, շատ գնահատուեցաւ: Ալ շնորհաւորութիւններ, շնորհաւորութիւններ: Այն օրը մեծ օր էր: Բայց այն օրը, երեւակայէ՝ բանէ «խապար» չունէի, որովհետեւ պզտիկ էի, տասը տարեկան»:

Հարցում.— Հօրաք, ինչպէ՞ս որոշուեցաւ Ռուբէնին Եւրոպա երթալը:

Պատասխան.— Ռեթէոս Պերպերեանը պատճառ եղաւ: Այն օրը, հանդիսութենէն յետոյ, Պերպերեան պապաս կանչեց Ռուբէնին մասին խօսելու համար:

Ինծի ներս չարին: Դուրսը սպասեցի: Սկիզբը հայրս բնաւ համամիտ չէր Ռուբէնին Եւրոպա երթալուն: Այդ պատճառաւ է, որ Պերպերեանին հետ պապայիս խօսակցութիւնը շատ երկար տեւեց: Եւ, Սիլիվրի վերադառնալէն յետոյ, պապաս պատմեց, մերիններուն, ինչ խօսած ըլլալին:

Այն օրը պապաս Պերպերեանին ըսեր է, որ «Աւելի լաւ է՝ տղաս

գրկեմ և ծովը նետեմ: Այսքան ուսումը կը բաւէ ալ իրեն: Եւրոպա գացողը այլեւս ետ չի գար:

«Oraya giden. Bir daha geri gelmez»: Ռ. Պերպերեանն ալ՝ «Եթէ դուն չդրկես, ես պիտի դրկեմ, Ռուբէնին հոս մնալը անոր տաղանդը մեռցնել ըսել է: Անիկա բացառիկ խելք մըն է»:

Եւ Պերպերեանը խօսեր է, խօսեր է, պապաս համոզելու համար: Յետոյ, դուրսէն ըսուեցաւ, որ իբր թէ Պերպերեանը կը փափաքի եղեր ապագային իր աղջիկը՝ Մաննիկը՝ Ռուբէնին հետ ամուսնացնել:

Ամէնէն վերջ պապաս համոզուեր է: Ասոր վրայ Ռուբէնը կանչեր են: Եւ Պերպերեանին առջեւ պապաս Ռուբէնին ըսեր է որ.- «Ես համոզուեցայ: Քեզի Եւրոպա պիտի դրկեմ, եթէ ինձի խօսք տաս:

Ես հիմա քեզի «կոյս» կը դրկեմ կոր: Եւ դուն «կոյս» պիտի վերադառնաս: «Seni kiz yolluyorum kiz geleceksin»: Կրնա՞ս ինձի խօսք տալ»:

* * *

Անկէ ետք, Ռուբէն Լոզան գնաց բժշկութիւն ուսանելու: Հայրս ամէն ամիս դրամ կը դրկէր Ռուբէնին: Չեմ գիտեր՝ քանի ոսկի դրամ: Այս դրամը պապաս կը դրկէր՝ Ռուբէնին ընկերոջ՝ Հրանտ Նազարեանցի միջոցաւ:

Նազարեանցը բանաստեղծ էր: Բայց նոյն ատեն վաճառական էր: Իտալացի կին մը ունէր: Աւելի վերջ՝ Նազարեանցը քանի մը անգամ Սիլիվրի ալ եկած է:

Ռուբէնը, Համիտի շրջան ըլլալուն, ամառուան արձակուրդներուն Պոլիս չէր կրնար գալ ամէն տարի: Ալպեան լեռները կերթայ եղեր: Այդ տարիներուն Ռուբէնը Լոզանի մէջ, Շաննի կամ ժաննի անունով գերմանացի աղջկան մը սիրահարուեր է: Եւ անոր հետ Ալպեան լեռները կ'երթան եղեր:

Բայց միջոց մը ետք, Ռուբէնին այս գերմանացի աղջկան հետ սիրաբանութեան լուրը, պապայիս ականջը հասաւ:

Պապաս շատ բարկացաւ և Ռուբէնին դրամ ուղարկելը կեցուց: Բայց Հրանտ Նազարեանցը Ռուբէնին ընկերը ըլլալուն. բաւական ատեն շարունակեր է դրամ դրկել: Մտածեր է, որ հօրը բարկութիւնը, միջոց մը ետք, կ'անցնի, և դրամը կրնայ գանձել:

Ռուբէնին ժաննի-ին հետ սիրաբանութեան լուրը մեզի

հասնելէն ետք, մեր տունը սուգի մէջ մտաւ: Պապաս բնաւ չէր խնդար: Միշտ տխուր էր: Մենք ալ միշտ տխուր էինք: Երբեմն մեծ եղբայրս՝ Քերովբէն և քեռայրս՝ Օննիկ պէյը մեզի կուգային, մեր տրամադրութիւնը փոխելու համար: Պապաս քիչ մը կենալէ ետք սենեակ կը քաշուէր: Իր սենեակին մէջ «patience» կը բանար [համբերախաղ], և տեւական *սիկարա*, սուրն, *քասիանս...*

Մայրս միշտ տխուր էր, տեւական կուլար: Գիշերը, շատ ատեն գիւնք, պատուհանին առջեւ նստած վիճակով, լալը կը տեսնէի: Տեւական հեռուի իր տղուն կը մտածէր: Մայր ըլլալը դիւրին չէ:

Յետոյ, Ռուբէնը բժիշկ եղաւ և նամակներ եկան, որ լուր կուտային Ռուբէնին և Ժաննի-ին ամուսնութիւնը: Եւ զաւակ մը ունեցան: Ռուբէնը իր զակին՝ Լեւոնին նկարը դրկեց և պապաս կամաց կամաց թուլցաւ. բարկութիւնը անցաւ»:

* * *

«Ռուբէն բժիշկ ըլլալէ ետք, Լոզանի հիւանդանոցները կ'աշխատի եղեր:

Եւ Պոլսոյ մէջ, թուրք փաշաներուն մօտ լուրը հասեր է, որ Լոզան հայ բժիշկ մը կայ, որ թրքերէն ալ գիտէ: Այն ատեն թուրքերը տգէտ էին:

Լոզան կ'երթան եղեր հարուստ փաշաները, դարմանուելու: Դրամ ունին, բայց լեզու չունին, փողոց անգամ չեն կրնար ելլել: Ռուբէնին հասցեն գիտեն եղեր: Անոր կ'երթան: Եւ Ռուբէնը անոնց կ'օգնէ եղեր՝ իբր բժիշկ և իբր թարգման: Այս թուրք փաշաները Պոլիս վերադարձին իրարու կ'ըսեն եղեր, որ տօքթ. Ռուբէնը շատ օգտակար եղած է իրենց: Եւ այս ձեւով Ռուբէնը շատ մը թուրք մեծաւորներու Լոզանի մէջ օգնած ըլլալուն, այս թուրքերը երախտապարտ են եղեր Ռուբէնին:

Երբ թուրք երեսելիները լուր կ'առնեն, որ Ռուբէն վերջնականապէս Պոլիս պիտի հաստատուի, իրարու հետ կը մրցին եղեր՝ Ռուբէնը Պոլսոյ մէջ հիւրասիրելու համար:

Բայց Ռուբէնը չէ ընդուներ, և ըսեր է, որ «Ես նախ պապայիս պիտի երթամ»: Եւ Ռուբէնը և կիներ՝ Ժաննին և փոքրիկ Լեւոնը Սիլիվրի եկան և մեր տունը մնացին: Ժաննին յղի էր: Թէեւ ան՝ անուշ էր բնաւորութեամբ: Բայց երբ հիւր մը կու գար և հարսը տեսնել կ'ուզէր, Ժաննին մէջտեղ չէր ելլեր: Տասնհինգ օր հազիւ

կեցան: Յետոյ, Պոլիս վերադարձան: Հոն տուն վարձեցին, կահաւորեցին:

Եւ ես կը յիշեմ... երբ Շամիրամը ծնաւ, պապայիս հետ Պոլիս՝ իրենց գացինք: Մեծ գրադարան մը կար: Ռուբէնը գիրքերը մէջը տեղաւորեց, շարեց կանոնաւոր: Յետոյ, գորգին վրայ գետինը երկնցաւ: «Օ՛խ, վայելեմ քիչ մը, վայելեմ քիչ մը» ըսաւ: Ես՝ «Ի՞նչ է, գետինները երկնցած ես. ե՛լ» ըսի: «Ձգէ, ասանկ կը վայելեմ աւելի լաւ» պատասխանեց»:

* * *

«Բայց Ռուբէն, իր տունը, հանգիստ չկրցաւ ընել: Հայերը ամէն օր, անոր հանդէսի մը կամ բանախօսութիւն մը ընելու կը կանչէին: Տունը եղած ատենն ալ, ամէն ատեն մէկը կուգար: Օրիորդներ կուգային, որ Ռուբէնը իրենց տետրակին մէջ բան մը գրէ:

Բնական է՝ դռան առջեւ չէր կրնար գրել, ներս կը հրամցնէր:

Եւ ժամնին կը ջղայնանար: «Ի՞նչ տեսակ բան է ասիկա: Ամուսինիս հետ, դէմ դիմաց բան մը խօսելու ատեն չունինք» կ'ըսէր:

Ռուբէնը շատ համակրելի էր, շատ համակրելի: Անոր ձայնը, խօսուածքը շատ, շատ անուշ էր, մանաւանդ խօսիլը՝ բեմէն: Ինչպէս հիմա Գարեգին Սրբազանն է [Ապագայ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Ա.ին համար է խօսքը - **Յ. Զ.**]: Ասանկ, մագնիսական զօրութեան նման իրեն կը քաշէր ժողովուրդը, հագարներով մարդ զինքը մտիկ ընելու կ'երթային: Ռուբէնը հանգիստ չէին ձգեր: Ձեռքէ ձեռք կ'առնէին, խօսելու կը տանէին: Ժողովուրդը աստուածացուց անիկա: Եւ Ռուբէնին այս մեծ ժողովրդականութիւնն է, որ տանիկներուն աչքին զարկաւ»:

* * *

«Յետոյ՝ 1914-ին վերջերը պատերազմը սկսաւ, և Ռուբէնը ստիպուած, զինուորութեան արձանագրուեցաւ: Եւ զինք Չանաքքալէ դրկեցին: Բայց, իրեն ծանօթ տանիկ փաշաները՝ «Doktor bey Madaminin, çocuklarinin yaninda olmalı» [Տօքթոր պէյին իր կնոջ և զաւակներուն քով ըլլալը պէտք է] ըսին: Եւ Ռուբէնը Չանաքքալէէն Պոլիս բերել տուին, որ իր տունին մօտ զինուորութիւնը ընէ: Պոլիս, ամէն առաւօտ զինուոր մը, ձին տունին առջեւ կը բերէ եղեր, և Ռուբէնը ձին վրայ կը նստի և զինուորական հիւանդանոցը կ'եր-

բայ և հոն քանի մը ժամ հիւանդներուն հետ զբաղելէ ետք, տուն կը վերադառնայ եղեր: Այս էր Ռուբէնին ըրած զինուորութիւնը: Բայց շատ չտեսց: Օր մը, կէս գիշերին, կարգ մը մարդիկներ տուն եկեր են և «Doktor bey, lütfen sizi bir hastaya götüreceyiz» [Տօբքոր պէյ, խնդրեմ. ձեզի հիւանդի մը պիտի տանինք] կ'ըսեն: Եւ զինք կ'առնեն կը տանին, Անատոլուի մէջտեղները, Չանղըրը»:

* * *

«Ռուբէնին Չանղըրը աքսորուելէն յետոյ, ժաննին իր ամուսինը ազատելու յոյսով, կը դիմէ շատ մը անձնաւորութիւններու: Եւ կը դիմէ նաեւ թուրք բանաստեղծուհի Հալիտէ Էտիպին: «Ես քեզի դիմեցի», կ'ըսէ անոր, «որովհետեւ դուն ալ կին ես, երիտասարդ ես, իմին սերս կ'զգաս: Իմ ամուսինս շատ բարի է, ոչ մէկուն գէշութիւն չէ ըրած: Ընդհակառակը՝ ամէնուն ալ օգտակար ըլլալու ջանացած է: Ի՞նչ է յանցանքը»:

Թրքուհին ալ կը պատասխանէ՝ «Անոր յանցանքը, շատ սիրուած ըլլալն է: Այսօր ան «ետեւէս եկեք» ըսելու ըլլայ՝ Պոլսոյ բոլոր հայութիւնը անոր ետեւէն կ'երթայ: Այս է աքսորուելուն պատճառը»:

Ժաննին, անկէ յետոյ, կը դիմէ Գերման դեսպանին՝ Wangenheim-ին:

Եթէ դեսպանը ուզերնէ, մէկ օրէն Ռուբէնը կ'ազատէր: Որովհետեւ թուրքերը՝ գերմանացիներուն ենթակայ էին:

Ժաննին՝ «Ձեզմէ պիտի խնդրեմ՝ ինծի և տղոցս վերադարձուցէք ամուսինս» կը'սէ Վանկէնհայմին: Գերմանիոյ դեսպանը՝ «դուն» կը'սէ, «ազգոյ ուրացար: Հիմա երե՞ս ունիս գալ հոս և ամուսինդ ուզելու: Մնողքդ ձգեցիր և այդ հայուն ետեւէն գացիր: Ի՞նչ էր ան հայու կտորը, որ կ'ուզես ազատեմ գանիկա: Ամուսինդ ետ պիտի չգայ: Անիկա մեռնելու գացած է»:

Ժաննին ալ դեսպանին երեսին՝ «Մանչ զաւակ մը ունիմ, ամուսինիս վրէժովը պիտի մեծցնեմ և անիկա պիտի գայ և քեզի պիտի մեռցնէ» կ'ըսէ»:

* * *

«Չանդըրը-ի մէջ թուրքերը, հայ աքսորեալները մէկիկ-մէկիկ, կառքով նամբայ կը հանեն և ամայի վայրի մը մէջ կ'սպաննեն եղեր: Ռուբէնը Չանդըրը-ի մէջ բժշկութիւն կ'ընէ և թուրք հիւանդները կը խնամէ: Այս հիւանդներէն մէկը, թուրք երեւելիներէն մեկուն աղջիկն է եղեր, որուն Ռուբէնը խնամելու կ'երթայ անոնց տունը:

Օր մը աղջիկը կ'ըսէ իր հօրը՝ «Պէշպապա ես այս տօքթորին սիրահարեցայ: Անկէ չեմ կրնար գատուիլ: Եթէ տօքթորը ինծի դարմանելու համար պիտի գանէ, այլեւս չգայ: Աւելի լաւ է մեռնիմ»: Աղջկան պապան այս պատճառով Ռուբէնին կ'ըսէ թէ՝ «Եկուր, **սիւննէք** եղիր: Աղջկանս հետ ամուսնացիր: Այստեղի պէյը, փաշան, եղիր»:

Չանդըրը-ի ընկերները Ռուբէնը համոզելու կը ջանան, որ առժամաբար, իսլամանալը ընդունի: «Ասիկա՝ տաղանդիղ համար ընդունէ: Մինչեւ որ այս փոքորիկի շրջանը անցնի: Նախ կեանքդ փրկէ» կ'ըսեն: Բայց Ռուբէն չընդունիր՝ և **«Մենք հայութեան, ժողովուրդին ներկայացուցիչներն ենք: Եթէ ես սիւննէք ըլլամ, փաշա ըլլամ ու «քէյֆ»իս նայիմ, ժողովուրդը իր յոյս կը կորսնցնէ և տանիկ կ'ըլլայ: Մենք պետք է մեռնինք, որ մեր արեան գնով Հայաստանը վերականգնի, հայութիւնը վերջնականապէս ազատի»** կը պատասխանէ»:

* * *

«Եւ օր մը, Ռուբէնն ալ կառքով նամբայ կը հանեն: Կառապանը խղճամիտ մարդ մըն է եղեր: «Ես շատ մարդ տարի, բայց քեզ նման համակրելի երիտասարդ մը չէի տեսած.- կ'ըսէ և կը շարունակէ.- Քեզ շատ սիրեցի: Անոր համար կառքը կամաց կը քշեմ և կը մտածեմ, թէ ինչպէս կրնամ ազատել քեզ: Եթէ հիմա քեզի ազատ արձակեմ նէ նոյնիսկ, նամբան քեզի կը բռնեն և չարչարանքներով կ'սպաննեն: Եւ շատ կը ցաւիմ, որ քեզի պիտի չկարենամ ազատել»:

Ռուբէնն ալ՝ «Եթէ ինծի օգտակար ըլլալ կ'ուզես՝ քեզի նամակ մը պիտի տամ: Անիկա «posta տար» կ'ըսէ: Եւ գրպանէն թուղթ մը կը հանէ, անապարանքով քանի մը տող կը գրէ ժաննի-ին և պահարանին վրան ալ Պոլսոյ իրենց հասցէն կը գրէ և կառապանին

կու տայ նամակը: Եւ կառապանն ալ խօսք կու տայ, որ նամակը
անպայման պիտի ուղարկէ:

Եւ իրապէս ալ, այդ նամակը ժաննի-ին ձեռքը կը հասնի:
Ժաննին կը բանայ նամակը և կը տեսնէ, թէ միայն սա տողը
գրուած է վրան՝

«Տղաքը հայ մեծցուր»:

Ռուբէն»:

* * *

«Ժաննին Ռուբէնին մահուան լուրը առնելուն պէս, իր տղոցը
հետ Զուիցերիա - Լոզան կը մեկնի, իր ընտանիքին տունը: Եւ հոն,
Լեւոնը և Շամիրամը տեւական կը հարցնեն՝ «Բաբա Ռուբէն, բաբա
Ռուբէնը երբ պիտի գայ»: Ժաննին մայրը խիստ կին մըն է եղեր:
Կը պատասխանէ՝ «Այս տունին մէջ այլեւս **բաբա** Ռուբէնին անունը
պիտի չլսեմ: Անիկա, գէշ երազ մըն էր: Այլեւս դուք այն հին, գէշ
երազները պիտի մոռնաք, և նոր կեանք մը պիտի սկսիք»:

Ժաննին իր մօր այս խօսքերուն, ստիպողաբար, մինչեւ պատե-
րազմին վերջը կը հանդուրժէ Լոզանի մէջ: Եւ սահմանները բա-
ցուելէն անմիջապէս վերջ, իր տղաքը՝ Լեւոնը և Շամիրաը
առնելով Յրանսա, Փարիզ կը մեկնի: Ռուբէնին վերջին
խօսքերուն՝ **«Տղաքը հայ մեծցուր»** կտակին հաւատարիմ մնալու
համար»:

Այստեղ կ'աւարտի, Ռուբէն Սեւակի քրոջ՝ Հայկանուշ Զեվի-
կեանի յուշերուն առաջին մասը:

**Յ. Գ. 1985-ին Փարիզ հրատարակուած «Ռուբէն Սեւակ և
փրցուելիք ուղեղներ» մեր գիրքին մէջ, օգտագործած ենք մեր
հօրաքրոջ՝ Հայկանուշ Զեվիկեանի մաս մը յուշերը:**

«ԵԿԵՂԵՑԻՆ՝ ՀԱՅԵՐՈՒՆ ՄԻՈՒԹԻՒՆՆ Է»

31 ՄԱՐՏ 1911 - ԼՈՋԱՆ, ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿ

ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ ԱՆՏԻՊ ՄԷԿ ՆԱՄԱԿԸ, ՈՒՂՂՈՒԱՄ ԻՐ ԵՐԷՑ ԳՐՈՋ՝ ԷՖԹԻԿ ՅԱԿՈԲՈՎԻԶԻ [ԾՆԵԱԼ՝ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ]:

ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ ԱՅՍ ՄՏԵՐՄԻԿ ԵՒ ՊԱՐԶՈՒՆԱԿ ՆԱՄԱԿԻՆ ՄԷՋ ԱՆԳԱՄ ԿԸ ՑՈԼԱՆԱՆ ԱՆՈՐ ԱԶԳԱՍԻՐՈՒԹԵԱՆ ԽՈՐԱԹԱՓԱՆՑ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԸ:

1

Սիրելի տիկին Էֆթիկ քայրիկս.

1911 Մարտ 31 Լոզան

Ձեւ գիտեր որքան ուրախացայ ստանալով անուշիկ նամակդ: Իրաւունք ունիս որ Ատրիենէն դպրոց դրկել կ'ուզես, մեղք է, խելացի աղջիկ է, թող բան սորվի, Ձեր ընտանիքին բարձր պատիւ բերէ օր մը, և քանի մը տարիէն թէ՛ դաստիարակութեամբ, թէ՛ դիրքով, թէ՛ գեղեցկութեամբ տիպար աղջիկ մը ըլլայ, ու վստան եղէք, որ օր մը կու գայ որ ան կ'օրհնէ իր ուսումնասէր մայրիկին այս անձնուիրութիւնը:

Դուք, շատ անգամ, իմ գրելուս մի նայիք, ամէն շաբաթ ծնողքիս գրած նամակներս նաեւ ձեզի համար է որ կը գրեմ: Միայն դուն ալ, որ այնքան կոկիկ և աղուոր նամակ մը կը գրես՝ ինչո՞ւ է չես գրեր աւելի շատ, երբեմն-երբեմն:

Գոնէ դուն ինձի պէս գիրքերու քելեպէկին [թիթեռնիկի չորացում] պէս՝ գիրքերու տակ էս խեղդուած, ժամանակ ու կարողութիւն ունիս, ինչո՞ւ կը զլանաս գրելու:

Ուրախացայ նաեւ այն լուրէդ, որ հին Տէր Ներսէս քահանան

դարձեալ Սիլիվրի հրաւիրեք են: Շատ երջանկալի է այս լուրը սիլիվրիցիներու համար:

Ազգը շէնցնելու համար նախ դպրոցը շէնցնելու է: Բայց դպրոցը շէնցնալու համար նախ պէտք է որ եկեղեցին շէնցայ, որովհետեւ եկեղեցին հայերուն միութիւնն է:

Զգէ, որ այդ պատուական քահանան մէկ թելին տակ եկեղեցին կ'անոնէ, միւս թելին տակ դպրոցը:

Մաղթենք, որ շէնքը շինեցինք, հիմա, շէնքը շէնցնենք, որպէսզի տղաքները վայրենիի պէս չի մեծնան, իրենց գեղեցիկ դէմքին վրայ ուսումնոցին լոյսը գայ, և օր մը մեր գաւակները մինչեւ Ատարագար և Լօզան դրկելու պէտք չունենանք..., որովհետեւ թէ դրկողին դժուար է, թէ դրկուողին...:

Իմ առողջութիւնս և վիճակս շատ լաւ ըլլալով՝ ձեզի ալ կը մաղթեմ երջանկութիւն, և իմ ջերմագին բարեւներս կը դրկեմ սիրեցեալ քեռայրիս, քեզի, ինչպէս նաեւ տաք համրայրներ՝ Ատրիներէն, Սիրվարդին ու Սուրբիկին:

Սուրբիկ տուտոյին ալ ձեռքը կը պագնեմ:

Միշտ սիրով եղբայր՝ Ռուբէն

Ռուբէն Սեւակ այս նամակը 31 Մարտ 1911-ին, Լոզանէն Սիլիվրի կը դրկէ իր քրոջ՝ Էֆթիկին որ ամուսնացած էր ոռոսսոսոցի Օճնիկ Յակոբովիչի հետ:

Ռոստոսոյի ծանօթ ընտանիքներէն Յակոբովիչներուն գաւակը եղող Օճնիկ պէյը՝ Սիլիվրի կը հաստատուի և իբր ագարակապան գործել կ'սկսի:

Էֆթիկ և Օճնիկ Յակոբովիչ ամուլը 1911-ին, արդէն երեք աղջիկ գաւակներ ունէր՝ Ատրիներ, Սիրվարդ և Սուրբիկ:

Մանաւանդ Ատրիների մասին՝ մեր գրութիւններուն մէջ շատ անգամ արտայայտուած ենք:

Ատրիներն այն աղջիկն է, որ Սիլիվրիի մէջ հայկական բարձրագոյն վարժարան չըլլալուն՝ Յունական վարժարան կը յաճախէ:

Եւ հոն յունարէն լեզուին տիրանալով, իր մօրեղբօր Ռուբէնին յունարէն նամակ մը կը գրէ:

Եւ Ռուբէն Սեւակ, Ատրիներէն սա տողերով կը պատասխանէ.

1911 Jun 31

555

Ueber die Art der Arbeit.
 Die Arbeit der Arbeiter, die in den
 Fabriken und in den Bergwerken
 ausgeübt wird, ist eine sehr schwere
 und gefährliche Arbeit. Die Arbeiter
 sind oft lange Stunden in der
 Hitze oder Kälte gezwungen zu
 arbeiten. Sie sind oft mit
 Staub und Giftstoffen in
 Berührung. Die Arbeit ist
 oft sehr einseitig und führt
 zu körperlichen Schäden.
 Die Arbeiter verdienen oft
 nur wenig Geld für ihre
 schwere Arbeit. Sie sind
 oft ohne soziale Sicherung.
 Die Arbeit der Arbeiter
 ist ein wichtiger Bestandteil
 der Volkswirtschaft. Die
 Arbeiter verdienen die
 Anerkennung und den Respekt,
 die ihnen zugehören. Die
 Arbeit sollte nicht als
 Strafe angesehen werden.
 Die Arbeiter sollten die
 Möglichkeit haben, ihre
 Arbeit zu wählen und
 ihre Arbeitsbedingungen
 zu verbessern. Die Arbeit
 sollte für alle zugänglich
 sein und sollte zu
 Wohlstand und Glück führen.
 Die Arbeit ist ein
 Teil des menschlichen
 Lebens und sollte
 nicht als Last empfunden
 werden. Die Arbeiter
 sollten die Möglichkeit
 haben, ihre Arbeit zu
 gestalten und ihre
 Interessen zu vertreten.
 Die Arbeit ist ein
 Mittel zum Leben und
 sollte nicht als Zweck
 in sich selbst angesehen
 werden. Die Arbeiter
 sollten die Möglichkeit
 haben, ihre Arbeit zu
 genießen und sich
 zu entwickeln. Die
 Arbeit ist ein Teil des
 menschlichen Lebens
 und sollte nicht als
 Last empfunden werden.
 Die Arbeiter sollten
 die Möglichkeit haben,
 ihre Arbeit zu gestalten
 und ihre Interessen zu
 vertreten. Die Arbeit
 ist ein Mittel zum Leben
 und sollte nicht als
 Zweck in sich selbst
 angesehen werden. Die
 Arbeiter sollten die
 Möglichkeit haben, ihre
 Arbeit zu genießen und
 sich zu entwickeln.

**«Իմ սիրելի փոքր Ատրինե,
Ինձմե բարձր ես յուևարենե:
Բայց հօրդ, մօրդ քնքուշ լեզուն
Մի մոռնար որ հայերեն է»:**

Եւ նկատի առեք, որ Սիլվա Կապուտիկեանէ 50 տարիներ առաջ գրած է Ռուբէն Սեւակ այս տողերը, որոնք յար ու նման են «Խօսք իմ որդուս»ին:

Եւ Ատրինէն 1911-էն յետոյ, Ռուբէնին ալ յանձնարարութեամբ, Պոլսոյ ֆրանսական «Նոթր Ծամ Տը Սիոն» լիսէն կ'ուղարկուի:

Եւ Պոլսոյ մէջ է, որ 1915-ին, օր մը Ատրինէն՝ իրենց ազգականին, Յակոբովիչներու Հարպիէ-ի տունին պատշգամբէն կը դիտէ գինուորական տողանցքը, և կ'սպասէ որ ձիի վրայ իր մօրեղբայրը՝ բժիշկ հարիւրապետ Ռուբէնը անցնի:

Բայց ձին կ'անցնի առանց Ռուբէնի: Ռուբէն Սեւակ Չանդըրը աքսորուած է...:

Եւ նոյն Ատրինէն է որ 1915-էն յետոյ, Ռուբէն Սեւակի Բանկալիի անտէր, լքուած տունէն ազատուած թողօններուն մէջէն կը փրկէ Ռուբէնին արխիւէն ինչ որ մնացած է:

Ան, Ռուբէնին ձեռագիր գրութիւնները կը հաւաքէ և անոնց մէկ մասը կ'ընդօրինակէ:

Եւ յետոյ՝ բնագիրները Փարիզ՝ Ժաննի Սեւակին կ'ուղարկէ:

Եւ այս բնագիրներուն շնորհիւ է որ 1946-ին, Փարիզի մէջ Ռուբէն Սեւակին «Բժիշկին գիրքէն փրցուած էջեր և քերթուածներ» գիրքը կը հրատարակուի:

Եւ Ատրինէին ընդօրինակած գրութիւններուն օգնութեամբ է, որ Երեւանի մէջ 1985-ին, Ալեքսանդր Թովչեան կը հրատարակէ «Ռուբէն Սեւակ - Երկեր» հատորը:

Շատ նիշդ էր Ռուբէն Սեւակին նախատեսութիւնը, թէ՛ ուսման տարիներէն յետոյ, Ատրինէն իսկական «տիպար» մը պիտի ըլլար:

Ատրինէն մեր ճանչցած բացառիկ անձնաւորութիւններէն մէկն էր, իբր անհատ և իբր մտաւորական:

Տարիներ յետոյ, Կիլիկիոյ Կաթողիկոս Գարեգին Բ. [Ապագային Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Ա.], մեծ հիացումով արտայայտուեցաւ մտաւորական Ատրինէի մասին, որ իր ուսման տարիներուն Հռովմի մէջ ճանչցած էր գինք և գաղափարական

մտերմութիւն ունեցած Ատրիներէն հետ:

Ատրիներէն չորրորդ քոյր մըն ալ ունեցաւ՝ 1912-էն յետոյ ծնած Սիլիվրիի մէջ՝ Քրիստինէ անունով:

Ատրիներէն նման, Քրիստինէն ալ Պոլսոյ ֆրանսական Լիսէն աւարտեց:

Եւ իր մէջ յայտնուած նկարչական ձիրքին պատճառաւ, Պոլսոյ «Beaux Arts»-ի Գեղարուեստից վարժարանը ուսանեցաւ:

Եւ տասնեակ մը տարիներ յետոյ, «Քրիստին Սալերի» անունով Պոլսոյ ամէնէն ծանօթ նկարիչներէն մէկը եղաւ:

Կը նախընտրէինք, որ իբր Ռուբէն Սեւակին քրոջ աղջիկը, Քրիստին Սալերին Պոլսոյ տեղ, Հայաստանի մէջ ստեղծագործէր: Թէեւ ան, Երեւանի մէջ ալ ցուցահանդէսներ սարքած է Սովետական Հայաստանի տարիներուն և հիացող մը եղած է Բ. Հանրապետութեան:

* * *

Ուսումը, միանալով հայկական ծիներու (gen) մէջ գտնուող տաղանդին, հրաշքներ կը գործէ:

Նոյնը եղաւ պարագան բրքախօս պատանի Կոմիտասի համար: Նոյնն է պարագան բրքախօս պատանի Ռուբէն Սեւակին, և Սիլիվրիի բրքախօս հայերու գիւղէն Ատրիներէն և Քրիստինէն համար:

Եւ նոյնն է պարագան Սովետական Հայաստանի ժողովուրդին, որ 1920-էն մինչեւ 1990-ները, ռուսական ապահովութեան ներքեւ և ռուսական թիկունքին շնորհիւ՝ հայ ժողովուրդը իր ունեցած բնածին տաղանդը կրցաւ զարգացնել և մշակոյթի, գիտութեան և գիւնուորական և այլ մարզերու մէջ, հրաշքի համահաւասար յառաջադիմութիւններ կատարեց ու իսկական «ուկեղար» մը ապրեցաւ:

Բայց դժբախտաբար, հայերուն այս յառաջդիմութիւնը տեսնող հայուն թշնամիները, մասամբ ալ հայերուն ձեռքով, կործանելու աշխատեցան Հայաստանը:

Եւ 1920-էն մինչեւ 1990-թ.ին, նոյնիսկ մինչեւ այսօր՝ ռուսերուն հանդէպ «պոչի ցաւ» ունեցողները, արեւմտեան պետութիւններուն, սիոնիստներուն և մանաւանդ թուրքերուն հնազանդ, հայու անուն կրող հայրենադաւններ, միշտ օտար ուժերու ցուցմունքով,

փորձեցին և կը շարունակեն մրոտել Սովետական Հայաստանի շրջանի հայոց ապրած ոսկեդարը:

Եւ յաջողեցան ի վերջոյ, 1990-ին՝ կործանել Ս. Հայաստանը:

Բայց, պարոն և տիկին հայրենաքանդներ, դուք, մօտ ատենէն, անգործ մնալու վտանգին դատապարտուած էք:

Որովհետեւ ձեր դրուժան ընթացքին «շնորհիւ» այսօրուան Հայաստանը, միջոց մը ետք, բոլորովին կործանելու համբան կը մտնէ, և անկէ յետոյ ձեր «տէր»երը այլեւս ձեզի պէտք պիտի չունենան...

... Եւ դուք, հայրենասէր հայեր, եթէ մեր ըսած այս տխուր իրականութիւնը հաստատել կ'ուզէք՝

Գացէք տեսէք Հայաստանի պարպուած [ժամանակաւոր և արհեստական համախմբումները զանց ըրած] հրապարակները, այցելեցէք առանց աշակերտի մնացած դպրոցները և մանաւանդ՝ նայեցէք բուն ժողովուրդին տխուր և դալկահար երեսը:

Եւ դո՛ւք սփիւռքահայեր, որ 1920-էն մինչեւ 1990 [բացի սիոնականութեան կողքին հակախորհրդային սայլին լծուած դաշնակցութենէն] բոլորդ ալ՝ հարուստ կամ աղքատ, բոլոր հայրենասէրներդ կը պաշտպանէիք Սովետական Հայաստանը. դուք ի՞նչ կ'ընէք այսօր, սա անմիջական վտանգին դէմ որ Հայաստանը կ'այլանդակէ ու կը հիւծէ:

Ի՞նչ եղան այն ատենուան հայրենասէրները: Ի՞նչ եղան հայրենասիրութեան գաղափարները:

Որովհետեւ, վերջին 50 տարուան ընթացքին, սիոնականութեան աշխարհի մէջ ստեղծած սուտերու վրայ հիմնուած վարչաձեւը, 1990-ներուն, իրենց կամակատարը եղող Լեւոն Տէր Պետրոսեանի և իր նմաններուն միջոցաւ, նոյնպիսի կեղծիքի վրայ հիմնուած Հայաստան մը ստեղծեց:

Եւ այն օրուրնէ սկսեալ Հայաստանի մէջ, ամէն բան արհեստական է: Եւ ժողովուրդը օրէ օր զարգացող աւերումին ու աղքատութեան դէմ բան մը չի կրնար ընել: Եւ լաւատեսութիւն ներշնչելու փորձերը կը մնան անօգուտ:

Որովհետեւ տնտեսական վիճակը խանգարուած ըլլալուն, ժողովուրդը անօթի էր:

Եւ քուառութեան մէջ վեհանձնութիւն գոյութիւն չունենար:

Օտարի գործակալ Լեւոնը չէ՞ր գիտեր այս իրականութիւնը, քէ Հայաստանի իբր քէ անկախացումէն յետոյ, երկիրը քուառու-

բեան պիտի մատնուէր ու երթալով պարպուէր:

Մեր համոզումով՝ շատ լաւ գիտէր: Եւ նիշդ այսօրուան քառսը մէջտեղ բերելու և Հայաստանը աւերելու համար ստեղծեցին, Հայաստանի բշնամիները, [սիոնիզմ և փանթուրքիզմ նոյն բաներն են իրաւ հայուն համար] այսօրուան վիճակը:

Եւ այսօրուան Հայաստանը, խաբուսիկ երեւոյթները գանց ընելով ըսենք, թէ՛ երթալով արիւն կը կորսնցնէ, կ'աւերուի, մարմինով և մանաւանդ՝ հոգիով:

Եւ որեւէ հոգեկան արժէք իմաստ ու կարեւորութիւն ունենալէ տակաւ կը դադրի այլեւս Հայաստանի մէջ:

Ոչ կրօնը և ոչ ալ հայրենասիրութիւնը իրենց երբեմնի յարգը կը վայելեն հոն այլեւս: Օտարին և մանաւանդ սիոնականներուն կամքն է գերակշռողը Հայաստանի մէջ:

Եւ այս իրականութիւնը ամէն մարդ գիտէ Հայաստանի մէջ: Եւ իրենք՝ Հայաստանի պարկեշտ մտաւորականներն են այս իրականութիւնը խոստովանողները:

Վերջերս, Սփիւռքէն ծանօթ անձնաւորութիւն մը, Հայաստանի այսօրուան դեկավարներէն մէկուն կը հարցնէ.

«Ինչո՞ւ, Հայաստանի մէջ, այսքան մեծ է սիոնական ազդեցութիւնը»:

Հետեւեալ պատասխանը կը ստանայ.

«Ամերիկան մեզի տարեկան հարիւր միլիոն տոլար դրամ կու տայ իբր օգնութիւն: Եթէ մեզի թելադրուածը հաշուի չառնենք՝ Ամերիկայի հրեական լոպին արգելք կ'ըլլայ մեզի այս դրամի տրուելուն: Դիւրին չէ հարիւր միլիոն տոլարը մերժելը»:

Եւ այսօր, Հայաստանի այլասերումը կը շարունակուի տարբեր ձեւերով, ազատօրէն և գրեթէ առանց հայրենասիրական լուրջ ընդդիմութեան:

Հայրենաբնակ ժողովուրդին «հաւատք»ը կը շարունակեն մեոցնել: Հարցուցէք երեւաբնակ պատահական հայու մը, և ան բող խօսի ձեզի անկեղծ:

Այսօր, Հայաստանի մէջ, ոչ մէկ բանի չեն հաւատար: Բնակչութեան մեծ մասին հոգեմտաւոր վիճակն է ասիկա:

Կարծես, թէ ո՛չ բարոյական սկզբունքները և ո՛չ ալ ընտանեկան հայկական սուրբ աւանդութիւնները նշանակութիւն ունին իրենց համար:

Դաւադիր օտարը յաջողեցաւ իրենց «Աստուած = դրամ»ի հաւատքը ներմուծել Հայաստանի ժողովուրդին մեծամասնութեան հոգիներուն մէջ:

Եւ այսօր, հայաստանցիի մը համար, նախ և առաջ մէկ բան կարելոր է՝ սինական-մասոնական աչքը իր վրայ կրող տուարը:

2.

Ռուբէն Սեւակ իր 31 Մարտ 1911 թուակիր նամակին մէջ կ'ըսէ, թէ՝ **«Նկեղեցին հայերուն միութիւնն է»:**

Այս նոյն Սեւակն էր, որ սոցիալիստական գաղափարներով արդէն գրած էր 1907-ին՝ «Դրամին աղօթքը», 1909-ին՝ «Այս դանակը», և կրկին 1909-ին՝ «Կարմիր դրօշակը»:

Եւ ըստ նոյն այդ գաղափարականին հիմնադիրը և ռահվիրան եղած հրեայ Քարլ Մարքս-ին՝ «Կրօնը ժողովուրդներուն օփիումն է»:

Եւ այս տեսաբանին ոչ ճիշդ ըմբռնուած խօսքին կոյր հետեւորդները եղող, իբր թէ ընկերվարական որոշ կուսակցութիւններուն առաջնակարգ սկզբունքներն են՝

Անաստուածութիւնը, անկրօնութիւնը և հակաեկեղեցականութիւնը:

Համեստաբար կը կարծենք, թէ Մարքս գանգանութիւն դնելու էր կրօն-եկեղեցի դաւանող ազգերուն միջեւ: Եթէ, օրինակի համար իր խօսքը կը պատշանէր հրեային ու թուրքին, նոյն խօսքը ճիշդ չէր հայութեան պարագային, որուն համար կրօն-եկեղեցի եղած են քաղաքակրթիչ ու փրկիչ ազդակ, գոյապահպանումի գէնք:

Այստեղ, ձեր ուշադրութիւնը պիտի հրաւիրենք հետեւեալ իրականութեան վրայ՝

Աշխարհի ամէնէն յետամնաց, ծայրայեղ, մոլեռանդ և ցեղապաշտ կրօնը եղող հրեական Մովսիսական կրօնին առաջնակարգ սկզբունքին համեմատ՝ «Հրեաները Աստուծոյ ընտրեալ ժողովուրդն են»:

3000 տարի առաջ իրենց կրօնապետին ըսած այս ձաբոտութիւն հետեւելով, հրեաները տեսաբար կ'աշխատին՝ աշխարհը և աշխարհի ժողովուրդները գերեվարելու: Կրօնը վերածած են քաղաքական գէնքի:

Նոյնիսկ այսօր, մեր աչքերուն առջեւ կատարուած պաղեստինեան ջարդերը և իրաքեան ողբերգութիւնը հրեաներուն՝ աշխարհը գերեվարելու աշխատանքներուն հետեւանքներն են:

Եւ այս ցեղապաշտ հրեայ ազգին մաս կազմող, իբր թէ ազատամիտ, մարդասէր և սոցիալիստ գաղափարներու տէր անձնաւորութիւններ կրցած են թափանցել յառաջդիմական և ընկերվարական և ազատամիտ կուսակցութիւններուն և մարդասիրական կազմակերպութիւններուն ղեկավար մարմիններուն մէջ:

Նայեցէք, քիչ մը, շուրջերնիդ:

Մանաւանդ Եւրոպայի մէջ, գրեթէ բոլոր սոցիալիստ կուսակցութիւնները և կազմակերպութիւնները կը ղեկավարուին հրեաներու կամ ասոնց ներշնչումով գործողներուն կողմէ:

Եւ այս անտեսանելի ցանցին «շնորհիւ» շատ յառաջդիմական կազմակերպութիւններ ու ղեկավարներ կը գործեն սիոնիստներուն հրահանգներով և ցուցմունքներով, օգտուելով իրենց բարեմիտ հետեւորդներուն անտեղեակութենէն:

Արդէն նոյնն էր պարագան 1917-ին, յեղափոխութեան շրջանին, որուն ղեկավարները, ինչպէս՝ Թրոցքի, Պուխարին և ուրիշներ, մեծամասնութեամբ հրեաներ էին: Թափանցած էին ընկերվարական շարժումին մէջ որ գայն, յետոյ, շահագործեն:

Իրենց այս հակասական բուռը կեցուածքին, այսինքն՝ իրենց բուն գաղափարներուն հակառակորդ կազմակերպութիւններուն մէջ մտնելուն և նպատակը՝ սուտ լուսնագներով ժողովուրդներու մէջ ազգասիրութիւնը, հաւատքը և աւանդութիւնները քանդել և այս ձեւով իրենց իշխանութիւնը տարածել է:

Այստեղ կ'ուզենք ցայտուն ապացոյց մը նշել:

Մտածել՝ որ Ֆրանսայի կաթոլիկներուն պետը՝ նոյն ատեն Փարիզի Արքեպիսկոպոսը եղող՝ բոլոնացի հրեայ մըն է՝ «Ժան-Մարի Լիւսթիժէ» անունով, որ ապագայի Պապը կը նկատուի:

Տեսնել ուզողին համար այս իրականութիւնները՝ արեւուն լոյսին պէս փայլուն են:

Բայց, շատերուն աչքը կուրցած է:

Մանաւանդ՝ հայ կարգ մը առաջնորդներուն:

Եւ մենք կը խղեանք այն կոյր հայերուն վրայ որոնք, իբր թէ կեղծ յառաջդիմական, իբր թէ ընկերվարական, ազատամիտ կուսակցութիւններուն և մարդասիրական կազմակերպութիւններուն

րուն մաս կը կազմեն, և անոնք, այս ձեւով ու գուցէ անգիտակցաբար, սիոնիստ հրեաներուն ծրագիրներուն գործադրութեան կը ծառայեն:

* * *

Բայց, ամենայառաջ դիմական, իրա՛ւ ընկերվարական գաղափարներու տէր Ռուբէն Սեւակը չի նկատ այդ հակակրօնական և հակաեկեղեցական «հրեական ծուղակը»:

Ռուբէն Սեւակն էր՝ իր բանաստեղծութիւններուն մէջ՝ գործաւորը, աղքատը և նոյնիսկ պոռնիկը պաշտպանողը և դրամը և հարուստը պախարակող և նզովողը:

Մեր համոզումով՝ Ռուբէն Սեւակ, հայ բանաստեղծներուն մէջ, իր շրջանի ամենամարդասէր և ընկերվարական գաղափարներուն նեցողն է:

Բայց Ռուբէն Սեւակ, իբր բժիշկ և իբր գիտութեան մարդ, շատ լաւ տեղեակ էր բժշկութեան կարելիութիւններուն մասին:

Եւ շատ լաւ հասկցած էր գիտութեան տգիտութիւնը՝ կեանք ըստած այդ մեծ առեղծուածին հանդէպ:

Եւ Ռուբէն Սեւակ շատ հեռու էր մտածելակերպէն այն խելքով տգետ շատ մը գիտնականներուն, որոնք բնութեան օրենքները՝ միայն «նիւթ»ով կը բացատրէին:

Կարդացէք Ռուբէն Սեւակին «Բժիշկին գիրքէն փրցուած էջեր»ը:

Այստեղ, պիտի ուզէիք նշել, Ռուբէն Սեւակի «Հրաշալի բժշկութիւն»էն հատուած մը՝

«... Քեզի հիւանդ մը ցուցնելէ առաջ՝ պատուիրեցին տարիներով դիակներու վրայ աշխատիլ, որպէսզի մարդը ճանչնաս, և որպէսզի հոգիդ չդողայ ու խիղճդ չպռոպայ: Երկարօրէն քննելէ, փնտռելէ, պրպտելէ վերջ, գանկին մէջ նեխած ուղեղ մը ու սրտին մէջ սուցած արինւ մը գտար:

- «Ո՛ւր է հոգին, ո՞ւր է խիղճը» գռչեցիր ծիծաղելով:

Աւա՛ղ, քու ուսումնասիրած մարդդ դիա՛կ մըն է միայն:

Զգուշացիր իրեն նմանելէ: Մարդը որ կ'ապրի, մարդը որ կը խորհի ու կը զգայ, մարդը որուն բարոյական տառապանքները րի՛ւր անգամ աւելի են քան ֆիզիքական տառապանքները, այն մարդը ուրիշ բան կը պարունակէ իր մէջ քան ճարպն ու ոսկորը...:

Ամեն մարդու մէջ Աստուած մը կայ:

Անաւասիկ, թէ ինչ բան կը մոռնան քեզի ուսուցանել...»:

«Երկեր» Անթիլիաս, էջ 382 - Ռուբէն Սեւակ:

Նոյն գաղափարները կը տեսնենք Ռուբէն Սեւակի «Գիւղական գերեզմանատան մէջ» բանաստեղծութեան տողերուն մէջ:

**«... Ու երբ ըսեն, թէ գիտութիւնը նոր
Այրեց ճի՛ն, փոշո՛տ գիրքերը բոլոր,
Թէ նիւթ կայ միայն, հոգին չէ անմահ,
Հոգին չի կա՛յ իսկ.- մի հաւատաք, ա՛ն»**

«Երկեր» Անթիլիաս, էջ 155 - Ռուբէն Սեւակ:

* * *

Իրականութեան մէջ, իրարմէ ի՛նչ տարբերութիւն ունին, անաստուածներու և անկրօններու մտածելակերպը և ծայրայեղ և մոլեռանդ կրօնամոլներուն «հաւատամք»ը:

Երկու տեսակետներն ալ, իրարու հակադրուած ըլլալով հանդերձ, նոյն երեւակայական տեսութիւններն են:

Երկուքն ալ կեանք ըսուած առեղծուածը, իրենց նպատակին համեմատ լուծած ըլլալ կը յաւակնին:

Այս տեսակետով՝ երկու մտածելակերպերն ալ առասպելական պատմութիւններ են՝ մէկը միւսէն անլի վատ:

Ռուբէն Սեւակ՝ իբր մարդ, իբր բժիշկ և մանաւանդ իբր հայ բանաստեղծ, իր գրութիւններուն մէջ պայքարեցաւ մարդուն մէջ «հոգին» ուրացող տեսաբանութիւններուն դէմ:

Ռուբէն Սեւակ շատ լաւատեղեակ էր, հայ ազգին համար՝ հոգեկան ուժին և կրօնին ունեցած կարեւորութեանը:

1909-թ.ի Կիլիկիոյ ջարդերուն ցաւալի ազդեցութեան տակ Ռուբէն Սեւակ, տեսնելով հայ ժողովուրդին այս ողբերգութեան հանդէպ ցուցաբերած անտարբերութիւնը, Լոզանէն սապէս կը գրէր՝ **«Հայ ժողովուրդը ե՞րբ պիտի սորվի՝ մարդկօրէն կատողիլը»:**

Նոյն տարին, Կիլիկիոյ աղէտէն յետոյ՝ 1909-ին գրուած **«Ջանգակնե՛ր, զանգակնե՛ր» բանաստեղծութեան մէջ [տեսնելով Հայ Եկեղեցիին Կիլիկիոյ ջարդերուն հանդէպ լուռ մնալը], Ռուբէն Սեւակ իր ցաւը սա տողերով կը յայտնէր՝**

*Ջանգալներ, բարի՛, բարի՛ զանգակներ,
Ի՞նչ բան կասեցուց ձեր գուժկան լեզուն
Խօսք ելլել կ'ուզե արիւնը վազուն...
Կը լռե՛ք, բարի՛, բարի՛ զանգակներ:*

*Ու կ'իյնայ այն որ կը ծնկե վախով,
Ջի բուրն աւելի արդար է խաչէն,
Ջի կեանքն անոնց է միայն որ քաջ են,
Անոնց որ կ'ապրին ուրիշին մահով:*

*Ինչպե՛ս կ'ուզէի ձերին պարանին
Կախուիլ ու ցնցել երկաթ բազուկով:
Անո՛նք որ ինկան բիւրո վ, քովէ քով,
Չեր դողանջին հետ՝ լալու պէտք ունին...:*

*Հոգիիս հազար խուլ դողանջներով
Գոռացեք, զանգեր ու կատաղօրէն
Գահավիժեցեք ձեր երկաթ թառէն
Ուրկե միայն լա՛լ գիտցաք դարերով...:*

Օ՛, դողանջեցե՛ք, Աստուա՛ծն է մեռեր...»:
«Երկեր» Անթիլիաս, էջ 171 - Ռուբէն Սեւակ:

* * *

Ռուբէն Սեւակ «Ջանգալներ՛ր, զանգակներ՛ր» բանաստեղծութեան մէջ կ'ուզէր, որ Հայ եկեղեցին և Հայ կրօնականը Վարդանանցի պատերազմին մէջ եղածին նման, Հայ ժողովուրդին հետ ձեռք ձեռքի, պայքարին թշնամիին դեմ:

Ռուբէն Սեւակին երազն էր՝ Վարդանանց վերածնունդը, գոհաբերութեան և պայքարի «ոգի»ին վերածնունդը:

Եւ Ռուբէն Սեւակ շատ լաւ նկատած էր, որ Հայ եկեղեցին և Հայ ժողովուրդը շատ հեռացած են՝ Վարդանանցի «ոգի»էն:

Եւ ան, իբր բժիշկ և իբր գիտութեան մարդ, շատ լաւ գիտնալով հոգեկան ուժին կարեւորութիւնը, հայ ժողովուրդին փրկութիւնը կը տեսներ՝ Հայկական եկեղեցիին և գիտակից Հայ կրօնականի համբով Հայ ժողովուրդին մէջ «Վարդանանցի ոգի»ին վերստեղծման մէջ:

Եւ այդ պատճառաւ էր, որ 31 Մարտ 1911-ին, իր քրոջ ուղղած նամակին մէջ Ռուբէն Սեւակ կ'ըսէր՝

«Եկեղեցին հայուն միութիւնն է»:

Եւ իր ուրախութիւնը կը յայտնէր՝ որ նախկին «Ներսէս քահանան» կրկին Սիլիվրի հրաւիրած են:

Որովհետեւ՝ կրօնական կայ և կրօնական ալ կայ:

Եւ խնդիրը, ճիշդ հոս է արդէն:

Միայն արժանի կրօնաւորներու և առաջնորդներու ձեռքով է, որ ժողովուրդը կրնայ ինքնագիտակցութեան գալ և վերածնունդ ապրիլ:

Այդ պատճառաւ է, որ Ռուբէն Սեւակ, իր «Այլասերում» գրութեան մէջ կ'աղաղակէր՝

«Ղեկին գլուխը կը նստեցնենք մեր էն ախտագին, էն այլասերած անպէտ ծնունդները:

Սակայն ստոյգ, ստոյգ կ'ըսեմ ձեզի, վտանգը մեծ է, շա՛տ մեծ, աւելի մեծ քան կրնանք ենթադրել:

Ժամանակն է հակազդելու, հակազդենք: Մեզի նոր ոսկեդար մը պէտք է, նոր ոսկեդար մը: Այլասերում, ոչ, վերածնունդ»:

«Երկեր» Անթիլիաս, էջ 347 - Ռուբէն Սեւակ:

* * *

Ռուբէն Սեւակ շատ լաւ նախատեսած էր, թէ «Եկեղեցին հայերուն միութիւնն է»:

Բայց Ռուբէն Սեւակ միակը չէր, այս իրականութիւնը տեսնող:

Հայուն թշնամիներն ալ շատ լաւ հասկցած էին՝ Հայ եկեղեցիին՝ հայ ազգին վրայ ունեցած դերը և ուժը:

Եւ հայուն այս թշնամիները, չէր բաւեր, որ 1915-ին, իրենց կատարել տուած ցեղասպանութեամբ, մահացու հարուած մը տուած ըլլային հայ ազգին, չէր բաւեր որ 1920-ին, Հայաստան հայրենիքին հարիւրէն ութսունը գողցած և թուրքերուն տուած էին՝ 1956-ին ալ Հայոց դէմ, ուրիշ՝ հոգե-բարոյական «Եղեռն» մը կատարեցին՝

1700 տարուան հայկական միածնաէջ եկեղեցին երկուքի բաժնեցին:

1915-ի Եղեռնի ենթարկուած Հայ ժողովուրդին վերապրող բեկորները Սփիւռքի մէջ, հակառակ թշնամութիւններու և մեծ

դժուարութիւններու՝ հաւատարիմ մնացած էին՝ Էջմիածնին և մեր Մայր Հայրենիքին:

Բայց հայուն թշնամիները վասակատիպ դաւանանքներ գտան Լիբանանի մէջ: Եւ աթոռի, փառքի և նիւթի հիւանդ, հայու անուն կրելու անարժան կրօնապետներ բաժնեցին Հայկական Եկեղեցին և Սփիւռքի Հայ ժողովուրդը:

* * *

Մենք կը հաւատանք, որ հայ ազգը՝ 19-րդ դարէն սկսեալ իրեն պատճառուած ողբերգութիւնները մէկ առ մէկ ազգային դատաստանէ մը անցընելու և պատասխանատուները դատապարտելու ստիպուած է:

Յոյն ազգը, 1923-ին, Փոքր Ասիոյ ողբերգութեան պատճառ եղած յոյն պատասխանատուները, բոլորին ալ, իրենց արժանի պատիժը տուաւ:

Հայ ազգը, մինչեւ որ հին և նոր դաւանանքները ազգային դատաստանի չյանձնէ և պատասխանատուները չպատժէ՝ կրկին ու կրկին պիտի ենթարկուի նոր ողբերգութիւններու և նոր եղեռններու:

ՆԱԹԻՐԻ
ԹԻԻ 203, 23 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2003

«ԹՈՂ ՔԱՐԿՈՄԵՆ ՋԻՍ ԹԵՐԱՀԱՒԱՏՆԵՐԸ: ԵՍ ՉԵՄ ԿՐՆԱՐ ՈՒՐԱՆԱԼ ԱՅՆ ԱՆՋՆՋԵԼԻ ԱՐՑՈՒՆՔԸ, ՈՐ ԻՄ ՄԱՅՐԵՆԻ ԵԿԵՂԵՑԻՆ ԿՐՑԱԻ ԿԱԹԵՑՆԵԼ ԻՄ ԷՈՒԹԵԱՆՍ ՄԷՋ, ԵՒ ՈՐ ԲՈՂՈՐ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՄԻԱՑԱՄ ՉՊԻՏԻ ԿԱՐԵՆԱՅԻՆ ԿԱԹԵՑՆԵԼ...»:

ԼՈՋԱՆ - 1913 - ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿ

«ՓՈԽԱՆ ՀԱՐՍԱՆԻՔԻ» - ՀԱՏՈՒԱՄ

«ԲԺԻՇԿԻՆ ԳԻՐՔԷՆ ՓՐՑՈՒԱՄ ԷՋԵՐ»ՈՒ ՇԱՐՔԷՆ,

Ռուբեն Սեւակ - Երկեր - Անթիլիաս - էջ 409:

Ամէնուն համար անհերքելի իրականութիւն մըն է, թէ՛

Հայութիւնը, 12-րդ դարէն սկսեալ, իր հայրենի հողերուն վրայ պետականութիւն չունեցաւ:

Բայց, շնորհիւ Հայեկեղեցիին և հայեկեղեցականին, հայ ազգը կրցաւ գոյատեւել իր ազգային և կրօնական բոլոր աւանդութիւններովը: Եւ մինչեւ 19-րդ դարուն վերջերը, հայ ազգը իր լայն մեծամասնութեամբ, Հայաստանի մէջ, իր հայրենի հողերուն վրայ, ապրեցաւ իբր «հայ» և, մանաւանդ՝ իբր հայ-քրիստոնեայ:

Արդեօք հայ ազգը գնահատած է հայ կրօնականներուն, դարերով տարած սուրբ պայքարը իրենց ժողովուրդը հայկական ոգիով և քրիստոնեայ պահելու համար:

Բացարձակապէս՝ ոչ:

Ընդհակառակը, հայ ժողովուրդը շատ անգամ, ապերախտ գտնուած է իր կրօնականներուն հանդէպ:

19-րդ դարուն վերջերը սկսող հայ կուսակցական որոշ շարժումներ, սխալ ըմբռնուած յառաջդիմականութեան մը գաղափարներով ներշնչուած, դէմ էին հայկական կրօնին և հայ կրօնականներուն: [Անշուշտ աւելորդ է կրկնել, որ իբր թէ «սոցիալիստական» այս տեսաբանութիւնը սիոնական ծուղակ մըն էր՝ ոչ-եբրայական

ժողովուրդներու մէջ ազգային և կրօնական կառոյցը քանդելու ծառայող]:

Եւ 19-րդ դարու կեսերէն յետոյ, արհամարհուիլ սկսաւ հայ կրօնականը:

Նայեցէք Յակոբ Պարոնեանի «Մեծապատիւ մուրացկանները» թատերգութիւնը, որուն մէջ կը ցոյանան՝ հայ կրօնականներու հանդէպ անիրաւ գրպարտութիւններ:

Նոյնպէս Երուանդ Օտեանի «Միջնորդ տէր պապան» թատերգութիւնը, որուն մէջ հայ եկեղեցականը կը ներկայացուի՝ իբր դրամասեր և խարդախ «միջնորդ» մը:

Հայ գրականութեան պատմութեան մէջ, բացառիկ տաղանդաւոր թատերագրի համբաւը ունեցող Յակոբ Պարոնեան և Երուանդ Օտեան, իրենց գրութիւններուն մէջ, «Հայ ազգին մէջ փրկարար մեծ դեր կատարած» հայ կրօնականները վարկաբեկած ըլլալուն պատճառաւ, մեր համոզումով՝ դատապարտելի անձնաւորութիւններ են:

Յակոբ Պարոնեանի մասին չենք կրնար պնդել. բայց, վստահաբար ըսենք, թէ Երուանդ Օտեան իսկական ֆարմասոն մըն է դաժէր:

Այդ շրջանի կուսակցական հակակրօնականներու հոյլին մէջ՝ բացառութիւն մը կը կազմէ Արփիար Արփիարեանը:

Արփիարեանի մասին, «Նայիրի» ի առաջին թիւերէն սկսեալ, մեր հիացումը յայտնած էինք:

Մենք կը հաւատանք, որ այս վիպասանը, այդ տարիներուն ապրած ամէնէն տաղանդաւոր և նիշդ արեւելում ունեցած մտաւորականն էր:

Արփիար Արփիարեանի մեծ ժողովրդականութիւն շահած «Կարմիր ժամուց» վիպակը, ապացոյցն է անոր գնահատանքին՝ հայ գիտակից կրօնականին հանդէպ:

Յակոբ Պարոնեանին և Երուանդ Օտեանին՝ հայ կրօնականը վարկաբեկող թատերգութիւններուն բոլորովին հակադիր ըլլալով՝ Ա. Արփիարեան «Կարմիր ժամուց» վիպակին մէջ, հայ կրօնականը կը ներկայացնէ իբր Վարդանանց ոգիով հայրենասէր մը, որ հայ ժողովուրդը, բրբական բռնակալութեան դեմ, յեղափոխութեան կը պատրաստէ:

Արփիար Արփիարեան լաւատեղեակ էր, Հայ եկեղեցիին և հայ

կրօնականին՝ թուրքին դեմ մղուած պայքարին մէջ կատարելիք առաջնակարգ դերին:

Ան շատ լաւ գիտեր, մանաւանդ 1820-թ.ներուն, յոյներուն, քրքական բռնակալութեան դեմ ապստամբական շարժումներուն մէջ, յոյն կրօնականներուն կատարած նակատագրական աշխատանքները:

Յոյն կրօնականներն էին, որ վանքերու մէջ գաղտնաբար, ազգային շունչով յեղափոխականներ կը պատրաստէին:

Եւ այս յեղափոխականներն էին, որ իրենց հերոսական պայքարով, յունական յաղթանակը ապահովեցին թուրքերուն դեմ: Հակառակ, որ Արփիարեան ինք ալ յառաջդիմական գաղափարներով կուսակցական մը եղած էր, չէր հետեւած իր կուսակցական ընկերներուն անտրամաբանական և կոյր դատումներուն, որոնք ընկերվարութիւնը խեղաթիւրուած կ'ըմբռնէին, սիոնական ծուղակը իյնալով: Հետեւելով «միջազգային ընկերվարական» հակակրօնական և մանաւանդ՝ հակացարական և հակառուսական քաղաքականութեան:

Արփիարեան կը ջատագովէր, առաջին հերթին, թուրքերուն դեմ Հայաստանի մէջ սկսած հայ ազատագրական պայքարը:

Եւ բոլորովին հակառակ էր, հրեածին «միջազգային սոցիալիզմին» դրդումով՝ հայ յառաջդիմական կուսակցականներուն Ռուսիոյ մէջ մղած հակացարական շարժումին:

Որովհետեւ Արփիարեան, շատ լաւ գիտեր, թէ հայերուն հակառուսական շարժումներուն մասնակցիլը պատճառ պիտի ըլլար, որ ռուսները հայերու դեմ քշնամանան:

Եւ առանց ռուսերուն թիկունքին՝ հայկական ազատագրական շարժումը չէր կրնար յաջողիլ:

Այս իրապաշտ գաղափարներուն զոհը եղաւ Արփիար Արփիարեանը:

Եւ իր հայ կուսակցական ընկերները սպաննեցին զինք:

Հայերը միշտ կ'ողբան, որ թուրքերը զիրենք ցեղասպանութեան ենթարկած են: Բայց մենք կը հաւատանք, որ հայկական ողբերգութիւններուն մէջ թուրքերուն չափ, գուցէ թուրքերէն աւելի պատասխանատու են՝ հայ տիմար որոշ ղեկավարներ և նաեւ գիտակից կամ անգիտակից հայ դաւաճաններ, որոնք հայ ազգը դէպի կործանում առաջնորդեցին:

* * *

Հայ եկեղեցիին և եկեղեցականին սուրբ տիպարը նսեմանալ սկսաւ՝ մանաւանդ Ֆրանսական յեղափոխութեան կողմէ քաջալերուող և իբր թէ «յառաջդիմական» շարժում նկատուող հակակրօնական հոսանքին ենթարկուած Պոլսոյ հայ մտաւորականներուն գործունէութեամբ:

Այս հայ մտաւորականները, իրենց հակակրօնական գաղափարներով, շատ դիւրաւ ինկան հրեական ֆարմասոնական ցանցին մէջ:

Եւ Պոլսոյ մէջ, առաջին ֆարմասոնական կազմակերպութիւնը հիմնողները՝ հայ մտաւորականներ եղան:

Անկէ ետք է, որ հայ ժողովուրդէն ներս տկարանալ սկսաւ իր եկեղեցականին հանդէպ պաշտամունքի աստիճանի հասած յարգանքի և գնահատանքի զգացումները:

Բնական է, որ հայութեան մէջ, կրօնական զգացումներուն տկարացումէն օգտուեցան նախ՝ կաթողիկէները և ապա բողոքականները, որոնք պառակտեցին հայ ժողովուրդին կրօնական միութիւնը:

Այդ շրջանի ժողովուրդներուն մէջէն միայն հայերն էին, որ ամէնէն աւելի ենթարկուեցան օտար կազմակերպութիւններու ազդեցութեան:

Բայց, Պալքանեան քրիստոնեայ ժողովուրդները, մանաւանդ յոյները կառչած մնացին իրենց եկեղեցիին և իրենց աւանդութիւններուն: Եւ ֆարմասոնականութիւնը, կաթողիկոսութիւնը և բողոքականութիւնը չկրցան լայն չափով ներմուծուիլ անոնց մէջ:

Եւ մեր մտաւորականներէն ոմանք, իբր թէ յառաջդիմական և արդիական գաղափարի տէր անձնաւորութիւններ՝ ծաղրանքի առարկայ դարձուցին հայ կրօնը և հայ կրօնականը:

Յակոբ Պարոնեանի և Երւանդ Օտեանի հայ եկեղեցական տիպարը վարկաբեկող թատրերգութիւնները՝ այս հայավնաս մտայնութեան «արտադրութիւններն» են:



Ռուբեն Սեւակի դիմանկարը (Էսքիզ-անտիպ) - գծուած իր ջրոջ աղջկան՝ պոլսահայ մերօրեայ տաղանդավոր գեղանկարչուհի՝ տիկ. Քրիսթին Սալերիի կողմէ:

* * *

Եւ մինչեւ այդ տարիները, միայն նուիրական և բարձր հոգեկան կարողութիւններու տէր անձերու յատուկ եղած հայ կղերականութեան պաշտօնը, հակակրօնական որոշ հոսանքներուն հետեւանքով, ժամանակի ընթացքին իր փայլը և իր բարձր մակարդակը կորսնցնել սկսաւ: Եւ հայ կղերական դասին մէջ ներմուծուիլ սկսան պատեհապաշտներ և անարժան անձնաւորութիւններ:

Եւ հայ եկեղեցականներուն մէջ, պատուական և սրբութեան

արժանի կղերականներուն կողքին, մէջտեղ ելան նաեւ, եկեղեցական աթոռը շահու աղբիւր նկատող նիւթապաշտներ, անարժան անձեր, նոյնիսկ՝ բարոյականէ զուրկ:

Հայ եկեղեցական պատմութեան էջերը լեցուն են հայ ազգին հպարտութիւն պատճառող արարքներով, որոնք կատարուած են հայ բարձրահոգի կղերական ղեկավարներու կողմէ:

Բայց, նոյն ատեն, հայ եկեղեցական պատմութեան էջերը պղծուած են կրօնական ըլլալու անարժան կղերականներու գործունէութեամբ:

Այս անարգ կրօնականներուն անունները այստեղ նշելու պէտք չունինք:

Այս անարժան կղերականներուն անունները շատերուն ծանօթ են:

Բայց այստեղ՝ ուշադրութիւն:

Մենք իրաւունք չունինք, քանի մը անարժան կրօնականի կատարած արարքները պատրուակելով, ամբողջ կրօնական դասը մրտելու:

Հայ կրօնական դասը, մեծամասնութեամբ, իրեն յանձնուած սուրբ պարտականութիւնը ամենարժանի ձեւով կը կատարէ:

Հայ կրօնականներն են՝ մեր 3000 տարուան հայկական աւանդութիւնները, հայոց պատմութիւնը և լեզուն մինչեւ այսօր վառ պահողները:

Եթէ, դուք քիչ մը հայկականութեան ոգի ունիք՝ շատ դիւրութեամբ կը հասկնաք Հայ եկեղեցիին կարեւորութիւնը հայ ազգին համար:

Հայ եկեղեցին՝ հայութեան խորհրդանիշն է:

Այստեղ հաւատացեալ կամ անհաւատ ըլլալու հարց չկայ:

Եթէ՝ հոգիներն ուղ մէջ հայկականութեան նշոյլ մը գոյութիւն ունի, արդէն, արարողութեան ընթացքին, հայկական եկեղեցիէ մը ներս մտնելով, դուք կ'զգաք ձեր հայկականութիւնը:

Հայ եկեղեցիին մէջ, հայ կրօնականը արարողութիւնը կը կատարէ մեր 3000 տարուան հնադարեան հայկական լեզուով:

Թեւ Ս. Մեսրոպ Մաշտոց Ք. Յ. 404-ին՝ հայկական այբուբենը, հայկական տառերը ստեղծեց, բայց, Մեսրոպ Մաշտոց, հայկական լեզուն չստեղծեց՝ բառին իսկական առումով:

Հայ լեզուն արդէն գոյութիւն ունէր հազարաւոր տարիներէ ի

վեր: Պատմութեան ծանօթ թուականներէն ի վեր, հայ ազգը կը խօսէր արդէն այդ լեզուն: Այդ հայ լեզուն կ'որակենք՝ **«Ոսկեղնիկ լեզու»**:

Այսինքն՝ «ոսկի»ի նման հազուագիւտ, պատմական լեզու մը:

Եւ այս ոսկեղնիկ, պատմական լեզուն պահպանած են՝ մեծ մասամբ, հայ կրօնականները, բառ առ բառ, մինչեւ այսօր: Եւ առանց տառ մը փոխելու, հազարաւոր տարիներէ ի վեր:

Այս տեսակետով երբ կը մտնենք, արարողութեան ընթացքին, հայկական եկեղեցիէ մը ներս, այդ պահուն ո՛չ միայն աղօթատունի մէջ մենք մեզ կը զգանք, այլ՝ հազարամեակներէ ի վեր հայ լեզուն, աղօթքները, աւանդութիւնները, պատմութիւնը և սքանչելի մեղեդիներով շարականները պահպանող թանգարանի մը, հինաւուրց մեհեան-տանարի մէջ:

Եւ այդ վայրկեանին, անկարելի է, որ ձեր հայկական ոգին, չցնցուի, չյուզուի և չվերանայ:

Այս տպաւորութիւններով էր, որ Ռուբէն Սեւակ, Փարիզի Ժան Կուժոնի հայկական եկեղեցիին մէջ, իրենց ամուսնութեան օրուան զգացումները հետեւեալ տողերով կը յայտնէր.

«... Դուրսը՝ բռնօր կիրքերը ու բռնօր մեղքերը, բռնօր գիտութիւնն ու բռնօր քաղաքակրթութիւնը...»

«Ներսը՝ հայաստանցի տերտեր մը, կարծես Անիի քանդակներէն փրցուած՝ հին ու առաքելատիպ գլուխ մը, հազարաւոր տարիներու բառեր կը կրկնէր, յաւիտենական ու աճաւոր...»

«Ճերմակ մամերը, կը հալէին, բուրվառը կապոյտ ամպով մը մեզ պաշարեց»

«Տէրտերը անվերջ կը կարդար ու կ'երգէր: Այդ ընթերցումը ու այդ օրօրումը քիչ քիչ մեզ ընդարմացուցին, վերացուցին, հեռացուցին, հին ու հեռու տեղուանք տարին...»

«Կնքահայրը - մենակեաց ու մարդատեաց արուեստագէտ մը, որ եկեղեցի ռոք կոխած չուներ - հիմա տղու մը պէս կուլար»

Հարսը - որ ոչինչ կը հասկնար ոսկեդարու աստուածային բարբառէն - լռիկ մնջիկ կ'արտասուէր...: Ու տաք արցունք մը որ ինկաւ մեր միացած ձեռքերուն վրայ՝ մինչեւ ոսկորներու ծուծը դողացուց:

Ինծի ի՛նչ փոյթ, թէ գիտութիւնը պիտի հեզնէ իր անարժան աշակերտին այս երկիւղած դիրքը՝ կրկնապէս ծիծաղելի, որովհետեւ

գիտութիւնը որ կրօնքը չի հասկնար, սերն ալ չի հասկնար:

«Յարարեբրական իրականութիւններուն միայն կը հաւատայ ան: Մինչ սերն ու կրօնը բացարձակ իտեալին կը ձգտին, նոյն յաւիտեանական զգացումին երկու յաւիտեանական ձեւերն են անոնք:

«Սերը՝ անձնական, կերպարանաւոր, երկրային, բնական իտեալն է:

«Կրօնը՝ անանձնական, անկերպարան, տիեզերական, գերբնական իտեալը...:

«Քող քարկոծեն զիս թերահաւատները:

«Ես չե՛մ կրնար ուրանալ այն անջնջելի՛ արցունքը որ իմ մայրենի եկեղեցին կրցաւ կաթեցնել իմ էութեանս մէջ, և որ բոլոր գիտութիւնները միացած՝ չպիտի կարենային կաթեցնել...»:

Լոզան - 1913 Ռուբէն Սեւակ: «Փոխան հարսանիքի». հատուած՝ «Բժիշկին գիրքէն փրցուած էջեր»ու շարքէն, Ռուբէն Սեւակ - Երկեր - Անթիլիաս, էջ 409:

**ՀՐԵԱՅ ՓՐՕՖ. ԲՃԻՇԿԻ ՄԸ ԱՆԳՈՒԹ ԿԵՑՈՒԱԾՔԸ՝
ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԸ ՉԱՆՂԸՐԸ-Ի ԴՃՈՒԹԷՆ ՓՐԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ
ԻՐԵՆ ԿԱՏԱՐՈՒԱԾ ԴԻՄՈՒՄՆԵՐՈՒՆ ՀԱՆԴԷՊ**

**ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ ԱՆԵՐՈՋ՝ ԳԵՐՄԱՆԱՑԻ FRANZ APPEL-
ԻՆ ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԸ ԱԶԱՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԿԱՏԱՐԱԾ
ԴԻՄՈՒՄԻՆ ՀԱՆԴԷՊ PROF. DR. ISRAEL-ԻՆ ՏՈՒԱԾ ԱՆԽԻՂՃ
ՊԱՏԱՍԽԱՆԸ**

Յուճուար 2003-էն ի վեր, «Նայիրի»ի էջերուն մէջ հրապարակելու կը ջանանք մինչեւ հիմա անծանօթ մնացած՝ Ռուբէն Սեւակի ողբերգական կեանքին պատմութիւնը:

Մենք կը հաւատանք, որ Ռուբէն Սեւակի կեանքը, հայկական Եղեռնի պատմութեան ամէնէն ողբերգական էջերն են, որոնք դիւցազներգութեան մը նման պիտի փոխանցուին հայ ապագայ սերունդներուն:

«Նայիրի»ի այս թիւին մէջ ալ, Ռուբէն Սեւակի կեանքին բոլորովին անծանօթ մէկ էջը հրապարակելու պիտի ջանանք.....:

Ռուբէն Սեւակի կնոջ՝ Ժաննի-ի ընտանիքին արխիւին մէջ կը գտնուէին 1915 թուակիր գերմաներէն նամակներ:

Բայց այս նամակները ձեռագիր և մանաւանդ գերմաներէն “Gotik” տառերով գրուած ըլլալուն, երկարատեւ չկրցանք վերծանել:

Վերջապէս՝ 1990-թ.ներուն է, որ ծանօթացանք Շամիրամ Սեւակի մօրաքրոջ աղջկան՝ Barbara Pfister-ին:

Եւ ան վերծանեց այս գերմաներէն՝ “Gotik” գրութեամբ նամակները:

Ո՞վ է Barbara Pfister:

Ժաննի Սեւակին քրոջ՝ Minna Apell-ին աղջիկն է:

Եւ Minna անմիջականօրէն կապ ունի Ռուբէն Սեւակի և Ժաննի-ի ամուսնութեան հետ:

Գերմանիոյ Erfurt քաղաքը բնակող Franz և Marie Apell ամուլը երկու աղջիկ զաւակներ կ'ունենան՝ Միննա և Ժաննի:

17 տարեկանին Ժաննի Աբէլը կը դրկեն Լոզան, Գեղարուեստից վարժարանը ուսանելու:

Իսկ իր քոյրը՝ Միննան ալ ժընել՝ վարժարան մը կը դրկուի:

Ժաննին, 1907-թ.ին, Լոզանի մէջ, կը ծանօթանայ Ռուբէն Սեւակին, եւ երկու «երիտասարդ սիրտեր» մեծ սէրով մը կը փարին իրարու:

Բայց միջոց մը յետոյ, Ժաննի-ի դպրոցին տնօրէնութիւնը կը տեղեկանայ կացութեան և էրֆուրթ բնակող անոր ընտանիքին կ'իմացնէ եղելութիւնը:

Եւ հայրը և մայրը, իրար անցած, անմիջապէս իրենց քով կը կանչեն Ժաննին:

Եւ այդ օրէն ետք, Ռուբէնին ու Ժաննի-ին համար շատ տառապալից շրջան մը կ'սկսի: Ռուբէն՝ Լոզան, Ժաննի՝ էրֆուրթ:

Այդ շրջանին գրուած հարիւրաւոր նամակները և բացիկները՝ իրարմէ հեռու մնացած երկու երիտասարդ բոցավառ սիրոյ արտայայտութիւններն են... .. Եւ 4 Փետրուար 1908-թ.ին, Ռուբէն Սեւակ նամակ կը գրէ Ժաննիին ընտանիքին:

Շատ յարգալից նամակ մը, որուն մէջ Ռուբէն Սեւակ իր նպատակներուն լուրջ ըլլալը կը յայտնէ Ժաննի-ի կապակցութեամբ, և անոր հօրմէն և մօրմէն կը խնդրէ, որ իրեն Ժաննիի հետ ամուսնութեան արտօնութիւն տան միայն այն ատեն, երբ ինք բժշկութեան վկայականը ստանայ:

Բայց գերմանացի և մանաւանդ դասական Բրուսիայի Apell ընտանիքին համար՝ արեւելքցի փեսայ մը [բժիշկ ըլլայ կամ ոչ] ունենալը անընդունելի բան էր:

Եւ Ժաննի-ին աղաչանքներն ու լացուկոծը որեւէ ազդեցութիւն չեն կատարեր իր հօր և մօր վրայ:

Բայց, կեանքի մէջ դիպումները շատ բան կը փոխեն.....:

Ժաննի-ին քոյրը՝ Միննան ալ կը սիրահարուի օտարի մը, ժընելի մէջ: Եւ այս օտարը՝ հրեայ մըն է:

Եւ Աբէլ ընտանիքը, Միննային հրեայի հետ ամուսնութեան ալ «ոչ» կ'ըսեն: Եւ անխուսափելին կը պատահի:

Միննան, այս հրեայէն [առանց ամուսնանալու], մանչ զաւակ մը կ'ունենայ... Եւ այս ցաւալի պատահարը պատճառ կ'ըլլայ, որ

Աբէլ ընտանիքը ստիպողաբար ընդունի Ռուբէն Սեւակին ամուսնութեան առաջարկը ժաննի-ի հետ, երկրորդ «դժբէն և տուրբէն»-է մը խուսափելու համար: ... Եւ 1908-ին, Ռուբէն և ժաննի՝ նշանուած կը համարուին և 1910-թ.ին ալ, Լոզանի մէջ, կ'ամուսնանան:

Գալով ժաննի-ին քրոջ, Միննային՝ անոր հրեայ սիրահարը, Միննային գաւակ մը աշխարհ բերելէն յետոյ, մէջտեղէն կը կորսուի: ... Եւ քանի մը տարի ետք, Միննան կ'ամուսնանայ գուի-ցերիացի Dr. Pfister-ի հետ և, 1910-թ.ին, Barbara-ն կը ծնի:

Պարպարա և Միննայի հրեայէն ունեցած մանչ գաւակը՝ Պերնարտը միասին կը մեծնան:

Բայց Պարպարային եղբայրը, իր 40 տարեկանին, անձնասպան կ'ըլլայ...:

Եւ մենք 1990-թ.ին Պարպարայի Պալ քաղաքի տան մէջ տեսանք, իր անձնասպան եղած հրեայ եղբօր քանդակած եօթը թեւանոց հրեական աշտանակ մը, զոր Պարպարան, իր եղբօրմէն մնացած միակ յիշատակը որպէս, մօտը պահած էր:

Ռուբէնի և ժաննի-ի ընտանիքներու կեանքի պատմութիւնը, դժբախտութիւններով լեցուն իսկական վեպ մըն է:

Եւ դժբախտութիւնները կը շարունակուին Պարպարայի կեանքին մէջ ալ:

Իր եղօր անձնասպան ըլլալէն ետք, Պարպարա սիրոյ յուսա-խաբութիւններ կ'ունենայ:

Եւ կ'ապրի առանց ընտանիք մը կազմելու և առանց գաւակ մը ունենալու:

Բժիշկի գաւակ Պարպարայի կեանքը կ'անցնի հիւանդներու և կարօտեալներու օգնելով:

Մեր զինքը ճանչցած շրջանին, Պարպարան 85 տարեկան էր, և այդ տարիքին, ան Պալ քաղաքի կոյրերու հիւանդանոցը կ'երթար, և կոյրերը միխիթարելու համար, անոնց ուզած գիրքերէն ըն-թերցանութիւններ կը կատարէր:

Այս բարեսիրտ կինը մեզի նուիրեց, ինչ որ ունէր իր մեծ հօր և մեծ մօրմէն [ալսիքն ժաննի-ի հօր և մօրմէն] իբր արխիւ՝ նամակներ, նկարներ և փաստաթուղթեր:

Եւ ամէնէն կարեւորը՝ վերծանեց այն **կօթիկ** տառերով ձեռագիր նամակները, որ իր մեծ մայրը և մեծ հայրը գրած էին զանազան

անձերու, իրենց փեսան՝ Ռուբէն Սեւակը փրկելու համար թրքական բարբարոսութիւնէն:

Այս վեհանձն կնկան բարի յիշատակը՝ մեր սրտին մէջ վառ կը մնայ՝ իբր Ռուբէն Սեւակի ընտանիքին ողբերգական կեանքէն եջ մը:

* * *

Այստեղ պարտք կը զգանք, մեր խորին շնորհակալութիւնները յայտնելու փրօֆ. Վահագն Տատրեանիին, որ Պարպարայի մեքենագրած գերմաներէն նամակները հայերէնի թարգմանելու ազնուութիւնը ունեցաւ:

Ռուբէն Սեւակի արխիւը, առանց Վահագն Տատրեանիին քսանհինգ տարիներէ ի վեր մեզի ուղարկած վաւերագիրներուն, շատ անկատար պիտի մնար: Ան էր, իր խորաթափանց պրպտումներով, գերմանական արխիւներուն մէջէն գտած և Ռուբէն Սեւակին վերաբերեալ փաստաթուղթերը մեզի ուղարկողը:

Եւ Վահագն Տատրեանը, մինչև այսօր կը շարունակէ ուղարկել, Ռուբէն Սեւակի մասին վաւերագրեր և գրութիւններ, մեծապէս հարստացնելով Ռուբէն Սեւակի արխիւը:

* * *

11 Փետրուար 2003-թ.ին, «Նայիրի»ի մէջ հրապարակած էինք, հեռագիրի մը պատճենը, որ Ռուբէն Սեւակի Չանղըրը աքսորուած գիշերը ժաննի Սեւակ Պոլսէն, 23 Յունիսի 1915-թ.ին, Լոզան՝ իր մօր կ'ուղարկէր, որ մայրը անմիջապէս Պոլիս գայ:

Եւ ժաննի Սեւակի մայրը՝ Marie Apell շաբաթ մը յետոյ Պոլիս կը հասնի՝ օգնելու համար իր աղջկան դժբախտ օրերուն:

Եւ ժաննի ու իր մայրը կը դիմեն նախ Պոլսոյ Գերմանական դեսպանատունը, և նաեւ օսմանեան բանակին այն ատենուան իշխանաւորը եղող՝ գերմանացի Vonder Goltz փաշա-յին (իսկական անունով՝ General Feld Marschall Colmar von der Goltz):

Գերմանացիները, բաւական ձգձգումներէ յետոյ, իբր թէ յանձն կ'առնեն օգնելու ժաննի-ին և իր մօրը:

Եւ գերմանական իշխանութիւններուն մեղսակցութեամբ թուրքերը, ըստ իրենց սովորութեան, սուտ խոստումներով կ'օրօրեն ժաննի-ն և մայրը:

Եւ օր մը ալ, թուրքերը անոնց կ'ըսեն, թէ՛ Ռուբէն Սեւակը կրնան ազատ արձակել պայմանաւ, որ Ռուբէն Գերմանիա երթայ և հոն հիւանդանոց մը աշխատի, և մինչև պատերազմի վերջաւորութիւնը Գերմանիայէն չհեռանայ:

Այս խոստումէն շատ ուրախացած՝ Ժաննի-ին մայրը՝ Մարի Արէլ իր ամուսինին՝ Ֆրանց Արէլին նամակ կը գրէ Լոզան, որ ան անմիջապէս Գերմանիոյ մէջ Ռուբէնին, իբր բժիշկ աշխատելու համար հիւանդանոցի մը մէջ պաշտօն մը գտնէ:

Ֆրանց Արէլն ալ, այս բարի լուրէն շատ ոգեւորուած, դիմումներ կը կատարէ:

Եւ նոյն ատեն կը յիշէ թերթերուն մէջ վերջերս կարդացած մէկ լուրը: Թերթերը արձագանգ եղած էին հետեւեալ եղելութեան.

«Օսմանեան կայսրութեան սուլթանը վերջերս Պոլսոյ մէջ, վիրաբուժական յաջող գործողութեան մը կ'ենթարկուի գերմանացի փրօֆեսօր բժիշկ Իսրայէլի կողմէ»:

Եւ թուրք իշխանութիւնները մեծ երախտագիտութեամբ շնորհակալութիւն կը յայտնեն [իբր թէ] գերմանացի փրօֆ. տք. Իսրայէլին:

Եւ Ֆրանց Արէլ, մեծ յոյսերով լի, նամակով մը կը դիմէ փրօֆ. տք. Իսրայէլիին աղաչելով անոր, որ իր հիւանդանոցին մէջ պաշտօն մը տայ իր փեսային՝ բժ. Ռուբէն Սեւակին, որ ան փրկուի Չանդըրը-ի աքսորավայրէն:

Այստեղ կը հրապարակենք այս ցաւալի եղելութեան վերաբերեալ փաստաթուղթերէն մասեր.

Ռուբէն Սեւակին աներոջ՝ Ֆրանց Արէլին 15-8-1915 թուակիր Լոզանէն Գերմանիա՝ փրօֆ. Իսրայէլին գրած գերմաներէն նամակը:

Այս նամակին Barbara Pfister-ի կողմէ վերծանուած և մեքենագրուած պատճենը:

Նոյն նամակին, Վ. Տատրեանի կողմէ կատարուած գերմաներէնէ հայերէն թարգմանութեան պատճենը:

Ich bitte sehr um gütige Rücksicht, dass
ich bei meiner Angelegenheit in Bezug auf
Anspruch stehen, aber der erste Fall
unvermeidlich eingetreten ist und ich
keine Zeit verliere. Würden Sie gütigst hier
eingreifen können, so wären wir alle
ganz dankbar.

Für die Versicherung
ausgesprochenen Dankbarkeit mit der
ich Ihnen ganz ergeben

FRANZ APPELL

Prof. Dr. Israel

15. 8. 1915

Verzeihen Sie gütigst wenn ein Ihnen völlig Unbekannter
so wagt Ihre kostbare Zeit auf einige Minuten in Anspruch zu
nehmen. Es handelt sich darum eine für mich und meine Familie
höchst wichtige Angelegenheit. Aus den Zeitungen ersah ich,
dass Sie berufen worden waren u. a. den Sultan zu operieren
und Sie in höchsten türkischen Kreisen das größte Vertrauen
genießen und dies gab mir den Mut Ihnen Nachfolgendes vor-
zutragen.

Ich bitte sehr um gütige Rücksicht, dass ich Sie mit
meiner Angelegenheit so lange in Anspruch nahm, wozu der
ernste Fall musste möglichst eingehend erörtert werden.
Würden Sie gütigst hier eingreifen können, so wären wir
alle Ihnen zum innigsten Danke verbunden.

Genehigen Sie die Versicherungen ausgezeichnetester
Hochachtung mit der ich zeichne

ganz gehorsamt

FRANZ APPELL

«15 Օգոստոս 1915 - փրօֆ. տոքթ. Իգրայէլ

Բարեհաճեցէք ներողամիտ ըլլալ, որ ձեզի բռնութիւն անձանօք անձ մը, կը համարձակի ձեր թանկագին ժամանակը քանի մը վայրկեանի համար խլել ձեզմէ: Խնդրոյ առարկայ է գործ մը որ, ինծի և իմ ընտանիքիս համար, յոյժ կարեւոր է: Թերթերէն նկատեցի, որ կանչուեր էք սուլթանին գործողութիւն ընելու և թէ թրքական ամենաբարձր խաւերու մէջ գերագոյն վստահութիւն մը կը վայելէք. ասկէ քաջալերուելով հետեւեալ պարագաները ձեր ուշադրութեան կը յանձնեմ:

Իմ դուստրս... ի հայ բժիշկ Ռ. Չ.ի հետ, որ հոս ուսանելէ և բժշկական նիւղը աւարտելէ յետոյ աշխատեցաւ պրն. փրօֆ. տոքթ. Ռուի հսկողութեան տակ, և գործեց իրրեւ նահանգային բժիշկ, 1914 Մայիսին գոյգը փոխադրուեցաւ Կոստանդնուպոլիս ուր կարն ժամանակի մէջ իմ փեսաս յաջողեցաւ բարեյոյս ասպարէզ մը կերտել, նոյնպէս, Ռուրքէն Սեւակ ծածկանունով ան իրրեւ հայ բանաստեղծ իրեն անուն մը հանեց, զանազան հայ լրագիրներու մէջ, ինչպէս և պատկերագարդ հանդէս Հայաստանի մէջ, որ իր նկարն ալ տպեց, իր գործերը լոյս տեսան, երբ պատերազմը պայթեցաւ ան մտաւ թրքական առողջապահական զինագունդին մէջ և իրրեւ բժիշկ ծառայեց ...ին և Կոստանդնուպոլսոյ մէջ, տեսն մը առաջ Կովկասի մէջ ծագում առած հայկական շարժումը դժբախտաբար Եւրոպական Թուրքիոյ մէջ ապրող կարգ մը հայերը կասկածի տակ ձգեց, կասկած մը որ հակառակ իր անմասնակից ըլլալուն, ընդգրկեց նաեւ զինքը մանաւանդ երբ ան առողջապահութեան մասին հրապարակային զանազան դասախօսութիւններ տուաւ մինչեւ Յունիսի կէսը: Մենք իմ դուստրէս և թոռնիկներէս լաւ լուրեր կը ստանայինք երբ Յունիս ամառ վերջերը յանկարծ իմ կինս թէ՛ իմ դուստրէս և թէ՛ կայսերական Գերմանական դեսպանատունէն հեռագրով կը պահանջուէր որ անմիջապէս Կոստանդնուպոլիս գայ: Պատճառ մը ցոյց չէր տրուեր և իմ հեռագրային հարցապնդումիս վրայ ստացայ միայն սա պատասխանը՝ «վատ բան չկայ»: Յունիս 27-ին կինս մեկնեցաւ, եւ երբ Յունիս 6-ին Կոստանդնուպոլիս հասաւ, կայսերական դեսպանատան և այստեղի հիւպատոսի միջոցաւ ինծի լուր դրկեց, որմէ ես իր նամարդութեան պատճառը հասկցայ:

Բարեհաճօրէն թոյլ տուէք որ իմ կնոջս՝ պարոն հիւպատոս

Ֆիլզինկերի ուղղած գրութիւնէն կարգ մը հատուածներ ձեր արեւելումին համար կցեմ այս գրութեան, [ներփակեալ]:

Վերոյիշեալ տողերը կարդալէ յետոյ ներողամիտ պիտի ըլլաք որ ես իմ հարցովս ձեզի դիմեմ, մեծաշարք պարոն, և հայցեմ ձեր թելադրութիւնը և կամ ձեր բարեսիրտ բարեխօսութիւնը:

Խորհեցայ որ այս դժուարին հարցը կարելի է լուծել եթէ իմ փեսան գէթ սկզբնական շրջանի մը համար ձեր վարած հաստատութեան մէջ, առանց թռչակի, իբրև բժիշկ ընդունուի որպէսզի, ան ազատ ձգուի և դէպի Գերմանիա ուղարկուի: Ձեր անունը վստահաբար բոլոր դժուարութիւնները պիտի յաղթահարէ Կոստանդնուպոլսոյ մէջ և կարելի է նոյնիսկ, որ կեանք մը փրկէ:

..... ուսերէն վերցնել:

Գալով իմ անձիս ինքնութեան, պատիւը ունիմ ձեզի հաղորդելու որ ես, նախապէս, էրֆուրթի մէջ իբրեւ արքունիքի գոհարավաճառ գործ մը ունեի:

.....կը պատկանիմ և 1870-1871-ի գինուորական արշաւին մասնակցած եմ և այն ատեն կայսերական Վեհափառ հրամանով պարգեւատրուեցայ Ռազմական շքանշանով էրֆուրթի մէջ, ինչպէս և անունը նոյնինքն Գերման հիւպատոս Ֆիլզինկեր հոս պիտի իմ մասիս տան, որով իմ երաշխաւորութիւնը կրնայ հիմնաւորուիլ:

Շատ կը խնդրեմ, որ բարի ըլլաք ներողամտութիւն ցոյց տալու ձեզի իմ խնդիրովս այսքան երկարօրէն զբաղեցնել տալուս համար: Բայց ծանր կացութիւնը կը հարկադրէ, որ հարցը կարելի եղածին չափ մանրամասնօրէն քննարկուի: Եթէ եռանդով կարենաք միջամտել, մենք բոլորս ալ ձեզի յաւետ երախտապարտ պիտի մնանք:

Թոյլ տուէք, որ մեր ամենամեծ յարգանքի հաւաստիքը տանք ձեզի, որով ես, խոնարհաբար, կը վերջացնեմ գրութիւնս:

(ՖՐԱՆՑ ԱՔԷԼ)



KLEMPIDY HOHEI BESELU-VIA

5 STABE
HERZOG No. 18
1917
ELEKTRISCHES
ZENTRALGESÄHRE
Vollständiges Telefon- und Telegraphen-System

Hilflos im 21. Aug. 1917
(Klempid)

E. 22/8.

Sehr geehrter Herr.

Beste Bitte weniger wird ich von hier und von
Berlin aus versuchen zu thun was möglich ist;
und Ihnen weitere Mitteilungen gegeben lassen.
Es wäre wichtig, wenn Sie mir die Ort, in dem
Ihr Schwiegersohn interniert ist, genau angeben.
Sie nennen Kengari, und fügen hinzu "vielleicht Khangri bei
Ankora". Dieses muß exakt festgestellt werden.
Bitte wieder.

Respektvoll ergebend

Prof. Israel
(PROF. ISRAEL)

Wildowo, den 21. Aug. 1917

in Rollen 23.8.

Sehr geehrter Herr.

Ihren Brief habe ich hier erhalten, wo ich mich zur
Aufhalte um am 10. September nach Berlin zurückzukehren.
Mätten Sie sich an mich gewandt solange ich in Constanti-
nopol war, hätte ich mit mehr Aussicht auf Erfolg für Ihre
Sache wirken können. Die Schwierigkeit liegt in der ge-
forderten Garantie, dass Ihr Schwiegersohn Deutschland wäh-
rend des Krieges nicht verlässt. Diese Garantie kann
niemand geben, selbst wenn Ihr Schwiegersohn eine Anstellung
in Deutschland finden würde. An meine Klinik kann ich ihn
nicht anstellen, wenn er die Deutsche Sprache nicht beherrscht.

weniger werde ich von hier und von Berlin aus
versuchen zu thun was möglich ist; und Ihnen weitere Mit-
teilungen zu geben lassen. Es wäre wichtig, wenn Sie mir den
Ort, in dem Ihr Schwiegersohn interniert ist, genau angeben.
Sie nennen Kengari, und fügen hinzu "vielleicht Khangri bei
Ankora". Dieses muß exakt festgestellt werden.

Nachachtung

ergebenst

Prof. Israel

Այս նամակին Barbara Pfister-ի կողմէ վերծանուած և մեքենագրուած պատճենները:

Նոյն նամակին Վահագն Տատրեանի կողմէ կատարուած գերմաներէնի հայերէն թարգմանութեան պատճենները:

*Վիլտպատ, 21 Օգոստոս 1915
ստացուած՝ 23 Օգոստոսին*

Մեծայարգ պարոն,

Ձեր նամակը ստացայ հոս, ուր դարմանումի համար կը մնամ՝ Սեպտեմբեր 10-ին Պերլին վերադառնալու նպատակաւ: Եթէ Կոստանդնուպոլիս գտնուած միջոցիս ինծի դիմած ըլլայիք, ես յաջողութեան աւելի մեծ հեռանկարով, ձեր խնդրոյն ի նպաստ կրնայի միջամտել: Դժուարութիւնը այն պահանջուած երաշխաւորականին մէջ է, որով պայման կը դրուի որ ձեր փեսան պատերազմի տեւողութեան Գերմանիայէն չհեռանայ: Այս երաշխաւորութիւնը ոչ ոք կրնայ տալ, նոյն իսկ եթէ ձեր փեսան Գերմանիոյ մէջ պաշտօն մը գտնայ: Իմ բուժարանիս մէջ ես իրեն պաշտօնի չեմ կրնար կոչել, քանի որ ան գերմաներէն լեզուին չի տիրապետեր...:

Հոսկէ և Պերլինէն աւելի դժուար պիտի ըլլայ փորձել, ընելու այն ինչ որ հնարաւոր է և ձեզի յաւելեալ տեղեկութիւններ տալու: Կարեւոր է որ ինծի՝ ձեր փեսային արգելափակուած տեղին ճշգրիտ անունը տաք: Ջայն Քենկարի կը կոչէք, աւելցնելով որ «Թերեւս Քանկարի է՝ Անկարայի մօտ»։ սա պէտք է նախ ճշգրտօրէն ստուգուի:

*Յարգանք, խոնարհարար՝
փրոֆ. Իգրայէլ*

Մենք կը հաւատանք, որ վերը հրապարակուած երկու նամակներուն մէջ, 24 Ապրիլ 1915-ի Եղեռնին բոլոր յոյգերը կը ցոլանան:

Առաջին նամակին մէջ, Ռուբէն Սեւակին աները իր փեսին կեանքի պատմութիւնը կու տայ ամենայն հարազատութեամբ: Եւ կ'ըսէ, թէ իբր բժիշկ ան օգնած է բոլորին և որեւէ յանցանք չէ գործած Չանդըրը քստրուելու համար:

Եւ, փրօֆ. Իսրայէլէն կը խնդրէ, որ Ռուբէնի իր հիւանդանոցին մէջ իբր բժիշկ և առանց թոշակի աշխատիլը ընդունի, որ իր փեսան ազատ արձակուի Չանդըրը-էն, և Գերմանիա ուղարկուի:

Ֆրանց Աբէլին այս աղաչական նամակին իբր պատասխան,

հրեայ փրօֆ. Իսրայէլին գրած նամակը՝ կարն, անգուք և վնական
ձեռով մերժողական գրութիւն մըն է:

Փրօֆ. Իսրայէլ, դիմումը մերժելու համար իբր պատրուակ
կ'ըսէ, թէ՝ **«Ձեր փեսան գերմաներէն լեզուին չի տիրապետեր»:**

Մինչդեռ, շատ ծանօթ իրականութիւն մըն է, թէ բժշկութեան
մէջ գործածուած բառերը միջազգայնացած են, և աշխարհի բոլոր
կողմերը նոյն մասնագիտական բառերը կը գործածուին:

Հրեայ փրօֆ. Իսրայէլի մերժողական պատասխանը անհեթեթ,
անխիղճ և իր անունին վայել անմարդկային արտայայտութիւն մըն
է:

1915-ին Պոլսոյ մէջ, թուրք սուլթանը դարմանած հրեայ փրօֆէ-
սօր Իսրայէլին այս անգուք նամակը [որով ան կը մերժէ փրկել
Ռուբէն Սեւակը] կարդալէ յետոյ, մենք շատ աւելի համոզուեցանք,
որ Հայկական ցեղասպանութեան առաջնակարգ պատասխանատու-
ները հրեաներն են:

**ԿԸ ՀՐԱՊԱՐԱԿԵՆՔ՝ ՌՈՒՐԷՆ ՍԵՒԱԿԻ ԿՆՈՋ՝ ԺԱՆՆԻ ՍԵ-
ԻԱԿԻՆ 27 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1915-ԻՆ ԼՈՋԱՆԷՆ ՊՈԼԻՄ ԳԵՐՄԱ-
ՆԱԿԱՆ ԴԵՍՊՈՒՆԱՏԱՆ ՈՒՂԱՐԿԱԾ ՄԷԿ ՆԱՄԱԿԸ, ՈՐՈՒՆ
ՄԷՋ, ՀԱԹԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԻՐԲ ՊԱՏԱՍԽԱՆԱ-
ՏՈՒ՝ ԳԵՐՄԱՆԱՑԻՆԵՐԸ ԿՊԱՄՔԱՍՏԱՆԷ**

1985-թ. ներքին ի վեր մեր գրութիւններուն հետեւողները նկատած են թերեւս, որ 1915-ի Հայկական ցեղասպանութեան մէջ իբր պատասխատու ամբաստանած ենք բուրքերուն չափ և նոյնիսկ բուրքերէն ալ աւելի՝ գերմանացիները և անոնց ետեւ գտնուող սինիստները:

1985-ին հրատարակուած մեր «Ռուբէն Սեւակ և փրցուելիք ուղեղներ» գիրքին մէջ, առաջին անգամ ըլլալով հրապարակեցինք մեծ հայասեր կարծուած Johannes Lepsius-ի գերմանական վաւերաբուրքերու գիրքէն հատուածներ, որոնց մէջ Johannes Lepsius, Ռուբէն Սեւակին կնոջ ժաննի Սեւակին և անոր մօր՝ Մարի Աբելին Հայկական ցեղասպանութեան իբր պատասխանատու գերմանացիները ամբաստանող մասերը չէին հրատարակուած:

1919-թ.ին, Պերլինի մէջ լոյս տեսած Ժ. Լեփսիուս-ի այս գիրքը շատ մը հայ մտաւորականներու ծանօթ էր: Բայց ոչ մէկ հայ գրող, 1919-էն մինչեւ 1985-թ.ը Լեփսիուս-ի գիրքին մէջ գտնուող Ռուբէն Սեւակի վերաբերեալ վաւերաբուրքերու մասին արտայայտուած էր:

Հակառակ որ Ժ. Լեփսիուս-ի այս գիրքին մէջ, Ռուբէն Սեւակ 1915-ի Եղեռնի նահատակ *միակ բանաստեղծն էր*, որուն նահատակութեան մասին [անկատար ըլլալով հանդերձ] շատ կարեւոր վաւերագրեր կային:

Աւելին՝ Լեփսիուս-ի վաւերագրերու այս գիրքը՝ ֆրանսերէնի ալ թարգմանուած էր: Եւ մենք, ապշութեամբ նկատեցինք, որ այս

քարգմանութեան մէջ, Ռուբէն Սեւակի մասին վաւերագրերը չէին հրատարակուած:

Այստեղ կրկին պիտի ըսենք՝ թէ Ռուբէն Սեւակ, մանաւանդ դաշնակցականներուն կողմէ գիտակցաբար անտեսուեցաւ, և նպատակաւոր, մոռացութեան ենթարկուեցաւ, և Ռուբէն Սեւակի դիւցազնական և զարհուրելի կեանքի պատմութիւնը, քողարկուեցաւ:

Որովհետեւ այս կուսակցութեան ղեկավարները, այդ շրջանի մանաւանդ, մասոնական-սիոնիստական իշխանութեան ենթարկուած էին, և անոնց հրահանգները կը գործադրէին:

* * *

Այստեղ կը հրապարակենք բացառիկ փաստաթուղթ մը:

Այս փաստաթուղթին մէջ Ռուբէն Սեւակին կիներ՝ Ժաննի Սեւակ, որ ձեռագրով կ'ամբաստանէ գերմանացիները, իբր պատասխանատու Հայկական ցեղասպանութեան:

Այս գրութիւնը, Ժաննի Սեւակին Լոզանէն 27 Հոկտեմբեր 1915-ին, Պոլիս՝ Գերմանական դեսպանատուն ուղարկած մէկ նամակն է:

Ժաննի Սեւակ, Պոլսոյ մէջ, Գերմանական դեսպանատունէն իր ամուսինին նահատակութեան լուրին տեղեկանալէ յետոյ, 16 Սեպտեմբեր 1915-ին, Պոլսէն կը մեկնի իր երկու զաւակներուն և մօրը հետ, դէպի Ջուիցերիա:

Եւ Ժաննի Սեւակ, Լոզան հասնելէ միջոց մը ետք, ամուսինին ցաւը սրտին մէջ ըլլալով, այս անգամ նամակով մը կը դիմէ Պոլսոյ Գերմանական դեսպանատունը, որ գերմանացիները գոնէ ազատեն մնացեալ հայերը, թրքական բարբարոսութենէն:

Ժաննի Սեւակին այս նամակը՝ վեհանձնութեան և բարեսրտութեան բացառիկ մէկ արտայատութիւնն է:

Ժաննի Սեւակին ձեռագիր նամակին պատճենը [ուղղուած Պոլսոյ Գերմանական դեսպանատուն] մեզի նուիրեց փրօֆ. Վահագն Տատրեանը 5-10-1992-ին: Չայն, իր պրպտումներուն շնորհիւ, գտած էր այն ատենուան Գերմանիոյ մայրաքաղաքը եղող Բոնոն-ի պետական արխիւներուն մէջ:

Այստեղ, կրկին մեր խոր երախտագիտութիւնը կը յայտնենք փրօֆ. Վահագն Տատրեանին:

Կը հրապարակենք նախ այս գերմաներէն նամակին հայերէն թարգմանութիւնը [գերմաներէնէ հայերէն թարգմանութիւնը կատարեց Զուիցերիոյ Հայ Առաքելական Եկեղեցիին հոգեւոր հովիւը՝ արժանապատիւ Տէր Աբէլ քահանայ Մանուկեան, որուն կը յայտնենք մեր շնորհակալութիւնները]:

Կայսերական Գերմանիոյ Դեսպանութիւն Ի Կոստանդնուպոլիս

Թոյլ տուէք համակ նուիրումով ներկայացնել հետեւեալ խնդրանքը

Թրքական պաշտօնէութեան մօտ ամենաազդու կերպով նորէն միջամտելով, ի սէր Աստուծոյ, ապացուցէք այս սարսափելի զրպարտութիւնները: Վնական հրամանով մը ազատեցէք, ինչ որ կարելի է փրկել: Անմեղ կանանց, երեխաներու, հիւանդներու եւ ծերերու արիւնը, որ մինչեւ երկինք կը պոռայ, Գերմանիոյ վրայ նզովք, Գերմանիոյ վրայ անէծք կրնայ բերել, երէ չ'ընէ այն ամէնը, ինչ որ կը գտնուի իր երկաթեայ ուժերուն ներքոյ:

Ամենախորին յարգանքով,
Կը ստորագրեմ բոլորանուէր՝

Լօզան, 27 Հոկտեմբեր 1915

Հելեն Զիլիկկիրեան, ծնեալ Ապելլ

Լոզանի մէջ, ժաննի Սեւակին հոգեկան չարչարանքը՝ կրկնակի էր: Ան կը տառապէր, Ռուբէն Սեւակի նահատակութեամբ: Եւ ան կ'ողբար իր ամուսինին կորուստը:

Բայց, նոյն ատեն, իր սրտին մէջ ունէր այն զարհուրելի մղձաւանջը, որ Ռուբէն Սեւակի նահատակութեան և հայ ազգին ցեղասպանութեան ենթարկուելուն պատասխանատուները՝ գերմանացիներն էին, այսինքն՝ իր ցեղակիցները, իր արիւնը կրող իր եղբայր ազգակիցները:

Եւ ժաննի Սեւակ չէր ուզեր հաւատալ այս սարսափելի իրականութեան:

Թեեւ, Պոլսոյ մէջ, իր ապրած վերջին տառապալից օրերուն, Պոլսոյ գերման իշխանաւորներուն իր ամուսինը փրկելու համար որեւէ ազդու միջամտութիւն չկատարելը տեսնելով, հասկցած էր իրականութիւնը:

Բայց արդեօ՞ք... միշտ հարցական մը կար իր մէջ:

Իբր գերմանացի իր մէջ ունեցած այս յանցապարտի զգացումը, տեւական կը չարչարէր զինքը:

Այդ պատճառով, այս հոգեկան ընդվզումով գրեց Պոլիս, իր ազգակիցներուն, Պոլսոյ Գերմանական դեսպանատան որ ապացուցանեն, եթէ կրնան, թէ սուտ է, սարսափելի զրպարտութիւն այն ամբաստանութիւնը, որ հայ ազգին ցեղասպանութեան պատասխանատուները գերմանացիներն են:

Եւ «զրպարտութեան» սուտ, անհիմն ըլլալուն ապացոյց - հաստատումին սպասելով հանդերձ, իր այս նամակով կը խնդրէր նաև, Պոլսոյ գերմանական իշխանաւորներէն, որ գոնէ հրամանով մը

- 9. Nov. 1915

9701

10 12 179

An die Kaiserlich Deutsche Botschaft in Konstantinopel.

Folgende Bitte gehe ich mir ganz ergebenst vorzutragen:

Bemühen Sie um Güte. Willen durch nochmaliges allerergründigstes
Einschreiten bei der türkischen Behörde, die Unmoralität dieser
furchtbaren Unmordung. Können Sie durch definitiven Befehl,
was noch zu retten ist. Das Blut der Unschuldigen, Frauen, Kinder,
Kranke und Greise schreit zum Himmel, der Deutschland mit
seinem Hader treffen könnte, wenn es nicht alles tut was in
seinen eigenen Kräften steht.

In höchster Eile
zu dem ganz ergebenst

Helene Kilianjünger geb. Quell.

Ins.

Lausanne den 27. Oktober 1915.

BTK97 2

փրկեն մնացեալ հայերը, ուր **«անմեղ կիներուն, երախաներուն, հիւանդներուն եւ ծերերուն արիւնը՝ երկինք կը բարձրանայ»:**

Եւ կրնային ընել գերմանացիները՝ այս ամենակենսական մարդկային միջամտութիւնը, երբ 1915-ին, Գերմանիոյ **«Երկաթեայ ուժը»** ամենագոր իշխանաւորն էր Թուրքիոյ մէջ:

Եւ ժաննի Սեւակ մարգարեական նախատեսութեամբ մը զգուշացուց գերմանացիները՝

Եթէ, ձեր ունեցած երկաթեայ ուժով [Թուրքիոյ մէջ 1915-ին, գերմանացիներն էին այդ երկրին տերն ու տիրականը] չփրկէք մնացեալ հայերը, անոնք անէծք պիտի տեղացնեն ձեր գլխուն:

Եւ 1939-էն սկսեալ մինչեւ այսօր, Գերմանիան ենթարկուած է ժաննի Սեւակի նախատեսած անէծքին: Այսօր Գերմանիան, ամէնօր, կ'ապրի «հոլոքոսթ» ըսուած մըղձաւանջը:

* * *

Եւ գերմանացիներու «երկաթեայ ուժը», որեւէ բան չըրաւ ազատելու համար հայերը:

Ընդհակառակը:

Գերմանացիները, մինչեւ 1918-ը թիկունք կանգնեցան հայերուն դէմ կատարուած թրքական բարբարոսութիւններուն:

Եւ Արեւմտահայաստանը «Գողգոթա»յի մը վերածուեցաւ:

Որովհետեւ այսպէս որոշած էին սիոնիստները:

Հայաստանը պիտի ոչնչացուէր, որ անոր տեղը զօրաւոր և միակտուր Թուրքիա մը ստեղծուի:

Այսպիսի Թուրքիա մը անհրաժեշտ էր իրենց ապագայ «Մեծն Իսրայէլ»ի ստեղծման համար:

* * *

Ժաննի Սեւակ տեսաւ և շատ լաւ հասկցաւ կատարուած սադրանքները:

Հեռացաւ գերմանացիներէն և Գերմանիայէն:

Եւ մինչեւ վերջին շունչը Ֆրանսա ապրեցաւ՝ իբր հայ: Եւ մանաւանդ՝ գերմանական անցագիրը նետեց և նախընտրեց իր ամուսնին՝ Ռուբէն Սեւակին պատկանած «ազգ»ին հպատակութեամբ ապրիլ:

Մենք այսօր Ֆրանսայի մէջ, կը տեսնենք ու կ'ապրինք ժաննի Սեւակին, գերմանացիներու յատուկ կեցուածքին արդիւնքը եղող եղելութիւնը:

Ռուբէն և ժաննի Սեւակներու որբացած երկու զաւակները՝ Լեւոնը և Շամիրամը Ֆրանսա կապրին:

Մանաւանդ՝ Շամիրամ Սեւակը, որ Նիս կ'ապրի, միշտ տեսնելու առիթը կ'ունենանք:

Եւ ամէն անգամ որ Շամիրամին կը հանդիպինք, իր մէջ կը տեսնենք ժաննի Սեւակին, գերմանացիները Հայկական ցեղասպանութեան պատասխանատու նկատելով գերմանական արմատներէն հեռանալը, և այդ պատճառաւ ալ իր զաւակներուն գերմաներէն սորվեցուցած չըլլալուն արդիւնքը:

COLONIE ARMENIENNE
de
LAUSANNE

Lausanne, le 28 Mars 1919

CERTIFICAT de NATIONALITE

Le BUREAU de la COLONIE ARMENIENNE de LAUSANNE atteste que le porteur
de la présente:
M. Vaux H. M. A. S. Tchilinguizian originaire de Bregenz (Allemagne),
né le 1.9.90 est de par son mariage
NATIONALITE ARMENIENNE acquise
en foi de quoi le présent certificat lui a été délivré
Mlle Simiramis Tchilinguizian, née à Genève en 1914, et le petit Leon Vahakou
Tchilinguizian, né à Lausanne en 1912. ~~sa~~ Nationalité Arménienne.
Lausanne le 28 Mars 1919

Le Secrétaire: *N. Babajian*

Le Président: *S. Yalouly*

LAUSANNE
1918
Bureau de la Colonie Arménienne

Այսօր Շամիրամ, և նոյնպես Լեւոն՝ մէկ բառ գերմաներէն չեն գիտեր:

Մանաւանդ Շամիրամը բոլորովին վերադարձած է իր հօրը, այսինքն հայկական արմատներուն:

Շամիրամը այսօր, 90 տարեկան է:

Եւ ան, գրեթէ ամէն տարի, Հայաստան կ'այցելէ:

Միշտ ներկայ կ'ըլլայ Ռուբէն Սեւակի անուան դպրոց-վարժարանին հանդիսութիւններուն:

Շամիրամը իր հայրը՝ Ռուբէն Սեւակը չէ ճանչցած. անոր նահատակութեան տարին ինք մէկ տարեկան էր:

Եւ Շամիրամ, Երեւանի Ռուբէն Սեւակի անուան դպրոցին մէջ, իր չճանչցած հօրը կարօտը կ'առնէ:

Բացառիկ երեւոյթ մըն է, Շամիրամը 90 տարեկանին՝ բոլորէս ալ աւելի երիտասարդ է՝ թէ՛ երեւոյթով և թէ՛ աշխուժութեամբ:

Եւ իր բանաստեղծական ձիրքերով ու պերնախօսութեամբ՝ ձեւով մը իր հայրը կը մարմնացնէ:

Թուրքերը սպաննեցին Ռուբէն Սեւակը իր 30 տարեկանին:

Բայց Շամիրամ, իր 90 տարեկանին մէջ, ձեւով մը Ռուբէն Սեւակի վերածնունդն է:

Բնութիւնը հրաշալիք մըն է՝ իր անբացատրելի երեւոյթներով:

**ՌՈՒՐԷՆ ՍԵՒԱԿԻ ԿԵԱՆՔԻՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԱՄԷՆ ՄԷԿ
ԷՋԸ՝ ԻՍԿԱԿԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ ՄԸՆ Է**

**ՌՈՒՐԷՆ ՍԵՒԱԿԻ ՔՐՈՋ՝ ՀԱՅԿԱՆՈՒՇ ԶԷՎԻԿԵԱՆԻ
[ՄԵՆԵԱԼ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ] ԱԿԱՆԱՏԵՍԻ ՎԿԱՅՈՒԹԻՒՆԸ**

«ՀԱՅՐՄ, ԵՐԱ ԻՄԱՑԱԻ, ԹԷ ՌՈՒՐԷՆ ՕՏԱՐ ԱՂՋԿԱՆ ՄԸ ՍԻՐԱՀԱ-
ՐՈՒԱՄ Է, ՇԱՏ ԲԱՐԿԱՑԱԻ ԵՒ ԱՆՈՐ ԴՐԱՄ ՈՒՂԱՐԿԵԼԸ ԴԱԴՐԵՑՈՒՑ: ԵՒ
ԱՅՍ ԲԱՐԿՈՒԹԵԱՆ ՄԷՋ ԸՍԱԻ ԹԷ՝ «O, ARTIK BENİM OGLUM DEGİL» -
«ԱՆ, ԱՅԼԵԻՍ ԻՄ ՋԱԻԱԿՍ ԶԷ»

«ՎԵՐՋԱՊԷՍ, ՍԷՐԸ ՄԻՇՏ ԿՈՅՐ Է, ԸՆԴՀԱՆՐԱՊԷՍ ՕՐԷՆՔ ԶԻ
ՃԱՆՁՆԱՐ: ԵՒ ՍԱԿԱՅՆ, ՌՈՒՐԷՆ ՍԵՒԱԿ, ՇԱՏ ՀԱՅՐԵՆԱՍԷՐ ԵՒ ԱՋԳԱ-
ՍԷՐ ԱՆՁՆԱԻՈՐՈՒԹԻՒՆ ՄԸ ԸԼԼԱԼՈՎ, ԱՅՍ ՊԱՐԱԳԱՆ ՊԱՐՏ ԷՐ ՉՄՈՌ-
ՆԱԼ: ՀԱՅ ԿՈՂԱԿԻՑ ՄԸ ՊԷՏՔ ԷՐ ԸՆՏՐԵՐ ԻՐԵՆ: ԲԱՅՑ, ԱՆ՝ ՍԻՐԱՀԱ-
ՐԵՑԱԻ ԱՅՍ ԳԵՐՄԱՆԱՑԻ ԱՂՋԿԱՆ»:

«ՌՈՒՐԷՆ ՍԵԼԱԿԻ գաղափարականը» Փարիզ - 1989 - էջ 14 - Յ. Զ.

Այստեղ, ձեր ուշադրութիւնը կը հրաւիրենք՝ 100 տարի իրարմէ
հեռաւորութեամբ երկու հայ անհատներու՝ օտար ամուսնութիւն
կատարած իրենց գաւակներուն մասին ունեցած արտայայտու-
թիւններուն՝

1.- 1909-թ.ին, Ռուբէն Սեւակի հայրը, որ օտարի մը սիրահարած
իր գաւկից դեմ իր գայրոյթը կը յայտնէ ըսելով՝ «Ան, ալլելու, իմ
գաւակս չէ»:

2.- Եւ այս թուականէն 100 տարիներ յետոյ ուրիշ հայ մը, Շարլ
Ազնաւուր անունով, որ Սփիւռքի մէջ «Հայոց թագաւորը» կը
նկատուի, իր գաւակներուն և թոռներուն օտարներուն հետ
ամուսնանալուն պատճառաւ, իր գոհունակութիւնը հետեւեալ
խօսքերով կ'արտայայտէ.- «Հրեայ թոռներ ունիմ, աղջիկ մը որ կէս
մաղրեպցի գաւկի մը մայր պիտի ըլլայ: Ամուսնացած եմ
բողոքականի մը հետ [շուէտացի], Առաքելական եմ, տղայ մը
ունիմ որ կէս հայիթիցի կնոջ մը հետ կ'ելլէ: Միւս տղուս ըսի, որ

Եթե չի նացիի մը հանդիպի, աշխարհի ամենէն գեղեցիկ պատկերը կը կազմուի»:

«Մարմարա» - Պոլիս - 24-9-2002 - էջ 3»

Մենք կը հաւատանք, որ հարիւր տարիներու տարբերութեամբ այս երկու հայերու արտայայտութիւններուն մէջ շատ դիւրութեամբ կրնանք տեսնել՝ «հայկականութեան» ոգիին անկումը և կործանումը:

Մինչեւ հարիւր տարիներ առաջ հայերը, իբր մեծ ազգի մը շառաւիղները և ժառանգորդները, սուրբ մասունքներու նման կը պահպանէին իրենց նախնիքներէն փոխանցուած բոլոր աւանդութիւնները և մանաւանդ՝ հոգեկան «արժեքները»:

Եթէ նոյնիսկ, բրքական բարբարոսութեան պատճառաւ, հայերէն չէին խօսեր, բայց իրենց հոգիներուն մէջ, հայկականութեան հուրը միշտ վառ էր:

Մինչդեռ այսօր հայերը, առանց բրքական եաթաղանին սպառնալիքին ենթակայ ըլլալու, պարզապէս աւելի լաւ պայմաններու մէջ ապրելու երազով, իրենց հայրենի բնօրրանը կը լքեն, և օտար հողերու վրայ, հոգիով և մարմնով հայութենէ կը հեռանան և կ'այլասերին:

Արդեօք հայ ժողովուրդը, հարիւր տարիներու ընթացքին, ինչպէ՛ս ենթարկուեցաւ այս ահռելի գաղափարական և հոգեկան անկումին:

Բնական է՝ ասոր առաջնակարգ պատճառը 1.- Մասնաւորապէս 19-րդ դարուն սկսած և 1915-ին իր գագաթնակէտին հասած բուրքերուն կատարած Եղեռնն է, որ մեր հայրենիքը քանդեց և հայութիւնը ոչնչացուց: 2.- Մեր համոզումով, երկրորդ պատճառը՝ Սովետական Միութեան մէջ Խրուշչեւով սկսած, արեւմտեան նորածեւութեամբ կեդժ «**գեմոկրատական**» շարժումն է, որ սովետական ժողովուրդներուն մէջ սպաննեց իսկական կոմունիզմի իտեալը և հաւատքը: Եւ ասոնց տեղ, սովետական ժողովուրդներուն մէջ ներմուծեց՝ եասիբութիւնը և ի գին ամէն բանի անձնական շահի դիգելու և անոր կառչելու գաղափարները: 3.- Եւ Սփիւռքի մէջ ալ, հայութեան իր աւանդական ազգային արժեքները կորսնցնելուն պատճառը, բնական է՝ նախ օտար հողին պարտադրած այլասերման օրէնքներն են:

Բայց, մեզի համար, ամենէն կարելոր պատճառը՝ Սփիւռքի մէջ, հայուն քշնամիներուն սադրիչ ծրագիրներուն հետեւանքով, հայ քաղաքական կեանքին ենթարկուած պառակտումն է:

Որուն ազդեցութեամբ՝ հայկական միացեալ հայրենասիրական նական մը չկրցանք ստեղծել:

Եւ Սփիւռքի քաղաքական կեանքին վրայ իշխեցին՝ օտարներուն ծրագիրները գործադրող կեղծ ազգայնական շարժումները, որոնց կեդրոնը [մեզի համար ցաւալի է կրկնելը] Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնն է:

* * *

Մենք, շատ անգամ կը մտածենք, թէ ինչպէ՞ս Ռուբէն Սեւակի նման հայրենասէր և ազգասէր մտաւորական մը, գերմանուհի մը սիրած և անոր հետ ամուսնացած է:

Ասոր պատճառը կը կարծենք, թէ մարդկային բոլոր զգացումներէն վեր, «սէր» ըսուած հօգօրագոյն հոգեկան զգացումն է:

Այս «սէր»ը, մանաւանդ երիտասարդական տարիներուն, ոչ մէկ օրէնքի կ'ենթարկուի, և ոչ մէկ տրամաբանութեան կանոնի կը հետեւի:

Ռուբէն Սեւակի պարագան կրնանք բացատրել միայն անոր ենթարկուած «կայծակնային սէր»ով, զոր միայն կ'զգան հոգեկան բարձր արժանիքներ ունեցող անձնաւորութիւններ:

Ռուբէնի և Ժաննիի հոգեկան կապին որ «**Բարձրագոյն սէր**» կ'որակենք, իրենց այս աննախընթաց սիրոյն բոլոր հոգեկան արտայայտութիւնները կը տեսնենք Ռուբէնի Լոզանէն գերմանիոյ Էրֆուրդ քաղաքը՝ Ժաննիին ուղարկած նամակներուն մէջ:

[Հրաշքով մը Պոլսոյ դժոխքէն փրկուած այս նամակներուն պատմութիւնը՝ ասկէ առաջ, «Նայիրի»ի մէջ, մանրամասնութիւններով հրատարակած էինք: Ռուբէն Սեւակի սիրային նամակներուն պատնէնները այսօր կը գտնուին Երեւանի Գրականութեան և Պատմութեան թանգարանը, իսկ բնագիրները՝ Նիսի Ռուբէն Սեւակի անուան Յիշատակի տան մէջ: Ֆրանսերէն լեզուով գրուած Ռուբէն Սեւակին այս նամակները արեւմտահայերէնի թարգմանեց՝ Արրահամ Ալիքեան: Եւ Ալեքսանդր Թոփչեանի խմբագրութեամբ 1996-ին Երեւանի մէջ հրատարակուեցաւ՝ Ռուբէն Սեւակ - «Երկեր» - հատոր 2 անուսով]:

Ռուբեն Սեւակի նամակը մանաւանդ, 15 Դեկտեմբեր 1909-ին Լոզանէն Էրֆուրդ՝ Ժաննիին գրուած, 8 էջոց, սիրահար զոյգին համար շատ կարեւոր և նակատագրական մտերմագիր մըն է:

Այս նամակէն յայտնի կ'ըլլայ, որ 18 տարեկան Ժաննիին փափաքն էր՝ դերասանուհի ըլլալ:

Եւ Ռուբեն Սեւակ, իր պատճառաբանութեամբ՝ բոլորովին հակառակ էր անոր դերասանուհի ըլլալու փափաքին:

Ռուբեն Սեւակի այս նամակը՝ ձեւով մը սիրային վերջնագիր էր:

Ժաննի վերջնականապէս հրաժարելու էր դերասանուհի ըլլալու փափաքէն, այլապէս՝ իրենց կապը վերջ պիտի գտներ:

Բայց, մեզի համար, այս նամակին ամէնէն կարեւոր մասը այն է, ուր Ռուբեն Սեւակ կը պատմէ, որ ինք Ժաննիին «սիրոյն համար» նախընտրած է նոյնիսկ «բաժնուիլ իր ծնողքէն»:

Ռուբեն Սեւակի Ժաննիին ուղղած իր 8 էջոց նամակին ամէն մէկ տողը՝ իսկական «կեանքի փիլիսոփայութիւն» մըն է:

Ռուբեն Սեւակ Ժաննիին ծանօթացած էր 1907-ին, Լոզանի մէջ:

Մենք, այս 15 Դեկտեմբեր 1909 թուակիր նամակին մէջ, Ռուբեն Սեւակին յայտնած գաղափարներուն հետեւելով կ'ենթադրենք, որ Ռուբեն, Ժաննիին հետ իր ծանօթանալէն 2 տարի յետոյ, այլեւս մտածել սկսած էր իրենց ապագայ կեանքին մասին: Եւ կ'ուզէր Ժաննիին երիտասարդական ցանկութիւններուն վերջ մը տալ, և զինք ուղղել դէպի իր ծրագրած կեանքին նամբան:

Եւ այդ թուականէն յետոյ գրուած նամակներէն հետեւցնելով կը տեսնենք, թէ Ժաննի բոլորովին ընդունած է Ռուբեն Սեւակին տեսակետները:

Այստեղ կը հրապարակենք Ռուբեն Սեւակի ձեռագրով 15 Դեկտեմբեր 1909-թ. նամակին առաջին և վերջին էջերը [իբր վկայութիւն], իսկ նամակին հայերէն թարգմանութիւնը՝ կու տանք ամբողջութեամբ:

Ché Tassé,

To demande un refus définitif sur
cette question :

- 1° Tassé fait preuve d'amour
- 2° Tassé fait la preuve de justice devant
- 3° Tassé fait preuve de la main tendue.

Or, veux-je garder un refus ? Or, veux-je
la trêve ?

(L'abord je te l'aurais pas le mot "trêve".
To devrais lui prouver que je te veux pas
trêve, mais que je veux autre chose !)

C'est bien moi qui j'ai l'aurait prouvé toute
ce bon parole. ? et tu ai pas avec
oublié. Au contraire, je tâche de la
réaliser. Et voilà comment !

À Champigny, on parlait avec toi, on
me donne dit lui de chez fille
et vice. Bien sûr, tu as dit aussi
que tu voulais être certain. Ce n'est pas

viens de toi, il s'adresse, il
s'adresse. Je me suis le malheur que t'
de Cassé, il te rend l'honneur
pour l'obéissance ! Et ainsi, un
recommander en Alban plus Sublime
un pays à jour d'aujourd'hui
To Trêve

Le 15 dec. 1907

Lausanne

P. S. - Sur cette dernière condition
tu peux m'offrir la copie de la
dénier, et dont la mesure se trouve
dans cette lettre (c'est fait selon). Particulier
ce cas là.

Trêve

Սիրելի ժաննի,

Դուն իմ վերջնական պատասխաններս կը խնդրես հետեւեալ հարցերուն շուրջ.

1.- Ես սիրոյ խօսք էի տուած:

2. - Խօսք էի տուած քեզի, թէ կրնաս դերասանուհի դառնալ:

3.- Խօսք էի տուած ցկեանս ծառայել քեզի:

Արդ, կ'ուզե՞մ արդեօք այս խոստումներս յարգել, թէ՞ դրժել զանոնք:

[Նախ՝ քեզի չեմ ներեր «դրժել» բառը: Պէտք է լաւ կշռադատեիր, որ ես ոչ թէ դրժել կ'ուզեմ, այլ՝ ուրիշ բան]:

Այո, ես եմ խոստացած քեզի այդ բոլորը և դեռ չեմ մոռցած: Ընդհակառակը, կը ջանամ իրագործել զանոնք: Եւ ահա, թէ ինչպէս:

Շամբերիին մէջ, զրուցելով, մենք բաւական խենթ ու արբեցուցիչ բաներ ըսինք իրարու: Ի միջի այլոց, դուն յայտնեցիր նաև, թէ կ'ուզէիր դերասանուհի դառնալ: Առաջին անգամ չէ, որ ես նման բաներ կը լսէի: Գրեթէ բոլոր տասնվեցամեայ աղջիկները խոստովանած էին ինձի, թէ կը սիրեն երազներու աշխարհը, թէ իտեալին ծառայելու, մարդկութիւնը դաստիարակելու, մարդիկը հիացնելու և դեռ չեմ գիտեր ի՞նչ խենթ ու խելառութիւններու համար կը փափաքին նուիրուիլ բեմին: Պատանութեան, նորածնութեան յատուկ խօսքեր են ասոնք: Ժամանակի ընթացքին մարդ կը մոռնայ այս բոլորը և երկրային ու անցողիկ կեանքին մէջ ընտանեկան բարեկեցիկ օջախ մը ստեղծելով կը գոհանայ...:

Կարծեցի, թէ դուն ալ պիտի մոռնաս: Այն ատեն չուզեցի քեզ վշտացնել, ուստի դեմ չգացի բաղձանքիդ, քանզի կը տեսնէի, որ շատ ջղային ես և հոգիով հիւանդ: Խնայեցի քեզի:

Ահա՛ եղած-չեղածը:

Սիրոյ երկուք ու կէս տարիներու ընթացքին դուն այլևս բերանդ չբացիր պնդելու համար, թէ կ'ուզէիր անպայման դերասանուհի դառնալ: Միակ բանը, զոր միշտ, ամէն վայրկեան և բացարձակօրէն ցանկացած ես, իմ կինս ըլլալդ է եղած:

Ճի՞շդ է, թէ ոչ:

Բայց ահա, երկու ամիսէ ի վեր, դժբախտացուցիր զիս հագար ու մէկ անգամ կրկնուած միակ նախադասութեամբ. «Կ'ուզեմ

դերասանուհի դառնալ, կ'ուզեմ դերասանուհի դառնալ, կ'ուզեմ
դերասանուհի դառնալ...»:

Այն ատեն, ես ուզեցի երրորդ խոստումս յարգել. «Ցկեանս
ծառայել քեզի»:

Ի՞նչ պէտք է ընէի քեզի ծառայելու համար: Եթէ միամտօրէն
քաջալերէի քեզ դերասանուհի դառնալու ցանկութեանդ մէջ,
մի՞նչև աւարտն օրերուդ քեզ **անդունդին** մէջ հրած պիտի ըլլայի:

Եւ ամէն ինչ ըրի գահավիժելուդ արգելք հանդիսանալու համար:

Չարութի՞ւն կը կոչես ասիկա: Կը կոչես դրժո՞ւմ:

Էհ ուրեմն, կեցցե՛ս, ժաննի՛:

Հիմա, որ բացատրեցի ամբողջ հարցը, կ'ուզեմ աւելցնել մէկ
հատիկ կէտ մըն ալ, զոր դուն կ'անգիտանաս:

Գիտես, որ ծնողքս շատ կը սիրեն զիս, և որ ես ալ ամբողջ սրտով
կը սիրեմ գիրենք: Բայց նշդիւ չես գիտեր, թէ քու պատճառովդ ի՛նչ
անցաւ-դարձաւ իմ և ծնողքիս միջև [չվշտացնելու համար սիրտդ,
երբեք չէի ուզեր խօսիլ քեզի այս մասին]: Միայն գիտցիր, որ ես
նախընտրեցի բաժնուիլ ծնողքես, քան քեզմէ...:

Բայց ահա, հիմա կը հարցնեմ ինքզինքիս. ահա աղջիկ մը, զոր
կը սիրեմ: Իր գեղեցկութեան համար չէ, որ կը սիրեմ զայն [քանզի
նանչցած եմ աւելի գեղեցիկներ, որ կը սիրէին զիս]: Չեմ սիրեր
դրամին համար [չէ՞ որ այնքան հարուստ հարսնացուներ մերժե-
ցի]: Չեմ սիրեր ազգային զգացումիս պատճառով [քանզի դուն
գերմանուհի մըն ես միայն]: Ուրեմն կը սիրեմ պարզապէս
իտեալական սիրոյ համար: Արդ, ի՞նչ կը տեսնեմ: Կը տեսնեմ, որ
այդ աղջկան պատճառով բացարձակապէս դժախտ դարձուցի
ծնողքս ու զիս: Բայց այս հանգամանքը չէր երեւեր աչքիս: Կ'ուզէի
ամէն ինչ զոհել յանուն այս սիրոյ: Հիմա կը հարցնեմ ինքզինքիս.
Ինչո՞ւ զոհեմ ծնողքս ի սէր աղջկայ մը, որ չ'ուզեր նոյնիսկ
բատերական քմայք մը զոհել ինձի համար...:

Ուրե՞մն...

Եւ յետոյ՝ դուն կը մոռնաս ուրիշ բան մըն ալ: Գրեթէ ամէն
նամակիդ մէջ կը գրէիր, թէ կարելիդ պիտի ընես երջանկացնելու
համար ծնողքս:

Դերասանուհի դառնալով կ'ուզես երջանկացնել զանոնք...:

Աւարտելու համար՝ ուշադրութիւնդ կը հրաւիրեմ ամենա-
կարեւոր կէտին վրայ: Եթէ դերասանուհի ըլլալ պնդես, կը դառնաս

աշխարհի ամենասուսեր արարածը: Քանզի ուշադրութեան չես առներ որեւէ մէկը, բացի քեզմէ: Ուշադրութեան չես առներ հարազատ ծնողքդ [քանզի շատ դժգոհ եմ], ուշադրութեան չես առներ իմ հարազատ ծնողքս [որ այդ պատճառով շատ դժբախտ պիտի գգան իրենք գիրենք], և բնաւ ուշադրութեան չես առներ զիս, որ ահա երկու ամիսէ ի վեր կ'աղաղակեմ, թէ այդ մտադրութիւնդ զիս չափազանց կը վշտացնէ...:

Կը տեսնես, որ այս պայմաններուն մէջ, **սէրը** անկարելի կը դառնայ, կատարելապէս եսասեր եակի մը հետ:

Սէրը զոհողութիւն կը պահանջէ, իսկ դուն չես ուզեր ոչինչ զոհաբերել:

Հիմա, շո՛ւտ պատասխանէ ինծի. կ'ուզե՞ս դերասանուհի ըլլալ, այո, թէ՞ ոչ:

1.- Եթէ ըսես. «Այո՛, հակառակ ամէն ինչի, կ'ուզեմ դերասանուհի ըլլալ», ինծի համար կը դառնաս ահռելի եսասեր մը, իսկ ես չեմ կրնար եսասեր աղջիկ մը սիրել:

2.- Բայց ծնողքիս և իմ մասին վերոգրեալները կարդալէդ յետոյ, եթէ լաւ մը մտածես և անմիջապէս պատասխանես ինծի. «Գրողին ծոցը թատրոնները: Ես չեմ ուզեր վատահոգի դառնալ: Իմ հետաքրքրութիւններուս պատճառով չեմ ուզեր դժբախտացնել այդքան մարդիկ: Եւ ես կ'ուզեմ միայն իմ նշանածիս **վսեմ սէրը**», այն ատեն մէկ շաբաթէն նշանածդ քովդ կ'ըլլայ, կը համբուրէ քեզ, կը ներէ քեզի այն բոլոր դժբախտութիւնները զոր պատճառեցիր իրեն, և յաւիտեանս երջանիկ կը դարձնէ քեզ: Եւ այսպիսով կը վերսկսինք սեր մը աւելի վսեմ, քան մի՞նչ և այսօր:

Գեկտ. 15, 1909

Քու Ռուբէնդ

Լոզան

Յ. Գ.- Այս վերջին պայմանով կրնաս նուիրել ինծի այն մատանին, զոր կը փափաքիս, և որուն չափը կը գտնուի այս նամակին մէջ [պզտիկ ժապաւէնը]: Սկզբնատոները՝ լատիներէն:

Ռ. Զիլինկիրեան

* * *

Ռուբէն Սեւակի Լոզանէն ժաննիին գրած նամակներէն յայտնի կ'ըլլայ, որ Ռուբէն միշտ հեռանկարը ունէր Պոլիս՝ իր ծննդավայրը վերադառնալ:

Այս նամակներուն մէջ կը տեսնենք էջեր, որոնց մէջ Ռուբէն

Սեւակ Ժաննիին հայերէնի դասեր կու տայ, և անոր հայերէն կը սորվեցնէ:

Եւ յաջորդ տարիներուն, մանաւանդ ամուսնանալէ յետոյ, Ռուբէն Ժաննիին կը յայտնէ իր Պոլիս վերադառնալու գաղափարը:

Եւ կարգ մը նամակներուն մէջ Ժաննիին համոզելու համար, Պոլսոյ մասին գովաբանական տողեր կը գրէ:

[Հակառակ, որ Ռուբէն Սեւակ շատ լաւ գիտէր, Պոլիս վերադառնալուն «ի՞նչ ըլլալը»]:

Ան Լոզանէն, 25 Ապրիլ 1912 թուականին, իր ընկերոջ՝ Հրանտ Նազարեանին հետեւեալ մարգարեական տողերը գրած էր՝

«... Ու այս բոլորին վրայ, աւելցուր նաեւ Պոլսոյ մղձաւանջը, այն հորիզոնը որ քանի մը տարիէն իմինս պիտի ըլլայ, և ուր հեռուէն կը տեսնեմ արդէն Սողոմի մուխն ու Գոմորի մեղքին բոցը...»:

Եւ Յունիս 1914-թ.ի առաջին օրերուն Ռուբէն Սեւակ, իր կնոջ՝ Ժաննիին և երկու տարու մանչ գաւկիին՝ Լեւոն-Վահագնին հետ Պոլիս կը վերադառնան:

Առաջին Աշխարհամարտէն քանի մը շաբաթ առաջ միայն: Ի՞նչ նակատագիր, ի՞նչ դժբախտութիւն:

Եւ Յունիս 1914-ին, Շամիրամ կը ծնի Պոլսոյ մէջ:

Ժաննիի համար բնաւ հանելի չէր Պոլսոյ կեանքը - օտար քաղաք էր, օտար լեզու և արեւելեան սովորութիւններ: Եւ մանաւանդ՝ վայրենի դէմքերով թուրքեր: Բայց Ժաննի կը ջանայ համակերպիլ Ռուբէն Սեւակին գծած «կեանքի ուղի»ին:

Եւ Ռուբէն Սեւակի նախատեսած Սողոմի մուխը՝ կը պատէ Հայոց աշխարհը 24 Ապրիլ 1915-ին: Քանի մը շաբաթ յետոյ, ինքն ալ կ'աքսորուի Զանդըրը-ի սպանդանոցը:

Եւ գերմանացի Ժաննի Սեւակ, իր մօրը հետ, ամուսինը փրկել կը ջանայ գերմանացիներուն նիրաններէն:

Բայց, գերմանացիներն ալ, թուրքերուն չափ, անգութ են:

Եւ Սեպտեմբերի առաջին օրերուն, Պոլսոյ մէջ, Գերմանական դեսպանատունը հէք կնոջ կը տեղեկացնէ «Ռուբէն Սեւակի Զանդըրը-է Այազ գացող նամբուն վրայ»։ Իբր թէ «աւազակներու կողմէ 26 Օգոստոս 1915-ին սպաննուած» ըլլալուն լուրը:

25 տարեկանին որբեւայրի մնացած Ժաննի Սեւակ, անյոյս և դժբախտ՝ իր երկու զաւակներուն և մօրը հետ, 16 Սեպտեմբեր 1915-ին Պոլսէն կը մեկնի Լոզան: 1915-ին Լոզանի մէջ, Ժաննիին

այլեւս 1909-թ.ին դերասանուհի ըլլալու կապոյտ երագները տեսնող աղջիկը չէ: Ճանչցած է աշխարհը Ռուբէն Սեւակի նամբով: Եւ մանաւանդ՝ նանչցած է գերմանացիները:

Եւ 27 Հոկտեմբեր 1915-ին, Լոզանէն Պոլիս, Գերմանական դեսպանատան նամակ մը կը գրէ:

Մենք կը հաւատանք, որ այս նամակը գերմանացիներուն գլխուն առկախ դամոկլեան սուր մըն է, գերմանացիները՝ հայերուն դէմ ցեղասպանութիւն գործելու ռնիրով ամբաստանող:

Եւ այս դամոկլեան սուրը, գերմանացիներուն գլխուն վրայ, մի՛շտ պիտի մնայ:

Մինչեւ որ Հայկական ցեղասպանութեան պատասխանատուները իրենց արդար պատիժը կրեն:

Ժաննի Սեւակ գերմանական հպատակութիւնը մերժելէ յետոյ, 28 Մարտ 1919-ին հայկական հպատակութեան վկայագիրը կ'ստանայ:

Եւ Հոկտեմբեր 1919-ին Փարիզ՝ Ազգային ժողովի, նախագահ Աւետիս Ահարոնեանին նամակ մը կը գրէ յայտնելով, որ մահանալէն առաջ, Ռուբէն Սեւակի վերջին փափաքը եղած է՝ **«տղաքը հայ մեծցուր»**: Եւ իր ամուսնոյն այս վերջին ցանկութիւնը իրականացնելու համար, Աւետիս Ահարոնեանէն կը խնդրէ, որ Ռուբէն Սեւակին զաւակներուն՝ Լեւոն-Վահագնի և Շամիրամի հայկական դաստիարակութիւն ստանալու կարելիութիւնը ապահովէ:

Աւետիս Ահարոնեան 29 Հոկտեմբեր 1919-ին, Ֆրանսերէն նամակով մը ժաննիին կը պատասխանէ - [տես՝ «Նայիրի»ի 26 Օգոստոս 1995 թուակիր համարը]:

Այս նամակը, Աւետիս Ահարոնեանին և ընդհանրապէս հայերուն անկարողութիւնը ապացուցանող փաստաթուղթ մըն է:

Արդիւնքը այն կ'ըլլայ, որ Լեւոն և Շամիրամ հայկական դաստիարակութիւն չեն ստանար:

Բայց ժաննի Սեւակ, «գերմարդ»ներու յատուկ կամքով մը, անկարելի բան մը իրագործեց:

Իր զաւակներուն՝ Լեւոնին և Շամիրամին հետ, երբեք գերմաներէն չխօսեցաւ և անոնք այսօր մէկ բառ գերմաներէն չեն գիտեր:

Իր փեսան, Շամիրամին ամուսինը՝ Joseph Folco մեզի, այս մասին, հետեւեալ տեղեկութիւնները տուաւ. **«Ժաննի Սեւակ մինչեւ վերջ, գերմաներէն բառ մը չարտասանեց: Հակառակ, որ ես ալ գերմաներէն գիտէի, ինծի հետ ոչ մէկ անգամ գերմաներէն խօսեցաւ:**

Բայց երբ, մահամբժժ էր Նիսի մէջ, նկատեցի, որ գերմաներէն կը գառանցէր իր մահաբունին մէջ՝ անգիտակցաբար»:

* * *


1966-ին էր. մեր Պոլիս բնակած շրջանին, երբ Փարիզ ճամբորդեցիք քանի մը օրուան համար:

Եւ այն օրերուն այցելութեան գացիք ժաննի Սեւակին:

Շատ համեստ յարկաբաժնի մը մէջ, բոլորովին միայնակ կ'ապրէր ժաննի: Այդ օր, մեր կես-կատար ֆրանսերէնով իրմէ խնդրեցիք, որ «Իբր Ռուբէն Սեւակի կ'ինը», իր յուշերը գրէ: **Եւ ըսինք թէ՝ «Այս յուշերը հայկական գրականութեան պատմութեան համար շատ կարեւոր են»:** Դեմքը, մեր խօսքերէն յետոյ, շատ տխուր երեւոյթ մը առաւ:

Յայտնի էր, որ չէր ուզեր կրկին ապրիլ այդ ողբերգական օրերը:

Ա՛յս եղաւ մեր առաջին և վերջին տեսակցութիւնը ժաննի Սեւակի հետ:



chez oncle Roapen
chère tante
j'ai la douleur de vous apprendre le décès
de ma pauvre maman, elle a enfin fini
de souffrir et jusqu'à son dernier souffle
elle a demandé le prêtre armenien pour
se rapprocher de papa Roapen.
Nous avons tout fait pour l'exhausser.
desol mais il ne lui faut plus que des
prières et le souvenir de sa famille.
C'est moi la plus malheureuse
à présent.

Je vous embrasse
à la fois (Dany)

Միրելի հօրեղբայր Գրարոս

Միրելի հօրեղբորկին.

Ցաւով կ'իմացնեմ ձեզի մահը իմ հեք մօրս: Վերջապէս դադրեցաւ ստառապելէ և մինչև վերջին շունչը խնդրեց հայ հոգեւորականի մը հաղորդը որ մօտենայ հօրս Ռուբէնի:

Ամէն ինչ ըրինք իր ցանկութիւնը գոհացնելու և զինք սփոփելու համար: Այսուհետեւ իրեն պէտք են միայն աղօթքներ և իր ընտանիքին յիշատակը: Ամէնեւ ւաւելի ես եմ դժբախտը ներկայիս:

Ուժգին կը համբուրեմ ձեզ՝

Շամիրամ

Monsieur et Madame Léon TCHILINKIRIAN-SEVAC ;
Monsieur et Madame Joseph POLCO ;
Monsieur et Madame Philippe MICHEAU ;
Et toute la famille.

Ont la douleur de vous faire part de la perte cruelle qu'ils
viennent d'éprouver en la personne de

Madame Hélène TCHILINKIRIAN

Veuve du Docteur ROUPEN-SEVAC

décédée à Nice, le 28 décembre 1967.

Selon la volonté de la défunte, les obsèques ont été célébrées en
l'église Arménienne de Nice le 30 décembre 1967.

3, rue Henri-Cordier - 06 NICE
9, rue Louis-Thiers - 69 LYON

Ընթերցողները հետևելուցին արդեն, որ վերոգրեալը տիկ. Հելլեն (Ժաննի) Չիլինկիրեանի («Sopp. Ռուբէն Սեւակի այրին») ֆրանսերէն մահազոյն է:

Ուշադրութեան կը յանձնենք յատկապէս մահազոյին վերջին գեր-յուզիչ և խորիմաստ տողերուն քարգմանութիւնը.

«Հանգուցեային փափաքին համաձայն, յուղարկաւորութեան արարողութիւնը կատարուեցաւ Նիսի հայկական եկեղեցիին մէջ, 30 Դեկտեմբեր 1967-թին»:

Եւ Պոլսոյ մէջ, Յունուար 1968-ի առաջին օրերուն, Շամիրամ Սեւակին կողմէ Նիսէն գրուած բացիկ մը ստացանք:

Որուն մէջ ան, մեր հօր կը տեղեկացներ իր մօրը՝ Ժաննի Սեւակին մահը՝ 28 Դեկտեմբեր 1967-ին, Nice-ի մէջ:

Եւ Ժաննի Սեւակին փափաքովը, յուղարկաւորութիւնը կատարուած էր Նիսի հայկական Սուրբ Աստուածածին եկեղեցիին մէջ՝ 30 Դեկտեմբեր 1967-ին:

Ռուբէն Սեւակ բրբանալը մերժեց՝ և բաջաբար դէպի նահատակութիւն գնաց: Գերմանուհի Ժաննի Սեւակ գերմանական հպատակութիւնը մերժեց՝ և հայաբար ապրեցաւ ու որպէս հայ բաղուեցաւ: Գերմանուհին՝ հայացաւ: Մերօրեայ շատ հայեր՝ կ'օտարանան: Ի՛նչ ցաւալի երեւոյթ...:

**ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐԵԱՆԻ «ԻՄ ՄԱՀԸ» ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԱՆ
ՄԻՏՏ ԲԱՆԻՒՆ ՀԵՏԵՒՈՂՈՒԹԵԱՄԲ**

**ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԻՆՉԵՒ ԱՅՍՕՐ ԳՈՅԱՏԵՒՄԱՆ ՄԵՋԻ
ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԱԾ ԻՄԱՍՏԸ**

ԵՐԲ ԿԸ ՄՏԱԲԵՐԵՆՔ ԱՅՍ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՍԻՈՆԻՍՏՆԵՐՈՒՆ ԱԼ
ՆԵՐՇՆՉՈՒՄՈՎ, 1890-ԷՆ ՅԵՏՈՑ, «ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆ» ՊԵՏԱԿՈՎ ՎԵՐԱ-
ԿԱԶՄՈՒԱԾ ԹՈՒԱԿԱՆԷՆ ՄԻՆՉԵՒ ԱՅՍՕՐ, ՀԱՅ ԱԶԳԻՆ ՊԱՏՃԱՌԱԾ
ՎՆԱՍՆԵՐԸ, ՄԵՐ ՎՐԴՈՎԸ ԶԱՓ ՈՒ ՍԱՀՄԱՆ ԶՈՒՆԵՆԱՐ:

ԵՒ ԻՐԲ «ԱՅՐԱԾ ՄՐՏԻ ՄԻԽԹԱՐԱՆՔ» ՀԵԳՆԱՆՔՈՎ ԿՂՍԵՆՔ ԹԷ՝
ԱՆՈՐ ՂԵԿԱՎԱՐՆԵՐՈՒՆ ԱՆՑԵԱԼԻ ՀԱՅԱՎՆԱՍ ՈՐՈՇ ԳՈՐԾՈՒՆԷՈՒ-
ԹԵԱՆՑ ԴԵՌ ՄԻՆՉԵՒ ԱՅՍՕՐ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻԼԸ, ՄԷԿ ՏԵՍԱԿԷՏՈՎ
ՄԻԱՅՆ ԼԱՒ ՆՇԱՆ Է՝ ԱՅՍ ԿՂՍԱԿՑՈՒՑԱՆԷ ԹԷ, ԱՐԵՒՄՏԱ-ՍԻՈՆԻՍՏ-
ՆԵՐԸ, ԴԵՌ ՀԱՅ ԱԶԳԸ ՎԵՐՋՆԱԿԱՆԱՊԷՍ ԶԵՆ ԿՐՑԱԾ ՔԱՅՔԱՅԵԼ:

ԵՒ ԱՆՈՆՔ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԵՆ. [ԱՌԱՋԻՆ ՕՐԷՆ ԸՐԱԾՆՈՒՆ ՆՄԱՆ]
ՄԻՆՉԵՒ ԱՅՍՕՐ, ԹԻԿՈՒՆՔ ԿԱՆԳՆԻԼ ԱՅՍ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՈՐՈՇ
ՂԵԿԱՎԱՐՆԵՐՈՒՆ: ԵՐԲ ԱՅՍ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԲՈԼՈՐՈՎԻՆ ԴԱԴՐԻ ԻՐ
ԴԵՐԱԿԱՏԱՐՈՒԹԵՆԷՆ ԱՅՄ ԴՃԲԱԽՏԱԲԱՐ ԸՍԵԼ Է, ԹԷ ԱՐԵՒՄՈՒՏՔՆ
ՈՒ ՍԻՈՆԻՉՄԸ ԹԱՋՈՂԱԾ ԵՆ ՀԱՅ ԱԶԳԻՆ «ՀԱՇԻԻԸ» ԸՆԴՄԻՇՏ
«ՏԵՍՆԵԼ»:

ԵՒ ԱՅՆ ՕՐԷՆ ՅԵՏՈՑ, ԵՐԲ ՍԻՈՆԻՍՏՆԵՐԸ ԿԸ ԴԱԴՐԵՑՆԵՆ ԻՐԵՆՑ
ՋՕՐԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԱՅՍ ՂԵԿԱՎԱՐՆԵՐՈՒՆ. «Ա՛Հ, ԱՅՆ ԱՏԵՆ», «ԿԸ
ՄԵՌՆԻ» ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ:

Մանաւանդ, 1 Յուլուար 2003 թուակիր «Նայիրի»ի բացառիկէն
սկսեալ մինչեւ 4 Նոյեմբեր 2003 - «Նայիրի»ի 2006 թիւը՝ գրեթէ
ամբողջ տարուան մը ընթացքին, ջանացինք, հայագիւն մեծագոյն
աղէտին խորհրդանիշը եղող 24 Ապրիլ 1915-ի մասին, շատերուն
անծանօթ իրականութիւնները հրապարակել:

Այս գրութիւնները կարդացողները թերեւս կը յիշեն, թէ՛ մաս-
նաւորապէս ծանրացած էինք Գրիգորիս Վարդապետ Պալաքեանի

«Հայ Գողգոթան» գիրքին վրայ, որ սուտերով, սխալներով և ինքնագովուրթիւններով լեցուն գիրք մըն է:

Եւ դժբախտաբար այս «Հայ Գողգոթան» գիրքն է, որ դաշնակցականները տարածած են ամէն կողմ՝ իբր ամենավաւերական և միակ աղբիւրը՝ 24 Ապրիլ 1915-ի Եղեռնին:

Որովհետեւ Պալաքեան Վարդապետը [յետոյ եպիսկոպոս] այս կուսակցութեան համակիր կրօնական մըն էր, և թունդ թշնամի՝ Սովետական Հայաստանին:

2003 թուականին «Նայիրի»ի մէջի մեր գրութիւններով արտայայտուած էինք Պալաքեանին գիրքին մէջի սխալ վկայութիւններուն և մասնաւորապէս՝ Ռուբէն Սեւակի դէմ, նախանձ տարուելով, կատարած չարափոխութիւններուն մասին:

Յետոյ Պալաքեան, նակատագրի բերմամբ [և կամ դիպուածով], Մարսիլիոյ մէջ ենթարկուած էր հայրենասէրներու ընդդիմութեան և մասնաւորապէս՝ Ռուբէն Սեւակի ընկերոջ՝ հայրենասէր Ենովք Արմէնին իրեն դէմ տարած պայքարին:

Եւ Մարսիլիոյ հայրենասէրներու հակազդեցութեամբ. Պալաքեան հեռացուած և, ձեւով մըն ալ՝ պատժուած էր, իր հակասովետական և դաշնակցութեան համակիր կեցուածքին պատճառաւ:

Վերջերս ստացանք մեր բարեկամներէն մէկուն կողմէ ուղարկուած գրութիւն մը, որ Պալաքեանի դէմ մեր կատարած քննադատութիւնները կը հաստատէ:

Այս գրութիւնը՝ 14 Դեկտեմբեր 1928-ին, Սուրբ Էջմիածինէն Խորէն Արքեպս. Մուրատբեգեանին կողմէ [ապագային կաթողիկոս] գրուած նամակ մըն է, ուղղուած Թորգոմ Եպիսկոպոս Գուշակեանին [յետագային Երուսաղէմի Պատրիարք]:

Այս նամակը իսկական ամբաստանագիր մըն է՝ Պալաքեանին անհեռատես և հայավնաս գործունէութեան մասին:

Այստեղ կը հրատարակենք, այս շատ կարեւոր նամակէն՝ միայն Պալաքեանի մասին գրուածները.

**Գերաշնորհ եւ սիրելի
Թորգոմ Սրբազան**

14 Դեկտ. 1928
Սուրբ Էջմիածին

Ձեր գլխաւոր գործերը լինելու են,

1.- Եւրոպայի թեմի կազմակերպութեան խնդիրը: Այդ գործը,

որքան անկազմակերպ էր Պալաքեան Եպիսկոպոսի նշանակման ժամանակ, այնքան անկազմակերպ և խառնիճադանն վիճակի է հասած հեկնց նոյն Պալաքեան Սրբազանի անհեռատես և սխալ գործունեութեան շնորհիւ:

2.- Օրիենտացիայի խնդիրը ձեզ յայտնի է, որ էջմիածինը բարեացակամ վերաբերմունք ունի հանդէպ մեր կառավարութիւնը, որի շինարար գործունեութիւնը և հանդէպ գաղթականութիւնը ցոյց տուած խնամքը ակներբւ է:

Դժբախտաբար Պալաքեան Սրբազանը որոշ սայթաքումներ էր ունենում, որոնք թեւ հերքում էին նրա կողմից, բայց այնուամենայնիւ, լուրջ դժգոհութեանց առիթ էին ծառայում և անդրադառնում էջմիածնի վրայ:

4.- Կայ և մի խնդիր, որ յարուցել է ներսէս Կիւլպէնկեանը Լոնդոնի եկեղեցու մասին, որը երբևէ չենք ուղարկելու ձեզ, որովհետեւ ոչ մի ցանկութիւն չունինք վշտացնելու Գալուստ Կիւլպէնկեանին, որի իրաւունքների դէմ ուղղուած է այդ խնդիրը:

Ընդհակառակն մեզ շատ մեծ վիշտ պատճառեց Պալաքեանի «անտակտ» վերաբերմունքը հանդէպ Գալուստ Կիւլպէնկեանի, որից չափազանց վշտացել էր վերջինը:

Եղբայրական սիրոյ մղձոյններով

Խոնարհ աղօթակից՝

ԽՈՐՀՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ


* * *

Դժբախտաբար, այս եսասէր, մեծամոլ և նախանձ կրօնականին՝ Պալաքեանին 24 Ապրիլ 1915-ի մասին գրած «Հայ Գողգոթան» գիրքը, կը շարունակէ իր սխալ տեղեկութիւնները տարածել թէ՛ Հայաստանի և թէ՛ մանաւանդ, Սփիւռքի մէջ՝ իբր միակ աղբիւր 1915-ի հայկական Եղեռնին:

Այս գիրքը վերջերս հրատարակուեցաւ նաեւ թարգմանաբար ֆրանսերէնով՝ նոյն սխալներով և նոյն սուտերով:

Բայց, մեզի խոր ցաւ պատճառեց, ուրիշ պարագայ մը, որ շատ աւելի զգուեցնող և աններելի է: Ջանանք բացատրել:

1997-ին Նիւ Եորք-ի մէջ հրատարակուեցաւ Peter Balakian անունով անձնաւորութեան կողմէ [որ հեռաւոր ազգականն է Գրիգորիս եպս. Պալաքեանին] հայկական Եղեռնի մասին գիրք մը,



ԱՆՅՈՐԴԻ ՏՊԱԽՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՅՏՆԱԿԱՆ ԲՈՒՄ ԵՎ ԳՐԱԴԻ ԱՅՏՆՈՒՄ
 ԼՊՐԱՆՆԵՐՈՒՄ ԵՎ ԳՐԱԿՆՆԵՐՈՒՄ

ՊԵՏԱԿԱՆ ԼՊԱՄՈՒԿԱՆ

ՏՐԱՔ - Զ. ՅՈՒՆԱՆՅԱՆԻ ԱՊՏԱՆՈՒ
 ԳՐԱԿԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ներքին

ՔԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1994

ՆԻՔ ԵՐԵՎԱՆ

«Տասնրեքի մարդասպաններ հինգ անձեզ ու ան-
 զնի ճամբարներու դէմ: Ի՞նչ մեծ անվաստահաւթիւն
 իրենց սփրայրքի հեղինակութեան:

Իսկ մերկայնելու վարձի մը դէմ Սեւակ կ'ըմ-
 քատանայ իսկ վարսժան, ստոյիկեան իմաստունի
 մը պէս համակերպող սգիով մը կը հնայանդի:

Հինգն ալ հաւասար իտղխաշուճներու կ'ենթար-
 կուին, կ'անսրգուին: Եւ ի վերջոյ մարդկային բմ-
 բանումի կարողութենէն շատ վեր, անխոր վայրա-
 դութիւններով կ'սպաննուին»:

անգլերեն լեզուով, որուն անունն է "Black dog of fate" - [Ճակատագրի սեւ շունը]:

Այս գիրքը, որ մասամբ ալ Փիթըր Պալաքեան-ին մեծ մօր պատմածներուն վրայ յենելով գրի առնուած Եղեռնի տարիներուն մէկ հանգրուանին տխուր պատմութիւնն է, շատ մեծ յաջողութիւն ունեցաւ ԱՄՆ-ի մէջ և ամերիկեան բնորոշումով "Best Seller" կոչուած գիրքերու շարքին դասելու արժանացաւ: Այսինքն՝ «ամէնէն շատ ծախուած գիրք»երէն մէկը եղաւ: Բնական է՝ բոլոր հայերուն համար ուրախութիւն էր, հայու մը Եղեռնի մասին գրած գիրքին Ամերիկայի մէջ յաջողութիւն գտած ըլլալը:

Այս գիրքը հայերէնի ալ թարգմանուեցաւ և 2002-ին Հայաստանի մէջ հրատարակուեցաւ «Ճակատագրի սեւ շունը» անունով:

Եւ 2003-ին Փիթըր Պալաքեան հրատարակեց ուրիշ գիրք մը՝ Նիւ Եորքի մէջ, կրկին անգլերէնով՝ "The Burning Tigris" վերտառութեամբ՝ «Այրող Տիգրիսը»:

Փ. Պալաքեանի այս գիրքը, բոլորովին ուրիշ հանգամանք ունի, իր «Ճակատագրի սեւ շունը» գիրքէն, որ աւելի իր ընտանիքին պատմութիւնն էր՝ վեպի վերածուած:

Մինչդեռ "The Burning Tigris"ը [Այրող Տիգրիս]ը պատմութեան գիրքի մը կառոյցը ունի: Մեր գաղափարը յայտնենք հիմա. առանց մեր բառերը ծամծմելու, այս գիրքի մասին:

Այս գիրքը, իրականութեան մէջ, ամերիկեան քարոզչութեան մէկ արտադրութիւնն է:

Ալ ինչե՛ր ըրեր է Ամերիկան՝ 1915-ին, հայերը ազատելու համար, ինչե՛ր:

Մանաւանդ՝ Պոլսոյ Ամերիկեան դեսպան հրեայ Մորկենթաուն, ի՛նչ աշխատանք տարեր է հայերուն ի նպաստ, ինչե՛ր ըրեր է:

Բայց, իսկապէս, ի՞նչ ըրած է Մորկենթաուն Պոլսոյ մէջ... քանի մը տեղեկագիր դրկելէ գատ, հայոց վիճակի մասին, և քանի մը բողոքական պատուելի ազատելէ բացի:

Եւ այս ա՛յն Մորկենթաուն էր, որ Հայկական Եղեռնին, Թալաքին մեղսակից Գերմանիոյ Պոլսոյ դեսպան Վանկէնհայմին ամենամտերիմ բարեկամը եղաւ:

Վանկէնհայմ և Մորկենթաուն՝ հայոց Եղեռնի ենթարկուած օրերուն, Պոլսոյ «Այագաղա» կոչուած պուրակը գտնուող

գերմանական ազարակի մէջ, ձիով պտոյտներ կը կատարէին և կը գուարնանային:

Եւ հայկական «Գնա՛ մեռիր, եկուր սիրեմ»-ի ասացուածքով՝ 1915-էն յետոյ, այս հրեայ դեսպան Մորկենթաուն՝ [իբր քե հայասերի վերածուած] գիրք մը հրատարակեց Հայկական Եղեռնին մասին:

Եւ նոյնպէս՝ ամերիկեան բարեսէր կազմակերպութիւնները իրենց օգնութեան ձեռքը երկարեցին եղեռնէն վերապրած տառապող հայերուն [նոյն՝ գնա՛ մեռիր, եկուր սիրեմ]ի մտածումով: Եւ այդ հայերուն մեծ մասը Ամերիկա ուղարկեցին, իրականութեան մէջ հայերը՝ իրենց հայրենիքէն պարպելու և հեռացնելու սինդիստական ծրագիրը գործադրեցին, ինչ որ, մինչեւ այսօր, կը շարունակեն Հայաստանի մէջ՝ ամենայն դիւրութեամբ «վիզա» տալով Ամերիկա գաղթել ուզող հայերուն:

* * *

Փիթըր Պալաքեան-ի "The Burning Tigris" գիրքին մէջ մեզի համար շատ կարեւոր ուրիշ պարագայ մը կայ: Իր այս նոր գիրքին մէջ, հեղինակը իր հեռաւոր ազգականին՝ Գրիգորիս Եպիս. Պալաքեանին «Հայ Գողգոթան» գիրքէն շատ մը հատուածներ, գրեթէ նոյնութեամբ, արտագրած է: Մանաւանդ՝ Սրբազանին Ռուբէն Սեւակի նահատակութեան մասին յօրինած սուտերը՝ որոնք նոյնութեամբ հրատարակուած են:

Այստեղ լոյս կ'ընծայենք Փ. Պալաքեանի "The Burning Tigris" գիրքին 215 էջին մէջ Ռուբէն Սեւակի նահատակութեան մասին անգլերէնով գրուած անիրաւ, անիփղն և սուտ վերագրումները.

The chetes then took the five Armenians to a nearby creek, undressed them, and folded up their clothing for themselves. Then «they began to stab them to death, slashing their arms and legs and genitals, and ripping apart their bodies». Only the thirty three year-old Daniel Varoujan tried to defend himself, and this provoked the killers further; they not only «tore out his entrails, bur dug out the eyes of this great Armenian poet». The killers then divided the pillage among themselves, taking more than 450 Ottoman gold pieces that were sewn into the clothing of Dr. Chillingierian and Onnig Maghazadjian. They paid of the police, and after dividing up the belongings, left in the carriages.

ՄԵԶԲԵՐՈՒՄԻՆ ԻՄԱՍՏԱՅԻՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆԸ

Ձեթէները հինգ հայերը տարին մօտի ձորակը, մերկացուցին զանոնք որ անոնց զգեստներուն տիրանան: Յետոյ սկսան մահուան գործողութեան: Քաշեցին իրենց դանակները և կտրտեցին անոնց ձեռքերը, սրունքներն ու սեռային անդամները և ծակծկեցին մարմինները: Միայն 33 տարու Դանիէլ Վարուժանը փորձելով դիմադրել, մարդասպաններուն, անոնց կատաղութիւնը հրահրեց: Չգոհացան անոր փորոտիքը դուրս թափելով, փորեցին նաեւ այս մեծ բանաստեղծին աչքերը: Յետոյ, ռերագործները սկսան իրենց միջեւ բաժնել աւարը: Աւելի քան 450 օսմանեան ոսկեդրամ գտան տօքթ. Չիլինկիրեանի և Օննիկ Մաղազանեանի հագուստներուն ծալքերէն: Վհարեցին ոստիկանին և կառապանին ու համբու դրին զանոնք:

* * *

Ձեք կրնար երեւակայել, թէ մեզի ի՛նչ աստիճանի ցաւ կը պատճառէ՝ թրքանալը մերժելով դեպի նահատակութեան գացած Ռուբէն Սեւակի սուրբ յիշատակին դէմ շարունակուող այս անարդար և թրքավայել, սուտ վերագրումները:

2003-ին, «Նայիրի»ի մէջ, փաստաթուղթերով երկարօրէն գրեցինք, թէ սուտ էր, նախանձէ մղուած անոպայի մը բարբաջանքներ էին Գ. Պալաքեանին յօրինածները:

Եւ հրատարակած էինք նաեւ, Նիւ Եորքի մէջ 1924-ին լոյս տեսած բժիշկ Ս. Զարեանդին գիրքին մէջ գրուածները.

Միայն Ռուբէն Սեւակը ընդդիմացած է սպանութեան պահուն, իսկ Գանիէլ Վարուժան, ստոյիկեան իմաստունի մը պէս համակերպող ոգիով, կը հնազանդի» «տես «Նայիրի» 25 Մարտ 2003»:

* * *

Փիթըր Պալաքեան իր գիրքին մէջ, Պալաքեան եպս.ին «Հայ Գողգոթան» գիրքէն արտագրելով կ'ըսէ.

«Բժիշկ Զիլինկիրեանին և Օննիկ Մաղազանեանին հագուստներուն մէջէն 450 օսմանական ոսկի գտնուած է»:

«Նայիրի»ի 20 Մայիս 2003-թիւին մէջ, ստախօս և նախանձ Պալաքեանին Ռուբէն Սեւակը հարիւրաւոր ոսկեդրամ ունեցող հարուստ մը ներկայացնելուն անհեթեթ վերագրում մը ըլլալը, անհերքելի փաստերով ապացուցած էինք:

Այստեղ, առաջին անգամ ըլլալով հրապարակենք, գերմանական փաստաթուղթ մը, որ կը վկայէ, թէ Ռուբէն Սեւակի գերմանացի կնոջ՝ Ժաննի Սեւակին Պոլսոյ Գերմանական դեսպանատան մօտ տարած անվերջ դիմումներուն ստիպողութեան տակ, գերմանացիները թուրքերէն պահանջած էին Ռուբէն Սեւակը սպաննողներուն ձերբակալումը և Ռուբէն Սեւակի վրայէն գողցուած թողօններուն վերադարձուիլը:

Այստեղ կը հրատարակենք Պոլսոյ Գերմանական դեսպանատունէն, թուրքերէն առնուած տեղեկութիւններուն հիման վրայ, Ռ. Սեւակի կնոջ Ժաննի Սեւակի Լոզանի տան հասցէին դրկուած և 21-9-1915 թուակիր նամակը, որուն մէջ կայ նահատակ Ռուբէն Սեւակի պատկանած իրերու ցանկը:

Ահա՛ Գերմանական դեսպանատան դրկած փաստաթուղթը: Եւ

1. Spinnung, jenseit der ungarischen Grenze vor Kaposvár
I. A. 16. Juli 1910 eingekauft;
2. gelbeser Brägelung, mit Kinn; auf dem
Kinn R. T. i
3. ein kleiner Kammfestschubring, unregelmäßig
mit Schwanzhaare;
4. Schwanzhaare, unregelmäßig 10 Pfund;
5. ein gewöhnliches, unregelmäßiges Kamm, mit der Kante
einer Kammfestschubring;

früher: unregelmäßige Festschubringe, mit
Schwanzhaare, unregelmäßig 10 Pfund.
(Kammfestschubring: Kammfestschubring) Kammfestschubring.

? hat ein.

einige Lila dieser Größe mit der Größe der Lila
in unregelmäßigen (mit weißer Kante, keine Kante)
siehe in der 20. unregelmäßig bei Kaposvár abge-
geben, die von unregelmäßig eingekauft und Kammfestschubring
von Kinn, Kammfestschubring hat die Kammfestschubring & Kammfestschubring?
die Kammfestschubring, mit der Kammfestschubring für Kammfestschubring
siehe, in Kammfestschubring unregelmäßig; die Kammfestschubring
20. ein Kammfestschubring (Kammfestschubring in Kammfestschubring
unregelmäßig), mit Kinn (Kinn) Kammfestschubring
siehe, -

BTK97 2 (21)

նաեւ, այս գերմանական վաստաթուղթը՝ փրօֆ. Վահագն Տատրեան կողմէ վերծանուած

ZU 7734-ով նշանակուած եւ B - TK 97 2 թուանշանով կնքուած Պոլսոյ Գերմանական դեսպանատան տեղեկագրին՝ հայերէն թարգմանութիւնը

Տիկին *Apell* և իր աղջիկը, անոր զաւակներուն հետ 16 Սեպտեմբեր [1915]-ին Գերմանիա մեկնեցան: [Իրականութեան մէջ՝ Ջուիցերիոյ Լոզան քաղաքը գացին]:

Նկատելով, որ մինչեւ այսօր հակառակը չէ լսուած, կերելի, թէ առանց դժուարութեան սահմանը անցած են:

15 Սեպտեմբեր [1915]-ին, տիկին Ժ. Չիլինկիրեանին տեղեկացուցի իր ամուսնին ճակատագրին մասին թրքական Ներքին նախարարութեան տուած լուրերը:

Տիկին Ժ. Չիլինկիրեան այս կացութեան առջեւ խնդրեց, որ իր ամուսնին վրայէն գտնուած [նահատակուելէն յետոյ] հետեւեալ առարկաները իրեն վերադարձուին.

1.- Ամուսնութեան մատանի մը, մէջի կողմը *I. A. (Janni Apell)* 16 Յուլիս 1910 փորագրուած:

2.- Ոսկի (*chevalier*) մատանի մը զարդաքարով՝ վրան *R. T.* տառերը (*Roupen Tchilinguirian*):

3.- Ջոյգ մը ոսկի թելնոց՝ վրան զմրուխտով:

4.- Հնչուն դրամ, նուազագոյն 10 (օսմանեան) ոսկի:

5.- Մոխրագոյն, նորածել ճամբորդական պայուսակ մը (*valise*), գերմանական *Erfurt*-ի գործարանի մը վաճառանիշով:

Ասոնցմէ գատ՝ բժշկական գործիքներ և տարբեր առարկաներ [սեւ հագուստ մը, և ճամբորդական անկողին մը, եւայլն]:

Այս առարկաներուն մէկ ցանկը [դժբախտաբար թրքերէնով, 20 Սեպտեմբեր [1915]-ին Իսմայիլ պէյ Ճանպուլաթին յանձնեցի:

Տիկին Արէլին և իր աղջկան Պոլիս ձգած ապրանքները պահուած են:

Ասկէ առաջ տիկին Արէլ-ին ինծի տուած մեղանի ամանը՝ պարոն *Schkorbel*-ին դրկեցի:

Այս տեղեկութիւնները նամակով մը, տիկին *Apell*-ի հասցէին ուղարկուած են.-

Lausanne signal villa mont-tendre (suisse)

[Արխիւային կնիք *BTK 97 2*]

Ինչպէս որ կը տեսնէք՝ այս գերմանական փաստաթուղթին մէջ, նահատակ Ռուբէն Սեւակին բողոքներուն ցանկը նշուած է:

Փաստաթուղթին 4-րդ կէտին մէջ գրուած է թէ՝

4.- Bar geld. minoestens 10 peund.

«4.- Հնչուն դրամ-նուագագոյն 10 [օսմանեան] ոսկի»:

Ահա Ռուբէն Սեւակին ամբողջ հարստութիւնը. գերմանական փաստաթուղթով:

«10 օսմանեան ոսկի»:

Չենք գիտեր, թէ ինչպէ՞ս պետք է մեկնաբանել Գրիգոր Պալաքեանին նահատակ Ռուբէն Սեւակին դէմ կատարած սրբապղծութիւնները:

Արդեօ՞ք միայն նախանձով կամ վատ նկարագիր ունենալով կարելի է բացատրել Գրիգորիս Պալաքեանին, կրօնականի մը համար անվայել, անհաւատալի այս կեցուածքը:

Մենք կը յուսանք, որ այս մասին. արդար վնիռ մը պիտի տան ապագայի խղճամիտ հայ պատմագէտները:

* * *

Մեր ստացած տեղեկութիւններուն համեմատ՝ այս մեծապատիւ Փիթըր Պալաքեանը բնաւ հայերէն չի գիտեր: Եւ իր հեռաւոր ազգականին՝ Գրիգորիս Պալաքեանին գրած «Հայ Գողգոթան» գիրքը կարդացած է՝ հայու մը կողմէ անգլերէնի թարգմանուած ձեռագիրներէն, որովհետեւ «Հայ Գողգոթան» դեռ անգլերէն գիրք ըլլալով չէ հրատարակուած: Չեռագիր կը մնայ:

Բայց, մեզի համար, շատ հետաքրքրական եղաւ. «Հայ Գողգոթան» հայերէնէ անգլերէնի թարգմանողին ով ըլլալը գիտնալը:

Եւ կրկին մեր սիրտը ցաւով պրկուեցաւ: Որովհետեւ «Հայ Գողգոթան» անգլերէնի թարգմանողը և Պալաքեանին այս գիրքին մէջի Ռուբէն Սեւակին դէմ յօրինուած սուտերը իր թարգմանութեան մէջ նոյնութեամբ նշողը՝ Aris G. Sevag անունը կրող անձ մըն է:

Այսինքն՝ Ռուբէն Սեւակին անունը անիրաւաբար գործածող անձ մը՝ որ նահատակ Ռուբէն Սեւակին սուրբ յիշատակը կը սրբապղծէ նոյնութեամբ թարգմանելով Գրիգոր Պալաքեանին սուտերը, որ հրատարակուեցան Փիթըր Պալաքեանի "The Burning Tigris" գիրքին մէջ:

Եւ Փիթըր Պալաքեանի "The Burning Tigris" գիրքը, Ամերիկայի մէջ, կրկին "best seller" եղած է:

Այսինքն Գրիգոր Պալաքեանին Ռուբէն Սեւակի դէմ սուտ վերագրումները, ուրիշ Պալաքեանի մը գիրքով, ամբողջ աշխարհին կը տարածուի:

* * *

Ռուբէն Սեւակ նահատակուեցաւ 26 Օգոստոս 1915-ին, թուրք մարդասպաններու ձեռքով, Չանղըրը-ի մէջ:

Ռուբէն Սեւակ մեռաւ, չփոխելու համար իր անունը:

Բայց հայերը, ամէն օր, կը մեռցնեն Ռուբէն Սեւակը՝ սրբապղծելով անոր անունը:

Ազգ մը իր հերոսներով կ'ապրի:

Ազգ մը, որ հերոսներ չունի, ապրելու իրաւունք չունի:

Ազգ մը, որ իր հերոսները կը մոռնայ, ինքն ալ մեռնելու դատապարտուած է:

Ո՞վ ԲԵՐ ԵՆ, 24 ԱՊՐԻԼ 1915-Ի ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱ-
ՆՈՒԹԵԱՆ ԲՈՒՆ ԹԱՆՑԱՊԱՐՏՆԵՐՈՒՆ ՄԻՆԶԵԻ ԱՅՍՕՐ ԱՆ-
ՊԱՏԻԺ ՄՆԱԼՆՈՒՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ...

... ԱՆՈՆՑ ԾԱՐԲԻՆ ԵՆ ԴԱՇՆԱԿ ՈՐՈՇ ՂԵԿԱՎԱՐՆԵՐ,
ՈՐՈՆՔ ԳՈՐԾԱԿՑԵՑԱՆ ՍԻՈՆԻՍՏՆԵՐՈՒՆ ՀԵՏ:

ՈՐՈՎՀԵՏԵԻ, 1915-Ի ԵՂԵՌՆԻ ՕՐԵՐԷՆ ՍԿՍԵԱԼ, ԱՐԴԷՆ
«ԱՄԲՈՂՋ ԱՇԽԱՐՀ» ԳԻՏԷՐ, ՈՐ 1915-Ի ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱ-
ՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԲՈՒՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ՝ ԳԵՐՄԱՆԱՑԻ-
ՆԵՐՆ ԵՆ:

ԵՒ 1915-Թ.ԻՆ ԳԵՐՄԱՆԻՈՑ ՄԷՋ, ԲՈՒՆ ԻՇԽԱՆԱԻՈՐՆԵՐԸ
ՍԻՈՆԻՍՏՆԵՐՆ ԷՒՆ:

1915-թ.ի Եղեռնէն անմիջապէս ետք, Եւրոպայի մէջ հրատարա-
կուած գիրքերը Հայկական ցեղասպանութեան մասին, զարհուրելի
տեղեկութիւններ կը հաղորդէին, որոնց մէջ այս ահռելի ռեժի-
մներուն բուն պատասխանատուներուն գերմանացիները ըլլալը
փաստերով նշուած էր:

Այս հրատարակութիւններէն քանի մը հատը նշելու ջանանք.
Անգլիոյ մէջ՝ 1.- 1915-ին - *Arnol Toynbee - "Armenian atrocities. The
murder of a nation"*. 2.- 1915-1916-ին - *Viscount Bryce - "The treatment
of the Armenians in the Ottoman empire"*.

3.- *Ֆրանսայի մէջ՝ 1916-ին: Renépinon. "La suppression des Ar-
meniens. Methode allemande, travail turc"*.

1915-թ.ի Եղեռնէն յետոյ, մեր արեւմտամէտ դաշնակցական դե-
կավարները շատ լաւ գիտէին, իրենք ալ, այս իրականութիւնները,
և տեղեկ էին այս գիրքերուն մէջ գրուածներուն:

Այստեղ կ'ուզենք կրկին նշել՝ 1915-ի Հայկական ցեղա-
սպանութեան մէջ գերմանական պատասխանատուութեան մասին,

նույնիսկ գերմանացիի մը կողմէ կատարուած խոստովանութիւնը:

Այս խոստովանութիւնը կատարուած է 3-6-1921-ին, Պերլինի մէջ, Սողոմոն Թեհլիրեանի դատավարութեան ընթացքին, պաշտպան փաստաբաններէն Dr. Niémeyer-ի կողմէ: Ահա՛ւսիկ.-

«Թույլատրեցէք ինձի, որ նետելեալ խօսքը ըսեմ: Պատերազմի ընթացքին Թուրքիոյ մէջ, հայերուն դէմ կատարուած խժդժութիւններուն միջոցին, գերմանացիները լռեցին:

Անշուշտ, որոշ չափերով, անոնք ջանացին կեցնել ջարդերը [Սուտ է: Այդ օրերուն, օսմանեան հողերուն բուն իշխանաւորները եղող գերման դեկավարները, ոչ մէկ բան ըրին հայերը ազատելու համար - **Յ. Զ.]: Բայց բուրքերը, այս մասին սապէս կ'ըսեն. «Անկարելի էր, որ այս բաները կատարուէին առանց գերմանացիներուն համաձայնութեան: Որովհետեւ գերմանացիները շատ զօրաւոր են»:** Ուրեմն ամէն կողմ, մեզ՝ գերմանացիներս պատասխանատու կը նկատեն հայկական ջարդերուն համար: Եւ շատ մեծ թիւով հրատարակութիւններ կան Ամերիկայի, Ֆրանսայի և Արեւելքի մէջ, որոնք կ'ակնարկեն ըսելով՝ «Գերմանացիներն էին իրական թալաթները Թուրքիոյ մէջ»:

* * *

«Գերմանացիներն էին իրական թալաթները Թուրքիոյ մէջ»

Այստեղ ձեր ուշադրութիւնը պիտի հրաւիրենք մասնաւորապէս վերը նշուած 1915-թ.ի հայկական եղեռնին մէջ, գերմանական պատասխանատուութեան վրայ:

1915-էն մինչեւ 1996 թուականը, 80 տարուան ընթացքին, արեւմտեան աշխարհի մէջ գտնուող դաշնակցական ծանօթ դեկավարներուն կողմէ, գերմանական պատասխանատուութեան մասին ոչ մէկ պաշտօնական դիմում կատարուած և ոչ մէկ հրատարակութիւն լոյս տեսած է:

Այս իրավիճակը, մեր համոզումով, միայն մէկ ձեւով կրնանք բացատրել... Որովհետեւ դաշնակցական գլխաւոր դեկավարները արեւմտամէտ էին ու ծառայութեան կանչուած սիոնիստներուն կողմէ:

Շատ ծանօթ իրաւագիտական օրէնք է... Մարդասպանական ոնիրի մը քննութեան միջոցին՝ այդ ոնիրին դրդապատճառները կը

փնտուռին: Եթէ ոճրագործը այս ոճիրը, ուրիշ մէկուն պատուէրով և կամ թելադրութեամբ կատարած է՝ պատուիրողին կամ թելադրողին պատիժը շատ աւելի ծանր կը կշռէ, քան թէ ոճրագործին պատիժը:

Եւ սիոնիստները, ամէն բան ըրին, որ իրենց ծրագրած և թուրքերուն գործադրել տուած Հայկական ցեղասպանութեան ներքին գաղտնիքները մէջտեղ չելլան:

Այս է պատճառը, որ Հայկական ցեղասպանութեան պէս, աշխարհի մէջ նմանը չեղող ողբերգութեան մը դահիճները եղող թուրքերը, մինչեւ այսօր չպատժուեցան:

Այս է պատճառը, որ Հայկական ցեղասպանութիւնը, մինչեւ այսօր, շատ մը մեծ պետութիւններու կողմէ պաշտօնապէս չէ նանչցուած:

Եւ այս է պատճառը որ սիոնիստները, Դաշնակ կուսակցութեան ղեկավարներուն, կազմակերպութեան հիմնուած թուականէն՝ 1890-ներէն սկսեալ, միշտ ջանացին իրենց հակակշռին տակ առնել ու պահել: Եւ մինչեւ այսօր ալ կը ջանան... իրենց հակակշռին տակ պահել:

Եւ սիոնիստները հետամուտ են գտնելու հայ նոր գործակալներ, սեփական ազգի ու հայրենիքի դէմ գործողներ, նոր մեթոտներու կիրարկումով, դիմելով ամէն միջոցի որ հայերը քնացնեն: Որ անոնք չկարողանան իրականութիւնները տեսնել: Որովհետեւ սիոնիստները միշտ վախը ունին... Որովհետեւ Հայկական ցեղասպանութեան պատասխանատուութեան ոճիրը՝ սիոնիստներուն գլխուն վրայ դամոկլեան սուրի մը պէս, տեւապէս կախուած պիտի մնայ... Որովհետեւ, ցեղասպանութեան ոճիրը, ժամանցման օրէնքին ենթակայ չէ:

* * *

ՍԵԼԱՆԻԿ ՔԱՂԱՔԻՆ ԽԱՂԱՑԱԾ ՏԵՐԱՀՌՉԱԿ ԴԵՐԸ՝ ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Հայկական ցեղասպանութիւնը 24 Ապրիլ 1915-ին, օսմանեան կառավարութեան հրամանով Պոլսոյ մէջ, հայ մտաւորականներուն և ղեկավարներուն ձերբակալումով սկսաւ:

24 Ապրիլ 1915 թուականին, օսմանեան կառավարութիւնը ո՞ր

կուսակցութեան կողմէ կազմուած էր - Իթթիհատ և Թերաքքի կուսակցութեան կողմէ:

Իթթիհատ և Թերաքքի կուսակցութիւնը ո՞ւր հիմնուած էր - 1900-թ.ներուն Սելանիկի մէջ կազմուեցաւ Իթթիհատ և Թերաքքի կուսակցութիւնը:

Որովհետեւ Սելանիկ քաղաքը, 1900-թ.ներուն, մեծամասնութեամբ հրեաներու կողմէ բնակուած քաղաք մըն էր:

Այդ տարիներուն Սելանիկի բնակչութեան բաժանումը հետեւեալ պատկերը կը ներկայացնէր.- 40 հազար սաֆարիդ հրեայ, 20 հազար դաւանափոխ հրեայ, 20 հազար իսլամ, 40 հազար յոյն, 3 հազար լեւանդիներ:

Ինչպէս որ այս բուանշաններէն ալ կը յայտնուի՝ այդ շրջաններուն Սելանիկի մէջ, հրեաները մեծամասնութիւն էին, և հրեաները Սելանիկը «նոր Երուսաղէմ» մը կը նկատէին: Աւելի ճիշդ՝ «Երուսաղէմը» գրաւելու համար կատարուելիք գործողութիւններուն կեդրոն կը սեպէին:

Երբ Թէոտոր Հերցըլ, 19-րդ դարուն վերջաւորութեան, **սիոնիզմի** շարժումին ձեռնարկեց, Սելանիկ քաղաքի հրեաներուն տուաւ Օսմանեան կայսրութեան մէջ իշխանութիւնը ձեռք անցընելու պարտականութիւնը:

Սելանիկ քաղաքին հրեայ երեւելիներուն մեծամասնութիւնը, ֆարմասոն-ներ էին:

Եւ 19-րդ դարու վերջաւորութեան, Սելանիկի մէջ կազմուեցաւ "Jeunes turcs" [երիտօրրքեր] կոչուած [իբր թէ] յառաջդիմական շարժում մը: Իրականութեան մէջ, այս **ժէօն քիւրքեր-ու** կազմակերպութիւնը, հրեաներուն կողմէ մէջտեղ բերուած, մատակարարուած **մասուն**-ական-սիոնիստական շարժում մըն էր:

Եւ 1900-թ.ներուն այս կազմակերպութեան մէջէն, հրեաներու առաջնորդութեամբ, ստեղծուեցաւ Իթթիհատ և Թերաքքի կոչուած կուսակցութիւնը, որուն մաս կը կազմէին՝ Թալաթ, ձեմալ, Էնվեր և նաեւ Մուսթաֆա Քեմալ՝ հայ ազգին դահիճներէն կազմուած վոհմակ մը. ասոնք, բոլորն ալ, ֆարմասոններ էին:

Այս կուսակցութեան նպատակը [իբր թէ], Օսմանեան կայսրութեան մէջ, ազատութեան և հաւասարութեան վարչակարգ մը հաստատել էր:

Եւ այս կուսակցութիւնը և սիոնիստները [հրեաներուն հովանա-

ւորութեամբ], ժընեւի մէջ, ժողովներ կը կազմակերպէին:

Եւ դժբախտաբար, ժընեւի այս ժողովներուն կը մասնակցէին նաեւ, դաշնակցական ղեկավարներ ալ, որոնք ֆարմասոնական նամբով, լծակից դարձեր էին իբրքիհատական-ներուն, հետեւելով **«ագատութիւն եւ եղբայրութիւն»** կոչուած սուտ լոգունգներուն:

* * *

Սիոնիզմի հիմնադիր Theodor Herzl-ը, 19-դարուն վերջաւորութեան Պոլիս կու գայ, Ապտիւլ Համիտին հետ սակարկելու հայ յեղափոխականներուն հակաբրքական, հակասուլթանական շարժումներուն խափանումը սիոնիզմին կողմէ եթէ, ասոր փոխարէն, սուլթանը արտօնէ որ հրեաները, մեծ գումարներու յատկացումով, հող գնեն Պաղեստինի մէջ:

Ապտիւլ Համիտ հայ յեղափոխականներու շարժումին վերջ տալու առաջարկը կ'ընդունի: Բայց հրեաներուն Պաղեստինի մէջ հող գնելու առաջարկը [իբր թէ] կը մերժէ [հաւանաբար արաբներուն հակազդեցութենէն վախնալով]:

Եւ Թէոտոր Հերցլը, Պոլսէն բաժնուած միջոցին, սա շատ յատկանշական սպառնալիքը կ'ընէ. **«Յաջորդ անգամ Պոլիս՝ ուժով պիտի գանք»:**

Եւ իրապէս ալ, Սելանիկի մէջ հրեաներուն դրամով **կազմուած իբրքիհատական բանակը**, Սելանիկէն նամբայ կ'ելլէ և, 1908-ին, Պոլիսը կը գրաւէ: Եւ նոր [իբր թէ] «ագատական» - իրականութեան մէջ սիոնիստ-իբրքիհատական վարչաձեւ մը կը հաստատէ Պոլսոյ մէջ:

Եւ տարի մը յետոյ, Ապտիւլ Համիտը գահէն վար կ'առնուի և կ'աքսորուի տիրահռչակ Սելանիկ քաղաքը:

Պոլսոյ մէջ, միամիտ հայերը կ'ուրախանան և կը կարծեն, թէ այլեւս թուրքերուն հետ եղբայրաբար և ապահովութեան մէջ պիտի կարենան ապրիլ:

Բայց այս՝ պարզապէս ինքնախաբուծիւն էր: Որովհետեւ 1908-ին կատարուածը, սիոնիստական ծրագրին գործադրութեան մէկ հանգրուանն էր միայն:

* * *

Այս խաբուսիկ «ազատութեան» տարիներուն, դաշնակ ղեկավարները միամտօրէն [Ֆարմասոնական եղբայրութեան սկզբունքով], սրտանց կը գործակցին իրենց «գաղափարակից» այս թուրք-սիոնական կուսակցութեան հետ:

Եւ անոնք ա՛յն աստիճան կը հաւատան ֆարմասոն իթքիհատականներուն, որ նոյնիսկ կը ստիպեն, որ հայ ժողովուրդը զինաթափուի: Ծանօթ է 1911-12-թ.ներուն կնքուած Հ.Յ.Դ.- երիտթուրքեր համաձայնութիւնը, որով դաշնակցութիւնը, մերժելով ամէն «անջատողականութիւն», կը հռչակէր, որ ինք «օսմանցի» է: Յիշենք, որ սիոնիստները նոյնպիսի գործակցութիւն առաջարկեցին Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան, որ ոչ միայն դէմ եկաւ այդ համաձայնութեան, այլև պայքարի նակատ բացաւ երիտթուրքերուն դէմ: Արդիւնք՝ 20 - կախաղանները:

Մինչդեռ այս ֆարմասոն - իթքիհատականները, իշխանութեան գլուխ իրենց անցած օրէն 1908-էն սկսեալ, հայ ազգը ցեղասպանութեան ենթարկելու ծրագիրները կը պատրաստէին:

Եւ, անխուսափելին պատահեցաւ: Եւ միամիտ այդ դաշնակցական ղեկավարները, իրենց հետ հայ ազգն ալ քաշելով, ցեղասպանութեան զոհ դարձան:

* * *

24 Ապրիլ 1915-ի՝ Հայկական ցեղասպանութեան օրերուն, Պոլսոյ մէջ, Ռուբէն Սեւակի կինը՝ Ժաննի Սեւակ ապրեցաւ այդ դժոխային օրերը:

Եւ իբր գերմանացի՝ իր բոլոր կարելիութիւններով աշխատեցաւ փրկել իր ամուսինը, Ռուբէն Սեւակը:

Բայց չյաջողեցաւ: Եւ տեսաւ իրականութիւնները: Ու հասկցաւ, թէ Հայկական ցեղասպանութեան բուն պատասխանատուները գերմանացիներն են:

Եւ 27 Հոկտեմբեր 1915-ին, Լոզանէն Պոլիս՝ Գերմանական դեսպանատան իշխանաւորներուն գրեց նամակ մը, որ գերմանացիներուն սիրտը յաւերժ խոցող ամբաստանութիւն կը մնայ:

Այդ նամակին մէջ տիկ. Ռ. Սեւակ կը թախանձէր. **«Աստուծոյ սիրոյն՝ գերմանացիներուն դէմ կատարուած այս սարսափելի ամբաստանութիւններուն իրականութիւն չըլլալը ապացուցանելու**

համար, ամենաազդու կերպով միջամտեցէք թրքական իշխանութիւններուն մօտ՝ ազատեցէք ինչ որ կարելի է փրկել: Փրկեցէք անմեղ կանանց, երախաներուն, հիւանդներու և ծերերու արիւնը, որ երկինք կը բարձրանայ:

Գերմանիոյ վրայ նզովք, Գերմանիոյ վրայ անէծք կրնայ գալ, եթէ Գերմանիա չընէ այն ամէնը, ինչ որ կը գտնուի իր երկաթեայ ուժերուն ներքեւ»:

Լոզան, 27 Հոկտեմբեր

Հելէն Զիլինկիրեան - ծնեալ՝ Արէլ

Եւ գերմանացիները, հակառակ ժաննի Սեւակի այս սրտանմլիկ և ահոելի ամբաստանական նամակին՝ «իրենց երկաթեայ ուժով» արգելք չեղան թուրքերուն:

Եւ թուրքերը անարգել, շարունակեցին անմեղ կիները, երախաները, հիւանդները և ծերերը ցեղասպանութեան ենթարկել:

* * *

«Եւ տիկին ժաննի Սեւակ, այլեւս բոլորովին համոզուած, որ Հայկական ցեղասպանութեան բուն պատասխանատուները գերմանացիներն են, մերժեց գերմանական հպատակութիւնը:

Եւ իբր հայ նանսենական ապաստանեալ, ապրեցաւ Ֆրանսայի մէջ:

- Տիկին Սեւակ, մինչեւ իր կեանքին վերջը, Գերմանիա ոտք չկոխեց:

- Տիկին Սեւակ, մինչեւ կեանքին վերջը, բառ մը գերմաներէն չխօսեցաւ:

- Տիկին Սեւակ իր գաւակներուն՝ Լեւոնին և Շամիրամին մէկ բառ գերմաներէն չսորվեցուց:

Սեւակի տղան Լեւոնը՝ 1939-1945-ի պատերազմին, իբր ֆրանսացի զինուոր, պատերազմի մասնակցեցաւ՝ գերմանացիներուն դէմ:

Տիկին Ռ. Սեւակ չմեռած՝ իր գաւակներուն կտակեց, որ հայ եկեղեցական ծեսով թաղուի: Տիկին Սեւակ մահացաւ 28-12-1967-ին, Նիսի մէջ:

Եւ յուղարկաւորութեան արարողութիւնը կատարուեցաւ Նիս՝ 30-12-1967-ին, Հայաստանեայց Առաքելական Սուրբ Աստուածածին եկեղեցիին մէջ:

Գերմանացի տիկին Սեւակ, մեր խելացի գրագետ, պատմագետ և դիւանագետներեն շատ աւելի լաւ հասկցած էր իրականութիւնը, թե՛ հայ ազգին ցեղասպանութեան բուն պատասխանատուները՝ գերմանացիներն են»:

Ապրիլ 1985 Յ. 2.

* * *

Եւ վերջապէս, մեր վերի տողերը գրելէ 11 տարի յետոյ՝ 1996-ին, փրօֆ. Վահագն Տատրեան, Ամերիկայի մէջ հրատարակեց գերմանացիներուն պատասխանատուութիւնը անհերքելի փաստերով ապացուցանող հատոր մը՝ *“German responsibility in the Armenian genocide”*.

Այստեղ կ'ուզենք հարցնել մեծ պատմագետ փրօֆ. Վահագն Տատրեանին՝

Արդեօք ե՞րբ, փրօֆ. Վահագն Տատրեան, Հայկական ցեղասպանութեան բուն ակունքները պիտի իջնէ: Եւ ե՞րբ պիտի հրատարակէ իր գլուխ գործոցը ըլլալիք գիրքը՝ *«Միոնիստներուն պատասխանատուութիւնը՝ Հայկական ցեղասպանութեան մէջ»* խորագրով:

ՆԱԹԻՐԻ
ԹԻԻ 214, 13 ԱՊՐԻԼ 2004

**ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ՎԵՐՋԻՆ ՀԱՆԳՐՈՒԱՆԷՆ ԱՌԱՋ -
24 ԱՊՐԻԼԻՆ ԵՒ ԳՈՂՑՈՒԱԾ ՀԱՅՐԵՆԻՔԻՆ ԿՈՐՈՒՍՏԻՆ
89-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ՍԵՄԻՆ**

**«ԶԱՅՆ ԲԱՐԲԱՌՈՅ ՅԱՆԱՊԱՏԻ» ՆԿԱՏՈՒԱԾ ԳՐՈՒԹԻՒՆ-
ՆԵՐ**

**«ՍԱԿԱՅՆ ՍՏՈ՛ՅԳ, ՍՏՈՅԳ ԿՂՍԵՄ ՁԵՋԻ ՎՏԱՆԳԸ ՄԵԾ Է,
ՇԱ՛Տ ՄԵԾ ԱԻԵԼԻ ՄԵԾ ՔԱՆ ԿՐՆԱՔ ԵՆԹԱԴՐԵԼ »**

1911 - «ԱՅԼԱՍԵՐՈՒՄ», ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿ

Ժաննի Սեւակի 27-10-1915-ին, Պոլսոյ Գերմանական դեսպանատուն գրած և ուսմբէ մը աւելի գօրաւոր ամբաստանական նամակը, խնդրելու պէս կը պահանջէ.- «Աստուծոյ սիրոյն՝ գերմանացիներուն դէմ կատարուած այս սարսափելի ամբաստանութիւններուն իրականութիւն չըլլալը ապացուցանելու համար, ամենաազդու կերպով միջամտեցէք թրքական իշխանութիւններուն մօտ՝ ազատեցէ՛ք, ինչ որ դե՛ռ կարելի է փրկել: Փրկեցէք անմեղ կանանց, երախաներուն, հիւանդներու եւ ծերերու արիւնը, որ երկիւնք կը բարձրանայ:

Գերմանիոյ վրայ նզովք, Գերմանիոյ վրայ անէծք կրնայ գալ, եթէ Գերմանիա չընէ այն ամէնը, ինչ որ կը գտնուի իր երկաթեայ ուժերուն ներքեւ»:

Լոզան - 27 հոկտեմբեր 1915

Ժաննի Սեւակ

20 Փետրուար 2004-ին, Երեւանի Ռուբէն Սեւակի անուան դպրոցին մէջ յիշատակուեցաւ, Ռուբէն Սեւակի ծննդեան 119-ամեակը: Դպրոցի տնօրէնուհիին՝ տիկին Ճուլիա Ղազարեանին մեզի ուղարկած հանդիսութեան տեսաերիզին շնորհիւ, մենք ալ կրցանք հետեւիլ և վայելել այս հայրենաշունչ տօնակատարութիւնը:

Եւ կրկին, ուրախութեամբ հաստատեցինք, թէ Ռուբէն Սեւակի

անուան դպրոցին մէջ, Ռուբէն Սեւակի հայրենասիրական գաղափարները կը շարունակեն աշակերտներուն հոգիներուն մէջ իրենց վերածնունդը ապրիլ:

Նոյն օրը, դպրոցին մէջ կատարուեցաւ նաեւ, Վլատիմիր Պետրոսեանի 2003-ին երեւանի մէջ հրատարակուած «Ռուբէն Սեւակ եւ մեր ժամանակը» գիրքին շնորհահանդէսը:

Այս գիրքին մասին մտաւորականներուն և ուսուցիչներուն կատարած ելոյթները շատ իմաստալից էին:

Անոնք վերլուծեցին Վլատիմիր Պետրոսեանին իր նոր գիրքին մէջ ներկայացուցած Ռուբէն Սեւակի «տիպարը»:

Անոնք մատնանշեցին գիրքին մէջի գաղափարներուն զուգահեռ՝ Ռուբէն Սեւակը իբր գաղաբարապաշտ և հայրենասէր բանաստեղծ, գրող և հերոս նահատակ, անցեալի և ներկայի մէջ հայութեան համար իբր «ոահվիրայ» անոր կատարելիք դերը:

* * *

Բայց այս հանդիսութեան, վաստակաւոր ուսուցչունիի մը կողմէ իր ելոյթին ընթացքին տուած տեղեկութիւնները, Հայաստանի այսօրուան իսկական իրավիճակը պատկերացնելու տեսակէտէն՝ մեզի շատ ցաւ պատճառեց:

Հայաստանի դաշնակցականամիտ կրթական նախարարութիւնը՝ դպրոցներուն մէջ, Ռուբէն Սեւակի հայրենասիրական գաղափարներ դասաւանդելը, ձեռով մը արգիլեր է:

Եւ Ռուբէն Սեւակ հոն կը ներկայացուի եղեր իբր միայն քնարերգակ՝ սովորական բանաստեղծ մը:

Իր անունը չփոխելու և չբրբանալու համար գիտակցաբար դէպի նահատակութիւն յառաջացած Ռուբէն Սեւակի սուրբ յիշատակին համար [մանաւանդ Հայաստանի հողին վրայ կատարուած], ասկէ աւելի մեծ սրբապղծութիւն չի կրնար ըլլալ:

1995-թ.ին սիոնիստներուն կամակատար, Հ. Հ. նախագահ՝ Լեւոն Տէր Պետրոսեանի օրով, կրթական նախարար մը կար, Աշոտ Բլէեան անունով, որ Հայաստանի դպրոցներուն մէջ դասաւանդուած պատմութեան գիրքերէն Եղեռնի մասին գրութիւնները վերցնել ուզած էր:

Այսօրուան դաշնակցականամիտ կրթական նախարարը, իրականութեան մէջ ի՛նչ տարբերութիւն ունի իր հերթին սիոնակա-

նամետ և ըստ ոմանց հռովմեադաւան գործակատար Աշոտ Բլեեանէն:

Հայկականութեան տեսակետով՝ նոյն բաներն են: «Հայկական ոգին» սպաննող դրուժաններ:

* * *

2003-թ.ին՝ Վլատիմիր Պետրոսեանի «Ռուբէն Սեւակ եւ մեր ժամանակը» գիրքին տպագրութեան օրերուն, տարբեր ձեւով՝ բայց նոյնիմաստ իրավիճակի մը առջեւ գտնուեցանք:

Այդ օրերուն Վլատիմիր Պետրոսեան չէր ուզած, որ հրապարակենք այս ցաւալի պատահարը:

Երբ այսօր կը կրկնուին նոյնիմաստ և դաշնակցականներու յատուկ պառակտիչ դէպքերը, Վլատիմիր Պետրոսեանի ներողամտութիւնը խնդրելով՝ կը հրապարակենք հետեւեալ եղելութիւնը:

Հեղինակը իր «Ռուբէն Սեւակ եւ մեր ժամանակը» գիրքին տպագրութեան համար, 2003-ին կը դիմէ Երեւանի մէկ հրատարակչատան: Կը գոյանայ համաձայնութիւն գիրքի լոյս ընծայման շուրջ:

Բայց, միջոց մը յետոյ, այդ հրատարակչատունը Վլատիմիր Պետրոսեանին կը պատասխանէ, որ **«Իրենք պիտի չկրնան հրատարակել այս գիրքը»:**

Պաշտօնապէս ներկայացուած մերժումին պատճառը...

1.- Տպարանին շատ գործ ունենալն է: Իսկ անպաշտօն և չխոստովանուած պատճառը...

2.- Վլատիմիր Պետրոսեանին «Ռուբէն Սեւակ եւ մեր ժամանակը» գիրքին մէջ նշուած **իրականութիւններն են:**

Այս իրականութիւնները, գորս Ռուբէն Սեւակ իր գրութիւններուն մէջ կը ձաղկէր, այդ շրջանին [1908-թ. ներուն] թուրքերուն հետ գործակցողներն էին, եւ մանաւանդ՝ դաշնակցականները:

Այս իրականութեան լոյսին տակ, Վ. Պետրոսեան կը հրապարակէր այս գիրքին մէջ [բոլորին ծանօթ] եղելութիւնները, որ Հ. Յ. Դ.ն, 1905-էն մինչեւ 1915 եւ նոյնիսկ աւելի ետք, շարունակեց իբրքիհատական թուրքերուն հետ գործակցիլ: Որուն յաջորդեց 24 Ապրիլ 1915-ի եղեունը:

Նոյն գիրքին մէջ, Վ. Պետրոսեան նշած էր նաեւ այս կուսակցութեան քաղաքական հայավնաս դիրքորոշումներն ու արարքները, որոնք կը շարունակուին մինչեւ մեր օրերը:

Եւ ո՛վ է եղած այդ շրջանի հրատարակչատան բուն պատասխանատուն՝ Մեսրոպ Արքեպս. Աշնեան: Եւ ո՛վ էր Մեսրոպ Արքեպս.:

Մինչեւ 1995-թ.ները Արեւելեան Ամերիկայի անթիլիասական եկեղեցիին առաջնորդն էր:

1995-ին Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսը՝ Գարեգին Բ. [ղաշնակցականներու կողմէ իրեն տրուած մակդիրով] «ղաւանանեց» այս կուսակցութեան և Հայաստանի նախագահ Լ. Տէր Պետրոսեանի թիկունքով Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրուեցաւ:

Իսկ Մեսրոպ Արքեպս. Աշնեան [ըստ զաշնակցականներու], մահացու «յանցանք» մը գործեց, Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Ա.ի կողքին դիրքորոշուելով: Որուն հետեւանքով կուսակցութիւնը զինք հեռացուց Արեւելեան Ամերիկայի առաջնորդի պաշտօնէն:

Եւ տարօրինակը հոն է, որ Մեսրոպ Արքեպս. որ եղած էր զաշնակցականամէտ հոգեւորական ու մինչեւ վերջերս պայքարած Մայր Աթոռի դէմ, կերպով մը Ս. Էջմիածին ապաստանեցաւ: Եւ հոն, Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսին հովանաւորութեամբ, Հայաստանի մէջ, իբր մտաւորական հոգեւորական մը գործել սկսաւ:

Բայց Հ. Յ. Դ.ի անդամ մկրտուածի մը համար կը թուի, թէ շատ դժուար է իր ուխտէն հեռանալը: Աղանդաւորներուն նման են:

Անգամ մը որ աղանդաւորին ուղեղը խաբարուի՝ ապաքինումը շատ դժուար է: Մեսրոպ Եպս.ին պարագան ալ նոյնը եղած կրնայ ըլլալ:

Հակառակ, որ ան զաշնակցական ղեկավարութեան կողմէ հեռացուած և «աքսորուած» էր՝ բայց Մեսրոպ Արքեպս. Աշնեան՝ իբր աղանդաւոր միշտ մնաց զաշնակցական, գործեց մինչեւ վերջ իբր այդպիսին, ըլլա յ հրատարակչատան մէջ և ըլլա յ Հայաստանի հեռատեսիլէն իր կատարած ելոյթներով:

* * *

Բայց ի՞նչ է Ռուբէն Սեւակի յանցանքը որ այս կուսակցութեան մարդիկ, մինչեւ այսօր կը շարունակեն անտեսել և մոռացութեան ենթարկել Ռուբէն Սեւակը:

Որովհետեւ Ռուբէն Սեւակ մարգարեացաւ իր գրութիւններով, և տեսաւ վտանգը:

Այն մեծ վտանգը որուն տարողութիւնը, դեռ 1911-թ.ին, այսպէս պատկերացուց. **«Մակայն ստոյգ կ'ըսեմ՝ ձեզի, վտանգը մեծ է, շա՛տ մեծ, աւելի մեծ քան կրնանք ենթադրել»:**

Բայց այս կուսակցութեան մարդիկ, աղանդաւորներու նման, չեն սիրեր իրականութիւնները: Որովհետեւ այս տիպի շարքայիները վարժ են հրահանգով գործելու: Պատուեր կը կատարեն:

Իրենց գործածած «պատմունան»ը կեղծ է: Իբր թէ ազգայնական են: Բայց կը մասնակցին ընկերվարականներուն համագումարներուն, իբր՝ ընկերվարական:

Ինչպէս որ ատենին [1940-ներուն] հակած էին ֆաշիստներուն կողմը: Եւ գործակցեցան նացի հիթլերականներուն հետ:

Իբր թէ կը պաշտպանեն Հայկական դատը, հայկական իրաւունքները: Բայց բոլոր գիտակից հայերը անդրադարձած են, որ անոնք ստեպ գործած են հայկականութեան շահերուն ի վնաս, մինչեւ իսկ գործակցած հայութեան թշնամի սիոնիստներուն հետ:

* * *

Եթէ, այս տիպի կուսակցականները, հայութեան ծառայելու գէին՝ 1915-էն յետոյ պիտի անդրադառնային իրենց կատարած սխալը, և պիտի հասկնային, որ սիոնիստներուն հետեւելով, ինկած էին իթթիհատականներուն ծուղակը: Եւ, 1918-էն սկսեալ, պիտի փնտռէին «իրականութիւնը»:

Պիտի փնտռէին՝ 1915-ի՝ Եղեռնին իրական պատասխանատուները:

Ինչպէս որ ասկէ առաջ գրեցինք՝ Ֆրանսայի, Անգլիոյ և Ամերիկայի մէջ, մեծ թիւով հրատարակութիւններ կային գերմանական պատասխանատուութիւնը ապացուցանող:

Եւ ամէնէն կարելորը՝ Ռուբէն Սեւակի գերմանացի կինը՝ Ժաննի Սեւակը կար, որ 1915-ին իր մօրը հետ աշխատեցաւ փրկել իր ամուսինը, բայց չյաջողեցաւ, գերմանական մեղսակցութեան պատճառաւ: Եւ Ժաննի Սեւակ, բոլորէն աւելի լաւ տեսած էր իրականութիւնը:

1918-ին Պոլիս հրատարակուած թերթերուն մէջ, լոյս տեսած էին Ժաննի Սեւակի գերմանացիներուն դէմ կատարած յայտարարութիւնները, որոնցմով ան գերմանացիները կ'ամբաստանէր, որ անոնք չեն իր ամուսինը՝ Ռուբէն Սեւակը ազատել:

Ժաննի Սեւակ Սեպտեմբեր 1915-ին, Ջուիցերիա հաստատուած էր, և Լոզանէն տեւական դիմումներ կը կատարէր Պոլսոյ Գերմանական դեսպանատուն:

Ժաննի Սեւակի 27 Հոկտեմբեր 1915 թուակիր նամակը, Լոզանէն Պոլսոյ Գերմանական դեսպանատուն հասցեագրուած, ահռելի ամբաստանագիր մըն է ուղղուած գերմանացիներուն դէմ:

Մեր համոզումով՝ Ժաննի Սեւակի այս նամակը 1915-ի Եղեռնի վերաբերեալ, ամենակարեւոր փաստաբուղն է:

Պիտի խնդրենք մեր ընթերցողներէն, որ ուշադրութեամբ կարդան այս նամակին ամէն մէկ տողը, ամէն մէկ բառը:

Արդարեւ Ժաննի Սեւակ, 1915-ի Եղեռնին իբր պատասխանատու գերմանացիները ամբաստանելէ յետոյ, սա հրակէզ տողերը կը գրէր.

«Գերմանիոյ վրայ նզովք, Գերմանիոյ վրայ անէծք կրնայ գալ, եթէ Գերմանիա չընէ այն ամէնը, ինչ որ կը գտնուի իր երկաթեայ ուժերուն ներքեւ»:

Այս ի՛նչ մարգարեական նախատեսութիւն է և ի՛նչ հայաշունչ նզովք:

Գերմանացիները, հակառակ Ժաննի Սեւակին ազդարարութեան, շարունակեցին թուրքերուն թիկունք կանգնիլ և անխղճօրէն ցեղասպանութեան ենթարկել հայ ազգը:

Եւ Ժաննի Սեւակին մարգարեական անէծքը և հայաշունչ նզովքը իրականացաւ:

Հայկական ցեղասպանութեան մեղսակից գերմանացիները, այս անգամ հրեական սատանայական դաւադրութեամբ ծուղակը ինկան: 1945-ին, **«Հրեաները ջարդած են ըսելով»** Գերմանիոյ վրայ նզովք և անէծք տեղալ սկսաւ: Եւ այս նզովքը և անէծքը կը շարունակեն տեղալ, մինչեւ այսօր, գերմանացիներուն վրայ, «իբր հրեաներու ցեղասպանները»:

* * *

Եւ դաշնակցականները երբեք չհետաքրքրուեցան Ժաննի Սեւակով. ընդհակառակը՝ անտեսեցին զինք:

1918-ին, զինադադարէն յետոյ, Ժաննի Սեւակ իր տղոց հետ, Փարիզ հաստատուած էր:

Եւ ան, Հոկտեմբեր 1919-ին, Հայաստանի խորհրդարանի նախա-

գան Աւետիս Ահարոնեանին, որ Սեւրի դաշնագրին համար Փարիզ եկած էր, նամակ մը գրեց, խնդրելով իրմէ, որ իր զաւակներուն՝ Լեւոնի և Շամիրամի հայեցի դաստիարակութիւն ստանալուն օգտակար ըլլայ [«Նայիրի»ի 26 Օգոստոս 1995 թիւին մէջ, Աւետիս Ահարոնեանին պատասխան նամակը հրատարակած էինք]:

Այս նամակին մէջ, Աւետիս Ահարոնեան շատ քաղաքավարութեամբ կը մերժէր ժաննի Սեւակին՝ նահատակ Ռուբէնի զաւակները հայ մեծցնելու գող խեղճ մօր բաղձանքը:

Ժաննի Սեւակ մինչեւ 1967 տարեթիւը Փարիզ ապրեցաւ: Բայց, մինչեւ այս թուականը, դաշնակցականներէն ոչ մէկը այս հէք այրիին չհարցուց, թէ ինչու, հայ ազգին ցեղասպանութեան իբր պատասխանատու կ'ամբաստանէր գերմանացիները: Ինչո՞ւ գերմաններէն չէր խօսեր, և ինչո՞ւ իր զաւակներուն գերմաններէն չսորվեցուց:

Եւ ոչ մէկը չհետաքրքրուեցաւ ժաննի Սեւակով, ոչ ալ Ռուբէն Սեւակի որբ զաւակներուն՝ Լեւոնով և Շամիրամով:

Հակառակ այս հայկական անտարբերութեան և հայերու կողմէ անտեսուած ըլլալուն, ժաննի Սեւակ միշտ «Հայ» մնաց և հայ ըլլալով ալ մահացաւ 28-12-1967-ին: Իր կատարած կտակին համաձայն յուղարկւորութեան արարողութիւնը կատարուեցաւ 30-12-1967-ին, Նիսի Հայաստանեայց Առաքելական Սուրբ Աստուածածին եկեղեցիին մէջ:

ՆԱԹԻՐԻ
ԹԻԻ 217, 25 ՄԱԹԻՍ 2004

ՍԻՈՆԻՍԻՍ ՀՐԵԱՆԵՐՈՒՆ, ՍԻՈՆԻՍԻՍ ԹՈՒՐԳԵՐՈՒՆ ԵՒ ՍԻՈՆԻՍԻՍ ԱՄԵՐԻԿԱԹԻՆԵՐՈՒՆ ՋՈՀԸ ԵՂՈՂ ԺՈՂՈՎՈՒՐԳՆԵՐ՝ ՄԻԱՑԷ՛Ք ՍԻՈՆԻՉՄԻՆ ԴԷՄ, ՅԵՏՈՅ՝ ՇԱՏ ՈՒՇ ՊԻՏԻ ԸԼԼԱՅ

ՍՈՒՏԵՐՈՒ ՄԱՍԻՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹԻՒՆՆԵՐ

«ՍՈՒՏ Է, ՍՈՒՏ Է, ԱՄԷՆ ԲԱՆ ՍՈՒՏ Է, ԱՅՍ ԱՇԽԱՐՀԻ ՄԷՋ, ԱՄԷՆ ԲԱՆ ՍՈՒՏ Է»

Ժողովրդակաճ երգ

«... ԱՄԷՆ ԲԱՆ ՓՈՒՃ Է ԱՇԽԱՐՀԻՍ ՄԷՋ: ՍՈՒՏ ԵՆ ՓԱՌԲԸ, ՍՈՒՏ՝ ՄԵԾՈՒԹԻՒՆԸ... ՍՈՒՏ՝ ՍԱ ԽԱԲԵԲԱՅ ԵՐՋԱՆԿՈՒԹԻՒՆՆ ԱԼ... ՈՒ ԱՅՍ ԽԱԲՈՒՍԻԿ ՍՏՈՒԵՐՆԵՐՈՒՆ ՄԷՋ ԵԹԷ ԿԱՅ ՀԱՍՏԱՏՈՒՆ ԵՒ ԻՐԱԿԱՆ ԲԱՆ ՄԸ, ԱՅԳ ԱԼ՝ ՋԱՐԳԱՑՈՒՄՆ Է, ԲԱՐՈՒԹԻՒՆՆ Է...»

4-10-1905

Ռուբէն Սեւակ

«... 7 ՏԱՐԻ ԵՒՐՈՊԱ ԱՊՐՈՂ ՄԸ ՄԻԱՅՆ ԿՐՆԱՅ ԳԻՏՆԱԼ, ԹԷ Ի՞ՆՉ Է ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԻՒՆԸ, «ՋԱՐԳԱՑԱԾ ԿԵԱՆՔԸ»...

ԱՄԷՆ ԲԱՆ ՍՈՒՏ ՈՒ ԿԵՂԾԻՔ, ՇՊԱՐ ՈՒ ԱՄՕԹ»:

29-4-1912 Ռուբէն Սեւակ

ՍՈՒՏԵՐՈՒ ԵՒ ԵՐԱՋՆԵՐՈՒ ՋՈՀ, «ԷՇ ՆԱՀԱՏԱԿ» ԵՂԱԾ ԱՋԳ ՄԸ՝ «ՀԱՅԵՐԸ»

28-2-1998

Թ. Զ.

ՍԻՈՆԱԿԱՆ ԱՄԵՐԻԿԱԹԻ ՍՈՒՏԵՐՈՒՆ ՋՈՀ ԱՋԳ ՄԸ՝ ԻՐԱՔՑԻՆԵՐԸ

* * *

*«Սուտ է սուտ է,
Ամեն բան սուտ է,
Այս աշխարհի մէջ,
Ամեն բան սուտ է»*

Առաջին անգամ՝ 1960-թ.ներուն այս «երգը», Պոլսոյ Պոսֆորի ծովեզերեայ յունական նաշարանի մը մէջ լսեցինք:

Երգիչը՝ Հայկօ անունով հայ երիտասարդ մըն էր: Այն տարիներուն այս երգը, մեզ շատ տպաւորած էր: Որովհետեւ, առաջին անգամ ըլլալով թուրք, յոյն և հայ յանախորդներուն ներկայութեան, հայերէն երգ մը մտիկ կ'ընէինք:

Յետոյ, երգին ներկայացուցած կեանքի ըմբռնումը՝ «կեանքի մէջ ամեն բանին սուտ ըլլալը», մեր այդ տարիներուն ապրած կեանքին շատ կը համապատասխանէր:

Պոլսոյ մէջ ապրող թրքացած հայ մըն էինք: Թուրքերուն բոլոր սուտերուն և անարգանքներուն առանց առարկելու հանդուրժող [իբր թէ] հայ մը: Ստրուկ մը, գերի մը:

Միայն «մարմնով ապրող» հայ էակ մը, մինչդեռ հոգիով իսկական «մեռել» մը: Հասարակ թուրքը մեզ՝ «gavur» [անաստված] կը կոչէր: Եւ [իբր թէ] զարգացած թուրքը՝ մեզ «ekalliyet» [փոքրամասնութիւն] կ'անուանէր: Եւ մէկը չէր ըսեր այս թուրքերուն երեսին թէ՛

«Այս երկիրը քրիստոնէութեան օրրանն էր: Եւ մինչեւ 1915 թուականը քրիստոնէաները, հայերը և յոյները մեծամասնութիւն կը կազմէին այս երկրին մէջ:

Դուք 1915-էն մինչեւ 1923 տարեթիւր, հայերը և յոյները, բոլորն ալ ցեղասպանութեան ենթարկեցիք:

Եւ այս ձեւով մեծամասնութիւն եղաք: Թուրքիա ըսուած երկիրը՝ սուտերու վրայ հիմնուած երկիր մըն է: Ձեր ամեն բանը սուտ է»:

Եւ մենք 1976-թ.ին, այս սուտերու երկրէն վերջնականապէս հեռացանք:

Եւ յետոյ իմացանք, թէ «սուտ է սուտ է, ամեն բան սուտ է» հառաչող հայ երիտասարդ երգիչը՝ Հայկօն, թրքուհիի մը հետ ամուսնացեր է: Եւ այս «իրականութիւն» էր:

Եւ իրականութիւն էր նոյնիմբն՝ այսօրուան Պոլսոյ Պատ-

րիարքին Օգոստոս 1999-ին պաշտօնապէս ու հրապարակա-
յայտնածը բէ՝ «Պոլսոյ հայերուն հարիւրին վաթսունը թուրքերու
հետ կ'ամուսնանան»:

* * *

Ռուբէն Սեւակի գրութիւններն և նամակները՝ կեանքի խոր
փիլիսոփայութեան արտայայտութիւններ են:

Ռ. Սեւակի 4 Հոկտեմբեր 1905-ին [դեռ 20 տարեկանին], իր
բանաստեղծ ընկերոջ՝ Հրանդ Նազարեանցին գրած նամակը
այստեղ նշելը, այժմեական և օգտակար կը նկատենք:

**«Ոչ դրամին կիրքը ունիմ, ոչ փառքին կիրքը, ոչ համբաւին
կիրքը:**

Կեանքը շատ տխմար բան մը եղած պիտի ըլլար, եթէ անոր
նպատակը արշա՛ւ մ'ըլլար մինակ դրամասիրութեան ետեւէն,
փառասիրութեա՛ն ետեւէն:

Կեանքը, Հրանդս, տառապանքով, ցաւով լեցուն այս կեանքը
կ'արժէ՞ր միթէ՞ ապրիլ այս գծուած բաներուն համար:

Ամէն բան փուն է աշխարհիս մէջ, ամէն բան վաղանցուկ, սո՛ւտ
է փառքը, սո՛ւտ՝ մեծութիւնը, սո՛ւտ՝ սա խարբրայ երջանկութիւնն
ալ, երջանկութի՛ւնը որ տառապանքով կը ծնի, տառապանքով կը
մեռնի:

Անպա՛տ, ամայութի՛ւն, ունայնութիւն է սա տիեզերքը:

Ու այս խարուսիկ ստուերներուն մէջ եթէ կայ հաստատուն և
իրական բան մը, այդ ալ [ըստ իս] զարգացումն է, բարութիւնն է:

Կեանքը այս երկու սկզբունքներուն համար միայն կ'արժէ
ապրիլ, ըստ իս, տգէտը, չա՛րը չապրիր, մինչդեռ գիտունը
անհունութիւն մը կ'ապրի, ու բարին՝ անմահութիւն մը:

Ու եթէ բժշկութիւնը ընտրեցի ինձ ասպարեզ՝ միայն ու միայն
այդ սկզբունքներու իրագործման համար է:

Եւ յիրաւի՝ ո՞ր ասպարեզին մէջ մարդ աւելի դիւրութիւն և
հակամիտութիւն ունի գիտնապէս զարգանալու՝ որքան բժշկու-
թեան մէջ, և ո՞ր արճեստն հիւանդին կը շնորհէ կեանքը՝ մեծագոյն
բարիքը, եթէ ոչ՝ բժշկութիւնը դարձեալ:

Այս նկատումներով որոշեցի բժիշկ ըլլալ, գրագէտ բժիշկ մը,
հոգեբան բժիշկ մը [եթէ կ'ուզէք]»:

4 Հոկտեմբեր 1905 - Ռուբէն Սեւակ

«Երկեր - Անթիլիաս - 1986, էջ 16»:

* * *

Ռուբէն Սեւակին 4 Հոկտեմբեր 1905-ին գրած այս նամակը՝ անոր գաղափարականը ճանչնալու տեսակետով շատ կարեւոր է: 1905-ին Ռուբէն Սեւակ, դեռ նոր Եւրոպա ոտք կոխած է: Եւ Եւրոպան չի ճանչնար: Միայն կարդացած-լսածներէն գիտէ: Եւ իրեն համար «Հեռուոր սուրբին նման» պաշտելի է Եւրոպան՝ իբր քաղաքակրթութեան կեդրոն:

Եւ ան, մանաւանդ իր մեծ ուսուցիչ և մտաւորական՝ Պոլսոյ Պերպերեան վարժարանի տնօրէն՝ Ռեթեոս Պերպերեանի գաղափարներով ներշնչուած է:

Եւ Ռուբէն Սեւակ իտեալիստ մըն է: Կը հաւատայ մարդկային բարձր գաղափարներուն: Կը հաւատայ՝ բարի-ին, գեղեցիկ-ին և նշմարիտ-ին:

Երբ Ռուբէն Սեւակ իր նամակին մէջ կ'ըսէ, թէ՛ «տգետը, չարը՝ չապրիր», ան նկատի ունի վայրենի թուրքը՝ չար և տգետ:

Եւ կը հաւատայ քաղաքակրթութեան: Կը հաւատայ թէ՛ զարգացումն և բարութիւնը զուգահեռ կը յառաջանան: Եւ կը հաւատայ՝ թէ քաղաքակիրթ և զարգացած Եւրոպայի մէջ, իր իտեալները պիտի կարենայ իրականագործել: Եւ այս իտեալներով որոշած է գրագետ և հոգեբան բժիշկ մ'ըլլալ:

* * *

Ռուբէն Սեւակին վերը նշուած նամակին 1905-թ.ին գրուելէն ետք, 7 տարիներ կ'անցնին:

Տարի 1912: Ռուբէն Սեւակ Լոզանի համալսարանէն բժիշկ վկայուած է: Եւ իբր բժիշկ կ'աշխատի Լոզանի «Cantonal» հիւանդանոցին մէջ: Եւ 29 Ապրիլ 1912-ին, նոյն ընկերոջը՝ Հրանդ Նազարեանցին կրկին նամակ մը կը գրէ:

Բայց այս նամակը, Ռուբէն Սեւակի 1905-թ.ին՝ 20 տարեկան և կապոյտ երազներ տեսնող երիտասարդին գրած նամակը չէ այլեւս:

Ռուբէն Սեւակ տեսած է կեանքի իրականութիւնները: Ճանչցած է Եւրոպան: Եւ հասկցած է քաղաքակիրթ և զարգացած Եւրոպային ի՛նչ ըլլալը: Ահա այդ նամակը՝

«Հրանդս

Եթէ բժիշկ եղած չըլլայի, ամենամեծ փափաքս էր երկրագործ ըլլալ:

Ու նույնիսկ դեռ հիմա, ամենավերջին փափաքս է, օր մը կարենալ գիւղ քաշուիլ ու կեանքիս վերջին տարիները դաշտերուս ու հողերուս վրայ անցընել, լոուքեան ու բնուքեան մէջ: Եկուր տե՛ս, որ երիտասարդները չեն հասկնար այս բաները:

Եւրոպա նետուիլ կ'ուզեն իսկոյն: Մինչդեռ հոն 7 տարի ապրող մը միայն կրնայ գիտնալ, թէ ի՞նչ է քաղաքակրթութիւնը, «գարգացած կեանքը» - ամէն բան սուտ ու կեղծիք, շպար ու ամօք: Ասիկա իմ համոզումս է»:

Լոզան - 23 Ապրիլ 1912, Ռուբէն Սեւակ

«Երեւան - Երկեր - 1985, էջ 374»:

* * *

Եւրոպան այլեւս լաւ հանչցած Ռուբէն Սեւակ, 1910-ին իր «Կարմիր գիրք»ին մէջ սապէս գրած էր.

*«Ձե՛զի՛ քերծուած մեր մորքերէն ձի՛գ
Հարսնիքի, մեղքի վրաններ կառուցիք...
Ու ձե՛զ՝ Եւրոպեան դիք որ շնագին
Սակարկեցիք մեր արեան լոուքեան գին...:
«Ձեր սրտին դռնե՛րը փակեցէք խույ,
Սուրբ ը սըրեցէք, սըրեցէք գանխո՛ւլ,
Սըրեցէք ձեր խղճին վրայ քարացած,
Ու ատամներուն վրայ ձեր գաւակաց...»:*

1910 - «Ջարդի խենթը» [Կարմիր գիրքը] - Ռուբէն Սեւակ
«Երկեր, Անթիլիաս, 1986, էջ 123»

Եւ մարդկութեան ցաւերուն արմատները իջնող Ռուբէն Սեւակ, իբր հոգեբան բժիշկ, հիւանդութեան ախտահանաչումը իր «Փողոց ալոդը» բանաստեղծութեան մէջ հետեւեալ տողերով կը կատարէր 1911-թ.ին:

*... Աւլէ՛, ծեր, աւլէ՛, աշխատէ տքուն,
Չմեռուան ցուրտին, ամառուան տաքուն,
Աւլէ մարդկութեան աղտը ցնցոտի,
Ու գիտցի՛ր, որ մի՛ շտ պիտի աղտոտի...
Գիտցի՛ր որ հա՛ցդ է աւելի մաքուր,
Գան ջոջին կարմիր հացը թաքթաքուր:*

Գիտցիր դուն բաւել՝ քեզի որպէսզի
 Օգնեն, ըսելով, չի խեղդեն քեզի...
 Գիտցիր, որ ինչ ալ ըլլան կամ ընեն,
 Մարդերը զազիր կենդանիներ են...:
 Ու սորվե տես՝ լ՛նողկանքով անհուն.
 Անոնք որ «Փրկչի» կը կրեն անուն
 Ու նոյս խօսքերով տունըդ կը քանդեն.
 Սորվեցուր տղոցդ ատել արգանդէն՝
 Քաղաքագետները ամէն գոյնի,
 Որոնք կը սպաննեն քեզ առանց թոյնի:
 Սորվեցուր իրենց խօսքը հետագայ՝
 «Աղքատին համար բարեկամ չի՛ կայ»
 Փոքրերն անվրեպ մեծերուն կեր են,
 Մարդերը կատղած կենդանիներ են...»:

«Փողոց աւուրը» 1911 - Ռուբէն Սեւակ
 «Երկեր, Անթիլիաս 1986, էջ 233»

* * *

Իսկ հայ ժողովուրդը, դժբախտաբար, չտեսաւ իրականութիւնները: Եւ իր դրացի և բարերար ռուս ազգին անտեսեց և գնաց, յոյս սպասեց և միացաւ հեռաւոր ֆրանսացիներուն, անգլիացիներուն և մանաւանդ՝ բարի բողոքական կրօնականի [բացառութիւնները յարգելով] դիմակին տակ թաքնուող՝ cowboy-ներու և gangster-ներու երկիր՝ Ամերիկային:

Կայսերապաշտ Ֆրանսան իբր գինուոր Արեւելք դրկած էր խաչը բռնած իր կաթուղի վարդապետները: Ամերիկան ալ Հայաստան դրկած էր Աւետարանը տեսաբար ձեռքին մէջ և լեզուին վրայ ունեցող պատուելիները, որ առաջին քրիստոնեայ հայ ժողովուրդը... «քրիստոնեացնեն»:

Այս՝ կայսերապաշտ պետութիւնները շատ լաւ գիտէին հայ ժողովուրդը կաշառելու կերպը՝ իրենց դրամով և իրենց այլազան «վարձատրութիւն»ներով:

Անոնք շատ դիւրութեամբ ծախու առին՝ մանաւանդ հայ շատ առաջնորդներու:

Եւ այս ծախուած հայ առաջնորդներուն սխալ արեւելումը՝ 1915-ին հայ ազգին ցեղասպանութեան և մինչեւ 1920-թ.ին ալ

հայկական հողերուն հարիւրին ութսունէն աւելիին կորուստին պատճառ դարձաւ:

Եւ այս ձեւով **«սուտերու և երազներու»** գոհ հայ ազգը՝ «էշ ցահատակ» եղաւ:

* * *

Բոլորին ծանօթ իրականութիւն է որ հրեաները, իրենց տանարներուն մէջ, 2000 տարի շարունակ **«յառաջիկայ տարի Ծրուսադէմի մէջ»** իրենց մաղթանքը՝ աղօթքի ձեւով տեւաբար կրկնեցին:

Կը կարծէ՞ք, թէ միայն **դրամին ուժին հաւատացող և դրամը «աստուածացուցած»** հրեաները, իրենց մաղթանքը միամտօրէն միայն աղօթքի ձեւով պիտի կատարէին և Աստուծոյ տնօրինումին պիտի ձգէին իրենց **«Ծրուսադէմի մէջ միանալու»** ծրագրին գործադրութիւնը:

Սիոնական հրեաներու մասին քիչ մը տեղեկութիւն ունեցողն անգամ գիտէ, թէ հրեաները, իրենց **«Յառաջիկայ տարի Ծրուսադէմի մէջ»** աղօթքը, 2000 տարիէ ի վեր ժամացոյցի մը նշգրտութեամբ ծրագրեցին և իրենց սարդի ոստայնը հիւսեցին աշխարհի տարածքին առանց անապարանքի, բայց՝ տեւաբար:

Սիոնական հրեաներուն վերջին դարերուն կազմած սաղայելական ծրագիրները՝ մեծ նշգրտութեամբ և մանրամասնօրէն բացայայտող հրատարակութիւնը՝ «Protocol des sages de sion» գիրքն է:

Կը յանձնարարենք, որ եթէ կարենաք գտնել այս գիրքը՝ գայն ուշի ուշով կարդացէք անպայման: Միայն այս պարագային կրնաք հասկնալ, այս օրերուն աշխարհի մէջ կատարուած բոլոր եղելութիւններուն իսկական դրդապատճառներն ու ներքին ծալքերը:

* * *

Հրեաները միշտ, աշխարհի վրայ տիրող մեծ պետութիւններուն մէջ, իշխանութեան ղեկավար լծակները ձեռք անցուցած են:

18-րդ դարուն վերջաւորութեան և 19-րդ-ի սկիզբը, Ֆրանսական յեղափոխութեան և մանաւանդ Նաբոլէոնին հետ էին:

Յետոյ, ամէնէն հզօր պետութիւնը եղող Անգլիան ձեռք անցուցին:

Յիշեցէք 1870-թ.ներու Անգլիոյ վարչապետ՝ հրեայ Պենժամէն Տ'Իսրայէլին, որ Արեւմտեան Հայաստանը ազատագրող [1876] ռուսական բանակներուն ստիպեց, որ ետ քաշուին:

19-րդ դարուն վերջաւորութեան և 20-րդ.ի սկիզբը, զօրաւոր Գերմանիոյ մէջ հրեաները երկրին տէրը և տիրականն էին:

1915-ի Հայկական ցեղասպանութիւնը՝ գերմանական և քրքական շահերուն ի նպաստ էր: Բայց մանաւանդ՝ հետեւանքն էր սիոնիստական նոր Իսրայէլ մը ստեղծելու ծրագրին, որուն զոհ գացին Արեւմտեան Հայաստանը և Արեւմտեան Հայաստանի հայութիւնը ամբողջութեամբ:

1917-ի համայնավար յեղափոխութեան ստեղծման մէջ մեծ դերակատարութիւն ունեցան հրեաները, և 1917-ի յեղափոխութիւնը կրցան մասամբ սիոնական ծրագիրներուն ծառայեցնել: Ու 1914-1918-ի պատերազմին յաղթականներուն դաշնակիցը եղող Ռուսիան պարտուած նկատուեցաւ:

Եւ 1914-1918-ի պատերազմին պարտուած օսմանեան կայսրութիւնը, 1917-ի յեղափոխութենէն ստեղծուած հակասութիւններու շահագործումով, զօրաւոր Թուրքիայի մը վերածուեցաւ:

Եւ այս նոր Թուրքիոյ մէջ իշխանութիւնը սելանիկցի [խառնածին և մեծ հաւանականութեամբ ծագումով հրեայ] Մուսթաֆա Քեմալին ձեռքը անցաւ:

Եւ Մուսթաֆա Քեմալն էր, որ Արեւմտեան Հայաստանը՝ քրքական պետութեան մէջ ներմուծեց: Կը տեսնէ՛ք ահաւասիկ, թէ ինչպէս սիոնական աշխարհակալ ծրագիրը՝ քայլ առ քայլ, բայց նշգրտութեամբ կը գործադրուէր:

Եւ ամէնէն կարելորը՝ աշխարհի ժողովուրդները չէին անդրադառնար այս սատանայական խաղերուն... .. Սիոնիստական ծրագիրը նոյն ձեւով գործադրուեցաւ Միջին Արեւելքի երկիրներուն մէջ... և կը շարունակուի:

1918-թ.ին արաբական գրաւեալ հողամասերը ստիպուած լքեց պարտուող Օսմանեան կայսրութիւնը:

«Lawrence of Arabia» ֆիլմը տեսնողները գիտեն, թէ անգլիացիները և ֆրանսացիները ի՛նչ խաղ խաղացին Արաբիոյ մէջ:

Արաբական աշխարհը կտոր կտոր ըրին, և աւատապետական կառույցով փոքր պետութիւններու վերածեցին, որ կարենան անոնց իշխել...

ՆԱԹԻՐԻ
ԲԱՑԱՌԻԿ, 1 ՅՈՒՆՈՒԱՐ 2005

Յ Ա Յ Տ Ն Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

**ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ ՔՐՈՋ՝ ՀԱՅԿԱՆՈՒՇ ՉԷՎԻԿԵԱՆՆԻ
[ԾՆԵԱԼ՝ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ] ԱԿԱՆԱՏԵՍԻ ՎԿԱՅՈՒԹԻԻՆԸ
ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ ԿՐՏՍԵՐ ՔՈՅՐԸ՝ ՀԱՅԿԱՆՈՒՇ ԿԸ ԽՕՍԻ
ԻՐ ԵՂԲՕՐ՝ ՌՈՒԲԷՆԻ ԵՒ ԻՐ ԸՆՏԱՆԻՔԻ ՄԱՍԻՆ**

Բ. ՄԱՍ

**ՄԵՐ ՀՕՐԱՔՐՈՋ՝ ՀԱՅԿԱՆՈՒՇ ՉԷՎԻԿԵԱՆՆԻ ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ ԵՒ ԻՐ
ԸՆՏԱՆԻՔԻ ՄԱՍԻՆ ՎԿԱՅՈՒԹԻԻՆԸ, ՉԱՅՆԵՐԻՋԻ ՎՐԱՅ ԱՐՁԱՆԱԳՐԵ-
ՑԻՆՔ ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ 1966-ԻՆ, ՊՈԼՍՈՅ ՄԷՋ: ՅԵՏՈՅ՝ 1979-ԻՆ՝
ԱԹԷՆՔ:**

Ռուբէն Սեւակի քրոջ՝ Հայկանուշ Չեվիկեանի ականատեսի վկայութիւնները՝ մենք կը հաւատանք, որ Ռուբէն Սեւակի և իր ընտանիքի կեանքին անյայտ մնացած մասերը, զանոնք լուսաբանելու տեսակետէն՝ շատ կարեւոր են:

Հայկանուշ Չեվիկեանի հետ Աթենքի մէջ մեր ունեցած հարցազրոյցին ներկայ էին նաեւ, Ռուբէն Սեւակի երեց քրոջ՝ Էֆտիկ Յակոբովիչի [ծնեալ՝ Չիլինկիրեան] դուստրերէն՝ Սիրվարդ Գլընեան և Սրբուհի Փափագեան:

Ռուբէն Սեւակը ճանչցած Սիրվարդին ու Սրբուհիին ականատեսի վկայութիւնները, շատ օգտակար եղած են՝ Ռուբէն Սեւակի կենսագրութեան աւելի մօտէն ծանօթանալու համար:

Այստեղ, խոր ակնածանքով կը խոնարհինք՝ Հայկանուշ Չեվիկեանի, Սիրվարդ Գլընեանի և Սրբուհի Փափագեանի բարի յիշատակին առջեւ:

Հարցազրույց՝ Հայկանուշ Չեվիկեանի հետ**- Աթենք, Փետրուար 1979 - երկրորդ մաս**

«Հարցում».- Հօրաք, ի՞նչ գիտես հօրդ՝ Յովհաննես Յ. Չիլինկի-
րեանի կեանքի մասին:

Պատասխան.- Հայրս, Սիլվրի ծներ է: Սիլվրիի հայուքիւնը
բրքախօս էր, նոյնպէս՝ հայրս ալ բրքախօս էր: Եւ հօրս ատեն,
Սիլվրիի մէջ հայկական դպրոց չկայ եղեր:

Եւ հայրս ալ դպրոց չէ գացեր: Միայն Սիլվրիի եկեղեցիին քա-
հանան, տղոցը այբուբեն և Աւետարան կարդալ կը սորվեցնէ եղեր:

Հայրս նախ երկաթագործ և ապա փականագործ է եղեր:
[Չիլինկիը՝ բրքերէն երկաթագործ և նաեւ փականագործ ըսել է:
Չիլինկիրեան մականունը արդէն հոնկէ կու գայ: Յ. Չ.]:

Յետոյ, իր գործը՝ երկաթի և փականի վանառականութեան
վերածեր է:

Հայրս նախ կ'ամուսնանայ սիլվրիցի հայ ընտանիքի մը մէկ
աղջկան հետ:

Շատ գեղեցիկ աղջիկ մըն է եղեր հօրս առաջին կինը: Եւ անկէ
երկու զաւակներ կ'ունենայ՝ Քերովբէ և Էֆտիկ:

Բայց առաջին կինը, երիտասարդ տարիքին, թոքախտէ կը
մահանայ: Եւ հայրս ասկէ շատ կ'ազդուի:

Միջոց մը ետք հայրս, երկու զաւակները իր մահացող կնոջը
ազգականներուն կը յանձնէ և Երուսաղէմ կը մեկնի:

Հոն՝ «Մահտեսի» - Հանի - կ'ըլլայ: Եւ Երուսաղէմի վանքին մէջ
մէկ տարի մնալով հայերէն կարդալ ու գրել կը սորվի: Հուսկ՝
տիրացու կ'ըլլայ: Բայց Երուսաղէմի մէջ, կարգ մը անձերու հետ
ունեցած անհամաձայնութեան պատճառաւ, կը լքէ վանքը և
Սիլվրի կը վերադառնայ, ուր կը շարունակէ իր նախկին գործը:
Եւ միջոց մը յետոյ, իր ազգականներուն թելադրանքով, իր
ամուրիի կեանքին վերջ կուտայ, և երկրորդ անգամ ըլլալով
կ'ամուսնանայ՝ սիլվրիցի հայ ընտանիքի մը դստեր՝ Արմաւենիի
հետ: Արմաւենիին [մայրս] ալ շատ գեղեցիկ աղջիկ մըն է եղեր:

Եւ Արմաւենիէն չորս զաւակներ կ'ունենայ՝ Ռուբէն, Գրաբոս,
Հայկ և Հայկանուշ»:

Քիչ անդին [էջ 6 - «Ն.】 կը հրապարակենք Ռուբէն Սեւակի հօր՝
Յովհաննես Յ. Չիլինկիրեանի հայերէն տառերով և բրքերէն

1891
1884

հայերի քաղաքացիական կոնգրեսի անդամները
 Կոնգրեսի անդամներ 1888 1891 4

Կոնգրեսի անդամներ 1891 1894 Կոնգրեսի անդամներ

Կոնգրեսի անդամներ 1892 1895

Կոնգրեսի անդամներ 1899 1818 3 Կոնգրեսի անդամներ

Կոնգրեսի անդամներ 1891 1894

Կոնգրեսի անդամներ 1912 1899 Կոնգրեսի անդամներ

1914 1896
1891 4

ստորագրողները հայրենիքի համար պայքարողներն են
 և անհատներն են որոնք անհատապես կամ խումբերով
 հայրենիքի համար պայքարողներն են և որոնք հայրենիքի
 պայքարում անհատապես կամ խումբերով հայրենիքի
 պայքարում անհատապես կամ խումբերով հայրենիքի
 պայքարում անհատապես կամ խումբերով հայրենիքի
 պայքարում անհատապես կամ խումբերով հայրենիքի
 պայքարում անհատապես կամ խումբերով հայրենիքի
 պայքարում անհատապես կամ խումբերով հայրենիքի
 պայքարում անհատապես կամ խումբերով հայրենիքի
 պայքարում անհատապես կամ խումբերով հայրենիքի

Հ. Մանուկյան

Այս նամակը իր զաւկին՝ Հայկի կանխահաս մահուան պատճառաւ, իբր սուգի նշան, սեւով շրջանակած է:

Իսկ ստորեւ, կուտանք Յովհաննէս Յ. Զիլինկիրեանի հայերէն տառերով բայց թրքերէն լեզուով գրուած նամակին հայերէնը, բարգմանաբար՝ որքան որ կարելի է:

1914 Ապրիլ, 9 [22] Սիլիվրի

«Սիրելի զաւակ՝
Ռուբէն Յ. Զիլինկիրեան.

Նամակներդ ստացայ: Ուզած տեղեկութիւններդ կրցայ գտնել: Սիկորդայի [ապահովագրութիւն - Յ. Զ.] արձանագրուելու համար, մեր և բոլոր եղբայր-քոյրերուդ ծննդեան թուականները պէտք են եղեր, որ կարենաս արձանագրուիլ:

Այստեղ ալ անշուշտ «կեանքի ապահովագրութիւն» կայ, բայց միայն դիմում կատարող մարդը քննութիւնէ անցընելէ յետոյ կ'արձանագրեն, կը կարծեմ:

Ինչ որ է՝ փափաքիդ համաձայն, բոլորիս արձանագրութիւնները քեզի կ'ուղարկեմ:

Իմ հօրս անունը Յակոբ է: Մօրս անունը՝ Էֆտիկ: Հայրս 80 տարեկանին, իսկ մայրս 45 տարեկանին մահացան:

Իմ ծննդեան թուականը 1850 ըլլալուն [արաբական թուականով 1266] 65 տարեկան եմ ըսել է:

Մայրիկիդ հօրը անունը Գրարոս է: Իսկ իր մօրը անունը՝ Մարիամ: 70 տարեկան է: Մօրդ Արմաւենիին ծննդեան թուականը 1862 է [1278] 52 տարեկան ըսել է:

Քերովրէին և Էֆթիկին մօր անունը Սուրբիկ է, որ 40 տարեկանին իննէ հիւանդութենէն [թոքախտէ] մահացաւ:

Քերովրէին ծննդեան թուականը - 1877 [1294] 37 տարեկան է:

Էֆտիկի ծննդեան թուականը - 1879 [1296] 35 տարեկան է:

Ռուբէնին ծննդեան թուականը - 1885 [1301] 29 տարեկան է:

Գրարոսին ծննդեան թուականը - 1889 [1305] 25 տարեկան է:

Հայկանուշին ծննդեան թուականը - 1894 [1314] 18 տարեկան է:

Մահացած եղբորդ և քոյրերուդ թուականները - Վարդանուշին ծնունդը՝ 1887 [1303], իսկ մահը՝ 1891 [1307], 4 տարեկանին մահացաւ:

Զենոբիային ծնունդը - 1896 [1315], իսկ մահը՝ 1899 [1318], 3

տարեկանին մահացաւ:

Հայկին ծնունդը - 1891 [1307], մահը՝ 1914 [1329], 23 տարեկանին մահացաւ:

Կը կարծեմ, թէ քեզ հետաքրքրող բոլոր հարցերուդ մասին կրցայ պէտք եղած տեղեկութիւնները տալ: Եւ կը յուսամ, որ անձի մը ապահովագրման համար տուածներս բաւարար են:

Հասած ամէն նամակի մէջ, քանի մը շարաթէն ժամանելիդ կը տեղեկացնես: Կը կարծեմ, թէ գալդ մօտ է այլեւս:

Եւ մեծ փափաքով կ'սպասենք ձեր բարով հասնիլը:

Եթէ մեզի հարցնես՝ Ջատիկ ըրինք, իբր թէ:

Մենք՝ լաւ և հանգիստ ենք՝ ըսենք: Եւ քու ալ լաւ ըլլալդ կը մտադրենք:

Առողջութիւն, և բարեւներ՝ բոլորիդ:

Մայրիկիդ նամակն ալ միասին կ'ուղարկեմ:

Յ. Զիլինկիրեան

Բացատրական

Այս նամակին բնագրին վրայ տեսնուած եւրոպական թւանշաններով ճշդումները կատարուած են Լոզանի մէջ, իր հօր նամակը ստացած Ռուբէն Սեւակի կողմէ, ստուգելու համար մահացած իր եղբօր և քոյրերուն տարիքը:

Յ. Զ.

Հարցում.- Հօրաք, դուն կը յիշե՞ս արդեօք, թէ մեր մեծ հօր վրայ ի՞նչ ազդեցութիւն գործեց իր տղուն՝ Ռուբէն Սեւակի սպաննուելուն լուրը:

Պատասխան.- Պատերազմի տարիներուն [1914-1918] մենք, Սիլիվրիի մէջ, արգելափակուած էինք: Մեզի արգիլուած էր Սիլիվրիէն դուրս ելլել: Թէեւ աքսորի չենթարկուեցանք, բայց ամէն վայրկեան ունէինք վախ, որ արդեօք մենք ալ պիտի աքսորուինք...:

Եւ Սիլիվրիէն դուրս պատահած դէպքերը՝ գրոյցի ձեւով, բերնէ-բերան փոխանցուելով, հասան մեզի:

Ռուբէնի աքսորուելուն լուրն ալ, գրոյցի ձեւով իմացանք: Բայց յետոյ, սպաննուելուն լուրը տարածուիլ սկսաւ: Սակայն վստահ

չէինք: Աւելի ճիշդ՝ չէինք ուզեր հաւատալ: Որովհետեւ անստոյգ լուրերը մեզի յոյս կը ներշնչէին:

Բաւական ետք, այլեւս մեր յոյսը կտրեցինք:

Որովհետեւ, եկած ստոյգ լուրերէն համոզուեցանք, որ Ռուբէն սպաննուած է:

Այս ուշացման պատճառաւ, հայրս Ռուբէնին սպաննուելուն լուրը մէկէն չիմացաւ: Շատ երկարատեւ կասկածի շրջան մը անցուց:

Սիլիվրիի թուրքերը, մինչեւ վերջին տարիները, շատ յարգանք ունէին հօրս հանդէպ: «Հանը պապա, Հանը պապա» ըսելով ակնածանքով կը վերաբերէին հօրս հետ: Եւ հայրս երբեմն, Սիլիվրիի բրքական քաղին մէջի սրճարանը կ'երթար: Եւ հոն կը նստէր ու «patience» կը բանար: Բայց երբ Ռուբէնին սպաննուիլը հաստատուեցաւ՝ հայրս անգամ մըն ալ բրքական սրճարան չգնաց:

Արդէն՝ հայրս սակաւախօս մէկն էր: Բազմուրեան մէջ մտնել չէր սիրեր: Եւ Ռուբէնին սպաննուելէն յետոյ, բոլորովին «ինքն իր մէջ» քաշուեցաւ: Եւ միշտ առանձին մնալ կ'ուզէր: Տունը, մեր հետ քիչ մը նստելէ ետք, իր սենեակը կը քաշուէր: Եւ հոն, տեւական՝ սուրն, ծխախոտ, սուրն, ծխախոտ, և «patience» կը բանար: Հօրս այս վիճակէն կը հասկնայինք, որ Ռուբէնին սպաննուիլը շատ ծանր ազդած է անոր հոգիին վրայ:

1918-թ.ին պատերազմը վերջացաւ. թուրքերը պարտուեցան:

Մինչ այդ, 1919-թ.ին, Ռուբէնին կիներ՝ Ժաննին, իր երկու զաւակներով Փարիզ հաստատուած էր:

Հայրս և մայրս Ժաննիէն խնդրեցին, որ Ռուբէնին զաւակները՝ Լեւոնը և Շամիրամը Պոլիս դրկէ, որ իրենք ալ քիչ մը միսիրարուին:

Եւ Ժաննի դրկեց՝ Լեւոնը և Շամիրամը մեզի: Տղաքը Սիլիվրի եկան:

Եւ մեր տրամադրութիւնները փոխուեցան: Ուրախութեան շունչ մը կար մեր տան մէջ: Մանաւանդ՝ հայրս շատ գոհ էր:

Երբ լուրը տարածուեցաւ, որ Ռուբէն Սեւակի զաւակները Սիլիվրի եկած են, Պոլսոյ դաշնակցական կեդրոնէն մեզի լուր դրկեցին և ըսին, որ՝

«Ռուբէնին մանչը՝ Լեւոնը մեզի կ'իյնայ: Շամիրամը դուք առէք, բայց Լեւոնը մենք պիտի մեծցնենք, մեր ուզածին պէս»:

Բայց հայրս «ոչ» ըսաւ, շեշտելով.- Լեւոնը մինչեւ բարձրագոյն վարժարան յանախելու տարիներուն հասնիլը՝ մեր քովը պիտի մնայ: Յետոյ, եթէ ինքը ուզէ՝ կ'առնէք»:

Եւ Լեւոն ու Շամիրամ Սիլիվրի՝ մեր տունը մնացին, ի մեծ ուրախութիւն հօրս, մօրս և բոլորիս:

Պատերազմի աւարտէն միջոց մը յետոյ, յոյները գրաւեցին Արեւելեան Թրակիան ու նաեւ՝ Սիլիվրին և շրջակայքը:

Եւ Սիլիվրիի մեր տան վերի յարկին մեծ սենեակը, յոյն զինուորական սպայակոյտի կեդրոնատեղի ըրին:

Մինչ այդ՝ հայրս հիւանդացաւ: Միգելու դժուարութիւն ունէր: Հայրս Պոլիս տարին գործողութեան համար: Բայց բժիշկները, հօրս յառաջացեալ տարիքը նկատի առնելով, չեն ուզեր զինք գործողութեան ենթարկել: Եւ ան, կրկին տուն վերադարձաւ: Ու դժբախտաբար, Սիլիվրիի յոյն բժիշկները, դարման մը չկրցան գտնել անոր հիւանդութեան:

Հայրս, օրէ օր, աւելի տկարացաւ: Եւ 1922-թ.ին կորսնցուցինք զինք:

Սիլիվրիի մեր տան վերի յարկին իր սենեակին մէջ, անշունչ պառկած էր հայրս: Բոլորս ալ կարգի մտած, մօտեցանք ու զինք իր նակատէն համբուրեցինք:

Ռուբէն Սեւակի հօր՝ Յովհաննէս Յ. Չիլինկիրեանի նակատը վերջին համբուրողները եղան իր թոռնիկները՝ Լեւոնը և Շամիրամը:

Ամբողջ Սիլիվրին մասնակցեցաւ յուղարկաւորութեանը: Մաւաւանդ՝ յոյն մետրոպոլիտը, յոյն սպաներն և զինուորները:

Եւ յոյն զինուորական խումբ մը ընկերացաւ դագաղին՝ իբր յարգանք: Նահատակ բժիշկ հարիւրապետի մը հօր՝ իբր վերջին յարգանք:

* * *

Հարցում.- Հօրաք, մայրիկդ՝ Արմաւենին ինչպիսի՞ կին մըն էր, և ի՞նչ նկարագրով:

Ի՞նչ յիշատակներ ունիս անոր մասին:

Պատասխան.- Մայրս, բարի և հեզ կին մըն էր, ամուսինը՝ իբր «տէր» ընդունող հայ խոնարհ կնոջ տիպարն էր:

Հայրս, շատ «օթորիքեր» ամուսին մըն էր: Բայց մայրս, իր

անուշութեամբ, կը ջանար, որ իր տան մէջի բոլոր խնդիրները մեղմիկ հարթէ:

Բոլորս ալ, շատ կը սիրէինք զինք:

Իր հեզութեամբ գրաւած էր մեր բոլորին սրտերը: Բնաւ չեմ մոռնար այն օրը, երբ 1914-թ.ի Յունիս ամսուան մէջ, Ռուբէն իր կնոջ՝ Ժաննիին և երկու տարեկան Լեւոնին հետ, Սիլիվրի եկան:

Մենք, Ռուբէնի գալուն լուրը առած էինք և հայրս, մայրս և բոլորս, մեր տան պատշգամբը ելած, անհամբեր կ'սպասէինք անոնց ժամանելուն:

Սիլիվրիի մեր տունը, դէպի բլուր բարձրացող ճամբուն վրայ էր: Ուստի, այդ ճամբուն շատ վարէն եկողներն անգամ կրնայինք տեսնել:

Մէկէն, Ռուբէնէնց գալը տեսանք հեռուէն, և ձեռք շարժել սկսանք: Եւ Ռուբէնն ալ, որ տեսեր է մեր ձեռք շարժելը, սկսաւ շատ բարձր ձայնով պոռալ՝

«Մայրիկ, մայրիկ», և վազելով սկսաւ դիմել դէպի մեզ: Ռուբէնին այդ օր «մայրիկ, մայրիկ» պոռալու ձայնը, մինչեւ հիմա ականջներուս մէջ է, չեմ կրնար մոռնալ: Եւ մայրս ալ կ'ըսէր, թէ՝ «Ռուբէնին այդ ձայնը՝ միշտ կը լսեմ»:

* * *

Ռուբէնէնք 15 օր Սիլիվրի՝ մեր տունը մնալէ յետոյ, Պոլիս վերադարձան, իրենց տունը գացին:

Միջոց մը յետոյ, բարի լուրը առինք: Շամիրամը ծներ էր:

Հայրս և ես նուէրներով Պոլիս գացինք, Ռուբէնէնց բնակարանը՝ աչքի լոյսի:

Շատ անուշիկ էր նորածին Շամիրամը:

Հայրս, քանի մը օր մնալէ յետոյ, Սիլիվրի վերադարձաւ:

Եւ ես մնացի Ռուբէնէնց տունը: Ժաննիին կ'օգնէի: Իր երկու զաւակներուն խնամքին համար, ան շատ կ'աշխատէր՝ գերմանական կարգապահութեամբ:

Տղաքը, ժամը ժամուն, պիտի նաշէին, սա ժամուն պզտիկները իրենց կառքով պտոյտի պիտի հանուէին՝ օդ առնելու համար:

Մինչդեռ Ռուբէնին կեանքը՝ բժիշկի կեանք էր: Հիւանդներուն ո՛ր ժամուն գալը յայտնի չէր: Ռուբէնին ալ ո՛ր ժամուն հիւանդ մը համար կանչուիլը յայտնի չէր:

Յաւելուած՝ Ռուբէնին իբր հայ բանաստեղծ և իբր ազգային գործիչ պարտաւորութիւնները՝ ժաննիին կարգապահութեան սկզբունքներուն չէին յարմարիր:

Եւ այս վիճակը, տան մէջ, կարգ մը բարդութիւններու տեղի կուտար:

Բայց, ի վերջոյ, Ռուբէնին և ժաննիին իրարու հանդէպ ունեցած սերը՝ յաղթական կ'ելլէր:

Շատ անգամ Ռուբէն, գրական հաւաքոյթները կը կանչուէր: Եւ ժաննին, երախաներուն պատճառաւ, չէր կրնար ընկերանալ Ռուբէնին:

Եւ քանի մը անգամ ժաննին ուզեց, որ ես երթամ Ռուբէնին հետ այս հաւաքոյթներուն: Եւ այս մտաւորականներու հաւաքոյթները զիս շատ տպաւորած էին:

Օր մը, Ռուբէնին հետ, Իսկիւտարի Պերպերեան վարժարանը գացինք:

Դպրոցին մեծ հիւրասրահին մէջ հաւաքուած էին շատ մտաւորականներ: Բոլոր ծանօթ և մեծ անունները հոն էին:

Պերպերեան վարժարանին այն ատենուան տնօրէնը՝ Շահան Պերպերեանն էր, որ Ռուբէնին շատ մտերիմ ընկերն էր:

Հաւաքոյթին՝ բանաստեղծութիւններ արտասանուեցան: Գրական հարցերու շուրջ վիճաբանութիւններ եղան:

Յետոյ ըսին, որ «Ելեկտրականացած մ'բնոյորտը փոխենք»: Եւ Շահան Պերպերեանի քրոջմէն՝ Մաննիկ Պերպերեանէն խնդրեցին, որ դաշնակի ընկերակցութեամբ երգէ:

Իրապէս ալ, Մաննիկը գեղեցիկ ձայն ունէր, և ան կըրցաւ հմայել բոլոր ներկաները:

Մաննիկ Պերպերեան այն աղջիկն էր, որուն հայրը՝ Ռէթեոս Պերպերեան զինք Ռուբէնին հետ ամուսնացնել փափաքած էր:

Այս երանելի օրերը շատ շուտ անցան: Եւ ես արդէն Սիլիվրի վերադարձած էի:

Եւ օր մըն ալ ըսին, թէ՛ «պատերազմ կայ»:

Եւ ցաւալի լուրերը սկսան իրարու յաջորդել: Նախ՝ Ռուբէնին զինուորագրուիլը լսեցինք, յետոյ՝ իր աքսորուիլը: Իսկ աւելի ետը՝ շատ մը անստոյգ լուրերէն յետոյ՝ Ռուբէնի նահատակութեան գոյժը հասաւ...:

Եւ մայրս խենթանալու աստիճան կը տառապէր: «Երթամ աչքե-

րովս տեսնեմ իրենց տունը: Մինչեւ որ չտեսնեմ՝ չեմ հաւատար Ռուբէնին մահուան» - կ'ըսէր:

«Ո՛ր պիտի երթաս» - կ'ըսէինք իրեն, «Ամէն կողմ գինուորութեամբ լեցուն է: Եւ մեզի արգիլուած է Սիլիվրիէն ելլելը»: «Ես տարիքոտ կիւն եմ, ինձի ի՞նչ պիտի ընեն» - կը պատասխանէր:

Երբ տեսանք, որ անկարելի է մայրիկիս երթալուն արգելք ըլլալ, ստիպուած, վստահելի մէկը տուինք իրեն որ ընկերանայ, և մայրս Պոլիս մեկնեցաւ:

Հակառակ անոր, որ մայրս Պոլսոյ և Ռուբէնին տան ուր ըլլալը չէր գիտեր, իր մայրական բնագոյով յաջողեր է Պոլիս երթալ և հասնիլ Ռուբէնին բնակարանը:

Գուռը զարկեր է, բայց՝ բացող չկայ: Սպասեր է... «կարելի է կուգան» - ըսելով:

Սպասեր ու սպասեր է... վերջապէս, տան դռնապանը եկեր, և մօրս երեսին անխղճօրէն ամէն բան ըսեր է, թէ՛ «Տօքօքօրը, Չանդըրը-ի մէջ, սպաննեցին: Գերմանացի կիսն ալ, իր երկու գաւակներով, Գերմանիա վերադարձաւ»:

Եւ մայրս, այս խօսքերը լսելով, իր գաւկին բնակարանին դռան առջեւ կ'իյնայ ու կը մարի:

Շաբաթ մը յետոյ, մայրս Սիլիվրի բերին: Հիւանդ և բոլորովին ծերացած վիճակով: Բժիշկները զինք քննեցին և ըսին, թէ՛ «սիրտը լաւ չ'աշխատիր»: Եւ այսպէս՝ տարիներ անցան:

Յետոյ, պատերազմը վերջացաւ: Լեւոնը և Շամիրամը մեզի եկան, ուրախացանք: Բայց ցաւալի օրերը կրկին սկսան: Հայրս մահացաւ: Եւ յոյները Թրակիայէն ու նաեւ Սիլիվրիէն քաշուեցան:

Եւ մենք, «թուրքերը պիտի գան» ըսելով, Սիլիվրիէն Պոլիս ապաստանեցանք յուսալով, որ հոն աւելի ապահով է:

Եւ ես, մայրս, Գրաբոս եղբայրս, Լեւոնը և Շամիրամը էֆտիկ քրոջս ամուսնոյն վարձած Տատեաններուն Ֆլորիայի մէկ ագարակը կը բնակէինք: 1922-թ.ի ամրան ամիսներուն, Ֆլորիայի ագարակը միասին եղանք, էֆտիկ քրոջս ընտանիքին հիւր:

Բայց, միջոց մը ետք, թուրքերուն կրկին Պոլիսը գրաւելու մասին լուրերը տարածուիլ սկսան:

Փարիզէն՝ Ժաննին սարսափած ուզեց, որ տղաքը իրեն դրկենք: Եւ Լեւոն ու Շամիրամ Ֆրանսա մեկնեցան:

Իմ նշանածս ալ, որ Յունաստան ապաստանած էր, լուր դրկեց,

որ ես ալ Յունաստան երթամ, և հոն ամուսնանանք:

Այս ձեռով՝ մայրս, քոյրս և եղբայրներս Պոլիս ձգեցի և շտապ Յունաստան գացի, ուր ես ամուսնացայ: Երկու զաւակներ ունեցայ:

Յունաստանի Քավալա քաղաքը կ'ապրէինք: Եւ այս ձեռով՝ տարիներ անցան:

1933-թ.ին, ես ալ ծանր հիւանդութիւն մը անցուցի: Մայրս, լուր առնելով, ուզեր է գալ և զիս տեսնել: Գրաբոս եղբայրս Պոլիսէն, մօրս հետ, Քավալա եկաւ, և մայրս մեզի ձգելով, միջոց մը ետք, Պոլիս վերադարձաւ:

Մայրս շատ գոհ էր՝ զիս ողջ տեսնելուն համար: Վախցեր է, որ Ռուբէնին պէս ես ալ մեռած կրնամ ըլլալ:

Ես ալ շատ գոհ էի, մայրս քովս տեսնելով: Բայց նկատեցի, որ մայրս շնչառութեան դժուարութիւն ունի: 1915-թ.ին Պոլսոյ մէջ, Ռուբէնի տան առջեւ մարած օրէն ի վեր, սիրտը օրէ օր աւելի տկարացեր է:

Կարելի եղածին չափ իրեն հանգիստ ընել տուի: Գիշերները կանուխէն անկողին կը մտնէր: Եւ պառկած տեղը, ձեռքը Աւետարան մը բռնած, տեւական ու բարձրաձայն զայն կը կարդար:

Շատ զարմացայ: Որովհետեւ տեղեակ էի, որ մայրս գրել ու կարդալ չէր գիտեր: Իր տղուն՝ Ռուբէնին ղրկուած բոլոր նամակները ես կը գրէի իր անունով. նոյնիսկ ստորագրութիւնն ալ ես կը նետէի:

«Մայրիկ,- ըսի իրեն,- ի՞նչ է, կարդալ գիտցողի պէս բարձրաձայն կը կարդաս, նոյնիսկ էջերն ալ կը դարձնես»:

«Աղջիկս, ես ձեզի պէս դպրոցներ չգացի,- պատասխանեց մայրս... և շարունակեց. «Իմ մանկութեանս, Սիլիվրիի եկեղեցիին Տէր Պապան բոլոր տղաքը կը ժողուէր և մեզի այբուբեն կը սորվեցներ, և Աւետարան կարդալ կը սորվէինք: Ես, անկէ աւելի, դպրոց չգացի, բայց, Աւետարանը գոց գիտեմ, և ամէն մէկ էջին վրայ ո՞ր աղօթքը գրուած է՝ գիտեմ»:

Մայրս, քանի մը շաբաթ եւս մեր տունը մնալէ ետք, ուզեց Պոլիս վերադառնալ, իր տղուն՝ Գրաբոսին քով: Պոլսոյ թոռնիկները կարօտցած էր:

1934-թ.ի աշնան էր՝ մայրս Սելանիկէն Պոլիս գացող շոգեմալը

տարինք: Սեւանիկի իր բոլոր հարազատները և իր թոռնիկները՝ Սիրվարդ Գլընեան ու Սրբուհի Փափագեան, մայրս նամբելու եկած էին:

Մայրս շոգեմաւ նստեցուցինք, և ինք գնաց հանգստանալու:

Մենք հագի՛ւ Սեւանիկի մերիններուն տունը հասած էինք՝ ոստիկանութիւնը լուր տուաւ, որ մայրս, շոգեմաւը դեռ քարափէն չհեռացած, «գապին»ի իր անկողինին մէջ մահացեր է: Եւ կուրծքին վրայ գտեր են՝ Աւետարանը:

Մայրս, Սեւանիկի հայկական եկեղեցիին մէջ եղած արարողութենէն յետոյ, տեղւոյն ազգային գերեզմանատունը քաղեցինք:

Բայց, սրտիս մէջ մնաց այն մեծ ցաւը, որ իր մեռնելէն քանի մը շաբաթ առաջ, երեսին զարկած էի իր անուս ըլլալը:

Այո, մայրս կարդալ գրել չէր գիտեր: Բայց իր ծիններուն մէջ՝ տաղանդի սերմեր կային: Որովհետեւ ան՝ Ռուբէն Սեւակ մը աշխարհ բերած էր»:

* * *

Ռուբէն Սեւակի քրոջ՝ Հայկանուշ Չեվիկեանի հետ մեր կատարած հարցազրոյցին [ինչպէս որ ասկէ առաջ նշած էինք], ներկայ էին նաեւ, Սիրվարդ Գլընեանը և Սրբուհի Փափագեանը:

Երկուքն ալ, Հայկանուշ Չեվիկեանի Ռուբէն Սեւակի մասին պատմածներուն մեծ մասին տեղեակ էին: Որովհետեւ Սիլիվրիի մէջ, միասին ապրած էին այդ օրերը, և լսած էին այդ բոլորը իրենց մօրմէն՝ Էֆթիկ Յակոբովիչ-Չիլինկիրեանէն:

Այստեղ պիտի ջանանք տալ երկու քոյրերուն պատմած յուշերէն կարգ մը հատուածներ.

Սիրվարդ Գլընեանի պատմածները - Նահատակ Ռուբէն Սեւակի յիշատակին կատարուած սգահանդէսը Պոլսոյ մէջ, 1919-թ.ին

«Այդ օր, Պոլսոյ մէջ, ես ալ ներկայ էի այդ սգահանդէսին: Շատ տխուր օր մըն էր այդ, մեզի համար: Շատ յուզուեցանք: Շատ ծանօթ անձնաւորութիւններ ելոյթներ ունեցան: Բայց մէկ հոգիի մը ելոյթը, դեռ մինչեւ հիմա, աչքիս առջեւն է: Չեմ կրնար մոռնալ:

Կարգը եկած էր խօսելու Պերպերեան վարժարանի տնօրէն՝ Շահան Պերպերեանին, որ շատ մտերիմ ընկերը եղած էր Ռուբէն

Սեւակին: Շահան Պերպերեան, շատ տխուր երեւոյթով մը, բեմ եկաւ: Եւ սկսաւ խօսիլ՝ «Ռուբէն Սեւակին աչքերը...» - ըսաւ և կեցաւ: Յայտնի էր, որ շատ յուզուած էր: Եւ կրկնեց՝ «Ռուբէն Սեւակին աչքերը...» - եւ վերջապէս՝ Շահան Պերպերեան հեծկլտալով սկսաւ լալ: Եւ «Ներողութիւն պիտի չկրնամ խօսիլ» ըսաւ, և հեկեկալով հեռացաւ բեմէն»:

* * *

Սրբունի Փափազեանին պատմածները Ռուբէն Սեւակի եւ իր վաղամեռիկ եղբօր Հայկի մասին

«Հայկ Պոլիս կ'ուսանէր: Շատ յաջող էր դասերուն մէջ: Գասարանները երկու-երկու կ'անցնէր: Լիսէն՝ իր տարիքին համեմատ՝ շատ կանուխ աւարտեց: Եւ երկու համալսարանի արձանագրուեցաւ՝ իրաւաբանութեան և գիտութիւններու:

Եւ իր եղբօր՝ Ռուբէն Սեւակի հետ շատ մտերիմ և գաղափարակից էր: Հասակով ալ Ռուբէնէն բարձր էր: Եւ Ռուբէն Սեւակ, իր եղբօր՝ Հայկին դրկած նամակին մէջ, սապէս գրած էր՝

«Սիրելի Հայկս՝ դուն, ոչ միայն հասակով բարձր ես ինձմէ: Այլեւ՝ տաղանդով ալ ինձմէ բարձր ես: Եւ վստան եմ, որ շատ փայլուն ապագայ մը պիտի ունենաս:

1913 Լոզան

Եղբայրդ՝ Ռուբէն

Բայց Ռուբէնին Հայկին համար կատարած նախատեսութիւնը չիրականացաւ:

Հայկը, իբր համալսարանական ուսանող, Պոլիս կ'ապրէր, **բանսիռնի** մը մէջ:

Եւ երկու համալսարաններու դասերու սերտողութեան աշխատանքները մոռցուցեր էին Հայկին, որ յաջողելու համար, պէտք է նաեւ լաւ սնունդ առնել:

Եւ աշխատանք, աշխատանք՝ առանց բաւականաչափ սնունդի...:

Եւ տարուայ վերջի համալսարանական քննութիւնները կը հասնին: Եւ կրկին աշխատանք, մինչեւ առաւօտները:

Վերջապէս, շնորհաւորութիւններով կ'աւարտէ քննութիւնները:

Եւ Հայկ, այս յաջողութեան ուրախութեամբ, Սիլիվրի վերադարձաւ:

Բայց, ան շատ նիհարցած էր, գրեթէ կմախք դարձած: Եւ

տեւապէս կը հազար: Բժիշկները քննեցին և ըսին, թէ՛ բոքախտը պատած է երկու բոքերն ալ:

Բայց, Հայկ չէր հասկցած, և կամ՝ չէր ուզած հասկնալ իր հիւանդութեան, իր առողջական վիճակին լրջութիւնը:

Իր եղբօր՝ Ռուբէնին գրած վերջին նամակին մէջ կ'ըսէր, թէ՛ «Հետզհետէ լաւանալու վրայ եմ: Եւ հագս դադրեցաւ ըսելու չափ քիչցած է»:

Եւ այս նամակը գրելէ քանի մը օր ետք, հողին յանձնեցինք Հայկը»:

* * *

Ռուբէն Սեւակ իր վաղամեռիկ եղբօր՝ Հայկին յիշատակը յաւերժացուց իր «Բժիշկին գիրքէն փրցուած էջեր»ու շարքէն՝ «Ահաւոր տարակոյսը» գրութեամբ: [Տես՝ Ռուբէն Սեւակ - Երկեր - Անթիլիաս - 1986, էջ - 387]:

Բայց, ո՞ր գրութիւնը, ո՞ր աղօթքը կրնայ մ'իտարել իրենց զաւակը կորսնցուցած հօր մը կամ մօր մը:

Յովհաննէս Յ. Զիլինկիրեան և Արմաւենի Զիլինկիրեան ամուլը, երկու տարուայ ընթացքին կորսնցուցին իրենց երկու զաւակները՝

1.- 1914-թ.ին Հայկը՝ 23 տարեկան: 2.- 1915-թ.ին Ռուբէնը՝ 30 տարեկան:

Մենք կը հաւատանք, որ միայն զաւակ մը կորսնցուցած հայր և մայր մը կրնան զգալ և գիտնալ, թէ ի՞նչ ահաւոր ցաւ է զաւակի մը կորուստը:

* * *

Մենք, այս գրութիւններով, մեր հարազատներուն յիշողութիւններուն օգնութեամբ ջանացինք տալ, Ռուբէն Սեւակի ընտանիքին կեանքի ցաւալի պատմութիւնը:

Մեր մեծ հայրը՝ Յովհաննէս Յ. Զիլինկիրեանը չենք հանչցած: Ան մահացած էր 1922-թ.ին: Մենք ծնած ենք 1924-թ.ին:

Բայց, շատ բան սորվեցանք և լսեցինք իր մասին, մեր հարազատներուն վկայութիւններով, և զանոնք ջանացինք գրի առնել:

Այսօր կը ցաւինք, որ մեր բոլոր հարազատներէն Յովհաննէս Յ. Զիլինկիրեանի մասին իրենց ունեցած տեղեկութիւնները, բաւարար չափով չենք արձանագրած, ո՛չ ալ ձայներիզի վրայ առած:

Յաւելուած՝ մեզի ցաւ պատճառող ուրիշ պարագայ մը կայ - Այսօր, մեր մեծ հօր՝ Յովհաննէս Յ. Զիլինկիրեանի նկարը չունինք: Կրնա՞ք երեւակայել, որ Ռուբէն Սեւակի հօր նկարը այսօր ունեցած չըլլանք: Հակառակ անոր, որ ան մինչեւ 1922-թ.ն ապրած է:

Շատ փնտոցիկնք Յովհաննէս Յ. Զիլինկիրեանի նկարը՝ մեր հարազատներուն քով և ամէն տեղ: Նաեւ՝ Ռուբէն Սեւակի թողօններուն մէջ յուսացիկնք զայն գտնել, բայց... ի գո՛ւր:

Շատ յոյս ունեինք, որ մեր հօրաքրոջ աղջկան՝ Քրիստին Սալերիի մօտ պիտի կարենանք զայն գտնել: Բայց, հակառակ Քրիստինին փնտոտուքներուն, մինչեւ այսօր ան ալ չյաջողեցաւ գտնել: Եւ դեռ այսօր չունինք, դժբախտաբար, Յովհաննէս Յ. Զիլինկիրեանի նկարը:

Կը կարծենք, որ անոր դիմանկարին չգոյութիւնը, Յովհաննէս Յ. Զիլինկիրեանի հանրութեան հետու ապրելու նկարագրին և մեկուսի կեանք մ'ունենալ ուզելուն պատճառաւ է:

Բայց մենք յոյս ունինք, որ մեր վերջնական «մեկնում»էն յետոյ, մեր հարազատները պիտի գտնեն իրենց «պապ»ին նկարը:

Գալով մեր մեծ մօր՝ Արմաւենի Զիլինկիրեանին՝ մինչեւ 1933-թ. [մեր 9 տարեկան եղած օրերը] մեր հօր բնակարանին մէջ միասին ապրեցանք:

Ան՝ շատ բարի, հանոյակատար և մանաւանդ՝ շատ խելացի կին մըն էր, բայց՝ տկար և հիւանդ:

Կը յիշենք, որ մեր՝ Պոլսոյ Մաքրի գիւղը բնակած տարիներուն, այդ շրջանի շատ ծանօթ վիրաբոյժներէն՝ տօքթ. Մանուէլեանը, մասնաւոր մինչեւ մեր տունը եկած էր, տեսնելու համար Ռուբէն Սեւակին մօր՝ Արմաւենի Զիլինկիրեանը:

Օր մըն ալ Չանդըրը-ի աքսորեալներէն՝ վերապրող տօքթ. Տիմանեանը, որ Չանդըրը-ի մէջ Ռուբէն Սեւակի հետ միջոց մը միասին եղած էր, կանչեցիկնք մեր տունը իբր բժիշկ, որ քննէ մեր մեծ մօր, որ հիւանդ էր:

Բայց, տօքթ. Տիմանեան մեր տան մէջ, բնաւ չխօսեցաւ Ռուբէն Սեւակի մասին:

Արդէն՝ տօքթ. Տիմանեան սքանչելի «cosmopolite» հայ մըն էր, և կը զարմանայինք, թէ բուրքերը ինչն^{ու} զինք աքսորած էին Չանդըրը, այս՝ հայութեան հետ կապ չունեցող մարդը:

Բայց, ուրիշ պարագայ մըն ալ կայ, որ մեզի ցաւ կը պատճառէ:

Ռուբէն Սեւակի հետ Չանդըրը գտնուած բայց վերապրած բժիշկ Վահան Ալթունեանը, որ 1920-թ.ին Պոլսոյ «Հայ բուժակ» քերթին մէջ Չանդըրը-ի ու Ռուբէն Սեւակի հերոսական կեանքին մասին ամենէն կարեւոր վկայութիւնը հրատարակած էր՝ մեր Պոլիս գտնուած տարիներուն դե՛ռ հոն կ'ապրէր:

Եւ մենք, որեւէ ձեւով չգիտցանք, թէ տօքթ. Վահան Ալթունեան Ռուբէն Սեւակի ընկերը եղած է: Ան ունէր երկու մանչ զաւակներ, երկուքն ալ բժիշկ:

Մէկը՝ մանկաբոյժ-բժիշկ տօքթ. Նուրան Ալթունեանն էր, որուն տարինք մեր երախաները որ դարմանէ:

Բայց տօքթ. Նուրան Ալթունեանին հետ երբեք չխօսեցանք ո՛չ իր հօրը, ո՛չ Չանդըրը-ի և ո՛չ ալ Ռուբէն Սեւակի մասին:

Որովհետեւ Պոլիս, հայկականութեան տեսակետէն՝ խաւարի մէջ կ'ապրէինք:

Միւս եղբայրը՝ Արա Ալթունեան, որ ատամնաբոյժ-բժիշկ մըն էր, 1970-թ.ներէն մինչեւ 1976-թ.ի ամառուան ամիսները, Պոլսոյ կղզիներէն Kinali-ի մէջ [նախկին Հայ կղզի] դրացի եղած ենք տարիներ: Միշտ կը հանդիպէինք իրարու: Բայց ո՛չ ան խօսեցաւ իր հօր՝ Ալթունեանի և Չանդըրը-ի մասին, ոչ ալ մենք՝ Ռուբէն Սեւակի:

Որովհետեւ Պոլսոյ մէջ, թուրքերուն ազդած սարսափը հայերուն մէջ այնքան գորաւոր էր, և այդ սարսափը այնքա՛ն մեր արեան մէջ ներմուծուած, որ ամէնքս ալ մեր շուքէն կը վախնայինք...:

* * *

Բայց, հակառակ Պոլսոյ հայերուն այս զգուշաւորութեան, իրենց վախկոտութեան և հայկական «ջայլամի քաղաքականութեան», թուրքերը շատ լաւ գիտէին, թէ՛ ո՞վ ինչ էր, ի՞նչ ըրած էր և ինչո՞ւ կ'ընէր:

Այստեղ պիտի ջանանք պատմել պատահար մը՝ ապացուցանելու համար, որ թուրքերը աղուեսի նման անձայն, անշշուկ կը հսկեն հայերուն բոլոր շարժումներուն:

1950-թ.ներուն էր, մեր Պոլսոյ գործատեղին ընդլայնեցինք, և հոն կարգ մը նոր մեքենաներ գետեղեցինք, որ մեր արտադրած մածուներէնները պաղեցնելու համար, գիշեր-ցերեկ աշխատին:

Բայց, մեր գործարանին շուրջ բնակող թուրք մը գանգատիլ

սկսաւ, թէ՛ գիշերները անհանգիստ կ'ըլլայ մեքենաներուն ձայներէն:

Եւ մենք, ձայնը մեղմացնելու համար, կարգադրութիւններ ընելու աշխատեցանք: Բայց մեր թուրք դրացին, շարունակեց գանգատիլ:

Անպայման, որ այս թուրքը արդէ՛ն անքնութենէ կը տառապէր: Այլապէս, դժուար էր համոզուիլ, որ այսքան թեթեւ աղմուկ մը զինք կրնար անքուն պահել և անհանգստացնել:

Եւ մենք, ստիպողաբար, շարունակեցինք մեր մեքենաները աշխատացնել: Եւ թուրքն ալ շարունակեց տեւական գանգատիլ՝ ամէն օր և ամէն տեղ:

Եւ օր մը ալ տեղեկացանք, որ այս թուրքը 100 էջնոց մեքենագրուած գանգատագիր-աղերսագիր - «գիրք» մը պատրաստեր է: Եւ այս գիրքը ուղարկեր է Թուրքիոյ պատկան իշխանութիւններուն, և նաեւ՝ մեր թուրք դրացիներուն:

«Գիրք»ը մեզի ալ եկաւ: Եւ այս գիրքին մէջ, բացի աղմուկի մասին ամբաստանութենէն, շատ կարեւոր ու նենգամիտ «մեղադրանք» մը կար:

Այս թուրքը հօրս կ'ամբաստանէր, ըսելով, որ ան **«Դաշնակ Կոմիթանը տօրթ. Ռուբէն Զիլինկիրեանին եղբայրը ըլլալով, շատ վտանգաւոր անձ մըն է»:**

Մենք, մեր սրտին խորը թաղած էինք Ռուբէն Սեւակի եղբրական մահուան ողբերգութիւնը:

Բայց այս թուրքը դե՛ռ չէր մոռցած, որ հայրս՝ բժիշկ Ռուբէն Զիլինկիրեանի եղբայրն է:

Եւ յետո՛յ միայն տեղեկացանք, որ այս՝ մեզի դրացի թուրքը՝ Թալաթ փաշային թիկնապահ-շարժավարը եղած է...:

ՆԱԹԻՐԻ

ԹԻԻ 229, 230, 231, 25 ՅՈՒՆՈՒԱՐ, 8, 22 ՓԵՏՐՈՒԱՐ 2005

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ, ՀԱՅՈՒ ԱՆՈՒՆ ԿՐՈՂ ԹԱՐԳՄԱՆԻՉ ՄԸ՝ ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ ՉԱՆՂԸՐԸ-Ի ՀԵՐՈՍԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ ՍՐԲԱՊՂԾԵՑ

2004-ԻՆ ԵՐԵՎԱՆԻ ՄԷՋ, ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ ԲԱՆԱՍՏԵՂ-ԾՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՄԷԿ ՄԱՍԻՆ ՌՈՒՍԵՐԷՆ ԹԱՐԳՄԱՆՈՒ-ԹԻՒՆՆԵՐԸ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԳԻՐՔ ՄԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԵՑԱԻ...

ԵՒ ԹԱՐԳՄԱՆԻՉԸ, ԻՐ ՅԱՌԱՋԱՐԱՆԻՆ ՄԷՋ, ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ ՉԱՆՂԸՐԸ-Ի ՀԵՐՈՍԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ՍԱՊԷՍ ԳՐԵՐ Է. «ԲԱՑԱՌՈՒԱԾ ՉԷ, ՈՐ ԱՅԴ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ ԱՆՀԱՒԱՍՏԻ [ԿԵՂԾ, ԿԱՍԿԱԾԵԼԻ] ԼԻՆԻ:

ԵՒ ԱՄԷՆԷՆ ԱՆՀԱՒԱՍՏԱԼԻՆ՝ ԱՅՍ ՍՐԲԱՊՂԾՈՒԹԵԱՆ [ԱՌԱՆՑ ՏԵՂԵԱԿ ԸԼԼԱԼՈՒ ԵԱՌԱՋԱՐԱՆԻՆ ՄԷՋ ԳՐՈՒԱԾ-ՆԵՐՈՒՆ] ՄԵՆՔ ՄԵՂՍԱԿԻՑ ԵՂԱՆՔ... ՈՐՈՎՀԵՏԵՒ, ԱՅՍ ԳԻՐՔԻՆ ՄԵԿԵՆԱՍԸ... ՄԵՆՔ ԷՒՆՔ

Հայաստանի ամէնէն հմուտ արուեստաբանը, որ գրեթէ քսան տարիներէ ի վեր մեր բարեկամն է, ասկէ հինգ տարիներ առաջ մեզի առաջարկեց՝ Ռուբէն Սեւակի բանաստեղծութիւնները ռուսերէնի թարգմանելով գիրք մը հրատարակել:

Մենք, սիրով ընդառաջեցինք այս առաջարկին:

Եւ հինգ տարիներու ընթացքին ալ, այդ բանաստեղծութիւնները ռուսերէնի թարգմանելու համար, պէտք եղած վճարումները իրեն կատարեցինք:

Եւ 2003-ի վերջաւորութեան այս թարգմանութիւններուն իբր գիրք հրատարակութեան ծախսերն ալ ըրինք:

Մինչ այդ՝ մեր այս արուեստաբան բարեկամին առաջարկեցինք, որ գիրքը երկու լեզուներով՝ ռուսերէն և հայերէն հրատարակուի:

Այս ձեւով, ռուսերէն և կամ հայերէն քիչ գիտցողներն ալ կրնային, այս գիրքէն օգտուիլ:

Եւ նաեւ, իրեն յանձնեցինք Ռուբէն Սեւակի Յիշատակի Տան, մինչեւ հիմա հրատարակած գիրքերուն ցանկը՝ որ ռուսերէն գիրքին վերջին էջերուն մէջ դրուի [ինչպէս որ մեր հրատարակած գիրքերուն մէջ այս ցանկը դրուած է]:

2004-թ.ի Մարտ ամսու վերջաւորութեան է, որ այս գիրքը մեր ձեռքը հասաւ:

Բայց նկատեցինք, որ այս գիրքը միայն ռուսերէն լեզուով հրատարակուած էր:

Մենք ռուսերէն չենք գիտեր դժբախտաբար. բայց, գիրքին առաջին և վերջին էջերը ուշադրութեամբ քննելէ ետք, հասկցանք, որ այս գիրքին Ռուբէն Սեւակի Յիշատակի Տան մեկենասութեամբ հրատարակուած ըլլալը հոն չէր գրուած:

Եւ ոչ ալ, Ռուբէն Սեւակի Յիշատակի Տան կողմէ հրատարակուած գիրքերուն ցանկը դրուած էր այնտեղ:

* * *

Բայց յետոյ, շատ... ուրախացանք, որ այս գիրքին մէջ, մեր... անունը և նաեւ Ռուբէն Սեւակի Յիշատակի Տան անունը, իբր մեկենաս, չէր գրուած: Ինչո՞ւ: Բացատրելու ջանանք:

Ռուսերէն գիրքը բաւական թղթատելէ ետք, նկատեցինք, որ գիրքին սկիզբը՝ յառաջաբաններ գրուած են՝ առաջինը՝ թարգմանիչին կողմէ: Իսկ երկրորդը՝ մեր բարեկամ արուեստաբանին կողմէ:

Ինչպէս որ վերը նշեցինք՝ դժբախտաբար ռուսերէն չենք գիտեր: Այդ պատճառաւ Հայաստանի մեր բարեկամներէն խնդրեցինք, որ այս ռուսերէն գիրքին մէջի [բնական է՝ Ռուբէն Սեւակին բանաստեղծութիւններէն զատ] բոլոր գրութիւնները հայերէնի թարգմանելով մեզի ուղարկեն...

Բայց, այս թարգմանութիւններուն կատարուիլը, շատ ուշացաւ: Գրեթէ վեց ամիսներ տեւեց:

Եվ վերջապէս՝ Հոկտեմբեր 2004-թ.ի սկիզբի շաբաթներուն, թարգմանութիւնները մեզի հասան:

... Եւ կարդացինք, թարգմանիչին Ռուբէն Սեւակի ռուսերէն գիրքին յառաջաբանին մէջ գրուածները... և սուկացինք:

Տեսէք, թէ ինչե՛ր կը գրէ այս հայու անուն կրող թարգմանիչը՝

Ռուբեն Սեւակի Չանղըրը-ի մէջի հերոսական օրերուն և նոյնքան դիւցազնական վախճանին մասին:

«Չեմ բացառում, որ այս պատմուածքը անստոյգ է... անգամ եթէ մեզ ներկայացուած մանրամասնութիւնները մտացածին են: Կարելորը այն է, որ այն ունի իր արժէքը: Եթէ ծնուել ու տարածուել են Սեւակի մասին աւանդութիւնը, ուրեմն նա ինքն է առիթ դարձել եւ արժանի էր դրան»:

Ի՛նչ զարհուրելի սրբապղծութիւն կը կազմեն այս խօսքերը Ռուբեն Սեւակի հերոսական կերպարը աղարտող:

Թարգմանիչը նախ կ'ըսէ, թէ՛ **«Ռուբեն Սեւակի Չանղըրը-ի հերոսական կեանքի պատմութիւնը՝ հաւանաբար անստոյգ է, եւ մանրամասնութիւնները մտացածին են»:**

Յետոյ կ'ըսէ, թէ՛ **«բայց այն, իր արժէքը ունի»:**

Մեծապատիւ թարգմանիչ, դուն, ամէն մարդ ապուշ և տխմա՞ր կը կարծես - չե՞ս ըսեր:

Եթէ, Ռուբեն Սեւակի պատմութիւնը անստոյգ է եւ մտացածին, ըսել է՝ ամէն բան սուտ է հոն, իրականութիւն չէ: Հետեւաբար, ո՞ւր է ասոր արժէքը:

* * *

Բայց այս թարգմանիչին կատարած սրբապղծութիւնները այսքանով չաւարտեցան: Միջոց մը ետք Երեւանէն, Ալեքսանտր Թոփչեանի կողմէ դրկուած նամակ մը ստացանք:

Այս նամակին մէջ, Երեւանի «Նովոյէ վրեմիա» ռուսական թերթին 5 Հոկտեմբեր 2004 և 16 Հոկտեմբեր 2004 թիւերէն երկու էջեր կային:

1.- 5 Հոկտեմբեր 2004 թուակիր «Նովոյէ վրեմիա» թերթին մէջ, Ալեքսանտր Թոփչեան յօդուած մը հրատարակած էր [եւ ան, այս ռուսերէն յօդուածին հայերէն թարգմանութիւնն ալ, մեզի ուղարկելու ազնուութիւնը ունեցաւ]:

Եւ Ալեքսանտր Թոփչեան իր այս ռուսերէն գրութիւնով՝ հայու անուն կրող թարգմանիչին Ռուբեն Սեւակի դեմ գործած սրբապղծութեան արժանի պատասխան մը կու տար, և ճշելով բոլոր իրականութիւնները, ճշգրտօրէն, անվիճելի փաստարկութիւններով, և արդարօրէն և մանաւանդ՝ հայկական ոգիով:

Այս առիթով, մեր խոր գնահատանքը և շնորհակալութիւնները կը յայտնենք պրն. Ալեքսանտր Թոփչեանին:

Բայց կը ցաւինք նաեւ ըսելու, որ Հայաստանի մէջ, Ալեքսան. Թոփչեանէն զատ ոչ մէկ մտաւորական, ոչ մէկ հայրենասէր հայ համարձակութիւնը ունեցաւ պատասխանելու այս գրպարտիչ-բարգմանիչին:

Եւ Հայաստանի մտաւորականներուն և հայրենասէր հայերուն այս անտարբերութիւնը, շատ աւելի վտանգավոր է հայ ազգին ապագային համար, քան հայու անուն կրող այս բարգմանիչին նենգամիտ ուրացումը:

* * *

Եւ բանսարկու բարգմանիչը, շատ հաւանական է, որ Հայաստանի մտաւորականներուն և հայրենասէրներուն անտարբերութենէն ալ քաջալերուելով, Երեւանի «Նովոյէ վրէմիա» թերթին 16 Հոկտեմբեր 2004 թիւին մէջ, Ալեքսանտր Թոփչեանին յօդուածին [իբր թէ] պատասխան մը կու տայ: Եւ ան, այս գրութեան մէջ, փոխանակ Ալեքսանտր Թոփչեանին նշած փաստացի իրականութիւններուն պատասխանելու, նիւթէն բոլորովին շեղելով լիբր պոռոտախօսութեամբ կը շարունակէ իր լեզուագարութիւնը:

Եւ ամէնէն ցաւալին՝ այս չարամիտ բարգմանիչը, իր ոռուսերէն գիրքին մէջ, Ռուբէն Սեւակի դէմ կատարած սրբապղծութիւնները, այս պատասխան գրութեան մէջ, աւելի կը սաստկացնէ և բան մըն ալ կ'աւելցնէ իր արդէն ունեցած մեղքին վրայ:

* * *

Ընդվզելով այս բարգմանիչին նահատակ Ռուբէն Սեւակի հանդէպ կատարած սրբապղծութիւններուն դէմ՝ այստեղ ստիպողաբար, կրկին կը հրատարակենք՝ Չանդըրը-ի դժոխքէն փրկուած և Ռուբէն Սեւակի հերոսական կեանքը պատմող իր ընկերներուն ականատեսի վկայութիւնները:

Մենք կը հաւատանք, որ այս վերապրող աքտրեալներէն ամէն մէկուն վկայութիւնը՝ այս կուրացած բարգմանիչին աչքերուն մէջ մխրճուած նետ մըն է, պէտք է որ ըլլայ:

(Հիշյալ վկայութիւնները տե՛ս նախորդ էջերում - խմբ.)

* * *

Մենք, 1985-թ.էն ի վեր և մինչեւ այսօր, Ռուբէն Սեւակի Չանդըրը-ի հերոսական կեանքի պատմութիւնը կը նշենք՝ միշտ տալով ականատես վկաներուն անունները, իրենց ունեցած ստոյգ տեղեկութիւններով և յիշելով այդ վկայութեանց ո՞ր թերթին և ո՞ր գիրքին մէջ ու ո՞ր թուականին հրատարակուած ըլլալը, ամենայն նշգրտութեամբ:

Այս գրպարտիչ-թարգմանիչը չի՞ գիտեր այս ականատեսի վկայութիւնները: Բնական է՝ գիտէ և շատ լա՛ւ գիտէ:

Բայց՝ կ'ուրանայ, և «Բացառուած չէ, որ պատմութիւնը անհաւաստի լինի», «Մենք երկրորդ և երրորդ բերաններից գիտենք այս մասին» կ'ըսէ: Ճիշդ ցեղասպան թուրքին նման, որ կ'ուրանայ Հայկական ցեղասպանութիւնը և «ցեղասպանութիւն չէ եղած, ստոյգ՝ հայերուն կողմէ ստեղծուած սուտ պատմութիւններ են» կ'ըսէ:

Միայն հայու թշնամի թուրք մը կրնայ, այս թարգմանիչին նման, այսպիսի սրբապղծութիւն մը կատարել:

Եւ մենք կը հաւատանք, որ այս գրպարտիչ թարգմանիչը, հակառակ որ հայու անուն կը կրէ, իրականութեան մէջ հոգիով իսկական թուրք մըն է:

* * *

24 Ապրիլ 2005-թ.ին հայութիւնը կրկին պիտի յիշատակէ, 24 Ապրիլ 1915-ի Եղեռնը: Կրնա՞ք երեւակայել:

90 տարիներ անցեր են այդ զարհուրելի թուականէն ի վեր:

Եւ մենք տեւաբար, կուլանք ու կուլանք, մեր նահատակներուն համար:

Ինչպէս որ դեռ 1909-ին, Ռուբէն Սեւակ իր «Ջանգալներ, զանգակներ» բանաստեղծութեան մէջ, իրաւամբ ըսած էր՝

*«Հոգիիս հագար խուլ զանգակներով,
Գոռացէք, զանգեր, ու կատաղօրէն
Գահավիժեցէք ձեր երկաթ թառէն,
Ուրկէ միայն լա՛լ գիտցաք դարերով...»*

[1909 - Ռուբէն Սեւակ - «Ռ. Սեւակ - Երկեր, Անթիլիաս, էջ 170]:
Եւ թուրքը այսօր կը համարձակի ըսելու, որ՝

«Ասիկա պատմական հարց մըն է: Պատմագետները թող որոշեն»:

Այսինքն՝ թուրքը ըսել կ'ուզէ թէ՛ այդ օրէն ասդին դար մը անցեր է: Այս խնդիրը ժամանցման ենթարկուեր է: Դուք, որեւէ իրաւունք չունիք այլեւս... Եւ մենք, ուզածնուս չափ ըսենք, թէ՛ «Ցեղասպանութիւնը ժամանցման օրէնքին ենթակայ չէ»:

Բայց, մտածենք քիչ մը: Թուրքը այսօր այլեւս իրաւունք չունի՞, ինքզինքը պաշտպանելու համար, այդպէս ըսելու, երբ որ մենք, մինչեւ այսօր- միայն ու միայն լացեր ու լացեր ենք տեւաբար, և **«մարդկօրէն չենք կատղեր թուրքին դէմ»:**

* * *

Եւ կա՛յ ուրիշ շատ կարեւոր պարագայ մը - Մենք՝ հայերս, ընդհանուր առմամբ ի՞նչ գիտենք, 24 Ապրիլ 1915-ի մտաւորական նահատակներուն մասին: Քանի՞ գիրք գրուած է 24 Ապրիլ 1915-ի մեր նահատակներուն մասին: Կրնա՞ք համբել զանոնք արդեօք:

Սեղանի վրայ կը տեսնենք միայն մէկ գիրք [որ վերջերս ֆրանսերէնի և անգլերէնի ալ թարգմանուեցաւ], և այդ ալ՝ Գրիգորիս Ծ. Վարդապետ Պալաքեանին «Հայ Գողգոթան» անունով գիրքն է, որ սխալներով լեցուն է, և մեծ մասամբ ալ՝ ինքնագովական կենսագրութիւն:

Եւ այս Գ. Պալաքեանը, իր գիրքին մէջ, միւս բոլոր ականատես արքայապետներուն կողմէ Ռուբէն Սեւակի հերոսական կեանքին, բայց մանաւանդ՝ ունեցած վախճանին մասին պատմածները չէ նշած, այլ՝ ընդհակառակը, նախանձէ մղուած, սուտ և սխալ վերագրումներով, Ռուբէն Սեւակը նսեմացնելու աշխատած է:

Այս մասին մենք, «Նայիրի»ի սիւնակներուն մէջ, անհերքելի շատ փաստերով գրած էինք:

Ուերմն, ինչո՞ւ կը զարմանանք և կ'ընդվզինք, որ 24 Ապրիլ 1915-ի Եղեռնէն գրեթէ դար մը ետք, թուրքերուն Հայկական ցեղասպանութիւնը ուրանալու աշխատանքներուն զուգահեռ, բայց այս անգամ՝ Հայաստանի մէջ, հայանուն թարգմանիչ մը՝ Ռուբէն Սեւակի յիշատակը կը սրբապղծէ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Եւ հիմա եզրակացնենք՝ վերոյիշեալ չորս ականատես արտոբեալներուն Ռուբէն Սեւակի մասին ըրած վկայութիւնները:

1.- Սեղանաւոր Յովնաննէս Թերլէմէզեանի վկայութիւնը.

«Զեմ կրնար համոզուիլ այս գաղափարին հետ» - ըսաւ տօքթ. Սեւակ, «Որ մահէն վախնալով ուրանամ ազգ և ընտանիք»:

* * *

2.- Մտաւորական Միքայէլ Շամտաննեանի վկայութիւնը.

«1915 Յունիսի վերջերը, Զանդըրը-ի մէջ, մէկուկէս ամիսի չափ, միասին ապրեցայ Սեւակին հետ:

Պոլսէն ծանօթ էր ինծի իր դիւրահաղորդ և զուարթ հոգին:

Ջարդերու չարաշուք գրոյցներ սկսած էին մեր ականջը հասնիլ: Այդ միջոցներուն էր, որ օր մը, մեծ իրարանցումի մը մէջ տեսայ զինքը:

Այն տեսակ խօսք մը տարածուած էր արտօրականներու մէջ, թէ մահմետականութիւնը ընդունողը ազատ պիտի արձակուէր:

Ամբողջ երկու օր, Ռուբէն Սեւակը աշխատեցաւ համոզելու տկար հոգիները, որ մահը մահմետականացումէն աւելի աղէկ է, և զատ զատ երդում ընել տուաւ ամէն անոնց, որոնց հոգիի ուժին վրայ կասկած ունէր, թէ հաւատարիմ պիտի մնան իրենց լոյս հաւատքին:

Իր բժշկած աղջկան հայրը կը համոզէր Ռ. Սեւակը, ընդունիլ մահմետականութիւնը քանի ուշ չէր... և զինուորական ճիւղի նախագահին դիմէ, իր կրօնափոխ եղած ըլլալը յայտնելու համար:

Սեւակ, երբեք իրմէ սպասուած դիմումը չըրաւ զինուորականութեան ճիւղի պետին...»:

* * *

3.- Բժիշկ Վահան Ալթունեանի վկայութիւնը

«1915 Օգոստոսի կիսուն էր... գիշերը Չիլինկիրեանը գիս տեսնելու եկած էր, կ'ուզէր գաղտնի տեսակցութիւն մը ունենալ, ուստի դուրս կ'ելլենք բացօդեայ տեղ մը երթալու համար:

«Լաւ մտիկ ըրէ Վահան» - ըսաւ Սեւակը քրքռուն ձայնով մը և շարունակեց. «Կամ պէտք է, որ գրական անուանս պէս հոգիս ալ սեւցնեմ և կամ՝ մեռնիմ:

Ուխտած եմ մեռնիլ, բայց երբեք հոգիս չսեւցնել»:

Չէքէ Ռէիսին որուն աղջիկը բուժած էր Սեւակ, իր երախտագիտութիւնը յայտնած էր խժոժօրէն սպաննել տալով Սեւակն և ընկերները:

Ահա այսպէս Սեւակ, գոհուելով իր ուխտը կը կատարէր, չսեւցնելու համար իր հոգին:

Յարգանք իր անբիծ հոգիին»:

* * *

4.- Յովհան Մ. Վարդապետ Կարապետեանի վկայութիւնը

«Յանկարծ սենեակ մտաւ տօքք. Չիլինկիրեան: Սովորականէն աւելի մոռալ էր կերպարանքը:

«Առաջարկ մը ունիմ ընելիք» - յայտարարեց, առանց յառաջընթաց խօսքերու:

«Կը լսեմ, քէ Գաղատիոյ կողմերը իսլամացած են կարգ մը հայեր: Չեմ ուզեր որ մեր ընկերներէն ոեւէ մէկը այդպիսի տկարացում ունենայ ապագայ հաւանական ճնշումներու առջեւ, ուստի կը թելադրեմ որ դուն, իբր հոգեւորական, կանչես հոս գտնուողները և երդում առնես իւրաքանչիւրէն, քէ հաստատ պիտի պահենք քրիստոնեական հաւատքնին»:

... Այն Կիրակին Ս. Պատարագի մատուցումը արցունք կը խլէր ամէն աչքերէ:

Մատուռին յառաջկողմը՝ դասին առջեւ, ասպետական դիրքով կանգնած էր նոյն ինքն տօքք. Չիլինկիրեան:

Կ'զգայի քէ ինք, այդ վայրկեանին, կը մարմնացներ մեր ցեղին հաւատքի դիւցազնութիւնը:

Երկիւղի ճշոյլը անգամ չկար իր առնական դեմքին արտայայտութեան մէջ:

Չեմ կրնար պահ մը իսկ մտքես հեռացնել իր այդ օրուան գրաւիչ վեհութիւնը:

Այսպէս ալ՝ Սեւակ վախ չունէր իր դահիճներէն:

Անոնք կրնային իր մարմինը անշնչացնել, բայց իր հոգին յաւիտենական պատգամներ պիտի ունենար հայութեան ականջին հնչեցնելիք:

* * *

**«ՌՌԻՔԷՆ ՍԵՒԱԿԻՆ ՀՈԳԻՆ՝ ԹԱԻՏԵՆԱԿԱՆ ՊԱՏԳԱՄ-
ՆԵՐ ՊԻՏԻ ՀՆՉԵՑՆԷ ՀԱՅՈՒԹԵԱՆ ԱԿԱՆՋԻՆ»:**

Ընթերցողներուն արդէն ծանօթ ու խորահռչակ այս թարգմանիչին նման թրքական ոգի ունեցողներն ալ ահա՛, արգելք ըլլալ կ'ուզեն որ Ռուբէն Սեւակին դիւցազնական պատգամները չհասնին հայ ժողովուրդին ականջին:

Բայց մենք կը հաւատանք, որ հայ ժողովուրդը երբեք չի՛ մոռնար իր նահատակներուն պատգամները:

Վկայ՝ 90 տարիներէ ի վեր, 1915-ի եղեռնին խորհրդանիշ եղող «24 Ապրիլ»ը, որ մտաւորական նահատակներուն յաւերժացման օրն է:

Եւ Ռուբէն Սեւակի պէս հերոս նահատակներու պատգամները, օրէ օր աւելի գօրաւոր պիտի բնդացնեն հայութեան հոգիները:

* * *

«Նայիրի»ի այս սիւնակներուն մէջ կրկին նշեցինք, Չանդըրը-ի դժոխքէն փրկուած չորս արքայազններուն ականատեսի վկայութիւնները, որոնք երկիւղածութեամբ պատմեցին Չանդըրը-ի մէջ, Ռուբէն Սեւակին ունեցած հերոսական կեանքին ողբերգական վախճանի մասին:

Ո՛վ գրպարտիչ և սրբապղծող թարգմանիչ...

Գիտե՞ս, թէ եւրոպական երկիրներուն մէջ, հրեական «Holocauste» ըսուած սպանդին մասին փոքր կասկած մը յայտնողը ծանր պատիժի կը դատապարտուի:

Հայկական ցեղասպանութեան խորհրդանիշը եղող 24 Ապրիլ 1915-ի նահատակներէն Ռուբէն Սեւակի Չանդըրը-ի մէջ հերոսական կեանքին համար «անհաւաստի պատմութիւն» է ըսելդ, արդե՞ք Հայաստանի մէջ այսօր, ի գօրու եղող օրէնքներով, պատիժի ենթակա՞յ է... թէ՞ ոչ:

* * *

Մեր հոգիները վրդոված էին այս գրպարտիչ թարգմանիչին կատարած սրբապղծութիւնով:

Բայց մենք վստահ էինք, որ հայ ժողովուրդը գիտեր Ռուբէն Սեւակին «մեծութիւնը»: Եւ ահա՝ այդ ապացոյցներէն...

ԱՌԱՋԻՆ ԱՊՏԱԿ ՄԸ՝ ՋՐՊԱՐՏՈՂ ԹԱՐԳՄԱՆԻՉԻՆ

Այստեղ ուրախութիւնը ունինք յայտնելու թէ՛ 2004-թ.ին Ռուբէն Սեւակի սրբադասման համար Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Վեհափառին խնդրագիր ներկայացուած է բարձրաշնորհ Տ. Տարօն Եպս. Ճերէնեանի կողմէ:

Այստեղ կը հրատարակենք Բարձրաշնորհ Սրբազանին խնդրագիր սրբադասման-ուսումնասիրութեան առաջին էջին պատճենը.

*«Խնդրագիր առ Հայրապետին Հայոց՝
Ներկայացուած Տ. Տարօն Եպիսկոպոս Ճերէնեանէ,
Եպիսկոպոս Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցւոյ,
Միաբան Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի:*

1915-թ. Ցեղասպանութեան նախընթաց օրը սկսաւ շրջան մը մարտիրոսութեան, քրիստոնեայ հայ ժողովուրդի համար:

Հոգեւորականներ, ազնուականք ու մտաւորականներ քստրուեցան և ջարդուեցան Թուրքիոյ ամէնէն անհիւրընկալ վայրերու մէջ: Ոմանք այն տեղերէն վերադարձան. անոնցմէ մեծամասնութիւնը կոտորուեցաւ, բայց անոնք երբեք չուրացան ոչ իրենց քրիստոնեական հաւատքը և ոչ ալ իրենց հայութիւնը:

Ոմանք կը սպասեն տակաւին սրբադասուիլ եկեղեցւոյ կողմէ:

Անուանացանկը այս «Երանելիներու» երկար է:

Անձ մը, ի միջի այլոց, գրաւած է միշտ ուշադրութիւնս ու յարգանքս. իր մտաւորականի մեծութեան մէջ, ես կը տեսնեմ մարտիրոս մը հաւատքի, Ի. դարու:

Այդ անձն է՝ բանաստեղծ-թիշկ Ռուբէն Ջիլիկկիրեան, ծանօթ՝ Սեւակ անունով»:

Տարօն Եպս. Ճերէնեան

ԵՐԿՐՈՐԴ ԱՊՏԱԿ ՄԸ՝ ԶՐՊԱՐՏՈՂ ԹԱՐԳՄԱՆԻԶՄ

Այստեղ ուրախութիւնը ունինք յայտնելու թէ՛ արժանապատիւ դոկտ. Աբէլ քհնյ. Մանուկեանի հեղինակութեամբ 2005-ի այս օրերուն, Պէյրութի մէջ հրատարակուելիք «Դադրած է Հայ Եկեղեցին սուրբեր ունենալէ»:

- 1915 թուականի Հայոց ցեղապանութեան բիւրաւոր նահատակներու եւ Կոմիտաս Վարդապետի սրբադասումին ի խնդիր - վերնագրով գիրքին 32 և 33 էջերուն մէջ, Ռուբէն Սեւակի մասին հետեւեալ տողերը գրուած են:

... Ամենաուշագրաւ և վաւերական դրուագներէն մին կը հանդիսանայ Ռուբէն Սեւակի նահատակութեան պատմութիւնը: Բազմաթիւ յուշագրութիւններ կու գան ճշմարտապէս վկայելու, թէ նահատակ բանաստեղծը գերադասած է ընդունիլ խոստովանողական մահը՝ քան հաւատուրացութեամբ իր հոգին սելցնել ապրելու ի խնդիր: Զանդրը-ի իր քստորավայրին մէջ, բուժած էր իթթիճատական արապներ պաշը Իսմայիլի աղջիկը: Արիւնարբու իթթիճատականը Սեւակի նկատմամբ ունեցած է տեսակ մը երախտագիտութեան զգացում, իր դստեր կեանքը ազատող, բայց ստոյգ մահուան դատապարտուած բժիշկին փոխադարձաբար փրկելու, պայմանաւ որ ան կրօնափոխութիւնը ընդունի և կնութեան առնէ իր աղջիկը: Սեւակ անդրդուելի և հաւատարիմ մնացած է դէպի իր լոյս հաւատը՝ ընդհուպ մահուան ամենասուկալի տագնապներուն մէջ հաւատուրացութիւնը նկատելով նուաստութիւն: Ա՛յ աւելին՝ ոչ միայն անձնապէս ինք հաստատ մնացած է սրբաւանդ իր համոզումներուն վրայ, այլ Զանդրը-ի նոյն քստորավայրին մէջ գօտեպնդած է մահուան երկիւղէ յողողողուն նակատագրակիցները՝ հաւատարիմ մնալու քրիստոնեական լոյս հաւատին, թէ մահը նախընտրելի է մահմետականացումէն: Նահատակ բանաստեղծին կեանքի բարձրագոյն արժէքով տուած սա վկայութիւնը Վարդանանց «Մահ իմացեալ՝ անմահութիւն է»ն չի յիշեցներ: Արդ, եթէ Սեւակ և իր նման բիւրաւորներ, որոնք վառեալ ի լոյս հաւատն Քրիստոսի յանձն առին խոստովանողական մահը սուրբ չեն, ապա ո՞վքեր են եկեղեցիին սուրբերը, ո՞րն է անոնց արժանիքը, ի՞նչ չափանիշով սուրբ հռչակուած են անոնք, եթէ ոչ՝

իրենց բերած կեանքի զոհողութեան գերազանց օրինակով՝ վկայաբանութեամբ: [Ռուբէն Սեւակի մարտիրոսութեան մասին տե՛ս Յովնաննէս Զիլինկիրեանի շանեկան յօդուածները Պէյրութ լոյս տեսնող «Նայիրի» շաբաթաթերթին մէջ, կամ՝ դիմել Ռուբէն Սեւակի անուան յիշատակի տուն-թանգարան՝ հետեւեալ հասցեով. *Maison Roupen Sevag, Le Verdon B, Domaine du Loup, 06800 Cagnes-Sur-Mer, France*]:

Դոկտ. Արեւ քննյ. Մանուկեան

* * *

ԵՐՐՈՐԴ ԱՊՏԱԿ ՄԸ՝ ԶՐՊԱՐՏՈՂ ԹԱՐԳՄԱՆԻԶԻՆ

Մանօթ գրականագէտ և մտաւորական՝ Ալեքսանդր Թոփչեան 5 Հոկտեմբեր 2004-ին, Երեւանի «Նովոյէ վրեմիա» ռուսերէն թերթին մէջ հրատարակած գրութիւնով, այս գրպարտող թարգմանիչին արժանի պատասխանը տուած էր:

Եւ կրկին՝ Ալեքսանդր Թոփչեանը, այս անգամ Երեւանի Ազգային հեռատեսիլէն [Հ-1], 15 Փետրուար 2005-ի ժամը 15:30-ին, Ռուբէն Սեւակի մասին բացառիկ ելոյթ մը ունեցաւ, որը դիտելու երջանկութիւնը ունեցանք Նիսի մէջ:

Ալեքսանդր Թոփչեանի այս ելոյթը որ Հայաստանի հեռատեսիլի միջոցաւ ամբողջ աշխարհին տարածուեցաւ, անջնջելի պիտի մնայ մեր յիշողութեան մէջ: Մանաւանդ հետեւեալ նախադասութիւնը՝ «Ռուբէն Սեւակ, իսկական մարգարէ մըն է՝ իր բանաստեղծութիւններով իր գրութիւններով և իր հերոսական նահատակութեամբ»:

* * *

ԶՈՐՐՈՐԴ ԱՊՏԱԿ ՄԸ՝ ԶՐՊԱՐՏՈՂ ԹԱՐԳՄԱՆԻԶԻՆ

18 Փետրուար 2005-ին, Նիւ Եորքի Համազգային Հայ Կրթական և Մշակութային Միութեան կազմակերպած և Եղեռնի 90-ամեակին նուիրուած «Անմար լոյսեր» դասախօսութեան շարքին մէջ, դոկտ. Հրանդ Մարգարեան ներկայացուց Ռուբէն Սեւակը:

Նոյնպէս՝ տեսաերիզի վրայ դիտելու ուրախութիւնը ունեցանք քատերագիր մտաւորականին Ռուբէն Սեւակի մասին ըրած բանախօսութիւնը: Այս մէկը բանախօսութենէ շատ աւելի բան մըն

էր: Ան իր խօսքերով ապրեցուց Ռուբէն Սեւակը և մենք, քատրերգութիւն մը դիտելու պէս, մագնիսացած հետեւեցանք դոկտ. Հրանդ Մարգարեանին ելոյթին:

* * *

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԱՊՏԱԿ ՄԸ՝ ՋՐՊԱՐՏՈՂ ԹԱՐԳՄԱՆԻԶԻՆ

Համազգային Հայ Կրթական և Մշակութային Միութիւնը Ռուբէն Սեւակի ծննդեան 120 և նահատակութեան 90-ամեակներուն առթիւ, Նիւ Եորքի մէջ, 17 Ապրիլ 2005-ին, պիտի ներկայացնէ՝ **«Ռուբէն Սեւակի կեանքը և հերոսական նահատակութեան պատմութիւնը - «Յաւերժի նանապարհին»** - հեղինակութեամբ և ղեկավարութեամբ՝ Հրանդ Մարգարեանի:

* * *

1.- Ռուբէն Սեւակի սրբադասման՝ համար բարձրաշնորհ Տ. Տարօն եպիսկոպոս Ճէրէնեանի խնդրագիր-ուսումնասիրութիւնը,

2.- Արժանապատիւ դոկտ. Աբէլ քհնյ. Մանուկեանի Ռուբէն Սեւակի մասին գրածները,

3.- Գրականագէտ-մտաւորական Ալեքսանդր Թոփչեանի 15-2-2005-ին Երեւանի հեռատեսիլէն կատարած ելոյթը,

4.- «Նայիրի»ի վաստակաւոր խմբագրապետ Ժիրայր Նայիրիին 22 Փետրուար 2005-ին հրապարակուած «Սրբապղծութիւն» վերնագիրով բացառիկ յօդուածը,

5.- Թատերագիր-մտաւորական դոկտ. Հրանդ Մարգարեանին 18 Փետրուար 2005-ին Նիւ Եորքի մէջ կատարած բանախօսութիւնը,

6.- Եւ 17 Ապրիլ 2005-ին Նիւ Եորքի մէջ ներկայացուելիք **«Յաւերժի նանապարհին»** քատրերգութիւնը...

Բոլոր այս արտայայտութիւնները, կրկին ու կրկին կուգան ապացուցանելու, որ հայ եկեղեցին, հայ կրօնականը, հայ մտաւորականը և հայ ժողովուրդը երբեք չեն մոռնար՝

Ռուբէն Սեւակը, իրենց հերոս նահատակը:

ԱՅՍՕՐ՝ 24 ԱՊՐԻԼ 2005

ԹՈՒՐԳԵՐՈՒՆ 24 ԱՊՐԻԼ 1915-ԻՆ, ՀԱՅ ԱԶԳԻՆ ԴԷՄ ԿԱՏԱՐԱԾ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 90-ՐԴ ՏԱՐԵԼԻՑՆ Է:

ԵՒ ԹՈՒՐԳԵՐԸ, ՄԻՆՉԵՒ ԱՅՍՕՐ, ԿՊՈՒՐԱՆԱՆ ԻՐԵՆՑ ԳՈՐԾԱԾ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ

ԲԱՅՑ ԻՆՉՈ՞Ւ Հ.Յ.Դ.Ն. ԻՆՔՆ ԱԼ ԿՊՈՒՐԱՆԱՅ ԱՅՆ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ, ՈՐ 1908-ԷՆ ՄԻՆՉԵՒ 1915, ԻՆՔ ԳՈՐԾԱԿՑԱԾ Է ԻԹԹԻՀԱՏԱԿԱՆՆԵՐՈՒՆ ՀԵՏ, «ՕՍՄԱՆՑԻ ԸԼԼԱԼՈՒ» ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՎԱՐԱԾ ԵՒ ԵՐԱԶՆԵՐՈՎ ՔՆԱՑՈՒՑԱԾ Է ՀԱՅ ԱԶԳԸ, ԵՒ ԱՅՍ ՉԵՒՈՎ, ԿԱՄԱՅ-ԱԿԱՄԱՅ, 24 ԱՊՐԻԼ 1915-Ի ՃԱՄԲԱՆ ԲԱՑԱԾ:

ԱՀԱ, ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԷՆ ԱԿՆՈՒՆԻ-ԻՆ 1915-ԻՆ, ԱՔՍՈՐԻ ՃԱՄԲՈՒՆ ՎՐԱՅ ԸՍԱԾ ԽՕՍՔԸ.- «ՄԵՌՆԵԼՈՒՍ ՉԵՄ ՑԱԻՐ, ԲԱՅՑ ՇԱՏ ԿԸ ՑԱԻՄ, ՈՐ ԱՅՍ ՇՈՒՆ ԻԹԹԻՀԱՏԱԿԱՆՆԵՐՈՒՆ ՀԱՒԱՏԱՑԻՆՔ»

24 Ապրիլ 1915 - Ակնուցի

Նորութիւն չէ, ինչ որ նշեցիք վերը: Այս ողբալի իրականութիւններուն՝ իւրաքանչիւր գիտակից, հայրենասէր հայ տեղեակ է:

Ուրեմն ի՞նչ է պատճառը, որ այս կուսակցութիւնը, հակառակ մինչեւ 1915-ը իր գործած ազգին համար աղէտաբեր սխալներուն, մինչեւ այսօր իր գոյութիւնը կը շարունակէ պահել իբրեւ ազգասէր կուսակցութիւն և իրականութիւնը ծածկել ժողովուրդէն:

Այսօր, երբ որոշ տարիք մը ունինք և փորձառութեան նոյնքան ալ պաշար, յանգած ենք այն եզրակացութեան, որ մեր և ձեր գիտցած իրականութիւնը իրականութիւն չէ: Միակ և ընդունելի իրականութիւնը այն մէկն է, զոր այս «աշխարհի տերերը» բոլորիս կը սորվեցնեն - իրե՛նց ուզած **«իրականութիւնը»:**

Իրականութիւնը այն է՝ ինչ որ մեծամասնութիւնը սորված է. և

կը կարծէ որ միայն իր գիտցածը «իրականութիւն» է:

1789-ի Ֆրանսական յեղափոխութենէն ի վեր, երկրագունտը սուտերու վրայ հիմնուած աշխարհի մը վերածուած է: Եւ սաղայեւական կազմակերպութիւն մը [անոր ինչ անուն որ կ'ուզէք տուէք՝ դրամատիրութիւն, ֆարմաստուցութիւն, սիոնիզմ - արդէն նոյն բաներն են] կը կառավարէ աշխարհը:

Եւ այս սաղայեւական կազմակերպութիւնը ոչ միայն իր ուզածին պէս կը խեղաթիւրէ պատմութիւնը, այլ՝ ինք պատմութիւն «կը կերտէ», գայն յարմարեցնելով եկող տարիներուն վրայ երկարող իր ծրագիրներուն գործադրութեան:

* * *

Ուրեմն հիմա, «աշխարհի տերերուն» սորվեցուցած «իրականութիւններէն» հեռանաք, և մեր գիտցած իրականութիւնները, կրկին ու կրկին ջանանք բացատրել:

Առաջին հանգրուան

Հայ կուսակցութիւնները հիմնուեցան 1885-թ.էն սկսեալ:

Ճիշդ այն տարիներուն, երբ ռուս իշխանութիւնները թշնամացած էին հայերուն, որովհետեւ Ռուսիոյ մէջ, հայ յեղափոխականները եւս, այլազգի և այդ գծով հրեայ յեղափոխականներուն հետ ալ գործակցելով, ձարական իշխանութիւններուն դէմ կը պայքարէին: Այս կուսակցութիւնները իրենց կեդրոնները ժընեւ հաստատեցին: Ինչու և ինչպէս: Քաղաքական և հիւքական ինչ միջոցներով:

Որովհետեւ, «աշխարհի տեր» հրեաները, թիկունք կանգնեցան իրենց:

Եւ հայերը, մանաւանդ այդ տարիներուն, սկսան Օսմանեան կայսրութեան մէջ պայքար տանիլ՝ Արեւմտեան Հայաստանը ազատագրելու համար:

Քայց այս պայքարը ինչպէ՞ս կրնար յաջողիլ, առանց Ռուսիոյ օգնութեան:

Ճիշդ այդ տարիներուն էր, որ ռուս իշխանութիւնները, թշնամացած էին հայերուն:

Առանց Ռուսիոյ օգնութեան, հայոց մղած պայքարը՝ **ինքնասպանութիւն** ըսել էր: Եւ նի՛շդ այդպէս ալ եղաւ:

Հայերը իրենց ունեցած քանի մը հրացանով, մասամբ ալ

հրեաներուն դրդումով, օսմանեան բանակին դիմադրել կը ջանային:

Հետեւանքը այն եղաւ որ Սասունի մէջ, Ապտիւլ Համիտին կազմած «Համիտիյէ»ի գօրքերով, քիւրտերը 300.000 հայ սպաննեցին:

Եւ ամէնէն կարելորը՝ Արեւմտեան Հայաստանի մէջ սարսափի մատնուած հայ ժողովուրդը, սկսաւ լքել իր հայրենիքը և փախուստ տալ ամէն ուղղութեամբ, մանաւանդ՝ դէպի Ամերիկա:

Եւ այս ձեւով պարպուիլ սկսաւ Արեւմտեան Հայաստանը: Եւ այսպէս յաջողեցաւ նաե՛ւ հրեական ծրագիրը: Այսպէս՝

1.- Նախ ռուսերը թշնամացուցին հայերուն, 2.- Հայկական կուսակցութիւններու հիմնադրումին աջակցեցան որ անոնք օսմանցիներուն դէմ պայքարին՝ առանց Ռուսիոյ օգնութեան, 3.- Եւ այս պայքարին հետեւանքով Արեւմտեան Հայաստանի մէջ ջարդել տուին բնիկ հայերուն և անոնց տեղը բնակեցուցին քիւրտերը:

Այս եղաւ, 24 Ապրիլ 1915-ի Հայկական ցեղասպանութեան նախերգանքը:

* * *

Երկրորդ հանգրուան

Հայերուն դէմ կատարած ջարդերուն պատճառաւ, հայ կուսակցութիւններուն թիւ մէկ թշնամին Ապտիւլ Համիտն էր այլեւս:

Եւ անոնք տեղւոյն վրայ և Փարիզի մէջ ունեցան խորհրդակցութիւն Ապտիւլ Համիտի ընդդիմադիր թուրքերուն և հրեաներուն հետ: Սկսաւ գործակցութիւն անոնց միջեւ: Մանաւանդ՝ սելանիկցի հրեաներուն և դաւանափոխ հրեաներուն գաղտնաբար ստեղծած «Jeunes turcs» կոչուած կազմակերպութեան հետ որոնք, Ապտիւլ Համիտը վար առնելով՝ իբր թէ ազատութիւն բերել կ'ուզէին:

Եւ այսպէս է, որ հայ կուսակցութիւններ, առաւելաբար ժընեւի մէջ, երիտթուրքերուն, հրեաներուն և Ապտիւլ Համիտի հակառակորդ ուրիշ կազմակերպութիւններուն հետ, տեւաբար բանակցութիւններ կը կատարէին որ Ապտիւլ Համիտի իշխանութեան կարենան վերջ տալ:

Հայերը նոյնիսկ 1905-ին, Ապտիւլ Համիտին դէմ, Պոլսոյ մէջ, մահափորձ մըն ալ կատարեցին, թէև՝ անյաջող:

Եւ վերջապէս 1908-ին, երիտօրքեր կոչուածները որոնք «Իբրքիհատ վէ Թերաքքի» կուսակցութիւնը կազմած էին, յաջողեցան Ապտիւլ Համիտը տապալել և իշխանութեան գլուխ գալ: Եւ [իբր քէ] «ազատութիւն», «հիւրիւյետ» հռչակուեցաւ: Ալ ի՛նչ ուրախութեան արտայայտութիւններ և սիրագե՛ղ ցոյցեր չեղան հայերուն կողմէ: Բայց, ի՛նչ խաբկանք...

Տարի մը ետք՝ 1909-ին այս [իբր քէ] ազատութիւն բերած իբրքիհատականները, Կիլիկիոյ մէջ [Ատանա] 30 հազար հայ ջարդեցին:

Կիլիկիոյ աղէտին վրայ Ս. Գ. Հնչակեան կուսակցութիւնը, որ տակաւին առաջին օրէն միշտ վերապահ գտնուած էր նենգամիտ իբրքիհատականներու հետ գործակցութեան ամէն առաջարկի հանդէպ, Ատանայի կոտորածէն ետք արդարացած նկատեց իր ունեցած անվստահութիւնը: Դահի՛ն իբրքիհատականներուն ինչ ըլլալը աւելի լաւ հասկցաւ: Ոչ միայն դադրեցուց ամէն շփում, այլ՝ նաև կազմեց անոնց դէմ: Բայց դաշնակցութիւնը դժբախտաբար, իր ֆարմասոն ղեկավարներուն և մանաւանդ իրենց մեծ խորհրդատուն եղող բարձրաստիճան ֆարմասոն Գրիգոր Զօհրապի առաջնորդութեամբ, շարունակեց, ամէն մարզի մէջ, գործակցիլ իբրքիհատականներուն հետ:

Անոնք ա՛յն աստիճան հաւատացած էին իբրքիհատականներուն, որ յանձնառու եղան հայ ժողովուրդին մօտ գտնուող գէնքերը հաւաքելու: Այս ձեւով՝ անպաշտպան ձգեցին հայ ժողովուրդին գոնէ մէկ մասը:

Այս կուսակցութիւնը բուրքերուն հետ միասնաբար ապրելու և օսմանցի ըլլալու երազին ու կարելիութեան այնքան հաւատացած էր, որ, մինչեւ վերջին վայրկեանը, ո՛չ Զօհրապը, ո՛չ Ակնունին և ո՛չ ալ Վարդգէսը չտեսան իրականութիւնը, եւ արքորի նամբուն վրայ գտնուելու ատեն անգամ, Թալաթ կոչուած դահի՛նէն փրկութիւն յուսացին: Դիմեցին անոր որ զիրենք ազատէ:

Եւ այս ու նման կուսակցական ղեկավարներուն մինչեւ վերջին պահու տիմարութեան հասնող միամտութիւնը, հայ ժողովուրդին ցեղասպանութեան ենթարկուելուն և հայուն 5000 տարուան հայրենիքին բուրքերուն կողմէ յափշտակուելուն պատճառներէն մէկը եղաւ:

Այստեղ ընդունինք և ըսենք, քէ՛ այո, Զօհրապ, Ակնունի, Վարդգէս, Խաժակ, Զարդառեան և միւս միամիտ դաշնակցական

առաջնորդներն ալ զոհերը եղան նո՛յն ցեղասպանութեան, և նահատակուեցա՛ն:

Բայց, իրենց այս նողկալի նահատակութիւնը, կրնա՞յ գիրենք զերծ պահել իրենց ունեցած պաասխանատուութենէն: Մոռցնել տալ ազգին ցեղասպանութեան ենթարկուելուն, հայուն հայրենիքին յափշտակուելուն մէջ գիտակցաբար թէ անգիտակ, գե՛թ մասամբ մը պատեառ եղած ըլլալուն յանձապարտութիւնը:

Մենք կը հաւատանք, որ բոլորն ալ պատասխանատու են: Այդ ղեկավարները, նահատակ կամ ոչ՝ բոլորն ալ հաշուետու կը մնան հայ ազգին դատաստանին առջեւ:

* * *

Այսօր՝ 1915-ի Եղեռնէն 90 տարիներ ետք, հարց տանք - Ի՞նչ ըրաւ նոյն այս դաշնակցութիւնը 1915-ի ցեղասպանութենէն վերջ: Անկեղծ ու պարկեշտ ինքնաքննադատութիւն մը կատարե՞ց, տեսա՞ւ իրականութիւնները:

Չենք կարծեր: Ընդհակառակը՝ 1915-էն յետոյ, շարունակեց իր երեկի վարքագիծը:

Ջերծ չմնաց դրամատերերուն, ֆարմասոններուն և սինիստներուն ազդեցութենէն:

Եւ մեր համոզումով՝ 1915-էն յետոյ, իր պատասխանատուութիւնը ծանրացաւ իր երեկի շարունակուող քաղաքականութեան պատեառաւ: Ինչ որ «միամտաբար» կատարուեցաւ անցեալին, այնուհետեւ եղածը գիտակցաբար գործուած ըլլալու տպաւորութիւն կը ձգէ:

1918-1920-թ.ներուն Հայաստանի Ա. Հանրապետութեան կառավարութիւնը, գիտակցաբար հետեւեցաւ Արեւմուտքի դրամատերերուն հրահանգներուն: Թշնամացաւ սովետներուն հետ և Արեւմտեան Հայաստանի ազատագրութեան կարելիութեան կերպով մը արգելք եղաւ:

1920-էն մինչեւ 1991-թ.ն ալ՝ 70 երկար տարիներ շարունակ, Հայաստանի Բ. Հանրապետութեան դէմ պայքարեցաւ:

Եւ 1991-ին մասնակից եղաւ Սովետական Հայաստանի փլուզումին: Իսկ ամէնէն կարեւորը՝ 1991-ին իբր թէ «անկախ Հայաստան» հիմնելու համար [1918-ին ըրածին պէս], անջատուեցաւ միութեանական պետութենէն եւ ձայնակցեցաւ խորհրդային բանակը [ապաւէնը Հայաստանի ապահովութեան] երկրէն «վտարող» Լ. Պետրո-

սեաններուն: Եւ 1991-էն ի վեր աշխատեցաւ, որ Հայաստանի մէջ իշխանութիւնը ձեռք անցընէ:

Բայց Հայաստանի ժողովուրդը, խորհրդ. իշխանութեան 70 տարիներուն որոշ գաղափար մը կազմած էր իր քաղաքական ուժերուն մասին, սքափա՛ծ:

Եւ 1999-թ.ին Հայաստանի մէջ կատարուած ընտրութիւններուն, ժողովուրդը գիտակցութեան եկած ըլլալով, քուէ չտուաւ այս կուսակցութեան և իշխանութեան բերաւ Սովետական Հայաստանը բարգաւաճ վիճակի հասցուցած Կարէն Տեմիրճեանի և Վազգէն Սարգսեանի միասնական շարժումը, որուն իշխանութեան հասնելովը Հայաստանի համար յոյսի նոր նամբայ մը բացուած էր՝ հաւաքական աշխատանքով բարգաւաճ Հայաստան մը կերտելու ուղին:

Բայց 27 Հոկտեմբեր 1999-ին, [իրբ քէ] նախկին դաշնակցական մը եղող Նայիրի Յունանեանը և իր մեղսակիցները, պատմութեան մէջ նմանը չեղող վայրագութեամբ, Ազգային Ժողովին մէջ սպաննեցին Կարէն Տեմիրճեանը, Վազգէն Սարգսեանը եւ անոնց պաշտօնակից ընկերները:

Նայիրի Յունանեանին 27 Հոկտեմբեր 1999-ին կատարած հրէշային սպանդին ետին՝ գտնուողները; մինչեւ այսօր չյայտնաբերուեցան:

Բայց մենք կը հաւատանք, որ 27 Հոկտեմբեր 1999-ին, Հայաստանի Ազգային Ժողովին մէջ, հայ դեկավարները սպաննել տուողները՝ 24 Ապրիլ 1915-ին հայութեան դեկավար-մտաւորականները գլխատող կազմակերպութիւնն է:

Որովհետեւ մտայնութիւնը, նպատակը նոյնն է՝ **հայ ազգին «գլուխները» ոչնչացնել:**

ՎԵՐՋԱՊԷՄ ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ՅԱՂԹԱՆԱԿԸ

**ԲԱՅՑ, ՄԻՆՉԵԻ ԱՅՍ ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ՅԱՂԹԱՆԱԿԸ, ՌՈՒ-
ԲԷՆ ՍԵՒԱԿԻ ԽՆԿԵԼԻ ՅԻՇԱՏԱԿԸ ՆՍԵՄԱՑՆԵԼ ԱՇԽԱՏԵՑԱՆ
ՆԱԽԱՆՁ ՀԱՅ ՄՏԱԻՈՐԱԿԱՆՆԵՐ**

ԱՀԱ, ԱՅՍ ՆԱԽԱՆՁՆԵՐԷՆ՝ ՔԱՆԻ ՄԸ ՆՄՈՅՇՆԵՐ

**«ԻՐ ԺԱՄԱՆԱԿԻՆ, ԱՍՈՐ ՈՒՆԱՅՆՈՒԹԵԱՆ, ԴԺԲԱԽՏՈՒ-
ԹԵԱՆ ԿԸ ԲԵՌՑՆԵՄ Ռ. ՍԵՒԱԿԻ ԳՈՐԾԻՆ ՉԱԽՈՂԱՆՔԸ»**

**«ՀԱՄԱՊԱՏԿԵՐ ԱՐԵԻՄՏԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ» ԶՐԴ ՀԱՏՈՐ, ԷՋ 43,
ՅԱԿՈՐ ՕՇԱԿԱՆ**

**«ԱՍՈՆՑՄԷՄԷ ՄԻԱՅՆ ՎԱՐՈՒԺԱՆ ԱՆՉՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ԿԸ
ԴԻՄԷ» - «ՀԱՅ ԳՈՂ ԳՈՐԹԱՆ», ԷՋ 199, ԳՐԻԳՈՐԻՍ Ծ. ՎԱՐԴ. ՊԱԼԱՔԵԱՆ:**

Այսօր՝ 6 Մայիս 2006, Շաբաթ ժամը 16:10ին, Հայաստանի հե-
ռատեսիլը՝ «Հ-1» սփռեց օդանաւի զոհերուն համար Երեւանի Սբ.
Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցիին մէջ կատարուած հոգեհանգստեան
տխուր արարողութիւնը:

Եւ արարողութեան վերջաւորութեան, բամբ ձայնով, խօսնակ մը
ասմունքեց Ռուբէն Սեւակի «Սիրոյ եւ մահուան երգը» բանաստեղ-
ծութիւնը՝

*«Իմ կեանքս թող կորած նաւուն պէս ըլլայ,
Շունչդ ուռեցնէ մեր առագաստը անա՛հ,
Մի, մի լսեր յոգնած հոգիս որ կու լայ,
Տար զիս սիրոյ կղզիներէն դէպի մահ,
Իմ կեանքս թող կորած նաւուն պէս ըլլայ...»*

Եւ օղանալին խեղն ճամբորդները՝ Գացին սիրոյ կղզիներէն դէպի մա՛հ, Եւ իրենց կեանքը կորած ճաւուն պէս եղաւ:

* * *

Եւ եթէ չըլլար օղանալի զարհուրելի ողբերգութիւնը, որ ամբողջ Հայոց աշխարհը սուգի մատնեց, 4 Մայիս 2006-ին, Երեւանի ՀՀ նախագահութեան պալատին մէջ, պիտի կատարուէր Ալեքսանտր Թոփչեանի «Եւ անգամ մահից յետոյ» վէպին համար ՀՀ նախագահ Ռ. Քոչարեանի կողմէ 2006 տարուան գրականութեան «միակ մրցանակ»ի յանձնման հանդիսութիւնը:

Ի՛նչ դառն ճակատագիր...

Ռուբէն Սեւակի ճահատակութենէն յետոյ, նոյնիսկ մինչեւ այսօր, մահը կերպով մը կը հետեւի անոր, և նոյնիսկ՝ իր կեանքի վէպի պարգեւատրման օրերուն:

Եւ Ռուբէն Սեւակ, իր գրութիւններուն մէջ երգեց՝ **կեանքը եւ մահը**:

Մանաւանդ՝ մահը, որ անբաժան ընկերն է կեանքին...

Եւ Ռուբէն Սեւակ նոյնիսկ նախատեսեց իր մահը...

... 29 Ապրիլ 1912-ին [27 տարեկանին], Լոզանէն իր ընկերոջ՝ Հրանտ Նազարեանցին գրած էր.

«Հրանտս, եթէ բժիշկ եղած չըլլայի, ամենամեծ փափաքս էր երկրագործ ըլլալ, ու նոյնիսկ դեռ հիմա, ամենավերջին փափաքս է՝ օր մը կարենալ գիւղ քաշուիլ ու կեանքիս վերջին տարիները դաշտերուս և հողերուս վրայ անցնել լոռութեան և բնութեան մէջ...

... Այս բոլորին վրայ, աւելցուր նաեւ Պոլսոյ մղձաւանջը, այն հորիզոնը, որ քանի մը տարիէն իմինս պիտի ըլլայ, և ուր հեռուէն կը տեսնեմ արդէն Սոսոմի մուխն ու Գոմորի մեղքին բոցը»:

* * *

Յակոբ Օշական հայ գրականութեան ամենատաղանդաւոր քննադատն է:

Բայց, նոյն ատեն [և մեր համոզումով], ամենամեծ ինքնահաւանը և «մեծամոլը»:

Ինքն է [ըստ իրեն], անցեալի, ներկայի և բոլոր ժամանակներու մեծագոյն գրագետը:

Իր ամենակարեւոր ուսումնասիրութիւնը եղող՝ «Համապատկեր

արեւմտահայ գրականութեան» Գ. հատորին Ռուբէն Սեւակի վերաբերեալ գրութեան մէջ, կը նշէ Պոլսոյ Բանկալթիի Ռուբէն Սեւակի տան իր այցելութեան տպաւորութիւնները:

Հոն, ներկայ են, բոլորին ծանօթ հայ գրողները՝ Դանիէլ Վարուժան, Տիգրան Զեօկիւրեան, Գեղամ Բարսեղեան և ուրիշներ:

Յակոբ Օշականի այս վկայութիւնը շատ կարեւոր մէկ էջն է Պոլսոյ նախաեղեռնեան հայկական գրական կեանքի պատմութեան: Անջատաբար Յակոբ Օշականի այս գրութեան պատմական կարեւորութենէն՝ այստեղ ալ կը տեսնենք անոր անվերջանալի ինքնագովութեան մարմաջը:

Յակոբ Օշական իր գրութեան մէջ [էջ 16] կը վկայէ, որ [իբր թէ] Ռուբէն Սեւակ, այս հաւաքոյթին ընթացքին, իր գնահատանքը յայտնեւ է Յակոբ Օշականի «Թիւրքմէնին աղջիկը» վիպակի մասին:

* * *

Յակոբ Օշական իր «Գրականութեան պատմութիւն» գիրքին մէջ, 60 էջ յատկացուցած է Ռուբէն Սեւակին: Եւ խոր մեկնաբանութիւններով վերլուծած է Ռուբէն Սեւակի գրականութիւնը և անոր արուեստը:

Բայց մենք չենք կրցած, մինչեւ այսօր հասկնալ, թէ Յակոբ Օշական Ռուբէն Սեւակը ինչու տեղ մը ստորագնահատած է, իսկ մէկ քանի էջ անդին ալ՝ Ռուբէն Սեւակի մասին դրուատական խօսքեր ըրած:

Տեսէք, թէ ինչպէս ան, Ռուբէն Սեւակի գականութիւնը ձախողանք կը նկատէ.- **«Իր ժամանակին, ասոր ունայնամտութեան, դժբախտութեան կը բռնցնեմ Ռուբէն Սեւակի գործին ձախողանքը» [էջ 43]:**

Յետոյ, իր աշխատասիրութեան վերջաւորութեան, Յ. Օշական հետեւեալ գովաբանական խօսքերը կ'ընէ Ռուբէն Սեւակի մասին ընդգծելով.- **«... Կազմեցէք Ռուբէն Սեւակի քերթուածներէն հատոր մը... Ան պիտի ըլլար վեր մեր արուեստագէտներուն մեզի ձգած գիրքերէն՝ ամէնէն նորը, ինքնատիպը» [էջ 60]:**

Ուրեմն, ինչո՞ւ Յակոբ Օշական նա՛խ, Ռուբէն Սեւակի բանաստեղծութիւնը ձախողած գործ կը նկատէ, իսկ քանի մը էջ անդին՝ անոր քերթուածներու գիրքը վեր պիտի ըլլար միւս արուեստա-

գետներու գիրքերէն, «ամէնէն նորը և ինքնատիպը» կ'ըսէ:

Հայերը խօսք մը ունին՝ «Գնա՛ մեռիր, եկուր սիրեմ»:

Յակոբ Օշականն ալ Ռուբէն Սեւակը նախ կը մեռցնէ, ու ապա, կը սկսի գայն սիրել:

Տարօրինակ մեծամոլ մըն է Յակոբ Օշական:

* * *

Բայց, Գրիգորիս Մ. Վարդապետ Պալաքեան, Յակոբ Օշականէն տարբեր յատկութիւն մը ունի. Գր. Պալաքեանը Օշականին նման և նոյնիսկ անկէ աւելի ինքնահաւան և մեծամոլ մըն է: Յաւելուած՝ իրականութիւնները չարափոխող և խեղաթիւրող անձնաւորութիւն մը:

Պալաքեանի արտօրական ընկերները, բոլորն ալ կը վկայեն, թէ Ռուբէն Սեւակ Չանղըրը-ի մէջ, հոգիով տկարացած հայ մտաւորականներուն Աւետարանի վրայ երդուիլ տուաւ որ պիտի չտկարանան թուրքին դէմ, պիտի պահեն իրենց սուրբ հաւատքը և պիտի նախընտրեն մեռնիլ, քան թէ թրքանալ:

Պալաքեան այս մասին բառ մը չէ գրած իր «Հայ Գողգոթան» գիրքին մէջ:

Ինչո՞ւ: Խո՞ւլ էր արդեօք... Դե՛ռ աւելին կայ:

Իր գիրքին մէջ ան, թուրք կառապան Հասանին վկայութիւնը կը նշէ:

Եւ կարծեք, թէ այս թուրք կառապանը մեր մտաւորականները լաւ նանչցած ըլլալով ըսած ըլլայ.- **«Ասոնցմէ միայն Դանիէլ Վարուժանը անձնապաշտպանութեան դիմեց»:**

Մինչդեռ նոյն թուրք կառապան՝ Հասանին բուն վկայութիւնը կայ, ուր ան կ'ըսէ.- **«Խեղճ հայերուն ձեռքը-ոտքը կապուած էր և անոնք չէին կրնար դիմադրել»:**

Յաւելուած՝ ուրիշ հայ մտաւորականի մը վկայութիւնը այս մասին, բոլորովին հակառակը կը վստահեցնէ: Ահա, տօքթ. Ս. Զարեւանդի վկայութիւնը՝ «Թոնի մերկացնելու փորձի մը դէմ Ռ. Սեւակ կ'ըմբոստանայ, իսկ Դ. Վարուժան, ստոյլիկեան իմաստունի մը պէս, համակերպող ոգիով կը հնազանդի» ... Պալաքեան որքա՛ն անխիղճ մէկն է եղեր, որ նահատակ Ռուբէն Սեւակի մասին այս աստիճան անիրաւ կը գտնուի:

Եւ մտածել՝ որ Գ. Պալաքեանի «Հայ Գողգոթան» գիրքը վերջերս

Ֆրանսերենի ու յետոյ ալ անգլերենի թարգմանուեցաւ:

Եւ Պալաքեանի այս սուտ վկայութիւնը այսօր, կը տարածուի հայոց մէջ:

* * *

... ԵՒ ԴԵՊԻ ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ՅԱՂԹԱՆԱԿԸ

Նահատակ բանաստեղծ Ռուբէն Սեւակի յիշատակը յաւերժացնելու և անոր իսկական արժէքը բացայայտելու աշխատանքին սատար հանդիսացողներուն այստեղ կ'ուզենք, կրկին ու կրկին, մեր խորին երախտագիտութիւնը յայտնել...

Ա.- Մեր հոգեղբայր Ժիրայր Նայիրիին և իր կողակից՝ տիկ. Մարի Նայիրին որոնք, 1983-թ.էն սկսեալ և մինչեւ այսօր, բացառիկ դեր մը կը կատարեն Ռուբէն Սեւակը արդարօրէն վերարժեւորելու աշխատանքներուն մէջ:

Բ.- Եւ իրենց գաղափարակից ընկերը՝ Պեպօ Սիմոնեանը իր գրութիւններով և, մանաւանդ, Պէյրութի Սահակեան գոլէճի մէջ Ռուբէն Սեւակի անուան մատենադարան մը ստեղծելով մեծ գործունէութիւն կատարած է:

Գ.- Ռուբէն Սեւակի ամբողջական գործերը հրատարակելու, մեկնաբանելու և ներկայացնելու մարզին մէջ Ալեքսանտր Թոփչեան, 1983-էն ի վեր, նաեւ գործակցութեամբը վաստակաւոր դերասան-գրող Անահիտ Թոփչեանի, միասնաբար տարին աշխատանք վկայելով, որ իրենք իսկական և անփոխարինելի սեւակագետներ են:

Դ.- Ռուբէն Սեւակի յիշատակը յաւերժացնող հանգրուաններէն մէկն է՝ 13 Հոկտեմբեր 1985-ին Նիսի մէջ կատարուած Ռուբէն Սեւակի ծննդեան 100-ամեակի հանդիսութիւնը:

Այս ձեռնարկին նախագահն էր՝ մեծ վարպետ Անդրանիկ Մառուկեանը, որ այդ օր, իր կատարած անմոռանալի բանախօսութեան ընթացքին յայտնեց. «Եթէ 1915-ի նահատակ մտաւորականները խորհրդանշող արձան մը կանգնուի Հայաստանի մէջ, այդ արձանը պիտի ըլլայ Ռուբէն Սեւակինը...»:

Եւ երկու տարի յետոյ՝ 1987-ին Անդրանիկ Մառուկեան իր հեղինակած, Ռուբէն Սեւակի կեանքը ներկայացնող «Մերը Եղեռնի Մէջ»ի վէպով, յաւերժացուց հերոս նահատակին կերպարը:

Ե.- Ռուբէն Սեւակի յիշատակը և գաղափարականը վառ պահելուն սատարած շատ կարեւոր հանգրուաններէն մէկն է 1994-թ.ին, Երեւանի թիւ 151 դպրոց-վարժարանին Ռուբէն Սեւակի անունով մկրտուիլը, որուն նախնադրողը հաստատութեան տնօրէնուհի տիկ. Ճուլիա Ղազարեանն է, որ իր աշխատակիցներով, այդ բուկանէն մինչեւ այսօր, Ռուբէն Սեւակի հայրենասիրական ոգին կը ներմուծեն մեր ապագայի յոյսը եղող նոր սերունդներուն հոգիներուն մէջ:

* * *

Այստեղ յիշատակել կ'ուզենք, մասնաւորապէս, 2003-թ.ներէն յետոյ հրատարակուած և Ռուբէն Սեւակի կեանքին և գաղափարականին վերաբերող գիրքերը՝

1.- Երեւանի մէջ, 2003-ին հրատարակուեցաւ, փրօֆ. Վլատիմիր Պետրոսեանի «Ռուբէն Սեւակը եւ մեր ժամանակը» վերտառութիւնը կրող գիրքը, որ Ռ. Սեւակի իսկական գաղափարականը հասկնալու և ըմբռնելու տեսակետով շատ կարեւոր ուսումնասիրութիւն մըն է:

2.- Հալեպի մէջ, 2004-ին լոյս տեսաւ, ծանօթ գրող-մտաւորական Թորոս Թորանեանի՝ «Իմ Ռուբէն Սեւակը»:

Մեր վաղեմի բարեկամը, ասկէ բաւական տարիներ առաջ, խոստացած էր Ռուբէն Սեւակի մասին գիրք մը հեղինակել: Եւ այդ տարիներուն արդէն որոշած էր, որ գիրքին անունը՝ «Իմ Ռուբէն Սեւակը» պիտի ըլլայ: «Իմ Ռուբէն Սեւակը» գիրքը այսօր ոչ միայն հեղինակին, այլ՝ բոլոր հայրենասէրներուն բոլոր սեւակասէրներուն գիրքն է: Այս գիրքին մէջ կը տեսնենք ամբողջական Ռուբէն Սեւակը՝ իր կեանքով, իր գաղափարներով, և Ռուբէն Սեւակի մասին կ'ունենանք համապարփակ տեղեկութիւններ:

3.- Երեւանի մէջ, 2005-թ.ին հրատարակուեցաւ, փրօֆ. Վլատիմիր Կիրակոսեանի «Մենագրոյց նահատակ բանաստեղծի հետ» - (Ռուբէն Սեւակ): Ինքնատիպ գիրք մըն է, որ կը ներկայացնէ Ռուբէն Սեւակի ազգային գաղափարախօսութիւնը, անձնագոհութեան խորհուրդը և նահատակութեան պատմութիւնը:

Փրօֆ. Վլատիմիր Կիրակոսեանը այն բացառիկ մտաւորականն է, որ դեռ 1972-ին, Երեւանի մէջ, իբր երիտասարդ մտաւորական, հերոս-նահատակի կեանքով և գաղափարականէն ոգեւորուած՝

«Ռուբեն Սեւակ - Կեանքը եւ ստեղծագործութիւնը» վերտառութեամբ գիրք մը հրատարակած էր:

4.- Երեւանի մէջ, 2005-թ.ին հրատարակուեցաւ, վաստակաւոր գրագէտ Քատերագիր դոկտ. Հրանդ Մարգարեանի Ռուբեն Սեւակի կեանքը և նահատակութիւնը ներկայացնող՝ «Երբ արեւը կը լոռ» քատրերգութիւնը:

Այս քատրերկը Նիւ Եորքի «Համագգային»ի սրահին մէջ, մեծ շաշոդութեամբ և շատ անգամներ ներկայացուեցաւ: Եւ խուռներամ ժողովուրդը, քատրերգութեան ներկայացումէն յետոյ, շատ տպաւորուած և յուզուած՝ իրենց շնորհաւորութիւնները կը յայտնեն հեղինակին և դերասաններուն:

5.- Երեւանի մէջ, 2005-ին հրատարակուեցաւ Տարօն Եպս. Ճերէնեանի աշխատասիրութիւնը՝ «Երանացում ու սրբադասում Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ» վերտառութեամբ:

Այս աշխատասիրութեամբ Տարօն սրբազան խնդրանք ներկայացուցած է Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ.ին՝ Ռուբեն Սեւակի սրբադասման համար:

6.- Ժընեւի մէջ, 2005-ին հրատարակուեցաւ, դոկտ. Աբել քինյ. Մանուկեանի «Դադրա՞ծ է հայ եկեղեցին սուրբեր ունենալէ» խորագիրով [հայերէն և ֆրանսերէն թարգմանութեամբ] ուսումնասիրութիւն մը, որուն մէջ Տէր Աբել կ'առաջարկէ՝ **Կոմիտասի, Ռուբեն Սեւակի և 1915 թուականի Հայկական ցեղասպանութեան բիւրաւոր նահատակներուն սրբադասումը:**

7.- Պէյրութի մէջ, 2006-ի Ապրիլին, «Յ. Տէր Մելքոնեան» սրահին մէջ ներկայացուեցաւ, Անդրանիկ Ծառուկեանի «Սէրը Եղեռնին մէջ» վէպը՝ Սուրեն Խտշեանի բեմադրութեամբ:

Եղեռնի 91-րդ տարեդարձի օրերուն զուգահիւսող այս տասնեակ մը ներկայացումները Պէյրութի և գաւառի հայահոծ շրջաններուն մէջ, ջերմ գնահատանքի կ'արժանանայ: Հանդիսատեսները արցունքոտ աչքերով կը հետեւին բեմադրուող հերոսապատումին:

«Սէրը Եղեռնին մէջ»ի ներկայացումները, Լիբանանի հանդիսատեսներուն վրայ վերջին տարիներու ամէնէն անմոռանալի տպաւորութիւն ձգած թատերական ելոյթներէն եղան:

8.- Եւ վերջապէս՝ Երեւանի մէջ 2005-ին հրատարակուեցաւ Ալեքսանտր Թոփչեանի՝ «Եւ անգամ մահից յետոյ» վերտառութեամբ հոյակապ վէպը, որ կը ներկայացնէ՝ Ռուբեն Սեւակի 1905-

ք.ին բժշկութիւն ուսանելու համար Լոզան մեկնելէն մինչեւ 26 Օգոստոս 1915-ին, Չանդըրը-ի մէջ, հերոսաբար դէպի մահ դիմելուն և նահատակութեան պատմութիւնը:

Եւ Ալեքսանտր Թոփչեանի այս շատ յաջող վէպն է, որ Հայաստանի Հանրապետութեան նախագահի 2006-թ.ի գրականութեան «Միակ մրցանակ»ին արժանացաւ:

* * *

Թուրքերը, 26 Օգոստոս 1915-թ.ին, խուժողութօրէն սպաննեցին Ռուբէն Սեւակը:

1915-թ.ին, Պոլսոյ Գերմանական դեսպանատան արխիւին մէջ գրուած է, թէ՛ «Թուրքերը Ռուբէն Սեւակը ազատ արձակելու դիմումները մերժեցին:

Որովհետեւ թուրքերը Ռուբէն Սեւակը կը նկատէին իբրեւ մէկը այն մտաւորականներէն, որուն «Ջանգուածներու վրայ ունեցած ազդեցութենէն կը վախցուի»:

Ո՛վ թուրքեր, լաւ գիտցէք, որ այսօր, Ռուբէն Սեւակին գաղափարները եւ անձնագոհութեան ոգին տարածուած են հայ ժողովուրդին մէջ:

Եւ հազարաւոր ու հազարաւոր հայեր, դե՛ռ պիտի վերածուին իսկական Ռուբէն Սեւակներու:

Եւ անոնք, թուրքին դէմ, հայ ազգին ուրացուած ու տակաւին մերժուող իրաւունքներուն պահանջատերերը պիտի ըլլան:



ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ ԱՆՄԱՀՈՒԹԻԻՆԸ

23 Ապրիլ 1994-ին, Պեյրուքի Սահակեան գոլենին մեջ, Ռուբեն Սեւակի անուան մատենադարանին բացման օրը, Մեծի Տանն Կիլիկիոյ Հայրապետ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Կաթողիկոսը, իր պատգամը տուած պահուն, Ռուբեն Սեւակի «Կարմիր գիրքը»ին «Գիւղական գերեզմանատան մեջ» բանաստեղծութեան հատուածներ կարդաց և իր խօսքը այսպէս եզրակացուց.

«Ո՛վ Սեւա՛կ, դուն, բանաստեղծութիւններուդ մեջ, անմահութիւնը երգեցիր, բայց գերեզման մ'անգամ չունեցար: Սակայն այս մատենադարանը՝ քու անմահութեանդ ապացոյցներէն մէկն է»:

Այստեղ կը տեսնենք, Ռուբեն Սեւակի ապրած շրջանին հրատարակուած միակ գիրքը եղող, 1910-ին Պոլսոյ մեջ լոյս տեսած «Կարմիր գիրքը»ին նկարը:

Այս գիրքը, մեզի համար, ունի շատ կարեւոր հանգամանք մը, որ գիրքին վրայի մակագրութիւնն է՝ **«Սիրելի քրոջս եւ քնոյրիս - ճեղինակէն»**:

[Իսկ ճեղինակը - բնական է - Ռուբեն Սեւակն է]:

Ռ. Սեւակ իր այս գիրքը մակագրած և դրկած է իր երեց քրոջը՝ էֆրիկ Յակոբովիչ-Չիլինկիրեանին և անոր ամուսինը եղող Յովհաննէս Ս. Յակոբովիչին:

Այս գիրքը, որքան գիտենք՝ Ռուբեն Սեւակի կողմէ մակագրուած միակ գիրքն է, որ այսօր կը գտնուի Նիսի, Ռուբեն Սեւակի Յիշատակի Տան մեջ:

ԱՄԻՆԻ Գրքեր և Գրառարկան
Հրատարակ

Ռ. ՍԵԻՍՅԱՆ

ԿԱՐՍԻՐ ԳԻՐՔԵ

1910

ՀԱՅԿԱՆ ԳՐԱՐԱՆՈՒԹՅԱՆ ԿԻՆՈՒՄ

Կ. ՊՈԼՆՑ

Էֆրիկ և Յովհաննես Յակոբովիչ ամուլը, մեծ դեր խաղացած են Ռուբեն Սեւակի կեանքին մէջ:

Վկայութիւններ կան որ Էֆրիկ, իր կրտսեր եղբոր՝ Ռուբենին վրայ, անոր փոքր տարիքէն սկսեալ, մեծ ազդեցութիւն գործած է:

Եւ Ռուբենն ալ իր քրոջ՝ Էֆրիկին հանդէպ, շատ երախտապարտ եղած է:

Անջատաբար այս հանգամանքեն՝ էֆֆիկին ամուսինը, Յովհաննէս Ս. Յակոբովիչին Լոզան ուղարկած նամակը Սեւակին, 1914-ի. Աշխարհամարտին սկսելէն մէկ քանի շաբաթ առաջ, Եւրոպայէն Պոլիս վերադառնալու խնդրին մէջ, նակատագրական դեր ունեցած է:

Այստեղ կը հրատարակենք, յապաւումներով, այս անտիպ և սրտանմլիկ նամակին նկարը և վերծանուած [հարագատ] պատ-
նէնը:

Կ. Պոլիս 27/9 փետր. 1914

«Սիրելի աներձագս, Ռուբէն Էֆ. Զիլինկիրեան,

Լոզան

Սիրելի Ռուբէնս՝ բնականաբար կը սիրես ծերուկ հայրդ և խեղճ մայրդ, որ քու կարօտ... ու Հայկին այս վիճակէն ինչ տերտի մէջ ըլլալնին կը գուշակես: Քուկին գալուստովդ անոնք պիտի մխի-
թարուին:

Ես ալ կը խնդրեմ որ նամակս առնելովդ, գալու պատ-
րաստութիւնները տեսնաք: Մանաւանդ խեղճ Հայկին սիրոյն
համար, որ հարկաւ անգամ մըն ալ զինքը տեսնելու փափաքը
ունիք:

Մատամիդ յատուկ բարեւներ. նաեւ Վահագնին [Ռ. Սեւակին
մանչը՝ Լեւոն-Վահագն - Յ. Զ.] աչքերէն կը համբուրեմ:

Յ. Ս. Յակոբովիչ

Հայկը իր վիճակին այնչափ ծանր ըլլալը, չգիտեր: Եթէ իրեն
նամակ գրելու ըլլաք, զգուշացէք իրեն կասկած մը տալէ:

Ն. »:

* * *

Ռուբէն Սեւակ Յունիս 1914-ի սկիզբը, Պոլիս վերադարձաւ՝
անշուշտ իր կնոջը ժաննիին և 2 տարու մանչին՝ Լեւոն-Վահագնին
հետ:

Ժաննին 7 ամսու յդի էր Շամիրամին: ... Եւ Ռուբէն Սեւակի
ընտանիքին Պոլիս վերադառնալէն քանի մը շաբաթ ետք, 28 Յունիս
1914-ին, Սարաեւօ-ի մէջ, սերպ յեղափոխական Գ. Princip-ին
Աւստրիոյ գահաժառանգը սպաննելը, պատճառ եղաւ Առաջին
համաշխարհային պատերազմին սկսելուն:

Եթէ Ռուբէն Սեւակի Պոլիս վերադարձը քանի մը շաբաթ

ուշանար, պատերազմի արհաւիրքին պատճառաւ ժաննին պիտի չուզէր Պոլիս երթալ:

Արդէն ժաննին, առաջին օրէն համաձայն չէր, Ռուբէնի Պոլիս հաստատուելու գաղափարին: Որովհետեւ ան լաւ հասկցած էր բուրբերուն ինչ աստիճանի վայրենի ժողովուրդ մը ըլլալը:

Այս տեսակետով՝ Ռուբէնին քեռայրին՝ Յովհաննէս Յակոբովիչին վերը նշուած նամակը, նակատագրական դեր խաղացած է Ռուբէն Սեւակի ընտանիքին Պոլսոյ դժոխքը վերադառնալու դժբախտութեան մէջ:

Կրնա՛նք երեւակայել, թէ Ռուբէն Սեւակ ո՛ր աստիճան ազդուած ըլլալու է այս նամակին մէջ գրուած հետեւեալ տողերէն.-

«Բնականաբար, կը սիրես քու ծերուկ հայրդ և խեղճ մայրդ, որ քու կարօտ...»:

Քուկին գալուստովդ անոնք պիտի մխիթարուին»:

Եւ յատկապէս՝ սա նախադասութիւնը... **«Մանաւանդ, խեղճ Հայկին սիրոյն համար, որ հարկաւ անգամ մըն ալ գինքը տեսնելու փափաքը ունիք»:**

* * *

Շատ բացայայտ է, որ Յ. Յակոբովիչին նամակը, լուրջ դրդապատճառ մը եղած է Ռուբէն Սեւակին Պոլիս վերադառնալուն:

Բայց այս նամակը, միայն արագացուցած է անոր Պոլիս վերադարձը...

Որովհետեւ Ռուբէն Սեւակ, առաջին օրէն արդէն որոշած էր Պոլիս վերադառնալ:

Կարծէք, թէ յունական դիցաբանութեան հերոսներուն նման, Ռուբէն իր նակատագիրը ի՛նք գծած էր արդէն:

Այստեղ կը մէջբերենք 1912-ին, իր ընկերոջ գրած նամակին յատկանշական սա տողերը.

«... Այս բոլորին վրայ, աւելցուր նաեւ, Պոլսոյ մղձաւանջը. այն հորիզոնը, որ քանի մը տարիէն իմնիս պիտի ըլլայ, և ուր հեռուէն կը տեսնեմ արդէն Սոտոմի մուխն ու Գոմորի մեղքին բոցը»:

Ռուբէն Սեւակի շատ մը բանաստեղծութիւններուն մէջ, մահուան մղձաւանջը միշտ ներկայ է:

Այստեղ կ'ուզենք նշել մանաւանդ, իր **«Գացող մարդը»** բանաստեղծութիւնը, որ կ'աւարտի հետեւեալ տողերով.

«Կ'ըսեն՝ դղեակ մ'ունի աղուոր,
Կամ ուխտ մը սուրբ, սէր մ'հեռաւոր,
Ու հող կերթայ... Եւ գիտեմ որ
Տապան մ'ունի, չեմ գիտեր ո՞ւր...»:

Մենք կը հաւատանք, որ Ռուբէն Սեւակի «Գացող մարդը» բանաստեղծութեան այս վերջին տողերը՝ Սեւակի հակատագրին կանխատեսութիւնն են:

Այստեղ կը հրատարակենք այս բանաստեղծութեան ամբողջական պատճենը՝ որ բացառիկ իմաստալից քերթուած մըն է:

ԳԱՅՈՂ ՄԱՐԴԸ

Չեմ գիտեր ո՛վ, չեմ գիտեր ո՛ւր
Կ'երթայ... Հի՛ն, հին ասպետ մը լուռ,
Կ'ըսեն, ձիուն վրայ տխուր
Կ'երթայ շուտ-շուտ, չեմ գիտեր ո՞ւր...:

Կը տեսնեմ մեծ շուքն իր նիհար
Վերջալույսին, ամպերէն վար,
Սեւ նժոյգին վրայ հոգեւար
Սարին կ'երթայ, չեմ գիտեր ո՞ւր...

Կ'երթայ, շուտ-շուտ ու չի տեսներ
Որ ետեւէն բիւր կմախքներ
Ա՛լ վազելէն շատ են յոգներ,
Ան կ'երթայ շուտ, չեմ գիտեր ո՞ւր...

Կ'ըսեն՝ դղեակ մ'ունի աղուոր,
Կամ ուխտ մը սուրբ, սէր մ'հեռաւոր,
Ու հող կ'երթայ... Եւ գիտեմ որ
Տապան մ'ունի, չեմ գիտեր ո՞ւր...

1911

ՌՈՒՐԷՆ ՍԵՒԱԿ

* * *

Վերը նշեցինք, թե Ռուբեն Սեւակի բանաստեղծութիւններուն մէջ, մահուան մղձաւանջը միշտ ներկայ է:

Բայց, իրեն պէս զգայուն և խորաթափանց բանաստեղծ բժիշկի մը համար, մահուան այս մղձաւանջը շատ հասկնալի է:

Մտածել, որ Ռուբեն Սեւակ 1905-էն սկսեալ, նախ բժշկական ուսանող և 1911-էն յետոյ ալ իբր բժիշկ, Լոզանի հիւանդանոցներուն մէջ աշխատեցաւ մինչեւ 1914: Ան, իբր բժիշկ, հիւանդանոցներուն մէջ, ամէն վայրկեան, հիւանդներուն հետ էր:

Տեսաւ տառապանքը հիւանդներուն՝ ծեր ու երիտասարդ, որ շատ անգամ մահով կը վերջանար:

Եւ Ռուբեն, իբր գիտութեան մարդ և իբր բժիշկ, շատ անգամ անկարող կ'ըլլար հիւանդը մահուան հիրաններէն ազատելու:

Լոզանի հիւանդանոցներուն մէջ, Ռ. Սեւակ ճանչցաւ «Կեանքը»: Եւ մանաւանդ՝ ճանչցաւ ամենագօր «Մահ»ը որ տիեզերքի անգուրք «Աստուած»ն էր:

Բժիշկ բանաստեղծէ մ'աւելի ո՞վ կրնար լաւ տեսնել կեանքի և մահուան միջեւ մղուող անհեթեթ պայքարը որ, անխուսափելիօրէն, միշտ մահուան յաղթանակով կը վերջանար:

* * *

Ռուբեն Սեւակ Լոզան ապրած իր գրեթէ տասը տարուան կեանքի ընթացքին, իբր խորաթափանց մարդ, տեսաւ եւրոպական քաղաքակրթութիւն ըսուածին երեւութապէս բարեսիրտ, բայց իրականութեան մէջ անգուրք և անխիղճ կառոյցը: Ան, Լոզանի մէջ, մանաւանդ 1905-էն մինչեւ 1911-թ.ը, իր աշակերտական տարիներուն ճանչցաւ աղքատութիւնը:

Եւ մանաւանդ տեսաւ «Դրամ» ըսուած այս բռնակալին անօրէն իշխանութիւնը:

Եւ ճանչցաւ այս դրամ-բռնակալին լուծին տակ ընկնուող ծեր և հիւանդ մարդոց ու ընտանիքներուն ողբերգական կեանքը, որուն «կեանք» ըսել կարելի չէր:

* * *

Եւ Ռ. Սեւակ Լոզանի մէջ, հայրենիքէն հեռու, ապրեցաւ 1909-
թ.ի Կիլիկեան ողբերգութեան պատճառած տառապալից մտատան-
ջութիւնները:

Եւ մանաւանդ՝ Կիլիկիոյ ողբերգութիւնը պատճառ եղաւ, որ ան
մէկ անգամ ալ տեսնէ Եւրոպական պետութիւններուն հայկական
ջարդերուն հանդէպ ցուցաբերած անտարբերութիւնը և յատկա-
պէս՝ լուռ մեղսակցութիւնը:

* * *

Գրեթէ մէկ դարէ ի վեր, շատ բան գրուած է բանաստեղծ-գրող
Ռ. Սեւակի մասին:

Երբեմն շոայլ, երբեմն զուսպ, երբեմն նուազ շոայլ գնահա-
տանքներ-քննադատութիւններ կատարուած են իր գրութիւններուն
մասին:

Բնական է՝ այս գրութիւններու բուն արժեքի գնահատութիւն-
ները կախում ունէին այդ գրադատներուն հասկնալու և տեսնելու
կարողութենէն:

Եւ մանաւանդ՝ ըստ հայկական սովորութեան՝ քննադատ անձին
կուսակցական պատկանելիութենէն:

Բայց, մեզի համար, անոր մասին կատարուած ամէնէն կարեւոր
և խտացած բովանդակութեամբ գնահատանքը, «Ամէնուն տարե-
ցոյցի» հեղինակ Թեոդիկին ըսածներն են.-

«Արեւա իմաստութեան շիթը դրած է անոր ուղեղին մէջ,
Եսկիւլապ՝ բժշկութեան խորհուրդը, Հերմէս ալ՝ կայծը պերճա-
խօսութեան»:

Այստեղ, Ռուբէն Սեւակի գրութիւններէն նշումներ ընելով,
պիտի ջանանք ապացուցանել, թէ Թեոդիկ ո՛ր աստիճան իրաւունք
ունէր իր տուած գնահատութեան մէջ:

Նախ, մէջբերումներ պիտի ընենք Ռուբէն Սեւակի «Կարմիր
գիրքը»ին «Ջարդի Խենթը»ին հառաչանքներէն: Անցողակի նշենք,
որ «Ջարդի Խենթը»ի հերոսը Բաֆֆիի «Խենթը»ին հետ միայն
անունի նմանութիւն ունի:

Ռուբէնի «Ջարդի Խենթը», բանաստեղծին «հաւատամբ»ը եղող
հայ ազգին համար, պայքարի հրամայականին գաղափարը կը
ցոլացնէ...

*«Զի թուրն աւելի արդար է խաչէն,
Զի կեանքն անոնց է միայն որ քաջ են»:*

[Զանգակներ - Ռ. Ս.]

Զարդի խենթը՝ քիւրտերուն կողմէ սպաննուած իր քահանայ հօր
դիակը ուսը առած, կը քալէ, կը քալէ և կը հառաչէ՝

*Կ'ըսէիր, հայրիկ, «Դրախտ երթալու
Կարճագոյն ճամբան ըլլալ է հլու
Հետեւող խաչի սուրբ արանետին...»:
- Հայր, էն կարճ ճամբան խանջերն է քուրդին,
Խանջերն է քուրդին»:*

Եւ Զարդի խենթը կը շարունակէ իր մեծախօսութիւնը՝

*«Ահա մենք կու գանք ու մենք նզովքն ենք,
Ու խաւարին մէջ մխուած տէգը նենգ
Վրէժներու Հիդրան ենք փայփայելի
Մենք, սարսափահար ու սարսափելի...»*

*«Մենք՝ հին ուխտերու նո՛ր ուխտագընաց
Մենք՝ սուսերը բիրտ ու գիրքն օրինաց,
Մենք՝ ցասման ջրվէ՛ժը, սարի կողէն
Մենք՝ աղջամուղջի ծնունդ լուսեղէն...»:*

*«Զե՛զի՛ որ քերծուած մեր մորթերէն ձիգ
Հարսնիքի, մեղքի վրաններ կառուցիք...
Ու ձեզ՝ Եւրոպեան դիք որ շնագին
Սակարկեցիք մեր արեան լուսեան գին...»:*

Կրնա՛ք երեւակայել. Ռ. Սեւակ դեռ 1910-ին, իր «Կարմիր
գիրքը»ին մէջ, իր սրտին ունենալով Կիլիկեան ողբերգութեան
ցաւը, գրած էր.

*«Ու ձեզ Եւրոպեան դիք որ շնագին
Սակարկեցիք մեր արեան լուսեան գին...»:*

Եւ բանաստեղծը յանցաւորներու պատին գամած էր՝

Ծրկերես, անխիղճ եւրոպացիները:

Մինչդեռ, մեր մեծաւոր առաջնորդներուն մեծ մասը, առաջին օրէն և մինչեւ 1915-թ.ը, նոյնիսկ մինչեւ այսօր, յոյս դրին այս [միայն դրամի աստուծոյն հաւատացող] եւրոպացիներուն վրայ:

Ինչպէ՞ս մեկնաբանել մեր առաջնորդներուն կուրուքեան աստիճանի հասնող այս անհեռատեսութիւնը, չըսելու համար՝ դաւանանութիւնը: Անոնք, որ դարերէ ի վեր չեն հասկցած, թէ դրամատէր եւրոպան մնայուն բարեկամն է թուրքին: Եւ յաւիտեանական թշնամին՝ ռուսին:

[[«Եւրոպատէր», մանաւանդ ֆրանսատէր մեր միամիտ առաջնորդներուն վերջին յուսախաբութիւնը եղաւ՝ 18-5-2006-ին, ֆրանսական Ազգային ժողովին մէջ, 1915-ի Հայկական ցեղասպանութիւնը ուրացողները պատժել առաջարկող օրէնքի նախագիծին «թաղումը»]:

Եւ ո՞վ էր այս «թաղման» պատասխանատուն:

Ֆրանսական Ազգային ժողովին նախագահը՝ Jean-Louis Debre-ն է, որ այն միջոցին երբ երեսփոխանները օրէնքը պիտի քուեարկէին, [յոյս կար որ վաւերացուի] դադրեցուց ժողովին աշխատանքները:

Եւ, այս ձեւով, գերեզմանուեցաւ Հայկական ցեղասպանութիւնը ուրացողները պատժել առաջարկող օրինագիծը:

Եւ ո՞վ է Ժան-Լուի Տեպրէ: Ըսենք - հրեայ ռաբունապետ մը, Տեպրէ անունով, որ անցեալին չենք գիտեր ի՛նչ պատճառաւ, դաւանափոխ կ'ըլլայ և քրիստոնէութիւն կ'ընդունի: Ահա, այս տխրահռչակ, դաւանափոխ ռաբունապետին թոնն է Ժան-Լուի Տեպրէ:

Կը կարծենք, որ ուրիշ պատճառ փատտելու պէտք չունինք, 18 Մայիս 2006-ին, ֆրանսական Ազգային ժողովին մէջ կատարուած գայթակղութեան պատճառն ու իմաստը հասկնալու համար:

Այստեղ կը հրատարակենք ֆրանսական «Aujourd'hui» օրաթերթին մէջ, 19-5-2006-ին լոյս տեսած նկար մը իր մեկնաբանութեամբ, որ ֆրանսական իշխանութիւններուն հերթական [քանի՞ երրորդ] դաւանանութեան կը վերաբերի:

GÉNOCIDE ARMÉNIEN : LA LOI ENTERRÉE

De MÉMOIRE D'HUISSER. on n'a jamais vu cela... Hier, en début d'après-midi, une vingtaine de gendarmes ont été contraints de faire évacuer les tribunes de l'Assemblée nationale devant des députés sidérés. Une soixantaine de parlementaires examinaient la proposition de loi très sensible du groupe socialiste condamnant la négation du génocide arménien. Au moment de passer au vote, le président Jean-Louis Debré a subitement levé la séance. "Démocratie, démocratie", ont alors hurlé des dizaines de membres de la communauté arménienne. Plusieurs "Marseillaise" ont retenti. Le premier secrétaire du PS François Hollande, arrivé quelques minutes avant les incidents, est monté dans les tribunes pour tenter de ramener le calme.

Depuis plusieurs jours, l'incertitude planait sur l'issue de ce vote, chaque famille politique étant profondément divisée. Craignant une crise avec la Turquie. L'Elysée s'est activé, auprès des députés la majorité pour éviter un vote favorable. Sous les invectives. Philippe Douste-Blazy, le ministre des Affaires étrangères, a affirmé hier que "ce texte serait considéré comme un geste inamical aux conséquences politiques et économiques sérieuses". Plusieurs députés UMP, comme Eric Raoult ou Patrick Devedjian, voulaient passer outre ces mises en garde. Une majorité hétéroclite semblait ainsi se dégager en faveur de la proposition de loi. Mais, devant le risque encouru, le vote a été reporté sine die.

ERIC HACQUEMAND

*Journal "Aujourd'hui" Paris
19-5-2006 page 10*

ՌՈՒՐԷՆ ՍԵՒԱԿԻ ՆԱԽԱՏԵՍՈՒԹԻՒՆ ՆԵՐԸ

**ՊՈԼԻՍ ԼՈՅՍ ՏԵՍՆՈՂ «ԱԶԱՏԱՄԱՐՏ» ԹԵՐԹԻ ՄԷՋ,
ՌՈՒՐԷՆ ՍԵՒԱԿ 1913-ԻՆ, ԻՐ «ԱԹԼԱՍԵՐՈՒՄ» ՅՕԴՈՒԱԾՈՎ
ԳՐՈՒՄ ԷՐ՝ «ՍԱԿԱԹՆ ՍՏՈ՛ՅԳ, ՍՏՈ՛ՅԳ ԿՂՍԵՄ ՉԵՋԻ՝
ՎՏԱՆԳԸ ՄԵԾ Է, ՇԱՏ ՄԵԾ, ԱԻԵԼԻ ՄԵԾ՝ ՔԱՆ ԿՐՆԱՆՔ
ԵՆԹԱԴՐԵԼ»**

15 Փետրուար 2005-ին, երջանկութիւնը ունեցանք դիտելու
Երեւանի «Հ-1»ի հեռատեսիլէն սփռուած հաղորդում մը, որ կը
կոչուէր՝ «ՄՃՃՊՎՊ», և կը կատարուէր Ռուբէն Սեւակի
ծննդեան 120-ամեակի պատեհութեամբ: Եւ հաղորդման հեղինակն
էր՝ տիկ. Ճուլիա Կաթոյեանը:

Այս հաղորդումով ելոյթ ունեցաւ գրականագէտ-գրող Ալեք-
սանդր Թոփչեան: Նաեւ՝ իր յուշերը պատմեց Շամիրամ Սեւակ:

Ալեքսանդր Թոփչեան, իրեն յատուկ պերճախոսութեամբ,
ներկայացուց Ռուբէն Սեւակը:

* * *

**ՌՈՒՐԷՆ ՍԵՒԱԿԻ ԳՐՈՒԹԻՒՆ ՆԵՐՈՒՆ
ՎԵՐԼՈՒԾՈՒՄԸ**

20-րդ դարու սկիզբը, Եւրոպա ուսանող հայ երիտասարդները,
նոր դարաշրջան մը բացին հայ գրականութեան մէջ:

Այս ուսանող մտաւորականներուն առաջնորդներն էին՝ Դանիէլ
Վարուժան, Սիամանթօ և Ռուբէն Սեւակ:

Իրենց գրութիւններուն տեսակետով՝ Դանիէլ Վարուժան պեր-
նիմաստ արտայայտութիւններով և բառերու հարստութեամբ ամե-
նէն ազնուականն էր: Սիամանթօն՝ հայրենասիրական պոթկում-
ներով՝ ամենէն ասպետականը: Բայց Ռուբէն Սեւակ, իբր հայ և իբր

մարդ, ամէնէն զգայուն և իրապաշտ ընկերվարականն է:

Ռուբէն Սեւակ միակն է, այդ շրջանի բանաստեղծներէն, որ Եւրոպա 6 տարի գիտութիւն ուսանած և բժիշկ եղած է: «Բանաստեղծ և բժիշկ Ռուբէն Սեւակ»:

Այս միաւորումը Ռուբէն Սեւակի ամէնէն յատկանշական կողմն է: Այս միաւորումով է որ Ռուբէն Սեւակ, բոլորովին տարբեր շունչ մը բերաւ Եւրոպայէն, իր գրութիւններով և իր գաղափարներով:

Այս է թերեւս պատճառը, կարգ մը քննադատ-մտաւորականներու բռնած անիրաւ կեցուածքին, Ռուբէն Սեւակի հանդէպ: Իրենց գիւղին մէջ ինքնաշխատութեամբ զարգացած գրողները, բնական է, պիտի չկրնային հասկնալ և հանդուրժել բժիշկ-բանաստեղծ Ռուբէն Սեւակին:

Ռուբէն Սեւակի գրութիւններուն մէջ, բանաստեղծը և գիտութեան մարդը քով-քովի են: Այսինքն՝ զգացումը և տրամաբանութիւնը. շատ պարզ, շատ հասկնալի, ժողովրդական լեզուով գրուած իր բանաստեղծութիւններէն ամէն մէկը իրական կեանքի տպաւորութիւններ են: Առանց բառերու մթերքի, առանց պոռոտախօսութեան, առանց շինծու զգացականութեան:

Ռուբէն Սեւակ իբր մարդ և իբր հայ, իր ծնունդին, իր անկեղծ խառնուածքին պատճառաւ չէր կրնար մարդկային և ազգային ցաւերէն հեռու մնալ:

Տառապեցաւ՝ մարդկային անհաւասարութեան և անարդարութեան ցաւերով:

Իբր բանաստեղծ և գիտութեան մարդ՝ տեսաւ, թէ ուր էր ցաւին արմատը, և անոր համար կրցաւ գրել հայ գրականութեան ընկերային հարցերու ամէնէն խիզախ և ամէնէն տպաւորիչ բանաստեղծութիւնները: Եւ հայրենիքէն հեռու, անկէ եկած արիւնով լեցուն լուրերու ազդեցութեան տակ, իր պոռթկումը և ցաւը թափեց «Կարմիր գիրք»-ի բանաստեղծութիւններուն մէջ:

Այս հայրենասիրական բանաստեղծութիւնները, իրենց պարզութեան մէջ, պիտի մնան հայ դիւցազներգութեան ամէնէն հարագատ և ամէնէն զգայուն էջերը:

Ռուբէն Սեւակի գրականութեան սկզբունքը՝ «Միայն ժողովուրդին օգտին համար գրելու» գաղափարն էր:

«Բժիշկին գիրքէն փրցուած էջեր»ու շարքէն «Այլասերում»ի մէջ տեսէք, թէ Ռուբէն Սեւակ ինչպէս կը հարուածէ այն գրողները,

որոնք ազգին ցաւերուն կոնակ դարձուցած էին: «Չէ՞ք տեսներ արդէն թէ ինչպէս, շատ մը գրագէտներ, լիրք քաջութիւնը ունին յայտարարելու թէ՛ իրենք ժողովուրդին համար չէ՛ որ կը գրեն: ... Որբուկի մը պէս անտէր ցեղ մը հուժկու, ու լուսեղ ու սիրտուխ, բարբառի մըն է ծարաւ, իսկ մեր գրագէտները հանելուկային, առեղծուածային, խաւարակուռ բաներ կ'ըսեն իրեն ու մեր քերթողները՝ գրիչնին հայ արեան մէջ թաթխելէ վերջ՝ չինարէն տաղեր կը գրեն որպէսզի մա՛րդ չհասկնայ...»:

Հեռո՛ւ մենե՛ ախտագին մտաւորականներ: Դուք ցեղին ուղեղն էք: Բայց երբ այդ ուղեղը ուրիշ կերպ չի կրնար խորհիլ, քան յուսահատեցնելով մեր կենսունակութիւնը, մենք պիտի փրցնենք ու նետենք այդ ուղեղը:

Մենք նոր միտքեր, նոր սիրտեր, նոր հոգիներ պիտի դարբնենք: Մեզի կարմիր ու մսուտ շուրթներով, ուժեղ ու ժպտուն գրականութիւն մը պետք է:

Մեզի առողջ ու երիտասարդ մտաւորականներ պետք են: Չուկն իր գլուխէն կը հոտի, ազգն՝ իր մտաւորականներէն: Անոնք են ցեղի մը գլուխը... Մեզի նոր ոսկեղար մը պետք է, նոր ոսկեղա՛ր մը: Այլասերո՛ւմ, ո՛չ, վերածնո՛ւնդ...»:

ՌՈՒՐԷՆ ՍԵՒԱԿ

«Ռուբէն Սեւակ եւ փրցուելիք ուղեղներ»
1985

Թ. Զ.

Ինչպէս որ «Նայիրի»ի նախորդ թիւին մէջ նշած էինք՝ Ռուբէն Սեւակի 1910-ին Պոլիս հրատարակուած «Կարմիր գիրքը» իր ողջութեանը լոյս տսած միակ մատեանն է:

Եւ մենք կը հաւատանք, որ այս «Կարմիր գիրքը» հայկական ցաւերը, հայկական իրականութիւնները է նաեւ «կեանք» ըսուած առեղծուածը՝ ամէնէն խոր և իրատեսութեամբ մեկնաբանող հրատարակութիւնն է: Եւ այս գիրքը, մինչեւ այսօր, իր այժմեականութիւնը չէ կորսնցուցած:

Այստեղ պիտի մէջբերենք «Կարմիր գիրքը»էն հատուածներ, ապացուցանելու համար որ Ռուբէն Սեւակ, հարիւր տարի առաջ, ի՛նչ մեծ իրատեսութեամբ մեկնաբանած էր «Հայկական ողբերգութիւնը» և «Կեանք ըսուած անվերջ պայքարը՝ դէպի մահ»:

ՋԱՐԴԻ ԽԵՆԹԸ

Բոլոր խելացի մարդիկներն անա,
Անա խելօքներն այս ապուշ կեանքին
Ու նուիրումով մը աստուածային՝
Կիրակին անգամ մը բերանով ծոմ՝
Տիրամօր առջեւ կ'սպառեին մոմ,
Շաբաթ մը ամբողջ անվան, անհամար
Շնալու, ստելու, գողնալու համար:

* * *

«Ոչ Աստուած, ոչ ափ մը հայրենի հող...
Եւ որ կը մուրան պատահիկ մը հաց՝
Հեռուէն պժգանքով իրենց կարկարուած...
Եւ որոնք Մարդուն մէջը սրբազան
Ոչինչ գտան այլ վայրագ մի գազան...»:

* * *

«Ձե՛զի՛ որ քերծւած մեր մորթերէն ձիգ
Հարսնիքի, մեղքի վրաններ կառուցիք...
Ու ձեզ եւրոպեան դիք որ շնագին
Սակարկեցիք մեր արեան լուսեան գին»:

* * *

Կ'ըսէիր, հայրիկ, «Դրախտ երբայլու
Կարեագոյն նամբան ըլլալն է հըլու,
Հետեւող խաչի սուրբ արահետին»
- Հայր, է՛ն կարն նամբուն խանջէրն է քուրդին,
Խանջէրն է քուրդի»:

* * *

Բայց դուն բարձր ես, վերն, քու խիղնդ մաքուր,
Ու չես հանիր աչքըդ անկարեկիր
Ուղղել մարդկութեան գոր յերկիր թուքեր...
..... Խեղճ յիմար: Որո՞ւ կը խօսիմ - փրփրա՞ծ:
Չէ՞ որ դուն վաղուց մեռեր ես, Աստուած:

* * *

- Վարդե՛րը մեռան
Վարդե՛րը մեռան,
Իրենց բիւր-բուրան,
Յօղիկին վըրան
Վարդե՛րը մեռան,
Վարդե՛րը մեռան:

«Արիւնոտ, մանրիկ,
Ոտներըս բոպիկ,
Դիակներու վըրան
Դողդո՛ջ կ'եբերան:
Վարդե՛րը մեռան,
Վարդե՛րը մեռան:

* * *

Ո՞ր Օրէնքէն, ո՞ր Աստուծմէն, ո՞ր մութ
Արդարութիւնէն, ո՞ր գութէն անգութ,
Ո՞ր մէկ ոճիրիդ քաւութեան համար՝
Կարմիր շղթայիդ օղերուն անհամար...:

* * *

Ու սո՛ւրի մէջէն, ու բոցի մէջէն,
Ու արեան մէջէն, մահը կ'ընդմիջեն...
Զեռքերդ՝ վեր բոնած մանուկ մը վայրի
Զայնով լալով «Ա՛գգը պիտի ապրի»:

* * *

ՄԱՐԴԵՐԳՈՒԹԻՒՆ

Անցեալ տարի էր: Յօգնած ապաքէն:
Շատ քաղաքակիրք այս Արեւմուտքէն՝
Ուր խիղճը բառ մէ, մարդը՝ մեքենայ
Աշխարհ գործարան մ'անխոնջ, անխընայ,
Սէրը հաշիւ մ'է, Կրօնքը՝ դրամ,
Երջանկութիւնը՝ ճանճրալի մի տոամ,
Մահն անմտութիւն, կեանքն անհաշտ մի կոխ:
Ուր ժամանակն իսկ վատ մ'է ալեխոխ
Որ ամէն բոպէն իր մանրակրկիտ

Մուրնի հարուածով կը զարնէ մտքիդ...
Այսպէ՛ս, հեւ ի հե՛ւ, յոգնած, յուսահատ,
Անմի՛տ այս վազքէն անդուլ անընդհատ,
Կարօտն ունեցայ հին հին դարերու,
Եւ հիւանդ հոգիս տարի ես հեռու:
Հեռո՛ւ, խնկաւե՛տ, լո՛ւտ, մշտնջե՛նի
Արեւելքի իմ գիւղըս հայրենի...:

* * *

Եկեղեցւոյն մէջ մտայ լռելեայն:
Շէնքը փոքրիկ էր, բայց բաւական լա՛յն՝
Աստուածն ու դարերը ամփոփելու...:
Քար քարի վրայ, ծներ էր հըլո՛ւ,
Առանց արուեստի, առանց մեծ ոնի,
Պարզ, ինչպէս ծառ մը որ հողէն կ'անի,
Ու քար, ու բազմոց, ու կերոն, ու խաչ,
Հոն, հին դարերու բոյրն ունէին գաղջ...:
Ու առաստաղի աղքատ ջահերէն
Կախուած՝ ժամանակը մեռելօրէն
Կը ննջէր անշարժ, դարե՛ր քնեած.
Քշոցին ձայնէն երբեմն շոյուած...
Հոն ո՛չ հեւք, ո՛չ վազք, ո՛չ ժամ, ո՛չ վայրկեան.
Անսահմա՛ն, անխոռ՛վ, անծալ, յաւիտեա՛ն
Չո՛րս պատերու մէջ՝ Անհո՛ւն մը խորին,
Ուր ծեր գեղջուկներ մեռնի՛լ կը սովորին...:

* * *

Պատարագէն վերջ, քով քովի անձայն,
Երկու թափօրներ իրար քսուեցան:
Ան չէր դասական հանդիպումը հին՝
Կնուէքի թափօրն՝ մահուան թափօրին -
Մէկ կողմ՝ ծնո՛ւնդ, խինդ, միւս կողմ՝ մա՛հ ու լալ,
Ու եկեղեցին կ'օրհնէ երկուքն ալ...:
Ո՛չ: Երկու թափօր, երկուքն ալ ժպտուն.
Մէկը նորածին որդին մեծատուն.
Միւսը աղքատի ծնունդը անտուն:
Մէկը բեհեզով քնած, միւսն արթուն.
Մէկուն ժանեակներ, մետաքսի հիւսկէն,
Միւսին ձորձ մը խեղճ՝ հօրը շապիկէն,

Առաջնոյն ոսկի, ժանեակ բիւր տեսակ,
Երկրորդին ճակտին փուշի սել պսակ.
Մէկը Տէ՛ր արդէն, միւսը Գրա՛ստ:
Ճակատագի՛ր, վա՛խ, տղաքները փաստ...:

* * *

Բայց այս ի՛նչ արդար օրէնք մ'է խորին
Որ յղփացած, նո՛խ մեծերը երկրին
Իրենց արգանդին մէջ կը հարուածէ:
Հաւասարութեան խո՛ւլ պէտք մ'է գուցէ
Որ վիժածընունդ սերմերը Մեծին
Իր որովայնին գոգը հիւծին...:

* * *

Չե՛մ համարձակիր վերցնել մէկդի
Կարմիր-վարդագոյրն որ Օրէնք կ'ըսուի,
Դիտելու ըմբոստ այն կեանքերն հսկայ,
Որ բանտերու մէջ, կառափնատի վրայ,
Կախաղաններո՛վ մեռան անհամար,
«Կեանքի Իրաւունք»... պոռալնուն համար:

* * *

Երկուքն ալ երկա՛ր, երկա՛ր դիտեցի:
Այլեւս բնաւ մի խօսիք ինծի
Արժանիքին վրայ, ու տարբերութեան...
Ու ազնուական զարմին վրայ արեան:
Ահա՛ երկուքն ալ, անկերպ բզեզներ,
Շիւղ մը իսկ զիրենք պիտի մեռցներ,
Կ'ուզեն անուն տալ: Ի՛նչ պէտք անունի...
Իւրաքանչիւրն ալ իր անունն ունի,
Մին Ոյժն է անգութ, միւսն Ստրկութիւն:
Ոյժ չունի կ'ըսէք խլէզն անարիւն.
Ի՛նչ պէտք արիւնի.- անյազ բորենի՛
Հացի մը փոխան, կարմիր, ծիրանի,
Ան պիտի ծըծէ Արիւնը միւսին,
Ու պիտի միտէ ժանիքն իր միսին,
- Օրէնքը՝ իրեն անբոյր օրեւան:
Ողջունեցէք - զայն, Իշխանն է վաղուան...:

* * *

Մերադրած դողդոջ, աչքերս ձեռքիս,
Կուրծքիս տակ գապել կ'ուզեի հոգիս:
Հագար նկարներ կ'անցնեին մտքես:
Արեան շողւոյն պէս, նոնիներու մէջ
Բիւր կախադաններ անգուր մեծերու...
Ու հրդեհներու մէջ հեռուէ հեռու,
Ստրուկներու կո՛ւռ, բարբարո՛ւ գունդեր.
Որ տաճար, Աստուած, կո՛ւռք, իշխա՛ն ու տե՛ր
Տապալելով վար, կ'երթային հեռո՛ւ
Հաւասարութեան սե՛րմը ցանելու,
Ու լա՛յն բաշխելու Արդարութի՛ւն, Հաց...:
Այտիս վրայ հրաշէկ արցունք մը դողաց.
Աչքերըս բացի, տեսիլք էր միայն.
Ամէնքն ալ գացա՛ծ, ժամն էր լոռելեայն...:
Ու ես ալ գացի իմ սուգիս դարման՝
Հաւասարութեան դաշտը - գերեզման...:

* * *

ԳԻՒՂԱԿԱՆ ՃԱՄԲՈՒՆ ՎՐԱՅ

Եկեղեցիէն մինչեւ գերեզման
Տանող նամբուն վրայ, քարի մը վրան
Նստեցայ տրտում, ու լո՛ւռ դիտեցի
- Հոգւոյս ծարաւովը արեւելքցի -
Հեռուներն հանդա՛րտ, հեռուները լա՛յն,
Հեռուները ջի՛նջ, միսքի՛ք լոռելեայն:

* * *

Բա՛ն մը կար կեանքէն անջատ, կեանքէն վեր,
Բան մը որ կեանքէն բնա՛ւ չէր ազդուեր,
Որ կը նմանէր երեկին, վաղուան...
Այդ՝ Մահուա՛ն իսկ մէջ ժխտումն էր մահուան...:

* * *

- Ինչո՞ւ շտապել, չե՞ որ ամենքս ալ
Ոմանք հեւ ի հեւ, ու ոմանք դանդաղ
Անվրիպօրէն պիտի հասնինք մահ...
Կեանքն է այս. միշտ սուտ սուտի ետեւէ.
Մէկը հազի՛ւ թէ միւսին չափ տեւէ...:
Շառաչող ծովուն ալիքներուն վէս,
Կը ծնինք ամէնքս, կը բարձրանանք վէս,
Բայց հազի՛ւ, ատեն մը կայ փրփրելո՛ւ
Պէտք է կորսուիլ, կորսուի նք հըլո՛ւ...:

* * *

ԳԻՒՂԱԿԱՆ ԳԵՐԵՋՄԱՆԱՏԱՆ ՄԷՋ

... Ինկայ ու մտիկ ըրի սգահար
Ձայնի մ'որ քարին ներքեւ կը դողար.-
... Ինկայ ու մտիկ ըրի սգահար
Ձայնի մ'որ քարին ներքեւ կը դողար.-
Ե՛ս եմ, Ե՛ս եմ, Ե՛ս քեզ եղբա՛յր, քեզ քո՛յր.
Ե՛ս տիեզերքին հսկայ ա՛ջքը կո՛յր.
Ե՛ս սկիզբ և վերջ, երա՛խ ու արգանդ,
Ե՛ս վի՛հ անյատակ ու ծոց արգաւանդ.
Ե՛ս ա՛յն եմ որ քեզ ծընաւ, նաեւ ա՛յն
Զոր պիտի ծընիս: Ե՛ս ձայն լռելեայն:
Ե՛ս օրհնութիւնն եմ, բարիքը վերջին:
Ե՛ս այն եմ որմէ ամէնք կը փախչին
Եւ որմէ փախչիլ չի կա՛յ: Հաւասա՛ր
Ներո՛ւմն եմ անոր որ ինձ կը յուսար,
Անո՛ր որ հեզնեց առանց խղճի:
Ամէնո՛ւն ալ վրայ իմ մարգըս կ'անի...
Մանգաղս ո՞վ պիտի համբուրէր անահ...
- Ինձ Աստուած ըսին, իմ անունս է մա՛հ...:

«Կարմիր գիրքը» 1910 - ՌՈՒՐԷՆ ՍԵՒԱԿ

* * *

Վերի կարն յապաւումներով ջանացինք ներկայացնել Ռուբէն Սեւակի «Կարմիր գիրքը»ին բովանդակութիւնը:

Եւ այժմ կ'ուզենք այս գիրքի մասին անվերապահօրէն և սրտաբաց մեր գաղափարը յայտնել ըսելով.- Ռուբէն Սեւակի «Կարմիր գիրքը» հայ գրականութեան մէջ, մեր մինչեւ հիմա կարդացած մատեաններէն ամենէն իրատեսականը և իր պարզութեամբ ամենէն խորիմաստն է:

Եւ հայկականութեան ու «Կեանք»ը վերլուծելու մարզի մէջ, մեզի համար, «Կարմիր գիրքը» իսկական ուղեցոյց մը եղած է:

Բայց դժբախտաբար, 1910-ին այս գիրքը, շատ մը հայ մտաւորականներ չկրցան գնահատել և մանաւանդ՝ չկրցան հասկնալ:

Որովհետեւ անոնք գրականութիւնը, մանաւանդ բանաստեղծութիւնը կը նկատէին՝ երազային թռիչք ու բառերու նոխութիւն:

Այստեղ պիտի ներկայացնենք, այն տարիներուն մեծ կարծուած գրագետներէն՝ Արշակ Զօպանեանի կողմէ «Կարմիր գիրքը»ին մասին Ռ. Սեւակին ուղղած, 1910 թուակիր նամակէն հատուած մը:

Ռուբէն Սեւակ՝ Արշակ Զօպանեանին ծանօթացած էր 1907-ին Լոզանի մէջ: Այստեղ կը հրատարակենք նաեւ պատմական նկար մը, ուր կ'երեւին Ռուբէն, Արշակ Զօպանեան և Կոմիտաս Վարդապետ՝ նկարուած 1907-ին Լոզանի մէջ»:

Ահա, Արշակ Զօպանեանէն Ռուբէն Սեւակին ուղղուած տխրահոչակ նամակէն տողեր:

«Կրակ ունիք, և ձիրք, բայց դեռ պատրաստ չէք. շատ կարդալու, ռներնիդ յղկելու, գրական զարգացումնիդ կրթելու պէտք ունիք: Մի՛ անապարէք. շատ գրէք. ատեն շատ ունիք. երիտասարդ էք. օր մը անշուշտ աւելի կատարեալ պիտի գրէք»:

ԱՐՇԱԿ ԶՕՊԱՆԵԱՆ

* * *

Մենք կը կարծենք, որ Արշակ Զօպանեանի այս քննադատական նամակը շատ ժխտական ազդեցութիւն գործած է Ռուբէն Սեւակի վրայ:

Որովհետեւ 1910-էն մինչեւ 1915 Ռուբէն Սեւակ, իր ապրած շրջանին, ուրիշ գիրք չէ հրատարակած:

Հակառակ որ Ռուբէն Սեւակ ուներ, անտիպներ՝ արձակ ու

քերթուած որոնք պատրաստ էին տպագրուելու :

Այս մասին կը վկայեն Ռուբէն Սեւակի բարեկամները ըսելով, որ անոր տան մէջ տեսած են անտիպ գրութիւններ, հրատարակութեան պատրաստ վիճակի մէջ, որոնց անունները պիտի ըլլային «Քառսը» և «Վերջին հայերը»: Եւ մենք կը հաւատանք որ Ա. Չօպանեանի քննադատութեան ստուերը արգելք եղած է Ռուբէն Սեւակին այս գիրքերու հրատարակութեան:

ԵՐԿՈՒ ԲԱՆԱՍՏԵՂԾ - ԵՐԿՈՒ ԿԵՑՈՒԱԾՔ

Ռուբեն Սեւակ 1905-էն մինչեւ 1914 Եւրոպա ապրեցաւ եւ 1914-ին Պոլիս վերադարձաւ - 1915-ին նահատակուեցաւ

Արշակ Չօպանեան 1895-էն մինչեւ իր մահանալը [1954-թ.] Եւրոպա ապրեցաւ

Ռուբեն Սեւակ Եւրոպա ապրելէ 5 տարիներ յետոյ, հասկցած էր արդէն Եւրոպացիներուն ինչ ըլլալը, եւ 1910-ին, իր «Կարմիր գիրքը»-ին մէջ, սապէս գրած էր՝ «Ու Չեզ Եւրոպեան դիք, որ շնագին սակարկեցիք մեր արեան լուսեան գին»:

Մինչդեռ Արշակ Չօպանեան Եւրոպա 35 տարի ապրելէ յետոյ, դեռ չէր հասկցած Եւրոպացիներուն ինչ ըլլալը, եւ 10-8-1920-ին ստորագրուած Սեւր-ի դաշնագրով՝ Արեւմտեան պետութիւններուն վրայ յոյս դրած էր

Միամիտ և անհեռատես Արշակ Չօպանեան, ինչպէս որ չէր հասկցած Ռուբեն Սեւակի «Կարմիր գիրքը»-ին արժէքը, նոյնպէս ալ չէր հասկցած սկզբունքը Արեւմտեան պետութիւններու քաղաքականութեան, որ ո՛չ թէ արդարութեան, այլ միայն «շահու» վրայ հիմնուած էր... ու կը մնայ:

Եւ պատրանախար Արշակ Չօպանեանի «բարեկամները» եղող ֆրանսացի ղեկավարներն էին, որ Արեւմտեան պետութիւններուն մէջ առաջիկները եղան 1921-ին, Անգարայի մէջ, Մուստաֆա Քեմալի հետ համաձայնութիւն ստորագրողները: Ֆրանսացիները, հայութեան դաւաճանելով, դրժելով իրենց խոստումը [Հայկական անկախ Կիլիկիա հիմնելու], Կիլիկիան ծախեցին թուրքերուն:

Այստեղ կը հրատարակենք Ռուբեն Սեւակի «Կարմիր գիրքը»-ի

մասին [այս անգամ] գնահատական նամակ մը՝ Պոլսոյ «Ազատամարտ» թերթի խմբագրապետ և ծանօթ գրող Ռուբէն Զարդարեանի կողմէ գրուած: Ահա՛ այդ նամակը՝

Ռուբէն Սեւակին
1910, Նոյեմբեր 10/23, Կ. Պոլիս

Ազնիւ եղբայրակից

Շատ շնորհակալութեամբ ստացած եմ Ձեր «Կարմիր գիրքը», որ պատիւ ըրած էք ինձի նուէր դրկելու:

Անկեղծութիւնն ունիմ ըսելու, թէ Ձեզմէ քիչ բան կարդացած էի, և հատուկ տորոնքեր միայն: Գիտէ՞ք ի՞նչ մեծ հաճոյքով և հոգեկան բաւականութեամբ էր, որ աւարտեցի Ձեր «Կարմիր գրքքին» ընթերցումը: Եւ դուք, իբրեւ արժէքի տէր բանաստեղծ, յայտնութիւն մը եղաք ինձի: Ձեր տաղանդին վրայ կասկած չունիմ, և եթէ «Կարմիր գիրքը»-ին մէջ կան երկրորդական դիտողութիւններ, անոնք երբեք բան մը չեն նուազեցնեն անոր քերթողական խոր ու ճշմարիտ դրոշմէն:

Ուստի, թոյլ տուէք, որ սեղմեմ Ձեր ձեռքը և շնորհաւորեմ Ձեզ Ձեր գեղեցիկ հրատարակութեան առթիւ:

Յարգալիր բարեւներով,
Ձերդ՝ Ռ. Զադարեան

Յ. Գ. - Բարի եղէք իմացնելու, թէ կ'ստանա՞ք արդեօք «Ազատամարտ» շաբաթաթերթը, որուն մէջ Ձեր աշխատակցութեանը այնքան բաղձանք ունիմք ամէնքս:

Նոյն

[«Արեւմտահայ գրողների նամականի» - էջ 257 - Երեւան - 1972]

ՃԱԿԱՏԱԳՐԻ ՀԵԳՆԱՆՔ ԹԷ՞
ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ՊԱՏԻԺ

Հակառակ, որ Արշակ Զօպանեան, ծանօթացած էր Ռուբէն Սեւակին 1907-թ.ին Լոզանի մէջ, [որքան մեզի ծանօթ է] ան, իր Փարիզ լոյս տեսնող «Անահիտ» պարբերաթերթին մէջ, Ռուբէն Սեւակէն ոչ մէկ գործ հրատարակած էր: Աւելին՝ Ա. Զօպանեան Ռուբէն Սեւակին «Կարմիր գիրքը»-ին արժէքը չէր հասկցած:

Բայց, հակատագրի ի՛նչ հեզնանք և կամ աստուածային պատիժ է, որ Արշակ Զօպանեանին կը վիճակի 1919-թ.ին, իր «Վերածնունդ» հանդեսին մէջ, առաջին անգամ ըլլալով հրատարակել Ռուբէն Սեւակի ամէնէն ծանօթ բանաստեղծութիւններէն մէկը եղող «Հայաստան»ը:

Այս քերթուածին հրատարակութեան պատմութիւնը, Ռուբէն Սեւակի կեանքին նման զգայացունց է: Ահա, այս «Հայաստան» բանաստեղծութեան ողիսականը:

13 Դեկտեմբեր 1918-ին ժընեւէն, Աւետիք Իսահակեան Փարիզ, Արշակ Զօպանեանին նամակ մը կը գրէ...

«Սիրելի բարեկամ Արշակ Զօպանեան.

Այս նամակիս հետ ուղարկում եմ մի ռտանաւոր, որ 1913-թ. Լոզանում մեր եղերարախտ բանաստեղծ Ռուբէն Զիլինկիբեան-Սեւակն գրեց իմ ծոցատետրիս մէջ: Այս ծոցատետրս միայն վերջերս հնարաւոր եղաւ ստանալու [մօտս չէր՝ ուրիշ ձեռագիրներիս հետ]:

Ուստի և պարտք եմ համարում տպագրութեան յանձնելու, մի գուցէ չկորի այս գեղեցիկ բանաստեղծութիւնը: Որքան յիշում եմ ոչ մի տեղ չի տպուած դա»:

[Ա. Իսահակեան «Երկերի ժողովածու» վեցերորդ հատոր: Էջ 172]:

* * *

ՀԱՅԱՍՏԱՆ

Ո՞վ կու լայ այսպէս խշտեակիս շեմին,

- Քոյր, դարիպն է, բաց:

Կմա՞ թ մը կ'անցնի դուրսէն լալագին.

- Սովն է, դուռըդ բաց:

Տապա՞ ըն է ջախջախ դրանս կուրծքին:

- Ջարդն է, դուռըդ բաց:

1913

ՌՌԻՐԷՆ ՍԵՒԱԿ

«Նայիրի» նախորդ թիւին մէջ [6 Յունիս 2006-թ.] գրած էինք, որ «Կարմիր գիրքը»ին համար Արշակ Զօպանեանին կատարած քննադատութիւնները շատ ժխտական ազդեցութիւն գործած են

Ռուբէն Սեւակի վրայ»: Եւ այս պատճառաւ է կը կարծենք, թէ Ռուբէն Սեւակ իր այդ գործէն յետոյ, մինչեւ 1915, իր նահատակութիւնը, ուրիշ գիրք չէ հրատարակած: Հակառակ, որ Ռուբէն Սեւակի շատ բանաստեղծութիւններ, պատրաստ էին տպագրուելու:

Այստեղ պիտի ջանանք նշել, Ռուբէն Սեւակի «Կարմիր գիրք»էն յետոյ գրուած բանաստեղծութիւններէն քանի մը հատուածներ՝

ՍԷՐՈՎ, ՍԷՐՈՎ...

*Սերո՛վ, սերո՛վ խոցեցիր զիս,
Սիրտըս սերո՛վ խոցեցիր,
Սիրտըս ջանի՛լ, վարդի պէս բաց,
Դագաղի պէս գոցեցիր...:*

Այս «Սերո՛վ, սերո՛վ» բանաստեղծութիւնը, Ռուբէն Սեւակի ընկերը եղող Շահան Պերպերեանի կողմէ, երգի վերածուած է:

* * *

ՍԻՐՈՅ ԵՒ ՄԱՀՈՒԱՆ ԵՐԳԸ

*Իմ կեանքս թող կորած նաւուն պէս ըլլայ,
Շունչդ ուռեցնէ ձեր առագաստըս անա՛հ,
Մի՛ - մի՛ լսեր յոգնած հոգիս որ կու լայ,
Տա՛ր զիս սիրոյ կղզիներէն դէպի մա՛հ,
Իմ կեանքս թող կորած նաւուն պէս ըլլայ...:*

«Սիրոյ եւ մահուան երգը» Հայաստանի մէջ, երգահան Դաւիթ Հալանեանի կողմէ 1991-ին երաժշտութեան վերածուած և հայկական ռատիօ-ի երգչախումբի խմբավար Տիգրան Հեքեքեանի կողմէ «CD» ձայնագրակի վրայ արձանագրուած է:

* * *

ԻՆՉՈ՞Ւ

Ինչո՞ւ, ինչո՞ւ գիս սիրեցիր,
Փոքրիկ աղջիկ, քեզի մե՛ղք էր,
Փոքրիկ ծոցիդ թիթե՛ն պետք էր,
Դուն ծե՛ր արծիւ մը բանտեցիր...:

* * *

ԵՐԹԱ՛Ղ

Երթա՛լ, երթա՛լ, չը նանչնալ մա՛րդ ու Աստուա՛ծ,
Զո՛յգ երթալ՝ ձեռքըդ քո՛յր ձեռքի մէջ դրած
Անրջանքի՛ն ու սիրոյն պէս - արսորուա՛ծ...:

Ֆրանսահայ միլիառատեր Նափուլէոն Պուլուքեանի յու-
ղարկաւորութեան ատեն Լիոնի գերեզմանատան մէջ - [Պուլուքեան
Ֆարմատն մը ըլլալուն՝ հայկական եկեղեցի չէ տարուած], միայն
Ռուբէն Սեւակի «Երթալ» բանաստեղծութեան ֆրանսերէն
թարգմանութիւնը կարդացուած է:

* * *

ԹՐՈՒՊԱՏՈՒՐՆԵՐԸ

Այս ի՛նչ դարերու հասեր ենք, Աստուա՛ծ,
Փշրեցի՛ն ինչ որ կար վսեմ կերտուած,
Թէ դեռ սի՛րտ ունիք՝ թաղելու տարէք,
Ոսկիին նենգ ձայնն է ամէնուրեք:
Մի՛ միայն մե՛նք ենք որ դեռ անարգել
Սիրե՛լ կ'երագենք, ո՛վ կ'ուզէ սիրե՛լ
Թրուպատուրները:

* * *

ԱՅՍ ԴԱՆԱԿԸ

- Ի՞նչ կ'ընե երբ ա՛զգ մը մնայ նօթի,
Զեռքէն բան ու բրիչ կը նետե մէկդի,
Կ'երթայ հաղորդուիլ մատուռ մ'անխոռով,
Կը զինուի տեգով, կը զինուի սուրով,
Ու կ'երթայ ամէն միջոցներով վատ
Ազգի մը կռիւ մընէլ յուսահատ...:
Թե յաղթուեցաւ՝ աւա՛ղ է իրեն,
Իսկ եթէ յաղթեց՝ աշխարհ համօրէն
Գովեատի երգեր կ'երգէ ամէն օր,
Պատմութիւնն ոսկի է՛ջ կու տայ անոր...:

* * *

ՓՈՂՈՑ ԱԻԼՈՂԸ

Սակայն ո՛չ, ո՛չ, ո՛չ: Զիւնին ցուրտին մէջ
Աւլէ՛ մարդկութեան ցեխն ու կեղտն անվերջ,
Աւլէ՛ ու գիտցիր որ միշտ կ'աղտոտի...:
Մի՛ խորհիր, միտքը զարդ մ'է սնոտի...
Աւլէ՛, որբիկներդ հացիդ կը սպասեն:
Աւլէ՛, սուրբ է պարտքն, ինչ որ ալ ըսեն:
Աւլէ՛, որպէսզի իրիկուան երբ տան
Նիհար սակագին քու ըստրկութեան՝
Նըզովես այդ ձե՛ ոքը սըրտիդ խորէն...
Մարդերն անիծած կենդանիներ են...:

* * *

ԱՌՋԻ ՀԱՅԵՐԸ

Դրախտին մէջ իսլամ մի՛նարէին քով
Գերման ծխնելոյզը կ'ելլէր...
Հոս, հոն, Բիւզանդիա... տակ ցած
Դեռ քանի մը հայ գտայ պոռնկացած...
Արարատին վրայ՝ նոր ազգ մ'է օտար
Զհասկցաւ իմ մայրենի բարբառ

Հեզնեց՝ «Հայե՛րը...:
Ախուրեանի քով՝ քար էր աւերակ
Քաղաք մը, աշխարհ մը գտայ ներմակ,
Զայն մ'երգեց՝ «մի լար փառքերուն վրայ սին,
Նայէ տապանիս միւս երեսին
Ազգերը կնքեր են վրան՝ «մահ հայուն»
Բայց միւս երեսին վրայ «անմահութիւն»
Գրեր են հայերը...:

* * *

Ո՛Վ ԻՄ ՀԱՅՐԵՆԻՔՍ

«Մե՛նք ենք, դիւրահար ծնո՛ւնդ արիւնի,
«Հի՛ն, շքե՛ղ ցեղի գաւակներ յետին,
«Բոպիկ երախա՛յ, դողդոջ ծերունի՛,
«Մե՛նք ենք, ողջ գանկերն որ կ'իյնան գետին...
«Մե՛նք ենք, դիւահար ծնո՛ւնդ արիւնի...:

«Հո՛ւ, նզո՛վք, նզո՛վք: Մեր վերքին փրփրուն
«Շոգին խաւարէ՛ր ձեր աչքերը, ա՛հ,
«Մեր արիւնը ձեր գաւակա՛ց գլխուն.
«Թո՛յն շնչէիք դուք, ու ըմպէիք մահ՛ն...
«Հո՛ւ, նզո՛ք, նզո՛վք ձեր սերունդներուն...»:

* * *

ՎԵՐՋԻՆ ՀԱՅԵՐԸ

Մի՛ դպիր անոնց հոգւոյն փլուցո՛ւն
Անոնք կ'անցնին լո՛ւն գաղտնիքով լեցո՛ւն,
Անոնք գիտեն բի՛ւր պատմութիւններ մութ,
Անո՛նց որ կորան արեան մէջ տղմո՛ւտ,
Կախադաններու քաջե՛ր համօրէն...:
- Հազար մահով ծանր՝ կենդանի - մահն են
ապրող հայերը...:

Եարինա՛ն, հա՛յ, հօ՛յ... սակա՛յն ծերունի
Պանդուխտն յոգներ է. վա՛ղը պիտ' մեռնի՛

Որդին երկիր է դրկեր կռուելու.
Վաղն ա՛ն ալ պիտի խողխողուի, հլո՛ւ...
Ու, վա՛խ, մի՛ առ մի այսպե՛ս պիտ կորչին
Դիւցագուններու ցեղի մը վերջի՛ն,
վերջի՛ն հայերը...:

Ո՛չ, ո՛չ: Արշալոյսն իրենց պիտի գայ...:
Ու երբե՛ չի գայ աւօտն ապագայ՝
Պիտ՝ կռուին: Մինչ ե՞րբ...: Մինչեւ յաւիտեա՛ն:
Ու երբ դեռ երկրի վրայ ազատութեան
Համար մեռնին ա՛փ մը մարդեր չնչի՛ն,
Անոնք պիտ՝ ըլլան մարդկութեան վերջի՛ն,
վերջի՛ն հայերը...:

* * *

Երբ կը կարդանք Ռուբէն Սեւակի բանաստեղծութիւնները՝ չենք ուզեր հաւատալ, որ այս քերթուածները հարիւր տարի առաջ գրուած են: Անոնք այնքա՛ն աշխատեալն են, մարդկային ցաւով լի և այնքա՛ն հայկական ներկայ իրավիճակին մարմնացումներն են, որ Ալեքսանդր Թոփչեանի նման մենք ալ կը կրկնենք. **«Ռուբէն Սեւակ իսկական մարգարէ մըն էր»:**

* * *

Արշակ Զօպանեանի Ռուբէն Սեւակի «Կարմիր գիրքը»ին համար կատարած քննադատութիւնները մենք կը հաւատանք, որ բանաստեղծին հոգւոյն մէջ յեղաշրջման մը պատճառ եղած են:

1910-էն յետոյ Ռուբէն, իբր բժիշկ, աւելի արձակ գրութիւններու վրայ կեդրոնացաւ քան թէ բանաստեղծութիւններու: Թեեւ ան, 1910-թ.էն առաջ ալ, խոր վերլուծումներով յագեցած արձակ գրութիւններ հրատարակած էր:

Այստեղ մէջբերենք Ռ. Սեւակի Պոլսոյ «Օտեօն» թատրոնին մէջ, 22 Օգոստոս 1908-ին կատարած բացառիկ ելոյթը, որ 18 Փետրուար 2005-ին Նիւ Եորք, «Համազգային»ի սրահին մէջ, Ռուբէն Սեւակի մասին տրուած դասախօսութեան մ'ընթացքին, դոկտ. Հրանդ Մարգարեան, շատ խոր մեկնաբանութեամբ մը, գայն ներկայացուց հանրութեան:

Պոլսոյ «Օտեօն» քատրոնին մէջ, 22 Օգոստոս 1908-ին, Պոլսոյ հայութեան մասին Ռուբէնի ըսածները, մարգարեական իրականութիւններ են:

Ահաւասիկ այդ խօսքերը.- ... Թատրոնը, հայաշոնչ քատրոնը...: Այն քատրոնը զոր Հեքիմեաններ, Պէշիկփաշլեաններ, Թերզեաններ, Թղլեաններ, Շիրվանզատեներ կանգնեցին... ա՛յն քատրոնը զոր Վարդովեաններ, Գարապաշեաններ, Ֆասուլեանեաններ, Սիրանոյշներ, Մնակեաններ փառաւորեցին... ա՛յն քատրոնը ուր Թրեանցներ, Ռշտունիներ, Ադամեաններ անմահացան... քատրոնը՝ հայաշոնչ քատրոնը, մե՛ր քատրոնը...:

Ոհ, փառաւոր հայ անուններու ոսկեծոյլ համաստեղութիւնը...:

Ու բնա՛ւ զարմանալի չէ որ մեր մէջ, ուր այնքան ապերախտ ու այնքան թշուառ նկատուած է այս բեմի ասպարէզը,- մե՛ր մէջ՝ համեմատօրէն բոլոր միւս արուեստագիտական ասպարէզներուն - ամէնէ՛ն աւելի ուռնացող ու պտղաբերող ճիւղը քատրոնը եղած ըլլայ միշտ: Ասիկա ունի իր որոշ պատճառները:

Ամբողջ Եւրոպայի մէջ, աշխարհի եւ շքեղ կեդրոններէն մինչեւ ամենամութ ու խաւարին անկիւնները՝ ես չեմ տեսեր ու չեմ ալ կրնար հաւատալ որ գտնուի տակաւին մէկ ուրիշ ազգ՝ որ ամէ՛ն օր ու ամէ՛ն վայրկեան ապրէր դերասանի ճշմարտապէս կեդծ ու գերեզմանօրէն ծիծաղելի այն կեանքը որ դարերէ ի վեր մեր կեանքը եղաւ, մեր, ստրկացած թրքահայերուս կեանքը...: Տառապի՛լ, ու ստիպուած ըլլալ ամենաերջանիկ կերպարանք մը ցոյց տալու... անպատուիլ, բռնաբարուիլ, գետնաքարշ տապալիլ, ու ստիպուած ըլլալ գոհութեան շերմագին աղաղակներ բարձրացնելու... Ժպտի՛լ այնպիսի մէկ վայրկեանիդ, ուր արիւն-արցունք պիտի պոռթկար աչերէդ... մաղթանքի ճիչեր հանել կոկորդէդ այն բռնակալ ձեռքին համար որ զքեզ կը խեղդէ... մեռնի՛լ - հոգեպէս մեռնիլ - ու ապրիլ ձեւացնել... ահա դերասանական ահռելիօրէն կեդծ կեանքը, որ մե՛րը եղաւ այնքա՛ն երկար տարիներ...: Այդ ինչպէ՞ս կ'ուզէիք որ այսպիսի պայմաններու մէջ, ժառանգօրէն ու բնածինօրէն մեր ամենաանկեդծ յատկութիւնը մեր կեդծելը չըլլար, ու մեր բնական յարմարութիւնը՝ դերասանութիւնը...

Ազգի մը քատրոնին յաջողութեան համար կա՛յ տակաւին մէ՛կ երկրորդ պայման. ա՛յն է՝ քատրերգութեան նիւթը, պատմուածքին առանցքը, խաղին կմախքը: Արդ մոռցէք անգամ մը ներկան.

վայրկեան մը դէպի ետ երթանք, մեր ժողովրդեան կեանքին պատմութեան մէջ, ե՛տ, շա՛տ ետ, մինչեւ Յիսուսի ժամանակները, ու անկէց ալ ետ՝ մինչեւ մեր հեթանոսական շրջանները: Անցեալի մշուշին մէջ թաղուած այդ ոսկեկուռ բարձունքներէն դիտենք անգամ մը լեռն ի վար սողոսկող այն ահաւոր ու արիւնլուայ նամբան որ մեր ազգիսն է: Ի՛նչ ահաւոր դասեր, ի՛նչ հսկայ ատաղձներ թատերագրի մը համար՝ այդ պատմութեան զանազան էջերուն մէջ: Մեր ամենուս հայր՝ Հայկէն մինչեւ մեր օրերը, դիցաբանական հիանալի աւանդավէպերու քով ի՛նչ ահաւոր իրականութիւններ...: Ու Արշակը, ու Վասակը, ու Քաջ Վարդանը, ու Մեծն Արտաշէսը...: Ու տակաւին նո՛ր, **դեռ շատ նոր, մեր ամենուս** սրտին մէջ արիւնոդ յիշատակները այն ահռելի կոտորածներուն որոնք մահը ու սարսափը ու սովը ցանցցին մինչեւ Ակնայ սարսափահար հովիտները, Վանայ արիւնաներկ լիճէն մինչեւ Ոսկեղջիւրի հայակուլ անդունդները...:

Ազգային, **զուտ ազգային** թատրոնի մը համար ի՛նչ ատաղձներ, ի՛նչ հերոսներ, ի՛նչ նիւթեր...: Խաւարչտին բանտերու մէջ ժողովուրդէն անգիտուած, մարդկութենէ վատօրէն լքուած «ազատութիւն» հեծկլտալով քանի-քանի մեռնողներ, գորս հայ բեմը պիտի անմահացներ՝ անձնուիրութեան դասը տալու համար ժողովուրդեան...: Ու ամէն տեղ, յաւիտենական սարսափի ու սպառնալիքի տակ՝ դիցազնօրէն ու լուօրէն գործող քանի վեհանձն կեանքեր՝ գոր հայ թատրերգութիւնը բեմ պիտի հաներ՝ մեզի հերոսաբար մեռնիլ սորվեցնելու համար...: Ու դեռ ինչե՛ր, ու դեռ ինչե՛ր...:

Ո՛հ... ո՛չ... դժբախտաբար նիւթերը չեն որ կը պակսին հիմնելու համար ջղուտ ազգային թատրոն մը: **Եւ անա թէ ինչո՞ւ ես այս գիշեր համեստօրէն պիտի ուզեի յանգիլ սա գաղափարին, թէ օտար թատերախաղերէ աւելի - զոր մեր ժողովուրդը չի կրնար ըմբռնել - պէտք է հայութիւնը իր ծոցէն ծնի** հայ թատրոն մը, **հա՛յ, ոչ միայն լեզուով, այլ՝ ոգիով ալ, նպատակով ալ...:**

Հայ թատրոն մը՝ հայ իրականութեան համար:

Կեցցե՛՛ հայութիւնը, կեցցե՛՛ թատրոնը:

Բերա, 22 Օգոստոս 1908

Ռուբէն Սեւակ

1913-թ. են սկսեալ Պոլսոյ «Ազատամարտ» թերթին մէջ Ռուբէն Սեւակի արձակ գրութիւնները հրատարակուիլ սկսան «Բժիշկին գիրքէն փրցուած էջեր» խորագրով, որ բացառիկ հետաքրքրութիւն և ոգեւորութիւն ստեղծեցին հայութեան մէջ:

«Ազատամարտ» թերթի խմբագրապետ և ծանօթ գրագետ Ռուբէն Զարդարեան Պոլսէն Լոզան՝ Ռուբէն Սեւակին ուղղուած նամակին մէջ, տեսէք, թէ ինչպէս իր հիացումը կը յայտնէ՝ «Բժիշկին գիրքէն փրցուած էջեր»ու գրութիւններուն համար՝

«Շնորհաւորութիւններս այն զմայլելի ձեւին համար, որով կը գրէք ձեր Բժիշկի էջերը: Զէք կարող երեւակայել թէ որպիսի խանդավառ ընդունելութիւն գտած են անոնք ընթերցող հասարակութեան մէջ, թէ՛ հոս և թէ՛ արտասահման: Ասիկա նախ կ'ապացուցանէ այն անտարակուսելի գրական ճարտարութիւնը, որով կը գրէք ձեր յօդուածները՝ քերթուածի մը չափ թրթռուն. երկրորդ՝ մանկավարժական այն մեթոդը, որով հիւանդութեանց սարսափն ու գարշանքը կը ներշնչէք, առանց խրատի ու քարոզութեան հին պանալ մեթոտին, և երրորդ՝ ա՛յն որ «ափսո՛ս, ա՛յնքան տառապանք կայ մեր հասարակութեան ծոցն ալ՝ ու ա՛յնքան հիւանդ, ա՛յնքան վիրաւոր»:

21 Փետրուար 1911 Պոլիս - Ռուբէն Զարդարեան

Ռուբէն Սեւակի «Բժիշկին գիրքէն փրցուած էջեր» գրութիւններու մասին, ուրիշ գնահատական «բաց» նամակ մը, որ գրուած է 1914-թ.ին, Պոլսոյ ծանօթ երգիծաբաններէն Յ. Ալփիարին կողմէ:

Այս նամակը աւելի ուշ հրատարակուած է 1952-ին, «Աստղաբերդ»ին մէջ:

Յ. Ալփիարին երգիծական ոճով գրուած այս նամակը պատմական մեծ արժէք ունի:

Ահա՛ Յ. Ալփիար-ի Ռուբէն Սեւակին ուղղած շատ հետաքրքրական նամակէն հատուածներ, պահելով անոր լեզուական հարազատութիւնը:

Ծեփ-Գուլե, Կ. Պոլիս.

Ազգ. Հիւանդանոց. 2-15 Մարտ 1914

Սիրելի պարոն.

... Քանի մը Կիրակի, իրարու վրայ, Լօզանէն ձեր գրածները կը կարդամ կոր, անպատում հրեռանքով մը:

Շատ քիչ անգամ կը պատահի որ հայ լեզուաւ գրուած բան մը այնքան խոր տպաւորութիւն գործէ վրաս և գրաւէ հաւանութիւնս: Տիրացութիւններ կը խորշիմ և կը սուկամ *liux communs*-ներէ: Եւ ընդհանրապէս ատենցով խնդուած է մեր ողորմելի գրականութիւնը:

Երբ կը տեսնեմ մէկը որ անոր մէջ նորութիւն մը կը մտցնէ և քիչ մը աւելն կը դնէ այդ աւշային դպրութեան մէջ, ես այդ մարդուն համար հոգի կու տամ և իրր բարեկամ կ'ընդունիմ զինքը, եթէ նոյնիսկ անոր երեսը տեսած չըլլամ:

Ըմբռնած հաճոյքս մեծ է երբ ձեզ կը կարդամ. որովհետեւ դուք մեր բոլորին պէս չէք մտածեր և եղանակ մը ունիք գրելու, որ պարզապէս *électique* հով մը կը կրէ վրան: Ձեզ համար չեն *les chemins battus* և կ'ուզէք բուն՝ եւրոպական *tourture* մը տալ մեր շինական հայերէնին: Եւ կը յաջողիք կոր փառաւորապէս:

Ատ ինչ *superbe* ոն է, ի՞նչ յղկուն լեզու և ի՞նչ նոր և գեղեցիկ գաղափարներ:

Ներեցէք, որ թօթուեմ ձեր ձեռքը և անվերապահօրէն յայտնեմ Ձեզի սքանչացումս:

Բժշկութիւնը այդքան յաջող և *attrayant* կերպով *vulgarisé* չէր եղած երբեք:

Գրական նոր նիւղ մը կը ստեղծէք կոր, որուն վրայ հիացողներէն մէկը ներեցէք, որ ես ըլլամ:

Ո՛վ ըլլալնիդ չեմ գիտեր, բայց կայնեցէք ձեզի ըսեմ, թէ ի՞նչ էք: Ջգացումներու փափկազգած նկարիչ մը: Լեզուի *ciseleur* մը և բառին ամբողջ ուժովը հանելի գրագետ մը:

Հաւատացէք, խնդրեմ, զգացումներուս անկեղծութեանը և անսահման համակրանքներուս արտայայտութեան:

Յ. ԱԼՓԻԱՐ

ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՍՏԱՏՈՒՄՆԵՐ...

ԱՐՇԱԿ ԶՕՊԱՆԵԱՆԻ ԵՒ ԹԱԿՈՐ ՕՇԱԿԱՆԻ ԽՕՍԳԵՐԸ ԿՐԿՆՈՂ ՀԱՅ ՄՏԱՒՈՐԱԿԱՆ ԹՈՒԹԱԿՆԵՐՈՒՆ ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ ՄԱՍԻՆ ԹԱՅՏՆԱԾ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԸ, ՄԻՆԶԵՒ 1986-Թ.ՆԵՐԸ, ԸՆԴՀԱՆՐԱՊԷՍ ՀԵՏԵՒԵԱԼ ԽՕՍԳԵՐՈՎ ԿՊԱՒԱՐՏԷՒՆ.

«ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿ ԾԱՏ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՆԱՀԱՏԱԿՈՒԵԾԱՒ: ԱՅԴ ՊԱՏՃԱՌԱՒ ԻՐ ԳՐԱԿԱՆ ՏԱՂԱՆԴԸ ՋԱՐԳԱՑՆԵԼՈՒ ԱՏԵՆ ԶՈՒՆԵԾԱՒ»:

ՆՈՅՆԻՍԿ ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ ՄԱՍԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԱԾ ԱՄԷՆԷՆ ԿԱՏԱՐԵԱԼ ՀԱՒԱՔԱԾՈՆԵՐԷՆ ՄԷԿԸ ԵՂՈՂ, 1986-Թ.ԻՆ ԱՆԹԻԼԻԱՍ ԼՈՅՍ ՏԵՍԱԾ «ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿ - ԵՐԿԵՐ» ՀԱՏՈՐԻՆ ՄԷՋ, ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆԻ ԲԱԺԻՆԸ ՀԵՏԵՒԵԱԼ ԽՕՍԳԵՐՈՎ ԿԸ ՎԵՐՋԱՆԱԾ

«ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿ ՆԱՀԱՏԱԿ ԳՐԱԳԷՏՆԵՐՈՒ ԿՐՏՍԵՐԱԳՈՅՆՆ ԷՐ: ՎԱՂԱԺԱՄ ՄԱՀԸ ԽԼԵՑ ԻՐՄԷ ԻՐ ՏԱՂԱՆԴԸ ԽՈՐԱՑՆԵԼՈՒ, ՀԱՍՈՒՆԱՑՆԵԼՈՒ ՊԱՏԵՀՈՒԹԻՒՆԸ, ՈՒ ԱԶԳԵՐԸ ՓԱԿԵՑ ՎԵՐՋԻՆ ԽՕՍԳԸ ԶԸՍԱԾ»:

ՄԵՆՔ ԿՐ ԿԱՐԾԵՆՔ, ՈՐ ՌՈՒՔԵՆ ՍԵՒԱԿԻ մասին յայտնուած գաղափարները, և յատկապէս այն վարկածը թէ՛ «Ան իր գրական տաղանդը զարգացնելու ատեն չունեցաւ» - ՌՈՒՔԵՆ ՍԵՒԱԿԻ գրական վաստակի մասին կատարուած ամէնէն ծանրակշիռ անիրաւութիւնն է:

Ասիկա գլխաւոր ապացոյցն է, որ այս կարծիքին տէրերը ՌՈՒՔԵՆ ՍԵՒԱԿԻ գրութիւններուն արժէքը լաւ չեն հասկցած:

Եւ մտածել՝ որ այդ ժամանակ, գրեթէ բոլոր նահատակ մտաւորականներուն տարիքը 35-ի շուրջ էր.- Դանիէլ Վարուժան՝ 31 տարեկան, Սիամանթօս՝ 37 տարեկան, Գեղամ Բարսեղեան՝ 32 տարեկան, Տիգրան Զեօկիւրեան՝ 31 տարեկան:

Եւ զարմանալին այն է, որ ո՛չ Դանիէլ Վարուժանի, ո՛չ Սիամանթօսի և ո՛չ ալ միւս երիտասարդ նահատակ մտաւորականներուն իրենց տաղանդը «խորացնելու» մասին չի խօսուիր, և միայն կը

խօսուի Ռուբէն Սեւակի երիտասարդ տարիքի մէջ նահատակուելուն մասին: Եւ մենք այս անիրաւութիւնը կը վերագրենք՝

1.- Հայ յետ-եղեռնեան մտաւորականներուն մեծամասնութեան տհասութեան, որոնք կաղապարուած գաղափարներ կը կրկնեն տեւապէս,

2.- Նաեւ՝ այս կարգի մտաւորականութեան մէջ հայրենասիրական և մարդասիրական անբիծ զգացումներու պակասին:

Բնական է, որ այս ձեւով մը այլասերած մտաւորականները պիտի չկրնային հասկնալ Ռուբէն Սեւակի գրութիւններուն արժէքը, որոնցմէ ուժգին կ'արտացոլան հայկական ոգին և մարդասիրական զգացումները:

* * *

2004-ին էր, որ Վահագն Տատրեանի միջոցաւ, հանոյքը ունեցանք ծանօթանալու բացառիկներու շարքին դասուած հայու մը, մտաւորականի մը՝ վաւերական հայրենասէր դոկտ. Հրանդ Մարգարեանի:

Եւ մեզի համար մեծ նորութիւն կազմեց տեղեկանալը, որ Հրանդ Մարգարեան, դեռ 1970-թ.ներուն, Ռուբէն Սեւակի մասին գրութիւններ հրատարակած է:

Մենք՝ Նիս, դոկտ. Մարգարեան՝ Նիւ Եորք: Հակառակ այս հեռաւորութեան, մէկ քանի ամսուայ թղթակցութենէ և հեռաձայնային խօսակցութիւններէ յետոյ, արդէն շատ մօտ էինք իրարու:

... Եւ Մարտ 2005-ին՝ «Վիտէօ-քասէթ» - մը ստացանք: Եւ այս ձայներիզին վրայ մենք դիտելու հանոյքը ունեցանք դոկտ. Հրանդ Մարգարեանի 18 Փետրուար 2005-թ.ին, Նիւ Եորքի «Համագգային»-ի սրահին մէջ Ռուբէն Սեւակի մասին կատարած բանախօսութիւնը, որու մէջ ան, իր գնահատումներով կը նոյնանար, գրեթէ նոյն օրերուն, Ալեքսանդր Թոփչեանի 15 Փետրուար 2005-ին, Հայաստանի «Հ-1»-ով սփռուած և Ռուբէն Սեւակին վերաբերող գաղափարներուն հետ:

Այստեղ պիտի ջանանք մէջբերել այդ բանախօսութենէն կարգ մը հատուածներ.

«Ո՞վ է Ռուբէն Սեւակ.- Բազմակողմանի անհատականութիւն մըն է՝ բժիշկ, գրող, բանաստեղծ, արձակագիր, նկարիչ, դաստիարակ:

Եւ մանաւանդ՝ ազգային ոգիով լի շիտակ և խիզախ մտաւորական մը:

Հասարակ մարդու մէջ այսքան առանձնայատկութիւններուն մէկ անձի մէջ միանալը՝ շատ դժուար է:

Բայց Ռուբէն Սեւակի մէջ այս յատկանիշները շողկապուած են իրարու:

Ի՞նչ է արարքը Ռուբէն Սեւակի անհատականութեան:

Առաջին ներքին գերզգայուն հոգի մըն է, արարքներու խորքը տեսնելու բացառիկ կարողութեամբ, և մանաւանդ՝ հարցերը արդար և ճիշդ դատելու ընդունակութեամբ:

Եւ ի՞նչ է Ռուբէն Սեւակի մտահոգութեան առարկան:

Հայ ազգն է: Հայ կեանքն է, հայրենիքը, հայուն իրաւունքները, և ազգային արժանապատուութիւնը»:

Լարուած և մագնիսացած կը դիտենք դոկտ. Հրանդ Մարգարեանը: Եւ ան, Ռուբէն Սեւակի բանաստեղծութիւններէն հատուածներ ներկայացուց.

«Թրուպատուրները», «Ջանգակներ, զանգակներ», «Փողոց աւլողը», «Դրամին աղօթքը»: Եւ կարդաց Ռուբէն Սեւակի 1908-թ.ին Պոլսոյ «Օտեօն» թատրոնին մէջ կատարած խօսքերէն.

«Ամբողջ Եւրոպայի մէջ, աշխարհի էն շքեղ կեդրոններէն մինչեւ ամենամութ ու խաւարին անկիւնները՝ ես չեմ տեսեր ու չեմ ալ կրնար հաւատալ որ գտնուի տակաւին մէկ ուրիշ ազգ՝ որ ամէն օր ու ամէն վայրկեան ապրէր դերասանի նշմարտապէս կեղծ ու գերեզմանօրէն ծիծաղելի այն կեանքը որ, դարերէ ի վեր, մեր կեանքը եղաւ, մեր ստրկացած թրքահայերու կեանքը»:

Միայն բանաստեղծ մը, թատերագիր մը, դերասան մը այսքան զգացումով կրնար արտասանել Ռուբէն Սեւակի բանաստեղծութիւնները և խօսքերը:

Եւ իրապէս ալ, քանի մը ամիս յետոյ, կրկին «վիտեօ-քասէթ» մը ստացանք:

Այս անգամ ստացուածը, թատերագիր Հրանդ Մարգարեանին հեղինակութեամբ և բեմադրութեամբ, 17 Ապրիլ 2005-ին, Նիւ Եորքի «Համազգային»ի սրահին մէջ ներկայացուած «Երբ արեւը կը լոռ» թատերգութեան տեսաներիզն էր, Ռուբէն Սեւակի ողբերգահերոսական կեանքին, անոր իրական պատմութիւնը պատկերացնող:

Յունուար 2006-ի վերջին օրերուն էր, երբ Նիւ Եորք-ի «Հայկական ռատիօ»ի հիմնադիր տնօրէն՝ Վարդան Ապտօ-էն ստացանք Քալիֆօրնիա լոյս տեսնող «Նոր կեանք» թերթի մէկ քիւին պատնէնը, որով կը տեղեկացուէր, թէ UCLA-ի մէջ 3-12-2005-ին, Եօթը նահատակ գրողներու համար գրական գիտաժողով մը կազմակերպուած է:

Եւ այս գիտաժողովին դուկտ. Անահիտ Քեշիշեան-Արամունի, ներկայացուցած է Ռուբէն Սեւակ մարդը, բժիշկն ու բանաստեղծը, նահատակին «Ջարդի խենթը» ստեղծագործութեան ընդմէջէն:

Եւ դիմեցինք Քալիֆօրնիա բնակող մեր բարեկամ Արմէն Արոնեանին խնդրելով, որ մեզի դրկէ այս գիտաժողովին տեսաերիզը, գոր ստացանք միջոց մը ետք:

Այս տեսաերիզին մէջ, ուրիշ բանախօսներու շարքին, Անահիտ Քեշիշեան-Արամունի կը խօսէր Ռուբէն Սեւակի մասին, և անոր «Ջարդի խենթը» կը ներկայացներ: Շատ հանելի էր զինք ունկնդրելը:

Շատ հանգամանօրէն և անգիր կը խօսէր Ռուբէն Սեւակի և «Ջարդի խենթ»ի մասին, ըլլալով Հայաստան ուսանած գրականագէտ մը:

Եւ ոչ մէկ առթիւ և ակնարկով չկրկնեց, որ Ռուբէն Սեւակ, երիտասարդ տարիքին նահատակուելուն պատճառաւ, իր տաղանդը չէ կրցած կատարելագործել:

Ընդհակառակը՝ կրցաւ, մեծ յաջողութեամբ, հերոս նահատակին իսկական արժէքը ցոյց տալ:

Եւ մանաւանդ՝ եղբրաբախտ գրողին «Բժիշկին գիրքէն փրցուած էջեր»ու մասին իր ըսածները շատ յատկանշական էին.- «Այստեղ կ'ուզեմ, իմ համեստ կարծիքս յայտնել, Ռուբէն Սեւակի «Բժիշկի գիրքէն փրցուած էջեր» գրութիւններու մասին:

Անձնապէս, համաշխարհային գրականութեան մէջ, չեմ կարդացած ուրիշ գրող մը, որ Ռուբէն Սեւակի «Բժիշկի գիրքէն փրցուած էջեր»ու նման, հիւանդներու և հիւանդութիւններու մասին այսքան իրատես և, նոյն տեսն, այնքան զգայուն գրութիւններ գրած ըլլայ»:

* * *

20 Յունիս 2006-ին էր. Հայաստանի հեռատեսիլեն [«Հ-1»] բախտը ունեցանք դիտելու շատ հետաքրքրական հաղորդում մը:

Ֆրանսական ասացուածքով՝ ժողովուրդի մասնակցութեամբ «Debat» մըն էր տեղի ունեցողը, բանավէն մը:

Նիւթն էր՝ «Սեռային խնդիրներու մասին տղոց տեղեկութիւն պէ՞տք է տալ, և ինչպէ՞ս...»:

Ակադեմիկոսներ, բժիշկներ, մանկավարժներ, ուսուցիչներ, մայր ու հայրեր, պարման-պարմանուհիներ գարմանագան կարծիք-տեսակետներ յայտնեցին:

Ի գուր սպասեցինք, որ այս մեծապատիւ ակադեմիկոսներէն, բժիշկ ու մանկավարժ և ուսուցիչներէն մէկը, Ռուբէն Սեւակի այս մասին հարիւր տարիներ առաջ գրած «Վեցերորդ զգայարանք» անունը կրող՝ և «Բժիշկին գիրքէն փրցուած էջեր»ու շարքին տեղ գտած հրաշալի գրութիւնը յիշէ և անկէ տող մը մէջբերէ: Անոնցմէ ոչ մէկը անդրադարձաւ բժշկական ճարտար ախտաճանաչումներ բովանդակող և իրենց տեսակին մէջ անգերազանցելի այդ բժշկական ու գիտա-առողջապահական տեսութիւններուն մասին:

Մինչդեռ Սփիւռքի մէջ, հայ ուսուցիչները լաւատեղեակ էին Ռուբէն Սեւակի «Վեցերորդ զգայարանք» գրութեան:

1989-ի Դեկտեմբերին, Նիւ Եորքի Սուրբ Վարդան Մայր Եկեղեցիի հանդիսասարահին մէջ, Հիւսիս Ամերիկայի Առաջնորդ Գերշ. Տ. Թորգոմ Արք. Մանուկեանի [այժմ՝ Երուսաղէմի Պատրիարք] ներկայութեամբ, Սրբոց Նահատակաց Վարժարանի տնօրէնուհի տիկին Զարմինէ Պօղոսեան կարդացեր էր Ռուբէն Սեւակի «Վեցերորդ զգայարանք» գրութիւնը, գոր կը մէջբերենք այստեղ իր ներկայացուցած կարեւորութեան և այժմէականութեան համար, գայն վերցնելով «Բժիշկին գիրքէն փրցուած էջեր»ու շարքէն:

ՎԵՑԵՐՈՐԴ ԶԳԱՅԱՐԱՆՔ

Հանդիպած առաջին աշակերտին հարցուր, թէ որո՞նք են մարդկային զգայարանքները: Առանց տարիքի խտրութեան նո՛յն պատասխանը պիտի ընդունիս:

- Տեսանելիք, հոտոտելիք, ճաշակելիք, լսելիք, շօշափելիք...:

Եւ սակայն ամէն մարդ գիտէ, թէ ուրիշ զգայարանք մ'ալ կայ,

վեցերորդը. այն, որուն մասին չի խօսուիր և որ աշխարհ կը կենսաւորէ:

Դպրոցները կը լռեն. իր անունը անպատշաճ է: Ազատօրէն կարենալ խօսելու համար՝ իր պաշտօնին յարմար անուն մը տանք, ու համարձակօրէն կոչենք զայն սիրելիք:

Բոլոր ճաշակելիքներէն ու հոտոտելիքներէն աւելի կարելոր է ան: Իրմէ՛ կախում ունի որ երջանիկ կամ թշուառ, առողջ կամ տխեղժ մարդկութիւն մը ծնի:

Կեանքի բոլոր հարցերուն մէջ ամէնէն առաջինն է սեռական հարցը: Բնագէտներն ու ընկերաբանները կը համաձայնին կրկնելու, թէ է՛ն դժուար խնդիրն է ան:

Բայց ի՛նչ կ'ընենք մենք, ընտանիքի հայրերս:

Կը թողունք որ տղան ինքնիրենը լուծէ այդ կննդոտ հանգոյցը: Ու մեր կողմէ կը բաւականանանք միայն իր մէջ ներմուծելով զգուանքի ու ամօթխածութեան գաղափարը: Սեռային տգիտութիւնը իբրեւ անհրաժեշտութիւն և իբրեւ սրբութիւն կը նկատենք:

Սակայն օր մը պիտի գայ - անխուսափելի՛ օրը - երբ մեր չըսածը փողոցին տղաքները պիտի ըսեն, ու որքա՛ն յոռի կերպով...:

Վա՛յ այն ատեն այդ տղուն:

Ծնողքին դաւադիր լուութիւնը, ընկերներուն ոճրապարտ մեղասկցութիւնը, արգիլուած բան մը ընելու գիտակցութիւնը իրար միանալով՝ երեկուան հրեշտակը այսօրուան իժիմ պիտի վերածեն:

Չեմ համարձակիր նկարագրելու, թէ այնպիսի տարիքի մը մէջ երբ պատանիին ջղային դրութիւնը դեռ հագիւ կազմակերպուելու վրայ եղող նուրբ-ամենանո՛ւրբ - դրութիւն մըն է, ի՛նչ ահաւոր աւերներ կը գործեն այդ անվերջ ու անանուն ցնցումները:

Սակայն վտանգը միայն մարմնական չէ՝ այլ հոգեկան: Ո՛չ թէ միայն իրենց ֆիզիքական առողջութիւնը կը խաթարեն անոնք, այլ նաեւ իրենց բարոյական առողջութիւնը, իրենց նկարագիրը, իրենց զուարթութիւնը, իրենց սրբութիւնը:

Այսպէս, երիտասարդ մը որ դպրոցէն կ'ելլէ, վարդ մըն է, որ իր բոյրը կորսնցուցած է, և որուն բոլոր թերթերը փրթած են: Եթէ դեռ միակ թերթ մը ունի, ան ալ առաջին ցնծուհին պիտի փրցնէ, այնպէս որ փշալից կոթ մը միայն պիտի մնայ իր ապագայ կնոջ ձեռքը...:

Որովհետեւ, ինչո՞ւ չէ - այդ տգէտ պատանին, որ ո՛չ մէկ առողջապահիկ կանխագուշտութիւնով չգիներցինք, վաղը, սիրելի խաբկանքով, համբոյրի մը փոխարէն պիտի ստանայ ախտերուն է՛ն

սարսափելին, և դարմանուելու խաբկանքով՝ կրկնօրէն պիտի գոհուի այն տիտղոսաւոր շառլաթաններուն որ բժշկութիւնը պոռնկացուցին...:

Ահա թէ ինչպէս՝ ամօթի և մեղքի պատրուակով՝ թոյնի աղբիւր մը կը դարձնենք այն զգայարանքը, որ ամէնէն իրական երջանկութեան գործիքն է՝ բնութեան կողմէ մեզի նուիրուած:

Զգուշութի՛ւն: Զստորնացնենք, չխաթարենք, չբթացնենք զայն, սեռական զգայարանքը:

Կենդանական աշխարհին մէջ քանի՛ քանիներ կան, որ մի՛այն այդ զգայարանքով ու մի՛այն այդ զգայարանքին համար կ'ապրին:

Ո՛վ չի ճանչնար էֆեմէր-թիթեռնիկը, այն շնորհալի թիթեռնիկը որ ամառ գիշերներ կու գայ ձեր լապտերին շուրջ բացխփելու իր թթբէլ թւերը: Ան կ'ապրի ամէնէն կարճատեւ ու ամէնէն գեղեցիկ կեանքով որ կարելի ըլլայ երեւակայել: Ճաշակելիք չունի, չի կրնար ուտել, քանի մը ժամէն պիտի մեռնի. բայց պիտի մեռնի ամէնէն բնական, ամէնէն իտեալ մահով, առանց ծերանալու, առանց հիւանդանալու, առանց ցաւելու...: Երջանի՛կ թիթեռնիկ, սնունդի պէտք չունի, որովհետեւ ստամոքս չունի, կեանքի հոգ չունի, որովհետեւ իր օրերը համրուած են: Իր միակ զբաղումը սերն է. ան պիտի բարձրանայ եթերին մէջ, իրեն պէս վաղամեռիկ թիթեռնիկ մ'ալ պիտի գտնայ: Ու պիտի սիրէ, ու պիտի մեռնի իրեն նուիրուելով...:

Ան պիտի իրականացնէ բանաստեղծին երազը. **«Մնիլ, սիրելի, մեռնիլ...»:**

Իրեն համար չէ Շամֆօտին սերը, այն սերը որ **«Փրկու մաշկերու հալումն է»** և որ այլասերած մարդկութիւն մը միայն կրնար հնարել:

Հազար դարերու քաղաքակրթութիւնով մը բնութենէն հեռացած մարդկային սրտին մէջ անգամ՝ տեսէք՝ թէ ինչպիսի նոյն ծաղիկներով կը պննուի ան՝-

«Էն թշուառ ուղեղին մէջ թողէք որ սերը քսանչորս ժամ աշխատի, ու ահա թէ ինչ պիտի գտնէք հոն,- կ'ըսէ Սթանտալ,- ձմեռնային տերեւաթափ ճիւղ մը կը նետեն Սալցպուրկի աղահանքի մը մէջ, եւ երբ քանի մը ամիս յետոյ զայն դուրս կը քաշեն, այնպիսի պսպղուն բիւրեղներով ծածկուած է, աղամանդներու այնպիսի անհունութիւն մը պննած է ամենափոքր ոստերն անգամ, որ ան-

կարելի է նանչնալ նախկին նիւղը...»:

«Երեւակայութի՛ւն» պիտի ըսէք: Ազատ թողէք երկու սիրահարները որ բնութեան ձայնին հետեւին, ու պիտի տեսնէք թէ ի՞նչ գեղեցիկ իրականութիւն է այդ երեւակայութիւն կարծուածը:

Հոգւոյն և մարմնին այնքան սեղմ՝ ու փոխադարձ ազդեցութիւնը մարդկային ուրիշ ոչ մէկ գործունեութեան ատեն կարելի է տեսնել:

Միւսին մէջ այնպէս մը կը փոթորկի հոգին՝ որ ոսկորներուն ամենէն անշարժ բջիջներն անգամ վայրկեան մը իրենց ապրիլը կը զգան:

Արուն ու եզը, սերն ու սեռը, մարմինն ու հոգին իրար խառնուելով՝ միանգամայն Տիեզերքին ու Աստուծոյն կը խառնուին:

Մարդկային ո՛չ մէկ զգայարանք, կենդանական ո՛չ մէկ գործողութիւն, բնագիտական ո՛չ մէկ երեւոյթ այնքան խորհրդաւոր է:

Այդ գերագոյն վայրկեանին, է՛ն սեւ մարդը արշալոյսներ հրդեհելու ընդունակ հրաշէկ հոգի մը կ'ըլլայ: Է՛ն ստոր մարդը կը հաւաքէ ինչ որ կայ իր մէջ լաւագոյն՝ կուսական կաղապարի մը մէջ նետելու համար զանոնք:

- Վայրկեանական ցնցո՛ւմ մը...,- կ'ըսէ Մարք Օրել:

Բայց այդ մէկ ցնցումը անհունները կը դողացնէ ու յաւիտեանները կը բեղմնաւորէ...:

Այսպէս է սէրը. մաքուր, առողջ, բնական սէրը:

Իմաստութի՛ւն թէ յիմարութիւն. չեմ գիտեր: Կը զգամ միայն, որ մարդկային ամենաբարձր արտայայտութիւնն է ան: Անո՛վ է որ Աստուած մեր մէջ կը յայտնւի. Աստուած սէր է:

Պատրաստենք մեր զաւակները այդ մեծ օրուան համար: Ու սորվեցնենք իրենց Վերածնունդի առաջին օրէնքը:

Առողջ սէր, առողջ սեռ:

Բանկալթի, 1914

ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿ

Ո՞վ է՛իր ԴՈՒՆ ՍՓԻ՛ՒՌ...

Ո՞րԿէ՛ ԵԿԱՄ է՛իր ԴՈՒՆ ՍՓԻ՛ՒՌ...

ԻՆՉ ՇՈՒՏ ՄՈՌՑԱՐ ՔՈՒ ԱՐՄԱՏՆԵՐԴ...

ԻՆՉ ՇՈՒՏ ՄՈՌՑԱՐ ՔՈՒ ԱԶԳԴ ՍՊԱՆՆՈՂ ՆԵՐԸ...

**ԻՆՉ ՇՈՒՏ ՄՈՌՑԱՐ ՔՈՒ ԳՈՂՑՈՒԱՄ ՀԱՅՐԵՆԻՔԴ ԵՒ ԻՆՉ
ՇՈՒՏ ՄՈՌՑԱՐ ՔՈՒ ՀԱՅՐԵՆԻՔԴ ԳՈՂՑՈՂ ՆԵՐԸ...**

**ԵՒ ԱՅՍՕՐ Ո՞Ր ԵՍ, Ի՞ՆՉ ԵՍ ԵՒ ԴԷՊԻ Ո՞Ր ԿՅՐԹԱՍ
ՍՓԻ՛ՒՌ**

... Մինչդեռ ինչե՛ր կրնայիր ընել դուն Սփիւռք... ինչպէս որ
սկսած էին ընել Շահան Նաթալին և ընկերները 1921-ին,
զգետնելով անպատիժ մնացած Թալաթը և միւս նիւաղները:

Բայց Շահան Նաթալին արգելք եղան:

Ովքե՛ր էին արգելք եղողները...

Քու բարեկամ կարծած Արեւմտեան պետութիւնները:

Եւ դո՛ւն Սփիւռք՝ լոեցիր, չընդվզեցար ու չհասկցար լարուած
ծուղակը:

Եւ քնացար գրեթէ 50 տարիներ շարունակ:

Յետոյ, Գուրգէն Եանըզեանը արթնցուց, և պայքարի նամբան
ցոյց տուաւ:

Եւ արթնցող երիտասարդներէ կազմուած Հայաստանի ազատա-
գրութեան հայ գաղտնի բանակը, Գուրգէն Եանըզեանի նամբէն
ընթանալով, ցեղասպան բուրք պետութեան ներկայացուցիչները
եղող դեսպանները, հիւպատոսները և ռերապարտ բայց անպատիժ
բուրք պետութեան ծառայողները ահաբեկել սկսաւ:

Տարիներով հայ հերոսները, իրենց տարած պայքարով, Սփիւռքի

հայ ժողովուրդին մեջ գողցուած հայրենիքի պահանջատիրութեան գաղափարը վերստեղծեցին:

Եւ աշխարհն գիտակցեցաւ Հայկական հարցին էութեան: Եւ աշխարհի հասարակաց կարծիքը համակրանքով կը հետեւէր թուրք ցեղասպան նենգ պետութեան դէմ կատարուած պատժիչ ահաբեկումներուն:

Այստեղ կ'ուզենք նշել մեզ շատ տպաւորած եղելութիւն մը:

1975-թ.ներուն էր, մեր դրացի սպանացի բարեկամը, որ **Ֆրանքիստ**-ներուն դէմ Սպանիոյ մէջ պատերազմած էր, մեզի հետնաձայնեց և շատ ոգեւորուած ձայնով մը հետեւեալը ըսաւ.

«Հիմա, ձեզի բարի լուր մը պիտի տամ:

Սա միջոցին հետատեսիլը տեղեկացուց, թէ Վիէննայի մէջ հայ գաղտնի բանակի մարտիկները, թուրք դեսպանին հաշուեյարդարը կատարած են»:

Գիտակից եւրոպացի ժողովուրդը շատ լաւ հասկցած էր, թէ հայ քաջամարտիկներուն թուրքերուն դէմ մղած պայքարը, հայ ազգին դէմ գործուած անարդարութեան դէմ ըմբոստացում մըն էր:

Բայց Արեւմտեան պետութիւնները հայ մարտիկներուն մղած այս արդար պայքարը, իրենց հասարակաց շահերուն համար շատ վնասակար նկատեցին:

Որովհետեւ իրենց գինակից-դաշնակից թուրք պետութիւնը վտանգի ենթարկուած էր, և հայ գաղտնի բանակին գործունէութիւնը դադրեցնելու համար միջոցներ խորհեցան:

Եւ վերջապէս գայն գտան: Պատմական Troie-ի ձիին [Տրովադայի պատերազմին «փայտե ձի»ն] թակարդը լարեցին հայ գաղտնի բանակին դէմ:

Եւ ամերիկացի Մոնթէ Մելքոնեանը ներմուծեցին հայ գաղտնի բանակին մէջ: Եւ ան, քանի մը ուրիշ հայ դաւադիրներու միանալով, վերջապէս յաջողեցաւ «Բանակ»ը «ներսէն» քանդել:

* * *

Բոլոր հայրենասէր հայերը լաւ գիտեն, թէ այսօրուան փոքր Հայաստանը միայն հարիւրին տասը կը ներկայացնէ մեր բուն, պատմական հայրենիքին, որուն 90-առ հարիւրը գողցուած, գրաւուած է ցեղասպան թուրքերուն կողմէ:

Եւ մենք հայերս, մեր «մեծապատիւ» քաղաքական առաջնորդ-

ներուն ցուցմունքներով, 90 տարիներէ ի վեր միայն մեկուկէս միլիոն հայերուն թուրքերուն կողմէ ցեղասպանութեան ենթարկուիլը կը հառաչենք ու կը կենանք:

Եւ չենք յիշատակեր, որ մեր հայրենիքին 90 առ հարիւրը, գողցուած է թուրքերուն կողմէ:

Ասկէ առաջ ալ ըսած էինք, որ մեզի համար, աշխարհի պատմութեան մէջ երկու մեծ ցեղասպանութիւն կատարուած է.

1.- Ամերիկայի մէջ կարմրամորթներուն ենթարկուած ցեղասպանութիւնը՝ որուն հետեւանքով կարմրամորթները իրենց մեծ հայրենիքը կորսնցուցին, և իրենց հայրենիքը գողցուեցաւ [իրք թէ քրիստոնեայ] եւրոպացիներուն կողմէ:

2.- Հայկական ցեղասպանութիւնը՝ որուն հետեւանքով հայ ազգին 4000 տարուան հայրենիքը թուրքերուն կողմէ գողցուեցաւ:

1940-1945-ի տարիներուն եւրոպայի մէջ, գերմանացիներուն կողմէ հրեաներուն դէմ կատարուած խժոժութիւնները ցեղասպանութիւն չեն: Որովհետեւ, եւրոպական հողերը, հրեաներուն հայրենիքը չէին:

Հրեաները եւրոպա եկած էին [ինչպէս որ հրեաները աշխարհի բոլոր կողմերը գացած են] այդ երկիրներուն հարստութիւնները կողոպտելու և իրենց՝ հրեական իշխանութիւնը բնիկ ժողովուրդին պարտադրելու համար: Այս՝ իրենց հրեական նկարագիրը երբե՛ք չեն փոխեր:

Եւ մենք ամէն օր, ամէն ժամ հեռատեսիլէն, թերթերէն և ամէն տեսակի ծանուցման միջոցներով պարտադրուած ենք դիտելու, լսելու և հետեւելու այս հրեական ձաբոտութեան որոնք, իբր թէ գերման-նացիներուն կողմէ կատարուած հրեական ցեղասպանութիւնը հազար ձեւերով մեզի կը ներկայացնեն:

* * *

Ի՞նչ ըրիր դուն Սփիւռք

Վերը ըսինք արդէն, թէ այսօրուան Հայաստանը մեր բուն հայրենիքին տասը առ հարիւրը կը ներկայացնէ միայն:

Ուրեմն՝ 1915-թ.ի ցեղասպանութենէն վերապրած հայ ժողովուրդը, աշխարհի չորս կողմերը տարածուած հայկական Սփիւռքը, մեր գողցուած հայրենիքին բուն տերն էր... կը մնայ:

Այսինքն հայկական Սփիւռքը՝ թուրքերուն կողմէ գողցուած մեր հայրենիքին 90 առ հարիւրին ալ սեփականատէրն է... Այդ հայ-

րենիքին վերատիրանալու բարոյա-հոգեկան ու անգամ ֆիզիքական իրաւունքն ու պարտականութիւնը ունեցողը նոյնպէս Սփիւռքն է:

Բայց այս Սփիւռքը ի՞նչ ըրաւ 1915-էն մինչեւ 2006 թուականը:

Բոլորս ալ գիտենք, թէ Սփիւռքը 1915-էն մինչեւ այսօր, փոխանակ մեր գողցուած հողերուն վերատիրանալու նպատակով իրատես ծրագիր մը ունեցող կեդրոնական կազմակերպութիւն մը, վարչութիւն մը և աւելի ճիշդ՝ Սփիւռքի կառավարութիւն մը կազմելու միտքուեցաւ կուսակցական սին պայքարներու նախնախուտին մէջ:

* * *

Անհերքելի իրականութիւն մըն է, որ Հայկական ցեղասպանութիւնը, հայկական հողերուն թուրքերուն կողմէ գողցուիլը և անոնց վրայ նոր Թուրքիայի մը ստեղծուիլը, հարիւրաւոր տարիներու ծրագրի մը վրայ հիմնուած սիոնիստական սադրանքներուն հետեւանքն էր:

Բայց, հայկական ողբերգութեան մէջ հայ ազգին, մանաւանդ հայ անհատին նկարագիրը մեծ դեր խաղացած է:

Մենք՝ հայերս, անհատ առ անհատ շատ տաղանդաւոր ազգ մըն ենք: Բայց, որպէս հաւաքականութիւն՝ դեռ միջնադարու աւատապետական շրջանը կ'ապրինք:

Դարձուցէք Հայոց պատմութեան հին էջերը: Առաջին շրջաններէն մինչեւ գրեթէ վերջին ժամանակներու հայկական պատմութեան էջերը՝ հայ իշխաններուն իրարու հանդէպ ունեցած նախանձի և մրցակցութեան պատճառաւ մղած պայքարներով լեցուն են:

Այս պատճառով ալ պիտի կրկնենք.-

«Մէկ հայ հազար կ'արժէ»,

«Երկու հայ ոչինչ կ'արժեն»:

Ուստի մենք, շատ պիտի նախընտրէինք, որ հայ անհատը քիչ մը նուազ տաղանդաւոր ըլլար, բայց ազգային շահերը ճիշդ ըմբռնելով և անոնց գծով գործելու բանականութիւնը ունենար:

Բայց այս՝ ծիններու (gen) հարց է:

Հայ անհատին ծիններուն մէջն է նախանձը, ինքնահաւանութիւնը և եսասիրութիւնը: Մենք չենք փոխուիր... դժբախտաբար:

1915-թ.էն մինչեւ այսօր, Սփիւռքի հայութեան մեծամասնութեան ենթարկուելուն հանդէպ ցուցաբերած անտարբերութեան իր հայրենիքին կորուստին և իր ազգին ցեղասպանութեան հարցին մէջ, կը կարծենք, որ հայ անհատին ծիներուն մէջ գտնուող եսասիրութիւնն ալ մեծ դեր խաղցած է:

Եթէ, հայ անհատին նկարագրին մէջ, հայրենասիրական բանականութիւնը ծանր կշռէր, որքան ալ հայ կուսակցական առաջնորդ մը այլասերած ու ծախուած ըլլար հայուն ամէն գոյնի թշնամիներուն, ան պիտի զանազանէր ազգին օգտակար կամ անոր վնասակար եղողները, և դաշնակցական կարգ մը սուտ լոգունգներուն պիտի չենթարկուէր, և իր հայրենիքին կոնակ պիտի չդարձներ անելի քան եօթանասուն տարի:

Այստեղ կ'ուզենք, երկարատեան ի վեր մեր միտքը չարչրկող Սփիւռքի հայութեան մէկ ուրիշ կեցուածքին մասին, մեր ունեցած գաղափարները յայտնել:

1920-թ.էն մինչեւ 1991-թ.ը, Սփիւռքի դաշնակցական հատուածը դեմ էր Սովետական Հայաստանին: Անոնց մեծ մասը, մեր ըմբռնումով, ողջմիտ հայրենասէրներ չէին:

Բայց, միւս կողմէ ալ, Սփիւռքի «հայրենասէր» կոչուող ու Սովետական Հայաստանի համակիր հայութեան հայրենասիրութեան չափանիշը ի՞նչ էր:

Երկրորդ Համաշխարհային պատերազմէն ետք Սփիւռքի հայութեան պատմութեան մէջ, շատ կարեւոր եղելութիւն մը կայ: 1945-թ.էն յետոյ, Սովետական Հայաստանը՝ համայն Սփիւռքի հայութեան առջեւ հայրենիքին դռները բացաւ և հայութիւնը հայրենիք հրաւիրեց:

Եւ այս հրաւերը՝ Սփիւռքի հայրենասէր հայութեան մէջ մեծ խանդավառութիւն ստեղծեց:

Աշխարհի շատ մը երկիրներէն մեծ թիւով հայեր, աղքատ կամ հարուստ, շարան-շարան դիմում կատարեցին՝ հայրենիք երթալու համար:

Սփիւռքի հայութեան հայրենասիրական ոգիի այս վառ արտայայտութիւնը, իրապէս ալ շատ հպարտացուցիչ երեւոյթ էր, Սփիւռքի և համայն հայութեան համար:

Բայց այս՝ մեր պատմութեան հպարտառիթ առաջին էջն է միայն:

Իսկ ի՞նչ եղան հայրենադարձուած հայերը:

1953-թ.ին Խրուշչովի Ս. Միութեան գլուխ գալէն յետոյ, հայրենադարձ այս հայերուն մեծ մասը և մանաւանդ՝ Ֆրանսայէն ներգաղթածներուն գրեթէ մեծամասնութիւնը Հայաստանը լքեցին:

Մանաւանդ նախկին ֆրանսահայերուն՝ Հայաստան այցելող Ֆրանսայի Ա.Գ նախարարին դիմելով՝ «Մեզ այստեղէն ազատեցէք» պոռալը կը կարծենք, որ հայութեան [գոնէ անոր մէկ մեծ հատուածին] իսկական հայրենասիրութենէ զուրկ ըլլալուն ապացոյցն էր:

Սփիւռքէն հայրենադարձուող հայերը բարեմիտ, բայց միամիտ հայրենասէրներ էին:

Արդէն շատ դժուար էր, մէկ երկրէն ուրիշ երկիր գաղթելն և այդ նոր երկրին պայմաններուն յարմարիլը:

Մանաւանդ որ Սովետական Միութիւնը այն ատեն, Երկրորդ աշխարհամարտէն նոր ելած ու կիսաւեր վիճակ ունէր: Համեմատեցէք նաեւ Ֆրանսայի պէս հարուստ տերութեան մը պայմանները պատերազմէ նոր դուրս եկած Ս. Միութեան և անոր մէկ հանրապետութիւնը կազմող Հայաստանի մէջ ստեղծուած վիճակին հետ:

Մեր միամիտ հայրենասէրները որոնք քիչ մըն ալ երեւակայութենէ տարուած էին, մեծամասնութեամբ չհանդուրժեցին թէպէտ ժամանակաւոր, այդուհանդերձ Հայաստանի այդ օրերու դժուար պայմանները:

Այստեղ բաղդատութիւն մը ընել կ'ուզենք հայերուն և հրեաներուն միջեւ:

Հրեաները - սիոնական - սիրենք կամ չսիրենք՝ իրականութիւնը հարկ է որ ըսենք:

Հրեաներն ալ, հարուստ և աղքատ՝ հայրենասիրական կեցուածքով Իսրայէլ գաղթեցին, յատկապէս՝ 1948-թ.էն սկսեալ:

Եւ «kiboutz»ներու [հրեական kolchoze] մէջ ամենադժուար պայմաններով աշխատեցան, մանաւանդ՝ երիտասարդները: Եւ խոպանը այգեստանի վերածեցին:

Եւ Հրեաստան այցելողները հիացումով կ'արտայայտուէին Իսրայէլի բարգաւաճութեան մասին: Շատ բնական է, որ Իսրայէլի այս յառաջդիմութեան մէջ, դրամը մեծ դեր ունեցած է:

Բայց ամենէն կարեւոր ազդակը՝ հրեաներուն հայրենիք մը կառուցանելու կամքը, կորովը և գոհաբերութեան ոգին եղած է:

Մենք՝ հայերս, հրեաներէն առնելիք դասեր ունինք:

Մանաւանդ՝ հայրենասիրութեան մարզի մէջ:

Հրեաները, ամենադժուար պայմաններու մէջ անգամ, կը մնան փարած իրենց հողին:

Մինչդեռ մենք՝ հայերս, ամենափոքր դժուարութեան պարագային, կը լքենք մեր հայրենի հողը:

* * *

«Ո՛ւր հաց՝ հո՛ն կաց»:

Այո. հայը, ամենափոքր դժուարութեան մը դեմ յանդիման՝ կը լքէ իր հայրենի հողը, կեանքի աւելի լաւ պայմաններ գտնելու մարմաջով:

Եւ կը կարծենք, թէ հայուն այս «ո՛ւր հաց՝ հո՛ն կաց» սկզբունքով մեկնաբանուող կեցուածքը, հայ ազգը ողբերգութեան մատնուած գլխաւոր ազդակներէն մեկն է:

11-րդ. դարուն վերջերէն սկսեալ դեպի Հայաստան կատարուող բուրանական արշաւանքներուն հետեւանքով էր, որ հայը իր հայրենիքը սկսաւ լքել:

Անիի կործանումէն յետոյ, մինչեւ Լեհաստան ափ առնող հայերը, հայրենիքէն զանգուածաբար արտագաղթած առաջինները եղան:

Բայց օսմանցիներուն շրջանին հայրենիքէն [Պատմական Հայաստանէն] կատարուող հայոց մեծաթիւ գաղթին բուն պատճառը, օսմանցիներուն հովանաւորութեան ներքեւ աւելի լաւ կեանքի պայմաններ գտնելու ակնկալութիւնն էր:

Եւ մենք կը հաւատանք, որ օսմանեան իշխանութիւնները, հայերուն գաղթը շատ խորամանկ ծրագրով մը քաջալերած են: Ինչ նպատակով՝

1.- Հայերը, իբր հաւասարակշռիչ ուժ՝ գործածած են Անաթոլիոյ յոյներուն դեմ:

2.- Այս ձեւով հայուն հայրենիքը պարպուած և գրեթէ ամայացած է:

Այս իրավիճակին հետեւանքով է, որ 1915-թ.ին թուրքերը, Անաթոլիոյ տարածքին վրայ, ցիրուցան ապրող հայերը մեծ

դիրուքեամբ հաւաքեցին և բնաջնջեցին:

Եւ 1915-թ.ի Եղեռնին՝ բուրքերը պոլսաբնակ բոլոր հայերը աքսորի չենթարկեցին: [Ի բացառեալ՝ մտաւորականները]:

Անոնք շատ լաւ գիտէին, որ Հայաստանի հողերէն շատ հեռու՝ Պոլսոյ մէջ ապրող հայերը, իրենց համար որեւէ վտանգ չէին ներկայացներ: Աւելին՝ հայերը Պոլսոյ մէջ պահելով, բուրքերը անոնց պատանդի դեր կատարել տուին:

Պոլսոյ հայերը և Պոլսոյ հայ Պատրիարքութիւնը, մենք կը հաւատանք, որ հայկական ողբերգութեան առաջնակարգ [թեւական] պատասխանատուներն են:

Եւ մինչեւ այսօր ալ անոնք՝ պոլսահայերը իբր պատանդ, կը շարունակեն [անուղղակի] բրքանպաստ գործունէութիւն ցուցաբերել հայութեան, Հայ դատին, հայոց պայքարին վնաս հասցնելով:

Այդ պատճառաւ ալ կ'ըսենք, որ իրենց գրեթէ բրքացած Պատրիարքէն սկսեալ բոլոր պոլսահայերը [քիչ բացառութիւններով] հայ ազգին գլխուն տեսակ մը փորձանքներ են:

Եւ վերջապէս, երկար տարիներու լուրբենէն յետոյ, ձայն մը բարձրացաւ Հայաստանէն:


Վերջերս ստացանք, Սեպտեմբեր 2006-ին Երեւան հրատարակուած փրօֆ. Վլատիմիր Պետրոսեանի հեղինակութեամբ բացառիկ գիրք մը՝ **«Չմոռանալ»**:

Եւ գիրքին վրայ մեր հոգին խայտացնող քարտէս մը՝ ամբողջական Հայաստանին քարտէսը:

Այս գիրքը Հայաստանի ազատագրութեան հայ գաղտնի բանակին պատմութիւնը և գաղափարականը ներկայացնող 814 էջանոց մեծղի հատոր մըն է:

Այս գիրքը իրականութեան և արդարութեան մարմաջը, ծարաւը ունեցողներուն գիրքն է:

Վարձքդ կատար՝ փրօֆ. Վլատիմիր Պետրոսեան:



ՎԱՅԵՆԸ Է ՀԱՅ ԱԶԳԻՆ...

**ՀԱՅԵՐԸ [ԻՐՐ ԹԷ], ԱՄԷՆ ՏԱՐԻ, 24 ԱՊՐԻԼԸ ԿԸ ՅԻՇԱ-
ՏԱԿԵՆ: ԲԱՅՅ 24 ԱՊՐԻԼ 1915-Թ.ԻՆ ԻՆՉ ԸԼԼԱԼԸ ԱՄԷՆ ՈՔ
ԼԱԻ ԳԻՏԷ՞**

**24 ԱՊՐԻԼ 1915-Թ.ԻՆ ՀԱՅ ՄՏԱԻՈՐԱԿԱՆՆԵՐՈՒՆ ՆԱՀԱ-
ՏԱԿՈՒԹԵԱՆ ՎԱՅՐԵՐՈՒՆ՝ ՉԱՆՂԸՐԸ-ԻՆ ԵՒ ԱՅԱՇ-ԻՆ ՈՒՐ
ԳՏՆՈՒԵԼՆՈՒՆ ՀԱՅԵՐՈՒՆ ՄԵԾԱՄԱՍՆՈՒԹԻՒՆԸ, ՇԱՏ
ՀԱԻԱՆԱԲԱՐ, ՏԵՂԵԱԿ ՉԵՆ**

**ԵՂԵՌՆԻ ՏԱՐԻՆԵՐԷՆ ՅԵՏՈՅ՝ ՄԻՆՉԵՒ ԱՅՍՕՐ, ՈՉ ՄԷԿ
ՀԱՅ ԿՐՕՆԱԿԱՆ ՉԱՆՂԸՐԸ ԵՒ ԱՅԱՇ ԳԱՑԱԾ ԵՒ ՀԱՅ
ՄՏԱԻՈՐԱԿԱՆՆԵՐՈՒՆ ԱՆՅԱՅՏ ԳԵՐԵՋՄԱՆՆԵՐԸ ԵՂՈՂ
ԱՅԴ ՀՈՂԵՐՈՒՆ ՎՐԱՅ ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ ՄԸ ԿԱՏԱՐԱԾ Է**

**ՄԻՆՉԴԵՌ ՀՐԵԱՆԵՐԸ՝ ԻՐԵՆՑ «HOLOCAUST»ԻՆ ՎԱՅՐԵ-
ՐԸ ԵՂՈՂ AUSCHWITZ-Ը, DACHAU-Ն BUCHENWALD-Ը ԵՒ
ՆՄԱՆ CAMP DE CONCENTRATION-ՆԵՐԸ՝ ՍՐԱՍՏԵՂԻՆԵՐՈՒ
ՎԵՐԱԾԱԾ ԵՆ**

**ԵՒ ՎԵՐՋԱՊԷ՛Մ... 24 ԱՊՐԻԼ 1915-Թ.Ի ՄԵԾ ԵՂԵՌՆԷՆ 91
ՏԱՐԻՆԵՐ ՅԵՏՈՅ, 15 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2006-Թ.ԻՆ՝ ՈՒԽՏԱԳՆԱ-
ՑՈՒԹԻՒՆ Ի ՉԱՆՂԸՐԸ ԵՒ ԱՅԱՇ**

Մեր այս գրութիւնը կը ձօնենք՝ Արմէն Արոյեանից և իրեն
ուղեցոյց երկու հայ ընկերներուն որոնք, Եղեռնէն յետոյ առաջին
անգամ՝ ըլլալով, ուխտագնացութեամբ մեկնեցան Չանղըրը և
Այաշ:

ՌՈՒՐԷՆ ՍԵՒԱԿ

Բուն անունով՝ Ռուբեն Ջիլնկիրեան: Մնած է 1885-թ.ին, Սիլիվրի, բժշկութիւն ուսած՝ Լոզան, ապա աշխատած ու ստեղծագործած՝ Զուիցերիա և Պոլիս, ուր, 1915-ի Ապրիլ 24-ին ձերբակալուած է, հակառակ բանակի բժիշկի իր հանգամանքին, և խժոժութեամբ սպաննուած 200-է աւելի հայ մտաւորականներու հետ: Մեր նահատակ գրագէտներուն կրտսերագոյնը՝ Սեւակ, մեզի ծառանգ ձգած է «Սիրոյ գիրքը», «Վերջին հայերը», «Քառսը» և «Բժիշկին գիրքէն փրցուած էջեր» երկերը:



Սիրո՛յ և յեղափոխաշունչ ապրումներու գրագէտ Ռուբեն Սեւակ:

Թեև երիտասարդ, բայց կանոնի հասկցար կեանքը և ըմբռնեցիր զայն, հասուն մարդու նման:

Տաղանդաւոր բժիշկ էիր, տարուած մարդասիրութեամբ, և իրաւամբ կիսած ու բաժնած դժբախտութիւնները՝ մարդ արարածին.

Դո՛ւն, որ արիութեամբ կը հակադրուէիր ամէն տեսակի անարդարութեան դեմ...: Այսօր քեզի կու գանք որ բերենք մեր խոր յարգանքը, մեր հիացումն ու սէրը՝ քեզի հանդէպ, նահատակութեանդ վայրին, Զանդըրը-ի մէջ:

Դուն պարզ գրող մը չէիր, այլ՝ վաւերական բանաստեղծն ու արձակագիրը:

Դուն պարզ բժիշկ մը չէիր, այլ՝ նուիրեալ հասարակական գործիչը, որ 100 տարիէ ի վեր կը ներշնչէ մեր ժողովուրդի գրասէր սերունդները՝ հաշտ ապրելու իրենց ներքին անձին հետ, հանդուրժելու միւսին և ընդունելու, սիրելու զայն:


Դո՛ւն, որ քու բժշկական դասախօսութիւններովդ լուսաւորած էիր հազարաւորներու միտքն ու կեանքը և անսակարկ ու անմնացորդ նուիրուած ազգիդ՝ քու արուեստովդ, կարողութիւններովդ ու գիտելիքներովդ:

Ազնուագոյն երիտասարդ Ռուբէն Սեւակ՝ դուն քու երեսուն տարու դեռատի կեանքդ զոհեցիր «Հայ» ըլլալու «աններելի յանցանք»իդ համար, վաղաժամօրէն թաղելով ձիրքերդ և սերերդ:

Կը խոնարհի՛նք քու անմոռաց և խնկելի յիշատակին առաջ:
Յարգա՛նք քեզ...:




Տիրանուշակ Չանդըրը-ի մուտքը ուղեցուցող նշանակը



Չանդըրը-ի բարձունքին վրայի փլատակ բերդէն՝ ուխտագնաց Արմէն Արույեան կը դիտէ արիւնաբաթախ քաղաքը:



Անա՛ փլատակ բերդեն ճին և նոր Չանդըրը-ի տեսարանը:



Հաւանաբար այս տուններուն մէջ քանի մը ամիս բնակեցան մեր սուրբ մտաւորական նահատակները:



Ո՛վ գիտէ... թէ Չանդըրը-ի այս տունը՝ 1915-թ-ին մեր սուրբ նահատակներէն որո՞ւն վերջին բնակարանը հղած է:



Ո՞վ գիտե... մեր սուրբ նաճատակները քանի, քանի՛ անգամ նայած են Ջանդըրը-ի այս պատմական աշտարակի ժամացույցին՝ ապագային հայոց իրենց յայսերով եւ մտանգութիւններով



1915 թ.ին այս տուններուն մէջ քանի մը ամիս ապրած մեր սուրբ նաճատակներուն տեղ, այսօր հոն կը բնակի շարդարար թուրքին տիպարը եղող ճիւղ մը:



Դանիններու քաղաք՝ Այաշ-ի հին «ANAVATAN» կուսակցութեան կեդրոնը: Հայերէն թարգմանութեամբ՝ «Մայր Հայրենիք» կոչուող այս կուսակցութեան անդամներուն մայր հայրենիքը ո՞ր է արդեօք - «Միջին Ասիոյ տափաստանները»:

**ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ՝ ԴԷՊՒ 24 ԱՊՐԻԼ 1915 Թ.-Ի
ՍՊԱՆԴԱՆՈՑԸ ԵՂԱՄ ՉԱՆՂԸՐԸ ԵՒ ԱՅԱՇ**

Ո՞Վ Է ՈՒԽՏԱԳՆԱՑ ԱՐՄԷՆ ԱՐՈՅԱՆ

Ասկե տասը տարիներ առաջ էր. Լոզանի մեջ, ժընեւի հոգեւոր հովիւ դոկտ. Աբէլ քահանայ Մանուկեան և գանատաբնակ տիկ. Մարօ Մանաւեան մեզի նուիրեցին video-cassette մը, որուն վրայ մեր բուն հայրենիքը՝ Արեւմտեան Հայաստանը և բուրքերուն բարբարոսութիւններէն փրկուած, մեծ մասամբ կիսափլատակ վիճակի մեջ եղող պատմական յուշարձանները դիտելու մեծ, բայց նաեւ տխրութեամբ պարուրուած հանոյքը ունեցանք:

Տեսաերիզը պատրաստողը Լոս Անճելըս-աբնակ, նախկին Ճիպինցի ընտանիքի գաւալ՝ Արմէն Արոյեանն էր, որ ամէն տարի Ամերիկայէն դէպի Արեւմտեան Հայաստան ճամբորդութիւններ կը կազմակերպէր, որուն կը մասնակցէին կին եւ այր՝ շատ մը հայրենասէր հայեր: Եւ Արմէն Արոյեան այս ուղեւորութիւն-ուխտագնացութիւնները ինք կը նկարէր և կը ձայնագրէր:

Այս տեսաերիզը սկզբնաւորութիւն մը եղաւ. և մենք կապ հաստատեցինք Լոս Անճելըս-աբնակ Արմէն Արոյեանի հետ:

Եւ ան մեզի ուղարկեց դէպի Արեւմտեան Հայաստան կատարած գրեթէ բոլոր ուխտագնացութիւններուն տեսաերիզները:

Եւ այս ձեւով, առանց Հայաստան երթալու, ճանչցանք մեր բուն հայրենիքը, անոր ամէն մէկ քաղաքը, գիւղը և ամէն մէկ սուրբ յուշարձանը:

Եւ այս տեսաերիզներով առիթ ունեցանք տեսնելու և մտիկ ընելու այդ հողերուն վրայ շարդերէն ճողոպրած տարեց հայերու խօսակցութիւնները:

Իրապէս ալ, մեր բարեկամին կատարածը՝ հայապահպանման օգտին եղած բացառիկ գործունէութիւն մըն էր: Անոր տեսաերիզ-ները՝ Հայաստանի պատմական յուշարձանները ձեւով մը փրկեցին բուրքերուն կողմէ բոլորովին բնաջնջուելէ:

Եւ այդ **վիտեօ**ներու շնորհիւ հայկական պատմական յուշար-ձանները և վայրերը անմահացան:

* * *

Բայց այս բոլոր տեսաերիզներուն մէջ պակաս բան մը կար, որ երկարատեանէ ի վեր մեր միտքը կը չարչրկէր:

Ինչո՞ւ 24 Ապրիլ 1915-թ.ի սպանդանոցները եղող Չանդըրը-ի և Այաշ-ի մասին, մինչեւ այսօր ոչ մէկ նկար, ոչ մէկ տեղեկութիւն և մանաւանդ՝ ոչ մէկ տեսաերիզ գոյութիւն ունեցած է:

Մինչդեռ հրեաները իրենց «Holocauste»ին կատարուած բոլոր վայրերը՝ Auschwitz-ը, Dachau-ն Buchenwald-ը և նման Camp de concentration-ները սրբատեղիներու վերածած են:

Իսկ մենք Չանդըրը-ն և Այաշ-ը ոչ միայն սրբատեղիի վերածած չեինք, այլ՝ նոյնիսկ հայ կրօնական մը, մինչեւ այսօր, Չանդըրը և Այաշ չէ համարձակած երթալ և նահատակ մտաւորականներուն անյայտ գերեզմաննոցը եղող այդ հողերուն վրայ աղօթք մը մըմնջել...:

Այս մտասէւեռումներով դիմեցինք Արմէն Արոյեանին և իրմէ խնդրեցինք, որ իր ուխտագնացութիւնը ամբողջացնէ և մինչեւ հիմա ոչ մէկ կրօնականի և նաեւ աշխարհականի կողմէ չայցելուած, 24 Ապրիլ 1915-թ.ի սպանդանոցները եղող՝ Չանդըրը և Այաշ ուխտագնացութեան երթայ...:

* * *

Մեր ուղեգնաց ազգակիցը շատ ճիշդ գնահատելով այս ուխտագնացութեան կարեւորութիւնը՝ սիրով ընդունեց մեր առաջարկը...

Եւ 15 Սեպտեմբեր 2006-թ.ին, ինք և իր երկու հայ ուղեցոյցները ինքնաշարժով Պոլիսէն նամբայ ելան դէպի առաջին սպանդանոց՝ Չանդըրը...

Չանդըրը-ի հին քաղաքը պտըտելէ և նկարահանելէ յետոյ, մեր ուխտագնաց, յանդուգն բարեկամը, իր երկու ուղեցոյցներով կը դիմեն Չանդըրը-ի բարձունքը գտնուող պատմական բերդը, ուրկէ ինք իր հայեացքը կ'ուղղէ դէպի վար, հին Չանդըրը-ի տնակ-բնակարանները, ուր քանի մը ամիս բնակած էին մեր նահատակ մտաւորականները: Եւ հոգեհանգիստ մը կատարելու ինքնամփոփումով և երկիւղածութեամբ կը կարդայ Չանդըրը-ի մէջ նահատակուած Ռուբէն Սեւակի մասին իր հոգեյոյզ դամբանականը և կ'ընթերցէ նոյնքան թախծալից մէկ քերթուածը

հերոս-նահատակ բանաստեղծին:

Ուխտագնացները կը փնտոեն նաեւ երբեմնի Հայկական եկեղեցին: «Հոս էր, այժմ քանդուած է» - կը պատասխանուի: Հոն էր, որ Կոմիտաս Վրդ., աքսորէ վերադարձէ առաջ, պատարագած էր տարագիր հայ մտաւորականներուն համար, որոնց մասին Յովհան Ծ. Վ. Կարապետեան պիտի վկայէր յետագային.- **Մատուռին դասին առջեւ ասպետական դիրքով կանգնած էր սօքք. Զիլինկիրեան: Կը զգայի, թէ ինք, այդ վայրկեանին կը մարմնացներ մեր ցեղին հաւատքի դիւցազնութիւնը: Երկիւղի նշոյլը անգամ չկար իր առնական դէմքին արտայայտութեան մէջ: Սեւակ առաջինը եղաւ Ս. հաղորդութիւն նաշակող: Զեմ կրնար մտքէս հեռացնել իր այդ օրուան գրաւիչ վեհութիւնը: Կը նմանէր յաղթական կողմին, որուն բունը տապալել կը պատրաստուէին փայտահատները...»:**

«Հայաստանի կոչնակ» - 1922 թ.

* * *

Մեր ուխտաւոր հայրենակիցները և իր երկու հայ ուղեցոյցները, հոգեպէս շատ ընկնուած վիճակով կը բաժնուին Զանդըրը-էն և կ'երթան դէպի 24 Ապրիլ 1915-թ.ի երկրորդ սպանդանոցը եղող Այաշ քաղաքը...

Այաշ աքսորուած հայ մտաւորականները այնտեղ շատ ծանր պայմաններու մէջ գտնուած էին, քանի որ, բոլորն ալ մնացին բնատարկուած: Իրենց արգիլած էին դուրս գալ: Եւ Այաշ աքսորուած հայ մտաւորականներէն շատ քիչեր Պոլիս վերադարձան: Գրեթէ, բոլորն ալ, նահատակուեցան...

Եւ այս անիծեալ Այաշ-էն Արոյեան և իր ընկերները, ինքնաշարժով Պոլիս վերադարձի նամբուն վրայ, ինքզինքնին շատ սիրելի անձի մը յուղարկաւորութենէն վերադարձողի հոգեվիճակի մէջ զգացեր են:

* * *

Մենք կը հաւատանք, որ Արմէնի և իր ընկերներուն Զանդըրը և Այաշ կատարած ուխտագնացութիւնը՝ պատմական բացառիկ ձեռնարկ մըն է...

Եւ մենք ունինք այսօր Զանդըրը-ի և Այաշ-ի սպանդանոցներու նկարները:

Եւ ունինք մանաւանդ՝ այս ուխտագնացութիւնը յաւերժացնող
տեսաերիզը՝ DVD-ն:

Հազար շնորհակալութիւն՝ քեզի և ընկերներուդ՝

Սիրելի Արմէն Արոյեան:

Գիտակից հայ ժողովուրդը երախտապարտ է ձեզի:

Մեր ԱՅՍ ԳՐՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՉՕՆԵՆՔ՝ Մեր ՀԱՐԱՋԱՏՆԵՐՈՒՆ ԵՒ Մեր ՃՇՄԱՐԻՏ ԲԱՐԵԿԱՄՆԵՐՈՒՆ, ՈՐ «ԵՐԵՒԱՆԻ ՄԷՋ ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ ԱՆՈՒԱՆ ՅԻՇԱՏԱԿԻ ՏՈՒՆ» ՄԸ ՍՏԵՂ-ԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ 15-9-1985-ԻՆ ՍՓԻՒՌԻ ՀԵՏ ՄՇԱԿԹ. ԿԱՊԻ ԿՈՄԻՏԷՒՆ ԳՐԱԾ ՄԵՐ ՆԱՄԱԿԸ ԻՐ «ԿՏԱԿ» ԸՆԴՈՒՆԻՆ ԵՒ ԱՆՊԱՅՄԱՆ ԳՈՐԾԱԴՐԵՆ... ԵԹԷ ՄԵՆՔ, ՄԵՐ ԿԵԱՆՔԻ ՕՐԵՐՈՒՆ, ՋԱՅՆ ՉԿԱՐՈՂԱՆԱՆՔ ԻՐԱԳՈՐԾԵԼ:

Ի՞նչ ՊԻՏԻ ԸԼԼԱՅ «ԱՊԱԳԱՆ» ՖՐԱՆՍԱ - CAGNES SUR MER-Ի ՄԷՋ ԳՏՆՈՒՈՂ «ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ ՅԻՇԱՏԱԿԻ ՏԱՆ»:

«ԱՋԳ ՄԸ, ԻՐ ՀԵՐՈՍՆԵՐՈՎ ԿՊԱՊԻ: ԱՋԳ ՄԸ, ՈՐ ՀԵՐՈՍՆԵՐ ՉՈՒՆԻ, ԱՊՐԵԼՈՒ ԻՐԱՒՈՒՆՔ ՉՈՒՆԻ: ԱՋԳ ՄԸ, ՈՐ ԻՐ ՀԵՐՈՍՆԵՐԸ ԿԸ ՄՈՌՆԱՅ, ԻՆՔՆ ԱԼ ՄԵՌԵԼՈՒ ԴԱՏԱՊԱՐՏՈՒԱԾ Է»:

1985 - Յ. Չ.

17 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2007-ԻՆ, ԵՐԵՒԱՆԻ «Հ-1» ՀԵՌԱՏԵՍԻԼԷՆ ՍՓՌՈՒԵՑԱԻ ՃՈՒԼԻՒ ԿԱԺՈՅԵԱՆԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԱԾ «ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿ» ԵՒ «ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ ՅԻՇԱՏԱԿԻ ՏՈՒՆ»Ի ՄԱՍԻՆ ՅԱՅՏԱԳԻՐ ՄԸ:

ԵՒ ԱՅՍ ՅԱՅՏԱԳՐԻՆ ՄԷՋ, ԵՐԵՒԱՆԻ ԵՂԻՇԷ ՉԱՐԵՆՑԻ ԱՆՈՒԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻ ԹԱՆԳԱՐԱՆԻ ՏՆՕՐԷՆ՝ ՀԵՆՐԻԿ ԲԱԽՉԻՆԵԱՆ ՍԱՊԷՍ ԱՐՏԱՅԱՅՏՈՒԵՑԱԻ.- «ԲՆԱԿԱՆ Է՝ ՇԱՏ ԴԺՈՒԱՐ Է Յ. ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆԻ ՀԱՄԱՐ, ԵՐԿԱՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԷ Ի ՎԵՐ ՀԱԻԱՔԱԾ ՄԱՍՈՒՆՔՆԵՐԷՆ ԲԱԺՆՈՒԻԼԸ»:

Այստեղ հարկադրուած կ'զգանք, կրկին ու կրկին, ըսելու՝
Ռուբէն Սեւակի հերոսական կեանքի պատմութիւնը չա-
րափոխուեցաւ:

Ռուբեն Սեւակի անունը սրբապղծուեցաւ:

**Ռուբեն Սեւակի գրական ժառանգութիւնը թերագնահատուեցաւ
ու անտեսուեցաւ:**

Ռուբեն Սեւակի հանդէպ կատարուած այս անիրաւութիւնները դարմանելու նպատակաւ 1985-թ.ին՝ Ռուբեն Սեւակի ծննդեան հարիւրամեակի Նիսի մէջ հանդիսաւորապէս նշման նախընթաց շաբաթներուն՝ 16-9-1985-ին, նամակով մը դիմեցինք Երեւանի սփիւռքահայութեան հետ Մշակութային կապի կոմիտէի նախագահութեան և իրենց առաջարկեցինք՝ Մայր Հայրենիքին նուիրել Ռուբեն Սեւակի արխիւնը, մեր տարաբախտ հարազատին մասունքները և մեր, երկար տարիներէ ի վեր հաւաքած, հայ գեղանկարիչներու հարիւրէ աւելի պաստառները. պայմանաւ որ Երեւանի մէջ Ռուբեն Սեւակի անուան Յիշատակի Տուն մը ստեղծուի, որուն հիմնադրման Ռուբեն Սեւակի հարազատներն ալ պիտի սատարէին: Եւ 20-12-1985-ին, այն ատենուան Սփիւռքի կոմիտէի նախագահ Կարլէն Դալլաքեանէն [իբր թէ] մեր առաջարկներուն պատասխանը եղող նամակ մը ստացանք: Ասոր մէջ մեր բուն նպատակը եղող՝ «Երեւանի մէջ Ռուբեն Սեւակի անուան Յիշատակի Տուն մը ստեղծելու» մասին ոչ մէկ ակնարկութիւն կար:

Աւելին, այս նամակին մէջ Կ. Դալլաքեան կ'ըսէր թէ՝ **«Եղիշէ Զարենցի անուան Գրականութեան և Արուեստի թանգարանում մեր բոլոր անուանի գրողների, այդ թւում նաև Ռուբեն Սեւակի անուններով յատուկ բաժիններ կան»:**

1978-ին, մեր Հայաստան նամբորդած օրերուն, Եղիշէ Զարենցի անուան Գրականութեան և Արուեստի թանգարանն ալ այցելած և տեսած էինք, թէ Կ. Դալլաքեանի Ռ. Սեւակի անունով բաժին մը կայ ըսածը՝ պահարանի դարակ մըն էր միայն. ուր պահուած էին նահատակ բանաստեղծին հարազատներուն ղրկած և Ռուբեն Սեւակի պատկանող ձեռագիրներէն և անոր վերաբերող գրութիւններէն մաս մը:

Նոյնիսկ Ռուբեն Սեւակի հարազատներուն Հայաստան ուղարկած և գեղանկարիչ Լեւոն Ազնաւուրեանի մէկ գործը եղող Ռուբեն Սեւակի իւղաներկ դիմանկարը, տարիներով նկուղներուն մէջ ձգուած մոռցուած ըլլալուն՝ փնացած էր:



*Յովհաննէս Չիլինկիրեան իր հօրեղբոր՝ Ռուբէն Սեւակի դիմանկարին
անջև. գործ՝ գեղանկարիչ Լեւոն Ազնաւուրեանի*

[Բարեբախտաբար, Ռուբէն Սեւակի այս նկարը վերանորոգուելէ յետոյ, այսօր Ե. Չարենցի անուան Գրականութեան և Արուեստի քանդարանի տնօրէն Հ. Բախչինեանի աշխատասենեակը զետեղուած է]...:

Այստեղ, յանուն ճշմարտութեան և պատմութեան կը հրատարակենք 16 Սեպտեմբեր 1985-թ.ին Երեւանի սփիւռքահայութեան հետ Մշակութային կապի կոմիտէի նախագահութեան մեր ուղարկած նամակը... Եւ նաեւ՝ Կոմիտէի նախագահ Կ. Դալլաքեանէն ստացուած 20-12-1985- թուակիր պատասխան նամակը, Կոմիտէի նախագահութեան հասցեագրուած դիմում-խնդրանքին գլխաւոր մասերը: Նամակը 16 Սեպտեմբեր 1985 թուականը կը կրէ: Ահաւասիկ.-

***Սփիւռքահայութեան հետ Մշակութային կապի կոմիտէի
նախագահին՝***

Յարգելի նախագահ,

«Այս նամակը ձեզի կ'ուղարկենք Ռուբեն Սեւակի հարազատներուն և մօտիկ ազգականներուն անունով:

Ինչպէս որ գիտէք՝ այս տարի նահատակ բանաստեղծ՝ Ռուբեն Սեւակի ծննդեան 100-ամեակն է:

Հայրենիքի մէջ այս տարեդարձը յիշատակուեցաւ 19 Մարտ 1985-ին, Երեւանի Գրողների միութեան մեծ դահլիճին մէջ:

Այս առթիւ մեր խորին շնորհակալութիւնները կը յայտնենք մեր սիրելի Խորհրդային Հայաստանի պետութեան, Գրողներու միութեան նախագահութեան և գրողներուն ու բոլոր անոնց, որոնք այս յիշատակի օրը իրականացուցին:

13 Հոկտեմբեր 1985-ին ալ Ֆրանսայի Նիս քաղաքին մէջ, մեծ հանդիսութեամբ պիտի յիշատակուի Ռուբեն Սեւակի ծննդեան 100-ամեակը, իր երկու զաւակներուն ներկայութեամբ:

Այս առթիւ ձեզմէ կրկին կը խնդրենք, որ Հայրենիքն ալ իր ներկայացուցիչն ունենայ և մասնակցութիւնը բերէ հերոս նահատակ բանաստեղծ Ռուբեն Սեւակի յիշատակին կատարուելիք հանդիսութեան, և Նիս ուղարկէ իր յարմար նկատած անձնաւորութիւնը:

Ռուբեն Սեւակ՝ իսկական մարդասէր և ընկերվարական բանաստեղծն է, որ իր կեանքին մինչեւ վերջը այս իտեալին հաւատարիմ է մնացած, վկայ՝ իր բանաստեղծութիւնները, իր պատմուածքները, և վկայ՝ իր հերոսական վախճանը:

Ռուբեն Սեւակ դեռ այն ատենէն տեսած է Դաշնակ կուսակցութեան բուրք իբրիհատականներու եղբայրութեան վրայ յենող սխալ քաղաքականութեան վտանգները, և իր գրութիւններով հակառակած է այդ քաղաքականութեան:

1920-էն սկսեալ, Մայր Հայրենիքը և հայրենի ժողովուրդը, գիտցած են գնահատել Ռուբեն Սեւակը: Յառաջդիմասէր լայն գանգուածներուն սրտին խօսող անոր բանաստեղծութիւնները և պատմուածքները, միշտ հրատարակուած են Մայր Հայրենիքին մէջ: Ռուբեն Սեւակի մասին Հայաստանի մէջ հրատարակուած գիրքերը բազմաթիւ են. օրինակ՝

1955 - Երեւան, Եղիշէ Պետրոսեան - Ռուբեն Սեւակ, Երկեր:

1959 - Երեւան, Գեորգ Հատիտեան, Ռուբեն Սեւակ:

1965 - Երեւան, Եղուարդ Ջրբաշեան, Ռուբեն Սեւակ:

1972 - Երեւան, Վ. Ա. Կիրակոսեան, Ռուբեն Սեւակ:

1985 - Երեւան, հրատարակութեան կը պատրաստուի Ալեքսանդր

Թոփչեանի՝ Ռուբէն Սեւակի ամբողջական գործերը:

Այս երկար ցանկը ապացոյցն է Մայր Հայրենիքին և հայրենի ժողովուրդին գնահատանքին, ցուցաբերուած հանդէպ Ռուբէն Սեւակին, և մենք, մեր անկեղծ ու խորին շնորհակալութիւնը և երախտագիտութիւնը կը յայտնենք Հայաստանի պետութեան, Հայաստանի մտաւորականներուն և Հայաստանի ժողովուրդին:

Այս առթիւ թոյլատրեցէք, որ ակնարկութիւն մ'ընենք երեւոյթի մը մասին:

Մենք անկեղծ հաւատքը ունինք, որ Ռուբէն Սեւակի հանդէպ անիրաւութիւն մը կատարուած է, Սեւակ անունը ուրիշ բանաստեղծի մը տալով: Թերեւս այս մէկը եղած է առանց ուզելու, առանց հետեւանքները նկատի առնելու, թերեւս՝ բարի նպատակաւ, ինչպէս որ յարգելի պրն. Ռ. Զարեանը մեզի ուղղած իր պատասխան նամակին մէջ մատնանշած է:

Պարոն Ռուբէն Զարեան՝ Աւետիք Իսահակեանի Ռուբէն Սեւակի Զանդրը-ի մէջ ցուցաբերած հերոսական կեցուածքին մասին իրեն պատմուածներուն տպաւորութեան տակ մնալով, ուզած է Ռուբէն Սեւակի յիշատակը յաւերժացնել... ուրիշ Սեւակ մը ստեղծելով Պարոյր Ղազարեանէ... անկէ Պարոյր Սեւակ մը ստեղծելով:

Բայց, արդիւնքը ի՞նչ եղած է:

Պարոյր Սեւակ անունը՝ ձեւով մը մոռցնել տուած է Ռուբէն Սեւակը:

Ռուբէն Սեւակի հանդէպ կատարուած այս անիրաւութեան մասին մեր ունեցած խոր համոզումով, վերջերս Պէյրութի «Արարատ» թերթին մէջ, յօդուածաշարք մը հրատարակեցինք: Այս թերթի յիշեալ համարներէն մէկ-մէկ օրինակ ձեզի կ'ուղարկենք առ ի գիտութիւն:

Շատ մօտատենէն այս յօդուածաշարքը, գիրքի վերածուելով պիտի հրատարակուի Փարիզի մէջ, աւելի ընդլայնուած և Ռուբէն Սեւակի բանաստեղծութիւններով հարստացած:

Դժբախտաբար այսօր, ինչ որ ալ ընենք, այս սխալը սրբագրել կարելի չէ: Ինչպէս որ Ռուբէն Զարեան իր նամակին մէջ կ'ըսէ՝ «Նշածը եղել է»:

Բայց, գէթ մասամբ, այդ սխալը դարմանել կարելի է: Ռուբէն Սեւակի եղբօրորդին ըլլալու պատիւը և հպարտութիւնը ունենալով, Ձեզմէ կը խնդրենք, որ մեր սիրելի Հայրենիքը Ռուբէն Սեւակի

հանդէպ եղածը դարմանէր, Ռուբէն Սեւակի յիշատակին և անուամբ տուն-քանգարան մը ստեղծելով:

Ձեզ կրնանք վստահեցնել, որ Ռուբէն Սեւակի ազգականները պատրաստ են իրենց կարելիութեան չափով, ամէն տեսակի օժանդակութիւն ընել այս ծրագիրին իրականացման համար: Մենք պատրաստ ենք, այս **տուն-քանգարան**ին նուիրելու, 100ի մօտ հայ նկարիչներու պաստառներ: Անոնցմէ գատ մենք մեր քով ունինք մէկ մասը Ռուբէն Սեւակի արխիւին, որ կրցանք փրկել Պոլսոյ դժոխքէն: Ասոնց մէկ մասը նշենք.

1.- Ռուբէն Սեւակի ձեռամբ գծագրուած նկարներ:

2.- Ռուբէն Սեւակի ձեռամբ Չանդըրըիի քստորավայրէն իր կնոջ գրուած քսան հատ քացիկ-նամակներ, որոնց պատմական արժէքը շատ մեծ է:

3.- Ռուբէն Սեւակի կողմէ իր կնոջ և այլ անձերու գրուած հարիւրաւոր նամակներ:

4.- Ռուբէն Սեւակի կողմէ իր կնոջ և այլ անձերու գրուած հարիւրաւոր քացիկ-նամակներ:

5.- Իր անձնական իրերուն մէկ մասը:

6.- Ռուբէն Սեւակի կողմէ վերցուած մեծ թիւով լուսանկարներ:

7.- Ռուբէն Սեւակի պատկանող մեծ թիւով նկարներ:

8.- Ռուբէն Սեւակի պատկանող գիրքեր, թերթեր, եւ այլն:

Կարն խօսքով՝ Ռուբէն Սեւակին պատկանող հարիւրաւոր մասունքներ, որոնց միակ արժանի տեղը՝ Մայր Հայրենիքն է:

Յարգելի նախագահ,

Ռուբէն Սեւակի իտեալն էր՝ արդարութեան և հաւասարութեան վրայ հիմնուած աշխարհ մը և հայուն վայել Հայրենիք մը կերտել:

Այսօր, Ռուբէն Սեւակի իտեալը իրականացած է, իր պատմական Հայրենիքին վերածնած ազատ մէկ մասով:

Եւ մենք, մեր վերածնած Հայրենիքի իշխանութիւններէն կը խնդրենք, որ Հայրենիքի սիրոյն նահատակուած Ռուբէն Սեւակի անունը, Հայրենիքի մէջ յաւերժանայ, Ռուբէն Սեւակի անունը կրող **տուն-քանգարան**ով մը:

Խորին շնորհակալութիւններով,

Ի դիմաց՝ Ռուբէն Սեւակի հարազատներուն

և մօտիկ ազգականներուն՝

Ռուբէն Սեւակի եղբորորդի՝

ՅՈՎՀԱՆ ՆԷՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՀԵՌԱՏՅՍԻԼԷՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

17 Դեկտեմբեր 2007-թ.ին, Երեւանի «Հ-1» հեռատեսիլէն սփռուեցաւ Ռուբէն Սեւակի և «Ռուբէն Սեւակի յիշատակի տուն»ի մասին Ճուլիա Կաթոյեանի պատրաստած և կէս ժամէ աւելի տեւողութիւն ունեցող յայտագիր մը:

Առաջին անգամ ըլլալով Երեւանի հեռատեսիլէն դիտելու ուրախութիւնը ունեցանք Ռուբէն Սեւակի յիշատակի տան մասին շատ որակաւոր ներկայացում մը, որուն արձագանգները մեզի հասան՝ Ամերիկայէն, Յունաստանէն, Պոլիսէն, Ջուիցերիայէն, Լիբանանէն և Ֆրանսայէն:

Այս յայտագրի սփուման ընթացքին խօսեցան մասնաւորապէս Շամիրամ Սեւակ, «Իմ Ռուբէն Սեւակը» գիրքի հեղինակ գրող Թորոս Թորանեան և Երեւանի Եղիշէ Չարենցի անուան Գրականութեան և Արուեստի թանգարանի տնօրէն՝ Հենրիկ Բախչինեան:

Մանաւանդ, Հենրիկ Բախչինեան, շատ իրաւամբ իր մտահոգութիւնը յայտնեց, թէ ի՞նչ պիտի ըլլայ «Ռուբէն Սեւակի յիշատակի տուն»ի ապագան:


Հենրիկ Բախչինեան երկու անգամ այցելած էր «Ռուբէն Սեւակի յիշատակի տուն»ը, և իբր թանգարանի տնօրէն շատ լաւ հասկցած էր այդ յիշատակի տան հայ մշակոյթին ու նոր սերունդին համար ներկայացուցած արժէքը:

Մանաւանդ, որ Սփիւռքի Հայ մշակութային որոշ կեդրոններ, ինչպէս՝ Վենետիկի Մխիթարեաններու վարժարանը, Փարիզի Մխիթարեաններու վարժարանը և Կիպրոսի Մելքոնեան վարժարանը - մէկը միւսին ետեւէն փակուած էին...:

Խոստովանիք, որ մեր և մեր հարազատներուն ու բարեկամներուն համար ալ մեծ մտահոգութիւն է «Ռուբէն Սեւակի յիշատակի տուն»ի ապագան:

Այստեղ կ'ուզենք միայն ճշդում մ'ընել:

Հենրիկ Բախչինեան հեռատեսիլէն ըսաւ թէ՝ «Բնականաբար շատ դժուար է, Յ. Չիլինկիրեանի համար, երկար ժամանակներէ ի վեր հաւաքած մասունքներէն բաժնուիլը»:



Ռուբեն Սեւակի անուան միջնակարգ դպրոցը Երեւանի մէջ: Բակին կեդրոնը՝ Ռ. Սեւակի կիսանդրին, սպիտակ մարմարե, բարձրացած խոյակի վրայ

Թող ներուի մեզի ըսել, որ այս մտածումը նիշդ չէ:

Ինչպէս որ քիչ վերը դիտել տուինք՝ մենք դեռ 1985-թ.ին, դիմեցինք Հայաստանի պետութեան՝ մեր ունեցած բոլոր մասունքները և արժեքաւոր իրերը հայրենիքին նուիրելու պատրաստակամութեամբ:

Որովհետեւ մենք ալ կը հաւատանք, որ Ռուբեն Սեւակի մասունքներու պահպանման միակ արժանի տեղը Մայր Հայրենիքն է:

Պայմանաւ սակայն, որ Հայաստանի իշխանութիւններն ալ գիտնան՝ Ռուբեն Սեւակին ներկայացուցած իսկական արժեքը, գիտնան հերոս նահատակ բանաստեղծ Ռուբեն Սեւակին՝ Հայ ժողովուրդին հոգեկան զօրութեան յարատեւ ամրապնդման համար ներկայացուցած կարեւորութիւն-արժեքը:

* * *

17-12-2007-թ.ին, հեռատեսիլէն յայտագրի մը սփուման ընթացքին, «Իմ Ռուբէն Սեւակը» գիրքի հեղինակ Թորոս Թորանեան՝ տպաւորիչ մանրամասնութիւններով նե րկայացուց իր «Ռուբէն Սեւակի յիշատակի տուն» կատարած այցելութիւնները:

Բայց հոս, ակնարկութիւն մ'ընել կ'ուզենք.

Թորոս Թորանեան իր ելոյթին ընթացքին ըսաւ թէ՝

«Եթէ բոլոր հայ գրողները, Յ. Չիլինկիրեանի նման իրենց թիկունք կանգնող անձ մը ունենային՝ Հայ մտաւորականները շատ աւելի կ'արժեւորուէին»:

Այս կէտի շուրջ համաձայն չենք մեր յարգելի բարեկամ Թորոս Թորանեանի հետ:

Որովհետեւ մենք, Ռուբէն Սեւակին թիկունք կը կանգնինք, ոչ թէ Ռուբէն Սեւակին մեր հօրեղբայրը ըլլալուն համար, այլ՝ որովհետեւ մենք կը հաւատանք Ռուբէն Սեւակին ներկայացուցած բացառիկ արժեքին:

Որովհետեւ մենք կը հաւատանք Ռուբէն Սեւակին՝ իբր մարդ, իբր հայ, իբր գրող ունեցած անգերազանցելի բարձրութեան:

Որովհետեւ մենք կը հաւատանք Ռուբէն Սեւակի գաղափարները և անձնագոհութեան ոգին հայ ժողովուրդին մէջ տարածելու հրամայականին անհրաժեշտութեան...

Որովհետեւ, իր օրին, ժողովուրդը չհասկցաւ Ռուբէն Սեւակին իսկական արժեքը:

Բայց թուրքերը շատ աւելի լաւ հասկցած էին Ռուբէն Սեւակին արժեքը:

Չմոռնանք, որ 1915-թ.ին, երբ Ռուբէն Սեւակի գերմանուհի կինը Պոլսոյ Գերմանական դեսպանատուն դիմեց որ իր ամուսինը փրկէ մահուան ճիրաններէն, կոպտօրէն մերժուեցաւ: Դրուեցաւ դուրս: Իր երեսին ըսին արհամարհալից.

«Ռուբէն Սեւակը կը նկատուի իբրեւ մէկը այն մտաւորականներէն, որուն զանգուածներու վրայ ունեցած ազդեցութենէն կը վախցուի»:

Այո, ինչպէս գրած ենք անցեալին.-

«Ազգ մը, իր հերոսներով կ'ապրի:

Ազգ մը, որ հերոսներ չունի, ապրելու իրաւունք չունի:

Ազգ մը, որ իր հերոսները կը մոռնայ, ինքն ալ մեռնելու դատապարտուած է»:

Մինչեւ ե՞րբ պիտի շարունակուի աշխարհի մեծագոյն «mafia»-ն եղող եւ «sionisme ըսուած հրեշիւն՝ աշխարհակալ իշխանութիւնը

Մինչեւ ե՞րբ ժողովուրդները «ֆուտպոլ»ի գնդակի նման աջ ու ձախ պիտի ջարդուին եւ ցեղասպանութեան պիտի ենթարկուին սիոնիստներուն ծրագիրներուն գործադրութեան համար

Իրր թէ «պաղ պատերազմ»ը վերջացած էր Խորհրդային Միութեան կործանումով: Սո՛ւտ է: Պաղ պատերազմը երբեք չէ դադարած: Այլ տարբեր ձեւերով՝ տաք կամ պաղ, անձայն կամ շոնդալից՝ ձեւով կը շարունակուի, սիոնիստներուն կողմէ մինչեւ այսօր

Հրեայ միլիառատեր Սորոս-ին միլիոններովը երեկ, Ուքրանիոյ ժողովուրդը ոտքի հանեցին: Յետոյ, նոյն խաղերը կատարուեցան Վրաստանի մէջ: ... Եւ կարգը եկաւ Հայաստանի քանդումի՞ն: Հայաստանի նախագահական ընտրութիւններէն ամիսներ առաջ լուրեր տարածուեցան, որ հրեաները Լեւոն Տէր Պետրոսեանին մեծագումար տուար տուած են, որ Հայաստանի մէջ ժողովուրդը ըմբոստութեան մղէ...

Հայաստանի ժողովուրդին համար կ'ըսն, թէ «նայերը խելացի են» նայեցէք Երեւանի հրապարակներուն վրայ խելագարած ժողովուրդին ... Ահաւասիկ՝ թուրքին բարեկամ «առաջին նախագահ»ին խօսքերուն հաւատալով՝ այսօր Հայաստանը ըմբոստութեան սեմին բերող հայ ժողովուրդին իմացականութեան չափանիշը

1915-թ.ին հայերուն դէմ կատարուած ցեղասպանութեան համար, թուրքերուն մինչեւ այսօր ներկայացուցած պատրուակը հետեւեալն է.

«Հայերը ռուսերուն հետ կը գործակցին»:

... Մինչդեռ ամբողջ աշխարհ գիտէ, թէ հայերուն փրկութիւնը միայն ռուս ազգէն է:

Այս իրականութիւնը չգիտցողները միայն միամիտ կամ ծախուած հայերն էին, որոնք կ'առաջնորդուէին Լ. Տ. Պ.ի և իր մմաններուն սուտ լոգունգներով, երկար ժամանակներէ ի վեր:

... «Նայիրի»ի սիւնակներուն մէջ, թերթի առաջին թիւերէն սկսեալ գրուեցան «առաջին նախագահ»ին հրեաներուն համակիր մը ըլլալուն մասին...:

Արդարեւ ան, 1988-թ.էն սկսեալ Հայաստանի մէջ կատարուած ցոյցերուն հեղինակը ըլլալով, ի վերջոյ փլցուց մեր բարգաւան հայրենիքը... Եւ իշխանութեան գլուխը անցաւ՝ քանի մը տարուան մէջ սնանկացած և խեղճացած Հայաստանի մէջ:

Այդ տարիներուն Լեւոնի մէկ ոտքը Ամերիկայի մէջ էր, և իբր ամերիկացիներուն աչքին բարեյոյս անձ մը՝ կ'օգտուէր այդ մտերմութեան պտուղներէն:

Նիւ Եորք գտնուող մեր հարագատը մեզի կը պատմէր թէ՛ Հայաստանէն Ամերիկա եկող՝ «առաջին նախագահ»ը, նաեւ իր խամահիկները ինչպէ՛ս կը գուարնանային Նիւ Եորքի ամէնէն հոշակաւոր և սուղ պանդոկը եղող Waldore Astoria-ի սրահներուն մէջ:

Անոնցմէ մէկն էր «մեծ նկարիչ» նանչցուած, իրականութեան մէջ մեծ պատեհապաշտ մը եղող Գրիգոր Խաննեանը...

Յետոյ, ամերիկացիները սկսան, Լեւոնին շատ կարեւորութիւն չտալ:

Որովհետեւ ան, իր «դերը» կատարած և ինքն ալ «լըմընցած» էր այլեւս:

Եւ ամէնէն կարեւորը՝ Խորհրդային Միութիւնը կործանած և «համայնավարութեան վտանգ»ը չքացած էր... Իսկ Հայաստան տեղակայուած ռուս-խորհրդային Երդ բանակը վտարուած էր «նախագահ Լեւոն»ի հրամանով:

Յուսախաբուած Լեւոն Տէր Պետրոսեանը, հրեաներուն թելադրանքով, այս անգամ ալ թուրքերուն հետ բարեկամանալու քաղաքականութիւնը գործադրել սկսաւ:

Չմոռնանք, որ ինքն էր պնդողը, թէ հայերը թուրքերուն հետ հաշտ-համերաշխ կրնան ապրիլ, եթէ ռուսերը որով չցանեն հայ-

թուրք յարաբերութիւններուն մէջ:

Հրեաներուն միջնորդութեամբ Փարիզի մէջ, Գորշ Գայլերու նախագահին հետ տեսնուեցաւ և կ'ըսեն, թէ համաձայնած է անոր հետ՝ ապագային Թուրքիա-Հայաստան բարեկամութիւնը ամրապնդելու մասին:

Եւ այս թուրք-հայ համաձայնութեան հետեւանքով ո՛չ ցեղապանութեան նաւաչման և ո՛չ ալ «գրաւեալ Արեւմտահայաստան»ի մասին պիտի խօսէին հայերը այլեւս:

Նոյնիսկ Հայաստանի մօտ Անգարայի դեսպանը ճշդուած էր: Ան պիտի ըլլար նիսաբնակ [իբր թէ] հայ մը՝ «Սամսոն Էօզարարաւտ» անունով, որուն կինը, Լեւոնի կնոջ նման, ծնունդով հրեայ մըն էր:

Եւ դեռ կ'ըսուի, որ այս Սամսոն Էօզարարատին և Պոլսէն իր դպրոցական ընկերը եղող Ալփասլան Թիւրքէշին զաւակին՝ Թուրուլ Թիւրքէշին միջնորդութեամբ, կարելի եղած է, Փարիզի մէջ կայացնել, Լեւոնի ու Թիւրքէշի հանդիպումը և համաձայնութիւնը:

... Բայց Արցախի պատերազմը և ազերիներուն պարտութիւնը բարեկամական ծրագրի իրականացման վերջ տուին:

Ազերիները, իբր թուրքերուն «եղբայրները», արգելք եղան թուրք-հայ համաձայնութեան: ... Եւ թուրքերը, մինչեւ հիմա կը զղջան, որ առիթէն չեն օգտուած, և թուրքերուն գրեթէ բոլոր առաջարկները ընդունողին հետ համաձայնութեան դաշինք չեն ստորագրած:

* * *

Աւելի ուշ՝ «առաջին նախագահ»ը Հայաստանի մէջ իր հրահրած Արցախի խնդրին վերջ տալու համար ազատագրուած տարածքները ազերիներուն ետ տալ ուզեց... Բայց, ժողովրդի ընդդիմութեան առջեւ, ստիպուած եղաւ հրաժարելու...:

Եւ այս հրաժարումէն յետոյ կարծեցինք, որ սիոնիստներուն և թուրքին «բարեկամ» նկատուածը Հայաստանի մէջ «անելիք չունի այլեւս»:

Բայց սխալեր ենք... Կը կարծէինք, որ հայ ժողովուրդը ողջմտութիւն և բաւարար փորձառութիւն ունի այլեւս և չի հետեւիր ապագային առաջնորդներուն սուտ լոգունգներուն... Եւ իր հայրենիքը կրկին դէպի կործանում չ'առաջնորդեր:

Բայց աշխարհի վրայ իշխող դրամ-աստուածը, ամեն բան կրնայ ծախու առնել: Եւ երբեմն, մինչեւ անգամ, ամենահայրենասէր անձը կրնայ մոլորեցնել... Որովհետեւ Հայաստանը «վերջին բարեկամ» երկիրն է ռուսերուն Կովկասի մէջ:

Եւ եթէ Հայաստանը **քանդուի, այսինքն՝ ռուսական բարեկամութենէն հեռանայ**, Կովկասը ամբողջովին սիոնիստ ամերիկացիներուն ձեռքը կ'անցնի:

Այնքա՛ն լուրջ է հարցը, թե՛ հայերուն և թե՛ ռուսերուն համար:

Տիրող կարծիքը այն է, որ սիոնիստ հրեաները 19 Փետրուար 2008-թ.ին՝ Հայաստանի նախագահական ընտրութիւններէն ամիսներ առաջ, իրենց վստահելիին ու անոր խմբակին միլիոններ բաշխած են, որ Հայաստանի մէջ, Ուքրանիոյ և Վրաստանի մէջ եղածին նման, խոռվութիւն ու ապստամբական մթնոլորտ ստեղծեն:

Եւ յաջողեցան...

Եւ այսօր, մեր ստացած վերջին լուրերուն համաձայն, Երեւանի կեդրոնը ցոյց ընողները մեծ մասամբ համալսարանական ուսանողներ են, որոնց թիւը ութ հազարէ աւելի կը գնահատուի: Այս ցուցարարները, ապահովութեան ուժերուն դէմ ելլելով, բախումներ յառաջացուցած են: 40-է աւելի ծանր ու թեթեւ վիրաւորներ կան հոն, որոնց 10-ը՝ ոստիկաններ են: Եւ այս ցոյցերը իրենց նպատակէն դուրս ելլելով ապստամբական ու կողոպուտի հանգամանք առած են ու մայրաքաղաքը մատնած անիշխանական վիճակի:

Եւ հակառակ այս վտանգաւոր դրութեան, անպատասխանատու ղեկավար-դրդիչներ ցուցարարներուն՝ «շարունակեցէ՛ք» հրահանգը տուած են:

* * *

Սիոնիստներուն կողմէ հրահրուած ըմբոստութիւններուն ատեն, ամէնէն շատ վստահուած անձերը համալսարանական ուսանողներն են, որոնց մոլորեցնելը շատ դիւրին է:

Ասոնք, իրենց երիտասարդական աւիւնով և անպատասխանատու կեցուածքով [որովհետեւ ասոնց մեծամասնութիւնը սեփական, ծնողաց միջոցով իրենց կրթաթոշակը կ'ապահովեն] պատրաստ են ամէն տեսակ արկածախնդրութիւններու դիմելու:

Այսպէս եղաւ Մայիս 1968-թ.ին, Ֆրանսայի մէջ կատարուած կործանարար ցոյցերու ատեն:

Այս ցոյցերուն մասնակցողները մեծ մասամբ համալսարանական ուսանողներ էին, որոնք կ'առաջնորդուէին հրեայ Con-Bendit-ի կողմէ: Այս համալսարանական ցուցարարներուն նպատակն էր՝ Général De Gaulle-ը իշխանութենէն վար առնել, որովհետեւ զօր. տը Կոլը հրեայ-սիոնիստներուն դէմ արտայայտուած էր:

Եւ հրեաները յաջողեցան զօրավարը վար առնել:

Այսօր Հայաստանի մէջ ցոյց կատարող համալսարանական ուսանողներուն մէկ մեծ տոկոսն ալ, նորընտիր նախագահին՝ Սերժ Սարգսիսեանին հրաժարումը կը պահանջեն:

Ինչո՞ւ: Որովհետեւ խարդախութիւն կատարուած է եղեր...

Մենք կը կարծենք, որ այս ցուցարարներուն պարագլուխը եղողին բուն նպատակը՝ հայերու համար միակ փրկարար ազգը եղող ռուսներուն հետ եղբայրական քաղաքականութիւն մը վարող, հայ-ռուս աւանդական գինակցութիւնը անխախտ պահել ուզող Սերժ Սարգսիսեանը վար առնել և երկիրը թրքա-արեւմտամէտ քաղաքականութեամբ առաջնորդել է:

Խեղճ հայ ժողովուրդ, այսքան ցեղասպանութիւններէն յետոյ, մինչեւ այսօր ալ չես հասկցած, թէ ով է թշնամիդ, և ով է քու բարեկամդ:

* * *

Բայց այս ցաւը միայն հայ ժողովուրդին ցաւը չէ այսօր: Այս ցաւը համաշխարհային է, համամարդկային է:

Ամբողջ աշխարհը կը տառապի, կը ջարդուի, ոտքի տակ կ'երբայ սիոնիզմ ըսուած աշխարհի մեծագոյն «մաֆիա»ն հանդիսացող հրէշին արիւնարբու ծրագիրներուն գործադրութեան պատճառաւ:

Նայեցէք Իրաքի վիճակին: 1990-թ.էն ի վեր, Իրաքի մէջ, Պուշ ըսուած սիոնիստներու կամակատարին ու անոր գործակալներուն դիւային նենգութիւնները միլիոնէ աւելի իրաքցիներու սպանութեան պատճառ եղան:

Նոյնն է պարագան Աֆղանստանի մէջ: Այսօր Աֆղանստանի մէջ և աշխարհի տարածքին վրայ կատարուած ծայրահեղ իսլամ ահաբեկչութիւններուն գլխաւոր պատասխանատուն J. Carter-ի խորհրդականը եղող Brezinsky-ին է:

Brezinsky-ն է որ ստեղծեց, արաբ. միապետութեան մը հետ գործակցաբար, Աֆղանի մէջ ծայրայեղ իսլամ. թալիպաններու շարժումը, որ Սովետական Միութեան դէմ պայքարին: [Այսօր, այս

տխրահուշակ Brezinsky-ն խորհրդականն է Ամերիկայի նախագահական թեկնածու, սեւամորթ Օպամա-յին]։

Անպայման կը հետեւիք այսօր Փաքիստանի մէջ կատարուող ոսնձգութիւններուն ուր, ծայրայեղ իսլամները, ամէն օր, հարիւրաւոր անմեղներուն սպանութեան պատճառ կ'ըլլան։ Բայց ամէնէն հրեշային և ողբերգական պատերազմը կը կատարուի այսօր Կազախի մէջ, տեղի պաղեստինցիներուն դէմ։

Այսօր, աշխարհի վրայ, պաղեստինցիներուն բազմածնութեան պատճառաւ, հրեաներուն ապագան վտանգի մէջ է...

Եւ հրեաները այս պատճառաւ, պաղեստինցիներուն դէմ ցեղասպանութիւն կը գործեն։ Պարզապէս՝ իր թէ, պաղեստինցիներուն արձակած փոքր հրթիռներուն իբր փոխադարձութիւն։ [Այս հրթիռներէն մինչեւ հիմա մէկ քանի հրեայ մահացած է]։ Այսօր հրեաները, Կազա-ի պաղեստինցիներուն դէմ, իսկական ցեղասպանութիւն կը գործեն։

Եւ հրեաները պաղեստինցիները ցեղասպանութեան ենթարկելու իրենց ծրագիրը չեն ծածկեր։

Այստեղ կը հրատարակենք այսօրուան՝ 1 Մարտ 2008 թուակիր ֆրանսական «Nice Matin» - թերթին այս մասին տուած տեղեկութիւններուն ամփոփ թարգմանութիւնը.

Մինչեւ այսօր Իսրայէլի քաղաքական իշխանութիւնը չէր նախատեսեր ցամաքային որեւէ յարձակումի կատարում մը Կազախի վրայ, զգուշանալով գինուորական և քաղաքային կորուստներէ... րայց ճիմա, ի տես կացութեան վատթարացումին, «լայնածիր ցամաքային յարձակում մը այլեւս չի մտանոգեր Երրայական պետութիւնը» - վստահեցուց Պաշտպանութեան նախարար Էնուտ Պարաք»։

Թուրքերը, հայերը ցեղասպանութեան ենթարկեցին, որ հայերուն հայրենիքը գողնան։

Նոյնը կ'ընեն այսօր հրեաները, պաղեստինեան հողերուն ամբողջութեամբ տիրանալու համար։

Պաղեստինցի բնիկ ժողովուրդը ցեղասպանութեան կ'ենթարկեն։

**Մեր ԱՅՍ ԳՐՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՁՕՆԵՆՔ՝ 1915-Ի ՄԵԾ ԵՂԵՌՆԻ
ԱՆՄԵՂ ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒՆ**

Ո՞Վ Է ՀԱՅՈՒՆ ԲՈՒՆ ԹՇՆԱՄԻՆ

**ՀԱՅՈՒՆ ԲՈՒՆ ՀԱԿԱՌԱԿՈՐԴԸ... ՀԱՅԵ՞ՐՆ ԵՆ, ՀԱՅՈՒ
ԱՆՈՒՆ ԿՐՈՂ ԴԱՒԱՃԱՆՆԵՐ**

**... ԱՍՈՆՔ ԷՒՆ ՈՐ 1453-Թ.ԷՆ՝ ՊՈԼՍՈՅ ԳՐԱՒՈՒՄԷՆ Ի ՎԵՐ
ԿԸ ԾԱՌԱՅԵՆ ԹՈՒՐԳԵՐՈՒՆ ԵՒ ՀԱՅՈՒԹԵԱՆ ԹՇՆԱՄԻ-
ՆԵՐՈՒՆ**

**ԵՒ ԵԹԷ «ԱՍԱԼԱ»Ն ԱՌԱՋԻՆ ՕՐԷՆ, ՆԱԽ ԵՒ ԱՌԱՋ ԱՅԴ-
ՊԻՄԻՆԵՐԸ ՎՆԱՍԱՋԵՐԾԵՐ, Գ. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ Ա. ՆԱ-
ԽԱԳԱՀԸ ԵՒ ԻՐ ՆՄԱՆՆԵՐԸ 1991-Թ.ԻՆ, ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱ-
ՅԱՍՏԱՆԸ ՔԱՆԴԵԼՈՒ ԿԱՐԵԼԻՈՒԹԻՒՆԸ ՁԷՒՆ ՈՒՆԵՆԱՐ...
... ՈՉ ԱԼ, ՄԵՐ ՎԵՐՋԻՆ ՅՈՅՍԸ ԵՂՈՂ ԱՅՍՕՐՈՒԱՆ ՀԱՅԱՍ-
ՏԱՆԸ ՄԱՐՏ 2008-ԻՆ, ԿՈՐԾԱՆՄԱՆ ՍԵՄԻՆ ԲԵՐԵԼ**

Տարօրինակ ազգ մըն ենք:

Անհերքելի իրականութիւն մըն է, որ պատմութեան առաջին
բուականներէն ի վեր, գոյութիւն ունեցող մեծ ազգ մը եղած ենք:

Բայց մենք՝ հայերս, առաջին օրէն մեր ունեցած ազգային հա-
րուստ ժառանգը անտարբերութեամբ վատնող հաւաքականութիւն
մը եղանք՝ պատմական բոլոր շրջաններուն, և մինչեւ այսօր:

... Եւ մեր ազգային ժառանգին կորուստին պատճառ եղողները
պատժել չենք գիտցած:

Վարդանանցի մեր պատերազմին պարսիկներուն դաւանափոխ
ըլլալու պահանջին կողմնակից եղող Վասակին, հայերը դաւանան
որակեցին: Եւ Վասակ անունը հայոց մէջ, մինչեւ այսօր, դաւանա-

նի ու հայրենադաւի հոմանիշ է:

Բայց հայերը, այս Վասակը իրենք չպատժեցին: Ան մնաց պարսիկներու ծառայութեան մէջ, և ի վերջոյ՝ պարսիկները Վասակը բանտարկեցին և յետոյ ալ վերջ տուին անոր կեանքին...

Որքան որ ծանօթ ենք՝ հայ ազգին շահերուն դաւանանող առաջնորդները հայոց կողմէ չեն պատժուած:

Կարգ մը երկրորդական դրուժաններ պատժուած են: Բայց ո՛չ այն առաջնորդները, որոնք հայ ազգին ու հայրենիքին մեծ մասին կորուստին պատճառ եղան:

Նայեցէք պատմութեան էջերուն...

Յոյները 1921-թ.ին Անաթոլիոյ ողբերգութեան պատասխանատու գորավարները մահուան դատապարտեցին:

Ֆրանսացիները 1914-1918-թ.ի պատերազմին. Վերտեօն-ի նակատմարտին մեծ հերոսը եղող Մարաշախտ Փեթէնը 1945-ին, գերմանացիներուն հետ գործակցած է ըսելով, ցկեանս բանտարկութեան դատապարտեցին...:

Վերադառնանք հայ պատասխանատուներուն:

Մինչեւ 1915 թուականը, իր ժողովուրդով և տարածքով գոյութիւն ունեցող Արեւմտեան Հայաստանին կորուստին - ուղղակի կամ անուղղակի - պատճառ եղած հայ առաջնորդները պատժուեցան: Ո՛չ:

Ընդհակառակը՝ այս առաջնորդներուն մեծ մասը, մինչեւ այսօր, իբր հերոս կը փառաբանուին:

Եւ եթէ Արեւմտեան Հայաստանի կորուստին պատճառ եղող հայ առաջնորդներէն հաշիւ պահանջուէր, անոնցմէ յետոյ իբր առաջնորդ գործողները և մանաւանդ՝ Լ. Տէր Պետրոսեանը պիտի չկարենար մեր բարգաւառ Սովետական Հայաստանը քանդել և վերջերս ալ՝ 1 Մարտ 2008-ին, մեր վերջին յոյսը եղող ներկայ փոքր Հայաստանը կործանման սեմին բերել:

Քանի մը օրեր առաջ էր, մեր բարեկամներէն հայ կրօնականի մը հետ, Երեւանի Մարտ 1-ի խոռվութեանց և անոնց պարագլուխներուն մասին կը խօսէինք:

Եւ այս հայրենասէր կրօնականը մեզի ըսաւ թէ՝ «Դուք դեռ, այդ ողբերգական դէպքերուն գլխաւոր դրդիչը, լաւ չէք ճանչցած:

Խնդրեմ՝ internet-ի վրայ նայեցէք՝

WWW. AVA. AM կայքէջին: ... Եւ internet-էն կէս ժամանոց

video-ն դիտելով, Գ. «անկախ» Հանրապետության Ա. Գախազահին ով ըլլալը սորվեցանք...:

«Նայիրի»ի 18 Մարտ 2008-թիւին մէջ, «Ա. Գախազահին»ին Հայաստանի մէջ ալ Ուքրանիոյ և Վրաստանի մէջ եղածին օրինակով, Փետրուար 2008-ի ընտրութիւններու շրջանին ըմբոստութիւններ պատրաստելու համար, Monte Carlo-ի մէջ, գրօսանաւի մը վրայ սիոնիստներուն կամ ասոնց պատուիրակատարներուն հետ համաձայնած ըլլալուն մասին գրած էինք:

* * *

1915-ի Եղեռնի 93-րդ տարելիցի այս օրերուն, ինչպէ՛ս չյիշենք Ռուբէն Սեւակին դեռ 1911-ին կատարած Գախատեսութիւնները՝

«Սակայն ստոյգ, ստոյգ կ'ըսեմ ձեզի, վտանգը մեծ է, շա՛տ մեծ, աւելի մեծ քան կրնանք ենթադրել:

Ժամանակն է հակազդելու՝ հակազդե՛նք: Մեզի նոր ոսկեդար մը պէտք է, նոր ոսկեդար մը:

Այլասերո՞ւմ, ոչ՝ վերածնունդ...»

1911 - Լոզան

Ռուբէն Սեւակ

Եւ մտածել՝ որ Ռուբէն Սեւակի «Այլասերո՞ւմ, ոչ, վերածնունդ» ըսած տարիներուն, Գրիգոր Զօհրապի առաջնորդութեամբ մեր խելացի կարծուած [իսկութեան մէջ տխմար] «մեծերը»՝ ֆարմասունութեան նամբով թուրքերուն հետ եղբայրութիւն կը քարոզէին:

* * *

ԺԱՆՆԻ ՍԵՒԱԿ-ԻՆ ԱՆՀԱՒԱՏԱԼԻ ՆԱԽԱՏԵՍՈՒԹԻՒՆԸ

Ժաննի Սեւակ 27 Հոկտեմբեր 1915-ին, Լոզանէն Պոլիս՝ Գերմանական դեսպանատան նամակ մը կը գրէ:

Այս նամակը գերմանացիներուն 1945-թ.էն սկսեալ և մինչեւ այսօր հրեական Holocauste-ին պատճառաւ ենթարկուած անվերջանալի անեծքներուն Գախատեսութիւնն ու իրականացումն է:

Ահա այդ նամակը՝

«Պոլսոյ կայսերական Գերմանիոյ դեսպանատան.

Աստուծոյ սիրոյն՝ գերմանացիներուն դէմ կատարուած այս

սարսափելի ամբաստանութիւններուն իրականութիւն չըլլալը ապացուցանելու համար, ամենագոյու կերպով միջամտեցէք թրքական իշխանութիւններուն մօտ՝ ազատեցէք ինչ որ կարելի է փրկել: Փրկեցէք անմեղ կանանց, երախաներուն. հիւանդներու և ծերերու արիւնը, որ երկինք կը բարձրանայ: Գերմանիոյ վրայ նզովք, Գերմանիոյ վրայ անէծք կրնայ տեղալ, եթէ Գերմանիա չ'ընէ այն ամէնը, ինչ որ կը գտնուի իր երկաթեայ ուժերուն ներքեւ:

Լոզան

27 Հոկտեմբեր 1915

Հելէն Զիլինկիրեան

ծնեալ՝ Աբէլ»

Այս նամակը՝ իր գերմաներէն բնագիրով, Մարտ 2008-ին, հրատարակուեցաւ Frankfurt-ի adk (Armenisch - deutsche korrespondenz) պարբերաթերթին մէջ:

Adk պարբերաթերթին խմբագիրը՝ Dr. Raffi Kantian այս թիւին մէջ Ռուբէն Սեւակի մասին ծաւալուն ուսումնասիրութիւն մը հրատարակած է:

1995-թ.ին, «Նայիրի»ի առաջին թիւերէն սկսեալ Ռուբէն Սեւակի մասին, անոր ստեղծագործութեան, անոր գաղափարականին, անոր կեանքին և նահատակութեան մասին իբր Ռուբէն Սեւակի եղբօրորդին, իբր խղնի պարտք մեր գիտցածները և լսածները շանացիք հրապարակել:

Բայց միշտ յոյս ունեինք, որ Ռուբէն Սեւակի մասին նոր տուեալներ, նոր գրութիւններ, նոր փաստաթուղթեր կըրնան գտնուիլ:

Եւ մեր այս յոյսը վերջերս իրականացաւ:

Քանի մը ամիսներ առաջ էր՝ Նիւ Եորքէն փրօֆ. Վահագն Տատրեանը հեռաձայնեց և ըսաւ, թէ իր բարեկամը՝ թուրք փրօֆ. Taner Akçam-ը թրքական արխիւներէն Ռուբէն Սեւակի սպանութեան և Ռուբէն Սեւակը սպանող ռերագործներուն մասին նոր փաստաթուղթեր գտած է:

Եւ փրօֆ. Վ. Տատրեանը մեզի տուաւ Minnesota-ի (USA) համալսարանը պատմագետի ամպիոն ունեցող փրօֆ. Taner Akçam-ի հեռախօսի համարը, և մենք հեռաձայնեցինք անոր, շնորհաւորեցինք ու շնորհակալութիւն յայտնեցինք Ռուբէն Սեւակի մասին կատարած նոր յայտնագործութեան համար:

Եւ Թանէր Աքչամ մեզի հետեւեալ տեղեկութիւնները տուաւ.

«Հայկական բերթերուն մէջ գրուած է, թէ Ռուրէն Սեւակը և իր չորս քախտակիցները սպաննող «քիւրտ Ալօ»ն և միւս ռերագործները, Չանղըրը-ի գինուորական հրամանատար Մեհմէտ Իզգէթ-ի կողմէ Tüney գիւղի մօտերը ձերբակալուած և Չանղըրը տարուած են և հոն, նորէն գինուորական հրամանատար Մեհմէտ Իզգէթ-ը, այս բոլոր ռերագործները սպաննել տուած է:

Հայկական բերթերուն մէջ տրուած այս տեղեկութիւնները իրականութեան չեն համապատասխաներ:

Որովհետեւ թրքական արխիւներուն մէջ իմ գտած փաստաթուղթերս կ'ապացուցանեն, որ քիւրտ Ալօ և միւս ռերագործները Չանղըրը-ի բանտէն Պոլիս՝ Թալաթ փաշա-ին աղերսագիր դրկած են: Եւ Թալաթ փաշան մասնաւոր հրամանագիրով քիւրտ Ալօն և միւս ռերագործները ազատ արձակել տուած է:

Ես, մօտատենէն, այս ողբալի դէպքերուն մասին գիրք մը պիտի հրատարակեմ, որուն մէջ պիտի գտնէք այս մասին բոլոր տեղեկութիւնները»:

Քանի մը օրեր առաջ վերջապէս, Պոլիսէն ստացանք Թանէր Աքչամ-ի հրատարակած այս գիրքը:

Եւ այս գիրքին մէջ նշուած գտանք փրօֆ.ին ըսած բոլոր ցաւալի իրադարձութիւնները:

Այս գիրքին վերնագիրն անգամ ինքնին շատ տպաւորիչ է -

«Ermeni meselesi hallolummustur»

[Հայկական հարցը՝ կարգադրուած է]

Շատ ծանօթ եղելութիւն է, թէ ցեղասպան Թալաթը 1915-ի եղեռնէն քանի մը ամիսներ յետոյ, գոռոգաբար յոխորտացած էր.

«Սուլթանները դարերով չկրցան կարգադրել Հայկական հարցը: Ես, Հայկական հարցը, քանի մը ամսուան մէջ կարգադրեցի»:

Թանէր Աքչամի գիրքին վերնագիրը, Թալաթ-ի այս գոռոգ խօսքերուն ակնարկութիւն և վկայութիւն է:

* * *

Այստեղ կը հրատարակենք՝

1.- Պէյրութ 1960-ին լոյս տեսած, Կարօ Գեորգեանի «Ամէնուն Տարեցոյցը»ին մէջ հրատարակուած՝ **«Դանիէլ Վարուժանի եւ Ռուրէն Սեւակի սպանութեանց վրիժառուն Մեհմէտ Իզգէթ պէյ»** վերնագրով գրութիւնը:

2.- Թանգեր Աքչամի Յունուար 2008-ին Պոլիս հրատարակուած «Ermeni Meseslesi Hallolunmustur» վերնագրով գիրքին առաջին էջին նկարը, ու նաեւ այս գիրքին մէջ Ռուբէն Սեւակի սպանութեան, ռերագործներուն և Թալաթ փաշայի մասին փաստաթուղթերով տրուած զգայացունց տեղեկութիւնները՝

ԱՄԷՆՈՒՆ ՏԱՐԵՑՈՅՑԸ - ԿԱՐՕ ԳԷՈՐԳԵԱՆ,

ՊԷՅՐՈՒԹ 1960, ԷՋ 223

**ԴԱՆԻԷԼ ՎԱՐՈՒԺԱՆԻ ԵՒ ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ
ՍՊԱՆՈՒԹԵԱՆՑ ՎՐԻԺԱՌՈՒՆ ՄԷՀՄԷՏ ԻԶԶԷԹ ՊԷՑ**

Տարեգրքիս անցեալ տարուան հատորով հրատարակեցինք Արամ Անտոնեանի յուշերը, Դանիել Վարուժանի, Ռուբէն Սեւակի և նոյնքան դժբախտ իրենց երեք ընկերներուն վայրագ սպանութեանց մասին [էջ 134-137]: Արամ Անտոնեան, իր այս յուշերուն մէջ, երախտագիտական տողերով արձանագրած էր վերաբերումը Չանդըբըի զինուորական հրամանատար և զինուորագրութեան նիւղին պետ Մեհմէտ Իզզէթ պէյի, որ «նախախնամութիւն մը եղած էր բոլոր աքսորականներուն համար և պատուոյ խնդիր դարձնելով իրեն համար՝ գործուած ռիթը, ամբողջովին բնաջինջ ըրաւ քիւրտ Ալօն և անոր հրամաններուն տակ գտնուող հրոսախումբը»:

- «Պարագաները այնպէս բերին, որ ամենագարհուրելի պայմաններու տակ գործուած այս ռիթը անպատիժ չմնայ,- կը գրէր Ա. Անտոնեան: - Թուրք սպայ մը՝ Մեհմէտ Իզզէթ պէյ պատուոյ խօսք տուած էր սօքք. Ռ. Չիլինկիրեանին, թէ ողջ-առողջ պիտի հասնի Պոլիս և թէ, որեւէ վտանգ չկայ ոչ իրեն և ոչ ալ իր ընկերներուն համար: Եւ սակայն, հակառակ Իզզէթ պէյի խոստումին, սպանութիւնները գործուեցան: Իզզէթ պէյ, այս եղածը լսելուն պէս կատաղած է: Անմիջապէս հեռագիր մը կը դրկէ Գասթէմուրնի Ռէշիտ փաշային, բողոքելով եղածին դէմ և աւելցնելով, որ զինուորական պատիւս ոտնակոխեցինք»: Իզզէթ պէյ չբաւականացաւ այս եղածով, այլ ինք անձամբ գնաց Թիւրքի, քննութիւն կատարեց և իրեն համար պատուոյ խնդիր մը դարձուց ոչ միայն ռերագործներուն, այլեւ անոնց ընկերներուն բնաջնջումը: Այս գործը գլուխ հանեց ան անողորմաբար, հետապնդելով և սպաննելով բոլորն ալ, անոնց

պետէն մինչեւ յետինը մեղսակիցներուն, և ասիկա՝ տաքը տաքին, շատ կարն ատենուան մը մէջ»:

Իզգէք պէյ եղաւ մէկը այն հագուագիւտ թուրք պաշտօնատարներէն, որոնք չկրցան իրենց մէջ խեղդել մարդասիրական զգացումները և իրենց կեանքն ու դիրքերը վտանգելու գնով, օգնեցին մահապարտ բազմութիւններուն:

* * *

Փրօֆ. Թանէր Աքչամ իր «Ermeni meselesi hallolunmustur» - «Հայկական հարցը կարգադրուած է» վերնագիրով գիրքին մէջ հրատարակած այս փաստաթուղթերը, թէ՛ Ռուբէն Սեւակի սպանութեան և թէ հայ ազգի ցեղասպանութեան համար թացառիկ կարեւորութիւն ունին:

Այս գիրքին մէջ Թանէր Աքչամ փաստաթուղթերով կ'ապացուցանէ, թէ Թալաթ փաշա անձամբ ծրագրած և գործադրել տուած է Ռուբէն Սեւակի սպանութիւնը՝ Չանղըրը-ի Իթթիհատ Վէ Թերաքքի կուսակցութեան պատասխանատու Gemal Oguz-ի գլխաւորութեամբ:

Եւ սպանութեան գործադրուելէն յետոյ ալ, նոյն ինքն՝ Թալաթ, անձամբ դրկած (chifre-ով) ծածկագիր հեռագիրներով, ազատ արձակել տուած է ռնրագործները:

Մենք կ'ուզենք հրապարակաւ շնորհակալութիւն յայտնել փրօֆ. Թանէր Աքչամին՝ Ռուբէն Սեւակի սպանութեան և Հայկական ցեղասպանութեան շուրջ մինչեւ հիմա գաղտնի մնացած եղելութիւն ու մանրամասներ լուսաբանող իր այս բացառիկ յայտնագործութիւններուն համար:

Մեր գրութեան սկիզբը նգոված էինք հայ դաւանանքները և ազգին վնասարարները որոնք հայկական ցեղասպանութեան պատճառով կամ գիտակցաբար թէ ակամայ մեղսակից եղան և այս ցեղասպանութեան հետեւանքով ալ մեր հայրենիքին 90 առ հարիւրը կորսնցուցինք:

Այսօր մեծ եղեռնին 93-րդ տարելիցն է:

Հայ ժողովուրդը 24 Ապրիլ 2008-ին կրկին պիտի յիշատակէ մեր անպատիժ մնացած ցեղասպանութիւնը:

Ինչպէ՞ս չնգովել անոնց, որոնք գործեցին Հայկական ցեղասպանութիւնը, ազգասպանները որոնք ցարդ չեն պատժուած, անոնք որ մեղսակից եղան եղեռնագործութեան բայց մինչեւ այսօր անոնցմէ հաշիւ չէ պահանջուած, և ոչ ալ ազգին բռնախլուած իրաւունքները վերադարձուած են հայութեան:

Եւ հայ ազգը մինչեւ այսօր դեռ կ'աշխատի և կը պաղատի, որ հայկական ցեղասպանութիւնը ընդհանուր ճանաչում գտնէ:

Այդ պատճառաւ կրկին պիտի հառաչենք՝ երանի, թէ Արդարութեան ձեռքը անցեալ և նորեկ դաւանանքները և պատասխանատուները պատժէ:

8 Ապրիլ 2008 թուակիր «Նայիրի»ի մէջ գրուած էր թէ՛ «... Եւ ժամանակը պիտի գայ և Ռուբէն Սեւակին իրական արժէքը պիտի գնահատուի»:

Վերջին շրջաններուն գոհունակութեամբ կը տեսնենք, թէ Ռուբէն Սեւակի մասին թերթերուն մէջ զարթօնք մը կայ:

Եւ զանազան տեղեր Ռուբէն Սեւակի մասին ելոյթներ, հանդիսութիւններ կը կատարուին:

Ուրիշ եղելութիւն մը՝ որ մեզի շատ ուրախութիւն պատճառեց:

24 Ապրիլ 2008-ին, Փարիզի մէջ հայկական ցեղասպանութեան ոգեկոչման օրերուն, Ռուբէն Սեւակի դուստրը՝ Շամիրամ Սեւակ Փարիզ հրաւիրուած է, որ Փարզի L'arc de Triomphe-ի յուշարձանին առջեւ կատարուելիք արարողութեան, Անժանօթ Զինուորի կրակը Շամիրամ Սեւակ ի նք բոցավառէ իբր խորհրդանիշ-ներկայացուցիչ 24 Ապրիլի նահատակներուն:

Այստեղ կը հրատարակենք այս մասին լոյս տեսած յայտագրին մէկ մասը:

Commémoration

Du 93ème anniversaire du génocide

Paris

Mercredi 23 Avril

18h: Ravivage de la flamme au Soldat inconnu par Shamiram Sevag, survivante du génocide et fille du poète-écrivain Roupen Sevag, accompagnée d'enfants, à l' Arc de Triomphe, place Charles de Gaulle-Etoile.

19h: Veillée des jeunes - Concert et lancement officiel de la pétition pour la reconnaissance par les Turcs du génocide, en présence d' Ali Ertem. Parvis de Notre-Dame de Paris.

Jeudi 24 Avril

11h30: Réception à la Mairie de Paris - Hommage aux victimes du génocide rendu par Bertrand Delanoë, dans les Salons de L'Hôtel de Ville de Paris (invitation obligatoire).

16h30: Rassemblement et prises de paroles: *Pour rendre hommage aux 1,5 millions d'Arméniens assassinés lors du génocide de 1915.

*Pour condamner le négationnisme de la Turquie en tant que stade suprême du génocide: *Pour affirmer le droit des fils de survivants debout et déterminés à obtenir enfin justice pour le peuple arménien. Dépôts de fleurs au pied de la statue de Komitas.

Interventions de Monsieur Jean-Michel Quillardet. Grand Maître du Grand Orient de France et de dirigeants politiques français, devant la statue de Komitas, Place du Canada-Cours Albert I - 75008 Paris.

18h: Manifestation, de la statue de Komitas à l'Ambassade de Turquie, avenue des Champs-Élysées.

Dimanche 27 Avril...

* * *

Շամիրամ Սեւակը այսօր 94 տարեկան է: Եւ բժիշկներուն հաստատումով՝ բացառիկ երեւոյթ մը՝ իր մարմնային կազմուածքով և իր կենսունակութեամբ:

Կարծէք, թէ իր «Հօրը չապրած» տարիները, երիտասարդութիւնը Շամիրամին տուած է «Բարձրեալը»:

Գրեթէ ամէն տարի Շամիրամ, Երեւանի Ռուբէն Սեւակի անուան դպրոցին մէջ, իր հօրը յիշատակին կատարուած հանդիսութիւններուն ներկայ կ'ըլլայ:

Դեռ քանի մը ամիս առաջ էր, որ Շամիրամ Սեւակ կրկին Երեւան էր՝ Ռուբէն Սեւակի անուան դպրոցին մէջ կատարուած

գրող Թորոս Թորանեանին մրցանակատուչութեան հանդիսութեան:

Երեւանի հեռատեսիլը շատ անգամներ կը սփռէ Շամիրամ Սեւակի հետ կատարուած հարցազրոյցները:

Երեւանցիները շատ լաւ կը հանչնան Շամիրամ Սեւակը և կ'ըսեն, քե՛ «Շամիրամ Սեւակը մեր քագուհին է»:

Այստեղ կը հրատարակենք պատմական երկու նկարներ.

1.- 2005-ին Սելանիկ հրատարակուած [յունարէն և անգլերէն] «The Armenian Community of Thessaloniki» [Սելանիկի հայկական համայնքը] գիրքին մէջի Սելանիկի հայկական գերեզմանատունը և Ռուբէն Սեւակի մօր՝ Արմաւենի Զիլինկիրեանի դամբանը, որուն վրայ արձանագրուած է:

2.- Շամիրամ Սեւակ Սելանիկի մէջ, իր մեծ մօր դամբանին առջեւ, Մայիս 1994-ին:

Նկարին մէջ կ'երեւին [ձախէն՝ աջ] Աղաւնի Թերզեան [մեր ազգականուհին], Շամիրամ Սեւակ և Մաննօ Խաչատուրեան [Ռուբէն Սեւակի քրոջ՝ Հայկանուշ Զիլինկիրեանի աղջիկը]:



ՆԱԹԻՐԻ
ԹԻԻ 321, 11 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2011

ԱՆՀԱԻԱՏԱԼԻ ԲԱՅՑ ԻՐԱԻ...

... ե՛ի եթէ Ինժե՛ր ՎԻՃԱԿՈՒԷՐ, ՈՐ ՄԵՐ ՆԱՀԱՏԱԿ
ԳՐԱԳԷՏՆԵՐԷՆ ՄԷԿՈՒՆ ՅԻՇԱՏԱԿԻՆ [ԲՈԼՈՐՆ ԱԼ
ՅԱՐԳԵԼԻ ԵՆ, ԲՈԼՈՐՆ ԱԼ ՀԱԻԱՍԱՐ ԵՆ] ԱՐՁԱՆ ՄԸ
ԿԱՆԳՆԵՆՔ, ԻՆՉՊԷՍ ԱՆԾԱՆՕԹ ՋԻՆՈՒՈՐԻ ԱՐՁԱՆՆԵՐԸ
ԿԱՆ, ՄԵՆՔ ԱԼ ՄԷԿ ԱՐՁԱՆ ՄԸ ԸՆՏՐԵՆՔ՝ ՀԱՅ ՆԱՀԱՏԱԿ
ՄՏԱԻՈՐԱԿԱՆՆԵՐԸ, ՀԱՅ ՆԱՀԱՏԱԿ ԳՐԱԳԷՏՆԵՐԸ
ԽՈՐՀՐԴԱՆՇՈՂ՝ ԵՍ ՊԻՏԻ ՈՒՋԷԻ

ՌՈՒԲԷՆ ՍԵԻԱԿԻՆ

ԱՐՁԱՆԸ ԲԱՐՁՐԱՑՆԵԼ, ԻԲՐԵԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՄԱՐԴ,
ԻԲՐԵԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԳՐԱԳԷՏ ԵՒ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԻՉ 13 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1985-NICE ԱՆԴՐԱՆԻԿ
ԾԱՌՈՒԿԵԱՆ ՌՈՒԲԷՆ ՍԵԻԱԿԻ 100-ԱՄԵԱԿԻ
ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՀ ԵՒ ԲԱՆԱԽՕՍ
ԱՆԴՐԱՆԻԿ ԾԱՌՈՒԿԵԱՆԻ 13-10-1985-Թ.ԻՆ
ԿԱՏԱՐԱԾ ՆԱԽԱՏԵՍՈՒԹԻՒՆԸ,
26 ՏԱՐԻՆԵՐ ՅԵՏՈՅ ԻՐԱԿԱՆԱՑԱԻ

ԲԱՅՑ Ո՛Չ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ...

**ԱՅԼ՝ 23 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2011-ԻՆ,
ՖՐԱՆՍԱՅԻ ՆԻՍ ՔԱՂԱՔԻՆ ՄԷՋ**

Այստեղ նախ կը հրատարակենք՝ 1915-ի Հայկական ցեղա-
սպանութեան իբր խորհրդանիշ՝ Ռուբէն Սեւակի յուշարձանին
բացման հանդիսութեան հրաւիրագիրը:

**DANS LE CADRE DU
VINGTIÈME ANNIVERSAIRE DE L'INDÉPENDANCE
DE LA RÉPUBLIQUE D'ARMÉNIE**

Christian ESTROSI
Maire de Nice
Président de Nice Côte d'Azur

a l'honneur de vous convier au

Dévoilement de la stèle commémorative

ROUPEN SEVAG

A la mémoire du génocide arménien de 1915

En présence de

Karen KARAPETYAN
Maire d'Erevan

Son Excellence
Viguen TCHITETCHIAN
Ambassadeur d'Arménie en France

et

Shamiram SEVAG

Vendredi 23 Septembre 2011

Jardin d'Arménie
1, promenade des Anglais
Angle avenue Gustave V et avenue de Suède-Nice

RSVP:
Protocole 0497134024

Un devoir de mémoire, celui du génocide des Arméniens

En ce vingtième anniversaire de l'indépendance de l'Arménie, hier 23 septembre, une stèle commémorative du génocide arménien de 1915 a été dévoilée au jardin d'Arménie.

Elle porte le nom de Roupen Sevag, poète et martyr exécuté en 1915.

En présence de Christian Estrosi, Karen Karapetyan, maire d'Erevan-capitale arménienne jumelée avec Nice - de la fille de Roupen Sevag, Shamiram Sevag, et d'une foule de badauds, un hommage a été rendu.

Roupen Sevag, poète devenu symbole et martyr de la folie turc, a défendu jusqu'à son dernier souffle les valeurs arméniennes.

À 97 ans, Shamiram, sa fille, continue le combat mené par son père et rend ce genre de commémoration possible.


"Shamiram, vous avez consacré votre vie à perpétuer le souvenir de votre père, de votre peuple", témoignait Christian Estrosi, le ton grave.

La France, et en particulier Nice, qui possède une grande communauté arménienne, se devait de dédier cette matinée et cette stèle en symbole pour ce qui fut l'un des plus grands drames de l'Histoire.

E. M.



Shamiram Sevag, fille de Roupen Sevag, devant la stèle commémorative du génocide des Arméniens de 1915. (Photo E. M.)



A LA MEMOIRE
DES 1 500 000 VICTIMES DU
GENOCIDE DES ARMÉNIENS
PERPETRE DANS L'EMPIRE OTTOMAN
PAR LE GOUVERNEMENT JEUNE-TURC EN 1915

Ի ՅԻՇԱՏԱԿ
1915-ԻՆ ԵՐՄՏԹՈՒՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ
ԳՈՐԾՍԾ ՅԵՂԱՍԴԱՆՈՒԹԵԱՆ
1 500 000 ՀԱՅ ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒՆ



*"Nous voici, nous arrivons, imposants
Avec les marques de notre espoir de granit,
Pour faire parler les disparus sans nom"*

*Roupen Sevag, poète et médecin
mort en martyr en 1915 à l'âge de 30 ans*

Cette stèle a été dévoilée le 23 septembre 2011
en présence de

M. Christian Estrosi, Député des Alpes-Maritimes
Maire de Nice, Président de Nice Côte d'Azur
et de M. Karen Karapetyan, Maire d'Erevan
à l'occasion du 20^e anniversaire
de la République d'Arménie
proclamée le 21 septembre 1991

Կը հրատարակենք նաեւ՝ այս հանդիսութեան մասին «NICE MATIN» օրաթերթին մէջ 24-9-2011-ին լոյս տեսած գրութիւնը, ուր կ'երեւի Ռուբէն Սեւակի որբացած դուստր՝ Շամիրամը, հանդիսութեան օրը, իր նահատակ հօր յուշարձանին առջեւ:

Յուշարձանին վրայ տեսնուած Ռուբէն Սեւակին նկարը: Անկէ քիչ վարիւնը՝ մեր հրատարակած պատկերին ձեւափոխուած մէկ նմոյշն է:



Յուշարձանին վրայ արձանագրուած Ռուբէն Սեւակին գրութիւնը՝ հատուած մըն է «Կարմիր գիրք»ին մէջ եղող «Ահա մենք կուգանք» բանաստեղծութենէն:

Այստեղ կը հրատարակենք այս շատ խորիմաստ բանաստեղծութիւնը՝ ամբողջութեամբ:

«ԱՀԱ ՄԵՆՔ ԿՈՒ ԳԱՆՔ»

- «Ահա- կ'ըսեն անո՛նք որ
Կու գան, չէ՞ ք լսեր տրոփիւնն ահաւոր-
Մութը շնչելէն աչքերնիս կուրցած
Ու արեան հոտէն ռնգունքնիս լայն բաց:

«Ահա մենք կու գանք, ուսով հրելով
Մեր Ցաւին Անիւր դարահովով,
Երկրագունտիս վրայ, խաւարին մէջէն,
Բոլո՛ր անոնց վրայ որ դեռ կը շնչեն...»:

«ԱՀԱ ՄԵՆՔ ԿՈՒ ԳԱՆՔ, ԱՀԵՂԱԿՈՐՈՎ
ՄԵՐ ՅՈՅՄԻՆ ԿՈՒԱՆԻԹ ԳԱՐՇԱՊԱՐՆԵՐՈՎ
ԽՕՍԵՑՆԵԼՈՒ ԱՆԱՆՈՒՆ, ԿՈՐԱԾ,
ԳԵՐԵԶՄԱՆՆՈՑՆԵՐՆ ՀԱՄԱՅՆԱՏԱՐԱԾ...»:

«Ահա մենք կու գանք ու մենք՝ նզո՛վքն ենք,
Ու խաւարին մէջ մխուած տե՛զը նենգ.
Վրէժներու հիդրան ենք փայփայելի,
Մե՛նք, սարափահա՛ր ու սարսափելի...»:

«Մենք՝ հին ուխտերու նո՛ր ուխտագրնաց.
Մենք՝ Սուսերը բիրտ ու Գիրքն օրինաց.
Մենք՝ Ցասման ջրվե՛ժը սարի կողէն,
Մենք՝ Աղջամուղջի ծընունդ լուսեղէն...»:

«Զե՛զի՝ որ քերծուած մեր մորթերէն ձի՛գ
Հարսնիքի, Մեղքի վրաններ կառուցիք...
Ու Ձե՛զ՝ եւրոպեան դիք որ շնագիւն
Սակարկեցիք մեր արեան լոուքեան գին...»:

«Զեր սրտին դոնե՛րը փակեցէք խուլ,
Սուրե՛ր սըրեցէք, սըրեցէք զանխո՛ւլ,
Սըրեցէ՛ք ձեր խղնին վրայ քարացած,
Ու ատամներուն վրայ ձեր գաւակաց...»:

«Ահա, մենք կու գա՛նք, հովերուն մէջէն
Զե՛ք լսեր ոսկրեր որ կը շշնչեն...»:
Ամէնքս ալ զազիր դիակ, խոռոչ գանկ,
Ահա մենք կու գանք, ահա մենք կու գանք...»:

«Կարմիր գիրքը» - 1910 ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿ

Վերը ընդգծուած չորս տողերը՝ ֆրանսերէնի թարգմանութեամբ արձանագրուած են Յուշարձանին վրայ:

* * *

Ֆրանսայի գրեթէ բոլոր հայաշատ քաղաքներուն մէջ, 1915-ի Եղեռնի յուշարձաններ գոյութիւն ունին:

Բայց մինչեւ երէկ, Nice-ի մէջ, Եղեռնի յուշարձան գոյութիւն չունէր:

Հակառակ որ Nice-ի քաղաքապետները շատ հայասէր եղած են՝ սկսելով մասնաւորաբար վերջին շրջաններու քաղաքապետներ՝ Jacques Medecin և Jacques Peyrat-էն: Jacques Peyrat-ն 2007-ին Երեւան այցելած էր: Nice և Երեւան քաղաքները՝ երկուորեակ քաղաքներ հռչակուած էին...

... Նիսի ներկայի քաղաքապետը՝ Christian Estrosi-ն վերջապէս Ցեղասպանութեան յուշարձանի պակասը լրացուց...

Եւ 23 Սեպտեմբեր 2011-ին, Nice-ի կեդրոնական, ամէնէն Touristique վայրին մէջ, այս հայկական Յուշարձանը լոյս աշխարհ եկաւ:

Այս յուշարձանը՝ բոլորովին նախաձեռնութիւնն է՝ Նիսի քաղաքապետութեան և քաղաքապետ Christian Estrosi-ին:

* * *

Նիսի Եղեռնի յուշարձանին Ռուբէն Սեւակի անունով մկրտուելու հարցին մէջ կը կարծենք, որ Շամիրամը մեծ դեր ունեցած է:

Շամիրամը վերջին տարիներին Նիսի մէջ կատարուած հայկական հանդիսութիւններուն ներկայ եղած է...:

Եւ ծանօթացած է Նիսի քաղաքական անձնաւորութիւններուն հետ և բարեկամութիւն ստեղծած:

Այս անձնաւորութիւններէն մէկն է՝ Նիսի երեսփոխան և փոխքաղաքապետ Rudy Salles, որ շատ տպաւորուած է Շամիրամի անձնաւորութենէն և մասնաւանդ Շամիրամին հօր՝ Ռուբէն Սեւակի ողբերգութենէն...

Եւ 18 Յունուար 2001-ին, Փարիզի ֆրանսական Ազգային Ժողովին մէջ, Հայկական ցեղասպանութիւնը ճանչնալու համար տեղի ունեցած վիճաբանութիւններուն, Rudy Salles, իբր Նիսի երեսփոխան, ելոյթ մը ունեցած է...

Եւ Ֆրանսայի մէջ [և թերեւս ալ աշխարհի մէջ], առաջին անգամ

ըլլալով ֆրանսացի երեսփոխան մը, ֆրանսական Ազգային ժողովի քեմէն, Շամիրամին և Ռուբէն Սեւակին ողբերգութիւնը պատմած է...:

Այստեղ կը հրատարակենք Ֆրանսայի պետական պաշտօնաթերթ՝ «Journal Officiel»-էն պատնէններ: Այնտեղ լոյս տեսած են 18 Յունուար 2001-ին, ֆրանսական Ազգային ժողովի այդ օրուան նիստին Հայկական ցեղասպանութեան ճանաչման մասին տեղի ունեցած վիճաբանութիւններուն ամբողջական արձանագրութիւնները՝

1.- (Journal Officiel)-ին առաջին էջին պատնէնը

2.- (Journal Officiel)-ին 545-րդ էջին պատնէնը, որուն վերնագիրն է՝

«RECONNAISSANCE DU GENOCIDE ARMENIEN»

3.- (Journal Officiel)-ին 559-րդ էջին պատնէնը, որուն մէջ արձանագրուած է Նիսի երեսփոխան Rudy Salles-ին ելոյթը, որ կը պատմէ՝ Շամիրամի և Ռուբէն Սեւակի ողբերգութիւնը:

Այստեղ կը հրատարակենք նաեւ, 11 Յուլիս 2004ին, Նիսի Բարեգործականի սրահին մէջ, Շամիրամի 90-երորդ տարեդարձին ի պատիւ կատարուած ընդունելութենէն ալ երկու նկարներ:

Այս ընդունելութեան ներկայ եղած է նաեւ Նիսի երեսփոխան և փոխքաղաքապետ RUDY SALLES-ը:

Խնդրեմ՝ նայեցէք SALLES-ին քով կեցող Շամիրամին նկարներուն:

Ո՞վ կրնայ հաւատալ, թէ Շամիրամը 2004-թ.ին 90 տարեկան էր:





Նիսի Ռուբեն Սեւակի Յիշատակի Տան մէջ կը պահպանուի Ռուբեն Սեւակի արխիւը: Ջայն փրկած ենք թրքական դժոխքէն:

Այս արխիւին մաս կը կազմեն նաեւ Ռուբեն Սեւակի կողմէ Լոզանէն և զանազան վայրերէն իր ապագայ կնոջ՝ Ժաննի Աբելին [Գերմանիա] ուղարկուած բազմաթիւ բացիկներ:

Եւ կան նաեւ ուրիշ բացիկներ ալ: Ռուբեն Սեւակ իր այցելած վայրերուն մէջ, իր հաւնած տեղերու նկարներով բացիկներ գնած և իր հասցէին՝ Լոզան ուղարկած է:

Ռուբեն Սեւակի ձեռքով գրուած այս բացիկները՝ մինչեւ այսօր ոչ մէկ տեղ հրատարակուած և ոչ մէկ տեղ ցուցադրուած են:

Այսօր հանոյքն ունինք Ռուբեն Սեւակի այս անտիպ բացիկներէն [նամակագրին NICE և MONACO այցելութեան վերաբերող] մէկ մասը «Նայիրի»ի մէջ հրատարակելու:



CARTE POSTALE

La Correspondance de ce côté n'est pas acceptée par tous les pays (Se renseigner)

CORRESPONDANCE

ADRESSE

18 11 06
1818 06
1818 06

Etablissement de photographie Glaser frères, Nice

*Ma femme Tamari
C'est bon dieu. Depuis deux
jours je suis à Munich.
Te l'écris, j'ai de
plus que j'espère de
bonheur. Toujours à toi
et à ta famille à la*



*M^{lle} Tamari Apell
Villa Hess, Zimmermanbergstr.
Taubarg (Thuringen)
(Allemagne)*

Ռուբէն Սեւակ 1908-ի զարնան, Նիսէն իր նշանածին՝ Ժաննի Արեւին [Գերմանիա] ուղարկած այս բացիկը «RUBINS» ստորագրած է:



Ռուբէն Սեւակին Նիսէն Գերմանիա, Ժաննի Արէլին դրկուած այս քա-

Ռուբէն Սեւակին Նիսէն Գերմանիա, Ժաննի Արէլին դրկուած այս բացիկին նկարը կը
 ներկայացնէ Նիսի կեդրոնը գտնուող նեմապարտէզը, որ այժմ ցեղասպանութեան և
 Ռուբէն Սեւակի յուշարձանին կից է:
 Ռուբէն Սեւակի այս բացիկը շատ յատկանշական է: Որովհետեւ անոր վրայ իր
 նշանածին լատիներէն տառերով ու ճայերէն «Համբարներ» գրած է:
 Ռուբէն Սեւակ շատ մը նամակներ ունի Ժաննիին ուղղուած, որոնց մէջ
 իր նշանածին ճայերէն ստրվեցնել կ'աշխատի:




Ռուբեն Սեւակին 2 Մայիս 1908-թ-ին, Villifranche-են (Նիս) Լոզան՝ իր հասցեին ուղարկած քաղցկենյան մեկն է:

Այս քաղցկին մեջ տեսնուող LA CASCADE DU CHATEAU - Դղեակին չրվեծի նակատին տեղը, մինչև 1520-թ-ները, իսկական CHATEAU [դղեակ] մը կար: Բայց օսմանցի բուրբերը ըլլալով զինակիցը ֆրանսացիներուն, ծովէն ումրակոծեցին այս դղեակ-րերդը և քանդեցին «Chateau»ն:

Նիսը (իտալերէն NIZZA) մինչև 1860 թ-ը Իտալիոյ մաս կը կազմէր:



Ռուբեն Սեւակին 14 Ապրիլ 1908-ին, LAUSANNE-ի իր ճասգին ուղարկած բացիկը, որ կը ներկայացնէ Monaco-ի իշխանին պալատը: Ռուբեն Սեւակ այս բացիկը իտալական փոստով ուղարկած է:



CASINO DE MONTE-CARLO. — LA TERRASSE DU CASINO



Ռուբին Սևուկ Նիսեն [Ֆրանսա] Գերմանիա՝ Ժամնիին ուղարկած իր բացիկը որ ստորագրուած է՝ RUBINS - NICE
 Բացիկը կը ներկայացնէ՝ Monaco-ի պալատ-խաղարանը՝ ծովի կողմէն դիտուած:




CAISSE POSTALE "TUCKER"


POSTALIS
POSTCARD

LE MONACO, CUIS COMMERCIAL, la Téléphonie indépendante
 du Monaco vous propose votre adresse sur un timbre
 postal qui change à son adresse dans le monde et est à la
 hauteur de vos besoins. Cette possibilité de timbre
 ou timbre qui peut être sur papier ou sur carton.

R. Tchiling

Monsieur F. Appell

16. Steyerstrasse 16.

Eigentlich

(Allgemein)

**Ռուբեն Սևակին Նիսեն Գերմանիա՝ Ժաննիին հոր՝ FRANZ APPELL-ին ուղարկած
 բացիկը. որ ստորագրուած է «R. TCHILING»:
 Բացիկը կը ներկայացնէ Monaco-ի բերակողին, որուն վրայ կը գտնուին՝ Monaco-ի
 իշխանին պալատը և Monaco-ի կառավարական շէնքերը:**



NICE. PALAIS DE LA JETÉE.




Ռուբէն Սեւակի իր նշանածին մօր՝ MARIE APELL-ի

Նիսէն Գերմանիա ուղարկած բացիկը:

**Նիսի PALAIS DE LA JETÉE-ն մինչև 1943թ., Նիսի կեդրոնի ծովափին վրայ
կառուցուած հռչակապ պալատ-խաղարան մըն էր:**

**Նաե՛ւ կ'ըսուի, թէ գերմանացիները, պատերազմի տարիներուն, խաղարանին
երկաթեղերէն օգտուելու համար, կառույցին մետաղները քակած և Գերմանիա տարած
են: PALAIS DE LA JETEE-ն այսօր գոյութիւն չունի:**



**Թուրքերու կողմէ քանդուած CHATEAU-էն դիտուած Նիսի ընդհանուր տեսարանը:
 CHATEAU-ին տեղը այսօր նեմապարտեղ մը կայ:
 Բացիկին վրայ Ռուսէն Սեւակ (R. TCHILINGNICE) ստորագրած է:**




au premier
~~CARTE POSTALE~~

Cartes postales de France et de l'étranger par la Compagnie des Cartes Postales de France

| | |
|----------------|--|
| CORRESPONDANCE | ADRESSE |
| | <p><i>Monsieur</i></p> <p><i>R. Tchiling</i></p> <p><i>chez M. Scolticia</i></p> |

Յուշակոթող մը՝ Նիսի կեդրոնի նեմապարտեզին մէջ:
Նիս քաղաքին Ֆրանսայի միացման տարեդարձին առիւ կառուցուած:
Ռուբէն Սեւակ այս բացիկն ալ «R. TCHILING» [Ռ. ՉԻԼԻՆԿ] ստորագրած է:



Պուրեկն Սեւակին 14-4-1908-թ.ին իտալական փոստ-ին միջոցով
 Լոզան [Ջուրիցերիա], իր հասցեին ուղարկած բացիկը:
 Այս բացիկը կը ներկայացնէ Monaco-ի նշանաւոր, գեղակառոյց
 «ST. DEVOTE» եկեղեցին:
 Այս եկեղեցիին մէջ է, որ 2-7-2011-թ.ին, պսակուեցան
 Monaco-ի իշխանը՝ ALBERT II եւ CHARLÈNE-ը:

Արդեօք Ռուբէն Սեւակ 1908-ի գարնան, ինչն^օ և Լոզանէն Նիս և Montecarlo գացած էր:

Այս հարցումին պատասխանը պիտի գտնէք, նոյնինքն՝ Ռուբէն Սեւակի «Բժիշկի գիրքէն փրցուած էջեր» գիրքին «Կես խենթը»ի պատմութեան մէջ:

Ռուբէն Սեւակի «Բժիշկի գիրքէն փրցուած էջեր» գիրքը՝ առանց չափազանցելու ըսենք, որ միջազգային առողջապահական գրականութիւն-տեսութեան ամենէն կարեւոր գործերէն է:

Այստեղ կը հրատարակենք՝ Ռուբէն Սեւակի «Կես խենթը»

ԿԷՍ ԽԵՆԹԸ

Գեղեցիկ առտու մը անակնկալ նամակ մը առի Պոլսէն: Յայտնի ընտանիք մը կը խնդրէր ինձմէ իսկոյն Մոնթե-Քարլօ մեկնիլ՝ որովհետեւ հոն, իրենց տղան յանկարծակի խենթեցեր էր, ու իբրեւ փաստ՝ ներփակ սա՛ տեսակ նամակ մը դրկեր էին՝ տղուն կողմէ իրենց գրուած.

«Սիրելի սիրեցեալը»

Գրութիւննիդ ստանալով ստանալուս պէս ստացայ ու պատասխանը գրելով գրելիքէն կը գրեմ...»:

Ու այս ոճով 16 խոշոր երեսներ: Բայց ինչ որ զիս պարունակութենէն աւելի հետաքրքրեց՝ գիրերուն ձեւն էր: Հազար հինգ հարիւր տարիէ ի վեր Սահակ-Մեսրոպին գիւտը այսքա՛ն չարչարուած չէր: Այլանդակ հասակներով, դողդոջո՛ւն, բարակ ու կգիծեր, որոնք կ'ելլէին, կ'իջնէին, ո՛ւր երթալնին չգիտնալով կը շարուէին, տեղ մը կը մնային, կամ ինքզինքնին գտնելու համար ծուռ ու մուռ շրջանակ մը կը գծէին և խոշոր բառ մը ծակի մը մէջ կը սեղմէին, այնպէս որ բառերը՝ իմաստ մը տալու հիգով ստիպուած էին կրկնելու, տասնապատկուելու, քովէ քով շարուելու, գլուխ գլխի տալու՝ զինուորական գծով տողանցքի մը պէս:

«Յարգանքներուս յարգանքներով յարգանքներս...»:

Ու այս 16 էջերուն մէջ ստորակէտ մը, վերջակէ՛տ մը անգամ չկար: Որովհետեւ այդ ամենափոքր բանը որ կէտն է՝ իր տեղին դնելու համար բաւական որոշութիւն ու վճռականութիւն պէտք է, բա՛ն մը որ շա՛տ խելօքներուն անգամ կը պակսի: Ու նամակին պարունակութիւնը ա՛յնքան ալ ապուշ չէր: Տարտամ ու անհամարձակ կերպով ա՛յն կը հասկցուէր որ տղան իր դրամները կերեր, նոր ու-

կիներ կ'ուզէր. [այդ ոսկիններուն թիւը չկարդացուելիք բան մըն էր, թուաբանութիւններու մէջ չմտած բոլորովին նոր թուանշան մը...]:

Ճամբորդ մը ասկէ աւելի խելացի ի՞նչ բան կրնար պահանջել իր հարուստ ծնողքէն: Բայց անոնք կ'ենթադրէին որ անպատճառ տղան իր հարստութիւնը խաղաբաններուն մէջ կորսնցնելով խելքին եկած էր:

Շոգեկառքին մէջ 18 ժամեր քանի՛ անգամ կարդացի այդ 16 էջերը՝ մտքիս մէջ լոյս մը ծնցնելու համար, ու ընդհակառակը, այդ բոլոր սիրելիք սիրեցեալները, շոգեկառքին ցնցումները, անխնեւութիւն տկտնկոցը բոլորովին թմրեցուցին ուղեղս: Այդ նամակին ապշութիւնը անհանգստացուցիչ, գրեթէ վարակիչ բան մը ունէր իր մէջ: Ու կէս գիշերէ մը վերջ, բոլորովին շուարած, իջայ Մոնթե-Քարլոյի կայարանը:

Անձանօթ քաղաքի մը մէջ ո՞ւր երթալ այդ մութին: Նեղ փողոցի մը մէջ, դրան մը վերեւ, աղօտ լոյս մը կը պլպլար, մի՛ս-մի՛նակ ու կասկածելի - [չեմ գիտեր ինչ ո՞ւր]: Մօտեցայ. պանդոկ մըն էր, աղպղպեղ գէր կին մը սենեակ մը ցուցուց. բայց դրան կղպանք չունենալը անհանգստացուց գիս...:

- Հոս վստահութեան տուն մըն է, ըսաւ կինը... Պարոնը մի՛նակ է...:

- Այո՛, պատասխանեցի... սնտուկս կայարանը ձգած եմ...:

Փոքրիկ սենեակ մըն էր՝ թուղթե ծաղիկներով: Գաղջ, բափանցող, անանուն բոյր մը կար օդին մէջ, իգական հոտ մը: Լայն անկողինը հագի՛ւ ծածկուած էր. նմոթկած սաւան մը՝ խորհրդաւոր փոսերով: Մոմս մօտեցուցի, երկու կարմիր աղտեր տեսայ, դեռ քաց...:

- Մնաս բարո՛վ վստահութեան տուն...:

Ու նոր արշաւ մը սկսայ մութին մէջ, փողոցէ փողոց, մինչեւ որ յոգնած գլուխս մաքուր բարձի մը վրայ կարողացայ հանգչեցնել: Առաւօտուն, սովորական ժամիս արթնցայ: Դեռ սենեակը խաւար էր. քնացայ ու նորէն արթնցայ, նորէ՛ն խաւար. բայց այնպիսի խաւար մը՝ ինչպէս ըլլալու էր աղջամուղջը, դեռ Աստուած իր նշանաւոր «Եղիցի լոյս»ը չարտասանած: Այս որքա՛ն երկար էին Մոնթե-Քարլոյի գիշերները: Նորէն ու նորէն քնանալ փորձեցի, մինչեւ որ պանդոկապետը, կեանքիս վրայ կասկածելով՝ եկաւ դուռս բանալու: Ա՛յն ատեն միայն տեսայ որ այդ սենեակը

պատուհան մը, ծակ մը անգամ չունէր: Կատարեալ տուփ մը: Գիշերը չխեղդուիլս ալ հրա՛ջք մը պարգապէս: Ոսկեգօծ քաղաքներու գնահատութեան մէջ այս փաստն ալ մի՛ մոռնաք:

Դուրսը կէսօր էր: Ծիտա՛կ խենթիս հասցէին գացի ու տանը դիմաց նաշարան մը նստայ: Խորհրդաւոր դուռը բացուեցաւ, գլխուն վրայ կարմիր ֆետով մարդ մը երեւցաւ, մօտեցայ ու բարեւեցի:

- Աստուծո՛ւ բարին, ինչպէ՞ս էք, ըսաւ այնպիսի անտարբեր ձեւով մը, որ կարծես օրը տասն անգամ կը տեսնէր զիս:

Հետս նաշի նստաւ. հին բարեկամներու պէս, ասդիէն-անդիէն խօսեցանք: Ճիշդ է որ իր ուռեցած ականջները իրեն դեմքին ապուշ բանձրութիւն մը կու տային, բայց խենթ մը չէր այդ մարդը, հագա՛ր անգամ ո՛չ: Գաղտնիքին բանալին գտնել կարծեցի՝ իր հետ կիներու մասին խօսելով, երեսը թթուեցուց. խաղարաններուն ականարկութիւն ըրի, ուսերը թօթուեց: Արդէն շուարած, աւելի շփոթեցայ: Հապա եթէ սխալ մարդու օձիքէն բռնած ըլլայի՛...:

Ամուսնացած մարդ մըն էր. ինծի երկար-բարակ իր կնոջ վրայ խօսեցաւ՝ որ քիչ մը տկար ըլլալուն, այդ օրը միասին չէ կրցած ելլել. իր մեծ տղուն համար ինձմէ գուիցերիական վարժարանի մը հասցէն ուզեց. պզտիկ տղայ մըն ալ ունէր, շատ պզտիկ, որ այս օրերս ակոյս հանելուն՝ փորը քիչ մը թոյլ էր...:

Յետո՛յ միայն գիտցայ որ այս մարդը ո՛չ կիին, ո՛չ գաւակ ունէր, այլ պարգապէս ստելու փափաք մը. բայց բոլորովին բնական, անշահախնդիր, անվնաս սուտեր. արուեստը՝ արուեստին համար:

- Ծնողքիդ նամակ մը գրեր ես,- ըսի անհամարձակ:

- Չե՛մ յիշեր,- ըսաւ:

- Դրամներդ խաղարաններու մէջ կերեր ես:

- Սխա՛լ է:

- Հապա ո՞ւր գացին ոսկիներդ:

- Ցորեկները պաղպաղակ մը կ'ուտէի...:

- Հարստութիւնդ միայն պաղպաղակո՞վ հատցուցիր:

- Առտուներն ալ կաթ մը կը խմէի,- թոթովեց. աչքերը լեցան, մօրուքին մէջ արցունքներ գլտորեցան: Մեղքեցայ իրեն, գղջացի: Մարդը իր դրամը կերեր էր. ես ի՞նչ կը խառնուէի...: Բայց ան այսպէս չէր խորհեր, կ'ուզէր իր լացովը զիս համոզել իր անմեղութեանը վրայ, կ'ուզէր որ անպատճառ հաւատամ թէ ինք պարկեշտ մարդ մըն էր. ո՛չ կիներ, ո՛չ գինի, ո՛չ խաղը չէին հրապուրած զայն

[ու այս նի՛շդ էր]...: Բայց մարդիկ չար էին, իր գեշուքիւնը կ'ուզէին, փողոցէն անցած ատեն խորհրդաւոր կերպով իրարու աչք կ'ընէին. [աս ալ նիշդ էր, բայց իր գլխուն ֆէսին համար էր]: Շատեր զինքը սնանկացնելու, կախաղան հանելու կը ջանային, աշխարհիս ամէն ծայրերէն անվերջանալի ու անկարելի հաշիւներ կը դրկէին՝ իր բնա՛ւ չնանչցած մարդերէն...: Ա՛ս ալ նիշդ էր, ու ահա թէ ինչպէս...:

Այս խելօքիկ մարդը երբեմն-երբեմն իր մեծութեան երազներն ուներ. բայց մեծ ըսածս՝ շա՛տ մեծ, խելքի մտքի մէջ չսեղմող մեծութիւն մը: Քանի որ բոլոր մարդիկ իրմո՛վ կը զբաղէին ու դաւադրութիւններ կը սարքէին իր շուրջը, ուրեմն կրնար ըլլալ որ անգիտակցաբար ինք նշանաւոր անձ մը ըլլար, ո՞վ գիտէ, թերեւս ապագայ թագաւոր մը...: Այս մարդը իր երազին հաւատալու դժբախտութիւնն ուներ. ու այս տեսակ հիւանդներու բնական տրամաբանութիւնով, կ'ուզէր իր պատիկ կեանքը այդ մե՛ծ գաղափարին պատշանեցնել կանխաւ...: Իր բանակին համար ֆրանսական գործարանի մը իշու լաւագոյն կաշիէն թմբուկներ կ'ապսպրէր՝ բայց ա՛յնքան թիւով՝ որքան էշ չկար աշխարհիս երեսը... Եթէ այդ անունով միմիայն համեստ չորքոտանիներուն կ'ակնարկէր: Գերմանիոյ կայսեր ինքնագիր նամակ մը կը գրէր՝ անոր պատիկ աղջկան ձեռքը խնդրելու համար: Բայց այդ մեծ ամուսնութեան արժանավայել պալատ մըն ալ պէտք էր: Մոնթէ Քարլոյի բարձունքներուն վրայ սքանչելի ծախու ապարանք մը տեսեր, ու ամենայն պաղարիւնութեամբ, առանց սակարկութեան, թագաւորի վայել ձեւով ստորագրութիւն մը նետեր էր՝ գնելու խոստումի մը տակ:

Այդ օրէն ի վեր գործերը գեշցեր էին, սուտ ու փուն օրէնքներով իրմէ ահագին դրամներ կը պահանջէին տան մը համար՝ որ գնած չէր, պա՛րզ ստորագրութիւն մը միայն...: Ուրեմն իրա՞ւ այնքան մեծ արժէք ուներ իր մէկ ստորագրութիւնը:

Այսպիսի մեծամոլութիւններու մէջ հատուցեր էր դրամները, ու նորերը գտնելու համար այլանդակ շահադիտութիւններու մէջ կ'իյնար:

Գիտնականի մը ապսպրէր էր որ իր հաշուոյն արուեստական բրինձի գիւտին աշխատի:

Օր մը կարդալով որ Սթրատիվարիուս ջութակ մը հագարաւոր

ոսկիի ծախուեր էր՝ իսկոյն գրեք էր իտալական գործարանի մը, որ իրեն 12 տուգէն Սթրատիվարիուսներ հայթայթեն՝ տասը տարի վերջ տասնապատիկ գիներով ծախելու համար: Ու գործարանին ամիս մը պայմանաժամ տուեր էր. բայց այդ պայմանաժամին մէջ ինք բոլորովին ուրիշ բաներու վրայ կը մտածէր, ու բացարձակապէս կը մոռնար ջութակները:

Այդ բոլոր մեծաքանակ ապսպրանքներէն միայն երկո՛ւ բան պահած էր իրեն՝ որ սենեակին մէջ տեսայ: Ահագի՛ն, անծա՛յր-անվե՛րջ չուան մը որ շուարեցուց զիս:

- Ծովերուն լայնութիւնն ու խորութի՞նը պիտի չափես,- ըսի:

- Ո՛չ,- ըսաւ պաղարիւնութեամբ,- այստեղ անվստահելի երկիր է, եթէ սենեակը գան՝ պատուհանէն փախչելու համար է:

Բայց ես գիտէի որ դարձեա՛լ կը ստէր, իր սովորութեան համաձայն, այդ անհատում չուանը ինքզինքը ձեղունէն կախելու համար էր...:

Ու սնտուկ մը բացաւ. մէջը ի՞նչ կը կարծէք որ ըլլար. ածելինե՛ր, ածելինե՛ր, ա՛նքիւ, ա՛նհամար, բոլորն ալ իրարու նման ածելիներու լեռ մը...: Ես զարմանքէ զարմանք կ'իյնայի՝ երբ ան միեւնոյն մեծութեամբ ուրիշ սնտուկ մըն ալ բացաւ բերնէ բերան յար և նման ածելիներով լեցուն:

- Ասոնք սրցուածներն են,- ըսաւ:

Ասոր վրայ շատ չափողեցի, դուրս ելայ: Ահա մարդ մը որ գիշերները հագարաւոր ածելիներ կը սրցներ, ու ցերեկները խելօք-խելօք և ազատ-համարձակ փողոցներուն մէջ կը պտտէր. մինչեւ որ անմեղ մը չմեռցներ՝ Օրէնքը զայն յիմարանոց չէր կրնար նետել. որո՞ւ փոյթ թէ այլանդակ գնումներով փնացուցած ըլլար իր հարստութիւնը. ան կէս-խենթն էր. արդէն բժշկութիւնն ալ խենթութիւն չանուաներ այս հիւանդութիւնը: Իր յիշողութեան կորուստը, իր ըրածներուն մանկական տարօրինակութիւնը, իր աւելորդ ստախօսութիւնը, իր յաջորդական մեծամոլութիւնն ու մենամոլութիւնը, ու մանաւանդ իր խօսելու դժուարութիւնը և իր թափփած բռտերը, իր գիրերուն պէս՝ լեզուին ու մատներուն ալ դողալը, շատ որոշ հիւանդութեան մը անունը կ'արթնցնէին մտքիս մէջ:

Ինչպէ՞ս սկսեր էր այդ հիւանդութիւնը. ոչ թէ յանկարծակի [ինչպէս ծնողքը կը գրէին], այլ ամիսներու ընթացքին: Բարեկիրք

մարդ մըն էր ան, որ քիչ-քիչ իր բնութիւնը փոխեց: Նախ մեկա-
մաղձոտ դարձաւ, սենեակին մէջ բանտարկուած՝ օրը հարիւր սի-
կարէք կ'այրէր ու կը մարէր. յետոյ բարկացոտ դարձաւ, ընտիր հա-
սարակութեան մէջ յանկարծ զգուելի շարժում մը կ'ընէր, գարշելի
բառ մը կ'արտասանէր: Ծնողքը նախամեծար համարեցին զայն
նամբորդութեան պատրուակով տունէն հեռացնել, ու մինչեւ որ
վերոյիշեալ նամակը չստացան՝ խենթ ըլլալը չգուշակեցին: Արդէն
ծնողները ա՛յդպէս են. ա՛յնքան երկար ատեն որ դրամնին չուզես՝
խելացութեանդ վրայ չեն կասկածիր...:

Փարալիզի ժեներոկն էր այս հիւանդութիւնը, քոյրը այն միւս
սարսափելի հիւանդութեան՝ որ թապէս կը կոչուի, և որոնց
երկուքին ալ հայրը հինցած սիֆիլիզ մըն է: Բայց նախ պէտք էր
ստուգել որ այս վերջին ախտը ընդունա՞ծ էր ժամանակին...:

- Այո, - ըսաւ, - անանկ բան մը կար... հի՛ն պատմութիւն:

Արիւնին ու մարմինին քննութիւնը կասկած չձգեցին. դար-
մանելն անկարելի էր, ընելիքս պա՛րզ: Ջինքը շոգեճաւի մը
բժիշկին յանձնելով՝ շիտակ Պոլիս դրկեցի: Եւ ա՛յ մինակ մնացած՝
քիչ մը ատեն հանգչեցայ այդ սքանչելի քաղաքին մէջ: Վերադար-
ձիս՝ շոգեկառքին մէջ նորէ՛ն կարդացի նշանաւոր նամակը ու նո-
րէն երեւակայեցի այդ խենթը, բայց այս անգամ ո՛չ թէ տարտամօ-
րէն, հապա շա՛տ որոշ կերպով՝ այնպէս ինչպէս մօտաւոր ապա-
գայի մը մէջ պիտի ըլլար ան, անխուսափելիօրէն:

Ուղեղը իր այդ վերջին տարօրինակ լոյսերէն վերջ՝ բոլորովին
պիտի խաւարէր, սեփ-սեւ [առջի գիշերուան սենեակիս պէս],
սպուշութիւնը կատարեալ պիտի ըլլար, շարժումները անկարելի,
անկողնին պիտի գամուէր, լեզուն պիտի կորսնցնէր, ուտելը պիտի
մոռնար, օրը քսան սաւան պիտի աղտոտէր, օր մը պիտի գար ուր ալ
գայն կերակրելն ալ անկարելի պիտի ըլլար, իր է՛ն սիրելիներուն
գարշելի պիտի դառնար, պիտի նեխէր... ու ասիկա՝ անխուսա-
փելիօրէն:

Բայց այս պատմութիւնը անակնկալով սկսաւ և անակնկալով ալ
պիտի վերջանար: Տուն դարձիս՝ Պոլսէն նամակ մը գտայ, ուր ինծի
կ'իմացնէին որ խենթը՝ հոն հասած օրն իսկ՝ հագիւ բժիշկին
հսկողութենէն ազատած՝ հորը նետուէր էր... Կարծես դիտմամբ՝ իմ
անխուսափելի գուշակութիւններս զուր հանելու համար:

Բնութիւնը, որ ամէն չարիքին քով բարիք մըն ալ դրած է, այս

սարսափելի ախտին քով՝ իր դարմանն ալ ցոյց տուեր է. այս հիւանդները գիշեր-ցերեկ մէ՛կ բան կը մտածեն՝ անձնասպանութիւնը: Բժիշկները որ ուրիշ դարման մը չեն գտած՝ կը բաւականանան արգիլելով այդ բնական հակումը: Սակայն, լաւագոյն չէ՞ հոր մը աղտոտել քան տարիներով նուիրուած բոյն մը թունաւորել:

Ու հիմա կը յիշեմ դեռ այն օրը՝ երբ մօրուքին մէջ խոշոր արցունքներ կը գլտորցներ՝ զիս համոզելու համար որ ինք բարի ու խելօք մարդ մըն էր...: Ալ կը հաւատամ քեզի, խեղճ մարդ, դուն չես ստեր: Ստողները անո՛նք են, որ բու հոգւոյ՞ կորստեան վրայ կոկորդիլոսի արցունքներ կը թափեն...:

Թող կրօնագետներն ու բարոյագետները անձնասպանութեան վրայ վիհին. բող իմաստասիրական հատորներ արձակեն իրարու գլխուն. մէկը պիտի գտնուի՞ ինծի բացատրելու համար որ մարմնապէս ու հոգեպէս ի՞նչ պիտի արժէր այդ կեանքը, խօսելու, զգալու, շարժելու, սնանելու, մտածելու անկարող, մէզի մէջ փտած մսի կտոր մը՝ որ շանը նետես չ'ուտեր...:

Լօզան, 1913

ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿ

* * *

Ռուբեն Սեւակ 1 Մայիս 1908-թ.ին Նիսէն իր ընկերոջ՝ Հրանտ Նազարեանց-ին գրած նամակին մէջ, COTE D'AZUR-ի մասին իր տպաւորութիւնները կը յայտնէ:

Այստեղ կը հրատարակենք, շատ ալեկոծ գաղափարներով լի, այս զգայացունց բովանդակութեամբ նամակը՝

ՀՐԱՆՏ ՆԱԶԱՐԵԱՆԻՆ

Նիս, 1 Մայիս, 1908, իրիկուն

Հրանտս

... Միջերկրականի ավազներեն կը դառնամ. այս քաղաքը չեմ գիտեր ի՛նչ մ'ունի, որ կհուսահատեցնէ զիս. ու ծովը, անսահման ծովը, տարօրինակ կերպով կնզմէ հոգիս: Ես չգտայ այն անդորր երանությունը, զոր կ'երագեի վայելել կապույտներու երկրին մէջ: Ո՛չ ծովուն անհունը, ո՛չ երկնքին լայն երազը, ո՛չ արմավենիներուն փառքը, ո՛չ ալ նարնջենիին տարաշխարհիկ հրապույրը, ոչ ի՛նչ: Կ'զգամ, որ հոգիս չ'ուզեր կապվիլ այս բոլորին: Հոգիս ուր է որ. ա՛հ, չարադէտ կարօտը հեռաւոր պաշտելիին: Ո՛չ մեկ շունչ, ո՛չ մեկ ձայն... սեւ պատկերներ կմթնցնեն աչքերս. հոգիս

անօրինակ տեսիլներով կտանջվի. լալու, պոռալու պետքը կ'զգամ. ա՛հ, ահաւոր որոշումը հեռաւոր պաշտելիին:

Միջերկրականի աւազներէն կը դառնամ: Ի՛նչ տրտում էր վերջալույսն այս իրիկուն. ու ճա՛յնը, փշրվող, տանջվող, մաքառող, մեռնող ալիքներուն ճայնը. ու աւազներուն հուսահատեցուցիչ հեծքը. ու ջո՛ւրը, անսահման ու անըմբռնելի այդ տարրը. ու հեռաւոր մանիշակե քրթոացումները ու պաշտելի՛ն, որ քովս չէ. ու տարօրինակ, ահոելի զգացումը մեծ անհունին մէջ լուծվելու, անէանալու, մեռնելու... այս բոլորը, աղվորս, փոթորկոտ ծովու մը պէս կ'ուռեցնեն հոգիս. ու ես տրտում, ճմլված, կվերադառնամ Միջերկրականի ավազներէն: Ո՛ւհ, աչերս կսառին իրենց խոռոչին մէջ, ու հոգիս ամայի է՝ տրտմությանցս ծովուն մէջ կորսված ժայռե կղզիի մը պէս: Ա՛հ սերը, սե՛րը... ու դուն, Հրանտս, որ կլոես...

Եղբայրդ՝ Ռ. Սեւակ

Նախախնամութեան կը հաւատա՞ք... կամ չէ՞ք հաւատար - չենք կրնար գիտնալ:

Բայց ինչպէ՞ս կրնաք բացատրել սա հետեւեալ եղելութիւնները...

1.- Ռուբէն Սեւակ 1908-թ.ին Նիսի մասին կըսէ, թէ՝ «Այս քաղաքը կը յուսահատեցնէ զիս»,

2.- Բայց իր պաշտած կինը՝ Ժաննի Աբելը 1967ին, Նիսի մէջ մահացաւ: Նիսի մէջ թաղուած է:

3.- Իր դուստրը՝ Շամիրամը 60 տարիներէ ի վեր Նիս կ'ապրի: Այսօր 97 տարեկան է:

4.- Նիսի մէջ 1986-թ.ին Ռուբէն Սեւակի անուան «Յիշատակի տուն» մը ստեղծուեցաւ:

5.- Եւ 2011-թ.ին՝ այսօր, Նիսի մէջ, Ռուբէն Սեւակի յիշատակին յուշարձան մը գոյութիւն ունի.....

* * *

... Կեանքը, անհասկնալի կեանքը իր բոլոր երեւոյթներով, աշխարհի ամենամեծ հրաշքն է:

Հրաշքներուն ամէնէն ահաւորը:

**COMPTE RENDU INTÉGRAL PRÉSIDENCE DE Mme
CHRISTINE LAZERGES.**

Vice-présidente

Mme la présidente. La est ouverte.

(la séance est ouverte à neuf heures) 1

RECONNAISSANCE DU GÉNOCIDE ARMÉNIEN

Discussion d'une proposition de loi adoptée par le Sénat

Mme la présidente. L'ordre du jour appelle la discussion de la proposition de loi, adoptée par le Sénat, relative à la reconnaissance du génocide arménien de 1915 (no 2688, 2855).

La parole est à M. le rapporteur de la commission des affaires étrangères.

M. François Rochebloine, rapporteur de la commission des affaires étrangères. Madame la présidente, monsieur le ministre des relations avec le Parlement, mes chers collègues, c'est avec une profonde émotion que nous abordons ce matin l'examen de la proposition de loi adoptée par le Sénat dans la nuit du 7 au 8 novembre de l'an dernier, relative à la reconnaissance du génocide arménien de 1915.

Cette séance revêt une importance toute particulière, car notre assemblée, par son vote, mettra définitivement fin à la longue procédure législative tendant à la reconnaissance publique de cette tragédie.

Qu'il me soit permis de remercier tout spécialement Philippe Douste-Blazy et mes collègues du groupe de l'UDF qui ont accepté spontanément



ment l'inscription de ce texte dans la fenêtre de l'ordre du jour réservée à l'examen de leurs proposition de ce texte dans la fenêtre de l'ordre du jour réservée à l'examen de leurs propositions de loi.

Nous avons tous en mémoire la séance historique du 29 mai 1998, au cours de laquelle notre assemblée adoptait à l'unanimité la proposition de loi déposée par le groupe socialiste dans le cadre de sa niche parlementaire, reconnaissant publiquement le génocide arménien, comme le suggéraient également d'autres propositions de loi à l'identique déposées par les différents groupes parlementaires, tant au Sénat qu'à l'Assemblée.

Le rapporteur était notre collègue René Rouquet qui, par ailleurs, a été le premier président du groupe d'amitié France-Arménie à l'Assemblée nationale, après l'indépendance de l'Arménie le 23 septembre 1991.

Chacun d'entre nous garde à l'esprit l'évocation de cette tragédie dans l'hémicycle le 29 mai 1998 et nul ne doute que ce fut le premier génocide du xx^e siècle, après les rafles d'intellectuels, d'écrivains, de poètes, de journalistes, de médecins, de savants et de prêtres arméniens parmi les plus en vue de Constantinople, et leur élimination, dans la nuit du 24 avril 1915, l'enchaînement inexorable des faits a conduit au massacre de la population arménienne vivant dans l'Empire Ottoman. Une loi édictée le 27 mai 1915 avait même légalisé la violence contre les arméniens. Les opérations à grande échelle ont d'abord touché les provinces orientales de l'Arménie historique pour s'étendre, à partir d'août 1915, à tout l'Empire Ottoman. Quels que soient les lieux, les opérations étaient soigneusement orchestrées et supervisées par une organisation spéciale formée par le noyau dur du parti "Union et Progrès", comme l'a confirmé en 1919 le procès de Constantinople.

Accusés de participer à un vaste complot, notables et responsables politiques arméniens des villes et villages furent arrêtés et sommés, souvent sous la torture, de livrer armes et déserteurs. Par convois, femmes, enfants, vieillards, furent déportés, à pied ou dans des wagons à bestiaux. En cours de route, les convois furent décimés par les pillards, par les conditions extrêmement rudes du voyage et aussi par des exécutions sommaires. Les déserts de Mésopotamie et de Syrie furent le tombeau de ces déportés. Les récits et témoignages du calvaire des survivants, majoritairement des femmes et des enfants, sont particulièrement horri-

bles. La déportation fut une mise à mort. Lorsque l'année 1916 s'acheva, le génocide des Arméniens de l'Empire Ottoman était pratiquement consommé. Plus des deux tiers des Arméniens vivant dans cet empire, soit 1.200.000 personnes, avaient été éliminés.

Le caractère massif, planifié et ciblé de ces massacres démontre amplement qu'il s'agit bien d'un génocide. Les massacres systématiques d'hommes, de femmes et d'enfants ont bien été commis au nom de l'appartenance ethnique des victimes selon un plan concerté, ce qui correspond à la définition juridique du génocide, donnée pour la première fois en 1943, par le juriste polonais Raphaël Lemkin.

Qu'il me soit permis de rendre hommage aux centaines de milliers de victimes de ce qui allait être le premier génocide du *xxe* siècle dont l'oubli n'est pas étranger à la shoah. "Qui donc parle encore de l'extermination des Arméniens ?", déclarait Hitler devant les chefs militaires du IIIe Reich, pour justifier à l'avance ses crimes.

Notre assemblée - et c'est tout à son honneur - s'est déjà prononcée sur le texte de la proposition de loi qui lui est soumise ce matin. Alors pourquoi devoir réexaminer un texte qui l'a déjà été avant d'être adopté à l'unanimité, il est bon de le rappeler. La raison en est simple: le texte de notre assemblée s'est heurté aux refus répétés de la conférence des présidents du Sénat de l'inscrire à l'ordre du jour de la Haute Assemblée, et ce malgré la reconnaissance du génocide arménien par plusieurs parlements, depuis le vote historique de l'Assemblée nationale, et la demande solennelle du Président de la République arménienne Robert Kotcharian, qui expliquait, dès le 30 mars 1998, que le génocide arménien n'était pas la tragédie d'un seul peuple, mais celle de l'humanité tout entière. en faveur de ce texte, car il est des votes qui engagent l'honneur de la France. (Applaudissements sur tous les bancs.)

Mme la présidente.- La parole est à Mme Michèle Rivasi.

Mme Michèle Rivasi.- Madame la présidente, monsieur le ministre, monsieur le rapporteur, mes chers collègues; après notre vote historique du 29 mai 1998 qui avait montré la voie, nous voici aujourd'hui sur le point d'adopter, définitivement cette fois, le même texte qui nous vient du Sénat: "La France reconnaît publiquement le génocide arménien de 1915".

Après de nombreuses tergiversations depuis bientôt trois ans, une

proposition de loi déposée par des représentants des six groupes politiques a été mise en discussion immédiate et enfin adoptée le 8 novembre 2000 par le Sénat.

Nous aurons ainsi l'honneur aujourd'hui, au nom de la France, de réparer une injustice à l'égard du peuple arménien et de la communauté arménienne française, en reconnaissant un événement tragique de leur histoire.

La tradition humaniste de notre pays l'aura donc heureusement emporté, malgré les obstacles, notamment les pressions inadmissibles exercées par la Turquie.

Le génocide arménien a été le premier du *xxe* siècle. C'est un crime imprescriptible et, selon les paroles du Président de la République d'Arménie, Robert Kotcharian, reçu dans le cadre du groupe d'amitié, auquel participent notamment Jean-Paul Bret, Roger Mel, Richard Cazenave et Guy Teissier: "Il n'est pas la tragédie d'un seul peuple, mais celle de l'humanité tout entière".

Tous les Etats sont concernés et plusieurs assemblées parlementaires l'ont déjà reconnu: ce fut le cas en Italie, Belgique, Argentine. Russie, ainsi qu'au Parlement européen. On peut espérer que le vote définitif du Parlement français exercera un effet d'entraînement!

Dans notre monde, que la rapidité des moyens de communication a pu faire qualifier de "village planétaire", expression que j'aime beaucoup, les opinions publiques des pays démocratiques sont de plus en plus exigeantes quant au respect des Droits de l'homme; des tribunaux pénaux internationaux ont été mis en place pour l'ex-Yougoslavie et le Rwanda, de même qu'une Cour pénale internationale. Les dictatures auront donc de plus en plus souvent à rendre des comptes en raison de leurs crimes. Chaque gouvernement devra assumer les responsabilités, présentes ou passées, de son pays.

Je m'adresse au gouvernement turc, qui n'est pas responsable du crime de 1915, pour lui dire qu'il se grandirait en acceptant enfin de reconnaître le génocide. D'autant qu'en 1919 et 1920, la Cour militaire Ottomane avait elle-même jugé et condamné des coupables de ce crime contre la population arménienne.

La prise de position solennelle de la France sera un encouragement pour les démocrates turc qui luttent pour le respect des Droits de

l'homme dans leur pays et pour que l'Etat turc prenne en compte son histoire. Nous-mêmes souhaitons cette évolution démocratique qui, selon un vote du Parlement européen du 15 novembre 2000, conditionne l'adhésion de la Turquie à l'Union européenne.

De même, l'adoption de cette loi, en accentuant la pression sur l'Etat turc, va réellement dans le sens d'une réconciliation authentique entre le peuple turc et le peuple arménien, car la reconnaissance de la vérité historique est une condition nécessaire à l'établissement de bonnes relations entre les deux peuples.

Je tiens aussi à dénoncer à cette occasion - on n'en parle pas assez - les exactions commises dans les prisons kurdes, à la fois à l'égard des kurdes et des détenus politiques turcs.

Madame la présidente, monsieur le ministre, chers collègues, je rends hommage à la ténacité de la communauté arménienne et de ses organisations, le Comité du 24 avril, le Comité de défense de la cause arménienne ainsi que la Communauté de l'agglomération valentinoise qui n'ont jamais perdu espoir. Elles ont constamment réaffirmé leur confiance dans le fait que la France devait reconnaître le génocide arménien.

En votant maintenant cette proposition de loi, nous ferons oeuvre de justice de reconnaissance et de paix dans le monde. (Applaudissements sur tous les bancs.)

Mme la présidente.- La parole est à M. Rudy Salles.

M. Rudy Salles.- Madame la présidente, monsieur le ministre, monsieur le rapporteur, mes chers collègues, je vous livrerai d'emblée une impression personnelle recueillie le 8 novembre 2000 au centre Barsamian de Nic où la communauté arménienne nous avait invités à visionner, sur grand écran, les débats qui s'étaient déroulés la veille au Sénat sur le texte que nous allons examiner aujourd'hui. C'est avec beaucoup d'émotion que l'ensemble des personnes présentes ont écouté les interventions de nos collègues sénateurs et c'est dans une explosion de joie qu'a été accueilli le vote favorable de la Haute Assemblée.

Au-delà de cette impression d'ensemble, mon regard a été attiré par le visage d'une personne âgée de quatre-vingt-sept ans mais en paraissant quinze de moins, illuminé d'un large sourire où se mêlaient des larmes de joie et de peine. Je m'approchai alors de cette personne pour échanger quelques propos. Elle m'indiqua qu'elle était la fille de Roupen

Sevag, poète illustre, figure de légende dans l'histoire du peuple arménien, arrêté par la police turque en 1915 pour être emmené en déportation avec toutes les élites intellectuelles et les notables de Constantinople.

De cette déportation qui devait l'amener de village en village, le docteur Roupen Sevag réussissait à donner quelques nouvelles à son épouse restée seule avec ses deux enfants. Un jour, subitement, les lettres envoyées de Constantinople revinrent avec la mention "inconnu à cette adresse". Le silence fut bientôt rompu par la terrible nouvelle de l'exécution du père déporté

Cette femme, opheline à l'âge de deux ans, m'a expliqué combien sa vie en avait été bouleversée. Au fond de son cœur, au fond de son âme, cette déchirure restait définitivement ouverte et douloureuse, comme c'est le cas chez tout être humain qui ne peut faire son deuil. Ce soir-là, c'est comme si elle avait pu se recueillir sur la tombe de son père, lui qui n'avait eu droit jusqu'à ce jour qu'à la négation de son histoire. Devant autant d'émotion, les mots avaient du mal à venir, Alors, cette dame m'a dit avec beaucoup de dignité, en regardant dans les yeux: "Merci".

Je ne suis pas prêt d'oublier cette image et l'ambiance particulière de cette soirée car, derrière ce témoignage, combien de familles anéanties, combien de vies brisées? Les participants à cette réunion avaient attendu si longtemps ce moment qu'ils auraient souhaité qu'il se poursuive toute la nuit.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

| | |
|---|-----|
| ԽՄԲԱԳՐԻ ԿՈՂՄԻՑ..... | 3 |
| ՅՈՎՀԱՆՆԷՍ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ. ՆԱՀԱՏԱԿ ԲԱՆԱՍՏԵՂԾ ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿ ԾՆՆԴԵԱՆ 100-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԹԻԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ. ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿ ԵՒ «ՓՐՑՈՒԵԼԻՔ ՈՒՂԵՂՆԵՐ»..... | 23 |
| ՅՈՎՀԱՆՆԷՍ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ. ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ ԱՆՈՒԱՆ ՅԻՇԱՏԱԿԻ ՏՈՒՆ. ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆԸ. ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ ԱՆՈՒԱՆ ԳՐԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿ | 151 |
| ՆԱՅԻՐԻ, ԹԻԻ 2, 6 ՄԱՅԻՍ 1995 ՆԱՀԱՏԱԿ ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ ԵՂՐՕՐՈՐԴԻՆ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ Ռ. ՍԵՒԱԿ ԴՊՐՈՑԻ ԲԱՑՄԱՆ ԱՌԹԻԻ | 216 |
| ՆԱՅԻՐԻ, ԹԻԻ 3, 20 ՄԱՅԻՍ 1995 ԵՂԵՌՆԻ 80-ԱՄԵԱԿԻ ՏԱՐԻՆ... ԽՌՊՈՏ ԶԱՅՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ..... | 218 |
| ՆԱՅԻՐԻ, ԹԻԻ 5, 6, 7 17 ՅՈՒՆԻՍ, 1, 15 ՅՈՒԼԻՍ 1995 ԹՈՒՐԳԵՐԸ ՇԱՏ ԱԻԵԼԻ ԼԱԻ ՀԱՍԿՑԱԾ ԷՒՆ ԱՐԺԷՔԸ ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ ... | 220 |
| ՆԱՅԻՐԻ, ԹԻԻ 10, 26 ՕԳՈՍՏՈՍ 1995 ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ ԴՈՒՍՏՐ՝ ՇԱՄԻՐԱՄ ՍԵՒԱԿԻ ՀԱՅԵՐԷՆ ԶԿԱՐԵՆԱԼ ԻՕՍԵԼՈՒՆ ՊԱՏՃԱՌԸ..... | 239 |
| ՆԱՅԻՐԻ, ԹԻԻ 42, 11 ՅՈՒՆՈՒԱՐ 1997 ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ ԱՆՈՒԱՆ ՅԻՇԱՏԱԿԻ ՏԱՆ ՀԻՄՆԱԳԻՐ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ՝ ՊՐՆ. ՊԷՊՕ ՍԻՄՈՆԵԱՆԻՆ ՄՐՑԱՆԱԿԻ ՅԱՆՁՆՄԱՆ ԱՌԻԹՈՎ..... | 244 |
| ՆԱՅԻՐԻ, ԹԻԻ 62, 63, 11, 25 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1997 ՋՐՈՅԵ ԻՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԵՏ «ԹԱՓԱՌԱԿԱՆ ՀՐԵԱՆ» ԻՆՉՊԷՊ «ԱՇԽԱՐՀԱԿԱԼ ՀՐԵԱՅԻ» ՎԵՐԱԾՈՒԵՑԱԻ..... | 247 |
| ՆԱՅԻՐԻ, ԹԻԻ 92, 93, 94, 23 ՅՈՒՆՈՒԱՐ, 6, 20 ՓԵՏՐՈՒԱՐ 1999 ՍՈՒՏԵՐՈՒ, ԵՐԱՋՆԵՐՈՒ ԵՒ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ ԳԻՏԱԿՑԱՐԱՐ ԱՆՏԵՍՈՒԱԾ ՍՈՒՐՔ ՀԵՐՈՍՆԵՐ | 259 |
| ՆԱՅԻՐԻ, ԹԻԻ 114, 16 ՆՈՅԵՄԲԵՐԻ 1999 ՀԱՐՑԱՋՐՈՅԵ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆԻ ՀԵՏ | 286 |

| | |
|---|-----|
| նԱՅԻՐԻ, ԹԻԻ 123, 2 ՄԱՅԻՍ 2000 Հեռու-Մեներ ԱԽՏԱԳԻՆ ՄՏԱՒՈՐԱԿԱՆՆԵՐ..... | 294 |
| նԱՅԻՐԻ, ԹԻԻ 123, 2 ՄԱՅԻՍ 2000 ՅԻՇԱՏԱԿՆԵՐ Ռ. ՍԵՒԱԿԻ ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԷՆ | 301 |
| նԱՅԻՐԻ, ԹԻԻ 139, 9 ՅՈՒՆՈՒԱՐ 2001 ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԷՆ ՆՇԽԱՐՆԵՐ | 305 |
| նԱՅԻՐԻ, ԹԻԻ 142, 20 ՓԵՏՐՈՒԱՐ 2001 ՄԵՐ ՆՈՐ ՏԱՐՈՒԱՅ ՄԱՂԹԱՆՔԸ՝ «ԱՍՏՈՒԱԾ ԽԵԼՔ ՏԱՅ ՀԱՅ ԱԶԳԻՆ»..... | 317 |
| նԱՅԻՐԻ, ԹԻԻ 146, 24 ԱՊՐԻԼ 2001 «ՄԵՐ ԱՆՅԱԶՈՂՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ՊԱՏՃԱՌԸ ԱՅՆ Է, ՈՐ ՂԵԿԻՆ ԳԼՈՒԽ ԿԸ ՆՍՏԵՑՆԵՆՔ ՄԵՐ ԷՆ ԱԽՏԱԳԻՆ, ԷՆ ԱՅԼԱՍԵՐԱԾ, ԷՆ ԱՆՊԷՏ ԾՆՈՒՆԴՆԵՐԸ: ՍԱԿԱՅՆ ՍՏՈ՛ՅԳ ԿՐԸՍԵՄ ՁԵՋԻ, ՎՏԱՆԳԸ ՄԵԾ Է, ՇԱ՛Մ ՄԵԾ, ԱԻԵԼԻ ՄԵԾ ՔԱՆ ԿՐՆԱՆՔ ԵՆԹԱԳՐԵԼ»..... | 329 |
| նԱՅԻՐԻ, ԹԻԻ 147, 8 ՄԱՅԻՍ 2001 «ՄԵՌՆՈՂԻՆ ԻՐԱՒՈՒՆՔԸ՝ ՄԵՌՑՆՈՂԷՆ ՀԱՐՑՆԵԼԸ, ԵՂԵՐԱԿԱՆ ԱՆՄՏՈՒԹԻՒՆ ՄԸՆ Է»..... | 336 |
| նԱՅԻՐԻ, ԹԻԻ 149, 5 ՅՈՒՆԻՍ 2001 ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ ԴԷՊԻ ՅՈՒՆԱԿԱՆ «CHIOS» ԿՂՋԻՆ ԵՒ «THESSALONIQUE» ՔԱՂԱՔԸ | 344 |
| նԱՅԻՐԻ, ԹԻԻ 159, 23 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2001 ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ ՄԱՍԻՆ ՆՈՐ ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆՆԵՐ | 352 |
| նԱՅԻՐԻ, ԹԻԻ 163, 29 ՅՈՒՆՈՒԱՐ 2002 ԱՐԴԵՕ՞Ք ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿ, ՋՈՒՐ ՏԵՂ ՆԱՀԱՏԱԿՈՒԹԵԱՆ ԳՆԱՑ | 362 |
| նԱՅԻՐԻ, ԹԻԻ 177, 13 ՕԳՈՍՏՈՍ 2002 ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ ԴԷՊԻ ՅՈՒՆԱՍԱՆ | 369 |
| նԱՅԻՐԻ, ԲԱՑԱՌԻԿ, ՅՈՒՆՈՒԱՐ 2003 ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ ԲԱՑԱՌԻԿ ՆԱԽԱՏԵՍՈՒԹԻՒՆԸ..... | 376 |
| նԱՅԻՐԻ, ԹԻԻ 191, 8 ԱՊՐԻԼ 2003 ... ՇԱՏ ՔԱՂԱՔԱԿԻՐԹ ԱՅՍ ԱՐԵՒՄՈՒՏՔԷՆ՝ ՈՒՐ ԽԻՂՃԸ ԲԱՌ Մ՛Է, ՄԱՐԴԸ՝ ՄԵՔԵՆԱՅ. ԱՇԽԱՐՀ ԳՈՐԾԱՐԱՆ Մ՛ԱՆԽՈՆՋ, ԱՆԽՆԱՅ. ՍԷՐԸ ՀԱՇԻԻ Մ՛Է. ԿՐՕՆՔԸ՝ ԴՐԱՄ. ՄԱՀՆ՝ ԱՆՄՏՈՒԹԻՒՆ, ԿԵԱՆՔՆ՝ ԱՆՀԱՇՏ ՄԸ ԿՌԻԻ..... | 389 |
| նԱՅԻՐԻ, ԹԻԻ 185, 14 ՅՈՒՆՈՒԱՐ 2003 Ի՞ՆՁ Է ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ ԵՒ ԴԱՆԻԷԼ ՎԱՐՈՒԺԱՆԻ ՆԱՀԱՏԱԿՈՒԹԵԱՆ ԻՍԿԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ | 396 |

| | |
|--|-----|
| նԱՅԻՐԻ, ԹԻԻ 186, 28 ՅՈՒՆՈՒԱՐ 2003 ՌՈՒՐԷՆ ՍԵՒԱԿ, ՄԵՐԺԵԼՈՎ ԹՐԲԱՆԱԼՈՒ ԳՆՈՎ ԱԶԱՏՈՒԵԼՈՒ ԱՌԱՋԱՐ- ԿԸ, ՆԱՀԱՏԱԿՈՒԵՑԱԻ 26 ՕԳՈՍՏՈՍ 1915-ԻՆ ԹՈՒՐԳԵՐՈՒՆ ԿՈՂՄԷ..... | 408 |
| նԱՅԻՐԻ, ԹԻԻ 187, 11 ՓԵՏՐՈՒԱՐ 2003 ՆԱՀԱՏԱԿ ՌՈՒՐԷՆ ՍԵՒԱԿ..... | 418 |
| նԱՅԻՐԻ, ԹԻԻ 188, 25 ՓԵՏՐՈՒԱՐ 2003 ԵԹԷ ԲԻԶ ՄԸ «ԱԶԳԱՅԻՆ ՈԳԻ» ՈՒՆԻՔ - ՇԱՏ ԴԻՒՐՈՒԹԵԱՄԲ ԿԸ ՀԱՍԿՆԱՔ, ԹԷ ԵՐԿՈՒ ՀԱՐԻԻՐ ՏԱՐԻԷ Ի ՎԵՐ, ԵՒ ՄԻՆԶԵՒ ԱՅՍՕՐ, ԱՆՏԵՍԱՆԵԼԻ ՈՒԺԵՐ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԵՆ, ՀԱՅ ԱԶԳԻՆ ԳԼԽՈՒՆ, ԴԱՒԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՀԻՒՍԵԼ..... | 430 |
| նԱՅԻՐԻ, ԹԻԻ 189, 11 ՄԱՐՏ 2003 ԴԸՐԱՄ, ՈՐՈՒՆ ԼՈՒՌ ՑՈՒՔԻՆ ՄԷՋ ԿԿԱՐԾԱՐԾԻ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ ՏԱՌԱՊՈՂ ՄԱՐԴԿՈՒԹԵԱՆ, ԸՍԷ՛, ՔՈՒ ԿԱՄՔԴ ՊԵՏԻ ԻՇԽԷ՞ ՅԱԻՏԵԱՆ..... | 439 |
| նԱՅԻՐԻ, ԹԻԻ 190, 25 ՄԱՐՏ 2003 « ԱՅՍ ԻՆՉ ԴԱՐԵՐՈՒ ՀԱՍԵՐ ԵՆՔ, ԱՍՏՈՒԱՄ, ՓՇՐԵՑԻՆ ԻՆՉ ՈՐ ԿԱՐ ՎՍԵՄ ԿԵՐՏՈՒԱՄ, ԹԷ ԴԵՌ ՍԻՐՏ ՈՒՆԻՔ՝ ԹԱՂԵԼՈՒ ՏԱՐԷՔ, ՈՍԿԻՒՆ ՆԵՆԳ ՉԱՅՆՆ Է ԱՄԷՆՈՒՐԵՔ:..... | 446 |
| նԱՅԻՐԻ, ԹԻԻ 192, 15 ԱՊՐԻԼ 2003 ՍՒՈՆԱԿԱՆ ԹՈՒՐԳԵՐՈՒՆ ԳՈՐԾԱԾ 24 ԱՊՐԻԼ 1915-Ի ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆՆ Է՛ ՍՒՈՆԱԿԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻՆԵՐՈՒՆ ԱՅՍ ՕՐԵՐՈՒՆ ՍԱՐՔԱԾ ԻՐԱՔԻ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆԸ..... | 454 |
| նԱՅԻՐԻ, ԹԻԻ 193, 6 ՄԱՅԻՍ 2003 ԹՐԲԱԿԱՆ ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ..... | 469 |
| նԱՅԻՐԻ, ԹԻԻ 194, 20 ՄԱՅԻՍ 2003 ԵՋՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ՝ ՌՈՒՐԷՆ ՍԵՒԱԿԻ ՆԱՀԱՏԱԿՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ..... | 472 |
| նԱՅԻՐԻ, ԹԻԻ 195, 3 ՅՈՒՆԻՍ 2003 ՊԱԼԱՔԵԱՆԻՆ ՌՈՒՐԷՆ ՍԵՒԱԿԻ ՀԱՆԳԷՊ ԿԱՏԱՐԱԾ ԱՆԱՐԴԱՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐԸ..... | 478 |
| նԱՅԻՐԻ, ԹԻԻ 196, 17 ՅՈՒՆԻՍ 2003 ԿԵՂՄ ՀԵՐՈՍՆԵՐ ԵՒ ԻՍԿԱԿԱՆ ՀԵՐՈՍՆԵՐ..... | 485 |
| նԱՅԻՐԻ, ԹԻԻ 197, 1 ՅՈՒԼԻՍ 2003 ԳՆԱՀԱՏԱՆՔ՝ ՌՈՒՐԷՆ ՍԵՒԱԿԻ ԽՆԿԵԼԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ..... | 495 |
| նԱՅԻՐԻ, ԹԻԻ 198, 15 ՅՈՒԼԻՍ 2003 ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ ՌՈՒՐԷՆ ՍԵՒԱԿԻ ՄԱՍԻՆ..... | 503 |

| | |
|---|-----|
| <p>նԱՅԻՐԻ, ԹԻԻ 199, 29 ՅՈՒԼԻՍ 2003 ԵՐԿՈՒ ԹՐԲԱԽՕՍ ՂԱՅ ՊԱՏԱՆԻՆԵՐ... ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԵՒ ՌՈՒՐԷՆ ՍԵՒԱԿ ՈՐՈՆՔ ՅԵՏՈՅ ՂԱՅ ԱԶԳԻՆ ՌԱՀՎԻՐԱՆԵՐԸ ԵՂԱՆ.....</p> | 511 |
| <p>նԱՅԻՐԻ, ԹԻԻ 200, 12 ՕԳՈՍՏՈՍ 2003 ՌՈՒՐԷՆ ՍԵՒԱԿԻ ԲՐՈՋ՝ ՂԱՅԿԱՆՈՒՇ ՉԷՎԻԿԵԱՆԻ [ՄՆԵԱԼ՝ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ] ԱԿԱՆԱՏԵՍԻ ՎԿԱՅՈՒԹԻՒՆԸ</p> | 521 |
| <p>նԱՅԻՐԻ, ԹԻԻ 201, 202, 26 ՕԳՈՍՏՈՍ, 9 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2003 «ԵԿԵՂԵՑԻՆ՝ ՂԱՅԵՐՈՒՆ ՄԻՈՒԹԻՒՆՆ Է»</p> | 530 |
| <p>նԱՅԻՐԻ, ԹԻԻ 203, 23 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2003 «ԹՈՂ ԲԱՐԿՈՄԵՆ ԶԻՍ ԹԵՐԱՀԱՒԱՏՆԵՐԸ: ԵՍ ՉԵՄ ԿՐՆԱՐ ՈՒՐԱՆԱԼ ԱՅՆ ԱՆՋՆՋԵԼԻ ԱՐՑՈՒՆՔԸ, ՈՐ ԻՄ ՄԱՅՐԵՆԻ ԵԿԵՂԵՑԻՆ ԿՐՑԱԻ ԿԱԹԵՑՆԵԼ ԻՄ ԷՈՒԹԵԱՆՍ ՄԷՋ, ԵՒ ՈՐ ԲՈՂՈՐ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՄԻԱՅԱԾ՝ ՉՊԻՏԻ ԿԱՐԵՆԱՅԻՆ ԿԱԹԵՑՆԵԼ...».....</p> | 545 |
| <p>նԱՅԻՐԻ, ԹԻԻ 204, 7 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2003 ՀՐԵԱՅ ՓՐՕՖ. ԲԺԻՇԿԻ ՄԸ ԱՆԳՈՒԹ ԿԵՑՈՒԱԾՔԸ՝ ՌՈՒՐԷՆ ՍԵՒԱԿԸ ՉԱՆՂԸՐԸ-Ի ԴԺՈՒՔԷՆ ՓՐԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԻՐԵՆ ԿԱՍԱՐՈՒԱԾ ԴԻՄՈՒՄՆԵՐՈՒՆ ՀԱՆԳԷՊ</p> | 553 |
| <p>նԱՅԻՐԻ, ԹԻԻ 205, 21 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2003 ԿԸ ՀՐԱՊԱՐԱԿԵՆՔ՝ ՌՈՒՐԷՆ ՍԵՒԱԿԻ ԿՆՈՋ՝ ԺԱՆՆԻ ՍԵՒԱԿԻՆ 27 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1915-ԻՆ ԼՈՋԱՆԷՆ ՊՈԼԻՍ՝ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԴԵՍՊԱՆԱՏԱՆ ՈՒՂԱՐԿԱԾ ՄԷԿ ՆԱՄԱԿԸ.....</p> | 564 |
| <p>նԱՅԻՐԻ, ԹԻԻ 206, 4 ՆՈՅԵՄԲԵՐ 2003 ՌՈՒՐԷՆ ՍԵՒԱԿԻ ԿԵԱՆՔԻՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԱՄԷՆ ՄԷԿ ԷՋԸ՝ ԻՍԿԱԿԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ ՄԸՆ Է</p> | 571 |
| <p>նԱՅԻՐԻ, ԹԻԻ 209, 3 ՓԵՏՐՈՒԱՐ 2004 ՊԵՏՐՈՍ ԳՈՒՐԵԱՆԻ «ԻՄ ՄԱՀԸ» ԲԱՆԱՏԵՂՄՈՒԹԱՆ ՄԻՏՔ ԲԱՆԻՒՆ ՀԵՏԵՒՈՂՈՒԹԵԱՄԲ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԻՆՉԵՒ ԱՅՍՕՐ ԳՈՅԱՏԵԻՄԱՆ ՄԵՋԻ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԱԾ ԻՄԱՍՏԸ</p> | 583 |
| <p>նԱՅԻՐԻ, ԹԻԻ 210, 17 ՓԵՏՐՈՒԱՐ 2004 Ո՞ՎՔԵՐ ԵՆ, 24 ԱՊՐԻԼ 1915-Ի ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԲՈՒՆ ՅԱՆՑԱՊԱՐՏՆԵՐՈՒՆ ՄԻՆՉԵՒ ԱՅՍՕՐ ԱՆՊԱՏԻԺ ՄԵԱԼՆՈՒՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ</p> | 595 |
| <p>նԱՅԻՐԻ, ԹԻԻ 214, 13 ԱՊՐԻԼ 2004 ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ՎԵՐՋԻՆ ՀԱՆԳՐՈՒԱՆԷՆ ԱՌԱՋ - 24 ԱՊՐԻԼԻՆ ԵՒ ԳՈՂՑՈՒԱԾ ՀԱՅՐԵՆԻՔԻՆ ԿՈՐՈՒՍՏԻՆ 89-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՉԻ ՍԵՄԻՆ</p> | 605 |

| | |
|--|-----|
| նԱՅԻՐԻ, ԹԻԻ 217, 25 ՄԱՅԻՍ 2004 ՍԻՈՆԻՍ ՆԱԿԱՆԵՐՈՒՆ, ՍԻՈՆԻՍ ԹՈՒՐԳԵՐՈՒՆ ԵՒ ՍԻՈՆԻՍ ԱՄԵՐԻԿԱՑԻՆԵՐՈՒՆ ՋՈՂԸ ԵՂՈՂ ԺՈՂՈՎՈՒՐԳՆԵՐ՝ ՄԻԱՑԷՔ ՍԻՈՆԻՋՄԻՆ ԴԷՄ, ՅԵՏՈՅ՝ ՇԱՏ ՈՒՇ ՊԻՏԻ ԸԼԼԱՅ | 610 |
| նԱՅԻՐԻ, ԲԱՑԱՌԻԿ, 1 ՅՈՒՆՈՒԱՐ 2005 Յ Ա Յ Տ Ն Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր ՌՈՒՐԷՆ ՍԵՒԱԿԻ ՔՐՈՋ՝ ՀԱՅԿԱՆՈՒՇ ՉԷՎԻԿԵԱՆԻ [ԾՆԵԱԼ՝ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ] ԱԿԱՆԱՏԵՍԻ ՎԿԱՅՈՒԹԻՒՆԸ | 618 |
| նԱՅԻՐԻ, ԹԻԻ 229, 230, 231, 25 ՅՈՒՆՈՒԱՐ, 8, 22 ՓԵՏՐՈՒԱՐ 2005 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ, ՀԱՅՈՒ ԱՆՈՒՆ ԿՐՈՂ ԹԱՐԳՄԱՆԻՉ ՄԸ՝ ՌՈՒՐԷՆ ՍԵՒԱԿԻ ՉԱՆՂԸՐԸ-Ի ՀԵՐՈՍԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ ՍՐԲԱՊՂԾԵՑ 2004-ԻՆ ԵՐԵՒԱՆԻ ՄԷՋ..... | 636 |
| նԱՅԻՐԻ, ԹԻԻ 233, 22 ՄԱՐՏ 2005 ԵՋՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ | 642 |
| նԱՅԻՐԻ, ԹԻԻ 235, 19 ԱՊՐԻԼ 2005 ԱՅՍՕՐ՝ 24 ԱՊՐԻԼ 2005 ԹՈՒՐԳԵՐՈՒՆ 24 ԱՊՐԻԼ 1915-ԻՆ, ՀԱՅ ԱԶԳԻՆ ԴԷՄ ԿԱՏԱՐԱՄ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 90-ՐԴ ՏԱՐԵԼԻՑՆ Է: | 649 |
| նԱՅԻՐԻ, ԹԻԻ 255, 9 ՄԱՅԻՍ 2006 ՎԵՐՋԱՊԷՆ՝ ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ՅԱՂԹԱՆԱԿԸ | 655 |
| նԱՅԻՐԻ, ԹԻԻ 256, 23 ՄԱՅԻՍ 2006 ՌՈՒՐԷՆ ՍԵՒԱԿԻ ԱՆՄԱՀՈՒԹԻՒՆԸ | 663 |
| նԱՅԻՐԻ, ԹԻԻ 257, 6 ՅՈՒՆԻՍ 2006 ՌՈՒՐԷՆ ՍԵՒԱԿԻ ՆԱԽԱՏԵՍՈՒԹԻՒՆՆԵՐԸ | 673 |
| նԱՅԻՐԻ, ԹԻԻ 258, 20 ՅՈՒՆԻՍ 2006 ԵՐԿՈՒ ԲԱՆԱՍԵՂՄ - ԵՐԿՈՒ ԿԵՑՈՒԱԾՔ | 684 |
| նԱՅԻՐԻ, ԹԻԻ 259, 4 ՅՈՒԼԻՍ 2006 ՌՈՒՐԷՆ ՍԵՒԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՍՏԱՏՈՒՄՆԵՐ... | 696 |
| նԱՅԻՐԻ, 1 ՅՈՒՆՈՒԱՐ 2007 Ո՞Վ ԷՒՐ ԴՈՒՆ ՍՓԻՆՌՔ | 704 |
| նԱՅԻՐԻ, ԹԻԻ 270, 24 ԱՊՐԻԼ 2007 ՎԱՅԵՂ Է ՀԱՅ ԱԶԳԻՆ | 712 |
| նԱՅԻՐԻ, ԹԻԻ 281, 29 ՅՈՒՆՈՒԱՐ 2008 ՄԵՐ ԱՅՍ ԳՐՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՉՕՆԵՆՔ՝ ՄԵՐ ՀԱՐԱՋԱՆԵՐՈՒՆ ԵՒ ՄԵՐ ՃՇՄԱՐԻՏ ԲԱՐԵԿԱՄՆԵՐՈՒՆ | 721 |

| | |
|---|-----|
| նԱՅԻՐԻ, ԹԻԻ 283, 4 ՄԱՐՏ 2008 ՄԻՆՁԵԻ Ե՞ՐԲ ՊԻՏԻ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻ ԱՇԽԱՐՀԻ ՄԵԾԱԳՈՅՆ «MAFIA»-Ն ԵՂՈՂ ԵԻ "SIONISME" ԸՍՈՒԱԾ ՀՐԷՇԻՆ՝ ԱՇԽԱՐՀԱԿԱԼ ԻՇԽԱՆՈՒԹԻԻՆԸ..... | 730 |
| նԱՅԻՐԻ, ԹԻԻ 286, 22 ԱՊՐԻԼ 2008 ՄԵՐ ԱՅՍ ԳՐՈՒԹԻՆԸ ԿԸ ԶՕՆԵՆՔ՝ 1915-Ի ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ԱՆՄԵՂ ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒՆ | 736 |
| նԱՅԻՐԻ, ԹԻԻ 321, 11 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2011 ԱՆՀԱՒԱՏԱԼԻ ԲԱՅՑ ԻՐԱԻ..... | 746 |

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ

**ՍՈՒՏԵՐԷ ԵՒ ՍԽԱԼՆԵՐԷ ԱԶԱՏՈՒԱԾ
ՌՈՒՐԷՆ ՍԵՒԱԿԻ
ՀԵՐՈՍԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ ԵՒ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆԻ
ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ**

*Նկարները պատճենահանված են
«ՆԱՅԻՐԻ» շարաթաթերթերի էջերից*

| | |
|---------------------------|----------------------------|
| Սրբագրիչ | Վ. Վ. Դերձյան |
| Համակարգչային շարվածքը | Թ. Շ. Վարդանյանի |
| Համակարգչային ձևավորումը՝ | Ա. Ն. Աղուզումցյանի |

Ստորագրված է տպագրության՝ 06.03.2012 թ.:

Ձախար՝ 70x100 1/16: Թուղթը՝ օֆսետ:

Տպագր. 49.25 մամուլ: Տպարանակ՝ 350:

ՈՌՌԲԷՆ ՍԵՒԱԿԻ ՀԻՇԱՏԱԿԻ ՏԱՆ ՀՐԱՏԱՐԱՎԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1. «Հաւաքածոյ արեւմտահայ գրողներու»- չորս հատոր: ՎԵՐԺԻՆ ՏԵՕՇԵՄԷՏԵԱՆ, Պոլիս, 1971:
2. «Հայ ժողովուրդի ողբերգական անցեալը եւ խրախուսիչ ներկան»։ ԿԱՐՈ ՍԵՅԵԱՆ. Ս. Ղազար, ՎԵՆԵՏԻԿ, 1982:
3. «Որպէս երազ անկրկնելի», Բ հատոր, «Պատմութեան ճանաչում»։ ԿԱՐՈ ՍԵՅԵԱՆ, ԱՆՔԻԼԱՍ, 1984:
4. «Ռուբէն Սեւակ եւ փրցուելիք ուղեղներ»։ ՅՈՎՀԱՆՆԵՍ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ, Փարիզ, 1986:
5. «Ռուբէն Սեւակի վերջին օրերը», Թատերախաղ 5 պատկերով: ԳԵՈՐԳ ԳԱՍՊԻԱՆՆԵԱՆ, ՊԵՅՐՈՒՔ, 1986:
6. «Ս.-Դ. Հնչակեան կուսակցութեան հարիւրամեակը»։ ԺԻՐԱՅՐ ՆԱՅԻՐԻ, ՊԵՅՐՈՒՔ, 1987:
7. «Մատենագիտութիւն հայատառ օտար լեզուներով տպագիր գիրքերու»։ ԱՐՏԱՇԵՍ Հ. ԳԱՐՏԱՇԵԱՆ, Փարիզ, 1987:
8. «Ովքեր են ի վերջոյ արիացիները»։ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՎԱՐՊԵՏԵԱՆ, Մարտլլ, 1988:
9. «Ռուբէն Սեւակի անուան յիշատակի տուն», «Ռուբէն Սեւակի գաղափարականը»։ «Ռուբէն Սեւակի անուան գրական մրցանակ»։ ՅՈՎՀԱՆՆԵՍ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ, Փարիզ, 1989:
10. «Թրքական համաթուրանականութիւնը վարագոյրով չի ծածկուիր»։ ԹՈՐՈՍ ԹՈՐԱՆԵԱՆ, ՊԵՅՐՈՒՔ, 1990:
11. «Ռուբէն Սեւակ», Երկեր, հատոր երկրորդ: ԱԼԵՔՍԱՆՏՐ ԹՈՓՉԵԱՆ, Երեւան, 1996:
12. «Ենվեր փաշայի վերջը»։ ՎԼԱԴԻՄԻՐ ՊԵՏՐՈՍԵԱՆ, ՊԵՅՐՈՒՔ, 1996:
13. «Ռուբէն Սեւակ», Երկեր: Բ հրատարակութիւն, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1997:
14. «Արարատը պետք է մնայ Երեւանի կողմը»։ ՎԼԱԴԻՄԻՐ ՊԵՏՐՈՍԵԱՆ, ԲԵՅՐՈՒՔ, 2001:
15. «Ռուբէն Սևակը և մեր ժամանակը»։ ՎԼԱԴԻՄԻՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ, Երևան, 2003:
16. «Թուրքերու իբր թէ չգիտցած իրականութիւնները»։ Ա հատոր, հայերեն, ռուսերեն, անգլերեն, թուրքերեն: ՅՈՎՀԱՆՆԵՍ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ, Երեւան, 2004:
17. «ՈՌՌԲԷՆ ՍԵՒԱԿ. Բանաստեղծութիւններ, թարգմանութիւններ: Ռուսերեն, Երեւան, 2004:
18. «Սուտերու եւ երազներու զոհ «էջի նահատակ» եղած ազգ մը՝ «հայերը»։ Ա հատոր, ՅՈՎՀԱՆՆԵՍ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ, ՊԵՅՐՈՒՔ, 2004:
19. «Իմ Ռուբէն Սեւակը»։ ԹՈՐՈՍ ԹՈՐԱՆԵԱՆ, Հալեպ, 2004:
20. «Մենազրույց նահատակ բանաստեղծի հետ»։ ՎԼԱԴԻՄԻՐ ԿԻՐԱՎՈՍՅԱՆ, Երևան, 2005:

21. «Թուրքերուն (իբր թէ) չգիտցած իրականութիւնները»: Բ հատոր, հայերեն, ՅՈՎՅԱՆՆԵՍ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ, Երեւան, 2005:
22. «Թուրքերուն (իբր թէ) չգիտցած իրականութիւնները»: Բ հատոր, անգլերեն, ՅՈՎՅԱՆՆԵՍ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ, Երեւան, 2005:
23. «Թուրքերուն (իբր թէ) չգիտցած իրականութիւնները»: Բ հատոր, ֆրանսերեն, ՅՈՎՅԱՆՆԵՍ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ, Երեւան, 2005:
24. «Թուրքերուն (իբր թէ) չգիտցած իրականութիւնները»: Բ հատոր, թուրքերեն, ՅՈՎՅԱՆՆԵՍ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ, Երեւան, 2005:
26. ՈՌԻԲԵՆ ՍԵՎԱԿ. «Յատընտիր»: Ֆրանսերեն, Երևան. 2007:
27. «Ժամանակի հրամայականը»: ՎԼԱԴԻՄԻՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ, Երևան, 2008:
28. Թուրքերուն [իբր թէ] չգիտցած իրականութիւնները (Լրացված վերահրատարակություն), Բ հատոր, հայերեն, Երևան, 2009:
29. Թուրքերուն [իբր թէ] չգիտցած իրականութիւնները (Լրացված վերահրատարակություն), Բ հատոր, թուրքերեն, Երևան, 2009:
30. Ռուբեն Սևակի աչքերով: ՎԼԱԴԻՄԻՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ, Երևան, 2010:
31. Վերադարձ Հայաստան, Երևան, 2011:
32. Սուտերի եւ սխալներէ ազատուած Ռուբեն Սեւակի հերոսական կեանքի եւ գաղափարախակի պատմութիւնը, ՅՈՎՅԱՆՆԵՍ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ, Երեւան, 2012:

Այգ մը իր հեղուկներով կապրի:

Այգ մը, որ հեղուկներ չունի, ապրելու

իրաւունք չունի:

Այգ մը, որ իր հեղուկները կը մոռնայ,

իւնքն ալ մոռնելու դարձապարտուած է:

* * *

Այգ մը իր առաջնորդներով միայն արժանի կրկնայ

այգ մը ըլլալու...

Յովհաննէս Զիշկէիքեան